Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*http://www.armin.am

*Էլ. փոստ՝*info@armin.am

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

# ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

# ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ
1989

ԳՄԴ 8427
Շ 301

Կազմող՝ Ս. Է. ԹՈՓՉՅԱՆ

Առաջաբանի հեղինակ՝ Է. Ս. ԹՈՓՉՅԱՆ

Շանթ Լ.

Շ 301 Երկեր (Լևոն Շանթ, առաջաբանի հեղ.՝ Է. Ս. Թոփչյան),—Եր.: Սովետ. գրող, 1989.— 864 էջ:

Լևոն Շանթի երկերի ժողովածուում տեղ են գտել նրա բանաստեղծական, արձակ, դրամատիկական, գրականագիտական լավագույն գործերի մի մասը: Որոշ երկերի լայն ընթերցողը կծանոթանա առաջին անգամ:

Շ $\frac{4702801060}{705(01)89}$ 68—89

ԳՄԴ 84 Հ7

ISBN 5—550—00195—0

© «Սովետական գրող» կազմելու, ձևավորման և առաջաբանի համար, 1989

# ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Հայ գրականության և հասարակական կյանքի աղերսը առանձնակի ուժով դրսևորվեց 19-րդ դարի երկրորդ կեսին: Նալբանդյանից մինչև Րաֆֆի ու Թումանյան գեղարվեստական միտքը ազատագրության ուղիներ էր որոնում: Իրականության տարբեր ընկալումները արգելք չեղան, որ ռեալիզմի և ռոմանտիզմի ներկայացուցիչները ունենային ընդհանուր մտահոգություններ, ապրեին ժողովրդական կյանքի նույն տանջող հարցերով: Գյուղում տիրող շահագործումը, աղքատությունը ու խավարը գրականության հիմնական հարցերն էին, որոնց հետ մերթ բացահայտ, մերթ խուլ արծարծվում էին ազգային ազատագրության գաղափարները: Ճնշված ազգության հասարակական զարգացման բնորոշ գիծն այդ էր, ազգություն, որի հիմնական զանգվածը՝ գյուղացիությունը, զարհուրելի կամայականության էր մատնված ցարական Ռուսաստանում և առանձնապես՝ սուլթանական Թուրքիայում:

Եթե պայծառատես Նալբանդյանն ազգության փրկությունը տեսնում էր գյուղացիական հեղափոխության և ազատ երկրագործության մեջ, ապա հետագա ժամանակներում սոցիալական և ազգային ճնշումներից ազատագրվելու ձգտումները հանդես եկան ավելի միամիտ ձևերով: Մեկը փրկությունը տեսնում էր գյուղում լուսավորություն տարածելու, մյուսը՝ արդարություն հաստատելու, երրորդը՝ զենքով չարը պատժելու մեջ: Բայց որքան էլ պարզ ու միամիտ լինեին այդ գաղափարները, այնուհանդերձ նրանց հիմքում ընկած էր գրողի խոր մտահոգությունը ժողովրդի ճակատագրի հանդեպ:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ գրականությունն ապրեց իր գաղափարական զարգացման հաջորդ՝ բարձր փուլը: Սունդուկյանի «Պեպո», «Աղայանի «Երկու քույր», «Թումանյանի «Հառաչանք», «Պռոշյանի «Ցեցեր», Շիրվանզադեի «Քաոս» և մյուս երկերում լայնորեն արծարծվեցին սոցիալական դաժան պայքարի խնդիրները: Արևմտահայ գրականության մեջ, Պարոնյանից հետո, ռեալիզմը ծավալվեց Արփիար Արփիարյանի, Գրիգոր Զոհրապի և Երվանդ Օտյանի երկերում: Հայ գրականությունն ալեկոծվում էր ժողովրդի կեցության բազմազան հարցերով և համառորեն ելք էր որոնում բռնության ու շահագործման կապանքներից: Լևոն Շանթի հոգևոր աշխարհը ձևավորվում է գրական-գաղափարական այս մթնոլորտում:

# 1

Լևոն Շանթը (Լևոն Սեղբոսյան) ծնվել է 1869 թվականին, Պոլսում, գործի ւ՛անառակալի ընտանիքում: Ավարտելով Սկյուտարի վարժարանը, մի խումբ ապատանիների հետ Լևոնը մեկնում է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում սովորելու: Ուսումը չավարտած՝ նա վերադառնում է Պոլիս, որտեղ Ա. Արփիարյանի «Հայրենիք» թերթում, 1891 թվականին, տպագրում է իր առաջին բանաստեղծությունները և թարգմանություններ Պուշկինից ու Լերմոնտովից: «Հայրենիքում» է լույս տեսնում նաև Շանթի առաջին արձակ երկը՝ «Մնաք բարովի իրիկունը»:

Մեկ տարվա ուսուցչական աշխատանքից հետո Շանթը ուղևորվում է Գերմանիա, ուր Լայպցիգի, Ենայի ու Մյունխենի համալսարաններում ուսանում է մանկավարժություն և հոգեբանություն. «Գրվեցա ուսանող մանկավարժության,— ասում է Շանթը ինքնակենսագրության մեջ,— կենդանաբանություն, բնագիտություն և տարրագիտություն սորվելու, որոնց մեջ հետզհետե խորանալով, ամբողջ աշխարհայացքս կզգայի, որ նոր ձև կառներ»:

Ուսանողության տարիները միաժամանակ ստեղծագործական հասունության տարիներ էին: 1892-ին Շանթը ստեղծում է իր առաջին հայտնի երկերը՝ «Լեռան աղջիկը» պոեմը և «Երազ օրեր» վիպակը, այնուհետև՝ «Դուրսեցիներ», «Դարձ», «Դերասանուհին» արձակ երկերը: Թոշակից զրկվելու պատճառով Շանթը թողնում է համալսարանը, անցնում Փարիզ, Շվեյցարիա, հետո՝ Կովկաս:

1906—1908 թթ. Շանթը աշխատում է Թիֆլիսի Գայանյան դպրոցում իբրև տեսուչ: Թիֆլիսում եղած ժամանակ նա մասնակցում է Թումանյանի «Վերնատուն» գրական միավորման հավաքույթներին: Կյանքի վերջին տարիներին հիշելով «Վերնատունը», Շանթը ասում է. «Մինչև հիմա սիրով ու կարոտով կհիշեմ իմ գրական ընկերներու հետ անցուցած տաք իրիկունները»: 1908—09 թթ. Շանթը պաշտոնավարում է Երևանի թեմական դպրոցում և Երևանում էլ 1909 թ. դեկտեմբերին գրում է «Հին աստվածներ» դրաման:

1911-ին Շանթը վերադառնում է Պոլիս և շարունակում ուսուցչական աշխատանքը Եսայան և Կեդրոնական վարժարաններում: 1915-ին նա նորից Կովկասում է, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո մեկնում է Լոզան: Դաշնակների տիրապետության տարիներին գրողը վերադառնում է Հայաստան և մասնակցում քաղաքական կյանքին:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո իր քաղաքական համախոհների հետ Շանթը անցնում է Պարսկաստան, հետո՝ Ֆրանսիա, Եգիպտոս, որտեղ շարունակում է զբաղվել ուսուցչությամբ: Այնուհետև նա փոխադրվում է Բեյրութ և տասնյակ տարիներ աշխատում «Հայ ճեմարանում» իբրև տեսուչ: Լևոն Շանթը վախճանվում է 1951 թվականի նոյեմբերին, Բեյրութում:

Հայ գրականության մեծ վարպետների՝ Շիրվանզադեի, Թումանյանի, Վարուժանի և Իսահակյանի ժամանակակիցն է Շանթը: Իր ստեղծագործական կյանքի հիսունից ավելի տարիների ընթացքում նա գրել է բանաստեղծություններ, վիպակներ, դրամաներ, ստեղծել մարդկային փոխհարաբերությունների, մտքերի ու հույզերի անհանգիստ մի աշխարհ, որն իր ուրույն տեղն ունի հայ գեղարվեստական մտքի զարգացման մեջ:



Եթե Թումանյանը խոր հավատ ուներ ազգային կյանքի հավերժում և նրա մտահոգության առարկան ժողովուրդն էր, իր գոյության դժվարին հարցերով, ապա Շանթի իդեալը անհատն էր, հաճախ կյանքի հոգսերից վերացած անհատը, որն ազատություն էր որոնում պատրանքի լուսավոր հորիզոններում: Սակայն Շանթի գաղափարական որոնումների ժամանակաշրջանում աշխատավոր զանգվածների ազատության հարցը արդեն դարձել էր պատմության գլխավոր խնդիր, և այդ պայմաններում անկաշկանդ անհատի վերացական իդեալը հնչում էր իբրև հնացած եղերերգ:

Շանթն այն եզակի արվեստագետն էր, որի հայացքները ձևավորվեցին երկու տարբեր միջավայրում, հայ և եվրոպական իրականության մեջ: Ընդ որում երկրորդ միջավայրի ազդեցությունն ավելի վճռական եղավ գրողի աշխարհայացքի, փիլիսոփայական և էսթետիկական ըմբռնումների ձևավորման ընթացքում:

1902 թվականին, Հովհ. Թումանյանին ուղղած նամակում, նա Փարիզից գրում էր. «Կարոտով եմ հիշում մե՛ր կյանքը, մե՛ր շրջապատը, մե՛ր տեղերը, մե՛ր բնությունը, մե՛ր ժողովուրդը, հիմա սկսեր եմ մինչև անգամ ազգային դառնալու. **սիրելու համար պետք է հեռանալ երևի»:** Ընդգծված այս միտքը դառնում է էսթետիկական սկզբունք: Գևորգյան ճեմարանից հեռանալուց հետո Շանթը կարծես ընկնում է կախարդական շրջապտույտի մեջ, որն անցնում էր երեք գլխավոր վայրերով՝ Պոլիս, Կովկաս, Եվրոպա: Շատ բան է տեսնում, շատ բան է սովորում նա: Հայ ամենազարգացած գրողներից մեկն էր Շանթը, սակայն, իր կյանքի մեծ մասը ապրելով հայրենիքից հեռու, նա կորցնում է ամենակարևորը՝ ստեղծագործական ոգեշնչման ակունքը: Գրական գործունեության առաջին շրջանում՝ պատանեկան բանաստեղծություններից մինչև «Ճամբու վրա» դրաման, իր երկերի նյութը Շանթը քաղում է ժամանակակից հայ կյանքից. երկրորդ շրջանում նա ստեղծում է պատմական բնույթի դրամաներ և իր ստեղծագործական կյանքը ավարտում «Հոգիները ծարավի» վեպով: Այլ խոսքով՝ Շանթի կերպարների միջավայրը հայ կյանքն է, արդիականությունը կամ պատմությունը: Սակայն ի տարբերություն իր ժամանակակիցների, որոնք հայ գրականության ժողովրդային ավանդների վրա ստեղծում ու հաստատում են ազգային բնավորություն և ազգայինից բարձրանում դեպի համամարդկայինը, Շանթը փորձում է իր ժամանակի համամարդկային բովանդակությամբ...

Իրականության այս ընկալումը իր հետ բերում է մարդու գեղարվեստական մեկնաբանության յուրօրինակ սկզբունք: Շանթի երկերում կերպարը կազմավորվում է ոչ թե իբրև տվյալ կոնկրետ պատմական իրականության հատուկ հոգեբանության, ըմբռնումների ու բարոյական նորմերի ամբողջություն, այլ իբրև կյանքի առօրյա դեպքերի ու վերացական գաղափարի համադրություն, և այդ տարօրինակ պատվաստի հետևանքով նրա կերպարները զրկվում են ազգային բնավորության ամբողջական կենսունակությունից: «Վերժին» վիպակի առիթով, 1898 թվականին, Շիրվանզադեն իրավացիորեն նշում է. «Մենք կարոտ չենք հեղինակի հերոսների գրքերից քաղած դատողություններին, պերճախոսության, մենք նրանցից պահանջում ենք կյանք, նրանք պիտի ներկայանան մեզ պատկերներով, գործերով, շարժում, կենդանի պիտի ապրեն, մտածեն, զգան և ոչ թե դատողություններ անեն»:

Հեռանալով սոցիալական կյանքի անհաշտելի հակասություններից, իր առաջին իսկ երկերում Շանթը ձգտում է հաստատել մարդու և բնության հավիտենական ներդաշնակության գաղափարը, ռոմանտիզմի հայտնի գաղափարներից մեկը:

Վերացական մարդու սկզբունքը գրողին մղում է հավերժական թեմաների ոլորտը: «Լեռան աղջիկը» պոեմում, «Երազ օրեր» և «Դարձ» վիպակների մեջ այդ թեման սերն է, որը երբեմն մեղմ, երբեմն ողբերգական երանգներով ծավալվում է Շանթի ամբողջ ստեղծագործության մեջ: Սիրո կախարդական ուժով Շանթի կերպարները բարձրանում են առօրյա գորշությունից ու համակվում մարդկային բնության վսեմ գեղեցկությամբ:

«Լեռան աղջիկը» պոեմի պատանի հերոսը դպրոցի անձուկ միջավայրից գնում է Գեղարդ, խաշնարածների մոտ: Լեռնային գիշերը, խավարը ճեղքող կայծակը, անձրևի շառաչն այնքան են ոգևորում պատանուն, որ նրան թվում է, թե կարող է նվաճել անկարելին: Բնությամբ ներշնչված պատանու երևակայության մեջ պարզ ու հասարակ խաշնարած աղջիկը դառնում է աշխարհի անսպառ հմայքի խորհրդանիշ:

Այս պատանու համեմատությամբ ավելի կենդանի և ամբողջական կերպար է Երվանդը («Երազ օրեր»): Նա ոգևորվում է Շիլլերի Մարկիզ Պոզայի հայրենասիրությամբ, իր սիրած աղջկա՝ Վարդուհու մեջ երազում է տեսնել Տուրգենևի Ելենային և անկեղծորեն ցանկանում է ծառայել ժողովրդին: «Ինձ համար,— մտածում է Երվանդը,— ոչինչ ու անարժեք բան մըն է կյանքը, երբ չկա աշխատանք, մաքառում, ձգտումներ ու կիրք, հուզում ու ծրագիր»: Այս հավաստումը ոչ մի հիմք չուներ, քանզի Երվանդը ո՛չ աշխատել էր և ո՛չ էլ մաքառել: Նա հավանաբար պետք է դառնար այն մտավորականներից մեկը, որոնք, մերժելով իրականությանը, անմիջապես դիմեցին փախուստի, որովհետև ժողովրդի ծանր կյանքը անհամատեղելի էր «Երազ օրերի» հովվերգությանը:

Բայց տվյալ դեպքում կարևորը բնության և մարդկային հոգու ներդաշնակության հարցն է, որ Շանթը նորից արծարծում է «Դարձ» վիպակում: Ինչպես «Լեռան աղջկա» պատանին և «Երազ օրերի» Երվանդը, «Դարձի» հերոս Արտաշեսը նույնպես բնության միջոցով է հասնում ինքնաճանաչման, բանականության և զգացմունքի, ձգտումի և կարողության միասնության: Խծկոնքի վանքում հանդիպելով Շուշանիկին, նա հասկանում է, որ անհնար է մարդու մեջ խեղդել մարդկայինը, կրոնին ծառայելու համար: Բայց երիտասարդ վարդապետացուն այստեղ կանգ չի առնում: Շատ ավելի կարևոր է նրա երկրորդ եզրակացությունը. հոգևորականի գործը խաբեություն է, իսկ խաբելով չի կարելի ծառայել ժողովրդին: Թվում է, թե այդ համոզմունքը Արտաշեսին պետք է մղեր դեպի կյանք, դեպի գործ ու մաքառում, բայց առայժմ նա կանգ է առնում ապագա գործունեության երազանքի սահմանագծին:

Փախուստը իրական կյանքից և անիրական կեցության ոլորտում ժողովրդի գործին ծառայելու ձգտումը՝ իր ժամանակի ռոմանտիկական մտայնության այլաձևություններից մեկն էր:

Իր հետագա երկերում, հատկապես «Դուրսեցիներ» վեպում և վաղ շրջանի դրամաներում, Շանթը համեմատաբար ավելի է մոտենում մարդու և ժողովրդի, մարդու և ընտանիքի փոխհարաբերության կոնկրետ հարցերին, որոնք առնչ-



վում էին արևմտահայության սոցիալական և ազգային ազատագրության շարժումներին:

Ծանր և ողբերգական էր արևմտահայության վիճակը 19-րդ դարի 80—90-ական թվականներին: Եվրոպական պետությունների միջնորդությամբ հայոց հարցը լուծելու հույսերը խորտակվեցին, անօգնական արևմտահայությունը նորից հանձնվեց թուրքական բռնակալության ողորմածությանը:

Այդ տարիներին երիտասարդությունը լցված էր երկիր մեկնելու բուռն ցանկությամբ, թեև հստակ չէր պատկերացնում իր անելիքը: Ազգային ազատագրական շարժման հարցերին Շանթը անդրադառնում է «Դուրսեցիներ» վեպում, «Եսի մարդը» ու «Ճամբու վրա» դրամաներում: Եթե ազատագրության հարցը Րաֆֆին քննում էր լայնորեն, ոգևորում ժողովրդին, շարժման ծավալման ուղիներ նշում, ապա Շանթը նույն հարցը մեկնաբանում է յուրովի, իբրև բարոյականության ընդհանուր պրոբլեմ, իբրև մարդկային բնավորության փորձության՝ պատմության բախտորոշ պահին: Բնորոշ է նաև գրողի եզրակացությունը. մասնակցելով ազգային-ազատագրական շարժումներին, մարդը կորցնում է իր ազատությունն ու երջանկությունը:

«Դուրսեցիներ» (1894) վեպի ատաղձը հավանորեն Կարինի «Երկրագործական ընկերություն» գաղտնի կազմակերպության պատմությունն է, թեև վեպը պատկերում է կերպարների բուռն գործունեության նախաշրջանը միայն, երբ նրանք, առօրյա հոգսերի մեջ, երբեմն հիշում են, որ երկիր պետք է գնան: Դուրսեցիները Պոլիս են եկել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից: Համանման ձգտումները և հայացքները միավորել են նրանց, դարձրել անբաժան ընկերներ: Վեպի գլխավոր կերպարը՝ Բագրատը, կարնեցի է. նա բարձրագույն կրթությունն ավարտել է Մոսկվայում, զբաղվում է ուսուցչությամբ, մինչև որ հնարավոր լինի երկիր գնալ: Բագրատի հայրենակիցը՝ Գևորգը, Կարնո խռովությունների մասնակիցը, Պոլիս է եկել բանտարկությունից ազատվելուց հետո: Նա կարոտով է հիշում հայրենի քաղաքը, հաճախ այցելում հայրենակից մշակներին, ինչպես ինքն է ասում, գնում է «Համալսարան»: Նրանց ավագ ընկերը՝ Սարգիսը, որը նույնպես զբաղվում է ուսուցչությամբ, Պոլիս է ընկել հայրենի քաղաքում տիրող հալածանքներից խուսափելով: Եթե այս երիտասարդները համախոհներ են, ապա նրանց չորրորդ ընկերը՝ Վասակը, որ շատ քաղաքներ է թափառել, սովորել ու կիսատ թողել գիտություններ, չի ցանկանում աշխատել, որպեսզի չզրկվի ազատությունից:

Բագրատը բուռն գործունեություն է ծավալում Պոլսում: Նա փորձում է բարելավել ուսման ու դաստիարակության գործը, կրճատել կրոնի դասերը և ավելի լայն տեղ տալ ստույգ գիտություններին: Արհեստավոր երիտասարդների համար նա բացում է կիրակնօրյա դպրոց, ծրագրում է հրատարակել մանկական ամսագիր: Բայց շուտով Բագրատը հանդիպում է աղաների ու հոգևորականների համառ դիմադրությանը և զրկվում աշխատանքից: Սարգիսը, որ կյանքի ավելի մեծ փորձ ունի, ավելի լավ է ճանաչում աղաներին, այլ վերաբերմունք չի սպասում նրանցից: Բագրատի լուսավորական ծրագրերին ավելի անողոք է վերաբերվում Վասակը, որը ժխտում է վարչական ու պետական հարաբերությունները, ընտանեկան նիստուկացը, դպրոցը և դաստիարակությունը, իբրև մարդկային անհատականությունը կաշկանդող հաստատություններ: Անհատի ազատության մասին ծայրահեղ թվացող այս դատողությունները

վորական անիշխանական ֆրազներ են, որոնց բուն էությունը եսասիրությունն է: Իր անձին սպառնացող վտանգը Վասակին ներշնչում է ամեն ինչ ժխտելու խիզախություն , բայց այդ խիզախությունն իսկույն չքանում է, երբ նրա առջև բացվում է բարեկեցիկ կյանքի հեռանկարը:

Որոշ քննադատներ Վասակի կերպարի մեջ փորձել են տեսնել հեղինակի համակրանքը, բայց թվում է, թե պարզ պետք է լիներ, որ, հանձին Վասակի, Շանթը, ոչ թե պաշտպանում, այլ դատապարտում է եսասիրությունը, այսպես կոչված՝ ամբոխից վեր լինելու սնամեջ ինքնավստահությունը:

Հեղինակի հայացքներն արտահայտում է Բագրատը, որն արգահատանքով է վերաբերվում Վասակի դատողություններին: Գործը և մաքառումը, ուրիշների առաջադիմությանը նպաստելը Բագրատի համար ներքին անհրաժեշտություն է, հաճույք: Բայց այս ամենը դեռևս անձնազոհություն չէ: Այն օրերին, երբ Լուիզի սիրով արբեցած Բագրատը մոռացել էր իրական աշխարհը, հանկարծ հայտնվում է նրա հին ընկերը և առաջարկում մեկնել Տարոն՝ ուսուցչական աշխատանքի: Տարիներով փայփայած երազի իրականացումը շփոթում է Բագրատին, կյանքի անհոգ ճանապարհը կարծես ընդհատվում է վիհի եզրին: Թողնելով Լուիզին, հրաժարվելով անձնական երջանկությունից, Բագրատը մեկնում է Երկիր, բայց մեկնում ոչ թե հերոսի, այլ ճակատագրին համակված զոհի վճռականությամբ: Բագրատն այլևս ոչինչ չունի տալու այն գաղափարի իրականացմանը, որին զոհաբերում է իր սերը: «Դուրսեցիները» վեպով Շանթի ստեղծագործության մեջ սկզբնավորվում է անհատական երջանկության և հասարակական պարտքի կոնֆլիկտը: Սակայն դրանով չի սպառվում վեպի նշանակությունը: Թեկուզ անորոշ ու տարտամ, բայց Շանթը վկայում է ազգային-ազատագրական շարժման համաժողովրդային բնույթը, վերստեղծում, թեկուզ անհատապաշտական միտումով, այն մարդկանց կերպարները, որոնք ապրեցին ժողովրդի ազատագրության գործին ծառայելու ձգտումներով:

«Դուրսեցիները» և Շանթի արձակն ընդհանրապես զիջում է նրա թատերգությանը, հատկապես «Հին աստվածներ», «Կայսր», «Օշին պայլ» դրամաներին, որոնք Սունդուկյանից ու Շիրվանզադեից հետո նշանավորեցին հայ դրամատուրգիայի զարգացման նոր շրջանը: Բայց անարդար կլիներ կատարյալ արվեստով կերտված թատերգության ստվերի տակ թողնել հեղինակի արձակը, որն ընթերցողին գրավում է կերպարների բարոյական մաքրությամբ ու գեղեցկությամբ: Շանթը մարդկային հոգու շարժման, ապրումների ու տրամադրությունների արվեստագետ է: Նրա արձակում համադրվում են գրական տարբեր ուղղությունների՝ ռոմանտիզմի և նատուրալիզմի տարրեր, մի երևույթ, որ դասական ռեալիզմի ճգնաժամի հետևանք էր: Հեռանալով հասարակական կյանքի լայն ու բազմակողմանի ընդգրկումից, գրողը դիմում է դեպի մեկուսացած անհատի հոգեվիճակը: Մեծ ռեալիստների համեմատությամբ Շանթի երկերում նվազ սրությամբ են արտահայտվում սոցիալական կյանքի հակասությունները, ավելի ճիշտ՝ սոցիալական հակասությունները բեկվում են իբրև մենավոր հոգիների հակասություններ, և դրա հետևանքով կոնկրետ իմաստից զրկվում է Շանթի կերպարների բողոքը չարիքի ու անարդարության դեմ:

Չափածո և արձակ մի շարք երկերից հետո Շանթը դիմում է թատերգության: «Լեռան աղջկա», «Երազ օրերի» և «Դուրսեցիների» ճանաչված հեղի-



նակը 1901-ին գրում է «Եսի մարդը» դրաման, ուր ավելի վերացական ձևով, քան «Դուրսեցիներ» վեպում, փորձում է մեկնաբանել մարդու և հասարակության փոխհարաբերության, մարդու բարոյական պատասխանատվության հարցը: Պիեսի գործողության հիմքը երկու անհարիր գաղափարների՝ հայրենասիրության և եսապաշտության բախումն է:

Սեդրակը կիսատ է թողնում ուսումը և Եվրոպայից վերադառնում է Պոլիս դավաճան Մուշեղին պատժելու: Գաղտնի կազմակերպությունը որոշում է Մուշեղին գնդակահարել, բայց Սեդրակը դժվարանում է վճիռը ստորագրել: Տարիներ առաջ նրանք հարևաններ են եղել, Սեդրակը ոգևորվել է Մուշեղի հայրենասիրական գործերով, սիրել նրա քրոջ աղջկան: Հարցը առավել է բարդանում, երբ ոստիկանության պաշտոնյա դարձած Մուշեղը, փաստից ետ բերելով Սեդրակի գրած վտանգավոր նամակները, նրան խորհուրդ է տալիս զգույշ լինել, փորձանքի մեջ չընկնել: Մուշեղի վերաբերմունքը զինաթափում է Սեդրակին: Մահապատժի փոխարեն նա ցանկանում է խառնել Մուշեղի հոգու մոխիրը, որպեսզի «ազնիվ կայծեր պլպլան», և դավաճանը վերադառնա իր նախկին հավատին:

Երիտասարդության տարիներին Մուշեղը տարվել է ժողովրդին ծառայելու գաղափարով, բայց շուտով հիասթափվել և ոստիկանությանն է մատնել ընկերներին: Վաղեմի իդեալները նա համարում է ծանր մոլորություն: Պարզ է, որ Մուշեղի եսասիրությունը չի ծնվել դավաճանությունից հետո. նա եսասեր է եղել նաև երիտասարդության տարիներին, և դրա հետևանքով էլ հասել է դավաճանության, որը փոքրոգի, վախկոտ մարդկանց բաժինն է կյանքում: Միամիտ Սեդրակը չի ըմբռնում, որ Մուշեղի համար չկա վերադարձի ուղի, որ նա կտրել է բոլոր կապերը ժողովրդի, ընտանիքի և մարդու հետ, կյանքի միակ չափանիշ դարձնելով իր ողորմելի եսը:

Առաքինության և ստորության սուր կոնֆլիկտի մեջ, թվում է, հեղինակի վերաբերմունքը պետք է դրսևորվեր պարզ ու որոշակի: Եվ իրոք, համակրելով Սեդրակին, այն մարդուն, որ ցանկանում է ծառայել ժողովրդի ազատագրության գործին, Շանթը դատապարտում է Մուշեղի դավաճանությունը: Բայց դրամայի հիմքում ընկած իրական բովանդակությունից զուրկ բարոյական հակադրությունները ստեղծում են այն թյուր տպավորությունը, թե դավաճանը և հայրենասերը համարժեք եսեր են Շանթի համար:

«Եսի մարդը» դրամայում թերի է արտացոլված իրական կյանքը, ազատագրական շարժման ժողովրդային բնույթը: Պատճառը ոչ միայն իրականությունից Շանթի հեռու լինելն է, այլև այն, որ նա տարված էր Արևմուտքի անկումային գաղափարախոսությամբ, հատկապես նիցշեականության որոշ միտումներով, որոնք խաթարում էին իրականության ճիշտ ընկալումը, գրողին հեռացնում ժողովրդական կյանքի կենսական հարցերից:

Նիցշեականության ազդեցության հետևանք էր նաև անձնազոհության անիմաստ լինելու փիլիսոփայությունը, մի զգացմունք, որն ազգային-ազատագրական շարժման ոլորտից Շանթը փոխադրեց ընտանեկան հարաբերությունների միջավայրը:

«Ուրիշի համար» դրամայի նյութը մի դժբախտ ընտանիքի պատմություն է, որի ամբողջ հոգսը ծանրացել է այդ ընտանիքի խոնարհ ու անձնազոհ աղջկա ուսերին: Սիրանը ծերացած հոր, քույրերի ու եղբոր միակ ապավենն է:

Ինքնամոռաց նվիրվածությունը նրան անտարբեր է դարձրել կյանքի հանդեպ, խլացրել նրա մարդկային զգացմունքները: Սիրելով ուրիշին, Սիրանը ակամա խոստանում է ամուսնանալ մի մարդու հետ, որն իր սերը պարտադրում է անօգնական խեղճությամբ:

Սիրանի անձնազոհությունը քիչ թե շատ հասկանում ու գնահատում է հայրը, որ խորհուրդ է տալիս նրան հանգստանալու համար մի քանի օրով գյուղ գնալ: Այդքանը բավական է, որ անբան ու հացկատակ եղբայրը քրոջը համարի եսասեր. «Դուք կաշկանդել կուզեք ինձի ու իմ ծրագրերս,— ասում է եղբայրը,— ա՜խ, վար կքաշեք դուք ինձի, կխլեք ազատությունս. վա՛ր, վա՛ր. դեպի կյանքի այդ չնչին սև աշխատանքը»: Ազատության այս սիրահարը բնական ու օրինական է համարում քրոջ անազատ վիճակը, քանի որ նա «վարի» մարդ է, սև աշխատանքի մարդ, իսկ ինքը՝ ընտրյալ, բացառիկ անձ:

Թեև անհատապաշտական հայացքը կաշկանդում է հասկանալ իսկական անձնազոհության վեհությունը, բայց մակաբույծ երիտասարդի կերպարով Ծանթը սահմանազատվեց և մերժեց Նիցշեի «Գերմարդու» փիլիսոփայությունը:

Ազգային-ազատագրական շարժումների վերջին արձագանքը և հեղինակի վերջին արդիական դրաման «Ժամբու վրա» խորագրով, ստեղծվում է 1904 թվականին: Նախորդ երկերում Ծանթի հերոսները ապրում են միայն Երկիր գնալու երազով, իսկ «Ժամբու վրա» դրամայում մենք հանդիպում ենք Երկրից եկած հերոսին՝ Վահրամին, որը Երկիր վերադառնալու ճանապարհին կանգ է առնում Պոլսում: Վահրամը տեսել է մահ ու տառապանք, տեսել ժողովրդի ողբերգությունը: Իր մորեղբորը՝ Մարգարին, պատմելով Երկրի մասին, Վահրամը մոռանում է ահավոր մղձավանջը և հիշում միայն իր ընկերների «հերոսական» գործերը, որոնք չեն ոգևորում միամիտ ու բարի հողի աշխատավորին: «Ի՞նչ ըսեմ, տղա՛,— ասում է Մարգարը,— աստված հաջողե, միայն զգույշ եղեք, զգույշ, կրակի հետ չեն խաղար»: Մարգարի խոսքերի մեջ կա դառն մի ճշմարտություն: 19-րդ դարի վերջերին կազմավորվող ազգայնական կուսակցությունները եվրոպական տերությունների ուշադրությունը գրավելու նպատակով երբեմն դիմում էին միամիտ ու անհեռատես արկածախնդրության, որը խաթարում էր ազգային-ազատագրական շարժումների ժողովրդական բնույթը: Այդ ցավալի իրողության հեռավոր արձագանքն է լսվում Ծանթի դրամայում, որի զարգացման առանցքը «Դուրսեցիներ» վեպում շոշափված հարցն էր՝ հասարակական պարտքի և անձնական երջանկության հակասությունը:

«Ժամբու վրա» դրամայում նույնությամբ կրկնվում են «Դուրսեցիներ» վեպի կերպարների հոգեկան տագնապները: Վերադառնալով Երկրից, Վահրամը հանդիպում է մեծահարուստ Հարենցի քրոջը՝ Մարիին, որը բարեկամների ու ծանոթների միջավայրից ձանձրացած, հոգեկան անդորր է որոնում թափառումների ու մենության մեջ: Բարեկեցության կուպիտ ըմբռնումը Մարիին չի բավարարում, նա երազում է ուրիշ աշխարհ, որ պիտի գա: Մարիին չեն հասկանում հարազատները և շրջապատողները: Մայրը և եղբայրը զարմանում են, որ անհոգ ու ապահով կյանքը ձանձրացնում է նրան: Մարիի համար Վահրամը նոր մարդ է, տարբեր իր շրջապատի տափակ ու տաղտկալի մարդկանցից: Վահրամը տեսել է պանդխտություն ու կարիք, թափառել մի պատառ հացի ու մի պատառ կրթության համար, կռվել ու տառապել երկրում: Աղջիկը հստակ պատկերացում չունի Վահրամի գործերի մասին, բայց սիրում է նրան, նրա մեջ տեսնում ավելի տաք, ավելի վեհ մի աշխարհ:



Մարիի հետ զրուցելիս Վահրամն ավելի անկեղծ է, ավելի իրատես: Սիրո զգացումը ցրել է անցած օրերի վարդագույն մշուշը: Նա դժկամությամբ է խոստովանում, թե իրենց ծրագրերը ոգևորություն չեն առաջացնում ժողովրդի մեջ, թե մեր հոգին «ո՛չ ցանկանալ գիտե, ո՛չ ձգտում ունի իր ցանկացածին պես ապրելու, ո՛չ կռիվ գիտե, ո՛չ դիմադրություն, ո՛չ նույնիսկ մեռնիլ գիտե այդ հոգին»: Վահրամի դժգոհությունը նորություն չէր. դեռևս Րաֆֆու «Կայծերի» լավատես ու եռանդուն հերոսները ուղիներ էին որոնում արթնացնելու ժողովրդի ոգին: Երկարամյա ու դաժան փորձություններից հետո ռոմանտիկական հերոսականության վերջին առաքյալներից մեկը հուսահատորեն հաստատում է ազգային ազատագրության հույսերի խորտակումը: «Ժամբու վրա» դրաման միաժամանակ ռոմանտիզմի փայփայած գաղափարների վերջաբանն էր, լուսավոր երազների տերևաթափը: «Ես եկած եմ երթալու համար,— ասում է Վահրամը,— երթալու, մեռնելու, որովհետև գնացողին դարձ չկա»: Հետևաբար, որքան էլ գեղեցիկ լինեին Վահրամի խոսքերը Երկիր մեկնելու անհրաժեշտության վերաբերյալ, դրանց մեջ այլևս հերոսություն չկա, ոգևորությունն անցել էր, Վահրամի հոգում թողնելով միայն դատապարտվածի տագնապը: Հրաժեշտ տալով Մարիին, նա հրաժեշտ է տալիս նաև այն ձգտումներին, որ անհարիր էին հուսահատ անձնազոհության հետ: Ծանթն այլևս չէր տեսնում կյանքի հեռանկարը, չէր տեսնում այն ուժերը, որոնք ի վիճակի էին փոխելու տիրող ծանր կացությունը: Առօրյա գոյության ընթացքում բերկրանքը տևում է միայն մի ակնթարթ: Ինքնասպանությունից առաջ Մարին ասում է. «Կյանքը, բարեկա՛մ, օր մըն է միայն, օ՛ր մը»: Այս հիասթափությունից է սկիզբ առնում գրողի նահանջն արդիականությունից դեպի պատմությունը, ուր հիասթափությունը անձնավորվում է իբրև մարդկային կյանքի ունայնության փիլիսոփայություն:

## 2

Ծանթի ստեղծագործության երկրորդ շրջանը ձևավորվում է պատմական բախտորոշ իրադարձությունների մթնոլորտում. ռուսական առաջին հեղափոխության պարտության տարիներին նա ստեղծեց «Հին աստվածներ» (1909), համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ «Կայսր» (1914), Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո՝ «Ծղթայվածը» (1918) դրամաները:

Իրենց բնույթով ու գաղափարներով տարբեր երկերում Ծանթն արտահայտեց նույն խոր հուսահատությունը, ցնորական գեղեցկության նույն տենչանքը, իրականությունից հեռանալու և պատրանքների աշխարհում ապաստան գտնելու նույն ձգտումը:

Իրականությունից դեպի պատրանք կատարած շրջադարձը պատահական չէր: «Հին աստվածները» դրաման ստեղծվեց այն ժամանակ, երբ ռուսական առաջին հեղափոխության պարտությունից վախեցած բուրժուական մտավորականությունը փորձեց հոգեկան հենարան գտնել Շոպենհաուերի և Նիցշեի ուսմունքներում: Գաղափարական ճգնաժամի հորձանքը շիթեր նետեց նաև հայ գրականության ակոսների մեջ: Մերթ Նար-Դոսի ու Փափազյանի, մերթ Վարուժանի ու Իսահակյանի առանձին երկերում նկատվեցին հոռետեսությամբ և նիցշեական անհատապաշտությամբ երանգավորված որոշ տրամադրություններ, որոնք ճիշտ չէր լինի համարել միայն օտար ազդեցության հետևանք: Ցարական միապետության և սուլթանական ջարդարար բռնակալության պայմաննե-

րում հայ գրողները շարունակ փրկության ուղիներ էին որոնում, և նրանց երկերում արտահայտվող մարդկային ոգու ցասումը չէր կարող ուղղագծորեն առնչվել նիցշեականության հետ, քանի որ ազատության ձգտումը հայ գրականության մեջ չէր հանգում ուրիշների վրա իշխելու մտքին: Բայց որոշ քննադատներ, ելնելով արտաքին նմանություններից, փորձում են Շանթի հայացքները նույնացնել նիցշեականության հետ:

Ինչպես նշեցինք, Լևոն Շանթի աշխարհայացքի հիմնական տարրերը կազմավորվեցին հայ իրականությունից հեռու, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի եվրոպական անկումային գրականության միջավայրում: Բայց ճիշտ չէր լինի գրողի հայացքների ամբողջությունը համարել արտաքին ազդեցությունների արդյունք և նրա երկերում չտեսնել հայ ազգության պատմական լինելիության մի քանի առանձնահատկությունների ուրույն անդրադարձումը:

«Մնաս բարով իրիկունը» առաջին արձակ գործից մինչև «Ճամբու վրա» դրաման Շանթն անցավ մի ճանապարհ, որն աղերսվում էր իրական, տեսանելի աշխարհի հետ: Թեև թույլ էր այդ աղերսը, և դրա հետևանքով գունատ էին նրա վեպերում ու դրամաներում հանդես բերված կերպարները, թեև գրողը տեսնում էր հասարակական հարաբերությունների միայն արտաքին հակասությունները, այնուամենայնիվ նա խարխափելով մոտենում էր ազգային կերպարի բնագծերին:

Բայց «Հին աստվածներ» դրամայով գրողը կարծես ետ դարձավ անցած ճանապարհից և նոր, անիրական արահետով դիմեց դեպի ցնորական գեղեցկության ակունքը: Անհետացան «Երազ օրերի» պայծառ գույները, «Դուրսեցիների» հասարակական մտահոգությունները, «Ճամբու վրայի» անձնազոհության գաղափարը:

Այսպիսին է նախնական տպավորությունը. մինչդեռ Շանթի ստեղծագործության առաջին շրջանին հատուկ նատուրալիզմն արդեն բովանդակում էր տարրեր, որոնք «Հին աստվածներում» վերածեցին իրականության սիմվոլիստական ընկալման: Խորացավ անջրպետը Շանթի և նրա ժամանակի ռեալիստների միջև: Ասում ենք խորացավ, քանի որ իրականության համեմատությամբ պատրանքը գերադասելու միտումը սկիզբ էր առել Շանթի դեռևս վաղ շրջանի բանաստեղծություններում:

Այդ սկզբունքով է կերտված «Հին աստվածներ» դրաման, ուր պատկերված դեպքերը տեղի են ունենում «Հազարամյակ մը մեզմե առաջ»:

Նշենք, որ «Հին աստվածների» պատմականությունը սոսկ հենք է, ձև արդիական գաղափարի մարմնավորման համար: Դրամայի տարերքը՝ մարդու մենակության և ճակատագրով նրան վիճակված հավիտենական տառապանքի գաղափարը, Շանթը տեղադրեց հեռավոր պատմության ստվերագծի մեջ:

Տանջանքի ու երազների ուրույն մի աշխարհ է պատկերված «Հին աստվածներ» դրամայում: Միջավայրը Սևանի հինավուրց կղզին է, ջրի կապույտ շերտով մեծ աշխարհից անջատված անապատը, ուր չկան կյանքի լույսերն ու ստվերները, չկան իսկական կրքեր ու բախումներ: Այստեղ ծվարել են մարդիկ, որոնք հանուն անդրաշխարհային երանության դատապարտված են մաքառելու իրենց մարդկային էության դեմ: Բայց ջերմեռանդ աղոթքներով և խնկի բույրով արտաքին աշխարհը չի մոռացվում, մարդու մեջ չի մեռնում մարդկայինը, աշխարհիկ կյանքը հարատևում է Կույր վանականի կրոնական մոլեգնու-



թյան, Աբեղայի հիվանդ ու անարատ սիրո և վանականների գիշերային տեսիլներում:

«Հին աստվածների» կերպարները ապրում են երկու աշխարհում՝ իրականության և մտապատրանքի: Առաջինը աղքատ ու խեղճ անապատն է, երկրորդը՝ այդ խեղճությունից ծնված շքեղ ու հոգեթով երազը, մարդկային կյանքով ապրելու անհուն կարոտը: «Արթունների աշխարհը,— ասում է Հերակլիտը,— ընդհանուր է ու միասնական, երազի մեջ ամեն մեկը գնում է իր սեփական աշխարհը»: Հետևաբար, ճիշտ չէր լինի արթունների աշխարհի, այլ խոսքով ռեալիստական դրամայի, չափանիշներով բնութագրել «Հին աստվածների» երազների աշխարհը: Հնուց է հաստատված, որ դրաման գործողություն է, կրքերի ու բնավորությունների բախում: Բայց տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն դրամային, որն արտացոլում է կյանքի իրական հակասությունները:

«Հին աստվածներում» ճշմարիտ բախումներ չկան, կան օրհասական մաքառումներ. նույն կրքով համակված մարդիկ մաքառում են, որպեսզի ամեն մեկը իր մեջ հաղթահարի անհաղթելին: Ի տարբերություն ռեալիստական դրամայի, այստեղ կերպարը ինչ-որ հավիտենական ձգտումի մարմնացումն է: Այդ ձգտումը դառնում է անխուսափելի ճակատագիր, կերպարի խոհերի, ապրումների և վարքագծի էություն, դրամայի քնարական ընթացքի հենք:

Բնորոշ է նաև այն, որ «Հին աստվածների» կերպարները հակառակորդներ չեն, այլ համախոհներ, քանի որ ամեն մեկի հոգում ծվարել է հավիտենական տառապանքի դատապարտված նույն մարդը: Դժվար չէ նկատել Կույր վանականի, Վանահոր և Աբեղայի կերպարների ներքին նմանությունը, նույն ողբերգության տարբեր հոգեվիճակները: Աշխարհը չտեսնելու և տեսածը մոռանալու կատաղությամբ լցված Վանականն իր աչքերն է հանել: Իշխանուհու կամ աշխարհի պատկերը մոռանալու տենդը Վանահորը հասցնում է նորաշեն եկեղեցին քանդելու մտքին: Սեդային ծովից դուրս բերելուց հետո աշխարհի անզուսպ կարոտով է համակվում նաև երիտասարդ Աբեղան: Պարզ է, որ այսպիսի դրաման չէր կարող սրընթաց գործողություն ունենալ, և գործողության «թուլությունը» նրա բնական հատկությունն է, ոչ թե թերությունը:

«Հին աստվածները» իբրև զգացմունքի, հարափոփոխ տրամադրությունների ու ապրումների դրամա, իբրև մենավոր մարդու ազատության տենչանքի քնարական պատմություն, նոր որակ էր հայ գրականության մեջ:

Շանթի դրաման չուներ և չէր կարող ունենալ Սունդուկյանի և Շիրվանզադեի ռեալիստական թատերգության բնույթը, նրանց կերպարների կենսականությունն ու բազմազանությունը, սակայն նա հայ գրականությունը հարստացրեց մարդու ներաշխարհը արտահայտող բարձր ու հմայիչ մի արվեստով, արվեստ, որ իր կատարելությամբ հիշեցնում է Իբսենին և Հաուպտմանին:

«Սևանի գագաթը. ժայռերուն մեջ ավերակ մը, իրիկնամուտ»: Հավանորեն առաջին անգամ չէ, որ Վանահայրը մենակության մեջ քննում է իր կատարած գործը: Ճի՞շտ վարվեց արդյոք ինքը, որ հին աստվածների ավերված տաճարի հիմքի վրա կառուցեց եկեղեցին, հավաքեց թշվառ մի ամբոխ, որ տանջանքով ձգտում է ազատվել երկրային մեղքերից: Կասկածը, երկմտությունը Վանահոր բնավորության բնորոշ գծերից մեկն է: Անապատ ստեղծելու վճիռը նա ընդունել էր այն ժամանակ, երբ իր հոգում դեռևս չէր հաղթահարել աշխարհիկ կյանքի հմայքը, որը վերստին հառնում է Ճերմակավորի կերպարանքով: Նրա

հայտնությունը զարմանք չի պատճառում Վանահորը: Կիսափուլ կամարի տակից դուրս է գալիս կարծես մի հին ծանոթ, հնօրյա վեճը շարունակելու համար: «Դու՞րս այս կղզիեն,— ասում է Ծերմակավորը,— դու՛ք, որ թշնամի եք ամեն գեղեցկության, ամեն կյանքի ու շարժումի, ամեն ուժի ու ծնունդի: Դու՞րս, մի՛ աղարտեք իմ աստվածներիս սուրբ դրախտը»:

Վանահոր ներքին աշխարհում բախվում են երկու հակադիր բարոյականություն, կյանքի երկու հակադիր ըմբռնում: Այնտեղ, ուր Ծերմակավորը տեսնում է հավերժական կյանք ու գեղեցկություն, ծիծաղկոտ ծով, արևով ու լույսով ողողված կղզի, Վանահայրը ցանկանում է տեսնել մռայլ մի անապատ, ուր մարդը աշխարհային մեղքերից պետք է մաքրվի աղոթքով ու ճգնությամբ: Վանահայրը չի փորձում հաշտության եզր գտնել աշխարհի ու անապատի միջև. ավելին, ժխտելով առաջինը, ձգտում է հաստատել երկրորդի ճշմարտությունը:

Սակայն Վանահոր հավատը հաշտ չէ նրա ներքին համոզմունքի հետ, և աշխարհիկ կյանքի անվերապահ մերժումը բխում է ոչ թե կրոնական ջերմեռանդությունից, այլ կյանքի սիրուց: Վանահոր հավատը ներքին տարակուսանքը խլացնելու արտաքին գործոն է միայն, քանի որ ճգնության գաղափարին նա հասել է ոչ թե բնական ճանապարհով, համոզմունքով, այլ անհույս սիրո թելադրանքով: Տարիներ շարունակ նա համառ ջանք է թափել անապատը կրտրելու կյանքից, վանականների հոգուց դուրս մղելու կապույտ ծովի հեռավոր ափը և սանձելու, խեղդելու իր հոգին տագնապող կասկածը: Բայց ամեն անգամ, հոգեկան խռովքի պահերին, կասկածը հայտնվում է Ծերմակավորի կերպարանքով, ծաղրում նրա կատարած գործը և անհետանում: Ներքին կասկածը այնքան հզոր ուժ է, որի հանդեպ խեղճանում է Սևանի ժայռերի վրա անապատ ստեղծող Վանահայրը: Առաջին հանդիպումը Ծերմակավորի հետ արդեն վճռում է մենամարտի ելքը. Վանահոր մեջ պարտվում է Վանահայրը, պարտվում է ճգնավորական կյանքի գաղափարը, հաղթանակը զիջելով Ծերմակավորին կամ Հովհաննեսին, որը դեռ սքեմ չէր հագել:

Հիշենք, որ Հովհաննես էր կոչվում Վանահայրը աշխարհիկ կյանքում, և անմոռաց սիրո իրավունքով նրան անունով է դիմում միայն Իշխանուհին: Գրականության մեջ առաջին սիրո վերադարձի թեման շատ անգամ է արծարծվել: «Հին աստվածներում» այդ բարդ հոգեվիճակը հեղինակը մեկնաբանել է երկու առումով՝ իբրև աշխարհի և անապատի բախում և իբրև սիրո անիմանալի վեհության ու ողբերգության մշտական առեղծված:

Քառորդ դար է անցել Իշխանուհու և Վանահոր առաջին հանդիպումից, շատ բան է փոխվել կյանքում, բայց նրանց հոգևատանջ սրտերում սիրո անաղարտ զգացումը շարունակում է ապրել ջահել տարիների թարմությամբ. «Ունեցել եմ ամեն ինչ,— ասում է Իշխանուհին,— և ամեն ունեցածս տվել եմ իմ հարազատներիս, բայց բախտավորություն ո՛չ մեկուն չեմ տվել և ո՛չ մեկեն ալ չեմ ստացել»: Ամուսնու մահից հետո, լքելով ապարանքն ու զավակներին, Իշխանուհին հաստատվել է Ցամաքաբերդում, որպեսզի մոտ լինի Հովհաննեսին, գեթ հեռվից տեսնի նրա ճրագի լույսը: Վանահայրը հանդիպումներից խուսափելու ուժ չունի այլևս, թեև աշխարհից հեռանալու նրա վճիռը առաջին հերթին նշանակում էր հեռանալ Իշխանուհուց:

Հանդիպումների և զրույցների առիթը նոր եկեղեցու կառուցումն էր, որը ոգեկոչեց հեռավոր տարիների ջերմությամբ պարուրված սիրո կարոտը, և այն



խոսքերը, որ պետք է ասվելին հոգնաթիվ տարիներ առաջ, ասվեցին այժմ, վախի ու շփոթի մատնելով Վանահորը: «Ի՞նչ կուզես, կի՛ն,— ասում է նա,— ի՞նչ կուզես դուն ինծմե: Ամբողջ կյանքիս կեսը տառապանք տվիր ինծի, տառապանք ու դառնություն, ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտասարդությունս, հիմա ալ մոխի՞րը քրքրել կուզես»: Խոր կարեկցանքով Իշխանուհին բացականչում է. «Իմ խե՛ղճ Հովհաննես»: Եվ իրոք, Իշխանուհու դիմաց կանգնած է ո՛չ թե վճռական ու հավատավոր Վանահայրը, այլ մի խեղճ մարդ, որին կյանքը տանջանքից զատ ոչինչ չի տվել:

Իշխանուհու գիտակցության մեջ, երկար տարիների ընթացքում, անմարմին սերը նույնացվել է հավատի հետ, իսկ կառուցվող եկեղեցին դարձել անմար սիրո վկայություն: Նրա հայտնած՝ «Աստված սեր է, վարդապետ» մտքից սարսափում է Վանահայրը և, թոթափելով վայրկենական թուլությունը, շտապում է հավատացնել և հավատալ, որ կառուցվող եկեղեցին կապ չունի իրենց սիրո հետ, որ եկեղեցին պետք է դառնա տուն «Սողոթքի ու ներքնասույզ խոհանքի»: Սիրո պատճառած դառնությունը Վանահայրը ձգտում է մոռանալ, միմյանց հակադրելով սերը և հավատը: Բայց իշխանուհու սիրո խոստովանությունը անպատասխան չի մնում. Վանահոր ներքին ձայնը Ծերմակավորի շուրթերով հաստատում է Իշխանուհու միտքը, թե եկեղեցին «մենք շինեցինք մեզի համար, մեր սիրո աստծո համար»:

Վանահայրը հեռանում է պարտված, նորից արժանանալով Ծերմակավորի հեգնանքին, հեռանում է, որպեսզի վերջին անգամ հանդիպի Իշխանուհուն՝ կապերը խզելու համար: Այս անգամ վանահայր Հովհաննեսին՝ սիրո դառնություններից ընկճված մարդուն, կարծես փոխարինել է մեկ ուրիշը՝ չար ու կոպիտ մի կրոնավոր, որն անողոք խստությամբ դատապարտում է իշխանուհու խաբեություններն ու մեղքերը: Սակայն Վանահոր արտաքին խստությունը ներքին թուլության արտահայտություն է, խեղճ ու թափուր հոգին փրկելու հուսահատ վճռականություն: Այդ պահին լռում է նույնիսկ Ծերմակավորը. այլևս հարկ չկար հեգնելու ինքն իրենից հրաժարված մարդուն:

Անակնկալ դաժանությամբ Վանահայրը փշրում է Իշխանուհու կախարդական երազը: Երկարատև քնից արթնացած մարդու նման, Իշխանուհին տեսնում է ու հասկանում, թե Հովհաննեսը իսկապես գոյություն չի ունեցել, թե իր երևակայությամբ ստեղծված մարդը ո՛չ մի կապ չունի իրական մարդու հետ: Այդ սոսկալի ճշմարտությունը հաստատում է նաև ինքը՝ Վանահայրը. «Կը ցավիմ, եթե բաց աչքերով տեսածդ ան չէր, ինչ որ կուզեիր: Աշխարհիս երեսին եթե տեսնել կուզես, ինչ որ սրտիդ ուզածն է՝ պետք է նայիս փակ աչքերով»:

Իշխանուհու և Վանահոր բախումը նույնպես հենվում է իրականության ու պատրանքի հակադրության վրա: Մերժելով տգեղ ու անմարդկային իրականությունը, Շանթը նորից ապավինում է պատրանքի մշտական գեղեցկությանը:

Կենսափորձով ու հոգևոր կյանքով տարբեր մարդիկ են Վանահայրն ու Աբեղան, թեև դժվար չէ տեսնել նաև նրանց նմանություններն ու ընդհանրությունները: Հեղինակի մտահղացումով այդ կերպարները նույն գաղափարն են հաստատում՝ տարբեր հանգամանքներում: Եթե սիրո անհաղթահարելի զգացմունքը Վանահոր անցյալն է, որի կապանքներից նա ձգտում է ազատվել ճգնավորական կյանքի արդարությունը հաստատելու համար, ապա Աբեղան իր գործած մեղքով կարծես ասում է, թե Վանահոր ջանքերն ապարդյուն են, թե

սիրո զգացումն անհնար է սպանել: Բայց չէ՞ որ Աբեղան Վանահոր ընտրյալն է, որի հոգում նա սերմանել է իր նվիրական մտածումները:

Իրոք, աշխարհից հրաժարված Վանահայրը երկու հպարտություն ուներ, մեկը՝ հեթանոսական տաճարի հիմքի վրա բարձրացող եկեղեցին, մյուսը՝ երիտասարդ Աբեղան: Եվ ահա Վանահայրը խռովում է եկեղեցուց, իսկ Աբեղայի հոգում նրա կառուցած ամրոցը երերում է, հետո դղրդյունով փլվում աշակերտի ու դաստիարակի վրա: Ի՞նչն է աղետի պատճառը:

Հակառակ իր ուսուցչի, որն անապատ էր եկել սիրո վիշտը խեղդելու, Աբեղան՝ հմայված Սեդայի պատկերով, անապատից ձգտում է դեպի կյանք, դեպի ծով, ուր առաջին անգամ փարվեց Սեդային: Երբ Սեդան չկար, ու չկար աշխարհը, Վանահայրը Աբեղայի համար գերագույն հեղինակություն էր, բարձր ու վեհ: Աբեղայի միակ աշխարհը հավատն էր, ճգնավորական կյանքը, մինչ Սեդայի հայտնությամբ բացվում է մի ուրիշ աշխարհ, բացվում է երիտասարդ վանականի մարդկային էությունը, որն այլևս չի կարող համակերպվել անապատի միատիպական խեղճությանը: Անակնկալ դիպվածի հետևանքով Աբեղան կանգնում է երկու անհարիր զգացմունքի՝ սիրո և հավատի առջև: Նախընտրել մեկը՝ կնշանակեր մերժել մյուսը, բայց Աբեղան չի կարողանում կողմնորոշվել, և այդ պատճառով նա մերթ Վանահորն է ապավինում, մերթ՝ Սեդային: Երկատված Աբեղան անկեղծ է ու անմիջական և՛ մեկ, և՛ մյուս դեպքում, սակայն նա չի հասկանում, որ նույնիսկ Վանահայրը անկարող է այլևս վերականգնել իր խախտված հավատը: Եվ նրանց ճանապարհները բաժանվում են, այն պահին, երբ աշակերտի ներկան զուգադիպում է դաստիարակի անցյալին, և նորից հերքվում է քրիստոնեական բարոյականությունը:

Աբեղան, որ կոչված էր դառնալու Վանահոր փոխարինողը, հիասթափվում է նրանից, իբրև դաժան ու անհոգի մի մարդուց: Անմեղ Աբեղային հայտնի չէ, որ իրենից առաջ սիրո բոցերի մեջ Վանահոր թևերն են այրվել, որ նա այլևս թռչել չի կարող, և երամից ետ ընկած թռչունի նման նստել է Սևանի ժայռի վրա ու անօգնական հայացքը հառել երկնքին: Աբեղայից հետո Վանահայրը կորցնում է իր միաբաններին, որոնք չեն համաձայնում քանդել նորաշեն եկեղեցին և նրա հետ գնալ մահվան, իբրև հավատի գերագույն իմաստի իրականացում: Միակ մարդը, որ ցանկանում էր հետևել Վանահորը, Կույր վանականն է: Նրանց ճանապարհները ինչ-որ տեղ հատվում են, ինչ-որ տեղ հավատը վերածվում է մոլեգնության: Բայց կգա մի օր, որ նույնիսկ Կույրը կհամակվի կասկածանքներով, և Վանահայրը իբսենյան Բրանդի նման կմնա մենակ, մենակ՝ հաղթողի տեսքով, որը սակայն չարաչար պարտվել է:

Աբեղայի գիտակցական կյանքը անապատում է անցել. դրսի աշխարհից ոչինչ չի բերել իր հետ, չի բերել նույնիսկ իր անունը: Մյուս վանականներից նա տարբերվում է իր անխառն հավատով, բարի ու հեզ բնավորությամբ: Թվում է, թե Աբեղան այդպես էլ կապրեր բուսական համր կյանքով, եթե անակնկալ դիպվածը չխախտեր նրա հավատը: Աբեղան փրկում է Սեդայի կյանքը, և նրա անձնազոհ խիզախությունը զարմանք ու հիացմունք է պատճառում վանականներին, բայց ինքը՝ Աբեղան, հուզված է, տխուր, ինչպես հեղինակն է ասում՝ «Տեսակ մը անկամք»: Գուցե դժվարին ապաշխարանքով Աբեղան քավեր առաջին մեղքը, եթե Իշխանի խոսքերը նրան չմատնեին հոգեկան նոր խռովքի. «Է՜, վրադ պիտի չըլլար այդ սև վերարկուն,— ասում է Իշխանը,— և ես գի-



տեի իմ ընելիքս: Քեզի կուտայի իմ տակիս նժույգը, կուտայի քեզի, ա՜յ, իմ սեփական սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ինծի հավատարիմ, և կառնեի քեզի իմ պալատս իբրև իմ հարազատ որդիս: Իմ սև նժույգս քու այդ կերպարանքիդ աղվոր պիտի վայելեր, իսկ ձեռքդ, կը տեսնեմ, շատով պիտի սորվեր սուրիս: Ձիս ու սուրս թե հերիք չեկավ, կուտայի քեզի աղջիկս...»:

Աբեղան անտարբերությամբ է լսում Իշխանի խոսքերը նժույգի, սրի ու պալատական կյանքի մասին, բայց նրա գիտակցության մեջ դամվում է Սեդան: Դրսի աշխարհի օրենքներով Սեդան պատկանում է իրեն: Սակայն ինքը զրկվում է Սեդայից , քանի որ գտնվում է մենաստանում և սև վերարկու է կրում: Կեսգիշերային ժամին, երբ հանդարտվում է ահռելի փոթորիկը, երբ Սեդան անվերադարձ հեռանում է կղզուց ու ցամաքքաբերդից, Աբեղայի այրեկոծ հոգում նորից շառաչում է ծովը, նորից լաստը կախվում է ջրի անդունդի վրա, ու լսվում է Սեդայի սուր ճիչը...

«— Ու՞ր են մտքերդ, Աբեղա»:

Հարցնողը Կույր վանականն է, որն անզուսպ համառությամբ քրքրում է նրա սիրտը: Կույրը չի տեսել փոթորիկը, չի տեսել Սեդային, բայց լավ էլ բավական է, որ հասկանա ու տեսնի ավելին, քան աչք ունեցողները:

Աբեղայի ապրումներին Կույրը հետևում է դաժան ու անհանգիստ հոգատարությամբ. նա հասկանում է, որ խախտվում է երիտասարդ վանականի հավատը, այն հավատը, որ կուրացրեց իրեն: Հետևաբար փրկել Աբեղային, նրա հոգուց դուրս մղել «կռապաշտ» շունչը, կնշանակեր հաստատել սեփական զոհաբերության իմաստը: «Քուրձ հագիր ու ապաշխարե»,— պնդում է Կույրը, և խեղճ Աբեղան տաղտկալի միօրինակությամբ կրկնում է. «Ես կորսված մեղավոր մըն եմ, փրկե՛ ինծի, տե՛ր, ես ինկած հանցավոր մըն եմ, օգնե ինծի տե՛ր... »: Բայց ամեն անգամ, ջերմեռանդ աղոթքի պահին, լսվում է ծովի շառաչը, և զղջումի խոսքերին խառնվում է Սեդայի տեսիլքը: Երկնքի պատահարը Աբեղային դուրս է նետում կյանքի սովորական հունից, և նրա պղտորված գիտակցության մեջ ջնջում իրականի ու անիրականի սահմանագիծը: Աբեղայի աղքատ աշխարհը լցվում է Սեդայի կախարդական պատկերով:

Իրական Սեդային ընթերցողը չի տեսնում: Դրամայում հայտնվող Սեդան Աբեղայի երևակայության ծնունդն է, նրա երկրորդ էությունը, ինչպես Վանահոր երկրորդ էությունն է Ծերմակավորը: Նույն բնավորությունն արտահայտված երկու կերպարի, ավելի ճիշտ՝ կերպարի և նրա մտապատրանքի միջոցով:

Այս հնարանքին Շանթը դիմում է այն դեպքերում, երբ ցանկանում է ավելի ակնառու դարձնել բնավորության երկատվածությունը:

Կույր վանականի հեռանալուց հետո Աբեղայի խցում հայտնվում է Սեդան՝ **«սպիտակ հագած... մազերը արձակ, խոնավ ու վրան մեկ-երկու թել ծովախոտ:**

**Աբեղան.**— (ետ-ետ երթալով) Դու՞ն... դու՞ն..

**Աղջիկը.**— Այո՛, ե՛ս, մի՞թե չէիր սպասեր:

**Աբեղան.**— Աստվա՜ծ իմ:

**Աղջիկը.**— Միա՞կ ես:

**Աբեղան.**— Ես... Ես մենակ եմ մի՛շտ:

**Աղջիկը.**— Այ՜, եկա քեզի ընկեր և եկա այսպես կեսգիշերին, որ մենակ ըլլանք ես ու դուն: Դուն, իմ քաջս, իմ արևս, իմ լուղո՛րդս...

**Աբեղան.**— Հերի՛ք է:

**Աղջիկը.**— Ինչու՞: Չէ՞ որ ես քեզմով է, որ հիմա կապրիմ, չէ՞ որ դուն նորեն կյանքս տվիր ինծի, և ի՞նչ քաղցր է այդ կյանքը, որ դուն տվիր ինծի: Այս քանի՛, քանի՛ տարի ապրեր եմ ես, ամբողջ տասնյոթը տարի, և ես չգիտեի, բնավ չգիտեի, որ չէի ապրեր: Մի՞տքդ է ցերեկը հո՛ն ալիքներուն մեջ. նայե՛, մազերս խոնավ են դեռ, բռնե՛, բռնե՛, շոշափե՛»:

Բայց երազի մեջ էլ Աբեղան կաշկանդված է, շոշափել աղջկա թաց մազերը կամ վերարկուն գցել նրա ուսին, կնշանակեր նոր մեղք գործել: Աբեղան այդքան ուժ չուներ: Նրա հոգում մենաստանը դեռևս անզիջում մարտ է մղում աշխարհի դեմ, մարտ, անձնավորված Կույր Վանականի և աղջկա կերպարներում: Կույրը համառորեն ձգտում է խեղդել Աբեղայի սիրո զգացմունքը, խեղճացնել, ստորացնել նրան, իսկ աղջիկը բարձրացնում է ծնկաչոք Աբեղային, ներշնչում, որ ինքը խիզախ մարդ է, ծնված կյանքի և ոչ թե ապաշխարանքի համար: Աբեղան դժվարանում է նախընտրել մեկ կամ մյուս զգացմունքը, բայց անիրական Սեդան, որ նրա սիրտն է լցվում կաթիլ առ կաթիլ, խարխլում է անսասան թվացող հավատը:

Մոլորված Աբեղան օր ու գիշեր դեգերում է իրականության և պատրանքի սահմանագծում: Անձուկ է նրա իրական աշխարհը՝ կղզին իր վանքով ու չարքերով: Անընդհատ փակվում է նրա իրական աշխարհը՝ կղզին իր վանքով ու չարքեոլորտներում: Անձուկ է նրա իրական աշխարհը՝ կղզին իր վանքով ու չարքե-

Մոլորված Աբեղան օր ու գիշեր դեգերում է իրականության և պատրանքի ոլորտներում: Անձուկ է նրա իրական աշխարհը՝ կղզին իր վանքով ու չարքերից վախեցած վանականներով, իսկ պատրանքի աշխարհն անընդհատ ծավալվում է, բացելով հրաշալի հորիզոններ: Կախարդական երազը Աբեղայի՞ փոխադրում է ծովափ. նրան թվում է, թե մարդկային կերպարանք առած մեգը և հովը փարվում են իրար, շշնջում սիրո ու կարոտի խոսքեր, ամբողջ բնությունը տոգորված է սիրով, միայն ինքն է մենակ ու անընկեր, նման խաչելության առջև վառված մոմի, որ մխում ու հալվում է մռայլության մեջ: Այս տխուր մտածմունքի պահին նա հանկարծ հիշում է հեռավոր ժամանակների առասպելական ճգնավորին, որ կարող է շատ բան պարզել, բայց Աբեղայի բոլոր հարցերին ճգնավորը պատասխանում է միայն մեկ բառով՝ ունայնությո՜ւն: Ունայն են փառքն ու վայելքը, գութն ու ողորմածությունը, ունայն է հանդերձյալ կյանքը: Ամեն ինչ զո՜ւր է, անիմա՜ստ:

Ճգնավորը հիմնովին խառնում է Աբեղայի առանց այն էլ շփոթ մտքերը. մինչև այժմ նրա գիտակցության մեջ բախվում էին աշխարհիկ զգացմունքի և քրիստոնեական ճգնավորության գաղափարները, այնինչ ճգնավորը ընդունայն է համարում և՛ մեկը, և՛ մյուսը: Աբեղան չի ստարկում, քանի որ նա չունի ճգնավորի ոչ միայն կյանքի, այլև ապաշխարանքի փորձը, և նորից Աբեղայի միտքը կառչում է իր խավար կյանքի վրա իջած լույսի շողին: Վերստին հայտնվում է Սեդան, որը նույնպես չի հերքում ճգնավորին, բայց նրա ունայնության փուչը լցնում է երազներով, այն խաբուսիկ գեղեցկությամբ, որով սին կյանքում մխիթարվում են մարդիկ:

Արթնության և պատրանքի սահմանները կորցրած Աբեղան աղոթքի պահին տարվում է մի այլ երազով: Նորից հայտնվում է Սեդան, կանչում հմայող ձայնով ու նրան տանում հեռավոր հեթանոսական ժամանակները:

Աբեղան ընկնում է բիրտ ուժի, գեղեցկության ու վայելքի մի աշխարհ, ուր կռվից հաղթանակով վերադարձող զինվորներին Իշխանը զգուշացնում է. «Կըյանքի կռվին մեջ չխնայեք երբեք ոչ ոքի: Խնայելը թուլություն է, մեղքնալը՝ պարտություն»:

Այս բիրտ միջավայրում Աբեղան նույնպես վերափոխվում է. սեղանի շուր-



ջը տեղ գրավելու համար նա զենքին է զարկում հաստ զորականին, խլում նրա սուրը, երկրպագում հին աստվածներին: Աբեղան, որ մինչև այս երազը երերուն քայլերով հետևում էր Սեդայի պատրանքին, աշխարհն ընկալում էր միայն Սեդայի միջոցով, հեթանոսական խրախճանքի ժամանակ հանդես է բերում մի հատկություն, որ բնորոշ չէր նրա բնավորությանը:

Դյուրին կլիներ դրամայի գլխավոր կերպարի այս վերափոխությունը բացատրել Նիցշեի ազդեցությամբ և հարցը համարել լուծված: Այդ բացատրությունը կլիներ ճշմարտանման, բայց ոչ ճիշտ ու լրիվ: Խնդիրն այն է, որ հեթանոսական ժամանակների երազանքը միանգամայն այլ իմաստ ուներ արևմտահայ գրականության մեջ: Հայ դասական ռոմանտիզմի խորտակված իդեալները ազգային ազատագրության վերաբերյալ Շանթը փոխարինեց ուժի, կռվի ու գեղեցկության իդեալներով, որոնք կարող էին ծնվել թուրքական բռնակալության դեմ մղած պայքարի թուլության և անզորության պայմաններում: Ճնշված ազգությունը ուժ էր երազում ո՛չ թե ուրիշներին ճնշելու, այլ սոսկալի չարչարանքներից ազատվելու համար: Այդ պատճառով էլ Շանթի «ուժեղ անհատը», որքան էլ նմանվեր Նիցշեի գերմարդին, իր ներանձնային մեջ խեղճ ու անօգնական արարած էր, ինչպես Աբեղան:

Խառն ու հակասական երազների մեջ Աբեղան հրաժարվում է անապատից ու ընտրում աշխարհը: Նրա հիվանդ մտքի հորիզոնում վերջին անգամ փայլատակում է Սեդայի կերպարանքը և կանչում դեպի ծով. «Հո՛ն եկուր, հո՛ն, եթե նորեն գրկել կուզես ինծի, միայն հոն: Եկուր, հենց որ նորեն ջրերը հուզվին, հենց որ նորեն ծովը փրփրե»: Եվ Աբեղան ծովն է նետվում, որպեսզի հասնի նո՛ր գոյության, նո՛ր էության: Կյանքի գնով Աբեղան հաստատում է ազատ ու անկաշկանդ ապրելու իրավունքը:

Սակայն ո՞րն է «Հին աստվածների» հիմնական գաղափարը: Միամտություն կլիներ կարծել, թե 20-րդ դարի սկզբին ճգնավորական բարոյականության և մարդկային զգացմունքի բախումը կարող էր հասարակական հրատապ հարց լինել: Սևանի կղզին իր խեղճ ու նկուն վանականներով միայն սիմվոլ էր. խորհրդանիշ արդիական պրոբլեմի, որ հեղինակը մարմնավորեց հեռավոր ժամանակի պարագծի մեջ:

Այդ պրոբլեմը հայ ժողովրդի, առանձնապես արևմտահայության ծանր ու ողբերգական կացությունն էր: Շանթը ցույց տվեց, որ մարդկային կյանքով ապրելու բնական իրավունքը, անհատի ազատությունը բռնապետության պայմաններում տրորվում է այնպես, ինչպես «հազարամյակ մը մեզմե առաջ», քրիստոնեական եկեղեցին տրորում էր մարդկայինը մարդու մեջ: Այս մեկնաբանությունը չի համընկնում դրամայի ավանդական ըմբռնման հետ, բայց երբ «Հին աստվածները» դիտում ենք պատմականորեն, 20-րդ դարի սկզբի հասարակական իրադարձությունների մթնոլորտում, պարզվում է, որ ճգնավորական կյանքի պատկերը միայն ձև է, որը վերջին հաշվով ամփոփում է հեղինակի հուսահատ բողոքը անմարդկային իրականության դեմ:

## 3

Պատմության իդեալիստական ըմբռնման պատճառով Շանթի երկերում վերանում է սահմանագիծը արդիականության ու պատմության միջև, նրա կեր-

պարներին վիճակվում է հոգեկան նույն տառապանքը կրելու երբեմն գորշ ու տաղտկալի արդիականության, երբեմն էլ հեռավոր անցյալի տեսիլքի ոլորտներում:

Երկու դրամաների՝ «Հին աստվածների» և «Կայսրի» միջև, 1912 թվականին, Շանթը գրում է «Կինը» խորագրով վիպակը՝ մի էջ արվեստագետի և բուրժուական հասարակության փոխհարաբերության պատմությունից: Էմիլ Զոլայի «Ստեղծագործություն» նշանավոր վեպի հերոսը, ճանաչում նվաճելու համար փորձերից հուսահատ, դիմում է ինքնասպանության: Նրա կյանքի և գործի մեջ արտահայտվում է բուրժուական հասարակության թշնամանքը արվեստի նկատմամբ: Նույն պրոբլեմին Շանթը մոտենում է այլ տեսանկյունից:

«Կինը» վիպակի գլխավոր կերպարները՝ երիտասարդ նկարիչ Սուրենը և բժշկուհի Մարգարիտ Ստեկնը, տարբեր խառնվածքի տեր մարդիկ են. «Աղջիկը ընտանեկան պաշտամունքով, անձնվիրությունն ու գութը կյանքի հիմք ընդունող լավատես մը, իդեալիստ մը: Տղան՝ նիցշեական հովերով, ուժն ու ռեալը կյանքի հիմք բռնած, ուրիշ ամեն բան հեգնող հոգի մը»: Կերպարների նախնական բնութագրությունը, որին սակավ է դիմում Շանթը, տվյալ դեպքում որոշում է հերոսների հոգեկան ներքին պայքարի սահմանները: Ստեղծագործական աշխատանքից ձանձրացած և հուսահատված երիտասարդ նկարիչը, ընկերոջը խորհուրդ է տալիս նետել վրձիններն ու ներկերը, քանի որ նրա կատարած աշխատանքը ոչ ոքի պետք չէ:

Սուրենը կորցնում է ստեղծագործելու բերկրանքը և հանգում մարդու ու անասունի նույնացման մտքին: Բայց այդ հուսահատությունը երկար չի տևում. խելացի ու հմայիչ աղջկա մտերիմ զրույցների մթնոլորտում նա ազատագրվում է նիցշեական հովերից, թոթափում հոգեկան թմրությունը, ու նրա հայացքի առաջ Ստեկնի կերպարանքով նորից բարձրանում է մարդն իր անբասիր գեղեցկությամբ: Սուրենին հիացնում են Ստեկնը և բոլոր նրանք, ովքեր ունեն հավատ ապագայի, հավատ մարդկության, հավատ իրենց դերի, գործի և իդեալի հանդեպ: Մարդու գեղեցկությամբ հմայված նկարիչը նորից սկսում է ստեղծագործել ինքնամոռաց հափշտակությամբ: Ստեղծելով Ստեկնի դիմանկարը, Սուրենը ձգտում է արտահայտել՝ «տենչ մը դուրս գալու աշխարհայինեն ու մարմնեղենեն, սովորականեն, ու պայմանականեն, որոնում մը ավելի տևական, ավելի մնայուն, ավելի արժեքավոր նոր բանի մը. բուռն կարոտ երազանքի ու հալի փըշտակության»: Ստեկնը դառնում է արահետ արվեստագետի և աշխարհի միջև, նրա շնորհիվ Սուրենի հոգում հարություն է առնում կյանքի գեղեցկությունը, բայց նկարչի հայտնագործած իրական մարդը թվում է անմարմին էակ, անհագուրդ կարոտի խորհրդանիշ, որը արվեստագետին տանում է դեպի երազների աշխարհը:

Պատահական չէ, որ ընդհանուր հիացմունքի արժանացած դիմանկարը տարբեր մեկնությունների տեղիք է տալիս. մեկը այնտեղ տեսնում է «գիշերվան խորհրդավորությունն ու քաշողությունը» մյուսը՝ «հայության տառապանքը», երրորդը՝ «բողոքի մարմնացում»: Նկարիչ Սուրենի էսթետիկական ըմբռնումների մեջ դժվար չէ նկատել գրողի հայացքները, հատկապես նրա աշխարհայացքի հիմնական տարրերից մեկը՝ պատրանքի գերադասությունը իրական-



նության հանդեպ: Բայց «Կինը» բնորոշ է նաև մի այլ տեսակետից. այստեղ Շանթը նորից ձգտում է սահմանազատվել նիցշեականությունից:

Առաջին հայացքից թվում է, թե որևէ աղերս չի կարող լինել «Կինը» վիպակի և պատմական բնույթի «Կայսր» դրամայի միջև, սակայն բավական է համադրել այդ երկերի գլխավոր կերպարները, և որոշակի կդառնա մեկ հազարամյակի հեռավորությամբ ապրող մարդկանց հոգեկան հարազատությունը: Նկարիչ Սուրենն իր դարի զավակն է, նիցշեական հովերով տարված սովորական անհատապաշտ, որի բնավորության հակասությունները ավելի բացորոշ են արտահայտվում բյուզանդական զորավար Օհան Գուրգենի կերպարում:

Պատմականորեն ճիշտ են ու հավաստի «Կայսր» դրամայում նկարագրվող դեպքերը և գլխավոր գործող անձերը: Սակայն «Կայսրը» խիստ վերապահությամբ միայն կարելի է համարել պատմական դրամա, որովհետև հեղինակը ձգտել է պատկերել ոչ թե հեռավոր ժամանակների մարդկանց գործունեության պատմական իմաստը, նրանց բարքերն ու հոգեբանությունը, այլ պատմության այժմեացումով հաստատել իր ժամանակաշրջանի հոռետեսության հավիտենության միտումը: Այս առումով, անլույս հուսահատությամբ տոգորված «Կայսրը» ավելի արդիական, քան պատմական երկ է:

Ռոման կայսեր մահից հետո Արևելյան բանակի հրամանատարները զորավար Նիկեֆոր Ֆոկասին հռչակում են կայսր: Բայց շատ ժամանակ չանցած հնություն է դառնում կայսր Ֆոկասը, որին սպանում են դավադիրները ու գահ բարձրացնում զորավար Օհան Գուրգենին (Հովհաննես Չմշկիկ):

Նախկին կայսրերի անկումը և նորերի հանդես գալը, դավադրությունն ու ոճիրը սովորական դեպքեր էին Բյուզանդիայի պատմության համար: Բայց դեպքերի այդ ընթացքի մեջ Շանթը փորձում է տեսնել Նիցշեի «Հավիտենական վերադարձի» տեսության հաստատումը: Պատմությունը շրջապտույտ է կատարում ու նորից վերադառնում նախկին վիճակին, կյանքում բուն էությամբ ոչինչ չի փոխվում: Սակայն պետք է նշել, որ «Կայսրում» և Շանթի մի շարք երկերում տեսական մերկ դրույթը հաճախ գունաթափվում է, և, հակառակ հեղինակի սխեմայի՝ հաղթում է իրականության զգացումը:

Բյուզանդիայի թափուր գահին և կայսրուհի Թեոֆանոյին վաղուց էր երազում տիրանալ ծանծաղամիտ ու վեհերոտ Նիկեֆոր Ֆոկասը: Ականա ենթարկվելով Օհան Գուրգենի համառ պնդումներին, Ֆոկասը արշավում է Պոլիս: Եվ ահա այն պահին, երբ զինվորները Ֆոկասին բարձրացնում են վահանի վրա, Օհան Գուրգենը հեգնանքով ասում է. «Նայե՛ք, մեկ մը նայե՛ք այդ թշվառ մարդուն, ինչպե՞ս կառչեր է վահանի եզերքին»:

Վայր ընկնելու վախից Ֆոկասը չի ազատվում նույնիսկ գահի վրա: Վիթխարի պալատը Ֆոկասին թվում է անլույս ու ամայի, նա մարդկանց հետ շրփվում է կասկածով ու ատելությամբ: Վերջին գիշերը, զրուցելով Թեոֆանոյի հետ, խեղճ կայսրը հաճախ կրկնում է՝ անհնար է խուսափել ճակատագրից, միամտորեն կարծելով, թե ճակատագրի հարվածը ուղղված է Օհան Գուրգենին:

Ինչ-որ նմանություն կա կայսր Ֆոկասի և շեքսպիրյան Մակբեթի միջև: Վերջինս խիզախ ու հմուտ զորավար է, բայց գահին տիրանալուց հետո համակվում է ահեղ սարսափով: Նրան օր ու գիշեր հետապնդում է գործած ոճիրների հատուցման միտքը: Հոգեկան նույն տագնապն է ապրում կայսր Ֆոկասը: Սուրբը գուշակել է, որ նա պետք է դառնա կայսր: Գուշակությունն իրա-

կանանում է, բայց Ֆոկասը զրկվում է հոգեկան անդորրից: Մակբեթին հալածում էին մեռածների ուրվականները, մինչ Ֆոկասին անհանգստություն է պատճառում Օհան Գուրգենը իր հպարտ ու հանդուգն փառքով:

Տիրանալով գահին, Ֆոկասը ձգտում է տեղ գտնել նաև գեղեցիկ Թեոֆանոյի հոգում, ցանկանում կտրել Օհան Գուրգենի գլուխը, որովհետև «երկու հոգի տեղ չկա այսքան բարձրերը...»: Մինչդեռ Ֆոկասի հանդեպ Թեոֆանոն լցված է միայն ատելությամբ, իսկ ճակատագրին ապավինած կայսրը խիզախ զորավարին հաղթելու ուժ ու վճռականություն չունի:

Շանթը հաճախ է դիմում հունական ողբերգության ավանդներին և Շեքսպիրին, բայց տվյալ դեպքում ճակատագիր հասկացությունը գրողը մեկնաբանում է ոչ թե հույների ոգով, այլ իբրև ուժեղների և թույլերի պայքար, ուր թույլը ի վերուստ դատապարտված է կործանման: Պարզ է, որ այստեղ Շանթը փորձում է դարվինյան հանրածանոթ տեսությունը փոխադրել հասարակական հարաբերությունների բնագավառը:

Ուժեղների և թույլերի պայքարում պարտվում է նաև Ֆոկասը, դավադիրների և Թեոֆանոյի օգնությամբ գահ է բարձրանում Օհան Գուրգենը՝ «ժողովրդի սիրելին, կանանց պաշտամունքը»: Ռազմական փայլուն հաղթանակներ տոնած զորավարը մարդկային կյանքի իմաստը համարում է կյանքի ու մահվան խաղը. «Ի՞նչ հրապույր, ի՞նչ իմաստ կմնա կյանքին մեջ, երբ հանես մեջտեղեն այդ խաղը, եթե հանես կյանքին միջեն կյանքին, բախտին և աշխարհին հետ խաղալը»: Նման մի խաղ է նաև Օհան Գուրգենի կայսր դառնալը: Խիզախ զորավարը դառնում է դավադիր ու գահ է բարձրանում վերափոխված, եռանդն ու հանդգնությունը կորցրած, շվար ու պարտված հոգով:

Սակայն Օհան Գուրգենը թույլերին հաղթող «գերմարդ» չէ, այլ սովորական մարդ, որին խորթ չէ մարդկային բնությունը: Նա ապրում է ռազմական հաղթանակներով, իսկ հաղթանակը մի ակնթարթ է միայն, որը ցնդում է, բացելով կռվի գռեհկությունն ու թշվառությունը: Հիշելով իր փայլուն կռիվներից մեկը՝ Պետրքար լեռան կռիվը, զորավարն ասում է. «... ամենքը հիացմունքով կշնորհավորեին իմ այդ անօրինակ ու հանդուգն հաղթությունս... Ես կեցած էի ժայռի գագաթը, ժայռ մըն ալ իմ մեջս, ու ոտքերուս տակ այն անթիվ թարմ ու խիզախ քաջերը, թե՛ իմ, թե՛ թշնամի... Հանկարծ տեսա, որ շատ վայրագ, շատ խայտառակ, շատ ցած բան էր իմ այդ ամբողջ հաղթանակս»: Զորավարը ամեն անգամ կռվից վերադառնում է տխուր ու հուսախաբ: Նա տեսնում է, որ դաժան ու անհեթեթ մի բան է կռիվը, մարդկային անհամար զոհեր, ավեր ու հափշտակություն: Այդ իրականությունից հոգնած, մենակ ու հուսահատ զորավարը դիմում է դեպի Հաննան, որ նրա կյանքի պղտոր հորիզոնի վրա ճառագում է իբրև լույս ու բարություն:

Զորավարը գերվում է Հաննայի հոգու գեղեցկությամբ, նրա մեջ տեսնում իր երազների ու ձգտումների մարմնացումը: Հաննան նույնպես հմայված է զորավարով, բայց իսկական կյանքի և անաղարտ զգացմունքի կարոտով լցված աղջիկը մերժում է Օհան Գուրգենի հետ գահ բարձրանալ իբրև կայսրուհի: Նա նախընտրում է լինել կայսրուհի ոչ թե բյուզանդական գահի, այլ Օհան Գուրգենի հոգու վրա: Հաննան սարսափում է այն մտքից, որ ինքն էլ զորավարի համար կարող է դառնալ սովորական ու տաղտկալի, ինչպես նրա նվաճած բոլոր հաղթանակները:



**Հաննա**— Կուզեմ արժանի ըլլալ քու այդ մեծ սիրույդ, կուզեմ ըլլալ արժանի քու հոգիիդ որոնումին, կուզեմ ըլլալ քեզի՛ հավասար:

**Օհան Գուրգեն**— Մերժելո՞վ, երբ իմ հոգիս միայն քեզի կձգտի, երբ ամբողջ էությունս սիրույդ կտենչա ու քեզի՛ է ծարավի:

**Հաննա**— Ճի՛շտ ատոր համար: Պետք է, որ դուն անգամ մը գտնես տենչաս ու չունենաս, ձգտիս ու չհասնիս, ծարավիս ու չհագենաս»:

Եթե սիրելով Հաննային, Օհան Գուրգենը փորձում է կառչել կյանքին, ապա նույն սիրո ուժով Հաննան ձգտում է բարձրանալ առօրյա գորշությունից դեպի վեր, դեպի ձյունոտ լեռների կատարները: Պատրանքով հմայված Հաննայի՝ զորավարի մտացածին կերպարը թվում է ավելի մոտ ու հարազատ, քան ինքը՝ իրական մարդը:

Հաննայի սերը դուրս է հորդում բնական զգացմունքի սահմաններից, դառնում աղոթք ու անձնազոհություն: Երջանկության պատրանքի շլացնող լույսից խամրում է սիրո իրական զգացումը: Օհան Գուրգենին մերժելուց հետո Հաննան գնում է վանք՝ անհաս սիրո հավիտենական ցնորքով ապրելու:

Կայսերական գահին տիրացած Օհան Գուրգենը նորից մենակ է ու հուսահատ: Հաննան անէացել է թռիչք երազի նման, ու նրա դիմաց նորից բացվել է այլանդակ իրականությունը՝ Թեոֆանոյի կերպարանքով: Օհան Գուրգենը շատ մտերիմ գիշերներ է լուսացրել Թեոֆանոյի հետ ու քաջ գիտե, թե նա որքան գեղեցիկ, նույնքան անհոգի ու փառասեր կին է: Պալատական շքեղ կյանքի, դավերի ու կեղծիքի մեջ խեղաթյուրվել է Թեոֆանոյի աղքատ հոգին: Բայց նա նույնպես ունի իր ձգտումը, իր երազը՝ լինել կայսրուհի և ունենալ արժանավոր ամուսին: Այդ կրքով տարված, Թեոֆանոն օգնում է Օհան Գուրգենին գահ բարձրանալ: Հասարակ գինեպանի աղջիկը կարծես վրեժ է լուծում իր ծագման համար և ձգտում հաստատել կայսրուհու իր մշտական իրավունքը: Ներքինի Վասիլ Լեկապենի նման Թեոֆանոն կարծում է, թե արքաները ժամանակավոր են, իսկ ինքը՝ հավիտենական: Սակայն լսելով պալատից հեռանալու կարգադրությունը, Թեոֆանոն մի ակնթարթում կորցնում է երեկվա փառահեղությունն ու փայլը, դառնում խեղճ ու գռեհիկ մի կին, աղաչում իրեն թողնել պալատում, թողնել թեկուզ իբրև հարճ կամ աղախին: Բայց Հաննայի կորստից հետո կայսրն այլևս չի կարող հանդուրժել Թեոֆանոյի ներկայությունը:

Երկու կին, երկու ներհակ էություն՝ Թեոֆանոն և Հաննան, խորհրդանշում են իրականության և պատրանքի անհարիր ոլորտները: Եթե Թեոֆանոն կյանքի ու մահվան անիմաստ խաղն է, որից հոգնել ու հիասթափվել է զորավարը, ապա Հաննան նրա անհանգիստ հոգու կարոտն է, նրա երազների անհասանելի հանգրվանը: Օհան Գուրգենը վերջին ճիգն է գործադրում կառչելու անհետացած պատրանքին: Նա ձգտում է կրկնապատկել Բյուզանդիայի հզորությունը, ստեղծել ուժեղ պետություն, բայց նրա հոգում բացվել է խոր մի վիհ, որ դժվար է լցնել նույնիսկ պետական գործի բազմազան հոգսերով: Բարձրանալով գահ, Օհան Գուրգենը կորցնում է ցնորքի աշխարհը և ընկնում «վարի աշխարհը, ցածի կյանքը»: Ծանր ապրումների պահին նրան վերջին անգամ երևում է Հաննան, որը երազկոտ աչքերով նայում է պայծառ արևի տակ ցոլացող ձյունոտ կատարներին:

**ԿԱՅՍՐԸ.**— Ո՞վ դուն, իմ հոգիիս անվերջ ձգտումը, իմ անհանգիստ, իմ

անհագ հոգիիս անզուսպ ու թևավոր ձգտումը, բայց ինչու՞ դուն, ինչո՞ւ այս ձգտումը և մինչև ե՞րբ և մինչև ու՞ր...

**Հաննա.**— (Մատնանիշ լեռները) Մինչև ճերմակ բարձունքները, մինչև միգոտ կատարները, մինչև անհուն տենչանքները, մինչև մահուդ սահմանները...

Իրականությունից հիասթափված ու պատրանքը կորցրած կայսեր կյանքի ճանապարհը ընդհատվում է մթին անդունդի եզրին: Նա այլևս անելիք չունի: Ջուր չէր փիլիսոփայում Վասիլ Լեկապենը, թե իշխելու ու տիրելու հավիտենական ձգտումով ապրում են միայն ներքինիները:

Դրամայի գաղափարական ոգու և հեղինակի իդեալի անձնավորումը Օհան Գուրգենն է, այն ուժեղ անհատը, որն իբր թե կոչված է դուրս գալու կրկնվող պատմության շրջագծից: Բայց նրա առջև փակվում են բոլոր ճանապարհները, փակվում այն պահին, երբ թվում է, թե նա նվաճել է ձյունոտ լեռների կատարները: Օհան Գուրգենի կյանքն ու գործը նորից հաստատում են «Հին աստվածների» ճգնավորի հուսահատական փիլիսոփայությունը՝ ամեն ինչ ունայն է ու անիմաստ:

Այդ հուսահատությունը յուրօրինակ դժգոհություն էր, բողոք ընդդեմ տիրող կարգերի, որ այլևս որևէ հեռանկար չուներ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակաշրջանում: Պատմության սուբյեկտիվ իդեալիստական մեկնաբանության հետևանքով սիմվոլիստների ստեղծագործություններում մարդն անջատվել էր հասարակական հարաբերություններից և դարձել վերացական մշտնջենական, անհասկանալի առեղծված:

«Կայսրը» դրամայում Շանթը հրաժարվում է «գերմարդու» գաղափարից: Սակայն անհրաժեշտ էր կատարել երկրորդ քայլը՝ հրաժարվել տիրող կարգերի դեմ անհատապաշտական դժգոհությունից և ընթանալ աշխատավոր զանգվածների սոցիալական մեծ պայքարի հունով, հակառակ դեպքում, անհատապաշտությունը նրան պետք է անջատեր պատմության առաջընթացից և տաներ դեպի հետադիմությունը: Տեղի է ունենում վերջինը. նահանջելով երկշոտ դիրքերից, Շանթը գնում է դեպի պատմության կանխակալ մեկնաբանությունը, որն ամբողջությամբ դրսևորվում է «Շղթայվածը» դրամայում (1919):

Հայ դասական մատենագրությունը Արտավազդի առասպելը պահպանել է երկու մեկնությամբ. Եզնիկ Կողբացին, առնելով ժողովրդից, Արտավազդին ներկայացնում է բարի բնավորությամբ դյուցազն, որը պետք է ազատվի շղթաներից ու տիրի աշխարհին, իսկ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ Արտավազդը ավերիչ ոգի է, դև կամ վիշապ:

Պատկերելով հայ միջնադարը, ավելի ճիշտ, միջնադարյան Անին՝ իր բռնակիչների տարբեր դասերով և նրանց ընդհարումներով, «Շղթայվածը» դրամայում Շանթը փորձում է ցույց տալ Արտավազդի առասպելի հակադիր ըմբռնումների հասարակական հիմքերը, ցույց տալ, որ ճնշված մարդիկ Արտավազդի մեջ տեսնում են ազատության ու փրկության, իսկ տիրողները՝ բռնության ոգին:

Բայց, ինչպես «Կայսրը» դրամայում, այստեղ առավել ևս, պատմությունը և առասպելը դարձան միայն հում նյութ, պայմանական ձև, կեղծ գաղափարը՝ պատմության «հավիտենական վերադարձի» սկզբունքը հաստատելու համար:

Անիի Էմիրը՝ Մանուչեի որդին, որ բոլոր տիրողների նման իր իշխանությունը նվաճել է բռնությամբ, Անին համարում է իր սեփականությունը, իսկ



ճնշումն ու կողոպուտը՝ իր անկապտելի իրավունքը: Նրա կողքին կանգնած է մի այլ բռնակալ՝ իշխան Վահան Պահլավունին, որը նույնպես Անին համարում է իր սեփականությունը: Ապստամբ անեցիները քաղաքից դուրս են շըպրտում Էմիրին, հետո էլ՝ իշխան Պահլավունուն: Քաղաքի իշխանությունն անցնում է արհեստավորների ձեռքը, կարգերը փոխվում են, բայց կյանքը մնում է անփոփոխ: Դարբին Ավագը՝ դարբինների ավանդական ընտանիքի զավակը, որն իր կյանքը համարում էր գերություն, անիծում աշխարհի բոլոր կարգերը, դառնալով Անիի ղեկավարներից մեկը, փոխվում է անճանաչելիորեն: Էմիրի պալատից ազատված Հարճին նա ասում է. այժմ ե՛ս եմ Էմիրը, ե՛ս եմ Անիի տերը: Էմիրի պարտության ժամանակ Հարճը հրդեհում է պալատը և հրդեհի բոցերի մեջ որոնում իր ազատությունը: Էմիրը չկա, բայց նույն պալատում այժմ նստել է մի այլ բռնակալ՝ դարբին Ավագը, որը տրորում է Հարճի նվաճած ազատությունը: Ուրեմն, մտածում է Հարճը, Նաղաշի քարոզած ազատությունը չիրականացավ, Արտավազդը չավերեց հին աշխարհը:

Տխուր ու մտահոգ Նաղաշին Հարճը հարցնում է. «Ու՞ր է քու Արտավազդը... ինչու՞ չի գար, ինչո՞ւ չի քանդեր, ինչու՞ չի վերջացներ այս աշխարհը...

ՆԱՂԱՇ— Արտավազդը, քուրի՛կ, քանդելու համար չէ, որ պիտի գա, այլ շինելու, կառուցելու»:

Հարճը Նաղաշի ունկնդիրներից մեկն է, թերևս միակը, որն իրոք կռվում է ազատության համար: Եվ քանի որ Հարճն Արտավազդին սպասում է միամիտ հավատով, ավելի ծանր է լինում նրա հուսահատությունը, երբ դարբին Ավագի աչքերի մեջ տեսնում է Էմիրի կերպարանքը: Ճնշված ու կեղեքված մարդկանց Նաղաշն ասում է. **«Եթե կուզեք, որ փրթին ձեր բոլոր շղթաները, եթե կուզեք, որ փրթին ձեր բոլորի շղթաները, ընկնեցե՛ք այն բռնակալը, որ կտիրե ձեզմե ամեն մեկուն կուրծքին տակ, մեռցուցե՛ք ձեր միջի բռնակալը»:**

Մինչև այժմ Նաղաշը քարոզում էր կռվել ճնշման ու բռնության դեմ, բայց արհեստավորների իշխանությունը շփոթության է մատնում նրան: Կարգերը փոխվեցին, իսկ բռնությունը մնաց, նշանակում է բռնության արմատները պետք է որոնել հասարակական հարաբերություններից դուրս, մարդկանց հոգիների մեջ: Մասիսի խորխորատներում շղթայված Արտավազդին՝ ըմբոստության և ազատության անկընկճելի ոգուն, սոցիալական պայքարի իրադրությունից Նաղաշը փոխադրում է մարդկային հոգու ոլորտը, և դրանով իսկ տիրող կարգերի անընդունելի լինելու գաղափարը փոխարինվում է մարդու անկատար լինելու և նրա հոգում ծվարած բռնակալի գաղափարով: Հետևաբար, ավելորդ է դառնում ճնշման ու կեղեքման դեմ մղվող պայքարը, իբրև անիմաստ, հնացած մի մոլորություն: Դժվար չէ նկատել, որ այստեղ կերպարին փոխարինել է հեղինակը և իր հայացքը պարտադրել միջնադարյան աղանդավոր Նաղաշին:

Շանթին հայտնի էր, որ իր նկարագրած դարաշրջանում պատմության գլխավոր ուժը ամբոխը կամ խաժամուժը չէր (որն, ի դեպ, պատմական մեծ իրադարձությունների ուղեկիցն է և ոչ ստեղծողը), այլ իսկական ժողովուրդը՝ իր ձգտումներով ու երազներով մարմնավորված թոնդրակեցիների հզոր շարժման մեջ, շարժում, որ դարեր շարունակ տագնապի մատնեց ֆեոդալներին ու արտաքին նվաճողներին: Ճիշտ է, Նաղաշի հայացքներում նկատվում է թոնդրակյան գաղափարախոսության արձագանքը, բայց հակառակ խիզախ ու ան-

ընկնելի թոնդրակեցիների, Նաղաշը, թեև հավատավոր, բայց ավելի հայեցող, քան գործոն անհատ է, որը չկարողացավ ամբոխը տարբերել ժողովրդից, հասկանալ, թե ովքեր էին ոգեշնչվում Արտավազդի գալստյան հույսով: Եվ եթե «Ծղթայվածի» մռայլ հորիզոնի վրա բոցկլտում է հավատը մարդու հանդեպ, ապա այդ հավատի հիմքում ընկած է ոչ թե ամբոխի, այլ ժողովրդի պատմական գործունեությունը:

Դրամայում նկարագրված արհեստավորների իշխանությունը չուներ սոցիալական քաղաքական կամ բարոյական որևէ դավանանք, որ ոգեշնչեր ու համախմբեր մարդկանց: Դարբինն ու ներկարարը իրենց գործունեությունն ըսկսում են կաշառակերությամբ, հետո գժտվում են ու դավում միմյանց: Նաղաշի քարոզած ազատության ու հավասարության գաղափարները արհեստավորները ընկալում են իբրև սոսամոքսների հավասարություն, անաշխատ ու զեխ կյանք: Պարզ է, որ «Ծղթայվածում» հանդես եկող զանգվածը իսկական շղթայվածը չէ, այլ հափշտակելու անզուսպ բնազդով տարված մի ամբոխ, որը շատ հեռու է ազատության ու հավասարության գաղափարներից:

Դրամայի կեղծ գաղափարն իր հետ բերեց մտքի, հույզի ու բնավորությունների աղքատություն, արվեստի աղքատություն: Դարբին Ավագը, ներկարարը, ժամկոչն այնքան նման են միմյանց, որ եթե մեկի անունը փոխարինվի մյուսով, ոչինչ չի փոխվի, քանի որ դրանք ո՛չ թե կենդանի կերպարներ են, այլ կանխակալ գաղափարի թելադրանքով շարժվող ստվերներ:

«Ծղթայվածի» ստեղծման ժամանակաշրջանը հագեցած էր Համաշխարհային առաջին պատերազմի և հայ ժողովրդի ծանր աղետի մղձավանջով: Մռայլ իրականությունը գրողի հոգևոր աշխարհում բեկվում է իբրև մարդու անկատար լինելու, մարդու հոգում գազանային բնազդների արթնացման շրջան: Շանթի աշխարհայացքի մեջ անհետանում են իրականության տևկար ըմբռնողության վերջին տարրերը, և պատմության բախտորոշ ժամանակաշրջանում քաղաքական ունայն պատրանքներով տարված գրողը մնում է հին պատկերացումների, չարի և բարու վերացական բախումների ոլորտում: Շանթն այլևս ի վիճակի չէր պատմությունն ընկալելու իբրև արդիականության նախապատմություն:

## 4

«Ինկած բերդի իշխանուհին» դրաման (1921) արտաքին հատկանիշներով նմանվում է հունական ողբերգության դասական երկերին, և ինչպես հունական ողբերգության, այնպես էլ Շանթի դրամաներին խորթ է պատմության խաղաղ ու անդորր պահը: Սակայն, ի տարբերություն հույների, որոնց հերոսները հանդես էին գալիս իրենց դարաշրջանի համամարդկային իդեալներով, Շանթի դրաման մերթ շիկանում է պատրանքի ուժով, մերթ էլ մարդկային բնավորությունների անհագուրդ դաժանությամբ, միտումներ, որոնց ստվերի տակ թոշնում կամ անհետանում է իրերի և երևույթների բազմազան աշխարհը:

«Ինկած բերդի իշխանուհին» դրամայի գլխավոր կերպարները՝ Գող Վասիլը և իշխանուհի Աննան, իրենց հախուռն ու հզոր կրքերով նման են շեքսպիրյան կերպարներին, առանց վերջիններիս բնավորության ցայտուն բազմազանության: Քեսունի Վասիլ իշխանը՝ նվաճելու ու կողոպտելու մոլուցքով լցված մի մարդ, սպանում է իշխանուհի Աննայի երեխաներին, ամուսնուն, նրա



զինակիցներին ու գրավում նրա ամրոցը: Այդ ոճիրից անմիջապես հետո Վասիլը տիրանում է պարտված բերդի իշխանուհուն, նրան դարձնում իր հոմանուհին: Երջանկությունն ու պատիվը կորցրած իշխանուհին երդվում է վրեժ լուծել: Դեմ առ դեմ բարձրանում են երկու բիրտ ու դաժան կիրք՝ ոճիրն ու հատուցումը:

Հայկական Կիլիկիայի նշանավոր իշխաններից մեկը՝ Վասիլը, ավազակային արարքների համար վաստակել է Գող մականունը: Նա արհամարհում է բարոյականության սկզբունքները, մի նոր ամրոց կամ կալվածք հափշտակելու համար Վասիլը պատրաստ է ոչնչացնել ո՛չ միայն իր հակառակորդներին, այլև զինակիցներին ու բարեկամներին: Ավելին, առանց երկմտության ու վարանումի Վասիլն սպանում է իր ավագ, հետո կրտսեր որդուն, որոնք միամըտորեն նետվել էին Աննայի նյութած դավերի մեջ:

Վասիլը չարագործ է, խարդախ, բայց նաև խելացի ու հեռատես. իր զինակիցներից մեկին նա հետևյալ խորհուրդն է տալիս. «Չնեղես երբեք գյուղացին. ան է, որ կուտա մեզի մեր հացը ու մեր զինվորը»: Թվում է, թե բնավորության այդ գծերին անհարիր պետք է լիներ անվերապահ հավատն Աննայի նկատմամբ. բայց հավատի դարձնելու ցանկությամբ Շանթը կերպարն օժտել է հազիվ նշմարելի մարդկային գծերով: Մի դեպքում որդիների հանդեպ տածած սերն է այդ, մյուս դեպքում՝ գեղեցիկ Աննային տիրանալու կիրքը, որ բթացնում, թուլացնում է Վասիլի զգոնությունը:

Մահվան մատնելով զավակներին, իշխանուհի Աննան ցանկանում է խոցել հորը, նրան պատճառել այնպիսի վիշտ, որպիսին ապրում է ինքը՝ զավակներ կորցրած մայրը: Սակայն իշխանուհին վրիպում է. Գող Վասիլը ոչ Արքա Լիր է և ոչ էլ հայր Գորիո: Հափշտակելու և տիրելու մոլուցքը խլացրել է Վասիլի հայրական զգացմունքը: Կրտսեր որդուն նա սպանում է այն ժամանակ, երբ զինակիցների հետ մշակում է իր բարեկամ իշխանի վրա հարձակվելու ռազմական ծրագիրը, իսկ որդու սպանությունից հետո թեթև հուզմունքով Վասիլն ասում է. «Իշխաններս կներեն ինծի այս անսպասելի ու ծանր պատահարը... վաղը առավոտ զորքը պետք է շարժվի: Մահը իր ճամբով, կյանքը իր ճամբով»:

Աննայի վրեժի զգացումին զոհ են դառնում անմեղ պատանիները, զոհվում է նաև ինքը՝ Աննան, իսկ ոճրագործը մնում է անպատիժ:

Թատերագրության արվեստի բարձր մակարդակով, գլխավոր կերպարների դիցական խառնվածքով «Ինկած բերդի աշխանուհին» Շանթի կատարյալ դրամաներից մեկն է, այդ գործը կարող էր դառնալ իսկական դասական ողբերգություն, եթե զրկված չլիներ քաղաքական-սոցիալական բովանդակությունից, եթե Գող Վասիլի և իշխանուհի Աննայի բախումը հենվեր ոչ թե չարիքի հավիտենական անպարտելիության գաղափարի, այլ իրականության օբյեկտիվ հիմքերի վրա:

Պատմությունը բնորոշ գծերով դրսևորվեց Շանթի վերջին «Օշին Պայլ» (1929) խորագրով դրամայում: Բայց մոտենալով պատմությանը իբրև արվեստագետ, Շանթը իբրև քաղաքական գործիչ կտրվեց արդիականությունից, կորցրեց կյանքի հեռանկարը:

Այդ տարիներին Շանթը գրեց «Օշին Պայլ» դրաման, որտեղ արտահայտված ազգային ինքնուրույնության գաղափարը, հակառակ հեղինակի քաղաքա-

կան հայացքների, հանգեց հայրենի երկրում ստեղծված պետականության ըսկըզբունքների հաստատմանը:

Իր շոշափած հարցերով, կերպարների հոգեկան հարուստ աշխարհով և ճշմարտացիությամբ «Օշին Պայլը» Ծանթի իսկական ստեղծագործական նվաճումն է:

«Թատրոնում չէ, որ պետք է սովորենք,— ասում է Լեսսինգը,— թե ինչ է կատարել այս կամ այն անձը, այլ պետք է իմանանք, թե ինչպես կվարվի տվյալ բնավորությունը տվյալ հանգամանքներում: Ողբերգության նպատակն ավելի փիլիսոփայական է, քան պատմության նպատակը, ողբերգությունը վերածել նշանավոր մարդկանց անզուսպ գովասանքի կամ այն չարաշահել ազգային մեծամտություն սերմանելու համար, կնշանակի նսեմացնել ողբերգության իսկական արժեքը»: «Օշին Պայլը» ստեղծվեց ասես ողբերգության լեսսինգյան ըմբռնման ոգով: Հեղինակը խուսափեց պատմական դեպքերի և անձերի «ըստույգ» նկարագրության հրապույրից: Ողբերգության հերոսները հանդիսատեսին դիմում են ոչ թե ճառերով ու երդումներով, այլ հայրենասիրական գործերով հաստատում իրենց համոզմունքը:

Կիլիկյան Հայաստանի պատմության դժվարին մի ժամանակաշրջանում, 14-րդ դարի երրորդ տասնամյակում, երբ հաճախ վտանգվում էին երկրի սահմանները, իսկ ներսում լատինադավան տարրերը քայքայում էին հայկական պետության-հիմքերը, անսալով հայրենասեր իշխանների պնդումներին, Կոռիկոսի Օշին իշխանը համաձայնում է ստանձնել պայլի՝ խնամակալի պարտականությունը: Իշխանների կարծիքով Օշինը երկրի միակ մարդն էր, որ կարող էր պետության դժվարին գործը վարել հմուտ ու խելացի: Օշինի սիրած աղջիկը՝ Ռիթան, նույնպես հորդորում է համաձայնել, մտածելով, թե Օշինի խնամակալությունը կդառնա ճանապարհ դեպի արքայական գահը, որ գուշակել էր գնչուն: Պետությանն օգտակար լինելու միտքը Օշինին հանում է խաղաղ կյանքի հունից ու նետում դժվարին իրադրության մեջ: Նա հարկադրված է լինում կիսատ թողնել Կիլիկիայի պատմության ուսումնասիրությունը և շարադրանքը, հեռու լինել Ռիթայից, որի ջերմ սիրով լցված էր իր հոգին:

Պետական գործունեության շրջանում Օշին Պայլի առաջ ծառանում են դըժվարին հարցեր, որոնց լուծմանը նա զոհաբերում է և՛ իր, և՛ հարազատ աղջկա երջանկությունը: Պատանի Լևոն թագավորին օտար ազդեցությունից զերծ պահելու նպատակով Օշինը նրա հետ ամուսնացնում է իր դստեր. անհաջող մի ամուսնություն, որ աղջկան պատճառում է միայն վիշտ ու տանջանք: Արևմուտքի հետ նորմալ հարաբերություններ պահպանելու նպատակով Օշինը հարկադրված է լինում կատարել երկրորդ ճակատագրական սխալը՝ հրաժարվել Ռիթայից և ամուսնանալ այրի թագուհու հետ: Օշինը փորձում է համախմբել կուսակից իշխաններին և նրանց օգնությամբ ստեղծել ուժեղ բանակ, բայց իշխանները նորից չեն հասկանում նրան, ու նա մնում է փոքրաթիվ համախոհների հետ, որոնք անկարող են կռվել լատինասեր հոսանքի դեմ: Օշին Պայլը պարտվում է, և այդ պարտությունից էլ սկիզբ է առնում Կիլիկիայի հայկական պետության կործանումը:

Ծանթի վերջին դրաման սկսվում և ավարտվում է Օշին իշխանի ու Ռիթայի ոգեշնչված կերպարներով: Ողբերգության սկզբում նրանց սերը ողողված է խաղաղ ու լուսավոր երջանկությամբ, իսկ վերջում, բազում հույսերից ու հուսահա-



տություններից հետո, նրանք հանդիպում են կարծես վկայելու սիրո և մարդկայնության վեհությունը:

Ինչպես արևը մի կաթիլ ջրում, Ռիթայի և Օշին Պայլի խորտակված սիրո մեջ անդրադառնում են Կիլիկիայի քաղաքական կյանքի տարուբերումները և ողբերգական անկումը: Պետական գործերը վարելու դժվարին աշխատանքին Օշինը ձեռնամուխ է լինում հավատով ու նվիրվածությամբ: Զորավարի ու դիվանագետի ունակություններին նա գումարում է դաժան անձնազոհությունը, բայց տարիների անդուլ գործունեությունից հետո վաստակում է միայն թըշնամանք ու ատելություն: Համախոհ իշխանները մեկ առ մեկ հեռանում են նրանից, և դավադիրների ամբոխի դեմ Օշինը մնում է մենակ: Երբեմնի հզոր պետական գործիչը դառնում է փախստական ու բանտարկվում իբրև հանցագործ:

Իրենց ալեկոծ կյանքի վերջին վայրկյաններին նորից միասին են Օշինն ու Ռիթան: Մոռանալով վիշտ ու վիրավորանք, Ռիթան գալիս է բանտարկությունից ազատելու և նորից գործի մղելու իր սիրած տղամարդուն: Օշինին հանելու համար, կորած սերը ետ բերելու ցանկությամբ Ռիթան երկար ճանապարհ է անցնում. նա միանում է դավադիրներին, ամուսնանում Օշինի հակառակորդ և իր կողմից արհամարհված Ժուան Ամորիի հետ, բորբոքում ունիթորների ատելությունը:

ՌԻԹԱ— Լսե՛ մերկ ու պարզ եղելությունը, դուն դատապարտված ես մահվան... Ես մեծ ճիգով ու ծանր գնով գնեցի մեր այս տեսակցության իրավունքը, հիմա քեզի հետ ըլլալու իրավունքը, քանի մը ժամ քու կյանքիդ ու մահվան տերն ըլլալու իրավունքը: Հիմա ես կարձակեմ քեզի, գնա շուտով միացիր եղբորդ... Գնա զարկ ու շարունակե քու գործը:

ՕՇԻՆ— Գո՞րծ, ո՞ր գործը, որու՞ն համար, ինչու՞ համար: Եվ դու՞ն, իսկ դու՞ն:

ՌԻԹԱ— Դուն նորեն մի՛ մտածեր ինծի, ինչպես որ մինչև հիմա չես մտածած, երբ կյանքը պահանջեր է քեզմե, որ չմտածես: Իմ ճակատին ալ աս է գրած, որ զոհը ըլլամ, որ փրկանքն ըլլամ մեծ մտածումի մը հաջողության...

ՕՇԻՆ— Աստվա՜ծ իմ, ի՜նչ թշվառ ու կարճամիտ է մարդ արարածը: Ում ըսես կանչեցի ինծի, մոտեցուցի ինծի, կապել ուզեցի ինծի ու իմ գաղափարիս... Ու հեռացուցի ինծմե այն միակ անձը, այն միակ հոգին, որ իմս էր, հարազատս էր»:

Օշինի ու Ռիթայի բնավորությունների հարազատությունը բախվում է անլուծելի մի հակասության. իշխանը հոգնել է կյանքից և հաշտվել մահվան, իսկ Ռիթան դեռ չի ապրել իսկական կյանքով: Թախանձելով փախչել, խուսափել մահից, Ռիթան ճիգ է թափում նվաճել ոչ միայն Օշինի, այլև իր փրկությունը: Առանց Օշինի Ռիթան չի կարող ապրել, Օշինը նրա կյանքի իմաստն է, նրա հպարտությունն ու հիացմունքը: Բայց կյանքի ալեկոծ ծովից դուրս ընկած պետական մարդը իրեն այլևս արժանի չի համարում Ռիթայի անձնազոհությանը:

Օշինի հուսահատության պատճառը դժվարին ջանքերով ստեղծված իշխանության կորուստը չէր միայն, այլև այն ցավալի իրողությունը, որ իր համախոհները չհասկացան ուժեղ և ինքնուրույն պետականության անհրաժեշտությունը: Ծեքսպիրի ողբերգական կերպարների նման Օշին Պայլը կործանվում է հետադիմական ուժերի դեմ մղվող պայքարում: Օշինը ողբերգական բնավո-

թություն է, քանի որ պատմության արդարության համար նա մարտնչում է պատմության ընթացքի դեմ։

Հակառակ «Հին աստվածներ» և «Կայսրը» դրամաներում տիրող ցնորական պատկերացումների՝ «Օշին Պայլում» նկարագրվող պատմական ժամանակաշրջանը պատկերվում է իրական, բնորոշ գծերով, քաղաքական տարբեր հոսանքների անհաշտ պայքարով։ Ողբերգության կերպարները բախվում են Կիլիկիայի հայկական պետության բախտի համար վճռական նշանակություն ունեցող գաղափարների շուրջը։ Պետության գոյության հարցը թափանցում է մարդկանց անձնական փոխհարաբերությունների մեջ, փոխում նրանց ճակատագիրը։ «Օշին Պայլի» հաջողության գաղտնիքն այն է, որ հեղինակն այստեղ պատմությունը չդարձրեց արդիական գաղափարների զգեստ, այլ մարդկանց դիտեց ու պատկերեց հեռավոր ժամանակաշրջանի կյանքի, պատմական գիտակցության ու հոգեբանության մթնոլորտում։

Լևոն Շանթի բարդ ու հակասական, վերելքներով ու անկումներով ընթացող ստեղծագործական ուղին սկսվեց 1890-ական թվականներին, հանդարտ ու մտերիմ քնարական բանաստեղծություններով և ավարտվեց 1941 թվականին «Հոգիները ծարավի» վեպով։ Իր ստեղծագործության վաղ շրջանում անուրջների աշխարհից Շանթը վերադարձավ մարդկանց առօրյա աշխարհը, պատկերեց առաքինություններ ու ստորություններ, ոգևորվեց ազգային-ազատագրական գաղափարներով, բայց շուտով նահանջեց մեծ պայքարի մարտադաշտից, այնտեղ տեսնելով միայն անիմաստ անձնազոհություն։

Հուսահատված սոցիալական և ազգային ճնշումներից, իրականության մեջ չտեսնելով ազատագրական պայքարի իսկական ուժերին, Շանթը դիմեց դեպի հեռավոր անցյալը, ավելի ճիշտ՝ մենավոր հոգիների ազատության տենչանքը անձնավորեց պատմության խորքերում։ Շանթը կերտեց հախուռն կրքերով համակված բնավորություններ, որոնց բողոքը ողբերգականորեն թույլ էր ու ապարդյուն։ Բայց Շանթի գրական հարուստ ժառանգությունը, որտեղ սակավ չեն իսկական արվեստով կերտված երկեր, ապրում է մեր դասական մշակույթի հետ, իբրև դաժան իրականության մեջ ծնված՝ առաքինության ու գեղեցկության երազանք։

1966

**Էդուարդ Թոփչյան**

# ԵՐԳԵՐ

## ԻՆՉՈՒ

*«Ինչու՞ կը գրես» հարց կուտան ինծի.*
*ու ես զարմացած կը նայիմ իրենց։*

*Ինչու՞ կը գոռա թափովն աւյուծի*
*ալեկոծ ծովը խոժոռ ժայռին մերձ.*
*կամ հեզամրմունջ վտակը ինչու՞*
*իր թարմ կարկաչը կ'ըլլրէ անուշ,*
*երբ անփույթ, կայտառ ու զվարթաչու*
*առաջ կը գայթի նազանքով քնքուշ.*
*ո՞վ կը հարցընէ եռուն ջրվէժին,*
*թէ ինչու՞ անդուլ կը հանէ շառաչ,*
*մինչ սեպ բարձունքէն անդունդ կը խուժին*
*փրփուր կոհակներ հորդ ու կաթնալանջ.*
*իսկ դու՞ն. քու վրադ հարցեր թափեցին,*
*երբ խուլն հյուսքը խինդ ու կսկիծի*
*երգի մը փարած սրտեդ դուրս հորդեց։*

*Բայց կը հարցընեն այդ ինչուն ինծի.*
*ու ես զարմացած կը նայիմ իրենց։*

## ՈՒՐՎԱՆԿԱՐՆԵՐ

*Ունիմ նկարչի տետրակ մը սիրուն,*
*որ ժամանակի ձեռքէն խլելով*
*տարբեր պահեր եմ աչքերս հեռուն*
*խորքը հուշերուս, խորշ մը ապահով։*

*Առաջին էջը իրարու փարած*
*թերատ գծերու ցանց մըն է նրբին,*

որոնք հոն մրոտ խառնուրդեն հանկարծ
այն չար աղջկան դեմքը կը ծնին։

Ուրիշ կուսական դեմքեր շարունակ
կը գտնեմ այնտեղ հայացքիս գերի,
միայն բոլորն ալ անորոշ, խառնակ,
անփույթ վրձինի մարզանք են թերի։

Անդին երազուն և ընկեր դեմքեր
կը ժպտին ինծի անուշ կարոտով․
իրենց նայվածքի թարմ մութերն ի վեր
բոցեր կը ժայթքեն. և՛ կյանք, և՛ կորով։

Բանաստեղծական ֆանթազիներ ալ
պատկերներուս մեջ կան գծված հստակ․
Ոգևորություն, Սեր ու Իտեալ,
և Գիտությունը՝ կին դիմակի տակ։

Ու խենթ իղձերու, ապաւման, հուզման
և աշխատանքի, անհաս տենչանքի
հոն խառնափնթոր մտրմնացումներ կան,
գծած ու ավրած, գծած կրկնակի։

Այո՛, նկարչի տետրակ մը սիրուն,
որ մոռացության ճանկեն խլելով
իբրև նվեր մը գալիք օրերուն
պահեր եմ մտքիս մեկ խորշն ապահով,

## ՀՅՈՒՍՔ

Է՛, օրերս կանցնին ունայն,
չունի հոգիս զբաղում.
ո՛չ սեր, ո՛չ վիշտ, ո՛չ փոթորիկ,
այլ միշտ թափուր ու տրտում։

Այս անապատ ճամփուն վրա
իբրև կյանքոտ օվասիս,



վայրկյան կուգա, երբ կը փարի
անզուսպ զայրույթ մը սրտիս․

Ու ես կատղած կոլլրեմ երգ,
ինչպես գետը ձանձրացած,
որ ցասուկեն փրփուր-ժանյակ
կը հյուսե լերկ ժայռեն ցած։

## ԳՆԱՑՔԸ

Գնացքը շեշտ, անդուլ ճեպով
սլացիկ,
Երբ անձնատուր իր զույգ գծին
օձաձիգ,
կը գալարի ճամփուս վրա
աչքիս դեմ,
ես կանգ առած, մութին մեջեն
կը դիտեմ
աչքերն անթարթ ,որ շեշտ հեռուն
է գամեր,
ճապուկ մարմնին տենդոտ դողը
անհամբեր
ու խոնջ կրծքեն ժայթքող իր հեքը
վայրի,
որ հասնելու անհաս տենչովը
կայրի․

## ՄԱՀ

Հա՛, կը մեռնիմ դեռ չապրած,
մինչ գործ տեսնել կերազեմ,
մինչ մտքերս հրահրած
կյանքին գիրկը կը վազեն։

Չէ՛, չկարծես կը վախնամ
կյանքի վերջին այս խաղեն.

ատ մեր ելքն է, ի՞նչ վախնամ
զգայության դռներեն։

Բայց դեռ շուտ է, շուտ, հոգի՛ս,
թարմ արյունս բոց է դեռ.
ու անծանոթ է սրտիս
անկարելին, վախն ու հեռ։

Եվ այդ կյանքիս դեռ սեմին
թողնեմ անուրջն իմ ամեն,
ու դեռ ոչինչ՝ ոչինչին
երթամ փարի՞մ աշխարհեն։

Դեռ հեռուեն ապագան
կը նկարվի վառ ու պերճ,
դեռ ուժերս ալ եռ կուգան.
բայց շունչ մըն ալ ու ալ վերջ։

Ընդմիշտ կորած են անհետ
լույս, հույս, տենչանք ու մտքեր։
Ա՜, ո՛չ. տվե՛ք շունչս ետ,
ես ընելիք ունիմ դեռ։

...Ու երազես արթընցած՝
բացվող լույսին կը հառիմ.
անուշ արցունք կիյնա ցած.
ա՛խ, ես կապրիմ, դեռ կապրիմ։

## ԺԱՆԳԸ

Գըրոցիս մեջ գրիչս ինկած է հիմա
գրած-ջնջած թղթերուս մեջ ցանուցիր.
ժանգե պատանք մը աճած է իր վրա
    ու ալ հպարտ չառկայծիր։

Մինչ նայվածքս այդ հին գրչին է հառած,
մեջս միտք մը զիկզակ կուտա՝ մի՞գուցե
անշարժ կյանքես զգացումներս ալ հանկարծ
    ժանգի խավ մը գա գոցե։



## ՀՈՂՄԱՂԱՑ

Հեռո՜ւն, բլրակի ուսին արևառ՝
զառամ, կիսափուլ հողմաղացը հին՝
    հոգնած ու կըքած,
բեռ մը տարիներ դիզած շալակին,
դրեր է վատուժ իր մարմինը սառ
    արևին դիմաց։

Կը դառնան խարխուլ թևերն ահագին
ճռճելով քուրջերն այն բզիկ-բզիկ
    ու կեղերերգեն
տխուր ճռինչով, հովերու կամքին,
իր համակերպած տրտունջը հեզիկ
    այս չարքաշ կյանքեն։

## ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿ

Ահա՜ ելավ լուսինն արծաթ
    մութ ամպերու ստվերեն,
ահա՜ նավակն ալ գեղազարդ
    մեր դրացի ժայռերեն։
      Անո՛ւշ հովիկ,
      փչե՛ հուշիկ
      ու բե՛ր ինծի
      բյուր ժիր ալիք։

Նավակը հեզ կը սպրդի
    ալիքներու ծուփին տակ.
աղջիկն անփույթ հենած մեկդի
    կերգե ձայնովն իր հստակ։
      Անո՛ւշ հովիկ,
      փչե՛ հուշիկ
      ու բե՛ր ինծի
      երգն անուշիկ։

Երգն է կարոտ, սեր ու գգվանք,
    ինքը հուզում ու սարսուռ.

ալ թո՛ղ, աղջի՛կ, երգդ ու նազանք,
քոց աչքերդ հո՛ս դարձուր։
Անո՛ւշ հովիկ,
փչե՛ հուշիկ
ու բե՛ր ինծի
Նավն ու աղջիկ։

## ՎԵՐ

Է՜հե՛յ, ես վեր թռչիլ կուզեմ.
մաքուր է հոն, արձակ, ազատ.
հոն հովին դեմ ես կը վազեմ,
իբրև եղբայրն իր հարազատ.
ալևորիկ լեռան ցայտին
կուզեմ թառիմ բազեեն վեր,
վերեն նայիմ ամպի կույտին,
ուր կայծակներն են պահվըտեր։
Գիտեմ, վարեն այն վարանոտ
խելոք մարդոց երամն ըստվար՝
«Ի՞նչ գործ ունի այդ խևը հոտ»
պիտի ըսեն, նային իրար.
և թո՛ղ նային, հեգնեն ալ թո՛ղ
խելոք ծաղրովն իրենց անհամ.
Է՜հե՛յ, միշտ վեր ես սրտադող
միշտ վե՛ր կուզեմ, որ խոյանամ։

## ԱԼԻՔԸ

Տե՛ս, ալիքը մերթ կուռի
կնոջ լանջի պես դողդոջ.
ժանյակով մը փրփուրի
նուրբ սքողված է ամբողջ.
մերթ ալ ողորկ կը գոգնա
ծոցին պես զույգ ստինքի,
ուր կույս սիրտ մը կը խոկա
աղվոր բաները կյանքի,



## ԱՆՏԱՌԻՆ ԵՐԳԸ

Մութին մեջ խոր պահվըտած
հովը կը սուրա
հանկարծ քունեն արթընցած
անտառին վրա։

Ու կը խոնին ճյուղ ու ոստ
իրարու ուսին,
հովի չափին տակ ընդոստ
կերգեն միասին։

Հոն թախիծին երկաթե
սուր ճիչերը կան,
որուն հույսը կը փաթթե
թել մը դուրեկան։

Մեղեդի մը տառապանք
հոն կը կարկաչեն,
ու վրեժը սանձարձակ
կորոտա մեջեն։

Մերթ հանդուգըն շեշտ մը սուր
ազատ ու վստահ,
մերթ կասկածի մը սարսուռ,
որ փախուստ կուտա։

Ծիծաղն անդին սուլելով
կատակ մը կերգե,
ծաղրը իր խոր բամբ ձայնով
քովեն կը հեգնե։

Հանկարծ կարոտ մը զգույշ
կը վազե մեկդի.
սիրո կանչ մըն է քնքուշ,
որ կը խլրտի։

Իսկույն խումբը բռընկած
զայրույթի մը պես

Նույն կտորը դարձ ի դարձ
կը կրկնէ պեսպես։

Մինչև դողդոջ, նվաղկոտ
վերջն է, կերկարի
հոգնած սրտի բոցն աղոտ
որ մեղմ կը մարի։

## ԱՂՈԹՔԸ

Դուն կաղոթեիր հուզված, դողահար,
կույս ննջարանիդ առանձնության մեջ.
ջինջ արցունքիդ տակ ժպիտ կը խաղար,
մինչդեռ բնածին շարժումով մը մեղկ
լի թևերդ մերկ կը հյուսվեր իրար։

Գլխու ամեն մեկ թեթև ցնցումիդ
կապեն ազատված մազերդ առատ,
ինչպես ոսկեզօծ առվակ մը սրտմիտ,
կը հոսեր ուսեդ կոհակ ու կոհակ
դեպի ձյուն-փրփուր գիրկը անկողնիդ։

Ի՞նչ կաղոթեիր, ինչու՞, չգիտեմ,
բայց աղեկ գիտեմ, որ քու փղոսկրե
կիսասքող կուրծքիդ ալիքներուն դեմ
զգացի տենչ մը Աստվածն ըլլալու,
որուն կաղոթես դուն ամեն ատեն։

## ՄԱԿՈՒՅԿԸ

Մակույկն է խրած
օրորուն ափին,
անձնատուր եղած
իր ամուր կապին,

Առագաստը թույլ
կախված մեղկորեն



կը դողա անդուլ
հովի սարսուռեն։

Թիերն ալ հոգնած
դադարեն երկար,
բաց ծովուն դիմաց
կը նային իրար՝

Մինչ դժգոհ, խոհուն
թեք կայմը ամուր
կը դիտե հեռուն
կարոտով տխուր։

Ու կըմբռնեմ ես.
նավն ալ կազմ, անահ,
անձկոտ սրտիս պես
բաց ծով կը ցանկա.

Կուզե սաստկակոծ
կյանք ու փոթորիկ,
մինչ ափին անգործ
կերերա լռիկ։

## ԱՍՈՒՊ ՄԸ

Այդ աղջիկը երեկ տեսա,
հեղ մը միայն, թեթևակի.
կարծես ասուպ մը դյուրասահ,
որ աչքիդ դեմ կը սայթաքի։

Հազիվ գողցա ակնարկ մը վառ
սև աչքերեն իր տենչարծարծ,
ու ժպիտ մը, որ այտեն վար
ինծի ձոնել ուզեց հանկարծ։

Հազիվ հպա իր զույգ մատին
հրաժեշտի պատրվակով
և զգացի քայլ մը անդին՝
սրտես բան մը մնաց իր քով։

## ԵՐՆԵԿ

*Էրե՞կ ըլլամ ես ներդաշնակ*
*թավալում մը եղանակի*
*ու իմ դյութիչ զգվանքիս տակ*
*տամ ձեզ բաժակն անրջանքի.*
*կամ ճնշըվող կուրծքե ժայթքած*
*բուռն երգ մը դառնամ անգութ՝*
*աննպատակ, անմիտ, ցամքած*
*ձեր խեղճ կյանքը տամ երեսնուղ։*

## ՓՈԹՈՐԻԿ

*Ու դուրսը մութ անթափանց.*
*ոչնչացումը լույսի.*
*պատուհանիս դեմ հակած՝*
*կեցած եմ լուռ, մեկուսի։*

*Ու հովն է, որ մոլեգնոտ,*
*կարծես ոհմակ գայլերու,*
*կոռնա հանկարծ դեմքիս մոտ*
*ու խույս կուտա ա՛լ հեռու։*

*Ու բյուր մատերն անձրևի*
*պատուհանիս երեսին*
*կը նվագեն խոլ, վայրի*
*երգերեն մին քառսին։*

## ՍՏՎԵՐԴ

*Քու ստվերդ է թևերուս մեջ,*
*քու ստվերդ խաբեբա,*
*որ քունիս մեջ կը գրկըվի*
*ու քունիս հետ խույս կուտա.*

*բայց կանգ կառնե քայլ մը անդին,*
*կարծես ինծի կհեգնե,*



*մեղմ ժպիտ մը տժգույն այտին*
*չի բաժնվիր ալ ինծմե,*

*Ո՛չ, ե՛տ կանչե ստվերդ նենգ,*
*որ միշտ շուրջս կը հածի,*
*երբ դուն ինքդ, հպա՛րտ աղջիկ,*
*դեռ միշտ օտար ես ինծի։*

## ԵՍ ՊԱՏՐԱՆՔԸ ՍԻՐԵՑԻ

*Շուրջիս տափակ ու չոր կյանքեն զայրացկոտ*
*կանչեցի ես իտեալս կենսածին.*
*բայց եռևես կծու ծաղրով անամոթ*
*«է՜, ան միայն գրքի մեջն է» պոռացին.*
*ես ալ գիրքը ինծի ընկեր ընտրեցի,*
*ես պատրանքը սիրեցի։*

*Մենության մեջ լուռ, մթնշող սենյակիս՝*
*չիրագործվող երազներու մեջ թաղված՝*
*հեռո՜ւ ու վե՜ր սավառնեցավ միշտ հոգիս,*
*հո՛ն, ուր կյանքիս գոհար հույսերն են մաղված.*
*ես, մոր մը պես, անուրջներս գգվեցի,*
*ես պատրանքը սիրեցի։*

*Երբ գեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցավ,*
*սիրտս դողաց հուզումով մը ներդաշնակ.*
*սիրեցի ալ, միայն ո՛չ ան, որ անցավ,*
*այլ անոր նուրբ հափշտակիչ դեմքին տակ*
*նո՛ր էակ մը, որ մտքերս հոն անցուցի,*
*ես պատրանքը սիրեցի։*

*Հայրենիքի հուր կարոտը բնածին*
*երբ բռընկցուց հուզված լանջս տենդորեն,*
*«Դուն հայրենիք, դուն հող չունիս» հծծեցին.*
*ես դառնացա, բայց ալ ուժգին այդ օրեն*
*իմըս չեղող հայրենիքս պաշտեցի,*
*ես պատրանքը սիրեցի։*

Ինծի համար այն ժամերը թանկ եղան,
երբ ներշնչված ստեղծեցի միշտ անգո,
բայց անձնուրաց ազնիվ դեմքեր սիրեկան,
երբ իրական աշխարհին մեջ միշտ դժգոհ,
իտեալի կյանքեն երգել ուզեցի.
ես պատրանքը սիրեցի։

## ՇՈԳԵՆԱՎԻՆ ՄԵՋ

Վերջալույսի կես-մութին մեջ շոգենավը կը մաքառի,
ծովուն կուրծքը կը պատռե անիվներովն իր վիթխարի։

Ու գորշ ծովը վերք մը առած, վերք մը խորունկ ու կաթնահոս,
եռ-եռ կերթա ալիք-ալիք, մոլեգնոտած, սակայն անխոս։

Ու կը նայիմ ես նահանջող ալիքներու այդ արշավին,
մինչդեռ մտքիս օրոր կըսե դղրդյունը շոգենավին։

Գանգես վազող խոհերն ամեն կը չքանան մեջես քիչ-քիչ.
ու խոնջ սրտիս ալ կը տիրե ախորժ թմիր մը ամոքիչ։

Չկա այլես վաղն ու երեկ. ներկան է լոկ, որ կըզգամ։
ան ալ խիստ մութ զգացում մը, թե կյանք ունիմ, թե ես կամ։

Չէ, չգիտեմ՝ ի՞նչն է թովիչ մտքիս շինծու այս նիրհին մեջ,
բայց ես սրտանց կը ցանկայի, որ մեր ճամփան դառնար անվերջ

## ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Լուսինն անհոգ ու ժպտուն
գորշ երկընքեն սատափե
ծովուն վրա կը թափե
լույսի խուրձ մը կայծկլտուն։

Ու լուռ ափին ավազուտ
ծովը հանդարտ ու բարի



կը մեկնըվի, կը փարի
քնքուշ դողով մը ծփուտ։

Ու նիրհ կու տա շոյանքով
իր խոնջ ու քուն ցամաքին
այնպես զգո՜ւյշ, մեղմագին,
ինչպես մայր մը զավկին քով։

## ԴՈՒՆ ԻՄՍ ԷԻՐ

Դուն իմս էիր. հեղ մը լոկ.
ան ալ պարի մը անցուկ
պտույտին մեջ վաղանցուկ,
միևնույնն է, որո՞ւ հոգ։

Երբ նվագը խելագար
կը դարձըներ մեզ արագ,
երբ մեր շուրջը հակառակ
ամենքը մեկ կը դառնար,

Չէինք տեսներ ալ ոչինչ.
մինակ էինք ես ու դուն,
գիրկընդխառն, զվարթուն,
վերացման մեջ զգլխիչ։

Ու գալարած կուրծքդ ի վեր
նազուկ մեջքիդ նրբենի,
ընդհատ շունչդ կըզգայի,
որ այտս ջերմ կը շոյեր։

Երբ այդ հուրեն խելահեղ՝
ա՜լ ջերմեռանդ և ուժգին
քու անձնատուր լի կուրծքին
կը փարեի սիրագեղ,

Ըսե՜, ինչո՞ւ կը ծածկես,
այդ հմայիչ լանջքիդ տակ
չէի՞ր զգար դուն հեշտանք
ու սարսուռ մը տենչակեզ։

Դուն իմս էիր, թեև լոկ
բուռն պարի մը անցուկ
պտույտին մեջ վաղանցուկ.
միևնույն է. որու՞ հոգ։

## ԻՆՉՊԵՍ ՄԵԳԸ

Ինչպես մեգը, որ առտուն
ներս կը խուժե սենյակեդ
ծաղիկներու բուրման հետ
գարնան օր մը զվարթուն,
այդպես տարտամ, սպիտակ,
թարմ բաղձանքներ անրջոտ
մերթ կողողեն խուռն ու հորդ
մըրկածուփ կրծքիս տակ.
այդ վայրկյանին խուսափուկ
տենչ մը վրաս կը հակի,
տենչ՝ ունենալ ծովակի
շաղակրատանքը փափուկ
ու պատմել ձեզ մեղմօրոր
սրտիս կյանքը երազուն
ու անորոշ անկայուն
այս բաղձանքներս իմ բոլոր։

## ԼՈՒՌ

Շուրջս խավար, հանդարտ ու քուն.
շուք մը անգամ չի դողդղար.
հոն, դիմացս շշուկներուն
մահացումն է լիակատար։

Միակ ձայնը իրարու քով
ժամացույցս ու սիրտս է հո՛ս,
որ կը համրեն պինդ-պինդ զարկով
կյանքիս քայլերն արագահոս։



## ՍՐԻՆԳ

Սրինգի մեղմ ձայն մի փափուկ ու ոլոր
լուռ գիշերին կը գեղգեղե հեշտօրոր.
կարծես անհույս կը հեծկլտա վշտացած.

Մերթ մտածկոտ կը նվաղի սարսուռով,
մերթ ալ հանկարծ ամբողջ կիրք է ու կորով,
մինչև նորեն թույլ ուժասպառ իջնե ցած։

Լալու իղձ մը կը ճանկըռտե կոկորդես
ունկընդրելով այդ սիրերգը տենչակեզ,
որ եղեգի ծակած կրծքեն կը հոսի.

Կարծես ինծի ու իմ սրտես կը խոսի։

## ՀՈՍ ԵԿՈՒՐ

Հո՛ս եկուր, նստինք ծառին տակ,
որ կես-մութին մեջ կերերա.
անուշ զեփյուռը թող հստակ
    երգեր հծծե մեր վրա։

Գիրգ ձեռքդ սեղմած ջերմ կրծքիս,
հո՛ս եկուր, նստինք ծառին տակ,
թող թափի դեմքիս, երբ հակիս,
    մազիդ ոսկի այդ վտակ։

Սուզվիմ աչքիդ խորքը վճիտ՝
գիրգ ձեռքդ սեղմած ջերմ կրծքիս՝
եկո՛ւր, որ ըսեմ ականջիդ.
    «Քեզ կը սիրեմ ես, հոգի՛ս»։

## ԵԹԷ

*Եթէ ճիշտ է, որ մենք ալ*
*պիտի ձգենք ու երթանք,*
*լքենք հոգին, խինդն ու լալ,*
*և՛ մարմինը, և՛ այս կյանք,*
*կուզենայի, որ կովես*
*չկշտացած, ագնիվ դեռ,*
*դեռ հոգիս միշտ թարմ ու վես,*
*մեծ ոչինչին մեջ կաթեր։*

*Կուզենայի խենթ հույսեր,*
*բուռըն հույզեր խուռներամ,*
*մաքուր ու վառ սիրտ ու սեր*
*դեռ կրծքիս տակ ունենամ,*
*ու քմայքներն հոգիիս*
*նվագի պես հեշտոլոր,*
*աշխատանքիս ու մտքիս*
*խարխափումներն այս բոլոր.*

*Ն՛վ ճիգերս, թե ինչպես*
*մարդը նորեն կերազեմ*
*ու բարձրացման ծարավես*
*անհայտին դեմ կը վազեմ.*
*և՛ հավատքըս թևավոր*
*մարդու գալիք մեծության,*
*և վե՛րջ ամեն բռնավոր*
*ստրկության, հեծության։*

*Թե ի՛նչ աղվոր, գրավիչ*
*կը թվի դեռ կյանքն ինծի,*
*կույս շշուկ մը, կույս քրքիջ*
*կարծես շուրջս կը հածի։*
*Երբ այս բոլորը չկան՝*
*կյանքը ինքն է արդեն մահ.*
*կուզեմ կյանքս հաղթական.*
*կուզեմ ապրիմ մինչև մահ։*



## ՄՈՒԹԻՆ ՄԵՋ

*Մութ է գիշերը և ամպոտ.*
*սև ալիքները սրտմտած*
*կելլեն ու կիջնեն ափին մոտ*
*ու իրար հետքով համրընթաց*
*հեռո՜ւն կը դիմեն վարանոտ։*

*Այդ խոր մութին մեջ՝ միայն վառ*
*բաց-կարմիր բոց մը կը հևա,*
*ձկնորսի նավ մը, ուրկե վար*
*մութ ջրին վրա կը սողա*
*բոցին շեկ ցոլքը դողահար։*

*Հովը կը փչե ցամաքեն,*
*խարխուլ հին նավը կը գայթի.*
*մինչ խռպոտ ձայներ կաղմկեն՝*
*խումբ մը ձեռք համառ կաշխատի*
*հանե իր հացը ալիքեն,*

## ԳԻՇԵՐԱՊԱՀԸ

*Գիշեր է. տա՜նկ-տա՜նկ. հսկա՛ ժամացույց.*
*հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.*
*միայն ինքն է որ՝ հանգույցե հանգույց՝*
*փողոցներ կանցնի լուռ, քայլամոլոր.*

*Պաղ հովը կուգա կը զարնե ճակտին,*
*ուր հին-հին հուշեր հանկարծ կը հածին,*
*ինչպես երկընքի քողեն ալ անդին*
*մոռցըված աստղեր մերթ վառ կառկայծին։*

*Ու միտքը կերթա թափով ինքնաբեր*
*կը թռչի դեպի տունը հայրենի,*
*ուր կյանքն ուրիշ էր, սրտերն ալ տարբեր*
*այն լեռներուն մեջ վեհ ու ամեհի։*

Ու պարզ կը հիշե. գիշեր է խորին.
իրենք քույր-եղբայր լռիկ ու անքուն
խումբով պաշարած ալեհեր հանին
կունկընդրեն անոր վեպերն հմայուն։

Եվ հանին ինքն ալ ներշնչված արդեն՝
Մհերի ուժը կը պատմե տղոց,
երբ հանկարծ բուքը տնակի երդեն
այլանդակ ձայնով կը հանե հոգոց։

Ահեղ ոռնումով կարծես կը խոսի,
կը սուլե բառեր բիրտ ու շլսված.
բա՛ռ, որ դժոխքի խորքեն կը հոսի.
ու խաչ կը հանե հանին երկյուղած։

Իսկ տղաքը լուռ կը նային իրար.
ու ամեն մեկը կը խորհի ինքնին,
որ նոր Մհեր մը դառնա անպատճառ,
երբ ինքն ալ հասնի անոր տարիքին։

Եվահա՜… տա՜նկ, տա՜նկ. խորհող ժամացույց.
հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.
միայն ինքն է որ՝ հանգույցե հանգույց՝
փողոցներ կանցնի լուռ քայլամոլոր։

## ԶԳՈՒՇ

Ըկուր ըսե, ինչու՞ այդպես
կը սեղմես դուն ձեռքս ծածուկ.
հեշտությու՞ն մը արդյոք կըմպես
դյուրին, անմեղ ու վաղանցուկ։

Զգո՜ւշ։

Բայց մի,— գուցե անզուսպ, տենչոտ
սիրտ մը ունիս դուն, ինծի պես,



ու ցընցումի, հուզման կարոտ,
չգիտես ալ՝ թե ինչ կընես։

Զգո՜ւշ։

Թե՞ պարզ խաղի համար նետված
խայծ մըն է այս չարաճիճի.
ու կուշտ խնդաս պիտի՝ հանկարծ
եթե սիրտս կարթիդ կառչի։

Զգո՜ւշ։

Քարայր մըն է հոգիս մենիկ
խոր անթափանց ժայռի գրկին,
ուր ամեն ինչ հծծյուն փոքրիկ
խուլ արձագանք կուտա ուժգին։

Զգո՜ւշ։

## ՖԱՆԹԱԶԻ

Ես անթարթ կը նայիմ աստղերուն.
ու ինծի կը թվի, թե մթին
երկընքի կամարեն շատ անդին
լուսածին կա աշխարհ մը անհուն,
և թե վառ աստղերը, որ վերեն
մեր մտքին թռիչքը կը գերեն,
ծակեր են, մաշուկներ, ուրկե մենք
կը ջանանք հայացքնիս նե՛րս նետենք.
Նե՜րս, ուր բոց էակներ հուր կյանքով
դարեդար կը վառին իրար քով,
ուր ժպտեն կը կաթի շեկ լույսեր,
ուր կրակ, կիզում է ամեն սեր.
ու կայծ մը՝ ամեն վիշտ, ամեն հույս.
արցո՛ւնքը՝ ջինջ շիթ մը բոցալույս.
և ինքը ապրիլը անվե՜րջ, ձի՜գ,
կայծակի սարսուռ մը ալացիկ։

## ՆԵՏ ՄԸ

Նայվածքդ, նետ մը դարբնած կայծակէ
կը խրես աչքիս խավարին մեջ հոծ,
ինչպես արևի ճառագայթ մը բոց,
որ խոր անձավի մութը կը ծակե։

Ու ժիր մարմինդ գրկիս մեջ կեռա,
երբ կապավինի իմ հուզված լանջին,
երբ շրթունքներս բոցովը տենչին
սերս կը գրեն այտերուդ վրա։

## ՊԱՏԿԵՐԻՆ ՄԵՋ

Պառկած ես հոտ, պատկերին մեջ,
դո՛ւն, չա՛ր աղջիկ, ու կըժպտիս.
ժպիտ մը մեղմ, որ չունի վերջ,
ինչպես տենչանքն իմ սրտիս։

Ամոթխածի նենգ դիմակով,
նազով անմեղ ու գեղանի,
ծածկել կուզես կույս վերմակով
սիրուն կուրծքդ հոլանի։

Մինչ ես խաբված՝ պատկերիդ դեմ՝
ձեռքերս վեր կառնեմ անձկոտ,
որ վրայեդ քաշեմ նետեմ
այդ ծածկույթը նախանձոտ։

## ՄԱՀԻԿԸ

Թուխ երկինքեն կես-գիշերին
նեղ մահիկի կենտ աչքն է ծուռ,
որ անքթիթ խորազնին՝
աչքերուս մեջ կը նայի լուռ։



Ու ժպիտով մը չոր, հեգնոտ
ինծի ըսել կուզե կարծես.
«Նյութի՛ փշուր, ի՞նչ կընես հոտ.
գիտե՛մ, մե՛ծ գործ, կը մտածե՞ս...»։

## ԾՈՎ

Եկո՛ւր, բացվինք մենք իրար,
ծո՛վ, կը կարծեմ ես ու դուն
պիտի սիրենք անպատճառ
իրար հույզն ու տրտմություն։

Քեզի ես շուտ հասկըցա.
վեհ ամեհի բնության
կապույտ սիրտն ես դուն հսկա.
սի՛րտ, իմ սրտիս հար-նման։
Դուն ալ ունիս, ինծի պես,
դժգոհության վայրկյաններ,
երբ կնճռոտ կը ճողփես
սիզոտ, խիճոտ ափն ի վեր։

Մերթ ալ զվարթ կը քնիս
ժիր աստղերուն, լուսնին հետ.
և հուզումեդ կառկայծիս,
կը դողդղաս բերկրանքեդ.
դու՞ն ալ վստահ այդ պահուն
դեմ կը նետվիս հույսերուդ,
որոնք ժպտով հմայուն
կիջնեն ծոցդ քու ծփուտ։

Այլև անշարժ, անծպտուն,
ամեն բանի անտարբեր,
մեռելություն մ՚ ունիս դուն,
որ իմ կրծքես ես խլեր.
չե՛ս խլրտիր, չե՛ս խորհիր
ու ոչինչ ալ չե՛ս զգար,

անխորհուրդ է ամեն իր
այդ վայրկյանիդ ցավագար՝

Մերթ ալ հանկարծ փրփրուն,
ցասումով մը մոլեգին,
կը գալարիս ժայռերուն
ու կը թքնես երկընքին.
ըսե՛, ինչու՞ այդ զայրույթ.
միթե դու՞ն ալ կապված ես,
միթե և քու՞ ուժերուդ
ազատ գործել չեն տար քեզ։

Եկո՛ւր բացվինք մենք իրար,
ծո՛վ, կը կարծեմ ես ու դուն
պիտի սիրենք անպատճառ
իրար հույզն ու տրտմությունն։

## ՍԵՎԵՐՈՒ ՄԵՋ

Քնքուշ աղվոր դեմք մը տխուր
    սև քողին տակ նուրբ ամպըված.
զույգ մը սիրուն մանրիկ ձեռքեր
    սև ձեռնոցով պիրկ գրկըված,
սև գոտիին տակ սլացիկ
    ճկուն իրան մը նրբամեջ,
կուրծքն ուռուցիկ ու անհանգիստ
    ձուլված իր սև հագուստին մեջ,
սև մազերու վտակ մը հորդ,
    որ ուսերեն վար կը վազե,
ծունկերուն մեջ կը քնանա
    հովահար մը սև մետաքսե,
և ունքերու սև թավուտեն
    ակնարկն ինծի երբ կը շանթե,
ա՜, սև՛ աչքեր, այդ ի՞նչ ուժ է,
    որ սիրտս այսպես կը կաշկանդե։



## ՍԻՄՖՈՆԻ

Երաժշտության իրար ընդգրկած
կրքոտ շեշտերու խոլ հորդումին տակ
քեզի կը դիտեմ ես հափշտակված.

Մինչ դուն ուշադիր սուզված ես դողդոջ
ներդաշնակության այդ ծովն անհատակ,
ուր կը փոթորկին հուզումներն ամբողջ։

Լսե՛, իմ կուրծքս ալ ալիքներ կան հորդ,
որոնք կարոտի հովերեն ուռած
սիրո ծարավս կերգեն մոլեգնոտ.

Այդ խոր անդունդն ալ մեկ նայե՛, հոգի՛ս,
և եթե խելքդ պտույտ գա հանկարծ,
մի՛ վախնար, գիրկս պիտի սայթաքիս։

## ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ

Լեցուն պայծառ լուսնին տակ,
հեռուն, կուրծքը դաշտակին,
կուզիկ լեռներ սպիտակ
իրար գլխու կը հակին։

Լե՞ռ. ո՞վ ըսավ. ալեհեր
քավթառներ են խորշոմած,
որոնք հոտ կուչ են եկեր
սավաններով փաթթըված։

Ու լրջությամբ ձառադեմ
գլուխ գլխի կը խորհին՝
գուցե իմաստ մը գտնեն
գոյությանը աշխարհին։

# ԼԵՌԱՆ ԱՂՋԻԿԸ

Վիպերգ

## ՆՎԱԳ ԱՌԱՋԻՆ

### ԴԵՊԻ ԳԵՂԱՐԴԻ ՕՊԱՆ[1]

*
* *

Լեռնե՜ր, սե՜գ լեռներ, ես կսիրեմ ձեզ,
Կսիրեմ բուռըն ու անզուսպ սիրով.
Հպարտ գագաթնիդ՝ հսկաներ կարծես՝
Ո՜ւժ կներշնչեն, թարմությո՜ւն, կորո՜վ։

Հոդ ամեն մեկ բան սրտիս կժպտի,
Վիշտն ու թախիծը կվանե մեկդի.
Հոդ զովիկ հով մը դեմս կփութա
Եվ կուրծքըս ազատ շունչ կառնե կուտա։

Իսկ անդընդախոր ձորի հատակին,
Երբ իր պատերը պատռել տըքնելով՝
Ժայռերու դեմքին փրփուր թքնելով՝
Կուռի կոլըրի ջուրը գետակին,

Սիրտս ալ, գետին պես, կխայտա վետ-վետ,
Եռալ փրփրիլ կուզեմ իրեն հետ։

Լեռնե՜ր, վե՜հ լեռներ, ձե՜զ երգել կուզեմ
Ոգևորության այս տենդերուս մեջ.

1 Օպա կկոչվի լեռներուն վրա հովիվներու զարկած քանի մը վրաններուն խումբը, ուր կապրին իրենք և որուն շուրջը հոտը կգիշերե։



Թող ձեր ճակատը միշտ բա՜ց, միշտ վսե՜մ՝
Դառնա գործերուս իդեալն անշեջ։

Դո՜ւն, լեռա՜ն աղջիկ, երգել կուզեմ քեզ,
Եվ թող երգիս հետ դուրս հոսի կըրծքես
Հոն երկար ատեն ծածկըված անհուշ
Թըրթիռը սրտիս ու հույզերս անուշ։

Եվ երնե՜կ երգս ալ պարզ ըլլա, հըստակ,
Ինչպես ամեն բան լեռներուն վրա.
Ինչպես աղբյուրը, որ դուրս կծորա
Մամռոտ ժայռերու զով խոռոչին տակ.

Ինչպես լեռնային երկինքը վճիտ.
Ինչպես, լեռա՜ն կույս, թնդյունը լանջիդ։

*
* *

Խոր ու թեք ձորի պատըռտած կողեն
Պարզուկ գմբեթ մը երկինք կմիտի,
Սուր-սուր սլաք մը լարված աղեղեն,
Որ, ըսես, հիմա վեր թռչի պիտի։

Վարը Ազատը ժայռերու գրկին
Դեմ կուտա անոնց քարե գըրկանքին,
Խաղով, հեգնանքով, քմահաճորեն
Դուրս սողալ կուզե Գեղամ սարերեն։

Բայց այդ իր վազքին մեջն իսկ խելագար,
Երբ կհանդիպի սուր սուրբ գմբեթին
Պատկառած քիչ մը կքաշվի մեկդին,
Որ մենաստանին չըդառնա խանգար։

Հա՜, հմայք ունի բնության ծոցին
Հին ու կիսավեր վանք մը առանձին։

*
* *

Օ՜հ, որքան քա՜ղցր է ձմռան բանտեն վերջ՝
Բնության գիրկը խենթի պես նետվիլ․
Ու խորհրդավոր, սիրուն ձորին մեջ
Ե՛վ ըսքանչանալ, և՛ ոգևորվիլ։

Տաք իրիկուն էր, երբ սայլն առավ կանգ։
Վերջին ոլոր մ՚ալ, ու ձորը մտանք։
Գետն իր խուլ երգով դեմերնիս փութաց,
Գագավ երեսնիս իր շնչովը թաց։

Ծոխ ուռիներու թավուտ ճյուղերեն
Սուր դայլայլիկներ կըտրուկ, թըրթըռուն
Հանկարծ անձրևեց մեր խոնջած գլխուն.
Մինչ գաղտնի ձայներ, որ մարդ կծաղրեն,

Ջորի այն բա՜րձր անձավներեն կույս
Նույնը կկրկներ թովված ականջնուս։

*
* *

Նըրբամեջ ձորը դյութել կուզեր մեզ՝
Վառ ծաղիկներով պըճնած դեմքն ու լանջ.
Փարթամ բնության իբրև նուրբ բեհեզ
Նետեր էր ուսին կըրկնոց մը կանանչ.

Սակայն վախնալով, որ հովն անպատկառ
Ծածկույթը մարմնեն կատակով բանար,
Անփույթ դիրքով մը փաթթեր էր մեջքին
Փըրփուրե գետի արծաթե գոտին։

Եվ շլացանք մենք այդ կույս, ամոթխած
Ու թարմ, գըրգըռիչ գեղեցկութենեն.
Մոռցանք դըպրոցը, իր ժխորն ամեն՝
Նոր հրապույրին անձնատուր եղած։



Եվ հաճոյալից խուսափուկ օրեր
Մեր անհոգ կյանքի օրոցքը կօրրեր։

*
* *

Սակայն հուսուն են, վաղանց, քըմածին
Ու դյուրափոփոխ իղձերը մարդուն.
Ինչպես ամառվան վառ վերջալույսին
Նըրբին, գունագեղ ամպերն անկայուն,

Լրիվ ամիս մը դեռ հազիվ անցավ,
Երբ ամենուս ալ զգալի դարձավ,
Որ հընչուն գետը ու ձորը գողտրիկ
Ծարավ սըրտերնուս ալ չէր գար հերիք.

Ազատ երկընքի կըզգայինք պահանջ.
Ծերուկ սարերուն տեսքը ալեհեր
Կարծես կքաշեր մեզ լեռներն ի վեր՝
Հո՛ն, ուր հարթակ էր փըռված գեղալանջ։

Եվ մենք վճռեցինք շաբաթ մը-երկու
Լեռներուն վըրա՛ երթանք ապրելու։

*
* *

Գիրք ու անկողին՝ պետքերնիս բոլոր՝
Իր թիկունքն առավ մեկ նիհար, սև եզ.
Դե՜, օպա կներթանք մենք ոլոր-մոլոր,
Մանուկ հոտաղ մը առաջնորդ է մեզ։

Դըժվար էր ճամփան, նեղ, սեպ ու անանց,
Շուտով գյիշերն ալ հասավ անթափանց.
Երբ հանկարծ մոտեն խուլ որոտումներ
Դղըրդեցուցին թե՛ անդունդ, թե՛ լեռ.

Եվ հոծ ամպերու թանձրության խորեն
Դուրս սողաց շանթը ճայթումով վայրագ,
Մինչդեռ փայլակը դողդոջ ու արագ
Մահատիպ լույս մը կթափեր վերեն։

Իսկ մենք կելլենք միշտ լուռ ու շընչարգել
Մութին մեջ կորած այդ շավիղն անել։

*
*   *

Ա՜հ, այդ գիշերը ո՞վ մոռնալ կրնա,
Կատղած բնության ցասկեն դողահար՝
Միայնակ նետված լեռներուն վըրա,
Երբ երկընքեն վար դըժոխք կտեղար։

Չէ՛. ես կպաշտեմ այդ աղմուկն անսանձ.
Այդ ակնախըտիղ փայլը կարճակյաց.
Այդ կայծակները, երբ վազքերնուն տակ
Կպատռեն ամպերն այն կուտակ-կուտակ.

Բնության ահեղ այդ կըռվին հուժկու
Ես կերկըրպագեմ հափշտակությամբ.
Ան իմ թարմ սրտիս կուտա իղձ ու թափ
Մեր կարճ կյանքին մեջ անդուլ կըռվելու.

Եվ մարդ ո՛ւժ կզգա այդ վեհ վայրկյանին
Ուխտել բյուր ցընորք ու անկարելին...

*
*   *

Բայց թունդ աղմուկին քիչ-քիչ հաջորդեց
Առատ անձրևի զարկերն ու շառաչ.
Եվ մենք ուժասպառ, գավազաննուս հեց՝
Եզին հետքովը կերթանք միշտ առաջ։



«Հասա՛նք», կավետե մեզ առաջնորդնիս.
Ես ըսթափելով կնայիմ չորս դիս։
Մութին մեջ բան մը հազիվ նըշմարած՝
Այն կողմ կըշտապենք եզը զանց ըրած։

Բայց հաղթ, հովվական խոշոր շներու
Հաչն ու կլանչը մեզ ետ կվանեն.
Մինչ հովիվները կելլեն վըրանեն
Ապշած նայելով անկոչ հյուրերուն,

Որ գոռ փոթորկին, այդ սև գիշերին
Իրենց այցի գալ մըտածեր էին։

*
*   *

Դեռ փոթորիկը դուրսը կաղմըկե,
Եվ հորդ անձրևն ալ կծեծե անդուլ
Պարզուկ վըրանին ծածկը թաղիքե՝
Կազմելով երգ մը միակերպ ու խուլ։

Եվ այդ թացության երգը տըխրագին
Օրոր կկարդա մեր հոգնած մըտքին.
Եվ մենք ուժաթափ, մըրսած ու քընատ,
Անձրևեն թըրջած ու հովեն գունատ՝

Կնընջենք խորունկ մանկական քընով։
Քունն ի՜նչ անուշ է լեռներուն վըրա,
Երբ փոթորիկն ալ դուրսը կգոռա,
Երբ խեղճ վըրանըդ կդողա ահով,

Եվ անկողնիդ մեջ երբ բընազդաբար
Կըծիկ կդառնաս տաքնալու համար։

## ՆՎԱԳ ԵՐԿՐՈՐԴ

# ԼԵՌՆԱԴԱՇՏԸ

*
*    *

Պայծառ արև էր, երբ աչքըս բացի,
Ընկերներըս խոր կնընջեին դեռ.
Վըրանին առջև երկու արձակ ձի
Ցողաթուրմ խոտը ախորժով կուտեր։

Հըսկա ծերուկ մը երկու քայլ անդին
Նըստեր կխորհեր ձեռքը ծընոտին։
Դուրսեն բյուր ձայներ, ճըռվողյուն, դայլայլ
Եվ սուր բըզզյուն մը անվերջ, անայլայլ

Համանվագ մը կդաշնակեին։
Ես չըդիմացա, ցատկեցի տեղես.
Աղբյուրն հարցուցի ծերուկ տանտերես.
Ան քանի մը բառ պոռաց անմեկին,

Ու աղջիկ մը ներս վազեց կարմըրած,
«Գըհա՛ ետևեն»՝ ծերը մըռմըռաց։

*
*    *

Ի՜նչ սիրուն օր էր, ի՜նչ կապույտ եթեր.
Շուրջըս շող ու ցող, թարմություն ու զով.
Հոն բնությունը կարծես լըվացվեր՝
Ջորցվիլ կուզեր զեփյուռի շընչով։

Ես կքալեի արբշիռ ու արագ՝
Լեռան ջինջ օդը ծըծելով անհագ.
Աղջիկը թեթև առջևես կերթար
Մանրիկ, ոստոստուն քայլվածքով կայտառ,



Ա՜, իր նուրբ, ճկուն մեջքը կանացի.
Եվ թիկունքեն վար սև գիսակը ճոխ՝
Օձի պես սողուն ու աչքի կառչող։
Ջո՜ւր հետը խոսիլ հեղ մը ջանացի.

Գլուխը հակեց շարժումով մը վես,
Ցընցում մը ըրավ, թըռավ առջևես։

*
*    *

Եվ ես խելահեղ ինկա ետևեն,
Կարծես գըրգըռված իր վազքեն համառ.
Հասա ու ամուր բըռնեցի թևեն,
Առանց գիտնալու, թե ինչու համար։

Անոր արևոտ այտերը սիրուն
Հազիվ էր պագեր տասնըհինգ գարուն.
Եվ ի՜նչ թարմ մարմին, և ի՜նչ հրապույր,
Ինչպե՜ս նըրբակազմ, ինչպե՜ս կենսաբույր։

Ես պահ մը անթարթ նայեցա իրեն,
Մինչ ինքն ամըչկոտ հայացքը անուժ
Հառեց աչքերուս վարանքով անույշ,
«Անունըդ», ըսի. ժըպտեցավ նորեն.

Եվ հանկարծ խլեց թևը ձեռքերես
Ու փախավ լեռան երեի մը պես։

*
*    *

Անհետ եղավ ան ժայռերուն ետև,
Իսկ ես միայնակ մընացի շըվար.
Կըրծքիս տակ բան մը կճըմլեր թեթև,
Անկանոն շունչըս արագ կհևար.

Ու սիրտըս ամուր մուրճի մը նման,
Զարկ կուտար պինդ-պինդ․ խենթեցեր էր անի
Անշուշտ անսովոր իմ ըշտապ վազքես
Այսպես շընչասպառ, հուզված էի ես։

Մտքիս մեկ խորշեն կըսեին սակայն,
Որ այդ բնական պատճառեն տարբեր
Ուրիշ նոր բան մը հոգիս էր թափեր,
Նոր բան մը ճըմլող, թաշմ ու դուրեկան...

Մինչև որ թուլցան զարկերը սըրտիս,
Ու ես հոգեզմայլ նայեցա չորս դիս։

*
*   *

Նոր էր ամեն բան հոն ինծի համար․
Այդ չըքնաղ վայրի բընությունն ազդու,
Այդ շուրջանակի լեռներն անհամար,
Որոնք թև-թևի հենած իրարու

Ըսկսիլ կուզեն շուրջպար մը հսկա,
Որ համրատատան կերթա ու կուգա․
Մեր նեղ, ցից սարը, որ դաշտին դիմաց
Բեմ մը կկարծես կանանչով գորգած։

Դյուցազնի բեմ մը, որուն բարձունքեն
Ամեն առավոտ վարդ արշալույսին
Բյուրավոր զըվարթ ձայներ միասին
Բնության գեղը կճառեն կերգեն։

Ի՜նչ հիացումով և հույզով եռուն
Ներկա եմ եղեր այդ ներբողներուն։



*
*   *

Լեռնային վայրի բընության նըման,
Նոր էր ու բուրըն վարած կյանքերնիս․
Անցյալի՜ հուշեր, եկե՛ք օգնության,
Երգե՛նք միասին՝ ինչ քաղցր էր սրտիս։

Երբ առավոտը գաղտուկ ժպտալեն՝
Լեռան ու երկնի համբույրի վայրեն՝
Ցույց տար դալկահար, քընատ աստղերուն
Քունեն կարմըրած այտերն իր սիրուն,

Երբ Արագածի չորս-ճյուղ գագաթին
Թուխ-թուխ ամպերը խորունկ հորանջով
Ճերմակ մահիճնուն ելլեին նազով․
Եվ երբ արթըննար օդը հանդարտին

Թռչուններու սուր առաջին երգեն,
Մենք ալ կելլեինք հովվի վրանեն։

*
*   *

Մեր ուրախ, անզուսպ բարձըր երգերուն
Աղբյուրն իր հեզիկ ձայնը կխառներ,
Մինչ իր սառնորակ հոսանքը ծիծղուն
Քունի համբույրը այտես վար կառներ։

Հեռո՜ւն լեռներեն հըտպիտն արձագանք
Ծըշդիվ կկըրկներ յուրաքանչյուր վանկ։
Մենք, արբած լեռան մաքուր, գաղջ օդեն,
Հողի ու ծաղկի գրգըռիչ հոտեն,

Շարժելու տենչ մը կզգայինք հանկարծ։
Դե՜, շիտակ այն սեպ, ժայռոտ բըլրեն վեր․
Ետևնուս հող, քար վար կգըլտորվեր
Խուլ թընդյունով մը, թափով մը անդարձ,

Մինչ խումբը հեքով շեշտ առաջ կերթար
Գագա՛թը միայն առնելու դադար։

*

*     *

Ապա կերթայինք ու ջոկին մեջեն
Շուտ կթամբեինք մեր նախընտրած ձին.
Եվ դալարագեղ լեռան թեք լանջեն
Ջին ճամփա կիյնար միշտ հըլու սանձին․

Ա՛խ, երբ ան կատղած, բերնին հորդ փրփուր,
Ծոխ բաշը հովին, աչքերուն մեջ հուր,
Պինչերուն շոգի, շեշտ կսլանար
Ոտքերն ու կուրծքը գետնին հավասար,

Կարթըննար մեջըս վայրի բընազդներ.
Կուզեի բան մը, որ փըշրեմ ջարդեմ,
Կուզեի կըռվիմ սուլող հովին դեմ,
Որ ականջիս տակ ծաղըըս կհաներ։

Այն պահուն ձիես, չէ՛, տարբեր չէի,
Ե՛ս ալ, իրեն պես, կվըրընջեի։

*

*     *

Կամ իրիկունը, երբ թույլ ցոլքերով
Արևը երկրիս հըրաժեշտ կուտար,
Եվ երբ լեռները իրենց ըստվերով
Պինդ կփաթթեին հովիտը դալար.

Երբ հովիվները փըչելով շըվին՝
Դեպի վրանը ետ կքշեին
Մայող, բառաչող հոտերն ու տավար,
Մենք՝ թմրութիյուննիս վանելու համար՝



Դեպի վըտակը կերթայինք ըշտապ.
Լեռան ցատկըռտող ջուրերը հըստակ
Ա՛լ կփըրփըրեր մեր զարկերուն տակ.
Մինչ մենք  դեռ երկար, թեև ուժաթափ,

Իր հոսանքին դեմ կուտայինք պայքար,
Որ կարկաչելով վըրանիս կուգար։

*

*     *

Վըտակին մոտիկ ժայռ մը կա ցըցված,
Որուն դեմ հովը իզուր կըսպառնա.
Լողանալե վերջ՝ զով ու թարմացած
Հո՛դ կժողվըվինք՝ այդ ժայռին վրա։

Ծիշտ մեր ձախ կողմեն Մասիսն ամեհի
Լեռան մը ուսեն շեշտ մեզ կնայի.
Աջեն Արագած՝ հակած Արային՝
Ո՞վ գիտե, ինչեր կպատմե հին-հին։

Այրարատ դաշտը կփըռվի մեր դեմ,
Որ պինդ պարուրված իր գորշ ծածկոցով
Քուն մտնել կուզե. ի՞նչ մշուշի ծով։
Ետիս ալ ձորի մութն է ձառադեմ,

Ուր Ազատ խոր, խուլ, անձավներուն մեջ
Կկըռվի անդուլ իր կռիվն անվերջ։

*

*     *

Եվ մենք անձնատուր մեզ շրջապատող
Դարերու վըկա այդ արձաններուն,
Կմնանք անշարժ, լուռ ու սրտադող՝
Մութին մեջ գամած աչքերնիս հեռո՜ւն։

Հին, հոգնած դարեր, ծեր ուղտերու պես,
Կուգան ու դանդաղ կանցնին առջևես։
Բայց, տեսար, վեճ մը մեր մեջ կփրթի՝
Անմիտ հորդում մը տենչահույզ սրտի.

Գալիք օրերու քողը կպատռի
Մեր անփորձ մըտքի հանդուգն ճիգեն.
Ի՞նչ պատկեր, ի՞նչ կյանք կժպտի տակեն...
Եվ ա՛լ վարդերանգ հույսերու գերի՝

Պինդ-պինդ կհավտանք, սո՛ւրբ հպարտություն,
Թե պիտի չանցնի մեր կյանքն ապարդյուն։

## ՆՎԱԳ ԵՐԹՈՐԴ

## ԼԵՌՆՈՒՀԻՆ

*
*   *

Այս կյանքը սըրտիս նո՛ր էր ճշմարիտ,
Նո՛ր իր լեռնական պարզությամբը վեհ,
Նո՛ր իր ինքնաբուխ հույզերովն անմիտ,
Նո՛ր իր գեղովը, որ մարդ կթովե։

Նաև հոն մեզի նո՛ր էր ծերունին,
Որ անշարժ նստած կխորհեր ինքնին
Աշխույժ տարիքին իր ուժն ու գործեր,
Եվ կռիվները, որ ան վարած էր

Քաջ թըշնամուն դեմ երես առ երես,
«Չէ՛, ան ատենը ուրիշ էր աշխարհ»,
Ու խոր թախիծեն ծերը կդողար՝
Է՜հ, ինծի համար նոր էր վերջապես

Այն լեռան վարդը՝ վայրի ու չքնաղ՝
Իր աղքատ, պարզուկ ձորձերուն մեջն ալ։



*
*   *

Բայց քիչ-քիչ վարժիլ ըսկսանք նորեն
Վըսեմ բնության գույն ու ձևերուն.
Կապույտը երկնի, կանանչը դաշտեն,
Ոսկի դեղինը ամեն իրիկուն

Եվ արշալույսի երկինքը բոսոր
Մոլոր աչքերնուս ալ չէր անսովոր։
Դեռ չորս հեղ արև գըլխնուս չանցած
Հոն մեզ անծանոթ տեղ չէր մնացած։

Կաթե ջըրվեժը պաղ, փըրփըրադեզ,
Դաշտակի ծայրի գոս ժայռը խոժոռ,
Հարևան բլրի գլուխը խոշոր,
Նույնիսկ մամռապատ քարերը դեզ-դեզ,

Որ մտերմորեն վար կնայեին,
Ա՜հ, ո՜րքան, ո՜րքան սրտիս մոտ էին։

*
*   *

Հովվի վըրանն ալ արդեն օտար չէր,
Կարծես հին ծանոթ էինք մենք իրար.
Լեռան աղջիկը ալ դուրս չէր փախչեր
Ու մեր հարցերուն պատասխան կուտար։

Երբ իր ամըչկոտ ձայնը երերուն
Գար երազանքիս հյուսվեր թելերուն՝
Կդիտեի ես գորովով անանց
Իր մութ աչքերուն խավարն անթափանց,

Իր խիտ հոնքերուն կամարը կրկին,
Որ մացառներ են կարծես ձորափեն
Ու ձորին վըրա ըստվեր կթափեն
Եվ թուխ այտերը, որ կբըոընկին,

Եվ վարդ շըրթունքին զույգ թերթերը թաց,
Ուր չար համբույր մը կար միշտ պահվըտած։

*

* *

Ա՜հ, այն ատենը տասնըութ տարվան
Բոց մը կշըրջեր երակներուս մեջ.
Դեռ ամբողջ կյանքս էր սպասո՜ւմ միայն
Ու էությունըս՝ երազանք ու տենչ։

Եվ երբ պատահեր, որ թըռչնակն անմեղ,
Թափեր ծառերեն սիրահորդ գեղգեղ,
Ընկերուհիին շուրջը հածելով
Ոստոստեր, երգեր իր սերն ու գորով,

Ես կրծքիս խորը՝ նախանձեն ուռած՝
Կըզգայի բուռըն ու հուզիչ իղձեր.
Հովը ականջիս լոկ սեր կհըծծեր.
Եվ ես լալու չափ հուզված, գըրգըռված

Կուզեի սիրվեմ, կուզեի սիրեմ
Ու թըռչնակին պես ոստոստեմ, երգեմ։

*

* *

Կզգայի սիրտըս լի էր ու զեղուն՝
Լի հորդելու չափ իր շըրթունքներեն՝
Ինչպես անապակ գինի՜ն փըրփըրուն,
Որ դուրս կթափի իր ներքին եռեն։

Ու գանգիս տենդոտ անուրջներուն մեջ
Սիրո պատկերներ կուգային անվերջ.
Պատկերներ օդե, պատիր, մանկական,
Բայց անբիծ, անգին ու իտեական։

Այդ անուրջները հոգիս կօրրեին,
Երբ բախտըս ինծի գլորեց շիտակ
Լեռան աղջըկան պարզ վրանին տակ.
Ա՜յ, այդ աղջիկը՝ քնքուշ լեռնուհին՝



Որ ինչպես իր սեպ սարերն հարազատ,
Պարզ էր, գեղանի, խըրոխտ ու ազատ։

*

* *

Ու կմնայի ես հաճախ մինակ
Լեռներու դըստեր հըրապույրին քով.
Լո՜ւռ կնստեի հին վըրանին տակ
Ընթերցանության նուրբ պատըրվակով։

Բայց ի՞նչ ընթերցում. ո՞վ է այն տըղան,
Որ լուրջ ըզբաղի,՚ երբ բոց կտեղան
Զույգ մը կանացի աչքեր հմայիչ
Ու հայացքըդ վեր կքաշեն քիչ-քիչ։

«Լիր արքան» ծունկիս կնիրհեր անուշ,
Անտարբեր ձեռքով ես հազիվ երբեք
Սուտ կշըրջեի թերթերը մեկ-մեկ։
Չէ՜. կկարդայի ժողված խելքս ու ուշ,

Բայց ո՜չ խեղճ գըրքիս տողերն անկենդան,
Այլ սև, կախարդիչ աչքերն աղջըկան։

*

* *

Եվ ինքը գիտեր, կշիկներ հանկարծ,
Վրանեն կելլեր, կդառնար նորեն,
Եվ իմ հալածող հայացքես գերված՝
Ժըպիտ կթափեր նուրբ շըրթունքներեն։

Մերթ ալ նըստելով իր աշխատանքին
Մեր գորշ վրանի լայն մուտքի կողքին՝
Երգ մը կըսկըսեր, ձիգ երգ մը սարի,
Ինքն ալ, իր երգն ալ շատ պարզ ու վայրի։

Իր անուշ ձայնը մերթ խուլ կորոտար,
Ինչ լեռան վայրագ, փոթորկոտ հովեր,
Մերթ կթրթռար հնչուն ու երեր,
Ըսես, զեփյուռը ձորեն ձայն կուտար.

Հանկարծ կժայթքեր, ջրվեժ մը կարծես,
Մեկ ալ կմարեր, հույսի լույսին պես։

*
*   *

Նյութն ալ ու երգն ալ տխուր էր, քինոտ.
«Բուռըն ջերմ սիրով կսիրե Մարոն
Դըրացի լեռան ամենեն սըրտոտ,
Ամենեն կտրիճ տըղան մըրահոն։

Բայց այդ սուրբ սերը պետք է խոր պահվի.
Երկու ցեղերն են իրար թշնամի։
Մարոն չըգիտե. դեռ լուսաբացին
Անգըլուխ դի մը գետեն հանեցին

Հոտի պահապան գամփըռներն հուժկու։
Վարձկան հովիվը չըճանչցավ այդ դին,
Մարոյի հայրը ճանչցավ իր որդին.
Եվ կատղած երդում կերավ ահարկու,

Թե պիտի լըվա բազկովը կըթոտ
Իր հարազատին վատ մահն ու ամոթ։

*
*   *

Դեռ իր աչքերը ուժ ունին այնքան,
Որ իր վըրեժի նըշանը գտնեն.
Ու ծեր ձեռքերը պիտի չդողան,
Երբ հրացանի բըլթակը քաշեն։



Նա՜. ժայռի տակեն գընդակը թըռավ,
Այն ի՜նչ կտրիճ էր, որ թավալ ինկավ.
Ետ կուգա ծերը խեթ, դաժան ու քեն,
Արյունոտ բան մը կախված է ձեռքեն։

Մարոն հորը դեմ կվազե արագ՝
Գեշ բնազդով մը սիրտը թունդ ելած,
Եվ սարսափահար կանգ կառնե հանկարծ
Դեմքը մահատիպ, աչքերը վայրագ։

Մազերեն կախված հորը ձեռքեն ցած
Իր սիրականի դեմքըն է ճանչցած»։

*
*   *

Այսպե՛ս կերգեր ան նըստած քովընդի՝
Գողտրիկ գլուխը ցընցելով աշխույժ.
Ու ճակտին տակեն նայվածք մը գաղտնի
Դեպ իմ անկյունըս նետելով ըզգույշ։

Դյութելու իղձը ան ո՞ւր էր ուսեր.
Եվ ինչո՞ւ գերել, գըրավել կուզեր։
Բայց ո՞ւրկե ուսան աստղերը խայտալ,
Մեզի աչք ընել, պըշրիլ ու խընդալ.

Ո՞ւրկե սորվեցավ գետակը զըվարթ
Փըրփուրե քող մը ձըգել իր վըրա.
Ան ինչո՞ւ կեռա, ինչո՞ւ կգոռա,
Ինչո՞ւ կքըծնի ափերուն հպարտ.

Ծիածանն ինչո՞ւ կամար կկապե,
Երբ երկինք գոհար ու շող կթափե։

*

*  *

Մենք իրարու հետ քիչ կխօսէինք.
Հարց մը կամ կատակ, միշտ ալ ժպտերես.
Մերթ ցոյց կուտայի ես մեկիկ-մեկիկ
Քանի մը սիրուն պատկեր գրքերես։

Ու մօտը նըստած ծունկըս իր ծունկին՝
Կի հեշտանքով մը անուշ, անմեկին՝
Պատկերին միտքը կբացատրեի,
Ա՜, ես այդ պահուն բանաստեղծ էի։

Ան դեմքես կախված՝ կունկընդրեր անձայն.
Ու գոհ, միամիտ ժըպիտ մը հանկարծ
Կելլեր շրթունքին, կարծես, իբրև վարձ
Իմ այդ սըրտագին ոգևորության։

Եվ այդ ժպիտն էր քընքուշ ու գոհար,
Որ խոսքիս նոր ուժ ու հումոր կուտար։

*

*  *

Եվ քիչ-քիչ ըզգալ ըսկըսա շուտով,
Որ իմ գերության անտեղյակ հոգիս
Արդեն կապված էր աննյութ շըղթայով.
Եվ կապանք մը որ՝ թև կուտար կյանքիս։

Նոր բան մը կաճեր սըրտիս մեջ արագ՝
Հորդ ու թրթըռուն հուզում մը կրակ
Եվ խուժ ալիք մը կյանքի խորունկեն
Ըզգացումներըս գըրկած էր ամեն։

Ու հարց կուտայի վարանքով համակ,
Թե արդյոք ա՞ս էր, որ կանվանեն սեր,
Որուն խեղճ սիրտըս անժուժ կըսպասեր,
Որով գինովնալ կըղձայի անհագ։



Հարցիս պատասխան գլուխըս չէր տար,
Միայն ալ ուժգին սիրտըս կթընդար։

*

*  *

Ու կհոսէին օրերը զըվարթ
Գոհար հուզումով ու ոսկի կյանքով.
Մինչդեռ լեռնային բնությունն հըպարտ
Կգըգվեր մեզի խանդաղատանքով։

Է՛հ, թող չըմոռնամ այն օրերն անդարձ,
Երբ պատանեկան սիրտըս կյանք առած
Բնության, սիրո ծոցին մեջ անհուն՝
Գալիք կյանքի մը հույսերով զեղուն՝

Կթափահարեր լանջիս տակ ուռած.
Երբ գործ տեսնելու անհագուրդ տենչես
Բյուր նըպատակներ կըստեղծեի ես.
Երբ այդ հույզերուս բովին մեջ գըտված՝

Սոսկալի անեծք կուտայի իմ դեմ,
Ըսկզբունքներըս թե երբեք դավեմ։

ՆՎԱԳ ՉՈՐՐՈՐԴ

## ԼԵՌՆԱՂԲՅՈՒՐԻՆ ՔՈՎ

*

*  *

Է՛հ, այդ օրերը շատ արագ անցան
Ժիր, պատանեկան կյանքիս վըրայեն.
Ինչպես ամպերուն մեջեն ցիրուցան
Կանցնի ասուպը դեմքիդ ժըպտալեն։

Միայն վառ հուշեր անուշ ու քընքուշ
Կրծքիս խորքերը ծածկած եմ ըզգույշ․
Ճիշտ այդպես տըղան կպահե իր քով
Յարի մեկ ընծան անհուն գըգվանքով։

Ո՛ւր է Գեղարդը իր լեռներուն հետ
Եվ ո՞ւր իմ արդի անկյունս անկենդան․
Բայց մի՛շտ, երբ գըրչես հանգերը խույս տան
Ու խոնջ հայացքըս՝ կարոտով հավետ՝

Արդի հարևան լեռներուն գամվի,
Ես ձե՛զ կխորհիմ, լեռներ հայրենի…

*
*   *

Վայրկյանի մը պես թռեր էր արդեն
Երկու շաբաթվան միջոցը սիրուն․
Ու վըճռվեցավ, որ երկու օրեն
Տանք հըրաժեշտնիս այդ պերճ լեռներուն։

Մեկնելու վըրա ես չէի խորհեր,
Ուրիշ նոր հարց մը իմ միտքըս կօրրեր․
Արդյոք աղջիկն ալ կըմպե՞ր սիրտը դող
Այս արբեցընող հուզումես հորդող։

Ժըպիտն էր դյութիչ, բայց միշտ անթափանց,
Աչքերն ալ մութ-մութ, վար քաշող ու խոր,
Ինչպես անհատակ անդունդն ահավոր,
Ուր միայն խելքըդ կդառնա անսանձ։

Եվ այս անորոշ ծըփումս ու հույսեր
Ա՛լ կհըրահրեր թե հուրքըս, թե սեր։



*
*   *

Չէ՛․ չէի կրնար հանդուրժել բնավ,
Որ սեգ լեռնուհին մընար անտարբեր․
Պահանջոտ էի, գուցե անիրավ,
Բայց հըպարտ հոգիս մերժում չէր տաներ։

Եվ գիտեի ալ, որ այդ աղջըկան
Քունը կտրած էր, իմ քունիս նման․
Գիտնալը բավ չէր, և պատրաստ էի
Կյանքիս օրերեն փունջ մը փետտեի,

Միայն լսեի իր իսկ շրթունքեն,
Թե իր միամիտ, անբիծ, կույս սըրտին
Իմ նայվածքներս խռովք կազդեին՝
Խռովք և անուրջ՝ որ կյանք կբերեն,

Թե երբ ծունկ ծունկի մինակ մընայինք՝
Խորին հեշտանք մը ու դող կըզգար ինք…

*
*   *

Վերջին օրն էր ան, վերջին իրիկուն․
Աղբյուրին վըրա ժայռի մը հենած՝
Նըստեր էի ես մինակ ու նըկուն,
Մասիսի խոսուն ակնարկին դիմաց։

Մոր գիրկը վազող գունդը ոսկեհեր
Իր մարող լույսի ցոլքերով երեր
Կթափեր գոհար, մարգըրիտ անգին,
Մասիսի ծերուկ, ալեզարդ գանգին։

Արևմուտքն ամբողջ արյուն էր կըտրած,
Ուր կլողային դեղնորակ բոցեր․
Հոգնած արևը դեմքը կգոցեր․
Ես կդիտեի մըտացի՛ր, կոտրա՞ծ

Բնության պայծառ երանգներն այն պերճ,
Որ աչքերուս դեմ կփոխվեր անվերջ։

*
*   *

Հանկարծ մօտիկէն շրշիւն մը թեթեւ
Ու իր խորքերէն կհուզվի հոգիս։
Աշխույժ շարժումով կդառնամ ետեւ,
Ու ջերմութիւն մը կվառի դեմքիս։

Ծանչցած էի ես քայլերը կույսին.
Աղբյուրը կուգար հին կուժ մը ուսին։
Լուռ ըսպասեցի լարումով անհուն,
Մինչեւ ան կուժը լեցուց, ու խոհուն

Թեք տվավ զգույշ լեզ կապած քարին,
Ու, այծյամի պես, ճարպիկ ու արագ
Դեպի այն ժայռը նետվեցավ շիտակ,
Ուր նըստած էի անշարժ ու լըռին։

Եվ նազանքով մը անմեղ ու գողտրիկ
Ժըպտեցավ դեմքիս, նըստեցավ մօտիկ։

*
*   *

Կամաց մը վրաս ծըռելով քովես
Բաց մոռցած գիրքըս ըսկսավ թերթել,
Լացող ուռենու թարմ ոստերուն պես՝
Գիրկըս թափեցան վարսերը թել-թել։

Աչքերուս դիմաց կեռար խռովքով
Կես մը ըսքողված կուրծքը կրծքիս քով։
Ու կխոսեինք, բայց ի՞նչ՝ չգիտեմ։
Է՜հ, ի՞նչ կխոսին նստած իրար դեմ

Զույգ աղբյուրները անվերջ կարկաչով.
Միայն կըզգայի, որ շունչըս նորեն
Ետ կուգար անոր մազերուն խորեն
Ու շրթունքներըս կայրեր իր տենչով...



Չըգիտեմ ի՞նչպես՝ հանկարծ ծըռեցա,
Դողդոջ շըրթունքով այտին հարեցա։

*
*   *

Ցընցում մը ըրավ ու անշարժ մնաց.
Դեմքին վըրայեն սյուքի մը նման
Սահեր էր անցեր համբույրս կամաց.
Կարծես հըմայվեր, քարացեր էր ան։

Իսկ ես խելահեղ, ու բնազդորեն,
Իսպառ բորբոքված վայելքի հուրեն,
Ուզեցի մեջքը շըղթայեմ ամուր
Զույգ բազուկներուս շըղթայովը կուռ.

Բայց ան դյուրաթեք, ճըկուն օձի պես,
Թեւերուս մեջեն դուրս սողաց հանկարծ.
Կես մը բարկացած, կես մը սիրարծարծ
Թախծոտ հայացքը սահեցուց դեմքես՝

Անհետ ըլլալով ժայռերու ետին.
Ապուշ անձկությամբ նետվեցա գետին...

## ՆՎԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ԼԵՌՆ Ի ՎԱՐ

*
*   *

Վըրանին մութը կուրծքըս կճըշեր,
Եվ հուր կշըշեր բարձը այտերուս.
Կայրէի. տոկալ՝ ալ կարելի չէր.
Ցատկեցի տեղես ու վըրանեն դո՞ւրս։

Ու կշրջեի քայլերով մոլոր.
Առջևըս հոտը փըռված էր բոլոր.
Ոչխարներն անհոգ մտեր էին քուն
Խոնած իրարու՝ պառկած ու կանգուն։

Եվ հանկարծ մեկը խորունկ շունչ կառներ՝
Խուլ հառաչա՛նք մը, որ դուրս կպոռթկար
Վըշտոտ, ճընշըված կուրծքե մը տկար։
Հոտի չորս կողմն ալ հըսկա գամփըռներ

Միշտ իրենց պարտքին պատրաստ աչալուրջ՝
Նըստած էին լուռ, միշտ արթո՛ւն, միշտ լուրջ։

*

*   *

Հեռուն ձայն չկա. անշըշո՜ւնչ, հանդա՜րտ։
Հո՛ն մելամաղձոտ պայծառ լուսնին տակ
Վեհ Արագածի տխուր, ալեզարդ
Մտածկոտ դեմքը կերևա հըստակ։

Դընատի լեռներ ծերուկ սարին քով,
Մարդկային ձևեր առած կատակով,
Հազիվ պահվըտած կես ըստվերին մեջ՝
Իրար են գրկեր գգվանքով անվերջ։

Մինչ հովտին թանձըր մըթության մեջեն
Բիրտ, անըրջային դեմքեր այլանդակ՝
Միշտ փոփոխվելով հազար ձևի տակ
Իրար կհըրեն, իրար կկանչեն

Ու նախանձաբեկ կծաղրեն հըտպիտ
Զահիլ լեռներուն սերը միամիտ։



*

*   *

Բայց մեկեն դադրեց հոգիս դիտելեն.
Ու նորեն-նորեն մըտաբերեցի.
Աղջըկան վերջին նայվածքը խորեն,
Որ կարծես ընդմիշտ հառած էր ինծի։

Եվ ըզգացի, որ մանուկ էի դեռ.
Մինչ գիտե՞ք կույսին արժանին ո՞վ էր,
Ոչ թե ինծի պես երազող տղա,
Այլ լեռնցի մը, ուրկե կդողա

Երեն անտառեն, արջը խոր ձորեն,
Որ կեսգիշերին ցցըլուխ զինված՝
Հովի պես թեթև նըժույգը սանձած՝
Կուգա սիրուհին կառնե վըրանեն

Ու կրծքին սեղմած կտանի հեռուն.
Եվ մարդոց աչքին իր կինն է առտուն։

*

*   *

Նըվաստության մը ըզգացումն ահեղ
Ըսկսավ սիրտըս որդի պես կըրծել.
Է՜հ, չընչին մարդու տեղը չէր այնտեղ,
Հո՛ն ո՛ւժ, գո՛րծ պետք էր, և ո՛չ երազել։

Բայց մերթ ալ ինծի այնպես կթըվեր,
Թե այդ նայվածքը սերն էր կարեվեր.
Այդպե՛ս կնայի եղնիկն անկասկած
Որսորդի նետեն վիրավոր ինկած։

Այդ նայվածքը լուռ, կարծես, կաղաչեր,
Որ չխաղայի իր հետ այդ քընքուշ,
Բայց վըտանգավոր կատակն անըզգույշ.
Եվ արդյոք իրավ սա կատակ մը չէ՞ր.

Յողի կատակ մը վարդի վառ կըրծքին,
Որ շուտ կցընդի արևածագին,

*
*　*

Այդ նայվածքը, ա՜հ, ինծմե գութ կուզեր.
Գըթալ իր անհոգ անդորրը կյանքին
Ու չներշընչել ապարդյուն հույզեր,
Որոնք ծաղկե զուրկ լոկ փուշ կծըլին։

Եվ ես վարանած այդ հայացքին դեմ
Կփըռվիմ գետին հողը կդիտեմ։
Լալու փափագ մը կոկորդըս կուգա,
Ու սիրտըս կըրծող կըսկիծ մը կըզգամ։

Հանկարծ արցունքը կհորդի աչքես,
Լարումս ալ թուլնալ կըսկըսի քիչ-քիչ.
Մեղմիկ անխռով նիրհ մը ամոքիչ
Կուգա կկախվի թաց թերթերունքես.

Եվ խո՜ր կնընջեմ՝ ցողով արցունքով
Թըրջած խոտին մեջ, ոչխարներուն քով։

*
*　*

Մեղմ ու գեղգեղուն ձայն մը սրինգի
Խայթեց ականջըս, և ես արթընցա.
Հովը երեսըս շոյեց մեղմակի՝
Ընդոստ շարժումով ելա նըստեցա։

Լուսինը արդեն անհետ էր եղեր.
Ճերմակ, կապտագույն նուրբ ժապավեններ
Ձիգ-նեղ շերտերով փըռվեր էր երկար,
Ուր լույսի առջի ցոլքը կերերար։



Հովիվը ելած՝ սըրինգը բերնին
Արոտ կքըշեր հոտը արթընցած,
Որ կխըլըրտեր ու կամաց-կամաց
Սուր մայուններով կյանք կուտար օդին։

Հեռուն կըլսվեր խուլ ձայն մը կերկեր.
Լույսը բացվելու արդեն մոտիկ էր։

*
*　*

Շուտ ընկերներս ալ ցատկեցին ոտքի.
Ամեն բան կապած պատրաստ էր արդեն.
Արևը չելած իջնեինք պիտի
Այդ թարմ ու դալար մեր սարահարթեն։

Հապճեպ հըրաժեշտ տըվինք աղմըկուն՝
Հյուրասեր ծերին և իրեններուն.
Եվ վերջին անգամ, երբ ես կարկամած
Աղջըկան դեմքին նայեցա կամաց,

Մեր հայացքները իրարու զարկին.
Ի՜նչպես խորունկ էր ու ի՜նչպես հուզիչ
Իր ջերմ ակնարկը, իր ժպիտը ջինջ.
Կարծես կգըգվեր, ու կըսեր մեկին.

«Է՜, թող. ամեն մարդ իր ճամփով, եղբա՛յր.
Բաժնըվինք սիրով ու հիշենք իրար»։

*
*　*

Ու բաժնըվեցանք, ան կեցած էր լուռ,
Արահետը ձախ ծռեցավ հանկարծ.
Վերջին նայվածք մը նետեցի տըխուր
Եվ աղջիկն աչքես կորուսի անդարձ։

Սուր խայթ մը ու ցավ կըզգայի ներսես.
Ալ կասկած չըկար, սիրած էի ես։
Բայց հազիվ հպած այդ սուրբ փորձության,
Թողեր կերթայի, անչա՜փ հավիտյան։

Իսկ այդ անչափման լեզի բաժակեն
Դուք ձեր կյանքին մեջ ըմպա՞ծ եք երբեք.
Հեռացա՞ծ եք դուք ծա՜նըր, սրտաբե՜կ
Այն սիրուն, կանանչ, գողտրիկ բըլրակեն,

Ուրկե մե՜կը լուռ կհետևի ձեզ,
Եվ երբ ձեր սիրտը կպայթի կարծես...

*

* *

Է՜հ, քանի՜ տարի անցած է հիմա
Այդ անհոգ կյանքիս երազ օրերեն.
Եվ որքա՜ն հեռու կապրիմ ակամա
Իմ սըրտիս մոտիկ չըքնաղ վայրերեն։

Բայց գիշերները նեղ սենյակիս մեջ՝
Երկար հոգնելիս կամ ձանձրույթես վերջ՝
Հաճախ կերազեմ Գեղարդի օպան,
Կհիշեմ հատ-հատ ամեն չընչին բան։

Ու աչքերուս դեմ կծըփի պայծառ
Լեռան աղջըկան պատկերն անարատ,
Իմ անբիծ սրտիս հույզերն այն առատ
Եվ վայրի սիրուս բերկրանքը անճառ...

Է՜հ, քա՜ղցր վայրեր, վայրկյաննե՜ր անգին
Իմ պատանեկան անըրջոտ կյանքին...

# ԵՐԱԶ ՕՐԵՐ

## ԳԻՇԵՐՈԹԻԿԻ ՄԸ ՀՈՒՇԱՏԵՏՐԵՆ

### «ՕՐԸ ՕՐԻՆ»

Հունիս 8, Դիլիջան

Արթնցածիս պես պատուհան վազեցի։ Թեև արևը բավական բարձր էր, սակայն սենյակս դեռ բոլորովին շուքի ու զովության մեջ էր։ Տուներնիս լեռան լանջին է փակած, ուրկե քանի մը ծերունի ծառեր իրենց ստվերներուն ուսկանը վրանիս կնետեն։

Մեզի կից տուն չկա, կատարյալ կղզի մը, որը գրկող ծովը առատ դալարն է։ Իսկ մեզի ամենեն մոտիկ եղող բնակարանը ուրիշ պզտիկ ամառանոց մըն է, մերինին պես ճերմակ, մերինին պես նոր ու մերինին պես մեկուսի։ Ճիշտ իմ երազած վայրերես մեկը, գյուղին ծայրը, կոնակը անտառին, զառիվայրի կուրծքին, բնության ծոցը։

Ինը երկար ամիսներ դպրոցի չորս պատերուն մեջ ճզմելեն ետքը՝ ի՜նչ ուրախություն է զգալ ժայռերուն դրացնությունը պատշգամին դեմ, գետակին երաժշտությունը ձորի խորքեն պատուհանիդ տակ և ծառերուն փսփսուքը սենյակիդ վրան։

Իսկ երեկ իրիկվան իմ Դիլիջան հասնիլս ուղղակի նկարելու բան էր։ Հազիվ վար ցատկեցի փոստի սայլակեն, որ ինքզինքս պաշարված գտա երեք զույգ բազուկներով։ Հորեղբայրս իր վաթսուն տարիներու ծերությամբ վիզս փաթթըված կխնդար. հորեղբորս կինը կուլար հուզումեն. իսկ պարոն Մկրտիչը իր ոսկրոտ ձեռքին մեջ դաստակս պինդ մը սեղմած՝ ոչ մեկ կերպ բաց ձգելու տրամադրություն ցույց չէր տար. քիչ մը հեռուն ալ կեցեր էր Հոռոբսին, որ չհամարձակելով մոտենալ՝ բերանը բաց կժպտեր՝ ցուցադրելով մեջընդմեջ ակռաներու զույգ շարք մը. մինչ իմ նախորդ ամառվան մտերիմ շնիկս՝ ավելի համարձակ՝ հագուստներս կհոտվտար անհանգիստ պոչը շարժելով։

Դեռ այսօր ալ մինչև կեսօր տնեցիք ինծմե հազիվ կարոտնին առին։ Հորեղբայրս չէր ձգեր, որ քովեն հեռանամ։ Ինծի կարդացնել տվավ հոր-

մեռ ու ընդհանրապես Վանեն ստացած բոլոր վերջին նամակներս։ Չնայելով որ քառասուն տարիեն ավելի է Թիֆլիս կկենա, հո՛ն է գործի ու գիրքի տեր դարձած և հոն ալ ամուսնացած, բայց և այնպես միշտ թարմ ու խոր կարոտով կհիշե Վանը, որ սովորաբար «մեր դրախտը» կանվանե։

Ճաշեն ետքը գացի գյուղ Միքայելը գտնելու. դուրս եկավ, որ Նոր-Բայազիտ է գացեր, մե՛ղք, ընկեր մը կունենայի, մանավանդ տեղացի ալ էր։

Վերադարձին մեր տան մոտերը, արքունի մեծ ճամփուն վրա երկու կին տեսա, որ թև-թևի դեպի ինծի կուգային։ Մեկը տարիքը առած ու վայելչատես տիկին մըն էր, թևակիցը՝ տասնյոթի շուրջ թարմ ու աղվոր աղջիկ մը։

Անոնք ալ ինծի կդիտեին։ Երբ իրարու մոտեցանք՝ աղջիկը սկսավ շեշտակի աչքերուս մեջ նայիլ. ես կարմրեցա և հայացքս փախցուցի։ Անցնելուս պես հետաքրքրություն մը ունեցա ետ նայելու, բայց ինքնասիրությանս չձգեցի ու ճամփաս շարունակեցի։

Դեպքը ինքնըստինքյան ոչինչ ու անարժեք, բայց ինծի սաստիկ զայրացուց։ Ի՜նչ հիմար բնավորություն է. ի՜նչ կա այսպես կարմրելու, երբ աղջիկ մը աչքը աչքերուս կնետե։ Տարօրինակ հակասություններ կան հոգեկան կազմիս մեջ. մեկ մը ամչկոտ եմ, տղայամիտ ու անհամարձակ, մեյ մըն ալ հանկարծ՝ հասուն, հանդուգն ու անզուսպ, կարծես ոչ մեկ գիծը մյուսին չի բռներ։

Հունիս 9

Առտուն դեռ շատ կանուխ էր, որ ելա պատշգամ։ Հազիվ ինծմե քանի մը տասնյակ քայլ անդին արքունի խճուղին է ու գետը, որոնք ձորին մեջ թև-թևի տված կվազեն դեպի Աղստևի դաշտը։

Օդը մաքուր էր ու հստակ՝ աղջկան մը առաջին համբույրին պես, զով ու թարմ՝ քունեն նոր ելած ծովու առաջին ժպիտին պես։ Թոքերս կյանք կներշնչեին։

Պատշգամի երկու կողմեն դեպի վար հակված ծառերուն խումբը հովի յուրաքանչյուր քմահաճույքեն իրարու գիրկ կնետվեին ու կփըսփըսային երևակայություն գրգռող փսփուքով մը։ Վարը խոտերուն ու թփերուն մեջ ծղրիդը սիրերգ մը կծղրտար, որ ո՛չ ծայր ուներ, ո՛չ վերջ. անդին գետն էր, որ մտածկոտ մարդու մը նման անընդհատ կկրկներ միևնույն երգին միևնույն կտորը։ Ամառնային համանվագ մը։



Եվ ես գրավված՝ անձնատուր էի ամբողջովին բնության այդ ծիծաղկոտ երաժշտությանը, երբ հանկարծ մոտեն բարձր ու զվարթ քրքիջ մը հոգիս իր կողմը քաշեց. բնության երգին մեկ կտո՞րն էր։ Այն կողմ դարձա ու մեծ եղավ զարմանքս, երբ երեկվան աղջիկը ճանչցա։ Միայն այն տարբերությամբ, որ հագված էր շատ պարզ ու փոխանակ տարիքոտ կնոջ մը, հետը երիտասարդ սպասուհի մը ուներ։

Անշուշտ նշմարած էր ինծի, գոնե ես այդպես կարծեցի, թեև աղջիկը առանց մեր կողմն անգամ նայելու՝ թռչկոտելով ու բարձր-բարձր և ռուսերեն շաղակրատելով ու խնդալով՝ ձորեն վար աներևույթ եղավ իր ընկերուհիին հետ։

Մոլորուն նայվածքով կհետևեի իրեն, մինչև աչքես կորսվի, բայց դեռ երկար կլսվեր իր հնչուն ծիծաղը և առույգ ձայնը, որ հետզհետե սկսավ թուլնալ և վերջնականապես հալեցավ գետի կարկաչին մեջ։ Ի՜նչ կենսուրախ աղջիկ է. և ո՞վ է արդյոք։

Հոռոբսին թեյ բերավ։ Կերպ մը նկարագրեցի երկու աղջիկները և հարցուցի, թե կճանչնա՞։

— Հասկցա՛, մեր դրացիներն են, տե՛ս, այն տունը կնստին,— ըսավ մեր տունեն քիչ մը ավելի վեր երևցող միակ ամառանոցը մատնանիշ ընելով։— Քույր ու եղբայր են ու մայր մը. պզտիկ քույր մըն ալ ունին։ Մեր տիկինը լավ կճանչնա. աղեկ մարդիկ են. միայն աղջիկը քիչ մը...

— Է՞,— հարցուցի հետաքրքիր։

— Շատ է ուսումնարանի պես,— լրացուց իր խոսքը խնդալով։

— Ի՞նչ, ուսումնարանը գե՞շ է, չէ՞ որ ես ալ ուսումնարանե կուգամ։

— Դուն մանչ ես, ուրիշ է, աղջիկներուն շատ ուսումն ու շատ բացվիլը աղեկ չի գար։

Թեյամանը վերցուց ու հեռացավ։ Իսկ ես սկսա մտածել, ո՛չ թե Հոռոբսիի կանանց կրթության աննպաստ փիլիսոփայությանը, այլ պարզապես իր տված տեղեկություններուն վրա։ Եվ քիչ-քիչ ընկղմեցա անրջանքի մեջ։

Այդ աղջիկը երեկ ու այսօր երկու հանդիպումներուն ալ տարօրինակ տպավորություն մը ըրավ վրաս։ Մյուս կողմեն կրթված է եղեր, գեղեցիկ է ու իմ անմիջական դրացուհին այս գեղեցիկ բնության ծոցը։ Երազանքիս մեջ ինծի այնպես կթվի արդեն, որ բուռն կերպով կսիրեմ այդ աղջիկը, և երևակայությունս պահ մը շատ հեռուները կսավառնի օդային սիրո թևերուն վրա։ Այսպես է իմ դյուրազգաց բնավորությունս։ Մեկ կողմեն զգացումներս հոյակապ շենքեր կկերտեն ոչինչեն, այսինքն

երբ մեջտեղը ոչինչ չկա, մինչդեռ մյուս կողմեն մշտապես դժգոհ եմ ու հիասթափ եղածեն ու իրականեն։ Գիտեմ, բավական է քիչ մը մոտիկեն շփվիմ այդ աղջկան, որ իսկույն պատռի հմայքին քողը։

Անձկոտ անձրևի սպասող մթնոլորտին մեջ հովերու քմայքեն ամպեր կխռնին. փայլակ ու որոտ, բայց նույն հովերը կփչեն նորեն, ամպերը կցրվին, լույսերը կցնդին, և նորեն խաղաղ ու միակերպ կապույտն է կյանքիս երկնքին վրա։

### Հունիս 11

Հորեղբայրս այսօր Թիֆլիս վերադարձավ՝ գործերը ձգել չի կրնար։ Տունը ամենքն ալ կոտրված են քիչ մը։ Իսկ ես ճշմարիտը խոսելով իր մեկնումեն այնքան ալ դժգոհ չեմ. թերևս չափ մը ավելի ազատություն կստանամ, կդառնամ տան էրիկ-մարդը, քանի որ պարոն Մկրտիչը տան մեջ իր սեփական ձայնը չունի և ամեն բանի մեջ կկրկնե իր քրոջը բառը։ Մինչդեռ հորեղբորս կինը, կտեսնեմ, որ իմ խոսքերուս մասնավոր կարևորություն կուտա։

Երկու օր է կկարդամ Շիլլերի «Դոն-Կարլոսը»։ Ի՜նչ չքեղ տիպար մըն է այդ Մարքիզ Պոզան, այդ անձնվեր հայրենասերը, այդ խմորված մեծ մարդը, և անոր փաթթված այդ իդեական անփորձ երիտասարդը, սիրո ու կյանքի առաջին շփման տակ ոգևորված ազնիվ Դոն-Կարլոսը։ Կսիրեմ ես այդ մարդիկը՝ այդ երկու գաղափարական տիպարները, և կարծես նոր չէ, որ անոնց հետ կծանոթանամ, անոնց ձայնն ու խոսքը կարծես հինեն իմ հոգիիս մեջ կհնչեր։

Իրիկունը ուշ ատեն երկար կշրջեի մեր տան դիմացը կանանչներուն վրա։ Մութ գիշեր էր։ Ծառերուն տակը բանտված գաղջ ու բուրումնալից օդը հափրեցուց ինծի, մանավանդ Դոն Կարլոսի ազդեցությունն ալ դեռ բոլորովին վրայես անցած չէ։

Միտքս աշխատիլ սկսավ, ու ապագայի ծրագիրներս վերակենդանացան։ Ծննդավայրս եմ արդեն գործի ու աշխատանքի վրա, ո՛չ թե հիմիկվան պես միայն ստացող մը, պատրաստվող մը։ Ու կխրիմ, կխրիմ ծրագիրներուս նրբություններուն ու մանրամասնություններուն մեջ։

Երկի՜նք, ի՜նչ սուրբ իղձեր կան կրծքիս տակ, ի՜նչ ոգևորություն կտենչամ և ի՜նչ անձնամոռ լեցուն կյանք։ Բայց ունենալո՞ւ եմ արդյոք։ Ո՞վ գիտե։ Գուցե իմ կյանքս ալ այս անրջանքեն անդին պիտի չանցնի։ Գուցե այս բոլորը անփորձ ու դեռ թարմ տարիքի ցնորքներ են լոկ, որուն պիտի հաջորդե սանձված հասունությունը, և ես ալ պիտի դառ-



նամ այն հարյուրավոր-հազարավոր միջակ-հասարակ էակներեն մեկը, որոնք ամեն տեղ կվխտան, որոնք միայն կուտեն ապրելու համար և կապրին միայն ուտելու համար։

Եվ այս բոլո՜րը, որ հիմա աշխարհը աչքիս գեղեցիկ կցուցնե և որ կյանքիս խորհուրդ ու հրապույր կուտա, այս բոլո՜րը, որ զգացումներուս մեջ ազնվություն կթափե և սրտիս գաղափարականի ծարավը կուտա, ա՜, այս բոլորը գուցե ցնդի պիտի կյանքիս մատղաշ օրերուն հետ։ Չէ՞ որ ամենքն ալ ականջիս այդ երգը կկրկնեն. գուցե և իրավունք ունին, միթե իմ անփորձությունս այդքան մարդոց փորձառութենեն ավելի վե՞ր է։

Եվ ինչո՞ւ կպահանջեմ, որ ուրիշներեն տարբեր, ուրիշներեն բարձր ըլլամ. և իմ ո՞ր առավելություններուս վրա հենված, ես ալ այդ մարդ ըսված էակի նույն հասարակ մեկ նմուշը չե՞մ։

Ո՜ւհ, Աստվա՛ծ իմ, ի՜նչ սարսափ այս մտածումները։ Որքա՜ն դառնություն, որքա՜ն թույն կա այս խոհերուն տակ, որ ամբողջ հոգիս և բոլոր ոգևորությունս չկորցնել կսպառնա։ Ո՛չ, չեմ կրնար հավատալ, անկարելի՛ է, ո՛չ, ես չեմ կրնար ոչինչ մը դառնալ։

### Հունիս 12

Այս քանի մը օրվան մեջ շրջակայքը տեղ չմնաց՝ չափչփեցի։ Մեր ետևի լեռը իր թզուկ անտառով, վարը՝ ձորը իր գետակով, մեր պատշգամի դիմացեն վազող արքունի խճուղին իր վերստի սյուներով, այս բոլորը իմ սեփական տունս է կարծես։

Առտու-իրիկուն շատ աղեկ է, ցերեկներն է քիչ մը ձանձրալի։ Տնեցիք կքնանան, տունը կլռե, մյուս կողմեն ալ տաքը կճնշե։ Ընթերցանությունն է միակ ընկերս և սփոփիչս։ Հետս սնդուկ մը գիրք եմ բերած, ընելու շա՜տ գործ։

Գեղեցիկ դրացուհիիս գրեթե ամեն օր կհանդիպիմ կա՛մ առտուները կա՛մ իրիկունը շրջագայությանս միջոցին։ Նո՛ւյնն է միշտ. զարմանալի բնավորություն մը, եռուն ու համարձակ, իսկը ազատ թռչուն մը։

Կզգամ, որ իր ուշադրությունը գրաված եմ։

Անցած օր աղախնի հարդի գլխարկը հափշտակած կվազեր՝ հևալով, խնդալով, ճչալով, ու քովես այնքան մոտիկ անցավ, որ օ-դը-կոլոնի փափուկ հոտ մը դեմքս պարուրեց։ Նախորդ իրիկունն ալ պզտիկ քրոջը ձեռքեն շրջանակը առած կդարձներ՝ զվարթ ու շիկնած ետևեն վազելով. եթե չզգուշանայի՝ շրջանակը ոտքերուս վրայեն պիտի անցներ,

աղջիկը չոր ժպիտով անցողակի «պարո՛ն» մը ըսավ ու շարունակեց։

Երեկ իրիկուն ալ վարը՝ ձորը տեսա Հեռվեն՝ իր եղբոր հետ էր, որ երեսունի մոտիկ գրավիչ երիտասարդ մըն է, արվեստագետի երկար մազերով և անգլիական այտմորուքներով։ Աղջիկը ռուսերեն օպերետի մը մեկ սիրուն կտորը կերգեր, և աղվոր կերգեր, շատ անուշ եկավ ինծի այդ մեներգը գետակի ձայն պահող երգակցության մեջեն։

Ընդհանրապես շատ օդային և խորհրդավոր տպավորություն մը կընե վրաս, և բնական կերպով հետաքրքրություն առաջած է մեջս. երբ դուրս կելլեմ պտույտի՝ միշտ իրեն հանդպելու տարտամ հույս մը ունիմ, թեև երբ կհանդպիմ՝ ճնշում կզգամ իր հանդուգն կեցվածքեն ու նայվածքեն, և իր խոր ու քաշող աչքերեն խուսափելու համար բանով մը զբաղվիլ կձևացնեմ։

Հունիս 13

Ա՜, ապուշ եմ ես, կատարյալ ապուշ։

Իրիկվան դեմ հորեղբորս կնոջ հետ փոքր պտույտի մըն էինք ելած, գացինք մինչև գյուղ։ Մեր վերադարձին՝ հերոսուհիիս տան առջևեն անցնելու ատեն՝ տեսանք, որ ծառերուն տակ սեղանի մը քով նստած՝ մայր ու աղջիկ կկարեին։

Հարկ եղավ մոտենանք, և հորեղբորս կինը ինծի ներկայացուց.

— Ամուսնույս եղբոր որդին՝ Երվանդ։

— Երվա՜նդ,— բացականչեց իսկույն օրիորդը ռուսական արտասանությամբ և կարծես մեծ զարմանքով։

Իրենց անունը Շամիրյան էր. տիկին Նատալիա և օրիորդ Վարդուհի։ Այո՛, «Վարդուհի» և ո՛չ թե Ռոզա. ուրեմն գոնե անունը մնացել էր վրան հայ, շատ զարմանալի կերպով։

— Կարծեմ մեկ-երկու անգամ ճամփուն վրա իրար հանդպելու պատեհությունը ունեցանք,— ըսավ տիկին Նատալիա ծամծմած հայերենով մը և ռուսերենի հետ խառն բառերով, որոնցմե ես ինքս գլխուս մեջ ստիպված էի կանոնավոր նախադասություններ կազմելու։

— Թեև ինքը կարծեմ մեզի տեսնել չուզեց,— ավելցուց օրիորդը կատակ հեգնությամբ մը և բոլորովին ռուսերեն։

— Ինչպե՞ս թե,— հարցուցի ես շվարած այս տեսակ անսպասելի հարձակման մը առջև։

— Անշուշտ չէ գիտցած, որ ծանոթ ենք ու դրացի,— պաշտպանեց ինծի հորեղբորս կինը։



Ես հոգիիս մեջ ավելի չարայա այդ պաշտպանողականեն։

— Ո՛չ, տիկին, տեսե՛ք, կարմրեցավ, ըսել է հանցավոր է,— բացականչեց օրիորդը՝ մատովը ինծի ցույց տալով ու բարձրաձայն քրքջալով։

Ես ինծի ավելի անհարմար զգացի, թեև կխնդայի։ Բարեբախտաբար տիկինները խոսքի բռնվեցան, անոնք սովորաբար իրարու հետ վրացերեն կխոսեին։

Իսկ օրիորդը այդ միջոցին առավ սեղանեն իր ձեռագործը ու սկսավ արագ աշխատիլ, բայց հանկարծ նետեց ծունկերուն և նորեն ինծի դիմեց ժպտելով.

— Ինչո՞ւ չեք խոսիր, պարո՛ն։

— Տիկինները կլսեմ,— ըսի պատասխան մը տված ըլլալու համար։

— Ուրեմն վրացերեն գիտե՞ք։

Ալ ետ դառնալ չէի կրնար, ստիպված էի ստելու.

— Շատ քիչ։

Բայց իսկույն ալ ստելուս զղջացի ու զայրույթ զգացի ինքս իմ դեմս։ Միևնույն ժամանակ ուղեղս տակնուվրա կընեի խոսելու համար նյութ մը ճարելու համար։ Ուզեցի օդի մասին խոսիմ՝ ինծի ծիծաղելի թվեցավ, ամառանոցի մասին խոսիլը շատ էր սովորական։ Եվ հանկարծ մեկենիմեկ հարցուցի.

— Արդյոք կրնա՞մ հետաքրքրվիլ, օրիորդը ո՞ր դպրոցն է հաճախած։

Աղջիկը զսպված ժպիտով մը երեսս նայեցավ ու պատասխանեց.

— Թիֆլիսի երրորդ աղջկանց գիմնազիոնը։

— Ավարտա՞ծ եք միթե։

— Ո՛չ։ Ինչպես կըսեն հայերեն։ Ներեցե՛ք, հայերեն աղեկ չգիտեմ։ Այս ձմեռ վերջընթեր դասարանն էի,— ավարտեց խոսքը ռուսերեն։

— Ա՜, ճիշտ ինծի պես։

— Իրա՞վ, բախտակից ենք ուրեմն։

Եվ նորեն ձեռագործը վերցուց ծունկերուն վրայեն։ Տիկինները արագ ու շարունակ կխոսեին իրարու ձայն ընդհատելով։ Ես հեռուն կնայեի ծառերուն մեջեն։

Բայց կտեսնեի, որ աղջիկը իր քննող աչքերը հաճախ դեմքիս կգամեր և տարօրինակ ժպիտ մը ուներ շրթունքին անկյունը։ Այո՛, կըմբռնեի, որ վրաս գերազանցություն մը ուներ։

— Երևի պարոնը ավելի խորհիլ կսիրե, քան խոսիլ, փիլիսոփայորեն,— ըսավ աղջիկը վայրկյան մը ետքը։

— Իսկ դուք փիլիսոփայութենեն բնավ չեք ախորժիր, ըստ երեւույթին,— պատասխանեցի իրեն ակամա քիչ մը ավելի խիստ։

— Ո՛չ, ինչո՞ւ, ամեն բան իր տեղն ունի, և վերջապես ես միայն կատակ ըրի։

Վերջին նախադասությունը ինծի համոզեց, որ վշտանալս նկատած էր։ Հորեղբորս կինը հրաժեշտի համար ոտքի ելավ. կարծես բանտեն կազատվեի։

Թոթվեցի օրիորդին ձեռքը։

— Ասկե ետքը երբ իրարու հանդպինք՝ կհուսամ, որ գավազաննուդ կոթը զննելու հարկը պիտի չզգաք,— ըսավ աղջիկը խորքին մեջ շատ աղվոր ժպիտով մը և ամուր ձեռքս սեղմելով։

Աղջկան մը առջև ծաղրելի ըլլալես խայթված շտապեցի շիտակ սենյակս, և մահճակալիս վրա փռված երկար ատեն կմտածեի։ Եզրակացությունս շատ պարզ էր.

«Ես ապուշ եմ, ապուշ»։

## Հունիս 14

Արթնցա թե չէ՝ միտքս նույն խնդրով զբաղիլ սկսավ։ Սակայն թարմ տպավորության ճնշիչ ազդեցութենեն կազդուրված, նոր օրվան նոր լույսին հետ ամեն բան հաճելի կողմեն դատելու տրամադիր և խոնունկ քունով մը ուժովցած, խոհերս նոր ուղղություն մը առին։

Սկսած էր երեկվան հակազդեցությունը։ Ես էր, որ կբողոքեր։ Վերջապես ի՞նչն էր ինծի այդպես վրդոված։ Աղջկան հետ շնորհքով չխոսելո՞ւս համար։ Սակայն աղջկան մը հետ նոր-նոր ծանոթացած ի՞նչ պիտի խոսեի իր հետ։ Այո՛, խենթ-խելոք բերնիս եկածը իսկույն զուրցել ես չեմ կրնար։ Եվ վերջապես որքան ինքը իրավունք ուներ ինծմե խոսիլ պահանջելու, այնքան ալ ես իրավունք ունեի, դեռ բան մըն ալ ավելի, քանի որ իր հյուրն էի։

Ուրեմն հանցանքս պահանջկոտ չըլլալս է. չխածնելուս համար է, որ ինծի կխածնեն։ Լա՛վ, դյուրին է, ես ալ կրնամ խածնել և վախնամ շատ ավելի գեշ։ Այդ աղջիկը համարձակ է, ցավցնելու աստիճան ձեռքս կսեղմե, աղե՛կ, ես ալ կրնամ լացնելու աստիճան սեղմել։ Ան առանց քաշվելու բերնին եկածը երեսիս կըսե, աղե՛կ, ե՞ս ինչու պիտի քաշվիմ, մի՞թե իմ քովս փտտած սրախոսություններ քիչ կան։

Անիկա ինծի առաջին անգամեն փիլիսոփա կանվանե ծաղրանքով, աղե՛կ, ես ինչո՞ւ իրեն չհասկցնեմ, որ ինքը աշխարհիկ սովորական աղ-



ջիկ մըն է, որուն հետ լուրջ խոսակցության մը բռնվիլ չես կրնար։ Ահա՛ քեզի պարզություն և հանդգնություն։ Սակայն ատիկա պիտի դառնա կոպիտ վարմունք. որո՞ւ հոգ, քանի որ ատիկա կպահանջեն ինծմե։ Շատ ավելի գերադասելի է կոպիտ ըլլալ, քան ծիծաղելի։

Սակայն հուզվիլն ավելորդ է, պետք է մնալ պաղարյուն, և պիտի հարձակվիլ, հարձակման չենթարկվելու համար։ Պարզապես իր զենքերը իր դեմ։

Այս որոշումներով զինված՝ իրիկվան դեմ դուրս ելա շրջելու, հաստատ համոզված, որ աղջկան հանդիպելու էի։ Եվ չխաբվեցա։

Եղբորը թևը մտած կուգար դեմս։

Երբ մոտեցանք՝ շիտակ դիմեցի օրիորդին և առանց սաստիկ կարմըրելուս ուշ դարձնելու, պինդ մը սեղմեցի իր փափուկ ձեռքը, թեև անշուշտ ո՛չ լացընելու աստիճան։

Քիչ մի զարմացած երեսս նայեցավ, խնդաց և իսկույն եղբայրն ու ինծի իրարու ներկայացուց։

— Կարծեմ պարոնը նկարիչ է. չափազանց ուրախ եմ,— բացականչեցի ես։

Եվ բացականչությունս երևի պարոնին հաճելի եղավ, որովհետև բացարձակ համակրական շեշտով մըն էր, որ պատասխանեց.

— Երևի նկարչությունը դո՛ւք ալ կսիրեք։

— Անտարակո՛ւյս, գեղարվեստներու սիրահար եմ, թեև դժբախտաբար բոլորեն ալ բոբիկ։ Ըսե՛ք խնդրեմ, ավելի տեսարաններո՞վ կզբաղիք, թե...

— Գիտե՛ք, բարեկա՛մս, ես իբրև արհեստավոր նկարիչ չեմ, արդեն արհեստավորներեն չեմ ալ ախորժիր, որովհետև շահի համար կաշխատին, իսկ շահը ստեղծագործությունը կսպաննե։ Ես պարզ նկարչության սիրող մըն եմ, որ միայն արվեստի սիրուն համար կնկարեմ։ Եվ այդ պատճառով է, որ առանց կեղծ համեստության, նկարներս անհամեմատ առավելություն մը ունին։

— Ես ուզեցի միայն իմանամ...

— Պետերբուրգ ձմեռվան տեսարան մը նկարած եմ, որ ամբողջ մայրաքաղաքի ուշադրությունը գրավեց,

— Հա՜, ուրեմն տեսարաններով կզբաղվիք՝

— Նաև՛ տեսարաններով, Կովկասեն լեռնանկար մը ունիմ, որ հիմա իշխան Կալիցինի կեդրոնական դահլիճին մեջն է կախված, իշխանը իմ մտերիմ բարեկամս է, և նկարը ես նվիրեր եմ իրեն։ Կասպից ծովեն էտյուդ մը ունեի, որ երբ Այվազովսկին տեսավ՝ մատ խածավ։ Ամբողջ երկու օր իր հյուրը եղա, և ի՞նչ հրաշալի մարդ է, ինչպե՞ս իսկական

արվեստը ճանչցող ու գնահատող։ Գիտե՞ք, Այվազովսկին ինքը մեկերկու թերություններ ունի, ես իրեն ալ արդեն ըսի, չժխտեց, բայց ո՞վ է նկատողը։ Անուն է, անգամ մը որ ելլե, ալ կերթա։

— Դուք նկարչությունը ո՞ւր եք ուսած։

— Եղած եմ Պետերբուրգ, Մոսկվա, Օդեսա, տարի մըն ալ նկարչության ծննդավայրը՝ Իտալիա։ Օդեսա եղած միջոցիս գնչուհիի մը գլուխը նկարեցի, որ զորավարուհին ուղղակի պատկերին վրա սիրահարեցավ. զորավար Մարտինովի տիկինը, զուցե լսած եք՝ Մոսկվայի ամենեն գեղեցիկ կինը, գեղեցկությունն է, որ գիտե գեղեցկությունը թափանցել. ես իրեն տեսեր եմ իր ամառանոցը և tête-à-tête նշանավոր կին է։

— Սրտանց կշնորհավորեմ ձեր հաջողությունները,— ըսի ես և դառնալով քրոջը ավելցուցի.

— Սակայն, օրիո՛րդ, չեք խոսիր։ Երեկ այսօր ալ դուք փիլիսոփայության միտում մը ունիք։

— Ո՛չ,— պատասխանեց ժպտալով,— եղբորս քաջագործությունները կլսեմ։

— Ինչպես երեկ ես՝ տիկիններուն վրացերենը։

Զգացի, որ համեմատությունս շատ համով փախավ և աղջկան վարանումեն օգտվելով շարունակեցի.

— Իսկ ինծի այնպես թվեցավ, թե դուք ալ, ինչպես ես՝ երեկ, խոսելու նյութ մը ճարելու կդժվարանաք, իսկ նկարչութենեն արդեն կըշտացած եք երևի, այնքան խոսած եք ձեր եղբոր հետ։

— Ուրեմն երեկ նյութ չճարելնո՞ւդ համար չէիք խոսեր։

— Այսինքն, ինչպե՞ս ըսեմ։ Շատ սովորական ու չնչին բանի մը վրա խոսիլ առաջին անգամ տեսած անձի մը հետ՝ շատ հրապուրիչ բան չէ, իսկ եթե քիչ մը լուրջ խնդիր հարուցանեի՝ դուք պիտի դժգոհ մնայիք։

— Ինչո՞ւ, ձեզի ո՞վ ըսավ։

— Որովհետև ամեն քիչ թե շատ լուրջ բան ձեր խառնվածքին համար փիլիսոփայություն է, ուրկե բնականաբար չեք ախորժիր։

— Շատ աննախանձելի գաղափար մըն եք կազմած իմ վրաս,— պատասխանեց խնդալով և սկսավ խաղալ հովանոցի ժապավենին հետ։

— Շիտակը փիլիսոփայութենեն ես ալ չեմ ախորժիր,— մեջ նետվեցավ եղբայրը։— Ատոնք բոլորն ալ կենդանի իրականությունը թողած օդային տեսություններու ետևեն վազող մարդիկ են։ Ես իմ մեկ ուրվանկարս անոնց ամբողջ փիլիսոփայության հետ չեմ փոխեր։



— Ձեր ո՞ր ուրվանկարը,— հարցուցի ես վերին աստիճանի միամիտ դեմքով մը և գրեթե ակամա, ինքնաբերաբար։

— Որևէ մեկը, որը որ կուզեք,— եղավ իր անփույթ ու ինքնավըստահ պատասխանը։

Ես ուզեցի մոռցնել տամ նախորդ հարցիս մեջ խլրտող հեգնությունը ու դիմեցի քրոջը.

— Իսկ դո՞ւք, օրիո՛րդ, դո՞ւք ալ միևնույն բարձր գաղափարը ունիք նկարչության մասին։

Եվ սկսավ խոսքը նորեն նկարչության շուրջը դառնալ և ընդհանրապես գեղարվեստական ստեղծագործության։ Չգիտեմ ճշմարիտ, պարոն նկարչի մեծխոսությունը, թե իմ ռազմական տրամադրությունս բարձրացուցեր էր խոսքիս ուժը. կզգայի, որ լավ կխոսիմ, և՛ խոր, և՛ սուր։

Բավական երկար միասին շրջագայելեն ետքը, երբ արդեն սկսած էր մթնել՝ կանգ առինք մեր տունեն ո՛չ շատ հեռու իրարմե բաժնվելու համար։

— Ուրախ եմ ձեզի ծանոթանալուս, թարմ հոգի ունիք և արվեստագետի ճաշակ,— ըսավ պարոն նկարիչը ձեռքս սեղմելով։

— Կտեսնե՞ք ինչ աղվոր վկայական ստացաք եղբորմես,— վրա բերավ քույրը շատ զարմանալի շեշտով մը, երբ իրարու ձեռքը կըսեղմեինք։

Ամբողջ իրիկունը նույն աշխույժ տրամադրության տակ էի։ Երբ ուշ ատեն մտա սենյակս ու վայրկյան մը նստեցա մահճակալին ծայրը՝ ակամա հիշեցի նախորդ գիշերը։ Ի՜նչ մեծ տարբերություն երեկվան և այսօրվան խաղցած դերերուս մեջ. կարծես իրավ որ երկու դերեր էին։ Ամեն պարագայի պատահածեն դժգոհ չէի։ Աղջիկը հիմա գիտե, որ երբ ուզենամ՝ կրնամ իրեն պես իր թեթև դերը խաղալ և եթե չեմ խաղար՝ իմ ըմբռնումներս ու իմ բնավորությունս է պատճառը։ Չէ՛, միանգամ ընդմիշտ վարկս ապահովված է այդ աղջկան առջև։

Միայն կզարմանամ, ինչո՞ւ այսչափ հոգ աղջկան մը առջև հոգիս ու վարմունքս բարձրացնելու համար. սեռական հպարտությո՞ւնն է, որ ինծի կմղե։

Հունիս 18

Երեկ ու այսօր Տուրգենևի «Նախընթաց իրիկունն» էր ձեռքս։ Նոր վերջացուցի ու կմտածեմ։

Ե՞րբ մենք ալ այդ տեսակ երիտասարդություն մը պիտի ունենանք

արդյոք։ Ինսարովնե՛ր, հանրային նպատակով մը ոգևորված անհատներ, որոնք համալսարաններե նոր ուժերով վերադառնան իրենց հայրենիքը, ո՛չ թե հանգիստ օրերու ու ոսկի դիզելու, այլ ամեն խոչընդոտ արհամարհելով, ժողովրդին մեջ մտնելու ու անոր բարձրացմանը աշխատելու և եթե կյանքը պահանջեց՝ նաև անոր համար զոհվելու։ Ո՞ւր է սկզբունքի ու պարտավորության համար ամեն բան զոհող անհատը։

Իսկ էլենա՞ն. մեր կյանքն ու միջավայրը տա՞ն պիտի մեզի այդ տեսակ աղջիկ մը, որ լքե իր ընտանիքի բոլոր դյուրությունները ու բարօրությունը, երթալու համար իր սիրած մարդուն ու անոր սիրած գաղափարներուն ետևեն մինչև օտարության մեջ, մինչև կես-վայրենի լեռներու մեջ, մինչև վառոդի ծուխին մեջ։

Կարդացած գրքիս համեմատ ալ բանաստեղծական տեղ մըն եմ ճարած կարդալու համար։ Մեր տունեն ո՛չ շատ հեռու՝ ձորին մեջ՝ գետի եզերքէն հսկա ուռի մը բունն է թիկնաթոռս, նույն ուռիի ոստերուն թավուտը՝ հովանոցս։ Գետը կգլտորի ոտքերուս առջևեն ժայռերուն մեջ խլացուցիչ ժխոր մը հանելով։ Եվ սրտիս կորով տվող գետին այդ կատաղի ու տևական ծեծկվուքը միանալով ընթերցանության մտրակումին թռիչք կուտան մտածումիս ու երևակայությանս։

Իսկ իրիկունները իրարու հետ ենք. ես ու Շամիրյանները՝ քույր ու եղբայր։

Աղվոր, շա՜տ աղվոր իրիկուններ։ Արևը ձորի մեկ շրթունքեն կանհետի, մինչ մյուսեն լուսնի կիսադեմը դուրս կլողա՝ տմույն լույս մը թափելով անտառակին ու արքունի խճուղիին վրա։

Լիաթոք ներշնչելով իրիկնային անույշ թարմությունը ամառանոցին՝ կշրջինք ու կխոսինք։ Թույլ ու անփույթ խոսակցություն մը հանձնրված հովերու ու քմայքի շունչին։

Պարոն Նկարիչը կպատմե հաճախ Մոսկվայեն, եվրոպական կյանքեն, իր ճամփորդություններեն ու գեղարվեստական շրջապատեն, քույրըն ու ես կլսենք հետաքրքրված. հեռավորի և անծանոթի հմայքը ունին իրենց վրա այդ նկարագրությունները, որուն կմիանա իմ հոգիիս մեջ նաև ծածուկ նախանձ մը։

Իսկ օրիորդ իր քույրը կլսե, կխնդա ու կշաղակրատե, ամեն ինչ անոր համար զվարճանքի նյութ է, և միշտ պատրաստ խոսք մը կա շրթունքին։ Վայրկյաններ ունի սակայն, երբ հանկարծ բոլորովին կլռե և աչքերը մեր ու մեզի շրջապատող առարկաներուն վրայեն կսահի ու կիյնա հեռուն՝ մոլորուն նայվածքով մը։ Երևի աս ալ աղջկային է։

Իր հմայքը դեռ չէ վերցած վրայես. իր ձայնը, իր խոսքը, իր տարօրինակ արտահայտությունները և իր բուռն ու աշխույժ շարժումները,



ինչպես և իր գեղեցիկ դեմքին ու մարմնին հրապույրը դեռ միշտ ըզգացումներս ու նայվածքս կքաշեն իրենց։ Բայց կզգամ, որ հետզհետե բան մը պակսելու վրա է ու կխորհիմ ակամա, որ երևի շուտով պատի պիտի իր գրավչության վրայեն խորհրդավոր քողը։

Իսկ առանց այդ խորհրդավոր քողին՝ տակը կմնա աղվոր մարմին մը և չարաճճի հոգի մը, ուր չկան սակայն ո՛չ խոր զգացումներ և ո՛չ բուռն ու անհանգիստ մտածումներ. առոր փոխարեն խել մը աշխարհիկ հասկացողություններ, մանկական քմայքներ, հագուստի ու կապուստի հոգեր և մանր ու առօրյա որոնումներ։

Եվ հետզհետե կուգամ այն եզրակացության, որ ո՛չ միայն իրմեն, այլև շատ ավելի ինծմե հասուն իր նկարիչ եղբորմեն՝ ես զգալի կերպով բարձր եմ հոգեպես։ Եվ այս ներքին ինքնագիտակցությունը օրեօր ավելի շեշտված կերպով ազատություն մը կուտա խոսքիս ու վարմունքիս, և շարժումներս ավելի անփութություն կստանան. գիշերօթիկի ձախլիկ գծերը կթափին վրայես։

Հիմա ինծի հավասարապես ծիծաղելի կթվի թե՛ օրիորդի վարմունքեն այն ատիճուն վիրավորվիլս և թե՛ անոր դեմ պատրաստած իմ շենք-շնորհք պատերազմական հատակագիծս։

Մանր ու պարապ բաներ են ատոնք բոլորը։

### Հունիս 21

Այսօր ամբողջ օրը Տուրգենևի թարգմանությանն էի տված, Գործս հաջող կերթա։ Միայն ինծի կշղայնացնե պարոն Մկրտիչի մուրճին անվերջ թկթկոցը. պարտեզը աթոռ կշինե։

Արդեն անոր մուրճին աղմուկը երբեք չի վերջանար. քովի սենյակը, խոհանոցը, պատշգամը միշտ բաներ մը կը հնարե իր դժոխային մուրճովը զինված։ Բայց ի՛նչ մեղադրեմ խեղճը, մարդս կարո՞ղ է մինչև իրիկուն պարապ նստիլ։ Ան դեռ շատ աղեկ վարժված է։ Անկնթարթ մը ինծի իր տեղը որ դնեմ՝ սիրտս կճաքի։ Ի՛նչ կյանքի դատարկություն, ի՛նչ աննպատակ գոյություն։

Գիշերը անքնութենե չարչարվելուս եղքը՝ առտուն կանուխ ելիր ու սաղմոս քաղե, եաքը քանի մը ոտնկ թեյ խմե ու քիչ շտկա, իբրև թե գնումներու, բայց գոս ու հոն հանդիպելու ու խոսելու, եաքն ալ թափառելով տան բոլոր անկյունները դուրս ելած գամ մը, խախտած սռնի մը փրնտըրելով կամ գնա խոհանոց քրոջդ ու սպասուհիին օգնելու, մինչև որ գա

ճաշի ատենը։ Կուշտ ճաշեն ետքն ալ գնա սենյակդ ու պառկե՛, և արթնցիր ուշ ատեն, ինքդ ալ չգիտնալով ինչ ընելու համար։

Եվ ասիկա անվերջ, առանց որևէ փոփոխության. այս տարվնե գալ տարվանը կրնաս երևակայել։ Անվե՛րջ, ճիշտ պարզ պարբերական կոտորակի մը պես, որ օր մըն ալ կարծես նույն թիվը գրելե ձանձրացած՝ կզնես բազմակետ մը, կյանքին մեծ բազմակետը և վերջացավ։

Եվ ասոր կըսեն ապրիլ։ Եվ պարոն Մկրտիչը, որ շատ սիրելի ու խելքը գլխին մարդ մըն է, չի գանգատիր այդ կյանքեն և կուզե ապրիլ, երկար ապրիլ՝ Կզարմանամ։ Ինծի համար ոչինչ ու անարժեք բան մըն է կյանքը, երբ չկա աշխատանք, մաքառում, ձգտումներ ու կիրք, հուզում ու ծրագիր։ Առանց այս բոլոր կենդանի շարժման, առանց այս մշտական հոգեկան եռքին՝ միթե մահը շատ ավելի իմաստալից ու արժեքավոր չէ՞։

Հունիս 24

Երկու օր է «հերոսուհիս» չէի տեսած։ Հարբուխ էր եղած և իրիկունները դուրս չէր ելլեր։ Կարոտի նման զգացում մը կար մեջս, կուզեի տեսնեմ։

Իրիկունը գյուղեն վերադարձիս, երբ իրենց տան առջևեն կանցնեի՝ աչքերս անոր կերպարանքը կփնտրեին։

Պատշգամի վրա եղբայրն էր, որ շեզ-լոնին վրա երկնցած լրագիր կկարդար։ Հեռվեն բարևեցի և հարցուցի օրիորդի առողջությունը։

— Բան մը չունի, նազ կընե,— եղավ պատասխանը։— Հրամեցե՛ք վեր, դեռ չեք եղած մեզի,

— Ուշ է քիչ մը,— ըսի վարանքով։

— Եկեք, մայրս ալ, քույրս ալ ուրախ կըլլան։

Առանց իմ հատուկ որոշման ոտքերս արդեն ուղղվեցան դեպի պատշգամին կից սանդուղները։

Պարոն նկարիչը դեմ եկավ, և երբ պատշգամեն սենյակ մտանք երկուքով՝ մայր ու աղջիկ ոտքի ելան թեյի սեղանեն։

— Աս ի՜նչ հրաշք,— բացականչեց օրիորդը ժպտուն։

— Լսեցի՝ տկար եք,— եղավ բացատրությունը։

Նստեցանք, տիկինը լրացուց քաղաքավարական հարցերուն շրջանը և ծայր տվավ թեյի սեղանին շուրջը ստոստուն ու թեթև խոսակցություն մը։

Օրիորդս ոչինչ չուներ, եղբորը ըսածին պես, քիչ մը ավելի գիր-



ցած երևցավ աչքիս և քիչ մը ավելի դժգույն։ Ինքնաեռին դեմը նստած բաժակները կմաքրեր ու մեզի թեյ կմատակարարեր, միևնույն ժամանակ կմասնակցեր խոսակցության և՛ խոսքով, և՛ իր զվարթ խնդուքով։

Խոսված լեզուն ռուսերեն էր, բայց ինչպես եղավ օրիորդը մեկերկու նախադասություն ըսավ հայերեն և շատ կարգին, որ բավականություն պատճառեց ինծի և զգացումս զսպել չկրցա։

— Ի՜նչ լավ ըսիք հայերենը, օրիո՛րդ։ Եվ ինչո՞ւ միշտ հայերեն չեք խոսիր. լավ առիթ է, կվարժվիք։

— Որովհետև աղեկ չգիտեմ,— ըսավ նորեն հայերեն և ետևեն իսկույն ռուսերենով ավելցուց,— ռուսերեն լեզվով կրնամ միտքս շատ ավելի նուրբ ու հարուստ արտահայտել։

— Այդ նրբությունն ու հարստությունը պետք է ամենքը ունենան իրենց մայրենի լեզվով, և ատիկա ձեռք կբերվի խոսելով, քանի որ ձեր օտար դպրոցը այդ տեսակետեն օժանդակել չի կրնար ձեզի։

— Մայրենի լեզո՞ւ,— հարցուց հանկարծ տարօրինակ շեշտով մը,— մայրս ինծի հետ միշտ ռուսերեն է խոսած. այդպես չէ՞, մամա՛,— դարձավ մորը ծիծաղկոտ ու կես-երգող ձայնով մը։

Ես վայրկյան մը վարանեցա։ Իմ տեսական ըմբռնումիս խիստ գործնական պատասխան մըն էր դեմ առեր։

— Սիրելի՛ բարեկամս, այդ բոլորը քիչ մըն ալ ճաշակի խնդիր է,— մեջ նետվեցավ եղբայրը,— ո՛ր լեզուն որ անուշ ու գեղեցիկ է՝ ան ալ կգործածեմ։

— Հայերենը տգեղ է՝ ըսել կուզեք։

— Շիտակը խոսելով՝ շատ գեղեցիկ չեմ գտներ։

— Կարծեմ ձեր նկարչական ճաշակը այս հարցին մեջ ձեզ օգնել պիտի չկրնա,— ըսի ես քիչ մը չոր։— Նախ որ այս կամ այն լեզվով խոսիլը բնավ ճաշակե կախված խնդիր չէ. ձեր քույրը շատ ավելի ճիշտ պատասխանը տվավ։ Երկրորդ ալ՝ պահ մը ձեր ըսածը ընդունելով. ո՞ւրկե գիտեք հայերենի տգեղ ըլլալը. ձեր ըսած ու ձեր գիտցած հայերենովը կդատե՞ք։

— Ուրիշ ինչո՞վ կուզեք, որ դատեմ։

— Կա՛ հայ գրական լեզու մը ու հայ գրականություն։

— Գրականությո՜ւն,— կրկնեց նկարիչը ներողամիտ հեգնությամբ մը։— Գրականություն մը գրականություն դառնալու համար պետք է խոր ու արժեքավոր երկեր ու ստեղծագործություն ունենա իր մեջը։

— Դուք կխոսիք ձեր չճանչցած գրականության մասին։

Նկարիչը ուսերը թոթվեց, իսկ ես այլևս լեզուս բռնել չկրցա.

— Իսկ եթե նույնիսկ դեռ չունինք այդ բարձր ու խոր գրական

ստեղծագործությունները, որ դուք կպահանջեք, ատոր հանցավորը դո՛ւք եք, պարո՛ն նկարիչ։

— Ե՞ս,— հարցուց խոսակիցս ծիծաղի զարմանքով։

— Այո՛, դո՛ւք, ե՛ս, մե՛նք, մեր երիտասարդությունը։ Փոխանակ ուրիշներու հարստությամբը հպարտանալու և ուրիշներու լեզուն առաջ քաշելու, դեռ չունինք այնքան ինքնություն ու հպարտություն մենք մեր սեփական հարստությունը ունենալու, մեր լեզուն խոսելու, հղկելու ու նրբացնելու, մե՛ր կյանքը, մե՛ր հոգին ու մե՛ր պետքերը պատկերելու ու արտահայտելու։ Արհամարհելը, չի հավնիլը ու չճգտելը երբեք ոչինչ ստեղծել չեն կրնար։ Պետք է սիրել ու գործածել լեզուն, եթե կուզեք, որ սրվի ու արժեքներ ստեղծագործե։

Վայրկյան մը լռություն տիրեց։

— Այդ մասին թո՛ղ բանաստեղծները մտածեն,— կամաց մը փեշերը հավաքեց նկարիչս,— խնդիրը ինծի չի վերաբերիր, ես նկարիչ մարդ եմ, և շիտակը՝ ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ ալ տրամադրություն այդ կարգի բաներու վրա երկար խորհելու։ Այսքանը միայն ինծի պարզ է, որ մենք հայերս հաստ ու կոշտ ժողովուրդ ենք, նուրբի ու գեղեցիկի ըմբռնումը չունինք, իսկ երևակայությունն՝ բնա՛վ։

— Բարեկա՛մ, ատոնք պարապ ու անարդար խոսքեր են։ Եվ ինչպե՞ս կրնաք առանց խղճահարվելու պախարակել ամբողջ ժողովրդի մը ընդունակությունները, ժողովուրդի մը, որ ձեր մայրն է վերջապես։

— Ինչո՞ւ պիտի խղճահարիմ, սիրելիս։ Մարդ պետք է ազատ մտածե, և պետք է լայն ըլլա մեր մտածման հորիզոնը։ Նեղ, անձուկ միջնադարյան գաղափարներու ժամանակը անցած է. այս դարը քննադատության դար է, Վոլտերներու, Զոլաներու ոգին է մեր դարը դարձնողը։

Չպատասխանեցի։ Ներս մտավ տիկինը, և խոսակցությունը փոխվեցավ։ Ես սաստիկ անհանգիստ էի, շատ ծանր ու անախորժ զգացում մը կճնշեր հոգիիս վրա, որ հարկադրված էի զսպելու։

Քիչ մը վերջը ծանր քայլերով տուն կվերադառնայի։ Լուռ ու խաղաղ գիշեր էր արդեն։ Տերև մը անգամ չէր դողդղար, վար իյնող աստղ մը անգամ չկար, միայն վարեն գետն էր նորեն, ձորեն, իր հին երգը կկրկներ ամեն բանի անտարբեր։

Վեճը վերքի մը պես հետք էր թողեր կրծքիս տակ, և ես ինծի՛ կըմեղադրեի. հիմարի պես էի վարված, առջի օրեն գիտեի դիմացինիս կարծիքը, ի՞նչ կարիք կար այս ավելորդ ու անհամ բառամարտին։ Ես և անոնք տարբեր կյանքով ենք մեծցած և տարբեր ոգիով կրթված։ Իրար երբեք չենք հասկնար։ Հիմա անշուշտ կհամարեն ինծի



նեղ գաղափարներու տեր խղճուկ մեկը։ Եվ իրենց վերաբերմամբ իմ մտածածս ալ ատկե տարբեր բան մը չէ։

Ա՜, ինչո՞ւ գացի ես անոնց տունը։

Հունիս 25

Ամպշող օր մըն էր այսօր։ Ճաշեն առաջ նստած սենյակս պատուհանիս տակ կաշխատեի, երբ Հոռոբսին եկավ հայտնեց, թե դրացի օրիորդը եկեր է ու ինծի կհարցնե։

Շատ զարմացա. ի՞նչ կուզեր, մանավանդ երեկվան ծանր հանդիպումեն ետքը։ Ակամա կնախատեսեի նոր անախորժություն մը։ Բայց և այնպես բնականաբար իսկույն վեր թռա ու ելա պատշգամ։

Օրիորդը իր պզտիկ քրոջը հետ մեր սանդուղին առջևը կեցած շատ սիրալիր կերպով կխոսակցեր հորեղբորս կնոջ հետ, որ մեր պատշգամեն անդադար կկրկներ, որ գոնե քանի մը վայրկյան վեր հրամմե։

Աղջիկը հազիվ բարև առավ, որ ըսավ.

— Արդյոք քառորդ ժամ մը կրնա՞ք ինծի ընկերանալ, մինչև գյուղը, պզտիկ պտույտ մը, ձեզի հետ խոսելիք ունիմ։

— Ամենայն սիրով, այս վայրկյանիս,— ըսի ես ու սենյակս նետվեցա։

«Չըլլա թե եղբայրը երեկ գիշեր խոսքերես շատ վիրավորված ըլլալով քույրը հիմա եկեր է ինծի զգացնել տալու», կմտածեի տանու հագուստս փոխելով։

Պատշգամեն իջա թե չէ՝ մեր տիկնոջ ցտեսություն ըսավ, և իսկույն ճամփա ելանք։

Արքունի ուղին էր, որուն վրայեն կքալեինք. մեր երկու կողմեն ձորի կողերն էին՝ թզուկ ծառերու կրկնոցով մը իրենց ուսերուն մերկությունը ծածկած։

Կքալեինք լուռ իրար քով, տարօրինակ զսպված հուզում մը կար մեջս, որ ավելի կհրահրվեր այս երկարատև ու տարօրինակ լռութենեն։ Իր վարմունքը ամեն տեսակետեն և՛ անսովոր էր, և՛ անսպասելի։

Մեկ-երկու անգամ քովնտի նայեցավ երեսս ու ժպտեցավ առանց սակայն շրթունքները բանալու։ Եվ այսպես անխոս հասանք մինչև այն պզտիկ կամրջակը, որ խճուղին մեր ափեն գետի մյուս ափը կանցըներ։

Անցանք կամրջակը, գետն ալ ձախեն աջ անցավ։

— Կա՛տյա, շրջանակդ չդարձնե՞ս,— ըսավ պզտիկին ուսին զարնելով։

Երբ փոքրիկը շրջանակին ետևէն վազելով հարթ ճամփուն վրա բավական հեռացավ՝ օրիորդը առանց այլևայլության դարձավ ինծի.

— Գիտեմ, որ զարմացած եք և հիմա ավելի պիտի զարմանաք։ Կուզեի հայերեն սորվիմ, ինչպե՞ս ընեմ, ինծի ի՞նչ խորհուրդ կուտաք։

Կանգ առի ու մնացի արձանի պես։ Աղջիկը նույնպես կեցավ դեմս. չիփ-շիտակ ու շեշտակի կնայեր աչքերուս, զարմանալի ու փոխված դեմք մըն էր դեմինս, և բոլորովին տարբեր ու լուրջ արտահայտություն մը այդ դեմքին վրա։

— Եվ կուզեի, որ պատասխանեք պարզ ու շիտակ, իբրև մոտիկ ու մտերիմ մարդու։

— Պատասխանը ինքնին շատ պարզ է. պետք է շարունակ կարդաք ու շարունակ խոսիք հայերեն։

— Բայց որո՞ւ հետ խոսիմ, մեր տունը դուք գիտեք, և գրական ոճն ու լեզուն դժվար է ինծի հասկնալը միս-մինակ։

— Իրավունք ունիք, գոնե սկիզբները պետք ունիք օգնականի մը։

Աղջիկը հանկարծ քիչ մը գլուխը խոնարհեց և գոց հովանոցին ծայրովը գետինը եռանկյունի մը գծելով ըսավ.

— Եթե ձեզմե խնդրեմ, որ դուք ըլլաք այդ օգնականը՝ կընդունի՞ք։

— Ես,— թռավ հանկարծ կրծքես հուզումի շեշտով մը, որ զսպել ու քողարկել չկրցա։

Աղջիկը աչքերը բարձրացուց գետնեն, գամեց նորեն շիտակ աչքերուս և ավելցուց խիստ լուրջ.

— Շատ կխնդրեմ, որ քաղաքավարություն չընեք և ձեր հոգին խանգարեք, ես կուզեմ միայն ձեր ազատ ընտրությունը. այո՞, թե ոչ։

— Այո՛, և մե՛ծ սիրով,

Հետո ալ չգիտեմ ինչպես մեկնեցի ձեռքս իրեն։ Աղջիկը իսկույն բռնեց, սեղմեց և հազիվ լսելի ձայնով մըն էր, որ ըսավ.

— Շնորհակալ եմ։

Սկսանք քալել վերստին։ Եվ հետո ալ իր հետևյալ խոստովանությունը.

— Այս գիշեր ես շատ երկար մտածեցի՝ դիմե՞մ ձեզ այս խնդիրքով, թե ոչ։ Ձեր մերժումե՛ն չէ, որ կկասկածեի, ո՛չ, բայց ինքս ալ չգիտեմ ինչու, կամ գուցե պետք չէր, որ այս ձանձրույթը ձեզի տայի, բայց ահա՛, տեսեք, եկեր եմ...

— Այդ խոսքերը կարծեմ անտեղի և ավելորդ են այլևս, քանի որ դուք ինծի դիմեցիք մոտիկության ու մտերմության անունով։

— Իրավո՛ւնք ունիք,— պատասխանեց շատ կտրուկ շեշտով մը։—



Ուրեմն ըսե՛ք, խնդրեմ, ի՞նչ գիրք ճարեմ և ե՞րբ սկսինք։ Ես քիչ մը շուտիկ եմ ամեն բանի մեջ, ներող եղեք։

— Գրքի մասին հոգ քաշելու պետք չկա, քովս քանի մը կտոր ունիմ, բան մը կընտրեմ, իսկ սկսիլը վաղվընե շուտը չկա, քանի որ այդքան շուտիկ եք,— կատակեցի ես։

— Աղե՛կ, ուրեմն վաղ առտու ժամը իննին կսպասեմ. հարմա՞ր է ձեզի այս ժամը։

— Բոլորովի՛ն։

— Կա՛տյա,— պոռաց քրոջը,— կվերադառնա՛նք։

Պզտիկը հասավ մեզ իր շրջանակին հետ, ու քալել սկսանք դեպի տուն։

Ու շարունակ կխոսեինք Կատյայի մասին, անոր առանձնահատկություններուն ու բնավորությանը մասին, և Կատյան ինքն ալ խոսքի կխառնվեր։

Այս բոլոր անցած-դարձածը դեռ լավ մը չեմ մարսած. ինչպե՛ս արագ եղավ և անակնկալ, ո՞վ կրնար մտածել։ Եվ չեմ կրնար ծածկել ինքս ինծմե, որ կայծկլտող ուրախություն մը՝ թափանցած է հոգիս։ Զարմանալու ալ կարծեմ պատճառ չկա. չէ՞ որ իմ խոսքերուս ազդեցությանը տակ եկավ ան այս որոշման։

Հուլիս 2

Շաբթվան մը չափ է սկսած ենք մեր աշխատությունը. օրիորդն ալ, ես ալ մեծ եռանդով ենք գործին փարած, նորություն է երկուքիս համար ալ։

Ամեն օր պայմանադրված ժամուն մեծ անհամբերությամբ կվազեմ Շամիրյաններուն պարտեզը, ուր սավերախիտ ծառերուն տակ փայտե պարզուկ սեղան մը կա ու երկու աթոռ։ Տեղը օրիորդը ընտրեց չխանգարվելու համար։

Գրքերես զատեցի «Դավիթ Բեկը»։ Արդեն քանի մը գլուխ կարդացած ենք։ Օրիորդի ընթերցումը գեշ չէ, նոր ու անսովոր բառերը քիչ մը կկզե։ Զարմանալի սուր հիշողություն ունի։ Եվ անհագ կլսե թե՛ լեզվի, թե՛ մեր կյանքին վերաբերող և թե՛ պատմական բացատրությունները, որ անդադար ստիպված եմ տալու ընթերցանության միջոցին։

Երբեմն այնքան լուրջ է ու մտախոհ, որ նոր սկսած ատեննիս կկարծեի, թե ուշ չի դներ։ Օր օրի զարմանքս կաճի. իր հարցերը հոգե-

կան ծածուկ ապրումներ, խորհրդածություն, կասկածներ ու դժգոհություններ կմատնեն։

Ի՜նչ սխալ գաղափար էի կազմած այդ աղջկան վրա երևույթեն դատելով։ Ան ինծի համար աղվոր, զվարթ ու կենսուրախ էակ մըն էր, բայց զուրկ խոր ապրումներէ և ամեն լրջութենե հորանջող։ Իր ըրած տպավորությունը հիմա այն պատճառով ավելի մեծ է, որ բնավ չէի սպասեր։

Հիմա ինքս ինծի կհարցնեմ՝ մի՞թե այդ անփույթ ու խայտուն կեղևին տակ խորունկ հոգի մը կա պահված։ Եվ շիտակը չգիտեմ ինչ պատասխանեմ. վերջին երկու շաբաթվան մեջ այնքան արագ սկսան փոխվիլ կրած տպավորություններս, որ հաստատ բան մը ըսելու այլևս չեմ համարձակիր։ Այսչափը միայն ինծի համար պարզ է, որ մեր այս նոր աշխատանքեն չափազանց գոհ եմ ու ոգևորված։

Ձևականությունները շատ շուտով վերացան մեր մեջեն. ո՛չ միայն իմ և օրիորդի, այլև մեր երկու ընտանիքներու մեջեն։ Ամառանոցի մենությունն ու ազատությունը, երկու տարեկից տիկիններու հաճախակի հանդիպումները, երիտասարդներուս իրարու կապվիլը ծնունդ տվավ մեր երկու ընտանիքներու ավելի սերտ հարաբերության։ Նկարիչս պարոն Մկրտիչի հետ ամեն օր կանոնավոր կերպով կուգա նարդի կխաղա, և ի՜նչ մեծ ոգևորությամբ։ Երկուքն ալ ինքզինքնին անպարտելի կդավանին այդ մարզին մեջ, և շատ զվարճալի է խաղի ատեն անոնց խոսք ու վեճին ականջ դնելը։

Գալով ինծի՝ ամեն օր ճաշեն առաջ արդեն անոնց եմ, իսկ ճաշեն վերջն ալ, երբեմն Վարդուհին մոր հետ կըլլա մեզի, երբեմն նորեն ես կերթամ իրենց, որ իրիկվան դեմ խմբով ելլենք պտույտի։

Եվ Շամիրյաններուն տան մեջ իմ գրաված դիրքս քանի կերթա ուղղակի նախանձելի կդառնա։ Պարոն նկարիչը բացահայտ կերպով ինծի հանդեպ ջերմ համակրանք կցուցադրե, հակառակ մեր մեջեն անցած մեկ-երկու աղի-լեղի վեճերուն. ան միշտ շատ գոհ է, երբ իրեն առիթ ու հնարավորություն կտրվի իր պատկերներուն գույներուն ու երանգներուն և նկարչության մասին երկար խոսելու, և այդ առիթն ու հնարավորությունը ես անոր հաճախ կուտամ։

«Դուք քույրս խելքե հանեցիք,— կըսե ինծի քմծիծաղ,— բայց վնաս չունի, պարապ մնալեն ավելի աղեկ է լեզու մը սորվիլը, և տեսնենք ինչ պիտի սորվի»։

Իսկ օրիորդիս մայրը ինծի, գիտեմ, որ սիրած ու համակրած է առաջին օրեն։ Թեև շատ չուզեր, որ աղջիկը ամառն ալ «այսքան մտավոր աշխատանք ունենա», բայց և այնպես մեր պարապմունքներուն



արգելք չէ։ Եվ ինչպես արդեն շատոնց նկատած էի՝ Վարդուհին տան մեջ բոլորովին անկախ դիրք մը ունի, դեռ քիչ մըն ալ տիրապետող։

Ավելցնեմ, որ փոքրիկ Կատյայի հետ սաստիկ մտերիմ ենք. երթալուս պես թևերուս ու ծունկներուս վրա է, միայն մեր պարապմունքի ժամերուն խստիվ արգիլված է իրեն մեզի մոտենալը։

Նույնիսկ բաց-դեղին մազերով, կապուտաչվի ռուս սպասուհին առանձին փութկոտություն մը ունի դեպի ինծի ու միշտ խորհրդավոր ժպիտ մը իր շրթունքին։

Այո՛, այս ձևը առավ իրողությունը։

Հուլիս 7

Քանի օր է սովորություն եմ ըրած, երբ ճաշեն ետքը տաքը կկոխե, կբարձրանամ մեր տան ետևի անտառակը և կփռվիմ կոնակիս վրա ծառերուն տակ։ Նոսր սաղարթի ճեղքերուն մեջեն կդիտեմ երկնքի մաքուր բաց-կապույտը, ուր հազիվ երբեմն ճերմակ ամպերու փետեկտումներ, մշտափոփոխ երազական էակներու նման, հանդարտիկ կլողան։

Ու կմտածեմ։ Կմտածեմ կա՛մ հաջորդ օրվան մեր ընելիքի մասին, տալիք հարցերս կընտրեմ, նոր գլխուն հետ կապված բացատրվելիք կետերը կորոշեմ, բանավոր շարադրումներու նյութեր կգտնեմ և պատմել տալու զանազան ձևեր կհնարեմ, որ իր արտահայտությունը ավելի կենդանի ըլլա, կա՛մ հիշողությանս մեջ կվերարտադրեմ առավոտյան մեր խոսքերը, վեճերը, աղջկան ընթերցումը, ձայնը, դիրքը, ժպիտն ու նայվածքը։ Մեր այդ աշխատակցությունը կյանքիս մեջ մեծ տեղ է գրաված հիմա։

Այս ցերեկ նույն այդ դիրքին մեջ ծառերուն տակը կերազեի, երբ հարց մը ծնունդ առավ գլխուս մեջ։ Եթե Վարդուհիին տեղ ուրիշ մը ըլլար՝ այսպես պիտի տարվեի՞ ու ամբողջովին պիտի նվիրվեի՞։ Որոշ պատասխան մը տալու կվարանիմ։

Այո՛, հանձնառությունը հանձնառություն է, և ես բարեխիղճ աշխատող մըն եմ ամեն բանի մեջ, բնավորությունս գիտեմ։ Բայց և այնպես անտարակույս դիմացինիս աղջիկ մը ըլլալը իր որոշ դերը ունի. ի՞նչ կա զարմանալու։

Ամեն պարագայի արդեն պարզ կզգամ, որ մեր պարապմունքները ինծի համար միայն պարտականություն և զբաղմունք չէ, այլ միևնույն ժամանակ խորին հաճույք մը։ Նստած իրենց պարտեզի բաղեղներու

ատին, նեղ սեղանի մը՜ երկու կողմը, այնքան նեղ, որ երբ երկուքս ալ քիչ մը առաջ կհակինք՝ մազերնիս իրար կշոյեն։ Եվ թարմ թրթիռներով կանացի ձայն մը, որ մարդուս հոգին կշոյե, երբ կհուզվի։ Եվ իր նայվա՛ծքը և խնդո՛ւքը։ Երբեմն այն զգացումը կունենամ, կարծես գինի խմած ըլլամ, երբ մանավանդ ինքս լուռ՝ իրեն խոսիլ կուտամ։

Չգիտեմ, արդյոք ան ալ իր հոգիին մեջ նման հաճույք մը ունի՞. ինչ զգալը չգիտեմ, բայց անցած օր ինքը ըսավ, թե հիմա իր ամբողջ հոգին լեցված է մեր այս աշխատանքով։

Հուլիս 11

Այսօր ընդհանուր քաղի պես բան մը ըրինք մեր մինչև հիմա կարդացած մասերուն վրայեն, որ մեզի բնական կերպով բերավ վեպի գեղարվեստական կողմերու վերլուծությանը և երկի ստեղծագործական արժեքին։

Այնպես տարվեր ու կլանվեր էինք, որ ժամանակին անցնիլը չէինք նկատած։ Այն ատեն միայն ուշքի եկանք, երբ մայրը երևցավ մեր բադեղներուն մեջ ու հրավիրեց ինծի ճաշի։ Ուզեցի շնորհակալությամբ հրաժարիլ, ընդգծելով, որ տունը հիմա անշուշտ ինծի կսպասեն։ Տիկինը ծիծաղելով հայտնեց, որ այդ կողմեն կրնամ հանգիստ ըլլալ, արդեն ինքը լուր է տված մեր տունը, թե ճաշի չեմ երթալու։

Ճաշը անցավ շատ զվարթ. բոլորս ալ զարմանալի կերպով հրաշալի տրամադրության մեջ էինք։ Եղբայրը ճաշեն ետքը ինծի իր աշխատանոցը առաջնորդեց, ուր եղած էի միայն անգամ մը հարևանցի։

— Իրավ է, թեև ցույց տալու հոս ավարտած բան մը չունիմ և իմ լավ կտորներս հուսամ օր մը Թիֆլիս կտեսնեք,— ըսավ պարոն նկարիչը իբրև առաջաբան,— բայց և այնպես մարդս միշտ հաճույք կզգա իր աշխատությունը ուրիշի մը ցույց տալով։

Եվ պարոնը բնավ այդ հաճույքը չի զլացավ իրեն՝ ի հաշիվ իմ ձանձրույթիս։ Ամբողջ ժամ մը ինծի մեկ կիսատ ու ներկերու մեջ թաթխված կտավին առջևեն մյուսին առջևը կքաշեր, անդադար խոսելով, մեկնելով ու բացատրելով նկարներուն նյութը, իր նկարելու եղանակը և գույներու նրբություններուն դերը, փաստեր ու օրինակներ կբերեր մեծ նկարիչներու խոսքեն ու կյանքեն։

Ես սկիզբը մեծ հետաքրքրությամբ կհետևեի իր խոսքին, բայց հետզհետե հոգնեցա, և իսկապես ուրախ եղա, երբ նորեն դարձանք ընդհանուր սենյակը։



Մայրը առաջարկեց աղջկան, որ աղվոր կտոր մը նվագե դաշնակի վրա։

— Ա՜, իմ նվագելս,— առարկեց աղջիկը կես-հեգնոտ դեմքի արտահայտությամբ մը, բայց նստեցավ աթոռին ու դարձավ ինծի և ըսավ ժպտուն։

— Այո՛, նվագել ալ գիտեմ, ճիշտ հայերեն կարդացածիս չափ։

Լսած էի, որ կնվագե, բայց դեռ բնավ ներկա եղած չէի իր նվագին, և դաշնակն ալ ընդհանրապես ինծի համար հազիվ ծանոթ աշխարհ մըն էր. և հետաքրքիր էի, թե ինչ տպավորություն պիտի ընե վրաս իր նվագը։

Օրիորդը արագ դուրս քաշեց ձայնատետրերու կույտեն տետրակ մը և սկսավ արագ թղթատել. հազիվ կրցա կարդալ տետրակի երեսին վրա Մենդելսոնի անունը։

Ու նվագը սկսավ։ Կդիտեի իր երկար ճկուն ու բարակ մատները, որոնք դաշնակի մատներուն վրայեն կվազեին. կդիտեի իր կարճ կտրած մազերը, որոնք նվագի ամեն ցնցումին ուսերուն վրա կդողդողային, կդիտեի իր պինդ կծկած շրթունքները, որոնք եղանակի զարկերուն հետ մեջեմեջ ավելի պինդ կկծկվեին, կդիտեի ձայնատետրին հառած իր վառ աչքերը, բայց և կհետևեի իր նվագածին։

Ու չգիտեմ՝ երաժշտությո՞ւնն էր, որ աղջկան կերպարանքն ու էությունը այնպես հրապուրիչ ու եթերային կդարձներ իմ աչքերուս, թե՞ աղջիկն էր, որ իր ներկայությամբ ու իր շունչով այնքան խոր ու հուզիչ կդարձներ երաժշտությունն իմ ականջներուս։

Գիտեմ միայն, որ հոգիս ալեկոծված էր։

Քիչ մը վերջը կանչատվեի. ու խոհուն դեմքով՝ փոխանակ տուն երթալու՝ իջա շիտակ ձորը ու կոթնեցա մամռոտ խոշոր ժայռի մը, որուն վրա ծուռումուռ ուռենի մը ստվեր կնետեր։

Կես-կեցած, կես-նստած ականջ կդնեի գետի խելագար աղմուկին ու կդիտեի անոր անվերջ գալարումներն ու եռանքը ժայռերու գրկին։ Ժամանակը կթռչեր՝ գիտեի, բայց չէի ուզեր տեղես երերամ, մեղկություն մը տիրած էր հոգիիս։ Կցանկայի այդպես մնամ անշարժ այդ աղմուկին մեջ անվերջ խոհուն։

Բայց ի՞նչ կխորհեի, ոչի՛նչ, կամ գրեթե ոչինչ։ Երազի պես բան մըն էր. դաշնակ մը կար աչքերուս դեմ, որուն վրա Վարդուհիին նուրբ ու երկար մատները կվազեին, և երաժշտություն մը կար իմ հոգիիս մեջ։

Հուլիս 14

Իմ արդի բոլոր մտածումներս կեդրոնացած են ամբողջովին մեր միասին պարապմունքի ժամերուն վրա։ Առտուները անբնական անհամբերությամբ որոշյալ ատենին կսպասեմ, և միշտ տեսակ մը անհանգիստ ուրախությամբ կվազեմ Շամիրյաններուն բնակարանը, ուր սովորաբար պատշգամին իսկ վրա կհանդիպիմ «աշակերտիս», որ նույն անհամբերությամբ ինծի կսպասե։

Ան ալ բոլորովին ոգևորված է հիմա մեր զբաղումներով։ Գրքի ներկայացուցած հայ կյանքը, հայ տիպարները բուն հայ հողին վրա, հայ լեռներն ու մեր լեռնական այդ մոտիկ անցյալը Վարդուհիին համար հիմնովին նոր աշխարհ մըն է, որ կբացվի անոր աչքերուն ու հոգիին առջև։ Եվ երբ կմտածեմ, որ իմ ներշնչումիս ջերմության տակ փթթեցավ այդ թարմ ու նոր զգացումներուն ծաղիկը՝ կուրծքս բախտավորությամբ կուռի։

Հաճախ կպատմեմ հիմա մեր կյանքեն, գավառեն, մեր բնության գեղեցկություններեն, մեր ժողովրդի դառնություններեն։ Կնկարեմ իր դեմ իմ երազներս և այդ հողին վրա ծլելիք ապագա քաղաքակրթությունը։ Կգծեմ մեր բոլորիս պարտքը եղող աշխատանքը՝ քայլ մը ավելի քալելու համար դեպի մեր երազներու ապագան։

Աղջիկը կլսե ինծի աչքերը աչքերուս, անթարթ։ Կամ ինքը կպատմե իր կյանքեն, կդժգոհի մեր հանրային կաշկանդող պայմաններեն, կնկարագրե Բորժոմ անցուցած նախորդ ամառը և իր մանկական հիշատակներեն, իր դպրոցական կյանքեն. մանր ու խոշոր, հետքրքիր ու երկրորդական անվերջ նյութեր, որոնք սակայն իր հոգին կբանան ինծի, և ես անհուն ուշադրությամբ կունկնդրեմ։ Ու հետզհետե մեր գաղափարները կնույնանան, մեր ձգտումները իրարու կմոտենան, մեր իդեալները, մեր անուրջները իրարմե գույն ու ձև փոխ կառնեն։

Եվ մենք տարիկա կզգանք փոխադարձաբար ու ալ ավելի իրարու կմտերմանանք բնականաբար։

Հուլիս 19

Երեկ մեր աշխատանքը դիտմամբ քիչ մը կարճ կապեցի, և ետքն ալ պատեհ ժամանակեն օգտվելով խնդրեցի, որ մեկնելես առաջ կտոր մը նվագե. իբրև թե պատահմամբ եղավ։ Բայց անպիտանը խկույն ըմբռնեց։ Հազիվ քիչ մը նվագած էր, որ հյուրեր եկան ու խանգարվեցավ։



Եվ այսօր, երբ կարդացած գլուխը վերջացուց, ինքը գոցեց գիրքը, գոցեց և աչքերը կիսովին և ըսավ ննգամիտ.

— Այսօր կարծես թե ավելի երաժշտական է տրամադրությունս, արդյոք չէի՞ք ցանկար, որ բան մը նվագեմ ձեզի։

Եվ առանց պատասխանիս սպասելու ցատկեց ոտքի, քաշեց ձեռքես, խնդաց լի կուրծքով, մազերը ճակտեն ետ նետեց ու սլացավ դեպի սանդուղները։ Ես ալ բնականաբար ետևեն։

Մինակ էինք՝ ես ու ինքը։ Ու դաշնակը կթնդար։ Տարբեր ոգևորությամբ մը կնվագեր. լանջը կդողդղար, մազերը կցատկոտեին, այտերը վարդ էին կտրեր, թարթիչները արագ կթարթեր, և իր փղոսկրե դաստակները կվազեին դաշնամուրի մատներուն վրա։

Այսօր արդեն երաժշտությունը չէր, որ կզգայի, այսօր ինքն էր իր ամբողջ էությամբ իմ երաժշտությունս։

Երբ նվագը դադրեցավ՝ Վարդուհին բուռն շարժումով մը ցատկեց ու եկավ ինծի.

— Գո՞հ եք։

Առանց պատասխանի բռնեցի իր ձեռքը, սեղմեցի ու ալ ձգել չէի ուզեր։ Ան ալ իմս կսեղմեր։

Մինչև սանդուղներուն գլուխը եկավ ինծի ճամփու դնելու։ Եվ նորեն առանց խոսելու սեղմեցինք անգամ մըն ալ իրարու ձեռք ու բաժնվեցանք։

Արտասովոր դանդաղ քայլերով ուղղվեցա տուն, նույն ծանր շարժումներով բարձրացա սենյակս ու նստեցա գրասեղանիս առջև աչքերս պարտեզի ծառերուն հառած։

Որչափ տևեց այդ անշարժությունս՝ չգիտեմ, բայց ցնցվեցա, երբ լսեցի, որ շրթունքներս կըսեին ցած ու խիստ հստակ խոսվածքով մը.

«Կսիրե՛մ. կսիրե՛մ»։

Ու սկսա մտածել ու սկսա հիշել բոլոր անցած-դարձածը այս քանի մը շաբաթներու ընթացքին իմ ու այդ աղջկան միջև, և ըմբռնեցի, որ ես սիրած էի այդ աղջիկը առաջին տեսած օրես։

Հուլիս 22

Երեկվան եզրակացութենես ետքը և հակառակ իմ հասկացողությանս, զարմանալի կերպով դժկամություն մը կզգայի մեջս այսօր Վարդուհիին երթալու։ Ու կուշացնեի ու չգիտեի՝ ինչ ընեմ։

Ուրախությունս անչափ եղավ, երբ մեր կինը ներս մտնելով հայտ-

նեց, թե երիտասարդ մը ինծի կհարցնե, և երբ դուրս վազելով Միքայելի հետ երես-երեսի եկա։

— Միքայե՛լ։

— Երվա՛նդ։

Եվ խոշոր ընկերական համբույր մը։

— Վե՛րջապես։ «Դիլիջան եկուր, որ քեզի պտտցնեմ», կըսեիր. եկա, ու դուն չկաս, ա՞ս է խոստումդ։

— Ma՞տս հոտվտայի, որ գալու էիր։ Սիրաքն ալ նամակ նամակի վրա կգրեր, որ անպատճառ քանի մը շաբաթ իրենց երթամ Նոր-Բայազիտ։

— Ո՞ր Սիրաքը, առաջին լսարանե՞ն։ Ա՞ն ինչպես է, ի՞նչ կընե։

— Ի՞նչ պիտի ընե, առտուները ոտանավոր կթխե, ցերեկները՝ ձըկնորսություն, իրիկունները ալ՝ սիրահարություն։

— Որո՞ւ հետ։

— Երևանեն եկած ընտանիք մըն է, լուսնի նման ճերմակ ու կլոր աղջիկ մը։

— Լուսնի նման աղջիկը ես չեմ սիրեր, պաղ է։

— Վա՜հ, տնաշե՛ն, թող ըլլա արեգակի նման, տաքցա՞վ։ Իսկ դո՞ւն ի՞նչ բանի ես, ի՞նչ կընես։

«Սիրաքի ըրածը», անցավ միտքես, բայց այդ մտածումը ժպիտ մը մեջ խեղդելով՝ ըսի.

— Ի՞նչ պիտի ընեմ, կկարդամ ու կպտտիմ՝ բայց միշտ մոտերը։ Ձի մը վարձել ու շրջակայքը պտույտ մը ընել կմտածեի. գիտես որ ձի նստիլը կսիրեմ, բայց որո՞ւ հետ։

— Եթե ավելորդ ստակ ունիս՝ դուն ինծի տո՛ւր, ես ծախսելու տեղը գիտեմ, իսկ ձի մեր ախոռը երկու հատ կա, մեկը իմինս է սեփական, մյուսը՝ եղբորս. եղբորս ձին դուն չես կրնար սանձել, ան ես կառնեմ, իմինս կուտամ քեզի։ Բայց ո՞ւր երթալ կուզեիր։

— Ի՞նչ հարցնելու բան է, սար, ձոր, անտառ, ավերակ, գյուղ։

— Այդպե՞ս, աղե՛կ, վաղը փոքրիկ ճամփորդություն մը ընել կուզե՞ր։

— Վա՞ղը,

— Հոսկե հինգ-վեց ժամ հեռու անտառին մեջ փոքրիկ գյուղ մը կա, գյուղի տերտերին հետ եղբայրս գործ ունի, երթա պիտի վաղը։ Ինծի առաջարկեց՝ իրեն ընկերանալ՝ մերժեցի. քանի մը անգամ եղած եմ, բայց եթե կուզես՝ երկուքով կմիանանք իրեն, որքան շատ ըլլանք՝ այնքան լավ. ճամփան քիչ մը ապահով չէ։

— Ամենայն սիրով,— վճռեցի ես իսկույն։



— Լա՛վ, առտուն կանուխ պատրաստ եղիր, քեզի կառնենք ու կմեկնինք։ Գրա՞ծդ ինչ է,— ավելցուց սեղանիս վրայի բաց տետրակը թերթելով։

— «Նախընթաց իրիկունը» կթարգմանեմ։

— Աստված համբերություն տա քեզի։ Չէ՛, ես չեմ կրնար այդ տեսակի բաներ. կարդալը ձմեռները նորեն, ինչևէ, գրելը միշտ է անհամ, մանավանդ երբ ուսուցիչներն ալ ետևեդ կիյնան, թե գրե։ Հա՛, ուսուցիչ ըսի՝ միտքս ինկավ. Օհաննեսյանը ընտանիքով Նոր-Բայազիտ էր։

— Իրա՞վ, ի՞նչ ըսավ։

— Ի՞նչ պիտի ըսե, գիրուկ կնիկը հետը առած կպտտի ու ձմեռը մեզի տալիք դասերը կորոճա։ Ամառնային շարադրությունդ գրե՞ր ես։

— Դեռ վրան ալ չեմ նայած։

— Կեցցե՛ս։ Ընկեր ըսածդ ատանկ պիտի ըլլա։ Եղբա՛յր, ինծի այն տեսակ երկար-բարակ բան մըն է տվեր, որ տարի մը գրելու ըլլամ՝ տակեն ելլել չեմ կրնար, ես ալ մտածեցի՝ բնավ տակը չմտնեմ, ի՞նչ կըսես տրամաբանությանս։

— Հիանալի՛։

Պահ մը լռեց ու աչքը պտտցուց սենյակիս չորս կողմը։

— Սա ի՜նչ անշնորհք բան է, ա՛յ տղա, ո՞ր կողմ դառնաս՝ գիրք ու պատկեր։ Աս աղջի՞կը ով է,— ավելցուց իսկույն հայելիին անցուցած լուսանկարի մը մոտենալով։

— Չե՞ս ճանչնար, մեր դերասանուհիներեն մեկը։

— Դերասանուհի՜, «Նախընթաց իրիկուն», ծաղիկ, պատկեր, գըրքեր, գրքեր. մարդ երկու օր հոս ապրի՝ թուլամորթ բան մը կդառնա, դուն ինտո՞ր կդիմանաս։ Վաղը... հա՛, վաղը չըլլար, օր մը քեզի մեր տունը տանիմ, որ մարդավարի սենյակ տեսնես։ Պատեն կախված է եղբորս հրացանը, իմ ատրճանակս, որ հրացան մը կարժե և ձիուս սանձը, բայց «սանձ» կըսեմ է՜։ Իմ ունեցած մեկ հատիկ պատկերս պատուհանս է, ուրկե մեր ամբողջ ձորը ու դիմացի լեռը կերևա։ Թեև սեղանին վրա ջրի փարչին ու սանտրիս քովիկը երկու գիրք կա ու մեկ-երկու հին տետրակ, բայց այնպե՜ս միայն շնորհքի համար, քեզմե ետ չմնալու համար. թե չես հավտար՝ վրայի փոշին չափե՛։

Ծաշին պահեցի մեզի։ Սեղանին վրա քիչ խոսեցավ, բայց ախորժակով կերավ։

— Ա՛յսպես է,— ըսավ,— իմ սովորությունս։

Ճաշեն ետքը նորեն առանձնացանք ու երկար կխոսեինք, ավելի ճիշտ՝ ան կխոսեր։ Պատմեց Սիրաքի հետ անցուցած քանի մը շաբաթը, թե ինչպես անգամ մը Սևանի վրա նավարկած ատեն քիչ է մնացեր,

որ ընկղմին իրենց ծանր ու դժվար շարժվող կոպիտ նավակով, թե ինչպես սարերուն վրա շրջելու ատեն քյուրդ հովիվներուն հետ կռվի կըրընվին, թե ինչպես ուրիշ անգամ մը զինվորական ձևանալով գլխարկին փակցված փայլուն կոճակով մը՝ խեղճերուն հետ խաղի կելլեն ու կխաբեն։

Իրիկունը տարի ճամփու դրի, բավական երկար պտույտե մը ետքը։ Բաժնվեցավ՝ պատվիրելով նորեն, որ առտուն կանուխ պատրաստ գըտնըվիմ։

Ընկերոջս երևիլը վրաս շատ աղվոր ազդեց. կարծես լեռնային հով մը դեմքս պարուրեց, թարմ ու ցնցող լեռներուն հովը։

Հուլիս 22

Երեկ առտու նոր էի հագվեր ու արևն ալ նոր էր ծագեր, որ եկան ըստ ժամադրության։

Դիմավորեցի, Միքեի եղբայրը կարճահասակ մարդ մըն է, ջղուտ, խոշոր գլխով, խճուճ մազերով, կայծկլտող աչքեր սուր նայվածքով ու հայու քիթ. երեսուն տարեկան մը կըլլա։

Երկու եղբայրներն ալ հագած էին տեղական կտորե հագուստ, ոտքերնուն շուշտ, գլուխնուն ճերմակ ռուսական գլխարկ, մեջքերնուն դանակ և ուսերնուն հրացան։

— Պատրա՞ստ ես,— հարցուց Միքեն առանց ծանոթացնելու որևէ արարողության և չափեց ինծի հայացքով իր տված հարցը անձամբ ստուգելու համար։

— Նախ հանե՛ վրայեդ ժամացույցդ,— հրամայեց,— որ քյուրդ հովիվներուն ախորժակը չբանաս։

Հնազանդեցա ու տվի ժամացույցս Հոռոբսիին։

— Այդ կախած քսակիդ մեջը ի՞նչ կա,— հարցուց կրկին տըրնդանութ ուղեքսակս մատնանիշ ընելով։

— Մանր-մունր բաներ։

— Վերցրո՛ւ այդ տոպրակն ալ իր մանր-մուր բաներով, այդ հիմար տոպրակին տեղը ա՛ռ, կախե ատրճանակս։

— Բայց ես ատկե հատ մը ունիմ,— ըսի հպարտ՝ ետևի գրպանես փոքրիկ շրջահարս ցույց տալով։

— Է՜, ատիկա ոչինչ,— վավերացուց Միքեն,— բայց դուրսեն երևցող զարդ մը պետք է, ա՛ռ հրացանս դուն պահե։

Առի իր նշանավոր զարդը ու անցուցի ուսս։



Եվ ուղեքսակս ալ անցավ Հոռոբսիի ձեռքը։

— Հանե՛, նայիմ, սա աղջկա կոշիկներդ,— շարունակեց ան կատարյալ անտարբերությամբ։

— Ինծի բոբի՞կ պիտի ձգես։

— Եղբա՛յր, դուն իմ գործիս մի խառնվիր, քեզի հանե՛ կըսեմ։ Ջուշտերը տո՛ւր,— դարձավ եղբորը ծիծաղելի հպարտությամբ մը։

— Նոր-Բայազիտեն նոր եմ բերեր ու դեռ չեմ հագեր, ինչևէ, կնվիրեմ քեզի, աղվո՞ր է,— ավելցուց՝ քիթիս-բերնիս դեմ բռնելով եղբորը ձիուն վրայեն վերցուցած զույգ մը Ղարաբաղի շուշտ քիթերը վեր դարձած։

Տղայական ուրախությամբ խլեցի, Միքեի օգնությամբ անցուցի ոտքս, ու կապիճները ամրացուցինք։

— Ա՜յ հիմա քիչ մը կարգի եկար, գլխարկդ գեշ չէ։ Հեծի՛ր,— հրամայեց իր ձին մոտ քաշելով։

Ինքն ալ նստվեցավ իրենց հետը բերած երրորդ ձիուն կռնակը։

Երկու եղբայրը իրենց ձիերուն վրայեն քննական աչքով մը նայեցան վրաս. խրոխտ դիրք մը բռնեցի, այսինքն թե՝ ի՞նչ կկարծեք դուք ինծի։

Ու ձիերը խթանեցինք։

Զով ու գեղեցիկ առավոտ մըն էր։ Ձիերը կքշեինք, որ տաքը չըկոխած անտառ մտնենք։ Այս ընթացքով խոսիլ չէինք կրնար։

Ես դեռ իմ ձիուս բնավորությունը փորձելու վրա էի, որ հանկարծ մեր ճամփուն վրա երկու կին տեսա և իսկույն սիրտս սեղմվեցավ։ Վարդուհին էր ու իրենց սպասուհին. անշուշտ վարը գետի մեջ լողանալու էին գնացած, ինչպես երբեմն կընեին ու հիմա կվերադառնային։

Կմոտենային մեզի իրարու հետ խոսքի բռնված, առանց մեր վրա մասնավոր ուշադրություն մը դարձնելու։

Մազերը խոնավ, որոնք գլխու ճերմակ կապին տակեն կերևնային ուսերուն թափված, այտերուն թարմ դժգունություն մը, ինքը պարզ ու սպիտակ շրջազգեստի մը մեջ։

— Բարև ձեզի, օրիորդ Շամիրյան,— ըսի ես ժպտուն, երբ գրեթե հավասարած էինք իրարու։

— Վա՜յ, պարոնն է,— բացականչեց սպասուհին մեծ զարմանքով։

Վարդուհին կանգ առավ, նայեցավ ինծի։

— Ո՞ւր այդպես և ի՞նչ այլակերպություն,— հարցուց, իբրև պատասխան բարևիս։

— Փոքրիկ պտույտ մը դեպի անտառին խորքը։

Ձիս կեցուցած էի, ընկերներս կամաց-կամաց կերթային, տեսակ մը ինծի սպասելով։

— Այդպես հանկա՞րծ, և առանց ինծի բան մը ըսելո՞ւ, շնորհակալ եմ, երեկ ալ այնքան սպասեցի, շատ ուշադիր եք դեպի ինծի։

— Ներող եղեք, խնդրե՛մ։ Ընկերս հանկարծ եկավ, հարմարություն չեղավ ձեզի իմաց տալու։

— Հարմարություն չեղավ երկու բառ գրելո՞ւ։ Ինչևէ, երթաք բարով, բարի զվարճություն,— ավելցուց իսկույն ետ քաշվելով ձիուս քովեն, որ կդոփեր։

Անգամ մըն ալ գլխով բարևեցի ու թոթվեցի ձիուս սանձը։ Բայց կզգայի, որ աչքերս չեմ կրնար զատել հանգիմանությամբ լի իր սուր նայվածքեն։ Եվ կարծես բռնի փրցուցի իմ նայվածքս իր նայվածքեն։

Ընկերներուս երբ հասա՝ Միքեն շիտակ դարձավ ինծի.

— Այդ աղջիկը ո՞ւրկե ես ճանկեր։

— Դրացի է,— պատասխանեցի հնարավոր անտարբեր շեշտով մը։

— Բախտի բան է, ի՞նչ ընենք, այդ տեսակ դրացիներու մենք չենք պատահիր։

Ըսավ ու նայեցավ ետ և անմիջապես կցեց.

— Դեռ ետևեդ կնայի, տղա՛։

Ես ալ ետ նայեցա ու գլխարկով նորեն բարևեցի. Վարդուհին թեթև մը շարժեց ձեռքի ճերմակ սրբիչը։

— Ասոնք ապուրը եփեր են,— դարձավ Միքեն իր եղբորը։— Ինծի՛ նայե, վերադարձին ինծի այդ աղջկան պիտի ծանոթացնես,— շարունակեց ան ձին ձիուս մոտեցնելով։

— Ի՞նչ պիտի ընես, որ ծանոթացնեմ,— հարցուցի ես ժպտուն, երբ հոգիս խորքեն ծածուկ բախտավորությամբ մը կթրթռար։

— Աղվոր աղջկան մը հետ ի՞նչ կընեն, դուն ի՞նչ կընես։ Թե՞ կնախանձիս։ Չէ՛, եղբա՛յր, չնախանձիս, ես ընկերոջս ձեռքեն բան չեմ խլեր։ Ըսենք՝ չեմ ալ կրնար, քու խորունկ, անուշ աչքերուդ և քու ջենտլմեն կազմիդ ու շարժումներուդ հետ մրցիլը քիչ մը դժվար խնդիր է։

— Իրա՞վ, այդպես ջենտլմե՞ն, կկարծե՞ս,— խնդացի ես հեգնորեն, բայց կգիտակցեի, որ ընկերոջս կարծիքը շատ հաճելի էր ինծի։

— Չէ՛, ճաշակ ունիս, եղբա՛յր, տաք աղջիկ է, Սիրաքի լուսնկային չի նմանիր,— վրա բերավ մեր նախորդ օրվան խոսակցությունը ակնարկելով։

Եվ հազիվ նախադասությունը ավարտած, շտկվեցավ ձիուն վրա և իր բարձր, լեռնցիի ձայնով հնչեցուց հայտնի երգին վերջին կտորը.

«Բայց իմ սիրածը, սրտիս ընտրածը հրեշտակի նման»։



Երգի վերջին հետ լռություն տիրեց։

Ընկերոջս գալը և մեր այս հանկարծական արշավանքին նորությունը պահ մը ստվերի մեջ էր առեր Վարդուհիին դեմքը. մեր այս հանդիպումը սթափեցուց ինծի։ Եվ ալ շարունակ աչքերուս դեմն էր իր ճեփ-ճերմակ կերպարանքը, իր լոգանքեն դժգունած այտերը և իր հանդիմանող սուր նայվածքը։ Շարունակ աչքերուս դեմն էր ալ անկե ետքը ամբողջ օրը, ինչ ալ որ խոսեինք, ինչ ալ որ պատահեր, ուր ալ որ նայեի։ Մեր գետակի խենթ ջուրերեն նոր դուրս եկած ու իր խոնավ մազերով այդ հմայիչ ճեփ-ճերմակ ոգին էր աչքերուս դեմը։

Արդեն խճուղին ձգած էինք և քիչ մը վերջը կողմնակի արահետով անտառ մտանք։ Արահետը հետզհետե նեղնալով բարակ կածանի մը վերածվեցավ, որ ծառերու բուներուն մեջեն դեղին նեղ ժապավենի մը պես կօձապտուտկեր։

Ծառերուն բուները հազարավոր սյուներու պես գետնեն վեր կսլանային՝ բռնելու համար ծաղկանկար կերպասի մը նման մեր գլխուն վրա փռվող կանանչությունը, որ արևուն ճառագայթները դուրսեն կասեղնագործեին։

Շուրջս զով էր, հոտավետ ու խորհրդավոր։ Աննշմարելի հովիկ մը ծառերուն ամենաբարձր ոստերուն հետ կխաղար, տերևներուն նրբին դող մը կուտար ու թռչունները ավելի կգրգռեր, որոնք կսիրերգեին ու կթևածեին իրենց փոքրիկներու օրրաններուն շուրջը։

Ձիերը շարքով իրարու ետևե կքալեին թափված տերևներու խշըրտուն գորգին վրայեն։ Առջևեն Միքեի եղբայրը՝ հրացանը պատրաստ, արջերե կզգուշանար, ետևես Միքեն կուգար նմանապես զենքը ձեռքը, ես մեջեն կերթայի իբրև պաշտպանյալ, թեև ես ալ հրացանս դրեր էի ծունկերուս։

Բավական ատեն բոլորովին լուռ էինք. անգամ մը ետիս դարձա. Միքեն գլուխը կախ երազոտ նայվածքը դամեր էր իմ ձիուս մեջքին։

— Գիտե՞ս ինչ կմտածեմ,— խոսեցավ հանկարծ։— Կերևակայեի, իբրև թե դու Սյունյաց իշխանին զավակն ես։

— Ի՞նչ։

— Համբերե՛։ Ասկե ալ ճիշտ հազար տարի առաջ։ Եվ այս հողերը, որ կկոխենք, այս անտառը ամբողջ Գուգարաց Բդեշխինն է, ուր զարկած են իր իշխանական փառավոր վրանները և ուր կանցընե ան իր ամառվան ջերմ օրերը հովասուն ձորին մեջ։

— Է՜, ետքը՞։ Դուն ալ վախնամ Գուգարաց Բդեշխն ես կամ անոր տղան։

— Ներեցե՛ք, ազնվափա՛յլ Սեպուհ, ես ժողովրդի զավակ եմ և իմ

ծագումիս չեմ դավաճաներ։ Ես ձեր խորհրդականն եմ ու ձեր հոր գործավարը։ Ձեր հայրը իմ խնամքներուս է հանձնած ձեր անձը, ատոր համար է, որ աչքս հեռացնել չեմ կրնար ձեր գլխու այդ ոսկեծոպ փաթույթեն, ձեր այդ զինվորական ոսկիերիզ վարապանակեն և Սյունյաց մեծ նախարարության զինադրոշմը կրող ձեր զենքերեն։

— Պրավո՛, հիանալի՛ է,— պոռացի ես զարմացած։

— Է՜, կյանքը ատ կըլլար,— բացականչեց թամբին վրա շտկվելով։— Ենթադրենք, որ քեզի հետ կերթայինք Բդեշխին մոտ դաշինքի մը, նիզակակցության մը, որևէ շատ կարևոր քաղաքական ծրագրով մը։ Գիտե՞ս ինչ ըսել է, երբ մարդ տերն է իր հողին, երբ կպաշտպանե իր զենքով, կապրի ու կկռվի իր երկրին համար ու կաշխատի իր տերության համար։ Պետք է ապրած ըլլայինք հազար տարի մը առաջ։

— Այո՛,— ըսի։— Մեծ առավելություն է և հոգեկան մեծ բարձրացում և խոր վայելք անշո՛ւշտ, երբ մարդ տերն է իր երկրին, իր ժողովուրդին, իր գոյության ու բախտին, ուրկե զուրկ ենք մենք։

Ու երկուքս ալ լռեցինք, կածանը սկսավ վերելք դառնալ, և ձիերուն քալվածքը դժվարացավ։

Միտքս պահ մը հետևեցավ ընկերոջս ներշնչած մտքերուն ու պատկերներուն, բայց շուտով Վարդուհիին դեմքը նորեն բռնեց հոգիս։ Վայրկյան մը միտքս ինկած էր այդ երկու նյութերուն մեջ տարուբեր և հանկարծ երկուքը ձուլեց իրարու։

Սկսա ամբողջ վեպ մը հյուսել մտքիս մեջ. կխոսեի, կնկարագրեի զանգիս տակ բոլորովին ինքզինքս մոռցած։ Կշարունակեի Միքեի ծայր տված պատմությունը։ Իբրև թե իմ պահապան ու խորհրդական ընկերս էր, որ կըսեր ինծի, այսինքն Սյունյաց Սեպուհին.

«Այո՛, աչքս վրադ է, ազնի՛վ Սեպուհ։ Ով փառք Աստծու, ահա՜ երկու շաբաթ է կճամփորդենք խորունկ ձորերեն, սովերախիտ անտառներեն, անցանք գետեր ու լեռներ և ձեր ազնվափայլությունը գարնան առավոտի մը պես զվարթ է, լեռնային օդերուն պես առողջ և մեր հեծած արաբական նժույգներուն պես կայտառ։ Միայն թախծության այն թեթև ամպը, որ քու դեմքի զվարթության վրա աղոտ շուք մը կնետե, գիտե՛մ, անհամբերությունդ է։ Ով կատարելապես իրավունք ունի. Գուգարաց օրիորդին նման աղջիկ ես տեսած չեմ կյանքիս մեջ, աննման է քու օրիորդ Վարդուհին, ի՜նչ բարդիի հասակ, ի՜նչ Աստղկան աչքեր, ի՜նչ ծիրկաթի ճակատ, հապա իր ուսերուն թափված կարճ մազերը, որուն վրա առավոտյան ցողը մարգրիտ կշարե, երբ նաժիշտներուն հետ արևուն ծագումեն առաջ կելլե պտույտի քու նշանածը»։



Հանկարծ ահագին գամբռներու կատաղի խումբ մը սոսկալի հաչոցով անրջանքս ընդհատեց։

— Իջե՛ք ձիերեն ու ետիս անցե՛ք,— հրամայեց Միքեի եղբայրը՝ իր ձիուն վրայեն ծառի մը տակ ցատկելով։

Հետևեցանք իր օրինակին։

Ետևնիս ծառեր էին, երկու կողքերնիս ձիերուն սմբակները, ես ու Միքեն ծառի մը կռթնած, առջևնիս Միքեի եղբայրն էր, որ հրացանը անդադար կես շրջանաձև պտտցնելով շուները պատշաճ հեռավորության վրա կենալու կհարկադրեր։

Բարեբախտաբար պաշարումը երկար չտևեց։ Երևցավ հովիվը. երկարահասակ, լայնաթիկունք հուժկու մարդ մը, գլուխը ահագին ոչխարի մորթե փափախ մը դրած, լայն դաշույնով մը և կեռ կոթով ատրրճանակով մը զինված, ձեռքն ալ հաստ ճոկան մը։

Քշեց շները և առաջնորդեց մեզի քիչ մը հեռուն հոտին քովը։

Ծառերը իրարմե հեռանալով փոքր հրապարակ մը բացեր էին, ուր հոտը խռնած իրար գլխու կորոճար։

Հովիվը հրավիրեց մեզի իր հաստաբուն ծառին տակը, ուր կուժ մը ջուր, քանի մը կտոր հաց և մեկ-երկու լաթի կտոր կար։

Նստեցանք, հովիվն ալ, ու իր ոտքերուն քովն ալ իր շները։ Միքեի եղբայրը քիչ մը խոսեցավ հետը, մինչև որ հոգնություննիս առինք, հովիվը կաթ կթեց ու հրամցուց։ Տերը նորեն զգաց, շնորհակալություն հայտնեցինք, հեծանք ու արագ հեռացանք։

— Պարո՛ն Երվանդ, նկատեցի՞ք, որ հովիվին աչքը ձեռքիդ հրացանին վրա մնաց,— ըսավ Միքեի եղբայրը,— շունշանորդի՜ն, վախցա որ ուզե։

— Եթե ուզե՞ր։

— Շենք-շնորհք կռվի պիտի բռնվեինք։

— Ըսել է՝ եթե մոտը ընկեր մը ունենար՝ երեք թաս կաթի փոխարեն հրացանը վրա պիտի տայինք։

— Քիչ մը դժվար,— առարկեց հպարտությամբ։

Ճամփան սկսավ էջք դառնալ, և կես ժամ չանցած գյուղն էինք։

Տիրտերը մեզի մեծ պատիվով ընդունեց։

Միքեի հետ գացինք գյուղն ու շուրջը դիտելու, մինչև որ եղբայրը իր գործերը կարգադրեց և անմիջապես ետ ճամփա ինկանք քիչ մը ավելի երկար, բայց ապահով ճանապարհով։

Շատ ուշ հասանք Դիլիջան, գիշերով ու բերին ինծի մինչև տուն։ Իջա ձիեն սրունքներս թամբեն ցաված, հոգնած ու շիտակ անկողին։

### Հուլիս 23

Մինչև նախաճաշիկ գրի առի նախորդ էջերը։ Նախաճաշիկեն անմիջապես ետքը հուզումս զսպել ջանալով և տեսակ մը անորոշ ու տարօրինակ վախով սկսա բարձրանալ Շամիրյաններու սանդուղեն։

Երբ ինծի նշմարեցին՝ տիկինն ու պարոն նկարիչը կես-լուրջ, կես-կատակ բացականչություններ արձակեցին։ Միայն Վարդուհին էր լուռ՝ հեգնության նմանող ժպիտ մը շրթունքին։

— Այսպես, ուրեմն, առանց մեզի ոչինչ ըսելու՝ կերթաք փառավոր ձիարշավի,— գանգատելու ձև մը առավ պարոն նկարիչը։

— Այո՛, պզտիկ պտույտ մը ձիով,— համեստորեն փոքրացնել փորձեցի եղելությունը։

Հարցեր տվին, և ես ստիպված եղա ամփոփ պատմելու տեսածս ու կրած տպավորություններս։

Երբ զբաղվելու համար օրիորդին հետ իջանք պարտեզ, տեղավորվեցանք մեր բաղեղներուն ետևը ու առանձին մնացինք, նորեն հուզում մը պատեց ինծի, հուզում մը, որ կարծես կառաջանար հուզված ըլլալս հայտնի ընելու վախեն։

— Իսկ դուք ինչպե՞ս անցուցիք այս երկու օրը,— հարցուցի բնական հետաքրքրությամբ։

— Հիանալի՛,— պատասխանեց շատ անորոշ շեշտով մը։

— Ի՞նչ ըրիք, օրինակ։

— Օրինա՛կ, նախորդ օրը մինչև կեսօր սպասեցի ձեզի, կեսօրեն ետքն ալ հյուրեր ունեինք, որոնց բնավ չէի սպասեր։ Իսկ երեկ ալ աղվոր մը ձանձրացա միս-մենակ։ Գո՞հ եք,— հարցուց հեգնոտ ժպիտով մը։

— Ո՛չ,— ըսի ես կտրուկ ու սրտանց։— Դուք իրավունք չունիք ձանձրանալու, պետք է բանով մը զբաղվեիք։

— Ինչո՞վ կուզեք, որ զբաղվեի, ձեզի պես ես ընկերներ չունիմ, որ ինծի տանին պտույտի։

— Ձեզի ինչպե՞ս հասկնամ։ Կարծես կմեղադրեք ինծի ընկերոջս հետ երթալուս համար։

— Ո՛չ,— պատասխանեց շեշտելով և ավելցուց քմայնոտ ու կիսահանդիմանական խոսվածքով մը,— բայց իրողություն է, որ ես հիմա ձեր ընթերցումներեն դուրս ուրիշ ոչ մեկ բանով լրջորեն չեմ հետաքրքրվիր, ամբողջովին բռներ եք հոգիս ձեր աշխատանքով։

Շատ աղեկ կհասկնայի ինչ որ կըսեր և բախտավորութենեն կթըրթռար հոգիս։ Բայց բոլոր ուժովս սանձեր էի շրթունքներս, որոնք կա-



տաղի երիվարներու պես սանձերը փրցնել ու խոյանալ կտենչային ոտքի տակ տալով ամեն սահման, ամեն գծում, ամեն արգելք, մինչ ես կջանայի, որ կառքս դուրս չի գար սովորականեն պողոտայեն ու շարժվեր սովորական չափով ու ձևով։

— Աղե՛կ, կրնայիք կարդալ մեր վեպեն, օրինակ, հաջորդ գլուխը։

— Ո՛չ,— պատասխանեց նորեն շատ շեշտված և գլխու կտրուկ ժխտումով մը։

— Ինչո՞ւ,— զարմացա ես,— և այդպես խի՞ստ։

Իր պատասխանը շատ հստակ էր նորեն, թեև ան ալ կսանձեր իր երիվարները, որ սովորականի պողոտայեն դուրս չի գան.

— Հայերենը և՛ խոսիլը, և՛ ընթերցումը շատ դյուրին է. սիրելի ու գրավիչ, երբ դուք մոտս եք ու թևես բռնած կառաջնորդեք։ Առանց ձեզի, երբ ձեր խոսքն ու ձեր հոգին չեն գար ինծի օգնելու, շատ դժվար կդառնա այդ աշխատանքը և անհամ։ Մի՞թե չեք ըմբռներ։

— Կըմբռնեմ,— ըսի ես չըմբռնել ձևացնելով,— և քանի որ կըմբռնեմ՝ անցնինք անմիջապես աշխատանքի։

Եվ, այո՛, մեր շրթունքները, իրար դեմ խոյացող երկու զույգ երիվարներու նման, ամուր սանձված էին ու կքալեին թույլատրված պողոտայով ու թույլատրված քայլվածքով։

Ան կկարդար, ես կուղղեի, կլրացնեի, կամ կվերլուծեինք, կմեկնեինք, և խո՛սք և կատա՛կ, միայն չէինք համարձակիր շիտակ ու խորունկ իրարու աչքին մեջը նայելու։

Կզգայինք, որ շրթունքներու նման դյուրին չէ աչքերը սանձելը։ Անպիտան աչքերը շատ մերկ ու բաց կխոսին և բնավ ենթարկվիլ չեն ուզեր պայմանադրություններու ու քողարկումներու։

### Հուլիս 25

Երկու օր է՝ ճաշերեն ետքը կուգա Միքայելը, որ արդեն ծանոթացուցեր եմ Շամիրյաններուն և միասին պտույտի կելլենք։

Միքեն ու պարոն նկարիչը իրար գտան. մեկը անտաշ ու շիտակ ժողովրդի տղա մը, մյուսը խիստ նուրբ ճաշակի տեր ըլլալ ուզող գեղարվեստի մարդ մը։

Միքեն առանց երկար ձևականություններու սկսավ արդեն պարոն նկարչի նրբամտություններուն հակառակիլ, որուն նկարիչս ներողամիտ արհամարհանքով մը կպատասխանե ընդհանրապես։

Այսօր խոսքին թելը սիրո վրա անցավ ու սիրո տևականության։

— Սիրելի՛ բարեկամս,— կըսեր նկարիչը գործը գիտցողի մը հաստատ շեշտովը։— Սերը մարդուս համար այնքան անհրաժեշտ պետք մըն է, որքան հաց ուտելը։ Եվ որքան որ անհեթեթ է շարունակ միևնույն կերակուրը ուտելը, նույնքան ալ անհեթեթ է սիրո տևականությունը պահանջելը։ Ընդհակառակը, որքան շատ ուտելիք փոխես՝ այնքան օգտակար է և ախորժաբեր։

— Կչափազանցեք,— կպնդեր Միքեն։— Եթե շատ կուզեք սերը ուտելիքի հետ համեմատել, գոնե պտուղի հետ համեմատեցե՛ք. նախ որ սերը միայն պտուղի չափ անհրաժեշտություն է, երկրորդ ալ գոնե տարվան եղանակներուն հետ կփոխվի և ո՛չ ամեն օր։

Բոլորս սկսանք խնդալ։

— Իսկ ձեր կարծիքը ի՞նչ է,— դարձավ օրիորդը ինծի։

— Իմ կարծիքս դժբախտաբար հառաջադիմական չէ։ Ինծի համար սերը միակ ու ալ չիկրկնվող զգացում մըն է, այսինքն իսկական, լուրջ սերը, որովհետև մարդուս ամբողջ էությունը կգրկե ու ամբողջ կենսունակությունը կգրավե։ Եվ երբ տարիները կսահին, ու կսթափիս՝ կտեսնես, որ սիրածդ ալ, դուն ալ թոռմած եք արդեն, ծաղկի մը պես, որ տված է իր պտուղը և չորնալե զատ ուրիշ դեր չունի։

— Այն ատեն ո՞ւր կմնա մարդուս նրբությունն ու բարձրությունը, և ի՞նչ տարբերություն կունենա բույսերեն,— նկատեց պարոն նկարիչը հեգնոտ։

— Եվ ինչո՞ւ կկարծեք, որ անպատճառ տարբերություն մը պետք է ունենանք բույսերեն այդ հարցին մեջ,— վրա բերի ես։

— Սիրելիս, երկու տարի ետքը ձեզի ալ կտեսնեմ. դեռ շատ եք խակ,— պատասխանեց պարոն նկարիչը մարգարեական ու վերերեն եկող շեշտով մը, որ վրաս շատ գեշ ազդեց։

— Չըի մարգարեություն մըն է ձեր ըրածը,— ըսի ես գրեթե զայրացած։

Քիչ մը ետքը, որ Շամիրյաններու տան մոտեցանք՝ նկարիչը բարձրացավ իսկույն վեր ըստ իր սովորության։

Սանդուղներուն առջևը, երբ հրաժեշտ կառնեինք օրիորդեն ես ու Միքեն.

— Բայց դուք ձեր կարծիքը չհայտնեցիք,— ըսի իրեն։

— Կարծեմ հայտնի է ձեզի, որ ես ու եղբայրս գրեթե ո՛չ մեկ հարցի մեջ համակարծիք չենք իրար,— պատասխանեց օրիորդը չեղակի։

Սեղմեց մեր ձեռքերը ու սանդուղներեն բարձրացավ վեր։



— Ինծի նայե, աղջիկդ հիանալի է, բարով վայելես,— ըսավ Միքեն իր սովորական պարզությամբ, երբ առանձին մնացինք։

— Տափակ-տափակ մի խոսիր,— կատակի տվի ես։

— Չեմ ուզեր, գրպանս դի՛ր,— եղավ պատասխանը։

Հուլիս 30

Թեև մեր պարապմունքին ժամերը իրենց սովորական ընթացքով կսահին ըստ երևույթին, թեև մեր հարաբերությունը իր սովորական հոսանքով կշարունակվի կարծես, սակայն իրապես փոխված է շատ բան։

Երկուքս ալ կզգանք, որ կձգտինք իրարու, երկուքս ալ գիտենք փոխադարձաբար, որ ջերմ կապված ենք իրարու։ Բայց միայն գիտենք, ո՛չ իսկ բառ մը մեր գիտցածը արտահայտելու համար։

Աղջիկը երևի կսպասե, որ ես ծայրը բանամ։ Իսկ ես առաջ կկարծեի, թե հպարտությունն է լեզուս կապողը, կամաց-կամաց կըմբռնեմ, որ միայն ատով իմ բռնած դիրքս չի բացատրվիր։ Գուցե խորքին մեջ իր զգացումներուն վրա դեռ բացարձակ վստահ չեմ, կամ կզգուշանամ գուցե ծիծաղելի քայլ մը առնելե, կարելի է պարզապես առաջին խոստովանության դժվարությունն է սակայ։

Այս բոլորեն դուրս լռությանս մեջ կարծես տարօրինակ վախ մըն ալ կա, անորոշ և տարտամ վախ մը թանկագին բանե մը զրկվելու, անփոխարինելի բան մը կորսնցնելու։ Բյուրեղե նուրբ ու թանկարժեք գեղարվեստական անոթի մը դպչելու երկյուղը, որ միգուցե կոտրվի։

Եվ վերջապես, իրավ է, այս ապրումներուն մեջ դեռ շատ եմ երեխա։

Այսօրվան դեպքը որքան ծիծաղելի, այնքան ալ բնորոշ է։

Իրիկվան դեմ մեր երկու ընտանիքները բոլորս միասին իջած էինք գետի ափը, բանջարանոցները։

Հրաշալի իրիկուն մը։ Բա՛ց, սրտի լայնացում տվող երկինք մը, ժպտո՛ւն, ամենուս դեմքին ժպիտ նվիրող վերջալույս մը վարդե ամպերու ցիրցան դեզերուն մեջեն։

Ուրախ էինք ամենքս, բայց Վարդուհիի խայտուն բերկրանքին չափ չկար։ Ըսենք՝ ամենքս ալ կպոռայինք, կվազեինք, իրարու ձեռքե պտուղ կխլեինք, ձայներնիս ու ծիծաղնիս լեցուցեր էր ձորը։

Մութ էր արդեն, երբ դեպի տուն ճամփա ինկանք։ Ես ու Վարդուհին ետ մնացինք ամենքեն, կարծես թե պատահմամբ եղավ։

Հազիվ քանի մը քայլ ըրեր էինք միասին ձորն ի վեր, երբ Վարդուհին խոր շունչ մը առավ ու կեցավ.

— Ա՛, ինչպե՞ս հոգնեցա։

— Շատ վազեցինք, հանգիստ ելե՛ք,— խորհուրդ տվի ես իմաստուն կերպով։

Լռեց, մեկ մըն ալ հանկարծ նորեն կանգ առավ շիփ-շիտակ դեմս ու աչքերուս խորքը նայելով ըսավ կտրուկ.

— Գիտե՞ք, պարոն Երվանդ, դուք կին էակե մը բնավ պիտի չըստիպվիք։

— Մի՞թե,— բացականչեցի ես ապշահար այս անակնկալ հայտնության դեմ,— և ինչո՞ւ այդպես կենթադրեք։

— Մասնավոր ենթադրության կարիք չկա, որովհետև կնոջ մը հաճոյանալու ամենևին փույթ չունիք։ Այսքան ատեն է միասին ենք, պարզ հաճոյախոսություն մը, տարրական հաճոյակատարություն մը չեմ տեսած ձեզմե, անգամ մը թևերնիդ չառաջարկեցիք ինծի, թեև քանի մը անգամ հայտնած եմ դիտմամբ հոգնած ըլլալս։

— Ներող եղեք, կընդունիմ անքաղաքավարությունս, հանցանքը միամտությանս է, չեմ հասկցած, որ ձեր «հոգնած եմ» ըսելը, «թևերնիդ տվեք» ըսել է։

— Նախ ես ատիկա հիշեցի օրինակի համար, բայց արդեն ինքնին այդ չհասկնալնիդ նշան է, թե ինչ աստիճան անփույթ եք կնոջ հանդեպ։

— Եվ հետևաբար կկարծեք, թե սիրո մեջ երբեք հաջողություն պիտի չունենա՞մ,— ըսի ես տխուր շեշտով մը։

— Եթե չփոխվիք,— ավելցուց ժպտուն։

— Եթե ա՛յդ է պայմանը՝ պետք է որ փոխվիմ, նույնիսկ այս վայրկյանես։ Օրիորդ, կհաճի՞ք թևս ընդունիլ,— ըսի իր առջևը խորունկ խոնարհություն մը ընելով։

— Անշո՛ւշտ, սիրո՛վ,— ըսավ բարձր խնդուքով և մինչև արմունկը մերկ դաստակը կամաց մը թևս անցուց։

Բարակ շապիկ մը միայն մեր բազուկները իրարմե կզատեր. խելագարի պես սեղմել կուզեի կրծքիս ինծի հանձնված այդ թևը ու մեծ ճիգով կզսպեի թևս, որ սկսավ դողալ։

Եվ ան զգաց ինհարկե թևիս դողը և իր խոսքն ու ծիծաղը անմիջապես կտրեցավ։

Լուռ քանի մը քայլ ըրինք, աղջիկը մեղմ ու զգուշությամբ ետ քաշեց ձեռքը թևես ու ըսավ.

— Ձեզի նեղել չեմ ուզեր, մնացեք հավատարիմ ձեր բնավորության, դուք նման չեք ուրիշներուն։

— Անշուշտ կգերադասեիք, որ նման ըլլայի ուրիշներուն։



— Շատ կսխալիք, եթե այդպես կկարծեք,— եղավ իր կտրուկ պատասխանը, որ ինծի անչափ դուր եկավ։

Քայլերնիս արագացուցինք, հասանք ու միացանք խումբին։

Օգոստոս 6

Մեր ընթերցանության ժամերը այլևս դադրած են լուրջ աշխատանք ըլլալե։ Ինկապես գիրքը չէ հիմա մեզի իրար բերողը, այլ ներքին բուռն պահանջ մը իրարու հետ ըլլալու, իրարու քով ըլլալու։ Ատիկա իսկ այլևս հերիք չի գար. մեր ձեռքերը ծարավ ունին իրար դպած ըլլալու, իրար բռնելու բազմատեսակ պատրվակներով խոսակցության ընթացքին։

Նախորդ օրը սեղանին վրայեն վար ձգեց իր հովհարը, կարծեմ պատահմամբ եղավ. ծռեցա, որ վերցնեմ, ինքն ալ ծռեցավ և մեր գլուխները եկան իրարու, հարու տվող երկու այծերու կնմանեինք։ Իր մազերը թափեր էին ճակտիս, քունքերուս ու երեսներուս վրա, ուր կգազերը թափեր էին... 

Երեկ իրիկուն ալ մորը հետ երեքով քիչ մը քալելու ելանք իրենց տան առջևը։ Կխոսակցեինք շատ կարգին, խոսքի միջոցին բան մը նըշելու համար հանեցի ծոցիս փոքրիկ տետրակը, խլեց ձեռքես ու փախավ՝ սպառնալով բոլոր միջինը կարդալ։ Ինկա ետևեն, քանի՜ անգամ բռնեցի, քանի՜ անգամ ազատվեցավ ու փախավ։ Մայրը կխնդար ու կհանդիմաներ իր աղջիկը, թե ամոթ է, երեխա չէ այլևս, ահագին աղջիկ է։ Իսկ իմ սիրտս ուրախութենե կթփրտար, երբ իր մարմնին ու կրծքին հպումը կզգայի կրծքիս ու թևերուս վրա։

Այսօր ալ երբ իրենց սանդուղներեն բարձրացա՝ դեմս վազեց խընդալով, թե «մեր դասարանը ջրհեղեղի տակ է». գիշերը տան տերը եկած և առատորեն ջրած էր ամբողջ պարտեզը։

— Եկե՛ք պատշգամբ, հոն ալ պարտեզի պես է և առանձի՛ն,— ավելցուց իսկույն խորհրդավոր ժպիտով մը։

Եվ իր սովորական հանկարծ շարժումովը թեթև մը քաշեց թևես, հանեց պատշգամ, առաջնորդեց դեպի մեծ բազկաթոռը և ինքն ալ նետվեցավ դեմս օրրան աթոռին, սկսավ խոսիլ ու ճոճվիլ, իբրև նախաբան մեր աշխատանքին։

Պատշգամը, շիտակ է, պարտեզի պես էր. երկու խոշոր կաղնի իրենց ծերացած ճյուղերը կտարածեին անոր վրա, իսկ պատշգամին երեք եզերքները շարված էին մեծ ու փոքր թաղարներու մեջ ամեն տեսակի

ծաղիկներ, որոնցմէ գինովցնող հոտ մը կծաւալէր արևի հետզհետէ զորացող շոյանքին տակ։

Վարդուհին կարդալ սկսաւ, բայց պարզ էր, որ մտքերուն չէր հետևիր, ես ալ չէի հետևիր։ Բացի մեր սովորական ներքին խանգարումէն, օդն ալ շատ ծանր էր այսօր, օգոստոսի բացառիկ տաք օրերէն մէկը։

— Չէ՛, ալ չեմ կրնար,— ընդհատեց հանկարծ ու գիրքը ձգեց ծունկերուն։

— Ընդհատեցէ՛ք,— ըսի,— կխոսի՛նք։

Գիրքը իսկույն նետեց քովի աթոռին վրա։ Գլուխը ետ ձգեց, աչքերը գոցեց և սկսաւ ճոճվիլ։ Մազերը երկու կողմեն առաջ սահեցան ու ծփուն շրջանակի մը մեջ առին իր սիրելի դեմքը։ Ես հափշտակված կդիտեի, երբ հանկարծ աչքերը բացաւ ու գամեց իմ աչքերուս։

Ի՞նչ կար նայվածքիս մեջ՝ չգիտեմ, բայց տեսա, որ հանկարծ սաստիկ կարմրեցաւ ու վեր թռաւ իր օրորուն աթոռեն։ Կեցաւ դեմս ու խենթ-խենթ բաներ մը ըսինք իրարու. գնաց պատշգամին եզերքը, ծաղիկ մը փրցուց ու սկսաւ ջղաձգորեն փեթըռտել։

— Տեսե՛ք, ի՞նչ անուշ կհոտի,— բացականչեց, եկաւ նորեն ինծի և իր ճմլռթած մեխակին թերթիկները ափով սեղմեց դեմքիս։ Շրթունքներս եկան իր մատներուն։

— Հատ մը մեխակ կուզե՞ք,— հարցուց հարբած ժպիտով մը։

— Այո։ Քաղվա՛ծ ձեր այս մատներով։

Թաղարներուն վրա քիչ մը փնտրեց. կընտրեր։ Փրցուց ու նետվեցաւ դեպի ինծի, ձեռքս մեկնեցի, որ առնեմ։

— Ոչ,— ըսաւ,— ե՛ս պիտի ձեր կուրծքը անցընեմ։

— Խնդրե՛մ։

Մեկ շարժումով մը նստեցաւ իմ բազկաթոռիս բազուկին վրա, ծռեցաւ վրաս ու ծաղիկը տարաւ օձիքիս օղակին։ Օղակը կարված էր, սկսաւ աշխատիլ կերպ մը ծաղիկը անցընելու, և այդ ճիգերուն մեջ այնքան մոտ եկաւ, որ իր կուրծքը հարեցաւ վզիս ու դեմքիս։ Կզգայի իր շնչելը արագ ու անկանոն։ Իսկ իմ շունչիս օդը հանկարծ կարծես պակսեցաւ։ Եվ որպեսզի հանկարծ իր մեջքը չի գրկեմ՝ երկու ձեռքով ամուր բռնեցի իր երկու թևերը ուսերուն մոտիկ ու կամաց մը ելա ոտքի։ Եվ ըսի.

— Անչա՜փ, անչա՜փ շնորհակալ եմ ձեր այս սրտագին նվերին համար։ Եվ կարծեմ այս տաք ու խեղդող օդին տակ այլևս ոչինչ ընել չենք կրնար, լավ է երթամ տուն։

— Երթա՞լ կուզեք,— բացականչեց աղջիկը մեծ զարմանքով։

— Կարծեմ ատ է շիտակը, բայց հետս կտանիմ բախտիս ծաղի-



կը,— ըսի խնդալով, թեթև մը շոյեցի կրծքիս կարմրավուն մեխակը ու ձեռքս մեկնեցի հրաժեշտի։

Վարդուհին ապշած ու վարանքով, գրեթե մեքենաբար ձեռքը տվավ ինծի, որ ես ամուր սեղմեցի և արագ վազեցի սանդուղներեն վար։

Շիտակ տուն, շիտակ սենյակս և նետվեցա անկողնիս վրա քիթ ու բերնիս։

«Ինչո՞ւ ձգեցի, ինչո՞ւ եկա, ինչո՞ւ չգրկեցի, ինչո՞ւ վշտացուցի աղջիկը», կկրկնեի անդադար մտքիս մեջ։

Սա ի՞նչ հիմար ու անիմաստ բան էր ըրածս, և՛ կոպիտ, և՛ անբընական։ Հիմա ի՞նչ պիտի մտածե, ի՞նչ պիտի զգա խեղճ աղջիկը։

Հոգեկան խառնաշփոթ ու խիստ անախորժ վիճակի մը մեջ կդառնային մտքերս, ինքս ինծի չհասկնալով, ինքս ինծի հետ անհաշտ, երբ ինծի այնպես թվեցաւ, թե սենյակիս դուռը կզարնեն։

Հազիվ գլուխս դժգոհությամբ բարձրացուցած էի բարձես, որ դուռը բացվեցաւ ու սեմին վրա տնկվեցաւ Միքեն։

— Խեր ըլլա, ի՞նչ է պատահեր,— հարցուց զարմանքով և երկար և ուշադիր դեմքս դիտելով։— Չխոսի՞ս, չըլլա՞ թե աղջիկդ ճամփու դրաւ քեզի։ Եթե բոլոր սիրահարվածներու դեմքը այդ տեսակ է, լավ է՝ կյանքիս մեջ բնավ չսիրահարվեմ։

Զգացի, որ ճշմարտությունը գուշակելու շատ մոտերը կպտտկի։ Եվ նեղ վայրկյաններուն հատուկ ճարպկությամբ մը իսկույն դերս փոխեցի։

Աշխույժ վեր ցատկեցի, նստեցա անկողնիս եզերքին ու ըսի.

— Սիրահարիլը սքանչելի բան է եղեր, Միքե, երդում կընեմ, որ սիրահարիմ պիտի և քեզի ալ նույնը կհանձնարարեմ։

— Ի՞նչ ըսել է «պիտի». միայն «պիտի»-ի մը համար կարելի՞ է այդ աստիճան ապուշ դեմք մը առնել։

— Ապուշդ քեզի՛ պահե ու ականջ դի՛ր։ Շիտակը ինծի համար ալ տարօրինակ բան մըն էր հետս պատահածը։ Քիչ մը առաջ այս խեղդող տաքեն նեղված՝ պառկեր էի ու խենթ-խելոք կմտածեի, հանկարծ միտքս ինկավ քու անցյալ օրվան պատմական երևակայությունը, կըհիշե՞ս անտառին մեջ որ ըսիր։

— Աղե՛կ, ե՞տքը։

— Ետքը միտքս սկսաւ այդ պատմությունը շարունակել. կամաց-կամաց ոգևորվեցա՝ դարձավ կատարյալ վեպ. իբրև թե ես Սյունյաց Սեպուհս Գուգարաց օրիորդի նշանածն եմ, և քեզի հետ նշանածիս այց կերթամ Բդեշխին ամառանոցը։

— Է՛-է՛,— երկարեց Միքեն իր ձայնը։

— Սկսա երևակայել ինչպես մեզի կդիմավորեն և ինչպես վերջը կխոսակցինք Սյունյաց օրիորդին հետ։ Մնացինք մինակ ես ու ինքը։ Թաղարներով, ծաղիկներով շրջապատված տեղ մըն էր, պատշգամի նըման բան մը։ Օրիորդը ինծի համար թաշկինակի պես բան մըն էր ասեղնագործած, որ ինքը իր ձեռքով ուզեց վիզս անցընե, այնքան մոտեցավ, որ կլսեի սրտին զարկերը իմինիս մոտիկ։

— Է՜-է՜.— ըրավ Միքեն նորեն և՛ հեգնոտ, և՛ ծիծաղով։

— Ալ ի՞նչ «է՜-է՜». Թևերս բարձրացուցի, որ իր անձնատուր կուրծքը բազուկներուս մեջ շղթայեմ, դուռը զարկին. դո՛ւն էիր։

— Վա՜յ, շունշանորդի՛, ի՞նչ գեշ տեղն եմ հասեր։ Հիմա կհասկնամ՝ թե ինչու այնպես չարացած երեսս կնայեիր։ Կուզես՝ ես երթամ, ու դուն նորեն շարունակե, միայն գիտցիր՝ ինչե որ պիտի զրկվիս։ Եղբայրս պատվական գինի է ճարեր, մայրիկս ալ այսօր եփեր է քյուֆթե, իրիկվան դեմ ալ ձիերով աղվոր պտույտ մը։ Ընտրե. երազական Սյունյաց օրիորդի համբո՞ւյրը կուզես, թե ընտիր գինի, փառավոր քյուֆթե և աշխույժ ձի մը։

— Ընտրությունը դժվար է, բայց...— ըսի ես գլխարկս առնելով։

— Հա՛, կտեսնեմ, դեռ բոլորովին չես հիմարացեր։ Մա՜րշ։

Խենթ օր մը անցուցի։ Հոգեկան մշտական ծփում մը ներսը ծածուկ, բախտավոր ու շոյող, կեղծելու անհրաժեշտություն, ուրախ ու անփույթ երևնալու ճիգեր, գինի, հարկինք, խոսք ու կատակ, և միևնույն ժամանակ խորքեն դժգոհություն մը ինքս ինծի դեմ։

Հոգեկան այս երկվությունը վերջ գտավ միայն իրիկվան դեմ, երբ Միքեի հետ հեծանք ձիերը, և ձիերը չափ առին։

Զարմանալի կերպով հանկարծ զգացում մը մեջս խուժեց, հպարտ ինքնագիտակցություն մը, և իսկույն ինկավ ինքս իմ վարմունքիս դեմ ունեցած անհաշտ տրամադրությունս։ Զգացի՝ որ ուրախ էի Վարդուհիի համբույրին ու ձգողությանը դեռ դիմադրել կարողանալուս համար և ըմբռնեցի, որ այդ բոլորը իմաստ ուներ. կուզեի, որ տևեր իմ այս հոգեկան վիճակս, տևեր ու աճեր զգացումներուս այս խայտանքը։ Ամեն դիմադրություն, ամեն սանձում կբազմապատկեր մեր մեջ եղած լարումը։ Եվ եզրակացուցի, որ ճիշտ ատոր համար էր անշուշտ, որ երկուքս ալ կլռեինք անլռելին ու կզսպեինք անզսպելին։

Բայց և կհասկնայի, որ հասած էինք հնարավոր սահմանը. այսօրվան փորձը կըսեր ինծի, որ իր քովը և իրեն հետ առանձին այլևս անկարելի էր աչքակապուկ խաղալը, մեր հուզումը կհորդեր, և ի՛ր, և ի՛մ։

Ես որ ձիս խթանած էի ու ինկեր էի առաջ, հանկարծ սանձերը քաշեցի և թողի, որ Միքեն հավասարի ինծի։ Հազիվ էին մեր ձիերը իրարու զույգ եկեր, որ դարձա ընկերոջս և առաջարկեցի՝ հաջորդ օրը առտուն կանուխ երթանք որսի շրջակա անտառները՝ ինչպես արդեն քանի մը անգամ խոսած ու ծրագրած էինք իրեն հետ, բայց հետաձգած էինք միշտ ու չէինք իրագործած։



Միքեն իսկույն համաձայնեցավ, քիչ մը մտածեց և հարցը դրավ ավելի լուրջ հողի վրա։ Երկու ժամվան չափ Դիլիջանեն հեռու Աղստաֆայի ճամփուն վրա շատ փոքր գյուղի մը մեջ կապրեր իր մորքուրը. վաղը կերթանք ու գիշեր կմնանք հոն, մորքուրին երեք տղայքը, մանավանդ միջնակը, հայտնի որսորդ է եղած, հաջորդ օրը անոնց հետ միասին կելլենք որսի և իրիկունը կվերադառնանք տուն։

Այս ծրագրի մանրամասնությունները մշակելով, ձիերուն գլուխները դարձուցինք դեպի Դիլիջան հանգիստ քալվածքով մը։

Եվ հիմա այս տողերը որ կգրեմ՝ մինակ ու սենյակիս լամպին տակ՝ կարծես թե ըրածիս քիչ մը զղջացած եմ։ Երկու օր ամբողջ Վարդուհին չտեսնելը չափազանց դժվար է արդեն. այլև կմեղքնամ Վարդուհիս, այսօրվան իմ նշանավոր փախուստես ետքը խեղճը հիմա ի՞նչ պիտի զգա և ի՞նչ պիտի մտածե։

Բայց այլևս ետ քաշվիլ չեմ կրնար և չեմ ուզեր, հոսանքը կքշե ինծի, թո՛ղ քշե։ Միայն որոշեցի, որ առտուն երկու սրտանց տող կգրեմ իրեն ու ներողություն կխնդրեմ, թե հրավիրված եմ որսի։

Օգոստոս 10

Նոր վերադարձա տուն և ուշ գիշերով։ Հորեղբորս կինը սկսած էր անհանգստանալ. ինծի կսպասեր երեկ իրիկուն, ինչպես Միքեի հետ մեր դիտավորությունն էր։ Բայց Միքեի մորքուրն ու տղաքը լսել անգամ չուզեցին ու պահեցին օր մըն ալ։

Աղվոր ալ քույր մը ունին։ Ամեն անգամ, որ աղջկան խորունկ աչքերուն կնայեի՝ սիրտս կսեղմվեր. անոր աչքերուն մեջ Վարդուհիիս հոգին կկարդայի, որուն կարոտը կայրե հոգիս։

Այսօր երեք օր է չեմ տեսած Վարդուհին, և արդեն գինովի պես բան մըն էի այս երեք օրը. ֆիզիկական հոգնության մեջ խեղդել կջանայի զգացումներս և խոսք ու աղմուկի և նոր տպավորություններու տակ մոռացում կփնտրեի։

Երեկ առտու և այս առտու հրացաններն առած ինկանք անտառին խորքը. միջնակ տղան իրավ որ բավական թիվով թռչուն զարկավ և՛ իր, և՛ մեր փոխարեն, զարմանալի նշան առնել գիտե, իսկ ես իսկապես

Նշան առնելու վարժություններ կընեի, քան՝ որս։ Այս որս ըսվածին մեջ ինծի հետաքրքրողը խելագար վազվզուքն է անտառին մեջ, իբրև թե մեծ բանի վրա ես։ Մարդ չի նայիր ժայռ, փոս, ջուր, ծառ, չորցած ճյուղերը ձեռքերդ կճանկռտեն, մացառներուն փուշը ծոծրակդ կճանկե, երբ արագ տակովն անցնիլ կփորձես, ոտքդ տապալված ծառերու կուգա և ջրերու մեջ կճողփես շտապումիդ ատեն։ Բայց ո՞վ է ուշադրություն ընողը։ Այդ միշտ անհանգիստ բանի մը որոնումն է հետաքրքիրը. թե չէ ինքնին շատ անսիրտ ու վայրենի բան մըն է բոլորովին ավելորդ տեղը խեղճ կենդանիները սպաննելը։ Երբեմն մեջերնին այնքա՜ն գեղեցիկները կան և այնքա՜ն մարդկային նայվածք ունին, երբ ինկած են վիրավոր ու մահամերձ։

Ընկերներուս ծաղրին չենթարկվելու համար այս բոլորը իհարկե ոչ ոքի չէի ըսեր։ Արդեն առանց ատոր ալ բավական ենթակա էի իրենց կատակներուն, քանի որ ոչինչ չէի զարկած երկու օրվան ընթացքին։ Եթե ըսեի, որ զարնել ալ արդեն չէի ուզեր՝ վրաս բոլորովին պիտի խնդային։

Շատ ավելի խոր հաճույք կպատճառեր ինծի, երբ իրիկունները արևին թեքվելեն ետքը չորսով կելլեինք ձիարշավի. մեծ եղբայրը գալ չէր կրնար։ Ձիու սերը կզգամ, որ ունիմ և հիմա կհյուսվի մեջս կնոջ սիրո հետ։

Երբ ձին կսլանա, երբ հովը ականջիս տակ դյուցազնական խոսքեր կսուլե, հագուստներս կուռեցնե և ձիուն բաշը օդին կուտա, երբ ես ձիուս մեջքին փակած, հակած դեպի գլուխը, մրրիկի պես կխոյանամ, անսովոր ու դժվար արտահայտելի խտիտ մը կզգամ մեջս թե՛ մարմնական, թե՛ հոգեկան, ու կարթննան մեջս լեռնցի մարդու բնազդներ, ինծի այնպես կթվի, թե Վարդուհին է գիրկս, որ կրծքիս սեղմած հեռու, հեռու կփախցնեմ։

— Տղա՛, քիչ կամաց,— կպոռա Միքեն ետևես։

Իսկ այսօր քանի կմոտենայինք Դիլիջանին, այնքան անհամբերություն կաճեր հոգիիս մեջ, թեև մեր ձիերը շատ հանգիստ կքալեին։ Նախ փոքրիկ հույս մը ունեի, որ հասնելուս պես կրնայի վայրկյան մը Ծամիրյաններուն հանդիպել ու Վարդուհին տեսնել։ Բայց շատ ուշ հասանք։ Միքեեն զատվելես ետքը, երբ տուն կուղղվեի, ժամը տասը անցած էր արդեն։ Եվ Վարդուհիենց ամառանոցը մթության ու ծառերուն մեջ քուն մտած ստվեր մըն էր միայն։

Երբ քովեն կանցնեի ծանր քայլերով՝ հոգիս կզգար, թե ինչքան մոտիկ եմ իրեն. ան կարելի է քունի մեջ էր արդեն, գուցե երազներու մեջ,



գուցե արթուն էր ու ինծի կերազեր, գուցե ան ալ կզգար մոտիկությունս։

Գիշեր բարի, աղջի՛կս, ես ալ գրիչս վար դնեմ, ելլեմ ու պառկիմ։

### Օգոստոս 11

Առտուն արթնցա շատ կանուխ։ Ու չգիտեի ի՞նչ ընեմ, որ ժամանակը անցնի. ժամացույցիս սլաքն ալ կարծես դիտմամբ տեղեն չէր երերար։

Շուտ-շուտ ծառերու կանանչության մեջեն երևցող Վարդուհիենց տան կարմիր կտուրին կնայեի, կարծես անկե կուզեի ճմլող կարոտս առնեմ։

Հազիվ ժամացույցիս սլաքը իննին մոտենալու վրա էր, որ ալ չըհամբերեցի. քիչ մը շտկեցի վրաս ու նետվեցա Շամիրյաններուն կողմը, բայց երբ տանը մոտեցա, դիտմամբ սկսա ավելի ծանր քալել, որ շատ շտապելս աչքի չինա։

Պատշգամը մարդ չկար, մտա սրահը՝ նորեն մարդ չկար, խոհանոցի կողմը կարծես շարժում կար։

— Ո՞վ է,— ձայն տվավ տիկինը գոգնոց մը մեջքը կապած և երկար շերեփ մը ձեռքը խոհանոցեն դուրս գալով։

— Բարև՛ ձեզի, տիկի՛ն, աս ո՞ւր են, ձեզի մինա՞կ են թողեր, ի՞նչ է։

— Այո՛, բոլորովին մինակ։ Երիտասարդները փիքնիկ կազմակերպեցին, քանի մը ընտանիք միասին։ Այդքան հեռուները ես չեմ ուզեր. քալելը դժվար է, և վերջապես պիտի պտտին, պիտի խաղան, պիտի պարեն, թող անոնք զվարճանան։ Ա՛յ, ես ալ մտածեցի մորիի անուշ եփեմ, աս ալ իմ փիքնիկը,— եզրակացուց դառն կատակով մը։— Հրամմեցե՛ք ներս,— ավելցուց իբրև քաղաքավարություն։

— Ո՛չ, շնորհակալ եմ, ինչո՞ւ խանգարեմ ձեզի, առայժմ ցտեսություն։

Դարձա ու ծանր-ծանր սկսա իջնել սանդուղներեն. զարմանալի զգացում մը կար մեջս, կարծես տիկինը իր անուշոտ շերեփը զարկած ըլլար քիթ ու բերնիս։ Իմ եռացող անհամբերությունս և ճմլող քնքուշ կարոտս զարնվեր էին բոլորովին անակնկալ կերպով կոշտ ու անախորժ բանի մը։

«Պիտի խաղան, պիտի պտտին, պիտի պարեն»։ Այո՛, Վարդուհին հիմա ուրիշներու հետ էր. կխաղար, կպտտեր ու կպարեր երիտասարդներու հետ, հիմա ան կպարեր ուրիշներու թևերուն մեջ։ Վարդուհին խոս-

քի մեջ ըսած էր ինծի արդեն, որ պարելը շատ կսիրե, ինչպես և աղմուկ-վազվզուքը և սալոնական խաղերը։

Հապա ի՞նչ։ Որովհետև կսիրե ինծի՝ փոխե՞ պիտի իր բնավորությունը, իր զվարճությունները, որովհետև կսիրե ինծի՝ ալ ուրիշներու հետ պիտի չըլլա՞։

Ասոնք բոլորը հիմար մտածումներ են իհարկե։ Ճշմարտությունն ան է, որ այս չարաբաստիկ փիքնիկը շատ ձախորդ օր պատահեցավ։ Եվ հիմա ի՞նչ ընեմ ես մինչև վաղը։

Որոշեցի նստիմ ու նամակներս գրեմ. հինգ վեց նամակներ ունեի պատասխանելիք, որ օր օրի կհետաձգեի՝ թե՛ մեր տունը, թե՛ դուրսը ընկերներու, թե՛ ճեմարան։

Նամակները բռնեցին ամբողջ օրս ճաշեն առաջ ու ճաշեն ետքը։ Իրիկվան դեմ տարի նամակներս գյուղ ու փոստեցի և հոնկե ալ հանդիպեցա Միքեին։

Միքեի հետ տուն կվերադառնայի, գյուղի հրապարակն էինք, որ հանկարծ դիմացի փողոցեն նշմարեցի հեռուն Վարդուհին իր եղբորը, քրոջը և ուրիշ երկու երիտասարդներու հետ. հավանորեն նշանավոր փիքնիկեն կվերադառնային։

Սիրտս սկսավ մուրճի պես զարնել։ Երբ բավական իրար մոտեցանք՝ Կատյան հեռուեն վազեց ուղղակի դեպի ինծի, թևերուս մեջ առի ու համբուրեցի քնքշանքով։

Հրապարակին ճիշդ մեջտեղը քույր ու եղբայր զատվեցան իրենց ընկերներեն և ուղղվեցան դեպի մեզի, քանի որ կեցած էինք իրենց բռնելիք ճամփուն վրա։

— Աս ո՞ւր եք, մեջտեղ չկաք,— բացականչեց պարոն նկարիչը կես-կատակ, կես-լուրջ, բարևս առնելով,— այս տեսակ դրացնությո՞ւն կըլլա։

— Անիրա՛վ ես, դուն ինքդ շա՞տ պարտաճանաչ դրացի մըն ես, որ ուրիշները կմեղադրես,— պատասխանեց Վարդուհին եղբորը, միևնույն ժամանակ շատ քաղաքավարի ձեռք տալով ինծի և Միքեին։

— Իմ բանս ուրիշ է, քույրի՛կ, առտու իրիկուն զբաղված մարդ եմ,— եղավ եղբոր հեգնոտ պատասխանը։

— Ատիկա միակողմանի դատողություն է. ամեն մարդ ալ իր գործերն ու զբաղումներն ունի։ Պարոն Երվանդը այնքան ժամանակ է հատկացուցեր մեզի մինչև հիմա, որ մենք պարտական ենք շնորհակալ ըլլալու։ Անիրավ խոսք լսել չեմ կրնար։

Եվ այս բոլորը ըսված էր ինծի համար բոլորովին օտար շեշտով



մը և շատ քաղաքավարի, և ընդհանրապես իր շարժումներն ու նայվածքն ալ շատ հանգիստ ու առօրյա։

«Ձեր են». մտածեցի ես։

— Գոնե՛, պատմեցե՛ք նայինք, մենք ալ մասնակից ըլլանք ձեր այդ զբաղումներուն և զվարճություններուն,— ըսավ նկարիչը ժպտուն։

Եվ ծայր տվավ խոսակցություն մը, որ ալ անընդհատ շարունակվեցավ ամբողջ ճանապարհին իրիկվան կամաց-կամաց թանձրացող մթության մեջեն։

Միքեն էր գլխավորապես խոսքը վարողը. կպատմեր մեր օրերեն զանազան մանրամասնություններ և կպատմեր համով, կատակեց ու նկարագրեց իմ որսորդական ձախլիկությունները, և պարոն նկարիչը ամբողջ կրծքովը կխնդար։

Եվ Վարդուհին ալ։ Եղբորը թևեն միշտ անբաժան կկատակեր, կծիծաղեր իր սովորական եղանակովը։ Ինծի ալ հարցումներ կուղղեր, շատ չեզոք տրամադրությամբ մը, կարծես երկրորդ անգամ կտեսնվեինք։

«Ձեր են». կրկնեցի նորեն մտքիս մեջեն, բայց զգացի, որ փոքրիկ վախ մը մտեր էր հոգիս։

Քիչ մը վերջը Միքեն հրաժեշտ կառներ, որ ետ դառնա տուն։ Նկատեցի, որ Վարդուհին խնդալով մեկ-երկու վայրկյան ձեռքը բռնած սկսավ խոսիլ խենթ բանի մը վրա։ Արդեն ամբողջ վերի խոսակցության միջոցին շարունակ Միքեի հետ էր իր խոսքերով, իր ուշադրությամբ ու իր աչքերով։

Անհաճո զգացում մը խայթեց սիրտս։

Զսպված անհամբերությամբ իրենց տունը հասնելուս կսպասեի, որ մինակ մնանք, մեր առած յուրաքանչյուր քայլը դար մը կտևեր։ Վերջապես հասանք, և եղբայրը սովորականին պես շիտակ բարձրացավ ու գնաց ներս։ Կատյան ալ վազեց մայրը գտնելու։

Ես ու Վարդուհին մնացինք մինակ. մութ էր արդեն, հազիվ կշնչեի ու կսպասեի, թե ի՞նչ պիտի ըսե։

— Գիշե՛ր բարի, պարո՛ն Երվանդ,— ըսավ Վարդուհին կատարյալ պարզությամբ և սկսավ սանդուղներեն բարձրանալ։

— Դո՞ւք ալ կերթաք ներս,— թռավ շրթունքներես։

— Հա՛, իրավունք ունիք,— բացականչեց, կեցավ, նայեցավ ետ սանդուղներուն վրայեն և ըսավ,— սպասեցե՛ք վայրկյան մը, խնդրեմ, երթամ ձեր «Դավիթ Բեկը» բերեմ։

— «Դավիթ Բե՞կը» ինչո՞ւ համար,— հարցուցի ապշած։

— Կտեսնեմ, որ ձեր ընկերոջ գալեն ետքը ազատ ժամանակ չունիք և չեմ ուզեր ձեզի նեղել կամ խանգարել։ Ես խորապես շնորհակալ եմ

ձեզի բոլոր ձեր թափած աշխատանքին համար և կհասկնամ, որ այլևս պետք է ընդհատենք։

— Հիմար բաներ կխոսիք, մեր աշխատանքը պիտի շարունակվի, վաղ առտու ճիշտ ժամանակին կուգամ զբաղվելու,— ըսի ես իրար եկեն հոգիիս խորքեն։

— Ներեցե՛ք, բայց գրեր էիք, որ առտուները որսի կերթաք։

— Այո՛, օ՛ր մը, երկո՛ւ, ո՛չ հավիտյան, ալ վերջացա՛վ,— բացականչեցի ես սաստիկ հուզված։

— Ա՜խ, այդպե՛ս, վերջացա՞վ։ Դո՛ւք գիտեք, վեպը ձեր տրամադրության տակն է,— ըսավ, վազեց սանդուղներեն վեր ու մութին մեջ աներևույթ եղավ։

Մնացի քարացած սանդուղներու ոտքին։ Ես բոլորովին ուրիշ կերպ կերևակայեի մեր վերստին հանդիպումը. անզուսպ ու խելագար բան մը։ Եվ ահա՛ հանկարծ այս պաղ, անտարբեր ու անակնկալ վերջաբանը։

Մի՞թե, իրավ, այս բոլորը միայն կձևացնե։ Թե՞ ես եմ հիմար ապուշին մեկը։ Ինքս միրահարեր եմ ու կերևակայեմ, թե ան ալ կսիրե ինծի։ Է՜, խենթ խաղ մըն էր, գուցե, այնպես մեկ երկու օր, սիրախաղ մը, որ եկավ ու անցավ։ Ես եմ, որ այդ ամենուն սկսա լուրջ վերաբերվիլ։ Բայց մի՞թե այն բոլորը, որ մեր մեջ անցավ, սովորական բաներ էին, միթե այդ կերպո՞վ կվարվի այդ աղջիկը ամեն տղու հետ։

Ինչո՞ւ ոչ. ահա՛ Միքեն, ինծի հետ ալ նույն կերպով չսկսա՞վ, նույն ձեռքի սեղմումները, նույն ժպիտները, նույն կատակներն ու նայվածքները։

Ի՞նչ զուեհիկ տափակություն իմ կողմես, որ այդ հասարակ աշխարհիկ ձևերը իմ ազնիվ զգացումներուս պատասխանը կարծեցի։

Եվ դառն փլուզում մը հոգիիս մեջ կքալեի դեպի տուն։

Աստվա՛ծ իմ, մի՞թե հնար է, մի՞թե իրավ է այս բոլորը։ Կխենթենամ։

## Օգոստոս 12

Ամբողջ գիշերը անհանգիստ էի. քունս տարեր էր միայն առտվան դեմ։ Եվ արթննալուս պես միևնույն մտածումն էր գլխուս մեջ. մի՞թե իմ բոլոր երևակայածս օդի մեջ դղյակներ էին, իրա՞վ է, որ Վարդուհին ինծի չը՛ սիրեր։

«Ոչ, սիրեր է ու կսիրե». կըսեր հոգիս։ Այս պաղ վերաբերմունքը ցույց մըն է, իմ երեք օրվան բացակայությանս վրեժը։ Այսօր կերթամ ու կհարթեմ այս բոլոր անհամաձայնությունները։



Այս որոշումով սովորական ժամին Շամիրյաններու պատշգամբ ելա։ Անորոշ զգացում մը, վախի նման անհանգստություն մը շնչառությունս կխեղդեր։

Դեմս ելավ սպասուհին։

— Բարև՛, Մարո՛ւսյա։ Իմա՛ց տվեք օրիորդին, որ եկած եմ։

— Օրիորդը պարոնին հետ շրջելու ելան,— պատասխանեց սպասուհին։

Կարծես պաղ ջուր լեցուցին վրաս։

— Ե՞րբ դուրս ելան,— հարցուցի կարելի եղածին չափ անտարբեր շեշտ մը առնելով։

— Կես ժամ մը կա, պարո՛ն։

Պարզ էր։ Այդ աղջիկը հետս կխաղար։ Եվ իր ըրածը պարզապես անքաղաքավարություն էր. վերջապես իրեն հետ զբաղվելու կուգայի և նախապես գալս իրեն ըսեր էի։

Տուն վերադարձա շատ ծանր հոգեկան տրամադրության մը տակ։

Պարզ էր, որ աղջկա հոգիին մեջ չկար զգացումներու այն խորքը ու բոցը, որ հիմա իմ էությանս մեջ կտիրեր։ Բայց ես կխեղդեմ հոգիս և կփետտեմ և՛ սերս, և՛ բախտավորությունս, եթե աղջիկը միայն խառ-ղալ կուզե ինծի հետ։ Ինծի կքաշեն ու ինծի կկապեն միայն խորունկ զգացումները։

Կուզե ցավես խելագարիմ, կուզե մեռնիմ, ցավագարիմ, միևնույն է, խակույն ամեն կապ կկտրեմ, եթե իր սիրտը իմինիս զույգ չի զարներ։ Ես չեմ կրնար բավականանալ կատորտանք զգացումներով և ծանծաղ երեսանց հուզումներով։

Պետք է ամեն ինչ պարզվի, պետք է ստուգվի և անմիջապես ինչ գնով կուզե ըլլա։

Եվ իրիկվան դեմ սեղմված սրտով, մտքերս խառնակ ու տրամադրությունս կսարված մտա անոնց սրահեն ներս։ Տիկինը մեքենայի վրա կար կկարեր, հրամցուց, որ նստիմ։

Կխոսեինք չգիտեմ ինչ, երբ ներսեն հնչեց Վարդուհիին ձայնը.

— Մայրիկ, կարմիր կազմով նոթաներուս ժողովածուն ո՞ւր է։

Անշուշտ գիտեր եկած ըլլալս, բայց ինծի չտեսնել ձևացուց, գնաց շիտակ գրքերուն դարակը։ Վերջը հանկարծ ետ դարձավ դեպի մայրը և իբրև ինծի նոր տեսնելով։

— Ա՜խ, դուք հո՞ս էք, պարո՛ն Երվանդ,— բացականչեց հանգիստ, եկավ, ձեռքս թոթվեց, ինչպես ըլլալս հարցուց և ելավ սենյակեն, ինչպես կընեն սովորական ու անկարևոր հյուրի մը։

Ալ չափը լեցավ. վեր ցատկեցի ու գացի ետևեն։ Անիկա անշուշտ

տոքիս ձայնը առավ, բայց չլսելու տվավ ու մտավ հյուրասենյակ, ես ալ ետևեն։

— Ա՜, հրամմեցե՛ք,— ըսավ անփույթ շարժումով աթոռ մը ցույց տալով։— Նոթաներուս տետրակը չգիտեմ ո՞ւր են դրեր։ Ա՜խ, այս ըսպասուհին։

— Ձեր տետրակը այդ որքան հուզած է ձեզի,— ըսի զուսպ հեգնությամբ մը։

— Այո՛, պետք ունիմ, նվագել կուզեմ։

— Այն աստիճան, որ ձեր բարեկամին այցը կարծես չեք նկատեր։

— Ներսը հյո՞ւր է եկած,— հարցուց հանկարծ մեծ աշխուժով,— գրազ կուգամ, որ նկարիչ Սիլիքոն է։

— Ո՛չ, դժբախտաբար կսխալիք, եկողը միայն ես եմ։

— Ա՜խ, ձեզի համար կխոսիք,— ինքզինքը սրբագրեց իր կորուստը փնտրելով։

Այս ցուցադիր անփութությունը մարսել չկրցա։ Չըլլա՞ թե բնազդս սխալած չէ, չըլլա՞ թե ճշմարիտ որ իր սրտին մեջ մեկ ուրիշը գրավեր է այն տեղը, որ ես գրաված ըլլալ կկարծեի։

— Ներեցե՛ք, օրիո՛րդ, վայրկյան մը միայն,— ըսի ես չքողարկված դառնացումով։— Ձեր կորուստը կրնաք միշտ փնտրել, իսկ ես հեռանալես առաջ հարցում մը ունիմ ձեզի։

— Ինչո՞ւ այդչափ կշտապեք,— հարցուց ձեռքերը ետևը կապած։

— Որովհետև ամեն կերպ կհասկցնեք, որ իմ ներկայությունս հոս ավելորդ է։

— Ես այդ տեսակ բան մտածած չունիմ։ Բայց ի՞նչ էր ձեր հարցնելիքը։

— Արդյոք գիտեի՞ք, որ այս առտու ձեզի հետ զբաղվելու պիտի գայի։

— Այո՛, երեկ գիշեր ըսիք կարծեմ։

— Լա՛վ, ուրեմն ո՞ւր էիք առտուն։

Վարդուհին ամբողջ հասակովը շտկվեցավ, աչքերը չեշտ հառեց աչքերուս և առանց դեմքի մեկ գիծը շարժելու՝ ծանր ու հստակ ձայնով մը արտասանեց վանկելով.

— Որ-սի՛։

Դաշույնի մը պես բառը խրեցավ կուրծքս։ Քեն, զայրույթ, կասկած ու հանդիմանություն վայրկյանաբար ցնդեցան։ Մնացի անշարժ արձանի պես։ Իսկ Վարդուհին լուռ անցավ դաշնակին առջևը ու սկսավ նվագել. գիտեր բոլոր թույլ կողմերս։



Ուրեմն վշտացած էր, իր բոլոր առերևույթ անտարբերության ու նույնիսկ զվարթության հակառակ՝ ցաված էր ինծմե ու խորապես։

Ու վայրկյան մը սուզվեցա իր վիճակին մեջ, երևակայեցի, որ ես եմ իր տեղը, որ կսիրեմ, որ ինքս դեմ կերթամ սիրած տղուս, գրեթե կգրկեմ. իսկ ան կոպտությամբ մեկ կողմ կհրե ինծի և ալ ամբողջ օրեր կձգե, կերթա. և հիմա ալ կուգա երեսիս դեռ հանդիմանություն կարդալու։

Խոր խղճահարություն մը բարձրացավ մեջս հանկարծ, ծովու հողմակոծ ալիքներու նման. զգացի, որ ամենակոպիտ կերպով և կոշտ եսականությամբ վիրավորած էի այդ փափուկ ու չքնաղ արարածը, որ ինծի կնվիրվեր և որ սրտիս կյանք կուտար։

Դաշնակեն հոսող երազուն եղանակ մը զգացումներս ավելի կսրբեր. զղջումս այն աստիճանին հասավ, որ աչքերս արցունքոտեցան ու հանցավոր տղու մը պես ուզեցի երթամ ու ներում խնդրեմ։ Բայց ասիկա մտածմունք մըն էր տեսական, որուն գործնական կերպը պետք էր գտնել։

Մոտեցա դաշնակին ու թեթև մը ուսին դպա. աղջիկը ցնցվեցավ, ընդհատեց ու հարցական նայեցավ ինծի։ Ինչպե՜ս գեղեցիկ էր։

Հոգիիս խորքեն կուզեի անհամար համբույրներով ծածկեմ իր թեթև մը կծկված շրթունքները, իր հուզումեն շիկնած այտերը, ամառվան երկինքին պես մաքուր ճակատը և իր բնավորության նման անառակ խոպոպիկները՝ Կուզեի, բայց իր նայվածքին մեջ լրջություն մը կար, որ սանձ կդներ զգացումներուս, և ես չէի հանդգներ գոնե առաջվան չափ համարձակ վարվելու։

— Կուզե՞ք, որ պտույտ մը ընենք,— ըսի ես հաշտություն խնդրող ժպիտով մը։

— Ուշ է, հիմա արևը մայր կմտնե,— պատասխանեց իր քենը պահել ուզելով։

— Ի՞նչ փույթ, հեռու չենք երթար։

— Ձեզի նեղություն տալ չեմ ուզեր,— եղավ իր բացատրությունը։

— Հերի՛ք է, թողե՛ք,— ըսի ես խոնարհ ու աղաչող ձայնով մը,— ելե՛ք, երթա՛նք։

Առանց բառ մը արտասանելու ելավ, ժակետը նետեց ուսերուն, ու մեկնեցանք։

Նախ լուռ էինք։ Մաքուր, մութ-կապույտ մըն էր վրանիս, հոս ու հոն ամպի ծվեններ հայացքի միօրինակությունը կավրեին։

Քովերնուս գյուղացի մը անցավ, նայեցավ մեզի ու նշանակալից կերպով ժպտեցավ։

— Այդ մարդը ինչո՞ւ խնդաց,— հարցուցի։

— Ես ի՞նչ գիտեմ, իրեն հարցուցեք,— պատասխանեց աղջիկը։

Թե՛ գյուղացին ալ, աղջիկն ալ, ես ալ շատ աղվոր իրար հասկցեր էինք։ Ամեն պարագայի գյուղացիին այդ ժպիտը խոսակցության ծայր տվավ։ Գյուղի կյանք, բարք, սովորություններ, գյուղի ու քաղաքի տարբեր հոգեբանություն։ Կխոսեինք, Վարդուհին իր տպավորություններն ուներ գյուղական կյանքի իր նախորդ տարիներու ամառային օրերեն Կովկասի բոլորովին տարբեր-տարբեր անկյուններուն վրա։

Ու կխոսեինք շատ հանգիստ. կարծես նոր կծանոթանայինք իրարու, կարծես մեջերնիս ոչինչ անցած չէր, ո՛չ հինը, ո՛չ նորը։

Միայն խոսելու ատեն, երբ քովնտի գաղտնի ակնարկ մը նետեցի իր դեմքին, հրճվանքով նշմարեցի, որ նույն տեսակ ծածուկ նայվածք մը աչքերուս առջևեն անմիջապես խուսափեց։

Սկսավ մթնել, անաստղ, սև մութ մը։

— Դառնա՛նք,— ըսավ Վարդուհին։

— Դեռ կանուխ է, հեռու չենք տունեն։

— Քիչ մը հոգնած եմ,— առարկեց։

— Առե՛ք թևս։

Նայեցանք իրարու և սկսանք խնդալ, բայց և այնպես մերժեց.

— Շա՛տ շնորհակալ եմ, հարկ չկա։

Այս մերժումը դարձավ մեր քեներուն վերջին կաթիլը, ու բաժակը հորդեց.

— Բայց պետք է, որ մտնեք թևս,— ըսի դաստակեն ամուր մը բռնելով։

Կեցավ, երեսս նայեցավ վայրկյան մը մութին մեջեն և թող տվավ, որ իր աղվոր ձեռքը թևս անցնեմ։

— Կզարմանամ միայն մարդկային հոգիի փոփոխություններուն վրա։

Ա՛ս եղավ իր ժպտուն փիլիսոփայությունը։ Եվ իրավ էր։ Դերերնիս հիմնապես փոխեր էինք. առաջ ինքը կուզեր բռնի թևս մտնել, հիմա ես բռնի թևս կառնեի։

Բայց այդ վայրկյանին ես այլևս անկարող էի այդ կարգի բարակ բաներուն ականջ կախելու, բոլոր ուժովս սեղմեցի բազուկիս ու կրծքիս հանձնված իր սիրելի թաթիկը։

Վարդուհին սկսավ նորեն խնդալ, ջղային, անբնական, խենթ խնդուք մը։

— Տո՛ւն դառնանք, տո՛ւն դառնանք,— կրկնեց հանկարծ շատ լուրջ։ Ու թևը թևես ազատեց։



կհասկնայի. նախորդ դեպքերը ինծի փորձառու էին ըրեր, ան ալ հիմա ինծի նման կփախչեր, տեղի տալ չէր ուզեր։

Իրենց սանդուղներուն ոտքը հրաժեշտ առնելու ատեն նորեն թևը բռնեցի։

— Ինծի հանգիստ ձգեցեք,— ըսավ լուրջ, բայց չկրցավ լրջությունը պահել ու խնդաց։

— Վրաս շա՞տ եք բարկացած,— հարցուցի ես։

— Ես բարկացած չեմ և ինչ իրավունք ունիմ ձեր վրա բարկանալու,— պատասխանեց խնդուքին մեջեն։

— Այդպե՞ս։ Իսկ ինչո՞ւ կխնդաք։

— Ո՛չ ալ կխնդամ,— պատասխանեց խնդուքին մեջեն։

— Ատիկա պատասխան չէ։

— Դիցո՛ւք. ձեզի ինչ՝ թե ինչո՞ւ բարկացած եմ կամ ինչո՞ւ կխնդամ։ Ձգեցե՛ք թևս։

— Չեմ ձգեր թևերնիդ մինչև պատասխան չտաք։

— Բռնությո՞ւն։

— Անվանեցե՛ք ինչպես կուզեք։

— Ի՞նչ տարօրինակ տղա եք դուք։

Վայրկյան մը մտածեց ու հանկարծ ավելցուց ավելի հաշտ ձայնով.

— Աղե՛կ, ձգեցե՛ք թևս, վաղ առավոտ եկեք ձեզի պատասխանեմ։

— Կխոստանա՞ք։ Չէ՞ որ առտուները որսի կելլեք,— ըսի քմծիծաղ։

— Այո՛, օ՛ր մը, երկո՛ւ, ո՛չ հավիտյան, ալ վերջացա՛վ,— պատասխանեց աղջիկը երեկ իրիկվան բառերս ինծի վերադարձնելով վերին աստիճանի անուշ կատակով մը։

Երջանկութենե հորդող սրտով երկու ձեռքերուս մեջն առի իր ձեռքը, կամաց բարձրացուցի ու սեղմեցի շրթունքներուս։

Ու մութին մեջ լուռ իրարմե բաժնվեցանք առանց որևէ ուրիշ բառի։

Օգոստոս 13

Դեռ բավական հեռվեն նկատեցի, որ Վարդուհին պատշգամը նստած խոշոր թերթ մը ունի ձեռքը։ Տեսավ ինծի, բայց իր թերթեն աչքը չբարձրացուց ու տեղեն չերերաց։

Մոտեցա իրեն. թափանցիկ ճերմակ շրջազգեստը մըն էր հագած,

որուն բարակության տակեն հստակ կերևեին իր փղոսկրե թևերը իրենց ամբողջությամբ։ Ժպտեցա ու բարևեցի։

Չպատասխանեց, միայն թերթը դրավ մեկդի, ելավ ոտքի, ու միասին իջանք պարտեզ, ուր փայտե սեղանին վրա մեզի կսպասեր «Դավիթ Բեկը» մեկ-երկու տետրակներու ընկերակցությամբ։

Երբ անցանք մեր բաղեղապատին ետևը՝ մատովը իմ սովորական տեղս ցուցուց։ Նստեցա, ինքն ալ դեմս։

Վայրկյան մը լուռ էինք ու կսպասեինք իրարու խոսքի։ Վերջապես լռությունը ես խզեցի.

— Օրիորդ, խոստումնիդ։

— Ի՞նչ խոստում,— հարցուց մեծ զարմանքով։

— Պիտի ըսեիք, թե ինչո՞ւ վրաս բարկացած եք։

— Հիմա ես ձեզի պիտի ըսեմ ուրիշ շատ ավելի աղվոր բան մը։

— Ի՞նչ բան է ատիկա։ Կլսե՛մ։

— Պիտի ըսեմ, որ դուք չափազանց անհոգ, եսասեր ու անքաղաքավարի մեկն եք։

Այնքան անակնկալ էր, որ ոտքի ելա ակամա։

— Նստեցե՛ք,— ըսավ հանգիստ շեշտով մը։— Ի՞նչ կանվանեք դուք այն տղան, որ աղջկան մը օգնել խոստանալով, օրերով կձգե ու կանհետանա։ Եվ միթե ձեր հիմար որսը ավելի՞ հետաքրքիր էր ձեզի համար, քան մեր այս միասին ըլլալը։

— Ամենևի՛ն,— բացականչեցի ես կատարյալ սրտաբացությամբ,— բոլորովին ընդհակառակը։

— Ի՞նչ կանվանեք դուք այն տղան, որ հանկարծ օձե խայթվածի պես կձգե, կերթա, երբ անոր կուրծքը մեխակ մը անցընել կուզեն։

— Այդ տղուն անունը «տխմար» է,— պատասխանեցի ես կատարյալ լրջությամբ։

— Ի՞նչ կանվանեք դուք այն տղան, որ քիթ ու բերանը թիզմը կկախե, երբ իր անշնորհքությունը իրեն հասկցնել կուզեն և զայրույթի ձևեր կառնե, ըսե՛ք, այդ տղան ի՞նչ կանվանեք դուք։

— Անվանեցե՛ք ինչ-որ կուզեք, հանդիմանեցե՛ք ինչպես կուզեք. կատարյալ իրավունք ունիք, միայն թե խոսեցեք, շարունակ խոսեցեք, որ լսեմ ձեր այդ աննման ձայնը։ Նայեցե՛ք ինծի մեղադրանքով ու բարկությամբ, կատարյալ իրավունք ունիք, միայն թե նայեցե՛ք ինծի այդպես շարունակ, երբ ձեր աչքերուն մեջ հուզումը կվառի։

Լուրջն ու ժպիտը հանկարծ խառնվեցան իրար Վարդուհիի դեմքին վրա, և շրթունքները վայրկյան մը շփոթեցան, չիմացան ինչ պատաս-



խան տան, բայց վայրկյան մը միայն ու եկավ պատասխանը զարմանալի զզվող նայվածքի մը հետ։

— Գեղեցիկ խոսքեր ըսել գիտեք ուրեմն։ Այդ բոլորը միայն հիմա՞ զգացիք։

Հազիվ էր նախադասությունը լրացուցեր, որ հանկարծ ձայնը կըտրեց ու խոժոռած նայեցավ ետ. խիճերուն վրա քալվածքի ձայն կուգար։

Արագ մոտեցավ սպասուհին։

— Ի՞նչ կա,— հարցուց Վարդուհին։

— Պարոնին տունեն տիկինը մարդ է ղրկած, որ պարոնը անմիջապես տուն վերադառնա, կարծեմ հյուր է եկած։

— Հյո՞ւր,— կրկնեցի ես ակամա ու սաստիկ դժգոհ. ու վարանոտ կնայեի հեռացող սպասուհիի ետևեն առանց տեղես շարժվելու։

— Ելե՛ք, ելե՛ք գացեք, արդեն ձեր ուզածն ալ երևի ատիկա էր,— ըսավ աղջիկը սրտնեղ։

— Սակայն այս անգամ, ա՛յ, անիրավ եք,— ըսի ես խորապես վշտացած ու քայլ մը ընելով դեպի իրեն՝ ինքս ալ չգիտեմ՝ ի՞նչ ըսելու կամ ի՞նչ ընելու համար, որ հոգիս արտահայտել կարողանամ։

— Գացե՛ք, գացե՛ք,— կրկնեց ան հրամայական շեշտով մը։— Դեպի ինծի անքաղաքավարի ըլլալը արդեն ձեզի սկզբունք եք շինած, գոնե դեպի ուրիշները քիչ մը ավելի զգույշ եղեք։

Ու քայլ մը քաշվեցավ ավելի ետ, մեր մեջ եղած տարածությունը մեծցնելու համար.

— Գացե՛ք։

Տեսակ մը վռնդվածի պես ու պոչը կծկած շան մը պես դուրս ելա իրենց պարտեզեն. գազազած էի ինծմե ալ, իրմեն ալ, մերիններեն ալ, եկած հյուրեն ալ։

Մեր ամառանոցին մուտքին առջևը կեցած էր բաց կառք մը. ո՞վ պիտի ըլլար, հանկարծ ճանչցա հորեղբորս կերպարանքը, որ կեցած էր ցանկապատին կռթնած։ Մեկ շունչով վար վազեցի։

**Օգոստոս 14**

Ուխտի։ Սևան կերթանք ուխտի։ Եվ Վարդուհին հետս։ Երազ է. ուրախությենես ինչ ընելս չգիտեմ։

Բայց կարգով։

Հորեղբայրս Թիֆլիսեն քանի մը ընտանիքներու համար հանձնա-

*թարություններ ու կարգադրելիք բաներ ուներ և ուրիշներու համար ալ բավական մանր-մունր բաներ էր բերած։*

*Իրիկվան դեմ այդ բոլոր իրերով բեռնավորված հորեղբորս հետ գնացինք գյուղ տունե-տուն տնօրհնեքի պես, ամեն տեղ ալ խոսք ու զրույց, վերադարձանք բավական ուշ։*

*Մեր բացակայության տիկին Շամիրյան եկած էր հորեղբորս բարի-եկաք ըսելու և Թիֆլիսեն նոր լուրերու։ Տեսնելով, որ շատ կուշանա հորեղբայրս՝ դարձեր է տուն, ըսելով, որ այս իրիկուն այլևս անհանգստություն պատճառել չուզեր նոր եկած ճամփորդին, կուգա վաղը առտու տեսակցելու։*

*Եվ այս առտու անհամբեր կսպասեի իրենց գալուն։ Վստահ էի, որ Վարդուհին միասին է գալու Ջախալվեցա. եկան ամբողջ ընտանիքով՝ մեծ ու պզտիկ։*

*Թիֆլիսի մասին երկար հարցուփորձերեն ետքը, խոսակցության ընթացքին հորեղբայրս հայտնեց, որ ինքը հիմա եկած էր հատկապես Սևանի կղզին երթալու համար. կիրակի օրը Վարդավառ էր և Սևանի վանքին ուխտի օրը։ Ես ալ դեռ բան մը չգիտեի, այր ու կին իրենք իրենց մեջ խոսեր ու կարգադրեր են։ Եվ առաջին տպավորությունս ավելի զարմանք եղավ, քան ուրախություն։*

*Բայց ուրախությունը փսկույն ծայր տվավ, երբ հորեղբորս կինը շատ լրջորեն առաջարկեց Շամիրյաններուն, որ միանան մեզի և միասին երթանք Սևան ուխտի։ Շամիրյաններուն համար սկիզբը այնպե՛ս, քաղաքավարական խոսք մըն էր միայն, բայց երբ հորեղբայրս ալ սկսավ պնդել իր կնոջ առաջարկը, և երբ ես ալ ոտքով-գլխով մեջ նետվեցա Սևանի լիճն ու կղզին տեսնելու և գյուղական ուխտագնացություն մը մոտեն ապրելու գեղեցկությունն ու հետաքրքրությունը ընդգծելով նկարչի մը համար, տրամադրությունները փոխվեցան կարծես։*

*Քիչ մը սկսան մտածել, վարանիլ, բայց ոչ երկար. տիկին Նատալիան կրոնասեր կին էր ու բարեպաշտ և մեր տիկնոջ հետ աղվոր պըտույտով ուխտի մը երթալը հրապույր ուներ, պարոն նկարիչը, այո, Սևանի լիճը տեսնել կցանկար, հարմար առիթ էր, Կատյան սկսավ ցատկըռտել մոր գիրկն ի վեր, երբ գլխի ինկավ, որ մեկ-երկու օրով կառքով պտույտի մասին է խոսքը, իսկ Վարդուհին հարցը դրավ շիփ-շիտակ.*

*— Մամա՛, ես դեռ ուխտի չեմ եղած, կուզեմ, որ երթանք։*

*Մայր ու տղա քիչ մը իրար երես նայեցան, ու հարցը վճռվեցավ և հանկարծ բռնկվեցավ ընդհանուր ոգևորություն մը։ Գնումներ, կարգադրություններ, աշխատանքի բաժանում ուտելիքի պատրաստության*



*համար, կառքերու հարցը հորեղբայրս հանձն առավ, որոշվեցավ վաղը կեսօրին ճամփա իյնանք, և Շամիրյանները մեկնեցան տուն։*

*Վարդուհին կատարյալ երեխա էր դարձեր, իր փոքր քրոջ նման բան մը, կխնդայրին, կխոսեին, կվազեին։ Իմ ու իր աչքերը իրար կփընտրեին շարունակ, և մեր նայվածքեն խոր ուրախություն կկաթեր. թեև հակառակ իմ քանի մը լուրջ ջանքերուս, խուսափեց հետս առանձին մնալե և չպատասխանեց, երբ ծածուկ իր ձեռքը սեղմեցի. խռովկան կխաղար հետս։*

*Իրիկունը գացի Միքայելը տեսնելու, առանց ոչինչ հայտնելու կարելի չէր մեկնիլ. իրենց տան դուռը կեցած՝ բռներ էր կովուն գլուխը մինչ քույրը կկթեր։*

*Հայտնեցի մեր մեծ նորությունը, մեր ու Շամիրյաններուն ուխտագնացությունը, նույնիսկ առաջարկեցի, որ ընկերանա մեզի, թեև վախեն ձայնս դողաց, միգուցե առաջարկս ընդունի։ Շնորհակալությամբ հրաժարեցավ, և ես չգիտեի՝ ինչո՞վ փոխարինեմ իր այդ աղվոր մերժումը. երախտագիտության պես բան մը կզգայի ընկերոջս հանդեպ։ Իրարմե բաժնվեցանք իրարու պայծառ Վարդավառ մը մաղթելով։*

## Օգոստոս 17

*Շաբաթ օրը կեսօրեն քիչ մը առաջ կառքերը մեր դռանն էին։ Կառք մը մեզի համար, կառք մը Վարդուհիենց. յուրաքանչյուրին մեջ ուրեմն չորսական հոգի, ամառանոցներուն տեր ու պահապան կմնային սպասուհիները։*

*Երկու կառքերուն մեջ ամեն ինչ տեղավորելեն ու կապկպելեն ետքը՝ երբ կարգը հասավ նստելուն, ես բացեիբաց հայտարարեցի, որ նըստելու եմ Շամիրյաններու հետ։ Հորեղբորս կինը քիչ մը առարկել ուզեց, թե անոնք արդեն չորս հոգի են և թե անոնց նեղություն պիտի պատճառեմ։ Շամիրյանները չորսը մեկ-բերան քվեարկեցին ի նպաստ իմ առաջարկիս, և՛ շատ կտրուկ, և՛ շատ սիրալիր։*

*— Եկե՛ք,— ըսավ Վարդուհին առանց այլևայլության իր քովը նըստած Կատյան գիրկը առնելով։*

*— Պայմանով, որ Կատյան գրկած պահելու պատիվը ինծի տրվի,— ըսի ես երեխան Վարդուհիի գրկեն առնելով։*

*Եվ երեխան ամբողջ ճամփու ընթացքին քանի մը անգամ գիրկե գիրկ անցավ և ամենուս գիրկերեն։ Երկու անգամ ալ քույր ու եղբայր*

ինծի իրենց տեղերը փոխեցին՝ ճակատը նստած ըլլալու պատիվեն ու հարմարությունեն զուրկ չմնալու համար։ Ինծի ալ առաջարկվեցավ այդ պատիվն ու հանգստավետությունը, որ ես համեստորեն մերժեցի։ Ինծի ցանկալի եղող և՛ հարմարությունը, և՛ բախտավորությունը ես արդեն ունեի. Վարդուհին կա՛մ քովս էր ամբողջ մարմնով ինծի սեղմված, կա՛մ դեմս էր ոտք ու ծունկով ինծի հենած և աչքերը աչքերուս։

Ու զարմանալի կերպով իրենց կառքը բարձրացած վայրկյանես կարծես բան մը փոխվեցավ մեր հարաբերության մեջ, մտերմություն մը բոց առավ հանկարծ, կարծես ընտանիքին անդամը դարձա։

Տիկին Նատալիան մեկ-երկու անգամ ուղղակի անունովս կանչեց զինծի «պարոնը» մոռնալով։ Պարոն նկարիչը երբեք այսպես հարազատ չէր զգացած. և՛ վարմունքը, և՛ խոսվածքը։ Եվ հրաշալի ալ տրամադրության մեջ էր. երբ կառքերը Դիլիջանի զիկզակներով վեր կմագլցեին, ինքը ոգևորված կպատմեր մեզի առաջին անգամ իր Ռուսաստան անցնիլը Դարյալի կիրճով, կպատմեր մանրամասն ու համով, հյուսելով իր պատմածին քանի մը ծիծաղաշարժ արկածներ։

Մեկ-երկու անգամ երգեցինք միասին, Կատյան խենթի պես կպոտար երկու ձեռքերով վզիս փաթթված։ Ելքի դժվար մասը անցնելեն ետքը սարահարթին սկիզբները՝ իջանք կառքերեն, ծառերուն տակը, ճռիկ աղբյուրի մը քովիկը թեթև նախընթրիք մը ընելու և ձիերուն հանգիստ և ուտեստ տալու կես ժամվա չափ։

Չիբուխլու գյուղը անցնելեն ետքը, երբ լեռնադաշտին մեջ խճուղին ոլոր մըն ալ ըրավ՝ հանկարծ երևցավ դեմերնիս Սևանի ծովուն երկնագեղ հայելին։ Ամենքս հիացած կնայեինք և մեզմե ամենեն ավելի հիացածը մեր նկարիչը. իսկ հասակավորները ջերմեռանդորեն խաչ կհանեին։

Քիչ մը վերջը ճամփան ծովուն զուգահեռ կերթար, ու դեպի ծովը կհավասարեր կամաց-կամաց։ Իրիկուն էր արդեն ու կդիտեինք լույսերուն խաղը ծովու ալիքներուն և դեմի կղզիին ժայռերուն վրա։

Սևանի քովեն ես անցեր էի քանի մը անգամներ և միշտ ալ մեր այդ լեռնային ծովակը մեծ ուրախություն էր տված և՛ աչքերուս, և հոգիիս։ Բայց այս անգամվան ստացած տպավորությունս բոլորովին ուրիշ բան մըն էր. մեյ մը Վարդուհիիս հարբած ու հիացած աչքերուն կնայեի, մեյ մը ծովու ծփանքներուն ու ցոլքերուն. ան ալ աչք մըն էր, անոր մեջն ալ կարծես Վարդուհիիս հոգին կար, ան ալ կժպտեր երեսիս։

Կառքերը կեցան ջուրեն ոչ հեռու։ Առաջին զգացած անուշ խշրտուք մը եղավ եզերքեն, ուր ալիքն ու փրփուր խաղի էին ելած ափի խիճերուն հետ։



Քիչ մը հեռուն խմբված էր գյուղացիներու ստվար խումբ մը, որոնք մեզի պես ուխտի էին եկած իրենց կապոցներով։ Քանի մը հրացան պարպեցին, ես ալ քանի մը գնդակ ղրկեցի օդը ատրճանակես, որ կըղզիեն նավակները գան։ Եվ իրավ կղզիի մեզի դարձած կողմեն ու խորշի մը մեջեն ծառերուն տակեն երեք նավակ բացվեցան քիթը բռնած դեպի մեզի։

Երկու ավելի խոշոր ու լայնափոր նավակներուն մեջ լեցվեցան գյուղացի ուխտավորները, ավելի փոքր՝ երրորդ նավակին մեջ տեղավորվեցանք մենք։ Նավակները ցամաքեն կտրվելուն պես զուռնաչիները սկսան իրենց արևելյան եղանակները մեր առջևի նավակեն։ Պառավները երկյուղածությամբ պղնձե թասով ծովակին ջուրը կխմեին, երիտասարդ աղջիկներ, իրենց երփներանգ զգեստներուն մեջեն, ուր տիրող գույնը կարմիրն էր. և իրենց երկար ու սև հյուսքերուն տակ գրավիչ՝ մեզի կըդիտեին հետաքրքիր, «քաղքցիները» ու «քաղքցի» աղջիկը, որ անոնց աչքին անշուշտ նախանձելի էակ մը կթվեր իր բարակ բաց-վարդագույն շրջազգեստին մեջեն և իր կարճ մազերուն խոպոպիկներովը, որոնք հարդե լայնեզր գլխարկին տակեն առատությամբ ուսերուն վրա կծըփային։

Զուռնային սուր ձայնը քանի կերթար կսաստկանար։ Մեծ աղմուկ էր նավակներուն մեջ, կխոսեին, կխնդային, կխմեին։ Մերոնք լուռ էին ու կնայեին քաղքցու հպարտությամբ։

Ես ալ կդիտեի այդ խումբը ու կզգայի, որ տարիներու մշուշին ետևեն կվերակենդանանային հին ու սիրելի մանկական հուշեր ու պատկերներ աչքերուս ու հոգիիս դեմը։ Կվերհիշեի մանկությանս ուխտագնացությունը Աղթամարի կղզին։ Ու կզգայի, որ տարտամ թախիծ մը, հաճույք, ցավ ու կարոտ իրար խառնված կանձրևեր հոգիիս մեջ։

Այդ խարխուլ նավակները, ալիքներուն այդ ծփանքը, թմբուկին պինդ զարկերը, այդ կանացի խայտաբղետ արդուզարդը, այդ առողջարևառ առնական դեմքերը, այդ հաստ ու բամբ ձայները, որ աշխատավորի ուժեղ կրծքեն կխուժեն, այդ բոլորը որքա՜ն ծանոթ ու հարազատ էր ինծի։

Երբ կղզի հասանք, մեզի դիմավորեց հոգևորական մը և առաջնորդեց վանքի ամենեն շնորհքով սենյակը. այսպես ըսված «պատվավոր» հյուրերեն էինք։ Բավական ընդարձակ պարզ ու մերկ սրահ մըն էր, որուն մեկ անկյունը արդեն բռնած էր ուրիշ խումբ մը, գորգերը փռած ու տեղավորված։

Դիմացի անկյունը, պատուհաններուն տակ բռնեցինք մենք և ըրինք

միևնույնը։ Մթնելու վրա էր արդեն. Հորեղբորս առաջնորդությամբ բոլորս միատեղ գացինք տաճար սրբությունները համբուրելու։

Փոքր, մութ եկեղեցի մըն էր. խորանին առջև վառվող բազմաթիվ մանր լույսերը և խլրտող բազմությունը, որ երկյուղած կաղոթեր, վրաս ազդեցին. ասոնք ալ հարազատ կետեր էին մանկությանս հուշերեն։

Տիկինները մոմերնին վառեցին, աղոթեցին, լացին և երբ ամեն պարտավորություն վերջացավ՝ դուրս ելանք։ Մեր ընթրիքը շատ կարճ տևեց, ամենքը հոգնած էին, ծածկոցներու մեջ կերպ մը փաթթվեցան ու պառկեցան, առտուն կանուխ պիտի ելլեին ժամերգության ներկա ըլլալու։

Վարդուհին, եղբայրս ու ես ելանք ուխտավորներուն մեջ պտույտ մը ընելու։ Սենյակներուն առջևը, հրապարակին մեջտեղը, ծառերուն տակ՝ ամեն կողմ խմբված էին գյուղացիները։ Հոս պզտիկներուն խժլըդուքը, գետնի մեջ փորած օճախներու վրա փայտե շամփուրներով դարձող խորովածին հոտը, մշտաղներու պատրաստությունը և վանքի պաշտոնյաներուն իրարանցումը։ Անդին երիտասարդներուն աշխույժ պարը զուռնայի եղանակներուն տակ, քիչ մը անդին աղջիկներուն ազատախոս անուշ երգերը, ուր առիթեն օգտվելով կթափեն իրենց սրտի ամիսներով ծածկած հուզումը, կկանչեն «յարը» ու կգովեն։

Ամեն աղջիկ, երբեմն խմբով, երբեմն առանձին, սուր ու համարձակ ձայնով ու սրտին խորեն կերգե իր իղձը. և ո՞վ գիտե՝ մոտը կեցած երիտասարդներեն որուն հոգին կխռովե, և կտրիճը ալ չի դիմանար, ընկերներուն հետ կմիանա աղջիկներու շրջանին։ Շրջանը կմեծնա, երգերը ավելի կշեշտավորվին, սրտերը կալեկոծվին. մանչ ու աղջիկ փոխնիփոխ կերգեն տուն-տուն բացարձակ իրարու հետ սիրաբանելով երաժշտորեն, և պարը կդառնա ու կդառնա խենթ մտածման մը նման, որ ուղեղեդ դուրս չելլեր։

Մենք աղղվեցանք ծառերուն տակեն դեպի ծովեզրը, և պահ մը գյուղական երգերու և երաժշտության ընդհատումին մեջեն լսվեցավ ծովուն անդորր ծփանքը և ոտքերնուս տակի խիճերուն խշրտուքը։ Լուսնի խոշոր մահիկը ծառերուն սաղարթին մեջեն լույսի ցանց մը կնետեր ծովափին վրա, այդ ցանցին մեջ կաշկանդված կքալեինք, գրեթե լուռ ու երազկոտ։

Երբ վերադարձանք մեր սրահին դուռը՝ նկարիչն ու քույրը փիշեր բարի մաղթեցին ու մտան ներս պառկելու։ Իսկ ես նստեցա դրան սեմին վրա, արմունկներս ծունկերուս դրած և դեմքս առած ափերուս մեջ՝ սկսա նայիլ ու խորհիլ։ Այն բոլորը, որ դեմս կպատկերանար այդ հինավուրց ծառերուն տակ, այդ բոլորը տեսած էի ես շատ թարմ տարի-



քիս իմ ծննդավայրս, հայրենիքիս մեկ ուրիշ անկյունը։ Արագ սկսան դուրս լողալ հուշերուս ծովեն սուրբ ու մոռցված տեղեր ու դեմքեր, սուր կարոտ մը արթնցավ մեջս, ու հուզումս հասավ իր գագաթնակետին։

Ամեն աչքե հեռու, մինակ ու մութին մեջ ձգեցի ջիղերուս սանձը ազատ, առանց քաշվելու, և արցունքներս սկսան հոսիլ։

Բայց սխալած էի. հանկարծ ստվեր մը երերաց դրան սեմին վրա, և մեկը նստեցավ քովս.

— Ես ալ քուն չունիմ,— ըսավ խնդալով։

Բայց լուսնի աղոտ լույսին տակ երևի արցունքս նշմարեց իմ քողարկումի ճիգերուս հակառակ և բոլորովին փոխված ձայնով մըն էր, որ հարցուց.

— Բայց ի՞նչ ունիք, ինչո՞ւ կուլաք, ինչո՞ւ եք այդպես կծկվեր։

Երկու ձեռքով ամուր բռնեց թևս ու սեղմվեցավ ինծի։

— Ոչի՛նչ չկա,— ըսի ես կես մը ցավով, կես մը քնքշանքով։— Ջիղերու գրգռո՛ւմ և հին օրերու վերհո՛ւշ։

— Պատմեցե՛ք ինծի ինչ որ հիմա կմտածեիք, ինչ որ կզգայիք, ինչ որ ձեզի կլացներ, բայց պետք է պատմեք ամեն ինչ,— ընդգծեց ան վերջին բառերը։

— Խորթին բան մը չկա, ո՛չ ալ ծածկելիք։ Ես ալ ձեզի պես ունիմ ծնող, եղբայր ու քույրեր, որոնք չեմ տեսներ քանի՜ տարիներ, ունիմ Հայրենի տուն մը, ծովակ, այգեստան, հեռո՜ւ ու հեռո՜ւ։ Կմտածեի՝ ո՞վ գիտե հիմա ինչ կընե մայրս, ո՞վ գիտե, որքան հիմա մեծցած են քույրերս, ամեն մեկը ձեզի պես հասուն ու սիրուն աղջիկ մը։ Այդ պարը կտեսնե՞ք, ճիշտ ատոր նման շղթայի մը մեջ կդառնան այս գիշեր քույրերս ու իմիններս։ Եվ այդ գյուղական երգերն ու ոստումները, որ արևմտյան ճաշակին կրնա մեծ բան մը չխոսիլ, իմ սրտիս ամենեն ըզգայուն թելերուն կզարնե։ Իմ ժողովուրդիս սրտին ձայնն է ատիկա և անոր ուրախությունը, իմ սրտիս ձայնն է ատիկա։

— Այո՛, շիտա՛կ է,— վրա բերավ իսկույն Վարդուհին։— Ես արդեն սկսած եմ հասկնալ, դուք շատ եք հայ, մեծցած եք հայ միջավայրի մեջ և ստացած եք հայ կրթություն, ձեր հոգին չէ ծռված, շատ ավելի միամիտ եք։ Իմ կրթությանս մեջ շատ կան օտար գիծեր, օտարոտի ոգևորություն, դուցե և օտար զգացումներ։ Ձեր կյանքը որոշ նպատակ մը ունի, դուք կյանքի մեջ որոշ բան մը կփնտրեք, դուք գիտեք, որ դեր մը ունիք. Հայ ըլլալու, հայրենիքյան ծառայելու գիտակցությունը, ձեզի համար կյանքը կոչում մըն է, և ատոր համար ալ ձեր հոգին թռիչք ունի, դուք թևեր ունիք, [illegible]. ատոր [illegible] մայրը [illegible], և ատով է [illegible] ձեր հոգին։

Ես խորին զարմանքով ու խորին հաճույքով քարացած՝ ականջ կըդնեի իր ըսածին։ Եվ զգացի, որ հպարտ եմ իրմով, զգացի, որ ոչ միայն կսիրեի այդ աղջիկը, այլ խորապես կհարգեի։

Իմ այդ զգացումիս բնական արտահայտությունը եղավ, երբ ըսի իրեն հիացումով.

— Չեք կրնար երևակայել, թե դուք ինքներդ ինչքան բարձր եք իմ աչքիս, եթե իմ առավելությունս իմ ավելի միաձույլ կրթությանս մեջն է, ձեր առավելությունը ձեր հոգիի բնական նրբազգացության ու ինքնաբեր բարձրության մեջն է։

Վարդուհին խնդաց, կարծես քիչ մը իրեն անհարմար զգաց, կամաց մը ելավ ոտքի և ըսավ.

— Գիտե՞ք ինչ կա, քանի որ երկուքս ալ այսպես հիացած ենք իրար բարձրությամբ, լավ է՝ այդ բարձրության վրան ալ մնանք և այդ բարձրության վրան ալ երթանք պառկելու։ Գիշե՛ր բարի։

Եվ ոգիի մը նման ինչպես ելեր էր դուռնեն, այդպես ալ արագ ու թեթև սպրդեցավ ներս։

Իսկ ես դեռ երկար կպտտեի դուրսը միայնակ։ Ուխտավորները քալելեն, ցատկելեն ու խմելեն հոգնած՝ խմբովին փռվեր էին իրենց խսիրներուն ու կարպետներուն վրա ամենատարօրինակ դիրքերով։ Հոս ու հոն կլսվեր դեռ երգի մը մնացորդը, խոսակցության մը քայքայումը կամ գինովի մը պոռոտախոսությունները։

Վերջապես ես ալ մտա սենյակ։ Լուռ էր ու կես մը իջեցուցած լամպեն աղոտ լուսավորված։ Աչքս բնականաբար Վարդուհիենց բաժինը նետեցի։ Վարդուհին մեծ շալի մը ծալքերուն մեջ փաթթված կքնանար Կատույային կից. մազերը խառնակ ինկեր էին դեմքին, ձախ թևը մինչև արմունկը բաց՝ նետեր էր գլխուն վրա։

Ես ալ տեղավորվեցա մերիններուն քով՝ աչքերս այդ մերկ ու սիրելի դաստակի գամած։ Չգիտեմ հույն դիցաբանության ինչ գրքի մը մեջ դիցուհիի մը պատկերը կհիշեցներ. պառկած նույն դիրքով, նույն խառնակ մազերը ճակտին և նույն ձախ թևը նետած գլխուն ետևը։ Եվ երևակայությանս մեջ, ուր անշուշտ կես բացած լամպի կիսատ լույսը իր որոշ դերը ուներ, իմ Վարդուհին ու հույն դիցուհին սկսան իրար ձուլվիլ գեղարվեստական հիանալի ամբողջություն մը առաջացնելով, միայն թե հետզհետե մտքիս մեջ ամեն բան սկսավ աղոտանալ ու մշուշոտիլ...

Եվ երբ նորեն աչքս բացի՝ այնքան պայծառ լույս մը ինկած էր պատուհաններեն ներս, որ աչքերս շլացան, ստիպվեցա գոցելու։ Եվ առաջին մտածումս արմունկը եղավ։ Վարդուհին հոն չէր, և ընդհանրա-



պես սրահին մեջ մարդ չկար, բաց դռներուն առջևը սեմին վրա նստեր էր մեր նկարիչը և թան մը կնկարեր։

Աշխույժ շարժումով պառկած տեղես նստեցա և նոր նկատեցի, որ վրաս ծածկեր էին հավելյալ ծածկոցով մը, և որքան մեծ եղավ հաճույքս, երբ Վարդուհիին կրկնոցը ճանչցա։ Դեռ ինքս ինծի հաշիվ չտըված՝ թե այդ կրկնոցը ինչպես էր վրաս նետված։ Վարդուհին ինքը ցատկելով ներս մտավ սենյակ։

— Ա՛խ, արթնցե՞ր եք պարոն ծո՛ւյլ,— խնդաց շիտակ ինծի գալով։— Մենք ճիշտ ժամ մըն է, որ ելեր ենք, տեսա, որ պառկեր եք գրեթե բաց՝ կրկնոցս վրանիդ նետեցի, շատ անզգույշ եք,— վերջացուց խոսքը ձեռքի թաշկինակը թեթև մը դեմքիս զարնելով։

Անուշ հոտ մը պարուրեց դեմքս ու անբացատրելի բախտավորություն մը՝ հոգիս։ Ուրախութենես գինով ցատկեցի ոտքի, և ալ ամբողջ օրը գրկած էր էությունս Վարդուհիի տված բույրն ու երջանկությունը։

Մինչև ճաշ ինչպես անցավ՝ չգիտեմ. երկու տուն խառնված էինք իրար, ուտելիքի պատրաստություն, խոսք ու կատակ, երբեմն և ծովուն եզերքեն պզտիկ պտույտ մը՝ որու միջոցին մեր նկարիչը արագ-արագ քրոքիներ կվերցներ։ Իսկ ես ու Վարդուհին իրարու շուրջ կդառնայինք։

Ճաշեն ետքը երեքով՝ Վարդուհին, եղբայրն ու ես, ելանք կղզին, շրջելու, թեև տաք արևը վրանիս իր բոցերը կթափեր։ Բարձրացանք կղզիին գագաթը, ուր բավական բազմություն կար։ Իջանք լեռան հարավային-արևելյան եզերքը, որ բոլորովին ամայի է։ Կմտնեինք ժայռերուն խոռոչները, կբարձրանայինք քարափները, և ո՞վ գիտե դարերե ի վեր միայն սրբակրոն մենակյացի մը աղոթքին մրմունջները պահող ճգնարանները պահ մը կարձագանքեին Վարդուհիի հնչուն ու կենսուրախ ծիծաղին։ Ու Վարդուհին ինքը ամբողջ թրթիռ էր, նազանք ու հմայք, գեղեցիկ ու կրակոտ կյանք մը։

Եղբայրը առտվան պես կնստեր հոս ու հոն, իր նկարի տետրակին մեջ «հուշեր առնելու», հետը կպտտցներ նաև իր ներկերուն տուփը, բայց օգտագործել չկրցավ, կարծեմ անգամ մը միայն։

Արևը մարը խոնարհելու վրա էր, որ մենք նորեն բարձրացանք լեռան գագաթը։ Գագաթը մարդ չէր մնացած, խարխուլ մատուռին շուրջը պարապ էր, ամենքը իրենց գիշերվան քեֆի պատրաստությամբ էին զբաղված վարը։

— Ի՜նչ գույներ են,— բացականչեց նկարիչը՝ արևմուտքին վրա լեռան գագաթներու խումբ մը մատնանշելով, որ նարնջի ու մանիշակի արտասովոր բաղադրություն մը կհորիներ ամպերու շատ թեթև շղարշի մը ետևեն։

— Վայրկյան մը նստեցէ՛ք, սա գույները բռնեմ,— ըսավ ոգևորված ու նստեցավ ժայռի մը ցցուքին։

— Դուք բռնեցէ՛ք ձեր գույները, մենք ալ կերթանք մատուռը,— ըսի,— առտուն շատ բազմություն կար, շնորհքով չմտեցանք։

Քիչ մըն ալ բարձրացանք ու մտանք ավերակ մատուռը. բանված ժայռի մը վրա ժանգոտ խաչ մը կար սեղանին վրա, քովն ալ բզկտած կազմով ավետարան մը, և ամեն կողմ սեղանին ու պատերուն փակցված վառված ու հանգած բարակ մոմի մնացորդներ։

Տխուր էր. խոնարհություն մը ըրինք ու ելանք դուրս։

— Երթա՛նք սա ժայռին ծայրը,— ըսի,— կարծեմ կղզիին ամենեն բարձր կետն է։

Եվ ուղղվեցանք մատուռեն ոչ հեռու ժայռակույտը։ Ժայռի պատռվածք մըն էր, աղվոր խորշ մը, միս-մինակ, ետևի աշխարհեն կտրված, դիմացինիս հեռավոր արևմուտքի լեռները, վարը ծովը ոտքերնուս տակ ու վրանիս կապույտ երկինք։

Վարդուհիի հետ շատ էի մինակ մնացեր, բայց երբ օդային այդ խորշին մեջ աշխարհեն կտրված նստեցանք իրարու քով տափակ քարի մը վրա, զգացի, որ սիրտս սկսավ թփրտալ։

Եվ ճիշտ այդ վայրկյանին արևը դիմացի Գեղարքունի լեռներու երկու սուր գագաթներուն մեջ վարը կմտներ։ Ամեհի, խոշոր ոսկի մը, որ ժամանակը ծանր-ծանր ու դժվարով կմտներ իր օրերուն գանձանակը։

Ոսկին վերջապես անհայտացավ, և արյան կարմիր մը ողողեց երկնակամարին այդ հատվածը, և ամպերու բամբակե փեռեկտումներ այդ արյան մեջ թաթխված իջան ու գոցեցին գանձանակին նեղ անցքը, ուրկե քիչ մը առաջ ներս էր սահեր մեր օրվան արևը։

Իսկ երկնքի այդ արյունոտ հատվածեն անդին՝ որքան հեռու, այնքան մութ-թանձր կապտագույն կամար մը, որ իր գորշությամբ բոլոր հայացքդ կարմիրին վրա կկեդրոնացնել կուտար։ Կարմիր մը, որ կցոլար ծովուն մեջ՝ մութ-կապտորակ ջրի մակերեսին վրա ծիրանի հեղեղ մը հոսեցնելով։ Ծովու ու երկնքի այդ կարմիրը կարտացոլեր կղզիի մեր շրջակա ժայռերուն վրա, մեր-մեկուսի խորշին վրա, մեր վրա։

— Աստվա՜ծ իմ, այս ի՜նչ գեղեցիկ բան է,— բացականչեց Վարդուհին ու ձեռքը կամաց մը դրավ ձեռքիս վրա։

Ալ դիմանալ չկրցա ու բաժակը հորդեց.

— Այս բացառիկ գեղեցկության դեմ, այս ծովուն վրա, Սևանի այս լռության վրա, այս գույներուն, այս ամպերուն ու այս երկնքին դեմ, Վարդուհի՛, քու հոգիդ ինծի ըսելիք մը չունի՞։

Վարդուհին տարօրինակ կերպով ժպտեցավ, և աչքերը, որ աչքերուս էր գամած, մշուշոտեցան, երբ ինքն ալ շնչառ խոսվածքով մը ինծի հարցուց.



— Իսկ քու՞ հոգիդ ինծի ըսելիք մը չունի՞։

Քիչ մը թեքվեցանք իրարու, և մեր շրթունքները միացան իրարու երկար ու անհագ համբույրով մը։

— Ալ մեր ամբողջ կյանքին մեջ մենք պիտի հիշենք Սևանը,— ըսի ես, երբ քիչ մը ետ քաշվեցանք իրարմե, իրարու ձեռք սեղմ բռնած։

— Երա՛զ է,— պատասխանեց Վարդուհին խոր շունչ մը առնելով և իսկույն վրա բերավ.— Ա՜խ, դո՛ւն, իմ անգի՛ն վայրենիս։

Խնդացինք երկուքս ալ ու կրկին փաթթվեցանք իրարու։

Երբ քիչ մը ետքը ծանր ու հանգիստ քայլերով մոտեցանք եղբորը՝ իր նկարել ուզածը ավարտած էր արդեն և հավաքելու վրա էր։

— Չէ՛, հավնեցա՛, սիրեցի՛ ձեր Սևանը,— բացականչեց նկարիչը իր ներկերուն տուփը գոցելով։

— Այո՛, մենք ալ սիրեցինք,— վրա բերի ես չարաճճի շեշտով մը. Վարդուհին երեսը անդին դարձուց, որ եղբայրը իր խնդուքը չտեսնե։

### Օգոստոս 24

Ամբողջ շաբաթ մըն է, որ պառկած եմ իրիկունները առանց հուշատետրս բանալու. ժամանակ չկա ինքնամփոփումի։ Արդեն ընդհանրապես ո՛չ կկարդամ, ո՛չ որևէ լուրջ մտավոր զբաղում. հոգիս ու կյանքըս դուրս են ելած իրենց սովորական գծերեն, շարունակ շարժման մեջ եմ. երթևեկի, պտույտի և աղմուկի մեջ կա՛մ մեր տունը, կա՛մ Շամիրյաններու, միշտ ալ Վարդուհիի հետ։

Գիտենք, որ քանի մը օրեն բաժնվինք պիտի իրարմե ամբողջ երկար ու անտանելի ձմեռվան մը համար, այդ պատճառով ալ ամեն վայրկյան, որ իրար չենք տեսներ՝ անիրավություն ու կորուստ կթվի ինծի։

Երբ առանձին ենք՝ զբաղված ենք շարունակ ապագայով. ծրագիրներ կշինենք, թե մեր ուսումը ո՞ւր պիտի շարունակենք, ի՞նչ ուղղությամբ, քանի՞ տարի, ի՞նչ ձևով և ինչպե՞ս միշտ միասին։ Ա՜խ, Աստվա՛ծ իմ, ի՜նչ բախտավորություն պիտի ըլլա։

Կծրագրենք ու կերևակայենք նաև ավելի հեռուն. մեր աշխատանքը, մեր գործունեությունը, մեր դերն ու մեր ապագան կյանքի մեջ, կուզենք, որ մեր ամբողջ կյանքը ըլլա ոգեորություն ու նվիրում մեր ժողովրդի բարձրացմանը ու մարդկության։

Նվիրման մեջն է՝ բախտավորությունը, և հիմա կտեսնեմ, որ սեր ըսվածն ալ նվիրում է՝ իր հոգիին ու իր գոյության նվիրումը։

Միքայելը մեջեմեջ կուգա, և որովհետև գալու ատենը գիտեմ, միշտ տունը կգտնվիմ, և ավելորդ բացատրությունները խուսափելու համար՝ զբաղված ըլլալ կձևացնեմ. խեղճը հոսկե-հոնկե քիչ մը կխոսի ու կձգե կերթա իմ գրամոլությունս ու անգործնականությունս հայհոյելով։ Երբ կմեկնի, բութ խայթ մը կզգամ, քաղաքավարի կերպով ընկերս կվռնդեմ, թեև ինքը անշուշտ չի գիտակցիր։

Երեկ որ եկավ, մասնավոր կերպով հուզված էր. ան ալ ապագայի ծրագիրներով է տարված.

— Ալ դպրոցը,— կըսեր,— չի քաշեր ինծի, չգիտեմ ինչպես ամբողջ տարի մըն ալ պիտի դիմանամ. մորս խաթեր կմնամ միայն, շատ ուսում սիրող կին է բնազդորեն. «Մեկ տարի է մնացեր, պետք է որ լրացնես» կըսե։ Թե չէ՝ իսկույն եղբորս հետ կլծվեի հողային աշխատանքի, մորաքրոջս հողերը տեսար, անոր քովը մենք ալ բավական ընդարձակ հողեր ունինք, հիմա կապալով ենք տված ոչինչ գնով, մեծ ու հրաշալի գործ կարելի է դարձնել։ Պետք է արժեցնել դեռ մեր ձեռքը մնացած հողերը։ Մեր լավագույն հողերը ռուս գաղթականներու կուտան, հիմա ալ բախտախնդիր եվրոպացիներ սկսած են երևան գալ։ Պետք է մաքառիլ անոնց դեմ և՛ աշխատանքով, և՛ կատարելագործելով, պետք է ձեռք բերել նոր հողեր, եթե ապագա ունենալ կուզեք՝ հողերը պետք է պահենք հայ ձեռքերու մեջ։ Լուրջ հարց է ասիկա։

Եվ ձեռքերը գրպանը դրած՝ արագ քայլերով կերթևեկեր փոքր սենյակիս մեջ, հանկարծ կանգ առավ շիփ-շիտակ դեմս և տարօրինակ ժպիտով մը վրա բերավ երազկոտ.

— Այս բոլորը աղեկ, բայց վայրկյաններ կան, որ ալ աչքիս ոչինչ չերևար։ Այս ամենը շատ երկար-բարակ կթվի ինծի ու շատ հանգիստ ու միակերպ և կարծեմ քիչ մըն ալ բնավորությանս ո՛չ այնքան համար։ Այդ վայրկյաններուն բուռն ու խենթ իղձեր կանցնին մեջես, աղմուկ, տակնուվրայություն կուզեմ, անձնվիրություն ու դյուցազնություն կերազեմ, կուզեմ զարնեմ, զարնվիմ, ձիս ալ ախոռեն կարծես դիտմամբ կսկսի վրնջել անհամբեր, և հայացքս ակամա դեպի պատեն կախված հրացանը կբարձրանա։ Հապա՛, աս փորձանքն ալ կա։

Եվ իր եզրակացության ու երկմտանքին հետ ետ նետեց դռանս փեղկը ու ելավ գնաց։

Այո՛, դժվար է դպրոցականի վերջին տարին։ Կյանքը իր պահանջները կդնե. մեկ ոտքով արդեն կյանքի մեջն ես կարծես, բայց նորեն պետք է երթաս ու աշակերտ խաղաս։

Թեև անձնապես ինծի համար քիչ մը տարբեր է պայմանը։ Միքեն ուղղակի գործի անցնիլ կուզե. իմ ճամփաս համալսարանի միջով կեր-



թա։ Պիտի հաջողի՞մ։ Ո՛չ մեր ունեն, ո՛չ հորեղբորմես լուրջ օժանդակություն հուսալ չեմ կրնար, թեև, ո՞վ գիտե։

Այո՛։ Պիտի հաջողի՛մ. ինչ գնով ըլլա, պիտի հաջողիմ, պիտի հաջողիմ հայրենիքիս համար, պիտի հաջողիմ Վարդուհիիս համար։

Այո՛, պետք է որ ես դե՛մք մը դառնամ։

Օգոստոս 29

Շաբաթ իրիկուն Շամիրյանները եկան մեզի թեյի և հայտնեցին, որ կարասիները փոխադրող կառքը ապսպրած են արդեն և երկուշաբթի առտու կմեկնին։

Նստած էինք պատշգամը։ Եվ ամենը լավ տրամադրության մեջ. ամառանոցեն բոլորն ալ կշտացած էին և կարոտած էին Թիֆլիսը։ Տիկին Նատալիան ուրախ էր, որ պիտի կարողանա նորեն իր բժշկին հետ խորհրդակցիլ, իսկ նկարիչը ժամերը կհամրեր, այնքան ձանձրացած էր «գյուղական» այս միայնակ ու ճգնավորական կյանքեն, ինչպես հաճախ կգանգատվեր։

Վարդուհին էր միայն լուռ. կհասկնայի իր հոգին, թեև արտաքուստ իրեն շատ լավ կպահեր։

Ես և Վարդուհին կամաց մը անցանք հյուրասենյակը, մինակ մնալնուս պես նետվեցավ վիզս ու սկսավ հեծկլտալ։ Տարի նստեցուցի, սկսա շոյել ու հանգստացնել, թե վերջապես երեխա չէ, գիտե, որ օր մը ուշ կամ կանուխ ըլլալիքը աս է, և վերջապես եղածը քանի մը ամիսներ են, ինչքան ալ ծանր ըլլան, կանցնին։

— Չե՛մ կրնար, չե՛մ կրնար, չե՛մ ուզեր,— կկրկներ շարունակ արցունքին մեջեն ու չգիտեմ ինչու ռուսերեն։

Իր թաց այտերը կսահեին շրթունքներուս վրայեն, և վայրկյան մը կարծեցի, թե սիրելե ղադրած եմ՝ այն սատիճան միռելություն մը կտիրեր մեջս։ Վարդուհին ալ քիչ-քիչ հանգստացավ. և ալ մինակ չըմնացինք։ Դուրսը մութը կոխած էր, ու մեր դեմքերուն այլայլությունը աննշմար անցավ։

Անոնց մեկնելեն ետքը քաշվեցա սենյակս և երկար նստած էի լուռ ու անշարժ բաց պատուհանիս առջևը։ Քիչ մը ետքը լուսինը ինկավ սենյակս անտառին ետևեն. գիտեի, որ կեսգիշերի մոտերն է, թե՛ տունը, թե՛ դուրսը բացարձակ լռություն։ Աթոռս քաշեցի պատուհանին տակը ու թևս դրի պատուհանի եզերքին ավելի ազատ օդի մեջ ըլլալու համար։

Այդ դիրքով ալ քունս տարեր էր, երբ աչքս բացի, լույսն ալ բաց-

վիզու վրա էր ու թևս բոլորովին թմրեր էր, նստվեցա անկողնիս վրա ու ծածկոցին ծայրը քաշեցի վրաս։ Միշտ նույն մեռելությունն էր հոգիիս մեջ, անզգա էի դարձած։

Առտուն կանուխ գացի Շամիրյաններուն «օգնելու»։ Վարդուհին մեջտեղ չկար, ըսին իր սենյակը կժողվե, տիկինն ու սպասուհին խոհանոցը կհավաքեին, միայն եղբայրն էր սրահը, որ իր նկարներն ու պաստառները կփաթթեր ամենայն զգուշությամբ։

Սկսա պզտիկ օգնություններ ընել իրեն, բայց այդ գնալ-գալը, մտնել ու ելլելը քիչ-քիչ սկսավ ուղղակի բավականություն պատճառել, և այնպես ոգևորությամբ անձնատուր եղա գործին, որ ավելի ուշ, երբ Վարդուհին ու մայրը ներս եկան՝ չկրցան իրենց ծիծաղը զսպել։

Ամբողջ օրը հոն էի, մերոնք ալ քիչ մը ետքը եկան, ընդհանուր իրարանցում էր, խոսք ու շարժում. ընդհանուր հոսանքին մեջ ես ալ կորսված էի և ուրախ էի, որ այդպես էր։

Ճաշն ու ընթրիքը ըրինք մեր տունը։

Իրիկվան դեմ Վարդուհին հայտնեց մորը, որ վերջին պտույտ մը պիտի ընենք ու դուրս ելանք։ Տարի անտառ, իմ սիրած անկյուններես մեկը, և՛ բարձր դիրքով, և՛ առանձնացած։ Նստեցավ կտրված ու գետինը պառկած խոշոր ծառի մը բունին վրա, ես ալ գետինը՝ թեթև մը հենված իր ծունկերուն։

Արևը կեցած մեր դեմը, կարծես կվարաներ իջնելու ու լեռներուն ետևը անցնելու, կարծես կխնայեր, չէր ուզեր կարճել մեր վերջին միասին ու առանձին վայրկյանները։

Հանկարծ զգացի, որ Վարդուհիին մատները մազերուս մեջ կխրեին, սանրի մը պես, այդ թեթև շոշափումը տարապայման հուզում մը առաջացուց մեջս, կրծքիս տակ կարծես բան մը փլավ և երեկ իրիկվընե ի վեր մեջս սառնացած արցունքները դուրս ժայթքեցին, խլեցի ձեռքը ու սեղմեցի շրթունքներուս։

Երբ դեմքս իրեն բարձրացուցի, մեր աչքերը իրարու խառնեցան. երկու զույգ արցունքի ու ժպիտի մեջ լողացող աչքեր։

Գրկվեցանք ու սկսանք խոսիլ, հանգիստ, զարմանալի կերպով հանգիստ։ Տվինք իրարու մեր զարմանալի նոր խոստումները, միշտ սիրենք իրար, շուտ-շուտ գրենք իրար, և լավ նվիրվինք աշխատանքի ամբողջ ձմեռը, թարմ ու առողջ հանդիպինք իրար հունիսին երկուքս ալ արդեն ավարտական, որ բացահայտ ու ընդմիշտ կապվինք իրար աշխարհքի առաջ և սկսինք նոր կյանք ու ավելի բարձր կրթություն։

Մեր անխուսափելի բաժանումին հետ հաշտված էինք կարծես, երբ մութին հետ տուն վերադարձանք։ Մեր երկու ընտանիքները վերջին



անգամ մը սեղանակից եղան, և բաժնվեցանք, իրարու վերջին բարի գիշեր մը մաղթելով ամառանոցային։

Մտա անկողին ու սկսա մտածել. վրաս մեղմ թախիծ մը կար, անորոշ ու տարտամ զգացում մը, որ մարդ կունենա, երբ վշտացած է առանց խղճի խայթ և առանց հանցանք մը ունենալու։

Կկարծեի, թե նախորդ գիշերվան նման պիտի լուսցնեմ կեսարթուն, կես-թմիր, բայց որքան եղավ զարմանքս, երբ հանկարծ աչքս բացի և արևի ուժեղ ճառագայթներուն հանդիպեցա, որոնք մահճակալիս գունդերուն հետ կխաղային։

Շտապեցի պատշգամ, կարասիները բեռցած կառքը ճամփա ելլելու վրա էր, իսկ ֆայտոնը, որ ընտանիքը կայարան պիտի փոխադրեր, պատրաստ կեցած էր դռան առջև։ Ծանր քայլերով սկսա իջնել մեր սանդուղներեն։

Չեմ կրնար ճիշտ ըսել, թե ինչ կզգայի, երբ «բարի լույս» ըսելով Վարդուհիին ձեռքը բռնեցի։

Ժամ մը ետքը տիկինները իրար կհամբուրեին և տիկին Նատալիան կհամոզեր, որ չուշանան, որ մերիններն ալ շուտով քաղաք դառնան։

Ես նախապես ձի մըն էի վարձած, որ մեկ-երկու վերստ իրենց ընկերանամ։

Մնաս-բարովի արարողությունը վերջանալուն պես Շամիրյաններն ու սպասուհին տեղավորվեցան, ու կառքը շարժվեցավ, ես ալ խթեցի իմ ձիս։

Եթե իմ զգացումիս մնար՝ ետ դառնալը բնավ միտքս պիտի չբերեի ու պիտի երթայի այն կառքին զույգ, ուրկե Վարդուհիին աչքերը անընդհատ ինծի կնայեին։

Բայց մայրը, որ ինծմե ավելի իրական աշխարհի մեջն էր՝ կառքը կեցնել տվավ, ըսելով, թե ավելորդ տեղը ձիս կհոգնեցնեմ, թե այսչափ տեղ իրենց ընկերանալս ալ իրենք շատ շնորհակալ են ի սրտե և թե տունը հիմա անշուշտ ինծի պիտի սպասեն։

Հնազանդեցա ու իջա ձիես, քույր ու եղբայր, Կատյան ալ իջան կառքեն։ Ես նախ մոտեցա կառքին ու սիրով ու հարգանքով համբուրեցի մորը ձեռքը, ջերմորեն գրկեցի ու ամուր գրկվեցանք փոքրիկի հետ։ Երբ գրկես վար դրի աղջիկը, մոտեցա նկարչին ու քրոջը և ձեռք տվինք իրարու, կարծես երբեք ալ խոսելե կզգուշանայինք։

Վարդուհին հազիվ ինքզինքը կառքը նետեց, որ սկսավ արտասվել՝ դեմքը թաշկինակին մեջ ծածկած։

— Անոթ է, աղջիկ, այդքան դյուրազգաց չեն ըլլար,— կըսեր մայրը՝ անշուշտ աղջկան լացը զգայնության վերագրելով։

Կառքը շարժվեցավ։

— Բարև ըրեք, բարև ամենուն,— լսվեցավ կառքեն։

Ես կեցած էի անշարժ՝ աչքերս հեռացող կառքին հառած։ Միայն գըզբորը ձեռքը կտեսնեի, որ թաշկինակ կշարժեր։ Իզուր Վարդուհիին գլուխը անգամ մըն ալ տեսնել հուսացի։

Երբ կառքը անհայտ եղավ աչքես, ուղղակի նստեցա գետին, ձիուս սանձը միշտ թևիս, ճամփուն քովի կիսաշոր խոտերուն վրա։ Կուրծքիս տակ բան մը կսեղմեր, լալ կուզեի՝ չէի կրնար, կարծես խեղդվեի պիտի, մինչև որ հանկարծ արցունքները դուրս ցայտեցին աչքերես։

Արցունքները կվազեին, ու ես տեղես երերալ չէի ուզեր։ Բայց արագ մոտեցող կառքի մը թավալումը ինծի ստիպեց ոտքի ցատկելու։ Սրբեցի աչքերս և ձիուս սանձեն բռնած ես ճամփա ինկա։ Վրաս ո՛չ դող էր մնացեր, ո՛չ խեղդվուք և ո՛չ հուզում, այլ նուրբ ու փափուկ տխրություն մը միայն։

Տունը մնալ չկրցա, հազիվ պատառ մը բան կերա ու իջա ձոր, ելա անտառը, ամեն ծառ, ամեն քար, ամեն անկյուն Վարդուհիես թարմ հիշատակ մը ուներ։ Վերջն ալ շատ ավելի ուշ գացի նստեցա այն կոճղին վրա, ուրկե երեկ Վարդուհիին հետ վերջին անգամ միասին մեր ամառանոցի արևին մայրամուտը կդիտեինք. հիմա ալ կդիտեի, ճիշտ երեկվանը, բայց ես էի, որ այլևս երեկվանը չէի. մինակ էի։

Մինա՞կ։ Ո՞վ ըսավ։ Երբեք։ Վարդուհիի հետն էի և՛ հիմա, և՛ ընդմիշտ։ Ալ հոգիս հյուսված է իմ անգին աղջկանս հոգիին, ան իմ հոգիիս մեջն է, մասնակից ու խորհրդատու իմ բոլոր մտածումներուս, զգացումներուս ու աշխատանքիս։ Այսպե՛ս խոստացանք մենք իրարու, և այդպե՛ս կընե արդեն սերը ինքնին։

Տխրությո՞ւն ու լքո՞ւմ, բնա՛վ երբեք, այլ ոգևորություն, կեդրոնացում և աշխատանք։ Սիրե՛լ ու աշխատի՛լ. ա՛ս թող ըլլա մեր կյանքը։

Օգոստոս 31

Հազիվ նախաճաշիկեն ելեր էինք՝ որ եկավ Միքեն։

— Թռչնակը թռեր է, վանդակը պարպվեր,— ըսավ՝ աչքովը Վարդուհիենց ամառանոցը ցույց տալով։

— Այո՛,— պատասխանեցի։— Երեկ տարի ճամփու դրի։

— Գիտեմ, պառավը ըսավ։



— Վա՞յ, երեկ դուն հո՞ս ես եկած։

— Նախորդ օրը եկա, ըսին՝ Շամիրյաններուն է, ետ դարձա։

— Հա՛, պարոն նկարչին օգնելու էի գացեր, բեռ մը պիտանի ու անպիտան թուղթեր ու պատկերներ փաթթեցինք։

— Երեկ ալ եկա...— շարունակել կուզեր Միքեն, որ նորեն կանխեցի։

— Այո, պետք է ճամփու դնեի, դրացնություն է, քաղաքավարությունը կպահանջե։

Միքայելը հանկարծ ելավ ու կեցավ դեմս՝ շեշտ աչքերուս մեջ նայելով, քիչ մնաց, որ աչքերս խոնարհեի, արդյո՞ք հասկցած էր, որ չարաչար կկեղծեի։

— Կզարմանամ քեզի,— ըսավ ծանր-ծանր,— մարդ աչքերուն տակը օրիորդ Շամիրյանի նման սիրուն ու կենսուրախ աղջիկ մը ունենա և ակնհայտնի կերպով զվարճանալ ուզող և քեզի պես այդպես պաղ ու անտարբեր մնա՞։

— Ի՞նչ ըսել է «պաղ ու անտարբեր»,— հարցուցի ես հնար եղածին չափ պաղ ու անտարբեր շեշտով մը։

— Է՛, անպետք մարդ ես դուն,— ըսավ արհամարհանքով, գնաց դեպի լուսամուտը և սկսավ թռած թռչնակի պարապ վանդակը դիտել։

Իսկ ես մտքիս մեջ այդ միջոցին ակամա իմ ու Միքեի բնավորության զուգակշիռը կընեի։ Ան բաց ու պարզ. և եթե իմ տեղս ըլլար՝ առաջին իսկ օրեն, իր զգացումի առաջին խլրտումին պիտի գար ամեն բան ինծի պատմեր ընկերաբար, մինչ ես ամեն կերպ կջանամ ահա՛ ծածկեմ իրմեն, ինչպես և ամենքեն սրտիս հուզումն ու եռումը։ Կմտածեմ՝ ինչո՞ւ, արդյոք հպարտությո՞ւն է, արդյոք ծածուկ պահելեն ծածուկ հաճո՞ւյք մը կզգամ, թե՞ պարզապես հոգիս ավելի անհաղորդ է ու ինքն իր մեջ։ Իմ ներքին աշխարհս ավելի խոր ու պղտոր, վարար գետի մը պես կերևա աչքիս, որուն խլրտուն ալիքներուն տակ ամեն շարժում կծածկվի հետաքրքիր աչքերե։ Մինչ Միքեի սիրտը սիրուն ու վճիտ լճակ մըն է, որուն թափանցիկության մեջեն կարելի է համրել հատակի ամեն մեկ խիճը։ Ու կխորհիմ, թե այս երկուքեն ո՞րն է աղեկ. եզրակացություն չունիմ, միայն կզգամ, թե որքա՛ն հակառակ պիտի ըլլար իր ու իմ կազմին, եթե Միքեի հոգին իմինիս պես գաղտնի մնար, կամ ես Միքեի պես ու բաց նամակի մը նման ամենուն մատչելի հոգի մը ունենայի։

— Ի՞նչ կմտածես։ Շատ մի՛ մտածեր, շուտ կծերանաս,— ըսավ Միքեն հանկարծ լուսամուտեն ետ գալով և մեր երկար լռությունը խզելով։

— Կմտածեմ, որ վաղը սեպտեմբեր մեկն է. դպրոցը շատ-շատ չարաթե մը դասերը կսկսին։

— Ճիշտ ատոր համար է, որ երեք օր է իրար տեսեր քեզի կուգամ։

— Ե՞րբ մեկնինք։

— Վաղը ես զբաղված եմ, դուն գնա՛ փոստային կառքը պայմանավորվե հաջորդ օրվան համար։ Ես այլևս քեզի գալ չեմ կրնար. սեպտեմբեր երկուքի առտուն կուգաս ինծի կառնես, և իրիկունը կըլլանք դպրոց։

— Աղե՛կ,— ըսի ես կարճ ու բաժնվեցանք։

Ես իսկույն զգացի, որ ուրախ բան մը շարժվեցավ մեջս։ Վարդուհիիս հեռանալեն ետքը հոս այլևս ոչինչ չկա ինծի համար հրապուրիչ, իսկ դպրոցս կարոտեր եմ, սիրած ընկերներս միտքս կուգան, մեր խոսքն ու աղմուկը, մեր դասերն ու աշխատանքը, նույնիսկ մեր խաղերը, որ տարվան եղանակներուն հետ կանոնավոր կերպով կփոփոխվին մեկերկու ամիսը անգամ մը։

Դպրո՛ց. այո՛, ժամանակ է։

### Սեպտեմբեր 1

Տնեցիները ինծի ճամփու պաշար պատրաստելու վրա էին ամբողջ առտուն։ Ես ալ գրեթե մեքենաբար լրացուցի բոլոր մանր-մունր գործերս։ Երբ գրքերս կկապեի՝ հեգնական ժպիտ մը խաղաց շրթունքներուս. մեծ մասը դեռ չէի բացած։ Եվ հատկապես տուժած էին գրաբար գրքերս։

Իրիկունը վերջին անգամ մը պտույտի ելա միս-մենակ և այցելեցի բոլոր սիրած անկյուններս։

Արդեն մթնելու վրա էր ու տուն կվերադառնայի. օրերն ալ սաստիկ կարճացած են։ Հանկարծ գաղափար մը անցավ մտքես. երթամ Վարդուհենց պարտեզին ալ վերջին այց մը տալու, հո՛ն, ուր այրեր էի այնքան քաղցր վայրկյաններ։ Կզգայի, որ ընել ուզածս բավական ծիծաղելի բան մըն էր՝ մտնել օտարի գոց ու պարապ պարտեզեն ներս, բայց քայլերս արդեն այն կողմը կուղղվեին։

Գոց էին տան բոլոր փեղկերը, ինչպես և պարտեզին դուռը։ Ետևի, անտառին կողմի պատը գիտեի, որ բարձր չէր և հոնկե ալ գողի պես ցատկեցի ներս։ Այո՛, գողի պես և ցատկած վայրկյանիս միայն մեկ մտածում մը ունեի, մտածում մը, որ գոզերուն է հատուկ՝ «մարդ չըտեսնեն»։



Ածուները բավական ավրված էին շատ տեղ, և չորցած բույսերը մասնավոր կերպով աչք կիյնային։ Պարապ տունն ու լքված պարտեզը արդեն ինքնին ճնշող բան մը ունին իրենց վրա. ունայնության գաղափարին հետ հարակցություն մը, բայց երբ այդ պարապ տան ու լքված պարտեզին մեջ երբեմն աղջիկ մըն ես սիրած, ա՜, այդ ճնշումը կդառնա ուղղակի այրուցք։

Մտա բաղեղներուն ետևի մեր «դասարանը», ինչպես Վարդուհին կանվաներ հաճախ, նստեցա հոն, ուր սովորաբար կնստեի և իմ դեմս Վարդուհին՝ գիրքը ձեռքը, ժպտուն, ընդհանրապես մազերը թափած ճակտին, շիկնած ու վառվող աչքերով։ Աչքերուս դեմ իր դեմքն ու կերպարանքը հետզհետե սկսավ հստականալ ու կենդանանալ, դեմքին ամեն մեկ գիծը կտեսնեի, կհիշեի իր ամեն մեկ շարժումը, նայվածքը, բայց ի՞նչ հիշել, ան ինքն էր դեմս, ինքը, իրապես, անձամբ։

«Վարդուհի». կբացականչեմ ես խելագար ու վեր կցատկեմ թևերուս մեջ առնելու։

Ի՜նչ հիասթափում։ Այդ ակնթարթի մը սոսկ պատրանքը շատ սուղի նստեցավ ինծի. կարծես սիրտս կանգ առավ զարնելե ու շունչս կտրեցավ։

Հազիվ կրցա երթալ դեպի պատը, ուրկե ներս էի մտած, ու կերպ մը նորեն դեպի դուրս ցատկեցի.

### Հունվար 10

Վարդուհի՛, իմ գոհար վարդս, գիտեմ քիչ մը պիտի զարմանաս, երբ այս հաստ կապոցը հանձնե քեզի poste restante-ի պաշտոնյան նորեն խորհրդավոր ժպիտ մը շրթունքին, ինչպես անցած անգամ գրեր էիր։ Բայց կապոցը բանաս թե չէ՝ զարմանք չի մնար։ Պիտի տեսնես, որ աս ալ իմ սովորական նամակներես մեկն է։ Նամակներես ամենեն առաջինը և ամենեն ալ երկարը, որ ես գրեր եմ քեզի, առանց գիտնալու, որ կգրեմ քեզի։

Ասկե ուղիղ տարի մը առաջ էր, որ Նոր-տարվան արձակուրդին պարապ իրիկուն մը գաղափարը ունեցա և որոշեցի հատուկ տետրակ մը պահեմ «Օրը օրին» վերնագրով, ուր մտցնեմ օրը օրին մտածումներս ու ապրումներս։

Մինչև Դիլիջան ամառանոց գալս հազիվ տասնյակ մը էջեր էի միայն գրած ընթերցումներուս և դպրոցական կյանքի երևույթներուն շուրջը, որոնք մասնավոր հետաքրքիր բան մը չունին քեզի համար, ոչ ալ նույնիսկ հիմա ինծի համար։

Բայց քեզի տեսած վայրկյանես ամեն ինչ փոխվեցավ իմ խեղճուկ «Օրը օրին» տետրակիս մեջ. տետրակս կյանք առավ, կենդանացավ, վեպի նման բան մը դարձավ, և քու հեռանալուդ հետո ալ գոյություն ունենալե դադրեցավ։ Ալ ինչացո՞ւ էր առաձին տետրակը, երբ շաբթե-շաբաթ քեզի գրած նամակներուս մեջ իմ բոլոր մտածումներս, ապրումներս, աշխատանքս ու շրջապատիս պայմանները կպատմեմ քեզի և շատ ավելի բազմակողմանի կերպով։

Քու վերջընթեր նամակիդ մեջ մեր ամառվան մասին մեկ-երկու հուշեր ունեիր, որ ինծի սաստիկ հուզեց և ուրախացուց։ Եվ խսկույն որոշեցի՝ ես ալ քեզի նույն ձևով հուզեմ և ուրախացնեմ։

Նոր-տարվան արձակուրդը սկսելուն պես՝ ամեն աշխատանք դրի մեկդի։ Հանեցի և ուշադրությամբ կարդացի «Օրը օրին» գրածներս, որ խսկապես մեր սիրո պատմությունն է։ Տեղ-տեղ լրացուցի քիչիկ մը հիշողությամբ՝ գրածս ավելի յրիվ ու հստակ դարձնելու համար, տեղ-տեղ ալ քիչ մը կոկեցի լեզուն ու արտահայտելու ձևը՝ գրածս ավելի գեղեցիկ դարձնելու համար։ Ետքն ալ նստեցա ու արտագրեցի մեծ խնամքով, հատիկ-հատիկ, որ կարդալու դժվարություն չունենաս և նորեն չմեղադրես իմ արագ գիրս։

Քեզի հաճույք պատճառելու համար էր, որ ձեռնարկեցի այս աշխատանքին, իրավ է, բայց հիմա եկո՛ւր քեզի խոստովանիմ, որ այդ աշխատանքը եղավ ինծի համար անփոխարինելի ուրախության մը աղբյուրը։ Ես ո՛չ միայն շտկեր ու արտագրեր եմ ամբողջ երկու շաբաթ շարունակ, այլ աշխատանքիս ամբողջ ընթացքին ես վերապրեր եմ այդ բոլորը. ամբողջ ժամանակը քեզի հետ եմ եղեր, հոգի՛ս, ցերեկ ու գիշեր հուզված կեդրոնացումով և այրող կարոտով։

Իմ այս հուշերուս հետ հիմա ամբողջ հոգիս իր մերկությամբ կդնեմ քու աղվոր ձեռքերուդ մեջ։ Մեջը մեկ-երկու տեղ գծեր կան, որ աղեկ չգիտեմ, թե ինչ տպավորություն պիտի ընեն քու վրադ, բայց չկրցա գրածիս մեջեն որևէ իրողություն հապավել կամ քողարկել. կուզեմ, որ դուն ինծի ճանչնաս այնպես, ինչպես որ կամ, կուզեմ, որ դուն սիրես ինծի այնպես, ինչպես որ եմ, որպեսզի երբեք չհիասթափիս։

Ա՛ռ ուրեմն. քեզմե առածս, քեզմով զգացածս քեզի կնվիրեմ, Վարգուհի՛, իմ անգի՛ն վարդս։

# ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ

Վեպ

## Ա

Սեպտեմբերի վերջը տաք իրիկուն մը, հազար ութը հարյուր ինըսունին։

Անհագին իրարանցում Պոլսի մեծ կամուրջին վրա։ Կապոցներով, պայուսակներով բեռնավորված ընտանիքի հայրեր, խանութպան պատանիներ ու Բերայի վաճառանոցներուն մեջ ուշացած կիներ կշտապեն իրենց վերջին շոգենավին։ Առատ հոսանք մը կամուրջի երկու ծայրերեն, որոնք դեմ դեմի կուգան ու անդադար իրարու կհյուսվին։ Կամուրջին վրա ձիերու դոփյուն, կառքերու դղրդոց։ Կամուրջի երկու կողմեն ժամանող ու մեկնող շոգենավերուն սուլլն ու շռնչը։ Կամուրջին տակ «ճանճերուն» ճիչը և մակուկավարներուն հայհոյանքը։

Այս բոլոր աղմուկին անտարբեր երիտասարդ մը Ոսկեջյուրի կողմի վանդակներու քովեն դեպի Ղալաթիա կիջներ արագ քայլերով։

Մաքուր ու կոկիկ հագված, միջահասակ, քսանըհինգի շուրջ տղա մըն էր ան, նուրբ ու ազնիվ դիմագծերով, բարակ ընչանցք մը, փոքրիկ մորուք ու սև խոշոր աչքեր, որոնք այդ վայրկյանին հառած էին Ոսկեղջյուրի կոհակներուն։

Արևի մայր մտնող ճառագայթները վերջին անգամ մը կգգվեին հետզհետե նեղցող ջրին այդ շերտը ու ոսկեթել շղարշ մը կնետեին վրան։

— Ճիշտ որ ոսկի-եղջյուր,— եզրակացուց երիտասարդը։

Բայց հազիվ իր եզրակացությունը հանած՝ ուսին ամուր հարված մը կերավ հովանոցի, և ետևեն ալ հազիվ լսելի մարած ձայն մը.

— Ես քու խե՛րդ անիծեմ։

Երիտասարդը բնազդորեն սեղմեց ձեռքի գավազանին կոթը ու խոժոռած ետին դարձավ, սակայն իսկույն ժպիտ մը բացվեցավ դեմքին ու բացականչեց զվարթ.

— Բարե՛, Վասա՛կ, աս ուրկե՞։

Իսկ խեղճ Վասակը, որ կարճահասակ, մորվեղ ու թուխ երիտասարդ

մըն էր, ձախ ձեռքով իր հինկեկ հովանոցին հենած, աջով կուրծքը կսեղմեր շնչառությունը կանոնավորելու համար։

Երբ քիչ մը ուժը ամփոփեց՝ լայնեզր գլխարկին տակեն սև ու խոշոր ակնոցներուն մեջեն սուր նայվածք մը նետելով դիմացինին, կրկնեց.

— Ես քու խերդ անիծեմ, հինգ վայրկյան է ետևեդ կվազեմ, տիրոս, թոքերս բոլոր իրար անցան։ Ի՞նչ կշտապես այդպես, ետևեդ մա՞րդ է ինկեր։

— Հայա՛, դո՛ւն։

Վասակի դեմքեն ժպիտի նման բան մը անցավ, խորունկ շունչ մը քաշեց, պինդ բռնեց ընկերոջը թևեն, ու սկսան միասին քալել։

— Գիտե՞ս, Բագրատ, Թիֆլիսեն նոր նամակ առի։

— Ես դեռ կսպասեմ։ Է՛, ի՞նչ նորություն։

— Նորություն ոչինչ, բայց աղտոտություն, հիմարություն, ստորնություն ու անամոթություն լեցուն։

— Այդքան աղվոր բաները միասի՞ն,— հարցուց Բագրատ կատարյալ լրջությամբ։

— Քեզի համար հարցուցեր էին, թե ի՞նչ բանի ես,— շարունակեց Վասակ։

— Եվ ի՞նչ պատասխանեցիր։

— Ի՞նչ պիտի պատասխանեմ, գրեցի, որ Կովկասեն գալեդ ի վեր կա՛մ Պոլսի դպրոցները կպտտիս, կա՛մ վերին իդեալական գավառները, գրեցի, որ արդեն եկած ատենդ խենթ էիր, հիմա Պոլսի օդն ալ որ ծծեցիր՝ դարձար կատարյալ քամի։

— Այդ որքա՜ն ազնիվ ես գտնվեր, շատ շնորհակալ եմ։

Եվ, կամուրջին գլուխը խռնված բազմությունը ճեղքելով՝ սկսան Ղալաթիայի սանդղավոր զառիվերը բարձրանալ։

Վասակ իր ծոցի ու քովի բոլոր գրպաններուն թղթերը խառնելեն ու որոնելեն ետքը վերջապես գտավ նամակը, բացավ ու կարդաց։ Եվ Կովկասի ու նամակին շուրջը խոսակցելով երկու բարեկամները բավական վեր ելած էին արդեն, երբ Վասակ նամակը նորեն գրպաններեն մեկուն մեջ տեղավորելով.

— Իսկ դուն դեռ նույն հյուրանո՞ցն ես,— հարցուց։

— Ո՛չ, այս երկու օր է՝ ֆրանսացի ընտանիքի մը մեջ սենյակ մը վարձեցինք Գևորգի հետ։

— Ո՞ր Գևորգը։

— Հայրենակիցս։

— Հա՛, աս կարնեցին։ Ի՞նչ տեսակ տեղ է, գո՞հ ես։



— Շնորհքով ֆրանսուհի մըն է տանտիկինը, պալատական տիկիններու հագուստեղենը կկարե եղեր, երկու աղջիկ ունի, հատ մըն ալ հոգեզավակի պես հույնուհի մը։ Սենյակը հոս մոտերն է, եկո՛ւր անգամ մը տե՛ս։ Արդեն Գևորգն ալ եկած կըլլա հիմա։

Մտան կողմնակի փողոց մը և մեկ-երկու պտույտներե վերջ՝ սկսան վեր ելլել ափարթմանի մը մաքուր ու լայն քարե սանդուղներեն։

Վերջապես Բագրատ երրորդ հարկի աջ դռան զանգը քաշեց։

Ներսեն աղջիկներու աղմուկ մը լսվեցավ։

Գեղեցիկ, վայելչակազմ ու դեղձան մազերով հասուն աղջիկ մը դուռը բացավ։ Ուրիշ տաս-տասնմեկ տարեկան աղջնակ մը դիմավորելով նորեկները՝ Բագրատի հետ սկսավ ֆրանսերեն շաղակրատել։ Սենյակի դռան մոտ երրորդ աղջիկ մը դուրս եկավ արդուկված քանի մը ճերմակեղեն թևին վրա։

Վերջինս Բագրատի բարևը առավ, հետաքրքիր աչքերով դիտեց պահ մը Վասակը ու քրքջալով խոհանոց փախավ։ Իսկ Վասակ ակնթարթ մը կանգ առավ տղոց սենյակի սեմին վրա, ներս ակնարկ մը նետեց ու ժպտուն դարձավ Բագրատին։

— Փառավոր սենյակ մը, վրան ալ երեք հատ փառավոր աղջիկ. վա՜յ ես ձեր...

Մտավ սենյակ և, շիտակ դիմելով Գևորգի կողմը, որ կանաչ քանափին վրա երկնցած՝ լրագիր մը կդարձներ, ավելցուց.

— Նայե՛, ինչպե՛ս փռվեր է. ծո՛, քու Կարինդ այդ տեսակ բան շա՞տ էիր տեսած։

— Նախ բարև տուր, մա՛րդ աստծու,— ընդհատեց Գևորգ հանգիստ լրջությամբ։

Թուխ դեմքով, խաժ աչքերով, սուր-մորուք, չղուտ, նիհար դեմքով տղա մըն էր. մեկ նայվածքով կհասկնայիր, որ գավառացի էր։

Վասակ սենյակին ճիշտ մեջտեղը կեցած իր աչանցքին վրա կըդառնար ոսկի գունդերով մահճակալները, ճաշակավոր սեղանն ու պահարանները, զանազան ձևերով ու դիրքերով հայելիներն ու պատկերները զննելով։

Երբ քննությունը ավարտեց՝ դեռ գլխարկը գլխուն՝ հինկեկ հովանոցը դեռ թևին տակ, ձեռքերը ետևը կապած, եկավ կեցավ երկու կարճեցիններուն դեմը և հեգնական շեշտով մը արտասանեց։

— Եվ կըսեք, թե ժողովուրդի մեջ պիտի երթաք ու ժողովուրդի համար պիտի աշխատի՞ք, հա՞։

— Եղբա՛յր, չսխալվելու մեջ պի՛ր,— լռավ Բագրատ դեմքը [illegible] Գևորգ

քովս մարդավարի, ու ես քեզի հասկցնեմ, որ հարմար, կոկիկ ու գեղագիտական պահանջներուն բավականություն տվող շրջապատի մը մեջ ապրիլը ո՛չ միայն իմ իդեալներուս չի հակառակիր, այլ կամբողջացնե։

— Հասկցո՛ւր, նայինք,— ըսավ Վասակ բազկաթոռին մեջ նետվելով։— Ի՞նչ ալ փափուկ է շունչանորդին։ Հիմա այս փափուկ աթոռներուն մեջ պիտի նստիս իդեալներդ ամբողջացնելու համար, այնպես չէ՞, և գործը բոլորովին իդեալեցնելու կամ իդիլիացնելու համար աղջիկներեն մեկը մեկ քովդ պիտի նստեցնես, երկրորդը մյուս քովդ և երրորդն ալ... հա՛, հա՛, հա՛, հա՛...

Ու կխնդար ամբողջ մարմնով։

— Կատակդ թեև տգեղ, բայց բոլորովին սխալ չէ։ Սիրելի՛ս, կնոջ ազդեցությունը մարդուս հոգեկան զարգացման վրա ահագին է։ Կոճղի մը պես սենյակի մը անկյունը մեծնալը ուրիշ է, կանանց շրջանին մեջ, փափուկ ու հոգածու ձեռքի մը խնամքներուն տակ ապրիլը ուրիշ է. զգացումներու նրբացում և ազնվացում ըսել է։ Մինակ մտածող գլուխ մը ունեցող մարդը ինծի համար մարդու իդեալը չէ։ Մարդ տրամաբանական մեքենա մը չէ. զգացում պետք է մեզի։ Նայե՛ չորսդիդ, ի՞նչ կոշտություն է, ի՞նչ եսականություն և ի՞նչ անճաշակություն։ Պետք է կռվիլ ատոնց դեմ ալ։ Մի՛ մոռնար, որ սերը դեռ ամոթի կարգն է մեր հասարակության մեջ— սերը, որ կյանքի բարձրագույն հպարտությունն է։

— Տղա՛, գլխուս քարոզ մի՛ կարդար։ Ես բնավ չեմ զարմանար, որ ինկեր ես այս բույնը։ Իրա՛վ է, այս ճոխ ու փափուկ բաներեն շատ համ չեմ առներ, բայց ուրիշ հարց են աղջիկները։ Երիտասարդ արյան բոց ատենը, իրավունք ունիք, ձեզի մեղադրողը ո՞վ է։ Միայն մարսել չեմ կրնար, երբ գործը զգացական, ճաշակակրթական ու չգիտեմ ալ ինչական ցնդի-փնդի նրբություններով վերարկվել կուզես, երբ պարզ խրողությունը կեղծել կուզես։

— Հերի՛ք է,— ընդհատեց Բագրատ ձեռքի հպարտ շարժումով մը։— Ես քու առջևդ կեղծելու բնավ կարիք չունիմ, ես միշտ կըսեմ՝ ինչ որ կմտածեմ։

Վասակ թերահավատ շարժումով մը դարձավ Գևորգին.

— Է՞յ, դո՞ւն ալ զգացումներ նրբացնելու համար եկար, թե քա՞կդ․ երևի հոգաբարձուները ամսականդ ավելցուցեր են։

— Քեզի՞ ինչ. ես շիտակը չափազանց ուրախ եմ։

— Անտարակույս. փափուկ աթոռ, երեք աղջիկ։

Հերիք միևնույն բանը կրկնես, երե՞ք աղջիկ, մեկը դեռ տասնմեկ



տալու չկա, մյուսը այնքան հպարտ, որ մարդ աչքերուն նայելու կըվախնա։

— Եվ վախնալու ալ իրավունք ունի. այդ տեսակներեն վախնալու է։

— Այնպես որ,— շարունակեց Գևորգ,— միայն հույնուհին է քիչ մը բաց, խոսող, խնդացող, բանի մը նման։

— Տեսա՞ր, Բագրա՛տ, ինչ կուզես ըսե՝ Գևորգը արդեն իրենը ըրեր է։

— Քու ըսա՞ծդ ինչ է հիմա,— վրա նետվեցավ Գևորգ տաքցած։— Այո՛, եկեր ենք ուտենք, խմենք ու աղջիկներուն հետ քեֆ ընենք։ Ըսե տեսնեմ՝ մեր ի՞նչը կպակսի։

— Պակսի՞, ո՞վ ըսավ ատիկա, ընդհակառակը՝ կավելնա, ան ալ սիրուն, փափուկ, նուրբ ու քնքուշ էակներ... Բագրատի ճաշակը նրբացնելու համար։

— Երկուքը սկսան կոկորդալիր խնդալ։ Բագրատ ինքզինքը զըսպել ուզեց՝ չհաջողեցավ ու ինքն ալ խնդալ սկսավ։

## Բ

Դեռ ծիծաղը բոլորովին չէր մարած, որ դուրսը զանգը զարնվեցավ, ու պահ մը վերջը դեռ տան դռան մեջեն լսվեցավ հնչուն առնական ձայն մը, որ բարձր քրքիջի մը ընդհատվող հեղեղին մեջեն բարևեց դուռը բացողը ու սկսավ ֆրանսերեն խոսակցիլ, մեկ կողմեն ալ մեջեմեջ իր բոլոր ուժովը։

— Գևո՛,— կպոռար։

— Սարգիսն է,— ըսավ Գևորգ ու գնաց դեմը։

— Ի՞նչ, ա՞ն ալ ձեզի հետ է,— հարցուց Վասակ տարակուսանքով։

— Ո՛չ, բայց գիշեր մը մեզի պիտի անցնե. ատոնները այս կողմերը գործ ունի։

Այդ միջոցին սենյակի դուռը կռնակի վրա ետ հրվեցավ, և սեմի շրջանակին մեջ երևցավ միջահասակ, գիրուկ, գեղեցիկ մարդ մը, կլոր ու կարճ մորուքով, ոսկի ակնոցները քիթը, թևին տակ փաթթոց մը թուղթ։ Իր մեկ ոտքը թեև սենյակեն ներս, բայց դեռ ետին դարձած կխոսեր աղջկան հետ ու կխնդար իր լեցուն ու ամուր խնդուքովը։ Խնդալով ալ վերջապես այս կողմ դարձավ ու Վասակ նշմարելով բացականչեց.

— Հա՛, աղեկ եք իրար գտեր. խումբը գլորավ, պտուկը գտավ։ Գևո՞ ըսե՝ կուժ մը պաղ ջուր բերեն, փո՛ւ, ի՞նչ տաք է այսօր։

Ցեսը հանեց գլխեն, նստեց սեղանին վրա ձեռքի թղթերուն հետ, ինկավ մոտի բազկաթոռին մեջ, գլուխը հենեց թիկունքին, աչքերը գոցեց ու անշարժ մնաց։

— Ատ ինչպե՞ս հոգներ ես, քա՞ր ես քաշեր, ի՞նչ է,— հարցուց Բագրատ։

Սարգիս նորեն սկսավ խնդալ՝ ցնցելով ամբողջ մարմինը և մարմինին հետ ալ՝ ամբողջ բազկաթոռը։

Հույնուհին լվացվելու թարմ ջուր բերավ։

Սարգիս ելավ ոտքի, հանեց ժաքեթը, բաճկոնը, շապիկին օձիքն ու թևերը ետ ծալլեց, միևնույն ժամանակ անդադար տրտնջալով տաքեն, ճամփի զառիվերեն, տղոց բնակարանի երկար սանդուղեն, գրաշարներու ապուշութենեն ու իր նոր կոշիկի նեղութենեն։

Գևորգ ջուր կլեցներ, Սարգիս կլվացվեր ահագին աղմուկով ու մեկ կողմեն ալ կպատմեր նորեն խմբագրին հետ ունեցած «խայտառակ» վեճը։

Հազիվ երկար սրբիչը երեսին կնետեր, որ չորցվի, երբ հանկարծական շարժումով մը սրբիչը հեռացուց ու դարձավ Բագրատին.

— Տե՛ս, է՛, ինչպես ալ մոռցա։ Աչքդ լույս, Բագրա՛տ, գործդ կարգին է, այսօր տեսնվեր եմ հոգաբարձության նախագահին հետ, լարեր եմ ինչպես պետք է։ Վերջացած հարց է, կիրակի կերթաս, կներկայանաս հոգաբարձության ժողովին...

— Ի՞նչ ըսելով ներկայանամ ժողովին. ինծի ո՛չ հրավեր է եկած, ո՛չ բան։

— Տղա՛, դեռ խելքդ գլուխդ չեկավ, մոռցի՛ր այդ բաները, հոս այդ ապրանքը չի քշվիր, վերջապես կըսես, որ ե՛ս ղրկեցի քեզի։

— Ես այդ տեսակ պարապ խոսքեր չեմ հասկնար, եթե իրենց տեսուչ է պետք՝ թող երկու տող գրեն ինծի. ի՞նչ, երթամ մուրա՞մ պիտի, «էֆենտի՛մ»։

— Վասա՛կ, դուն գոնե այս խելոքին խոսք հասկցո՛ւր, նայե՛ ի՞նչ պաշտոնական բաներ։

— Ո՛չ, պաշտոնականության ինքս հակառակ եմ, բայց այդ մարդիկը սովոր են ուսուցչի հետ ծառայի պես վարվելու, պետք է հասկըցնել իրենց չափը։ Մինչև կարգին հրավեր մը չստանամ՝ ես անոնց ներկայացողը չեմ։

— Այն ատեն Քրիստոսի մինչև երկրորդ գալուստը պաշտոնի սպասե։ Դուն միտքդ դրեր ես գո՞րծ տեսնես, թե՞ գործ փչացնես։ Տե՛ս, է՛, հիմարին. այնքան աշխատած ու կարգի բերած գործս ավրե պիտի։ Չես երթար՝ մեծ բան կընես, կարծես անոնց հոգն է. ձին չեղավ՝ էշը կը-



կապեն ու կելլեն մեկդի, և իրենց էշը արդեն պատրաստ է, գիտցած եղիր։

Բագրատ գլուխը կախ՝ թաղվեցավ մտքերի մեջ։

— Սիրելի՛ս, խենթություն պետք չէ,— շարունակեց Սարգիս հաշտարար ու փաղաքշող ձայնով մը ու իր սրբիչը ավարտելով։— Գիտեմ՝ իրավունք ունիս, բայց առնելիք չունիս. գործ տեսնող մարդը այդ կարգի մանր բաներու առջև կանգ չառներ։

— Մա՞նր բաներ, այո՛, երկու ամիս չեղավ Պոլիս ոտք դնելս՝ քանի այդ տեսակ մանր բաներ ծալլեցինք ու դրինք մեկդի։ Ի՞նչ, կտարակուսի՞ս, վերջը-վերջը անշուշտ աս ալ ծալլեմ պիտի։

Եվ ասիկա ըսված էր շատ դառն շեշտով մը և կարծես ինքն իր հետ խոսելով։

— Ի՞նչ ընենք, պետք է հարմարվես տեղին ու ժամանակին։

— Ուրիշ խոսքով թափես մեջեդ ինչ որ բարձր է ու չիտակ, նետես մեկիկ-մեկիկ սկզբունքներդ։ Ճկվիլ, խոնարհվիլ ու հավասարիլ, դառնալ նման ամենուն, ո՛չ խլուրդի չափ կամք, ո՛չ մուկի մը չափ սկըզբունք։

— Մուկի մը չափ, իրավ ես, կատարյալ մուկի մը չափ,— կրկնեց Վասակ կեղծ հուսահատ ձայնով մը, բայց խնդուքը բռնել չկրցավ ու սկսավ փռնգդալ։

Եվ ամենուն ուշադրությունը դարձավ դեպի դուռը, ուրկե հույնուհին հանդիսավոր կերպով ներս կբերեր եռացող, փառավոր սամավար մը։

Գևորգ սեղանին վրա տեղ բացավ, օգնեց աղջկան, որ տեղավորե, միևնույն ժամանակ սկսավ երգել.

Սամավարի կանթն է ոսկի,
շայ բերողը չի գար խոսքի.
իր մեկ պաչը հազար ոսկի։

Գևորգին միացան Վասակն ու Սարգիսն ալ, ու կազմվեցավ հիանալի երեք մը. ամեն մեկը իր կողմը կքաշեր, իսկ աղջիկը խնդալեն կըմարեր։

Բագրատ մոտեցեր էր լուսամուտին, ճակատը հեներ էր եզերքին ու, աչքերը հառած դուրսի կես-մութին՝ կմտածեր։ Երբ երգը վերջացավ, Վասակ մոտեցավ Բագրատին, քաշեց թևեն ու կատակ մը ընել կուզեր, բայց տեսնելով անոր դեմքին տխուր ու ցրված արտահայտությունը՝ կատակը լուրջի վերածեց.

— Իդեալիստ ըսածդ միշտ ալ հիմար մըն է, իսկ դուն խորանարդ հիմար ես. հիմարություն մը իդեալ ունենալը, հիմարության երկրորդ

աստիճանը՝ այդ խղճալը կորսնցնելէն վախնալը։ Իսկ հիմարության երրորդ աստիճանը՝ երբ կողբաս կորուստ մը, ուր դեռ ոչինչ կորսված չկա։ Երանի չէր, որ գլխուդ մեջի բոլոր ցնդաբանությունները մեկեն կորսվեին ու ազատվեիր դո՛ւն ալ, մե՛նք ալ։

— Վե՛րջ տուր, անհամ ես,— ըսավ Բագրատ կտրուկ ու հրամայական շեշտով մը ու մոտեցավ սեղանին, որուն շուրջը նստեր էին մյուսները և որուն վրա սամավարը հաղթական կֆշար։

— Ուրեմն, Բագրա՛տ, վերջացած նկատենք,— ըսավ Գևորգ ուրախությամբ։— Գիտե՞ս՝ հիանալի դպրոց մը պիտի ունենանք. ամեն բան մեր ձեռքը ու համեմատաբար շատ անկախ, նյութապես ալ ավելի կարող։ Հոգաբարձուները լավ են տրամադրված, կարծես թե լուրջ գործ մը տեսնել կուզեն։ Շենքն ալ նոր, հարմար, ծովուն դեմ։ Այսքան առավելություններ ուրիշ տեղ ճարելը դժվար է։

— Այո՛, ես ալ կմտածեմ այդ բոլորը։ Եվ կենդանի աշխատանք կա կատարելու. աշակերտներուն պետք է ոգի տալ, տրամադրությունը բարձրացնել, պետք է կազմակերպել ընթերցանությունը և ուսուցիչները պետք է ոգևորել, անոնց ուղին պետք է գծել ու դրդել ինքնաշխատության։ Պետք է մշակվի գործնական ծրագիր մը և փորձնական դասեր։ Այո՛, այո՛, ընելու շատ բան կա,— բացականչեց Բագրատ, որ հետզհետե սկսեր էր ոգևորվիլ։

— Քիչ մը առաջվան տակնուվրայությունը ըսե՞մ, թե հիմակվան ոգևորությունդ,— թեթև մը հեգնեց Սարգիս։

— Նախ ուսուցիչներեն պետք է սկսիլ. գործին արմատը հոն է։ Այս գիշեր նստիմ՝ ուսուցչական մեկ-երկու հիմնական դասախոսություններու հատակագիծ մը պատրաստեմ,— շարունակեց Բագրատ՝ կարծես նորեն ինքն իրեն հետ խոսելով։

— Տղա, քիթդ քիչ մը ամոնիակ քաշե, որ խելքդ գլուխդ գա,— ընդհատեց Վասակ։— Խե՛ղճ Գևորգ, ես միայն քեզի կմեղքնամ։ Երեք չէ, տասը աղջիկ ալ որ ըլլա տան մը մեջ, նորեն ապրիլ կարելի չէ այս տեսակ խելագարի մը հետ։

Բագրատ կարծես չլսեց անգամ. կերթևեկեր սենյակին երկայնքովը իր մտածումներուն մեջ թաղված, մինչ մյուսները սեղանին շուրջ թեյով և ուտելիքներով էին զբաղված։

## Գ

Քանի մը շաբաթներ անցեր էին այդ իրիկվընե, և Ղալաթիայի հայտնի ափարթմանի երրորդ հարկի սենյակին մեջ կյանքը կատարյալ



զեղման մեջ էր։ Կյանքը մը, որուն եռումը ամենեն առաջ և ամենեն ավելի Գևորգի համար էր զգալի։

Գևորգ Կարնի ազգային վարժարանը հազիվ էր ավարտած, որ ինկավ իր ժամանակի շարժումներուն մեջ իր տարեկիցներու շրջանակին հետ և վերջին խռովություններու ատեն բանտարկվեցավ իբրև «ժողովրդական անդորրությունը վրդովող»։ Իր հարուստ ազգականները թեև կերպ մը տղան բանտեն հանելու հաջողեցան, բայց համենայն դեպս լավ համարեցին, որ ժամանակ մը աչքեն հեռու մնա։ Եվ հազիվ քսան տարեկան՝ Գևորգ եկավ Պոլիս։ Նախ կմտածեր դպրոց մը մտնե իր ուսումը շարունակելու, բայց իր հասուն տարիքը ու անբավարար պատրաստությունը արգելք եղան։ Ուստի մտածեց նորեն դպրոց մտնե, միայն այս անգամ ո՛չ թե սորվելու, այլ սորվեցնելու համար։ Վճռեց ուսուցիչ դառնալ և մասնավորաբար Սարգիսի ազդեցության տակ։

Սարգիս, որ գրեթե նույն ու նման պայմաններու մեջ Վանեն Պոլիս էր եկած և ուսուցչության սկսած, քանի մը տարվան մեջ հաջողած էր իր ինքնազարգացումը աչքի իյնող չափերով բարձրացնելու։ Միևնույն ժամանակ սկսած էր գրականությամբ զբաղվել գլխավորապես գավառի կամ գավառցիներու կյանքը պատկերելով, այնպես ութը-ինը տարվան ընթացքին Պոլսի օրագրության մեջ որոշ դիրք մը գրաված էր և անուն մըն էր։ Վերջին երկու տարին բոլորովին ձեռք քաշելով ուսուցչութենեն՝ ամբողջապես նվիրվեր էր հրապարակախոսության։ Սարգիս Պոլսի մեջ շատ բան էր դիտեր, տաշվեր էր ու փոխվեր, բայց իր սիրտը միշտ կապված էր ջերմորեն իր հայրենիքին, որ կարոտով ու շարունակ կհիշեր։ Եվ կարծես կերպ մը իր պանդխտությունը մոռնալու համար ինքզինքը կշրջապատեր գավառացիներով. իր մեկ ոտքը Պոլսի խաներուն մեջն էր, ուր դրամ շահելու սին հույսերով Պոլիս եկող գավառացիները կապրեին։

Եվ հոն էր, որ հանդիպեցավ Գևորգին և առաջին տեսութենեն իր խնամքին տակը առավ, իսկ Սարգիսի խնամքը Գևորգի համար շատ թանկագին էր, որովհետև գրեթե բոլոր ազգային ջոջերուն հետ հարաբերության մեջ էր, բոլոր գրագետներն ու քիչ թե շատ ազդեցություն ունեցող մարդիկը կճանչնար, ոչ միայն կճանչնար, այլև տեսակ մը հմայք էր ձեռք բերեր անոնց հանդեպ իր անկախ, շիտակ ու հանդուգն բնավորությամբ։

Գևորգ նախ չէր համարձակած Պոլսի պես քաղաքի մը մեջ ուսուցչական պաշտոն հանձն առնել, բայց իր ղեկավարի համոզումներուն ենթարկված՝ վերջապես վախվխելով դպրոց մը մտավ, իբրև մնայուն

ուսուցիչ «վարի» կարգերուն։ Սակայն որքան եղավ զարմանքը, երբ շատ չուտով նկատեց, որ ամբողջ դպրոցին մեջ գրավեր էր բացառիկ դիրք մը։ Ո՛չ միայն փոքրիկներեն, այլև բարձրագույն կարգերու աշակերտներեն սկսավ սիրվիլ. պարզ էր, ոգևորված ու անկեղծորեն անձնվեր։ Մեծ տղաքը զբոսանքներու ատեն շարունակ իր շուրջն էին, որոնց հետ տղու մը պես կխաղար, որոնց կպատմեր գավառի կյանքեն ու շարժումներեն։ Մյուս կողմեն ալ իսկույն ըմբռնեց, որ իր պաշտոնին համար ո՛չ միայն անկարող մը չէր, այլև Պոլսի մեջ եղած բոլոր իր նմաններեն բարձր էր. գոնե բարեխիղճ կերպով նախօրոք բոլոր դասերը կպատրաստեր, իր բոլոր ըրածին ու ընելիքին վրա շարունակ կմտածեր, կըհետաքրքրվեր, կհարցներ և ամեն կերպ կաշխատեր տղոց օգուտ տալու։ Ինքը ճարպիկ տղա, սկսավ դպրոցները հոս ու հոն այցելել, դիտել մյուսները և հետզհետե ինքզինքը սրբագրել։ Սորվեցավ քանի մը մանկական խաղեր, երգեր։ Կովկասեն մեկ-երկու մանկավարժական գրքեր բերել տվավ, իրեն համար դասավանդման եղանակ մը հարմարցուց և այս ամենուն հետևանքը այն եղավ, որ տարին չլրացած թաղին մեջ հայտնի էր իբրև լավ դաստիարակ-ուսուցիչ, որ «նոր մեթոդներով» մանուկները կկրթե։ Եվ դպրոցին մեջ արդեն ձայն ուներ, տնտեսեն բռնած մինչև հոգաբարձուները կհարգեին անոր խոսքը և խաթրեն չէին ելլեր։ Աշակերտներուն սիրելին էր։

Դպրոցեն դուրս միայն մեկ-երկու ուսուցչի հետ մոտիկ ծանոթություն ուներ. կպտտեր անոնց հետ շրջակայքը կամ սրճարանը նարտ կխաղար, որուն մեջ անպարտելի էր ճանչցված։ Իսկ քիչ մը անելի ազատ ժամանակ գտածին պես՝ շունչը խաները կառներ, հայրենակիցներուն ու համայնքներուն քովը, որոնց հետ կխոսեր, կվիճեր ,կկարդար, կերգեր ու չափազանց կազդեր, և խանի անունը դրեր էր «համալսարան»։

Գիշերները կպառկեր դպրոցը, վերի հարկը մասնավոր սենյակի մը մեջ կատարելապես չոր պանդուխտի կյանք մը վարելով։ Այսպես անցավ երկու-երեք տարի։ Թեև այդ միջոցին զանազան պատճառներով երկու անգամ դպրոց փոխեց, բայց իր վարած կյանքը այդ պատճառով բնավ չփոխվեցավ։

Օգոստոսի սկիզբները թարմ ու աղվոր առտու մըն էր, դպրոցական տարվան վերջին օրերեն մեկը, երբ դպրոցին տնօրենը Գևորգի դասաբանը մտցուց վայելուչ արտաքինով երիտասարդ մը, որուն արտասանած առաջին խոսքերեն կմատնվեր Կովկասեն ըլլալը։ Երիտասարդը ներկա եղավ Գևորգի դասին, վերջը դուրսը համակրական քանի մը խոսքեր ըսավ, իր ուրախությունը հայտնեց անոր սրտալի ու մտած-



ված աշխատանքին համար, այլև մեկ-երկու մանկավարժական նկատողություն ըրավ կատարյալ պարզմտությամբ։

Գևորգի վրա մեծ տպավորություն ըրավ երիտասարդի այդ պարզ ու անկեղծ վարմունքն ու հասկացողությունը, և անոր համեստությենեն ավելի գրավված՝ սկսավ ավելի մոտեն հարցեր տալ, ուրկե դուրս եկավ, որ պարոնը իր բարձրագույն ուսումը Ռուսաստան էր ավարտած, եկած էր Պոլիս ժամանակ մը հոն ուսուցչություն ընելու, կրթական կյանքին ու գործերին նախապես կեդրոնին մեջ ծանոթանալու, ուրկե անցնելու էր իր ծննդավայրը՝ Կարին։ Կարի՞ն... Գևորգը ոտքը գետնեն կտրեցավ։ Հաջորդեցին նոր հարցեր արդեն բոլորովին նոր շեշտով, և այդ վայրկյանեն Գևորգն ու Բագրատ իրարմե անբաժան էին։

Բագրատ Գևորգի համար դարձավ հեղինակություն մր գ.իտական ու մանկավարժական ամեն խնդիրներու մեջ։ Գևորգ Բագրատին համար թարմ ու առողջ ուժ մըն էր, մշակման ու գործադրության մեծ կարելիություններով օժտված, իսկ երկուքը իրարու համար բախտակից հայրենակիցներ և նպատակակից ընկերներ։

Բագրատ առաջին իսկ օրերեն սկսավ դրդել, որ Գևորգ թողնե իր մինակուկ անկյունը և դպրոցին փոշիները և շնորհքով տեղ մը ընտանիքի մը մեջ ապրի։ Իսկ երբ վերջնականապես իր Պոլիս մնալը որոշվեցավ, ինքը սկսավ աշխատիլ, որ միասին դպրոցի մը մեջ ըլլան։ Եվ Սարգսի թանկագին օժանդակությամբ գտան այդ դպրոցը։ Եվ երբ փոխադարձ համաձայնությունը արդեն գրեթե կայացած էր հոգաբարձության ու Սարգիսի միջև՝ Բագրատ եկավ վարձեց Ղալաթիայի ծանոթ սենյակը և Գևորգն ալ քովը քաշեց։

Եվ այդ օրեն անոնց սենյակը դարձավ կեդրոնատեղին խումբ մը գավառացի մտավորականներու, մեծ մասով ուսուցիչներ։ Շաբաթը մեկ կամ երկու գիշեր կհավաքվեին հոն, որ սովորաբար «դուրսեցիներուն սենյակ» կանվանեին՝ հարմարվելով պոլսեցիներու արտահայտության եղանակին, կես մը պարզորեն, կես մը հեգնությամբ, պոլսեցին «դուրսեցի» կըսեր գավառացիին։

Լուրջ ու կատակ, ծիծաղ ու արցունք իրար կխառնվեին այդ հավաքույթներուն։ Մեյ մըն ալ տեսար կբռնկեր վեճը. դպրոց, գրականություն, լրագիր, ընկերական-հանրային հարցեր ու ցավեր, ո՛չ մեկը դուրսը չէր մնար։ Վեճերուն ավելի կրակ կուտար քոնյակով թեյը։ Իսկ թեյի գոլորշիներուն հետ կբարձրանային երգեր. վշտի, հայրենի կարոտի ու հալածանքի տխուր ու դառն երգեր, ճզմված ժողովրդի մը ճմռտած կյանքին մելամաղձիկ բողոքը։ Եվ տղաքը ալ հանգիստ նըստիլ չէին կրնար, սենյակին մեջ ո՛չ մեկ իր իրեն տեղը չէր մնար, ու

սենյակը նեղ կուգար։ Կեսգիշերվան մոտերը միայն կենդանի աղմուկը, ափարթմանի սանդուղներեն կիջներ փողոց։ Սենյակը կլռեր, կբանար դուռ ու պատուհան բոլոր հովերուն, մինչև որ ճրագը մարեր։

## Դ

Այս բոլորը տարօրինակ տպավորություն մը կըներ սկիզբները ֆրանսիացի ընտանիքին վրա, բայց շուտով վարժվեցան այդ «տաքարյուն» հայերուն, ինչպես կըսեին և սկսան ավելի մտերիմ հարաբերություններ։

Բագրատ իր լուրջ պարզությամբ, Գեորգ իր միամիտ պարզությամբ սիրելի դարձան։ Տանտիկինը իր զավակներուն պես կվարվեր անոնց հետ և ամեն կերպ գոհացնելու կաշխատեր։ Իսկ աղջիկները տղոց հետ կարծես մեկ ընտանիք ըլլային։ Գիշեր-ցերեկ բաց էր տղոց սենյակը, և գրոց, դարան ամեն բան աղջիկներուն խնամքին տակ, գլխավորապես Էլենիի։

Տանտիկնոջ մեծ աղջիկը՝ Լուիզ, ավելի ինքնամփոփ էր ու լուրջ. արդեն ժամանակին մեծագույն մասը նվիրած էր իր դաշնակին, որ գրեթե միշտ կհնչեր անոր սենյակեն և կհյուսվեր տղոց աշխատանքին ու խոսակցության։ Քսանը անց, երկար ու առատ շագանակագույն մազերով, մութ աչքերով, մաքուր-ճերմակ դեմք մը։ Ծնոտին արտասովոր գեղեցիկ կորությունը և շրթունքներուն փոքր ու բարակ գիծը մասնավոր հմայքով մը կգգվեին նայողին հայացքը։

Ինքը բացառապես ֆրանսերեն կխոսեր ու շատ կիրթ ֆրանսերեն մը, մինչդեռ մյուսները հաճախ տաճկերեն ալ կխառնեին, մանավանդ սկիզբները, երբ Գեորգ դեռ բնավ չէր հասկնար։ Եվ տղոց հետ թեև առօրյա պարզ շփման մեջ, սակայն միշտ որոշ հեռավորություն պահել գիտեր։

Բագրատ իբրև ավելի հասուն ու աշխարհ տեսած՝ բնականորեն ավելի մոտ էր աղջկան և հաճախ անոր օգնությամբ կդիմեր իր ֆրանսերեն ընթերցանության խրթին կետերուն։ Մեջեմեջ իրիկունները միասին կկարդային ու այդ առթիվ կխոսեին, այնպե՜ս, «լեզվի վարժության համար», ինչպես Սարգիս կըսեր կատակելով։

Էլենին՝ հույնուհին, որբ աղջիկ մըն էր, որ մանկութենեն ինկած էր տիկնոջ ձեռքը և անոր քով մեծցած էր անոր երկու հարազատ զավակներուն հետ ու հավասար։ Տասնյոթը-տասնութը տարեկան, սև աչքերով, սև մազերով, կենսուրախ բնավորությամբ աղջիկ մը։



Առտվնե մինչև իրիկուն ոտքի վրա էր. խոսուն, ծիծաղկոտ, աղմկասեր արարած մը։ Լեցուն, հորդած կյանք մը, որ կարծես իր ամանին մեջ չէր սղմեր։ Աչքերուն մեջ միշտ կրակոտ արտահայտություն, հաստ շրթունքները միշտ կիսաբաց։

Շարունակ գործի վրա էր. ամբողջ տան տնտեսությունը ինքը կդարձներ։ Տիկինը հաճախ դուրսն էր, Լուիզ շատ քիչ կմասնակցեր տան գործերուն, մեկ-երկու տեղ դաշնակի դասեր կուտար։ Եվ այդ պատճառով ալ Էլենին մասնավոր հեղինակություն մը ուներ կարծես տան մեջ և կտրուկ վարք ու խոսվածք մը։

Տղոց այդ տունը մտած օրեն շարունակ անոնց շուրջը կդառնար. կմտներ, կելլեր և անդադար կշաղակրատեր, իր շարժումներն ալ, իր խոսվածքին պես, առատ ու անփույթ։

— Էլենին ու Գեորգ շատ շուտով բարեկամացան իրարու, առաջին իսկ օրեն։ Խեղճ տղան իր տնտեսի ընկերակցութենեն հանկարծ նետված էր այդ աղջիկներուն շրջանը՝ Էլենիի պես աղջկան մը ձեռքը։ Էլենիի համար ալ գրավիչ էր Գեորգի խոշոր, խաժ աչքերը և անոր պարզունակ վերաբերումը։

Շաբաթը չէր լրացած, որ երկուքը իրարու «դուն» կըսեին արդեն։ Իրիկունները միասին սամավարը կպատրաստեին և հաճախ խոհանոցը երկար խոսքի կբռնվեին։ Ալ ամեն իրիկուն սովորություն եղավ օրվան բոլոր դեպքերու մասին իրարու պատմելը, կատակելն ու խնդալը։ Կամաց-կամաց իրարու խոսք նետել սկսան, իրար հեգնել. իսկ հոնկե քայլ մըն էր միայն ձեռքի կատակին անցնելու համար։ Իրարու ձեռքե բան կխլեին, կզարնեին իրարու, կվազեին իրար ետևե ահագին աղմուկով, մասնավորապես տիկնոջ տունը չեղած ժամերուն։ Այս քաջագործություններուն կմասնակցեր հաճախ և փոքրիկ Օկյուստան՝ տիկնոջ փոքր աղջիկը, և կարելի է երևակայել, թե ինչ իրարանցում կբարձրանար. դուռները թափով կբացվեին, կգոցվեին։

Եվ երբ երբեմն Գեորգ աղջիկներեն փախչելով կմտներ իրենց սենյակը և խնդալով սենյակին դուռը կկողպեր, Բագրատ կպոռար անոր երեսին՝ գրիչը պահ մը ձեռքեն վար դնելով.

— Վա՜հ, չե՞ս ամչնար, ահագին մարդ այդ երեխաներուն հետ։

— Ո՞վ է երեխան, Էլենի՞ն,— կհարցներ տղան տարօրինակ սիրուն ժպիտով մը։

Այս բոլորը պատճառ մը չէր սակայն, որ Էլենին բավականանար միայն Գեորգի բարեկամությամբ։ Իր խոսքովը, իր շարժումներովը և իր էությամբ ան շատ էր առատ ու բազմակողմանի ատով գոհանալ կարողանալու համար։

Ան կդառնար նաև Սարգիսի շուրջը՝ Սարգիսը տան դռնեն ներս մըտնելուն պես։ Եվ հաճախ կրկնած էր Գևորգին, որ շատ կսիրեր Սարգիսի շենշող բնավորությունը, անոր բաց ու շիտակ խոսելու եղանակը և անոր տաք ու սրտանց խնդուքը։ Եվ Սարգիսի երեսին ալ շիփ-շիտակ կհայտներ իր զգացումը։

Էլենին միայն Բագրատի համար շատ բան չէր խոսեր և կարծես անկե կքաշվեր, թեև անոր հասցեին ալ մեջեմեջ կատակ մը կամ խոսք մը կնետեր Գևորգին։ Բագրատ տունը շարունակ զբաղված էր՝ կա՛մ կգրեր, կա՛մ կկարդար, և աղջկան հետ ալ միշտ ընտանի ու բնական վարմունք ու խոսվածք ուներ թեև, բայց Էլենին կգիտակցեր, որ ան ուրիշ տեսակի էր։

Եվ ամեն անգամ երբ Բագրատի հոն եղած միջոցին անոնց սենյակը կմտներ՝ իր նայվածքը ակամա տղուն կողմը կերթար, հո՛ն, լուսամփոփի լույսին մեջ ճերմակ թուղթին վրայեն վազող գրչին, կամ լուսամուտին քովը աթոռի մը ինկած՝ լրագիր մը կամ գիրք մը ձեռքը։ Երբ երբ ուրիշներուն հետ կխոսեր ու կկատակեր՝ աչքերը հաճախ կփնտրեին Բագրատին աչքերը։

Եվ Բագրատ աղոտ կերպով կզգար նայվածքերու այդ հետապնդումը և իր մտքի մեկ խուլ անկյունեն կգիտակցեր, որ սարդի ոստայն մը նետված էր իր ու աղջկան հոգիին միջև։ Անշուշտ լուրջ բան մը չէր, և կարևորություն ալ տալ չէր ուզեր եղածին, իբրև խաղ մը, իբրև քմայք մը աղջկան կողմեն, բայց և այնպես դժգոհ չէր. ախորժելի էր այն ըզգացումը, որ բարակ ու ծածուկ կապ մը կար իրենց մեջ, մանավանդ որ բոլոր գացող-եկող ընկերները թուլություն մը ունեին այդ աղջկան համար։

Բայց և այնպես իր շիտակ ու պարկեշտ բնավորությունը չէր ներեր որևէ կերպով քաջալերանք մը տալ աղջկան. ինքզինքը միշտ պարզ կպահեր, առանց պաղության և անոր տեսական հետապնդումը չտեսնելու կզարներ։

## Ե

Շաբաթները կանցնեին իրարու ետևե զարմանալի արագությամբ։

Հով ու ցուրտ օրեր էին, և երիտասարդները, ջուլհակի մաքոքին պես, առտու-իրիկուն վերարկուներուն օձիքները բարձրացուցած՝ տունեն դպրոց կշտապեին և դպրոցեն՝ տուն։

Եվ տունն ալ, դպրոցն ալ վառարանը կճարճատեր։

Երիտասարդներուն գործերը իրենց կատարյալ ընթացքին մեջն էին։



Եվ «իրենց» դպրոցը՝ Բագրատի ոգևորության ու գործունեության այդ հնոցը, օր-օրի կառաջանար։ Ուսուցիչներեն մեկ-երկու հատը բոլորովին կապվեր էին Բագրատին ու նվիրվեր էին գործին։ Մյուսներն ալ կամա ակամա կաշխատեին լարված տեսչի օրինակին, աչքին ու խորհուրդներուն տակ։ Աշակերտներուն դեմքեն փախեր էր սովորական եղող դպրոցական թմրությունը։ Հետաքրքրություն ու կենդանություն կզգար ու կտեսներ այդ աղմկոտ շենքեն ներս մտնողը. խաղ կամ աշխատանք։

Բագրատ զբաղված էր հիմա դպրոցական մատենադարանի խնդրով թե՛ աշակերտական և թե՛ ուսուցչական կրկին բաժինով, արդեն քանի մը անհրաժեշտ գիրքեր ու թերթեր կստացվեին, բայց այդքանը հերիք չէր։

Ուսուցչական մարմնի ճիգերն ու աշխատանքը չէր վրիպեր հոգաբարձուներու աչքեն և ընդհանրապես գոհ էին։ Թաղականներն էին միայն, որոնք շատ հաշտ աչքով չէին նայեր այդ նորելուկ հոգաբարձուներու նորելուկ վարժապետներուն։ Մանավանդ շատ դժգոհ էին Բագրատի գրեթե բռնի բերել տված քանի մը ֆիզիկական ու քիմիական գործիքներեն, մոդելներեն ու նկարներեն, որոնք «եկեղեցիին սընտուկը ծանրաբեռներ էին», ինչպես թաղականները կըսեին։

Բագրատ պահանջած էր նաև դպրոցին մեջ շենքի քանի մը լրացումներ ու փոփոխություններ տղոց առողջապահական տեսակետեն, բայց անկարելի էր եղած։

Իսկ դպրոցեն դուրս Բագրատ ինկած էր մանկական-պատանեկան ամսագրի մը հրատարակության գաղափարին ետևեն։ Կուզեր հոգեբանական-մանկավարժական արժեքով, գեղեցիկ արտաքինով, պատկերներով ու բազմատեսակ խաղերով լուրջ գործ մը։

Բոլոր մանրամասնությունները ծրագրած էր։ Իր մտքին մեջ բաժնած էր ամբողջ աշխատանքը իր ու իր ընկերներուն վրա, աչքի առաջ ուներ աշխատակցությունը քանի մը ծանոթներու և ուսուցիչներու, և արդեն սկսած էր նշել գրքերուն, թերթերուն և ամսագրերուն մեջեն օգտվելու, թարգմանելու, հետևելու կամ նմանվելու հետաքրքիր ու արժեքավոր նյութերը։

Հաշվեր էր և բոլոր ծախքերը, և որովհետև կուզեր լուրջ ու աղվոր գործ մը և կուզեր անպատճառ հեղինակներն ու աշխատակիցները վարձատրել՝ պետք կար անմիջական կլորիկ գումարի մը, ինչքան ալ որ այդ վարձատրությունը համեստ կհաշվեր։

Սարգիսի հետ խոսած էր անգամ մը։ Սարգիս նայեր էր իր ոսկե ակնոցներուն մեջեն և պատասխանած էր պատգամախոսի մը պես կտրուկ ու անառարկելի.

— Եթե հեղինակները վարձատրելե ձեռք վերցնես, եթե բոլոր խմբագրական աշխատանքները քու վրադ առնես, եթե քու ամբողջ տեսչական ռոճիկդ այդ գործին վրա դնես և եթե ամսե ամիս շատ պարզուկ ու սակավապատկեր թերթով մը փոհանաս՝ քու մտածածդ կարելի է, և աղվոր բան է։

Բագրատ ոչինչ չպատասխանեց ընկերոջը այս պատգամին, բայց որոշեց մեծ անակնկալ մը պատճառել անոր։

Կիրակի առտու մը մասնավոր նամակներով դպրոցը «կարևոր խորհրդակցության» մը հրավիրեց քանի մը անհատ ու հասկցող մարդիկ, որոնց մասին առաջվնե հարցուփորձ էր ըրեր և եկեր էր այն եզրակացության, որ իր ուզած ձեռնարկով կրնան հետաքրքրվիլ։ Հրավիրվածներուն մեջն էր նաև դպրոցին հոգաբարձությունը։

Եկեր էին բոլոր հրավիրվածներն ալ. բան մը, որ առաջին վայրկյանեն վստահություն ներշնչեց Բագրատին։

Բագրատ երկար-բարակ բացատրեց իր նպատակը, մանկական թերթին կարևորությունը, իր ըմբռնած բաժինները, գործի կազմակերպության ձևն ու բոլոր ծախքերը, և առաջարկեց, որ միանան, կազմեն ընկերության նման բան մը և մեջտեղ բերեն այդ շատ կարևոր մանկավարժական գործը գլուխ հանելու համար անհրաժեշտ հզոր դրամագլուխը։ Ուրկե ետքը խոսքը տվավ ներկաներուն։

Առաջին ու ճնշող լռութենե մը ետքը ներկաներեն մեկը պարզապես հայտներ էր, որ ինքը այդ տեսակի գործերեն ոչինչ չհասկնար և իր չհասկցած գործերուն մեջ մտնել չի կրնար։

Ուրիշ մը գովեր էր Բագրատի մշակած ծրագիրը և գաղափարը շատ հետաքրքիր էր գտած և ցանկացեր էր հաջողություն, թեև ինքը անձամբ իր մասնակցությունը բերել չէր կրնար։

Երրորդը ըսած էր, որ հրատարակչական և պարբերական գործը պետք է կարողանա ինքնզինքը ապրեցնել և իր բաժանորդագրությամբ իր ծախքերը գոցել, թե չէ առողջ գործ չըլլար։

Մյուսներն ալ զանազան բառերով ու երանգներով, բայց ըստ էության այս երեք պատճառաբանություններու զանազան տարբերակներն էին ներկայացուցեր։ Եվ վերջապես բոլորն ալ, դրվատելով պարոն տեսչի եռանդն ու հմտությունը՝ հաջողություն էին մաղթեր ձեռնարկին ու մեկներ էին ամեն մեկը իր սովորական սրճարանը։

Մնացեր էին երկու հոգի։ Թորոսյանը, որ Բագրատի հոգաբարձուներեն էր և իր հոգիին մեջ խոր կգնահատեր տեսչի ձգտումները, և ուրիշ շատ թարմ երիտասարդ մը, որ իր համամտությունն ու պատրաստակամությունն էր հայտնած Բագրատին, սակայն ավելցուցած էր, որ



դրամապես դժբախտաբար օգնել չի կրնար, հորը ձեռքն է բոլոր գործը, և ինքը հորը քով պաշտոնյայի պես է։

Իսկ Թորոսյանը խորհուրդ էր տվեր առայժմ հետաձգել այդ ծրագիրը, բայց խոստացեր էր, որ «ինքը այդ մասին դեռ կմտածե»։

## Զ

Բագրատ շատ կոտրված ու հիասթափ տուն կվերադառնար ծանր հոգիով։ Կքալեր տեսակ մը մեքենական քայլվածքով, ձեռքերը գրպանը դրած և մտքին մեջեն կրկնելով բոլոր իր հրավիրյալներուն ըսածներն ու առարկությունները բառ առ բառ, կարծես գոց ընել կուզեր։

«Եվ Թոորոսյանը խոսք տվավ, որ այդ մասին դեռ կմտածե». ըսավ Բագրատ մտքին մեջեն խորին հեգնությամբ, երբ իրենց ափարթմանին լայն մուտքեն ներս կմտներ։

«Ահա՛ միակ արդյունքը իմ այնքան աշխատանքին և այսօրվան մեր խորհրդակցության». եզրակացուց քարե սանդուղներեն վեր ելլելով։

«Աղեկ, ուրեմն, պարոն Թորոսյանը դեռ թող մտածե». ըսավ բարկությամբ և բոլոր ուժովը քաշեց իրենց բնակարանին զանգը։

Ներսը վազող ոտքի ձայներ լսվեցան, դուռը ուժով բացվեցավ, և Բագրատ երես-երեսի գտնվեցավ Էլենիին ու Լուիզին հետ, որոնք զարմանքով իրեն կնայեին։

— Վախցա՛նք,— ըսավ վերջապես Էլենին,— այնպես ամուր զարկիք։

— Իրա՞վ, ներող եղեք, մտածումներու մեջ էի և մեքենաբար եմ քաշեր։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, կարևորություն չունի,— մեղմացնել ուզեց Էլենին։

Լուիզ ոչինչ չըսավ, բայց տարօրինակ կարեկցոտ նայվածքով մը տղու դեմքին նայեցավ։

Բագրատ անցավ իր սենյակը և հազիվ էր վերարկուն հանած, որ սենյակին դուռը զարկին։

— Մտե՛ք։

Մտավ Լուիզ։

— Ձեր լրագիրներն են,— ըսավ՝ երկու տեղական թերթ և ֆրանսերեն շաբաթաթերթ մը սեղանին վրա դնելով։

— Շատ շնորհակալ եմ, օրիո՛րդ,— պատասխանեց տղան։

Աղջիկը դարձավ դեպի դուռը, վարանոտ քայլ մը առավ, կեցավ ու դարձավ երիտասարդին.

— Դուք կիրակի օրե՞րն ալ դպրոց կընեք։

— Ո՛չ,— պատասխանեց Բագրատ զարմանքով։

— Հապա պարոն Գևորգը ըսեր է, որ դասեր կուտաք կիրակի օրերը։

— Շիտակ է,— ժպտեցավ տղան,— բայց մեր դպրոցի աշակերտները չեն, այսինքն կիրակնօրյա դպրոց է։

— Կհասկնամ, մասնավոր դասեր։

— Հա՛, ատոր պես բան մը։

— Գիտե՞ք, պարո՛ն Բագրատ, անցած իրիկուն մայրս կըսեր ձեզի համար, որ շատ լարված կաշխատիք և շուտով հարստանալ կուզեք։

— Հարստանա՞լ,— խնդաց տղան։— Դուք կկարծեք այդ դասերը կուտամ դրամով։

— Հապա՞։

— Խեղճ մարդիկ են, քանի մը արհեստավոր երիտասարդներ, դըպրոց չեն եղած։ Քիչ մը հաշիվ կսորվեցնենք, քիչ մը կարդալ և քիչ մըն ալ գիտական տեղեկություններ։ Անոնք ալ կցանկան ընդհանուր զարգացման կապվին։

— Եվ առա՞նց դրամի։

— Ի՞նչ դրամ, օրիորդ, կիրակի օրերու ազատ դպրոց է, առտուն մեկ-երկու ժամ։

— Բայց գիտե՞ք, պարոն Բագրատ, դուք ձեր ուժերը չարաչար կըգործածեք։

— Ինչպե՞ս,— ըսավ տղան՝ իր շատ զարմացած աչքերը աղջկա աչքերուն գամելով։

— Քիչ մը առաջ, որ ներս մտաք, այնպես տառապած դեմք ունեիք և այնպես հոգնած։ Ընդհանրապես ձեր միտքը միշտ զբաղված է։

— Բայց կարծեմ դուք ալ աշխատանքի անսովոր մեկը չեք։

— Իմ աշխատանքս ուրիշ է և անհամեմատ ավելի նվազ, քան ձերը, և ես կաշխատիմ հնչուն վճարած դրամով։

— Գիտե՞ք, օրիո՛րդ, հատկապես այսօր, իրա՛վ է, ես ալ կուզեի, որ դրամի տեր ըլլամ։

— Դրամի պե՞տք ունիք, ատ՞որ համար այդպես հուզված եք,— խնդաց աղջիկը և համեստ ժպիտի մը մեջեն ավելցուց,— շատ չէ, բայց քանի մը ոսկի ունիմ և կրնամ ձեզի փոխ տալ, եթե պետք ունիք. մայրիս դրամներուս վրա իրավունք չունի։

Բագրատ իր մեջը տարօրինակ անախորժ զգացում մը ունեցավ,



Հրաժարանքի պես բան մը և խնկույն կարուկ կերպով պատասխանեց հնար եղածին չափ մեղմ ու քաղաքավարի շեշտով մը, որ իր ունեցած գեշ զգացումը չմատնէ։

— Անչափ շնորհակալ եմ, օրիո՛րդ Լուիզ, ձեր այդ սիրալիր պատրաստակամութենեն, բայց ես դրամի պետք չունիմ։ Ես սկզբունքով միայն այսօր հարուստ ըլլալ ուզեցի, որ ցույց տամ, թե հարստությունը ինչպես կգործադրեն։

— Այո՛, ձեր ամեն բաները սկզբունքով են, գիտե՛մ,— խնդաց աղջիկը կես կատակով ու կես դառնությամբ։

Վերցուց սեղանին վրայեն դեռ առավնե հոն մնացած սուրճի ափսեն ու ելավ դուրս։

Բագրատ իր կեցած տեղեն անշարժ դիտեց աղջկան ծանր քայլերով հեռանալը և սենյակի դռան գոցվելեն ետքն ալ դեռ բավական ատեն այդպես քարացած մնաց աչքերը դռան հառած։ Ետքը ինքն ալ դանդաղ քայլերով գնաց դեպի պատին վառարանը, նստեցավ դեմքը բազկաթոռին մեջ, գլուխը հենեց թիկունքին և աչքերը գամած մոխիրներուն տակեն դուրս ցցված կրակի վերջին մնացորդներուն՝ սկսավ մտքին մեջ ակամա համեմատել առտվան մեծապատիվները և այս օտար աղջիկը։

Այն մեծապատիվներն ալ, այս աղջիկն ալ վերջը-վերջը կհեգնեին իր սկզբունքները։ Տղան ատիկա պարզ կտեսներ։ Արդեն ամենքը կհեգնեին իր սկզբունքները, գիտեր ու արդեն վարժվեր էր։ Միայն թե մեծապատիվներուն խոսքերուն տակը ծաղր կար և դժվար ծածկվող չարակամություն մը, մինչդեռ այդ աղջկան խոսքերուն տակը կարեկից հեգնություն մըն էր եղածը և զարմանալի դառնություն մը։ Տղան շատ պարզ կզգար այդ դառնությունը անոր խոսքերուն մեջեն։

«Արտասովոր աղջիկ է,— մտածեց,— և երևի ո՛չ բախտավոր։ Իր հայրենիքեն հեռու, մեծցած օտար միջավայրի մեջ, զուրկ հոր մը խնամքեն ու հայթայթած հարմարություններեն, մայրն ալ շարունակ դուրսերը։ Հավանորեն մինակ է իր հոգին ու ցաված։ Իր միակ մտերիմը՝ դաշնակը, և ատոր համար է անշուշտ, որ գիշեր-ցերեկ այդպես համառ ու տաք-տաք կնվագե, առանց արվեստագետ մը ըլլալու»։

Աղջիկը ինքն էր ըսեր Բագրատին կատարյալ սրտբացությամբ, թե ինքը արվեստագետ մը չէր, այլ պարզ ու հասկցող նվագող մը և գուցե ճիշտ ատոր համար ալ հարմարություն ուներ ուրիշներուն սորվեցնելու։ Սիրված ու գովված էր ընտանիքե ընտանիք իբրև հաջող վարժուհի դաշնակի։

Բագրատի մտածումները ընդհատեցին դուրսի աղմուկն ու սենյակի դռան թափով մը բացվիլը։

Գևորգ ու Սարգիս աղմուկով ալ ներս եկան։ Սարգիս կեցավ շիտակ Բագրատին դեմը և խորհրդավոր կերպով, ակնոցներուն մեջեն Բագրատի դեմքը դիտելով՝ հարցուց.

— Է, ինչ եղավ քու գաղտնի խորհրդակցությանդ արդյունքը։

— Ուրկե՞ իմացար արդեն, անպիտա՛ն։

— Դե՛, մյուս անգամ քու ընկերոջդ դեմ դավեր չլարես, ինծմե ծածուկ գո՞րծ բռնել կուզես, հա՞։— Եվ հանկարծ խիստ լուրջ շեշտով մը շարունակեց,— տո՛, հիմա՛ր, ուրիշներու գրպանեն այդպես առանց այլևայլության կարելի՞ է դրամ դուրս քաշել, դրամ է ատիկա, հոգի չէ, որ հանեն ու տան։ Դրամ քաշելու համար ալ արվեստ պետք է, շնորհք պետք է, ձևը պիտի գիտնալ. մանավանդ մեր պոլսեցի ունևորներեն, որոնք դեռ բոլորովին անվարժ են դրամի հանրային գործածության։ Կովկասի մեջ քիչ մը տարբեր է կարծեմ։

— Իրավունքը քուկդ է, հաղթեցի՛ր,— ըսավ Բագրատ անձնատուր եղողի մը շեշտով ու բազուկները բանալով։

— Լավ է, մի՛ վշտանար, կեցիր նայինք, բան մը կընենք, դուն դեռ մի՛ հուսահատիր քու մանկական ամսագրեն։

— Հուսահատի՞մ, ե՞ս, ո՞վ ըսավ քեզի։ Այդ թերթը ուշ կամ կանուխ ես հրատարակեմ պիտի, ատիկա վճեն դուրս է, այս անգամ չըհաջողեցա, կորսնցուցի տարի մը, ահա՛ իրողությունը։

— Ելի՛ր, ելի՛ր, քանի որ այդպես է, երթանք ճաշարան, արդեն ուշ է, թե չէ մեր ճաշն ալ կկորսնցնենք,— ըսավ Գևորգ Բագրատի թևեն կամաց մը քաշելով։— Ես շատ հոգնած եմ ու անոթի. այսօր շատ խոսեցա մեր մորուքավոր աշակերտներուն հետ։

— Ելի՛ր, երթանք, աղվոր գինի մը խմենք քու այդ կորսնցուցած տարվան մը կենացը,— խնդաց Սարգիս ամբողջ կրծքովը՝ վերարկուին կոճակները շատ ծանր շարժումով մը վերեն վար կոճկելով։

## Է

Մութ ու մառախուղ օր մըն էր։

Թեև հազիվ էր արևը մայր մտեր, բայց շուրջը կես գիշերվան պես խավար էր արդեն։

Բերայի կողմնակի նեղ ու տղմոտ քանի մը փողոցներ անցնելե վերջ՝ Բագրատ զարկավ բարձր տան մը թակիչը։ Դուռը բացվելու կուշանար։ Տղան անհամբերութենեն ոտքը գետին կդոփեր ձիու պես։ Վերջապես ձգվող թելի մը ձայնը լսվեցավ, ու դուռը բացվեցավ։ Կին մըն էր թելը քաշողը սանդուղին վրայեն։



Բագրատ արագ բարևեց և սկսավ բարձրանալ ոլորուն սանդուղեն։ Այս վերելքը բավական երկար տևեց, շնչասպառ ու հոգնած կանգ առավ վերջապես դռան մը առջև, կամաց մը հրեց ու ներս մտավ։

Փոքրիկ սենյակ մը, անկողինը ճմռտած, աթոռները խառնակ ու ամենուն վրա հագուստի կտոր մը, թերթեր, ափսե մը, վառարանին մոտիկ սեղան մը գրքերու ու հին լրագիրներու կույտի մը տակ թաղված, և այդ ամենուն վրա ինկած երիտասարդ մը, որ կկարդար՝ լայն վերարկուին մեջ պինդ մը փաթթված։

Դռան թեթև ճռինչը կարդացողի ուշադրությունը գրավեց։ Ետ դարձավ կամաց մը ու երկու թևերը պարզեց, կարծես նորեկը գրկել կուզեր, բայց իսկույն բացավ բերանն ալ, խորունկ մը հորանջեց, ամուր մը կոտրտվեցավ և հանկարծ մեկ ոստյունով ցատկեց ոտքի ու կեցավ այցելուին առջևը, որ դռան մոտ կեցած կժպտեր։

— Աս ո՞ւր ես, մեջտեղ չկաս,— հարցուց Բագրատ։

— Մեջտեղ ըլլամ թե չըլլամ ի՞նչ տարբերություն,— պատասխանեց Վասակ,— բայց աղեկ ըրիր, որ եկար, սիրտս սկսեր էր նեղանալ, այսօր տունեն դուրս եկած չունիմ, մինչև հիմա կկարդայի։

— Կարդացածդ ի՞նչ է։

— Վերին աստիճանի հետաքրքիր։ «Կենդանիներու հասարակական կյանքը». շունշանորդի՛, կենդանիներ կան, որ մեզմե շատ ավելի խելացի հիմքերու վրա են դրած իրենց ընկերական հարաբերություններուն շենքը։

— Գնա՛ անոնց հասարակության մեջ մտիր։

— Հապա ի՞նչ գիտցար, և՛ ես, և՛ դուն, և՛ ամենքս հոն պիտի մտնենք օր մը։

— Չէ՛, ինծի ձգե՛, քեզի «բարի ճանապարհ»։

— Մեր մարդկային ընկերության արած ամեն մեկ քայլը սխալ է, սխալ, մեր վարչական ու պետական հարաբերությունները, մեր տնտեսական կազմակերպությունը, մեր ընտանեկան նիստուկացը, մեր...

— Հոգիդ սիրես, Վասա՛կ, քեզի եկա՝ քիչ մը բացվիմ ըսի, գլխուս գայլի ավետարան մի՛ կարդար։ Դպրոցը ինչ գլուխ կուռեցնենք, հերիք է։

— Տեղն է, քեզի ով ըսավ այդ տեսակի անմիտ գործերու մեջ մըտնես։ Դպրո՛ց, ինչ անխելք բան, բառ մը, որ բնության օրենքներուն դեմ կթքնե։ Տղան բացը պիտի մեծնա բնության ու ընկերության մեջ բոլորովին ազատ իր անձնական փորձառությամբ, և պիտի մեծնա իր բնական հակումներուն ու շնորհքին ձգված, ո՛չ թե մեր նախագծած

ծրագիրներուն և մեր ծեծուած նախապաշարումներուն ենթարկելով։ Այս բոլորը գլուխդ կմտնե՞, պարոն տեսուչ։

— Կեցցե՛ս։ Այդչափ մանկավարժություն ալ կա եղեր գլխուդ մեջ։ Ատիկա ինծի համար հաճելի անակնկալ մըն է,— նկատեց Բագրատ ժպտելով։

— Բագրա՛տ, եկուր ինծի լսե, նետե՛ վրայեդ այդ բոլոր հնամաշ ցնցոտիները, և ես քեզի շնորհքով մարդ մկրտեմ։

— Մկրտե՛ նայինք,— ըսավ Բագրատ ներողամիտ։

Վասակ մոտեցավ ընկերոջը, խլեց գլխարկը ձեռքեն, նետեց անկողնին մյուս ծայրը, գրեթե բռնի նստեցուց մեջտեղի աթոռին վրա և առանց անոր թևը բաց թողնելու շարունակեց։

— Դե, ըսե՛ ուրեմն ինծի հետ հրաժարիմքը։ Ըսե՛. «Հրաժարիմ ի դպրոցէ և յամենայն հիմարութեանց նորա, հրաժարիմ յիտիալէ և յամենայն գեղեցկութեանց նորա, հրաժարիմ ի բանաստեղծական ցնդաբանութիւններէ, յօդուածներէ և ի ճառէ...»։ Չըսե՞ս։

Բագրատ սկսավ ջղայնորեն խնդալ։

— Մարդ դառնալիք չունիս,— եզրակացուց Վասակ։— Գլխուդ մեջ այնքան ավլուկ-թափուկ բաներ լեցուցեր են քու մգլոտած փրոֆեսորներդ ու իրենց խունացած գրքերը, որ առողջ գաղափարներու այլևս տեղ չէ մնացեր։

— Իմ ազնի՛վ Վասակս, իրա՛վ է, գլխուս մեջ քու առողջ գաղափարներուդ համար տեղ քիչ կա, բայց հավտա՛, որ ստամոքսիս մեջ ահագին տեղ կա քու ռուսական ընտիր թեյիդ ու խավյարիդ համար։ Ես այդ հույսերով եմ քեզի եկեր, և դուն ալ ջանք ըրե՛ այդ ուղղությամբ։

Վասակ իսկույն ոգիի լամպը վառեց, թեյամանը դրավ վրան ջուր տաքցնելու։ Ինք գնաց դեպի պատի մեջի պահարանը մյուս պատրաստությունները տեսնելու։

Վասակ ալ երկար ժամանակ չէ, որ Պոլիս էր։ Տրապիզոնցի էր ինքը, շատ հայտնի ընտանիքի մը զավակը, տարածված ընտանիք մը, որուն մեծ եղբայրը, այսինքն Վասակի հայրը, կմնար միշտ իր հայրենի քաղաքը և ընդարձակ ագարակ մը կդարձներ։ Հաջորդ եղբայրը Պաթում կապրեր, երրորդ եղբայրը՝ Թիֆլիս, իսկ եղբոր որդին հաստատված էր Խրիմ, իսկ Վասակի հորաքույրն ալ հարս էր եկած Պոլիս։ Պաշարեր էին ամբողջ Սև ծովը և բազմատեսակ գործառնություններ ունեին։

Վասակ տասը տարեկանեն սկսած փոխն ի փոխ եղած էր այդ բոլոր աշխարհները, տարի մը հոս, երկու տարի հոն։ Ուսման համար դրեր էին ամեն տեսակ դպրոցներ, որոնցմե և ոչ մեկուն մեջ մնացած չէր երկար։ Տարիուկեսի չափ ալ եղած էր Թիֆլիսի Ներսեսյան վարժա-



րանը։ Վերջերը երկու կիսամյակի չափ ալ գացած էր Մոսկվա և հաճախած էր համալսարանի քանի մը դասախոսություններուն իբրև ազատ ունկնդիրի պես բան մը, և հոտ էր, որ հանդիպած էր Բագրատին և ընկերացած։

Հայրը վերջապես կանչած էր տղան իր քովը իրեն օգնական։ Երկու տարիի չափ ալ հոր քովն էր ժամանակ անցուցած, և հայրը տեսնելով, որ ագարակի գործերուն հետ չէ տղուն խելքը, այլ շարունակ գրքերու հետ է, մտածեր էր նորեն Պոլիս ղրկե, հուսալով, որ այդ առևտրական և մտավոր ավելի բարձր կեդրոնին մեջ տղան ավելի շուտ իրեն հարմար գործ մը կճարե։

Ահա՛, վեց-յոթը ամիս էր արդեն, Վասակ կթափառեր Պոլսի բոլոր թաղերը, շրջակայքը, հեռու ու մոտիկ, գիրք մը թևին տակ դրած կամ քովի գրպանը, մնացած ժամանակն ալ կքաշվեր իր փոքրիկ սենյակը, որ վարձեր էր հույն ընտանիքի մը մեջ, ու կկարդար, անվերջ կկարդար։

Հորաքույրը շատ ուզեց, որ իրենց տունը տանի, ամուսինն ալ ջանքեր ըրավ հաջող գործի մը դնելու, բայց միշտ ալ առանց հետևանքի։ Վասակ «իր ազատությունը» ծախել չէր ուզեր և ո՛չ մեկ գնով։ Հորը չեքերը ամսե ամիս կուգային Տրապիզոնեն, հետն ալ հորը հորդորները և բացատրությունները, թե իր տարիքը արդեն լեցած է և նեցուկի պետք ունի։ Բայց Վասակի նեցուկ մը դարձած ըլլալուն լուրը դեռ միշտ կուշանար Տրապիզոն հասնելու։

Երկու ընկերները նստած էին արդեն սեղանին երկու կողմը, լեցուն թեյի բաժակներուն առջևը. իսկ բաժակներուն շուրջը զանազան ձևի ու գույնի թղթերու մեջ զանազան ուտելիքներ, քանի մը ատրճանի չորությամբ հացի կտորներ և վերջապես հատուկ թիթեղե տուփի մը մեջ Բագրատի ակնկալած խավյարը։

Ծամելիքները իրենց դերին մեջն էին և լռությամբ. բավական երկար ժամանակ երկուքն ալ լուռ էին։

Վասակ հանկարծ այդ լռությունը ընդհատեց.

— Շիտակ ըսե, Բագրա՛տ, մինչև հիմա քանի՞ աղջիկ սիրած ես։ Ո՞վ գիտե՝ գուցե սիրած ալ չես։

— Ի՞նչ հարցում է ատիկա։ Քանի մը անգամ կարծեր եմ թե կըսիրեմ, սակայն երկար տևած չէ։ Զգացումներու պատրանք մը։ Խորունկ ու ամբողջական բռնկումը դեռ ունեցած չեմ։

— Ատիկա չէ իմ հարցուցածս, քու հիվանդոտ զգայնություններուդ հետ ես գործ չունիմ, իմ հարցումս բնական ու առողջ ֆիզիկական սիրո մասին է։ Շուտով քսանվեց թե քսանյոթը տարեկան պիտի ըլլաս և դեռ աղջիկ գուցե տեսած չես. հրաշություն է պարզապես։

Բագրատ թեթև մը կարմրեցավ ու չպատասխանեց։

— Ահա՜ այդպես եք դուք։ Մարդիկ անոթի «հա՛ց, հա՛ց» կպոռան երեսնուդ, դուք բարոյական քարոզներով, կրոնական ու տնտեսական հպատակության խրատներով ու պահանջներով կկերակրեք։ Մարդիկ ամեն կողմ բնութենեն խթանված «սերե՛լ, սերե՛լ» կկրկնեն, դուք բնության ձայնը կծամածռեք «սիրե՛լ, սիրե՛լ» կդարձնեք, զգացական նրբություններ կհնարեք, նախապաշարումներ կփաթթեք խեղճերուն վիզը և կրոնական արտառոց օրենքներ ալ կդնեք անոնց շալակը և առանց ամչնալու կերթաք ձեր պառլամենթներուն մեջ ապահարզանի մասին վիճելու։

— Փամփուշտ բառերը դի՛ր մեկդի։ Ըսածեդ ի՞նչ դուրս եկավ։ Ուրեմըն քու կարծիքով սերը հանդիպած աղջկան գիրկը նետվիլն է, առանց հակումի, առանց զգացումներու և մտերմական բնական զարգացման, առանց մտքի ու բնավորության փոխադարձ կապակցության։ Ա՞ս է բնական սերը, հա՞, առո՞ղջը, մարդկային սեռի բարձրացման նպատա՞կը։ Անասուններու համար՝ գուցե՛, ան ալ դեռ կտարակուսիմ։ Բայց երկարելու ախորժակ չունիմ, արդեն ժամանակ ալ չունիմ. բաժակ մը թեյ ալ լեցո՛ւր, տաք-տաք խմեմ ու ելլեմ։

Ընկերը թեյը լեցուց։ Բագրատ խմեց, ելավ, հագավ ուսը նետած վերարկուն, և միասին սանդուղի գլուխը ելան։

Նույն միջոցին վերի հարկի սպասուհին արագ սահեցավ անոնց առջևեն ու վարեն դեպի վերի սանդուղը անցավ։

— Մարիանի՛,— կանչեց Վասակ։

Սպասուհին կեցավ ու ժպտեցավ։

Վասակ անոր մոտենալ կուզեր, որ աղջիկը կարծես միտքը հասկըցավ ու վեր վազեց խնդալով։ Վասակ ցատկեց ետևեն, բռնեց հագուստի փեշեն, գրկեց բռնությամբ, պինդ մը համբուրեց երկու այտերեն ու վեր հրեց նորեն, մինչդեռ աղջիկը գեշ-գեշ կճվճվար։

Երբ տղուն թևերեն ազատվեցավ՝ նախ բարկացած դեմք մը շինեց, ետքը մատը տղուն վրա թափ տվավ ու վեր փախավ։

Բագրատ դեմքի տարօրինակ արտահայտությամբ մը կեցած էր անշարժ։

— Ա՞ս է, հա՞, սերը։

Վասակ հաղթական ու նշանակալից շեշտով մը վրա բերավ.

— Աս է, հապա ի՞նչ գիտցար։ Ասիկա սիրո ծաղկազարդն է, Դոնբացեքը։ Ճիշտ շաբաթե մը խթումն ալ կուգա, Զատիկը։

Եվ իր այլաբանութենեն կատարելապես գոհ՝ մտավ իր սենյակը, ըսելով.

— Է՜, կներե՛ս, հոս շատ ցուրտ է։



# Ը

Բագրատ ճնշված սրտով, ըզվանքը դեմքին դրոշմված՝ սկսավ իջնել ոլորուն սանդուղներեն։ Շարունակ աչքերուն դեմն էր սպասուհին, որ անասունի պես կճվճվար Վասակի երկաթե ճմլումին տակ։

Երբ տան դռնեն դուրս ելավ, ու պաղ հովը զարկավ երեսին, սթափեցավ։ Ձեռքի շարժում մը ըրավ, վանել ուզեց գլխեն այդ պատկերները ու ճամփա ելավ։ Բայց մինչև տուն հասնիլը ուղեղը նույն նյութին շուրջը կդառնար։

«Ըլլա թե, իրա՛վ ես եմ սխալը, ըլլա թե, իրա՛վ որ ծուռ եմ կրթված, ինչպես որ այդ հիմարը կըսե, և ինչպես որ շուրջս շատերը կմտածեն։ Գուցե իրավունք ունին. զգացումներ, նրբություններ գուցե իրավ որ մեր հնարած ավելորդ ու հավելված բաներ են։ Գուցե իրավ որ անբնական բան է՝ մինչև հիմա ոչ մեկ աղջիկ սիրած չեմ, բայց որ սիրտս կպած չէ, ի՞նչ կրնամ ընել։ Սակայն իրա՞վ է, որ սիրտս չէ կպած, թե՞ արվեստական կերպով սիրտս հարկադրած եմ, որ չսիրե։ Ջանազան հասարակական ըմբռնումներ, վարք ու բարքի ազդեցություն, հասարակաց կարծիք, դիրք ու սովորություններ, ասոնք սանձեր են բոլոր, այլև ինքնահնար բարձր պահանջներ, օրինակ, ամբողջական-խորունկ սիրո մը որոնումը։ Բայց ի՞նչ բան է այդ տեսական, իսկական ըսված սերը. կա՞ այդ տեսակ աղջիկ մը, որ իմ բոլոր պահանջներուս, իմ բոլոր անըրջանքներուս համապատասխանե, և եթե կա՝ մի՞թե ես արժանի եմ, որ ան ինծի կապվի, և միա՞յն ինծի, իմ ո՞ր առավելությանս համար»։

Գևորգ պառկած էր քանափեի երկարությամբ ձեռքերը գլխուն տակը դրած՝ երբ Բագրատ իրենց սենյակեն ներս մտավ։

— Ո՞ւր էիր մինչև հիմա։ Ճաշարանը երկար սպասեցինք քեզի ընթրիքի։ Պարոն Մկրտիչն ալ հոն էր։

— Ի՞նչ Մկրտիչ։

— Հոգաբարձուին եղբայրը։

— Ա՞ն ինչ գործ ունի մեր ճաշարանը։

— Եկեր էր անպաշտոն կերպով մեզի հասկցնելու թաղական խորհուրդի «ընդհանուր» ցանկությունը, որ վերին կարգերուն մեջ կրոնագիտություն մտցնենք։

— Նորե՞ն այդ հին երգը։ Չէ՞ որ այդ կարգերուն մեջ բարոյագիտություն ունինք և քաղաքացիական ուսմունք։

— Ըսի, ատիկա տարբեր բան է՝ կըսե, մենք եկեղեցական ժողովուրդ ենք՝ կըսե, մեր դպրոցն ալ եկեղեցիի մը կից է՝ կըսե, և վերջապես կրոնագիտությունը մեր ժողովուրդին պետք է՝ կըսե։ Կրոնագի-

տություն է պետք, որ ժողովուրդը քիչ մը ավելի ջերմեռանդ դառնա, թե չէ այսպեսով մեր եկեղեցիին սնտուկը շատ խեղճ վիճակի կհասնի՝ կըսեն։

Գևորգ լռեց և աչքերուն ծայրովը խորամանկությամբ կդիտեր ընկերոջ դեմքը, թե իր խոսքերը ի՞նչ տպավորություն պիտի ընեն վրան։

Բագրատ վերին աստիճանի հանգիստ՝ հանեց գլխարկը, վերարկուն ալ հանեց ու շատ մեղմ կերպով ըսավ.

— Զարմանալու բան չկա. այդ մարդոց աջ կողմը վաշխառու է, ձախը՝ տիրացու։

Եվ իր որակումը իրեն շատ հաջող թվեցավ ու զվարճալի։ Սրտանց սկսավ խնդալ և ավելցուց.

— Խե՛ղճ ժողովուրդ, աչքը բացած վայրկյանեն կրոնագիտություն են բացատրեր, և ինչու՞ համար, հոտ է փիլիսոփայությունը. որպեսզի եկեղեցիին սնտուկը խեղճ վերմակի մեջ չմնա։ Եկեղեցիին սնտուկը, ահա՛ իսկական կրոնը։ Ամենքը կրոնքի ու ջերմեռանդության մասին կխոսին, բայց կամաց մը անոնց հրե բառերը, ու տակեն դուրս կուգա միշտ կա՛մ պնակ, կա՛մ զանձանակ, կամ աջահամբույր, մեկ խոսքով եկեղեցիին սնտուկը։

Վայրկյան մը կեցավ, մտածեց և հանկարծ դարձավ ընկերոջը.

— Գևո՛րգ, ի սեր աստծու, ուրիշ բան խոսինք, այսօր չափազանց հիմար տրամադրության մեջ եմ։ Երեկ իրիկուն թատրոնն էիր. ինչպե՞ս էր, ի՞նչ կխաղային, հավնեցա՞ր, հա՛ օփերա էր կարծեմ, դեռ ուներ նորեն անցած օրվան բասոն, անպիտանը ի՛նչ հոգի բռնող թավ ձայն ունի։ Տե՛ս, է՛, մոռցա, դեռ վաղվան պատրաստելու դաս ալ ունիմ։ Ժամը քանի՞ն է։ Ես քեզի քանի անգամ ըսեր եմ, որ վառարանը այդքան փայտ չկոխես, բաղնիք ես շիներ։

Անցավ իր գրասեղանին գլուխը, քիչ մը կեցավ և սկսավ երգ մը մռլտալ, միշտ նույն անորոշ երգին մեկ կտորը, որ ան մեջեմեջ կմըռլտար և որ նշան էր տղու հուզված ըլլալուն։ Գևորգ ժպտեցավ։

Բագրատ նախ գիրք մը վերցուց, քիչ մը թղթատեց ու տեղը դրավ, քաշեց թերթ մը թուղթ ու սկսավ գրել, այսինքն գրել ուզեց, բայց առաջին իսկ բառին դեմ առավ. ի՞նչ գրեր, ի՞նչն էր իրավ, ի՞նչը՝ սուտ ու ծուռ, գրելիք չուներ։

Գրիչը իրեն համար եռանկյունիներ, քառանկյունիներ և այլ երկրաչափական և ոչ երկրաչափական պատկերներ կգծեր մաքուր թղթին վրա։



## Թ

Թեև դեռ հազիվ փետրվարի կեսին էին, սակայն արդեն սկսած էր գարունը տարօրինակ կանուխ։

Ասիկա այն կակուղ, տաքուկ, ցողոտ ու հեշտոտ գարուններու սկիզբներեն էր, որ հարավային ծովերը երբեմն կնվիրեն իրենց սիրած ցամաքներուն։

Դուրսեցիներուն սենյակը արտաքուստ ոչինչ փոխված չէր, եթե չհաշվենք վառարանը, որ այլևս չէր ճարճատեր։ Բայց ասիկա դուրսն էր, ներսեն բաներ մը փոխված էին։ Նախ աշխատությունը պակսած էր։

Գևորգ հիմա հաճախ ուշ տուն կուգար։ Դպրոցեն ելլելուն պես կա՛մ խաներն էր կա՛մ Բերայի փողոցները։

— Մինչև իրիկուն հոգինիս կելլե, իրիկունները գոնե քիչ մը ազատ օդ ծծենք,— կկրկներ, «ազատ» բառը մասնավորապես ընդգծելով։

Եվ Բագրատ դժգոհ չէր։ Տունը ուրեմն մինակ կմնար, որ իր աշխատության համար ավելի նպաստավոր էր։ Այդ նպաստը հիմա անհրաժեշտ էր, որովհետև տղան սկսած էր նշմարել, որ իր կեդրոնացումը նվազած էր աշխատության միջոցին, ամեն խոսքե ու աղմուկե կխանգարվեր, և ընդհանրապես կզգար, որ ցրիվ ու անորոշ վիճակ մը կար իր հոգիին մեջ։

Տղու այդ մինակությենեն կօգտվեր սակայն նաև հույնուհին։ Էլենին հիմա սովորականեն հաճախ կկենար Բագրատի աշխատության սեղանին քով։ Երկար ու անպետք հարցումներու շարքեր իրարու կհաջորդեին, և Բագրատ առանց ձանձրանալու, կպատասխաներ՝ աչքերը գողունի նետելով աղջկան կրծքի այն վերի բաց մասին, ուր խորհրդավոր ակոս մը իր հետաքրքրությունը կկարթեր։

Աղջիկը հազար դիրքեր, հազար ձևեր կառներ անոր դեմ, կխնդար երկու ձեռքերովը պինդ իր մեջքը գրկած։ Երբեմն կհենվեր գրասեղանին, Բագրատի գիրը հունարենի կնմանցներ ու հունարենով կարդալ կփորձեր. տարօրինակ ու անմիտ վանկեր դուրս կուգային։ Կխնդար ինքը ամբողջ գրասեղանը իր լեցուն կրծքին հետ ցնցելով և այնքան դեպի տղան կհակեր, որ իր այտերուն տաքությունը տղու դեմքին կզարներ։ Այդ վայրկյաններուն Բագրատին կթվեր, թե սենյակին օդը մեկենիմեկ կհատներ։

Անգամ մը աղջիկը մազերը արձակ, թևերը մինչև ուսերը վեր ժողված, չփակին կոճակները մասամբ միայն կոճկված, տղուն սենյակը մտավ ձեռքը սանր բռնած, խնդրելով, որ անոնց հայելիին մեջ սանրվի։

Իրենցը սրբվելու համար վար էր առնված ու անհարմար էր, ինչպես ինքը կըսեր։

— Խնդրե՛մ, —ըսավ տղան։

Ու գրելը շարունակել ձևացուց, բայց չկրցավ։ Գողունի ագահությամբ կնայեր այն լեցուն ողորկ թևերուն, որոնք առատ ու երկար մազերուն վրայեն կսահեին՝ մազի հեղեղատ մը թափելով ուսերուն։ Եվ հանկարծ տեսավ, որ հայելիին մեջեն աղջիկը ժպտուն իրեն կնայեր։ Բագրատ հանկարծ ամոթ զգաց, վերցուց քովեն բառարան մը և սկսավ երկար թղթատել։ Ի՞նչ բառ կփնտրեր, ո՞վ կրնա ըսել, ո՛չ-իսկ ինքը։ Միայն թե այդ փնտրտուքը շատ երկար տևեց, մինչև որ Էլենին հաղթական ժպիտով ու աչքերը Բագրատին հառած սենյակեն հեռացավ։

Տղան բառարանը վար դրավ ու իր մեջը նայեցավ. տեսավ, որ եղանակը պարզ չէ։ Ան սովոր էր միշտ իր ներքին աշխարհը վերլուծելու և այդ ներքին վիճակներու ինչուներն ու ինչպեսները ըմբռնելու։ Բացի զարգացած միտք մը ըլլալեն, պաշտոնապես ալ հոգեբան մըն էր վերջապես։

«Ի՞նչ է հիմա իմ մեջ կատարվածը». հարց տվավ ինքն իրեն։

«Գարնան հովերուն վերադարձը». եղավ ներքին պատասխանը։

«Քու մարմինդ ավելի խելացի է, քան քու խելապատակդ». ավելցուց իր ուղեղի մեկ անկյունեն ծանոթ ձայն մը ծանոթ հեգնությամբ։

Իր ուղեղին մեջ Վասակը կխոսեր։

«Ահա՜ աս ան է, իմ միամիտ ու ողորմելի բարեկամս, որ մեր աշխարհը կանվանե սեր, որ ձեր բանաստեղծները կերգեն առտվնե մինչև իրիկուն սուտ ու պատիր խեղաթյուրումներով, որը սակայն ամեն մարդ ալ ու ամեն անասուն շարունակ կերգե շատ ավելի բնական ու գործնական եղանակով»։

Բագրատ կեցած իր սենյակին մեջտեղը մտիկ կըներ իր ուղեղին մեջեն Վասակի արտասանած ճառին և կզարմանար, թե ինչ պետք ուներ հարյուր անգամ լսած այդ անհամ ճառին։

Սերկ իրողությունը ան էր սակայն, որ իր գանգին տակ տիրաբար կեցած էր մեկ պատկեր մը՝ Էլենին։ Բան մը, որ Բագրատ ո՛չ ժխտել կրնար, ո՛չ ուրանալ։ Մինչև անգամ ստիպված էր խոստովանելու ինքն իրեն, թե անո՛ր համար էր, որ հիմա հաճախ ինքը տունը մինակ կմնար և ոչ թե աշխատելու համար։

Կմնար, որ հանե եզրակացությունը։

«Ուրեմն ես Էլենին կսիրե՞մ, Էլենի՞ն, ի՞նչ արտառոց գաղափար, Էլենին սիրահարվա՞ծ, ե՞ս, զարմանք։ Չէ՛, այդ մարդը իրավունք ունի, մենք բոլորովին ծռեր ենք»։



# Ծ

Երկու օր վերջն էր, շաբաթ իրիկուն մը։ Դպրոցեն դարձին Բագրատ ելավ Շիշլի։ Հիանալի օդ մը կար, գաղջ, գրգռող, անուշ։

Ահագին կենդանություն կտիրեր մեծ փողոցին վրա։ Բագրատ ծանր կքալեր, կնայեր շուրջը, կդիտեր բազմությունը, մասնավորապես կքաշեին իր ուշադրությունը այն անվերջ զույգերը, որոնք թև-թևի, ծիծաղելով, խոսակցելով իր դեմը կուգային նեղ մայթին վրա։

Եվ հանկարծ նախանձ մը մտավ իր մեջը։ Ամենքը կյանքը կվայլեին, զվարթ, գոհ, զույգ-զույգ, իսկ ինքը՞, ինչո՞ւ ինքն ալ չուներ ընկեր մը իր թևին, որ առներ տաներ դաշտերը գեղեցիկ վերջալույսին դեմ, իրիկվան անուշ օդին դեմ, կապույտ ու ծիծաղկոտ երկնքին դեմ։ Այսպե՜ս, միշտ չոր, զուրկ ու մինակ։

Հոգին դառնությամբ ու անհանգստությամբ լեցուն վերջապես ուղղվեցավ դեպի տուն։ Գիտեր, որ Սարգիսը գիշերը իրենց էր մնալու և հավանորեն արդեն եկած էր ըլլալու։

Տուն մտավ թե չէ՝ տեսավ, որ տիկինն էր տունը և Էլենին և իսկույն զգաց, որ անախորժ խոսակցություն էր դարձած երկուքին մեջը. երկուքի դեմքն ալ քինոտ էր ու դժգոհ։

— Խեր ըլլա, ի՞նչ է պատահեր,— հարցուց տղան մթնոլորտը թեթևացնելու շատ բարի ցանկությամբ մը։

— Ի՞նչ պիտի պատահի,— բարկացավ կինը,— ամենուն խելքը դուրսն է, ոչ մեկը տունը պահել չեմ կրնար, ամենքը միայն մեկ բան կմտմտան՝ ձգեն ու երթան։

— Ինչու՞ այդպես կըսես, maman,— պատասխանեց աղջիկը տխուր ու լացակումած շեշտով մը,— դուն գիտե՛ս, թե ես ինչքան քիչ դուրս կելլեմ իմ հաճույքիս համար, բայց այսօր խորունկ պահանջ մը ունիմ բաց օդը ըլլալու, բնության հետ ըլլալու։ Այնպես հոգիս ճընշում մը ունի, այնպե՜ս ինծի խռովված կզգամ։

Բագրատ զարմացած անոր նայեցավ, այնպես հստակ կըմբռներ աղջկան ըսածը, անոր ուզածը։ Իր հոգիին մեջ հանկարծ բան մը տակնուվրա եղավ և ալ առանց երկար մտածելու դարձավ տանտիկնոջ.

— Արդյոք տիկինը առարկություն կունենա՞, եթե ես ու Էլենին երթանք հիմա միասին պզտիկ պտույտ մը ընելու։ Շատ չենք ուշանար, տիկի՛ն։

Ըսված էր շատ քաղաքավար և խնդրող, բայց և կտրուկ շեշտով մը, որուն դեմ մերժումը շատ էր դժվար։

— Ձեզի հետ միասին, պարո՛ն Բագրատ, անշուշտ ուրիշ է։ Գնա հագվե՛,— դարձավ Էլենիին։

Հարցի լուծումը Էլենիի ակնկալածեն և ուզածեն չափազանց գերազանց էր. ուրախութենեն ոտքը գետնեն կտրեցավ ու վազեց իր սենյակը։

— Շատ դժվար ու պատասխանատու բան է, պարո՛ն Բագրատ, աղջիկ մեծցնելը,— ինքզինքը արդարացուց տիկինը։

Էլենին ինքն ալ չհասկցավ, թե ինչպես կրցավ հագվիլ և հագիվ գլխարկը դրած նետվեցավ սենյակեն դուրս ձեռնոցները անցնելով։

Մեկ-երկու կատակի խոսքով բարևեցին տիկինը, ու սանդուղներեն վար։

Հազիվ էին փողոց ելեր, որ աղջիկը առանց այլևայլության կախվեցավ տղուն թևեն ու երկուքի համար ալ կարծես շատ բնական կերպով։

Բագրատ կտաներ անսովոր փողոցներով, որ այս դիրքով ծանոթներու չպատահին։

Եվ երկուքն ալ ուրախ էին։ Խոսք, կատակ, ակնարկություններ անցորդներու հասցեին, ու կխնդային սրտանց ու բարձրաձայն, երկու երեխաներու պես։

Խոսելեն, քալելեն ու քրքջալեն հոգնած՝ մտան վերջապես այդ անծանոթ թաղին մեջ սրճարանի մը պարտեզը քիչ մը շունչ առնելու։

Մտան պարտեզ ու շուրջներնին նստելու համար տեղ մը կփընտրեին։

— Հո՛ն, օրորանի կողմը, թե՛ ավելի չոր է և թե՛ ավելի առանձին,— օգնեց դեմ եկող սպասավորը խորամանկ ժպիտով մը։

Եվ Բագրատ առաջնորդեց աղջիկը դեպի մատնանիշ եղած կողմը, որ բաղեղներու դեռ անտերև թուփերովը կես մը զատված էր պարտեզի մնացած մասեն։

Բերել տվին գարեջուր։ Էլենին ուզեց ձեռնոցը հանել ու դժվարացավ։

Բագրատ բռնեց ամուր աղջկան դաստակը և մեկիկ-մեկիկ բոլոր մատներեն քաշելով՝ հանեց երկու ձեռնոցներն ալ ու նետեց աղջկան գիրկը։

Արևը արդեն մայր էր մտած։ Թանձր կապտություն մը արևելքեն պարտեզին վրա կթափվեր։ Խոնավությունը սաստկացած էր, և պարտեզը եղողները՝ մեկ երկու հոգի՝ սրահը կքաշվեին։

Հանկարծ աղջիկը ցատկեց ոտքի, քաշեց գլխեն գլխարկը.

— Ես օրրվիլ պիտի, եկե՛ք ինծի օրրեցեք,— խնդրեց ձայնի ու գլուխ քծնող շարժումով մը։

Բագրատ լուռ հետևեցավ աղջկան։ Էլենին նստեցավ օրրանին մեջ, և տղան դեմը կեցած օրրել սկսավ։ Նախ նստարանի փայտեն կհրեր, բայց քանի օրրանը ուժ առնել սկսավ՝ տղան ստիպված էր աղջկան



ոտքերեն հրելու, և ամեն անգամ, որ անոր կեսկոշիկներուն մեջեն դուրս սահող մանր ոլոքները կբռներ՝ ձեռքերը կդողային։

Օրրանի առաջացուցած հովը թեթև մը վեր կառներ աղջկան շըրջազգեստը, որուն տակ սև, երկար գուլպաները ճերմակության մը մեջ կկորսվեին։

Բագրատ հանկարծ օրրելը դադրեցուց։

— Օրրեցե՛ք,— պահանջեց աղջիկը։

— Կեցե՛ք, միասին օրրվինք։

— Հա՛, եկե՛ք,— և աչքերը սկսան տարօրինակ ցոլք մը արձակել։

Օրրանը կեցավ, աղջիկը մեկ կողմ քաշվեցավ, Բագրատ նստեցավ քովը ու բռնեց պարաններեն։ Ոտքի մեկ-երկու հարվածով ուժ տվավ տղան, և երբ օրրանը նորեն թափ առնել սկսավ, Էլենին ձգեց բռնած թելրը, երկու թևով փաթթվեցավ երիտասարդին ու գլուխը սեղմեց անոր կրծքին։

Բագրատ դողաց, ոտքը ուժով գետնին դեմ տվավ, և օրրանը ցընցումով կեցավ։

Աղջիկը զարմացած բարձրացուց գլուխը և միևնույն ատեն զգաց երիտասարդի պինդ թևերը, որ իր մեջքը կգրկեին, և երկուքի շրթունքները իրար գտան։

— Ես գիտեի, որ ինծի կսիրես,— կհծծեր աղջիկը մարմրող ձայնով մը համբույրներուն մեջեն։

Երբ ելան օրրանին վրայեն՝ արդեն մութ էր շնորհքով։ Կթոտ ոտքերով դարձան իրենց սեղանին քովը։ Բագրատ կանչեց սպասավորը, վճարեց։ Աղջիկը հագուստն ու մազերը կարգի բերավ, դրավ գլխարկը, ու ելան պարտեզեն։

Որքան որ աղմկոտ էր եղած իրենց գալը, այնքան լուռ եղավ հիմա իրենց վերադարձը։

Նորեն թև-թևի, շատ ավելի սեղմված իրարու և երկուքի գլուխներն ալ տարօրինակ մշուշի մը մեջ։

— Հանրակառք վերցնենք, որ չուշանանք,— ըսավ Բագրատ։

— Այո՛, և հոգնեցանք,— վրա բերավ աղջիկը խնդալով։

Բարձրացան առաջին հանդիպած հանրակառքը, գացին վերին ծայրը, նստեցան իրարու կից, և աղջիկը իսկույն կես մը ծածուկ ուրիշներեն բռնեց տղուն ձեռքը։

Դեմերնին նստած էր տաճիկ ծերունի մը, որու բարի դեմքին վրա ներողամիտ ժպիտ մը կխաղար, ամեն անգամ, որ իր հայացքը իր կամքին հակառակ դիմացի իրար սեղմված ձեռքերուն կիյնար։

Երբ տուն հասան՝ աղջիկները արդեն տունն էին։ Օկյուստան նետ-

վեցավ Բագրատի վրա, թե ինչո՞ւ իրեն ալ հետը չտարավ. տղան խռոտացավ ուրիշ անգամ մը։ Իսկ Էլենին ներսը մեկ կողմեն հագուստները փոխելով և մյուս կողմեն իր սովորական աղմուկով, չափազանցնելով և մանրամասնություններ հորինելով՝ կպատմեր թե ճամփան ի՛նչ զարմանալի մարդիկներու էին հանդիպեր և թե ի՛նչ սրախոսություններ էին ըրեր անոնց հասցեին։

Բագրատ անգամ մը մտավ իրենց սենյակը, բայց նույնիսկ առանց լամպը վառելու նորեն դուրս եկավ իսկույն ճաշարան երթալու համար, ուր հավաքված էին հիմա անշուշտ իր ընկերները։

Երբ միջանցքին մեջ վերցուց իր հաստ վերարկուն և սկսավ ծանր-ծանր ու դժվարով թևերն անցնել, զգաց միևնույն ժամանակ, որ ծանր-ծանր ու դժվար բան մը կհագներ նաև իր հոգիին վրա։

Հիմա ինքը այլևս կապված մարդ մըն էր։ Կապվա՞ծ։ Անշո՛ւշտ։ Կամ սրիկա մը։

Արագ դուրս սպրդեցավ բնակարանի դուռնեն, որ տնեցիներեն ուրիշ մարդու չպատահի և իր այդ տեսակ մը բնազդական վարմունքեն շատ դժգոհ մնաց ու ամոթ զգաց։

«Ինչո՞ւ կխուսափեր, մի՞թե գեշ բան մըն էր ըրեր»։

Գե՞շ էր, թե ոչ, և ի՞նչն էր գեշ, լավ չէր ըմբռներ, բայց փնտրել ու վճռելն ալ ավելորդ էր։ Կզգար միայն, որ ինքն իր աչքին ինկած էր։

«Ինչպես ամենքը», «ինչպես ուրիշները», «ինչպես բոլորը». կկըրկըներ շարունակ տարբեր ձևերով, կես մը իբրև արդարացում, կես մը իբրև մեղադրանք։

Ճաշարանին մոտեցած էր, որ ձ!ռքի ժխտական շարժում մը ըրավ և ընդհատեց իր մտքերուն ընթացքը.

«Հերի՛ք է. ասոնք բոլորը պարապ բաներ են»։

Գևորգ ու Սարգիս, ուրիշ մեկ-երկու ընկերներու հետ իրենց սովորական սեղանին շուրջը կխոսակցեին։ Ընթրիքը ավարտած էին արդեն, գինիի ու սուրճի գավաթներն էին մեջտեղը։

Բագրատի ներս մտնելը տեսնելուն պես տեղ բացին, ու խոսակցությունը ավելի տաքցավ։ Խնդիրը հրապարակի վրա երևցած նոր վեպի մը մասին էր։ Բագրատ իր բոլոր թափովը մեջ նետվեցավ։ Ամենեն շատ կխոսեր, կքննադատեր, կվերլուծեր թեր ու դեմ, և շատ խոր, և շատ սուր, և իր ընկերներուն զարմանք պատճառելու աստիճան, որոնք սակայն վարժված էին անոր սրտանց ու խելացի խոսվածքին։

Շատ ուշ էր, որ տուն վերադարձան, գարեջուրեն թեթև մը ծանրացած էր Բագրատի գլուխը և ծխախոտի մուխին մեջ երկար խոսելեն թանձեր էր կոկորդը։



## ԺԱ

Երբ աչքը բացավ պայծառ առավոտ էր։

Գևորգ հայելիին առջևը կեցած երկու ձեռքով մազերը կարգի կբերեր։ Երբ երկուքն ալ արդեն հագված էին՝ Գևորգ նախաճաշիկը խնդրեց։ Եվ եկավ Էլենին կաթի ու սուրճի ափսեն ձեռքը։

— Բարի լույս։ Գիշերը ինչպե՞ս քնացաք,— հարցուց ընդհանուր կերպով, բայց ժպտուն աչքերը Բագրատին գամած։

— Ամենափառավոր կերպով,— պատասխանեց Գևորգ։— Իսկ դո՞ւն։

— Ա՜, ես ամբողջ գիշերը չկրցա քնանալ, կարելի՞ է քնանալ,— հարցուց հանկարծ։

— Ինչո՞ւ,— հարցուց Գևորգ անտարբեր օձիքը խոզանակելով։

— Ես ի՞նչ գիտեմ։

Բագրատ նստած էր նախաճաշիկի սեղանին առջև, իսկ Էլենին դեմը կեցած սուրճը կլեցներ։ Բագրատ ակամա սկսավ դիտել աղջկան երկար և ո՛չ բոլորովին մաքուր եղունգները, և հիշեց, որ նախորդ իրիկունը այդ մատներն էր սեղմած այնպես պինդ-պինդ. զարմանալի անհաճո զգացում մը ունեցավ։

Իսկ Էլենին Գևորգի պահ մը սենյակեն հեռանալը օգտագործելով՝ մտերմաբար մոտեցավ Բագրատին և ծռեցավ վրան կարոտով.

— Ինչո՞ւ չես խոսիր, ինչո՞ւ այդպես լուրջ ես։

— Ի՞նչ խոսիմ,— պատասխանեց Բագրատ։

Եվ սկսավ անոր դեմքին գծերը դիտել, որ անակնկալ կերպով սովորական ու գռեհիկ կգտներ։

Բարեբախտաբար Գևորգ վերադարձավ, և աղջիկը քաշվեցավ սենյակեն։

Բագրատ աճապարանքով սուրճը խմեց, աճապարանքով հագավ վերարկուն, ըսավ, որ մեկուն հետ ժամադիր է եղած և խնդրեց Գևորգին, որ այսօր կիրակնօրյա վարժարանը իր փոխարեն ալ քիչ մը զբաղվի և առանց պատասխանի սպասելու դուրս նետվեցավ։

Պետք ուներ առանձին մնալու, ինչ գնով ալ ըլլար պետք ուներ հարթելու իր ներքին երկուությունը, ինքն իր հետ հաշտվել կուզեր։

Իջավ արագ դեպի մեծ կամուրջը և Ոսփոր մեկնող շոգենավերեն մեկը մտավ։ Բարձրացավ վերի բաց հարկը, ընտրեց արևոտ ու մեկուսի անկյուն մը ու նստավ երեսը ծովուն։

Շոգենավը ճամփա ելավ ,և Բագրատ աչքերը հառած այդ ետ-ետ փախչող և օրորուն կապույտին՝ սկսավ մտածել։

Ո՛չ, այս հիվանդագին հոգեկան վիճակը պետք է վերջանար, մեկ

անգամեն և հիմնապես, և իր գործած մեծ սխալը պետք է սրբագրվեր և արմատապես։ Սխալ մըն էր, այո՛, կոպիտ ու աններելի սխալ մը առանց սիրո սիրել ուզելը։ Աններելի սխալ մըն էր ատիկա իրե՛ն համար, իր հոգեկան կազմին համար, իր խառնվածքին համար. ուրիշները թող վարվին, ինչպես իրենք կհասկնան։ Իր երեկվան դժբախտ վարմունքը վարակում մըն էր ուրիշներու հոգեբանութենեն և որ թուլվածքի բյուրեղով գնում(?)...

բոլորովին նույնը։ Կխոսեին և իրարու, և մյուսներու հետ, կարծես իրավ որ ոչինչ չէր անցած իրենց մեջ, ոչինչ չէր պատահած։

Եվ աղջկա այդ լուռ համակերպումը և ինքզինքը պահել գիտնալը Բագրատին իրապես սկսած էր հարգանք ներշնչել. ո՛չ մեկ դժգոհանք, ո՛չ մեկ խոսք, ո՛չ մեկ ցույց կամ քեն աղջկան կողմեն, կարծես իրոք որ ոչինչ չէր պատահած։

Տղան հարգանք ու երախտագիտություն կզգար հիմա Էլենիի հանդեպ, և այդ նոր զգացումը ինքնահատուկ քնքշություն մը ու մտերմություն մը կուտար ձայնին ու խոսքին, երբ Էլենիի հետ կխոսեր։

Միայն անոնց երկու զույգ աչքերն էին, որ համառ կերպով իրարու նայելե կխուսափեին։

## ԺԲ

Կամուրջին վրա Գառը-գյուղ տանող շոգենավերու նավամատույցին առջևը՝ կազինոյի բաց պատուհանին դեմը նստած՝ Վասակ քառորդի մը չափ էր՝ մեյ մը աջ կդառնար, մեյ մը ձախ ու անհամբերութենեն ոտքերը կերերցներ։

Կիրակի էր ու կեսօրի մոտ, ապրիլի արևը վարը ծովուն հետ կըխաղար։

Վասակ հորանջելով վերցուց սեղանին վրա ինկած հայերեն լրագիրներեն մեկը, աչքե անցուց ու նետեց անդին.

— Տորիչելյան դատարկություն,— մըլտալով։

Առավ փարիզյան պատկերազարդ թերթ մը։ Առաջին երեսի գունավոր պատկերը ոճրագործի մը կալանավորումն էր, վերջին երեսինը՝ շոգենավի մը Ատլանտյանի ջրերուն մեջ ընկղմիլը։

Երկար ուշադրությամբ դիտեց բռնված ոճրագործի կատաղի դիմագծերը ու սկսավ համեմատել անդին խեղդվող աղջկան մը հուսահատ դիմագծերուն հետ։

«Ի՜նչ նմանություն, կմտածեր։ Աչքերուն բացվածքը, բերաններուն քովի ծալքը, ռունգերուն լայնացումը, բռունցքներուն գալարումը. նույնը երկուքն ալ։ Խե՜ղճ աղջիկ։ Բայց ինչու՞ աղջիկը մեղքցա. ավանդական ու դասական արտահայտություն։ Ո՛չ, ես ավելի ոճրագործը կմեղքամ։ Մեկը մարդկային ծովուն մեջ խեղդվող մըն է, մյուսը՝ պարզ ջուրի։ Մեկուն տանջանքը կես ժամ առաջ սկսավ ու քանի մը վայրկյանեն կվերջանա, իսկ մյուսին տանջանքը սկսած է զույգե ծնած օրեն և դեռ, ո՞վ գիտե, որքան ալ տևելու է բանտերու ու շղթայակիր տաժանքներու մեջ»։

Նույն միջոցին գավազան մը երկնցավ պատուհանեն ներս ու լրագրին տակեն թեթև հարված մը տվավ։



Վասակ գլուխը բարձրացուց։

— Բագրատը դեռ չեկա՞վ,— հարցուց եկողը։

— Հո՛ս եկուր, Գևորգ, նայե՛ սա պատկերը, ի՞նչ բան է։

— Ոճրագործ մը, կարծեմ։

— Ոճրագո՞րծ, դդո՛ւմ գլուխ։ Լոկոմոթիվը դրեր են երկու գծերու վրա, ուրկե դուրս ելլել չի կրնար։ Մեջն ալ լեցուցեր են ջուր, տակն ալ անընդհատ քարածուխ կվառեն։ Արդ՝ ի՞նչ պիտի ըլլա հետևանքը. ջուրը կգոլորշիանա, գոլորշին, որ բանտված է, ուզե չուզե դարձնե պիտի չափված-ձևված ու տեղավորված անիվները, և լոկոմոթիվը առաջ կերթա իր գծերուն վրա։

— Ինծի մեքենաբանությա՞ն դաս կուտաս։

— Հրամա՛նք ես։ Ոճրագործ ըսածդ ահա՛ այդ լոկոմոթիվն է. մեր մարդկային սահմանափակ մտածումներով անոր համար տնտեսական գծեր ենք շիներ անվերջ ու անփոփոխ, ուրկե դուրս գալու հնարավորություն չունի։ Խեղճին մեջը լեցուցեր ենք հարստանալու, տիրելու, կեղեքելու և ուրիշները շահագործելու սուր փափագը։ Արդեն կրակը բնականեն մեջը կա՝ անոթությունն ու սեռը։ Խե՜ղճ մեքենա, ուզե չուզե առաջ պիտի երթա։ Ճամփուն վրա մարդ մըն է պառկած. կտրե պիտի մեջեն ու անցնի։ Կրնա՞ շեղիլ մեր իսկ, լսե՛, մեր իսկ շինած, շըտկած ու ամրացուցած երկաթի գծերեն։ Ոճրագո՞րծ, խե՜ղճ մեքենա։

— Ես քու մեքենայիդ խիղճն անիծեմ, ոճրագործիդ ալ, քու ալ. անդի՛ն նետե սա լրագիրը։— Գոռաց Գևորգ զայրացած, խլեց ձեռքեն թերթը ու նետեց հեռավոր մարմարե սեղաններեն մեկուն վրա։

— Դուն ինծի ա՛ն ըսե՝ ժամը քանի՞ն է շոգենավը։

— Չգիտեմ, հատ մը եկավ ու գնաց։ Ջանձրացա սպասելեն։ Արդեն ձեզի հետ ժամադիր ըլլալը խենթություն է. ո՞ւր եք մինչև հիմա։

— Բարեկա՛մ, մենք քեզի պես հով կլլող չենք, գործի մարդ ենք, կպատահի՝ կուշանանք։

— Գիտե՛մ, սարսափելի մեծ գործերու վրա եք։

— Բարև, Վասա՛կ,— լսվեցավ Բագրատի ձայնը։

Մոտեցավ անոնց ու ինկավ աթոռի մը վրա, ժպիտը շրթունքին, քիչ մը գունատ, հոգնած մարդու մը բոլոր արտաքին արտահայտություններով։

Բագրատի հետ էին վանցի ուսուցիչը, որ կիրակնօրյա վարժարանը կաշխատեր, այլև ուրիշ վանցի երիտասարդ մը։ Բոլորն ալ հրավիրված էին Սարգիսի տունը ճաշի։

— Այսօր աչքիս ուրիշ տեսակ մը կերևաս,— ըսավ Վասակ Բագրատին թեթև հեգնությամբ մը։

— Կարծեմ քիչ մը տկար եմ և քեզի հետ գլուխ դնելու բնավ տրամադրություն չունիմ։

— Բայց սիրելիս, գույնզ-մույնզ արդեն թուխ է, վաղը մյուս օրը բժիշկները ավետելու են, որ թոքերուդ ճյուղիկներուն մեջ անկոչ մանրէները իրենց բույնը հյուսեր են, իսկ դուն քու ունեցած մեկ խղճուկ կիրակիդ ալ կերթաս նորեն կգոցվիս այն անպիտան սենյակներուն մեջ ու ժամերով շունչ կհատցնես։ Երկու խեղճուկ մարդու երկու պատառ խեղճուկ բան պիտի սորվեցնես եղեր։ Այդ մարդիկն ալ այդ երկու կտորիկ բանը թող պակաս գիտնան, ի՞նչ վնաս, կամ մենք, որ այդ երկու խեղճ կտորիկը ավելի ենք գիտցեր՝ ի՞նչ խեր ենք տեսեր։

Բագրատ մեղմ ու անուշ կժպտեր, իսկ Վասակ շարունակեց.

— Բայց իհարկե՛. անձնվիրություն, ինքնազոհություն, գերագույն առաքինություն, բարոյական գագաթնակետ։ Ո՛չ, կներես, պարզապես էշ նահատակություն։

— Սխալ ճամփու վրա ես, բարեկա՛մ,— նկատեց Բագրատ շատ մտերիմ։— Ես մինչև հիմա ինչ որ ըրեր եմ իմ կյանքիս մեջ և ինչ որ կընեմ, կընեմ միայն իմ հաճույքիս համար կամ գոնե գալիք հաճույքի մը հույսովը։ Իմ ըրածս քեզի կամ ուրիշներուն կրնա անձնվիրություն թվիլ, բայց ինծի համար պարզապես իմ էության ու կրթության պահանջն է։ Ուրիշներու բարձրացմանը նպաստել, մարդկային հառաջադիմության սանդղի թաթան մըն ալ իմ կողմես տված ըլլալ, իմ ըմբռնածս իմ նմաններուս ալ հաղորդել, և միշտ կենդանի գործ մը ու մաքառման մեջ գտնվիլ ինծի համար ներքին պետք մըն է և խոր հաճույք մը։ Ուրիշ ոչինչ։

Վասակ չպատասխանեց, բա՛ն մը, որ խիստ բացառիկ էր։ Եվ սկսավ դիտել Բագրատի դժգունած այտերը, ցոլուն աչքերը և տեսակ մը հուզում զգաց. կարծես կարեկցություն, կարծես պատկառանք, կարծես համբուրելու փափագ մը, կարծես նախանձ։

Շոգենավը եկած էր։ Ամենքը ոտքի ելան։

Վասակ կքալեր խումբին ետևեն ու շոգենավ մտավ գլուխը կախ ու մտասույզ։

## ԺԳ

Սարգիսի տունը Գատը-գյուղի նավամատույցեն շատ հեռու չէր։

Հազիվ մանչ մը դուռը բացավ, որ Գևորգ թոքերուն բոլոր ուժովը «Սերգո՛» պոռաց։ Ու վերեն լսվեցավ Սարգիսի առողջ ձայնը.

— Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ, գինին իմ քաղցր է և խոհարարս՝ մեծհոգի։



— Կեցցե՛ մեր տիրացուն,— պատասխանեց վարեն Վասակ։

— Ո՞ր ծակն ես մտեր,— կըսեր Բագրատ սանդուղներեն վեր բարձրանալով։

Եվ հինգը մեկեն մտան սենյակ մը, որ դուռը բացող մանչը խնդալով մատնանիշ ըրավ։

Անկյունը, պատուհանին մոտիկ, խոշոր գրադարանի մը առջևը, դեռ գիշերազգեստով, Սարգիս նստած կգրեր։

Երբ տղարքը միասին ներս խուժեցին՝ գլուխը քիչ մը ետ դարձուց ու ժպտելով ըսավ.

— Հա՛, վանդալնե՛ր, քիչ մը խելոք նստեցե՛ք, հիմա կվերջացնեմ, հիմա։

Ու շարունակեց սրբագրել գրվածքի մը վերջին տողերը։ Բագրատ ծռեցավ ու գրողի ուսին վրայեն սկսավ գրածը կարդալ։

Մյուսները բազկաթոռներուն մեջ ինկած կսպասեին, իսկ Վասակ ձեռքերը ետին կապած՝ կեցած էր Սարգիսի գրադարանին առջևը ու գրքերուն կողերը կկարդար բարձրաձայն։

— Կիկերոնի «Ճառ հաղագս բարեկամության». անթիքա՛։ «Մխիթար Այրիվանցի». հը՛մ, հայրենակից է երևի, վանցի։ «Հացի խնդիր». լա՜վ։ «Ռընան». ո՜ւհ, գործը մեծցավ։ «Տնտեսագիտություն». այս մոլորված ոչխարը ինչ գործ ունի հոս։ «Սպենսեր»։ «Լաս-տի-վեր-ցի». իտալացի ըլլալու է։ «Ոդիսական»։ Դուրյան։ Շահազիզ։ Զոլա։ Բանաստեղծներուն կծիկը քակվեցավ։ «Փիլիսոփայության պատմությունը մինչև...». հը՛մ։ «Կրոնքներու ազդեցությունը ընկերական...». հը՛մ։ «Մանկա-վար-ժա-կա...». ա՜, ա՜, ա՜, ա՜։

Բացավ բերանը ու սկսավ խոշորաձայն հորանջել։ Ամենքը միաբերան խնդալ սկսան։

Սարգիս արագ վերջակետ մը դրավ, գրիչը նետեց ու ցատկեց ոտքի։

— Տղա՛ք, կարդամ հոդվածս, լսեցե՛ք։

— Հոդվածդ մեր փորը չի կշտացներ, անոթի ենք մենք, բարեկա՛մ,— նկատեց Գևորգ։

— Ինչի՞ մասին է,— հարցուց Վասակ։— Նորեն կա՛մ վարդապետ, կա՛մ վարժապետ. պարզ բան։

— Ո՛չ։ Քաղաքակրթության զարգացման վրա ակնարկ մըն է,— պատասխանեց Սարգիս։

— Կարդա՛, նայինք,— ըսավ Բագրատ։

— Վերջը՛, վերջը՛. փորերնիս անոթի է,— կրկնեց Գևորգ։

— Կեցե՛ք, սա վերջին էջը կարդամ, ամբողջի մասին գաղափար մը կազմեք։ Ուրտեղե՞ն էր, հա՛։

«Այսպիսով քաղաքակրթությունը ծլած Ասիայի հողին վրա, հոն ուժ առավ, հոն ոտքի ելավ, հոն ըրավ իր առաջին քայլերը և հոն հիմք դրին մեր արդի ընկերական ու քաղաքական հիմնական վիճակները։ Երբ թագավորություն, զինվորական հաստատուն կազմակերպություն, արհեստ ու արվեստ, առևտուր, գիր ու գրականություն ուներ արդեն Ասիան, անդին Եվրոպան ճահիճներով ու անտառներով ծածկված վայրի բնություն մըն էր դեռ, ուր վայրի ցեղեր կթափառեին։

Բայց եկավ ժամանակը՝ Ասիան կատարած էր իր առաջին գործը, ալ հողը հոգնած էր ու հանգստի պետք ուներ ուժերը վերստին ժողվելու համար։ Եվ քաղաքակրթությունը անցավ Եվրոպայի սեմեն ներս, ու ծլավ Եվրոպան իր անտառներեն, մեծցավ, զորացավ ու հասավ իր արդի տիրող բարձրության։ Եվ հիմա ալ ա՛ն իր կարգին հոգնած է ու հանգիստ կպահանջե։ Քաղաքակրթությունը նոր ու թարմ ուժերու պետք ունի, երկար դարեր հանգստացած կամ դեռ բոլորովին չգործածված հողի։

Եվ ահա քաղաքակրթությունը Եվրոպայեն ալ սկսավ չվել. մեկ կողմեն դեպի Նոր Աշխարհ, մյուս կողմեն դեպի իր հին Ասիան։ Սիպիր, կեդրոնական Ասիա, Հնդկաստան երկաթուղիներ կվազեն և երկաթուղիներուն հետ նոր գործիքներ, նոր ապրանքներ ու նոր գաղափարներ։ Չինաստանի դարավոր պարիսպները սկսած են կործանիլ։ Ճաբոն մը աշխարհ եկավ։ Պարսկաստան շուտով պիտի ցնցվի, և քաղաքակրթությունը նորեն Ասիայինն է։

Եվ ասիական դեռ շատ մը ազգեր նոր պիտի սկսին իրենց գործունեությունը մարդկային զարգացման սանդուղին վրա։ Հարյուրավոր միլիոններ իրենց հերթին կսպասեն քաղաքակրթության համար քրտինք ու արյուն թափելու։

Եվ մյուսներուն հետ՝, այսքան դարեր համբերությամբ սպասող ու համառությամբ ոչնչացման դիմադրող մեր փոքրիկ ժողովուրդն ալ իր շղթայված ուժերուն գործադրությունը պիտի ստանա։ Ան ալ պիտի թափե նորեն իր քրտինքն ու արյունը քաղաքակրթության համար»։

— Պրավո՛,— պոռաց Գևորգ։

— Շի՛ք է,— նկատեցին երկու երիտասարդները։

— Ի՛սկը լրագրի հոդված,— ժպտեցավ Վասակ։

— Բայց ես կուզեի, որ այդ նոր ասիական քաղաքակրթությունը գեթ մեկ-երկու բառով նկարագրեիր,— նկատեց Բագրատ մտածկոտ։

— Այսի՞նքն,— հարցուց Սարգիս։

Բագրատ քիչ մը ճակատը շփեց և սկսավ նմանվելով Սարգիսի գրվածքի ասության ձևին.



«Եվ ես կերևակայեմ այդ գալիք քաղաքակրթությունը։ Ասիայի մեջ ամեն բան խոշոր է, վեհ ու լայն, ընդարձակ։ Հոն ա՛լ չեն ըլլալու եվրոպական քաղաքակրթության պզտիկ խնդիրները։ Կռիվ ու ավերում նախապատմական բաներ պիտի դառնան, բոլոր ազգերը կապված իրարու ընդհանուր միության մը մեջ։ Արդի տնտեսական անհավասարությունը, հարստության անհավասար բաշխումը, աշխատանքի ու վարձի անզուգակշռությունը ապագա պատմության ուսուցչապետներ ժամեր պիտի խլեն քիչ-շատ հասկնալի դառնալու համար։ Մեր արդի կրոնքը, մեր բարոյական ըմբռնումները, մեր ընտանեկան կազմը մանկական պիտի կոչվին, մեր գրականությունը՝ երեխայություն՛ իսկ մեր գիտություններն ու արհեստները՝ առաջին խարխափումներ, և նոր հնարված հաղորդակցության միջոցները «հեռու» բառին գաղափարը պիտի մթագնեն։ Օդն ալ պիտի հնազանդի մարդու կամքին։ Ստորջրյա անտառները, ընդծովյա բնության հիանալի տեսարանները գալիք ուղևորներու շատ հաճախված վայրերը պիտի ըլլան։ Եվ ապագա գիտնականները նողկանքով պիտի կարդան մեր արդի դատարաններուն, պատիժներուն, բանտերուն ու գլխատություններուն նկարագիրը։ Ճիշտ այնպես, ինչպես մենք հիմա հավատաքննության էջերը կկարդանք։ Եվ ապագա կինը իր կոչման ու զարգացման բարձունքեն «խաղալիք» պիտի անվանե մեր արդի կինն ու աղջիկը։ Եվ այս ամենը ա՛յն հողին վրա, ուր մենք հիմա կքաշքշվինք մեր անազատ, մեր հալածված, մեր զուրկ ու տգետ այս ողորմելի պայմաններուն մեջ»։

Լռեց։ Լռած էին պահ մը մյուսներն ալ։

Սարգիս բերանը բացավ բան մը ըսելու համար, որ Վասակ կտրուկ մեջ նետվեցավ.

— Է՛, մենք հոս քարո՞զ մտիկ ընելու եկանք։

— Անոթի՛ ենք,— պոռացին Գևորգ և մյուս երկու վանցիները միաբերան Գևորգի տված նշանին վրա։

— Հիմա՛, հիմա՛, սովյալնե՛ր։ Հայտնի է, որ վարժապետ եք, է՛,— պատասխանեց Սարգիս և «Դավո՛» ձայն տվավ սպասավորին ու վանեցու բարբառով քանի մը հրամաններ ավելցուց։

## ԺԴ

Պզտիկ սենյակ մըն էր ճաշարանը։

Պզտիկ ալ սեղան մը, մաքուր սփռոցով ու սպասներով, որուն շուրջը շարվեցան մեր վեց դուրսեցիները։

Գյուղական սովորությամբ ընտրեցին սեղանին պետ։ Ձայներու

ռավար մեծամասնությունը ինկավ Վասակի վրա, որ բաժակներու բախումով անցավ իր պաշտոնին գլուխը։

Սկիզբը լուռ էին, բոլորն ալ ուտելով էին զբաղված։ Բայց պետի խիստ հրամանով իրար հաջորդող կենացները մթնոլորտը փոխեցին։

Կենացները սրտաբուխ դարձան և հայրենիքի կարոտով։ Երգերը խորունկեն կուգային, ծափերը ուժովցան, և Գևորգ քանի մը գյուղական ձևեր պարեց։

Երբ Սարգիս իր գավառական էսլեն կերգեր, Գևորգ հուզումեն կուլար։ Վասակի դեմքին վրա արտասովոր վերացած բան մը կար և կարծես բոլորովին մոռցեր էր աշխարհը քննադատելը։ Բագրատ պարզապես տխուր էր։

Երբ գինիին շիշերը պարպվեցան, երբ սրախոսությունները տոպրակին հատակը հասան, երբ ձայները խռպոտեցան և երբ փոքրիկ սենյակին օդը նեղ գալ սկսավ ծանրացած գլուխներուն՝ Սարգիս առաջարկեց երթալ Մոսա ծովեզրը։

Ծովուն շունչը ամենքը կազդուրեց. ազատած նայվածքները պայծառացան, ու սովորաբար այդ տեսակ խենթ վայրկյաններուն հաջորդող ծիծաղելի լրջություն մը թառեցավ վրանին։

Գևորգ ազատության մասին կփիլիսոփայեր և հայ ժողովրդի դըժբախտ ճակատագրի.

— Մինչև ե՞րբ սորուկ ու հպատակ ժողովուրդներ, մինչև ե՞րբ այս պանդուխտի կես-փախստական կյանքը, մինչև ե՞րբ պատմության անեծքը հայու վզին։

Սարգիս դեռ իր հոգվածի ազդեցության տակ վանեցի ուսուցչին քովն ի վեր կտրամաբաներ մարդկային հառաջադիմության խոչընդոտ եղող պատճառներու մասին։

Բագրատ ինքզինքը հետզհետե ավելի ու ավելի անհանգիստ կըզգար, թեև ձայն չէր հաներ։

Մինչ այս կամուրջ մեկնող վերջին շոգենավի ժամանակը մոտեցած էր։ Եվ սկսան նավամատույց իջնել։

Սարգիս Բագրատի թևը մտավ, ու երկուքով մյուսներեն քանի մը քայլ ետ մնացին։

— Ինծի նայե՛, քանի միտքս է, չմոռնամ,— սկսավ Սարգիս։— Երեկ ձեր թաղականներեն հաստափորը տեսա։ Գանգատիլ սկսավ նորեն. «Քու մարդդ մեզի սուղի կնստի», կըսե։ «Ի՞նչ կա», ըսի։ «Հինգվեց ամսվան մեջ երկու տարվան ծախք ընել տվավ», կըսե։ «Այս ճամփով գործի տակեն չելլվիր», կըսե։

— Այդ պատմությունը կարծեմ նոր չէ։ Հիմա քու ըսածդ ի՞նչ է



— Այո՛, սիրելի՛ս, բայց այդպես անհոգ ըլլալն ալ կարելի չէ։ Մարդիկը դժգոհ են, հասկցի՛ր, ճռալով, ճռճռալով ուզածիդ կհարմարին, բայց չափեն ավելի պրկել կարելի չէ, տեսար՝ կփրթի։

— Ամեն ինչ եղած է հոգաբարձուներու համաձայնությամբ և որոշումով։

— Եվ ճիշտ ատոր համար պետք չէ դժվարացնես հոգաբարձուներու վիճակը։ Գիտես որ հոգաբարձուներու և թաղականներու մեջեն սև կատու է անցած, վերջապես քեզի կանչողը և քու հենարանդ անոնք են։

— Շատ կգնահատեմ անշուշտ, այդ ինծի կանչողներն ու ինծի հենարան եղողները դուրսեն, բայց ես իմ մեջս ներսեն կանչողներ ալ ունիմ և ներքին հենարաններ. բարեխղճություն է ատոնց անունը և պարտականության գիտակցություն, ատոնք ալ պահանջներ ունին, ատոնց ալ պետք է ականջ դնեմ։

— Ա՛լ չգիտեմ, իմ պարտքս էր քեզի զգուշացնելը, ջանա՛ որ այդ մարդիկ գոհ մնան։

— Սվոր ըսե՝ հինեն ոչինչ չփոխես, եթե կարելի է՝ ոչինչ չընես և մանավանդ իրենցմե ոչինչ չուզես, ա՞ս է ինծմե պահանջվածը, որ գոհ մնան։ Ո՛չ, ես ատոր համար չեմ եկած հոս։— Բացականչեց Բագրատ, զայրացկոտ կանգ առնելով փողոցին մեջտեղը, նավամատույցին ծայրը։

— Քալե՛, քալե՛, շոգենավդ մեկնելու վրա է,— շտապեցուց Սարգիս թևեն քաշելով։

Բայց հազիվ հասած էին տոմսավաճառի պատուհանիկին, որ դեպի նավը առաջնորդող անցքը ցանցվեցավ, և շոգենավը բացվեցավ։

Բոլորը խմբվեցան և հիմար ու շվար հայացքներով իրարու կնայեին։

— Ինչո՞ւ այդպես իշացաք,— խնդաց Սարգիս ամբողջ կրծքով։— Գիշերը կմնաք ինծի. հրաշալի անակնկալ։ Գևորգը ծոցս կառնեմ, ուրիշ անկողին մըն ալ ունիմ, ան ալ Բագրատին։ Մնացածներդ ալ բազմոցներուս վրա, կհարմարինք։ Քալեցե՛ք։

Տղաքը նորեն իրար նայեցան ու Բագրատին։ Բագրատ լուռ մեկնող շոգենավին կնայեր։

— Ան ա՛լ ետ չի դառնար, քալե,— ըսավ Սարգիս նորեն բռնելով ընկերոջ թևը։

— Ո՛չ, ես տուն պիտի երթամ. գիշերը պատրաստելու դաս ունիմ, վաղ առտու ալ շատ կանուխ դպրոցը պիտի գտնվիմ, հոգաբարձության նախագահը տեսնելու եմ, մեկ-երկու մանր կարգադրելու բաներ կան, որ մնա՝ ալ խերը տես։

— Վազ անցիր,— կկրկնեին մյուսները,— այսօր ալ թող ասանկ ըլլա։

— Ո՛չ, ես մակույկ մը կբռնեմ ու կերթամ։

— Խե՛նթ ես, արդեն մթնելու վրա է, ծովն ալ անհանդարտ,— պընդեց Սարգիս։

— Ծովը ինծի չի բռներ, մութը ինծի՞ ինչ։ Նավավա՛ր,— պոռաց ծովեզրը դառնալով։

— Ան որ գլուխը բան մը դրավ՝ ալ համոզել կարելի չէ, բայց հիմարություն է ըրածդ,— բացականչեց Գևորգ չարացած։

Նորեն քանի մը փորձեր ըրին համոզելու։ Բագրատ չհամաձայնեցավ, թոթվեց ընկերներուն ձեռքը և մտավ մոտեցող մակույկը։

Ընկերները բավական երկար մնացին նավամատույցին վրա, կհետևեին մակույկին ու մեջեմեջ թաշկինակ կշարժեին։

— Երթա՛նք,— ըսավ վերջապես Սարգիս։

— Այդ տղուն գլուխը կա՛մ դդումի կուտով է լցված և կա՛մ... կամ ինքս ալ չգիտեմ ինչ ըսեմ,— մռմռաց Վասակ ճամփա ելլելով։

Եվ խումբը կռնակը դարձուց ծովուն, ուր կես-մութին մեջ հեռուն սեին կուտար Բագրատը տանող մակույկին փոքրիկ առագաստը։

## ԺԵ

Մակույկը արդեն ծովուն բացերն էր։ Հո՛ն, ուր Վոսփորի հոսանքը Մարմարայի ալիքներուն հետ կգրկվի։

Նավավարը թիերը թողած՝ առագաստը կղեկավարեր, իր պաշտոնը հանձնած Սև ծովեն փչող պաղ հովերուն։

Եվ մակույկը արագ կսուրար ջրի ծիծերուն վրայեն, որոնց պտուկներեն կաթ-փրփուրը կծորեր։

Մակույկը կսուրար՝ թեքված դեպի ձախ։ Երկու մատ միայն կզատեր ջուրը նավակին եզերքեն։

Բագրատ բնազդաբար աջ կողմը հենած կդողար հովեն. զուր կծըկտիլ կջանար իր վերարկուին ու գլխարկին եզերքներուն տակ։

Աչքերը շեշտ նավակի եզերքեն եռ-եռ վազող ջրին հառած՝ կըմտածեր։

«Ահա՜ մատ մը միայն մահեն հեռու։ Հովի քմահաճույքեն ավելի ուժգին շունչ մը, ավելի մեծկակ ու կամակոր ալիք մը, նավավարի կողմեն սխալ մը և վերջացավ. վերջացավ այս կյանքը իր երազներով, հույսերով ու ձգտումներով։ Երկու ափ ջուր թոքերուն մեջ, փոքրիկ անկանոնություն մը մեր այս բարդ մեքենային մեջ, և այլևս դադրած է ան մեր կենդանական կարողությունները արտադրելե, որ հոգի կանվանենք։ Ճիշտ ելեքտրական մարտկոցներու շղթայի մը պես, ուրկե ելեքտրականությունը կհոսի, մեր հոգիին հարազատ քույրը։ Ի՞նչ խեղճ բան. և մե՛նք որ այնքան հպարտ ենք մեր հոգիով։ Ծիծաղելի է. ստամոքսի, երակներու, ջիղերու և մկաններու հանգույցե կազմված ելեքտրական մեքենա մը, որ կհպարտանա»։

Վայրկյան մը գիտակցությունը դադրեցավ գործելե։ Աչքերը անշարժ սևեռած մնացին ջրի այտուցքներուն վրա, մինչև նորեն շողաց մտածումը իր գանգին տակ։

«Ի՜նչ հիմար բան է մահը և ի՜նչ հիմարաբար ալ կվախնանք անկե։ Քիմիական պարզ տար-բաղադրում մը. հին հյուլեներուն իր ատոմներուն վերածվիլը, այդ լուծված ատոմներեն նոր կազմության հյուլեներ վերարտադրելու համար։ Գործողություն մը, որ ամեն վայրկյան մեր մեջ կկատարվի։ Արտաշնչած օդի յուրաքանչյուր ումպը, քրտինքի ամեն մեկ կաթիլը միթե մեռած հյուլեի մը հուղարկավարությունը չէ՞։ Յուրաքանչյուր մտածում, յուրաքանչյուր շարժում միլիոնավոր մասնիկներու մահվան արդյունքը չէ՞։ Եվ մենք կվախնանք այդ մահեն, որ կյանքի մյուս երեսն է, կյանքեն մշտապես անբաժան. կվախնանք քիմիական այդ փոփոխութենեն, որ փոխանակ փորձի սրվակին մեջ կատարվելու, մեր մարմնին մեջ կկատարվի։

Հետաքրքիր է անշուշտ մեր օրգանիզմի ամբողջության այդ քայքայումը։ Ենթադրե՛նք՝ շուրջս կաքավող այս ալիքներեն մեկը հանկարծ կըքոտեցավ ու մեր մակույկը գրկել ուզեց։ Ի՞նչ կըլլամ «ես»։ Երևի քիչ մը կտապլտիմ, ինքզինքս ազատել կփորձեմ ու կբռնեմ հատակի ճամփան, և լմնցավ, այլևս չկա իմ բարդ «եսը»։ Այդ խոշոր «եսեն» կանջատվին միլիարդներով շատ ավելի տարրական «եսեր», մեկ մեծ մասն ալ կերթան ուրիշ բաղադրյալ «եսերու» մեկ բաղադրիչ տարր դառնալու։ Եվ կամ, ո՞վ գիտե, կխրիմ հանկարծ հարմար կավային տիղմի մը մեջ և հոն կմնա օդարգել երբեմն իմ «եսը» կազմող մարմինը, կմնա հոտ դարեր ու դարեր, մինչև որ օր մը մեր մարդկային սեռեն առաջացած ավելի գերագույն կենդանական տեսակի մը մեկ անհատը գտնե ինծի, հանե ինծի տիղմեն գիտական բոլոր զգուշություններով ու տանի ցուցադրելու իրեններուն այն հնադարյան «մարդ» կոչվող կենդանիին մեկ նմուշը։ Մե՜ղք, որ այն ատենը զգալ չի կրնար իմ «եսս», թե ըն ո՞րքա՜ն նորաստեղծ ու հետաքրքիր բաներ տեսնել կրնայի։

Ինչպես տաք է սակայն, կարծես գլուխս կայրի, և, ո՞վ գիտե, ինչպես զով է հիմա ծովուն հատակը, և, ո՞վ գիտե՝ ինչ աղվոր կյանք կա

հոն հիմա։ Ի՞նչ սքանչելի բան կըլլար, եթե ես իբրև ձուկ մը աշխարհ եկած ըլլայի ու իմ հայրենիքս գտնվեր երկու ընդծովյա քորալե ժայռերուն իրարու հենած հովիտը, ուր սեզերու անտառ մը ավազներեն դեպի լույսը կձգտի։ Միայն թե ուժեղ ձուկ մը ըլլայի։ Հոն ալ օրենքը նույն է. ուժեղինն է աշխարհքը։ Կզարնեի ճկուն պոչս ջրի ծալերուն, կվազվզեի խիճերուն ու քորալներուն մեջ. վերեն իյնող արևի ճառագայթ մը վրայիս թեփերը կփայլեցներ, և ես նազանքով կսլանայի էգերուն քովեն, հազար քծնանքով։

Բայց ինչու՞ համար է։ Աստվա՛ծ իմ, այս հավիտենական ծագումն ու հավիտենական չքացումը, կյանքի ու մահվան այս հավիտենական խաղը, մեկ պարապ ամանեն մյուս պարապ ամանը։ Ինչո՞ւ։ Ա՜խ, այդ հիմար ինչունս։ Եվ ի՜նչ հիմար արարածներ են իրենց հիմար հարցերով այդ մարդ ըսված կենդանիները, և ինչ բախտավոր եմ ես, որ ձուկ ծընած եմ»։

— Պարո՛ն, քիչ մը մեջտեղը նստեցեք,— լսվեցավ նավավարին ձայնը։

Բագրատ երազե արթնցածի պես նայեցավ շուրջը և մեքենաբար կատարեց հրամանը։

Հիմա այլևս չէր դողար, ընդհակառակը, արտասովոր տաքություն մը կզգար մարմնին վրա։

Մտած էին Ոսկեղջյուրին բերանը. հովը թուլցած էր։ Խոշոր շոգենավ մը հաղթ գնացքով անցավ քովերնուն՝ ետևեն լայն շերտ մը ալիք, փրփուր ու ջրի ակոսներ թողնելով։

Այդ ակոսներուն մեջեն Բագրատի նավակը անցավ շիտակ դիմացի եզերքը։

Բագրատ իսկույն դուրս ցատկեց ցամաք, բայց ոտքի վրա ազատ մնալ չկրցավ։ Կռթնեցավ նավակը կապելու ցցին։ Թեթև մը գլուխը կդառնար։

«Ջըլլա հիվանդ եմ,— անցավ մտքեն։— Հիվա՞նդ, բայց ո՞վ է առողջը, մենք մեր կյանքին մեջ ե՞րբ ենք առողջ։ «Էսկուլապին աքաղաղ մը մորթեցեք». խե՜ղճ Սոկրատ, երևի ան ալ հիվանդ էր, որ կյանքը հիվանդություն անվանեց։ Սակայն պետք է տուն հասնիլ»։

Կամքի ուժգին պրկումով մը ամփոփվեցավ և սկսավ քալել։ Առաջին քայլերը կթոտ էին, հաջորդները ավելի ամրացան։ Իր շարժումը հիմա անհագին աշխատանք մըն էր, իր ամբողջ մտածումը սևեռած էր քալելու բարդ գործողության վրա։

Շուրջը բավական բազմություն կար։ Քանի մը խանութներե լամպերու լույսը լայն շերտերով սանդղավոր փողոցին վրա կփռվեր։



Բագրատ դյուցազնական, գերմարդկային գործ մը կատարողի վճռականությամբ կելլեր ելքի ամեն մեկ աստիճանեն վեր։

Իրենց փողոցի անկյունն էր հասած։ Ժպտեցավ ու շունչ առավ։ Եվ կարծես մեկեն ի մեկ թուլցավ։ Գլուխը նորեն պտույտ գալ սկսավ։

«Ո՛չ, ես պետք է տուն հասնիմ». վճռեց ու նորեն սկսավ քալել, նախ առանց ոչինչ տեսնելու, վերջը լարեց աչքերը և իրենց տան ճակտի լապտերը ճանչցավ…

Սկսավ վազել, գոնե այնպես կկարծեր, թե կվազե։ Մտավ բաց դըռնեն ներս։ Սեմի վրա նստած դռնապանի բարևը չլսեց։ Եզերքներեն բըռնած մագլցեցավ սանդուղներեն վեր։ Ինքն ալ չգիտեր ինչպես, ճիշտ իրենց դռան դիմացը կանգ առավ, քաշեց զանգակը, «հասա» մըմընջեց, ուժերը սպառեցան, ձեռքը երկարեց դռան օղակին և…

## ԺԶ

…Եվ ճակտին վրա պաղ-թաց բանի մը շոշափումը զգաց ու կամաց մը թարթիչները իրարմե բաժնեց։

Խիստ աղոտ լուսավորության մը մեջ առաջին տեսածը կես-մերկ թև մըն էր իր դեմքին, իր լանջին բոլորովին մոտիկ։ Զարմացավ։ Բացավ աչքերը, թարթեց ու դիտեց։

Ճերմակ հագուստի մը թեթև ծալքերուն մեջ, մազերը ուսերեն լանջը սահած՝ իր վրա էր հակած աղջիկ մը։

«Հրեշտա՞կ». մտածեց։

Աղջիկը ժպտեցավ և հարցուց շատ մեղմ.

— Ինծի կճանչնա՞ք, ինչպե՞ս եք։

Ձայնը ծանոթ էր, ու դեմքը՝ ավելի ևս։

Բագրատ սքանչացումով սկսավ դիտել։

Աղջիկը լուռ ու գթոտ արտահայտությամբ ծռած էր միշտ տղուն վրա՝ զույգ ձեռքերը անոր ճակտին, ուր պաղություն մը կզգար Բագրատ և ուրկե պզտիկ հոսանք մը աչքին քովեն առու եղեր այտին վրա կըվազեր։

Աղջիկը զգուշությամբ ձեռքի թաշկինակովը սրբեց այդ հոսանքը և կրկնեց տխրությամբ.

— Ինծի չե՞ք ճանչնար։

— Լո՜ւ- ի՜զ,— մրմնջեցին տղու շրթունքները։

Աղջկան դեմքին պայծառ ուրախություն մը բացվեցավ։ Երկու ձեռ-

քերը ճակտի դեղոտ լաթեն հեռացնելով՝ քնքշությամբ բռնեց տղու տաք այտերը՝ աչքերը միշտ անոր աչքերուն գամած։

— Անցա՛վ, անցա՛վ,— կկրկներ բերկրանքով։

Հիվանդին այրվող այտերը այդ թաց ու փափուկ շոշափումեն տարօրինակ հաճույք մը զգացին, և Բագրատ աչքերը գոցեց այդ հաճույքը երկար վայելելու համար։

Քիչ մը ետքը, երբ նորեն բացավ՝ նույն թեթև մը խառնակված մազերն էին իր դեմը, նույն կարեկից դեմքը ու նույն քնքուշ նայվածքը։

— Մեկ տեղերնիդ կցավի՞։ Ո՞չ։ Թու՞յլ եք, հա՞։ Եթե գիտնաք որչափ վախցուցիք մեզի, բայց ալ անցա՛վ, անցա՛վ։

Այդ խնամոտ վերաբերումին ու գուրգուրալից ձայնին դեմ տղան ուզեց շնորհակալության բառ մը ըսել.

— Լո՛ւ-ի՛զ,— մրմնջեցին նորեն շրթունքները երախտիքով։

Աղջիկը ժպտեցավ, քիչ մը ավելի մոտեցուց դեմքը և ըսավ.

— Բժիշկը ըսավ, եթե մինչև առտու տաքությունը իջնե՝ լուրջ բան մը չկա։ Իսկ հիմա 39-ն է միայն,— ավելցուց թևին տակեն ջերմաչափը հանելեն ու նայելեն ետքը։

Տղան թևը ձգեց վերմակին, աչքերը գոցեց ու ալ չբացավ։ Շնչառությունը հետզհետե ծանրացավ։

— Քնացավ,— ըսավ Լուիզ, կամաց մը ետ քաշվեցավ հիվանդի անկողնեն, գնաց պատուհանը, ճակատը դրավ ապակիին ու անշարժ մնաց։ Ու իր կամքին հակառակ մտքին մեջ կկրկնվեր տղու հուզումով արտասանած այն երկու վանկը, որ իր անունը կկազմեին։

Երբ քիչ մը ետքը կրկին մոտեցավ անկողնին ճակտի լաթը փոխելու ու դիտեց ակնթարթ մը տղու հանգչող դեմքը, ամոթի նման զգացում մը ունեցավ։ Իսկույն հեռացավ, նստավ գրասեղանին քովը, ուր լամպն էր դրված լուսամփոփով պաշտպանված, առավ իր ձեռագործը սեղանին վրայեն ու կուզեր բանի, բայց հազիվ քանի մը թել նետեց, որ ձեռքերը ձեռագործին հետ դեպի ծունկերը սահեցան։ Գլուխը հենեց բազկաթոռի թիկունքին ու աչքերը գոցեց։

Արթուն էր, բայց մտածումներ չկային. ուշադրությունը տղու շնչառությունն էր։

Այդ գիշեր Լուիզ բավական ուշ վերադարձեր էր տուն իր մեկ մոտակա բարեկամուհիի քովեն ու տուն մտնելուն պես ամեն բան տակնուվրա էր գտեր։ Բագրատ պառկած էր 40 աստիճանը անց տաքության մ'ջ, ու բժիշկը՝ գլխուն մոտիկ։

Իրեն պատմեր էին, որ տղան դռան մեջ էին գտեր, գիտակցութենե զուրկ ու զառանցելով, չափազանց վախցեր էին։ Կանչեր էին հարևան պարոնը, որ իր տղուն հետ եկեր, հիվանդը փոխադրեր էին իր սենյակը, հանվեցուցեր ու անկողին դրեր։ Եվ իսկույն վազեր էին բժիշկ կանչելու։

Բժիշկը հանգստացուցեր էր, թե արտասովոր բան մը չկա։ Ջանացեր էր տաքությունը պակսեցնելու քիչ մը, հայտներ էր, որ կոկորդն է բորբոքած, պատվիրեր էր գիշերը հսկեն և իրեն իմաց տան, եթե տաքությունը բարձրանալու ըլլա և մեկ-երկու դեղ էր գրեր հաջորդ օրվան համար։

Լուիզ ու Էլենի միասին հսկեր էին հիվանդը մինչև կես գիշեր։ Տաքությունը ըստ երևույթին սկսած էր նվազիլ, ու տղան միշտ կքնանար։ Լուիզ ղրկած էր Էլենիին պառկելու, պայմանավորվելով, որ երկու ժամ ետքը արթնցնե Էլենիին, ու ինքը երթա պառկի։

Շատոնց անցեր էր պայմանին ժամը, բայց Լուիզ հիվանդի անկողնեն հեռանալ չէր ուզեր։

Հիվանդը թեթև մը հառաչեց։ Աղջիկը թոթվեց իր կես թմիրը, մոտեցավ անկողնին. քրտինքի մանր կաթիլներ պատեր էին դեմքը։

Ուրախացած ու մեղմով սրբեց դեմքը, թաց լաթը ճակտեն անդին նետեց ու ալ նորը չդրավ։

Դուրսը լույսը բացվելու վրա էր։ Արդեն բավական ատեն է կլսվեր շրջակա բակերեն աքլորներուն կանչը։

Լամպը մարեց։ Վարագույրներեն մեկը կիսովին բացավ, ուրկե լույսի վարանոտ շիրտ մը ինկավ ներս։

## ԺԷ

— Դեռ չարթնցա՞վ,— հարցուց Էլենին անհանգիստ՝ տղոց սենյակը մտնելով։

— Անգամ մը աչքը բացավ ու ինծի ճանչցավ, հիմա քրտնած է,— հազիվ տվավ ընկերուհին։

— Ինծի ինչո՞ւ չարթնցուցիր մինչև հիմա։

— Անուշ քունի մեջ էիր՝ սիրտ չըրի. իմ ալ քունս արդեն փախեր էր։

Քիչ մը վերջը արդեն ամենքը ոտքի վրա էին տան մեջ ու սկսած էր օրվան կյանքը, և արևն ալ բավական բարձրացած էր, որ դուռը զարկին։

Վասակն ու Գևորգն էին։ Առաջին շոգենավով իջած էին կամուրջ

և հոնկէ ալ տուն հանդիպած, ուր Գևորգ քանի մը գիրք, ցուցակ ու թուղթեր ուներ առնելու։ Անոնց հաշվով Բագրատ արդեն դպրոցն էր։

Դուռը բացավ էլենին և անոնց աղմկոտ բարևին դեմ ցուցամատը դրավ շրթունքին.

— Կամա՛ց, պարոն Բագրատը հիվանդ է։

— Իրա՞վ,— հարցուց Վասակ տարակույսով։

— Սատկի՛ թող, այնքան ըսինք, որ գիշերը ետ չդառնա,— բացականչեց Գևորգ ու խոշոր քայլերով սենյակ ուղղվեցավ։

Բայց հազիվ ոտքը սեմեն ներս դրած, տեսավ դեղերով շրջապատված անկողինը ու անկողնին մեջ հիվանդի դժգույն դեմքը, որ խենթի պես «Բագրա՛տ» պոռաց ու նետվեցավ դեպի անկողինը։

— Կամա՛ց, ի՞նչ կպոռաք, արթնցնեք պիտի,— ձեռքը դեմ տվավ Լուիզ խստությամբ։

Գևորգ կանգ առավ ու անգամ մըն ալ հիվանդը դիտեց։

— Ի՞նչ տեսակ ընկեր եք դուք,— ըսավ Լուիզ հանդիմանությամբ։— Եթե գիշերը մեռներ՝ տեղեկություն անգամ պիտի չունենայիք։

Գևորգ փոխանակ պատասխանելու՝ գլուխը կոթնցուց մահճակալի երկաթին ու սկսավ անձայն լալ։

— Ա՛ռ քեզի ապուշ մըն ալ,— մեջ նետվեցավ Վասակ։

Եվ դառնալով աղջկան սկսավ ամեն ինչ հարցնել բժիշկի մը մանրամասնությամբ և երբ ամեն բան լսեց.

— Բան չկա, բան չկա,— եզրակացուց։— Արդեն քրտներ է. երկու օրեն ինծմե ալ, քեզմե ալ առողջ կըլլա։

Քիչ մը ետքը, երբ Բագրատ աչքերը բացավ՝ իր ընկերներն էին դիմացը, որ կկատակեին։

— Բաղնիքդ անուշ,— ըսավ Վասակ։

— Անդիի աշխարհեն ի՞նչ նորություն,— ըսավ Գևորգ և մեկեն «վա՛խ Բագրատս» պոռաց, փաթթվեցավ վիզը ու սկսավ համբուրել։

— Անդին կորսվե՛, խելա՛ռ,— կըսեր Վասակ։— Քու գգվանքներդ անոր քրտինքը չեն չորցներ, փոխնո՛րդ բեր։

Բագրատ ժպտեցավ, քանի մը բան հարցուց, Գևորգին անմիջապես դպրոց երթալ ստիպեց ու քանի մը կարգադրություններ ըրավ։ Եվ այդչափ խոսելեն հոգնած.

— Ա՛հ, գլուխս կցավի,— ավելցուց։

— Խոսե՛, քիչ մըն ալ խոսե՛, կանցնի,— հեգնեց Վասակ։— Իր վիճակին չնայիր, դպրոցը կմտմտա։ Դպրոցը առանց քեզի ալ կքալե, մի՛ վախնար։



— Գևորգ, այս մարդն ալ հետդ տա՛ր, թե չէ վրաս նորեն քրտինք կուգա,— ըսավ Բագրատ թույլ ձայնով մը ու թույլ ժպիտով։

Վասակ բարձրաձայն սկսավ խնդալ.

— Աղե՛կ, աղե՛կ, կերթամ, մի՛ վախնար, պայմանով, որ քնանաս իրիկվան դեմ նորեն կուգամ։

Ըսավ ու Գևորգի հետ դուրս ելավ սենյակեն։

Միջանցքին մեջ Գևորգ էլենիին թևեն պինդ բռնելով.

— Ընկերս աղեկ նայե՛, թե չէ...— ըսավ սպառնալից մատը վրան թափ տալով։

— Դուք գացե՛ք ձեր քեֆին պտտեցեք, վերջն ալ եկեք հրամաններ տվեք։ «Աղե՛կ նայե». քեզի՞ պես։

— Սա աղջիկներուն լեզուն նայե՛,— դարձավ Գևորգ Վասակին։

— Ձեռքերնին մանչ է ինկեր. թևերնուն տակը ալ ձմերուկ կսեղմի,— եղավ պատասխանը։

Բագրատ երբ նորեն արթնցավ՝ կեսօրէն մոտ էր։

Ավելի հանգիստ կզգար ու գլխու ցավը անցած, միայն ամեն շարժումե գլխու պտույտ կունենար։

Էլենին ու տիկինը շրջապատեցին անկողինը։ Քիչ մը խոսեցավ, օ-դը-քոլո-նով մաքրվեցավ, դեղ ու սնունդ առավ ու նորեն աչքերը գոցեց։

Բայց ալ չէր քնանար։

Կարգով սկսավ վերհիշել նախորդ օրը, նավակը, կամուրջեն տունդարձը, շատ ուզեց բան մը հիշե իր տենդի ատենեն՝ չհաջողեցավ։ Բայց հիշեց իր զարթնումը, Լուիզի աղվոր աչքերը, հոգածու դեմքը, անոր խոսքերը։

«Ես ինչու՞ քույր մը չունիմ,— մտածեց հանկարծ։— Ինչպե՛ս պիտի սիրեի. ո՞վ գիտե՝ ի՛նչ բախտավոր են եղբայրները, օրինակ, Լուիզը ըլլար այդ քույրը, ի՛մ քույրս։ Այո՛, Լուիզը...

Դռան սռնիին թեթև ճռինչը Բագրատին աչքերը հանկարծ բանալ տվին։ Եվ զգաց, որ սիրտը ցավելու աստիճան սեղմվեցավ, և ամբողջ արյունը դեմքը զարկավ։

Դռան մեջ Լուիզն էր, որ դեռ գլխարկը գլխուն, ձեռնոցներով, հովանոցը ձեռքը, թևին տակը մեկ-երկու նոտայի տետրակներ սեմեն ներս էր ծռած ու տղուն կնայեր։

— Հա՛, արթո՞ւն եք,— բացականչեց ու մոտ եկավ։— Հանգի՞ստ եք հիմա, լավ քնացա՞ք։ Բայց հոս ինչպես մռայլ է, վարագույրները ինչու՞ չեն բացեր, ֆո՛ւյ, անշնորհք էլենի։

Ձեռքի եղածները աթոռին վրա նետեց, վազեց բոլոր վարագույրները բացավ, բացավ և անկյունի պատուհանը։

Սենյակը պայծառացավ։

Արագ եկավ նորեն Բագրատի քովը և սկսավ արագ ու աշխուժով խոսիլ։

— Դեղերնիդ առի՞ք, բժիշկը եկա՞վ, ի՞նչ ըսավ և բան կերա՞ք, դեմքերնիդ ամենևին հիվանդի դեմքի չի նմանիր, քիչիկ մը դժգույն եք, լավ քնացա՞ք։ Ա՜, Աստված իմ, աս ո՜վ է շտկեր ձեր բարձը, այսպես ծո՜ւռ։

Բագրատ ոչինչ չէր պատասխաներ։ Սքանչացած կնայեր աղջկան մանկան մը նման և անոր ձայնը անուշ երգի մը պես կուգար իրեն։

Մանկան մը պես ալ հեզ ու հլու ձգեց, որ իր բարձերը շտկե, կանոնավորե, մազերը թեթև մը կարգի բերե և ուսերը ծածկե։ Եվ երբ այս հարդարանքը վերջացավ և սև ձեռնոցով թաթիկը ետ քաշվիլ կուզեր։

— Անչա՜փ շնորհակալ եմ,— հծծեց տղան։

Եվ դեռ բաներ մը ավելցնել կուզեր, որ սև ձեռնոցով թաթիկը եկավ թառեցավ երիտասարդի շրթունքներուն ու ձայնը արգիլեց։ Վերջը այդ նույն թաթիկին ցուցամատը բարձրացավ աղջկան շրթունքներուն։

— Սո՜ւս, խոսիլը հիմա ձեզի արգիլված է, մանավանդ այդ տեսակ պարապ խոսքերը։ Գիտե՜մ, սարսափելի արգելք, այնպես չէ՞, չխոսիլ, չվիճել, չշարժվիլ. ճիշտ ձեր վրա չափած-ձևված բաներ։ Դուք հիմա քիչ մը հանգիստ կեցեք, երթամ արագ պատառ մը բան ուտեմ ու գամ։

Ըսավ, ժպտեցավ ու դուրս նետվեցավ սենյակեն ուրախ զվարթ, և մյուս սենյակներեն դեռ կլսվեր իր ձայնը, ուր մորը բան մը կպատմեր։

Բագրատ աչքերը գոց պառկած էր անշարժ։

Իսկ իր աչքերուն դեմ կեցած էր միշտ աղջիկը շիկնած, աշխույժ, հարդե գլխարկին տակեն մազերու փունջեր դեմքին թափած, և այն սև ձեռնոցով մատները, որոնք տղու մազերը կհարդարեին, լռություն կհրամայեին, օդին մեջ կելևէջեին և տղու շրթունքներուն կթառեին։

## ԺԸ

Բագրատ յոթը օր անկողին մնաց՝ շրջապատված իր ընկերներեն ու աղջիկներեն. ընկերները իրիկունը, աղջիկները ցերեկը։

Այդ օտար ընտանիքին ցույց տված խնամքն ու վարմունքը ուղղակի հարազատ ընտանիքի պատրանքը կուտար։

Բագրատի մահճակալին քովի աթոռը երբեք պարապ չէր մնար, երբ



տղան արթուն էր։ Կա՜մ Օկյուստան էր հոն, որ կշաղակրատեր, կխընդար, կխաղար, կա՜մ էլենին էր, որ մեկ կողմեն իր կարը կկարեր և մյուս կողմեն անվերջ կխոսեր։ Ամեն փոքրիկ դեպք ամբողջ պատմություն մը կդառնար անոր համով ծիծաղովը համեմված, բայց համեմատաբար էլենին քիչ կըլլար հոն՝ գրեթե միշտ զբաղված տանու գործերով։

Շատ ավելի հաճախ Լուիզի վրա կիյնար այդ պարտավորությունը։ Եվ միշտ լարված ու անհանգիստ բան մը կար հիվանդի ու հիվանդապահի հարաբերության մեջ, երբ աթոռին Լուիզն էր նստած։

Իրողությունը հետևյալն էր։

Այն առաջին կիրակի իրիկունը, երբ Բագրատ եկեր և իրենց սենյակը վարձեր էր՝ Լուիզ գոհ էր մնացած. «Շնորհքով տղա է» մտածեր էր։ Տղաքը եկեր էին, սկսած էր աղմկոտ կյանքը, և Բագրատի դեմքն ու նկարագիրը սկսած էր օր օրի աղջկան ավելի «շնորհքով» երևիլ։ Երիտասարդի զվարթ լրջությունը, անոր միամիտ ու միշտ մաքուր կատակները, անոր ոգևորությունը, մտավոր բարձրությունը և պարզ ընկերական վերաբերումը հետզհետե ավելի կգնահատեր աղջիկը։

Երբ միասին բան մը կարդային առաձին՝ այդ առանձնութենեն հաճույք կզգար Լուիզ և անոր ֆրանսերեն ընթերցումը շատ կսիրեր։ Երբ դաշնակի վրա Բագրատի ներկայության կտոր մը կնվագեր, ինքն ալ կզգար, որ իր զարնվածքը տարբեր թափ մը կառներ։

«Շնորհքով տղային» շուտով հաջորդած էր «Ազնիվ տղա է» ձևակերպումը, և այդ «ազնիվ» բառը Լուիզի հոգիին մեջ թուխս նստած հավքին կնմաներ, որու փետուրներուն ջերմության մեջ պահված են ամեն տեսակի ընտիր հատկություններուն հավկիթները։

Հիմա, որ վեց ամիսը արդեն անցած էր, ալ դադրած էին համակրական ածականները, որու փոխարեն սակայն համակրանքը ինքը չափազանց աճած էր և հատկապես շեշտված էր տղու հիվանդանալեն ի վեր։ Հավնելուն ու համակրանքին փաթթվեր էին գութի և նվիրման բուն կանացի զգացումները։ Եվ հիմա աղջիկը պարզ կգիտակցեր, որ իր դասերեն մասնավոր անհամբերությամբ մը տուն կշտապեր՝ և շիտակ հիվանդին սենյակը։

Եվ անկողնի բարձերուն վրայեն անոնց մեջ դարձած խոսակցությունները ավելի ու ավելի անսովոր կդառնային, ավելի անձնական ու ավելի սրտակից։ Կխոսակցեին այն տեսակ բաներու մասին, որ Բագրատ ո՛չ մեկուն ըսած չէր. կպատմեր իր մանկութենեն, իր դպրոցականի տպավորություններեն, իր պատանեկան զգացումներեն, կնը-

կարագրեր իր մայրը, որ հազիվ պատանի կորսնցուցեր էր, կխոսեր իր ձգտումներուն ու ներքին հակումներուն վրա։

Աղջիկը կլսեր ականջ կտրած, ինքն ալ կհարցներ, ինքն ալ կպատմեր իր կյանքեն փոքրիկ դրվագներ։ Կամ կբանար տղու ցանկացած գիտական գրքերեն ու հոգվածներեն մեկը ու կկարդար անոր համար և՛ հաճույքով, և՛ հետաքրքրությամբ։

Իրիկուն մը մինակ էին նորեն։ Գևորգ գործով տեղ էր գացած և սկսած էր աղջամուղջը, և այդ կես-մութին մեջ կխոսեին երկուքով ալ ցած ձայնով, և երկուքն ալ գոհ էին թե՛ այդ մութեն, թե՛ այդ փսփսուքեն։

Բագրատ կխոսեր նորեն իր ընտանեկան պայմաններեն, երբ հանկարծ եզրակացուց.

— Բայց ամեն բանե ավելի քրոջ մը պակասն է, որ ինծի միշտ զգալի է եղած։ Սիրող, քնքուշ, խելացի աղջիկ մը, բնությունը զլացած է ինծի ատիկա և ատով շատ բան է զլացած։

Բագրատ այս բառերը արտասանած էր սրտանց և հուզումով։ Աղջիկը ըմբռնեց այդ բառերուն ետևի իմաստը և մութին մեջեն տղու աղոտ երևցող դեմքին հառած պահ մը լռեց ու հանկարծ ինքն իր ձայնեն վախնալով ըսավ.

— Սակայն աշխարհիս վրա քիչ մը ուրիշ կերպի քույրեր ալ կան, որոնք քրոջ մը պես ու քրոջ մը չափ կրնան սիրել։ Եթե բնությունը զլացած է ձեզի հարազատ քույր մը, այս երկրորդ տեսակը ալ չկարծեմ, որ զլանա։

— Իրավո՛ւնք ունիք, այդ կողմեն գանգատելու տեղիք չունիմ, մանավանդ այս վայրկյանիս։— Պատասխանեց Բագրատ և շատ հանգիստ ու բնական շարժումով մը երկարեց թևը, բռնեց աղջկան ձեռքը ու կամաց մը սեղմեց։

Եվ այսպես ո՛չ մեկը ձգեց և ո՛չ մյուսը ետ քաշեց իր ձեռքը։ Երկուքով մնացին իրիկվան մթնշաղին մեջ լուռ ու անշարժ, մեղմորեն իրարու ձեռք սեղմած։

— Օրիո՛րդ Լուիզ,— ընդհատեց վերջապես տղան լռությունը,— չգիտեմ ճշմարիտ՝ ինչպես հայտնեմ ձեզի իմ զգացումներս. դուք անչափ բարի եղաք դեպի ինծի և անչափ ազնիվ։

— Բայց ձեր այդ խոսքերը ինծի կվիրավորեն,— ընդհատեց աղջիկը երկտասարդին խոսքերը՝ միշտ անոր ձեռքը սեղմելով,— քիչ մը առաջ քրոջ մասին կխոսեիք։

Բագրատ ոչինչ չըսավ, հանկարծ շարժում մը ըրավ, քաշեց աղջկան բռնած ձեռքը քիչ մըն ալ վեր ու պինդ իր շրթունքներուն փակցուց։



— Ի՞նչ կընեք, ի՞նչ կընեք,— կկրկներ խեղճ աղջիկը հուզված և այլայլած փսփսուքով մը։

Ու քաշեց ձեռքը, ազատեց, ելավ ոտքի։

— Ալ երթա՛մ։

— Նեղացա՞ք, օրիո՛րդ։

— Նեղանա՞մ, ի՞նչ պատճառով, ո՛չ, ամենևին, բայց ալ երթամ,— կմկմաց աղջիկը կցկտուր ու դողդոջ։

Ու դուրս ելավ։

Բագրատ պառկած էր անշարժ, թևը պարզած անկողինեն դուրս միշտ այն դիրքով, ինչ դիրքով որ աղջիկը իր ձեռքը ազատած էր։

## ԺԹ

Բագրատ երկու շաբաթվան չափ ստիպվեցավ տունը մնալու, թեև անկողնեն ելած էր արդեն։ Մեկ-երկու անգամ ուզեց դպրոց երթալ՝ ընկերները չձգեցին։ Ինքն ալ համոզվեցավ, որ չէր կրնար, թույլ էր դեռ։

Այդ միջոցեն օգտվելով կարդաց քանի մը ամիսներե ի վեր դիզված մանկավարժական թերթերը, որոնց ամենեն աչքի իյնող հոդվածները միայն թղթատեր էր թեթևակի. ժամանակ չէր ունեցած։

Ընթերցումեն հոգնած ատենն ալ՝ տնեցիներուն հետ ժամանակ կանցներ։ Կերթար Լուիզի սենյակը ու դաշնակ նվագել կուտար։ Խոսքի կբռնվեր տիկնոջ հետ կամ կխաղար Օկյուստայի հետ։ Եվ երբեմն այն աստիճան ամեն բան մոռցած խաղին կնվիրվեր, որ բոլոր տնեցիներու զարմանքն ու ծիծաղը կշարժեր միաժամանակ։

— Տարօրինակ մարդ է,— կըսեր տիկինը։

— Ինչպե՜ս կսիրեմ քեզի,— կկրկներ Օկյուստան տղու հասակն ի վեր ցատկելով։

Որուն իբրև պատասխան տղուն գգվանքը կըլլար կամ համբույրը։

— Քրոջս շատ նման կուտաք,— կնկատեր Լուիզ ինքն ալ իր նկատողութենեն կարմրելով։

Վերջապես երկուշաբթի մըն էր, որ Բագրատ սրտի սեղմումով ոտքը դպրոցեն ներս դրավ։

— Տեսուչը...— շշուկ մը անցավ դասարանե դասարան։ Մեծ ու պզտիկ ամենքը ժպիտ մը ունեին իրենց դեմքերուն վրա։ Ամենքը շուրջը կդառնային, ավելի մեծերը շուրջը խմբված կխոսակցեին պատանեկան վստահ ու ջերմ շեշտերով։

Երբ իր սենյակը քաշվեցավ ու գրիչը վերցուց բան մը հուշագրելու՝ գրել չկրցավ։ Ձախ ձեռքով գոցեց դեմքը ու պահ մը անշարժ մնաց.

«Ի՜նչ հաճույք այսքան թարմ ու մաքուր հոգիներե սիրվիլը, անոնց ներշնչելը, անոնցմե ներշնչվիլը։ Մարդկության մատղաշ ու հասունցող մեկ խումբի մը հոգին փունջի մը պես մտքիդ թելովը կապած ձեռքդ ունենաս. ի՜նչ գորով կզգա մարդ ու ի՜նչ կորով»։

Մեկեն ցատկեց ոտքի. դասի զանգը տված էին։

— Ահագի՜ն ժամանակ կորսվեցավ,— մրմնջեց ինքն իրեն։ Քանի մը նկար, քարտեզ մը ու գիրք մը թևին տակ զարկած՝ դասարան վազեց, ուր տեսչի դասերուն կարոտած վառվռուն աչքեր անհամբեր կըսպասեին։

Երբ զանգը դասի վերջը ազդարարեց՝ Բագրատ հիշեց, որ դասարանն է։ Խոսքը կտրեց, բարևեց ու դուրս ելավ։ Ամբողջ դասարանը պահ մը լուռ էր բոլորովին։ Ոմանք նույնիսկ բարևի համար ոտքի ելլելու մոռցան։ Բագրատ ինքն ալ ինչ պատահածը չէր հասկնար, միայն կըզգար, որ երբեք այդ աստիճանի սրտանց խոսած չէր, և մեծ հաճույք մը կծավալեր ջիղերուն մեջ։

«Այսօր գործ մը տեսա». մտածեց ինքնավստահ և ուսուցիչներուն սենյակը մտավ։ Հոն տաք խոսք էր բացված վարչական խնդրի մը վրա։ Ոտքով-գլխով վեճին մեջ նետվեցավ։ Եվ երբ քիչ մը վերջը ուսուցիչները ցրվեցան իրենց դասարանները՝ Բագրատ ուժասպառ ակնթարթ մը շունչ առնելու համար նստեցավ։

— Տե՛ս, նորեն բոլոր արյունդ գլուխդ է զարկեր,— ըսավ Գևորգ հանդիմանելով,— քիչ մը ուժերդ խնայե՛։

— Ժամանակ չկա,— պատասխանեց Բագրատ կարճ ու սանդուղներեն վար վազեց։

Եթե ամբողջ օրը Բագրատ ոգևորություն էր, ամբողջ իրիկունն ալ զայրույթի մարմնացումը եղավ։

Տղոց արձակման ատենն էր, որ թաղի եպիսկոպոսին քարտուղարը եկավ ու քանի մը չնչին պատճառներ մեջ բերելով՝ հայտնեց թաղական խորհուրդի որոշումը, որով կիրակնօրյա վարժարանը այլևս դադրեցնել կպատվիրեր։

— Ինչպե՞ս, ինչու՞,— պոռաց Բագրատ ու շունչը շիտակ եպիսկոպոսի բնակարանը առավ։

Եպիսկոպոսը մեծ քաղաքավարությամբ ընդունեց հյուրը, սկսավ խոսակցիլ հետը դպրոցի, օդի, ազգային խնդիրներու և եկեղեցիին մեջ կանանց հանած աղմուկի մասին, ուրկե շատ կդժգոհեր։



Բագրատ այդ բոլորեն համ չառնելով՝ խոսքը իրեն հետաքրքրող հարցին դարձուց։

Հոգևորականը երկար հառաջաբանով մը կիրակնօրյա վարժարանի մը պես ձեռնարկի մը ազնվությունը ապացուցանելեն և ինքը անձնապես այդ գործին հանդեպ ունեցած մեծ համակրանքը հայտնելեն ետքը ավելցուց, թե այդ դասերուն շարունակությունը առայժմ ընդհատելը ավելի հարմար էր դատած թաղական մեծարգո ժողովը ինչ-ինչ նկատումներ աչքի առաջ ունենալով։ Իհարկե, ժամանակավոր բան մըն էր ասիկա։

Բագրատ իզուր ջանաց մեջ բերված չնչին պատճառները ջրել, իզուր եպիսկոպոսը համոզել կուզեր, որ միջամտե ու թույլ չտա այդպես անմեղ գործի մը խանգարումը։

Սրբազանը երիտասարդի բոլոր ըսածները կընդուներ, մեջըմեջ շողոքորթիչ բառ մը կթողներ տեսչի հասցեին, բայց և այնպես հաստատ կպնդեր, թե խնդիրը իրմեն անկախ էր, և պետք է ընդհատվեին կիրակնօրյա դասերը։

Բագրատ ոլորապտույտ ճամփաներու անվարժ՝ սկսավ տաքնալ և ավելցուց.

— Սրբազա՛ն, ինծի կմնա միայն ենթադրել, որ այս ամենուն տակը պարզապես քմահաճույք մը կա, իսկ այս տեսակ գործերու մեջ անհատներու քմահաճույքը անարգ ու հանցավոր բան մըն է. հասարակական գործը քմահաճույք չի տանիր։

Սրբազանը երկար գեղեցիկ մորուքը շոյեց և շատ խորհրդավոր շեշտով մը ըսավ.

— Կան բաներ, զավա՛կս, որոնց մասին պարզորեն խոսիլը անհարմար է, վնասակար։ Ինչ կվերաբերի քմահաճույքին՝ այդ կողմեն ապահով եղեք։ Ո՞վ կհամարձակի իր անհատական քմահաճույքովը այս աստիճանի բարի ու անմեղ գործ մը խանգարելու, և միթե ես կթույլատրեի՞։

Բագրատ ելավ ոտքի։

— Աղե՛կ, սրբազա՛ն հայր, մնաք բարո՛վ, բայց այս հանելուկը ես պիտի լուծեմ։

— Ի՞նչ հանելուկ, որդյա՛կ, երթա՛ք բարով։ Աստված օրհնե։

Բայց հազիվ երիտասարդը ոտքը սեմեն դուրս էր հանած, որ եպիսկոպոսի շրթունքներեն ժպիտը անհայտացավ ու բարկությամբ շարունակեց.

— Սա լակոտի լեզուն նայե՛. նոր հավեր են ելեր՝ երկաթե ձվեր կածեն։ Ես քու ոտքդ հոսկե կկտրեմ։ Ապերախտնե՞ր, եկեղեցիին ըս-

տակները կուտեն, եկեղեցականներու երեսեն քանի մը ոսկի կառնեն ամսական և դեռ... ապերախտնե՜ր. «Էշ ծանեան զմսուր իւր, և Իսրայէլ զտէր իւր ո՛չ ծանեաւ». «Ու ապերախտութիւն տանն Իսրայէլի կերաւ...»։

Հոս իր հատվածը ընդհատեց, երկու անգամ ամուր զարկավ իր ատչևի սեղանին վրա դրված զանգը և բարկությամբ ներս մտնող ծառայի երեսին պոռաց.

— Ինծի սուրճ մըն ալ։

## Ի

Շաբաթները իրար ետևե կգլտորեին։

Եվ դպրոցին մեջ ամեն բան ըստ սովորականին առաջ կերթար կարծես, բայց ներքուստ փոխված բան մը կար, որ արագ կերպով կաճեր ու զգալի կդառնար ծածուկ հիվանդության մը պես։

Բագրատի բացառիկ դիրքեն ու անոր ինքն իր գլխուն վարմունքեն արդեն իսկ դժգոհ թաղականները եպիսկոպոսի հետզհետե շեշտվող ու ձև առնող ակնարկություններու ազդեցության տակ բոլորովին սկսան հակառակ խոսիլ Բագրատի դեմ։

Եպիսկոպոսին սենյակը, թաղային խորհրդարանին մեջ և այցելություններու միջոցին թաղի ջոջերուն տուները հիմա շատ կխոսվեր դըպրոցի անկարգապահության, տղոց երես առնելուն, եկեղեցի քիչ հաճախելուն, ուսուցիչներու ամսականներուն շատության, դպրոցին մեջ կրոնական ուսումներու անկման, ջերմեռանդության, հնազանդության և խոնարհամտության պակսելուն վրա։

Թաղականներեն մեկը, որ պատահմամբ դպրոց էր մտեր ու տեսեր էր, թե ինչպես տղաքը կվազվզեին ազատ ու համարձակ առանց մասնավոր ուշ դարձնելու ուսուցիչներու ներկայությանը և մանավանդ իրեն՝ թաղականին ներկայությանը, գացեր էր և ընկերներուն այսպես էր եզրակացուցած.

— Չէ՛, մեր դպրոցը ավրվեցավ։ Ալ ո՛չ մեծի հարգանք է մնացեր, ո՛չ պզտիկի, ո՛չ ալ պարկեշտություն։ Տղաքը կանտերեսնան ու կանաստվածանան այդ շենքին մեջ։ Ազգը մեզմե հաշիվ պիտի պահանջե վերջը։ Այսպես չըլլար, մենք ենք պատասխանատուն։

Գալով հոգաբարձուներուն, որոնք սկիզբը մեծ ոգևորությամբ կպեր էին գործին, իսկապես դպրոցը նորել ու բարձրացնել էին ցանկացած և Բագրատին ամեն կերպով հենարան էին դարձած՝ իրենք ալ սկսեր էին քիչ-քիչ ենթարկվիլ քննադատության ու մեղադրանքի։ Եվ թույլեր



էին. մեկ մասը թաղականներու կարծիքին ըլլալ կխաղար և եղած դըժգոհությունները իր վրայեն նետել կջանար, մյուս մասն ալ, որ ավելի գործեն հասկցող մարդիկ էին, տեսնելով հովերուն փոխվիլը և մեծամասնության բռնած նոր ուղին, թափ էին տվեր ձեռքերնին ու գացեր էին իրենց սեփական գործերուն գանգատելով, թե.

— Չարժե՛ր այս ժողովուրդին համար աշխատիլը. պարապ բան է, գործ առաջ չերթար։

Դպրոցին սեմին վրա խաղցված այս ողբերգական կատակերգությունը չուշացավ իր ազդեցությունը դպրոցի մեջն ալ ցույց տալու։

Ուսուցիչներեն ոմանք, հիներեն, որոնք վարժված էին իրենց դանդաղ, հնադարյան, միօրինակ աշխատանքին, շատ կնեղվեին դպրոցի արդի խիստ կարգուկանոնեն և լարված ու տեսչի կողմեն միշտ հսկվող և ստուգվող աշխատութենեն, ինչպես և նյութի ու ավանդման նոր պահանջներեն։ Բայց հացի խնդիր էր, կլռեին ու կհարմարվեին, քանի որ տեսչին դիրքը ուժեղ կենթադրեին։

Եվ հիմա անոնց քիթին շատ շուտով հասավ բարեբար անհամերաշխության շունչը։ Թեև մանր, բայց այն տեսակ դեպքեր պատահեցան դպրոցին մեջ, որ Բագրատ անսովոր անհանգստություն մը զգաց։

Մինչև որ օր մը եկավ Սարգիս ու այդ ձեռքի տակե խաղցված բոլոր աղտոտությունները Բագրատին առջևը մերկացուց։ Երիտասարդը իր դեմ լարվող այդ գծուծ ու նենգ դարանները երբ լսեց, իր առաջին զգացումը զզվանք եղավ և առաջին մտածումը՝ թքնել վրանին ու հեռանալ։ Բայց իսկույն զսպեց իր նողկանքը ավելի հանգիստ մտածելով.

«Անոնք իրենց եղանակները ունին գործ տեսնելու և իրենց ըմբռնումները։ Թքնելով բան չի փոխվիր, պետք է մաքառիլ, դիմադրել, ուժ կազմել ու հարկադրել»։

Իսկ Սարգիս կկրկներ, կարծես ընկերը բարկացնելու համար.

— Քեզի կըսեմ գնա՛ տուներնին, խոսե՛, կատակե՛ կանանց հետ, սրճարանը նստե՛ հետերնին, օղի խմե՛ ու ազգային գործերեն խոսե, մեջեմեջ ալ շողոքորթե՛ հարմար տեղը եկած ատեն, քիչիկ մը փեսացու խաղա՛, սանկ քիչիկ մը, անորոշ հույսեր մը տալու չափ, և պիտի տեսնես, որ գործերդ ոտքեր կառնեն ու կքալեն։ Անոնք ալ մարդ են, դրամի տեր և թաղական, եթե հաջողիլ կուզես՝ պետք է շոյես անոնց թույլ կողմերը։

— Այդ աղվոր խրատներդ պահե՛ քեզի։ Կրնա օր մը պետքի գալ։ Եվ քանի որ այդպես անոնց բոլոր բաները գիտես՝ բացատրե՛ նայիմ՝ ինչու՞ արգիլեցին կիրակնօրյա դասերը։

— Տո՛, միամի՛տ, առնե պարզ ի՞նչ կա՝ Նախա՛նձ։ Եպիսկոպոսը ինքը անպետքին մեկն է, իսկ Թաղին մեջ սկսեր էին խոսիլ քու եռանդիդ ու անձնվիրությանը վրա։ Ահա՛ մեկ հրամանով մը ամեն ինչ փոխվեց։ Հիմա արդեն Թաղին մեջ ամենքը գիտեն, որ քու ըրածդ ժողովուրդի աչքին փոշի փչելու համար էր միայն, և երբ տեսար, որ այս Թաղին ժողովուրդը քու կարծածիդ պես հիմար չէ ու չի խաբվիր, ձգեցի՛ր այդ պարապ ու շինծու դասերը ու հեռացար։

— Բայց չէ՞ որ իրենք դադրեցուցին։

— Դե՛, գնա՛ անոնց տուները մեկիկ-մեկիկ պտտե՛ ու հասկցո՛ւր։ Տուները հերիք չէ, սրճարաններն ալ, շուկան ալ, ով գիտե՝ կարելի է խոսքիդ հավատացող մը գտնես։

Եվ Սարգիս սկսավ իր ամբողջ մարմնովը առատ-առատ ու համով խնդալ։

## ԻԱ

Եվ այս անախորժ պայմաններուն մեջ Բագրատի հոգիին թարմություն ու զվարթություն տվողը Լուիզն էր։ «Քո՛ւյրս» կկրկներ հաճախ ինքնիրեն։

Անոնց մտերմությունը ո՛չ թե օրեօր, այլ ժամեժամ կաճեր, թեև արտաքուստ ոչ մեկ փոփոխություն մտած չէր իրենց հարաբերության մեջ։ Տղու հիվանդութենեն ետքը այդ ընտանիքի ու երիտասարդներու մեջ եղած կապն ու կյանքը այն աստիճան սերտացած էր, որ Բագրատի ու Լուիզի հորդող մտերմությունը այնքան ալ աչքի չէր զարներ։

Մայիսի ու Հունիսի աղվոր օրերն էին։

Տղաքն ու աղջիկները միասին հաճախ պտույտի կելլեին իրիկուններ։ Ու կերթային բավական հեռուները Շիշլիի վերերը, դաշտերը Կվազեին, կխաղային, կատակ ու ծիծաղ և հոգնաբեկ կիյնային անկողին։

Երբեմն կիջնեին ծովեզրը, երբեմն ալ նավակ կնստեին լուսին գիշերները։ Բագրատ ու Գևորգ կթիավարեին, կերգեին աղջիկները։ Երգ ու հնչուն ծիծաղ, խոսքն ու թիերուն ճողփյունը կհյուսվեր իրար, և ճերմկտած նավավարը իր նավակին քիթը նստած ինքն ալ կխնդար «ճահիլներուն» հետ։

Մեկ-երկու անգամ ավելի հեռավոր պտույտներու ալ գացին շոգենավով կիրակի օրերը, «կիրակնօրյա գեղչված դասերուն վրեժը առնելու», ինչպես կըսեր Գևորգ։

Իսկ Վարդավառի կիրակին մութուն, առաջին շոգենավով մեկնեցան Մեծ կղզին և անմոռանալի օր մը անցուցին. վա՛րը՝ ծովեզրյա ճաշարանին մեջ, վե՛րը՝ կղզիին գագաթը և շո՛ւրջը՝ ծոցերուն ու անտառակներուն մեջ։

Գինիեն ազդված, բնութենեն հրահրված, տրամադրությունները շատ բարձրացան. զվարթությունը խենթ ոգևորության մը դիմակը հագավ։ Անտառին մեջ պահվտուք խաղացին, բայց շուտով իրենց թաքստոցներուն մեջ անհամբեր դուրս թափեցան մեծ ճամփուն վրա ահագին աղմուկով։ Էշեր վարձեցին, փրինկիպոյի համբավավոր ճերմակ էշերը, և փառավոր իշարշավ մը կատարեցին, հանդիպող զբոսաշրջիկներուն ծիծաղ և Օկյուստային հրճվանք պատճառելով։

Բագրատ և Լուիզ, թեև մյուսներեն նկատելի չըլլալու համար միշտ զգույշ, բայց մեծ դժվարությամբ ծածկելու կհաջողեին իրենց հոգիին խայտանքը և այն անսանձելի ձգողությունը, որ այդ երկու էակները դեպի իրար կքաշեր։ Ամբողջ օրը իրարու շուրջ կդառնային, իրարու կից ըլլային թե իրարմե հեռու։ Հոգիները միշտ իրարու հետ էին, իրար կհետևեին ու իրար կզգային։ Իրարմով կապրեին։

Վերադարձան վերջին շոգենավով, արդեն գիշերով։ Երբ շոգենավեն ոտքերնին կամուրջ դրին, ամենքն ալ հարփած էին օրվան տպավորութենեն, բաց օդեն և ծովուն շունչեն, իսկ այն երկուքը երջանիկ էին։

Բագրատ ամբողջ գիշերը քնանալ չկրցավ։ Կվերհիշեր իր ու Լուիզի մեջ անցած ամեն բան, իրենց մեջ դարձած ամեն խոսք ու ակնարկություն, իրենց աչքերուն անվերջ իրար որոնումը։ Իզուր քանի մը անգամ փորձեց ընդհատել, մոռնալ։ Անկարելի էր. վայրկյան մը ետքը նորեն հոն կդառնային մտքերը։

Եվ ճնշող կարոտ մը կզգար, գրկելու, գգվելու, ու համբուրելու այս անքողարկելի պահանջ մը։ Գիտեր, որ այս ամենը լավ չէր հաշտվեր «քույր» ըմբռնումին և որ իր զգացումները բոլորովին դուրս էին եղեր «քրոջ» մը գծած սահմաններեն։ Բայց ի՞նչ կրնար ընել. իրողության դեմ աչքերը գոցելը ի՞նչ իմաստ ուներ։

«Ուրեմն դո՛ւն ալ աղջկան մը հետ մոտիկ ըլլալ չես կրնար, միայն իբրև ընկեր, իբրև մտերիմ». դիմեց ինքն իր հոգիին քանի մը անգամ կես մը մեղադրանքով ու հանդիմանությամբ, կես մը ինքզինքը հեգնելով և իբրև անխուսափելի եզրակացություն, բայց ամեն պարագայի ո՛չ անախորժ։

Լույսի մոտ էր, որ թմրեցավ և արթնցավ շատ ուշ։

Մեռելոցի երկուշաբթի էր, և դպրոցի գոց ըլլալեն օգտվելով՝ Գևորգ կանուխեն ելեր էր ու անցեր Ստամպոլի կողմը՝ խանները։

Բագրատ ծուլությամբ ելավ, սեղանին վրա պառկած կաթով սուրճը խմեց և սկսավ երկար-բարակ և անսովոր խնամքով սանրվիլ, հարդարվիլ ու հագվիլ։

Ներս երթալ կուզեր ընդհանուր սրահը, բայց կսպասեր, որ նախ Լուիզի ձայնը լսե ու գիտնա, որ ան ելած է իր սենյակեն։

Պահ մը նստեցավ իր գրասեղանին առջևը, անորոշ ու անհանգիստ շարժումով իր թղթերը կխառներ, երբ լսեց ու ճանչցավ Լուիզի դռան բացվիլը, անոր մեղմաձայն խոսվածքը մորը հետ և թեթև քալվածքը։

Քայլերը սկսան մոտենալ. տղան նախ կարծեց դեպի բնակարանին դուռը և շատ կոտրվեցավ, բայց իսկույն սրտի սեղմումով զգաց, որ քայլերը մոտեցան իր դռան։

Մեղմորեն դուռը բախեցին։

— Մտե՛ք։

Դուռը բացվեցավ, և երևցավ Լուիզ բոլորովին հագված դուրսի հագուստով, հարդե լայնեզր գլխարկը գլխուն, մեկնելու պատրաստ։ Սեմին վրայեն արագ, քննական ակնարկ մը պտտցուց սենյակին մեջ և քայլ մը ըրավ դեպի տղան, որ տեղեն չերերաց, մնաց իր նստած տեղը, միայն կարոտի ժպիտով մը իր երկու ձեռքերը երկարեց աղջկան։

— Ուզեցի բարի լույս ըսեմ ձեզի,— ըսավ Լուիզ խնդալով։

Բագրատ երկու ձեռքով սեղմեց աղջկան պարզած՝ ձեռքը և պարզապես խոստովանեցավ.

— Իսկ ես ամբողջ գիշերը չեմ քնացած, ամբողջ գիշերը դուն էիր աչքերուս դեմը և հոգիիս մեջ։

Լուիզ քնքշանքով քիչ մըն ալ մոտեցավ, ազատ ձախ ձեռքը դրավ տղու ուսին։ Եվ աղջիկը վերեն իր լայն գլխարկին տակեն, տղան վարեն իր նստած դիրքեն հարբած աչքերով իրար նայեցան վայրկյան մը։

Եվ տղան տեսավ, որ աղջկան գլուխը կամաց-կամաց վար խոնարհիլ սկսավ։ Նախ անոր խոպոպիկները զգաց, որ գլխարկին տակեն ինկան իր ճակտին, տեսավ աղջկան աչքերուն գոցվիլը, ետքը տաք շունչ մը վազեց ընչացքներուն մեջեն ու թավիշի մեղմ շոյանք մը քսվեցավ իր շրթունքին։

Երբ Բագրատ թևերը բարձրացուց, որ գրկե, աղջիկը արագ ետ քաշվեցավ, հեռացավ քայլ մը և իր սև ձեռնոցավոր թաթիկը դնելով շրթունքին անշարժություն պատվիրեց։

— Դաս ունիմ,— ըսավ հուզումեն դողացող ցած ձայնով մը ու խելքե հանող ժպիտով մը։

Քայլ մըն ալ ըրավ ետ ու փախավ սենյակեն։

Եվ բնակարանին դուռն էր, որ բացվեցավ ու գոցվեցավ արագ։



Բագրատ անշարժ նստած էր միշտ, ինչպես որ այն հմայիչ սև թաթիկը պատվիրած էր և կգիտակցեր, որ ապրիլ ըսվածը բախտավոր բան մըն է աշխարհիս երեսին։

## ԻԲ

Օրվան դասերը ավարտած էին, ու տղաքը՝ արձակված։

Բագրատ մինակ էր իր դպրոցին մեջ ու սենյակը քաշված օրվան ցուցակները, հաշիվները, նկատողությունները աչքե կանցներ։

Քանի մը տող ալ ինքը ավելցուց հոս ու հոն, մեկ-երկու թուղթ ստորագրեց։ Հանեց ծոցեն փոքրիկ տետրակ մը՝ քանի մը տող ալ հոն գրեց։ Վերջը ժողվեց բոլոր տետրակներն ու թուղթները լեցուց գզրոցը և կղպեց։

Երբ ոտքի ելավ և արդեն դուրս ելլել կուզեր, որ դուռը զարկին։ Դպրոցին դռնապանն էր, որ ետ քաշվելով ճամփա տվավ Վասակին։

— Խեր ըլլա. դուն ալ մեր դպրո՞ցը։ Աս ի՞նչ բացառիկ պատիվ մըն է մեզի։ Բայց ինչու՞ այդպես լուրջ։

— Լո՞ւրջ ամենևին։ Ընդհակառակը, եկեր եմ վրադ խնդալու համար։ Դուն մտածումներդ և զգացումներդ կեղծել չգիտես, ատոր համար ալ սրտանց կարելի է խնդալ քու վրադ։

Այս խոսքերը սակայն այնքան լուրջ դեմքով ու տխուր ձայնով մըն էին ըսված, որ Բագրատ տեսակ մը վախ զգաց։ Մոտեցավ անոր և մտերմորեն հարցուց.

— Ի՞նչ ունիս, Վասա՛կ, քեզի բան մը պատահեր է։

— Ինծի պես մարդուն բան չի պատահիր,— պատասխանեց ընկերը նմանապես շատ դառն շեշտով մը և իսկույն շարունակեց,— լսե՛, դուն աշխարհը կսիրես, չէ՞։ Հիմա ես քեզի կըսեմ, որ աշխարհ ըսածդ անխորհուրդ ու ապուշ բան մըն է և անհրապույր։ Նույնիսկ ամենեն ավելի ցանկացված բաներն անգամ ընդհանուր տաղտուկը ավելի շեշտելու կծառայեն։ Եվ մեր ամենուս կյանքը, և կյանքը ինքը ընդհանրապես աննպատակ և անպիտան ստեղծագործություն մըն է, որ բնությունը իր ձանձրույթի վայրկյանին է շաղվեր։ Ուրախություն կըսենք, երբ անիմաստությունը ինքզինքը կմոռնա։ Երջանկություն կըսենք, երբ հոգին բոլորովին կապուշնա։ Իսկ հոգի ըսածս ալ միլիոնավոր բջիջներու զանգված մըն է զարմանալի, որ միայն մեկ պաշտոն ունի. զգա՞լ, որ այս բոլորը, որ կա, բացարձակ պարապություն մըն է։ Լսեցի՞ր։ Դե՞,

ես քու ճառիդ նյութը տվի, հիմա դուն ըսածներս հերքել սկսե՛, ու ես ծիծաղիմ, չէ՞ որ լավատես մըն եմ։

Բագրատ ձեռքերը ետև կապած և գլուխը թեթև մը հակած՝ քանի մը անգամ գնաց ու եկավ սենյակին երկայնքովը, ընկերոջը առջևեն և բոլորովին լուռ։ Վերջը եկավ, կանգ առավ շիտակ Վասակի դիմացը և ծանր-ծանր ըսավ.

— Հերքելու ոչինչ չունիմ, բոլոր ըսածներդ կես առ կես զուտ ճըշմարտություն է։

— Ի՞նչ, ուրեմն դուն ալ այդ կարծիքին ես և այդպես հանդա՞րտ,— պոռաց Վասակ ընդոստ շարժումով մը ոտքի ցատկելով։

— Կեցի՛ր, նախ իրար հասկնանք։ Դուն քու եզրակացություններդ հանելու ատեն բնականաբար քու սեփական կյանքդ ունիս աչքի առաջ և հանած եզրակացություններդ շիտակ են։ Միայն թե քու կյանքդ ինքը ապրելու սխալ ձև մըն է։ Ինչի՞ է նման կյանքը, երբ որոշ դեր մը չես խաղար, երբ կանոնավոր ու պիտանի աշխատանք մը չունիս օրը օրին։

— Այո՛, բացիր խնդալուն ծայրը։ Ուրեմն կհրամայես, որ աշխատանք մը ունենամ։ Բարի՛, օրինակ, ի՞նչ աշխատանք կհրամայես, որ ունենամ։ Կարծեմ ըսած եմ քեզի, որ լեզուներ սորվելու դյուրություն եմ ունեցած, և եղած է ժամանակ, որ մտածեր եմ լեզվագետ դառնամ։ Ի՞նչ կըսես, համաձա՞յն ես։

— Քանի որ կըսես՝ հակում ու դյուրություն ունիս, փնտրե՛ քեզի աշխատանք մը դիցուք այդ ճամփով։

— Տո, խելքի տոպրա՛կ, ես հիմա նստիմ զանազան լեզուներու ուսումնասիրության վրա, երբ գիտեմ, որ շատ չանցած այդ բոլոր տըխմար լեզուները ջնջվին պիտի՝ ընդհանուր համամարդկային լեզվի մը տեղի տալու համար։ Ատեն մըն ալ ականջիս աղվոր կհնչեր իրավաբանությունը։ Իրավաբա՞ն դառնայի, փա՜ռք Աստծու, քու բարի աչքերովդ կտեսնես, որ իրավունք ըսվածը հնարված է պարզապես բոլոր ապօրինությունները իր փտական փեշերուն տակը պարտկելու։ Ատ ի՞նչ օրենք է և ի՞նչ արդարություն, որ մեկուն վրա կվավերացնե հազարներով քառակուսի քիլոմեթր հողեր, իսկ մյուսին կաղամբ մը տնկելու տեղ ու իրավունք չի տար։ Հապա անոր փեշերուն փաթթված փաստաբանությունը, որ միևնույն ժամանակ այո՛-ն ալ կապացուցանե, ո՛չ-ն ալ, նայելով, թե ո՞ր կողմեն դրամը ծանր կկշռե։ Կուզե՞ս փաստաբան դառնամ։

Բագրատ սկսավ սրտանց խնդալ. Վասակ թափ առած կշարունակեր։

— Կամ գուցե խորհուրդ կուտաս գեղարվեստներով զբաղվիմ ու



նստիմ քու պատկերդ քաշեմ կամ սիրային տափակություններ երգեմ, կամ քեզի պես վարժապետ դառնամ։ Արհեստավո՞ր դառնամ. հետըզհետե կատարելագործվող մեքենաները այլևս մեր ձեռքերուն ու ոտքերուն պետք չունին, թե՞ վաճառականություն ընեմ. խաբեմ-խաբեսի այդ նշանավոր կազմակերպությունը, որուն հոտն անգամ չէ՛ մնալու շուտով։ Ուրիշ ի՞նչ մնաց, ըսե՛, նայիմ։

— Վարդապետ դարձի՛ր։ Չէ՛, իրավ կըսեմ, որովհետև սքանչելի քարոզ տալ կրնաս և սքանչելի կերպով ալ ճիշտն ու սխալը իրար խառնել գիտես կատարյալ վարպետությամբ։

— Ինչո՞ւ չէ, խեղճ ժողովուրդիս համոզելու համար, որ իր մեղքերեն ու հանցանքներեն մաքրվելու շիտակ ճամփան սուրբերուն, ճըգնավորներուն և խոտաճարակներուն կաշառք տալն է, որ աստծու առաջ բարեխոսեն. մանավանդ խոտաճարակներուն սուրբ բարեխոսությունը աննման է։

Բագրատ աթոռ մը վերցուց, տարավ ընկերոջը քով, ծանր շարժումով մը նստեցավ և ըսավ մտածելով.

— Մեր հասարակության մեծագույն մասը փաթթված է անցյալին, զատվիլ չի կրնար հինեն։ Դուն ալ ճիշտ հակառակը՝ հոգով-մարմընով նետվեր ես ապագային գիրկը։ Եվ այդ ապագան քու աչքիդ բնական է, առողջ, արդար և արդի ողորմելի անհեթեթություններեն զերծ, այնպես որ ո՛չ նվազ իդեալիստ մըն ես և դուն քու այդ համոզումներովդ։ Սակայն այդ ապագայով այնքան տարվեր ես, որ ներկան, մեր խեղճ ներկան, այդ միշտ արհամարհվող ներկան դուն ալ մոռցեր ես կամ ոտքի տակ կուտաս։ Քու ըսածներեդ շատ բան, գեթ մասով մը իմ երազներս ալ են։ Բայց այդ երազները չեն իրականանար, եթե մենք հիմակվան համար չաշխատինք, միա՛յն հիմակվան համար մեր ներկա պայմաններուն մեջ մեր ներկա միջոցներով։ Այդ քու անրջած ապագա օրերուն մարդիկ ալ ուրիշ տեսակի մարդիկ պիտի ըլլան։ Իսկ մենք, որ այս տեսակի մարդիկ ենք, դիցուք և շատ թերի, մենք ալ մեր այս թերի կյանքի մասին խորհինք, մեզի համար երբ հոգանք՝ արդեն ինքնին ապագայի համար աշխատած կըլլանք։ Կուզե՞ս եզրակացությունս։ Այդ բոլոր սիրուն փիլիսոփայություններդ գանգիդ մեկ անկյունը կավլես, մեկդի կդնես ինքդ պարապ նստած՝ ուրիշներու ըրածն ու ուզածը քըննադատելու տկարությունը, և կենդանի ու կարողություններուդ հարմարվող գործի մը ձեռք կզարնես։ Գործ մը, որուն շուրջը դառնան քու մտածումներդ, ընթերցումդ, քննադատությունդ, որ կյանքդ առանցք ունենա։ Քեզի միայն կեդրոնացումը կփրկե։

Տիրեց երկար լռություն մը։ Բագրատ պատրաստված էր ու կապա-

ներ նոր հեգնության մը պոռթկումին Վասակի կողմեն, ըստ սովորության, բայց մեծ եղավ իր զարմանքը, երբ ընկերը վերջապես խզեց լռությունը բոլորովին ուրիշ տեսակի խոսվածքով մը, խոստովանանքի եղանակով և արտասովոր կերպով լուրջ.

— Մինչև այսօր ես եմ քու վրադ խնդացեր, այսօր սակայն եկեր եմ քեզի, որ դուն իմ վրաս խնդաս: Արդարությունը այդպես կպահանջե, որովհետև ճշմարտությունն այն է, որ որդեն ըսիր: Այո՛, ես ալ, որ վրադ կխնդամ, քեզմե մեծ տարբերություն մը չունիմ, ես իմ վրաս կխնդամ: Ես քու կարծածիդ պես ո՛չ անզգա եմ, ո՛չ նյութապաշտ, ո՛չ ալ եսամոլ: Դեպքեր կան, որ իմ մեջս ալ զգացումները տիրելու կելլեն, և ժամեր կան, որ ես ալ պատրաստ եմ ամեն անձնազոհության:

— Կկարծես ատիկա ընկերներդ չգիտե՞ն:

— Ամեն պարագայի հազիվ թե գիտնաս, որ ես երաժշտությունը ֆանատիկ կսիրեմ, ջիղերուս կազմն է այդպես, ի՞նչ կրնամ ընել: Կամչնամ քեզի խոստովանելու, որ նույնիսկ սիրո իդեալական պատկերի պես բան մըն ալ ունիմ գլխուս մեկ գաղտնի անկյունը: Ես ալ երբեմն կըղձամ անմեղ աղջկան մը շիկնոտ նայվածքին և հոգեկան նվիրումին: Վերջապես ամենքս ալ «ներկայի» զավակ ենք և մեր հասակեն վեր թռչիլ չենք կրնար: Այս բոլորեն ետքը խոստովանիմ քեզի, որ աշխատանքի ու կեդրոնացման մասին ինչ որ բարեհաճեցար ըսելու՝ ըստ էության իմ ալ համոզումս նույնն է: Մանավանդ վերջերս. չգիտեմ, ձեր [illegible] օրինա՞կը ինծի վարակեց, թե՞ հորս վերջին նամակներն են վրաս շատ ազդած: Հայրս կգրե, որ ալ ծերացեր է և օգնականի պետք ունի: Մանավանդ գործն ալ մեծցուցեր է, Ռուսաստանեն 18 հատ ընտիր կովեր է բերել տվեր: «Ափսո՛ս, կգրե, որ քովս վստահելի ու մասնագետ մեկը չունիմ, թե չէ շատ ընդարձակ և հրաշալի գործ կարելի է ստեղծել, կըսե»: Բագրա՛տ, ի՞նչ խորհուրդ կուտաս, մտածեցի երթամ Ֆրանսա 5—6 ամիս, տարի մը, օրինակելի ագարակներու մեջ գործնականապես աշխատիմ, տեսականորեն ալ կհետևիմ և գործին մասնագիտորեն ծանոթացած երթամ հորս քովը: Անասունները ես միշտ սիրեր եմ, և ամեն պարագայի անոնց ընկերակցությունը շատ ավելի օգտակար է ու հետաքրքիր, քան մեր փտած մարդկային հասարակությունը: Քիմիան ալ շատ կսիրեմ գիտություններուն մեջ: Կըլլամ ազատ, ինքս իմ գլխուս և բնության մեջ: Ծնողքիս ալ օգնություն կըլլամ, քիչ մըն ալ կարծես մխիթարություն,— ավելցուց տարօրինակ քնքուշ ժպիտով մը:

— Եվ քու ժողովուրդիդ ալ մեծ բարիք կրնաս ընել, օրինակ դառնալ և շատ օգնել,— վրա բերավ Բագրատ:



— Կհուսամ,— պատասխանեց Վասակ համեստորեն:

— Հորդ արդեն բան մը գրա՞ծ ես:

— Նախ գրել կուզեմ Ֆրանսա մեկ-երկու տեղ, հարկ եղած տեղեկություններն ու մանրամասնությունները ստանամ, ավելի կտրուկ և որոշ բան մը գրել կարողանալու համար հորս և ո՛չ թե ընդհանուր ցանկության:

— Այսօր դուն ինծի համար բոլորովին ուրիշ մարդ մըն ես, Վասա՛կ, և չգիտեմ՝ ինչպե՛ս արտահայտեմ քեզի իմ խոր ուրախությունս: Քալե, երթանք Գևորգը առնենք և աղվոր գարեջուր մը խմենք քու այդ նոր ու աղվոր ծրագրիդ հաջողության կենացը:

Եվ երկու ընկերները ավլվող դպրոցի թանձր փոշիներուն մեջեն սկսան վար իջնել սանդուղներեն:

## ԻԳ

Եվ այդ օրեն նոր ու սերտ կապ մը ինկավ Վասակի ու «Վարդանանց» միջև, ինչպես ըսեր էր անգամ մը վանցի ուսուցիչը կատակով, և բառը քաղաքացիություն էր ստացեր դուրսեցիներու սենյակին մեջ:

Վասակ հաջորդ քանի մը շաբաթները շատ հաճախ տղոց սենյակը կըլլար իրիկունները: Սարգիս ալ ավելի շուտ-շուտ կուգար: Գևորգ ու Բագրատ ալ իրիկունները տունը կմնային, և բոլորը միասին կընթրեին ուսանողավարի, որուն կմասնակցեին ընդհանրապես նաև աղջիկները: Կարծես բոլորը միասին խոսք մեկ էին ըրեր: Պարզ էր, որ գոհ էին իրարմե և կփնտրեին իրար:

Վասակ երազկոտ էր տեսակ մը. կուգար, բազկաթոռ մը կգրավեր և փիլիսոփայորեն ժպիտը շրթունքին կդիտեր շուրջը և կլսեր տղոց ու աղջիկներու բարձրացուցած խոսքն ու աղմուկը:

— Վասակը չխոսկան է դարձեր,— կըսեր Գևորգ:

— Նոր հարսերու օրենքով,— կավելցներ Սարգիս:

— Այնքան խոսեր է մինչև հիմա, որ ալ ամբողջ կյանքին համար հերիք է,— կլրացներ Բագրատ:

— Խեղճե՛ր, բնավ խոսած չունիք, քիչ մըն ալ դուք խոսեցեք,— կպատասխաներ Վասակ համակերպած ու ներողամիտ հեգնությամբ մը:

— Այս տեսակ մը ամփոփումին ու ազատ ժամերը միշտ իրարու հետ մնալուն մեկ գլխավոր պատճառն ալ, կես մը գիտակից, կես մը բնազդորեն, դպրոցի գործերուն քաշքշվող վիճակն էր:

Ամենուն համար ալ պարզ էր, որ հաջորդ տարին նույն դպրոցը

մնալը այլևս կարելի բան չէր։ Նույնիսկ լսած էին, որ ձեռքի տակ նշանակված էր նոր տեսուչը՝ Թաղականներեն մեկուն պաշտպանյալը և եպիսկոպոսի հին «մեկ գործակիցը»։ Արդեն նախորդ տարին ան պետք է նշանակվեր, բայց այդ օրերուն նորընտիր Հոգաբարձությունը ուզեցեր էր նոր գործ մը տեսնե և Թաղականները դրեր էր կատարված իրողության առջև, և հոտկե ալ արդեն սկիզբ էր առած Թաղականներու և Հոգաբարձության մեջ եղած խուլ դժգոհությունն ու ներհակությունը։

— Ափսո՜ս մեր այնքան աշխատանքը,— կկրկներ Գևորգ։

— Ափսո՜ս մեր տղաքը,— կսրբագրեր Բագրատ։

Մեկ խոսքով փլուզում էր, որ կկատարվեր առայժմ քուլիսներուն ետևը և հոգիներուն մեջ։ Արտաքուստ նույն դպրոցն էր, նույն աշխատանքը, նույն կանոնավորությամբ։ Տասը-տասնհինգ օր կար դեռ մինչև դասերուն ընդհատվիլը, և դպրոցին մեջ ամենքը լավ կկատարեին իրենց պարտավորությունը, ոմանք դրդված բարեխղճութենե, մյուսները հաղթանակող ինքնագոհությամբ, և ընդհանրապես ամենքը ամառային արձակուրդներու շատ մխիթարիչ հեռանկարով։

Թեև ամենուն համար պարզ էր փլուզումը, և կարծես շատ շլկոտըրվելու համար այդպես ամփոփվեր էին իրենք իրենց վրա դուրսեցիները, բայց ընդհանրապես շատ քիչ կխոսեին դպրոցի ու դպրոցին կապված խնդիրներուն վրա։ Հոգնած էին ու ձանձրացած բոլորեն, իսկ Բագրատ նաև խորապես զզված։

Ուրիշ ատեն Բագրատի զայրույթը «իզուր վատնած տարին», և այդ խոր զզվանքը անշուշտ, շատ ավելի ուժեղ կերպով Բագրատի հոգիին մեջ պետք է արձագանքեր։ Բայց հիմա լեցուն էր տղու հոգին. ցերեկ թե գիշեր, տունը թե դպրոցը, մինակ թե բազմության մեջ Բագրատի հոգիին կամարներուն տակը Լուիզի անունը կհնչեր ցնծագին, և Լուիզ ինքն ալ ամբողջովին գգվանք էր ու քնքշություն։

Ընկերներու և տնեցիներու ներկայության վերին աստիճանի զուսպ էին և զգաստ երկուքն ալ, թեև երկուքն ալ շատ մտերիմ ու սրտակից կխոսեին իրարու հետ բոլորի ներկայության։

Ամենքը գիտեին, որ երկուքը շատ բարեկամ էին իրարու, միայն ոչ մեկուն մտքեն անցնիլ չէր կրնար, թե ինչ խոր կապ ինկած էր այդ երկուքին միջև։ Հոտ աչք կապող մեծ դեր կխաղար նաև տնեցիներու և ընկերներու ունեցած կարծիքը թե՛ Լուիզի և թե՛ Բագրատի վերաբերմամբ։ Երկուքն ալ նկատված էին, թեև շատ ազնիվ ու նրբազգաց մարդիկ, բայց սիրո և այդ կարգի խնդիրներու մեջ անընդունակ մարդիկ։

Աղջիկներու և տղոց այդ միասին ըլլալը, խոսիլն ու խնդալը հաճելի էր բոլորին համար, և բնականաբար հաճելի էր մանավանդ Բագրատի և Լուիզի համար։

Եթե տնեցիներուն և ընկերներուն քովը այդպես զուսպ էին ու ըզգաստ, առանձին գտնվելուն պես անդիմադրելի կերպով կմոտենային իրարու, կնստեին ձեռք-ձեռքի, և գգվանք էր ու սրտի զեղում։

Այսպես իրիկուն մը, այդ մենության բացառիկ վայրկյաններեն մեկը, մնացեր էին նորեն գլուխ-գլխի։ Մայրն էր միայն տունը, ան ալ գլխու ցավե գանգատելով քաշված էր իր սենյակը։ Ընդհանուր սրահը սկսվող մութին մեջ նստած էին իրարու սեղմված ու կխոսակցեին մտերիմ, երբ հանկարծ դուռը զարկին։

Լուիզ վազեց բանալու և իսկույն վերադարձավ փոքրիկ տոմսակ մը ձեռքը, որ տվավ տղուն.

— Քեզի համար է։

Տղան անտարբեր բացավ, կարդաց երկու տողը և խոժոռեցավ։

— Ի՞նչ բան է,— հարցուց աղջիկը։

— Ինծի տեղ կկանչեն,— պատասխանեց դժգոհ։

— Ո՞վ և ե՞րբ։

— Հիմա՛ անմիջապե՛ս. հայրենակից մըն է, չոր պտուղի առուտուր ունի։

— Քեզմե ի՞նչ կուզե։

— Ես գիտե՞մ։ Հազիվ երկու անգամ եղած եմ իրենց տունը։ Կուզե, որ հիմա անմիջապես երթամ իրենց տունը։ Ընթրիքին ալ, կըսե, կմնաք մեզի։

— Պիտի երթա՞ս,— հարցուց աղջիկը։

— Շատ կարևոր խոսելիք ունիմ, կըսե։ Ի՞նչ պիտի ունենա ինծի հետ այդպես կարևոր. կամ դպրոցի մասին հիմար բան մը պիտի ըլլա կամ ով գիտե, ի՜նչ դատարկ խոսակցություն։

— Մի՛ երթար, ուրեմն,— ըսավ աղջիկը շատ սրտանց։

— Կարելի՞ է. անշուշտ բան մը կա, գրեր է, որ երթամ անպատճառ, տակն ալ գիծ է քաշեր մարդը,— խնդաց Բագրատ։— Երթանք տեսնենք՝ ի՞նչ է այդ շատ կարևոր բանը,— վճռեց տղան ոտքի ելլելով։

Համբուրեց Լուիզը, գլխարկը վերցուց և անցավ միջանցք դեպի դուռը։

Հազիվ ձեռքը երկարեր էր սողնակին, որ դուռը բանա.

— Կեցի՛ր,— ըսավ աղջիկը տարօրինակ ձայնով մը։

Տղան զարմացած ետ նայեցավ։

— Գրկե՛ ինծի։

Բագրատ քնքշանքով առավ թևերուն մեջ, համբուրեց Նորեն և քաշվիլ կուզեր, որ աղջիկը կրկնեց.

— Ո՛չ, գրկե ինծի։

Տղան խնդաց, բոլոր ուժովը քաշեց աղջիկը կրծքին և պինդ ու երկար համբույրի մը մեջ անշարժացան։

Երբ բաժնվեցան ու դուռը բանալ կուզեր՝ հազիվ գտնել կրցավ դռան սողնակը։

Եվ գինովի մը նման վար իջավ սանդուղներեն։

## ԻԴ

Մանուկյաններուն դուռը բացվեցավ թե չէ՝ Բագրատը խորհրդավոր ժպիտով մը և շատ նեղ սանդուղով առաջնորդեցին վերի հարկը, որ հյուրերու էր հատկացված։

Սանդուղի գլխուն դեմ եկան չոր պտուղի վաճառականը ինքը, կինը, մեծ աղջիկը, բոլորն ալ սովորականեն ավելի ժպտուն բարևեցին հյուրը և առաջնորդեցին կից հյուրասենյակը։

Սենյակի սեմեն ներս մտնելուն պես Բագրատ տեսավ, որ հոն սեղանին առջևը, կռնակը իրենց դարձուցած նստած էր մեկը և բանով մը զբաղված կերևար։

— Խնդրեմ ծանոթանանք,— ըսավ տան տերը։

Նստած մարդը հանդարտ ոտքի ելավ և անտարբեր երևնալու ճիգով մը դարձավ Բագրատին.

— Արտաշե՛ս,— բացականչեց Բագրատ մեծ հուզմունքով ու ձեռքերը տարածելով։

Վազեցին իրարու դեմ ու գրկվեցան։ Մյուսները կես մը հուզումով, կես մը զվարճանքով կնայեին ծիծաղադեմ։

— Աս ի՞նչպես, ե՞րբ ես եկեր և ինչո՞ւ ես եկեր, ինչո՞ւ շիտակ ինծի չեկար, ինչո՞ւ առաջվնե իմաց չտվիր և ինչո՞ւ ամիսներով նամակներուս չէիր պատասխաներ,— հարցուց Բագրատ դողացող ձայնով, երբ իրարու գրկե բաժնվեցան։

Նորեկը իբրև պատասխան այս բոլոր հարցերուն՝ սիրով լիքը նայվածքով մը կնայեր Բագրատին, աղվոր ժպիտ մը շրթունքին։

— Չես փոխված, միայն ավելի առնացեր ես, լա՛վ է,— եզրակացուց նորեկը իբրև արդյունք իր ուսումնասիրության։

— Ես քեզի բան կհարցնեմ,— պնդեց ընկերը։

— Այդքան ինչոններուն ես մեկ անգամեն ինչպես պատասխանեմ,—



խնդաց Արտաշես հանգիստ ու ծանր խոսվածքով մը։— Նորեն հարցուր տեսնեմ մեկիկ-մեկիկ։

Եվ ամենքն ալ խնդացին։

— Ե՞րբ ես եկեր և ինչու՞։

— Եկեր եմ այս առտու առևտրական գնումներու համար։

— Ինծի՞ ինչու չեկար շիտակ։

— Պարոն Մանուկյանի հետ գործեր ունեի, ժամանակս շատ քիչ է ու զբաղումներս՝ շատ։

— Նամակներո՞ւս ինչու չէիր պատասխաներ, նոր տարիեն ասդին քեզմե լուր չունիմ։

— Խանութի մարդը դժվար գրիչ կշարժե, և արշին շարժողն ալ ըսելու բան քիչ կունենա, գիտեմ դուն ալ շատ զբաղված մարդ ես։

— Ատիկա նո՞ր միտքդ ինկավ, նոր տարիեն ասդին։

Նորեկի դեմքին բացվեցավ նորեն իր անուշ ժպիտը և քիչ մը ուշ պատասխանեց։

— Գիտեի, որ շուտով տեսնելու եմ քեզի։

— Գիտե՞ք ինչ,— մեջ մտավ տան տերը,— լավն ան է, երթանք շիտակ սեղանատուն՝ կերակուրները չպաղին. մնացածը հոն կխոսինք։

Եվ իրարու ետևե նույն նեղ սանդուղով իջան վարի հարկը։

Բագրատ ու Արտաշես մանկության ընկերներ էին, թաղի ու դըպրոցի ընկերներ, միշտ իրարու հետ, իրարու տուն ու պարտեզ։ Այս կենակցությունը հանկարծ կտրվեր էր, Բագրատը Կարինեն ղրկեր էին Կովկաս, որ ուսում առնե։ Մորը մահեն ետքը Բագրատ անգամ մը դարձեր էր հայրենիք մորեղբայրներուն կանչովը, մնացեր էր երեք ամիս, և այդ միջոցին երկու հին ընկերները թեև նորեն հանդիպեր էին իրար արդեն իբրև պատանի, բայց այն հին սրտակցությունը չէր եղած մեջերնին։

Արտաշես արդեն մտած էր իր եղբոր կտորեղենի խանութը, շարունակ, մոտակա գյուղերը կերթար ու կուգար, և երկու հին ընկերներու ճամփաները բաժնված էին իրարմե։

Բայց ասկե հինգ-վեց տարի ետքը, երբ իբրև կտորեղենի երիտասարդ վաճառական եկած էր Մոսկվա իրենց խանութին համար ռուսական կտորներու նոր ընտրություն մը ընելու և նոր պատվերներ տալու, Արտաշես եկեր գտեր էր իր մանկության ընկերը՝ խնդրելով, որ գա իրեն օգնելու. ինքը ոչ լեզուն գիտեր և ո՛չ ռուսական բարքն ու պայմանները։

Եվ այս անգամ արդեն երկու հին ընկերները կապվեր էին իրարու խոր ու շատ սրտանց։ Շատ սիրեցին իրար և շատ ալ գաղափարակից գտան իրար։ Երկուքն ալ Հայ ժողովրդի բարձրացման երազներով տար-

ված, երկուքն ալ հայ ապագայի հույսերով լեցուն և ջերմ հավատացող, երկուքն ալ իրենց կարողությունները ու իրենց ազդեցությունը հայության քաղաքական ու բարոյական ազատությանը նվիրելու տենչերով։

Արտաշես միշտ մաս էր ունեցած իր քաղաքի բոլոր վերջին ցույցերուն ու շարժումներուն մեջ և երիտասարդության վրա ազդեցություն ձեռք բերած. մանավանդ արագ կերպով հարստացեր էր, և իր խոսքը կշիռ ուներ։ Շարունակ կկարդար տունն ու «խանութը», որ հիմա արդեն մեծ վաճառանոց մըն էր, քաղաքի գրեթե առաջինը։ Սքանչելի գրադարան մըն էր կազմած Պոլսեն, Վենետիկեն ու Թիֆլիսեն բերել տված գրքերով, գրեթե բոլոր մեր քիչ-շատ արժեքավոր գրքերը։ Կկարդար ազատ նաև ֆրանսերեն։ Այս ամենը կավելցնեին իր հմայքը և արդեն դառնալու վրա էր քաղաքին մեջ «ազդեցիկ դեմք մը»։

Մոսկվայի «ճերմակ գիշերները», ուր հազիվ վերջալույսը մարած՝ արշալույսը բացվիլ կսկսի, երկար ժամերով թափառեր էին ու խոսեր, ապագա միասին գործունեության ծրագիրներ էին կազմեր, թե ինչպես կարողանան հայությունը ցնցել։ Բագրատ ծանոթացուցեր էր ընկերը հայ ուսանողական շրջանակներուն, որոնք այդ միջոցին նույն ու նման գաղափարներով էին տարված։

Եվ այդ «ճերմակ գիշերներեն» սկսած, ինչպես իրենք կանվանեին ոգևորության, հույսերու և մտերմության իրենց օրերը Մոսկվայի մեջ, անոնք մշտապես ու կանոնավոր թղթակցության մեջ էին եղած իրարու հետ, Արտաշեսի հայրենիք վերադառնալեն ետքը։

Եվ ահա՛ հիմա Մանուկյանի սեղանին դեմ-դեմի նստած, իրենց կարոտած աչքերը իրարմե չհեռացնելով և հայրենակից ընտանիքով մը շրջապատված՝ կհիշեին իրենց մանկության տեղերը, դեպքերը, ծանոթները։ Կհիշեին և Մոսկվան, հազար մեծ ու փոքր բան, կհիշեին սիրով ու կխմեին այդ բոլոր քաղցր հուշերուն կենացը։

## ԻԵ

Ընթրիքեն ետքը վերադարձան նորեն հյուրասենյակ, ուր սուրճ բերին։ Սուրճեն ետքը ալ չերևցան Մանուկյանի աղջիկն ու տղան։ Շուտով տիկինն ալ անհայտացավ, քիչ մը ետքը քաշվեցավ նաև տան տերը։

Երբ երկու ընկեր բոլորովին մինակ մնացին՝ Արտաշես գնաց նստեցավ սենյակին խորքը բազկաթոռին մեջ և մատով նշան ըրավ, որ Բագրատն ալ գա իր քովի բազկաթոռը։



Վայրկյան մը նայեցան իրարու կես-հարցական, կես-ժպտուն և սկսան մեկուսի խոսակցություն մը ցած ձայնով։

— Ես ապրանք տանելու եկած չեմ,— ըսավ Արտաշես խնդալով և առանց հառաջաբանի,— ապրանքները առանց ինծի ալ կրնային գալ։

— Հապա՞։

— Եկած եմ քեզի տանելու։

— Ինծի՞, և ու՞ր։

— Չըլլա՝ շատ սիրեցիր Պոլիսը։

Բագրատ հանկարծ սուր ճմլում մը զգաց մեջը և շատ լուրջ շեշտով մըն էր, գրեթե վախով, որ վրա բերավ.

— Ըսե՛, տեսնեմ, մտքինդ ի՞նչ է։

— Մեր երազած ու ծրագրած շարժումը մարմին առնելու վրա է. այսինքն արդեն մարմին առած է։ Ըսենք՝ ատ ալ ճիշտ չէ. մեր հողին վրա արդեն քանի մը տասնյակ տարի է, որ ծայր է առած դիմադրության ու պայքարի ոգին։ Միայն թե հիմա հասած է արդեն նոր երիտասարդություն մը, որ ավելի խորեն կերթա և ավելի լուրջ կկազմակերպվի։

— Նոր բան ի՞նչ կա։

— Այս ձմեռ շատ աշխատանք թափեցինք։ Զատկին գաղտնի ժողով մը ունեցանք մեր ամենավստահելի դեմքերեն, մոտ հիսուն հոգի, թե՛ մեր մոտերեն և թե՛ ավելի հեռուներեն։ Զարմանալի համաձայնություն կար։ Հարցը հասունացած է ներսեն և Կովկասեն ալ նույն շունչը կփչե։ Ի՞նչ երկնցնեմ, ընտրվեցավ շատ լայն իրավունքներով կեդրոնական վարիչ մարմին մը և որ հիմա շատ տաք կերպով կպած է գործին, մանավորապես ինչ որ կվերաբերի մեր Կարնի շրջանին։

— Որուն մեջ անշուշտ կաս և դուն։

— Հիմա կուզենք առաջին հերթին լավ մը կազմակերպենք Մուշի ու Երզնկայի շրջանները։ Երզնկայի համար ունինք պետք եղած կարող վստահելի մարդը։ Իսկ Տարոնի համար մեր ընտրությունը կանգ առավ քու վրադ. շատ մը տեսակետներով ամենեն հարմարը դուն ես։ Հոսկե հեռագրեմ թե չէ՝ Մուշի ազգային մարմիններու կողմե կհրավիրվիս ազգային վարժարանին տեսուչ։ Ըլլաս «Պոլսեն եկած հայտնի մանկավարժ», և ոչ մեկ կերպով դպրոցե դուրս ոչ մեկ գործի չես մասնակցիր։ Մասնավորապես հեղափոխական ամեն հարցի ու հավաքումի հետ ոչ մեկ կապ. ո՛չ ծածուկ, ո՛չ հայտնի։ Մանկավարժական ու գիտական հարցերու շուրջ դասախոսե՛, վիճե՛, գրե՛ լրագիրներուն, և ինչքան այդ ուղղությամբ համբավ հանե՛ս, այնքան լավ։ Տեղին վրա դուն կապ կունենաս միայն մեկ կարևոր ու ազդեցիկ ընկերոջ մը հետ, որու միջո-

ցով ձեռքդ կպահես թելերը և առանց քու գիտությանդ ու հրահանգիդ չի կատարվիր ոչինչ։ Ուրիշ խոսքով ամբողջ շրջանի կազմակերպության առանցքն ու ղեկավարը կըլլաս դուն՝ առանց երբեք մեջտեղ երևալու։ Եվ կեդրոնական վարչությանս հետ ալ հարաբերություն կպահես միմիայն անձնապես ինծի հետ և կըլլաս վարչությանս լիազոր ներկայացուցիչը, գործադիր ձեռքը և խորհրդատուն։ Ահա՛, սիրելի՛ս, ինչ որ եկած եմ քեզի առաջարկելու։

Բագրատ առանց շարժում մը ընելու, առանց որևէ համակրական կամ այլ նշանի, լուրջ ու կեդրոնացած մտիկ կըներ ընկերոջը փսփսուքը, քիչ մը ինքն իր վրա կքած, երկու արմունկները երկու ծունկերուն և երկու ձեռքերուն մատները իրարու հյուսած։

Արտաշես քիչ մը լուռ մնաց, կարծես սպասելով որևէ խոսքի, բայց դիմացինին անշարժությունը տեսնելով՝ շարունակեց.

— Իսկ իմ ու քու մեջ եղած կապն ալ կդնենք արտաքուստ զուտ առևտրական հողի վրա։ Մինչև հիմա քեզի գրած բոլոր նամակներս գալեդ առաջ կփչացնես։ Քու գրած աղվոր ու սրտալի նամակներդ ես պատռելու սիրտ չըրի, բայց անունները դարձուցի անընթեռնելի և կպահվին բոլորովին տարբեր մարդու քով ու ապահով։ Իսկ ասկե ետքը մեր գիրով ու մեր անունով ոչինչ չենք գրեր իրարու բացի առևտրական, գործի վերաբերյալ պաշտոնական թղթակցութենե։ Մեր վաճառանոցին մեջ բացած եմ գրական պիտույքներու և դասագրքերու ճյուղ մը հատուկ այդ նպատակով. մեր առևտրական տունը կըլլա ձեր դպրոցին հայթայթիչը, որով հարմարություն կստեղծի իրար լուր տալու, իրար մարդիկ ղրկելու և Կարին եկած ատեններդ ալ շատ բնական կերպով ինծի հետ տեսակցելու։ Բոլոր կարևոր հարցերը կենդանի շրթունքով։ Կունենանք հատուկ ընկեր մը, որ զանազան պատրվակներով մեր մեջ կերթևեկե։ Ահա՛ ինչ որ անհրաժեշտ էր, որ առայժմ ըսեի։ Մնացածը կուգա ու տեղին վրա։

Տիրեց նորեն լռություն մը. Բագրատ միշտ նույն ծռած դիրքին մեջ, գլուխը կախ և մատները իրարու հյուսված։

— Չխոսի՞ս։ Ըսի կարծեմ ինչ որ պետք էր։ Ի՞նչ է հիմա քու պատասխանդ։

— Ի՞նչ պատասխան կուզես ինծմե,— ըսավ Բագրատ վերջապես բազկաթոռին մեջ շտկվելով։ Ետքը ելավ, կեցավ, շտկվեցավ ամբողջ հասակով և ավելցուց,— ահա՛ ես ամբողջովին պատրաստ ձեր հրամանին, ուրիշ ի՞նչ պատասխան կրնամ տալ ձեր հրավերին։

— Ուրիշ պատասխանի չեմ սպասեր, միայն թե դիրքիդ, ձայնիդ ու



բառերուդ տակ տարօրինակ բան մը կա, դառնություն ըսեմ, դժգոհություն ըսեմ։

— Այո՛, ականջդ չէ սխալած։ Այս բոլոր պատմության մեջ դառնություն մը կա ինծի համար։ Նախ և առաջ ձեր այդ բոլոր կազմակերպական աշխատանքներուն ես ալ մասնակից պետք է եղած ըլլայի և ոչ թե այսպես հեռուն հանգիստ նստած ընկերներս ինծի պատրաստ հրամցնեին։

— Ավելորդ նրբազգացություն է. դուն հոս գործ ու դեր ունեիր։

— Երկրորդ դառնությունն ալ արդեն ճիշտ ատիկա է։ Ես Պոլիս պետք չէ եկած ըլլայի,— ըսավ Բագրատ սրտի խորքեն ու ցավագին կծկումով մը։ Այն աստիճան շեշտված, որ ընկերը ըմբռնել չկրցավ.

— Պոլիս եկած ըլլալուդ մեջ ես մեծ չարիք մը չեմ տեսներ, ընդհակառակը, իր առավելություններն ունի։

— Աղե՛կ, թողնե՛նք հիմա ատիկա,— բացականչեց Բագրատ բան մը մեկդի նետելու բացահայտ ճիգով։— Ամեն պարագայի լսածներուս համար խորապես ուրախ եմ։ Գիտես իմ կարծիքս։ Մեր նոր սերունդի կրթությունը պիտի կատարվի նոր թափ ունեցող դպրոցներով և կյանքի հեղափոխական դպրոցով։

— Ամենքը կարոտով կսպասեն քու գալուդ։

— Ուրիշ հանձնարարություն մը ունի՞ս,— հարցուց հանկարծ Բագրատ ընկերոջը խոսքը կտրելով։

— Ո՛չ։ Անշուշտ մեր խոսակցությունը ինծմե ու քեզմե զատ ոչ ոք պետք չէ գիտնա։

— Կարծեմ,— պատասխանեց ընկերը անփույթ։— Իսկ ե՞րբ կմեկնիս։

— Երեքշաբթի օրվան ռուսական շոգենավով։

— Եվ մենք ուրեմն հոս այլևս իրար պետք չէ հանդիպինք։

— Լավը ատ է, կարիք չկա։

— Իսկ Մուշեն պաշտոնական հրավերը մոտավորապես ե՞րբ կստանամ։

— Վաղը իրենց կարգախոսը կուտամ հեռագրով, տասը-տասնհինգ օրեն կստանաս հավանորեն հեռագիր։ Դուն կամաց-կամաց պատրաստություններդ տե՛ս։

— Աղե՛կ, եկո՛ւր համբուրվինք ու վեր կանչե տանտերը, որ հրաժեշտ առնեմ։

Այն աստիճան կտրուկ ու անհամբեր շեշտ մը կար խոսվածքին մեջ, որ ընկերոջը զարմանք պատճառեց։ Ջերմ համակրանքով նայեցավ վայրկյան մը անոր աչքերուն և թեթև մը հեգնեց խնդալով.

— Կեցի՛ր, նայինք, դեռ Մուշ չես հասած։

— Սրտագին բարևներս ընկերներուն,— եղավ պատասխանը։

Արտաշես ելավ ոտքի, և երկուքը փաթթվեցան իրարու ընկերական ջերմ ողջագուրանքով։

Եվ Արտաշես գնաց նեղ սանդուղին գլուխը և Մանուկյանը կանչեց վեր.

— Պարոն Բագրատը մեկնիլ կուզե։

## ԻԶ

Երբ իր ետևեն գոցվեցավ Մանուկյաններուն դուռը, բացվեցավ անմիջապես իր հոգիին առջև ներքին անդունդը։

Քանի ներսն էր՝ պարտականության ու պարտավորության ձայնն էր, որ կհնչեր իր հոգիին մեջ։ Հիմա, որ հարցի այդ կողմը բավարարված էր ու կարգադրված՝ կբացվեր տղուն դեմքը իր անձնական կյանքին ու բախտավորության հուսահատ դրությունը իր բովանդակ խորությամբ։

Վայրկյան մը անգամ վարանում կամ զղջում չուներ իր ըրածին ու մտադրածին համար, բայց և ոչ մեկ կասկած կամ պատրանք չուներ, որ փշրված ու վերջացած էր իր անձնական բախտավորությունը։

Պարզ էր իրեն համար, որ ինչ ձևով ու միջոցներով ալ որ ճիգ թափեր, ճկվիլ ու ծռվիլ փորձեր, միևնույն է, իր ու Լուիզի բախտավորությունը փրկել պիտի չկարողանար, կզգար ու կգիտակցեր շատ հստակ։

Մանուկյաններու փողոցեն որ դուրս եկավ՝ բնազդորեն կանգ առավ ճամփուն մեջտեղը։ Ո՞ւր հիմա. տո՞ւն։ Այլևս տունը քավարան մըն էր իրեն համար։ «Այն տունը» այլևս չկար, այլևս պետք չէ, որ ըլլար։

Երիտասարդը սկսավ քալել հակառակ ուղղությամբ իրարմե շատ հեռու-հեռու տնկված լապտերներու աղոտ խավարին մեջեն։ Եվ զգաց, որ թանձր ու մածուցիկ գորշ բան մը սկսավ իջնել ծալ-ծալ դիզվիլ ու ամեն ինչ թաղել իր տակը, իր հոգիին մեջ։

Սկսավ լալ։ Արցունքները կգլտորեին աչքերեն այտերուն վրա և այտերեն ալ դեպի կուրծքն ու գետին։ Տղան ո՛չ կսրբեր, ո՛չ ուշադրություն կըներ, ո՛չ ալ կամչնար այդ արցունքներեն։ Հուղարկավորի մը պես էր. չէ՞ որ հոգիին այդ թանձր փոշություններուն տակ, ահա՛, ընդմիշտ իր սերը կթաղեր, պիտի թաղեր։

Իր առաջին, իսկական ու խորունկ սերը, որ գիտեր այլևս երբեք-երբեք կրկնվելու չէր, ինչ ալ որ բերելու ըլլար իրեն կյանքը։



«Երևի անհրաժեշտ էր այս սուրբ զոհողությունը իմ նոր հանձնառությանս, իմ նոր նվիրումիս արժանի ըլլալու համար։ Պարապ ձեռքերով չէի կրնար ներկայանալ զոհի սեղանին, և ինչքան մեծ է պաշտամունքը, այնքան ալ ավելի թանկագին ու ազնիվ պիտի ըլլա քու բերած նվերդ զոհի սեղանին։

Նման մտածումները գլխուն մեջ, մառախուղ մը հոգիին խորքը և արցունքը աչքերուն կքալեր։

Բռնած ճամփան թեքվելով ու իջնելով ելավ ծովեզրը։ Ղալաթիայի մոտերը քարափը։ Նախ հոտ ալ կքալեր մեքենաբար, վերջը գնաց կռթնեցավ ծովու ճիշտ եզերքին, քարափին վրա ամրացած երկաթե հաստ կոճղերեն մեկուն, որուն կամրացնեն շոգենավերը իրենց բռնող պարանը։ Իր հենած երկաթի կոճղին անցված էր արտակարգ հաստ պարան մը, որ կիջներ ջուրը և կես մը ջուրին տակը, կես մը ջուրին երեսը կերթար հեռուն միանալու ահագին ու անճոռնի ստվերային զանգվածի մը, որ շոգենավ մըն էր։

Աչքերը այդ անճոռնի ու ահագին ստվերին գամած՝ Բագրատ կըմտածեր։ Ալ իր մասին չէր մտածեր։ Իր զգացումները պետք է չորնային, կըմբռներ, բայց Լուի՞զը, ա՞ն ինչ հանցանք ուներ։ Եվ ի՞նչ պիտի ըսեր անոր, ինչպե՞ս հասկցներ, ինչպե՞ս վշտացներ, ինչպե՞ս փեթըռտեր անոր նուրբ ու քնքուշ զգացումները։

Եվ սարսափով տեսավ, որ հարցի այս կողմը շատ ավելի դժվար որոշելու բան մըն էր։

Նախ մտածեց, որ պարտական է իսկույն երթա և որևէ պատճառանքով մը խզե իրենց բոլոր կապերը, բայց ի՞նչ պատճառանքով, և ինչպե՞ս կարելի է այդպես վարվիլ։

Ընդհակառակը, սկսավ մտածել, որ լավագույնն է կամաց-կամաց ետ քաշվի և աղջկան սիրտը կամաց-կամաց պաղիլ տա։ Բայց իսկույն տեսավ, որ ինքը կարողություն չունի այդ տեսակի խաղերու։ Եվ վերջապես կըմբռներ, որ այդ վայրկյանեն այլևս իրավունք չուներ աղջկան դիպչելու։

Իրեն համար ամենեն բնականն ու ցանկալին աղջկան հետ ամեն ինչ պարզ ու շիտակ խոսիլն էր, որը սակայն կարելի չէր, պետք է լռեր։ Իսկ սուտ խոսիլ ու սուտերով խաբել այդ հրաշալի, նվիրվող աղջիկը, ո՛չ, ինքը կարող չէր։

Թեր ու դեմ մտածումները կուգային ու կերթային, և տղան միշտ կեցած էր անշարժ, առանց որոշման մը հանգիլ կարողանալու։ Հենած միշտ երկաթե կոճղին՝ երկաթե կոճղ մըն ալ ինքը։

Անցուդարձը, որ արդեն սակավ է գիշերները այդ քարափին վրա,

հիմա բոլորովին դադրած էր։ Եվ քարափի պահակը բավական ժամանակ է հեռուէն կդիտեր սովերին մեջ կեցած այդ անշարժ ստվերը և աչքէն չէր փախցներ։ Ի՞նչ կընէր հոն այդ մարդը, ի՞նչ կուզեր գիշերվան այդ լուռ պահուն։

Անոր համառ անշարժութենեն հուսահատած՝ ինքը կամաց-կամաց մոտեցավ անոր, աջեն դիտեց, ձախեն դիտեց և վերջապես դպավ ուսին։ Բագրատ արտասովոր ուժեղ ցնցումով մը դարձավ ետին, քունե հանկարծ արթնցողի մը պես։

— Ի՞նչ կընես հոս,— հարցուց պահակը։

Բագրատ չգիտցավ ինչ պատասխանե և վերջապես ըսավ.

— Ծովը կդիտեմ։

— Այսքան երկա՞ր։ Ո՛չ։ Հոսկե այդպես երկար ծովը դիտելը արգիլված է,— ըսավ պահակը։ Եվ շատ դժվար էր հասկնալը՝ լու՞րջ էր իր խոսվածքը, թե՞ դիմացինի վրա կխնդար։

Բագրատ առանց ոչինչ ըսելու բաժնվեցավ իր կռնղեն և արդեն առանց ոչինչ մտածելու բռնեց իրենց տան ճամփան։

Միտքը թմրեր էր, և մեքենականություն մը կտիրեր հոգիին մեջ։ Տեսնելով, որ ինքը անկարող էր իրերու ընթացքին ուղղություն տալու, հիմա թողեր էր ինքզինքը իրերու բնական ընթացքին։

Եվ քանի որ ամեն ինչ պիտի պատռվեր, քանի որ ամեն ինչ պետք է փետտեր, միևնույն չէ՞ր, այս ձևով, թե այն ձևով։

«Թող գա ինչ որ գալու է», եզրակացուց գրեթե լսելի, երբ գրպանի բանալին տան կողպեքին անցնելու կաշխատեր։

Դուռը գոցելուն պես նայվածքը բնազդորեն ուղղվեցավ Լուիզի սենյակին կողմը. արդեն սովորություն էր դարձած։ Բայց խնկույն հանցավորի մը պես անդին դարձուց աչքերը և մտավ իրենց սենյակը։

Գեորգ լամպը կխավառ էր թողեր և անպիտան հոտ մը լեցուցեր էր սենյակը, թեև բաց էր լուսամուտներեն մեկը։ Բացավ կամաց մը մյուսն ալ, որու հանած թեթև աղմուկեն ընկերը արթնցավ։

— Եկա՞ր։ Ի՞նչ պատմություն էր։ Ի՞նչ կուզեր այդ Մանուկյանը։

— Ձիմար հյուրասիրություն։ Ցերեկները առուծախ, գիշերները ժամանց. պարապ մարդ է իրեն պետք, որ հետը ժամանակ անցնե։ Եվ երևի արդեն ինծի ալ սկսեր է պարապ մարդու տեղ դնել։ Գիշե՛ր բարի։

Եվ լույսը մարեց։



# ԻԷ

Հաջորդ օրերը Բագրատ բոլորովին փոխված էր, չափազանց նեղսիրտ, ցրված ու անհամբեր։ Հետը խոսիլ չէր ըլլար. բոլոր խոսակցությունները կկտրեր կամ ներհակ պատասխաններ կուտար։

Ընկերները կխորհեին, որ դպրոցը ձգելու զայրույթեն է, ու մեջեմեջ սիրտ տալու նմանող խոսքեր կընեին, որուն Բագրատ արհամարհոտ շեշտով մը կպատասխաներ։

— Ինքզինքնիդ մխիթարեցե՛ք։

Գիշերները սկսավ ուշ տուն գալ, առտուները կանուխ տունեն կըհեռանար։ Տունը եղած ատենն ալ բոլորի հետ չոր հարաբերություն մը ուներ ու քաշված էր ինքն իր մեջ և միշտ կարծես աշխատանքի ու հաշիվներու վրա էր։ Եվ մանավանդ ամեն կերպ կջանար Լուիզին քիչ հանդիպիլ, ան ալ միշտ ուրիշներու ներկայությամբ։

Օր մը, երբ անակնկալ կերպով վայրկյան մը առանձին մնացին՝ Լուիզ հարցուց վշտահար ձայնով մը.

— Ի՞նչ ունիս ինծի դեմ, ինչու՞ զայրացած ես։

— Գլուխս շատ խառն է,— եղավ խուսափող պատասխանը և ավելցուց հուզումը զսպելու անկարող։— Դուն ինծի ու իմ ըրածիս շատ կարևորություն մի՛ տար, ո՛չ ալ մինչև հիմա ըսածներուս։

— Ատ ի՞նչ խոսք է։

— Ի՞նչ գիտնամ։

— Եթե դպրոցիդ համար ես նեղացած՝ Պոլիս դպրո՞ց կպակսի. քեզի պես աշխատող տղան անգործ չի մնար։

— Իմ մտածմունքս իմ մասին չէ։

— Հապա՞։

— Քո՛ւ։

— Ես՞։

— Հապա ուրիշ ո՞վ կուզես, որ ըլլա։

Ներս էին եկած ուրիշները, և ընդհատված էր այս տարօրինակ հարց ու պատասխանը։ Արդեն քանի մը օրե ի վեր Լուիզի զգացած տարտամ վախը սաստկացավ, բայց ինչ ուղղությամբ ալ որ կմտածեր՝ բանավոր բացատրություն մը գտնել չէր կրնար։

Գիտեր, որ քանի մը օրեն տղան հրաժարականը պիտի տար դըպրոցեն, և շաբաթը չլրացած դասերը պիտի դադրեին։ Հույս ուներ, որ տղան երբ ազատվի, ավելի տունը կըլլա, ջղայնոտությունը կմեղմի և այս անբնական մեկուսացումը կանցնի։

Եվ հասավ վերջապես դպրոցական վերջին օրը։ Դասերը կանոնա-

վոր տեղի ունեցան, և Բագրատ սովորականեն ավելի զբաղված էր, բայց շատ հանգիստ։ Իրիկունը, երբ տղաքը կարձակվեին՝ եկան շատերը մնաք-բարով ըսելու, ոմանք նոր տարեշրջանի մասին բաներ կհարցնեին։ Բագրատ ամենուն ալ պատասխանեց խուսափողական ձևով մը. գիտեր, որ անշուշտ բաներ մը լսած պիտի ըլլային։ Ուսուցիչներն ալ բարևեցին ու ցրվեցան, ու դպրոցը դատարկվեցավ։

Բագրատ մտավ իր սենյակը, ժողվեց բոլոր գրքերն ու թղթերը, որոնք անձնապես իրեն կվերաբերեին, փաթթեց ու կապեց ու դրավ մեկ կողմ։ Դպրոցի բոլոր պաշտոնական մատյաններն ու գրություններն ալ դրավ պահարանը և ուշադրությամբ կղպեց։

Գզրոցեն հանեց նամակի պաշտոնական թուղթ մը և գրեց իր ու Գևորգի հրաժարականը՝ հայտնելով պարզապես, որ պատճառը եպիսկոպոսի լարած մթնոլորտն է, թաղականներուն անհասկացողությունը իրենց վարած գործին և հոգաբարձուներուն համակերպությունը։

Կանչեց Գևորգը, կարդաց, ստորագրել տվավ և ավելցուց.

— Տնտեսին հետ այս նամակը հիմա հոգաբարձուներուն ատենապետին կղրկե՛ս, իր գրասենյակը։ Այս գրքերու կապոցն ալ տա՛ր ծառային, որ տանի տուն. ինքդ ալ ետևեն գնա՛, մարդուն ձեռքը ճերմակ մը դի՛ր և եկո՛ւր Արխիտիսի ճաշարանը, ծովեզերքը։ Կսպասեմ քեզի, որ միասին ընթրենք։

Ինքն ալ դրավ գլխարկը և զարմանալի անփույթ հոգեբանությամբ մը իջավ վերջին անգամ դպրոցի սանդուղներեն և ելավ այն սեմեն, ուր մտած էր այնքան աղվոր հույսերով ու ծրագիրներով և ուր այնքան աշխատանք էր թափած և ուժ էր վատնած։

Հանգիստ քայլերով կերթար ճաշարան։ Ծովեզերքը մեկ-երկու տեղ կանգ առավ։ Ցրված կերպով դիտեց նավավարներու աղմուկն ու իրարանցումը։ Եվ արդեն մթնելու վրա էր, որ մտավ ճաշարան։ Գնաց շիտակ ծովուն մեջ ցիցերու վրա շինված բաժինը և նստեցավ ամենեն քաշված անկյունը բաղեղներով հյուսված վանդակին մոտիկ։

Լիալուսին գիշեր մըն էր, և քանի մութը կթանձրանար, ծովը այնքան կկենդանանար ու կխաղար լուսնի քմահաճույքեն իր գիրկը թափվող արծաթ դրամներուն հետ։ Մակերեսի թեթև տատանումը կքծներ պատշգամը պահող ցիցերուն։ Երբեմն ալ մոտեն անցնող նավակի մը հանած շարժումեն փոքրիկ ճողփյուններ կլվեին պատշգամին տակ։

Բագրատ աչքերը հառած ծովու արծաթ մակերեսին՝ կզգար անոր մեղմ ու հանդարտ տատանումը։ Իր մտքին մեջն ալ մտածումները կարծես մակերես մըն էին կազմած, որ նույնպես մեղմ ու հանդարտ կտատաներ։



Միշտ նույն ճիգն էր, անհույս ճիգը, իր հոգիին երկու անհաշտ հարցերը կերպով մը հաշտեցնելու։ «Մի՞թե անկարելի էր, որ Լուիզը իր հետը տաներ»։ Քանի՞երորդ անգամն էր, որ կկրկներ նույն հարցը ինքն իրեն, ծովու անվերջ տատանումին նման։

«Իրավո՛ւնք չունիմ, իրավո՛ւնք չունիմ. Լուիզը կդարձնեմ անբախտ, և կտուժե գործը։ Իրավունք չունի՛մ. պետք է թևերս բոլորովին ազատ ըլլան, բոլոր հոգերս միայն մե՛կ ուղղությամբ, որ հաջողիմ։ Երկու տիրոջ կարելի չէ ծառայել»։

«Բայց դժվար է, շատ է դժվար, և անոր համար, և ինծի, մեր շըրթունքները հազիվ դպցուցած բախտավորության բաժակին»։

Առջևեն նավակ մը կանցներ։ Սկսավ դիտել թևերուն կանոնավոր շարժումը ու թիերեն կաթկթող ջրի կաթիլներուն փայլփլուկը օդին մեջ։

Այդ միջոցին էր, որ եկավ Գևորգ։ Ֆեսն ու ձեռնափայտը նետեց քովի աթոռին վրա ու նստեցավ ընկերոջը դեմը, նմանապես բաղեղապատ վանդակին կից ու բացականչեց.

— Հոգնացանք, վերջապես շունչ կառնենք։

— Հը՛մմ։

— Ի՞նչ ունենք։

— Ապսպրե՛ ինչ որ կուզես երկուքնուս համար։

Ծառան սփռոցը բերավ, պնակներն ու սպասները և սկսավ շարել։ Գևորգ ճամփուն վրա պատահած երկրորդական դեպք մը կպատմեր։ Ընկերը կլսեր առանց հետևելու և հանկարծ ընդհատեց.

— Դպրոցը ձգեցինք. հիմա ի՞նչ է միտքդ, Գևո՛րգ։

Գևորգ պահ մը զարմացած նայեցավ ընկերոջը։

— Ա՞տ ինչ հարց է։ Կերթանք ուրիշ մը։ Ես արդեն Շահինյանի հետ խոսեր եմ։ Սարգիսն ալ Ս. Թաղի հոգաբարձուներուն հետ տեսնըվեր է։ Խնդիրը նորեն ամբողջովին դպրոց մը մեր ձեռքը առնելն է, և կարծեմ շատ պիտի փնտրենք։

— Փնտրելու պետք չունես, ես արդեն գտած եմ։

Գևորգ այս անգամ արդեն ապշությամբ նայեցավ ընկերոջը։

— Նոր բա՞ն կա, ու՞ր։

— Միայն քիչ մը հեռու է, թեև ճիշտ չէ ըսածս, մեզի շատ ավելի մոտիկ է, քան՝ հեռու։

— Հանելու՞կ կըսես, չեմ հասկնար։

Բագրատ հանգիստ շարժումով մը հանեց ծոցի թղթերուն մեջեն հեռագիր մը, որ երկու օր առաջ էր ստացած ու նետեց Գևորգի պնակին մեջ։

— Ա՛ռ, կարդա՝ կհասկնաս։

Գևորգ անհամբերությամբ վերցուց հեռագիրը, բայց բավական երկար տևեց, մինչև որ բանին էությունը հասկնալ կրցավ և ավելի ևս մեծ ապշությամբ բացականչեց.

— Մո՞ւշ։

— Այո՛, Մո՛ւշ։ Կկանչեն։ Ես որոշեցի իսկույն մեկնիմ։ Շատ ուրախ կըլլամ, որ նորեն միասին աշխատինք, բայց եթե կգերադասես Պոլիս մնալ...

— Բայց դո՛ւն էիր, որ գոնե տարի մըն ալ Պոլիս մնալ կուզեիր։

— Շիտա՛կ է, բայց այս հեռագիրը ամեն բան փոխեց,— պատասխանեց Բագրատ հեռագիրը նորեն ծոցը դնելով։

— Ուրեմն՝ Մո՞ւշ,— հարցուց Գևորգ թերահավատ։

— Հայրենի հողը կկանչե մեզի, Գևո՛րգ,— ըսավ Բագրատ արտասովոր լուրջ ու խորհրդավոր շեշտով մը։

Գևորգի ապշությունը գագաթնակետին հասավ։ Եվ ավելի ինքն իրեն, քան ընկերոջն էր, որ ըսավ.

— Այո՛, այս հեռագիրը քեզի բոլորովին փոխեր է։

— Իսկ քեզի՞։

— Դուն ուր, ես ալ հոն։ Ե՞րբ կմեկնինք։

— Ես քանի մը օրեն։ Դուն դեռ ամիս-ամիսուկես կուշանաս, մինչև ես հաստատիմ ու քեզի հրավիրել տամ։

— Է՜, բարի՛ ճանապարհ,— բացականչեց Գևորգ բարձր տրամադրությամբ ու լեցուց գարեջուրին բաժակները մինչև շրթունքը։

Վերցուց իր բաժակը և հետզհետե ավելի ու ավելի ոգևորվելով ու հափշտակված վրա տվավ՝ շիփ-շիտակ նստած աթոռին վրա.

— Ուրեմն՝ հայրենի՞ք, Բագրա՛տ։ Աս ի՜նչ անսպասելի բան եղավ, աս ի՜նչ ազվոր բան եղավ, աս ի՜նչ սքանչելի բան եղավ։ Բնավ միտքես չէր անցներ, ուրեմն շուտով՝ Կարի՞ն, Մո՞ւշ։ Աս ինչ ուրախություն լեցվեցավ հոգիս, Բագրա՛տ։— Աչքերը լեցվեցան արցունքով և վերին աստիճանի հմայված շեշտով մըն էր, որ կրկնեց,— այո, հայրենի հողը կկանչե, կզգամ հիմա ես ալ՝ հայրենի հողը կկանչե։

— Մեր դժբախտ հայրենիքի ազատության կենացը, Գևո՛րգ։

— Ախ, պիտի գա՞ այդ օրը։

Բաժակները զարկին իրարու, խմեցին, դրին վար, և դեմ-դիմաց նըստած էին երկու ընկերները ընթրիքի դեռ պարապ սեղանին երկու կողմը և լուռ էին բավական երկար, աչքերը ծավուն, միտքերը հեռուն։



## ԺԸ

Հաջորդ օրը տունը արդեն գիտեին Գևորգեն, որ շաբաթ մը ետքը հինգշաբթի օրվան շոգենավով Բագրատ կմեկներ Տրապիզոն։

Նախ զարմացան ու հավատալ չուզեցին։

— Կատակ է,— ըսավ տիկինը։

Սակայն երբ հարցը լրջացավ, բոլորն ալ դժգոհ մնացին։

— Անխելք բան է ատիկա, ի՞նչ գործ ունի այդ վայրենի լեռներուն մեջ,— բացականչեց Էլենին։

— Պարզապես երիտասարդություն է, դեռ տղա եք,— բացատրեց տիկինը։— Ինչու կձգե Պոլսի պես տեղը ու հանգիստ կյանքը. և հոս ստակ ալ կարելի է շահիլ։

Լուռ էին Օկյուստան ու Լուսիկը։

Օկյուստան տխրեց ներսեն, բայց ոչինչ չըսավ և տեսակ մը զարմանքով կլսեր այդ անսպասելի լուրն ու դատումները։

Լուսիկ առանց որևէ նկատողություն ընելու սովորականին պես առանձնացավ իր սենյակը և սովորական ատենին նոթաներուն տետրակը թևին տակ ելավ գնաց իր դասին։

Զարմանալի հանգիստ կերպով տվավ իր դասը, նույնիսկ իր սովորական ջղայնությունը պակսած էր այսօր կարծես. մեծ համբերությամբ կուղղեր իր աշակերտուհիին սխալները և կկրկներ արդեն քանի՜-քանի՜ անգամ կրկնածները։

Մտածել չէր ուզեր, կարծես բանի մը կսպասեր, կզգար միայն քարացած կծկում մը իր հոգիին մեջ։

Այդ քարացումով ալ դուրս եկավ իր դասեն և սկսավ իջնել սանդուղները, բայց հազիվ ոտքը դուրս էր դրեր տան սեմեն, որ զգաց հանկարծ սրտին ուժեղ սեղմվիլը, և արյունը դեմքը զարկավ. քիչ էր մնացեր, որ վար իյնար, եթե դռան չկռթներ։

Դեմը, ցուցափեղկի մը առջև, կեցած էր Բագրատ։ Պարզ էր, որ իրեն կսպասեր։

Մոտեցան իրարու ճիշտ փողոցին մեջտեղը։

— Հոսկե շատ մոտիկ է Պո-մոնտի կազինոն, որուն պարտեզը դուն կսիրես,— ըսավ Բագրատ իբրև հարցում։

— Կարգադրողը դուն ես, ինչպես որ կհաճիս,— պատասխանեց Լուսիկ զգոնությամբ։

Եվ լուռ քով-քովի անցան փողոց մը և մտան պարտեզը, որ օրվան այդ աշխատանքի ժամին բոլորովին պարապ էր գրեթե։

Բագրատ առաջնորդեց աղջիկը ծաղկի թաղարներով և կանաչ ցան-

ցով իրարմե անջատված բաժանմունքներեն մեկը, որ բարձրեն կնայեր ծովուն ու դեմի ասիական լեռներուն։

Լուռ նստած էին երկուքն ալ կանաչ ու կլոր տեղանի մը առջևը սեղմված կոկորդներով, մինչև որ սպասավորը խմիչքը բերավ ու հեռացավ։

— Չգիտեմ, Լուի՛զ, ինչպե՞ս ըսեմ և ինչպե՞ս վարվիմ, որ հնարեղածին չափ նվազ ցավ պատճառեմ քու այդ խորունկ ու ազնիվ սրտիդ։

— Դուն հաճոյախոսություններու բարեկամ չես եղած երբեք, այդպես ալ մնացիր,— պատասխանեց աղջիկը կտրուկ։

— Հաճոյախոսություն չէ ըրածս։ Սրտիս խորքեն կխոսիմ ու խորապես կտառապիմ։

— Ի՞նչ է պատահած քեզի, պիտի հասկնա՞մ վերջապես։

— Քանի մը օրեն պետք է հեռանամ Պոլսեն, կանչված եմ պաշտոնի։

— Ատիկա առտուն իմացանք Գևորգեն։ Բայց ի՞նչ կարիք ունեիր այդքան հեռուները, հոս աշխատա՞նք է պակաս։

— Հայրենիքս է, պարտական եմ հոն աշխատելու. Պոլիսը օտար քաղաք մըն է վերջապես։

— Այո՛, կհասկնամ, ինչպես որ ես ալ օտար աղջիկ մը։

— Լուի՛զ,— բացականչեց տղան խորին ցավով. կարծես դպեր էին իր բաց վերքին։

— Խոստովանե՛, որ ինծմե կփախչես,— ընդգծեց աղջիկը ներքին վստահությամբ։

— Հոգիս միայն քեզի հետ ըլլալ կուզե։

— Բայց կին ունիս ուրիշ տեղ մը, կամ նշանած։

— Ո՛չ մեկը և ո՛չ մյուսը։ Այդ տեսակ բան մը, որ ըլլար, առաջին օրեն ըսած կըլլայի քեզի, դուն ինծի ինչի՞ տեղ կդնես։ Իմ առաջին ու միակ սերս դուն ես եղած։

— Այն ատեն... այն ատեն մի՛ գնար, մի գնա՛ր,— շշնջացին շրթունքները, և Լուիզ բռնեց տղուն ձեռքը, սկսավ սեղմել, և աչքերը լեցվեցան իր կամքին հակառակ։

Տղան պատասխանեց թեթև մը ձեռքի սեղմումին և ըսավ խորին տխրությամբ։

— Երթալս անխուսափելի է և արդեն խոսք եմ տված ու պայմանավորված, և ճիշտ ատոր համար է, որ այս երկու շաբաթը պատռած է հոգիս, և չգիտեմ ինչ ընեմ, որ քու հոգիդ ալ չփեթթեմ։

— Երկու շաբա՞թ։ Գիտե՛մ, այն իրիկունը, այն տոմսակը ստացած



վայրկյանեդ, հոգիս զգաց իսկույն, բնազդս ըսավ, որ ձախ բան մը պատահի պիտի։

Տղան զարմանքով նայեցավ աղջկա աչքերուն և քիչ մը վերջը ավելցուց.

— Վե՛րջապես, անկարելին ուզել չենք կրնար։ Ահա՛ խորտակված սրտով բերեր եմ քեզի հոս քեզմե հրաժեշտ առնելու։

Աղջիկը հանկարծ նստած տեղը ետ քաշվեցավ, գլուխը բարձրացուց և ջղայնորեն սկսավ ձեռնոցները հանել։ Բան մը ըսել կուզեր, որ լեզուն կդժվարանար արտահայտելու։ Վերջապես հաղթեց կանայի լեզվին ու ըսավ.

— Ես կճանչնամ քեզի. կըսես անկարելի է, ուրեմն անկարելի է։ Աղե՛կ, այն ատեն երթանք միասին, ինծի ալ հետդ տա՛ր։

Տղուն տիրեց սարսափելի հուզում մը. դեմքը կծկվեցավ ցավեն ու սկսավ դողալ։

Լուիզ վախով ու ապշած նայեցավ անոր.

— Բագրա՛տ, Բագրատ, ի՞նչ ունիս։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ։ Այդ միևնույն մտածումը, այդ միևնույն ցանկությունը երկու շաբաթ է կպտտեցնեմ հոգիիս մեջ։ Բայց Լուի՛զ, ատիկա բոլորովի՛ն անկարելի է։

— Եվ ինչու՞ համար։

— Նախ քեզի համար. մայրդ քեզմե բաժնվիլ չի կրնար, իսկ ան կապված է Պոլսին, և քեզի ալ վերջապես իրավունք չունիմ քաշելու գավառի մը մեկ խեղճ անկյունը և զրկել քեզի քու բոլոր կապերեդ, հարմարություններեդ ու արվեստիդ պահանջներեն։ Բոլորովին օտար պայմաններու մեջ և օտար ժողովրդի. իրավունք չունիմ։

— Աղե՛կ, ատիկա նախ, իսկ երկրո՞րդը։

— Երկրորդ... երկրորդն ալ ան, որ ես ամուսնանալ չեմ կրնար, կուզեմ ազատ մնալ։

— Մնացած բոլոր խոսածներդ ավելորդ էին. հոսկե պետք է ըսկսեիր,— ըսավ աղջիկը վճռապես։— Ո՛չ, դուն ինծի երբեք չես սիրած, դեպի քեզ ունեցած թուլութենես օգտվեցար ու հետս խաղացիր։

Բագրատ կախեց գլուխը և իր տված պատասխանը հնչեց շատ խոնարհ և հուսահատ և աղերսական։

— Չեմ զարմանար, դուն իրավունք ունիս ամեն մեղադրանքի. ես գուցե այսպես հախուռն վարվելու չէի, կարելի է տկար գտնվեցա քու հմայքիդ դեմը և հեռուն չմտածեցի, մինչդեռ պետք է մտածած ըլլայի։ Բայց Լուի՛զ, ես վատ մը չեմ, ես սիրած եմ քեզի, ես կսիրեմ քեզի։

— Եթե կսիրես՝ մի՛ երթար,— առարկեց աղջիկը խիստ ու պահանջկոտ շեշտով մը։

— Չեմ կրնար։

— Տա՛ր ինծի ալ քեզի հետ,— կրկնեց աղջիկը հրամայաբար։

— Ո՛չ,— ըսավ տղան նմանապես վճռական։

Եվ երկուքն ալ ըմբռնեցին, որ ամեն ինչ վերջացած է։

Աղջիկը զարմանալի հանգստությամբ մը ելավ ոտքի, վերցուց սեղանին նետած ձեռնոցը և ավելի ևս մեծ հանգստությամբ մը ըսավ.

— Դուն ո՛չ միայն վատ մը չես, այլ բացառիկ մաքուր ու շիտակ տղա մըն ես, և ես հպարտ եմ քեզի սիրած ըլլալուս համար։ Երթաս բարո՛վ, քանի որ երթալ կուզես և կուզես առանձին ըլլալ։ Ներե՛ ինծի, որ քեզի իզուր վիրավորեցի և ներե՛ ինծի, որ հեռանամ։

Եվ դարձավ դեպի ելքը։

— Լուի՛զ, կեցի՛ր, ու՞ր կերթաս։

— Այլևս պետք չունիս ինծմով հետաքրքրվելու։

— Այո՛, բայց... կեցիր երթանք միասին։

— Ո՛չ։ Ես կխնդրեմ՝ չհետևիս ինծի։

Ելավ կանաչ առանձնարանեն և սրճարանի սեղաններուն մեջեն արագ սպրդեցավ պարտեզեն դուրս։

Բագրատ աղջկա հրամանին հնազանդ՝ տեղեն չերերաց։ Եվ ո՞ւր երթար, ինչու՞ երթար, ի՞նչ իմաստ։ Վերջացած էր իրենց պատմությունը, և խզված էին կապող թելերը։

Թևերը դրավ սեղանին գարեջուրի ափսեին քովիկը և գլուխը կամաց-կամաց իջավ թևերուն վրա։

Կարծես լալ կուզեր, բայց չուներ ո՛չ մեկ արցունք։ Չորցեր էր ինչպես հոգին, այնպես և արցունքը։

Քո՞ւն էր, թե՝ արթուն՝ ինքն ալ չէր գիտեր, և որքա՞ն տևեց այդ վիճակը՝ ան ալ չգիտեր։ Հանկարծ կանաչ ցանկին ետևեն անցավ սրճարանի սպասավորը ձեռքի բաժակներուն ժխորովը։ Բագրատ կիսասթափ բարձրացուց վերջապես գլուխը. ո՛չ մասնավոր հուզում մը ուներ մեջը և ո՛չ ցավ, միայն կրծքին տակ սարսափելի պարապ մը կըզգար։ Կարծես պարպվեր էր ներքին բոլոր գործարաններեն։

Նայեցավ շուրջը. խմիչքի ափսեն երկու բաժակով և ձեռք չդպած շիշը մեջը, շուրջը կանաչ առանձնարանը, որու անցքեն կերևային սրճարանի քանի մը պարապ սեղանները։ Այս բոլորը իրեն բան մը կըհիշեցներ. ասոր նման տեղ մը եղած էր կարծես, նման վիճակով։ Ո՞ւր էր ատիկա։

Եվ իր հիշողության դեմ, կարծես թանձր մշուշի մը մեջեն սկսավ



կամաց-կամաց վեր բարձրանալ ու հստակիլ ամբողջ պատկեր մը. խոնավ զարնան իրիկուն մը, սրճարանի մը պարտեզը ավելի հինկեկ, անտերև թուփերու ետև անկյուն մը ու սեղան մը մեջտեղը, նորեն գարեջուրի շիշը և երկու բաժակ, և երկու հոգի գրկված, սեղմված իրարու՝ ինքը և Էլենին։

Նախ կարծես օտար պատկերի մը կնայեր, որուն իսկույն հաջորդեց ուրիշ պատկեր մը՝ Լուիզը, ինչպես որ կեցած էր իր դեմը քիչ մը առաջ՝ ցաված, ցնցված, հպարտ ու պահանջկոտ։ Զարմա՜նք. երկուքն ալ կարծես պարզ նկարված պատկերներ ըլլային, որոնք սակայն շուտով սկսան իրար խառնվիլ, իրարու կապվիլ և որոնց միացումեն տղու գլխուն մեջ ծագում առավ նախապաշարում մը.

«Այս մեկը իմ պատիժս է այն մյուսի հետ ունեցած վարմունքիս փոխարեն»։

Բայց իսկույն ինքն ալ ըմբոստացավ իր «սնոտի» մտածումին դեմ։ Ի՞նչ կապ այդ երկուքին մեջ։ Բայց նմանություն մը կար. երկուքն ալ ընդհատված էին հազիվ սկսված, երկուքն ալ վիշտ էին բերած ու զղջում։

«Սերը երևի ինծի համար չէ, ինչ ձևով ալ որ վերցնեմ»,— եզրակացուց վերջապես, ելավ ոտքի, չխմված գարեջուրին գինը նետեց ափսեի մեջ և դանդաղ քայլերով անցավ սեղաններուն մեջեն դեպի պարտեզին դուռը, ճիշտ նույն ուղեգիծով, որով անցած էր Լուիզ իրմեն առաջ։

Ո՛չ այդ իրիկունը և ո՛չ ալ հաջորդ երեք օրերը ալ Լուիզը չտեսավ։

Աղջիկը միշտ դուրսն էր։ Տնեցիք ըսին, որ մեկ-երկու ընկերներու հետ դաշնակի փորձեր կըներ անոնցմե մեկուն տունը։ Նվագահանդես մը պիտի մասնակցեին ու կպատրաստվեին։ Գիշերներն ալ սենյակեն դուրս չէր գար։

Բագրատ ինքն ալ տունեն խույս կուտար։ Շատ զբաղված էր հազար բանով և տուն կվերադառնար շատ ուշ։ Հաճախ Սարգիսի հետ գիշեր մը անոր տունը մնաց։ Մինչև կեսգիշեր գլուխ-գլխի կխոսեին ու կծրագրեին, որ բոլոր դուրսեցիները հետզհետե խմբվեին հայրենիք։

Պառկեցան միևնույն սենյակը, և լույսը մարելեն վերջը անկողիններուն մեջ դեռ երկար-երկար կխոսեին ապագային, հայ ժողովուրդին սթափումեն, հեղափոխական շարժումներու ստանալիք անխուսափելի ընթացքեն։

Երեքշաբթի առտու Բագրատ գնեց իր շոգենավին տոմսակը։ Երեք օրեն մեկնելու էր։ Եվ ուղիղ չորս օր էր, որ Լուիզը չէր տեսած իրենց սրճարանի բաժանումեն ի վեր, և սաստիկ կարոտ մը կհուզեր տղու հոգին իր բազմատեսակ զբաղումներուն ու մտածումներուն ընդմեջեն։

Տոմսակը գնելէն ետքը գործերը դիտմամբ այնպես դասավորեց, որ իրիկվան դեմ կանուխ տուն գտնվի և Լուիզին անպատճառ հանդպի։

Ինքն ալ գիտեր, որ ավելորդ ու անպտուղ բան մըն էր իր այդ բուռն ցանկությունը, որ իրենց հանդիպումը ո՛չ մեղմացում էր բերելու վերքերուն, ո՛չ ալ որևէ մխիթարանք, բայց և այնպես տեսնելու, նայելու, անոր ձայնը լսելու խորին պահանջ մը ուներ։

«Չորս օր է չեմ տեսած». կկրկներ մտովի, իբրև անառարկելի բացատրություն իր զգացած ծարավին։

Երբ իրենց տան դռան զանգը քաշեց՝ սիրտը կդողար։ Դուռը բացվելու ուշացավ։ Տղան արդեն բանալի հանել կուզեր, որ ներսեն քայլեր լսվեցան։ Օկյուստայի արագ քալվածքն էր՝ ճանչցավ։

— Լուիզը ձեզի շատ-շատ բարև ըրավ, պարո՛ն Բագրատ,— ըսավ պզտիկը դուռը գոցվելուն պես։

Տղան ցնցում մը ունեցավ։

Իսկույն դուրս եկան տիկինը և Էլենին։

Մայրը բացատրեց, որ առտուն եկեր էր Լուիզի մեկ մտերիմ ընկերուհին, որ Թարապիա կապրի, «ուր հրաշալի վիլլա մը ունին ծովուն վրա» և շատ խնդրեր էր, որ երկու շաբաթ Լուիզը իրենց տուն տանի։

— Նախ դժվարացա համաձայնությունս տալու. շիտակը աղջիկներս միշտ քովս կուզեմ, բայց շատ խնդրեց, կըսեր, որ վաղը չէ մյուս օրը իր քսանհինգ տարին պիտի լրանա։ Մտածեցի՝ վերջապես Լուիզն ալ մեղք է, այս ձմեռ շատ հոգնեցավ, թող քանի մը օր հանգստանա։

— Լուիզը շատ խնդրեց,— վրա բերավ Էլենին,— որ ձեզի իր կողմեն երթաք բարով ըսեմ ու բարի ճանապարհ ցանկամ։

— Անշուշտ ներող կըլլաք, պարո՛ն Բագրատ, որ ինքը անձամբ բարի ճանապարհ մաղթել չկրցավ,— ավելցուց տիկինը։

Բագրատ հասկցավ, որ Լուիզ փախեր էր և այլևս իր երեսը տեսնել չէր ուզեր։

Շատ անախորժ խայթ մը զգաց, վիրավորանքի, արհամարհանքի նման զգացում մը, թեև պատասխանեց շատ սիրալիր շեշտով մը.

— Անշուշտ, շատ կցավիմ, որ անձամբ հրաժեշտ առնել պիտի չկրնամ օրիորդ Լուիզեն, բայց ներելու ոչինչ չկա, տիկի՛ն, ուրախ եմ, որ օրիորդը իր ընկերներուն հետ է ու կհանգստանա։

— Այո, այսպես պատահեցավ,— վրա բերավ տիկինը շատ անկեղծ դժգոհությամբ մը,— ինծի որ մնար՝ չէի ուզեր։ Լավ էր, որ ձեր մեկնումին օրերը բոլորս միասին ըլլայինք։

— Շատ շնորհակալ եմ, տիկի՛ն, բայց խնդիր չէ։

Երբ տղան մտավ իրենց սենյակը և դուռը ետևեն գոցեց՝ մեկ զգա-



ցում մը միայն գրկած էր իր ամբողջ էությունը. այլևս Լուիզը տեսնելու չէր, երբե՛ք, երբե՛ք։

Առաջին վայրկյանին անկարելի թվեցավ իրեն ատոր հնարավորությունը։ Որոշեց հաջորդ առտուն կանուխ երթա Թարապիա։ Սակայն ասիկա որոշում մըն էր, որոնք կծնին, կապրին ու կմեռնին հոգիներուն խորքը, բայց իրականության և կյանքի լույսին չեն դիմանար։

Ինչու՞ երթար, ի՞նչ ըսելու և ի՞նչ իմաստ։ Չէ՞ որ ինքը երկու օրեն ձգեր, երթար պիտի և ալ երբեք իրար չէին տեսնելու։ Երկու օր ավելի ուշ, թե երկու օր ավելի կանուխ՝ ի՞նչ կարևորություն ուներ։

Եվ կեցած իր պատուհանին առջևը, աչքերը հառած հեռավոր տան մը ծխնելույզեն բարձրացող բարակ մուխին, կամաց-կամաց եկավ այն համոզումին, որ Լուիզի վարմունքը ամենեն շիտակն էր, ամենեն առողջըն ու կտրուկը, առանց որևէ ծեքծեքումի։ Եվ շատ ավելի արժանավոր ու հարգելի, քան իր այրող կարոտը, քան իր այս բոլորովին արդեն ուշացած զգացումներն ու հուզումները անտեղի։

Այս եզրակացությամբ ետ քաշվիլ կուզեր պատուհանեն, երբ տեսավ իր քովը, քիչ մը ետևը կեցած էր Էլենին ու տարօրինակ ժպիտ մը շրթունքին իրեն կնայեր։

Զարմանքի ու հարցումի նայվածք մը նետեց աղջկան աչքերուն։

— Ի՞նչ կխորհիք այդպես պատուհանին առջևը,— ըսավ աղջիկը տեսակ մը հաղթական շեշտով։

— Ի՞նչ կուզես, Էլենի,— վրա բերավ տղան մտերիմ խռովածքով մը։

— Ոչինչ չեմ ուզեր։ Ես երկար ժամանակ այնպես էի համոզված, որ դուք Լուիզը կսիրեիք և ատոր համար ինծի հետ ուրիշ կերպ վարվեցաք։ Ես այդպես կկարծեի, բայց հիմա կտեսնեմ, որ սխալված եմ. դուք Լուիզն ալ չեք սիրած, թեև Լուիզը կսիրե ձեզի։

— Ինչե՞ր կխոսիս, աղջի՛կ, խելքի՞դ եկավ։

— Ո՛չ, ո՛չ, ես աչքեր ունիմ, կզգամ ու կտեսնեմ։ Ատիկա դուն ես միայն, որ ո՛չ աչք ունիս, ո՛չ սիրտ. դեմդ ով կուզե ըլլա՝ ե՞ս, թե ուրիշ մը։ Եվ լավ է, այսպես ավելի լավ է ինծի համար։ Ես Լուիզը շատ կսիրեմ, չէի ուզենար, որ ան վիշտ ունենար։ Բայց ինչո՞ւ ծածկեմ քեզմե՝ այսօր ես ուրախ եմ։ Գեշ աղջիկ եմ, չէ՞, ըսե՛ք, մի՛ քաշվիք, որ ես ալ ըսեմ ձեզի, թե գեշ տղա եք։

Բագրատ բոլորովին շփոթված էր և չգիտեր ինչ պատասխան տար և իր շփոթությունը ծածկելու համար կատակի տվավ.

— Ա՛յ աղջիկ, գնա՛ գործիդ, թե չէ մազերեդ բռնածիս պես, տե՛ս, բերանը բաց պայուսակս կկոխեմ քեզի։

Եվ դեպի աղջիկը երթալով՝ ձեռքը դրավ անոր ուսին և կես մը կատակով, կես մտերիմ ավելցուց.

— Իմ լա՛վ աղջիկս, պարապ բաներ մի՛ խոսիր ու գնա՛ բանիդ։

— Կերթամ,— ըսավ աղջիկը ինքն իր համոզումին մեջ ամուր,— հանգի՛ստ եղիր, մինչև հիմա ո՛չ քեզի և ո՛չ Լուսիգին որևէ անախորժություն չեմ պատճառած կարծեմ։

Ու կատվի քայլերով քաշվեցավ սենյակեն։

## Լ

Արևը Ղալաթիայի մինարեներուն ետևեն դեղնություն մը կթափեր Վոսփորի ջրերուն վրա, ուր շոգենավ, առագաստանավեր, նավ ու նավակներ, բոլորը խառնվեր էին իրար։ Մեծ իրարանցում ու կյանք կար ծովուն վրա՝ Ոսկեղջյուրին բերանը։

Այդ միջոցին էր, որ մեծկակ մակույկ մը Ղալաթիայի մաքսատան առջևեն բաժնվելով՝ սկսավ բացվիլ։

Բագրատ նստած էր Էլենիի ու Օկյուստային մեջտեղը և վերջինի ձեռնոցապատ փոքրիկ թաթիկները իրեններուն մեջ կշոյեր ու հազիվ կըպատասխաներ իրեն եղած հարցումներուն։

Բոլորովին դժգունած էր։

Ամենեն շատ խոսողը Սարգիսն էր, որ անդադար կկատակեր իր բարձր ու անհոգ շեշտերովը ու չէր թողներ այդ տեսակ վայրկյաններուն հատուկ եղող ծանր լռության մը տիրելուն։

— Վասակը դեռ չեկավ,— նկատեց Գևորգ, որ նստած էր տիկնոջ հետ Բագրատին դեմը։

— Երևի արդեն շոգենավն է,— պատասխանեց Էլենին։

— Հիանալի օդ է, աղվոր ճամփորդություն մը պիտի ընենք,— ըսավ տիկինը։

— Ես ալ հետերնիդ ըլլայի՜,— բացականչեց Օկյուստան։

— Մայրիկեդ հրաման ա՛ռ, տանիմ,— ժպտեցավ Բագրատ գըրկելով։

Մակույկը մոտեցավ նոր ու մեծ շոգենավի մը։ Նավավարը քիչ մը սպասեց ու հայհոյեց իր արհեստակիցներուն հետ ճամփա բանալու համար խռնված նավակներուն մեջեն ու վերջապես մոտեցավ շոգենավի կողեն կախված նեղ սանդուղին։

Մեկիկ-մեկիկ սկսան վեր ելլել օրորվող սանդուղին հենարանեն պինդ բռնած։



Կիներեն վերջը առաջին բարձրացողը եղավ Բագրատ։ Հազիվ էր ոտքը սանդուղին գլուխը դրեր՝ որ շրջապատվեցավ խումբ մը հայրենակիցներով, որոնք ճամփու դնելու էին եկեր։

Ատոնցմե մեկը թուղթի կտոր մը դրավ Բագրատին ձեռքը։ Տղան ցրված հետաքրքրությամբ մը բացավ ծալծլված թուղթը և քիչ մը մարդոց հոսանքեն մեկդի քաշվելով՝ կարդաց մատիտով արագ գրված հետևյալ տողերը.

«Իմ հիմար, ազնիվ տղաս,

Դուն արևելք, ես արևմուտք։ Այս առտու հորմես ստացա սպասած նամակս և դրամ։ Անչափ ուրախ է Ֆրանսա երթալուս։ Այս գիշերվան ճեպընթացով կմեկնիմ Փարիզ, հոնկե ալ՝ ուր որ պետք է։ Հիմա անցագրիս վավերացման խնդրովն եմ զբաղված՝ շոգենավ գալ չեմ կրնար։ Ուրեմն ցտեսություն իմ ագարակս ու իմ կովերուս քովը։ Իր բոլոր ուժովը կգրկե քեզի՝ ուրիշ ապուշ մը»։

Բագրատ վայրկյան մը անշարժ մնաց՝ քարացած ժպիտ մը շրթունքին։

— Ի՞նչ բան է,— հարցուցին ընկերները մոտենալով։

— Այս իրիկուն ճամփա դնելու մարդ մըն ալ ավելցավ ձեզի,— պատասխանեց Բագրատ խնդալով։

— Գրավ կուգամ, որ Վասակն է,— ըսավ Սարգիս։— Արդեն վերջին օրերը շատ էր խորհրդավոր։

Բագրատ նամակը տվավ անոր, որ կարդա, և ինքը կանանց ետևեն շտապեց վարի սրահն ու խցիկները։

Նավավարները արդեն փոխադրած էին տղու պայուսակներն ու մյուս իրերը անոր փոքրիկ, կոկիկ ու մաքուր խցիկը։

Պատի նեղ սեղանին ու մահճակալին վրա շուտով դիզվեցան ընկերներու ու տնեցիներու կողմե բերված տուփերը, կողովիկ մը և զանազան գույնի ու ձևի թղթերու մեջ փաթթված բաներ։

— Է՜, անոթի չես մնար,— խնդաց Գևորգ։

Նեղ խցիկին մեջ ամենքը բան մը կընեին, խորհուրդ մը կուտային։ Միայն Բագրատ էր, որ նստեր էր կրկին երկու աղջիկներուն մեջ և շարունակ Օկյուստային մազերը կշոյեր ակնհայտնի տխրությամբ։

— Ի՞նչ աղջիկներուն փաթթվեր մնացեր ես,— ըսավ Սարգիս խընդալով անոր տրամադրությունը փոխելու համար։— Ամբողջ տարին խելքդ ո՞ւր էր։

Բագրատ ցավագին ժպիտ մը միայն ունեցավ։

Շոգենավը տուլեց երկրորդ անգամ, ու ամենուն սիրտը ավելի արագ տրոփել սկսավ։

— Կարծեմ ալ վեր ելլենք,— ըսաւ տիկինը հանդիսավոր։

Ելան ամենքը նավուն տախտակամածը։

Սոսկալի իրարանցում էր հոն. բեռ, ապրանք, մարդիկ, բոլորը իրար խառնված։ Շատերը կբաժնվեին, կհամբուրվեին։ Լաց, ծիծաղ, պատվերներ ու վերջին հանձնարարություններ։

Ահագին բազմություն սանդուղին գլուխը խռնված՝ իջնելու կարգին կսպասեին։

— Թող ես բանամ պաշիկներուն դուռը,— ըսաւ Սարգիս ու փաթըթվեցավ Բագրատին։

— Ուրեմն, ցտեսություն,— ըսաւ Գևորգ համբուրվելով։

Բագրատ մոտեցավ տիկնոջ, ծռեցավ ձեռքը համբուրելու շարժումով մը, բայց տիկինը ինքը գրկեց տղուն գլուխը ու համբուրեց։

— Քեզի կցանկամ բախտավորություն,— ըսաւ Բագրատ Էլենիի ձեռքը իր երկու ձեռքերուն մեջ ամուր սեղմելով։

Օկյուստան կախվեցավ տղու վիզեն և ալ ձգել չէր ուզեր. բռնի հեռացուցին, և աղջիկը սկսավ սոսկալի կերպով հեծկլտալ։

Տիկինն ալ վարակվեցավ և ըսաւ աչքերը սրբելով։

— Այսպես է կյանքը. ծով մըն է, ալիքները կզարնեն ու կմոտեցնեն մարդիկը իրարու, կուգան նորեն ալիքները, կզարնեն ու կզատեն մարդիկները իրարմե։

Այս փիլիսոփայությամբ ալ ուղղվեցավ խումբը դեպի սանդուղին էջքը, մինչ Բագրատ հրաժեշտ կառներ իր մյուս բարեկամներեն ու հայրենակիցներեն։

Էլենին ասդին-անդին դիտելով քիչ-քիչ ետ մնաց և ձգեց, որ բոլոր ընկերներն ու իրենները իրմե առաջ անցնին։

Ու երբ վստահեցավ, որ ամենքը երկար ու նեղ շարժական սանդուղին վրա էին և իրենց բոլոր ճարպիկությունն ու զգուշությունը իրենց ձեռքերուն ու ոտքերուն վրա կեդրոնացուցած անվտանգ վար իջնելու կաշխատեին, հանկարծ ետ դարձավ ու շիտակ մոտեցավ մեկուսի կեցած Բագրատին։

— Ես այս կերպով քեզմե բաժնվիլ չեմ կրնար,— ըսաւ արագ ու սաստիկ հուզված ու արցունքոտ աչքերով,— ես քեզի սիրեր եմ միշտ, և վերջապես իրավունք մը ունիմ կարծեմ,— ավելցուց արցունքներուն մեջեն ժպտելով։

Բագրատ այն զգացումը ունեցավ, որ կարծես իր հոգիին մեջ հանկարծ պատ մը փլվավ։ Դժվար զսպվող փղձուկ մը խեղդեց կոկորդը և ցավի, կարոտի ու խղճահարության բուռն շարժումով մը և իր բոլոր



ուժովը քաշեց աղջիկը կրծքին, և նույն հին, երկար համբույրովը շըրթունքները նորեն գտան իրար։

Էլենին տղու թևերեն ազատվելուն պես նայեցավ շեշտակի անոր աչքերուն և արցունքի ու ծիծաղի մեջեն կրկնեց շտապով.

— Երթա՛ս բարով, երթա՛ս բարով, հիշե՛ երբեմն ինծի։

— Դո՛ւն ալ, դո՛ւն ալ,— կրկնեց Բագրատ մեծ հուզումով։

Էլենին վազեց սանդուղը, բազմության մեջեն վար շտապեց և ցատկեց մակույկին մեջ գանգատելով հրմշտուքեն։

Եվ մակույկը բացվեցավ։

Մեքենան սկսեր էր ահագին աղմուկով խարիսխը քաշելու։

Բագրատ սանդուղեն ոչ շատ հեռու ինկավ նավու եզերքին վրա և ծանր ու աղի արցունքները հոսիլ սկսան։

Ինքն ալ չգիտեր, թե ինչու՞ կուլար և ինչի՞ վրա։ Իր հոգիին մեջ խորունկ ու ցավագին կարեկցություն մը միայն կզգար։ Ո՞վ կմեղքնար. Էլենի՞ն, որ ահա՛, այն փոքրիկ մակույկին մեջեն թաշկինակ կշարժեր իրեն, փոքրիկ Օկյուստային փոքրիկ սի՞րտը, որ շոգենավեն հեռանալ չէր ուզեր, իր ընկերնե՞րը, որոնց այնքան մոտ էր և որոնց ոչինչ չէր ըսած, թե ինչու՞ կերթար, թե՞ վերջապես կմեղքնար իր Լուիզը, որ ապաստանած օտար տուն մը՝ իրենց սրտերը իրարու զոդող այն նուրբ թելերը փեթռտել կջանար, թե՞ կմեղքնար ինքզինքը, իր ջարդված ու չարչարված հոգին։

Ալ մակույկին մեջ դեմքերը լավ չէր որոշեր. թաշկինակներ կշարժեին, հովանոցներ, ինքն ալ մեքենաբար իր գլխարկը կերերցներ օդին մեջ, մեկ ձեռքով ամուր քովի պարաններեն մեկը բռնած։

Մակույկը մտավ հանկարծ կայմերու անտառի մը ետևը ու աներևույթ եղավ։ Բագրատ քիչ մըն ալ փնտրեց աչքերով, կախեց գլուխը և աչքերը հառեց ջուրին, որ շոգենավի քովեն ետ-ետ կփախչեր։

Դրավ վերջապես գլխարկը և տատամսոտ քայլերը ուղղեց դեպի նավուն ղելքը։ Կռթնեցավ դրոշակի անկյունին ու կսպասեր...

Կուգային ու կանցնեին հետզհետե Վոսփորի գեղեցիկ ափերը իրենց կանաչությամբ, բարձունքներով, գյուղերով ու պալատներով, որ թանձրանալ սկսող մութը հետզհետե իր մեջը կփաթթեր։

Վերջապես կմոտենային Թարապիային։ Բագրատ խենթ հույսով մը ու աչքերը լարած կդիտեր, կփնտրեր ծովեզերքին շենքերը, վիլլաները, գուցե Լուիզը անգամ մըն ալ նշմարեր, Լուի՛զը...

Ո՛չ, ալ տեսնելու չէր։ Փակված էջ մըն էր ինչ որ անցեր էր։

Վոսփորի երկու եզերքները արդեն վայրենացան։ Մութին մեջեն

Միայն թնդանոթներու պահակներուն լույսերը կկայծկլտային, և նեղուցը կլայննար։

Բագրատ, երբ անգամ մըն ալ ուշքի եկավ՝ տեսավ երկու կողմը ալ ցամաք չկար։ Ցամաքը միայն իր դիմացն էր, ուրկե զույգ փարոսներուն լույսերը խավարին մեջեն իրեն կնայեին զայրացկոտ քթթումով մը։

Բագրատ եռ նայեցավ նավուն ուղղությամբը։ Սև ծովն էր, սեփ սև մութին մեջեն։ Եվ ջուրի այդ անեզր տարածության հանդեպ՝ երիտասարդը բնազդորեն խոր շունչ մը առավ։

Շոգենավն ալ կերթար հիմա ազատ, շոգիին բոլոր ուժովը և ուժեն կդողար։ Դող մըն ալ անցավ Բագրատի մարմնեն։

Ծով մըն էր մութ ու անեզր նաև այն ապագան, ուր հիմա կերթար։ Ալեկոծությո՞ւն իր լուռ ու սև երեսին տակ, զսպված մոնչյո՞ւն, տաժանք ու պայքար, գուցե խորտակում ու քայքայում այն գործի, որու իրականացման համար հիմա ինքը կերթար...

Կյանքի նոր էջ մըն էր, որ կբացվեր իր առջևը։

Շոգենավը կդողար։

# ԴԱՐՁ

## Վեպ

### Ա

Ցորեկվան տաքը դեռ կոտրված չէր բոլորովին, ու ձին դժվար ու ծանր կբարձրանար։

Ճամփան պինդ փակած էր ձորի ձախ պատին ու պատին հետ միասին ինքն իր կողին վրա կծռվեր չերքեզի սուրին պես. ու միենույն ժամանակ քիչ-քիչ վեր կսողար, միշտ վեր, ձորի գլատակեն դեպի Խծկոնքի վանքը։

Մինչ ձիավորը քրտինքը սրբելով՝ ճամփու յուրաքանչյուր կոր տալուն՝ ձիուն վրայեն դեպի առաջ կերկարեր կիսանդրին վանքին գըմբեթները նշմարելու հույսով։

Քսան-քսանչորսի մեջ երիտասարդ մըն էր ան. ճերմակ տոքե պարզ հագուստ մը վրան. ճերմակ ալ քաղրոք մը գլխուն, որուն տակեն դուրս կցայտեին գանգուրի մոտեցող սև առատ մազերը, մորուքի տեղ փոքր շեկ փունջ մը ռունչին, ինքը միջահասակ ու նիհար, զույգ մը կենդանի, արտահայտիչ աչքերով, որոնք կսահեին հիմա ձորի երկու վայրի պատերն ի վեր, որոնց վրա երկնքի տաք-կապույտ կտոր մը եկեր իր վրանն էր քաշեր։

Թեթև ոլոր մըն ալ, և վերջապես դեմն էր վանքը. Հինգ մանրանըկար եկեղեցիներ, գրեթե իրարու կից, իրարու թևի տակ, իրենցմե ամենեն մեծի շուրջը խռնված, և ատոնց փոքր ու փոքրիկ գմբեթներու ամբողջ երամը՝ շրջապատող ծառերուն մեջեն վիզերնին վեր երկնցուցած՝ հետաքրքիր նայվածքով եկվորը կդիտեին։

Կարծես լեռնական հսկա ուրուր մը իր ձագերուն հետ, որ ձորի ձախ կուրծքին, հոն, դուրս ցցված ժայռոտ հարթակին վրա դրեր էր իր ամեհի բույնը ծառերու տրցակին մեջ։

Ու շիտակ այդ ամեհի բույնը կմտներ հիմա ձիավորը՝ փնտրող նայվածքը իր չորս դին հածելով։

Եկեղեցիներուն տաքը հին ու ցած պատ մը կերկննար, որուն դռան

առջևը հազիվ էր հասած ձին, երբ գզգզված մազերով երկարահասակ, բոբիկ ու գլխաբաց պատանի մը սեմեն դուրս նետվեցավ։

— Բարև՛, հայր սուրբը վա՞նքն է։

— Հրամանք եմ։

Ու մոտեցավ առավ ձիուն սանձը։

Երիտասարդը ցատկեց թամբեն վար ու մտավ արագ բակը, որու մեկ կողմը խումբի ավագ եկեղեցին էր ,մյուս կողմն ալ մեկ-երկու հինկեկ հողե սենյակներ։

Եվ ճիշտ այդ սենյակներեն մեկու դուռն էր, որ ճռաց հանկարծ իր սռնիներուն վրա ու սեմի շրջանակին մեջ երևցավ պարթև հասակով թիկնեղ ծերուկ մը։ Երբեմն սև, իսկ հիմա դեղինի ու կանանչի տարբեր աստիճանի բոլոր բաղադրիչ երանգները ներկայացնող կապա մը վրան, և խոշոր, կոշտ, գունավոր երեսսրբիչը ձեռքը, որով իր մինչև կուրծքը հասնող ալեխառն մորուքը կշորցներ։

Կեսօրվան քունեն նոր ելած ու դեռ բոլորովին չսթափված ուղեղով կլվացվեր մեքենաբար, երբ իր մենության վարժված ականջը դեռ հեռուեն սմբակներու տրոփը լսեց, և ուխտավորներու հաճելի գաղափարը իր գլուխը վերջնականապես թարմացուց։

Եվ հիմա գոհ ու բարյացակամ դեմքի արտահայտությունով մըն էր, որ իր խուցի սեմեն դուրս ելավ հյուրին դեմ, երբ իր անվան հարցվիլը լսեց։

— Աստված օգնական, հա՛յր սուրբ։

— Աստված օրհնե՛, որդիս։

Երիտասարդը ծռեցավ համբուրեց ծերուկի աջը, ու գրպանեն մեծկակ նամակ մը հանելով տվավ անոր։

Նամակը ըստ երևույթին ախորժելի տպավորություն չըրավ վարդապետին վրա. աջ ու ձախ դարձուց անգամ մը, դրավ մոտակա քարին ու ծանր շարժումով մը հանեց ծոցեն մաշված ու աղտոտ պատյան մը, որուն մեջեն ահագին ապակիներով հին ձևի ակնոցը դուրս քաշեց, ծանր-բարակ սկսավ ականջներուն անցընել։

— Ո՞ւրկե կուգաս հրամանքդ,— հարցուց այդ բարդ ու դժվար աշխատանքի միջոցին։

— Էջմիածնեն, հա՛յր սուրբ, շատ բարևներ ունիմ ձեզի։

— Հը՛մ, շնորհակալ եմ. ըրող, բերող ողջ ըլլան։

Ու դեմքը ավելի խոժոռեցավ. այդ նամակեն լավ հոտ չէր գար։

Վարժ ձեռքով գրված տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերե վերջը՝ նամակը մեկնեց երիտասարդին։



— Մեկ հրամանքդ կարդաս, տեսնենք ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս աղեկ չեն ջոկեր։

Տղան կարդաց. ընդամենը չորս-հինգ տող էր ու թունդ պաշտոնական դարձվածքներով շարադրված։ Երեք վարդապետացուներ քանի մը օր խծկոնք էին մնալու, և Մայր Աթոռի վարչության անունով կհանձնարարվեր, որ հայր սուրբը անոնց ամեն կերպ լավ հյուրասիրություն ցույց տա։

Ծերուկի դեմքը քիչ մը պարզվեցավ. չարիքը իր կարծածին չափ մեծ չէր։

— Ա՞տ է բոլորը,— հարցուց տարակուսանքով։

— Այո՛, հա՛յր սուրբ։

— Տիրացուներեն մեկը դո՞ւն ես։

— Այո՛, վարդապետացուներեն մեկը ես եմ,— սրբագրեց տղան «տիրացու» բառեն շատ չախորժելով։

— Իսկ մյուս տիրացուները ինչո՞ւ ետ մնացին,— շարունակեց վարդապետը կրկին իր ոճովը։

— Անոնք քանի մը օր ավելի ուշ պիտի գան։ Խնդիրն այսպես է. անգամ մը Շիրակը միասին պտույտ տալ ու Անի երթալ էր միտքերնիս, անոնք որոշեցին Կողբի ու Երվանդակերտի վրայով Ախուրյանեն վեր ելլեն, բայց այդ կողմերը ես անգամ մը եղեր եմ, վճռեցինք, որ ես Ալեքսանդրապոլի վրայով հոս գամ ու սպասեմ, վերջը հոսկե միասին երթանք Անի ու Հառիճի վրայով անցնինք Ապարան։

— Բայց Շիրակը պտույտ տալու միտքերնիդ ի՞նչ է,— հարցուց վարդապետը կասկածամտությամբ։

— Ա՛յնպես, շրջիլ անգամ մը։

— Չէ՛, երևի Էջմիածնեն պաշտոն մը կունենաք, հե՞,— ժպտեցավ ծերուկը ձախ աչքը կծկելով։

— Ի՞նչ պաշտոն, հա՛յր սուրբ, մենք դեռ միաբան ալ չենք, դեռ երկու ամիս վերջը պիտի ձեռնադրվինք։ Իսկ Շիրակը պտտիլը, է՛, մեր հայրենիքի հին պատմական կեդրոններեն է, կուզենք ծանոթանանք։

— Հապա՛, նշանավոր վանքեր կան, մեր վանքն ալ շատ հին է ու շատ հայտնի։ Որքա՞ն ժամանակ հոս մնալ է միտքերնիդ։

— Մինչև ընկերներս գան ու հանգստանան քիչ մը, մինչև հոս շուրջը պտտինք, երևի տասը օր կտևե։

— Լա՛վ,— ըրավ վարդապետը կտրած ձայնով մը։

Եվ ակնթարթ մը թավ, ճերմակ ունքերը խաղցնելեն վերջը ավելցուց.

— Միայն թե, որդի՛ս, այս տարվան արտոները այնքան էլ աղեկ

չէն հոս, անասուններն ալ տեսակ մը ինկած են, կաթերնիս ալ քիչ է, ատկէ առաջ ունեցեք, թեև իհարկե Աստծու տվածեն ինչ որ ունիմ, ձեզմե չեմ խնայեր։ Աս ալ կա, որ վզիս արդեն ամբողջ տուն մը հյուր ունիմ, անշուշտ իրենց ուտելիքը իրենք կեփեն, բայց վերջապես...

Եվ չգիտեր ինչպես վերջացնե իր կրած բեռի ծանրությունը հնար եղածին չափ խոշոր ցույց տալու համար, թեև այդ «իր վիզը» ունեցած տունեն ամենեն ավելի ուրախ էր. նախ վստահ էր վերջը մեծկակ դրամական նվեր մը ստանալու, այլև հաճախ կստանար անոնց խոհանոցեն քաղցր կերակուրներ։

— Ի՞նչ հյուրեր են,— հարցուց երիտասարդը։

— Ալեքսանդրապոլե՛ն, ուսումնակա՛ն մարդ է, ոտքի ցավ ունի, եկեր է ծծումբի ջուրը լոգալու, սիրուն կնիկ մը ունի, շատ լավ մարդիկ են, շատ ալ երևելի, լեզուն բերնին մեջ կդառնա, բոլոր օրենքներուն խորը տեղյակ։ Ան որ չըլլար՝ վերի դաշտի արոտատեղին արդեն հիմա ձեռքես խլած կըլլային Սալոյի լամուկները. անցած աշնան էր, դատարանը վերջապես մեր վանքին վրա վավերացուց։ Չէ՛, շատ հայտնի մարդ է, կարելի է լսած ըլլաս՝ Նիկողոս Քանյան։

— Քանյա՞ն, էջմիածին ընկեր մը ունիմ Ալեքսանդրապոլեն՝ Քանյան, կարելի է անոնցմե է, վերջը երթամ տեսնեմ։

— Գնա՛, գնա՛, ուսումնական մարդ է,— վրա տվավ ծերուկը աշխույժ ու գոհ շեշտով մը։

Այս խոսքերուն հետ առաջնորդեց տղան իր խուցին կից ցած տնակ մը ու դուռը ետ հրեց։

Փոքրիկ հողահատակ սենյակ մըն էր, ուր փայտե երկար թախտեն ու փտրփրած հասարակ սեղանե մը զատ ոչինչ չկար։

— Ահա՛ աս ալ քեզի ձեր սենյակը. ես հիմա կերթամ մնացած պետք եղած բաները կուղարկեմ։

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայացք մը ձգեց իր շուրջը այդ գով, հող հոտող ու քիչ մըն ալ փլփլած խրճիթին մեջ և իսկույն մոտեցավ սենյակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կեսը թուղթ էր փակցված։

Հազիվ պատուհանը բացած՝ կանգ առավ հափշտակված։

Սենյակը նստած էր սեպ ու ամեհի ապառաժի շրթունքին ու շիտակ ձորի դատարկության վրա կնայեր։ Հանդիպակաց ձորափին ժայռի ահագին բեկորներ իրենց խոռոչներեն դուրս կնետվեին հոխորտանքով՝ հարու տալու սպառնալիքով մը իրենց մամռոտ գլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ դատարկ սպառնալիքին արդեն շատոնց վարժ-



ված, նույն այդ ժայռերու ոտքին, ցիրցան ծառերու խումբ մը հանգիստ կօրորեին իրենց վերին ճյուղերը՝ վերադարձող ստվերներու զովության մեջ խլրտուն։ Անորժ լռություն մը վերն ու շուրջը, որուն մեջեն ավելի թունդ ու ավելի հստակ շեշտերով կորոշվեր գետակի միապաղաղ ու ճոռոմ մենախոսությունը, որը երբեմն կուլեին ծառերը անոնցմեն՝ ավելի ձանձրույթեն, քան հեգնելու համար։

— Հավնեցա՞ր,— հարցուց վարդապետը ժպտուն։

— Հիանալի՛ է,— բացականչեց տղան աշխույժ ետ դառնալով իր հյուրընկալին։— Այսպե՛ս ձորերուն մեջ, գետին վրա, ժայռերուն դեմ, ջրերու օրորին տակ. չէ, աս ալ ուրիշ բան է, ամբողջովին բնության գիրկը, ճշմարիտ, հա՛յր սուրբ, կնախանձիմ ձեր կյանքին։

— Հը՛մ,— ըրավ վարդապետը անտարբեր շեշտով մը։— Հիմա հանգստացիր քիչ մը, հոգնած կըլլաս, ես ալ անգամ մը ելլեմ վեր, արտը, տեսնեմ շան գյուղացիք ի՞նչ բանի են, մարդ որ աչքը վրանին չպահե՝ վանքը կկողոպտեն ծույլ անպիտանները։

Եվ սեմեն ետ դառնալով՝ պոռաց.

— Գրիգո՛ր, տիրացուին իրեղենները ձիու վրայեն ներս բեր ու ձիուն առջևը դարման նետե։

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանքը ձորի պատերուն մեջ դեռ չկրտված՝ մտավ իր խուցը։

Ասով ալ վերջացավ «տիրացու»-ի պաշտոնական ընդունելությունը։

## Բ

Վանքեն դուրս, վանքեն քիչ մը ավելի բարձր և ըստ երևույթին նոր շինված հյուրասենյակներեն երկու ամենալավերը հատկացված էր Քանյաններուն։

Անբիծ ճերմակ սփռոցով փոքր սեղանին մոտիկ դեմ-դեմի նստած էին պարոն Նիկողոսն ու տիկինը ու պարոնի մոտն ալ՝ նորեկ վարդապետացուն։

Սամավարը ուրախ կշնչեր սեղանին մյուս անկյունը, ու շոգին բաժակներուն վրայեն թեթև-կոր գիծով մը դեպի բաց պատուհանը կծռեր։

Մութը սկսեր էր խտանալ, տիկինը լամպը վառեց։

Երեսունհինգի սահմաններուն վրա լայնաթիկունք, նիհար, երկար մարդ մըն էր պարոնը։ Առատ սև մորուքը՝ վար կախված երկար բեղե-

կան մահվան դեմ բժշկություն չկա։ Կընդունիմ, որ այս կամ այն անհատը իր բնածին տաղանդով կամ իր բնավորության բարձրությամբ օգուտ կրնա տալ նաև իբրև հոգևորական, ինչպես նաև ուրիշ որևէ կոչման մեջ պիտի տար։ Բայց այդ միշտ ալ բացառիկ անհատական ուժերը ինչ ալ որ ըլլան, հոգևորականությունը իբրև ամբողջություն մը առած՝ ապրած է իր ժամանակը։ Անիկա հիմա հետադիմական գործոն մըն է իր էությամբը, որ ո՛չ նորել կարելի է, ո՛չ բարձրացնել։

— Ինչո՞ւ այդպես կկարծեք,— հարցուց երիտասարդը բողոքի շեշտով մը։

Այդ միջոցին՝ արդեն երրորդ անգամ՝ աղջիկը մտավ սենյակ և սամավարեն իրեն բաժակ մը թեյ լեցնելով՝ առանց անոնց խոսակցությունը ընդհատելու կարևորություն տալու՝ դարձավ Քանյանին.

— Լսեցի՞ր, Կոլյա, Գայանեն ծներ է։

— Մի՞թե,— բացականչեց մարդը զարմացած։

— Մարին դեռ քեզի չըսա՞վ, քիչ մը առաջ սայլապանը նամակ բերավ։ Եվ իհարկե նորեն մեռած։ Ամկե ամիս ու կես առաջ, ես դեռ նոր էի եկեր Ալեքսանդրապոլ, որ քիչ էր մնացեր նորեն պիտի վիժեր, արդեն ո՛չ ինքը խելք ունի, ո՛չ մարդը, անոնք զավակ ունենալու չեն, պարապ բան է, թող քան տարի սպասեն։

— Խե՛ղճ կին, աս ալ անոր բախտը,— բացականչեց տիկինը ցավակցաբար։

— Բա՛խտ, ի՞նչ բախտ, ըսե ապուշություն, ըսե տգիտություն,— պատասխանեց Շուշանիկ բարկացած ու նստավ իր թեյի բաժակին առջևը։

Բացավ հետը բերած ռուսերեն ամսագրի մը համարը, դրավ սեղանին և սկսավ թերթել։

Վարդապետացուն տեսակ մը ամչցած ու անհարմար զգացումով կնայեր աղջկան։

«Սա ի՞նչ տեսակի մարդիկ էին»։

— Ի՞նչ կըսեի,— դարձավ Քանյան երիտասարդին։— Հա՛, ըսել կուզեի, որ մեր ժամանակի ձգտումն է արթնցնել մարդկությունը հանդերձյալ կյանքի տափակ երևակայություններեն, բարձրացնել մարդու իր անձին վրա ունեցած ինքնավստահությունը՝ մեկդի նետելով բոլոր գերբնական հավատալիքները, չար ու բարի ոգիները, արքայությունները, փրկությո՛ւն ու հպարտությո՛ւն ներշնչել մարդուն իր ուժերուն ու կարողության վրա, հասկցնե՛լ, որ բնութենեն դուրս ոչինչ չկա, որ մարդն ու ընկերությունն ալ այդ բնության մեկ մասն է։ Եվ հառաջադիմություն, քաղաքակրթություն ըսվածն ալ ուրիշ բան չէ, եթե



ոչ ուսումնասիրել ու իրեն օգտին ծառայեցնել բնությունը. բնությունը, որ մե՛ր մեջն է, բնությունը, որ մեր շո՛ւրջը։ Արդ, բարեկա՛մս, եթե ձեր նոր խմբի փարոզածն ալ աս պիտի ըլլա, այլևս ի՞նչ հոգևորական, ճիշդ եթե նորեն հին ավանդական երգերը պիտի կրկնեք՝ այն ատեն դուք ալ խոչընդոտ մըն եք ժողովուրդի հասունացման։

Միրաքյան գլուխը կախ՝ թեյի գդալին հետ կխաղար։ Տեսակ մը լարում դրոշմված էր իր դեմքին, ու գրավիչ, ազնվական բան մը կար դիմագծերու այդ կծկումին մեջ։

Օրիորդը գիրքը թողած, ճակտին տակեն աղուն կնայեր շեշտակի․ նախ անգիտակից ու մեքենական էր նայվածքը, բայց շուտով սկսավ ուշադրությամբ դիտել այդ նիհար, դժգույն դեմքը ու հանկարծ խղճաց։

«Խե՛ղճ տղա», մտածեց ինքնին ու նորեն կախեց գլուխը գրքին վրա։

— Կչափազանցեք,— ըսավ վերջապես տղան՝ թեթև մը դեմքը դեպի խոսակիցը դարձնելով։— Նախ կմոռնաք մեր արդի պատմական պայմանները. բազմաթիվ հասարակական գործեր կան, որոնք սերտ կապված են հոգևորականության հետ, երկրորդ ալ դուք շատ անիրավ կվարվիք, երբ մտավոր զարգացման տեր ու որոշ ձգտումներով նոր հոգևորականները հիներուն հետ միասին մեկ ջրով լվալ կուզեք։

— Ներեցե՛ք, երիտասա՛րդ բարեկամս, բայց եթե իմ անձնական զգացումս լսել կուզեք, ձեր այդ կրթված կրոնավորները իմ վրաս շատ ավելի անախորժ տպավորություն կընեն, քան գույս հիները։ Կրոնավորությունը հավատքի ու միամիտ զգացումներու վրա միայն կրնա հիմնված ըլլալ. բարձր ուսումնականությունը մեջ եկածին պես կա՛մ կքայքայվի, կա՛մ դեպի ճիզվիտություն կտանի։ Ի դեպ, այդ ճիզվիտական գիծը արդեն սկսած է աչքի իյնալ ձեր կրթվածներուն մեջ. մեկերկուքը ես ալ կճանչնամ։

— Սակայն, Կոլյա, ի՛նչ քաղաքավարություն է ասիկա,— նկատեց տիկինը։— Պարոնը մեզի հյուր է եկեր, դուն նստեր ես գլխուն գայլի ավետարան կկարդաս։

— Ոչի՛նչ, տիկի՛ն, այդ բոլորը լսելը ինծի համար հետաքրքիր է,— պատասխանեց վարդապետացուն՝ հնար եղածին չափ ինքզինքը անփույթ ցույց տալու ճիգով մը։

— Վաղը մեր վրա հովիվ պիտի դառնա, աղեկ է, որ այսօրվնե իր աշխարհներուն կարծիքը գիտնա,— ավելցուց պարոնը ծիծաղելով։

Ու կատակի շեշտով մը երիտասարդի ձեռքին զարկավ թեթև։

## Գ

Վարդապետացուն լույսին հետ ելավ անկողնեն, իջավ դեպի ձորը, ուր գետակի քովեն սողոսկող նեղ արահետով սկսավ վեր քալել ծա՛նր, Ցանդա՛րտ ու տեսակ մը ցրված։

Մտածումները իր գլխուն մեջ մորացեր էին, կանգ առած ջուրի պես, ու տարտամ տխրություն մը ծանրացեր էր իր հոգիին վրա. նախորդ գիշերվան տպավորության տակն էր միշտ։

Արդեն գիշերն ալ շա՛տ ուշ և շա՛տ անհանգիստ էր քնացեր, թեև իսկապես լուրջ ոչինչ մտածած չէր։ Քանյանի մեկ-երկու նախադասությունները կկրկնվեին շարունակ իր գանգին տակ և այն գաղափա՛րը, թե ինչպես մարդիկ չէին ուզեր հասկընալ իրենց նպատակներուն արժեքը, իրենց անձնազոհությունը, նույնիսկ այսպես կրթված մարդիկ։ Մասնավորապես Քանյանի վստահ ու վճռական խոսվածքը, անոր տեսակ մը ցաված շեշտը տղու կոչման ու ապագայի վերաբերմամբ՝ կըսեղմեր, կվրդովեր երիտասարդին սիրտը, մանավանդ կզգար, որ իսկապես անոր ըսածներու մեկ մասին դեմ ինքը հազիվ առարկել կըրնար. չէ՞ որ ինքն ալ երկար ժամանակ ատոնց նման հարցեր իր գլխուն մեջ շուռ էր տվեր դեռ վարդապետանալու վերջնական խոսքը տալեն առաջ։

Գիտակը ժայռերուն մեջ ջրվեժ մը կազմեր էր, որ ահագին շառաչով կփուժեր վար ու իր մեջքի ճերմակ գոգնոցեն բուռով փրփուր կցանցըներ շուրջը։

Տղան կեցավ ու պիշ նայվածքով սկսավ նայիլ. հանկարծ սթափեցավ, անդրադարձավ իր ցրված վիճակին վրա ու տեսակ մը զայրույթ զգաց իր այդ ընկճըված տրամադրութենեն։

«Բավակա՛ն է, որ ես իմ ըրածս գիտեմ,— մտածեց,— բավակա՛ն է, որ ինքս գնահատեմ իմ վերաբերմունքս, ինծի ի՞նչ ուրիշներուն դատողությունները, արդեն ո՞ր գործի վերաբերմամբ ժամանակակիցներուն կարծիքը շիտակ է եղեր, արժե՞ գլուխ ցավցնել»։

Եվ մտածումները բռնի ընդհատելով՝ վազեց ձորեն վեր, ելավ ոտքի նեղ ճամփան, որ ձորի լանջեն ժայռերու և ծառերու մեջեն ետ դեպի վանք կտաներ։

Արևը արդեն ելեր էր ու ձորի աջ շրթունքեն ներս սահելով՝ դիմացի շեշտ ու խոժոռ ժայռերու ճակտին իր բարիլույսի համբույրը կուտար։

Տղան վանքին մոտեցեր էր բոլորովին, երբ իր դեմը քանի մը տասնյակ քայլ հեռու նշմարեց օրիորդ Մելինյանը։



Աղջիկը նստած էր խոշոր քարի մը վրա՝ ոտքը ոտքին նետած, ճանապարհին գրեթե կից և իր քովի թեք ու քիչ մը ավելի բարձր ժայռին վրա գիրք մը դրած կկարդար։ Այսինքն՝ գիրքը բաց էր իր առջևը ու գիրք կարդացողի մը դիրքը ուներ ինքը, բայց աչքերը գրքին վրայեն սահեր ինկեր էին վարը գետի փրփրուն եռմանը, ուրկե ախորժ ժխոր մը անոր մտածումները կօրորեր։

Սիրաքյանի առաջին ըրածը ետ դառնալու շարժում մը եղավ. դժկամություն մը կզգար այլևս այդ մարդոց հանդիպելեն. ամենքն ալ կարեկցության ժպիտ մը ունեին կարծես իրենց շրթունքներուն ու տեսակ մը բարձրեն նայիլ մը։

Ի՞նչ հիմար բան էր. ինքը եկեր էր այդ լեռներուն մեջ խոսքե ու աղմուկե կտրված քանի մը օր առանձին բնությունը վայելելու, և ահա՛ այդ անմեղ հաճույքն ալ չէին ուզեր իրեն տալ։

Բայց ետ դառնալը անհարմար էր. աղջիկը անշուշտ պիտի նշմարեր, և վերջապես ուրիշ ճամփա ալ չկար, ձորի մեջեն նորեն երկար պտույտ ընելը անիմաստ էր։

«Բարև մը կուտամ ու կանցնիմ», վճռեց ու քայլերը արագացուց։

— Բարև՛, ձեզի, օրիո՛րդ։

— Օ՛, բարև՛, դո՞ւք եք, պարոն։ Ուրկե՞ կուգաք այսպես կանուխ։

Ու ելավ ոտքի։

— Ձորի մեջ փոքրիկ պտույտ մը. հիանալի թարմ օդ է, կազդուրիչ ու առողջարար։

— Աշխարհքը սկսեր է փոխվիլ,— ժպտեցավ աղջիկը երկու ձեռքը կարճ մազերուն մեջ խրելով։— Հիմա հոգևորականները երևի ավելի առողջապահության մասին կմտածեն, քան աշխարհականները։

— Ինչո՞ւ չէ,— պատասխանեց տղան չոր։

— Իսկ ես, տեսե՛ք, նստեր կաշխատիմ. այսինքն՝ պե՛տք է, որ աշխատիմ,— ավելցուց դժգոհությամբ։

— Այդչափ ստիպողակա՞ն. կարդացածնիդ ի՞նչ է որ։

— Խնդրե՛մ, եթե կհետաքրքրվիք։

Ու գիրքը տղուն մեկնեց։

Վարդապետացուն առավ գիրքը ու բացավ առաջին պատահած երեսը. ունելիի նման երկար ու կեռ գործիքի մը նկարն էր, բան չըհասկըցավ ու նոր երես մը դարձուց, բայց հազիվ պատկերը նշմարեր էր, որ ամբողջ դեմքով կարմրեցավ ու արագ թուղթը շուռ տվավ։

Աղջիկը ձեռքերը մեջքին կեցեր էր անշարժ ու ժպտուն։

Երիտասարդը նայեցավ գրքին ճակատը. «Ծննդաբերական օգնություն»։

— Դուք բժշկություն կուսանի՞ք,— հարցուց վերջապես։

— Դժբախտաբար ո՛չ,— եղավ աղջկան հառաչի մը նմանող պատասխանը։— Մանկաբարձուհի եմ. այսինքն՝ կպատրաստվիմ քննություն տալու։

— Ո՞ւր։

— Տիֆլի՛ս։ Կզարմանաք, չէ՞, որ քսան-քսանմեկ տարեկան՝ աղջիկ մը սիֆիլիսի նշաններով և չգիտեմ ինչերով իր ուղեղը կզբաղեցնե, այնպես չէ՞։ Դուք միշտ զբաղված եք բարոյական, հոգեբանական ու աստվածաբանական բարձր պրոբլեմներով. մի՛շտ վերերը։ Մե՛նք, կտեսնե՛ք, համեստ ենք. մի՛շտ ցածը. հիվանդություններու, աղտոտություններու ու տառապանքներու մեջ։

Աղջիկը կքրքեթանար իր արվեստովը։

— Հայա՛, վարդապետության չի նմանիր. բուրվառ տալով ու աղոթքը ընելով չի վերջանար, պետք է աշխատիլ ու չարչարվիլ,— վերջացուց հանկարծ լուրջ զարկով մը և բոլորովին անսպասելի կերպով ռուսերեն. կարծես դիմացինը բոլորովին շվարեցնելու համար։

Բայց տղան հանդարտ ու մաքուր զուտ ռուսական արտասանությամբ պատասխանեց ինքն ալ ռուսերեն.

— Կ՚զարմանամ, օրիո՛րդ, ի՞նչպես կրնաք այդպես արհամարհանքով խոսիլ ուրիշի մը գործի մասին, որ մանկաբարձուհիի մը համար միայն այնքան ծանոթ է, որքան վարդապետի մը համար «Ծննդաբերության օգնությունները»։

Այս համարձակ ու արդար բողոքը աղջկան վրա տարօրինակ տպավորություն մը ըրավ և մանավանդ այդ վարժ ռուսերենը. տղան հանկարծ կարծես ուրիշ գույն մը առավ իր այդ ռուսերենովը։

Ու ալ խոսակցությունը շարունակվեցավ ռուսերեն։

— Ձեր համեմատությունը շիտակ չէ,— պատասխանեց աղջիկը,— ես եկեղեցի ալ շատ եմ եղած, գոնե մանկությանս, և վերջապես դուրսն ալ հոգևորականներ միշտ կարելի է տեսնել ու անոնց մասին լսել։ Մինչդեռ դուք ո՛չ թե իմ արհեստիս, այլ նույնիսկ մարդու ու իր ֆիզիկական կազմի մասին շնորհքով տեղեկություն չեք կրնար ունենալ, երբ ամբողջ ձեր կրթությունը տարիներով վերացական խնդիրներու ու կրոնական դասերու շուրջն է դարձեր։

— Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ի՞նչ ըսել է առանց գործին ծանոթ ըլլալու խոսիլը։ Նախ դպրոցը կրոնի դասերը միայն քանի մը ժամ է և որոնք, փակագծի մեջ ըսած, ինծի ո՛չ հետաքրքրած են, ո՛չ ալ մասնավորապես զբաղեցուցած, իսկ ընդհակառակը բնական գիտությունները ես միշտ սիրած եմ ու ձեր կարծածեն ալ քիչ մը ավելի ծանո՛թ,



մասնավորապես կենդանաբանությունը և բիոլոժին։ Մի՛ կարծիք, թե միայն ձեզի են ծանոթ Դարվինի, Սպենսերի ու Հյուքսլեյի երկերը։

Աղջիկը սեղմված շրթունքներով ու աչքերը լայն բացած խոսակցին կնայեր բոլորովին զարմացած։ Հյուքսլեյեն միայն փոքր գրքույկ մը կարդացած էր, Սպենսերի մեկ աշխատության բովանդակությունը լոկ հայտնի էր իրեն ամսագրի մը գրախոսութենեն, իսկ Դարվինի անունը, թեև շատ լավ գիտեր, բայց բնավ ծանոթ չէր մոտեն։

Ու կարճ լռություն մը, որ ընդհատողը աղջիկը եղավ.

— Այն ատեն ես բոլորովին կզարմանամ. ուրեմն ինչպե՞ս կրնաք դուք այդ բոլորին հետ հաշտեցնել կրոնական մանր ու մեծ նախապաշարումները, սնոտիապաշտությունները, ծիսակատարությունները, պահքերը, դևերն ու սատանաները, ինչպե՞ս կրնաք հավատալ այդ բոլորին։

— Եվ ձեզի ո՞վ ըսավ, որ ես կհավատամ այդ ամենուն։

— Բայց չէ՞ որ վարդապետ դառնալ կուզեք, չէ՞ որ ամեն օր պիտի կրկնեք նույն աղոթքները, նույն արարողությունները, նույն հավատալիքները, և ալ ի՞նչ գիտնամ։

Տղան թեթև մը գլուխը կախեց. դիմացինը ամենեն հիվանդոտ տեղին վրա էր դրեր մատը։

Եվ պատասխանեց, կարծես տեսակ մը իր մտածումներուն մեջեն.

— Իրա՛վ է, ժամանակները իրենց հետ բերած են բավական բաներ, որոնք մեր արդի ըմբռնումներուն լավ չեն հարմարիր. պիտանին ու ավելորդը, գլխավորն ու երկրորդականը խառնված են սերտորեն կրոնական ըմբռնումներուն, այդ ամենը իրարմե զատել ու մաղել դեռ կարելի չէ, ժողովրդական մտքի հասունացում կպահանջե։ Այնպես որ գործի բարձր ու կարևոր մասերու սիրուն ստիպված ենք հարմարվելու այդ հինցած ու անախորժ կողմերուն։

— Բայց, պարո՛ն,— առարկեց աղջիկը,— ամեն օր և ահագին բազմություններու առաջ ու կատարյալ հանդիսավորությամբ ըսել խոսքեր ու աղոթքներ, որոնց չեք հավտար, կատարել ծեսեր ու արարողություններ, որոնց կարևորություն չեք տար, չէ՞ որ ատիկա կդառնա խաբեության պես բան մը։ Ազնիվ բան չէ ձեր ընել ուզածը, սիրելի պարոն։

— Դժբախտաբար իմ կամքես կախված չէ ուզած մասերս ընտրել և չուզած մասերս անգին նետել. անբաժան ամբողջություն մըն է, կա՛մ պիտի հանձն առնես ամբողջը, կա՛մ հեռանաս։

— Հեռացե՛ք, գո՞րծ է պակաս, ինչո՞ւ անպատճառ հոգևորական։

— Որովհետև ամենեն շիտակ ու ամենեն հարմար ճամփան է մեր ժողովուրդին ծառայելու, ժողովուրդին մեջ խրվելու, ազդելու, անոր վերքերը մոտեն շոշափելու և բուժելու համար։

— Ա՜յ, եթե ձեր միտքը ժողովրդի վերքերը շոշափելն ու բուժելն է, ես ձեզի ամենեն կարճ ճամփան ցույց տամ, ճամփա մը, որ փիտություններուն վրայեն կերթա, և ոչ թե ժողովուրդի նախապաշարումներուն կոխնելով։ Ըսիք, թե բնական գիտությունները մասնավորապես կսիրեք, վարժ ալ ռուսերեն կխոսիք, ահա՛, դարձե՛ք քանի մը տարի Ռուսաստան, սորվեցե՛ք բժշկություն, դարձե՛ք ձեր ժողովուրդին գիրկը և բժշկեցե՛ք ինչքան վերքեր որ կուզեք։

— Իմ խոսքս հիվանդի վերքերու մասին չէր,— նկատեց տղան միամտորեն ժպտելով։

Ժպտեցավ և աղջիկը։

— Այդչափը կհասկնամ, բայց միթե գե՞շ է ձեր ըսած հիվանդություններուն հետ նաև մարմնական հիվանդություններ բժշկելը. վերջապես բոլոր բարոյական հիվանդությունները ֆիզիկական ու տնտեսական հիվանդություններու զուգահեռներն են միայն։ Եվ մի՛ մոռնաք, որ բժիշկը անխտիր ամեն տեղ հարգ ունի, մուտք ու դիրք և մանավանդ բացարձակապես անկախ է թե՛ բարոյական և թե՛ դրամական տեսակետեն։

— Եթե այդչափ հափշտակված եք բժշկությամբ, ինչո՞ւ ինքներդ ուղղակի բժշկության չեք հետևիր, կարծեմ այդ ասպարեզը շատ ավելի լայն պիտի ըլլա, քան ձեր ընտրած մանկաբարձությունը,— հարցուց երիտասարդը դիտմամբ խոսքին ուղղությունը ծռելով։

— Ուրիշ են, պարո՛ն, իմ ընտանեկան պայմաններս, ինծմե փոքր չորս քույր ու եղբայր ունիմ, և երկու տարի կա՝ մեռավ հայրս, պետք է հնար եղածին չափ շուտով անկախ դառնամ մորս վրայեն բեռ մը պակսեցնելու համար, պետք է այդ փոքրիկները մեծցնել, կրթություն տալ, դյուրին բան չէ։ Ընդարձակ ծրագիրներու մասին մտածելու ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ միջոց, թե չէ՝ այդ ծրագիրները ես ալ եմ ունեցած, իմ բախտես է, հայրս մեռնելու չէր։ Հապա՛ աշխարհի կյանքը վանքի չորս պատերուն չի նմանիր, հո՛ս ոչինչ չի կա պատրաստ ու ձրի, նույնիսկ ապրուստի տարրական պետքերուն համար պիտի կռվիս շարունակ՝ ծրագիրներ ու բաղձանքներ բոլորը մեկդի դնելով։

Տղան անթարթ խոսակցի շարժուն դիմագծերուն կնայեր, մինչդեռ տարօրինակ զգացում մը իր մեջն էր սպրդեր, կարծես սկսավ ամչնալ։

«Ահա՜ ուր է իսկական անձնազոհությունը», կմտածեր ակամա։

— Բայց ըսե՛ք, խնդրեմ, ի՞նչպես է, որ դուք այդպես մաքուր ռուսերեն կխոսիք, կրոնավորներու մեջ խիստ հազվագյուտ բան է ատիկա,— հարցուց հանկարծ աղջիկը իր հետաքրքրությունը այլևս զսպել չկարողանալով։

— Ես խրիմցի եմ, օրիո՛րդ, ատկե զատ դպրոցը ռուսերեն շատ եմ կարդացած, ռուսական գրականության գրեթե բոլոր հայտնի երկերը, և թարգմանություննե՛ր ինքնին հասկընալի է։

— Եվ բանաստեղծություննե՞ր, և ռոմա՞ն,— հարցուց աղջիկը կանացի փորփրող հետաքրքրությամբ։

— Այո՛, անոնք, որոնք գրական արժեք մը ունին։

— Կա՛մ վարդապետներու մասին ես չափազանց սխալ գաղափար ունիմ, կա՛մ դուք շատ տարօրինակ վարդապետացու եք,— պատասխանեց աղջիկը վարանոտ շեշտով մը։

— Չգիտեմ, ինչպես որ կուզեք։

Ու երիտասարդը գլխարկը ուղղեց ինքնաբավական, ակնթարթ մը լռություն, վերջը ավելցուց.

— Բայց ներեցե՛ք, ձեր ընթերցումը խանգարեցի, ցտեսությո՛ւն։

— Ընդհակառա՛կը ,ես շատ ուրախ եմ այդ խանգարումեն։ Ցը՛։

Ու ձեռքը մեկնեց տղուն։ Երիտասարդը թոթվեց ու դեպի վանք ուղղվեցավ։

Դ

[illegible] սկսեր էր իր կծիկը ձորին վրա փաթթելու, որ Միրաքյան ամբողջ օրվան թափառելեն հոգնած՝ վերադարձավ ետ ու շիտակ մտավ վանահոր սենյակը։

Նույն միջոցին տնտեսուհին, երեսունը անց տգեղ ու խոշոր կին մը, ամուր ու փայտե կազմվածքով, մեկ ծունկի վրա գետինը չոքած՝ սամավարեն ջուր քաշելով էր զբաղված, իսկ վարդապետը անոր գլխուն վրա ծռած՝ ձեռքը կնոջ թուշին բան մը ըսելու վրա էր, որ սենյակին դուռը ետևեն ճռնչեց։

Հայր սուրբը իսկույն շտկվեցավ, արագ դուրս քաշեց գոտիեն ահագին կապույտ թաշկինակը ու սկսավ պինդ-պինդ հազալ, որքան իր թոքերը կներեին։

— Աստված օգնական, հա՛յր սուրբ,— բարևեց տղան ոչինչ չտեսնել ձևացնելով։

— Դո՞ւ ես, տիրացո՛ւ, ո՞ւր էիր, տեսնե՛նք, ամբողջ օրը։

— Հայր սուրբ, այնպես հոգնած եմ ու անոթի։

— Նստէ՛, տղա՛ս, հանգստացի՛ր։ Եղսո՛, շուտով մեզի մեյմեկ բաժակ թեյ տուր ու տիրացուին գնա քիչ մը մածուն ու ձու բեր։

Երկու ճաթռտած ու տարբեր ձևի բաժակներով թեյը արդեն փայտե անծածկ սեղանին վրա էր։ Վարդապետը նստեցավ լայն թախտի ծայրին, իսկ վարդապետացուն՝ դիմացը կոշտ ու խոշոր աթոռի մը։

Խոսքը սկիզբը Խծկոնքի մասին էր, վերջը դարձավ Սիրաքյանի ու իր ընկերներուն վրա։

— Իհարկե՛, այդպես շա՛տ լավ է՝ ուսում առած հոգևորականներ,— վրա բերավ վարդապետը թեյի բաժակը շրթունքներեն չհեռացնելով։— Բայց գիտե՞ս՝ միայն ուսումը բանի պետք չէ, քիչ մը խորամանկություն ունենալու է և մեծավորներուն կողքը մտնելու շնորհքը, թե չէ ոչինչ դուրս չի գար, տասը տարի սարկավագ կպահեն, վերջն ալ երբ մազերդ ճերմկին՝ կշինեն վարդապետ ու կուղարկեն փլած վանք մը։

Վարդապետացուն ոչինչ չառարկեց։

— Ա՛յ, իմ ընկեր սարկավագները հիմա բոլորն ալ կա՛մ եպիսկոպոս են, կա՛մ առաջնորդ, մեկը նույնիսկ Սինոդի անդամ։ Ինչո՞ւ, կկարծես ես ամենեն վա՞տն էի մեջերնին, եթե գիտնաս՝ ի՛նչ դդում գլուխներ էին, մա՛նավանդ մեկը, և ճիշտ այդ մեկը հիմա N թեմի առաջնորդ է, որովհետև իր հաշիվը գիտցավ մարդը, իսկույն մտավ եպիսկոպոսի մը փեշերուն տակը, յուղոտ պաշտոններ ձեռք անցուց, առաջ մառանապետ էր, ետքը գիտեմ ի՛նչ կապալի գործերն էր իր վրան, վերջերն ալ կարծեմ հաշվի մատյաններուն մեջ մատ ուներ. կարճ խոսքով՝ քիչ-քիչ յուղոտեցավ, և անգամ մը որ ստակը կա՝ ալ ամեն բան կա։ Հայա՛, միայն ես էի մեջերնին էշը, ո՞վ կըսեր ինծի ուրիշներու գործերուն խառնվիմ, շիտակ խոսողի գրպանը ծակ կըլլա, ինծի սկսան ետ-ետ ձգել, ես ալ ավելի կատղեցա ու բերնիս կապը բոլորովին քակեցի, սկսա ամենքի երեսին ըսել ինչ որ ճշմարիտ էր, թե անառակ, գող, կաշառակեր, լիրբ մարդիկ էին, ետևեն ինկա, մեկ-երկուքի գողությունը բռնեցի, Աբրահամ եպիսկոպոսի սենյակեն աղջիկը դուրս քաշեցինք, ահագին խայտառակություն դուրս եկավ, բայց այդ պատմությունը ինծի ալ սուղի նստեցավ. «գիժ սարկավագը» բռնեցին, շտապ շինեցին վարդապետ ու ղրկեցին հոս, այս աշխարհքի անմարդ ծայրը, դե՛հ, նստե ու մեղքերդ քավե։ Հայա՛, տիրացո՛ւ ջան։

Երիտասարդը հետաքրքրությամբ կլսեր, թեև ինքնին այդ պատմությունը իրեն համար ոչինչ նորություն չուներ։

— Որդի՛ս, ականջիդ օղ չինե,— կխրատեր վանահայրը,— եթե առաջ երթալ կուզես՝ մեծավորներուդ խունկ ծխե՛, մեյ մըն ալ նայե՛



ինչ ճամփով կուզե ըլլա՝ շուտով գրպաններդ յուղոտե, այս չոլերուն մեջ ճերմկած մորուքս քեզի խրատ։

— Հա՛յր սուրբ, առաջ երթալու ավելի ազնիվ ճամփաներ ալ կան, անշուշտ խելացություն չէ մեծերու թշնամությունը ավելորդ տեղը գրգռելը, մենք նորերս կաշխատինք ավելի ազնիվ ըլլալու, ավելի գործունյա ու մաքուր. տասը-տասնեոկու տարիեն չէ՞ որ մեծավորները մենք ենք դառնալու։

— Կկարծե՞ս դուք եղածներեն աղեկ եք ըլլալու. երիտասարդություն է, որդի՛ս, ես ալ այդպես կմտածեի։ Վանքի կյանքը իր առանձին ճամփան ունի, ամենքն ալ անպատճառ այդ ճամփով պիտի երթան, ով այդ ճամփեն ծռիլ ուզե, անոր բոլորը միասին աքացի կուտան ու մեկ կողմ կնետեն։

— Չէ՛, հա՛յր-սուրբ, գիտե՞ք, ժամանակները սկսած են փոխվիլ, և հիմա կրթված կրոնավոր մը առանց այլևայլության բռնել մեկդի նետելը դժվար խնդիր է։

— Երեք ամիսի չափ առաջ Էջմիածին էի, որ Սիմոն վարդապետը նոր Վիրապ աքսորեցին. ահա՛ քեզի ուսում առած վարդապետ։ Իսկ անցած օր լսեցի, որ Աշոտ եպիսկոպոսն ալ Քիշնև են ուղարկեր, ձեր ամենեն ուսումնականը։

Երիտասարդի մեջեն տարօրինակ զգացում մը անցավ հանկարծ, ետ քաշվեցավ սեղանեն ու մտասույզ կռթնեցավ իր աթոռի խարխուլ թիկնակին։

Այդ Սիմոնն ու Աշոտը գործերե հեռացնելու համար ամեն ճիգ թափողը բնավ հին գլխու մարդիկը չէին եղած, այլ իրենք, այսինքն կրթված նոր սերունդը, որոնց մեջ ինքն ալ շուտով մտնելու էր։ Եվ չէ՞ որ ինքն ալ ուրախացեր էր այն ժամանակ «իրեններու» հաջողությանը, բայց ինչո՞ւ այդ հալածանքը։

Վարդապետացուի մտքին առաջևեն կարծես սկսավ թանձր բան մը ետ-ետ քաշվիլ, ու երիտասարդը սկսավ անսովոր պայծառ գույնով մը եղելությունները տեսնել։ Նախ անձնական մեկ-երկու հաշիվներ կային, որոնք ինքն ալ, իր ընկերներն ալ շատ աղեկ տեղյակ էին, երկրորդ, որ այդ մարդիկը իրենց շրջապատողներուն մեջեն կամքի ու խելքի ուժովը աչքի կիյնային և իրենց ազդեցիկ դիրքին մեջ հպարտ՝ մյուսներուն շատ ականջ կախելու տրամադիր չէին։

«Վանքի կյանքը իր ճամփան ունի. ամենքն ալ անպատճառ այդ ճամփեն պիտի երթան»։ Արդյոք ծերուկը իրավո՞ւնք ուներ։

Տղուն մտածումները ընդհատեց տնտեսուհին, որ պղինձե ամանով մը մածունը բերավ, առջևը դրավ։

Վանահայրը կշարունակեր դեռ իր պատմությունները, իր քաջագործություններեն, հայտնություններեն, այսինչ ու այնինչ եպիսկոպոսի կյանքեն։

Սենյակը թաղված էր արդեն խավարի մեջ. բաց պատուհաններեն ախորժ ճռինչ մը կլսվեր հեռուեն ու գետակին իրարանցումը՝ վարեն։

Երիտասարդը հազիվ էր իր ընթրիքեն ետ քաշված, որ վարդապետի ծառան, դպիրն ու ժամկոչը միանգամայն ներկայացնող տղան՝ մըտավ վանքի բակը և, մոտենալով ցած պատուհանին, հայտնեց, որ «մեծ տղան» պարոնը կկանչեր։

Վարդապետացուն անսովոր հուզում մը ունեցավ. տարօրինակ խառնուրդ մը դժգոհության ու տարտամ հաճույքի մը, դժգոհություն՝ երևի այդ մարդուն կրկին հանդիպելեն, բայց այդ ախորժի զգացումը ուրկե՞ էր։

Երբ Քանյաններու սեմեն ներս մտավ, գտավ նորեն նույն մաքուր ճերմակ փոքրիկ սեղանը սենյակին մեջտեղը, ու նույն ցոլցլուն սամավարն ալ վրան, և ընտանիքն ալ սեղանին շուրջը։

-- Բարև՛ ձեզի,— ըսավ տղան ընդհանուր կերպով՝ ձեռքը իր դեմք եղող պարոն Քանյանին մեկնելով։

— Մենք կարծեցինք, որ ինքներդ պիտի գաք, սակայն տեսնելով, որ շատ ուշացաք՝ ծառան ղրկեցինք,— բացատրեց Քանյան սիրալիր տոնով մը։

— Շատ շնորհակալ եմ։

Ու երկու կիներուն ձեռք տվավ։

— Նստեցե՛ք, խնդրե՛մ,— առաջարկեց տիկինը՝ մատնանիշ ընելով իր ամուսնու ու քրոջը մեջտեղի աթոռը։

— Նո՞ւ, ի՛նչ եզրակացության եկաք իմ այսօրվան առաջարկիս մասին,— հարցուց Շուշանիկ խնդալով։

— Ի՞նչ առաջարկ,— զարմացավ տղան բոլորովին շվարած։

— Ձեր մասնագիտության փոքրիկ փոփոխության մասին ինչ որ ըսի։

— Հա՛, այս առտու ամբողջ ժամ մը քենիս պրոպագանդ է ըրած հոգևոր բժշկության, ինչպես լսեցի,— ավելցուց պարոնը։

— Եվ այնպես հաջող, որ եթե հոգևորական չըլլայի արդեն՝ անշուշտ բժիշկ դառնալ պիտի ցանկայի,— իր կողմեն կատակել ուզեց Սիրաքյանը։

— Թեյը կաթո՞վ կխմեք, թե...

— Շատ շնորհակալ եմ, տիկի՛ն, ես խմած եմ արդեն հայր-սուրբի մոտ։



— Չէ, ի՞նչ,— բացականչեց Քանյան դժգոհ և իսկույն ավելցուց.— և գիտե՛ք ինչ, տիկինս կխնդրե, որ քանի հոս եք՝ ամեն իրիկուն մեզի գաք թեյի, առանց ձևականություններու, անշուշտ չեք մերժեր։

— Սրտանց շնորհակալ եմ, ճշմարիտ...

Ու չգիտեր ինչ ըսե։

Այս բոլորը տղուն վրա քաշող, փայփայող ազդեցություն մը կըներ, կզգար, որ իր մասին խոսք էր դարձած տան մեջ և որ անոնց վրա նպաստավոր տպավորություն ըրած էր։

— Ի՞նչ ըրիք, նայի՛նք, այսօր ամբողջ օրը։

— Շարունակ թափառեր եմ, ձորի մեջը, վրան, շուրջը, բոլորովին ուժասպառ էի, որ վերադարձա։

— Ես ձեզի տեսա հեռուեն,— մեջ նետվեցավ աղջիկը։— Կեսօրին մոտերն էր, վարը՝ գետի ափն էի, դուք ժայռերուն միջեն վեր կմագլցեիք։

— Այո՜, Ագարակ գյուղը գացի, անշուշտ եղած եք արդեն։

— Ա՛խ, ո՛չ,— տրտնջաց աղջիկը։— Դուք տեսե՛ք, օր մըն է հոս եք, արդեն ահագին տեղ շրջեցաք, մենք երկու շաբաթեն ավելի է հոս նստեր ենք ու դեպի վար ջաղացեն անդին անցած չեմ դեռ, դեպի վեր ալ մինչև ծծումբի բաղնիքը, քույրս երեխայեն բաժնվիլ չի կրնար, իսկ կոլյային արգիլված է շատ քալելը, մանավանդ այս դժոխքի ճամփաներուն մեջ։

— Տրտնջալդ ավելորդ է, ամբողջ օրը դուրսն ես,— նկատեց քույրը։

— Դո՜ւրսը, այո՛ տան չորս կողմը։ Եթե գիտնաք, պարոն Սիրաքյա՛ն, ինչպես նախանձեցա այսօր ձեզի, ձեր գլխուն, ազատ, ժայռերուն մեջեն գավազաննիդ քարերուն զարնելով կբարձրանայիք։ Վերեն տեսարանն ալ շատ սիրուն ըլլալու է ձորի բերնեն։

— Այո՛, հիանալի է, մանավանդ իրիկվան դեմ։

— Եթե այդչափ կցանկաս՝ ելի՛ր անգամ մը պարոնի հետ միասին գնա՛,— նկատեց Քանյան։

Աղջիկը երիտասարդին նայեցավ։

Սիրաքյան չէր հասկնար, թե իրեն հետ ինչ կդառնար։ Նախ թեթև մը կարմրեցավ և վերջը իբրև քաղաքավարության պարտք համարեց կրկնելը.

— Եթե կցանկաք, օրիո՛րդ, խնդրեմ։

— Շնորհակալ եմ, օ՛, շատ գալան վարդապետացու եք։ Բայց մի՞ վախնաք, ես ձեզի շատ նեղություն չեմ պատճառեր, քալելու սովորված եմ, շատ ալ քնքուշ չեմ։ Ուրեմն վաղը ճաշեն վերջը, այո՞ւ Ճա-

չէն առաջ չեմ կրնար, թե՛ կարդալու գործ ունիմ և թե՛ տունը զբաղում։

— Ինչպես որ կկամենաք, օրիո՛րդ, ճաշեն վերջը կերթանք։

Խոսքը դարձավ պարոն Քանյանի զբաղումներուն վրա, ու դուրս եկավ, որ պարոնը իր այս պաշտոնե ազատ օրերեն օգտվելով այժմ ձեռնարկած է երկար ժամանակե ի վեր արդեն մտադրված աշխատությանը. սկսած է թարգմանել ռուսաց օրինագրքի մասերը, որոնք անմիջապես կապ ունին ժողովուրդի առօրյա կյանքին հետ ու հանրամատչելի բացատրություններով տպագրության տալ կուզե։ Եվ սկսավ երկար-բարակ պարզել այդ տեսակ գործի մը անհրաժեշտ պահանջը, թե ինչ աստիճան անտեղյակ է ժողովուրդը տիրող օրենքներուն, թե նույնիսկ ժողովուրդի գլուխ կեցած մարդիկը որոշ ու հաստատ չգիտեն։ Եվ այս ամենը այնքան երկար ծամծմեց, որ Սիրաքյան սկսավ հոգնություն ու ձանձրույթ զգալ։ Այնպես որ իսկապես սրտանց ուրախացավ, երբ տիկինը առաջարկեց քիչ մը թուղթ խաղալ ժամանակ անցընելու համար։

Երկար ընտրութենե վերջը կանգ առին պրեֆերանսի վրա. տղան ո՛չ մեկ խաղ շնորհքով չգիտեր, օրիորդը՝ նմանապես, բացի այս վերջին խաղեն։

— Սակայն, ճշմարիտ, ես պրեֆերանս ալ կարգին չգիտեմ, կձանձրանաք,— նկատեց երիտասարդը։

— Ոչի՛նչ, եկե՛ք, դուք խաղացեք երեքով, ես ալ կօգնեմ ձեզի,— վրա բերավ օրիորդ Շուշանիկ։

Այդպես ալ ըրին։

Երեքը տեղավորվեցան սեղանին երեք կողմը, աղջիկն ալ աթոռը քաշեց տղուն քովը մեկ ոտքը գետինը, մեկ ծունկը աթոռին՝ ամբողջ կուրծքովը ինկավ սեղանին վրա ու դեպի տղու բռնած թուղթերը հակած՝ սկսավ ցույց տալ, թե ո՞րը խաղալու էր և ինչո՞ւ։

Սիրաքյան սկսավ տանիլ, թուղթերը անսովոր կերպով հաջող կուգային, Քանյան հետզհետե ավելի կզայրանար և ճիշտ ատ էր, որ ամենեն ավելի զվարճություն կպատճառեր մյուսներուն։ Դժգոհութենե ու հաղթանակե ծնած սրախոսությունները իրարու կհաջորդեին, ու երիտասարդը կշահեր շարունակ։ Երեք պարտի իրարու վրա։ Ուշ էր արդեն, որ վերջ տվին։

— Չէ՛, ձեզի հետ խաղալ կարելի չէ, բախտի սիրականն եք,— եզրակացուց Քանյան ձեռքի թուղթերը թափելով։

— Հապա՛, ի՞նչ գիտցար,— պատասխանեց Շուշիկ։— Երբ վարպետ ու մանկաբարձուհի գլուխ-գլխի տան՝ ալ անոնց հաղթելը քիչ մը դժվար խնդիր է։



Ու առողջ ծիծաղ մը բարձրացավ։

Ջերմ զգացում մը երակներուն մեջ՝ տղան ուղղվեցավ դեպի իր խցիկը։ Այնպես ախորժելի էր այն պայծառ լուսավորված փոքրիկ սենյակը, քառակուսի ճերմակ սեղանը մեջտեղը, մեկ անկյունը լամպը, և իրենք չորսը սեղանին շուրջը, ինչպե՛ս զվա՛րթ ու ընտանի՛։

Անմիջապես հանվեցավ, սահեցավ անկողինը ու աչքերը պինդ գոցեց, բայց փոխանակ քնանալու՝ սկսավ այդ իրիկվան բոլոր մանրմունր դեպքերը իր հիշողութենեն անցընել։ Կհիշեր ինչպես օրիորդը չէր թողներ կոզր իջնելու, ինչպես անգամ մը ուժով բռնեց իր ձեռքեն՝ արգիլելով կարմիր բացվիլ, ինչպես իր ուսին ծռած՝ թուղթերը կարգով շարելու կօգներ, պահանջելով, որ անպատճառ իր ուզած ձևովը կարգի բերվին՝ նման գույները իրարու քով ու կարմիրները սևերեն վեր և ինչպե՛ս հնչուն-հնչուն կծիծաղեր Քանյանի անզոր զայրույթին վրա։ Ու կարծես աչքերուն դեմն էր դեռ, ինչպես ոգևորված վեր ցատկեց աղջիկը աթոռեն ու սկսավ ուրախութենեն ծափ տալ, երբ երկրորդ պարտին ալ իրենք էին շահեր։

Բայց հանկարծ սթափեցավ ու մտաբերեց, որ քնանալու էր։

«Երեկի թղթախաղը անվարժ ուղեղս գրգռեց», մտածեց տղան. դարձավ կողքին վրա ու մտածումները մեկդի հրելով՝ փորձեց քնանալու։

Բայց իզուր էր այդ կռիվը. քունը գա՛լ չէր ուզեր, իսկ այդ պատկերները՝ երթա՛լ։

## Ե

Ջորի վերի անկյունը գետը կնեղնար։

Եվ մեկ եզերքեն մյուսը անցնելու համար ծառի երկայն բուն մը ձգեր էին ափե-ափ իբրև կամուրջ, որ անմիջապես կհաներ փայտորմով պատած ծծումբի փոքրիկ ավազանը։

Ետևի քարակույտեն վար ցատկոտող գետակը փայտորմին կռնակեն ոլոր կուտար, կսեղմվեր պահ մը ծառ-կամուրջին տակ, ու անմիջապես կշտապեր ցան-ցիր լերկ ժայռերուն մեջ իր փրփուրե բանվածքը նորեն փռելու։

— Օրիո՛րդ, զգո՛ւյշ,— ըսավ Սիրաքյան։— Կամուրջնիս քիչ մը նահապետական է։

— Ավելի՛ աղեկ,— բացականչեց աղջիկը, վազեց թափով բունին վրայեն ու բաղնիքին ոտքը կանգ առավ։

— Ուժերնիդ ժողվեցե՛ք, ալ բարձրանանք պիտի շարունակ,— եր-

կատեց տղան՝ քարքարոտ ու բավական սեպ ելքը մատնանիշ ընելով։— Եվ դեռ ասիկա համեմատաբար հանգիստ մասն է։ Ձեզի առաջվընե ըսեմ, որ այս ճամփան մեր երեկվան Տիկոր իջնելը չի նմանիր, քիչ մը ոստոստեք պիտի քարե-քար։

— Դուք ձեր քարերովը ինծի չեք վախեցներ։ Մա՛րշ,— եղավ պատասխանը։

Ու քով-քովի սկսան բարձրանալ։

Կեսօրեն վերջն էր։ Քանի մը ժամ է՝ արևը պինդ մտեր էր ամպերու կարավանի մը ետևը և ոչ մեկ կերպ նորեն դուրս ելլելու տրամադրություն չէր ցույց տար։ Որով ախորժելի թարմություն մը կարծես դեռ կրցեր էր պահվտիլ մամռոտ ժայռերուն մեջ։

Հսկա ու թզուկ ժայռերու ամբողջ ամբոխ մըն էր շուրջը, որոնք իրենց դիրքերուն մեջ անշարժ՝ իրարու ուսե ծամածուռ դեմքերով վար կնայեին լուռ՝ հո՛ն ձորին մեջի ալիքներուն կզվռտուքը դիտելու, որ ո՛չ վերջ ուներ, ո՛չ դադրում։

Եվ այդ խռնված հոծ բազմության մեջեն ոտքի նեղ արահետը դըժվարավ իրեն ճամփա կբանար՝ շարունակ ծռվելով, կոտրվելով, կոր տալով ինքն իր վրա։

Այլևս զույգ երթալ հնար չէր։ Հարմար ելքը ընկերուհիին թողած՝ տղան մեկ մը ետ կմնար, մեկ մը քովի քարերուն վրայեն կցատկեր։

Սկիզբները դեռ կխոսեին տաք-տաք, բայց վերելքի պատճառած շնչառության դժվարությունը շուտով կտրեց ամեն խոսակցություն. հազիվ մեջեմեջ շնչատ բառ մը կփոխանակեին իրարու հետ, անկապ ու փրթած կտոր մը իրենց մտածումներուն։

Այս երրորդ օրն էր, որ միասին պտույտի կելլեին։ Առաջին անգամ ամբողջ ձորի երկայնքով շրջան մըն էին ըրած վանքի տակեն։ Նախորդ օրն ալ եղած էին Տիկոր գյուղը, ուր օրիորդը անոթեցեր էր, տղան տունե մը ճարեր էր լավաշ ու պանիր ու պարտեզի պես տեղ մը ծառի մը տակ նստեր կերեր էին միասին, վերջը շրջեր էին գյուղը, ավերակ եկեղեցին, և ուշ ատեն վերադարձեր տուն՝ հետերնին գյուղացիներեն գընած բավական հավկիթ ու երկու հավ բերելով ընտանիքին համար։

Աս բոլորը սկսած էր տեսակ մը ընտանեկան կապ առաջացնել տղու ու Քանյաններու միջև։ Իրիկունները արդեն միշտ անոնց էր թեյի, վերջի օրն ալ հրավիրեր էին ճաշի՝ միասին բերած հավը միասին ուտելու պատրվակով։

Սկիզբը տղան տեսակ մը քաշվեր էր ու վարաներ, երբ աղջկան հետ առանձին մտեր էին ձորը, անորոշ վախ մը անհարմար կամ անպատշաճ բան մը ընելու, ինքզինքը ի՞նչպես պահե և ի՞նչ խոսի։ Բայց



Շուշիկի պարզ, կտրուկ և անհոգ վարմունքը շուտով փոխանցվեր էր և անոր, քիչ-քիչ սկսեր էր սիրտ առնել, մինչև որ հետզհետե բոլորովին ստացեր էր իր շարժումներուն ու լեզվին բնական ազատությունը։

Ալ կծիկը բացված էր. անցյալ, ներկա, տպավորություններ, գրականություն, գիտություն, հակումներ, բոլորը խառնվեր էին իրարու այդ երկու օրվան մեջ։ Մեկ խոսքով՝ հիմա դարձեր էին արդեն «լավ բարեկամներ», ինչպես աղջիկը կըսեր։

Շուշիկ ելքեն շնչասպառ վերջապես նստեցավ քարի մը վրա։

Տղան մոտեցավ ու կեցավ դիմացը։

— Հոգնեցա՛ք։ Ես ձեզի չըսի՞։

Օրիորդը խոր շունչ մը առավ ժպիտը շրթունքին և ձեռքը դրավ կուրծքին շնչառությունը կանոնավորելու համար։

Լեցուն ու թուխ դեմքը հաճելի կարմիր մըն էր առեր ու պարզ հարդի գլխարկին տակեն ցոլուն սեփ-սև աչքերը ինկեր էին երիտասարդի նիհար դեմքին։

— Խծկոնքի օդը ձեզի աղեկ եկավ, պարոն Սիրաքյա՛ն,— նկատեց աղջիկը հանկարծ։

— Ի՞նչպես։

— Դեմքերնիդ սկսեր է արյուն շրջան առնել և կարծես լեցվիլ։

— Մի՞թե,— կմկմաց տղան ու իր դեմքեն քիչ մը ավելի ուժով սկսավ «արյուն շրջան առնել»։

— Կհավնի՞ք ձորերս,— հարցուց տղան և դեռ պատասխան չառած ավելցուց,— եթե գիտնաք, օրիորդ Մելինյա՛ն, թե ինչպե՛ս կսիրեմ այս բնությունը։ Լեռները, ձորերը, այս չեչոտ ժայռերը, այս աղմկոտ խելագար գետակը, վերը դաշտերուն հարթությունը, արտերուն ծածանուտ ծովը։ Եվ իմ մխիթարությունս ու հաճույքս բնությո՛ւնն է արդեն. երբ կոտրած է սիրտս՝ կերթամ անտառ, ու ծառերու շշուկին տակ թափառուն՝ կմոռնամ, կհանգստանամ կարծես, շատ կսիրեմ բնությունը։

— Բայց, գիտե՞ք, ատիկա քիչ մը վտանգավոր նշան է վարդապետացուի մը համար։

— Բնությունը սիրե՞լը։

— Այո՛, բնությունը սիրելը,— կրկնեց աղջիկը ժպտուն։— Զգիտեմ ուր լսած եմ, որ բնության այդ բուռն սերերուն կնոջ փոթորկոտ սերերը կհաջորդեն սովորաբար։ Զգույշ եղե՛ք այդ նախերգեն։

— Է՜հ,— ըրավ տղան ուսը թոթվելով ու խեղճափառի պես կարմըրեցավ։

— Իրա՞վ, պարոն Սիրաքյան, ներեցեք հետաքրքրությանս, ամենևին սիրա՞ծ եք։

— Ո՛չ։

Ու գլուխը խոր վար կախած՝ սկսավ ձեռքի փայտովը երկու ժայռի ճեղքին մեջ փորք կապած մամուռը ավրըշտել։

— Եվ սիրելու պետքը չե՞ք զգար։

Երիտասարդը քիչ մը մտածեց ու թեթև մը գլուխը բարձրացուց։

— Շիտակը չգիտեմ ինչ պատասխան տամ։ Նախ՝ վերջին քիչ-շատ հասուն տարիներս միշտ կանանց շրջանե հեռու եմ ապրած, որով արդեն ինքնին առիթ չկա այդ զգացումներուն։ Երկրորդ ալ՝ երբ մարդ անգամ մը գլուխը դրեր է կուսակրոն դառնա՝ այլևս բնականաբար մեկ կողմ պիտի նետե այդ հարցերը, եթե նույնիսկ մեջեմեջ անորոշ բաներ մը իր մեջը դառնան։

— Բայց եթե այդ անորոշ բաները հանկարծ որոշնան, եթե, օրինակի համար, աղջկան մը սիրահարիք, ի՞նչ կընեք։

— Այդ մեկը անկարելի է։

— Ինչո՞ւ։

— Չեմ թողներ, որ խնդիրը այդչափ հեռուները երթա։ Այդ տեսակ զգացման մը արթնալը նշմարելուս պես՝ ամեն կերպ կաշխատիմ առաջքը առնեմ, կհեռանամ, ինքզինքս կզբաղեցնեմ. վերջապես կմոռնամ, կխեղդվեմ։

Աղջիկը դեմքի հեգնական ցնցում մը ըրավ։

— Կկարծե՞ք։ Բայց ենթադրենք, որ այդ ամենուն հակառակ չըհաջողեցաք ձեր զգացումները մարել։

— Ալ ի՞նչ գիտնամ. երևի ինքս իմ մեջս կտանջվիմ։ Ինքնին հակաբնական ու անմիտ բան է կուսակրոնությունը անշուշտ, բայց ի՞նչ կարելի է ընել, եթե հանձն առիր՝ խաչդ պիտի կրես։

Շուշանիկ լուռ վայրկյան մը շեշտ նայեցավ տղու գլխահակ դիրքին, ուր տեսակ մը համակերպություն, դժգոհություն ու վճռականություն իրարու էին փարած ու վերջապես ըսավ.

— Ուրիշ խոսքով կնոջ մը սերը, կենակցությունը, ընտանիքի կյանքը ու իր մանր ու խոշոր բախտավորությունները դուք կամքով կզոհեք ու ձեզի կդատապարտեք մշտական մենակեցության, միևնույն ժամանակ համոզված ձեր վարմունքի անիմաստ ու հակաբնական ըլլալուն։ Եվ այս բոլորը միայն հասարակության ծառայել կարողանալու համար, չէ՞, մեկ բառով՝ կատարյալ անձնազոհություն։

— Անվանեցե՛ք, ինչպես որ կուզեք։



— Ձեր գիտակցության ու ձեր գործունեության մեջ միշտ հակառակություն մը կա, որուն ես չեմ համակրիր, ձեր ընել ուզածը և ձեր համոզումները իրար չեն բռներ. չեն բխիր իրարմե, այդ ճամփան վար, շա՛տ վար կրնա տանիլ, բայց վե՞ր, օ՛, երբե՛ք, չեմ հավտար։

Բայց նկատելով, որ տղան միշտ գլուխը կախ իրեն ոչինչ չէր պատասխաներ՝ հանկարծ անդրադարձավ.

— Սակայն, պարո՛ն Սիրաքյան, չըլլամ թե խոսքերս իբրև վիրավորանք ընդունիք. գուցե կսխալիմ, միայն դժբախտություն մը ունիմ, որ իմ կարծիքս լռել չեմ կրնար։

— Եվ շատ աղեկ կընեք, օրիո՛րդ։ Վիրավորվելու բնա՛վ միտք չունիմ, վստա՛հ եղեք,— պատասխանեց երիտասարդը լուրջ ու դառն ժպիտով մը։

Ու խոր շունչ մը առնելեն ետքը շարունակեց.

— Իսկ ինչ կվերաբերի ձեր նկատողության, մեջը անշուշտ ճշմարտություն մը կա, բայց կա և կարծեմ քիչ մը անարդարություն ու երեսանց դատողություն, միայն անկեղծ խոսելով՝ ես ինքս ալ չեմ կըրնար որոշել, թե ուր կվերջանա ճշմարտությունը և ուր կսկսի անարդարությունը։

— Աղե՛կ։ Հիմա որ փոխադարձաբար իրարու հայհոյեցինք ու կըշտացանք՝ եկե՛ք հաշտվինք նորեն ու ճամփանիս շարունակենք. այո՞։

Նայեցան իրարու, ժպտեցան ու շարժվեցան առաջ։

Մոտեցեր էին արդեն ձորի բերնին, ուր արահետը հանկարծ սկսավ ավելի սեպանալ, ժայռերը խտացան՝ դիզված իրարու վրա՝ տեսակ մը անտաշ ու անկանոն սանդուղ կազմելով։ Սանդուղ մը, որուն աստիճանները հետզհետե կխոշորանային՝ վերելքը դժվարացնելով։

Աղջկան շըջազգեստը ավելի ևս կխանգարեր աստիճանե աստիճան ոտք փոխելը։

— Ձեռքերնիդ տվե՛ք ինծի,— ըսավ տղան։

Ցատկեց սանդուղի վերի ոտքը, բռնեց ամուր անոր մեկնած ձեռքեն և քաշեց իր կեցած ժայռին վրա, ցատկեց ինքը հաջորդին վրա ու դարձավ իսկույն ընկերուհիին օգնելու։

— Ա՜, ի՛նչ հանդիստ է այսպես,— բացականչեց աղջիկը՝ ոտքը ժայռի եզերքին հենած կե՛ս մը օդին մեջ, կե՛ս մը տղու թևեն կախված։

— Եվ ի՛նչպես ալ ուժով եք։

Երիտասարդը բուռն հաճույք մը զգաց հանկարծ այդ գովեստեն։ Սիրտը սկսավ բաբախել ու ա՛լ ավելի պինդ բռնեց աղջկան մերկ դաստակեն։

Նո՛ր զգացում մը, կարծես անզո՛ւսպ հպարտություն մը սկսեր էր շրջան առնել իր ջիղերուն մեջեն։

Հպարտություն մը իր առնական ուժին, հպարտություն մը իր այդ ուժերեն աղջիկ մը կախված ըլլալուն։

## Ջ

Գլխավոր ճամփուն մոտիկ, խոշոր սալորենիի մը ստվերին տակ, թավ խոտերուն մեջ, կռնակին վրա փռվեր էր վարդապետացուն։ Երկու թևերը գլխուն տակը, բարակ ու երկար ձողուն մը ակռաներուն մեջ ու աչքերը հառած դիմացը։

Դիմա՛ցը ձորի շեղ ելքին, ուր խիտ, չեչոտ ու փոքր ժայռերու ամբողջ հոտ մը արևի բարկ ճառագայթներուն տակ, տոթակեզ ոչխարներու նման, գլուխնին իրարու շուքին մեջ թաքցուցած՝ կարծես հիմա վար պիտի վազեին, վա՛ր, դեպի գետակը, իրենց տապն ու ծարավը մարելու։

Բայց բոլորովին ուրիշ պատկերներ էին երիտասարդի հառած աչքերուն դեմ. ա՛ն իր մեղկ ու ծույլ դիրքին մեջ անշարժ՝ ո՛չ թե կդիտեր, այլ կմտածեր։ Երկա՜ր։ Մինչև որ դանդաղ շարժումով մը հանեց գրպանեն ժամացույցը ու նայեցավ։

Շուտով կեսօր։ Կամաց-կամաց երթալու էր վանք, պատառ մը բան ուտելու և անկե օրիորդ Մելինյանին։ Այսօրվան պտույտին տեղը արդեն շատոնց ընտրած էր տղան։ Ընտրած էր ձորի ամենեն ժայռոտ ու ամենեն սեպ շավիղներեն մեկը, որ վերը արտերը կհաներ. պետք էր, որ վերելքը դժվար ըլլար, ատիկա անհրաժե՛շտ էր։

Ու երիտասարդը ժպտեցավ ինքնաբավական ու ներքին հուզված անհամբերությանը ալ չդիմանալով՝ կռնակին վրայեն մե՛կ շարժումով դարձավ դեմքին վրա և հենվեցավ աջ արմուկին։

Նույն վայրկյանին էր, որ հեռուեն ճամփուն վրա սմբակներու տրոփ մը լսվեցավ, տղան մտացիր այն կողմ նայեցավ մեքենաբար, բայց հանկարծ շտկվեցավ, կնճռոտեցավ ճակատը ու դեմքին գծվեցավ մաղձոտ դժգոհություն մը, անախորժ անակնկալի մը ծամածռությունը։

Իսկույն ճանչցեր էր իր երկու ընկերը։

Կամաց մը ելավ ոտքի ու ծառերուն ետևեն դուրս եկավ ճամփուն վրա։

— Արտաշե՛ս,— պոռացին երկուքը միաբերան, ձիերը խթեցին ու ճիշտ անոր առջևը թամբերեն թռան վար։



— Հը՞, ի՞նչպես ես, ի՞նչ ըրիր նայինք։

— Ալեքսանդրապոլ մերիններեն մարդ տեսա՞ր։ Բագրատը ինչու՞ միասին չառիր, չէ՞ որ Անի գալ կուզեր։

— Վախնամ մեզի շա՛տ սպասեցիր։

— Վանահայրը ի՞նչ բանի է, հո՞ս է։ Չխոսի՞ս։

Վրա թափեցին Մինասն ու Սերոբը խառն ու արագ՝ երկու կողմեն տղու ձեռքերը պինդ թափ տալով։

— Վանահա՞յրը, այո՛, հո՛ս է, այսինքն... չգիտեմ. այս առտու քիչ մը ուշ եմ ելեր քունես ու դեռ երեսը տեսած չեմ,— կմկմաց վերջապես։

— Ա՛խ, դուն ծո՛ւյլ,— բացականչեց Մինաս իր հաստ ձայնովը։

Սա երկարահասակ, թիկնեղ, կարմիր ու այրած դեմքով, կլոր ու ցանցառ մորուքով, փոքր ու սուր աչքերով երիտասարդ մըն էր։

— Իսկ մենք ժամը հինգեն ի վեր ասպանդակներուն վրան ենք։— Վրա բերավ Սերոբ, որ նախորդի հակապատկերն էր. փոքրահասակ, թավ մորուքով, ավելի նուրբ կազմով ու տեսակ մը մեղմ, մելամաղձոտ հայացքով, որ ակնոցներու ապակիին ետևեն ավելի տխուր ու ավելի միապաղաղ կդառնար։

Արտաշեսը մեջերնին առած՝ ձիերու սանձերեն քաշելով՝ երեքը միասին դեպի վանք դիմեցին։

— Ի՞նչ տեսակ մարդ է վանահայրը,— հարցուց կարճահասակը։

— Քիչ մը կծծի, քիչ մը շատախոս, քիչ մը խորամանկ, քիչ մըն ալ հանդուգն. ավերակի մը վանահա՛յր։

Տղու ձայնին մեջ արհամարհանքի ու հեգնելու այն աստիճան պարզ շեշտ մը կար, որ երկու ընկերները անգամ մը ակամա իրարու նայեցան։

— Երևի նեղացուցեր է քեզի,— նկատեց երկարը։

— Ընդհակառա՛կը, մինչև անգամ ինծի սորվեցուց շուտով եպիսկոպոս դառնալու խորունկ գաղտնիքը։

— Վա՞յ, ո՞րն է տեսնենք այդ գաղտնիքը։

— Շիտակը հիմա տրամադիր չեմ։ Ավելի աղեկ է նորեն իրեն կհարցնեք, իրիկո՛ւնը։

— Ինչու՞ անպատճառ իրիկունը։

— Ցորեկը սաստիկ զբաղված է, երկար պատմություններու գլուխ չունի և լուրջ է զբաղված, պետք է վազել արտե-արտ, պետք է գյուղացիները հսկել ու հայհոյել, պետք է մառանը լեցնել, մառա՛նը, կատակ չէ։ Վանքի մառա՛նը։

— Այդ մարդը քեզի բան մը ըրեր է, ի՞նչ տարօրինակ խոսելու եղանակ է,— կրկնեց երկարահասակը խոժոռած դեմքով մը։

— Տարօրինա՞կ,— հարցուց Սիրաքյան անփույթ։
— Հա՛, Սմբատը քեզի բարև ըրավ,— ընդհատեց հանկարծ ակնոցավորը։
— Սմբա՞տը ով է։
— Քանի՞ Սմբատ կա մեր ընկերներուն մեջ,— պատասխանեց ընկերը տեսակ մը սրտնեղած։
— Ա՛խ, ա՛ն, նորեն նույն դատարկախո՞սն է։
— Դատարկախոսը դու ինքդ ես։
— Ատիկա արգելք մը չէ, որ ան ալ նույն արհեստը ունենա։
Եվ ատիկա ըսված էր այնպես լուրջ ու պարզ շեշտով մը, որ ընկերները չկրցան ծիծաղնին զսպել։
— Երևակայե՛, ան ալ վճռեր է շուտով սարկավագ ձեռնադրվի,— ավետեց Մինաս։
— Մի՞թե։ Այդ մեծ զոհաբերությունը շիտակը անկե բնավ սպասելի չէր։
Ու «մեծ զոհաբերությունը» արտասանված էր ինքնահատուկ շեշտով մը։
— Ի՞նչ ըսել կուզես։
— Չէ՞ որ շարունակ կկրկներ, թե ինքը վանական կյանքի համարում չունի, թե իր կոչումը...
— Կոչումը աղեկ, բայց քննությանը կտրվեր է։
— Հա՛, ատանկ ըսե հիմա կհասկնամ, անշուշտ գյուղե-գյուղ աննշան ու անոթի թափառելեն ավելի աղեկ է դյուցազնական անձնազոհություն մը ընելը։
— Իրավունք չունիս ուրիշները այդպես հեգնելու,— հանդիմանեց երկարահասակը վրդովված,— Ան ինչո՞վ է մեզմե պակաս, որ քիչ մը պարզ ու միամիտ բնավորություն ունի, ուրիշ ոչինչ։
— Ուրեմն մինչև անգամ մեզմե բանով մը ավելի է,— կցեց Սիրաքյան հանդարտ։
Երկու ընկերները նորեն նայեցան իրարու ու լռեցին։
Կես ժամվան չափ վերջը վանահայրը դարձավ վանք։
Արտաշես իր երկու ընկերները ներկայացուց ու դարպասի սեմին վրա կեցած խոսակցելու վրա էին, որ անդին Քանյաններու սենյակին առջևը երևցավ տիկինը դայակին հետ։
Սիրաքյան բարևեց հեռուեն։
— Ո՞վ են,— հարցուց Սերոբ։
— Քանյան Կարոյի հորեղբայրն է հոս իր ընտանիքին հետ. շատ



համակրելի մարդիկ են, անկե՛ղծ, հյուրասե՛ր, իրիկունները թեյի հոն եմ սովորաբար, այս իրիկուն միասին կերթանք՝ շատ գոհ կմնաս։
— Լա՛վ, իրիկունը ժամերգութենեն վերջը երթանք,— համաձայնեցավ Մինաս։
— Ի՛նչ ժամերգություն, հոս ամեն օր ժամերգություն չկա։
— Ինչո՞ւ,— պնդեց երկարահասակը։— Եկեղեցի կա, ահա՛ հայր սուրբը հոս է, մենք ալ դպիրները։— Եվ դիմեց ուղղակի վանահորը,— հա՛յր-սուրբ, փառավոր եկեղեցի մը ընենք, քանի օր է սիրտս կարոտցեր է։
— Ի՛նչ կարիք կա ուրբաթ իրիկունով,— մռմռաց Արտաշես դժգոհ։
— Ախորժակդ կիրակիի առտվան պահե, որդի՛,— կցեց վարդապետը։
Ու արագ մեկ-երկու քայլ առաջ վազելով՝ վերցուց գետնեն քարի կտոր մը ու վարժ թափով մը նետեց դիմացի կանաչեղենի ածուներուն մեջ, ուր հավեր էին ներս մտեր։
— Քշշա՛, անիծածնե՛ր։
— Շիտակ է, Մինա՛ս, այսօր եկեղեցի ընելու ի՞նչ կարիք կա. միս-մինակ, մեջտեղը ո՛չ մարդ կա, ո՛չ ժողովուրդ,— ավելցուց իր կողմեն ակնոցավորը ու նստեցավ սեմին վրա։
— Եկեղեցական կարգերն ու պաշտամունքները ժողովուրդին ցույց ընելու համա՞ր են նշանակված։
— Ժողովուրդին ցույց ընելու համար չէ, տիրացո՛ւ ջան, բայց իհարկե ժողովուրդին համար է, ալ ի՛նչ ժամերգություն, եթե մեջտեղը ժողովուրդ չկա,— վճռեց հայր սուրբը հավերու արշավեն ետ դառնալով։
— Կարծեմ աղոթքն ու ժամերգությունը Աստված փառաբանելու համար է, հա՛յր-սուրբ,— ըսավ երկարահասակը գեշ քողարկված կշտամբանքով մը։
— Ա՛, որդի՛, Աստված քու փառաբանությա՞նդ է կարոտ։ Եվ վերջապես մինչև հիմա արդեն ձանձրացած կըլլա ամեն օր միևնույն բանը լսելեն,— կատակեց ծերուկը ճերմկած բեղերուն ու մորուքին մեջեն։
Մինաս բոլորովին կնճռեց ճակատն ու դեմքը։
— Ուրեմն ի՞նչպես արտահայտենք մեր հավատքը, մեր կրոնական սուրբ զգացումները. չէ՞ որ ժամերգությունը մեր ներքին հուզումներու խոստովանությունն է տիրոջ խորանին առջև։
— Տիրացո՛ւ, հավատքը ուրիշ բան է, եկեղեցին ու ժամերգությունը՝ ուրիշ բան։ Ներքին հավատքը, ինչպես որ կըսես, երկար-բարակ արտահայտություններու պետք չունի, իսկ եկեղեցական արարողություն-

ները հնարված են ժողովուրդի սրտին համար. «ի սփոփանս և ի մխիթարություն հավատացելոց»։

Ու վերարկուին թևը ետ նետելով՝ իր ամուր քալվածքովը մտավ վանքին բակը։

— Այսպես է որ բոլորի սիրտը պաղեցուցեր են,— կանչեց Մինաս՝ վարդապետի հեռանալուն պես՝ իր վրդովված հոգիին բովանդակ մաղձովը։— Ո՛չ, մենք, նորերս, պարտական ենք նորեն հոգի ու ոգևորություն մտցնելու այդ սուրբ կարգերուն ու աղոթքներուն մեջ և բծախնդիր ճշտությամբ ամեն ինչ կատարելու։

Սերոբ ձեռքով ու դեմքով տատամսոտ ծամածություն մը ըրավ ու կցեց խորհրդավոր ցած ձայնով մը.

— Սկզբունքով քեզի համաձայն եմ, սակայն ժամասացություն մը ավելի կամ պակաս, ատկե ի՞նչ վնաս։ Եկեղեցին ու դավանանքը ինծի համար ամենեն առաջ վահան մըն է մեր ազգային գոյության։

— Սիրելի՛ս, քանի՞ ստակ արժես դուն ու քու վահանդ, երբ ժողովուրդը հետզհետե սառն ու անտարբեր կդառնա դեպի հոգևորականությունն ու կրոնը։

— Ցավալի է, հոգիս, ցավալի, բայց ի՞նչ կրնանք ընել։

— Ի՞նչ, ա՛յս ես քեզի ըսեմ։ Եթե կուզես, որ ժողովուրդի մեջ նորեն ազդեցություն ձեռք բերես՝ պետք է ամենեն առաջ իր հավատքը, իր կրոնական զգացումները արծարծես։ Եվ որպեսզի իր այդ զգացումները բորբոքելու հաջողիս՝ պետք է ինքդ ամենեն առաջ այդ ջերմ հավատքը քու մեջդ վառես. միայն ճշմարիտ ոգևորութենե ու խորին համոզումեն բխած խոսքը ժողովուրդի սրտին կազդե։

— Պայմանավ, որ այդ համոզումն ու ոգևորությունը բնածին ըլլան,— նկատեց Սերոբ իր մտածումներուն մեջեն։

— Բնածին թե ո՛չ բնածին՝ պիտի ունենաս։ Հոգևորականներուս գոյության իմաստը, մեր ազդեցության աղբյուրը հավատքն է միայն։ Հոգևորականությունը բարձրացնե՞լ կուզես՝ պետք է հարցի արմատին դիմես։ Հավա՛տք քու պաշտոնիդ վրա վերո՛ւստ նշանակված ըլլալու, հավա՛տք մեր պապենական գողտրիկ ծեսերուն ու աղոթքներուն, և ատոնց սուրբ հոգիին շնորհքովը կարգադրված ըլլալուն, հավա՛տք հանդերձյալի արդար հատուցման հավիտենական գեհենին ու մշտնջենական երջանկության, որուն դեմ ի՛նչ է մեր երկրավոր վաղնցիկ կյանքը։

Այս իմաստի ճառեր Սիրաքյան հաճախ էր լսած Մինասի բերնեն, բայց կարևորություն չէր տված՝ «Մարդը հավատք ունի, ինչ ընենք» մտածելով, դեռ տեսակ մը պատկառանք ալ էր զգացած կարծես։ Բայց այսօ՛ր ինքն ալ չէր գիտեր ինչպես՝ քանի աչքերը ընկերոջը դեմքին



գամած՝ անոր խոսքերուն ականջ կդներ, այնքան ավելի ու ավելի անախորժ ճմլող բան մը ու վրդովմունք կզգար իր մեջը, ոչ մեկ կերպ ինքինքը չէր կրնար ազատել այն զգացումեն, որ այդ ամբողջ ոգևորությունը շինծու, փքուն ու անիրական բան մը ուներ իր մեջը։

Եվ իր այդ տպավորությունը ընկերոջը երեսին նետելը շուտով պահանջ դարձավ իրեն համար, բայց ինքզինքը զսպել ուզեց, վիճել չէր ուզեր. «իրե՞ն ինչ ուրիշները»։

Արդեն ընկերը՝ Սերոբն ալ խոսքը դարձուց կատակի.

— Բայց քանի որ այս երկրավոր վաղանցիկ կյանքին մեջն ենք դեռ՝ ավելի լավ է որոշենք, թե ո՞ւր պիտի երթանք հացեն ետքը, պտտելու, և խոսքը Արտաշեսինն է։

— Հացեն ե՞տքը,— հարցուց Սիրաքյան ու ցնցվեցավ, ասես ջուրն էր ինկած Շուշիկի հետ պտույտը։

— Այդչափ դժվար է ընտրե՞լը։

— Տեսնենք, երևի տեղ մը կերթանք,— պատասխանեց վերջապես դժկամ։

## Է

Դուրսի նորածին լույսը եկեղեցիին նեղ ու երկար փոքրիկ պատուհաններեն հազիվ ներս կսպրդեր. և թանձր խավար էր դիզվեր անկյունները, սյուներուն ետևը ու գմբեթի փոսին մեջ։

Խորանին վրայի զույգ մը մոմերու ուժասպառ լույսերը վարդապետի արտասանած յուրաքանչյուր բառեն կարծես կսարսռային, տեսակ մը հիվանդոտ դեղնություն թափելով իրենց անմիջական մոտիկ փոքր տարածության մը վրա, որ հետզհետե որքան հեռու, այնքան ավելի կգունաթափեր, կմարմրեր, մինչև որ մութի շերտերուն մեջ վերջնականապես խեղդվեր։

Վարդապետը սյունին տակը արձանացած՝ իր աղոթքները կծամծըմեր իրարու ետևե, դպիրը աղտոտ ու գորշ եկեղեցական շապիկը վրան, ժանգոտ ու զողանջող բուրվառը ձեռքը սեղանին դեմ կեցած՝ վարդապետին արագությանը հասնելու կջանար, մինչ տիրացուները՝ նույնպես մոմոտ ու գորշ շապիկներու մեջ՝ գմբեթին ճիշտ տակը դիրք էին բռնած գրակալին առջևը ու բարակ մոմերով շարականը լուսավորած կերգեին իրենց կարգին՝ իրենց առաքելության ու արվեստին գիտակից հաստատ ու լեցուն շեշտերով։

Երեքեն միայն Սիրաքյանն էր, որ կես քայլ մը չափ ետ քաշված, ձեռքերը ծալած կուրծքին ու գլուխը քիչ մը աջ ծռած անշարժացեր էր։

— Տղա՛, չերգե՞ս,— դարձավ Սերոբ հանկարծ ընկերոջը դադարի մը վայրկյանին։

— Գիտես, որ ո՛չ ձայն ունիմ, ո՛չ ալ եղանակներեն բան կհասկընամ,— պատասխանեց տղան կարճ։

— Բայց վերջապես պիտի սորվի՞ս, թե չէ՞,— վրա տվավ երկաբահասակը շտապ ու սկսավ «ալելույա»-ն։

«Սորվի՜լ…»։

Արտաշես աչքերը խորանի մոմերեն մեկուն լույսին հառած կըմտածեր։

Ընկերը իրավունք ուներ. այդ բոլոր երգերը, սաղմոսները, մաղթանքները, աղոթքները, չէ՞ որ այդ իր արհեստն էր դառնալու շուտով. իր արհեստը, գիտնալ այդ ամենը և ամեն օր կրկնել։ Հանկարծ սկսավ հաշվել, թե տարեկան ընդամենը քանի՞ ժամ է իր այդ պարտականությունը։ Առտուները մոտ երկու, ժա՛մ մը իրիկունը, տոն օրերն ու պատարագը միասին առնելով՝ միջին հաշիվ օրական չորս ժամ, ան ալ օրվան ու աշխատանքի ամենաթարմ ժամերեն։ Ու մտքով սկսավ երկար-բարակ 4-ը 365-ով բազմապատկել. ելավ 1460։

«Օրիորդ Մելինյանը գուցե իրավունք ունի. մեղք չէ՞ ձևական պարտականության մը համար սպանված այսչա՞փ ժամանակին»։

Տեսակ մը սրտնեղություն եկավ վրան ու մտածումները ընդհատեց։

Մինաս անոր առջևը կեցած՝ աղոթքի խոսքերուն հետևելով՝ շուտ-շուտ կծռեր ու կխաչակնքեր երեսը. խոշոր, փառավոր ու ծանր խաչեր ամբողջ կուրծքին ու դեմքին վրա։

Արտաշես սկսավ դիտել, նախ շրթունքը խածավ միայն և ուզեց կարևորություն չտա, բայց շուտով սկսավ ջղային դառնալ ու զայրանալ։

Այդ միջոցին էր, որ ետևեն եկեղեցիին դռան թեթև ճռինչը լըսվեցավ։

«Քանյաններն են». անցավ տղու գլխեն, ամոթի պես բան մը վազեց մեջեն ու առանց ետ դառնալ համարձակելու՝ ականջները սրեց։

Ներս մտնող չկար, գուցե հովն էր, կամ դուռը ինքնիրեն։ Միայն տըղուն մեջ ալ գամված մնաց այն համոզումը, թե ուր որ է հիմա Քանյանները ներս պիտի մտնեն։ Ընկերները նախորդ իրիկունը հայտնած էին անոնց այս առտու ժամասացություն ըլլալու մասին, և կիները շատ հավանական է, որ հետաքրքրվեին։

Դուրսեն լսվող ամեն ծպտուն տղու սիրտը նետել կուտար ու լսելիքը կլարեր։



Անգամ մը նայեցավ իր վրան. երկար շապիկը մոմոտ ու աղտոտ կախված էր ուսերեն, կուրծքի բացվածքեն իր հագուստները կերևային, յուրաքանչյուր թևին վրա փեթոտած ոսկեթելով բանված խաչ մը, նույն փեթոտած ոսկեթելը նաև վարը շապիկին եզերքը, որուն տակեն տաբատին ոտքերը շատ ծիծաղելի կերպով դուրս կնետվեին։ Նայեցավ երկար իրեն, վերջը փորձի համար նայեցավ իր ընկերներուն վրա և հանկարծ շա՛տ, շա՛տ տարօրինակ թվեցավ իրեն այդ հագուստները, այդ դիրքը։

«Ո՞վ գիտե ո՛րչափ մեզի մեղքնան պիտի Քանյանները», անցավ մտքեն ու ամոթեն ու զայրույթեն կարմրեցավ։

Ո՛չ, չէր ուզեր, որ իրեն այդ դիրքին մեջ տեսնեին, պե՛տք չէր։

— Ես կերթամ,— շշնջեց կամաց մը ընկերներուն և առանց անոնց զվարած դեմքերուն ուշ դարձնելու՝ մտավ պահարան, հանեց շապիկը ու պատերուն տակեն արագ դուրս սպրդեցավ եկեղեցիեն։

Դուրսը պայծառ օր էր արդեն։ Արևը ձորի ձախ շրթունքին վրձինի մեկ շարժումով ոսկիի գույն էր քսեր ու թա՛րմ, զո՛վ լեռնական օդ մը։

Բոլոր կրծքովը խոր շունչ մը առավ, վազեց իրենց սենյակեն վերցուց իր սրբիչը ու նետվեցավ վանքի դուռնեն դուրս, մինչ ձորի պատերուն մեջ վանքի զիլ փոքրիկ զանգակը սկսավ կատակասեր արձագանքներուն հետ խաղի ելլել՝ ժամասացության մեկ նոր բաժանումը ազդարարելով։

Քանյաններու բնակարանին դուռն ու պատուհանները բաց էին, թեև մեջտեղը ոչ ոք չկար։

Տղան շտապ ձորեն վար վազել կուզեր, որ ետևեն իր անունը տվին.

— Պարո՛ն Սիրաքյան։

Քանյանն էր տան պատուհանեն։

— Ո՞ւր կշտապեք այդպես առանձին։

Տղան դիմեց դեպի պատուհանը։

Օրիորդն ալ եկավ պատուհան.

— Բարի լույս։

— Բարև, կերթամ լողանալու։

— Մինա՞կ, ո՞ւր են ձեր ընկերները,— հարցուց Քանյան։

— Անոնք եկեղեցին են։

— Եվ դուք ո՞չ,— հարցուց աղջիկը զարմանքով։

— Ես ալ հոն էի, ներսի օդը քիչ մը շատ ճնշված էր, և սիրտս լողալ կուզե,— պատասխանեց երիտասարդը անսովոր համարձակ շեշտով մը ու տեսակ մը քմայնոտ։

— Իսկ մեր միասին պտույտները այլևս վերջացան իհարկե,— վրա բերավ Շուշիկ ժպիտը շրթունքին։

— Պարոնը չի կրնար ընկերները ձգել, պետք է անոնց հետ երթա, երկի գործ ալ կունենան միասին,— արտասանեց Քանյան։

— Չէ՛, այդ չէ պատճառը, բայց պարոն Սիրաքյանը անշուշտ ալ ինծի հետ ըլլալե կքաշվի։

— Ինչո՞ւ, օրիո՛րդ։

Ու շփոթումեն ձեռքերը ուր դնելը չէր գիտեր։

— Նո՛ւ, պարզ է. ձեր ընկերներեն կակնածիք։ Արդեն երեկ իրիկուն նկատեցի, որ ձեր շարժումները բոլորովին ուրիշ էին ինծի հետ, տեսակ մը պաշտոնական։ Եվ ձեզի չեմ կրնար մեղադրել, կհասկնամ, որ ինծի մոտիկ ըլլալը ձեր հարգը պիտի ձգե ձեր պաշտոնակից ընկերներու աչքին։

Տղու աչքերը հանկարծ բոցավառեցան։

— Ձրի ենթադրությունները, հարգելի՛ օրիորդ, դրեք մեկդի։ Եվ պատրաստ եղեք ճաշեն ետքը, որ երթանք պտույտի. և՛ այսօր, և՛ վաղը, և՛ ամեն օր, քանի որ ես հոս եմ, և՛ առանձին, առաջվան պես, ո՛ւր որ կուզեք, ի՛նչպես որ կուզեք, ե՛րբ որ կուզեք։

Այդ ոգևորության ու տղու աչքերուն այդ կայծկլտումին դեմ՝ Շուշանիկի այտերը հանկարծ հուր առին, ու կուրծքը սկսավ թեթև մը դողալ։

— Շնորհակալ եմ,— ըսավ վերջապես աղջիկը գլխու թեթև շարժումով մը ձեռքը պատուհանեն դուրս պարզելով։

Տղան բռնեց ու թոթվեց։

— Ուրեմն կսպասեմ, ժամը երկուքին։

— Ժամը երկուքի՛ն, օրիո՛րդ, ցտեսություն։

Ու գլխարկովը անոնց վերջին բարև մըն ալ տալով՝ դեպի ձորին էջքը վազեց։

Շուշիկ աչքերովը հետևեցավ տղուն, մինչև անոր ժայռերուն ու ծառերուն ետևը աներևույթ ըլլալը, վերջը ծանր ու հանդարտ քաշվեցավ քիչ մը ետ, վերցուց իր պատուհանին մեջ ձգած կարը, նստեցավ ու սկսավ արագ աշխատիլ, տեսակ մը տենդոտ շարժումներով, հազիվ կարելի էր ասեղը նշմարել։

— Մե՜ղք այդ տղաքը,— բացականչեց տիկինը սենյակին խորքեն,— խելքս չի հասնիր, ինչպես են հոգևորականության այդպես սեր տվեր։

— Ի՞նչ կա չհասկնալու,— պատասխանեց ամուսինը։— Երիտասարդ, հափշտակվող տղաք են, ամեն բան տակնուվրա ընելու, անոնց



աղմուկ հանելու պահանջը մեջը կեռա իրենց թարմ արյունին հետ, ու դեռ չի գործածված ուժեր ունին իրենց ջիղերուն մեջ. ատոր կըսեն երիտասարդության ծարավ։ Վանքի մեջ ականջնին լեցուցեր են, թե գլխուն վեղարն ունեցողն է ազգին փրկիչը, խեղճ տղաքն ալ հավտացեր են։

Մինչ «խեղճ տղան» նույն թափովը կշտապեր ոտքի նեղ շավիղեն վար, որ նեղ ու երկար ժապավենի մը պես ինկեր էր ժայռերուն մեջ ծուռումուռ։ Խիճ ու ավազ կգլտորեին անոր արագ քայլերուն տակեն, և հո՛ս ու հո՛ն այդ աղմուկեն խրտնած մեկ-երկու խլեզ ժայռերու մեջ ծերպ մը կաճապարեին իրենց երկար պոչերը ետևնուն քարշ տալով։

Ժապավենը կերկարեր ու մյուս եզերքը անցնելու համար կմտներ նույնիսկ գետակին մեջ, ուր ջուրեն դուրս ցցված քարերու շարք մը բզկտած ժապավենին փեռթերը կներկայացնեին։

Ջուրին վրա տղան թռցուց ժապավենը ու քարե-քար ցատկելով՝ իջավ հոն, ուր սովորաբար լողալու կուգար։ Ահագին ապառաժներուն գրկին մեջ սեղմված գետակի ամենեն խորունկ ու ամենեն ընդարձակ տարածությունն էր, ուր մեկ կողմեն ջուրը բյուրեղ ջրվեժով ներս կըխուժեր հանձնապաստան աղմուկով մը, մինչ մյուս կողմեն իր նախորդ ալիքներուն նման ի՛նքն ալ հանդարտած ու հիասթափ ճամփան կշարունակեր դժգոհության մրմունջը շրթունքներուն վրա։

Երիտասարդի հանվիլն ու ջուրը նետվիլը ակնթարթի մը գործը եղավ, վերին աստիճանի զվարթ ու կայտառ տրամադրությամբ մը։ Ջուրը սառն էր ու դանակի պես կկտրեր և տղան կպոռար ցավեն ու հաճույքեն՝ անոր հստակ ու հեղուկ մկաններուն մեջ ձուկի մը պես գալարելով։

Երբ վանք դարձավ՝ ընկերները եկեղեցիեն նոր ելած նստեր էին իրենց սենյակը նախաճաշի լուրջ ու մտախոհ դեմքերով։ Սենյակին դուռը կռնակին վրա բաց էր։

Սիրաքյան մեկ ոստումով ցատկեց ներս՝ թեթև ու աշխույժ։

— Բարի լո՛ւյս ձեզի։

— Աստծու բարի՛ն։

— Ո՞ւր էիր,— հարցուց երկարահասակը կարճ ու չոր։

— Լողալո՛ւ, այնպե՜ս հիանալի պաղ է ջուրը։

Թոթվեց երեսսրբիչը ու փռեց սենյակի դռան քովը մամռոտ քարի մը վրա։

— Ատո՞ր համար եկեղեցիեն ելար,— հարցուց նույն հանդարտ ու չոր ձայնը, որուն տակեն գալիք փոթորիկը իր գլուխը ցույց կուտար։

— Գրեթե՛, քիչ մը սիրտս նեղ էր ներսը։

— Ա՜խ, այդպես ըսե՞ս, մարդ Աստծու,— մեջ նետվեցավ Սերոբ՝

ուրախ խնդրի այդ հաշտարար ձևը առնելեն։— Երևի շնչառության դըժվարություն. խոնավ են հոս սենյակները։

— Իմ շնչառությունս ոչ մեկ դժվարություն չունի,— պատասխանեց Սիրաքյան քնքուն ալ հետզհետե գրգռվելով այս հարցաքննություններեն։

— Այն ատե՞ն,— շեշտեց Մինաս խիստ։

— Այն ատեն անպատճառ իմանա՞լ կուզես, թե ինչու եկեղեցիեն ելա. իմացի՛ր, որովհետև ինծի անտանելի էին քու անվերջ խոշոր խաչերդ ու մեր միալար երգերուն հավիտենական կրկնությունը, գո՞հ ես հիմա։

— Եվ դուն քանի մը շաբաթեն սարկավագ պիտի ձեռնադրվիս, հա՞։

— Սարկավա՞գ...

Կարծես այդ բառը կյանքին մեջ առաջին անգամը կլսեր։

Բավական վերջն էր, որ կոտրած շեշտով մը ավելցուց.

— Համենայն դեպս ոչ տարին 1460 ժամ այդ մռայլ պատերուն տակ աղոթք մրմնջելու համար։

— Երանի՛ մեզի։ Կլսե՞ս,— դարձավ Մինաս Սերոբին։

Իսկ Սերոբ անհրաժեշտ համարեց այս սուր խոսակցության վերջ դնել ու բացականչեց բարկացած շեշտով.

— Ես հոս եկեր եմ թարմանալու ու պտտելու, և ոչ թե ձեր տըխմար վեճերը լսելու. հերիք է վերջապես։ Ի՞նչ ենք ընելու ճաշեն ետքը, կուզեմ, որ բարձրանանք Ագարակ։

— Այո՛, արժե որ երթաք Ագարակ,— հաստատեց Սիրաքյան անտարբեր շեշտով մը, ներքին անհանգստությունը հնար եղածին չափ քողարկել ջանալով,— թեև ես այսօր ձեզի հետ գալ չեմ կրնար։ Նախ որ վերը Ագարակի կողմերը ես արդեն եղած եմ քանի մը անգամ, և երկրորդ՝ օրիորդին խոստացեր եմ այսօր միասին Տեկոր երթալու։

— Որո՞ւն,— հարցուց Մինաս, կարծես ականջին չհավատալով։

— Օրիորդի՛ն, օրիորդ Մելինյանի՛ն։

Երկար ու կարճ ընկերները ակնթարթ մը շեշտ իրարու երես նայեցան։

Եվ ո՛չ ոք, ոչի՛նչ չպատասխանեց։

## Ը

Արևը արևմուտքի ատամնավոր լեռներեն մեկուն ուսին հենած՝ խոշոր դեմքովը կծիծաղեր ընդարձակ լեռնադաշտի լայն մեջքին վրա, որուն մեկ կողմը ինկած էր Խծկոնքի ձորի երկար ու խոր ճեղքը. ճեղք մը



կարծես նշդրակով բացված ծերուկ բարձրավանդակի թիկունքին՝ վիթխարի վիրաբույժի մը հմուտ ձեռքին տակ, որուն արդյունքն էր բացվածքին ծուռումուռ շրթունքը։

Շրթունքի այն մասին վրա, որուն տակ ձորին պատը սեպ վար կսահեր դեպի անդունդը, վերը ճեղքի ճի՛շտ եզերքին, գետի՛նը չորցած խոտերուն վրա ինկեր էին երկու վարդապետացուները։

Առատուն անոնք Արտաշեսի վարմունքեն վրդովված ու զայրացկոտ՝ նույնիսկ պտույտի տրամադրությունը կորսնցուցեր էին։ Իրիկվան դեմ միայն՝ «քիչ մը բացվելու համար»՝ բարձրացեր էին ձորեն դուրս լեռնադաշտը։ Այդ ելքը փոխեր էր արդեն անոնց տրամադրությունը և Արտաշեսն ու «իր հիմարությունները» վերջապես մեկ կողմ թողած սկսեր էին կրկին իրենց սովորական խոսակցություններն ու ոգևորությունը, մինչև որ հոգնած նետվեր էին հող պահ մը հանգստանալու։

Մինաս ամբողջ երկայնքովը փռված կռնակին վրա, աչքերը երկնքի մաքուր կապույտին հառած՝ կմտածեր։

Կմտածեր և Սերոբ նստած, ոտքին մեկը դեպի կուրծքը ծալլած, դեմքը դրած ծունկին ու հայացքը վարը ձորի մեջեն վեր սլացող գըմբեթներու կույտին գամած։

Հանկարծ կես մը ընկերոջը դառնալով՝ բացականչեց.

— Ամե՛ն, ամե՛ն լեռան կողքին, ամե՛ն ձորի մեջ հետք մը կա. կա մնացորդ մը ավերակ կամ շեն, որ կողմն ալ որ նայիս։ Թագավորի մը հիշատակը, իշխանի մը նվերը իր ժողովրդին։ Մարդ ամեն վայրկյան ակամա այդ Բագրատունիներու ստվերը իր շուրջը կզգա. այդ խելացի, խորամանկ ու հայրենասեր թագավոր-նախարարներու։ Եվ գիտե՞ս, տարօրինակ զգացում մըն է. կարծես հյուր եկած ըլլամ այդ իշխաններուն հողը, ամեն ավերակ, քար, բերդ կամ եկեղեցի պատմություններ կբանա իր ծոցեն։ Ա՛խ, ինչե՛ր, ինչե՛ր պահված չեն այդ թափթփած սյուներուն ու քարերուն տակ և անոնց արձանագրություններուն մեջ։ Եթե այդ բոլորը փորվեր, հետախուզվեր, որչափ թանկագին հնություններ դուրս պիտի ելլեին, ի՛նչ պատմական գանձ։

Ու ոգևորված աչքերը հպարտությամբ փայլեցան։ Ակնթարթ մը մտածեց ու կրկին վրա տվավ.

— Արդեն ի՞նչ բանի վրա ուշք են դարձուցեր մեր հոգևորականները մինչև հիմա։ Բոլո՛րը ծայրեն սկսելու է. ժողվե՛լ մեր հին գրականության փշրանքները, հանե՛լ մեր իշխաններու ու կաթողիկոսներու պատմությունը այդ հողոտած արձանագրություններեն, հետզհետե հավաքել այդ հնախոսական բեկորները, ձեռագիրները, էջմիածինը կա-

բերի է առաջնակարգ կեդրո՛ն մը դարձնել այդ ժողովածուներուն ու մեր պարծա՛նքը։

— Կըլլա, կըլլա,— պատասխանեց Մինաս վստահ ու հավատքի խորին շեշտով մը՝ կռնակի վրայեն քիչ մը կողին դառնալով։— Արշալույսը ծագած է արդեն մեր կաթողիկե աթոռի միաբանության վրա։ Կարգապա՛հ, սրբակենցաղ հոգևորական միությո՛ւն մը նոր, բոլորս միաբան նվիրված մեր սրբություններուն, դարևոր ավանդություններուն ու պատմական բեկորներուն նախանձախնդիր պաշտպանությանը։

— Անշուշտ։ Միաբանություն մը շա՛տ ավելի ազգային, քան Վիեննան ու Վենետիկը. ան ալ մեր բուն ժողովուրդին մեջ, մեր բուն հողին վրա։

— Եվ մանավանդ մեր բուն առաքելական ու կաթողիկե սուրբ եկեղեցիին ծոցը։

Ակնթարթ մը լռություն տիրեց։

Մինաս հանկարծ ելավ նստեցավ ու մատը թափ տալով ընկերոջ վրա՝ բացականչեց.

— Պե՛տք է, պետք է հասկցնել այդ կաթողիկներո՛ւն, բողոքականներո՛ւն, որ մեր եկեղեցին քրիստոնեական առաջին դարերու կազմակերպության ամենեն անաղարտ նմուշն է, հիմնված երկու առաքյալներու ձեռքով, ամենազուտ, հերետիկոսություններե զերծ մնացած ամենահին եկեղեցին։ Մինչև հիմա ծռեր, խեղաթյուրեր են փաստերը, պատմությունը, աշխատեր են մուտք գործել մեր փարախը ու միամիտները գայթակղեցնել. իրենք խոսեր են շարունակ աստվածաբանական գիտություններու, ուսումնասիրություններու անունով, իսկ մերինները երեխայական բաներ են միայն պատասխաներ։ Բայց հիմա չգիտես ի՛նչպես սիրտս կեռա անհամբերութենեն. վայրկյան մը առաջ ե՞րբ պիտի ինքզինքնիս Գերմանիա նետենք, աստվածաբանությունը հիմնապես յուրացուցած դառնանք ետ, ու իրենց զենքերը իրե՛նց դեմ։

— Ինծի ճշմարիտ կատակ կթվի, որ քանի մը ամիսեն արդեն հեռո՛ւ, հեռու պիտի ըլլանք մեր հայրենիքեն, մեր այս հողեն ու ջուրեն։ Օտարությա՛ն մեջ։ Ճիշտ Սահակ Մեսրոպի ժամանակները. եփրայերենի, ասորերենի, հունարենի խորերը թաղված...

— Եվ մա՛նավանդ Աստվածաշունչի աղբյուրներու համեմատություն. էականը չմոռնանք։ Երբեմն պարզ «և» մը կամ «ուստի» մը ամբողջ դավանաբանական փաստ մը կրնա դառնալ և կրնա համառ վիճաբանություններու բովանդակ դեզ մը ջախջախել։ Կեցի՛ր դուն. այս երեք-չորս տարին ալ անշուշտ կանցնի, ու մենք նորեն հո՛ս ենք՝ այս



հողին վրա՝ զինված ու պատրաստ մեր հավատքի ու ազգի զարգացման ու բարգավաճմանը համար կռվելու։ Ելի՛ր, ելի՛ր։

Ու ինքը ոտքի ցատկած՝ սկսավ ոտքովը ընկերը հրել։

Ելավ Սերոբ ալ, և ուղղվեցան դեպի ձոր։

Արևը արդեն «գիշեր բարին» ըսեր էր շատոնց, ու մութը խտանալու վրա էր, որ հասան իրենց սենյակը։

— Արտաշեսը դեռ չէ եկած,— նկատեց Սերոբ։

— Եվ դուրսը արդեն մութ է,— շեշտեց ընկերը։

Ու վայրկյան մը վերջը ավելցուց.

— Ո՛չ, այս իրիկուն հետը լուրջ խոսելու է և այս անհամություններուն վերջ դնելու. ամեն բան իր չափը ունի վերջապես ու իր սահմանը։

— Եղբա՛յր, այդչափ ալ ետևեն մի՛ իյնար, գիտես, որ բնավորությունը քիչ մը համառ է, քիչ մըն ալ իր խելքովը ազատամտություն ծախել կուզե. այսինքն թե՝ ինչո՞ւ օրիորդի մը հետ շրջելու պիտի չերթա, ի՞նչ վնաս, միթե վարդապետը մարդ չէ՞։

— Հիմարություն է անխորհուրդ տեղը իր վրա ամեն տեսակ բաներ խոսեցնել տալը,— պատասխանեց ընկերը խստորեն։— Հիմա ի՞նչ ըսես չեն մտածեր, եթե հանկարծ լուրը էջմիածին հասնի, թե հո՛ս ձորերուն մեջ առանձին օրերով աղջկան մը հետ կթափառի, ո՞վ պիտի համոզե, որ այդ բոլորը մաքուր է ու թեթև ազատամտության հետևանք։ Ազատամտությո՜ւն...

— Բայց խելացի ու ազնիվ տղա է, վերջիվերջո խելքի կուգա. թո՛ղ անգամ մը սարկավագ դառնա, քիչ մը տարիքն ալ լենա...

Դուրսը ոտքի ձայներ լսվեցան, Մինաս ձեռքով նշան մը ըրավ ընկերոջը, կարճահասակը խոսքը կտրեց։

Ներս մտավ Սիրաքյան հանդարտ քայլերով ու անտարբեր ըլլալ ուզող ձևով մը բարևեց։

— Ի՞նչ բանի եք այս նեղ սենյակին անկյունը։

— Տնտեսուհիին կսպասենք, որ սամավարը տանանք։

Պատասխանողը Սերոբն էր։

— Բայց չէ՞ որ Քանյանները երեկ գիշեր հատուկ խնդրեցին, որ թեյի իրենց երթանք նորեն։

— Ի՞նչ կարևորություն կա ամեն իրիկուն. երեկ գիշեր հոն էինք՝ հերիք է,— հակառակեցավ Մինաս։— Քանյանը կհրավիրե, իր հաշիվը ունի, իր փտտած փիլիսոփայությունները դուրս տալու ու մատներուն մեջեն հեգնելու համար։ Այդ մարդիկը այդպես են արդեն. իրենք պըռակվեր, կնիկնին առեր նստեր են ու իրենց փորեն անդին չեն մտա-

ծեր, իսկ ով ալ որ քիչ մը ուրիշ կերպ մտածելու ու գործ տեսնելու միտք ունի՝ ան ալ կծաղրեն։ Խեղճուկնե՛ր, ծաղրել գիտեն միայն։

— Ամեն մարդ իր համոզումը ունի,— նկատեց Սիրաքյան չոր։— Եվ ով որ իր համոզումը չի կեղծեր՝ ազնիվ մարդ է ան։ Իսկ մասնավորապես Քանյանի մասին աղեկ կըսեմ, բոլորովին լռես. երանի ամենքը անոր կեսին չափ սրտաբաց ու կարեկից ըլլային, և քեզի ո՞վ ըսավ, որ ան գործ չի տեսներ. իսկ իր կին ունենալու մասին այդպես արհամարհանքով խոսիլդ ուղղակի տգեղ է։

— Դուն սիրահարեր ես երևի այդ ընտանիքին վրա։

— Սրտանց ուրախ եմ այդ ընտանիքին հետ ծանոթացած ըլլալուս։ Դուք ալ որ քիչ մը մոտենայք, դուք ալ կհամակրիք։ Անոնց պարզ խոսելեն պետք չէ որ խրտնիս, մի՞թե քեզի համար ցանկալի է կեղծավոր ու խորամանկ մարդոց հետ գործ ունենալը։ Քալեցե՛ք երթանք։

— Ո՛չ,— եղավ վճռական պատասխանը։

Արտաշես կռթնեցավ դռան սեմի շրջանակին ու աչքերը մութին մեջեն ընկերոջը դեմքին շեշտեց։

— Ինծի՛ նայե, Արտաշե՛ս, դուն դեռ շատ պարզ միտք ու միամիտ ես և ըրածդ ինքդ ալ չես հասկնար. ես քեզի խորհուրդ կուտայի քիչ մը ավելի զգույշ ըլլայիր. առտուն չուզեցի խոսիլ՝ գրգռված էիր, հիմա կհուսամ ավելի պաղ մտածես։

— Եվ ի՞նչ է տեսնենք պաղ մտածելիքս,— հարցուց տղան ծաղրածու շեշտով մը, երկու ձեռքերը երկու կողմեն գրպանները դնելով։

— Երեխա չես վերջապես, պետք է հասկնաս, որ կրնան վրադ խոսիլ։

— Ի՞նչ կրնան վրաս խոսիլ։

— Սիրելիս, մի՞թե ա՞յդ աստիճան միամիտ ես. վարդապետացու երիտասարդ տղա մը ու սիրուն աղջիկ մը շարունակ առանձին ձորի ժայռերուն մեջ։

— Է՛-է՞,— հարցուց տղան հազիվ իր ուռած զայրույթը զսպելով։

— Ամեն բան կրնան եզրակացնել վերջապես։

— Եվ այդ կրցողը, այդ եզրակացնողը ո՞վ է,— կրկնեց տղան սեղմված ակռաներուն մեջեն դողացող ձայնով մը։

— Վերջապե՛ս, այս վանքին մարդիկը։

— Վանքի՛, հա՛-հա՛-հա՛ հա՛, հայր-սուրբերը ու տնտեսուհին, փհարկե՛, իհարկե՛, վա՛նքը։

— Հոս խնդալու բան չկա։ Տնտեսուհին քաղաքական ակնարկությունները ըրավ արդեն այսօր, երեկի ծամածռությունները տեսնելու էիր, առ-



տուն ալ հայր-սուրբը քանի մը հատկցուց, որ քեզի քանի մը անգամ աղջկան հետ տեսեր է, մանավանդ մեր գալեն առաջ։

Տղան կարծես սկսավ մտածել և վերջը վերին աստիճանի լրջությամբ ըսավ.

— Ուրեմն Քրիստոստուր հայր-սուրբ և Եղսո տնտեսուհին չեն բարեհաճիր, որ ես ալ ուրիշ մարդ իմ բարեկամներս ունենամ, տեսնըվիմ, խոսիմ։ Եվ երևի, Եղսո տնտեսուհիին այդ փաստաբանությունը դուն ես վրադ առեր, ոչի՛նչ։ Սրտանց կշնորհավորեմ նոր պաշտոնդ։

— Արտաշե՛ս, հոգի՛ս, այդպես թեթև կարելի չէ վերաբերվիլ,— մեջ նետվեցավ վերջապես Սերոբ, որ մինչև հիմա լուռ մտիկ կըներ միայն։— Չէ՞ որ այդ բոլորը էջմիածին կհասնի, և հոն արդեն առիթ կփնտրեն վրանիս հարձակվելու համար, այդ արտաքին ձևականությունները պետք է հաշվի առնել։

— Ձևականությո՛ւն ու ձևականությո՛ւն։ Ձևականության համար առտու-իրիկուն ժամ երթամ, ձևի համար երգեմ, աղոթեմ, խաբեմ, ձևի համար դդում-գլուխ եպիսկոպոսի մը առջև խոնարհիմ, իմ կարծիքներս ծածկեմ, իմ համոզումներս ծռեմ ու կեղծեմ, ձևի համար հարաբերությունս կտրեմ մարդկության կեսին հետ. ձևի համար... Չէ՛, ինծի նայե՛, ես շնորհակալ եմ քու այդ ձևականություններդ։

Եվ լռնդոստ շարժումով մը դարձավ իր առանցքին վրա ու ցատկեց սեմեն դուրս։

— Ո՞ւր կերթաս,— պոռաց ետևեն Մինաս։

— Հո՛ն, ուր ձևականություններ ընելու պետք չունիմ։

Ու վանքի դարպասեն դուրս՝ ուղղվեցավ շիտակ Քանյաններուն բնակարանը։

## Թ

Ամեհի ժայռը իր լերկ կռնակը արևին տված՝ նստեր էր գետի տաշտին մեջ չայն ու ծալլապատիկ։ Փոթորիկներեն խորշոմած ճակատը իր մեփական սովերին մեջ կախված՝ թաղվեր էր խոր մտմտուքի մեջ ժայռերուն այդ վիթխարի ճգնավորը։

Եվ գետակին կենսուրախ կոհակները զվարթ ու ճայտառ երբ աղմուկով իրենք իրենց ու իրարու վրա գլտորելով այդ խոժոռ փիլիսոփային առջևը կհասնեին, ակնթարթ մը կանգ կառնեին զարմանքնուն. սակայն իսկո՛ւյն այդ խոր լրջության դիմաց ծիծաղնին զսպելու այլևս անկարող՝ անոր երկու կողմեն վար կցատկեին որքան կարելի է շուտ,

և իրենց չարամիտ ու հնչուն քրքիջը կ'ավեր դեռ երկար, նույնիսկ վա՛րը՝ հեռուե՛ն։

— Նստի՛նք հոս։

Ու զրչագգեստը քիչ մը ժողվելով՝ ինկավ աղջիկը քարի մը վրա, փիլիսոփայության ստվերին տակ, ջուրին ճիշտ եզերքը։

Արտաշես լուռ՝ նստեցավ անկե քիչ մը վար, ուրիշ քարի մը վրա, հանեց գլխարկը ու նետեց քովը։

Երեկոյանալու մոտ էր. հոգնությենեն շիկնած արևը տեսակ մը նարինջի ճառագայթներ միայն կթափեր շեղակի ձորի բերնեն վար։

Հոգնած էր զույգն ալ երկար քալելեն ու խոսելեն, հոգնա՛ծ ու հրահյա՛ծ։

— Օ՛խ, ինչպես զո՛վ է հոս, և ինչպես սիրո՛ւն, նայեցե՛ք անգամ մը վեր, պարոն Սիրաքյան, չէ՞։

Պատասխանը ուշացավ։

— Չե՞ք պատասխաներ։

— Օրիո՛րդ, ի՞նչ պատասխանեմ, այս ձորին մեջ ինծի համար ամեն բան գեղեցիկ է։

Ու գավազանը ջուրին մեջ կոխած սկսավ խառնել։

— Խե՛ղճ բարեկամս, դուք դժգոհ եք ձեր վանքի կյանքեն։ Ձեր շրջապատը նեղ ու գոց կուգա ձեզի, ինչպես կտեսնեմ։

— Գո՛ց, գո՛ց, այո՛, բառի ճիշտ գլխուն զարկիք, գո՛ց։ Այդ ըզգացումը ես առաջ ալ տարտամ կերպով մեջս ունեցած եմ, բայց այս քանի օր է որոշ կգիտակցեմ արդեն։

— Այս քանի օ՞րը. ինչո՞ւ ուղղակի այս քանի օրը։

Ու ճակտին թափած կարճ մազերուն տակեն խորամանկ հայացքը զամեց խոսակցի դեմքին։

— Այս ձորին մեջ, ինչպես ըսի, ամեն բան այնպես սիրուն է ու այնպես մարդը մտածելու կտրամադրե,— եղավ խուսափող ու ժպտուն պատասխանը։

— Այո՛, ձեր մտածկոտ ըլլալը ես ալ նկատած եմ, մանավանդ ձեր ընկերներու գալեն ի վեր։ Ի դեպ, ինչո՞ւ երեկ իրիկուն անոնք մեզի չեկան։

— Արդեն ըսի երեկ, հոգնած էին քիչ մը։

— Անտիկա քաղաքավարության պատասխանն էր. ինծի ճշմարիտ պատասխանը տվեք դուք։

Տղան լուռ գլուխը կախեց։

— Կուզե՞ք ես ձեզի ըսեմ։

— Հապա՛։



— Որովհետև ձեր ընկերները վայրացած էին, որ ժամերով ինծի հետ էիք առանձին։

Տղան նորեն չպատասխանեց։

— Չէ՞,— պնդեց աղջիկը ինքնավստահ ժպիտով մը։

— Ենթադրե՛նք թե։

— Եվ այդ բոլորեն վերջը այսօր դուք նորեն ինծի հետ եք։

— Ինչպես որ կտեսնեք։

— Անիկա է, որ ինծի կզարմացնե։

— Ինչո՞ւ։

— Չէ՞ որ այս իրիկուն ձեր վերադարձին նույն անհաճո տեսարանները պիտի ունենաք ձեր ընկերներուն հետ։

— Չեմ կարծեր, բայց և դիցուք։ Ձեզի անցած օր ի՞նչ ըսի, օրիո՛րդ, իմ գլխուս տերը ե՛ս եմ։

— Եվ այս բոլոր գլխու ցավն ու տհաճությունները միայն ինծի համար, իմ պատճառովս։ Չգիտեմ, ճշմարիտ, ինչպես շնորհակալություն հայտնեմ ձեզի կամ ինչպես վարվիմ, որ ձեզի անախորժություն չպատճառեմ։ Գուցե ավելի լավ է, որ վերջ տանք մեր պտույտներուն։

— Վերջ տանք մեր պտույտներո՞ւն,— կրկնեց տղան երազկոտ՝ անկարելի բաներու շեշտով մը և ավելցուց։— Եթե գիտնայիք, օրիորդ, թե դուք և թե ընդհանրապես ձեր ընտանիքը իմ վրաս ինչ տպավորություն կընե, այն ատեն այդ պարապ ու ավելորդ խոսքերը չէիք ըսեր։

— Ի՞նչ տպավորություն։

— Ի՞նչ կարիք կա ծածկելու,— բացականչեց տղան հանկարծ ջերմ ու կտրուկ շեշտով մը։— Իմ մինչև հիմա ճանչցած մարդիկներես ոչ ոք վրաս այն տաք ու հափշտակող ազդեցությունը ըրած չէ, ինչպես ձեր քեռայրն ու դուք։ Պարոն Քանյանի ամբողջ խոսվածքին մեջ արդեն այնպես վստահություն ու անկեղծություն մը կա, որուն անկարելի է չհամակրիլ։

— Քեռայրս ալ ձեզի շատ է համակրած. ձեր ամեն մեզմե մեկնելուն նույնը կկրկնե, թե դուք շատ խելացի ու մաքուր բնավորության տեր տղա եք։

— Իրա՞վ, անչափ ուրախ եմ իր այդ կարծիքին համար։ Ի՛նչևէ։ Կտեսնե՞ք, օրիո՛րդ, ինքս վարդապետացու մարդ նստեր եմ ձեր դեմը խոստովանանքի։

— Բայց ինծի համար ամենեն էականը չխոստովանեցաք դեռ։

— Այսի՞նքն։

— Թե ե՞ս ինչով ձեր այս վստահության ու համակրանքին արժանացա։

Տղան կարծես երազի մեջ էր. շրջապատը մոռցած, մոռցած ինքզինքը, ամբողջ հափշտակությամբը կնայեր Շուշիկի բոցոտ, բարկացած ու մագնիսացնող աչքերուն։

Աղջիկը ընդհատեց ու կարծես առարկության կսպասեր։

— Շարունակեցե՛ք, օրիո՛րդ, շարունակեցե՛ք ձեր այդ հանդիմանությունը, կաղաչե՛մ։

Եվ այնպես անքող ուրախություն մը դրոշմվեցավ դեմքին, այնպես հմայված շեշտ մը կդողար իր ձայնին մեջ, որ աղջիկը ստիպվեցավ ժպտելու ու ձեռքը տղուն մեկնեց.

— Եկե՛ք, մնանք նորեն հին բարեկամներ, այո՞։

Երիտասարդը հափշտակեց այդ ձեռքը։ Վայրկյան մը ձեռքերը իրար սեղմած մնացին ջերմ ու բաժնվեցան։ Ու երկուքը քով-քովի ճամփա ինկան նորեն գետակին քովեն դեպի ձորն ի վեր։

Նախ լուռ էին, ոչ մեկը խոսելու տրամադիր չէր, երկուքին մեջն ալ հուզում մը կար ու իրարու նայելե կխուսափեին։

Վերջը սկսան խոսիլ հատկապես իրենց այդ անհարմար դիրքը կերպ մը սքողելու ջանքով ու հնար եղածին չափ անտարբեր նյութերու վրա։

Շուշիկ իր հիվանդանոցի կյանքեն բան մը պատմելու վրա էր, որ հանկարծ կանգ առավ ու հագուստին փեշերը ժողվեց։

Ջուրի պատեն, ժայռերուն ծերպերեն, հինգ-վեց տեղե ջուր վար կծորեր հանդարտ, մամռոտ կանաչության մը մեջեն և ձորի պատեն մինչև գետը եղած տարածությունը, որուն վրայեն զույգը կքալեր, բանի մը կանգուն երկարությամբ բոլորովին թաց էր ու ջուր։

Միրաքյան նախ փայտը այդ ջուրը խրեց, վերջը փորձեց մեկ ոտքովը. խոր չէր։

— Հողը պինդ է ու քարոտ. քիչ մը պետք է կոշիկները թրջին, ուրիշ ոչինչ,— վստահություն ուզեց տալ ընկերոջ։

— Անշուշտ եթե ես ալ ձեր հաստ կաշիե կոշիկները ունենայի,— առարկեց աղջիկը ու մնաց անշարժ։

— Աղե՛կ, վերադառնանք։

— Ոչ, շարունակե՛նք, ձորի այս մասը մանավանդ դեռ շնորհքով չեմ եղած։

— Լա՛վ, հանեցե՛ք կոշիկները։

— Ո՜ւհ, երկար-բարակ պատմություն։

— Այն ատեն, օրիորդ, եթե կուզեք կարճ պատմություն...

Տղան ժպտեցավ ու խոսքը կտրեց։

— Այն ատեն ի՞նչ։



— Դո՞ւք, դո՛ւք...— կմկմաց տղան բախտավոր ժպիտով մը։— Հոդ շատ բաներ կան իրարու խառնված։

— Օրինակի համար։

— Օրինա՛կ, ձեր տեսակ մը բնական հպարտությունը ինծի շատ գրաված է, միևնույն ժամանակ և պարզությունը, վերջապես ձեր մտածումներն ու հայացքները կյանքի մասին, ձեր անկախության ձգտումը, և այն, որ ձեր մորն ու փոքր եղբայրներուն համար աշխատիլ կուզեք, և այլն, այսչափը հերիք չէ՞։

Ընդհատեց հանկարծ ու խնդաց։

— Ուրախ եմ անշուշտ, որ մեր միասին անցուցած ժամերը ձեր վրա անհաճո տպավորություն չեն թողած։

— Մեր միասին անցուցած ժամերը, օրիո՛րդ Մելինյան, ես իմ ամբողջ կյանքիս մեջ ալ չեմ մոռնալու. ո՛չ այս ձորը, ո՛չ մեր թափառումները, ո՛չ խոսածնիս, ո՛չ ձեր ձայնն ու շարժումները։

Աղջիկը գլուխը քիչ մը աջ ծռած՝ լուռ ու անթարթ կնայեր երիտասարդին։

Մինչ տղան կշարունակեր նույն տաք ու բաց շեշտովը։

— Անտարակո՛ւյս ատիկա ինքներդ ալ շատ աղեկ գիտեք, բայց կետ մը կա, որ չգիտեք և գուցե չեք ալ կրնար հասկնալ, թե ինչ ստիպման ինծի համար հիմա անհրաժեշտություն դարձած է ձեր մտերմությունը, ձեզի հետ խոսիլը, ձեր առջև իմ մտածումներս ու տպավորություններս հայտնելը։

— Կկարծե՞ք ուրեմն, որ չեմ հասկնար։

— Այո, որովհետև դուք իմ զգացումներս ալ ձեր զգացումներուն վրա պիտի չափեք, իսկ իմ բարեկամությունս ի՞նչ մասնավոր արժեք մը կրնա ունենալ ձեզի համար։ Պատահական հանդիպում մը, գուցե զվարճալի ժամանց մը այս ձորերուն մեջ, բան մը, որ վաղը մոռցած եք արդեն։ Իզուր մեղմել մի՛ փորձեք, ես գիտեմ։

Աղջիկը կուրծքը շիտակ, համառ նայվածքը հառած երիտասարդին վայրկյան մը լուռ մնաց, վերջն ալ սկսավ խոսիլ բարկացած շեշտով մը.

— Ուրեմն կկարծեք, որ առանց ձեր մտերմությունը մասնավորապես գնահատելու, առանց ձեր կյանքով ու մտածումներով հետաքրքրված ըլլալու, առանց դեպի ձեր ընկերությունը մասնավոր հակում մը ունենալու, ես այսպես ժամերով ու օրերով կթափառիմ ձեզի հետ առանձին այս ձորերուն մեջ ու այսպես սրտանց կլսեմ ձեզի և կպատմեմ ամեն բան։ Չէ՛, ճշմարիտ ինծի շատ աղեկ ճանչցեր եք ու քիչ մը առաջ կըսեիք, որ իմ հպարտությունս է ձեզի մանավանդ դուր եկած։

— Այն ատեն… այն ատեն կմնա, որ ես ձեզի այդ կտորի վրայեն անցընեմ։

— Ի՞նչպես կրնաք դուք ինծի անցընել,— հարցուց աղջիկը զարմացած դեմք մը շինելով։

— Ինչո՞ւ չեմ կրնար, կկարծեք ձեզի բարձրացնելու չափ ուժ չունի՞մ։

— Ինծի գրկեք, տանի՞ք, դո՞ւք, վարդապետ մարդ, է՜, դուք դժոխք երթալե չե՞ք վախնար,— բացականչեց աղջիկը վերին աստիճանի դեմքի կոմիկ արտահայտությամբ մը։

— Հապա ի՞նչ ընեմ, քանի որ ոտքերնիդ թրջել չեք ուզեր, կոշիկները հանել չեք ուզեր և ետ դառնալ չեք ուզեր,— կմկմաց տղան կես մը կատրված, կես մը վարանոտ։

Ու միևնույն ժամանակ անոր աչքերուն մեջ այնպես պարզ կվառեր խնդի՛րք մը, աղաչա՛նք մը իրեն չհակառակելու։

Աղջիկը ակնթարթ մը շունչը բռնեց, հանկարծ քայլ մը ըրավ դեպի տղան ու վեր բարձրացնելով թևերը՝ ըսավ.

— Հապա՝ փորձեցե՛ք տեսնեմ, քանի որ այդչափ ձեր ուժովը կհպարտանաք։

Վարդապետացուն երկրորդել չտվավ, ծռեցավ քիչ մը, գրկեց ու մեկ թափով բարձրացուց։

— Ան՜ւ,— պոռաց աղջիկը վախցած, երբ հանկարծ ոտքը գետնեն կտրվեցավ։

Ու երկու թևերը բնազդորեն նետեց տղուն վիզը։

Արտաշես իր դեմքին տակ աղջկան դողացող կուրծքը զգաց և անոր բազուկներուն մեջ իր գլխուն օղակվիլը։

Սիրտը թփրտաց, կորսնցուց ինքզինքը։ Կքալեր։

Ո՞ւր, ո՞ր կողմ, ի՞նչպես։ Ոչինչ չէր տեսներ։ Ոտքին տակ թաց քարերը կգլտորեին, ջուրը կցայտեր, թրջած խոտերը կճողբեին. ան ոչինչ չէր զգար։

Ու ջուրին մեջեն դուրս ելած էին արդեն, բայց ան կշարունակեր դեռ և գուցե դեռ շա՜տ երկար, եթե աղջկան հնչուն ծիծաղը չսթափեցներ։

Կանգ առավ ու աղջկան ոտքը դրավ գետնին։

— Տեսե՛ք, թաց տեղը ուր է մնացեր,— ժպտեցավ աղջիկը իր այլայլած դեմքովը, քանի մը քայլ անդին մատնանիշ ընելով։

— Է՜, ի՞նչ ընենք, ի՞նչ վնաս,— պատասխանեց տղան անսովոր համարձակ շեշտով մը։



— Շնորհակալ եմ, երեք հոգնեցաք, ես բավական ծանր եմ,— ըսավ աղջիկը խոստակցության լուրջ ձև տալով։

— Հոգնի՞լ, ես ձեզի այդպես կրնամ տանիլ ամբողջ ժամերո՜վ, մինչև… մինչև շորին ծայրը ,մինչև ուր որ ուզեք։

Ու դեմքը նորեն հրահրեցավ։

— Եթե կրնայիք՝ ինչո՞ւ չտարիք,— հարցուց Շուշիկ հանկարծ։

Տղան չգիտցավ ինչ պատասխանե և չհասկցավ ալ իսկապես, թե աղջիկը ինչ ըսել կուզեր։

— Նո՜ւ, բարեկամս,— ըսավ աղջիկը ծանր խռովածքով ու անսովոր արտահայտությամբ մը,— երբ նորեն ձեր վանքը դառնաք, երբ առտուն կանուխ ժամերգության ատեն մութ կամարներուն տակ ու ձեր սև զգեստներուն մեջ վարդապետներուն շարքը կենաք և երբ հոն արտերնիդ նեղանալու սկսի, այն ատեն մտածեցե՛ք այս հարցիս վրա, իսկ հիմա տո՛ւն երթանք, արդեն ուշ է։

Տղան բոլորովին լռեցավ։

— Բայց ի՞նչ ըսել կուզեք, օրիո՛րդ։

— Ինչ որ ըսի։

Ու սկսավ խնդալ։

## Ծ

Աղջիկը հազիվ տուն ձգած՝ Արտաշես ծանր քայլերով ու տխուր մը ակամա ուղղվեցավ ընկերներուն քովը։

Վանքի բակը քարի մը վրա նստեր էին երկուքն ալ քով-քովի, լուռ ու լուրջ, ըստ երևույթին իրեն կսպասեին։

Մոտենալուն պես՝ ելան ոտքի։

— Քալե՛, միասին քիչ մը դեպի վար երթանք, եթե շատ հոգնած չես,— ըսավ Մինաս վերջին նախադասության երգիծանքի շեշտ մը տալով։

— Երթա՛նք,— եղավ կարճ պատասխանը։

Դուրս ելան բակեն, լուռ ու հանդիսավոր առաջ շարժվեցան։

«Ճիշտ Շուշիկի ըսածին պես», մտածեց Սիրաքյան ու կամաց մը ժպտեցավ քթին տակեն։

Երբ դարպասեն բավական հեռացեր էին, վերջապես նորեն Մինաս խզեց լռությունը.

— Գիտե՞ս, Արտաշե՛ս մենք որոշեր ենք վաղը առտու մութին ճամփա ելլենք դեպի Անի։

Ու բոլոր բառերը հատիկ-հատիկ շեշտված էին։

Սիրաքյան շրթունքը խածավ, քիչ մը մտածեց և իր անտարբեր շեշտը պահել ջանալով՝ պատասխանեց.

— Աղջի՛կ, դուք մեկնեցե՛ք, երկու ութը-ինը օրեն ե՛ս ալ ձեր ետևեն կհասնիմ։

— Ի՞նչ,— բացականչեց Սերոբ դող ելած։

— Ո՛չ, դո՛ւն ալ հիմա մեզի հետ պիտի գաս,— շեշտեց Մինաս պաշտոնական խոսվածքով մը։

Սիրաքյան ժպտեցավ ու նայեցավ անոր։

— Այո՛, ես ատիկա կպահանջեմ քեզմե։ Եվ ա՛ն իրավունքով, որ քու վարմունքդ ու հիմարություններդ ո՛չ միայն քեզի, այլ մեզի ալ հավասարապես անպատվություն կբերեն, դուն քու անունիդ հետ մեր անունն ալ կկոտրես։ Գիտե՞ս, այս իրիկուն հայր սուրբը ի՞նչ ըսավ. «Նոր տիրացուները մեր ժամանակվան աչքը գոց ոչխարներ չեն, կըսե, դեռ վարդապետ կամ եպիսկոպոս դառնալու ալ չեն սպասեր. միայն ինծի կթվի, որ գործը քիչ մը շատ բաց կբռնեն», կըսե։ Հիմա կհասկնա՞ս, թե ինչ իրավունքով քեզմե կպահանջեմ. դուն իրավունք չունի՛ս մեր վարկը, մեր դիրքը կոտրելու։

Սիրաքյան հանկարծ կանգ առավ, դարձավ խոսողին ու զսպված ձայնով մը ըսավ.

— Ինծի նայե՛, քեզմե ո՛չ ոք ոչինչ պահանջելու իրավունք չունի, իսկ ով կկարծե, թե իմ մերձավորությունը իրեն անպատվություն կբերե՝ կրնա անմիջապես հեռանալ, այսօրեն մեկնիլ կուզեք. բարի ճանապա՛րհ։

— Ուրեմն այդպե՞ս, աղե՛կ, միայն գիտցի՛ր, որ այդ հեռացողները պարտական են բոլոր եղելությունը հանգամանորեն պատմելու ուր որ հարկն է։

— Ատիկա հետաքրքիր չէ ինծի, պատմեցե՛ք, խոսեցե՛ք ինչ և ուր որ կուզեք։

— Բայց հետևա՞նքը։

— Ի՞նչ հետևանք։

— Պիտի հարկադրվին քեզի ձեռնադրվողներուն ցանկեն դուրս ձգելու։

Սիրաքյան ամբողջ մարմնովը ցնցվեցավ, դեմքին վրայեն բան մը անցավ արագ և երկա՛ր, լո՛ւռ, թանձրացող մութին մեջեն ընկերոջը հայացքին մեջը նայելեն վերջը՝ պատասխանեց հատուկ զարկով մը։

— Եվ շա՛տ ալ խելացի բան կընեն։

— Ա՛խ,— հառաչեց Սերոբ ապշած ու նայեցավ երկարահասակին։

— Ուրեմն խնդիրը այս աստիճան հեռուները գացած է արդեն,— մրմնջեց վերջինս ակռաներուն մեջեն, գլուխը ցավակցաբար շարժելով։



— Այո՛, այո՛, այս վայրկյանիս ես պարզ, շատ պարզ կտեսնեմ, որ իրավունք ունիք։ Ո՛չ, իմ բանս չէ, իմ բնավորությանս բանը չէ այդ շղթայված, ճմռտած կյանքը, այդ իր ներքին համոզումներուն, իր բնածին զգացումներուն դավաճանությունը, շատ խելացի բան կընեք, նետեցե՛ք ինծի ձեր ցանկեն դուրս։

— Չէ՛, բարեկամ,— ընդմիջեց Մինաս խստորեն,— իմ կարծածես շատ ավելի խորն է թափանցեր մեջդ թույնը։ Անկեղծ խոսելով՝ ես քու բնավորությանդ մասին շատ ավելի բարձր գաղափար ունեի։ Բնավ չէի կրնա երևակայել, որ աղջկան մը կտորը քեզի այդպես անմիջապես խելքե հանել կրնա, այդպես բոլոր սրբությունները՝ ոտքի տակ տալ, տված խոստումդ արհամարհել, մինչև հիմա փայփայած ծրագիրներդ ուրանալ ու մեր բարձր նպատակները պատռել ու անդին նետել այդպես։ Այդ աստիճանի ողորմելի, թույլ ու զգայարանքներուդ գերի չէի երևակայեր ես քեզի։ Ապուշի մը պես սիրահարեցար առաջին հանդիպած աղջկան. մանկաբարձուհի՛ մը, արհեստն ալ իրեն պես հիանալի, շնորհքեն հայտնի է ինչ ըլլալը, խոսվածքը, քալվածքը, մանչու մազերը, ո՛չ համեստություն, ո՛չ պարկեշտություն։

Սիրաքյան վերջին խոսքերը չլսեց անգամ։

«Սիրահարա՞ծ» կմտածեր և ակամա գլուխը քիչ մը վար թեքեցավ «սիրահարա՞ծ, իրա՞վ»։

Տղու այդ կոտրած դիրքը ընկերներուն սիրտ տվավ, ու Մինաս ձայնը փոխեց.

— Կտեսնե՞ս, սիրելիս, որ նորեն քու ընկերներդ քեզի ձեռք կուտան տատանալի փորձության վայրկյանին։ Այդ տեսակ փորձության ենթարկվիլը իհարկե հանցանք չէ, ոչ ալ մեղք, բայց էականը հաղթելն է, տակեն հաղթական ելլելը։ Դուն ընկերներո՛ւդ ականջ դիր միայն, չե՞ս զղջար։ Ուրեմն վաղը առտու կանուխ կմեկնինք, տո՛ւր ձեռքդ։

Ու ձեռքը մտերմորեն տղուն դաստակին դպցուց։

Արտաշես թոթվեցավ, թևը ետ քաշեց արագ ու գլուխը հպարտ վեր բարձրացնելով՝ ըսավ արհամարհոտ.

— Իմ ընկերս ա՛ն է, ով ինծի կհասկնա։ Վաղը առտու կրնաս երթալ՝ ուր որ կուզես. ինծի հետ գործ չունիս։

Եվ առանց ընկերներու քարացած դիրքին ուշք դարձնելու արագ հեռացավ ու աներևույթ եղավ մոտակա ծառերուն ետևը։

Այս վերջին օրերը տղու մտքեն արդեն քանի մը անգամ անցեր էր թեթև, թե ինքը իր ընտրած կոչումին համար չէ կարծես, թե ինքը իր ամանին մեջը չէ ինկած, թե իր հակումները կրոնավորի պարտականություններուն հետ զույգ չեն երթար։ Բայց ատիկա տարտամ զգացում

մըն էր եղած միայն. իր ձեռնադրության վրա կնայեր իբրև կատարված որոշ իրողության վրա. արդեն խոսք տված վերջացած բան էր, որու մասին այս կամ այն պատճառով գուցե կարելի էր քիչ մը ցավիլ, բայց միայն այդչափ, ետ դառնալու գաղափարը անգամ գլուխը եկած չէր։ Բայց գաղափարի փոխարեն ետ դառնալու ցանկությունը, առանց իր գիտակցության, այն աստիճան զորեղացած ու հող էր գրաված իր մեջը, որ ընկերոջ կողմեն թեթև ակնարկ մը ետ դառնալու հնարավորության մասին, ու իր վարդապետանալու ամբողջ շենքը փլած էր մեկ անգամեն։ Շենք մը, որուն հիմքերը առաջվընե խախտեր էին արդեն վերջին օրերու խոսակցությունները, դեպքերը ու իր անվերջ առանձին մտածումները։

Ժայռի լերկ գանգ մը հողի ներքին շերտերեն հետաքրքրությամբ դուրս էր երկնցուցեր իր վիզը մութին մեջ, ձորի դատարկության վրա. կարծես իր խավարի վարժված տեսողությամբ դիտելու համար վարն ու շուրջը ու տեսնելու, թե գոնե հո՛դ մայր երկրի ծոցին վրա՝ գոյությունը որևէ խորհուրդ մը ունի՞, թե՞ հոգ ալ նո՛ւյն դարավոր օրենքներու միակերպ, անիմաստ ու դանդաղաշարժ կրկնությունն է, ինչ որ խո՛րը՝ մայր-երկրի ծոցին մեջ։

Եվ ճի՛շտ այդ դուրս երկնցած լայն ծոծրակի արմատին մոտիկ՝ վեր խոյանային երկու քույր նրբամեջ բարդի։

Հո՛դ, ձորի եզքին, այդ զույգ բարդիներուն տակ Սիրաքյան նետվեցավ գետին՝ ժայռի լերկ ծոծրակին վրա։ Տխուր էր ու դժգոհ։ Ընկերներուն հետ ունեցած այդ առաջին բաց ընդհարումը անախորժ, ճընշող տպավորություն մը թողեր էր վրան, որուն կմիանար խառնակ ու իրար հակասող զգացումներու պատճառած անհանգստությունը։

Երկար մնաց ան նստած՝ այդպես խոժոռ ու անշարժ, մինչև որ սրտին մոտերը ուղղակի ցավի նման ճմլում մը ստիպեց գլուխը բարձրացնելու. խոր շունչ մը առավ ու հայացքը ինկավ դիմա՛ցը, վե՛ր։ Հո՛ն, ձորին բերանը գոգավոր ժայռի մը եզերքին լույսի բարակ երիզ մը կըծորար, երիզը քիչ-քիչ լայնցավ, պայծառացավ ու անոր ետևեն հանգարտ դուրս սահեցավ լիքը լուսինը ու ակնթարթ մը կանգ առավ կարծես ժայռի այդ գոգավոր շրթունքին վրա՝ սկիհին վրա բռնված նըշխարքի մը պես։

Եվ տղան հանկարծ մտաբերեց, որ ինքը այլևս հոգևորական չէր. վեղարավոր ապագա՛ն, խուցի չո՛ր կյա՛նքը, միայնա՛կ ու միակե՛րպ, եկեղեցական պաշտամունքները իրենց խունկերովն ու սաղմոսներովը, այդ բոլո՛րը ալ երազ մըն էր իրեն համար, անցած երա՛զ մը, որուն հիմա կարթննար։



Եվ այդ մտածումը նախ ախորժ թեթևություն մը թափեց իր զգացումներուն վրա. հանկարծ սիրտը ուժգին զարկավ ու վայրի ուրախություն մը խուժեց իր կուրծքը. չէ՞ որ ալ ազա՛տ էր ինքը, ազա՛տ՝ իր հանձն առած պաշտոնի անհաճո պարտականություններեն ու անիմաստություններեն, ազա՛տ՝ վանքի գոց ու ճնշող կյանքեն, ազա՛տ՝ իր զգացումն ու հայացքները վարագուրելու անհրաժեշտութենեն, ազա՛տ՝ ինչպես դուրսի բնական մարդիկն էին։ Դո՛ւրս, շո՛ւտ դուրսի աշխարհը, դուրսի կռիվներուն ու աղմուկին մեջ, դուրսի կյանքովն ու աշխատանքովը, դուրսիններուն հետ... ու դուրսի աղջկան։

Եվ հուզման ներքին թափեն ցատկեց ոտքի, նայեցավ շուրջը։

Մութը փարատած էր։ Լուսնի գունաթափ լույսին տակ ձորին բերնեն ապառաժները մրցումի էին ելեր, թե ո՞վ իրենցմե իր շուքը ամենեն ավելի հեռուն, ամենե ավելի վար նետել կրնա, վա՛ր, մինչև հո՛ն, ուր գետակը արտորալով փեշերը ժողված կվազեր, փեշերը իր արծաթթել շղարշին, որ միայն լուսնի այցելությանը պահեստի սնդուկեն կհաներ։

Աչքերը այդ փայլփլուկին, տղան ալ սկսավ գետակին հետ վար վազել վերի ճամփուն վրայեն։

«Ուրեմն ինքը կսիրե՛ր այդ աղջիկը». իրեն այդպես էին ըսեր։ Ինքը մինչև հիմա հարած այն գաղափարին, թե կուսակրոն մըն է, առանց որոշ ոչինչ խորհելու՝ իր բոլոր զգացումներուն վրա կնայեր, իբրև պարզ բարեկամության, մտերմության վրա, թեև կզգար, որ շատ տարօրինակ ու խտիտ տվող թելեր կային բարեկամության այդ հյուսվածքին մեջ, բայց չէ՞ որ արդեն ինքնին բացառիկ բան մըն էր այդ մտերմությունը, մտերմությո՛ւնը դեռատի աղջկան մը հետ։ Եվ հիմա մեկ անգամեն իր երեսին կըսեին, թե ինքը կսիրեր, թե իր վարմունքը ո՛չ այլ ինչ էր, եթե ոչ պարզ սեր, որուն մասին այնչափ լսած էր ու կարդացած, սեր դեպի հակասեռ մը։ Եվ այդ նորությունը իսկապես քիչ զարմանք կպատճառեր հիմա իրեն. չէ՞ որ իրողությունը նույնն էր, ինչ որ առաջ, անունն էին փոխեր միայն, ձգտո՛ւմ մը դեպի աղջիկը, հափշտակությո՛ւն մը, ոգևորություն մը անոր մոտիկութենեն, պահա՛նջ մը ըսելու, խոսելու, իր մտածումներն ու տպավորությունները անոր հայտնելու, և այդ բոլորի գումարը, որ մինչև հիմա «տարօրինակ բարեկամություն» էր, ուրիշները անվաներ էին «սեր». Ըկցո՛ւք, ինքը համաձայն էր և այդ նոր անվանակոչության։

«Անվանակոչությո՛ւն». իր մտածած բառը իրեն ալ տարօրինակ եկավ. խնդաց։ Ու մեկեն բուռն պե՛տք մը զգաց խոսակցելու, երգելու, աղմկելու։ Ի՛նչ այդպես մի՛ս-մինակ կթափառեր լուսնին տակ, մի՛շտ

Մինակ, հերիք չէ՞ր։ Եվ հիշեց, որ Քանյանները Զիմա Թեյի վրա էին և անշուշտ կզարմանային իր ուշանալուն։

Ուժգին թափով մը դարձավ կրունկին վրա ու երգ մը սուլելով ետ շտապեց։

Ինքը աներևույթ եղավ շուտով ձորի պատին ձգած թանձր ստվերին մեջ, բայց իր սուր ու զվարթ սուլոցը կհնչեր դեռ երկար, և բարձր քարանձավներու խավար խոռոչներեն արձագանքները քնկոտ ձայնով մը իրենց նախերգը խանգարողի սուր շեշտերը կկրկնեին, մե՛կը չարացած, մյո՛ւսը հեգնելով ու բոլորն ալ դժգոհ։

## ԺԱ

Երբ Սիրաքյան աչքը բացավ՝ պայծառ օր էր, սենյակը մարդ չկար։ Սեմի վրա դեպի դուրս նստած էր Սերոբ և գլուխը դռան շրջանակին հենած կնայեր հեռուն՝ մտքերու մեջ թաղված։

Երբ ներսը շարժում լսեց՝ դարձավ ետ։

— Արթնցա՞ր, ծո՛ւյլ Մարտիրոս,— ըսավ մեղմ ու կատակող շեշտով մը։

— Ի՞նչ կընես հոդ,— հարցուց տղու քնկոտ ձայնը։

— Կսպասեմ քեզի, որ ելլես, երթանք միասին լողալու։

— Մինասը ո՞ւր է։

— Չգիտեմ, դուրս ելավ։

Արտաշես ցատկեց անկողնեն, արագ հագվեցավ, զարկավ սրբիչը ուսը, որ ձորը իջնեն։

— Հապա այս առտու մեկնելի՞ք պիտի, ի՞նչ եղավ,— հարցուց երբ վանքի բակեն կելլեին։

— Անխե՛լք, ըսածիդ ինքդ կհավտա՞ս, առանց քեզի ո՞ւր կրնանք մեկնիլ։ Այդ տեսակ խոսքեր տաքցած ատեն կըսվին, բայց մի՞թե հընար է իրագործել։

— Ինչո՞ւ ո՛չ։

— Քեզի ձգենք՝ հեռանա՞նք. կվայլե՞ ատիկա պաշտոնակից, սրտակից ու նպատակակից ընկերներու։

— Բայց մակդիրներեդ ոչ մեկ հատը այլևս իմ վերաբերմամբ ճիշտ չէ։

— Ինչպե՞ս թե։

— Չէ՞ որ ա՛լ ցուցակե դուրս նետված մարդ եմ ես։



— Դո՛ւն, կարծես Մինասի չափազանցությունները տիրող բնավորությունը չես գիտեր, ա՛ն ըսավ, դուն ալ սրտիդ առիր, երևի, հա՞։

— Ամենևի՛ն, ըմբռնելիքը ատիկա է, այս ձևով թե այն ձևով։

— Վե՛րջ տուր, Արտաշե՛ս, այդ անհամ կատակին,— ըսավ Սերոբ տեսակ մը դժկամած։

— Հոս կատակ չկա. իմ վարդապետությունս այլևս ծալլված ու դարակը դրված խնդիր է։

Սերոբ կանգ առավ դեպի ձորը վազող նեղ արահետին վրա ու կծկըված դիմագծերով շեշտ ընկերոջը երեսը նայեցավ։ Ու անհամբեր մը լռութենե վերջ՝ հպարտ ու հստակ շեշտով մը կցեց.

— Եթե քու անձնական երջանկությունդ մոռնալու չափ բարձր չէիր կրնար մնալ, եթե մեջդ ալ մարդկային գերագույն զոհաբերությունը ընելու չափ ուժ չէիր զգար, ինչո՞ւ խոսք տվիր կուսակրոնության։

— Զոհաբերությո՞ւն։ Կարծես դուրսը քի՛չ կան այրիներ ու ամուրիներ։ Սիրելի՛ս, չխաբենք ինքզինքնիս. հիմա սկսած է ալ ամեն բան ինծի ուրիշ գույնով երևալ, այդ անձնազոհություն ըսածնիս պարզապես խուսափում մըն է դուրսի կյանքի դժվարություններեն ու նյութական մաքառումներեն, ուրիշ ոչի՛նչ։

— Անխիղճ կխոսիս, Արտաշե՛ս։

— Ճշմարտությունը կխոսիմ։ Վրան ավելցո՛ւր նաև աժան փառասիրությունը. ո՛չ քու ուժերուդ առավելութենեն, ո՛չ քու սեփական արժանիքեդ օր մը կդառնաս եպիսկոպոս, գուցե և ավելի, ստորին պաշտոնյաները խունկ կծխեն փիլոնիդ շուրջը, կվայլես մեծավորի անուն, կդառնաս մեծ մարդ։

— Բայց լռե՛, ամո՛թ է, ամո՛թ։

— Մի՛ վրդովվիր, սիրելի՛ս, իհարկե այս բոլորը մերկ կերպով ո՛չ դուն մտածած ես, ո՛չ ես, բայց կրնա՞ս ձեռքդ խղճիդ վրա ըսել, որ այս ամենը, անշուշտ ավելի անորոշ կերպով ու ավելի բանաստեղծական անուններու տակ, քեզի համար հրապուրիչ չէ եղեր ու քու վարդապետանալուդ վրա չէ ազդեր։ Վերջին օրերս այս հարցերուն վրա ես շատ եմ խորհեր, խորհե՛ և դուն։

Սերոբ խոժոռ ու անհամբեր ընկերոջը կնայեր։

Երկուքն ալ կեցեր էին դեմ-դեմի երկու ժայռերուն մեջ ինկած նեղ անցքին վրա՝ Սերոբ թեթև մը ժայռի մամռոտ կողին հենած, Արտաշես՝ արահետին ճիշտ մեջտեղը՝ տաք ու կրքոտ խոսվածքով մը անդադար ձեռքի սրբիչը օդին մեջ շարժելով։

— Հիմա իմ տենչանքս է կռվով, կյանքի՛ մեջ իմ սեփակա՛ն

ուժերովս ինծի համար ճամփա բանամ։ Կուսակրոնի այդ սպատրաստ, լայն ու հանգիստ ճամփեն քալելը քաջություն չէ։

— Ուրեմն քեզի համար գոյություն չունի՞ն այլևս մեր հոգևորականության դերը, ժողովուրդին կարիքները։

— Կհիշե՞ս, մեր վերջնական խոսք տալու առեններն էր, թե ինչպես ուղեղս կչարչրկեի իրոք կենսական բաներ մը գտնելու համար, որոնք իմ հոգևորական դառնալս աչքիս անհրաժեշտ դարձնեին. պետք էր անպատճառ ինքզինքս համոզեի և ճարեցի իհարկե թուղթով փակցուցած քանի մը բաներ, որոնք ահա՛ թուղթի չորնալուն պես սկսավ վար թափիլ։ Իրականությո՞ւնը կուզես. հոգևորականներու ձեռքը հիմա շա՛տ քիչ բան կա կենսական, այսինքն՝ իսկապես ժողովուրդի համար անհրաժեշտ։

Սերոբի դեմքը կարեկցոտ արտահայտություն մը հագավ. նույնիսկ չպատասխանեց։

Իսկ ընկերը շարունակեց.

— Մեր ոգևորության ու մեր ծրագիրներուն մեծագույն մասը, եկո՛ւր քեզի հետ անկեղծ խոստովանինք, որ միայն մե՛ր դյուրության համար է, մե՛ր օգտին, վեղարավորներուս. ավելորդ տեղը ժողովուրդի հաշվին չգրենք։ Կալվածական բարեփոխումներ, տնտեսական կանոնավորություն, վարչական կեդրոնացում, փառավոր շենքեր, բարձրագույն ուսում, գրադարան և ուժեղ միաբանության մը հիմնարկումը ասոնք չե՞ն։

— Է՛, այդ բոլորը ժողովուրդին համար չէ՞։

— Ո՛չ։

Երկուքն ալ պահ մը լուռ էին։

Սիրաքյան հանեց գլխարկը, մատներովը մեկ-երկու անգամ սանրեց մազերը, ծածկեց նորեն գլուխը ու կրկնեց.

— Ո՛չ, ժողովուրդը մեզմե խեր չունի. մենք կտրված ու կղզիացած մարմին մըն ենք հասարակութենեն դուրս։ Այդ կողմեն քահանան մեզմե ահագին առավելություն ունի՝ մինչև վերջը գոնե իր ժողովուրդին մեջն է. անոր նեղ ու լայն օրերուն, խինդ ու վշտին մասնակից։ Իսկ մենք, տե՛ս քահանայությունը չենք ընտրած։

— Ամեն մարդ իր տեղը. շա՛տ ստացողեն շա՛տ կպահանջվի։ Վերջապես ատիկա դատարկ պատճառաբանություն է. եթե ըսածներուդ համոզված ես՝ եղիր տերտեր։

Սիրաքյան ծիծաղելով դառն ու հեգնոտ ծիծաղով մը։

— Ո՛չ, պատմության այդ գլուխը ինծի համար փակված է. ես կտեսնեմ ուրիշ ճամփա մը ժողովուրդի վարի խավերուն մեջ մտնելու



եվ առանց որևէ հոգեկան բռնադատումի, առանց որևէ տուժի ու կեղծիքի։

Սերոբ ձեռքի կատաղի շարժումով մը առաջ նետվեցավ զայրացկոտ։

— Ի՞նչ բառի մը պոչեն բռներ կերթաս։ Հոս ո՛չ խաբել կա, ո՛չ սուտ. ի՞նչ կեղծիք։ Կեղծե՞լ, մեր ըրածին կըսեն պարզապես ժողովուրդի ըմբռնումներուն հարմարում. կարելի չէ ամբոխին ամեն կարգի ճշմարտություններ ըսել, և վերջապես ան քու ճշմարտություններուդ պետք ալ չունի։

Սիրաքյան ակնթարթ մը ապշած կանգ առավ, աչքերը շեշտ ընկերոջը դեմքին հառած։ Բայց մատներու ջղաձգական անընդհատ կըծկումեն, որով սրբիչը կճմռթեր, պարզ էր, որ ներսը իրարանցում կար։

Վերջապես ձայն հանեց, միայն անսպասելի կերպով հանգիստ ու մեղմ ձայնով մը.

— Այդպես, ուրեմն, ան պետք չունի իմ ճշմարտություններուս, ամբոխը պետք է պահել իր նախապաշարումներուն ցանցին մեջ պինդ սեղմած, չէ՞ որ Աստծու կամքով այդպես եկեր է ու այդպես ալ պիտի երթա, ի՞նչ ամբոխի բանն է գիտությունն ու ճշմարտությունը, որը միայն մե՛նք հասկնալ կրնանք։ Ահա՛, սիրելի՛ս, ժողովուրդի անունով մեր իրարու գլուխ ուռեցնելը արտաքին ծածկոցն է միայն, դարուս պահանջած վերարկուն, որ ամեն խոսող իր վրա պիտի նետե հարգանք ու անձնական հաջողություն վաստկելու համար, բայց ներքուստ մեզի համար ան միշտ նույն ամբոխն է, որ ո՛չ բան հասկնալ կրնա, ո՛չ ալ հասկընալու պետք ունի։

— Ինծի սխալ հասկցար,— սրբագրեց Սերոբ իր ըսածը։— Ես միայն ըսել ուզեցի, որ մասսան կամաց-կամաց պետք է իր հասկացողություններեն դուրս քաշել, իսկ մինչև այդ՝ ստիպված ենք հարմարվելու ու քողարկելու որոշ բաներ։

— Այդ տեսակ պարապ խոսքեր գլուխս չի մտներ,— բացականչեց Արտաշես տաքցած։— Ես հիմա բոլորովին ուրիշ կերպ կմտածեմ. ճշմարտությունը որքան պարզ ու բաց ըլլի, այնքան ավելի աղեկ, այս սերունդը չի հասկցավ՝ կհասկնա հաջորդը, իսկ այդ լսելու ու ստելու ծայրը ո՞ւր պիտի երթա։ Ո՛չ, ես այլևս ճակատս բաց կուզեմ, կուզեմ անկաշկանդ իմ համոզումներս ամենքին ըսեմ։ Այդ հավիտենական հարմարվելու ու քողարկվելու սկզբունքը վախկոտներու, զառամածներու և ետ մնացողներու քաղաքականությունն է։ Բա՛ց է, ով կուզե թող երթա այդ ճամփեն, իսկ ես այլևս ո՛չ վեղարին երկար ծածկույթը կու-

զեմ մտածումներուս վրա, ո՛չ ալ փիլոնին կաշկանդող փեշերը քայլերուս շուրջը։

Եվ ուժով մը քաշեց սրբիչը ձախ ուսեն ու զարկավ աջ ուսը։

Կարկամ արտահայտություն մը դրոշմված էր Սերոբի դեմքին ու քարացած կեցեր էր քարին տակ։

— Դե՜, Սերո՛բ, ես իմ խոստովանությունս ու ապաշխարանքս վերջացուցի, քալե՛, երթանք մկրտվինք։

Ու թեթևցած աշխուժով մը արագ առաջ շարժվեցավ։

Բավական ցատկեր էր քարե քար, երբ նոր նշմարեց, որ ետևեն եկող չկար։ Նայեցավ ետ. ընկերը ծանր-ծանր կբարձրանար վեր, դեպի վանք, նույն արահետովը, որով իջեր էին։

«Իհարկե, հեթանոսին հետ միևնույն ավազանը չի կրնար մտնել», մտածեց ինքնին՝ ժպտիլ ուզելով։ Բայց ժպիտը սառեցավ շրթունքին վրա ու ցավ մը զգաց, տարիներով ընկեր էին եղած և հին ճամփաները կբաժնվեին։

Սերոբ երբ սենյակ մտավ՝ ճակատ ճակատի գտնվեցավ Մինասի հետ, որ անհամբեր կերթևեկեր։

— Բան դուրս եկա՞վ,— եղավ առաջին հարցը։

— Ի՞նչպես չէ. և տեսնեիր ի՛նչ բաներ դուրս եկան։

— Խոսքը ետ առնելու մասին նորեն ակնարկություն ըրա՞վ։

— Ակնարկությո՞ւն, լմնցած-վերջացած խնդիր է։ Աստվա՛ծ իմ։ Ի՛նչ խայտառակություն, ի՛նչ տպավորություն պիտի ընե այս բոլորը վանքի ու ամենուն վրա. առաջին քայլին այսպես թեթև վերաբերմունք ու խոսքի դրժում, մարդիկ հիմա ինչ ըսես վրանիս մտածելու իրավունք ունին։

— Ո՛չ, անկարելի է, պարզապես չենք թողներ։ Միայն ի՛նչ գնով ալ որ ըլլա այդ տխմարը հոսկե հեռացնելու է, անմիջապե՛ս։

— Անօգուտ է, մեյ մը լսելու էիր, թե ինչեր կխոսեր, ալ զո՛ւր բան է։

— Կարծես անոր հիմար-հիմար խոսիլը առաջին անգամը ըլլա. թո՛ղ անգամ մը նորեն փանք տանինք՝ ես խելքի կբերեմ։

— Մի՛ հուսար։ Եվ վերջապես հոսկե հեռացնելն ալ դյուրին խնդիր չէ, քանի որ աղջիկը հոս է, ան հոսկե չի հեռանար։ Ի՛նչ խայտառակություն, Աստվա՛ծ իմ, ի՛նչ խայտառակություն։

— Մի՛ հուսահատիր, միայն պետք է քաղաքականությամբ վարվիլ։

Ու այդ բառերուն մեջ վճիռը տված մարդու մը ինքնագիտակից շեշտը կար։

Սերոբ ակամա ընկերոջը երեսը նայեցավ հարցական։



## ԺԲ

Մինաս ձեռքովը ուսի փոշին թափ տալով՝ վանքի դուռնեն դուրս ելավ, դեպի Քանյաններուն կողմը։

Նախ ծանր կքալեր՝ գլխուն մեջ բոլոր հնարավորությունները տակնուվրա ընելով, թե ինչ միջոցով աղջկան հետ վայրկյան մը առանձին մնալու հաջողի. վերջը քայլերը արագացուց, մտածելով, որ հոգինտուրը անշուշտ կերպ մը կներշնչե հարմար վայրկյանին հարմար ընելիքը։

Տանը քանի մը քայլ էր մնացեր, որ քիչ մը անդին, ծառի մը շուքին տակ նշմարեց օրիորդ Մելինյանը։ Կտրած կոճղի մը վրա նստած, հենած ծառի բունին, գլուխը կախ կկարդար, թիկունքը դեպի տղան։

Մինաս ուրախությենեն խոր շունչ մը առավ. «Աստված հետս է», մրմնջեց ու շտապեց դեպի աղջիկը։

Մոտեցող ոտքի ձայնը Շուշիկի ընթերցումը ընդհատեց, և ան թեթև մը դարձավ ետին։

— Բարև՛ ձեզի, օրիո՛րդ Մելինյան։

— Օ, բարև՛, պարո՛ն, ի՞նչ կընեք, բնավ մեջտեղ չկաք, պարոն Սիրաքյանը ըսավ, որ շարունակ կշրջիք, հիմա ալ երևի նորեն շրջելու կերթաք։

Վրա տվավ աղջիկը աշխույժ, տղու անունը կուլ տալով, որը չէր հիշեր։

— Ո՛չ, օրիո՛րդ, պտույտի չեմ ելած, եկած եմ մասնավորապես ձեզի հետ խոսելու և բարեբախտաբար ձեզի ալ հոս առանձին կգտնեմ։

Աղջկան առաջին զգացումը վախի պես բան մը եղավ, անակնկալի մը անորոշ վախը։ Բայց իսկույն գուշակեց, որ խնդիրը իր ու Արտաշեսի հարաբերության շուրջն էր դառնալու ու հետաքրքրություն մը հաջորդեց նախորդ տարտամ վախին։

— Ինծի՛, մասնավոր ըսելի՛ք մը, և ան ալ առանձի՞ն,— հարցուց իրարու ետևե խորին զարմանքի արտահայտությամբ մը։

— Այո՛, օրիո՛րդ։

— Հապա՛, խնդրե՛մ։

Վարդապետացուն չգիտեր ինչպես սկսի։ Մարմնին ծանրությունը մեկ ոտքեն մյուսին անցուց, վերջեն աջ ոտքին տվավ գերակշռությունը և հանկարծ ըսավ.

— Գիտե՛ք, օրիո՛րդ, վաղը Խծկոնքեն մեկնիլ կուզենք։

— Մի՞թե, արդեն կշտացա՛ք, ըսենք իրավունք ալ ունիք. մարդ

եթե քանի մը օր այս ձորին մեջ կենա՝ ա՛լ տեսնելու բան չի մնար, հավանական է, որ մենք ալ շաբաթե մը մեկնինք։

Մինաս նորեն կանգ առավ, աղջիկը խոսակցությունը գիծեն հաներ էր։ Ակնթարթ մը խառնեց մորուքը ու ավելցուց.

— Ջո՛րը ոչինչ, բայց մենք ստիպված ենք վերադառնալու։

— Անշուշտ գործե՛ր ունիք վանքը։ Այդչափ մի՛ շտապեք, պարո՛ն, քիչ մը ազատ օդ շնչեցե՛ք։

Շուշիկ խոսակցությունը կարծես դիտմամբ կշեղեր, կարծես հաճույք զգալով դիմացինը նեղ դրության մեջ դնելեն։

— Աստծու աշխարհքին վրա օդը ամեն տեղ ազատ է,— պատասխանեց տղան լրջությամբ։

— Իրա՞վ,— ժպտեցավ աղջիկը տեսակ մը նուրբ երգիծանքով։— Այն ատեն բարի ճանապարհ կցանկամ ձեզի և հաջողություն ձեր գործերուն։

— Շնորհակալ եմ։ Միայն կետ մը կա և այդ կետի համար է, որ եկած եմ ձեզի հետ խոսելու։

— Եվ այդ կե՞տն է։

— Որ մեզի օգնեք հոսկե հեռանալու։

— Ձեզի օգնե՞մ, ե՞ս, չեմ հասկնար։

— Այս վայրկյանիս։ Մեր դարձը իսկույն անհրաժեշտ է՝ ըսի, բայց խնդիրն ան է, որ Արտաշեսը համոզել չենք կրնար, անպատճառ դեռ մնալ կուզե։ Մտածեցի դիմեմ ձեզի, ա՛ն, ըստ երևույթին, ձեզի կհարգե ու ձեր խոսքին կարևորություն կուտա։ Եթե դուք անգամ մը անոր ըսեք, որ անիմաստ համառություն չընե, հավանական է, որ համոզվի։

Պարզ էր այդ բառերուն տակի իմաստը։ Բայց Շուշիկ ոչինչ չհասկընալ ձևացուց.

— Կներե՛ք սակայն, պարո՞ն, ինծի ինչ կվերաբերի ուրիշի գործերուն մեջ խառնվիլ։ Պարոն Սիրաքյանը երեխա չէ, եթե երթալ չուզեր՝ երևի իր պատճառներն ունի։ Եվ վերջապես եթե իր մտերիմ ընկերներուն կհակառակի, ի՞նչ ընելով օտար աղջկան մը խոսքին կարևորություն պիտի տա։

— Դուք անոր վրա ազդեցություն ունիք,— հնչեց տղու չոր ու կտրուկ պատասխանը։

Շուշիկ բռնազբոսիկ ծիծաղով մը սկսավ խնդալ բարձրաձայն։

— Ինչո՞ւ կխնդաք, օրիո՛րդ, ինքնե՛րդ ալ շատ լավ գիտեք, անշուշտ։



Ասիկա արդեն շատ նման էր հանդիմանության, ու աղջիկը լըրջացավ։

— Ես ոչինչ չգիտեմ և ոչինչ ալ գիտնալ չեմ ուզեր ձեզմե, ուրիշի գործերուն մեջ խառնվիլ չեմ սիրեր, վերջ տանք այս անհամ խոսակցության։

Ու նեղսրտած վերցուց գիրքը ծունկերուն վրայեն ու նետեց քովի քարին վրա։

Վարդապետացուն մտածեց վայրկյան մը և իր պարտականությունը կատարողի մը անողոք շեշտովը ըսավ հատիկ-հատիկ.

— Այո՛, գործի մեջ չեք խառնվիր, երբ կատարված սխալ քայլը կերպ մը ուղղել պետք է, իսկ երբ այդ սխալ քայլը պիտի կատարվի, այն ատեն գործի մեջ կխառնվի՛ք, օրիո՛րդ։

Շուշիկ զայրույթեն ցատկեց ոտքի։

— Ի՞նչ ըսել կուզեք, պարո՛ն, և ո՞վ եք դուք, ի՞նչպես կհամարձակիք երեսիս գայլի ավետարան կարդալու։

— Ես Արտաշեսի պաշտոնակիցն եմ ու ընկերը,— եղավ սառն ու հանդարտ պատասխանը։

Աղջիկը կարծես տեսակ մը սթափեցավ ու հպարտ արհամարհանքով մը ավելցուց.

— Չի հետաքրքրեր ինծի, թե դուք ինչ եք։

— Սակայն պետք է, որ հետաքրքրե։ Միթե իրա՞վ չեք հասկնար, օրիո՛րդ, որ ընկերս ձեր պատճառով միայն հոսկե հեռանալ չուզեր։

— Կհասկնա՛մ թե ո՛չ, ձեր գիտնալու բանը չէ։

— Իմ գիտնալու բանը չէ՞, երբ ընկերս ձեր պատճառով ամեն սրբություն ոտքի տակ տալ կուզե, իր տված խոսքը, իր ապագան, իր ծրագիրները, իր կոչումը, իր ընկերները։

— Ա՛խ,— թռավ հանկարծ ակամա աղջկան դողդոջ շրթունքներեն։

Քայլ մը ետ գնաց ու կանգ առավ քարացած՝ ձեռքը ծառի բունին և խոշոր աչքերը լայն բացած գամեր էր խոսակցի դեմքին։

Շուշիկ ամենևին չէր երևակայած, որ խնդիրը արդեն այդ աստիճանի հեռուները հասած ըլլար։ Իսկ վարդապետացուն սիրտ առավ ու մեղմացած ձայնով մը շարունակեց.

— Կտեսնե՞ք, օրիո՛րդ, վախցա՛ք, և ատիկա պատիվ կբերե ձեզի։ Ես արդեն կզգայի կարծես, որ այս բոլորի մեջ դուք գիտակցաբար չէ, որ մեղսակից եք, ես արդեն կգուշակեի, որ դուք ոչինչի տեղյակ չեք։ Արտաշեսը քիչ մը դյուրագրգիռ ու շուտ գրավվող տղա է. այսօր այս բանով, վաղը մեկ ուրիշով, հանդիպեցավ ձեզի, կրթված, պարկեշտ, համեստ աղջիկ մը ու սկսավ երևակայել, պետք է հեռացնել միայն ու

անմիջապես խելքը գլուխը կուգա։ Ցավը հոն է, որ մենք հիմա անոր աչքին իր թշնամիներն ենք դարձեր. ինչ որ ըսենք՝ կհակառակի, կընդդիմախոսե, սակայն ձեզի ու ձեր խոսքին պիտի լսե անպատճառ։ Ահա, հիանալի առիթ մը, օրիո՛րդ. ցույց տվեք, թե ի՞նչպես կվարվի պարկեշտասուն հայ օրիորդը։

Իսկ պարկեշտասուն հայ օրիորդը հայացքը ծառերուն մեջեն հեռուն փայլփլող կետի մը հառած՝ թաղվեր էր ինքն իր մեջ, ոչինչ չէր տեսներ, չէր ալ լսեր ոչինչ, մինչ կրծքին տակ կեռար հաճույքն ու հըպարտությունը։

Հպա՛րտ էր, բարձր կզգար ինքզինքը, շա՛տ բարձր այդ դիմացը կեցած «խեղճուկ» մարդեն, այդ խոշոր, հսկա մարդը իր ցանցառ մորուքին ու բեղերուն մեջեն եկած էր անկե իր ընկերը մուրալու։ Հաճելի գիտակցություն մը սկսավ ողողել Շուշիկի հոգին, գիտակցություն մը, թե իր հմայքին ու ազդեցությանը տակ տղան արդեն մեկդի նետել կուզեր այդ վարդապետությունը, որ այնքան անախորժ էր աղջկան։ Այն զգացումն ուներ, որ ինքը մեծ կոչում մըն էր կատարած, որ փրկիչ մըն էր ինքը ու հոգի մը ազատած, ազատա՛ծ «այդ խելացի, ազնիվ ու ձեռներեց տղան»։

Հաճույքն ու հպարտությունը վառ կցոլար իր աչքերեն ու կարմըրտըկած այտին ծլեր էր անգիտակից ժպիտ մը։

Հանկարծ իր այդ ներքին հուզման տակ ա՛լ հանգիստ կենալու անկարող՝ սկսավ արագ երթևեկել վարդապետացուին դիմաց, որ իր խոսքը վերջացուցած անհամբեր պատասխանի կսպասեր և աղջկան դեմքի փոփոխություններն ու հուզումը որոշ չէր գիտեր ի՞նչի վերագրե։

Քիչ մը ատեն երկուքն ալ լուռ էին։

— Ուրեմն, օրիո՛րդ, կրնա՞մ ձեր օգնության վրա հույս դնել։

Աղջիկը կարծես նոր արթնցավ, ձեռքերը ետևեն խաչաձևեց մեջքին ու կուրծքը դուրս՝ կանգ առավ տղուն դեմ։

— Հիմա դուք ի՞նչ կկամենաք ինծմե, պարո՛ն։

— Կխնդրե՛մ, աշխատիք Արտաշեսը համոզելու, որ հնար եղածին չափ շուտ հոսկե մեկնիլ կարողանանք։

— Ա՞յդչափ։

— Այո՛, օրիո՛րդ։

Շուշիկ ակնթարթ մը շեշտ նայեցավ տղուն ու հստակ ձայնով մը պատասխանեց հաստատ.

— Վաղը առտու ձեր ընկերը ձեզի հետ միասին հոսկե կմեկնի։

— Ուրեմն կխոստանաք համոզելու, որ իր ըրածը անխելքություն է ու համոզելու...



— Վաղը առտու ձեր ընկերը ձեզի հետ հոսկե կմեկնի,— կրկնեց աղջիկը հրամայական ու արհամարհական շեշտով մը։

Տեսակ մը հարգանք ու ակնածում սպրդեցավ հանկարծ Մինասի հոգին դիմացինի այդ խրոխտ ու ինքնագիտակից խոսվածքին ու դիրքին դեմ։

— Սրտագին շնորհակալությունս, օրիո՛րդ Մելինյան, ես ձեր այդ ազնիվ վարմունքը երբե՛ք...

— Թողե՛ք, խնդրե՛մ։ Ուրիշ ըսելիք մը ունի՞ք։

— Ո՛չ, օրիո՛րդ։

— Այն ատեն... ներեցե՛ք։

Ու վերցուց գիրքը քովի քարին վրայեն։

— Անշուշտ, Արտաշեսին ոչինչ չեք ըսեր մեր այս տեսակցության մասին, թե չէ գործը բոլորովին կծռի։

— Ապահով եղեք։

Ու սկսավ արագ գիրքը բանալ։

Վարդապետացուն ձեռք տալ կուզեր, բայց տեսնելով, որ աղջիկը իր կողմն անգամ չէր նայեր, գլխարկով թեթև մը բարևեց ու հեռացավ։

«Ալ շատ չեմ զարմանար,— կմտածեր,— թե ինչպես Արտաշեսը իսկույն խելքը ելավ, այս աղջիկը ամեն բան կրնա ընել, դև կա այդ աղջկան մեջ։ Բայց... ի՛մ առջև, արդարամտության և ճշմարտության առջևն ա՛ն ալ այդպես կխոնարհի»։

## ԺԳ

Քանյաններուն սենյակը նույն լամպի լույսին տակ, նույն մաքուր սեղանին շուրջը նստած էին պարոն Նիկողոսը և իր նույն երեք հյուրերը։

Առատ կբարձրանային նոր լեցված թեյերուն գոլորշիները, և կհոսեր աշխույժ խոսակցություն մը։ Կխոսեին ազգային ու քաղաքական հարցերու շուրջ, կարծես խոսք մեկ էին ըրած, ոչ մեկ ակնարկություն վանքի, կրոնի ու հոգևորականության մասին, որ նախորդ հանդիպումներու ժամանակ բնական կերպով խոսակցության առանցքը կկազմեր։

Խոսակցության մասնակից չէր միայն Արտաշես։ Սեղանին մեկ անկյունը քաշված, գլուխը կախ, ումպ-ումպ իր թեյը կխմեր, նույնիսկ առանց անոնց խոսքին հետևելու։ Տեսակ մը ցրված էր, նեղսիրտ և անդադար ոտքը կշարժեր։

Արդեն ամբողջ օրը անսովոր տրամադրության մը մեջ էր եղած։

Յորեկը գացեր էր Շուշիկը պտույտի տանելու, բայց փոխանակ սովորականին պես գլխարկին աւեղը անցընելով աղջիկը իր դեմը շա[illegible]պելու, դուռը ելեր էր տիկինը երեխան գրկած ու տարօրինակ ժա[illegible]տ մը շրթունքին հայտներ էր, թե քույրը այսօր քիչ մը անհանգիստ է ու պառկեր է կազդուրվելու։

Տղան գլխահակ դարձեր էր ետ ու ձորին մեկ խուլ անկյունը նետվեր էր գետին։ Ալ ինչե՛ր ըսես չէր անցեր մտքեն, ենթադրություն ենթադրության վրա։ Արդյոք Շուշիկը վշտացա՞ծ էր իրմեն, ինչո՞վ կրնար վիրավորած ըլլալ, գուցե երեկվան իր վարմունքը ձորին մեջ, բայց չէ՞ որ այնպես զվարթ ու կատակով բաժնվեր էին նախորդ գիշերը իրարմե։

Իրիկվան դեմ հազիվ մութը գետինն առած՝ կիզիչ անհամբերությամբ Քանյաններուն երթալու կպատրաստվեր, երբ Մինաս հայտնեց, թե այս իրիկուն իրենք ալ միասին գալ կուզեն, թե ինքն ու Սերոբ վճռեր են արդեն հաջորդ առտու անպատճառ խծկոնքեն մեկնիլ, որով քիչ մը անքաղաքավարի կըլլար առանց մնաք-բարովի հեռանալը։ Արտաշես դժգոհութենեն ակռաները սեղմած, առանց ոչինչ առարկելու, միացավ ընկերներուն։

Եվ ահա կես ժամեն ավելի էր նստած էին հոն ու կխոսակցեին, և Արտաշես իզո՛ւր ամեն դուռը շարժվելուն այն կողմ կնայեր. Շուշիկ ներս չէր գար։

Երբ անգամ մը նորեն, իր սպասածին հակառակ, փոխանակ աղջըկան կրկին տիկինը սենյակ մտավ, տղան ալ համբերել չի կրցավ ու հարցուց.

— Օրիորդի անհանգստությունը դեռ չանցա՞վ, տիկի՛ն։

— Իրա՛վ, Շուշիկը ո՞ւր է, մեջտեղը չկա,— հարցուց Քանյան իր կողմեն։

— Ներսը նստեր կկարդա,— պատասխանեց կինը։

— Է՜, ի՛նչ կարդալու ատեն է հիմա, ըսե՛ թող գա՛ թեյը խմե։

— Կարծես անոր բնավորությունը չգիտես։ Ըսի՝ չեկավ, ախորժակ չունիմ, կըսե։ Պնդելը ավելորդ է, ան որ չէ ըսավ, չէ պիտի ըլլա։

Ու Քանյան դժգոհ դեմքով մը դարձավ նորեն իր հյուրերուն։

Քիչ մը վերջը խոսակցության տաք միջոցին էր, որ տիկինը նորեն երևցավ միջանցքի դռնեն ու կանչեց։

— Պարո՛ն Սիրաքյան, վայրկյան մը դուրս կուգա՞ք։

Տղուն սիրտը նետեց, արագ վար դրավ ձեռքեն դգալը, որով թեյին երեսի երկու-երեք փրփուրի հատիկներուն հետ կխաղար, ու ցատկեց դուրս։



— Ինչո՞ւ այդպես խոժոռ նստած եք և ոչինչ չեք խոսիր,— հարցուց տիկինը սենյակին դուռը կրկին գոցելե վերջը։

— Այսօր խոսողներ շա՛տ կան, խոսակցության նյութն ալ շատ մաշված է,— պատասխանեց տղան քմայնոտ։

— Եթե այդպես է՝ անցե՛ք դուրս, Շուշիկն ալ դուրսն է,— ըսավ տիկինը շատ մասնավոր ժպիտով մը։

— Դո՞ւրս,— բացականչեց տղան մատովը տան դուռը ցույց տալով։

— Այո՛,— գլխով ըրավ տիկինը։

Արտաշես երկու ոստյունով սեմեն դուրս նետվեցավ, բայց թափով կանգ առավ փսկույն։

Գիշերվան թարմ զովության մեջ, լեցուն լուսնի ողողուն լույսին տակ կեցած էր աղջիկը, մաքեթը ուսերուն, թևերը ծալլած կրծքին, գըլխաբաց ու աչքերը տղուն, արձանի դիրքով մը, ուրկե թունդ-սև ստվեր մը ինկեր էր գետին՝ լուսնի թափած ճերմակության վրա։

Ծանր քայլերով մոտեցան իրարու ու ձեռք տվին։

— Այսօր հիվանդ էի՞ք,— առաջինը տղան խզեց լռությունը ցած ու տխուր ձայնով մը։

— Իսկ դո՞ւք ինչ ըրիք։

— Ի՞նչ պիտի ընեմ միս-մինակ, ձանձրացա։

— Մինա՞կ, ինչո՞ւ, ձեր ընկերները հոս չէի՞ն։

— Ես ընկեր չունիմ այլևս, ո՛չ ընկեր, ո՛չ բարեկամ, ես մինակ եմ, բոլորովին մինակ։ Երեկ գոնե կկարծեի, թե ընկերուհի մը ունիմ, բայց այսօր համոզվեցա, որ շարաչար սխալած եմ, այդ իմ միակ ընկերուհիս ալ սուտ-հիվանդ կդառնա ու ինծմե խույս կուտա։

Ու ասիկա ըսված էր այնպիսի ուռած, քմայնոտ ու տրտունջի շեշտով մը, որ Շուշիկ չի կրցավ ինքզինքը զսպել, խնդաց ու նորեն բռնեց տղուն ձեռքը։ Եվ առանց բաց թողնելու՝ ըսավ տեսակ մը մայրական խոսվածքով.

— Ինծի նայեցե՛ք, պարո՛ն Սիրաքյան, որ այսօր սուտ-հիվանդ ձևացա՝ շիտակ է և ասկե վերջն ալ շարունակ նույն սուտ-հիվանդը պիտի ձևանամ։ Արդեն ատոր մասին խոսելու համար ձեզի դուրս կանչեցի։ Մեկ խոսքով՝ մեր հարաբերության պետք է վերջ դնել. կա՛րճ ու կըտրո՛ւկ։

— Ի՞նչ...

Ու անդամալույծ շարժումով մը ձեռքը աղջկան ձեռքեն ետ քաշեց։

— Ինչո՞ւ այդպես զարմացաք, բարեկա՛մս, չէ՞ որ մեր հարաբերությունը կտրվի պիտի երկու օր ուշ կամ կանուխ։ Վաղը կամ մյուս

որը դուք պիտի երթաք աջ, ես՝ ձախ. որքան շուտ կտրենք, այնքան լավ։ Վերջապես մտածեցեք անգամ մը, ի՞նչ տևական կապ կրնա գոյություն ունենալ մեր մեջը, վարդապետի մը ու մանկաբարձուհիի՛ մը մեջ։

Ու վերջին երկու բառերը շեշտվեցան մասնավորապես պարզ։

— Ա՛խ, եթե ատ է բոլորը,— բացականչեց Արտաշես զվարթ զարկով մը։— Իմ վարդապետությունս, օրիո՛րդ, խծկոնք ոտք դրած օրս մեռավ ու երեկ թաղեցի, մնացեր է հոգեհանգիստը միայն։

Շուշիկ հազիվ կզսպեր խնդուքը։

— Ի՞նչ ըսել կուզեք։

— Ձեր ցանկությունը կատարվեցավ, օրիո՛րդ։ Այլևս ես ինքս ալ կրոնավոր ըլլալու մեջ հրապույր չեմ գտներ։ Իմ կազմիս ու հակումներուս բանը չէ, վճռած եմ թողնել։

— Ա՛խ, ատոնք սիրուն խոսքեր են, որոնք չեն իրագործվիր։

— Ինչո՞ւ կկարծեք։

— Դուք խոսք եք տված, ձեր գաղափարները ունիք և ժողովուրդին ծառայելու ծրագիրներ։

— Շատ բան է փոխված, օրիո՛րդ։ Տված խոսքս արդեն կոտրած եմ, իմ գաղափարներս ունիմ միշտ, նետած եմ մեջես իմս չեղող գաղափարները, իսկ ժողովուրդիս ծառայելու կփնտրեմ նոր ճամփա։

— Այդպե՞ս, և ի՞նչ ըսել է հիմա ձեր նպատակը, ի՞նչ գործի կուզեք ձեռնարկեք, դուրսը ոչինչ պատրաստ չեք գտներ, դուրսը պետք է հոգ տանիք ու մտածեք։

— Ես մտածած եմ արդեն ամեն բան. պիտի գրեմ մեծ եղբորս, որ ինծի քիչ մը օգնե, հուսկե կերթամ Էջմիածին, վերջնականապես կըմաքրեմ հաշիվներս ու կշտապեմ շիտակ Թիֆլիս։

— Ինչո՞ւ անպատճառ Թիֆլիս,— ընդհատեց աղջիկը խորամանկ նայվածքով մը։

— Նախ կկարծեմ հոն ինծի համար ավելի դյուրին կըլլա համալսարանի համար պատրաստվիլը և երկրորդ...— Ու լռեց։

— Եվ երկրո՞րդ,— հարցուց աղջիկը։

— Եվ երկրորդ՝ մոտիկ կըլլամ իմ սուտ-հիվանդ եղող միակ բարեկամուհիիս։

Շուշիկ ժպտեցավ։

— Խնդացե՛ք դուք,— բացականչեց տղան մեծ ոգևորությամբ։— Իհարկե հիմա իրավունք ունիք վրաս արհամարհանքով նայելու. տղա՛ մը, այսօրվան պաշտպանածը վաղը կհերքե, երեկվան տված խոսքը այսօր ոտքի տակ կուտա, ես հիմա թեթևամիտ ու անպետք մեկն եմ ձեր



աչքին, չէ՞։ Աղե՛կ, իսկ ես կըսեմ ձեզի, որ ես երբեք այս աստիճանի վստահություն զգացած չէի իմ մեջս՝ իմ սեփական ուժերուս վրա, ես հաստատ գիտեմ այս վայրկյանիս ու կրնամ ձեզի խոսք տալ, որ ինծմե բան մը դուրս պիտի գա։ Եթե կուզեք նորեն խնդացեք դուք, բայց ես տարակույս չունիմ. շատ չանցած ձեր սրտի հարգանքն ու մտերմությունը խլեմ պիտի ամբողջովին։ Եվ երբ ասկե տարի մը վերջը նորեն այսպես իրիկուն մը գամ ձեզի մնաք-բարով ըսելու, որ հաջորդ առտու մեկնիմ Մոսկվա բժշկական ֆակուլտեն, դո՛ւք այլևս առանց վարանքի ձեր ամբողջ սրտովը ձեր ձեռքը մեկնեք պիտի ինծի։

— Ճի՛շտ, ինչպես այս վայրկյանիս,— կցեց աղջիկը ջերմ ու սրտագին շեշտով մը՝ երկու ձեռքը տղուն մեկնելով։

Տղու թափը բեկավ իսկույն, ակնթարթ մը վարանոտ նայեցավ շեշտ աղջկա աչքերուն և հանկարծ անզուսպ ուրախությամբ մը խլեց անոր պարզած ձեռքերը ու սկսավ խենթի պես սեղմել։

Վայրկյան մը միայն։

Վերջը երկուքն ալ իրենց հայացքը ձգեցին գետին ու գլուխները թեթև մը վար խոնարհեցան, բայց ձեռքերը դեռ ամուր բռնած էին իրար։

Առաջին սթափողը աղջիկը եղավ, կամաց մը ազատեց ձեռքը ու մեղմ ձայնով մը հարցուց.

— Ուրեմն վաղը առտու կմեկնիք Էջմիածին։

— Վա՞ղը, երբե՛ք։ Քանի դուք հոս եք, հոս եմ և ես։

— Բայց որքան շուտ վանք վերադառնաք, այնքան ավելի շուտ կըլլաք Թիֆլիս, ձեր միակ բարեկամուհիին մոտ,— կրկնեց տղուն խոսքերը գրավիչ հեգնությամբ մը։

Ժպտեցավ Արտաշես ալ, մինչ աղջիկը ձայնի չարաճճի խաղով մը ավելցուց.

— Հո՛ն, դո՛ւք ձեր համալսարանի պատրաստության, ե՛ս ալ իմ աշխատություններուս մեջ, վերջապես իրարու օգնել ալ կրնանք, հիմա մեր մասնաճյուղերը իրարմե հեռու չեն, ինչպես առաջ։

— Այդ պայմանով ես կմեկնիմ այս վայրկյանիս,— բացականչեց տղան ձեռքի ուժգին ու աշխույժ շարժումով մը։

— Մինչև վաղը առտու կարելի է ուշացնել,— կատակեց աղջիկը,— բայց վաղը առտու անպատճառ, ձեր ընկերներուն հետ միասին։ Եվ մենք այլևս հոս իրարու չենք հանդիպիր։

— Ուրեմն ցտեսությո՛ւն, Թիֆլի՛ս։

Նորեն սեղմեցին իրարու ձեռք, աղջիկը գլխով ըրավ և լուսնի առատ լույսին մեջեն իր սեփ-սև ստվերին հետ մտավ տուն։

Միրաքյան մեկ վայրկյան մը քարացած մնաց իր կեցած տեղը, աչքերը հառած դրան, ուրկէ Շուշիկ ներս էր անցեր։

Հանկարծ արթնցավ կարծես ու խայտացող անհամբերությամբ մը մտավ սենյակ ու դարձավ ընկերներուն.

— Բայց կարծեմ ժամանակ է պառկելու, քանի որ պետք է կանուխ ճամփա իյնանք, արևը չելած։

— Ուրեմն հաստա՛տ կմեկնի՞ք վաղը,— հարցուց Քանյան մյուս երկուքին դիմելով։

— Այո՛,— պատասխանեց Արտաշես անոնցմե առաջ։

Երկու վարդապետացուները իրարու նայեցան։

Երկարահասակի դեմքին գոհունակության ժպիտ մը կխաղար։ Եվ աչքովը թեթև կծկում ըրավ ընկերոջը՝ «Տեսա՞ր», ըսել կուզեր կարծես։

Ելան ոտքի ու հրաժեշտ առնելու սկսան։

Քանյան ընկերացավ մինչև տան դուռը, հրավիրեց պարոնները անպատճառ իր տունը այցելել, երբ Ալեքսանդրապոլ գալու ըլլան։

Տղաքը վերջին անգամ մը ձեռք տվին, օրիորդին իրենց բարևը տալ խնդրեցին և ուղղվեցան դեպի իրենց սենյակը։

Երբ առանձին էին մնացեր, Մինաս տեսակ մը քնքշությամբ դարձավ ընկերոջը.

— Արտաշե՛ս, ես գիտեի, որ ընկերներուդ սիրտը պիտի չկոտրես ու միասին պիտի գաս, ես գիտեի, որ պիտի մտածես՝ դուն ազնիվ ու խելացի տղա ես։ Ա՛լ օդին տանք մեր մեջ եղած բոլոր հիմար խոսակցությունները։ Ուրեմն վաղը առտու կիջնենք Տեկոր, կվերցնենք ձիերը ու անմիջապես ճամփա կիյնանք։

— Այո՛,— ըրավ տղան կարճ։

— Ձեզի բան մը ըսեմ, ես այլևս հոգնեցա այս թափառելեն, մանավանդ Անին ու շրջակայքը ավելի երկար ժամանակ կպահանջե. հառաջիկա գարնան կուգանք, իսկ հիմա շիտակ երթանք էջմիածին։ Հէ՞, ի՞նչ կըսես, Արտաշե՛ս,— հարցուց Սերոբ՝ Մինասի հետ կանխապես պատրաստած դերը վարպետությամբ կրկնելով։

— Այո՛, շիտա՛կ էջմիածին։

Սերոբ հաջողութենեն շլացած՝ գաղտուկ մը Մինասի ձեռքը սեղմեց քովեն։

Երեքը միասին մտան վանք։

Արտաշես առջևեն մտածկոտ քայլերով, զույգն ալ անոր ետևեն։

Եվ երբ իրենց սենյակի սեմեն ներս պիտի մտնեին՝ Մինաս ծռեցավ կամաց մը ընկերոջը ականջին.

«Ազատեցինք»։

# ԿԻՆԸ

Վիպակ

## Ա

Սանդուղը կոլըրվեր ու կոլըրվեր, կարծես չէր ուզեր վերջանալ, ու Սուրեն կբարձրանար շարունակ դանդաղ ու թափթփած քայլերով, ձեռքի բարակ ու ճկուն գավազանը սանդուղի ամեն մեկ ոտքին վրա անգամ մը ցատկեցնելով։

Անիկա չէր ալ հիշեր՝ երրորդ թե չորրորդ հարկին վրա էր հիմա. այնպես որ, երբ նորեն փոքրիկ հարթակը հասավ ու աջ կողմի դռանը փակցված քառակուսի թուղթը տեսավ՝ խորունկ շունչ մը առավ։

Կոխեց զանգին կոճակը ու մեքենաբար կարդաց թղթին վրայի կապույտ մատիտով գրված տողը՝ «Մոտելներ չեն ընդունվիր»։ Կարդաց, հորանջեց ու գավազանին կոթովը իր ահագին եզերքով փափուկ գլխարկը ճակտեն ետ նետեց գագաթը՝ առատ ու ալիքավոր մազերուն վրա։

Բարձրահասակ տղա մըն էր, քիչ մը նիհար, դյուրաթեք ու ճկուն կազմով. շագանակի սուր մորուք մը ծնոտին, խիստ նուրբ խոսուն դիմագծերով, հագուստը կոկ ու անթերի, ինքն ալ, այսպե՛ս, երեսունի սահմաններուն։

Դուռը բացողը կին մըն էր, մեկը այն դեմքերեն, որ դժվար է որոշելը՝ սպասավո՞ր է, թե տան տիրուհին։

— Բարև՛, տիկին, պարոն Մաքսը տու՞նն է։

— Այո՛, բայց... բայց կարծեմ կաշխատի։

Երիտասարդը առանց ուշ դնելու անոր բայց-երուն՝ մոտեցավ դիմացի սենյակին դռանը և գավազանովը սկսավ պինդ-պինդ բախել։

— Ո՞վ է,— լսվեցավ ներսեն դժգոհ ձայն մը։— Մոտս մոտել կա։

Սուրեն դարձուց դռան կանթը անփույթ շարժումով մը ու մտավ ներս։

— Կներե՛ք, օրիորդ, ես ալ նկարիչ եմ,— խոսքը շիտակ ուղղեց

աղջկանը, որ մերկ պառկած էր քովընդի՝ շեզ-լոնին ամբողջ երկայնքովը՝ նուրբ ու սև ծածկոցին վրա։

Աղջիկը դժկամ ու տարտամ շարժում մը ըրավ, կարծես նստելու, բայց մնաց ինչպես որ էր ու ձայն չհանեց։

Մինչ նորեկը գլխարկը անցուց հաստ ու երկար ոլորած թուղթի մը ծայրը, որուն մյուս ծայրը խրված էր իրարու վրա երեսները դեպի պատը ըրած նկարներու դեզի մը մեջ։ Ու մոտեցավ եռոտանիին, որուն առջևը ընկերը կաշխատեր։

Առանց անոր հետ բառ մը փոխանակելու, կեցավ քովը ու դիտեց նկարը վայրկյան մը՝ հեգնոտ ժպիտը շրթունքին։

— Հրաշալի՜ է, հրաշալի՜, սքանչելի է,— բացականչեց վերջապես ծաղրածու ոգևորությամբ մը։— Աննման է, սիրելիս, աննման, բայց հերիք է, ալ թո՛ղ, ելի՛ր։

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահեր,— պատասխանեց ընկերը ներողամիտ ու ժպտուն։— Ես դեռ տրամադիր եմ աշխատանքի։

— Աշխատա՞նք... ա՜, իհարկե՛, աշխատա՜նք. քսե՛, քսե՛, քըսմըսե՛, ներկը ներկին, ներկը ներկին, ո՜ւհ, աշխատա՜նք, ճաշա՜կ, արվե՜ստ, ստեղծագործությո՜ւն...

Եվ հանկարծ ձեռքը դնելով ընկերոջը ուսին՝ իսկույն ավելցուց՝ գերմաներենը ֆրանսերենի փոխելով.

— Ճամփու դիր, տղա՛ս, ճամփու դիր այդ խեղճ աղջիկը։

Մաքս ակնթարթ մը ընկերոջը դեմքին քննող հայացք մը գամեց, հետքը վար դրավ երանգապնակն ու վրձինները կամաց մը քովի աթոռին, դարձավ հայտնեց աղջկան, որ այսօրվան նիստը ընդհատված է, և որ կրնա երթալ։

Աղջիկը կրկնել չտվավ, իսկույն մարմնին սեղմեց քովը ինկած շապիկը ու վազեց ճափոնական պատվարին ետևը։

— Այդպե՛ս,— բացականչեց Սուրեն գոհ։— Թե չէ՝ շատ հիմար բան է, խոստովանե, այդ քու աշխատանք ըսած բանդ, այդ քու մոտելներդ, քու անվերջ, տխմար մոտելներդ, որ դուն ամեն օր փողոցներեն ներս կկանչես կամ քու այդ սիմվոլներդ, քու անվերջ տափակ սիմվոլներդ, որ հոգիիդ փողոցներեն ամեն օր դուրս կկանչես։ Գռեհիկ է այդ բոլորը, կհասկնա՞ս։ Գռեհիկ ու ողորմելի՝ ինչ որ արվեստ ու ստեղծագործություն կանվանես, ինչ որ գեղեցկություն ու վսեմ կանվանես, ինչ որ գործ ու աշխատանք կանվանես։ Սուտ կուռքեր են այդ ամենքը. կործանվելու պիտի այդ ամենքը։ Կոտրե վրձիններդ, կոտրե։ Ես կոտրեցի իմինները։

— Է՜, հասկցանք, բան չկա, սովորական քրիզիս է, կանցնի,—



ըսավ Մաքս բոլորովին հանգիստ ու անտարբեր շեշտով մը, միևնույն ժամանակ ներկերու մեջ թաթխված աշխատանքի շապիկը վրայեն հանելով։

* *
*

— Դուն ինծի ան ըսե նայիմ՝ օրե՞րդ ինչպես կանցնես, քանի որ է մեջտեղ չկաս։

— Օրե՞րս,— հարցուց ընկերը, բարձրացավ նստեցավ սեղանի մը ծայրը և դառն ու հեգնոտ շեշտով մը ավելցուց,— կզվարճանամ, բարեկամս, կզվարճանամ։

— Հա՛, իրավ, Առնոն բաներ մը կըսեր. շաբաթ գիշեր փառավոր օրգի եք ունեցեր։ Խայտառակնե՜ր, ինծի ինչու իմաց չտվիք։

— Էքսպրոմպտո՜ եղավ։

— Երեկ նույնը և երեկ գիշեր և նախորդ գիշերը և բոլորն ալ իհարկե էքսպրոմպտո։

— Հա՛, մոտավորապես։

— Եվ որու՞ հետ եք։ Կուզե՞ս ես հաշվեմ։ Առնոն ու իր Ֆանին, անշուշտ Գյուստավն ու իր շիկահերը, մեկ մըն ալ ան՝ քու բրյունետդ, չէ՞։

— Ճիշտ գլխուն զարկիր։

— Անտարակույս սեկտ, գրոգ և որ ըստ կարգին։ Ուրեմն քեֆդ տեղն է, ալ ի՞նչ ես եկեր գլխուս կտրտնջաս բուի պես։

— Ո՞վ կտրտնջա, ընդհակառակը։ Չէ՞ որ «Երգ, կին ու գինի», ինչպես ըսեր է ձեր դդում բանաստեղծը։

Եվ խորունկ, հոգնած հորանջով մը ելավ, կեցավ ոտքի ու ավելցուց.

— Ի՞նչ թշվառական բան է այս կյանքը, եթե ատոնք են զվարճություն ըսված բաները։

— Վա՜յ, նույնիսկ կի՞նը։ Խեր ըլլա, Սուրեն աս ի՞նչ հովեր են։

— Եվ մանավանդ կինը իր կպչուն զգացումներով ու թռչունի խելքով։

— Այսինքն, անշուշտ, միակ բացառությունը տիկին Ջանետը,— վրա բերավ Մաքս խորամանկ ժպիտով մը։— Գիտե՞ս, ամեն օր կեսօրին, ճիշտ մեր փողոցին անկյունը կանոնավոր կերպով կհանդիպեմ անոր մարդուն։ Ու խնդալս հազիվ կպահեմ, երբ անիկա այնպես ինքնապանծ ու վեհափառ բարև մը կուտա իր վեհափառ սիլինտրով։

— Ջգե՛, հոգիդ սիրես,— ընդհատեց խոսակիցը կտրուկ։— Սկիզբները, այո՛, քիչ մը հետաքրքիր էր գուցե գործիդ ռոմանտիկ պարագաները, վտանգը, հուզումը, բայց, է, ատիկա ալ գռեհկացավ։ Կին չէ՞, նույն են ամենքն ալ, ոչ մեկ բացառություն։ Քալե՛, քալե՛, երթանք, ձեռք մը պիլյարտ։

— Սիրով, բայց պայմանով մը, որ ամբողջ իրիկունդ ինծի պիտի նվիրես։

— Ուզածդ ատիկա ըլլա։ Եթե կուզես՝ բոլոր իրիկուններս։ Ծրագի՞րդ։

— Կընթրենք միասին ու կերթանք նվագահանդես։ Այս իրիկուն գրեթե ամբողջ Բեթհովեն է, որ դուն, գիտեմ, կսիրես։

Սուրեն հանկարծ խոժոռեցավ և ունքերը կիտեց։

Պատասխանը, որ վերջապես տվավ, շատ ծամծմված դուրս եկավ իր շրթունքներեն։

— Ընթրիքեն ետքը երաժշտությունը, այո՛, մարսական է։ Միայն թե ընտրությունդ, այնպես քիչ մը... Բեթհովե՞նս որն է, ջղեր պիտի գրգռե։ Ա՛յ, երթանք քաֆե-շանտան մը, ատիկա բոլորովին ուրիշ հարց է։

— Ո՛չ, իմ հյուրս ես ու պետք է հարմարվիս ճաշակիս,— ըսավ Մաքս աչքին ծայրովը ընկերոջը դեմքը դիտելով։

Սուրեն հանկարծ մոտեցավ անոր, ձեռքերը երկու կողմեն տաբատին գրպանները դրած՝ կեցավ դիմացը ու ըսավ հատիկ-հատիկ։

— Հիմար է քու երաժշտությունդ ալ քու նկարչությանդ նման, հիմար ես դուն ալ քու խորամանկությանդ նման։ Քու Բեթհովենովդ ինծի չես վախցներ։ Վերջիվերջո բոլորովին միևնույն է ինծի համար՝ քաֆե-շանտա՞ն է եղեր, թե քոնսերի սրահը. ձանձրույթը ամեն տեղ ալ միևնույն ձանձրույթն է։ Միակ կուռքը, գուցե, որուն արժե երկրպագել։

— Ա՛յ, տեսա՞ր, տղամարդու պատասխան։ Ուրեմն վճռված է։ Եվ մի՛ վախնար՝ չես զղջար. հոն է ըլլալու նաև Լուլուն։ Անցած օր նորեն քեզի կհարցներ, կըսեր՝ «Ո՞ր է ձեր հայը, մեջտեղ չկա»։ Ըսի՝ «Ո՞վ գիտե անոր բանը. խորհրդավոր են անոր բոլոր գործերը»։ Իսկ Լուլուն գիտես որ շատ է սիրահար խորհրդավոր բաներու։ Այնպես որ խելքդ գլուխդ ժողվե։ Իսկ որ Լուլուն գեղեցիկ կնիկ է, ատիկա պիտի խոստվանի, կարծեմ, նույնիսկ քու ձանձրույթը։

Սուրեն առանց պատասխան տալու՝ ցնցեց ուսերը ու թղթերու ոլորին ծայրեն վերցուց իր ահագին լայն եզերքով գլխարկը։



## Բ

Փունջ-փունջ պատերուն բուսած շուշաններու ճերմակ բաժակներեն էլեկտրական շռայլ լույսը կողողեր սրահը ու տեսակ մը կյանք ու շարժում կուտար, ո՛չ միայն խմբված բազմերանգ հասարակության ու անոնց արդուզարդին, այլև կարմիր թավիշ նստարաններուն, շուրջանակի շարված արձաններուն և մանավանդ ճակտի հսկա երգեհոնի ահագին շեփորներուն, որոնք արևի ծարավ ծաղիկներու նման իրենց վիզերը ձի՛գ վեր կերկարեին։

Սուրենի տեսած առաջին իրը, ոտքը սրահը դրավ թե չէ, այդ երգեհոնը եղավ։ Խեթ ու թշնամական հայացք մը նետեց վրան և իսկույն աչքերը դարձուց շրջապատող բազմության, երբ հանդարտ քայլերով ընկերոջը ետևեն սրահին խորքը կառաջանար։

Իր մեջ զգացածը լարում մըն էր միայն, լարում մը դիմադրելու, դեմ դնելու, ցույց տալու ինքզինքին, ընկերոջը ու ամենուն, թե աշխարհի երեսին իրեն համար ալ հրապույր չունի և ոչ մեկ բան, թե ինքը վերջնապես խորտակեր է ամեն պաշտամունք։

Կարծես մենամարտող մը ըլլար ինքը այդ վայրկյանին ու կմտներ արենան ըմբշելու։ Այս համեմատությունը, որ կայծակի մը պես վազեց մտքեն, դպավ ճաշակին. գռեհիկ բան մը կար իր այդ տրամադրության մեջ և իսկույն թուլցուց իր լարումը։

Ձանգի՛ սա. կարիք չկա վրդովվելու։ Վրդովումը նշան է համոզումներու թուլության, մինչդեռ իր՝ Սուրենի, համոզումները չէ՞ որ շատ են ամուր ու վճռական։

Ինքը անցեր է արդեն մարդկային ունայնություններուն ու մեծամտություններուն վրայեն։ Ինքը ըմբռնած է արդեն, թե ի՛նչ զավեշտական նյութի կտոր մըն ենք մենք՝ փակած հողին, ի՛նչ ողորմելի գետնամած անասուն մը, որուն միակ զանազանությունը մյուս անասուններեն ան է, որ կմտածե, թե ինքը տարբեր բան մըն է, քան մյուս անասունները։

Իրավ է, կար ժամանակ մը, երբ ինքն ալ լեցուն էր ծիծաղելի տափակություններով, երբ ինքն ալ կկարծեր, թե կթռչի, թե ինքը փոված չէ հողին, երբ կպաշտեր հոգիին այդ թռիչքը, երբ կպաշտեր արվեստը՝ թռիչքներու այդ մարմնավորումը, երբ քուրմ մըն էր ինքն ալ, փիլիսոփա քուրմ մը այդ ստեղծող Աստծուն, երբ կսիրեր այդ Աստվածը, կծառայեր այդ Աստծուն ու կաշխատեր։

Բայց անցան, բարեբախտաբար, անդարձ անցան այդ բոլոր երեխայությունները։ Այլևս վեր է ինքը այդ բոլոր անմիտ նախապաշարումներեն։

Ո՛չ մեկ սրբություն. ոտքի տակ բոլո՛ր կուռքերը, բոլոր կուռքերը անխտիր, կեցցե՛ Նամոմը։

Իր այդ եզրակացությունը ընդգծելու համար էր կարծես, որ հանկարծ արմունկովը զարկավ ընկերոջը։

— Նայե՛, Մաքս, նայե՛, իշխանուհի ֆոն Թուրինկը նորեն աճուրդ է հաներ իր կուրծքն ու թիկունքը։

— Ան ալ կերևակայե՝ թե ինքն է միայն աշխարհիս երեսին, իր ֆոնությունը ու իր ճերմակ կուրծքը,— պատասխանեց Մաքս ժպտալով։

— Ատ ալ անոր կուռքը,— վրա բերավ Սուրեն չարախնդաց։

* *
*

— Գիտե՞ս, քու ֆինուհիդ ալ հոս է,— կցեց Մաքս։

— Ո՞վ։

— Սա քո ծանոթ ֆինուհին, որ կըսես բժշկուհի է։

— Ո՞ւր է,— ըսավ տղան ու ծույլ շարժումով մը ընկերոջը ցույց տված կողմը դարձուց գլուխը։

Կողմնակի բազկաթոռներու շարքին՝ գեր կնոջ մը քովը նստած էր նուրբ ու սլացիկ կազմով, մուգ հագնված աղջիկ մը. գլուխը բաց, առատ շեկ մազերը կիտած ծոծրակին, դեմքը քիչ մը երկար ու կարծես հոգնած։ Ձեռքերը դրեր էր գոգը ու աչքերը հառեր դեպի բեմը, ուր նվագողները արդեն տեղավորված՝ զբաղված էին իրենց գործիքներու վերջին հարդարումովը։

— Ու՞ր ես ծանոթացեր այդ աղջկան,— հարցուց Մաքս։

— Պանսիոն մը։

— Տարօրինակ է ճշմարիտ. այդպես սիրուն աղջիկ ու բժշկուհի։ Հիմա կարգին բժի՞շկ է ատիկա։

— Որ բժիշկ է՝ գիտեմ, իսկ թե՝ կարգի՞ն է թե ոչ...

Սուրեն կուզեր սրախոսություն մը ընել աղջկա հասցեին, բայց ինքն ալ չհասկցավ ինչպես, տեսակ մը քաշվեցավ ու ակամա խոսքը կտրեց։ Եվ իսկույն ալ զայրույթ մը զգաց ինքն իր դեմը, թե ինչո՞ւ քաշվեցավ, մանավանդ որ աս առաջինը չէր։ Տարօրինակ բան մը կար այդ աղջկան վրա, որ միշտ սանձ կդներ իր բերնին։

Եվ Սուրեն ակամա գիտակցության եկավ, որ տարտամ պատկառանք մը կտածեր դեպի այդ աղջիկը։ Կարծես տեսակ մը բացառիկ էակ։ Բացառի՞կ։ Ինչո՞վ, որ բժշկուհի՞ էր։ Է՜հ, իր շատ պետքն էր կարծես։



— Ի՜նչ ալ համառ դիմագծեր ունի,— նկատեց Մաքս քովեն։— Ու ի՜նչ անմատչելի է ըլլալու, խակը Վեստալուհի։

«Վեստալուհի՞». կրկնեց մտքին մեջեն։ Ինչպե՞ս թե՝ Վեստալուհի։ Ինչ ըսել է Վեստալուհի։ Հին Աստծու մը նվիրված այդ խեղճ աղջիկներն ալ անշուշտ նույն կինն են եղած, ինչպես բոլոր կիները, ինչպես, օրինակ, և այդ ֆինուհին։

Ու թշնամի նայվածքով մը սկսավ դիտել իր դեմը քիչ մը կողմնակի նստած այդ աղջկան կիսանդրին, որուն վզի ու ծնոտի նկարչական կորությունը ավելի ևս կշեշտվեր ետևի պատին կարմիր թավիշ ֆոնին վրա։

Ընկերը իրավ կըսեր՝ ի՜նչ համառ ու վճռական դիմագծեր ուներ այդ նուրբ աղջիկը։ Երևի ատիկա էր, որ ազդեր էր իր վրա ամեն անգամ, երբ անոր դեմն էր գտնվեր։ Անշուշտ, ատ պիտի ըլլար, դեմքի այդ համառ արտահայտությունը։ Համա՞ռ...

Եվ տղան զգաց, որ չգիտես ինչու, բայց այդ բառը կզարներ իր ինքնասիրությանը, կխայթեր իր հպարտությունը։

Հանկարծ պահանջ մը զգաց, տիրական պահանջ մը, որ այդ աղջիկը իրեն նայի, իսկույն, անպատճառ իրեն նայի։ Սևեռուն ու հրամայող հայացքը անթարթ անոր դեմքին գամած՝ կսպասեր վստահ ու գիտակից, որ աղջիկը պիտի դառնա ու պիտի նայի։ Եվ աղջիկը թեև քիչ մը ուշ, բայց դարձավ ու նայեցավ։

Անսպասելի բուռն շարժումով մը դարձուց գլուխը Սուրենի կողմը ու իր խոշոր, մեղմ-կապույտ պայծառ աչքերը զարնվեցան տղու շեշտ ակնարկին։ Սուրեն գլխով ըրավ։ Աղջիկը նախ դիտեց քիչ մը, ճանչցավ, գլխու խիստ թեթև հակումով մը առավ բարևը ու բնական, ազնըվական հանգիստ շարժումով մը դարձուց գլուխը նորեն դեպի բեմը ու անշարժացավ։

Այդ նայվածքին ու գլխու այդ հանդարտ դարձումին մեջ խիստ հպարտ բան մը կար, հպարտ ու տխուր, որ նորեն դպավ տղու սրտին։

«Ո՞վ ես դուն, ի՞նչ ես որ դուն, այդքան վերերեն», վազեց բարկություն մը Սուրենի հոգիին մեջեն և իսկույն վճռեց՝ որ երթա անգամ մը մոտեն դիտելու այդ հպարտությունը։

* *
*

Այդ նույն վայրկյանին էր, որ նվագապետի ճիպոտին թեթև նըշանին վրա հանկարծ խոր ու անբիծ լռություն մը փռվեցավ այդ երփներանգ բազմության հազարավոր գլխուն վրա։

Նախ ջութակ մը դողդողաց կամաց, երկրորդ մը, երրորդ մը, չելոն քովեն բողոք մը նետեց և աղեղներու ամբողջ անտառ մը դողդոջուն ու կարոտակեզ դեպի վե՜ր, դեպի վեր սկսավ սողալ անվերջ ու անհաս տենչով մը, սիրտ ճանկռտող կսկիծով ու մելամաղձոտ կանչերով…

Սուրեն ակամա կախեց գլուխը, ձեռքովը ամուր գոցեց աչքերը ու սկսավ դիտել։

Ան ի՞նչ էր հոն իր աչքերուն այդ հուսահատ խավարին մեջ, որ կխլրտեր. ձայները. Նայե՜, աս մեկը կոտրած թև մըն է, թռչունի ամեհի կոտրած թև մը, որ կթփրտա ու կուզե դուրս այդ ցածի մածուցիկ նյութեղ խավարեն, դո՜ւրս ու վեր. իսկ հոն ձեռքեր են, որ պարապին մեջ ամեն կողմ կկառչին բռնելու, ձգվելու, հասնելու խարխափումներով. ասդին ոտք մը, քալած, հողին երեսը երկար քալած ոտք մը, որ ջղայնոտ շարժումներով իր վրայի անհունին մեջ կռվան մը կփնտրե, որ ձենվի ու ելլե վեր քիչ մըն ալ վերջապես դեպի վեր. անդին լանջ մը կիսասքող, որ կուռի ու կիջնե հեռավոր ու անրջոտ աշխարհներու այրող կարոտովը. հապա այն զույգ մը խոշոր աչքերը, որ թանձր խավարի խորունկ խորերեն անթարթ ու սևեռուն կնային վեր ու կըսպասեն ու կըսպասեն…

Վերջին թրթիռ մը դուրս սահեցավ գայթիգայթ ջութակի կուրծքեն, թուլցավ, մարեցավ ու ինկավ… Միահամուռ բարբարոս ծափերու հորդ ալիք մը իսկույն ողողեց սրահը ու սրբեց ու տարավ ամեն երազ, ամեն թրթիռ։

Սուրեն ծանր շարժումով մը բացավ դեմքը, նայեցավ շուրջը, նայեցավ իր մեջը և զգաց ծանր զգացում մը, որ նստեր էր կրծքին, ուսերուն ու կճնշեր։

— Է՜, փճացուցիր իրիկունս,— բարկացավ ընկերոջը վրան։— Մարդ կատարյալ հիստերիկ կդառնա այդ խելագար ձայներուն մեջ։

Ընկերը ժպտեցավ, բայց ոչինչ չառարկեց. երաժշտությունը սկսեր էր նորեն։

Սուրեն այլևս ոչ միայն չգոցեց աչքերը, այլ ամեն կերպ ալ աշխատեցավ, որ չլսե նվագը։ Իր նայվածքը ծույլ շարժումով մը քալեց բազմության ուսերուն ու գլուխներուն վրայեն ու գնաց գտավ այն աղջկան դեմքը։

Ֆինուհին ամբողջովին ձուլվեր էր երաժշտության։ Սուրեն սկսավ դիտել անոր լարված դիմագծերը և ինչքան կնայեր, այնքան ավելի պարզ կտեսներ, որ անոր նուրբ ու ձիգ դեմքին բոլոր գծերը ճակտեն, այտերեն, աչքերուն քովեն ու կծկված շրթունքներեն վե՜ր կսլանային,



անոնք ալ վե՜ր, միշտ վե՜ր, պատրանքներուն անհուն կարոտովը, ունայնություններու անհագ ծարավովը…

Եվ Սուրեն հանկարծ անդիմադրելի պահանջ մը զգաց, որ երթա, երթա իսկույն ու պատռե բիրտ ձեռքով աղջկան այդ երերուն երազները ու քաշե վար, դնե անոր ոտքը պինդ հողին վրա։

Ալ մեկ ցանկություն մը միայն կար իր մեջը, որ հասնի շուտով դադարը։

Նվագը ընդհատվելուն պես ցատկեց ոտքի ու աշխուժ ու անփույթ շիտակ դեպի Ֆինուհին։

* * *

— Բարև ձեզի, օրիորդ Սոնկրն։

Աղջիկը, որ դեռ զբաղված էր բեմով, տհաճ զարմացած նայվածքով մը դիմավորեց երիտասարդը, բայց իսկույն զսպեց ինքզինքը, ժպտեցավ, բարևը առավ և անմիջապես ավելցուց սրտագին հափըշտակությամբ.

— Հրաշալի էր, չէ՞, վիոլոնի վերջին կտորը։

Սուրեն ալ ժպտեցավ ու պատասխանեց կատարյալ բացորոշությամբ։

— Դժբախտաբար ձեզի ոչինչ ըսել չեմ կրնար, օրիո՛րդ, չէի հետևիր նվագին։

— Վա՞յ,— զարմացավ աղջիկը։— Ինչպե՞ս։

— Ուրիշ երաժշտություն մը գրավեր էր հոգիս։

— Այսի՞նքն։

— Դիմագծերուն երաժշտությունը։ Հպարտ ու գրավիչ գլուխ մը։

— Մի՞թե,— խնդաց աղջիկը կատարյալ միամտությամբ։— Կարելի չէ՞ ինծի ալ ցույց տայիք այդ գեղեցիկ ու հպարտ գլուխը, որ ձեզի այդ աստիճան գրավեր է։

— Ո՛չ, օրիո՛րդ, դժբախտաբար չեմ կրնար։ Ինչպե՞ս ցույց տամ ձեզի ձեր իսկ գլուխը։

Աղջիկը նախ շփոթեց կարծես, բայց հանկարծ ամբողջ դեմքովը կարմրեցավ ու իսկույն տժգունեցավ նորեն։ Վիրավորված ու զայրացկոտ նայեցավ ակնթարթ մը երիտասարդի համառ աչքերուն և սառն ձայնով մը ըսավ լուրջ.

— Ներեցե՛ք, պարո՛ն, ես հաճոյախոսություններ չեմ ախորժիր։

Տղու աչքերուն մեջ բոց մը վառեցավ. ընկճելու, զսպելու ու խորտակելու չարագուշակ բոց մը, որ իր ձայնին մեջն ալ հնչեց.

— Անիկա ինծի համար միևնույն է, օրիո՛րդ։ Երբ ես բան մը կարտահայտեմ, ըսել է՝ արտահայտելու ներքին պահանջ մը ունիմ. ուրիշին ախորժելի է, թե ոչ, ատիկա արդեն երկրորդական հարց է։ Գեղարվեստագետի ամենեն առաջին օրենքն է ասիկա։

— Իսկ ես գեղարվեստագետ չեմ, պարո՛ն, կներեք։

— Բայց գիտության զինվոր մը, օրիորդ,— վրա բերավ տղան ժպտուն։— Իսկ գիտության զինվորի մը համար ամեն բանե առաջ ճշմարտությունը լսելն է, նույնիսկ եթե այդ գիտունը գեղեցիկ կին մը ըլլա։ Եվ իմ ըսածս ճշմարտություն մըն էր ամեն բանե առաջ։

Աղջկան դեմքին ալ ժպիտ մը եկավ, մելամաղձոտ ժպիտ մը, տեսակ մը ներող, գրեթե մայրական։

— Աղե՛կ, դիցուք,— ըսավ ան՝ այս անախորժ խոսակցության վերջ մը դնելու ակնհայտնի ցանկությամբ։

— Եկե՛ք, օրիո՛րդ Ստեկլըն, եկե՛ք դառնանք բարեկամ,— բացականչեց տղան հանկարծ բոլորովին անսպասելի և այն տեսակ շեշտով մը, որ ավելի պահանջ էր, քան առաջարկ։

Աղջիկը զարմանքեն լուռ մնաց վայրկյան մը, վերջը ըսավ լուրջ ու հանգիստ։

— Բարեկամությունը ինքնիրենը պիտի գա, պարո՛ն, ոչ թե կանչելով։

— Իսկ ես կսիրեմ քաղաքը հարձակումով վերցնեմ,— խնդաց Սուրեն։

Աղջկան արտահայտիչ դիմագծերը թեթև մը խոժոռեցան, բայց խիստ մեղմ ու պարզ շեշտ մը ուներ, երբ ըսավ.

— Պարո՛ն, ինծի կթվի, որ ձեր ընկերը հոն ձեզի կփնտրե։

Ու թեթև դարձ մը ըրավ դեպի իր քովը նստած սևազգեստ գիրուկ կինը, կարծես անոր բան մը ըսել կուզեր։

Սուրեն կամաց մը խածավ վարի շրթունքը ու համառ շարժումով մը մեկնեց ձեռքը աղջկան։

— Ուրեմն դեռ կտեսնվինք, օրիո՛րդ, դեռ իմ պատասխանս չառի։

— Երթաք բարով, պարո՛ն,— պատասխանեց աղջիկը բոլորովին պարզ ձայնով մը ու բոլորովին պարզորեն ալ տվավ իր ձեռքը՝ կարծես ոչինչ պատահած չըլլար։

Եվ Սուրեն շրջապատի ժխորի մեջեն ուղղվեցավ դեպի իր տեղը, վիրավորանքեն խայթված, միևնույն ժամանակ ուրիշ տարօրինակ զգացում մը կրծքին տակ։



«Ինծի կվնասե՞ս։ Տեսնենք»։ Կմտածեր ան, «վնասել» բառեն ակներև ու մասնավոր հաճույք մը զգալով։

— Երթանք, ալ հերիք է, ես այլևս չեմ մնար,— ըսավ Սուրեն ընկերոջը թևեն քաշելով։

Ու իրար ետևե դուրս ելան սրահեն։

## Գ

Աշնան վերջի բացառիկ արև պայծառ օր մըն էր։ Մյունխենի այն հազվագյուտ արևոտ օրերեն, երբ մարդ ոչ մեկ կերպ ծածկի տակ մնալ չի կրնար։

Մարգրիտ Ստեկլըն հազիվ ազատված իր պարտավորություններեն. ձեռնոցները անցնելով, արագ կիջներ վար լայն սանդուղներեն, ինչքան հնար է շուտ ազատվելու համար հիվանդանոցի դեղերով հագեցած օդեն։

Իր հոգնած դեմքին աշխույժ մը կխաղար, երբ հավաքեց փեշերը, ետ հրեց մուտքին փեղկը ու ելավ փողոց։ Բայց հազիվ էր խոր շունչ մը քաշեր ու երկու քայլ ըրեր, որ հանկարծ ակամա ու անգիտակից ստիպվեցավ կանգ առնելու։

Դեմը ճիշտ իր ճամփուն վրա, արևին բերանը, հաստ ու խոշոր սյունին տակը կեցած էր Սուրեն։ Օրիորդի առաջին զգացումը վախ մը եղավ. խոր, առանց որոշ պատճառի, բնազդական վախ մը։ Եվ անիկա մեծ ճիգով հազիվ հաջողեցավ ավրելու այդ արտահայտությունը իր դեմքին վրայեն, երբ տղան գլխարկը հանած, գլուխը խոնարհ, իր հըպարտ քալվածքով ու ազնիվ հայցանքով մոտեցավ, բարևեց ու ձեռքը մեկնեց։

Հուզումեն ու անակնկալեն ծնող տեսակ մը ուրիշ հանդիսավոր շարժումով էր, որ օրիորդը ինքն ալ՝ փեշերը ձգեց ու ձեռքը տվավ տղուն։ Եվ միևնույն ժամանակ գիտակցեց տարտամ կերպով մը, որ իր վախի զգացումին ախորժելի հպարտություն մը փաթթվեցավ. հպարտություն մը այդ խրոխտ, այդ ուժեղ, այդ գեղեցիկ սևաչվի տղան իր առջևը խոնարհած տեսնելու։

— Ինծի նորե՞ն պիտի վնասեք, օրիո՛րդ,— եղավ երիտասարդի առաջին հարցը ու ժպտեցավ։— Անցած գիշեր շատ էիք պատերազմական։

Ստեկլըն չի ժպտեցավ, ցաված նայվածքով դիտեց ակնթարթ մը դեմինը և ըսավ պարզ ու լուրջ.

— Եթե իրավ ձեզի համար ինծի հանդիպելը արժեք մը ունի, թողեք խուսելու ձեր այդ կեղծ շեշտը։ Ես պարզ աղջիկ եմ ու միայն պարզ բաներու ճաշակը ունիմ։

Եվ սկսավ քալել։

— Ինչպե՞ս թե՝ կեղծ,— վրա թերավ տղան իսկույն՝ ինքն ալ անոր քովեն քալելով։— Եվ ի՞նչ կարիք ունիմ կեղծելու։ Ներեցե՛ք, օրիո՛րդ, ես եմ ինչ որ եմ և կըսեմ ու կխոսիմ՝ ինչպես որ եմ։

Իսկ աղջիկը պատասխանեց հանկարծ բոլորովին ջերմ, սրտանց ու խիստ և իր հայացքը հեռուն իր ճամփուն գամած։

— Ո՛չ, պարոն Սուրեն, դուք ան չեք՝ ինչ որ եք, դուք ան չեք ըսեր, ինչպես որ եք։ Դուք կծածկեք, կթյուրեք ձեր հոգին։ Դուք ինքներդ ալ անշուշտ աղեկ գիտեք, որ կարժեք անհամեմատ ավելի, քան ինչ որ երևալ կուզեք։

Սուրեն կանգ էր առել նորեն ու ապշած կնայեր իր խոսակցի վառվող աչքերուն։ Կնայեր ու չէր հավատար իր ականջներուն։

Ո՞վ էր այդ աղջիկը։ Ի՞նչ էր այդ աղջիկը։ «Վեստալուհի՞»... վազեց նորեն մտքին մեջեն։

Իսկ աղջիկը կարծես կարդալով անոր մտքերը՝ ավելցուց իսկույն.

— Ես ատիկա պարզ զգացեր եմ մեր այն մեկ երկու թեթև հանդիպումներու ատեն. կհիշե՞ք վերի պանսիոնը։

Անցավ տղու առաջին ապշությունը, արթնցավ հակազդը. ուրիշ մը կհանդգներ մտնելու իր հոգիին խորքերը, ան ալ այսպես առանց այլևայլության, այսպես պատահական մեկը, «կնկան մը կտորը»։ Ինքն իրմով ապրող, ինքն իր մեջ փակված իր հոգիին համար օտար ձեռքի մը այդ մերկ շոշափումը շատ էր կոշտ ու կոպիտ, այնպես որ տղան ինքզինքը զսպել չկրցավ.

— Ա՜յ, ա՜յ, ա՜յ, այդ ի՜նչ նրբատես աչքեր ունիք եղեր, սարսափելի է,— բացականչեց ծաղրանքով։ Բայց ինքն ալ իսկույն ամչցավ իր ըրածեն և զգաց, որ անզոր էր իր ծաղրը։

— Եթե այս խոսակցությունը անախորժ է ձեզի՝ ընդհատենք,— առաջարկեց աղջիկը հանգիստ, առանց վիրավորվելու։

— Գիտե՞ք, օրիորդ,— ըսավ տղան հանկարծ, անակնկալ խոստովանանքով մը ու իր կես-հեգնոտ ժպիտը միշտ պահած,— ճիշտ է, ես սովոր չեմ եղած իմ ներքին աշխարհիս մասին ուրիշներու հետ խոսելու, մանավանդ կնոջ մը հետ, բայց ահա զարմանքով կըզգամ, որ ձեր տված այդ պզտիկ բարոյագիտության դասը վերջիվերջո այնքան ալ անախորժ չէ ինծի, քան ենթադրել կրնայի։



* *
*

— Է՜, թողե՛ք, ավելի աղեկ է՝ ըսեք տեսնեմ՝ հիմա ի՞նչ նկարելու վրա եք,— հարցուց աղջիկը իր կանացի նրբազգացությամբը շատ լավ գիտնալով, որ երիտասարդի սրտին ամենեն մոտիկ նյութն էր ատիկա։

— Ա՜խ, իմ նկարելս,— ըսավ տղան խորին արհամարհանքով։— Եվ մի՞թե ձեզի համար հետաքրքիր է ատիկա։

— Կամ գուցե ուրիշներու հետ, մանավանդ կնոջ մը հետ, սովորություն չունիք նաև ձեր աշխատանքի մասին խոսելու,— կցեց աղջիկը ժպտուն։

— Ճշմարիտը խոսելով՝ այդպես է։ Կնոջ հետ երբեք չդատել գործի մասին, իմ սկզբունքս է։

— Եվ ինչու՞։

— Նախ որ ոչինչ չէ հասկնալու, երկրորդ ալ շատ է ձանձրալի թե անոր համար, թե ինծի։

— Ուստի և կխուսափիք ինծի հետ այդ մասին խոսելե,— եզրակացուց աղջիկը։

— Ա՜, ձեզի հետ հարցը քիչ մը ուրիշ տեսակ է,— խնդաց երիտասարդը։— Ինծի կթվի, որ հոտ ալ ստիպված պիտի ըլլամ ձեզի զիջում մը ընելու, իբրև բացառություն։

— Եվ ինչո՞ւ։

— Ինչու՞,— կրկնեց տղան ու սկսավ մտածել։— Այդ ինչուն ես ալ աղեկ չգիտեմ. միայն կզգամ, որ պետք պիտի ըլլա այդ բացառությունն ալ ընելու, թե ձեր բարեկամությունը ընկճել կուզեմ։

— Մի՞թե ձեզի համար, իրա՞վ, այդ աստիճանի հետաքրքիր է իմ բարեկամությունս,— հարցուց աղջիկը, կանգ առավ ու իր մեղմաձոր աչքերը սևեռեց տղու նայվածքին։

— Այո՛, շա՛տ,— պատասխանեց Սուրեն ջերմ ու կտրուկ, առանց ազդելու, քաշվելու, հափշտակելու խորին պահանջով մը։

Եվ միևնույն ժամանակ իր աչքերը համառ կդիտեին իր դեմի այդ տխուր ծավի ծով աչքերը, այդ տեսակ մը կարծես հոգնած դիմագծերը ու իր հոգիին խորքերեն տրտում ձայն մը հարց կուտար հուշիկ՝ «Ի՞նչ կուզես, ի՞նչ կուզես դուն այդ աղջիկեն...»։

— Աղե՜կ, եթե այդպես է և եթե միտքերնիդ հանկարծ չփոխեք,— ըսավ աղջիկը պարզ,— եկեք ինծի մեր պանսիոնը։ Առտուները ես միշտ գործի եմ հիվանդանոցը, երբեմն և իրիկունները. համենայն դեպս չորեքշաբթի ու շաբաթ իրիկունները ես տունն եմ անպայման, այդ իրիկունները սովորաբար թատրոն ու երաժշտություն ալ չկա, հանրային

արժեք ունեցող ժողովներ ալ քիչ կպատահին այդ փրիկումներու։ Մեկ խոսքով, այդ երկու իրիկունը ամբողջովին իմս է, աչքի առաջ ունեցեք. թե չէ այսպես փողոցի մայթերուն վրա ինծի սպասելը չկարծեմ որ մասնավոր հարմարություն մը ունենա ձեզի համար,— եզրակացուց իր խոսքը զուտ կանացի հաղթական ընդգծումով մը։

Տղան չուզեց խանգարել անոր հաղթանակը ու պատասխանեց աշխույժ։

— Ուրախ եմ անչափ և կօգտվիմ առաջիկա չորեքշաբթիեն։

— Իսկ առայժմ ինծի կներեք։ Հոս փոքրիկ գործ մը ունիմ,— ըսավ աղջիկը, դեմքի տոնը մասնանիշ ընելով։— Ցտեսություն ուրեմն։

* *
*

Սուրեն չհասկցավ՝ ճշմարի՞տ էր, թե՞ պատրվակ մը միայն այդ «փոքրիկ գործը»։ Մինչ օրիորդ Ստեկլին արագ բարձրացավ քանի մը ոտք սանդուղը, մուտքի վայն ու բաց դռան մեջեն դարձավ ետ, գլխով թեթև շարժում մըն ալ ըրավ ու անհետացավ։

Սուրեն կեցած էր դեռ իր տեղը անշարժ, հայացքը դռան, ու իր մեջը, իր էության խորերեն կլսեր նորեն նույն տրտում ձայնը, որ կհարցներ.

«Ի՞նչ կուզես, ի՞նչ կուզես դուն այդ աղջիկեն...»։

Գլուխը կախած, ծանր-ծանր ճամփա ինկավ։

Եվ իրավ, ի՞նչ էր իր ուզածը այդ աղջիկեն։ Խա՞ղ, պարապ մարդու զբաղո՞ւմ, ժամա՞նց։ Առաջ այդպես էր կարծեր, բայց հիմա կըզգար, որ ժամանցե տարբեր բան մըն էր, որ այնպես կքաշեր իր հոգին դեպի այդ կինը։

«Սե՞ր», անցավ անգամ մը իր մտքեն, բայց այդ գաղափարը ունեցած ըլլալն անգամ խորին անախորժություն մը պատճառեց իրեն, զզվանքի պես բան մը։ Ա՛, այդ միակերպ ու հավիտենական կրկնությունը նույն խոսքերու, նույն նայվածքներու, նույն զգվանքներու ու նույն գրկախառնության։ Ի՞նչ գռեհիկ, ի՞նչ կոպիտ ու ի՞նչ տափակ է այդ բնազդը, որ այնպես զարդարեր են մարդիկ ամեն կարգի ու ձևի սուտերով ու ինքնախաբություններով։

Ո՛չ. ինքը շատոնց արթնցած է արդեն այդ միամիտ «երջանկություն»-ներուն երազեն ու գիտե իրերուն իրենց իսկական անունը տալ։

Ո՛չ։ Անհամեմատ ավելի արժեքավոր, ավելի բարձր, ավելի հարազատ բան մը կզգար հիմա իր հոգիին խորքը այդ աղջկան հետ ունեցած իր շփումեն. և մանավանդ թա՛րմ, թա՛րմ։ Կարծես սարերու



օդը կշնչեր իր կուրծքը այդ կնկի ներկայությանը, սարերու թարմացնող ու կազդուրիչ օդը։

Ո՞վ էր այդ աղջիկը, այդ օտար հյուսիսի աղջիկը. օտար իր ցեղով, օտար իր տեղով, օտար իր արվեստովն ու կյանքովը։ Օտա՞ր... մի՞թե օտար։

Նո՛ր էր, այո՛, այդ ամենը իրեն համար ու տարօրինակ։ Այս տեսակ ալ կի՞ն։ Կնոջ մասին իր ունեցած ամբողջ ըմբռնումը գլխիվայր կդառնար։ Եվ գուցե ճիշտ այդ նորությունը, այդ տարօրինակությունն էր, որ իր հոգին կգրավեր։ Կինը այսպես պա՛րզ, կինը այսպես կայո՛ւն, կինը այսպես առողջ դատո՛ղ, կինը այսպես հանգիստ զգացումներ ներշնչո՛ղ։ Կի՞ն, ալ ի՞նչ կին, այդ բոլորը ինքնին բացասում մըն էր կին գաղափարին։

Այս վերլուծական աշխատանքը կատարողը Սուրենի միտքն էր, մինչ անոր զգացումներուն մեջ միևնույն ժամանակ մեղմ ու ախորժ բան մը կխլրտեր ու քնքուշ պահանջ մը մոտիկ ու մտերիմ մնալու այդ նոր տեսակի հոգիին։

Բայց ինչո՞ւ։ Է՛, ինչո՞ւ... Մարդ ե՞րբ է ինչուները հասկցեր։

Այս եզրակացությամբն էր, որ Սուրեն գոհ ու զվարթ ետ հրեց իրենց «նկարչական» քաֆեին դյուրաճոճ դուռը, գլխարկը անցուց ժպտալեն իր դեմը վազող քելներուհիին շեկ գլուխը և առանց աղջկան ծիծաղին ու կատակին ուշ դարձնելու, գնաց իրենց սովորական մարմար սեղանին ծայրը ու վերցուց առաջին հանդիպած ամսագիրը։

## Դ

Երրորդ թե չորրորդ շաբաթն էր արդեն, որ Սուրեն ամեն չորեքշաբթի, իրիկվան մութը կոխելուն պես, ժամացույցի մը ճշտապահությամբ կզարներ օրիորդ Ստեկլինի բնակարանին դուռը։

Ճերմակ գդակին ու ճերմակ գոգնոցին մեջ կաղապարված երիտասարդ սպասուհին բարեհաճ աշխուժով մը և խորհրդավոր ժպիտով կվազեր իսկույն իմաց տալու «օրիորդին» «պարոնի» գալուստը։

Սենյակին դռանը կհանդիպեին երկուքը և առաջին իսկ անգամեն շատ պարզ կերպով, շատ բնական, կարծես հինավուրց ծանոթներ։ Առանց պաշտոնական հառաջաբաններու, առանց անպաշտոն ծեքծեքումներու, բաց ու սիրալիր, կարծես վաղեմի ընկերներ։

Քիչ մը ետքը սպասուհին կբերեր թեյի պարագաները, կդներ սեղանին ու կհեռանար։ Հյուրն ու սենյակի տիրուհին կանցնեին սեղանին երկու կողմը, որուն վրա փոքրիկ լամպը իր աճապին դեղին լուսամ-

փոփին տակեն վարար լույս մը կհորդեր իր անմիջական մոտիկ տարածության վրա, մենյակի մնացած մասը ախորժ կես-մութի մը մեջ թողնելով։

Մեկ ձեռքով թեյի գավաթը բռնած, ազատ ձեռքով ալ բժշկական-գիտական թերթերուն ու ճառերուն կես-բաց էջերուն հետ խաղալով՝ Սուրեն ու Սոնեկը կսկսեին խոսելու։

Խոսելու՞։ Չէ, ատիկա սովորական խոսիլ չէր, հեղեղ մըն էր ատիկա։

Իրենց անհատական անցյալն ու ներկան, իրենց հակումները, գեղասիրությունները, ֆին ու հայ ժողովուրդներու վիճակը, ձգտումներն ու մաքառումները, կյանքի, գոյության ու մահվան հավիտենական անխափան հարցերը, հանրային հոսանքներու և կուսակցություններու գնահատումն ու ճշտումը, արվեստի, գիտության ու փիլիսոփայության կնճիռները, բոլորը, բոլորը իրարու հյուսված, իրարու հետ ու իրար մեջե խոսքի կուգային, տեսակ մը տենդոտ շտապով՝ ամեն բան ըսելու, ամեն բան խոսելու, ամեն հարցի մոտենալու։

Տարօրինակ ու անդիմադրելի մրցում մըն էր ատիկա իրարու առաջ իրենց ներքինը թափ տալու։ Կարծես երկուքն ալ տարիներով ո՛չ մարդ էին տեսած, ո՛չ խոսած։

Այնպես նոր ու զարմացք էր այս բոլորը Սուրենի համար, որ ինքն ալ չգիտեր ինչպես, հոսանքի մեջ ինկած, կերթար։ Խենթ ու տարտամ մտածումներ, որ ոչ մեկուն չէր ըսեր, ներքին նուրբ ու անձնական դատումներ, որոնց մասին ոչ ոքի հետ չէր խոսեր, ինքնիրին կուգային իր լեզվին ծայրը, ինքնիրենունին կըսվեին։ Բնազդական տարերային բան մը կար այդ խոսակցություններուն տակը։

Եվ ճիշտն ըսելով՝ ատիկա խոսակցություն ալ չէր, այլ անվերջ կռիվ մը, մշտատև վեճ մը, որովհետև գրեթե բոլոր կետերուն մեջ տրամագծորեն իրարու հակառակ կարծիքներ կպաշտպանեին երկուքը։

Աղջիկը՝ աշխատանքի պաշտամունքով, անձնվիրությունն ու գութը կյանքի հիմք ընդունող լավատես մը, իտեալիստ մը։ Տղան նիցշեյան հովերով, ուժն ու ռեալիզմը կյանքի հիմք բռնած, ուրիշ ամեն բան հեգնող հոգի մը։

— Զարմանալի է,— կբացականչեր տղան։— Դուք եք բժշկուհին, և ե՞ս պետք է ձեր առջևը դարվինիզմը ջատագովեմ։

— Զարմանալի ոչինչ չկա,— կպատասխաներ աղջիկը։— Որովհետև դուք դիլետանտ մըն եք գիտության այդ թեորիներուն մեջ, իսկ իմ մասնագիտությունս է ատիկա։ Զարմանալին ան է, որ դուք գեղարվեստի մարդ եք, և ես պետք է ձեզի գութը քարոզեմ։



— Զարմանալու ոչինչ չկա,— կնմանեցներ տղան իր խոսվածքը աղջկա արտահայտության ձևին։— Որովհետև դուք դիլետանտ մըն եք ուրիշներու հոգին ու անոնց շարժառիթները ըմբռնելու գործին մեջ, իսկ իմ մասնագիտությունս է ատիկա՝ ուրիշներու հոգին մտնելը։ Դուք կին եք՝ մերկությունները տեսնել չեք սիրեր. իսկ իմ արվեստս մերկությունները կփնտրե, ըլլա մարմնի, ըլլա հոգիի։

Երբեմն ավելի սուր ձև կառներ այդ երկուստեք փոխադարձ քննադատությունը։

— Ձեր այդ բոլոր խոսածները տրամաբանական մտքի մարզանք է միայն, կամ սովորովի դատողություններ. ատոնք ձեր հոգիեն չէ, որ կուգան,— կկտրեր հանկարծ վեճը օրիորդ Սոնեկը։

— Իսկ ձեր ըսածները կանացի զգայնություն է միայն և կամ բարի մամիկներու ներշնչած նախապաշարումներուն մնացորդը. ատոնք ձեր բանականութենեն չէ, որ կբխին,— դեմ կնետեր Սուրեն հատու։

Ու կխնդային երկուքով, ակնթարթ մը լուռ կնայեին իրարու, ու խոսքը կառներ նոր ընթացք։ Վիրավորանքի և ոչ մեկ նշույլ։ Որովհետև անոնք օր օրի ավելի պարզ կզգային, թե ինչ աստիճան նման էին իրենց հոգիները իրարու։ Անոնք օր օրի ավելի պարզ կգիտակցեին, թե իրենք իրարու հետ չէր, որ կկռվեին, այլ ամեն մեկը իր մեկական հոգիին հետ էր, որ կմաքառեր։

* * *

Օրիորդը դեռ նոր էր ապրեր ու անցեր բիրտ ուժի պաշտամունքին այն բնական աստիճանեն, որ անխուսափելի է ամեն հասունցող մտքի համար. ան դեռ նոր էր դուրս եկեր այդ ըմբռնումներու սայթաքեն ու խոր պահանջ մը կզգար իր նոր համոզումներուն վրա վերջնապես ամրանալու համար։

Մինչ երիտասարդը խուլ կերպով կհասկնար, որ ինքն ալ, այդ աղջկան պես, ճակատագրորեն պիտի գար ու պիտի հասներ անոր աշխարհայացքին, անոր ալտրուիզմին։

Դեռ ավելին։ Կարծես կշտապեր, որ շուտով հասնի այդ հենակետին, կարծես այս բոլոր վեճերն ու կռիվը ճիշտ ատոր համար էին, որ տղան ինքզինքը համոզեր, որ հաղթեր իր մեջը տիրող տեսակետներուն, այդ իր «սովորովի» համոզումներուն, ինչպես օրիորդը կանվաներ։

Ա՜խ, ինչպե՜ս կուզեր, որ նորեն կարողանար վերադառնալ իր

պատանության երազներուն, իտեալներուն, որոնք ատեն մը թե կուտային իր հոգիին…

Բայց ինչքան ավելի խոր կցանկար, այնքան ավելի կամչնար իր այդ բնազդական ծարավեն, իբրև նահանջ մը, իբրև փոքրոգություն մը, իբրև սանտիմենտալիզմ և այնքան ալ ավելի համառ կդիմադրեր, այնքան ալ ավելի համառ չէր ուզեր խոստովանիլ։

Առաջին անգամ իր հպարտությունը գայթեցավ, երբ ուշ գիշերին, փողոցը, մինակ, վերարկուին օձիքին տակը կծկված, օրիորդ Ստեկընի քովեն իր բնակարանը կդառնար.

«Ինչ բախտավոր է այդ աղջիկը,— բացականչեց հանկարծ իր հոգիին մեջ։— Ի՜նչ բախտավոր են բոլոր անոնք, որ հավատք մը ունին։ Հավատք ապագային, հավատք մարդկության, հավատք այն բոլոր «ազնիվ» բաներուն, հավատք իր դերին, իր գործին, հավատք փառքի մը…»։

«Սուտ կուռքեր են, սուտ ու հնոտի»,— կդիմադրեր մեկը հոգիին անկյունեն։

«Թող ըլլա սուտ, թող ըլլա ինքնախաբություն, անոնք են սակայն ամենեն աղվոր բաները։ Եվ շիտակ կըսե այդ աղջիկը՝ առանց այդ «ազնիվ» պատրանքներուն ի՞նչ բան է կյանքը, ինչու՞ է կյանքը»։

Ուշ աշնան գիշերեն նուրբ ու ասղնտող անձրև մը կմաղվեր վար։ Եվ Սուրեն զգաց, որ նուրբ ու ասղնտող անձրև մըն ալ սկսավ մաղվիլ իր հոգիին մեջ։ Նուրբ ու ասղնտող կարոտ մը ստեղծելու, արտադրելու…

Ակամա սկսավ հաշվել՝ ինչքա՜ն, ինչքա՜ն ժամանակ էր, որ չէր աշխատած. ամբողջ վերջին տարին եթե բան մըն ալ նկարեր էր, նկարեր էր վրձինը, ոչ հոգին։

— Է՜, շան աղջիկը ինծի խելքե հանե պիտի,— բացականչեց հանկարծ զայրույթով ու լսելի։

Մութին մեջ ոտքը գետին դոփեց ու քայլերը արագացուց՝ այդ հիմարություններուն վրա ալ չմտածելու որոշումով։

Իսկ անձրևը նուրբ ու ասղնտող կմաղվեր ու կմաղվեր. տեսակ մը ծածուկ ու համառ, թե ուշ աշնան գիշերին, թե հոգիին խորերեն…

## Ե

Ցուրտ ու համառ հով մը կկաղկանձեր օրիորդ Ստեկընի լուսամուտին տակը անխոնջ ու միալար։

Մինչ նույն լուսամուտի թանձր վարագույրներուն ետևեն ներս կըսահեր մութը և արդեն իսկ տիրեր էր սենյակի խոր անկյուններուն։



Անկողինը, գրասեղանը, զարդի սեղանը, բոլորը արդեն փաթթվեր էին թանձր ու թափանցիկ գորշ քողով մը։

Միակ ազատ ու պայծառ կետը վառարանն էր, որու բաց դռնակեն ժիր բոցերուն կարմիր ցոլքը ինկեր էր զվարթ լայն շերտով մը գետնի գորգին։

Եվ ճիշտ այդ շերտին մեջ, կրակին դեմ, ամբողջ հասակովը փռվեր էր օրիորդ Ստեկըն ծիգ-աթոռին ու աչքերը գամած կրակի ոսկի կտորներուն՝ կսպասեր։

Լսվեցավ դռան զանգը։ Օրիորդը իսկույն ուղղվեցավ, արագ ակնարկ մը նետեց շուրջը, ու ձեռքերը բնազդորեն բարձրացան մազերուն թեթև հարդարանք մը տալու, բայց իսկույն զսպեց ինքզինքը ու կանգ առավ.

«Ինչո՞ւ։ Ո՛չ։ Պետք չէ կոքետություն»։

Միևնույն վայրկյանին գիտակցեց սակայն, որ այդ ինքզինքը զսպելն էր տարօրինակը, իսկական կոքետությունը։

— Երևի այսօր ինծի չէիք սպասեր,— հնչեց Սուրենի աշխույժ ձայնը, սենյակի դուռը բացվելուն պես։

— Ընդհակառակը, հաստատ գիտեի՝ որ գայիք պիտի ու կսպասեի,— խոստովանեցավ աղջիկը շիտակ։— Նստեցեք, խնդրեմ։

Ու ազատելով ձեռքը տղու ամուր բռունցքեն՝ գնաց դեպի գրասեղանը՝ լամպը վառելու։

— Ո՛չ, օրիո՛րդ, մի՛ վառեք, ես շատ կսիրեմ վառարանին լույսը,— խնդրեց տղան մտերմորեն։

— Ես նույնպես,— պատասխանեց աղջիկը կարծես ուրախացած։— Ա՛յ, կես ժամ մը կա՝ նստեր եմ դեմը ու կմտածեմ։

— Բնական է։ Օրվա լույսին տակ ամեն ինչ շատ է պաղ ու տափակ. ուրիշ բան է կյանքը վառվող կրակի մը բոցերուն մեջեն։ Հոս արդեն դուն ես աստվածը, նստե՛ ու ստեղծե՛ ավելի խորը ու ավելի գեղեցիկը, քան ինչ որ կրցեր է ստեղծել մեր ալևորը։

— Ա՛յ, նկարեցե՛ք, նկարեցե՛ք, ձեր երևակայած այդ աշխարհը, այդ ավելի վերի՛ն, ավելի գեղեցիկ աշխարհը,— բացականչեց աղջիկը, հանկարծ ամբողջ դեմքը տղուն դարձնելով։

Այն աստիճանի ջերմ ու սրտագին շեշտ մը կար այդ խոսքերուն ու այդ նայվածքին մեջ, որ Սուրեն ակնթարթ մը անշարժ մնաց ու չիմացավ ինչ պատասխանե։ Իսկ աղջիկը, կարծես ամչցած իր այդ ոգևորութենեն՝ ավելցուց ավելի մեղմ ձայնով մը, կարծես նախորդ տպավորությունը թուլցնելու համար.

— Իրավ կըսեմ, պարոն Սուրեն, ինչո՞ւ չեք նկարեր։ Քիչ մը առաջ

ալ նստեր էի հոս մինակ ու կխորհեի՝ ով գիտե, ինչքա՞ն, ինչքա՞ն գեղեցկություններ ունիք ձեր գեղարվեստագետ հոգիին խորքը...

— Ինչքա՞ն, ինչքան որ մարգրիտներ ծովուն հատակը,— կատակեց Սուրեն քմծիծաղ։

— Ո՛չ, խնդրեմ, լուրջ խոսինք,— ըսավ աղջիկը աղաչող շեշտով մը։

— Ես ձեզի հետ միշտ լուրջ եմ խոսեր, օրիո՛րդ,— պատասխանեց տղան ծանր-ծանր ու տեսակ մը մելամաղձոտ։— Եվ դուք միակ կինն եք, որուն հետ ես լուրջ եմ խոսեր կյանքիս մեջ։ Տեսե՛ք, այս վայրկյանիս ալ եկեր եմ ձեզի նույն այդ հաճույքը վայելելու համար՝ կնոջ մը հետ լուրջ խոսելու հաճույքը։

Խիստ նուրբ, ախորժելի զգացում մը վազեց աղջկա ամբողջ մարմնովը։ Ու այդ մարմինը կարծես սկսավ թեթևնալ, ոտքերը կտրվեցան գետնեն, և այլևս չէր գիտեր՝ թե ինչ կըսեր. կըսեր՝ ինչ որ իր հոգիեն կուգար.

— Աղե՛կ։ Դե՞, ուրեմն լսեցեք այդ կնոջ լուրջ խոսքը՝ դուք պետք է աշխատիք, կհասկնա՞ք, դուք պետք է աշխատիք. ատիկա է ձեր միակ փրկությունը։ Դուք պետք է ստեղծեք, պետք է որոնեք, պետք է վազեք շարունակ այդ գեղեցկություններուն ետևեն, որ ձեր էության խորքը կզգաք։ Դուք մեծ եք, երբ այդ վազքին մեջն եք. երբ կանգ կառնեք՝ ալ ոչինչ մըն եք ձեր աչքին, և ձեր այդ ներքին զգացումը խեղդելու համար կծաղրեք ձեր հոգիին սրբությունները։ Դուք պետք է ստեղծեք, դուք պետք է վազեք շարունակ, կենալը չարիք մըն է ձեզի, ձեր միակ կոչումը աշխատանքն է։ Այն վայրկյանին, որ ձեր հոգիին լարումը կըթուլնա՝ գոհէհիկությունն է, որ ձեր շուրջը կսկսի։ Դուք պետք չէ, որ գոհհկանաք, դուք պետք է միշտ վե՛ր, միշտ վե՛ր, հորիզոնե հորիզոն, նոր ճիգերե նորագույն ճիգեր։ Ձեր հոգիին այդ անվերջ ձգտումն է ձեր ամենեն մեծ գեղեցկությունը, ձեր հոգիին ամենեն աղվոր կողմը։ Նկարեցեք ձեր այդ ձգտումը, ձեր այդ ծարավը, ձեր խարխափումները, ձեր երազները...

* *
*

Գլուխը քիչ մը ծռեր էր դեպի ձախ, այնպես որ կրակին ցոլքը ինկեր էր գլխուն ետևեն ու թափվեր էր աղջկան աջ ականջին վրա հորդող մազերու խուրձին մեջ ու հոն հրդեհ մըն էր բռնկցուցեր. մինչ դեմքը մնացեր էր մութին մեջ, քիթն ու շրթունքները հազիվ կորոշվեին։ Անոր փոխարեն շեշտվեր էր աչքերուն խորությունը, որուն մեջտեղը նայվածքը կվառեր, բայց ո՛չ, նայվածքը չէր ատիկա, այլ հոգիի կայծկլտուն կտոր մը, որ աղջկան ներքին խորունկ մութերեն դուրս կցայտեր կենսաթրթիռ ու խորհրդավոր։

Տղան անհագ ու անթարթ կդիտեր բոցերու բերանն ինկած այդ գլուխն ու այդ աչքերը, կդիտեր՝ իր ամբողջ էությունը տեսողության մեջ հավաքած...

Կես գիտակից, կես բնազդական ճիգ մըն էր ատիկա, հոգեկան բուռըն ճիգ մը պինդ բռնելու այդ նայվածքը, խորը դրոշմելու իր մտքին մեջ, որ ալ երբե՛ք, երբե՛ք չմոռնա։ Կարծես, երկա՜ր, երկա՜ր ժամանակե ի վեր իր որոնած մեկ բանն էր, որ գտեր էր, անգին, անգնահատելի բան մը։

Եվ իր այդ հափշտակության մեջեն, կարծես հեռավոր հեռուներեն կուգար, կհասներ իր գիտակցությանը աղջկան՝ քրմուհիի մը պես արտասանած՝ բառերն ու շեշտերը։ Չէ՛, ատիկա աղջիկը չէր, որ կխոսեր, ատիկա իր հոգին էր, որ կխոսեր, իր սեփական հոգին։

«Վեստալուհի...» շշնջացին հանկարծ շրթունքները, գրեթե՝ անգիտակից։

Աղջիկը հանկարծ ուշքի եկավ. զգաց անոր դիտելը, զգաց ինքզինքը և ինքն ալ չգիտեր ինչպես, բայց մեկեն պարզ ըմբռնեց, որ լամպը վառել էր պետք։

Խարխափեց, դողդոջուն մատներով գտավ լուցկին, վառեց ու երկար չարչարվելով հազիվ կրցավ լամպին շիշը կարգի բերել։ Եվ երբ նորեն ետ դարձավ ու աչքը նետեց Սուրենին կողմը, տեսավ որ սա դեռ անշարժ նստած էր իր ցած աթոռակին, միայն հիմա երկու արմունկները դրեր էր ծունկերուն և երկու ձեռքով պինդ ծածկեր էր դեմքը։

Ծանր քայլերով մոտ եկավ, կեցավ քիչ մը հեռուն և գորովանքով սկսավ նայիլ անոր գլխուն, մազերուն, ուսերուն։ Նայեցավ լուռ ու երկա՜ր, երկա՜ր։ Եվ վերջապես ըսավ զգույշ ու կամաց, կարծես արթրնցնելե վախնալով։

— Լամպին լույսը երևի ցավցուց աչքերնիդ։

Սուրեն դանդաղ բարձրացուց գլուխը, զարմանքով դիտեց շուրջը, աղջկան լուսավորված կերպարանքը ու խոր պահանջ մը զգաց այն կորսված մթության, խոր պահանջ մը մենության։

Ցատկեց ոտքի և դեռ կես մը իր մտածումներուն մեջ՝ ըսավ.

— Ուրեմն վաղը առտու կուգաք աշխատանոցս։

— Աշխատանո՞ց։ Ինչու՞։

— Կուզեմ աշխատիլ։ Կուզեմ նկարել ձեր գլուխը։

— Իմ գլու՞խս,— ապշեցավ աղջիկը։

— Այո՛, չէ՞ որ կըսեիք նկարեմ՝ հոգիիս խորեն։ Վաղը առտու կուգաք աշխատանոցս։ Մի՛ վախնաք, երկար չեմ չարչարեր ձեզի, բայց քանի մը անգամ պետք է որ նստիք։

Բախտավորության և հպարտության խենթ ու անզուսպ ալիք մը խուժեց հանկարծ աղջկան կուրծքը։ Եվ ան իր մոլար հայացքով ու կռվանը կորուսած մարմնովը ավելի գինովի էր նման, երբ պատասխանեց։

— Ա՜խ, իմ գլուխս։ Մի՞թե ավելի հարմար ու արժեքավոր բան մը չէիք կրնար ընտրել։ Բայց համենայն դեպս, քանի որ ատ է ձեր ցանկությունը, իմ գլուխս... իմ գլուխս ձերն է ամբողջովին։

— Աղեկ, իսկ հիմա ներեցեք ինծի, պետք ունիմ առանձին ըլլալու։

Սուրեն ջերմ սեղմեց երկու ձեռքով աղջկան դողդոջուն աջը, կամաց մը ծռեցավ, դպցուց շրթունքներուն ու նետվեցավ սենյակեն դուրս։

## Ձ

Ձյունը անդադար կուգար, հանդարտ ու միապաղաղ։ Շուրջը՝ ամբողջ դաշտը, ճամփան հովանավորող ծառերը և հեռուն ծառերու բուներուն մեջեն երևցող քաղաքը, ամեն-ամեն բան լռիկ ու հանդարտ կմտներ ու կթաղվեր այդ թափվող համառ ճերմակության տակ։

Սուրեն գլխարկը քաշած ճակտին, գավազանը թևին տակ ու ձեռքերը գրպանը, կքալեր. կքալեր խիստ դանդաղ ու խիստ հանգիստ կանոնավոր քայլերով։ Երկար շրջելեն առաջացած թարմ ջերմություն մը գրկեր էր մարմինը, իսկ թափվող հատիկներու օդին մեջ փռած կիտավոր վարագույրը կեդրոնացում կուտար անոր մտքերուն։

Առանց նշմարելու մտեր էր արդեն քաղաք։ Շենքերը հետզհետե եկեր շարվեր էին գյուղական լայն ծառուղիին երկու ափը ու վերածեր էին փողոցի, երբ հանկարծ մեկը ետևեն զարկավ երիտասարդի ուսին։

— Բարև՛, Սուրեն, ի՞նչ գործ ունիս քաղաքի այս մասերը։

— Հա՛, դո՞ւն ես,— եղավ չոր պատասխանը։ Դժգոհ էր, որ խանգարեր էին իր մենությունն ու խոհերը։

— Քեզի կհարցնեմ՝ ի՞նչ գործ ունիս այս կողմերը։

Այնպես. գացեր էի մեծ ճամփով, ախորժելի է ձյան տակ պտըտըլը։



Մաքս միացավ ընկերոջը, ծխախոտին ծուխը առատ արձակեց բերնեն ու ըսավ.

— Իսկ երեկ գիշեր պարահանդեսը քեզի երկար սպասեցինք։ Իզուր չեկար, շատ ուրախ ժամանակ անցավ։

— Ի՞նչ պարահանդես,— հարցուց Սուրեն կարծես բոլորովին ակամա ու անտարբեր։

— Ինչպե՞ս թե, Լուլուի պարահանդեսը։ Մի՞թե չգիտեիր։

— Հա, իսկապես, տասնըութը. այսօր տասնինն է, չէ՞,— պատասխանեց դանդաղ ու ծանր, գլխուն մեջ կարծես հաշիվ մը ընելով։

Մաքս հանկարծ կանգ առավ ու բռնեց ընկերոջ թևը։

— Ինծի նայե՝ տեսնեմ։ Ա՛յ տղա, դուն կամ սիրահարված ես, կամ հիմնովին հատեր է ձեռքիդ դրամը։

Սուրեն կես մը արհամարհանքով, կես մը հեգնանքով քաշեց թևը, ազատեց անոր ձեռքեն և մատովը կողմնակի փողոց մը մատնանիշ ընելով՝ ըսավ լուրջ.

— Այդ փողոցը շիտակ կտանի քաղաքի կեդրոնը. երթա՛ս բարով։

— Իսկ եթե գերադասեմ քու՞ բռնած փողոցդ։

— Այն ատեն կխնդրեմ գոնե, որ պարահանդես, դրամ, սիրահարություն ու այդ կարգի բոլոր աշխարհային տափակությունները պահես քեզի։

— Եվ մտնենք, այսպես ըսած, մտքերու տաճարը։

— Այո՛, մտքերու և արվեստի։

Մաքս քովընդի նայվածք մըն ալ նետեց ընկերոջը ու հանկարծ հարցուց.

— Արդեն նկարե՞ր ես, թե՛ դեռ նոր է ձև առնելու վրա։

— Նկարեր եմ։

— Ե՞րբ։

— Երկու շաբաթ է ատով եմ զբաղված։

— Բոլորովին ավարտա՞ծ։

— Ո՛չ, դեռ աշխատանք ունի քիչ մը։

— Ի՞նչ բան է։

— Օր մը եկուր՝ տե՛ս։

— Երթանք հիմա, անմիջապես։

— Երթա՛նք։

Եվ առժամանակ մը կքալեին լուռ ու քովը քովի՝ ամեն մեկը իր մտածումներուն մեջ։ Ետքը Մաքս սկսավ երկար ու տաք-տաք քննադատել հայտնի նկարչի մը վերջին գործը։ Սուրեն հազիվ կլսեր ականջին ծայրովը։

Երբ հասան և երբ բարձրացեր էին իր աշխատանոցին դռան առջևը, Սուրեն հանեց բանալին գրպանեն, բացավ դուռը, ինքը ետ քաշվեցավ ու սրբազան արարողություն մը կատարողի ծաղրածու լրջությամբ ըսավ՝ մատնանիշ ընելով ներսի մութը.

— Հանե՛, մա՛րդ, գլխարկդ ու կրկնակոշիկներդ և մտիր անմահներուն բնակարանը։

— Բայց քու անմահներուդ բնակարանը ցուրտ է բավական,— նկատեց Մաքս ներս մտնելուն պես։

— Այո՛, մահկանացուներու համար,— ժպտեցավ Սուրեն ու ավելցուց,— ա՛յ, նկարը, դուն հրճվե, մինչև որ ես ատրուշանս վառեմ։

* *
*

«Ատրուշանը» սիրուն ու փոքրիկ երկաթ վառարան մըն էր, որուն առջևը և չոքեց Սուրեն՝ գրպանեն լուցկին հանելով։

Իսկ Մաքս լայն աշխատանոցին նկարներուն ու խառնաշփոթության մեջեն անցավ խորքը, ուր տղու մատնանիշ ըրած եռոտանիին վրա դըրված էր նկարված կտավը։

Ապակի պատին կանանչ վարագույրները գոց էին, միայն մեկ կողմեն կիյնար լույսը նկարին վրա, տեսակ մը ավելի ստվեր, քան լույս տալով։

Մաքս կեցավ նկարին առջևը ակնթարթ մը, ետքը քայլ մը ետ քաշվեցավ, քայլ մըն ալ, մեջքը դեմ եկավ սեղանի մը ծայրին, հենվեցավ այդ ծայրին ու մնաց անշարժ։

Շուտով լսվեցավ վառարանի ուրախ ու ախորժելի ճթճթոցը։ Եվ Սուրեն ձեռքի փոշին թափ տալով՝ լուռ մոտեցավ ընկերոջը, ունքերը կիտեց և անոր բռնած դիրքեն ալ սկսավ դիտել իր նկարը։

— Դե՛, նայինք, հիմա ի՞նչ պիտի խոսի նախանձը,— ըսավ վերջապես Սուրեն ձեռքը ընկերոջը ուսին դնելով,

Մաքս աչքերը նկարեն հեռացուց, դարձավ Սուրենին ու հազիվ լսելի ձայնով արտասանեց։

-- Հիանալի՛ է։

— Ատիկա ես գիտեմ,— վրա բերավ տղան ժպտուն։— Ուրի՞շ։

— Բայց հիանալի բան է ատիկա, Սուրե՛ն,— բացականչեց տղան այս անգամ արդեն բարձր ձայնով։

— Կշնորհավորեմ բոլոր սրտովս,— ավելցուց իսկույն ամուրամուր ընկերոջ ձեռքը թոթվելով։



— Շատ ալ աղեկ կընես,— կատակեց Սուրեն։

— Ասիկա քու գլուխգործոցն է,— վրա բերավ Մաքս ջերմ շեշտավ մը աչքերը նորեն նկարին գամած։

— Ալ ինչու՞ կանիծես։ Ես դեռ զենքերս վար չեմ դրած։

— Բայց կխոսին, է՛, կխոսին այդ աչքերը. և ի՛նչ խոր, ի՛նչ խոր։ Ի՛նչ կարոտ կա մեջը, ի՛նչ նուրբ տրտմություն։

— Մեր Արևելցիի հոգին անվերջ միացող կարոտ մըն է միշտ և նուրբ ու հաշտ տրտմություն մը,— պատասխանեց Սուրեն երազկոտ ու արդեն բոլորովին լուրջ։

— Ի՞նչ ես դնելու նկարիդ անունը, կարո՞տ։

— Անո՞ւնը։ Չգիտեմ։ Բան մը կդնեմ։

— Բայց ի՞նչ ես ուզեր, որ նկարես։

— Ուզածս... ուզածս... կմկմաց Սուրեն մտածկոտ և հանկարծ վրա տվավ,— ես ի՞նչ գիտեմ իմ ուզածս։ Տենչ մը դուրս գալու աշխարհայիններեն ու մարմնեղեններեն, սովորականներեն ու պայմանականներեն, որոնում մը ավելի տևական, ավելի մնայուն, ավելի արժեքավոր նոր բանի մը, բուռն կարոտ մը երազանքի ու հափշտակության։ Այդպես ալ խորին պահանջ մը կնոջ մեջ նոր գյուտ մը ընելու, քան անոնց մարմինը, քան անոնց ծարավը, քան անոնց սերն ու ունայնամտությունը։ Այդ բոլորը ամեն կին ունի և ճիշտ ատիկա է, որ կկազմե կինը, իսկ ես կուզեի կնոջ մեջ ավելի խոր բան մը, ավելի բարձր ու ավելի ազնիվ, քան կինը։ Ա՛յ, այդ աղջկան հոգիին խորքը, ա՛յ, այդ աչքերուն մեջ կպլպլա այն կայծը՝ որ ես կփնտրեմ. ինչ որ նշմարեցի, ան ալ առի կտավին։ Անո՛ւնը, ես ի՞նչ գիտնամ անունը։

Նկարի առաջին տաք տպավորությունը արդեն անցեր էր Մաքսի վրայեն. հիմա ավելի սառն կնայեր պատկերին ու ստեղծողին, պետք մը կզգար ողոքելու իր մեջ խլրտող բնական նախանձը և հասկցնելու թե՛ ինքզինքին, թե՛ դիմացինին, որ ինքը շատ վերն է ու շատ վերեն ա կնայի այդ բոլորին վրա։

— Լսե՛, տղաս,— դարձավ հանկարծ ընկերոջը հպարտ շեշտով մը ու կատակող հեղինակավորությամբ,— ճակատագիրը անողոք է. բոլոր ռեալիստները վերջը պետք է դառնան իդեալիստ, ինչպես որ ամենեն թունդ իդեալիստը վերջը-վերջը պիտի գա ու դառնա ռեալիստ։ Կինը քեզի համար մինչև հիմա եղեր է սիրուհի-տարփուհի, ուրեմն անհրաժեշտորեն ասկե ետքը պետք է պահանջես, որ խեղճը դառնա դիցուհի ու մուսա. այսինքն ճիշտ այն պաշտամունքը, ինչ որ կերևակայե թարմ իդեալիստ պատանին, որ քանի մը տարիեն դառնալու է «խել-

քը գլխին» «դրական» մարդ։ Կծերանա՞ս, բարեկամս, է՞յ, արդեն կծերանաս,— վերջացուց իր խոսքը ծիծաղելով։

Սուրենին բնավ դուր չեկավ իր զգացումներու ու իր տրամադրություններու այդ գռեհկացումը, այդ չափված-ձևված կաղապարներու մեջ լեցվիլը։

— Այդ խորին իմաստությունը կարելի է և փողոցը հոսեցնել կամ ռեստորան մը, հե՞, քու կարծի՞քդ ինչ է,— ըսավ հանկարծ սառն ու վերցուց գլխարկը։

— Կարելի է,— պատասխանեց Մաքս քիչ մը առնված ու դժկամ։

Եվ այդ անախորժ տպավորությունը հարթելու և ավելի հաշտ սենյակեն դուրս եկած ըլլալու համար՝ վերջին անգամ մը նորեն կանգ առավ նկարին դեմը ու ավելցուց.

— Կնոջ մեջ դուն դիցուհի չես գտներ, Սուրե՛ն, ատիկա պարապ բան է, բայց ինչ որ գտեր ես ու դրեր ես այս կտավին վրա, շատ սիրուն բան ես գտեր։

— Քալե՛, քալե՛, հայտե՛,— ըսավ Սուրեն պարզ շեշտով մը և մեկ շարժումով գոցեց դուռը, բանալին դրավ գրպանը։

## Է

Խոր լռությունը փռեր էր իր ծալ-ծալ փեշերը ահագին հիվանդանոցի բոլոր անցքերուն, միջանցքներուն, ելքերուն ու սրահներուն վրա։

Կես գիշերը անց էր շատոնց։

Հոս ու հոն հատ-հատ կվառեր դեռ ելեքտրական լամպ մը առաստաղին փակած ու աղոտ կես լույս մը կթափեր բազմաթիվ դռներուն ու անցքերուն խորշերը։

Այդ դռներեն մեկը, որ վրա էր ըրած միայն, կտաներ գիշերապահ բժիշկին սենյակը։

Ցած առաստաղով, երկար ու նեղ, մաքուր ճեպ-ճերմակ սենյակ մը։ Անկյունը կաշիե խոշոր ու խոր բազկաթոռ մը, որ անկողնի դերն ալ կկատարեր անպաշտոն կերպով։ Քովը գրասեղան մը։ Իսկ ամբողջ աջ կողմի պատը բռներ էր լայն, ապակի պահարանը, որուն դարակներեն հաստափոր հատորներ իրենց մեջքը դեմ կընեին դռնեն ներս մտնողին։

Ներսը ավելի էր մութ։ Միակ ելեքտրական լույսը, որ դրած էր սեղանին, այնպես կաշկանդվեր ու խեղդվեր էր մութ-կանանչ լուսամփոփին տակ, որ իր բոլոր ուժը կեդրոնացուցեր էր գրասեղանի մեկ պզ-



տիկ կտորին վրա, ուր բաց մոռցված հաստկեկ գիրք մը կարծես ձանձրույթի ու հոգնածության չվերջացող հորանջ մը ըլլար։

Այդ կես խավար սենյակի սևության մեջ կնոջ ճերմակ կերպարանք մը կերթևեկեր, օրիորդ Ստեկլնի կերպարանքը։ Կերթար ու կուգար անընդհատ, դանդաղ ու միակերպ քայլերով, գլուխը քիչ մը կախած առաջ ու թևերով կուրծքը գրկած։

Կերթար ու կուգար ան այդ նեղ ու երկար սենյակին մեջ քանի՞ ժամ, ինքն ալ չէր գիտեր։ Միայն կզգար, որ հոգնած է սաստիկ ու կարծես ուրախ էր, որ հոգնած է։ Մտքերը սկսել էին ծանր շարժվիլ իր ուղեղին մեջ, և ան կարծես ուրախ էր և այդ թմրութենեն։ Ա՜խ, թե որ քիչ մը քնանալ կարողանար...

Հանկարծ կարծես բարկացավ ու կանգ առավ ակնթարթ մը։

Ո՛չ, պետք է որ իր հավասարակշռությունը ձեռք բերե վերջապես, ալ այսպես անկարելի է. ոչ հանգիստ, ոչ լուրջ աշխատանք, ոչ քուն, ու իր հոգին շարունակ ու շարունակ այդ տղուն շուրջը։ Է՜, ինչու՞, ինչո՞ւ։ Ի՞նչ է որ ինքը Սուրենի համար. ծանոթ մը, բարեկամ մը, կամ ամենեն ճիշտը՝ մոտել մը պարզապես, որ ան ընտրեր է, ո՞վ գիտե ինչ քմայնոտ վայրկյանի մը։

Քմա՞յք, երբեք։ Ստեկլն շատ աղեկ գիտե՝ թե տղան ինչ սրտով փարած է իր աշխատանքին և թե ինչ կարժե անոր համար իր նոր ստեղծագործությունը, ա՜հ, այդ նոր ստեղծագործությունը չէ՞ որ ինքն է, ինքը...

Ինքը՞, մի՞թե ինքը։ Ու աղջկա աչքերուն դեմ սենյակի կես մութին ծոցեն ծնավ ու կեցավ Սուրենի նկարը։ Այն գլուխը, այն աչքերը, այն նայվածքը, մի՞թե ինքն է։

* *
*

Եվ կարծես ստուգելու համար, որ իսկապես ինքն էր, շտապով մտավ կից սենյակը, լույսի կոճակը դարձուց ու կանգնեցավ անշարժ լվացարանին առջևը, նեղ ու բարձր հայելիին դեմ։

Հայելիին մեջ կեցած էր կին մը, ամբողջ մարմնով փաթթված աշխատանքի ճերմակ, երկար շապիկին մեջ, որուն վզի նեղ անցքեն վեր կբարձրանար գլուխ մը դալուկ այտերով, տեսակ մը ավելի սրված քիթով ու հոգնած, քնատ, կարծես ապշած աչքերով։

«Գինովի աչքեր»,— մտածեց Ստեկլն արհամարհանքով։

Ասո՞նք էին «այն» աչքերը։

Աղջիկը դառն կարեկցությամբ ու ճնշող զգացումով մը պտտցուց իր նայվածքը հանդա՛րտ ու կարգո՛վ այդ իր դեմը կեցած ճերմակազգեստ ու դալուկ կերպարանքի ամեն մեկ մասին վրա։

Իր ի՞նչը պիտի սիրեին, իր այդ պաղ դիմագծե՞րը, իր այդ տափակությու՞նը, ի՞նչ էր որ ինքը, ի՞նչ ուներ իր մեջը կանացի, որ քաշեր, որ կապեր. ինքը համարակ պաշտոնյա մըն էր միայն, սովորական աշխատավոր մը և ուրիշ ոչինչ։

Այն ապրած, տեսած, վայլած ու թևավոր տղուն համար ի՞նչ էր որ ինքը։

Եվ երբ նայվածքը բարձրացուց նորեն ու նետեց իր դիմացի կնոջ գալուկ դեմքին՝ զարմանքով տեսավ, որ արցունքներ կվազեին անոր այտերուն...

Անմիջապես ձեռքը տարավ աչքերուն. թաց էին։ Այնպիսի սուր ամոթ մը զգաց հանկարծ, որ իսկույն մարեց լույսը, թևովը սրբեց աչքերը ու անցավ մյուս սենյակը։

Հա՛, այսպես ուրեմն, կուլար. ատիկա էր պակաս, ան ալ հոտ, հիվանդանոցին մեջ, կես գիշերին, իր պաշտոնին գլուխը։ Ամոթը տեղի տվավ բարկության։

Թափով մը գնաց նստեցավ գրասեղանին առջևը, քիչ մը դեպի ինքը քաշեց հորանջող հատորը, արմունկները երկու կողմեն դրավ սեղանին ու երկու ձեռքով գոցեց աչքերը։

Ու այդ գոց աչքերուն առջևեն շարան-շարան սկսան անցնիլ տարիները, ամբողջ կյանք մը, կյանք մը, որ միայն աշխատանք էր ճանչցեր։ Ա՛յ, իր պատանությունը՝ միշտ գիրք մը ձեռքը պարտեզին անկյունը, պատշգամին ծայրը կամ իր սենյակը մահճակալի գլխուն, լուսամուտին առջևը։ Անկե ետքը դասե՛ր, դասե՛ր, անվերջ դասեր. գրե՛, կարդա՛ ու գոց ըրե, ի՞նչ, ինչու՞, ինքն ալ չգիտեր։ Վերջին յոթը-ութը տարին ալ համալսարանը լաբորատուարե լաբորատուար, կլինիկե կլինիկ, դասախոսութենե դասախոսություն ու այդպես քաղաքե քաղաք. լսե՛, դիտե՛, նոթ առ ու քննություն տուր, նորեն քննություն տուր, անվերջ քննություն տուր։

Ահա՛ քեզի կյանք, ահա՛ քեզի երիտասարդություն։ Քսանվեց տարին լրացուցեր էր արդեն, ամառը մտեր էր քսանյոթը և ահա ինչ որ ապրեր էր մինչև հիմա։

Ապրե՞ր էր։ Ո՛չ։ Սորվե՛ր էր։ Բարդ ու տարօրինակ մեքենա մը ինքը, սորվելու մեքենա մը։ Սորվեր էր ամբողջովին կլանված, համառ ու բուռն աշխատանքով, իր ուժին ու իր գործին վստահ, հպարտ ինքնիրմով ու իր աշխատանքով։ Արհամարհանք էր ունեցեր միայն ու տեսակ



մը կարեկցություն իր շուրջի կանանց ու աղջիկներուն հանդեպ, որոնք չէին սորվեր, բայց կապրեին։

Եվ ահա՛ քսանյոթը տարին մտած, հանկարծ ինքն ալ կցանկար անոնց նման ապրելու, ծիծաղելի չէ՞ր։ Միթե նույնը չէ՞, եթե հանկարծ այդ կյանքի աղջիկներեն մեկը ելլեր ու քսանյոթը տարեկան հասակին սորվիլ ուզեր, լրջորեն սորվիլ։ Կդառնար զավեշտ մը, ինչպես որ հիմա ինքն ու իր ըրածը զավեշտ մըն էր։ Օգնական բժիշկ մը արդեն, այդ վայրկյանին տեսակ մը տերը այդ ահագին հաստատության, իր այդքա՞ն, այդքան տարիներու աշխատանքին կռթնած՝ կեցեր էր հոն հայելիին առջևը ու կուլար...

Միջանցքեն թեթև ոտնաձայն մը լսվեցավ, Ստեկըն իսկույն բարձրացուց գլուխը։

Մտավ հիվանդապահ կին մը, դեմքը ամբողջ քունեն ճմռտած։

— Ներեցե՛ք, օրիո՛րդ։ Թիվ 16-ի ցավերը սաստկացան նորեն. կարծեմ կարիք պիտի ըլլա ներարկումի, տեսնեիք անգամ մը։

— Իսկույն,— պատասխանեց աղջիկը, արագ վեր թռավ և, հիվանդապահը իր ետևը թողնելով, սլացավ արագ ու կորավ երկար ու կտրըտվող նրբանցքի մը անկյունը։

## Ը

Դժգույն արևը արդեն շատոնց ինկեր էր ներս։ Հիվանդանոցը արթնցեր էր արդեն։ Շարժում ու երթևեկ ամեն կողմ. կմաքրեին, կսրբեին, կլվային ամեն անկյուն։

Գլուխն ու մարմինը ճերմակներու մեջ կորսված՝ հիվանդապահ կիներու խումբ մը հավաքվեր էր օրապահի սենյակը, ու տեսակ մը զայրացկոտ ու տրտնջող տրամադրությամբ կխոսեին բանի մը մասին։

Օրիորդ Ստեկըն նստած իր սեղանին առջևը հոգնած շարժումով մը կխաղար ձեռքի մատիտին հետ և կհետևեր խոսակցության ծույլ ու ցրիվ, սպասելով իր փոխանորդողի գալուն։

Հանկարծ ներս նետվեցավ սպասավոր տղան և հայտնեց, որ եկած է պարոն մը և տեսնել կուզե օրիորդ բժշկուհին։

Ստեկընի սիրտը ուժգին սեղմվեցավ, զգաց, որ սկսավ սաստիկ կարմրիլ և, ներկա եղողներուն ուշադրութենեն ազատվելու համար, իսկույն նետվեցավ դուրս ու վազեց սանդուղներեն վար դեպի ընդունարանը։

Ընդունարանը՝ մեջտեղի երկար սեղանին հենած, կեցեր էր Սուրեն վերարկուն վերեն վար պինդ կոճկած, գլխարկը ձեռքը, դեմքը թարմ ու ամբողջ էությանը կենդանություն ու աշխույժ դրոշմված։

Օրիորդի կերպարանքը նշմարելուն պես իսկույն դեմը նետվեցավ երկու թևերը առաջ պարզած։

— Բարի լույս, օրիո՛րդ Ստեկըն։

Եվ առանց աղջկա ձեռքը բաց թողնելու, քիչ մը ետ քաշվեցավ և ուշադիր սկսավ դիտել անոր դեմքն ու աչքերը։ Ետքը կամաց մը ձգեց անոր ձեռքը, բայց առանց աչքերը անոր դեմքեն զատելու՝ ավելցուց ջերմ ու հափշտակված.

— Ի՜նչ սիրուն ու տանջված դեմք ունիք այսօր։

— Իրա՞վ,— կմկմաց աղջիկը՝ չգիտնալով ինչպես ազատվի անոր թափանցող հայացքեն։— Այո՛, գիշերը շատ եմ հոգներ։

— Ուրեմն անմիջապես գացեք տուն և ամբողջ օրը պառկեցեք, որովհետև այս գիշեր նորեն չեք քնանալու։

— Ինչու՞, ի՞նչ կա որ,— հարցուց աղջիկը զարմացած։

— Ոչինչ, պզտիկ նախատոնակ մը։

— Նախատոնա՞կ, և ու՞ր։

— Մի՛ վախնաք, ոչինչ չկա և ոչ ոք ալ չէ ըլլալու։ Միայն դուք ու ես, դեմ դեմի, համեստ ընթրիք մը, իմ սենյակս, ի պատիվ մեր նկարի ավարտումին։

— Ավարտեցի՞ք, արդե՞ն,— ուրախացավ աղջիկը ոգևորված։

— Այո՛, երեկ իրիկուն վերջին վրձինը դպցուցի։ Չեկա ձեզի, գիտեի հիվանդանոցն եք, բայց այնպե՛ս պետք ունեի ձեր մոտը ըլլալու, այնպես հոգիս լեցուն էր։ Այս առտու ելեր եմ շատ կանուխ ու քանի ժամ է կթափառիմ ձյուներուն ու հովերուն մեջ։ Ինչևէ, կխոսինք իրիկունը, հիմա այլևս չխանգարեմ ձեզի։ Ուրեմն ճիշտ ժամը յոթին, կսպասեմ ձեզի։ Աղվոր իրիկուն մը անցընենք ես ու դուք ու մեր պատկերը. «մեր», այո՞։

— Լավ,— պատասխանեց Ստեկըն հուզումեն հազիվ շնչելով ու մեքենաբար ձեռքը մեկնեց։

Տղան ջերմ սեղմեց, թեթև գլուխ տվավ ու հեռացավ։ Իսկ աղջիկը մնաց անշարժ ու հափշտակված։ Թա՜րմ, թա՜րմ բան մը տղու դեմքեն, խոսքեն, հագուստեն կարծես թափանցեր էր աղջկան կուրծքը։ Թա՜րմ, ուրա՜խ ու լուսառու։

* *
*

Քիչ մը ետքը, երբ ինքն ալ իր երկար վերարկուին վերջին կոճակները կոճկելով դուրս ելավ հիվանդանոցեն դեպի տուն՝ մեկ միտք մը միայն պինդ ու համառ բուն էր դրեր անոր գլուխը։

«Այս իրիկուն, ուրեմն այս իրիկուն»։

Չէ՞ որ պատկերին ավարտելը պատրվակ մըն էր միայն, և ի՜նչ թափանցիկ պատրվակ։ Բայց ե՞րբ էր գալու այդ «իրիկունը»։

Իզուր քանի մը անգամ քնանալ փորձեց. ոչ թե քնանալ, պառկիլ անգամ չկրցավ։ Վազվզեց ասդին-անդին մանր-մունր գործերու, եղավ ծանոթ տիկնոջ մը տունը, ուր շատ քիչ կերթար, նորեն եկավ, նորեն գնաց, միշտ ցրված, միշտ դյուրագրգիռ։ Ինքն ալ կզգար իր ըրածի անբնականությունը, ինքն ալ կգիտակցեր, որ երևի սաստիկ հոգնած է ըլլալու և պետք է որ մեկ-երկու ժամ քնանա, թեև հոգնություն բնավ չէր զգար, կարծես ընդհակառակը։

Բայց քանի սկսավ երեկոյանալ, այնքան թուլցավ իր աշխուժը. հոգնածություն չէր ատիկա, ոչ ալ անհամբերություն, այլ վախի նման անհանգստություն մը։

Պայմանավորված ժամը անցած էր բավական, երբ ետ հրեց Սուրենի բնակած տան դուռը ու սկսավ բարձրանալ սանդուղներեն։

Դիտմամբ էր քիչ մը ուշացեր. ինքզինքը չմատնելու տկար ճիգ մը։ Եվ հիմա տեսակ մը վճռական, վստահ քայլերով էր, որ կբարձրանար՝ դեմքին անտարբեր արտահայտություն մը տված, աշխատելով, որ զըսպե սրտին կատաղի զարկերը։

Բնակարանին դռան առջևը ակնթարթ մը կանգ առավ, ձեռքը կրծքին, շնչառությունը մեղմացուց և մեկեն սեղմեց զանգին կոճակը։

Ներսը շտապ քայլեր լսվեցան, տանտիկինը բացավ դուռը, հարգանքով ետ քաշվեցավ ու ըսավ ժպտուն.

—Հրամեցե՛ք, օրիո՛րդ, հրամեցե՛ք։ Պարոն Սուրենը այս վայրկյանիս կուգա, կսպասեր ձեզի, տեսավ, որ կուշանաք՝ երկու վայրկյանով դուրս ելավ։ Իսկույն կվերադառնա։ Խնդրեց, որ ձեզի ներս հրամցնեմ։

Ստեկըն խորին թեթևություն մը զգաց տղուն բացակայութենեն։ Հանեց վերնոցը և առանց գլխարկն ու ձեռնոցները հանելու՝ մտավ տըղուն սենյակը, որ տանտիկինը բացեր էր։

Ստեկընի առաջին զգացածը ախորժելի ջերմություն մը եղավ, ախորժելի լույս մը ու ախորժելի անուշ հոտ մը, որ մեկ անգամեն գըրկեց իր դեմքը։

Տանտիկինը գոցեր էր դուռը անոր ետևեն։ Մինակ էր։

Նայեցավ կրակարանին, որ ուրախ կճարճատեր, պատի ու սեղանի լամպերը վառված էին երկուքն ալ, կահերն ու ամեն բան կարգի էր բերված առանձին խնամքով։ Անկյունը տղու անկողինն էր ճապոն պատվարին ետևը։

Այնպե՛ս տաք, այնպե՛ս քաշող, այնպե՛ս հանգստացնող բան մը կար այդ բոլոր հոգածության, կահերուն ու լույսերուն մեջ։

Այդ սենյակը ինքը միայն անգամ մըն էր եղած, ան ալ կես մութով մը ու հարևանցի։ Իրենք սովորաբար կըլլային կից աշխատանոցը, ուր տանող դուռը գոց էր հիմա և դռան մեջ իր եռոտանիին վրա դըրված էր նկարը, «մեր» նկարը։

Նորությունը մուգ պորտ. թավիշի կտորն էր, որ իբրև շրջանակ փաթթեր էր Սուրեն պատկերին շուրջը անփույթ ու ճաշակավոր շարժումով մը, և որուն մեջեն նայող նկարը կարծես ավելի խորություն, ավելի արտահայտություն էր ստացեր։

Գրեթե մեքենայորեն, առանց մտածելու եկավ շիտակ նկարին դեմը ու կեցավ։ Կնայեր երկա՜ր, երկա՜ր։

Գեղեցիկ էին այդ աղոտ նշմարվող դիմագծերը, հմայող էին այդ աչքերը, այդ գլուխը իհարկե, որ կարելի էր սիրել. և՛ սիրել, և՛ պաշտել, դնել լույսերու ու շրջանակներու մեջ, դարձնել մտածումներու, երազանքի ու ստեղծագործության առարկա։

Եվ հանկարծ խենթ ու տարօրինակ զգացումի մը խըրտիլը զգաց կրծքին տակ։ Նախա՞նձ, միթե, իրա՞վ, նախա՞նձ իր իսկ պատկերեն, իր սեփական պատկերեն։

Չէ՞ որ ատիկա առնված էր իր դեմքեն, իր աչքերեն, իր հոգիեն, առնված էր իր մեջեն ու իր վրայեն։ Ատիկա ինքն էր, ինքը. իր մարմնով ու իր հոգիով։ Ինչե՞ն կնախանձեր, ինչու՞ կնախանձեր, ի՞նչ տարակույս, ի՞նչ վախ։ Մարդ կույր պիտի ըլլա կամ հիմար իրեն՝ Ստեկընին նման, որ դեռ կասկած ունենա։ Միթե այդ պատկերին ամեն մեկ վրձինի հետքեն չէ՞ր հոսեր տղու գորովը, տղու հիացումը, տղու հափշտակությունը։

Ու բախտավոր հպարտություն մը, ամուր վստահություն մը իր գեղեցկության, իր հրապույրին, իր ուժին ու հաղթանակին զսպանակի մը պես ուղղեց աղջկան մարմինը, որ բոլորովին շտկվեցավ, ավելի ճկուն ու ավելի սլացիկ դարձավ։

Ուղի՛ղ, բա՜րձր, հպա՛րտ ու գեղեցի՛կ. կենդանի արձան մը իր կենդանի պատկերին դիմաց։



## Թ

— Հիացի՛ր, հիացի՛ր,— խնդաց հանկարծ առնական զվարթ ձայն մը աղջկան ետևեն։

Ստեկըն ամբողջ մարմնով ցնցվեցավ ու նայեցավ ետ։ Սուրեն մոտ եկավ աշխույժ՝ վարդերու թարմ ու ցողոտ փունջ մը ձեռքին։

Դեղին վարդի մեծ կոկոն մը իր տերևներուն հետ խրեց նկարի թավիշին մեջ։

— Այս մեկը օրվա հերոսին,— ըսավ ծիծաղելով և, մնացած փունջը դնելով աղջկան ձեռքը՝ ավելցուց։— Ա՛ս ալ իր ազնիվ ու գեղեցիկ օրիժինալին։

— Շնորհակալ եմ,— կմկմաց աղջիկը ջերմ՝ տղու ձեռքը սեղմելով։

— Այս մնացածն ալ մեր քեֆին,— կցեց Սուրեն, թևին տակեն տուփերու, թղթե փոքրիկ ծրարներու ու ոլորներու ամբողջ խուրձ մը թափելով սեղանին վրա։

— Նո՞ր եք եկեր,— հարցուց միաժամանակ,— կհուսամ երկար չսպասեցիք ինծի։

— Ո՛չ, եկա այս վայրկյանիս։

— Լավ։ Հանեցեք ուրեմն գլխարկը, ձեռնոցները։

Եվ ինքը մոտ գալով, ծառայելու պատրաստ շարժումով մը կեցավ աղջկան դեմը։ Ետքը ինքն ալ հանեց գլխարկն ու վերարկուն և բոլորը միասին տարավ դրավ անկողնին վրա։

— Դե՛, հիմա բանանք մեր սեղանը,— դիմեց աղջկան։— Ո՞ւր դնենք սեղանը. մեջտե՞ղը, թե՞ քիչ մը այս կողմ, հոս ավելի մոտիկ է պատկերին։

— Թո՛ղեք պատկերը հանգիստ,— ըսավ աղջիկը արհամարհանքի ազվոր ծամածռությամբ մը։

— Ո՞վ սուրբ համեստություն,— բացականչեց տղան։— Աղե՛կ, դնենք մեջտեղը։ Գիտե՛ք, ամեն բան մենք պիտի ընենք։ Ըսի տանտիկնոջս, որ ոչ ոքի ներս չթողնե և ամենեն առաջ ինքզինքը։ Լավ չե՞մ կարգադրեր։

— Հիանալի՛։

— Նախ փռենք սա սփռոցը։ Ա՛յ, աս ալ ամանները, հապա շարեցե՛ք տեսնեմ։ Աս ալ ձեզի բաժակները, աս ալ...

Եվ Սուրեն մագոգի պես դյուրաշարժ, ճպուռի պես շատախոս, կերթար ու կուգար անընդհատ պահարանե սեղանը, սեղանեն գզրոցը, գզըրոցեն պատվարին ետևը և ամեն կողմեն կկրեր ու կբերեր տուփեր, պը-

նակներ, անձեռոց, ուտելիք պտուղ։ Բերավ և երկու աշտանակ, վառեց մոմերը, բերավ ծաղկամանը, դրավ սեղանին մեջտեղը։ Եվ երբ ամեն պատրաստություն վերջացեր էր՝ հանեց պահարանեն երկու շիշ գինի.

— Այս մեկը հին մեղավորներու համար,— ըսավ իր առջևը դնելով,— իսկ աս ալ ձեզի մալագա, բժշկուհի եք, երևի կխմեք։

— Ո՛չ, այսօր բժշկությունը սատանաներուն, այսօր ես ալ ձեզի հետ մեղավորներու գինիեն,— պատասխանեց աղջիկը կտրուկ ու զվարթ՝ ետ հրելով մալագայի շիշը։

Եվ միևնույն ժամանակ զգաց, որ իր մեջը բուռն ու վայրի բան մը շարժվեցավ հանկարծ և ծառացավ ամուր վճիռ մը՝ մեկդի՛, մեկդի թողնելու ամեն մտածում, ամեն հաշիվ, ամեն պայմանականություն և զվարճանալ, անգամ մը կարգին զվարճանալ իր ամբողջ սրտովը, իր ամբողջ էությամբ, ամբո՛ղջ-ամբո՛ղջ, առանց որևէ վերապահության։

— Ա՛յ, ատիկա հրաշալի է, ա՛յ ի՛նչ լավն եք։ Ձեր կենացը։

Բացավ շիշը, խցանը շպրտեց սենյակին անկյունը և բաժակները լեցուց։

— Ձեր կենացը,— ըսավ աղջիկը բաժակը բախելով։

— Բայց նախ ձերն էր,— նկատեց տղան։

— Ո՛չ, միասին, ձեր ու իմ,— վրա բերավ աղջիկը աշխույժ ու տիրական։

— Աղե՛կ, եթե այդպես է՝ եկե՛ք խմենք պրուտըրշաֆթ ու այս հիմար «դուք»-երն ու «օրիորդ»-ները դնենք տոպրակը,— առաջարկեց տղան՝ ինքն ալ ոգևորվելով։

— Խմենք,— համաձայնեցավ աղջիկը կտրուկ շեշտով մը, երբ ամբողջ մարմնով կդողար։

Սեղանի երկու կողմեն ելան ոտքի, բաժակները բռնած թևերը հյուսեցին իրար ու սկսան խմելու։

Սուրեն դատարկեց մեկ զարկով, իսկ Ստեկըն հազիվ ումպ մը խմեց ու հեռացուց շրթունքեն։

— Ո՛չ, ո՛չ, կարելի չէ,— պահանջեց տղան,— պրուտըրշաֆթը կարելի չէ, պիտի խմեք մինչև վերջին կաթիլը. ատիկա մեր բարեկամությունը պիտի կապե իրարու։

Աղջիկը առանց ոչինչ առարկելու ծանր-ծանր քամեց ամբողջ բաժակը մինչև հատակը, միշտ գալարված տղու թևին։

Գինիոտ շրթունքներով ալ համբուրվեցան, ինչպես սովորությունը կպահանջե ու նստեցան իրենց տեղը։

— Դե՛, Մարգրի՛տ, քեզի տեսնեմ, այնպես ըսես, որ տուփերս ու



ամաններս՝ ոչ մեկը դժգոհ չմնա,— ըսավ տղան ժպտուն ու ընկերոջ շեշտով մը և պատառաքաղը վերցնելով ավելցուց,— ուրեմն նիստը բացված է։

— Կաշխատիմ,— խնդաց աղջիկը,— դուք անհոգ եղե՛ք։

— Եզակի՛, եզակի՛, թե չէ իսկույն տուգանք կխմես,— պահանջեց տղան՝ գինիին շիշը սպառնալից վեր բարձրացնելով ու լեցնելու դիրքով։

— Անհոգ եղիր,— կմկմաց աղջիկը հազիվ լսելի ձայնով մը։

Եվ այդ «եղիր»-ը կարծես այրեց անոր շրթունքները ախորժ, օտար ու բախտավոր զգացումով մը։ Եվ անկե ետքը ալ որոշ չէր ըմբռներ, թե ի՛նչ կդառնար շուրջը, ի՛նչ կըսեր, ի՛նչ կըներ, ի՛նչ կուտեր, ի՛նչ կլսեր. այսքանը միայն շատ պարզ կգիտակցեր, որ այդ բոլորը լավ էր, շատ լավ, որ ինքը իր ամբողջ կյանքին մեջ երբեք-երբեք այդպես «լավ» եղած չէր։

Իսկ տղան անդադար կելլեր ու կնստեր, կերթար ու կուգար, բաներ կբերեր ու կցուցներ, կուտեր, կըսեր, կծիծաղեր ու կպատմեր։

Եվ բաժակները կհաջորդեին իրարու։ Ստեկըն այլևս չէր ուտեր, մեջեմեջ ումպ-ումպ կխմեր միայն, և օրորող ամպ մը գրկեր էր իր թեթևացած մարմինը։ Նետվեր էր բազկաթոռի թիկունքին և հոնկե ելեքտրական թելերով կապված էր կարծես տղու ամեն մեկ շարժումին, ամեն մեկ շեշտին, ամեն մեկ նայվածքին, որոնք անոր ամբողջ էությունը կցնցեին։

Եվ այնպե՜ս, այնպես խորին պահանջ մը կզգար բռնելու և սեղմելու այդ ձեռքը, որ իր դեմը անդադար կշարժվեր, բռնելու ու քաշելու տղան իր քովը, դնելու իր թեթև մը պտուտքող գլուխը անոր ուսին։

Այնպե՜ս, այնպես կտենչար հոգին, որ Սուրենը գար, գրկեր ու ըսեր իր ականջին ի վար, ինչ որ վերջապես պետք է ըսվեր, քիչ մը ուշ կամ կանուխ, բայց որ պետք է ըսվեր, չէ՞ որ այլևս կասկած ըլլալ չի կրնար։

Եվ հիմա իր ամբողջ ներքին կռիվը բուռն ջանք մըն էր ինքզինքը զսպելու, որ չըլլա թե հանկարծ ինքը ըսեր այդ խոսքը, ինքը ըներ առաջին քայլը։ Կուզեր, որ տղան ըլլար այդ առաջին քայլը ընողը. թե՛ հետաքրքրություն կար հոն, թե՛ հպարտություն և թե՛ զուտ աղջկային կոկետություն մը։

*   *
*

Բայց և զսպելը անկարելի էր։ Իր մեջ հորդող զգացումներուն կերպ մը ելք տված ըլլալու համար հանկարծ խլեց ծաղիկները ծաղկամանեն, քակեց թելը, թափեց ծաղիկները գոգը և դողդոջ մատներով սկսավ իրարու կապել՝ պսակ մը հյուսելով։

— Ի՞նչ բանի ես,— հարցուց տղան հետաքրքրված։

— Իսկույն,— պատասխանեց աղջիկը։— Հապա նախ այն կողմը քաշե այս սեղանը. չէ՞ որ քու ստեղծագործությանդ տոնը ունինք դեռ կատարելու։

— Օ՜, այսպես ըսած՝ պիտի սկսվի թագադրության հանդեսը, աղե՜կ,— բացականչեց տղան, այդ նոր խաղեն ոգևորվելով և իր ուժեղ թևերով մեկ անգամեն վերցուց սեղանը իր բոլոր պարագաներովը և տարավ երկու քայլ անդին։

— Բե՛ր բարձ մը, —հրամայեց աղջիկը։

Տղան բազմոցին անկյունեն հափշտակեց պզտիկ, քառակուսի, նկարեն բարձը ու բերավ նետեց աղջկան ճիշտ ոտքերուն առջևը։

— Չոքե՛,— հրամայեց աղջիկը նորեն։

Սուրեն ծիծաղաշարժ լրջությամբ մը չոքեցավ, ձեռքերը ջերմեռանդ հավատավորի մը շարժումովը միացուց իրար ու գլուխը թեթև մը կախեց։

Ստեկըն ելավ ոտքի, ծռեցավ քիչ մը, հարդարեց տղուն մազերը, պսակը հարմարցուց շուրջը և ձեռքերը դեռ միշտ անոր գլխուն, ըսավ կատակող հանդիսավորությամբ մը.

— Քու ինծի բերած վարդերեդ հյուսեցի քեզի այս պսակը, ընդունի՞ս պիտի։

— Այո՛, թագուհի՛։

— Բայց դուն կըսեիր՝ քու գլխուդ դրվելիք պսակը միայն ինքդ կըրնաս հյուսել, կըսեիր՝ անպետք են ուրիշներուն հյուսած պսակները։

— Ատիկա հյուսված է իմ բերած վարդերես։

— Բայց հյուսված է իմ ձեռքովս։

— Քու հոգիեդ այդ նկարը ընդունեցի, քու ձեռքեդ այդ պսակն ալ կընդունիմ։

— Միայն այդ նկա՞րը իմ հոգիես,— հարցուց աղջիկը շնչահեղձ ու դողալով։

— Ո՛չ, մեյ մը այդ նկարը, մեյ մըն ալ քու անգին մտերմությունդ,— բացականչեց տղան ջերմ ու սրտագին ոգևորությամբ մը՝ պսակը գլխուն ոտքի ցատկելով,— Մարգրի՛տ, դուն միակ կինն ես կյանքիս մեջ,



որուն ես չեմ մոտեցած ինչպես էգի մը. ես ատիկա հպարտությամբ կըսեմ երեսիդ, և դուն ալ իրավունք ունիս հպարտ ըլլալու։ Դուն սովեցուցիր ինծի կնոջ մեջ ընկեր մը տեսնել, մտերիմ մը, ոգևորող մը, դըրդիչ մը, գործակից մը։ Ես քեզմով ճանչցա կնոջ մը իսկական արժեքը, քեզմով ստացա նորեն լքած ոգևորությունները, քեզմով ստացա վերըստին կորուսած աշխատանքս։ Նայե՛, այդ պատկերը, ես դեռ իմ ոչ մեկ աշխատանքս այդպես խորը չեմ սիրած։ Տե՛ս, այդ նայվածքը։ Ես երբե՛ք, երբե՛ք պիտի չմոռնամ, Մարգրիտ, այն իրիկունը քու սենյակդ՝ կրակին դեմ, մի՞տքդ է։ Ես այդպես խորը դեռ երբեք չէի զգացեր ստեղծելու պահանջը, ստեղծելու ուժն ու ստեղծելու հաճույքը։ Ես այդ բոլորը պարտական եմ քեզի, քու անուշ ու ազնիվ հոգիիդ։ Եվ ահա՜ ջերմ երախտիքով կհանեմ գլխես այս պսակը ու կմեկնեմ քեզի, դուն, որ իմ մուսաս եղար...

— Այսինքն՝ քու մոտելդ,— եղավ աղջկան չոր պատասխանը։

Տղան զարմանքով նայեցավ անոր և վրա բերավ իր նույն սրտագին ու զվարթ շեշտովը.

— Եվ ա՛ն, և ա՛ն, Մարգրիտ։ Դե՜, ընդունե ուրեմն այս պսակը, որ դուն ինքդ հյուսեցիր իմ բերած վարդերես, իմ գլխուս համար և որը սակայն կվայելե միայն քու առատ ոսկի մազերուդ։

Եվ ձեռքը բարձր բռնած՝ կուզեր դնել պսակը անոր գլուխը, երբ Ստեկըն բուռն շարժումով մը ետ ըրավ անոր ձեռքը.

— Պահեցե՛ք ձեզի, պահեցե՛ք ձեզի, ինծի պետք չէ երախտագիտություն...

Տղան չհասկցավ՝ թե ինչ կար հոտ չարանալու, բայց ամենայն դեպս ավելի չգրգռելու համար աղջիկը՝ խոշոր արվեստական ծիծաղով մը մոտեցավ նկարին.

— Ո՜վ դու դուստր մուսային ու արվեստին, դուն գոնե ընդունե իմ երախտագիտական զգացումներուս այս խոնարհ արտահայտությունը։

Անցուց պսակը նկարին աջ անկյունը ու դարձավ աղջկան.

— Դե՜ հիմա որ ավարտեցինք պսակադրության հանդեսը՝ նորեն մոտ քաշենք մեր սեղանը։ Հապա վերցո՛ւր բաժակդ։

*
*   *

Բաժա՞կ, ի՞նչ բաժակ։ Ստեկըն այլևս ոչինչ չէր ըմբռներ։ Կծկվեր էր բազկաթոռին մեկ անկյունը և ապշած կդիտեր այդ զարմանալի սենյակը, այդ իր առջևի սեղանը ուտելիքներով ու գինիով ու իր դեմը այդ

տղան, որ ժպիտը շրթունքին ու լայն շարժումներով բաներ մը կխոսեր։
տղան, որ ժպիտը շրթունքին ու լայն շարժումներով բաներ մը կխոսեր։ Ո՞ր էր ինքը, երա՞զ էր, ի՞նչ գործ ուներ ինքը այս կես գիշերին այդ օտար մարդուն սենյակը։ Հա՛, իրա՛վ, ինչպե՞ս չէ, եկեր էր տեսնելու, այո՛, տեսնելու...

Եվ հանկարծ անզուսպ ամոթ մը վազեց իր մեջեն, ու խոր, կծու վիրավորանք մը խայթեց իր սիրտը։ Եվ ամբողջ իր շուրջը, պատերը, լույսերը, զարդերը, սեղանը, գինին, տղան, անոր խոսվածքը, ծիծաղը, բոլորը, բոլորը միասին հսկա ծաղրանք մը ըլլար կարծես, անողոք, անսիրտ հեգնություն մը իր երեսին նետված։

Ի՞նչ կուզեր իրմեն այդ մարդը, ինչու՞ էր կանչեր, ինչե՞ր կխոսեր այդպես անփույթ, այդպես անվերջ ու զվարթ։ Եվ ո՞վ էր այդ մարդը, այդ օտար մարդը, օտա՛ր, օտա՛ր, իհարկե... ի՞նչ կապ իր ու անոր մեջտեղը։

Կա՞պը, ա՜խ, հա՛. ա՜յ, այն դռան մեջ տնկված պատկերը, իր պատկերը, իրենց պատկերը, իր ու այդ օտար մարդու։

Ալ ամոթ չէր զգացածը, այլ կատաղի պայրույթ։ Ինքը իր ամբողջ կությունը, իր ամբողջ սիրտն ու հոգին բացեր էր, դրեր էր անոր առջևը, որ ան, այդ նկարիչը, առիթը ունենա, բան մը նկարելու, որ բարեհաճի աշխատելու, որ ստեղծագործելու գոհունակությունը վայելե։ Ա՜յ, ա՜յ այն նկարը, դռան մեջ, թավիշներով շրջանակված...

Խենթ ու վայրի քրքիջ մը դուրս խուժեց հանկարծ աղջկա կրծքեն, հորդ ու անզուսպ, հիվանդ ծիծաղ մը, որ ոչինչով տարբեր չէր լացեն։ Տղան հանկարծ այլայլեցավ, կտրեց իր խոսքը, մոտ շտապեց ու ծռեցավ աղջկան վրա գորովանքով։

— Ի՞նչ ունիս, ի՞նչ եղավ քեզի։ Հանգստացի՛ր, հանգստացի՛ր, կեցի՛ր պուտ մը ջուր տամ քեզի։

Եվ մինչ Սուրեն ջուրը կբերեր, Ստեկըն կամաց մը ելավ ոտքի ու գարձավ դեպի եռոտանին, որուն վրայեն իր նկարը իրեն կնայեր, աչքերը լեցուն ծաղրանքով...

Ո՜ւհ, ինչ ատելի էին այդ աչքերը։ Ստեկըն բնազդորեն, առանց գիտակցելու վերցուց սեղանեն առաջին հանդիպած դանակը՝ գինիեն ազդված ոտներովը երկու քայլ ըրավ դեպի նկարը և հանկարծ սենյակի լռության մեջ լսվեցավ վերեն վար պատռվող քաթանի խղճուկ ճռռոցը։

Ջրի բաժակը վար ընկավ տղուն ձեռքեն, մինչ ինքը սարսափահար դեմքով վազեց դեպի նկարը.

— Ի՞նչ կընես, ի՞նչ կընես...

Եվ խելագար աչքերով կանգ առավ իր պատկերի լայն պատռված-



քին առջևը, երկու կողմեն ձեռքերը սահեցան ու կախվեցան վար, լըքված ու կորսված...

Քաթանի ձայնը, տղու հուսահատ բացականչությունը ու ձգին ցնցեցին աղջիկը։ Գինիին վերջին թեթև ամպը ցնդեցավ ուղեղեն. Ստեկըն նայեցավ իր ըրածին, նայեցավ տղուն ու նոր հասկցավ՝ թե ինչ էր ըրեր։

Սենյակի օդը կարծես սկսավ պակսիլ։ Եվ աղջիկը ըմբռնեց, որ պետք է հեռանար, որ իսկույն պետք է հեռանար։

Ինքն ալ չգիտեր ինչպես՝ բոլորովին մեքենաբար խլեց գլխարկը ու կերպ մը գլխուն անցնելով՝ նետվեցավ միջանցք, քաշեց պատեն կախված վերարկուն, ետևեն ամուր գոցեց տան դուռը սանդուղներեն վար ու փողոց։

Վերարկուն թևին, դեռ միջտ գլխարկը ասեղելով, այն ցուրտին, սառած մայթերուն վրայեն կվազեր ան, կվազեր խելակորույս։ Եվ արցունքներն ալ կվազեին իր այտերեն վար, կվազեին, կգայթեին ու կիյնային սառած գետինը...

## Ժ

Իսկ Սուրեն կեցած էր անշարժ ու քարացած՝ իր պատռված նկարին դեմ։ Պատռված նկար մըն ալ ինքը. ո՛չ մեկ մտածում, ո՛չ մեկ հուզում, միայն պաղ ու նստած գիտակցում մը, որ փճացած էր իր այդքան օրերու աշխատանքը, իր ոգևորության, իր ստեղծագործության պտուղը։

Ան կեցած էր քարացած՝ առանց դեռ ժամանակ ունենալու ինչպեսն ու ինչուն ըմբռնելու, երբ ետևեն լսվեցավ բնակարանի դռան ամուր գոցվելուն աղմուկը։ Բնազդաբար նայեցավ ետ։

Մինակ էր։ Ուրեմն թողեր էր ու փախեր, պատռեր էր ու փախեր։ Բայց ինչու՞։

Տղան անշարժացավ նորեն, այս անգամ աչքերը սենյակի կես մը բաց մնացած դռանը հառած, ու միտքը սկսավ աշխատիլ։

«Ինչու՞»։

Այդ ինչուն մութն էր տղուն համար, մշուշոտ ու խորհրդավոր, որուն ծալքերուն տակեն Սուրեն բնազդը կզգար, որ դիմացի այդ աղջկան մեջ ապրեցեր էր կինը, ա՜խ, նորեն այդ անխուսափելի «կինը»։

Ու ցավոտ, կսկծոտ զգացում մը ողողեց տղու հոգին։ Ափսո՜ս այդ բացառիկ աղվոր կապը, ուր սովորականությունը նորեն ներս կխուժեր։ Ափսո՜ս այդ հոգին, որ ինքը այնքան աննման, այնքան հպարտ էր կար-

ծեր ու դրեր էր այնպես բարձրերը, ահա կոպիտ ու անգութ իրականու-
թյունը կուգար իր տխմար երազները պատռելու։
Այո՛, «պատռելու», ա՛յ...
Չէ՞ որ ինքը գիտեր, ինքը առաջվնե գիտեր, որ այդ բոլորը տխմա-
րություն էր, միամիտ տխմարություն։
Ու Նայվածքը գամեց նորեն պատկերին, բայց այս անգամ ցավ չէր,
որ կմարեր իր աչքերուն մեջը, ոչ ալ ափսոսանք, այլ ընդհակառակը,
չար բան մը կայծ կուտար հոն, չարախինդ գոհունակություն մը կար-
ծես, որ պատռվեր ու մեջտեղեն վերցվեր էր այդ «տխմար» բանը։
Զայրույթով և իսկը թշնամիի մը պես վրա գնաց նկարին, երկու
թևով վերցուց եռոտանիին հետ միասին, կից մը տվավ բացավ.ետևի դուռը
ու արհամարհոտ շարժումով մը ավելի նետեց, քան թե դրավ ներս իր
ցուրտ ու մութ աշխատանոցը։
Խառնակ սեղանը, թափված պտուղներն ու ծաղիկները, վառվող
մոմերը ավելի գրգռեցին իր չարությունը։ Ինքը ինչ քնքշանքով մտա-
ծեր էր այդ բոլորի մասին, առեր էր, բերեր, կարգավորեր, ի՜նչ մաս-
նավոր հոգածությամբ, ի՜նչ սիրով։
Զգաց, որ սկսավ ամչնալ իր այդ զգացումներեն, իր այդ հիմար ոգևո-
րութենեն։ Ուժով մը թափ տվավ ձեռքը, արհամարհանքով, վերցուց
վերարկուն ու գլխարկը և ինքն ալ իր կարգին ամուր մը զարկավ գոցեց
բնակարանին դուռը ու շտապեց դուրս։

*

*　　*

Կեսօրի մոտ էր, երբ Սուրեն աչքերը բացավ ու զգաց, որ գլուխը
ծանր էր։ Հիշեց՝ գիշերը շատ ուշ էր վերադարձեր տուն և չափազանց ալ
քոնյակ էր խմեր։
Հիմա իր մեջը հոգնածություն մը կար միայն և... պատռվածք մը։
Պատռված էր ամեն ինչ. և աշխատանք, և ջանք, և հավատ, և ոգևորու-
թյուն, և մտերմություն, և ամեն հարաբերություն այն աղջկան հետ։
Վերջացած էր, իհարկե։ Բայց նախ պետք էր, որ երթար անգամ
մը ու տեսներ այդ աղջիկը։ Ատիկա անհրաժեշտ էր. ինչո՞ւ էր անհրա-
ժեշտ՝ ինքն ալ չգիտեր, բայց անհրաժեշտ էր։
Գուցե միայն հետաքրքրություն մըն էր ատիկա տեսնելու՝ թե հի-
մա ինչպե՞ս պիտի նայեր այդ աղջիկը տղու աչքերուն, ի՞նչ պիտի ըսեր,
ի՞նչ կմտածեր։ Գուցե արդարության զգացում մըն էր ատիկա, առնա-
կան արդարամտություն մը, որ իր կտրական դատավճիռը տալեն առաջ



դատապարտյալին վերջին իրավունք մը կուտա խոսելու, որ բոլոր օրի-
նավորությունները հարգված ըլլան։ Գուցե անխոստովանելի ձգողություն
մըն էր ատիկա, որ աղջիկը այս բոլորին հակառակ դեռ պահեր էր իր
վրա և որուն տղան չէր կրնար ընդդիմանալ։ Կամ գուցե պարզ հետևանք
մըն էր այդ տարօրինակ դրության։ Տղան չգիտեր ինչ ընելիքը, բայց
բան մը ընել պետք էր, իսկ ընելիքը որոշելեն առաջ ամենեն բնական
բանը նախ երթալ տեսնվիլն էր։ Է՜, վերջապես, ո՞վ կրնա տեսնել հո-
գիին բոլոր մթին խորշերը։
Ինչ որ ալ ըլլար իր մեկնությունը, մերկ իրողությունը ան էր սա-
կայն, որ ճաշելու ատենները, երբ ամենեն ավելի հավանականություն կար
Ստեկլընին տունը հանդիպելու, Սուրեն լուրջ ու ծանրակշիռ շարժումով
մը ու անփույթ դեմք մը հագած քաշեց պանսիոնին զանգը։
— Օրիորդ Ստեկլընը տո՞մնն է։
— Օրիորդը... օրիորդը մեկնեցավ,— կմկմաց սպասուհին տեսակ
մը հուզված ու կարեկցոտ։
— Մեկնեցա՞վ, ինչպե՞ս թե մեկնեցավ, ու՞ր,— հարցուց տղան հա-
զիվ իր ապշությունը զսպելով։
Կից սենյակեն դուրս եկավ ինքը պանսիոնի տիրուհին, սիրալիր
բարևեց ու բացատրեց մանրամասն, որ օրիորդ Ստեկլընը նախորդ գի-
շերը վերադարձեր էր տուն բավական ուշ, շատ հուզված ու այլայլած.
հայտներ էր, որ հեռագիր է ստացեր Ֆինլանտայեն իր քրոջմեն և որ առ-
տուն կանուխ անպատճառ մեկնի պիտի։
— Խեղճը ամբողջ գիշերը չքնացավ,— ավելցուց տանտիրուհին
խորին վշտակցությամբ,— ով գիտե, ինչ դժբախտություն է պատահած,
ինքը ոչինչ չըսավ, ես ալ չհարցուցի։ Ամբողջ գիշերը հավաքեց, կապեց
իր իրերը, առտուն կանուխ ալ շտապեց քաղաք ու հիվանդանոց գործերը
կարգադրելու, ետքն ալ տարինք ճամփու դրինք։ Այսպես հազիվ ժամ մը
կա, որ ես ալ տուն եմ դարձեր։
— Շնորհակալ եմ, տիկին, ցտեսություն,— կմկմաց տղան ան-
փույթ երևնալու գերագույն ճիգով մը և իսկույն դարձավ, սկսավ իջնել
սանդուղներեն։
Ճնշող ու խեղդող զգացում մը ամբողջովին ծանր նստեցավ հոգիին,
զգացում մը, թե ինքը այլևս զրկված էր այդ կնոջմեն, թե ինքը մինակ
էր նորեն, բոլորովին մինակ այս լայն աշխարհիս երեսին, ինչպես որ
եղեր էր միշտ մինչև այդ կնոջ հանդիպիլը։
Այդ միակ էակը, որ ինքը խորապես հարգեր էր ու սիրեր և որուն
կապվեր էր իր ամբողջ հոգիովը և որ ահա ամեն բան մեկ շարժումով
պատռեր էր, թողեր ու գացեր։

Սանդուղի՝ ամեն մեկ ոտքին հետ, որ ան կիջներ, կարծես կզգար, կարծես կտեսներ իր դեմը, թե ինչպես այդ աղջիկը կբարձրանար ու կբարձրանար իր աչքին, կբարձրանար ու կավնվանար։

— Ի՞նչ ավելի ազնիվ ու ավելի վսեմ, քան այդ լռիկ ու խորունկ սերը։ Ի՞նչ ավելի բարձր ու հզոր, քան այդ լռիկ ու հպարտ անջատումը։

Այո՛, տղան այլևս տարակույս չուներ՝ սեր էր ատիկա։ Բայց փոխանակ դժգոհություն ու տափակություն զգալու այդ անունեն, շատ պարզ գիտակցեց, որ հիմա իր հոգին հպարտ էր այդ բառեն։

Ու տարօրինակ սարսուռ մը մաղվեցավ իր վրա։ Ինչպե՞ս ինքը կույրի պես անցեր էր այդ աղջկան քովեն, անցեր էր ու չէր տեսեր նույն ամենեն ավելի խորը, ամենեն ավելի բարձր, ամենեն ավելի թանկագին բանը, որ կար այդ էակի հոգիին խորքը։

Եվ խելառ ցանկություն մը արագություն, գրեթե վազք տվավ անոր ոտքերուն։ Վազել, հասնիլ, բռնել այդ խուսափող, այդ փախչող, այդ անհետացող արարածը, որ իր հոգիին ընկերն էր եղեր, որ իր սերն էր եղեր։ Բայց ու՞ր, ալ ու՞ր...

Տղան ակամա կանգ առավ փողոցին մեջտեղը քիչ մը մտածեց և գանդաղ, հիվանդ քայլերով ուղղվեցավ դեպի տուն, մռայլ ու բեկված մտավ շիտակ իր աշխատանոցը և առանց գլխարկն ու վրան հանելու՝ գնաց պատկերին առջևը, ձեռքերը դրավ վերարկուին գրպանները ու անշարժացավ։

Քիչ մը քրքրված, քիչ մըն ալ թոշնած ծաղիկներու քովեն, քիչ մը խախտած, քիչ մըն ալ վար սահած թավիշի շրջանակին մեջեն կնայեր պատռվածքը, խոր ու լայն վերքի մը նման։

Տղան քնքշանքով մոտեցավ, խնամքով իրարու բերավ կտավը, շրջանակին պրկումը քիչ մը թուլցուց, ու երևացին նորեն այն երկու աչքերը և այն հոգին այդ երկու աչքերուն խորեն։ Սուրեն հափշտակված կնայեր, կնայեր անհագ՝ երկյուղած հուզումով մը կուրծքը ուռած և երբ վերջապես թողեց կտավը, իր վճիռը տված էր արդեն։

Ո՛չ, չէր պատռված ինչ որ եղեր էր իր ու այդ հոգիին միջև, ատիկա չէր կրնար պատռվիլ, ատիկա իր կյանքին ամենեն աղվոր, ամենեն նուրբ ու ամենեն ներդաշնակ կապն էր։ Այդ կապը պետք է մնար, պետք է մնար այս օրերեն ալ անդին, իր կյանքի օրերեն ալ անդին, դարերեն ալ անդին, պետք է մնար։

Քաշեց ծաղիկներն ու թավիշը, նետեց գետին անկյուն մը, պատռված պատկերը զգուշությամբ վերցուց եռոտանիեն, դրավ մոտը աթոռի մը կռնակին դիտելու համար դիրքով մը ու շտապեց դուրս նոր շրջանակ բերելու։



*
*   *

Ամառը Մյունխենի տարեկան պատկերահանդեսին ընդհանուրի ուշադրության առարկա էր դարձեր «երիտասարդ հայ նկարչի մը» տաղանդավոր մեկ գործը։

Լրագրական քննադատներեն մեկը «գիշերվան խորհրդավորությունն ու քաշողությունը» կգտներ այդ մութին մեջեն նայող զույգ մը աչքերուն խորքը։

Ուրիշները «հայության տառապանքը» կնշմարեին հոն։

Ավելի խորիմաստին մեկը «բողոքի մարմնացումը» կկարդար այդ նայվածքին մեջեն։

«Գեշ չէ», կըսեին ներողամիտ հնչել ուզող շեշտով մը նկարչական աշխարհի հին աստղերը՝ հիները։

«Լույսի էֆեկտ է», կքրթմնջեին ցուցադիր ընկերները՝ նորերը։

Իսկ հեղինակը ինքը պատկերին տակը դրեր էր միայն մեկ բառ մը՝ «Կինը»։

# ԴՐԱՄԱՆԵՐ

## ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ

Հազարամյակ մը մեզմե առաջ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՍԵՎԱՆԻ ԳԱԳԱԹԸ. ԺԱՅՌԵՐՈՒ ՄԵՋ ԱՎԵՐԱԿ ՄԸ. ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Վանահայրը նստած է քարի մը, ձեռքը ծնոտին ու մտախոհ կնայի վար։ Կիսափուլ կամարի մը տակեն կամաց դուրս կելլե Ճերմակավորը։

Վանահայրը՝ բարձրահասակ, թավ ու ալեխառն, գլխաբաց։ Ճերմակավորը նույնպես գլխաբաց, երկար սև մազերով, ասորական ձևի հյուսված սև ու շքեղ մորուքով։

Վայրկյան մը երկուքն ալ լուռ կնային իրար։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— (Հեգնոտ) Կդիտե՛ս, կդիտե՛ս թագավորությունդ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոժոռ) Ո՞վ ես դուն։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Դիտե՛, դիտե՛։ Տե՛ս, այդ երկու-երեք խարխուլ խցիկները, չէ՞ որ դուն ես շիներ. հապա այն մատուռը, որ քու աճապարանքն է կառուցեր. և վերջապես, նայե՛, քու այդ նոր եկեղեցիդ, որուն գմբեթը օր-օրի կբարձրանա վեր և որու գլխուն շուտով քու իսկ ձեռքովդ խաչը պիտի տնկես։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, եթե Տերը կամենա։



ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Նայե՛ ու հպարտացի՛ր։ Չէ՞ որ այդ բոլորը քու կամքիդ ծնունդն է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՞վ ես դուն։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Ա՜յ, սևավոր, ինչո՞ւ ես ժողվեր գլխուդ այդ սևազգեստ ու սևահոգի մարդիկը, ինչո՞ւ ես եկեր այդ հինավուրց կղզին։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՞վ ես դուն։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Ելի՛ր, ելի՛ր. քշե՛ նորեն դուրս դեպի կյանքը այդ թշվառ ու մռայլ ամբոխը։ Ելեք դո՛ւրս, դուք, որ զգայարանքները չորցնել կուզեք ու կրքերը մարել։ Դո՛ւրս այս կղզիեն, դուք, որ թշնամի եք ամեն գեղեցկության, ամեն կյանքի ու շարժումի, ամեն ուժի ծնունդի։ Դո՛ւրս, մի աղարտեք իմ աստվածներուս այս սուրբ դրախտը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս դրախտ չկա։ Այս ժայռի կտորին վրա ես իմ վանքս հիմնեցի. ասկե ետքը հոս անապատ պիտի կոչվի։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Անապա՞տ… այս ծիծղուն ծովակի ծոցին, այս թարմ արևուն դեմ։ Հեռո՛ւ, կոխած տեղդ հին տաճար է աստվածներու. հեռո՛ւ, հին աստվածներու շեմքեն է, որ կը խոսիմ քեզի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հին աստվածներու ավերակներեն։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Ավերակը այս քարերն են, որ քեզիպեսներն են դարսեր. քանդվեր է անոնց դարսածը։ Բայց ի՛նքը կյանքի մեհյանը խորտակում չունի, ինչպես և ինքը կյանքը։ Կթափին քարերը, կփոխվին անունները, բայց իրենք աստվածները կան ու կմնան։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս մեռա՜ն քու աստվածներդ։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Հո՛ս ու ամեն տեղ, ուր մարդ իր ոտքը կդնե, հո՛ն են անոնք հավե՜րժ ու անմահ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս մեռա՜ն քու աստվածներդ, և անոնց ավերակներուն վրա ես իմ Աստծուս տաճարը կառուցի։ Նայե, մութին մեջեն դեռ կնշմարվի գմբեթին արդեն կազմվող սրությունը։ Հոն կթագավորե միայն հոգին, հոն կթագավորե միայն Աստծու շունչը…

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Հոն կթագավորե տանջանքի գործիքը ու մահը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե։ Եվ կյանքի ամենեն խոր բանը մահն է։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝ կյանքի քայքայումը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Քու բերնով կխոսի մանուկ մարդկությունը։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Քու բերնով կխոսի ցավագար մարդկությունը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հերի՛ք է. ո՞վ ես դուն, որ կհայհոյես։ Հեռացի՛ր, այս կղզիին վրա ալ տեղ չկա քեզի ու քու աստվածներուդ։

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Այս կղզին ալ նո՛ւյն աշխարհն է, ինչպես ամբողջ աշխարհը։ Երկրպագե՛, մոլորվա՛ծ, հավերժ աստվածներուն։
ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հեռացի՛ր։
ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Խոստովանե՛, մոլորվա՛ծ, ու երկրպագե՛։
ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հեռացի՛ր։
ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— Կուգա օրը, ու կխոստովանիս։ (Աներևույթ կըլլա):
ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կնայի չուրջը, անհանգիստ) Ո՞վ էր։ Ջքացա՛վ։ Տեսի՞լք, կասկա՞ծ... (Հանկարծ վճռական) Ա՜, երբեք։ Աշխարհքը մուտք չունի այս կղզին։ Աշխարհքը մուտք պիտի չունենա՛ այս կղզին։ Ո՛չ։

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՀՐԱՊԱՐԱԿ ՆՈՐ ՇԻՆՎՈՂ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԱՌՋԵՎԸ

Մեկ կողմը տաճարի անդուռ մուտքը: Կերևան տախտակե ելարաններ: Հոս ու հոն թափված են տաշած, կիսատաշ քարեր, մաղ, գործիքներ:
Խորքը ծառեր, որոնց բուներուն մեջեն կնշմարվի ծովը:
Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ բուռն թափով: Կլսվի տերևներուն շրշյունը և ծովուն խուլ աղմուկը հեռուեն:

### 1

Մեկ-երկու քարտաշ կվազեն ծառերուն տակեն դեպի ծովուն կողմը: Տեսարանի խորքեն արագ կանցնի ժամկոչը երկար ձող մը ուսին: Եկեղեցիեն դուրս կուգա Ադամ վանականը արտորալով և աշխատելով դուրս քաշելու երկար պարան մը, որուն ծայրը ներսն է:

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— (Ջերմեռանդ) Աստվա՛ծ հասնի օգնության։ Աստվա՛ծ հասնի օգնության։
ՔԱՐՏԱՇ ՄԸ— (Կուգա ծովուն կողմեն ձեռքերը չորցնելով, բաց են ոտներն ու թևերը) Ջգե՛, վա՛ր ձգե, հա՛յր-սուրբ, ալ կարիք չկա։ Ելան, ամենքն ալ ելան ափը։
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ամե՞նքն ալ. կըսես, ամե՞նքն ալ և ծովը թափվածնե՞րը։
ՔԱՐՏԱՇ— Ամե՛նքն ալ, թեև հույսերնիս բոլորովին կտրեր էինք. այնպես կատաղի ծով է. ապշած կեցեր էինք ճարահատ. ըսինք՝ հիմա զարնե պիտի ափի ժայռերուն և փշուր-փշուր ընե լաստն ալ, մեջի եղողներն ալ։ Ես ու իմ Աստվածը, շատ աժան պրծան։
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Փա՜ռք քեզի, սուրբ Աստվածածին։ Իսկ ո՞վ էին ծովը թափվածները։ Շատե՞րը։
ՔԱՐՏԱՇ— Միայն երկուքը, մեր աբեղան ու օրիորդը։
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Օրիո՞րդը... ի՞նչ օրիորդ։
ՔԱՐՏԱՇ— Իշխանին աղջիկը։
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Վա՜յ, ա՞ն ալ իշխանի հետն էր։ Է՜, կենդանի՞ է, ուշքը վրա՞ն։
ՔԱՐՏԱՇ— Այո՛, երկ՛ի։ Հայրն ու իր մարդիկը տարին վանահոր խուցը։ Տեսնեիր՝ ինչպե՜ս սփրթներ էր իշխանը։
ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Կատա՞կ է. խե՜ղճը։ Բայց ո՞վ կըսեր անոնց՝ այս տեսակ եղանակով ծով դուրս գային։

### 2

Կմտնեն Անտոն, Մովսես ու Ծերունի վանականները:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Է, ե՞տքը, ե՞տքը։
ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Թո՛ղ, թո՛ղ քիչ մը շունչ քաշեմ։ «Ետքը, ետքը» հարցնելը դյուրին է. ետքը սարսափելի էր։ Վա՜յ... կարծես թևերս ջարդված ըլլան։ (Կնստի բարձր քարի մը):

Հաջորդ պատմության միջոցին. հոն եղողները կմոտենան պատմողին. այլև կուգան քանի մը բանվոր, Ղազար, Դավիթ, Զաքարիա վանականները ու կավելանան ունկնդիրներուն:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Խոսե՛, խոսե՛։
ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Թո՛ղ, տղա՛, թո՛ղ որ ուշքի գա։
ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Պահ մը դեմքը կծածկե ձեռքերովը և հանկարծ բանալով) Կեսեն արգեն անցեր էինք։ Մեյ մը վեր կելլեինք ալիքներուն ծայրը, մեյ մը կիջնեինք անդունդը՝ ամենքն ալ լաստին վրա փակեր էին իրենց տեղը, սփրթներ ու չորցեր։ Ես ու աբեղան կքաշեինք թիերը այնքան ուժ ունեինք։ Կամաց մը գլուխս դարձուցի, տեսա՝ կմոտենայինք ափին, բայց ի՜նչ ափ. ալիքները, որ կուգան ու կզարնեն ժայռերուն, կարծես փրփուրի սար ըլլան դեմդ կեցած։ Ի՞նչ մեղքս պահեմ, սիրտս հալեցավ, ըսի՝ վերջացավ։ Բայց հուսահատ ուժ տվի թիերուս. «Յա՜ Հիսո՛ւս Քրիստո՛ս» ըսի՝ «Պինդ նստեցեք, չվախնաք»։ Ա...

ըսելուս մեյ մըն ալ տեսնեմ ահագին վիթխարի ալիք մը, կարծես հեռուն ցամաքեն փրթեր կուգար շիտակ մեր վրա... (Ոտքի ելլելով) Ալ մնացածը... ալ ի՞նչպես ըսեմ։ Գիտեմ միայն, որ լաստը հանկարծ սաստիկ թեքվեցավ՝ կախ ինկավ անդունդի բաց շրթունքին. հանկարծ սուր ճիչ մը, ու կարծես բան մը փրթավ մեր լաստեն ու սահեցավ այդ փոսը։ «Աղջի՛կս, աղջի՛կս...»։ Բարձրացավ աղմուկ, իրարանցում. ես դեռ հազիվ էի հասկցեր. որ կողքես վեր թռավ աբեղան, արագ նետեց վրայեն կապան, ցատկեց ջուրը։ Լաստը ուժով ճոճվեցավ, մնացի մեկ թիով, լավ է՝ ալիքը ինքը կքշեր, բայց գիտեի նորեն ետ է գալու։ Եվ եթե դուք ժայռերուն վրայեն թոկը ժամանակին չհասցնեիք՝ կորած էինք մենք բոլորս ալ. կես վայրկյան մը ավելի ուշ, կես վայրկյան մը և վերջացավ...

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Աստծու հրա՛շքը։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ օրիո՞րդը։

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Հպարտ) Մեր աբեղան ազատե՛ց։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Լողալո՞վ։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Այո՛, լողալո՛վ, հանեց ափը։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Մի՞թե աբեղան լող տալ գիտեր։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞րտեղեն, ո՞վ էր լսեր։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Ուղղակի հրաշք է։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Ձեզի կըսեմ՝ Աստծու մատը կա հոդտեղ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ —Բայց աղեկ, ինչո՞ւ ճամփա ելաք այս եղանակով, Անտո՛ն հայր-սուրբ։

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Է՛, այնքան ըսի, համոզեցի, իշխանուհի սըրբուհին ինքը այնքան խնդրեց, ո՞վ է լսողը։ Իշխանը հրամայեց, որ մըտնեն լաստը։ «Եթե կվախնաք, դուք մի՛ գաք»։ Ալ ի՞նչպես հակառակեի, ըսի՝ Աստծու կամքը։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Հապա աղջի՞կը։

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Ան ալ հորը կտորը։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Չէ՛. Տիրամոր կամքն էր ասիկա (շտկվելով իր գավազանին վրա և ոգևորված). նայեցե՛ք, ո՞վ է Տիրամոր այս տաճարը կառուցողը. մեր սրբուհի իշխանուհին չէ՞. ո՞վ է մեր այս վանքը շեն ու պայծառ պահողը. ո՞վ է շիներ մեր այս խուցերը, ո՞վ է, որ շարունակ ամեն մեր պետքերուն օգնության է հասներ մեզի, մե՛նք, որ Տիրամոր աղոթող ճորտերս ենք։

ՁԱՅՆԵՐ— Իրա՛վ է, իրա՛վ է։

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Աստված երկար կյանք պարգևե մեր սըրբուհի իշխանուհիին։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Ա՛ն, որ թողեր է ամեն իշխանական կյանք



ու վայելք, իր զավակներն ու իր ապարանքը ու եկեր է Տիրամոր ոտքը, հո՛ն, Ցամաքաբերդի մենության մեջ իր կյանքին վերջին կեսը նվիրելու ճգնության ու աղոթքի։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Երկար արև՛ մեր բարեպաշտ սրբուհիին։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Ա՛յ, Տիրամայրը անո՛ր համար է, որ ցույց տվավ մեզի իր հրաշքը, ազատեց ալիքներեն անոր եղբայրն ու այդ աղջիկը։ Թող տեսնեն բոլոր թերահավատները ու համոզվին, որ մեր Տիրամայրը երբեք չի ձգեր իր ծառաներն ու իր աղոթողները։ Անպակաս ընենք մեր աղոթքները ու թող անպակաս ընե Ան իր օրհնությունը մեր վրայեն, անպակաս ընե մեր սրբուհի իշխանուհիին վրայեն։ Փա՛ռք մեր Տիրամոր անունին, փա՛ռք անոր Միածին Որդու անունին, հավիտյանս հավիտենից։

ԽՈՒՄԲԸ— (Երկյուղած) Ամե՛ն։

ՁԱՅՆԵՐ— Իշխա՛նը, իշխա՛նը։

### 3

Իսկույն խումբը կբաժնվի երկու մասի, կշարվի ու կկենա խոնարհ:
Կմտնեն Իշխանն ու Վանահայրը, քանի մը հետևորդներ ու վանականներ:

ԻՇԽԱՆԸ— (Ուղիղ դիմելով դեպի շենքը) Ասիկա՛ է ուրեմն քրոջս այնքան սիրած ու փայփայած եկեղեցին։ Կոկիկ ու սիրուն տաճար է։ (Հետևորդներուն) Ըսի՝ այսօր տեսնեմ պիտի այս եկեղեցին և, ա՛յ, բոլոր տարբերքներուն հակառակ կեցած եմ հիմա հոս ողջ և առողջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հանդուգն քայլ էր ըրածդ, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Ձեր անապատը ուրիշ է, վանահա՛յր, ուրիշ է դուրսը։ Դուրսը հանդուգն եղողինն է աշխարհը։ Եվ վերջապես մեյ մըն ալ, ո՞վ գիտե, երբ եմ այս կողմերը անցնելու, այնքա՛ն գործ ունիմ և զբաղում։ Չտեսնեի՞ անգամ մը քրոջս եկեղեցին, չհամբուրեի՞ անգամ մը սուրբ սեղանը երթալես առաջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Վաղը օր չէ՞ր, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Վա՞ղը. բայց ես այս իրիկուն մեկնելու եմ Ցամաքաբերդեն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ. հիմա նորեն մտադիր ես՝ ծովն անցնի՞ս։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Աստված չեն փորձեր, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Քա՛վ լիցի։ Դեռ քանի ժամ ունինք. հույս ունիմ՝ ծովը կմեղմի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Եթե քեզի չես խնայեր, պետք է խնայես զավակդ։

*ԻՇԽԱՆԸ— Աղջիկս քաջ է։ Քիչիկ մը վախցավ, քիչիկ մըն ալ ձեր Սևանի ջուրեն կուլ տվավ, բան չկա, երիտասարդություն է, կանցնի։ Բայց ինչ որ այսօր տեսավ ու ապրեցավ, ա՜յ, ատիկա չի անցնիր։ Չէ՞ որ իր պատանեկան հիշատակներուն ա՜հեղ փոթորիկ մը նվիրեցի։*

*ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Կյանքի հետ չեն խաղար, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Ատիկա ըսողը դո՞ւն ես, ծերո՛ւկ։ Այնքա՜ն երկար ես ապրեր, որ մոռցեր ես, թե կյանքն ինքը խաղ մըն է միայն։*

*ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Կյանքը խաչ մըն է, որդի՛ս, որ պիտի կրենք մեր ուսին, մինչև Տերը կանչե մեզի, Տիրամայրը խնայեց քեզի այս անգամ, բայց այդ մեղքը մյուս անգամ չկրկնես։*

*ԻՇԽԱՆԸ— Եվ շնորհակալ եմ իրմեն, հա՛յր-սուրբ, կաշխատիմ պարտքի տակ չմնամ։ Եվ հիմա, որ ուխտի եմ եկեր իր տաճարը, չէի ուզեր եկած ըլլամ պարապ ձեռքերով։ Կնվիրեմ Տիրամոր այս տաճարին կաղնի դուռ մը բարձրաքանդակ, այլև վարագույր մը ավագ խորանին, որ պիտի ըլլա թավիշ ու ոսկենկար։*

*ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Օրհնյալ ըլլաս։ Ձեր ցեղի անունը անջինջ պիտի մնա այս պատերին։*

*ԻՇԽԱՆԸ— Նաև պատվիրեր եմ իմ գործակալիս, ամեն տարի, քանի շեն է իմ տունս, տասը չափ սպիտակ ցորեն ղրկվի իմ կալերես ձեր անապատը։ Վայելքը ձեզի, ձեր սուրբ աղոթքը ծնողներուս ու զավակներուս։*

*ՁԱՅՆԵՐ—* (Խառն) *Աստված օրհնե ձեր ծնողներուն հիշատակը։ Շեն մնա ձեր կալն ու այգին։ Աստված պահե ձեր զավակները։ Աստված ավելցնե ձեր ինչքն ու ստացվածքը։*

*ԻՇԽԱՆԸ— Իսկ հիմա...* (Վանահորը) *Ո՞ւր է աբեղան։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իսկո՛ւյն, իշխա՛ն, ետևեն մարդ եմ ղրկեր։ Ա՛յ, արդե՛ն։*

## 4

Կմտնե Աբեղան Սիմոն վանականի ու դպիրի մը ընկերակցությամբ: Աբեղան մռայլ է. դեմքը անշարժ, աչքերը միշտ գետին, տեսակ մը անկամք:

*ԻՇԽԱՆԸ—* (Քիչ մը դիտելեն ետքը) *Ի՜նչ գեղեցիկ տղա ես դուն և ի՜նչ երիտասարդ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Միաբանությանս մեջ կրտսերն է, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Է՜, վրադ պիտի չըլլար այդ սև վերարկուն, և ես գիտեի իմ ընելիքս։ Քեզի կուտայի իմ տակիս նժույգը, կուտայի քեզի, ա՜յ, իմ սեփական սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ինծի հավատարիմ, և*



*կառնեի քեզի իմ պալատս, իբրև իմ հարազատ որդիս։ Իմ սև նժույգս քու այդ կերպարանքիդ աղվոր պիտի վայլեր, իսկ ձեռքդ, կտեսնեմ, շուտով պիտի սորվեր սուրիս։ Ձիս ու սուրս թե հերիք չեկավ, կուտայի քեզի և աղջիկս...*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— ...Որուն կյանքը այսօր ազատեցիր։ Անիկա արդեն քունը կըլլար ըստ օրինի։ Դուրսը աշխարհին մեջ՝ ով ինչ վերցուց, վերցո՛ւց։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Գիտե՛մ, գիտե՛մ, այս սուրբ մենաստանին մեջ այս խոսքերուն տեղը չէ։ Բայց ի՞նչ ընեմ, կուզեի բան մը տամ, կուզեի բան մը ընեմ, կուզեի բանով մը երախտագետ ըլլամ այս անձնվեր, այս քաջ կտրիճին։ Ափսո՜ս, այդ սև վերարկուն կկաշկանդե իմ թևերս։* (Մոտենալով աբեղային) *Տղա՛ս, քու իշխանդ քու առջևդ շատ աղքատ է ու շատ անզոր քեզի փոխարեն մը ընելու. ինչ որ ըսել կրնամ՝ հոս ներելի չէ, ինչ որ տալ կրնամ՝ քեզի պետքը չէ։*

*ՎԱՆԱՀԱՅՐԸ— Մեզի պետք է քու ու զավկիդ երկար արևը։*

*ԻՇԽԱՆԸ— Աղե՛կ. ես քեզի պարտական մնացի, աղվոր զգացում չէ. ես սովոր չեմ եղեր պարտական մնալու։ Ինչևէ. տո՛ւր ձեռքդ. տե՛ս իմինս, ասիկա երբեք տկար չէ եղած մեր թշնամիներուն դեմ ու երբեք ալ անարդար գործ չէ տեսած. արժանի է, որ սեղմես այդ քու ձեռքովդ, որ այսօր ազատեց աղջիկս ալիքներեն։* (Պինդ կսեղմե աբեղային ձեռքը) *Մտե՛նք, վանահա՛յր, տաճարին ներսը։*

Իշխանը, վանահայրը, հետևորդները և վանականներեն շատերը կմտնեն եկեղեցի:

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ—* (Կամաց մը բռնելով Աբեղայի թևեն) *Եղբա՛յր, մենք ալ երթա՛նք ու քիչ մը հանգստացի՛ր։ Դուն դժգույն ես բոլորովին և կզգամ մարմինդ, որ դեռ կդողա։*

Կես մը գրկած կտանի դուրս:

## 5

*ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ—* (Մոտենալով Ադամ վանականին, խորհրդավոր կերպով) *Հիմա ո՞րքան ժամանակ պետք է ապաշխարե աբեղան, որ տաճարին մուտքը նորեն բացվի իրեն համար։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ապաշխարե՞. ինչո՞ւ համար։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Չէ՞ որ ձեռք է տվեր կնկա։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Բայց... բայց այս տեսակ դեպք...

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Ատիկա միևնույնն է, մեղքը մեղք է միշտ։ (Ավելի խորհրդավոր) Ես տեսա, երբ իրարու փաթթված դուրս ելան ալիքներուն մեջեն։ Իշխանին մարդիկը գրեթե բռնի խլեցին աղջիկը անոր թևերուն մեջեն։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— (Զայրույթով) Անմիտ բաներ կխոսիս։

# ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱԲԵՂԱՅԻՆ ԽՈՒՑԸ. ԳԻՇԵՐ

Ցած ու փոքր սենյակ մը, պատերը անզարդ են։ Ճակատը տախտակե պարզ մահճակալ, վրան փռված է փոստ մը, չոր ու կարծր բարձ մը, իսկ կոշտ ծածկոցը կիսովին ինկած է գետին։

Սենյակին մեջտեղը հին կարպետի կտորի մը վրա ցածլիկ ու լայն գրակալը, գրակալի վրան ալ մեծ ու բաց ձեռագիր մը։

Սենյակին մեկ կողմը փայտե կոպիտ սեղան. վրան փայտե սև խաչ մը, կավե փարչ մը և յուղի ճրագը, որ կպլպլա։ Մյուս կողմը սենյակի մուտքն է։

Մահճակալին գլուխը պատեն կախված է Աբեղայի վերարկուն։

### 1

Աբեղան նստած է, մահճակալին ծայրը, ձեռքերը կրծքին ծալլած և աչքերը չեշտ հառած գետին։ Անոր քովը փայտե ցած աթոռակի մը վրա նստած է Կույր վանականը. շիտակ, անշարժ. երկու ձեռքը գավազանին ու գլուխը բարձր պահած։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞ւր են մտքերդ, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— (Կցնցվի ու կբարձրացնե գլուխը)։

ԿՈՒՅՐԸ— Նորե՞ն, նորե՞ն։

ԱԲԵՂԱՆ— Այո՛, այո՛, մեղք է. գիտե՛մ, մեծ մեղք։ Ո՛չ, ա՜լ չեմ մտածելու, ալ պետք չէ մտածեմ. երբե՛ք, երբե՛ք. պետք է ջնջեմ գլխես այսօրը, բոլորը, բոլորը, ծովը, հովը, լաստ, ալիք... ա՜խ, այդ ալիքները... (Հանկարծ վեր կթռչի թափով) Բայց ինչ հրաշալի բան է եղեր կռվիլը անոնց հետ, երբ անոնք իրենց լույծ կուրծքը դեմ կուտան քեզի, երբ իրենց փրփուրը կզարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցնեն քեզի. մեկը կցատկե ուսիդ, մյուսը կգալարի լանջիդ. մեկը կհրե, մյուսը կը-



քաշե, կճնշե, ու բոլորը, բոլորը ընկճել կուզեն քեզի. իսկ դուն միշտ երեսին, անոնց ելևէջքին հետ կտարուբերիս՝ բազկիդ զարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը հաղթահարելով. ա՜, այդ կռիվը...

ԿՈՒՅՐԸ— Կռիվը կյանքի համար է, աբեղա՛, հոս անապատ է։

ԱԲԵՂԱՆ —(Կոտրված) Այո՛. անապատ։ Մեղա՜ քեզ, Աստված իմ, մեղա՜։

ԿՈՒՅՐԸ— Զգո՜ւյշ։ Լավ հսկե ինքզինքիդ, աբեղա՛, աղոթե՛։

ԱԲԵՂԱՆ— (Խաչին առջև ծունր իջնելով) Ես կորսված մեղավոր մըն եմ, փրկե՛ ինծի, Տե՛ր. ես ինկած հանցավոր մըն եմ, օգնե՛ ինծի, Տե՛ր, մեղքի մեջ խեղդվող մըն եմ, բռնե ձեռքես, Տե՛ր։ Տե՛ս, մեղքի ծովուն մեջ... մեղքի ծովուն մեջ... ծովուն... ծովուն.. (Երկու ձեռքով դեմքը բռնած կելլե ոտքի)։

ԿՈՒՅՐԸ— Ըսե՛, ըսե՛։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ դեմքը կբանա ու չեշտ կնայի անոր արձանի նման անշարժ դեմքին)։

ԿՈՒՅՐԸ— Ըսե՛, ըսե՛։

ԱԲԵՂԱՆ— Ըսե՞մ... ի՞նչը։

ԿՈՒՅՐԸ— Ան, ինչ որ հոդ խո՜րքը, խո՜րքը։

ԱԲԵՂԱՆ— Խո՜րքը, խո՜րքը...

ԿՈՒՅՐԸ— Ըսե՛, ըսե՛։

ԱԲԵՂԱՆ— Ո՞վ կրնա տեսներ այդքան խորքերը, ո՞վ կրնա ըսեր այդքան խորքերը։

ԿՈՒՅՐԸ— Իսկ ես կտեսնե՛մ, ես կըսե՛մ։

ԱԲԵՂԱՆ— Դո՞ւն, կո՜ւյր։ (Երգիծանքով) Հապա ըսե՛, նայիմ, ինչ որ կտեսնես։

ԿՈՒՅՐԸ— (Հատիկ-հատիկ) Լաստին վրա, երբ ձեռքիդ թին ջուրը կպատռեր, ո՞վ էր հոգիիդ մեջ։

ԱԲԵՂԱՆ— (Վախցած) Լռե՛։

ԿՈՒՅՐԸ— Որո՞ւն համար այնպես կթպրտար սիրտդ. շրթունքիդ ի՞նչ բառ էր փակած, երբ շուրջդ ամենքը Աստված կկանչեին, երբ դեմդ փոթորիկն էր, որ կծառանար։

ԱԲԵՂԱՆ— (Սարսափահար) Երնե՜կ բաց ըլլային աչքերդ, որ չըտեսնեիր, չտեսնեիր...

ԿՈՒՅՐԸ— Երբ բոլոր հայացքները երկինք էին վերացած, երբ ամենքը կսպասեին վերին օգնության, ո՞ւր էին սևեռած քո՛ւ աչքերդ. ո՞վ էր ան, որուն առջևը հոգիդ ծունր էր իջած։

ԱԲԵՂԱՆ— Լռե՛, լռե՜. դուն իրավունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել։

ԿՈՒՅՐԸ— (Անողոք) Ըսե՛, ի՞նչ էր ուզածդ, ի՞նչ կփնտրեիր։

ԱԲԵՂԱՆ— (Աղերսով) Չգիտեմ, ոչինչ չգիտեմ, հերի՛ք է.

ԿՈՒՅՐԸ— Իսկ ծովուն մեջ, երբ ա՛ն օձի մը պես վզիդ փաթթված, մարմինը մարմնիդ ու շունչը շնչիդ, երբ դուն ամեն ինչ մոռցած ալիքները կպատռեիր, ըսե՛, նորե՞ն չգիտես, թե ինչ կուզեիր։

ԱԲԵՂԱՆ— (Եռազկոտ) Ո՛չ, կհիշեմ։ Կհիշեմ, ամբողջ էությամբս կցանկայի՝ որ ալ վերջ չունենար այդ թաց ճամփան, ալ վերջ չունենար այդ վայրկյանը։

ԿՈՒՅՐԸ— Ամբարի՛շտ։

ԱԲԵՂԱՆ— (Խորտակված)։ Բայց ունեցավ իր վերջը։

ԿՈՒՅՐԸ— Ու հասար ափը։ Եվ երբ առին քու բեռդ թևերեդ, ու դուն ուժասպառ ինկար ավազին, արդեն դիակ մըն էիր անկենդան։

ԱԲԵՂԱՆ— Ճշմարի՛տ է. ինծի այդպես զգացի։

ԿՈՒՅՐԸ— Դիակ մըն ես դուն և հիմա։ Մարմին մը, ուրկե ելեր է Աստծու շունչը։

ԱԲԵՂԱՆ— Ա՛խ, Աստվա՛ծ իմ, կորուսի հոգիս։

ԿՈՒՅՐԸ— (Ոտքի ելլելով) Ինկի՛ր գետին ու կոծե՛. քուրձ հագիր ու ապաշխարե՛. իսկ ամենեն առաջ գնա՛ իսկույն վանահոր մոտ ու խոստովանե՛։

ԱԲԵՂԱՆ— Խոստովանի՞մ, վանահո՞րը. ի՞նչը, ինչո՞ւ։ Ա՛, ամե՛ն, ամեն բան, բայց այդ մեկը երբե՛ք։ Երբե՛ք։ Եվ դուն ալ, հայր սո՛ւրբ, չըլլա, թե...

ԿՈՒՅՐԸ— Ես կույր եմ, խուլ ու համր. բայց գնա՛ ինքդ վանահոր մոտ ու ինքնակամ խոստովանե՛։

ԱԲԵՂԱՆ— (Կտրուկ) Վանահորը երբե՛ք։

ԿՈՒՅՐԸ— Կվախնա՞ս։

ԱԲԵՂԱՆ— Ո՛չ։ Բայց... բայց...

ԿՈՒՅՐԸ— Իմա՛ցկե. դուն կուզեիր պահես թաքուն սրտիդ մեկ հեռավոր խորշին մեջ քու այդ փոքրիկ նոր սրբությունդ, պահես և երկրպագես ծածուկ։

ԱԲԵՂԱՆ— Գթա՛, գթա՛ ինծի, անողո՛ք։

ԿՈՒՅՐԸ— Իսկ դուն քեզի կգթա՞ս, կռապա՛շտ։ Հիշե պատվիրանը. «Մի՛ եղիցին քեզ այլ Աստուած բաց յինէն»։

ԱԲԵՂԱՆ— (Կակազելով) Մի՛ եղիցին... մի՛ եղիցին...

ԿՈՒՅՐԸ— (Շեշտելով) «Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է և որ ինչ յերկրի ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ յերկրի...»։

ԱԲԵՂԱՆ— (Դողդոջ) «Եվ որ ինչ ի ջուրս ի ներքոյ յերկրի»։



ԿՈՒՅՐԸ— (Կամաց-կամաց երթալով դուրը) «Զի ես եմ տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս յերիս և ի չորիս...»։ (Դուրս):

2

ԱԲԵՂԱՆ— (Կերթա ծունկի կուգա խաչելության առջև բազկատարած ու ջերմեռանդ) «Կեցո՛ զիս, Աստուա՛ծ, զի հասին ջուրք յանձն իմ, ընկայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ։ Եկի ես ի խորս... ի խորս... ծովու... և շրջանք... ընկղմեցին զիս...» (Քիչ-քիչ կքույնա, կնրստի ծունկերուն և գլուխը կկախե կրծքին):

3

Խաչն ու սեղանը կամաց կսկսի մշուշապատիլ, ամեն ինչ կխառնի իրարու, և այդ մշուշի ֆոնին վրա հետզհետե կպարզվի աղջկան կերպարանքը: Ամբողջապես սպիտակ հագած, հագուստը պարզ, եուրբ ու ծիգ, կարծես ջրեն հանած. մազերը արձակ, խոնավ ու վրան մեկ-երկու թել ծովու խոտ:

Աբեղան թեթև մը գլուխը կբարձրացնե, հանկարծ կտեսնե ու սարսափահար կցատկե ոտքի:

ԱԲԵՂԱՆ— (Ետ-ետ երթալով) Դո՞ւն... դո՞ւն...

ԱՂՋԻԿԸ— Այո՛, ե՛ս. միթե չէի՞ր սպասեր։

ԱԲԵՂԱՆ— Աստվա՛ծ իմ։

ԱՂՋԻԿԸ— Մինա՞կ ես։

ԱԲԵՂԱՆ— Ես... ես մինակ եմ մի՛շտ։

ԱՂՋԻԿԸ— Ա՛յ, եկա քեզի ընկեր, և եկա այսպես կեսգիշերին, որ մինակ ըլլանք ես ու դուն։ Դո՛ւն, իմ քաջս, իմ արևս, իմ լուղորդս...

ԱԲԵՂԱՆ— Հերի՛ք է։

ԱՂՋԻԿԸ— Ինչո՞ւ։ Չէ՞ որ ես քեզմով է, որ հիմա կապրիմ, չէ՞ որ դո՛ւն նորեն կյանքս տվիր ինծի. և ի՜նչ քաղցր է այդ կյանքը, որ դուն տվիր ինծի։ Այս քանի՜, քանի՜ տարի ապրեր եմ ես, ամբողջ տասնյոթը տարի, և ես չգիտեի, բնավ չգիտեի, որ չէի ապրեր։ Մի՞տքդ է ցերեկը. հո՛ն, ալիքներուն մեջ. նայե՛, մազերս խոնավ են դեռ, բռնե՛, բռնե՛, շոշափե՛։

ԱԲԵՂԱՆ— (Ետ-ետ կերթա հափշտակված՝ աղջկան նայելով):

ԱՂՋԻԿԸ— Բայց գիտե՞ս՝ ի՜նչ ուժեղ թևեր ունիս և ինչպե՜ս ճկուն.

իսկ ես դեռ այնպես հուզված եմ, դեռ այնպես հոգնած։ (Կուզէ նստի աբեղայի անկողնին)։

ԱԲԵՂԱՆ— (Արգիլել ուզելով) *Օրիո՛րդ։*

ԱՂՋԻԿԸ— (Կնստի անկողնին ծայրը) *Ես օրիորդ եմ ծառաներուս համար, ես օրիորդ եմ մեր հպատակներուն համար. իմ տէրս ինծի այլ կերպ պիտի կանչէ։*

ԱԲԵՂԱՆ— *Սեդա՛։*

ԱՂՋԻԿԸ— *Վա՜յ, դուն գիտե՛ս անունս։*

ԱԲԵՂԱՆ— *Հայրդ քեզի այդպես կանչեց։*

ԱՂՋԻԿԸ— *Այո՛, Սեդա է անունս։ Իսկ ի՞նչ է քու անունդ։*

ԱԲԵՂԱՆ— *Ինծի աբեղա կկանչեն։*

ԱՂՋԻԿԸ— *Իսկ առա՞ջ, առա՞ջ, երբ դուն աշխարհն էիր դեռ ու աշխարհին։*

ԱԲԵՂԱՆ— *Իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կհասնի։*

ԱՂՋԻԿԸ— *Ասիկա՞։ Ա՜, ի՜նչ սառն է հոս, ինչպե՜ս կմրսիմ։*

ԱԲԵՂԱՆ— *Կմրսի՞ս։*

ԱՂՋԻԿԸ— *Բան մը տուր վրաս, որ հոգիս տաքնայ։*

ԱԲԵՂԱՆ— *Ես ոչինչ չունիմ։*

ԱՂՋԻԿԸ— (Առանց գլուխը դարձնելու, ետեւը պատեն կախված վերարկուն մատնանիշ ընելով) *Ա՛լ։*

ԱԲԵՂԱՆ— *Վերարկո՞ւս։*

ԱՂՋԻԿԸ— *Ինչպե՜ս կմրսիմ։*

ԱԲԵՂԱՆ— *Վերարկո՞ւս։*

ԱՂՋԻԿԸ— *Կվարանի՛ս։ Բայց չվարանեցար կյանքդ ինծի տալու. չվարանեցար, երբ ետեւս կատղած ալիքներուն մեջը նետեցիր քեզի։*

ԱԲԵՂԱՆ— *Ո՛չ, չվարանեցա։ Ան ուրիշ էր։*

ԱՂՋԻԿԸ— *Այո՛, ան ուրիշ էր։ Հոն կռիվ էր ու փոթորիկ, իսկ հոս լուռ է ու խաղաղ, ինչպես գերեզման։ Ա՜, ի՞նչ սառն է հոս, ինչպե՛ս կմրսիմ։* (Կելլէ ոտքի)։

ԱԲԵՂԱՆ— (Կվազէ դէպի վերարկուն, ձեռքը կերկարէ ու նորէն վարանած կանգ կառնէ)։

ԱՂՋԻԿԸ— (Խնդրանքով) *Բե՛ր, բե՛ր...*

Աբեղան հանկարծ կխլէ վերարկուն ու կդառնա դեպի աղջիկը, որ արդեն աներևույթ է եղած։ Աբեղան կմնա քարացած, վերարկուն բռնած ձեռքը առաջ պարզած։



4

Դուրսեն կլսվի ժամկոչին ձայնը, որ մելամաղձոտ ու միալար երգով մը ժամ կկանչէ։ Ձայնը հետզհետե կմոտենա։ Աբեղայի ձեռքեն կիյնա վերարկուն։

ԱԲԵՂԱՆ— (Շրթունքներուն մեջեն) *Հիսո՛ւս...* (Կուզէ նորէն չոքի խաչին դեմը, ուր խելառի պես ետ կցատկէ)։ *Ո՛չ, ո՛չ։ Եթե հանկարծ նորե՞ն երևնա...* (Դեմքը կշրջէ անկողնին կողմը) *Ա՜խ, Աստվածս երես դարձուց ինծմե։* (Հեծկլտանքով կիյնա մահճակալին ոտքը ու դեմքը կըթաղե անկողնին մեջ)։

Դուրսեն կլսվի միշտ ժամկոչին երգը, որ հետզհետե հեռու ու հեռու, կթուլնա, կնվաղի ու կհալի։

## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԱՂԲՅՈՒՐԻ ԳԼՈՒԽԸ
ՀԻՆԱՎՈՒՐՑ ՎԻԹԽԱՐԻ ԾԱՌԻ ՄԸ ՍՏՎԵՐԻՆ ՏԱԿ

Ծերունի վանականը նստած է ծառին տակը փայտե նստարանին ու քուն կերեվա։ Աղբյուրին մոտիկ խմբված են Ղազար, Մովսես, Դավիթ ու Զաքարիա վանականները և տիրացուն. կխոսին փսփսուքով ու անհանգիստ։ Անոնց քովը կեցած է Աբեղան, աչքերը գետին ու կլսէ։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— *Իրա՞վ է, նորե՞ն։*

ՏԻՐԱՑՈՒՆ— *Ցատկեր է անկողնին վրա, նստեր է կոկորդին ու սկսեր է խեղդել։*

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— *Հիսո՛ւս-Քրիստոս։*

ՏԻՐԱՑՈՒՆ— *Խեղճը հազիվ է շունչը ազատեր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՜նչ հակառակեր է չարը հայր Բարսեղին, աս քանի՞երորդ անգամն է։*

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ կերպարանքով է եղեր։*

ՏԻՐԱՑՈՒՆ— *Չգիտե՛մ։ Ըսավ միայն, որ ծծումբի ծուխին պես բարձրացեր է ու առաստաղի գերաններուն մեջեն կորսվեր է դուրս։*

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Անիծվա՛ծը։ Նզովվի ինքն ալ, իր կերպարանքն ալ։

ՏԻՐԱՑՈՒՆ— Ա՜, սարսափելի է. ազատում չկա իր ճանկերեն։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Գիշերները մինչև չնայիմ անկողնիս տակն ու ետևը՝ ես երբեք պառկիլ չեմ կրնար։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Ես ալ։ Անցած իրիկուն մտնեմ խուցս ու ի՞նչ տեսնեմ. գորշ սավանին մեջ փաթթված կնկան մը պես կկզեր է անկյունը. լեզուս պատռեցավ. խկույն խաչ հանեցի, աներևութացավ։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Հա՛, այդ նզովից-արմատները կուգան կնկա կերպարանքով, կուգան խմբերով ու ալ ինչե՞ր ըսես չեն ըներ, ի՜նչ խայտառակություններ, ի՜նչ գայթակղություն...

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ ինծի կերևնան միշտ մեր գյուղացիներու կերպարանքով։ Գինեպան Ուսեփը, մեր դրացի Գափոն, շվի փչող կույր Ակոբը, տհոլ զարնող Մինասը։ Կուգան կհավաքվին գլխուս, ձեռքերնին գինի, օղի, ուտելիքներ, խորոված։ Խաշվի անմահական հոտը կլեցնե խուցս, կարծես ամբողջ բակը լեցվեր են ու մատաղ կեփեն։ Ալ ի՜նչ հրամմեներ, ի՜նչ խնդիրք, ի՜նչ համոզել, որ անպատճառ ուտեմ։ Եվ մինչև Տիրամոր անունը չի տամ, չեն չքանար չիք-դառնալիքները։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Պատիժ է, պատիժ։ Ինչո՞ւ կտանջես մեզի, Փրկի՛չ։

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Հակառակի պես ալ, կարծես, մտքես կգողնան Տիրամոր անունը .կփնտրեմ, կփնտրեմ, հա՛, հա՛, լեզվիս ծայրն է, բայց չեմ կրնար ըսել՝ «Սուրբ կույս Մարիամ»։

ՏԻՐԱՑՈՒՆ— Ա՜խ, ո՞ւր փախչի մարդ այդ գարշելիներուն ձեռքեն։ Ո՞ւր փախչիս, ի՞նչպես փախչիս։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Եվ ի՞նչ կուզեն մեզմե, և անպատճառ մեզմե՛։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Անապատ եկողը եկեր է սատանայեն փորձվելու, ինչպես որ ինքը Տերն մեր Հիսո՛ւս Քրիստոս։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Հիսուս Քրիստոս ըլլա մեր զորավիգը։

ԽՈՒՄԲԸ— Հիսո՛ւս Քրիստոս։

ՏԻՐԱՑՈՒՆ— Եվ ամեն տեղ են, ամեն տեղ, ուր ալ որ երթաս։ Ա՜յ ի՞նչ գիտեք, որ հիմա մեկը նստած չի հո՛ս, մեր ետևը։ (Տեղը կփոխե): Կամ հո՛ն, քարափին ծերպերուն մեջը, կամ մեր վրան, ա՛յ, սաղարթներուն մութին մեջ։ Կտեսնե՞ք... կտեսնե՞ք... մեկը հո՛ն այն մութին խորքը... կշարժվի. մեկն ալ հո՛ս, ա՜յ, աղբյուրին ակնեն, նայե՛, նայե՛, ինտո՜ր կքրքջա... (Սարսափած ետ-ետ քաշվելով աղբյուրեն) Հիսո՛ւս Քրիստոս, Հիսո՛ւս Քրիստոս։ (Դեմ-դեմի կուգա վաճառոր հետ):



2

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոժոռ) Ի՞նչ կա, ինչո՞ւ ես վախցեր, տիրացո՛ւ։

ՏԻՐԱՑՈՒՆ— Հայր սուրբ... (Կիյնա վաճառոր ոտքերը):

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Վանահա՛յր, չարը հանգիստ չի տար մեզի։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Ուժեղ է խարդավանանքը չարին։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Զզվանքով) Դեռ միշտ այդ հին դևե՞ն կխոսիք ինծի։ (Բարկացած) Ոտքի՛ ելիր, տիրացո՛ւ։

ՏԻՐԱՑՈՒՆ— (Դեմքը ծածկած կելլե ոտքի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Քիչ մը լուռ կնայի անոր, վերջը մյուսներուն ու հատիկ-հատիկ) Չարեն թող վախնա ան, ով չէ տիրեր իր մարմնին ու բնազդներուն. սատանայի իշխանությունը բնազդներու վրա է միայն։

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ ան ո՞վ է, վանահա՛յր, որ տիրեր է իր մարմնին ու բնազդներուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հպարտ) Ա՛ն ,ով եկեր է այս անապատը, ծերունի՛։

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՛չ, հա՛յր սուրբ. ով եկեր է հոս ինծի հետ իմ անապատս, պետք է ավելի վեր ըլլա, քան մարդը։ Իսկ չարեն թող վախնա ա՛ն, ով չէ կտրեր իր բոլոր շղթաները աշխարհքին հետ, իր անցյալին հետ, իր հուշերուն հետ, վշտերուն, իր ուրախություններու՛ն։

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Իսկ ան ո՞վ է, վանահա՛յր, որ կրցեր է կտրել այդ բոլոր շղթաները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի՛։

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ— Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ով մարդ է ու միայն մարդ՝ անիկա աշխարհինն է ու թող դառնա աշխարհին. ահա՛ պատրաստ է հայր Անտոնին լաստը։ Ես չկանչեցի ձեզի հոս, որ հավաքվիք ու դևերեն սարսափիք։ (Ոգևորված կբարձրացնե կրծքեն կախված պարզ խաչը) Հո՛ս Տիրոջ խաչն է, հոս դևեր չկան։

ԲՈԼՈՐԸ— (Ջերմեռանդ խաչ կհանեն):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հոս կրքեր չկան, հոս բնազդներ չկան, հոս սուրբ հոգին է միայն, հոս մի՛տքն է միայն, վեր խոյացող մի՛տքը դեպի ճշմարտությունը, դեպի Աստված։ Այս մեկը աղե՛կ հասկցեք ու սատանաները թողեք աշխարհին։ Դե՛, երթաք խաղաղությամբ, և Տերը ըլլա ձեզի բոլորիդ հետ։

ԲՈԼՈՐԸ— Ամե՛ն։ (Կցրվին):

## 3

Վանահայրը կեցած է մինակ. կնայի անոնց ետևեն տխուր գլուխը շարժելով, երբ ետևեն կամաց մը կմոտենա Աբեղան, կծռի, զգույշ կբարձրացնե Վանահոր փեշը ու կհամբուրե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հանկարծ կզգա ու կդառնա ետ) Ի՞նչ կընես, որդի՛ս, ի՞նչ կընես։

ԱԲԵՂԱՆ— Հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ կուզես, որդի՛ս, ի՞նչ ունիս։

ԱԲԵՂԱՆ— Որքա՜ն բարձր ես դուն, հա՛յր. որքա՜ն, որքա՜ն, բարձր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բարձր կձգտինք մենք բոլորս, որդյա՛կ։

ԱԲԵՂԱՆ— (Արհամարհոտ) Ա՜, բոլորս։ Քու ձայնդ ինծի կարծես երկնքեն կուգա, հեռուե՜ն, հեռուե՜ն, վերե՜ն։ Է՛, մենք բոլորս։ Քանի խելքս կհասնի՝ եղեր եմ քու թևիդ տակը, քու խրատներուդ, քու օրինակիդ. և եղավ ժամանակ մը, երբ կարծեցի, թե ե՛ս ալ հասնելու եմ այդ բարձունքները...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իսկ հիմա՞, որդի՛ս։

ԱԲԵՂԱՆ— Հիմա... հիմա... (Կտրուկ) Ես քու որոնած վերիններեն չեմ, հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ինչե՜ր կխոսիս, տղա՜ս, կբամբասես ինքզ քեզի. դո՛ւն. իմ ընտրյալս, դո՛ւն, որ այս ամենուն մեջ ամենեն ավելի վեր սավառնողն ես եղեր։

ԱԲԵՂԱՆ— Սավառնո՞ղը... գուցե՛, երբ թևերս ազատ էին ու թեթև։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Է՜, հիմա ի՞նչ եղան թևերդ։

ԱԲԵՂԱՆ— Հիմա... հիմա թևերս թրջվեցան, հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Թրջվեցա՞ն։

ԱԲԵՂԱՆ— (Խորհրդավոր ու մոտենալով) Հիմա ե՛ս ալ կվախնամ, հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կվախնա՞ս, դո՞ւն ալ, սատանայե՞ն։

ԱԲԵՂԱՆ— Սատանա՞. ո՛չ. ոչ սատանայեն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հապա՞։

ԱԲԵՂԱՆ— Ես... ես կվախնամ... ծովեն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ծովե՞ն։

ԱԲԵՂԱՆ— Ծովե՛ն։ Հոն ալիքներ կան, փոթորիկ և՛ հուզում. և՛ կռիվ և՛... և... ամեն ինչ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կհասկնամ, որդյակ. անցած օրվան դեպքը ցնցեր է հոգիդ. կանցնի. ի՞նչ կապ քու ու ծովուն մեջ։ Թարմ է սիրտդ, գթոտ



ու կարեկից. ու ազատեցիր քեզի նման մանուկ էակ մը մահեն. օրհնյա՛լ ըլլաս։

ԱԲԵՂԱՆ— Բայց այդ օրեն, հա՛յր, ինծի կթվի թե ծովը... ծովը սիրտն է բնության։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Շեշտ կդիտե Աբեղան ու քիչ մը խիստ) Դուն նայե երկի՛նք, որդի՛. երկինքը միտքն է բնության, խո՜ր ու խաղաղ։

ԱԲԵՂԱՆ— Այո՛, խոր ու խաղաղ, երբ ծավի պայծառ է երկինքը. իսկ իմ մտքերս ավելի կնմանին թխպոտ օրերուն, երբ հոն ալ ամեն բան պղտոր է ու խառնակ։ (Կտրված) Ես քու որոնած վերիններեն չեմ, հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ատիկա ըսողը դո՞ւն ես, աբեղա՛։ Դո՛ւն, որ իմ հպարտությունս ես եղեր, որուն հոգին ես եմ խմորեր, որուն մեջ իմ ամենաթանկագին մտածումներս եմ դրեր, իմ սեփական հոգիս եմ դրեր, և որ ինծմե ետքը իմ գործիս շարունակողն է ըլլալու։ Համեստությունը ես կսիրեմ, աբեղա՛ բայց իմ ժառանգս եղողի մը բերնեն ավելի խոյանք ունեցող խոսքեր կուզեի լսել։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ դեմքը ծածկելով ու հեծկլտալով) Ա՜խ, դուն դեռ չգիտես... դուն դեռ չգիտես, հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Բոլորովին այլայլած կուղղվի և հանկարծ խիստ) Ինծի նայե՛, տեսնե՛մ, նայե՛ աչքերուս։

ԱԲԵՂԱՆ— (Կհեկեկա)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Մի՞թե. մի՞թե ճշմարիտ է կասկածս։ Աբեղա՛, նայե՛ աչքերուս։

ԱԲԵՂԱ— (Կհեկեկա)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այսպես թո՜ւյլ, այսպես խե՜ղճ... Դո՛ւն, որու հոգին ես որձաքարի պես ամուր կկարծեի, անարատ ու կույս բացառիկ հոգի մը. ու գլուխդ հպարտ ցցած վեր, դեպի երկինք, աշխարհքի ծովուն մեջ, ինչպես իմ այս կույս ու մենավոր կղզիս այս ծովուն մեջ։ Թշվառակա՛ն, խոնարհե՞լ կուզես այդ գեղեցիկ, այդ հպարտ գլուխը ցած, այս ցածի ծովուն դեմ, այն վերերեն, ուր մեր Աստվածն է...

ԱԲԵՂԱՆ— Աստված երեսը դարձուց ինծմե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Լռե՛, լռե՛։ Այդպես խախո՜ւտ, այդպես ողորմելի... առաջին իսկ փորձումի՞ն։

ԱԲԵՂԱՆ— (Ծունր իջնելով) Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Ետ կքաշվի) Ելի՛ր, ելի՛ր. ես քեզի շատ եմ տեսեր ծունկերուս քովը, բայց ո՛չ այդպես, ո՛չ այդպես։ Ես քեզի այդպես չեմ կրնար տեսնել։ Ելի՛ր, ելի՛ր։

ԱՐԵՂԱՆ— (Կելլե ոտքի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Եվ հեռացի՛ր։ Գնա՛, եղի՛ր նորեն այնպես, ինչպես որ էիր, ե՛տքը եկուր ինծի։ Այնպե՛ս, ինչպես որ էիր. այնպե՛ս, ինչպես որ էիր...* (Խոսքը կկտրե ու կկենա անշարժ ու խոժոռ):

ԱՐԵՂԱՆ— (Լուռ ու գլխահակ կամաց կհեռանա):

## 4

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Աշխարհքը... աշխարհքն է, որ կուզե մտնե կղզիս։ Հո՛ն սատանաները, հո՛ս այդ աղջիկը... և աբեղան... իմ աբեղան... ա՛յդ աբեղան... Ո՛չ, անկարելի է։* (Դառնալով դեպի վեր. դեպի կղզիին գագաթը) *Է՛յ, դո՛ւն, դո՛ւն, ի՞նչպես է քու անունդ, դո՛ւն, ճերմակավո՛ր. ո՛չ, աս պատահմունք մըն է միայն, չուրախանաս, դիպվա՛ծ մը անցավոր ու պատահական. չուրախանա՜ս...*

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԺԱՅՌԵՐՈՒՆ ՄԵՋ ԾՈՎԱՓԻ ՄԸ ԿՏՈՐԸ

Ձախ կողմը սեպ-բարձր քարափ, աջ՝ ցրիվ ժայռակույտեր. մեջտեղը տափարակ ավազուտ, ճակատը ծովն է մինչև ժայռերուն ոտքը. խորքը սարերու հեռանկար:

Պայծառ արև իրիկուն է: Ժայռերը, ծառերը, ծովը և ամեն ինչ ողողված են արևի նարինջ-կարմիր շողերուն մեջ, որոնց գույները ամբողջ տեսարանի միջոցին թեթև մը կփոխվին ու կվառին:

## 1

Քիչ մը առեն տեսարանը պարապ է: Կլսվի աղջիկներու սուր քրքիջ ու աղմուկ: Աջ կողմի ցածլիկ ժայռերեն մեկուն վրա կերևա միգանույշ մը, կնայի աշխույժ շուրջը ու ետ դառնալով ձեռքերը խողովակաձև կդնե բերնին ու ձայն կուտա:

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— *Հո՜-ո՜, հո՜-ո՜։*

Կից ժայռին կերևա ուրիշ միգանույշ մը, որ ժիր ու թովռուն ձեռքով կընե ու կկանչե դեպի հեռուն:



ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Ա՛յս կողմը, ա՛յս կողմը։*

Ու երկուքն ալ ձեռք-ձեռքի թեթև մը կցատկեն ավազուտին վրա:

Մինչ նույն ժայռերու վրայեն ու ետևեն ներս կթափին հատ-հատ ու խմբով միգանույշները, նուրբ ու թեթև, ճկուն ու շարժուն. հագած են բաց-կապույտ կամ բաց-կանաչ՝ ցանցնված փրփուր զարդերով. բոլորն ալ հերարձակ նույն գույնի ժապավեններով: Կցատկեն, կվազեն, կնետվին. ծիծաղ, հրմշտուք:

Նույն ժայռին ծայրը կերևա Արեղան իր հալածողներուն ձեռքեն փախչողի մը պես: Ետևեն ուրիշ միգանույշներ:

Արեղան կնայի ժայռեն, կշտապե վար իջնե, կզայրի ցած ու նստած կմնա ժայռի ոտքին: Ընդհանուր կայտառ քրքիջ ու զվարթ իրարանցում:

Արեղան կամաց կելլե ինկած տեղեն մռայլ ու շվար. և հուսահատ շարժումով մը ձեռքով կգոցե աչքերը:

Կլռեն բոլորը ու կանշարժանան:

ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Կամաց կմոտենա Արեղային ու կկանչե ականջին) *Սե՜դա։*

ԱՐԵՂԱՆ— (Կցնցվի ու անմիջապես կբանա աչքերը):

Ընդհանուր քրքիջ, որ իսկույն կզսպվի:

ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ— (Զանազան կողմերե ու դիրքերե իրար արձագանքելով) *Սե՛դա... Սե՛դա... Սե՛դա...*

ԱՐԵՂԱՆ— *Կորե՛ք, չքացե՛ք, հանուն Հիսուսի Քրիստոսի. հանուն այս խաչի։* (Ձեռքովը խաչ կհանե անոնց վրա):

ԽՈՒՄԲ ՄԸ ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ— (Շրջապատելով ու հեգնելով) *Ա՜խ, այս սիրուն խեղճ մանչը։ Ա՜խ, այս սիրուն խեղճ մանչը։ Ալ անզոր է քու խաչը։*

ԱՐԵՂԱՆ— (Նորեն կոտրված) *Ալ անզոր է աղոթքս, ալ անզոր է իմ խաչս։*

ՉՈՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Ա՜յ, ա՜յ, ի զուր, մի՛ տխրիր։*

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— *Հոս ուրախ է ամեն իր։*

ԱՐԵՂԱՆ— (Սրտնեղ) *Ա՜, ի՞նչ կուզեք. թողեք ինծի։*

ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Կուզենք հոգիդ առկայծի։*

ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Մենք քեզի գեշ ի՞նչ ենք ըրեր։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Գիտե՞ս, բերեր ենք լուրեր։*

ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Լուրեր, սերեր, սարերով։*

ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— *Սերը սիրով,*
*սերը սիրով*
*օրենքն ա՛ս է*
*դարերով։*

ԱՐԵՂԱՆ— (Աչքերը շփելով) Բայց ո՛չ. սա պատրանք է դևի։
ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Դևի՞։
ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ— (Թև-թևի կուտան, մեջ կառնեն Արեղան, կդառնան շուրջը ու կերգեն պարելով):

Դևի, դևի, թև-թևի,
պարենք, երգենք թև-թևի,
գուցե սիրտը թեթևի
այս անսիրի, անթևի։
Թևե՛ր, թևեր,
սե՛ր ու վե՛ր.
տվե՛ք թևեր,
թռչի վեր։

ԱՐԵՂԱՆ— (Կհարձակվի Երրորդ Միգանուշի վրա)

Ըսէ՛. ըսէ՛, դուն ի՞նչ ես,
այդպես անուշ կհնչես։

ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ետ ցատկելով թեթև)

Չէ՛, ո՛չ դև եմ, ո՛չ փերի.
քեզի ծովեն լուր բերի։

ԱՐԵՂԱՆ— Ուրեմն կա՞ս, կապրի՞ս դուն։
ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Կապրիմ այնպես, ինչպես դուն։
ԱՐԵՂԱՆ— Ո՞ւր է տունդ. բույնդ ո՞ւր։
ԵՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Եվ հո՛ս, և հո՛ն, ամենո՛ւր։
ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Ալենուշներ, միգանուշներ,

մենք բոլորս անուշներ։

ԱՐԵՂԱՆ— Ձեզի երբեք ես չե՛մ տեսեր։
ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Նախ պետք էր սե՛ր։
ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Ու կարոտներ, սպասումներ...
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ընկերները ճեղքելով առաջ կանգնի)

Բայց ծանոթ ենք ես ու դուն։

ԱՐԵՂԱՆ— Իրար ծանո՞թ, ես ու դո՞ւն։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Հա՛, կհիշիս այն առտուն,

երբ ծովուն մեջ, Սեդան լանջիդ,
փոթորիկը ականջիդ...

ԱՐԵՂԱՆ— (Ոգևորվելով) Երբ կռիվ էր ալիքին հետ։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Շարունակելով)

...Կկռվեիր մեզի հետ,
որ ոտքերդ կից մը տվին



պինդ զարկովը ուժեղին
երկու ծիծիս մեջտեղին...

ԱՐԵՂԱՆ— (Կարեկցոտ) Ցավեցա՞վ։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ընկերներուն) Ցա՞վ. ի՞նչ բան է՝ ցավ։
(Շարունակելով իր խոսքը)...

Այնպես թափով, այնպես ամուր,
որ դարձա բուռ մը փրփուր։

ԱՐԵՂԱՆ— Դո՞ւն, փրփո՞ւր...
ՎԵՑԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Քնքուշ փաթթվելով հինգերորդին)

Անո՛ւշ քուրիկ,
Փրփուրի՛կ,
հա՛տ մը, հա՛տ մը
համբուրիկ։

ՉՈՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ձայն տալով)

Ա՜խ, դուք չքրքրիք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Սրտնեղ)

Թող տուր ինծի. է՛ հերի՛ք։

ԱՐԵՂԱՆ— Իսկ ե՞րբ թողիր դուն ծովը։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Երբ չէր ինկեր դեռ զովը.

այսօ՛ր, ջերմիկ կեսօրին։

ԱՐԵՂԱՆ— Թողիր ի՞նքդ, կամովի՞ն։
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Հայր արևը կանչեց վեր։
ԱՐԵՂԱՆ— Հայր... արև՞ը. հրավե՛ր։

Եվ ինչո՞ւ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— (Ծիծաղելով ու զարմանքով ընկերներուն)
Ինչո՜ւ։
ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ— Չո՜ւ, չո՜ւ։
ՎԵՑԵՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Չվելու, չվելու,

հովերուն հետ պաչվելու։

ԱՐԵՂԱՆ— Հովերո՞ւն։
ԵՐԿՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Ա՜յ, ա՜յ, եկա՛ն։
ԽՈՐՔԵՆ ԽՈՒՄԲ ՄԸ— Եկա՛ն, եկա՛ն։
ՉՈՐՐՈՐԴ ՄԻԳԱՆՈՒՇ— Հովիկները, հովիկները, փախե՛ք։
ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԸ— (Ոստոստելով) Եկա՜ն, եկա՜ն, հովիկները։

## 2

Ընդհանուր իրարանցում։ Ներս կթափին հովիկները՝ թարմ ու թեթև պատանիներ խռիվ մազերով. հագուստնին գորշ, ծալվոր ու ծածանուտ։

Կթափին ներս տեսարանի խորքեն, կխառնվին միգանուշներուն, կփաթթվին անոնց զույգ-զույգ կամ խմբերով. և առանց բնավ կանգ առնելու, անոնք ալ իրենց հետ քաշելով, դուրս կելլեն տեսարանի առջևի մասեն, ցատկելով, աղմուկով ու ծիծաղով։

Զույգ մը անցնելու ատեն.

*ՄԻԳԱՆՈՒՇ— Սպասել ալ որ կուտա՞ք։*
*ՀՈՎԻԿԸ— Կռվի էինք սարի տակ։*
*ՄԻԳԱՆՈՒՇ— Ի՜հ, ատ որո՞ւն հետ նորեն։*
*ՀՈՎԻԿԸ— Ա՛ն, որ վերը ձյուներեն։*
*ՄԻԳԱՆՈՒՇ— Կատեմ ատոնք բոլորն ալ, ի՜նչ կոպիտ են, ինչպե՛ս պաղ...* (Կանցնին)

Փոքր խումբ մը իրար քաշելով.

*ՀՈՎԻԿ ՄԸ— Մտնե՛նք թուփին ծոցերը։*
*ՈՒՐԻՇ ՀՈՎԻԿ ՄԸ— Երթանք ծովուն բացերը։*
*ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ— Երթա՛նք պարենք, հա՞, պարենք։*
*ՈՒՐԻՇ ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ— Չէ՞, բերկրանքի համար ենք։*
(Կանցնին)

Մեծ խումբ մը թև-թև շղթա կազմած.

*ՀՈՎԻԿՆԵՐ— Անուշ շո՛ւնչն ենք ծովերու։*
*ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ— Դուք ալ հույզքը եթերի։*
*ՄԻԱՍԻՆ— Մենք ջերմ փարած իրարու,*
*ա՜, ի՜նչ կյանք է անթերի։* (Կանցնին)

Վերջին՝ ետ մնացած խումբ մը շտապելով.

*ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ—* (Ետ նայելով Աբեղային) *Եկո՛ւր, եկո՛ւր, տղա՛, դուն ալ եկուր մեզի հետ։*

*ՈՒՐԻՇ ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ—* (Փաթթվելով իր հովիկին) *Ա՜խ, չի կրնար. ան անզույգ է, անընկեր...*

*ԽՈՒՄԲԸ—* (Հեռանալով) *Անընկե՜ր...*



## 3

*ԱԲԵՂԱՆ—* (Երկար կնայի անոնց ետևեն, մինչև աղմուկը կկտրվի։ Տխուր գլուխը շարժելով) *Անզույգ ու անընկեր...* (Լուռ քիչ մըն ալ ու հանկարծ սրտին խորքեն) *Ա՜խ, գոնե գիտնայի, որ հզոր չէ այս ճգնությունը... Ի՞նչ կյանք է աս. մոռցված մոմ մը խաչելության առջևը, դժգույն ու մինակ, որ կմխա ու կհալի...* (Ձեռքովը կծածկե երեսը, գլուխը կկախե կրծքին ու կմնա անշարժ)։

## 4

Բարձր սեպ քարափի ծայրեն կերևա ճգնավորը, զգզված ու կիսամերկ։

*ՃԳՆԱՎՈՐԸ—* (Գոռալով) *Է՜յ, ո՞վ է հոդ։ Ի՞նչ գործ ունիս հոդ փոսիս գլխուն։*

*ԱԲԵՂԱՆ—* (Ապշահար կնայի վեր)։

*ՃԳՆԱՎՈՐԸ— Է՜յ, քեզի կըսեմ. ի՞նչ բանի ես հոդ։* (Արագ կմագլցի ժայռեն, երևնալով ու չքանալով քարերու ցցվածքներուն ետևը։ Հասնելով քարափի կեսերուն կանգ կառնե) *Ինչո՞ւ ես եկեր, մա՛րդ, այս անմարդ կողմերը։*

*ԱԲԵՂԱՆ— Ա՜խ, երևի դուն այն ճգնավորն ես, որ մեզմե շա՛տ-շատ տարիներ առաջ եկեր էր մինակ այս կղզին ճգնելու։ Բայց չէ՞ որ անիկա մեռած է արդեն, վաղո՜ւց, վաղո՜ւց։*

*ՃԳՆԱՎՈՐԸ— Իսկ դո՛ւն. դուն մեռած չե՞ս, վաղո՜ւց, վաղո՜ւց։*

*ԱԲԵՂԱՆ— Ե՞ս։*

*ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։ Դուն ինծի ան ըսե՝ ինչո՞ւ ես ելեր այս անմարդ կողմերը։*

*ԱԲԵՂԱՆ— Չգիտե՛մ. ինծի բերին։*

*ՃԳՆԱՎՈՐԸ— Ո՞վ բերավ քեզի։*

*ԱԲԵՂԱՆ—* (Մտածկոտ) *Չգիտե՛մ։ Բայց չէ՞ որ քու ճգնարանդ այս ժայռերուն մյո՛ւս կողմն էր, ավելի վե՛րը։*

*ՃԳՆԱՎՈՐԸ— Բայց հոստեղ է իմ փոսս։*

*ԱԲԵՂԱՆ— Փո՞ս. ի՞նչ փոս։*

*ՃԳՆԱՎՈՐԸ— Նայե՛ ոտքերուդ տակը. ունայնության փոսը։*

*ԱԲԵՂԱՆ— Ունայնությա՞ն։* (Կնայի ոտքերուն տակը, ուր բացված է փորվածք մը գերեզմանի չափ ու ձևով)։

*ՃԳՆԱՎՈՐԸ— Զգո՛ւյշ. չքանդե՛ս։*

ԱԲԵՂԱՆ— Ճի՞շտ է, ճգնավո՛ր, որ դուն տեր ու թագավոր ես եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու, պալատներու մեջ ես ապրեր, հարյուրավորներ են ծառայեր քու ամեն մեկ քմայքիդ. վայելքներուդ ու զվարճություններուդ սահման չէ եղեր։ Ճի՞շտ է, ճգնավո՛ր, ինչ որ կըպատմեն։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— Կըսեն՝ թողեր ես այդ բոլորը, պալատն ու խրախճան, իշխանությունն ու փառք. թողեր ես ամեն ինչ, հագեր ես սքեմ, գացեր ես մարդոց մեջ ապաշխարանք քարոզելու. քարոզելու գութ, քարոզելու ողորմածություն, քարոզելու խոնարհություն։ Ճի՞շտ է, ճգնավո՛ր, ինչ որ կպատմեն։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— Ճի՞շտ է, որ ատկե ալ ես կշտացեր, եկեր ես այս մենության մեջ անդորրություն գտնելու, մտածելու հոգիիդ փրկությունը։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն։

ԱԲԵՂԱՆ— (Հուզված) Ճգնավո՛ր. ի՞նչ կխոսիս. ունայնություն և քու ճգնությո՞ւնդ։

ՃԳՆԱՎՈՐԸ— (Անտարբեր) Քիչ մը հեռու իմ փոսես. փուլ չի տաս։

ԱԲԵՂԱՆ— Հա՛, այս փոսը։ Երևի, գերեզմանդ է, որ վրան այդպես կդողաս։ Բայց բաց է ու պարապ։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնությո՛ւն և գերեզմանը։ Ես գերեզման չունի՛մ։

ԱԲԵՂԱՆ— Հա՛, իրավ որ. գիտե՛մ։ Կըսեն՝ քեզի նետեր ես ծովը, հո՛ն, այն մյուս կողմի բարձր ժայռեն։ Չվախցա՞ր հոգիիդ կորուստեն, չվախցա՞ր հանդերձյալ կյանքեն։

ՃԳՆԱՎՈՐԸ— Ունայնություն մըն ալ այդ քու հոգիդ ու քու հանդերձյալ կյանքդ։

ԱԲԵՂԱՆ— (Սարսափահար) Լռե՛, թշվառակա՛ն, հայհոյա՛նք է խոսածդ։

ՃԳՆԱՎՈՐԸ— Իզուր մի՛ սարսափիր ու քիչ մը հեռու փոսես։

ԱԲԵՂԱՆ— Ալ ի՞նչ փոս. ալ ինչո՞ւ համար. ուրեմն ալ ինչո՞ւ ես փորեր այդ փոսը, ուրեմն ալ ինչո՞ւ կպահպանես այդպես վախով ու դողով, նույնիսկ մահեդ ալ անդին։

ՃԳՆԱՎՈՐԸ— (Գլուխը շարժելով) Ա՜, ատիկա՛ է, ատիկա. ունայնություններուն ունայնությունը։ Փորեր եմ, փորեր, նայե՛ այս եղունգներովս, ուղեղովս ու սրտովս, փորեր եմ անընդհատ ծնած օրես մինչև վերջին վայրկյանը, փորեր եմ ու որոներ տակեն բան մը գտնելու համար, կարևոր բան մը. փորեր եմ ու պահպաներ, որ այդչափ աշխա-



տանքս չկորչի. հիմա ալ կպահպանեմ, որովհետև իմ փորածս է. միա՛կ բանը, որ իմս է, իմ ստեղծածս։ Միա՛կ բանը, ա՛յ, այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ մի՛շտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան ավելի դատարկ կդառնա։ Դատա՛րկ, դատա րկ, կհասկնա՞ս, որ երբե՛ք, երբե՛ք չէ լեցվելու, ոչինչո՛վ, ոչինչո՛վ։ Գնա՛, դուն ալ գնա փորե՛ քու փոսդ ու թող իմինս ինծի։ (Կուզե հեռանա):

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր, կեցի՛ր, մա՛րդ. քեզի հարց մըն ալ. դո՛ւն, որ այդքան իմաստուն ես։

ՃԳՆԱՎՈՐԸ— (Կես մը ժայռին ետևեն) Մա՛րդը իմաստո՞ւն... Ունայնությո՜ւն։ (Դուրս)։

## 5

Աբեղան կերթա նորեն փոսին գլուխը և տխուր ու մռայլ կդիտե մտածկոտ։ Քարերուն մեջեն դուրս կուգա կերպարանք մը ամբողջովին փաթթված [illegible] նման քողի մը մեջ։ Մանր-մանր առաջ կուգա ու կկենա Աբեղային դեմը։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ի՞նչ է, եկա՛։

ԱԲԵՂԱՆ— (Գլուխը կբարձրացնե, կդիտե բերն զարմանքով ու տեսակ մը անփույթ) Դո՞ւն ալ անոնցմե։

ՔՈՂԱՎՈՐԸ—Ինծի ինչո՞ւ կանչեցիր։

ԱԲԵՂԱՆ— Կանչեցի՞. քեզի՞։

ՔՈՂԱՎՈՐԸ— Հոգիդ կանչեց ինծի ու եկա։

ԱԲԵՂԱՆ— Հոգի՞ս։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ինչո՞ւ է հոգիդ մռայլ։ Ի՞նչ կխորհեիր։

ԱԲԵՂԱՆ— Հոգի՞ս։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ըսե՛, ու մի՛ ըլլար այդպես տխուր։

ԱԲԵՂԱՆ— (Փոսը մատնանիշ ընելով) Ա՜յ, նայե՛։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ատ ի՞նչ է որ։

ԱԲԵՂԱՆ— Կյա՛նքը։

ՔՈՂԱՎՈՐԸ— Կյա՞նքը. այդ նեղ ու մութ փոսը։

ԱԲԵՂԱՆ— Այո՛, ունայնության փոսը։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ա՜խ, վախցե՛ր ես այդ դատարկ փոսեն։ Կուզե՞ս լեցնեմ։

ԱԲԵՂԱՆ— (Աշխույժ) Լեցնե՞ս...

ՔՈՂԱՎՈՐԸ— Իսկո՛ւյն. դժվար գործ չէ։ (Կմոտենա, կկենա փոսին գլուխը և կսկսի իր կիսերգը խորհրդավոր կանչող շարժումներով։ Եվ վերեն կսկսի մշուշի նման բան մը իջնել վար դեպի փոսը վերջալույսի

կարմիր ճառագայթներում տակ. իջնող մշուշին մեջ աղոտ կնշմարվին կարծես դեմքեր, մարմնի մասեր, տերև, ծաղիկ, կայծեր, գույներ)։

*Իջե՛ք, իջե՛ք,*
*երազներ,*
*իջե՛ք զգո՜ւյշ,*
*երազներ,*
*շոյո՛ղ, անո՜ւշ*
*երազներ,*
*իջե՛ք քնքո՜ւշ*
*երազներ։*
*Ծաղիկ, կանաչ,*
*թարմ հյուսեր,*
*բախտի կարկաչ*
*ու հույսեր.*
*դող ու անցուկ*
*ու կարոտ,*
*ծածուկ արցունք*
*վարանոտ.*
*խելքի, մտքի*
*հակասում,*
*միշտ նո՛ր կյանքի*
*սպասում...*
*Իջե՛ք, իջե՛ք,*
*երազներ,*
*իջե՛ք զգո՜ւյշ,*
*երազներ,*
*շոյող, անո՜ւշ*
*երազներ,*
*իջե՛ք, քնքո՜ւշ*
*երազներ։*
*Գգվանք, ժպիտ,*
*գույն ու բույր,*
*աչեր վճիտ*
*ու համբույր.*
*իղձեր անվերջ,*
*անմեկին,*
*տագնապ ու տենչ*
*մոլեգին.*



*օրոր, գրգիռ*
*ու հույզեր,*
*սրտի թրթիռ,*
*երգ ու սեր...*
*Իջե՛ք, իջե՛ք,*
*երազնե՛ր,*
*իջե՛ք զգո՜ւյշ,*
*երազներ,*
*շոյող, անո՜ւշ*
*երազներ,*
*իջե՛ք, քնքո՜ւշ*
*երազներ։*
*Աստղեր թովիչ,*
*բոց ու կայծ,*
*ցնորքներ վառ*
*ու առկայծ.*
*հավատ ուժի,*
*մեծության,*
*փառքի, կամքի*
*գոյության.*
*շռինդ, թնդյուն,*
*հպարտանք,*
*իմաստություն...*
*բյո՛ւր պատրանք։*
*Իջե՛ք, իջե՛ք,*
*երազներ,*
*իջե՛ք զգո՜ւյշ,*
*երազներ,*
*շոյող, անո՜ւշ*
*երազներ,*
*իջեք՛ քնքո՜ւշ*
*երազներ։*

*ՔՈՂԱՎՈՐԸ— Դե՛, եկուր ու ալ մի՛ ըլլար տխուր։*

*ԱՐԾՂԱՆ—* (Նայելով) *Լեցա՛վ։ Կուզեի ոտքս դնեմ վրան։*

*ՔՈՂԱՎՈՐԸ— Դի՛ր։*

*ԱՐԾՂԱՆ—* (Մեկ ոտքով կկենա փոսին վրա) *Ու՛վ ես կեցա՞ծ եմ հիմա ունայնության փոսին վրա։*

*ՔՈՂԱՎՈՐԸ— Դուն կեցած ես հիմա երազներու վրա։*

ԱԲԵՂԱՆ— Այո՛։ Եվ փոսը լեցված է։ (Հանկարծ ուրախ ետ կցատկե ու անզուսպ) Հե՜յ, դո՛ւն, հե՜յ, ճգնավո՛ր, հե՜յ, ունայնությո՛ւն, փոսը դ լեցված է, լեցված։ Իսկ դո՞ւն, քողակիր հմայո՛ղ, ո՞վ ես դուն։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ե՞ս. ես ալ երա՛զ մը։

ԱԲԵՂԱՆ— Երա՞զ։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ես ա՛ն եմ, որուն սպասեր ես դուն տարինե՜ր, ու տարիներ առա՛նց գիտնալու, որ կանչեր ես դուն խուցիդ մենության մեջ, երկա՜ր, երկար գիշերները առա՛նց բառ մը արտասանելու, որուն պապակեր է քու երիտասարդ ծարավ սիրտդ անվե՜րջ ու անվերջ, առա՛նց խոստովանելու։ Ես ա՛ն եմ, առանց որուն սնապատ մըն է կյզին և որուն ներկայությանը անապատին մեջ դրախտ կծաղկի։ Ահա՛ եկեր եմ ես քեզի։

ԱԲԵՂԱՆ— (Ոգևորված) Օրհնված ըլլա քու գալուստդ, քողավո՛րս Ըսե՛, ինչպես կանչեմ քեզի։

ՔՈՂԱՎՈՐԸ— Կանչե՝ ինչպես որ սիրտդ ուզե, իմ անուններս հաշիվ չունին։ Դուն ծովը շատ սիրեցիր, կանչե՛ Ծովիկ, եթե կուզես։

ԱԲԵՂԱՆ— (Երազկոտ) Այո՛. ծովուն խայտուն ալիքները այս ժայռերու ոտքին միշտ քեզմե են խոսեր ինծի։

ՔՈՂԱՎՈՐԸ— Ե՛վ սյուքերը տերևներուն մեջեն, և՛ հավքերը թփերուն տակ, և կարկա՛չը աղբյուրի շրթունքին, ամե՛նը, ամե՛նը, ամե՛ն օր ու ամենուր ինծմե են խոսեր քեզի։

ԱԲԵՂԱՆ— Կուզեմ տեսնեմ քու երեսդ։ Բա՛ց։

ՔՈՂԱՎՈՐԸ— Թո՛ղ. գուցե զղջաս։

ԱԲԵՂԱՆ— Կուզեմ տեսնեմ քու երեսդ։ Բա՛ց։

ՔՈՂԱՎՈՐԸ— Աղե՛կ. եկո՛ւր, ի՛նքդ բաց։

ԱԲԵՂԱՆ— (Վախով ու դողով) Ե՞ս։

ՔՈՂԱՎՈՐԸ— Եկո՛ւր, բա՛ց։

ԱԲԵՂԱՆ— (Դողդղալով կմոտենա և դողդոջուն ձեռքով կբռնե քողին ծայրը ու կքաշե: Քողը կիյնա աղջկան թևերուն: Կեցած է Սեդա՝ ճիշտ այնպես, ինչպես որ էր առաջին արարին մեջ: Աբեղան ետ-ետ կըքաշվի հիացած ու խելագար) Սեդա՜...

ՍԵԴԱ— Ի՞նչ է. ահա՛ ես։

ԱԲԵՂԱՆ— (Հետզհետե ավելի ու ավելի հափշտակված) Օ՜, դո՛ւն. դուն իմ էությանս հմա՛յքը, դուն թագուհի՛ն իմ մտքերուս. դուն իմ սրրտիս ծո՛վը, դուն փոթորի՛կը իմ հոգիիս։ Արևուն հուրքն ես դուն, ծովերուն հույզքն ես դուն, բնության պարգևն ես դուն ինծի։ (Կնետվի գետին) Թո՛ղ, թո՛ղ փաթթվիմ ոտքերուդ, թող համբուրեմ կոխած հողդ, համբուրեմ այդ ճերմակ հագուստիդ անարատ փեշերը... (Կուզե գա-



լարվի անոր ոտքերուն. աղջկան կերպարանքը կմշուշոտվի ու կաներևութանա: Աբեղան գրկելու դիրքով ինկած է, անշարժ այն տեղը, ուր քիչ մը առաջ ունայնության փոսն էր):

6

Խորքի ժայռերուն մեջեն կերևան Ադամ ու Սիմոն վանականները, թևերնուն մեկմեկ բաշկինակ՝ մեջը քիքը:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Դժոխքի ճամփա է, դժոխքի ճամփա։ Բռնե՛ տեսնեմ ձեռքս։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— (Օգնելով ընկերոջը, որ վերի ժայռեն վար իջնե) Նայե՛, հա՛յր Սիմոն, ան ի՞նչ բան է հոն. կարծես մարդ ըլլա գետինը ինկած։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Խաչ կհանե երեսը) Հանուն Հիսուսի Քրիստոսի։ Մա՞րդ, այսքան հեռունե՞րը. դժբախտություն մը պատահած չըլլա՞։ (Կիջնե ժայռերեն, և երկուքով զգույշ կմոտենան):

ԱԲԵՂԱՆ— (Անոնց ոտքի ձայնեն կբարձրացնե գլուխը ու ապշած կնայի առջևը) Գնա՜ց... (Կնայի շուրջը, կես մը կելլե ու կնստի):

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Ա՜խ, դո՞ւն ես, աբեղա՛։ Կաղոթեի՞ր, ինչո՞ւ այսքան հեռուները։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Վախցա՛նք։

ԱԲԵՂԱՆ— (Կելլե ոտքի, կնայի անոնց ցրված արտահայտությամբ և հանկարծ ուշադիր կսկսի գետինը բան մը փնտրելու):

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ կորսնես, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Ո՞ւր է. ճիշտ հո՛ս պիտի ըլլար։ Ո՞ւր է փոսը, ո՞ւր է այն փոսը։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ի՞նչ փոս, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Հա՛, իրա՛վ, մոռցա. չէ՞ որ լեցուց։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ։

ԱԲԵՂԱՆ— Ան... անիկա. երա՛զը։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ժպտուն) Ա՜խ, երա՛զ ես տեսեր։ Քունդ տարեր էր, հա՞։

ԱԲԵՂԱՆ— Երա՞զ... (Հանկարծ վրա կնետվի Սիմոն վանականին, շոշափելով անոր մարմինը, պինդ-պինդ թափ տալով անոր թևը): Իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն...

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ետ-ետ քաշվելով) Տե՛ր Հիսուս-Քրիստոս, դուն խափանես չարը։

ԱԲԵՂԱՆ— Իսկ ասիկա՞, իսկ ե՞ս, իսկ այս վա՞նքը, այս անապա՞տը... Ի՞նչպես իմանամ ո՞րն է քուն, որն արթուն. ա՛ն հոն, անո՛նք, թե՞ հոս, դո՛ւք. ե՛ս...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Սթափվե՛, աբեղա՛, սթափվե՛։ Ի՞նչ երազ. ի՞նչ բան. ա՛յ, անիկա Սիմոն հայր-սուրբը, ասիկա ալ ես՝ մեղավոր ծառաս։ Կղզիի գագաթն էինք, իջանք սունկ հավաքելու. քարեքար, ժայռեժայռ հեռացանք մինչև հոս. այս կողմերը սքանչելի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողվեր եմ, նայե՛. հրաշալի սունկե-ապուր պիտի ըլլա։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ) Իսկ եթե դո՞ւ ինքդ սունկ մըն ես միայն, հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ստվերին. և քունիդ մեջ կերազես միայն, իբրև թե վանական մըն ես ու եկեր ես սունկ հավաքելո՞ւ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Խելքի եկուր, աբեղա՛, ինչե՛ր կխոսիս։

ԱԲԵՂԱՆ— (Շարունակելով) Կամ գուցե այն ժայռի ստվերն ես դուն, քարի կտորի մը ստվերը, որ ինկեր ես հոս ու կերազես, թե մեղքերուդ հաղթած սուրբ մըն ես դուն։ Ո՞րն է երազը, ո՞րը արթուն. ըսե՛, եթե գիտես. և ի՞նչ բան է ինքը երազը։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Վախցած ու խոսքը փոխելու ջանքով) Երթա՛նք։ Երթա՛նք, աբեղա՛, ուշ է արդեն։ Դժոխքի ճամփաներ են, նայե՛. կատարյալ սատանայի սանդուղ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Երթա՛նք, որ հասնինք իրիկվան հացին։ Հսկում ունինք այս գիշեր։

ԱԲԵՂԱՆ— (Համակերպած)։ Երթա՛նք։ Ուտե՛նք սունկե-ապուր ու կենանք հսկումի։ Երազ մըն ալ ատիկա՛. բայց երկա՛ր, երկա՛ր երազ մը. չէ՞, հա՛յր սուրբ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Չգիտե՛մ, աբեղա՛, ինչ ըսել կուզես։

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴԱՀԼԻՃ ՄԸ ՄՅՈՒՆԱԶԱՐԴ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿ

Աջ կողմը խոր նիշ մը նեղ ու երկար լուսամուտներով։ Նիշի առջևը փայտե բազկաթոռ, վրան բարձ, ոտքին տակը բարձ։ Քովը՝ ցած ու փոքրիկ կլոր սեղան մը. վրան մեկ-երկու կանացի իրեր և գեղեցիկ ձեռագիր գիրք մը։ Ձախ կողմը երկար դիվան. ամեն կողմ գորգեր։ Ճակատը սյուներն են, որոնք դահլիճը կբաժնեն խորքի սրահեն. սյուներուն մեջ մութ գույնի վարագույրներ։

Անդորր, մեղմ ու ախորժելի։



1

Իշխանուհին նստած է բազկաթոռին, ձեռքը սեղանին ու կխոհի։ Դեռ չթառամած գեղեցկություն, թեթև մը ճերմկած մազեր, սգավոր տիկնոջ արտաքին, պարզ ու ընտիր։

Քիչ մը քովնտի ու ետևը նստած է գետինը, գորգին վրա, Դայակը, որ ծեր ու դյուրաբեկ, ալևոր ու սևազգեստ պառավ մըն է։

Իշխանուհիին դեմը գլխաբաց կեցած է Գործավարը. ձեռքին ոլորած մագաղաթներ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Այո՛, իշխանուհին եթե կհաճի։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Աղե՛կ, ինչպես գիտես. համաձայն եմ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Իսկ Սեպուհի՞ն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Տղո՞ւս. կկարգադրեմ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Լա՛վ։ Իշխանուհին ուրիշ հրաման ունի՞։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ։ Բարևներս բոլորին։ Իսկ Աննան թող ինք-զինքը աղեկ նայի, իր այդպես թույլ կազմովը։ Կըսես՝ մայրդ շատ խիստ է դժգոհ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Իշխանուհին պետք չէ որ թողներ մեզի. իր բացակայությունը շատ է զգալի ապարանքին մեջ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Է՜, ապարանքը կդառնա և առանց ինծի։ Այդ տարիքին մեջ մոր կարիքը չնչին է։ Ես հասցուցեր, պսակեր, կատարեր եմ իմ պարտքս։ Աշխարհին տվեր եմ իմ հարկս. հիմա քիչ մըն ալ իմ հանգիստս ու իմ հոգիս։

ՊԱՌԱՎԸ— (Գործավարին) Թո՛ղ, դո՛ւն ալ, քու ապարա՛նքդ ալ։ Տիրուհիս նահատակ մըն է եղեր իր ամբողջ կյանքը, հիմա կուզես, որ նորեն գար ու իյնար կյանքի անիվին տակ։ Ո՛չ, ալ հերի՛ք է, հանգիստ է պետք և մեզի, գոնե մեր օրերուն վերջին։ Նայե՛, այս անդորր ու լռիկ մենարանը, ոչ մեկ արքունիքի հետ չեմ փոխեր։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Ճի՛շտ է, սիրուն տեղ է Ցամաքաբերդը, սիրուն ու հանգիստ. Սևանի լի՛ճը, դեմի կղզի՛ն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Եվ վերջապես կուզեմ մոտիկ ըլլամ իմ եկեղեցիիս, որ կշինվի. տե՛ս, աչքիս տակը։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Գիտե՛մ իշխանուհիին բարեպաշտությունը. գիտե՛մ անոր գթոտ սիրտն ու առատաձեռնությունը։ Հոս ամեն քայլիս անոր ողորմածութենեն կխոսին ու կարեկցությունեն։ Բարերարվածները անշա՛փ, գիտեմ։ Իզուր չէ անշուշտ, որ սրբուհի կկանչեն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ժպտուն) Իրա՞վ։ Թող կանչեն, անունը ոչինչ չի փոխեր։ Բան մը պիտի ըսեի՞, թե չէ, այս մենավոր խուլ անկյունը։

ՊԱՌԱՎԸ— Մանավանդ տիրուհիիս պես անվերջ հոգատարության ու խնամելու սովոր սրտի մը համար։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Կին ըլլալը՝ հոգ ըսել է, Եղիսա՛, իսկ մայրը՝ խընամք։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Հրաման կուտա՞ իշխանուհին, որ մեկնիմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ե՞րբ կուզես՝ ճամփա իյնաս։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Այսպե՛ս, ժամե մը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Աղե՛կ. Աստված հետդ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Առողջ մնա իշխանուհին։ (Կծռի, կհամբուրե խոնարհ անոր ձեռքը ու մեջի վարագույրներեն կելլե դուրս):

## 2

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Քիչ մը լուռ. և ետքը հառաչանքով) Է՜, կյանքը որքա՜ն քիչ բան ունի մեզի տալու։

ՊԱՌԱՎԸ— Մի՛ տրտնջար. քիչ ունի թե շատ, ինչ որ ունի քեզի տվեր է։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այդպես կմտածես և դո՞ւն։

ՊԱՌԱՎԸ— Ճշմարտությունը ատ է։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այն ատեն շատ խղճուկ ու աղքատիկ է ինքը կյանքը։

ՊԱՌԱՎԸ— Գո՛ւցե։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ա՛խ, ինչպես տխուր է այսօր սիրտս։

ՊԱՌԱՎԸ— Ամպոտ է օրը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ամպոտ է դուրսը. անձրև է ու թուխպ հոգիիս մեջ։ Բե՛ր ինծի ավետարանս։

ՊԱՌԱՎԸ— (Ոտքի կելլե ու քիչ մը որոնելեն ետքը) Հո՛դ է, թևիդ տակը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Վերցնելով ու բանալով) Հա՛, մոռցեր էի։

## 3

ՆԱԺԻՇՏ ՄԸ— (Սևազգեստ կին մըն է, որ վարագույրը ետ ընելով կխոսի խոնարհ) Վանահայր հայր սուրբն է, կուզե տեսնե իշխանուհին։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հայր սո՞ւրբը։

ՆԱԺԻՇՏԸ— Այո՛, իշխանուհի՛։ Ի՞նչ կհրամայե իշխանուհին։



ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հո՛ս առաջնորդե։ (Գիրքը ձեռքեն կդնե վար):

ՆԱԺԻՇՏԸ— (Դուրս):

ՊԱՌԱՎԸ— Ա՜յ, աղե՛կ եղավ. սիրտդ քիչ մը կբացվի։ Դուն միշտ ուրախ ես, երբ քու եկեղեցիեդ կխոսին։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Բա՛ց վարագույրը։

## 4

Պառավը ետ կքշե սյուներուն մեջի վարագույրը և բռնած ալ կմնա պատկառանքով: Կմտնե վանահայրը ու շիտակ դեպի Իշխանուհին, որ ոտքի կելլե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Աստծու օրհնությունը քու վրադ, իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Եվ քու, հայր սուրբ։ Ի՞նչ լուրեր վանքեն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Աղոթք և օրհնություն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ. եկեղեցի՛ն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Օր-օրի կլրանա ու կդառնա տուն աղոթքի ու նվիրքնասույզ խոհանքի։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ի՞նչպես եղավ աջակողյան նիշը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այնպես, ինչպես որշեցինք անցած օր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ուրեմն երկու սյուներուն ետևը, ուրույն կամարով։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛։ Ո՛չ։ Ինչպե՞ս թե սյուներուն ետևը։ Սյուներուն կո՛ղքը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Սյուներուն ետևը։ Չէ՞ որ... սյունը այսպես .. Եղիսա՛, հատակագիծը տա՛ս։

ՊԱՌԱՎԸ— (Որ քիչ մը հեռուն կեցած էր ձեռքերը կրծքին պատկառանքով. կերթա պատի պահարանեն կբերե ոլորած մագաղաթ մը):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Փռելով մագաղաթը իր փոքրիկ սեղանին վրա) Նստե՛, հա՛յր սուրբ։ Ա՜յ, նայե՛։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ա՛ս քեզի սյուները, աս ալ կո՛ղքը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Իրա՛վ է։ Ինչ կնշանակե, որ այդ կտորը իրականին վրա դեռ չեմ տեսած։ Երևակայելը երբեք ան չէ, չնայելով՝ ինչքան, ինչքա՜ն նայեր եմ այս հատակագծին վրա։ Գիտե՞ս, հաճախ ամբողջ գիշերներով այդ շենքի մասին կմտմտամ. բոլոր անկյունները, բոլոր մանրամասնությունները, ամեն մեկ քարը։ Այնպե՛ս բոլորը մոտ է սրտիս, այնպես կապված է հոգիիս, կարծես ամեն մեկ քարը ես եմ դրեր, ես եմ շիներ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կատակով) Այո՛, իշխանուհի՛, ես կկարծեի, թե շինողը ես եմ, արդյունքը եղավ՝ որ դուն շինեցիր։

ՊԱՐԱՎԸ— Ճշմարի՛տ է. Մարիամ Աստվածածնի այդ տաճարը իմ Մարիամ իշխանուհիիս ձեռքի գործն է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մտածկոտ) Այո՛, դուն շինեցիր, իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, հայր սուրբ, ես չշինեցի այդ եկեղեցին. մե՛նք շինեցինք այդ եկեղեցին. մե՛նք, ես ու դուն։ Միասին էինք խորհեր, միասին էինք ոգևորվեր, միասին էինք կազմեր ու միասին ալ կերպարանավորեր։ Եվ այնպես հյուսված է եղեր այդ բոլորը իրարու, որ այժմ բնավ չգիտեմ՝ ո՞րն է որ ինծմե է ծներ և ո՛րը քեզմե։ Կհիշե՞ս, հա՛յր սուրբ, մեր այն միասին խորհումներուն ժամերը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կհիշե՛մ, իշխանուհի՛. բախտավոր բան է կառուցելը, մանավանդ տաճար մը, ուր քու Աստվածդ է բնակելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Աղվո՛ր ըսիր։ (Երազկոտ) Կյանքիս ամենեն քաղցրր վայրկյաններն են եղած, երբ մենք միասին այս նույն սեղանին երկու կողմը նստած՝ մեր երևակայության մեջ ստեղծեր, կառուցեր ենք այդ շենքը։

ՊԱՐԱՎԸ— Եվ որու ճակտին քանդակվելու է քու անունդ, դարեդար պատմելու բոլորին քու բարեպաշտությունդ ու աստվածասիրությունդ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Թո՛ղ մոր ու դայակի քու այդ սնափառությունդ, Եղիսա՛. ձգե՛ մեզի առանձին ու մի՛ խանգարեր։

ՊԱՐԱՎԸ— (Քրթմնջելով դուրս)։

## 5

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այո՛, կյանքիս ամենաքաղցր վայրկյանները. չեմ քաշվիր կրկնելու, ինչ որ ճշմարիտն է. չեմ ուզեր քաշվիլ։ Ինչո՞ւ աչքդ կձգես գետին. ո՛չ, պետք չէ որ գետին ձգես։ Ես ամբողջ կյանքս շիտակ եմ նայեր ամենուն երեսին և կուզեմ, որ ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը հարգանք ունիմ, շիտակ նային իմ երեսիս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Չեմ հասկնար ինչ կխոսի իշխանուհին։ Ես պատճառ չունիմ ոչ մեկուն առջևը աչքերս գետին ձգելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Բայց ճշմարտությունն ան է, որ ես ու դուն կվախնանք իրարու աչքի մեջ խոր ու շիտակ նայելու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Թո՛ղ, թո՛ղ, մինչև ե՞րբ։ Ալ լեցվեր է բաժակը։ Ինծի համար սաստիկ ծանր է ատիկա ու վիրավորիչ։ Ինչո՞ւ. ի՞նչ հանցանք ենք գործեր։



ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Ոտքի ելլելով) Իշխանուհին թող ինծի ներե. պետք է մեկնիմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, ո՛չ, հա՛յր սուրբ, մի՛ փախչիր. և ի՞նչ օգուտ փախուստը. դուն քու հոգիեդ չես կրնար փախչիլ։ Նստե՛, նստե՛, պետք է, որ խոսիմ։ Ամբողջ տարի մըն է, որ ես հոս եմ, ամբողջ տարի մըն է շրթունքիս է այդ հարցը և որ շարունակ վախցեր եմ տալու. իսկ այդ վախը`խոր կվիրավորե իմ արժանապատվությունս. կարծես երկու մեղավոր ըլլանք դեմ-դեմի կեցած, որոնք ստիպված են ամոթով իրենց հոգին ծածկելու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ես չեմ հասկնար ինչ ըսել կուզե իշխանուհին։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Չես հասկնա՞ր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսածներեդ չհասկցա ես ոչինչ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ոչի՞նչ, Հովհաննե՛ս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խայթվածի նման կցնցվի) Իշխանուհի՛... (Ու ծանր կելլե ոտքի)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Նույնպես ոտքի ելլելով) Մի՞տքդ է արքունի ամառանոցը, մեր փոքրիկ ավազանի եզերքին, վերջալույսի այն իրիկունը, ասկե ուղիղ քսանհինգ տարի առաջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Եվ այդ քսանհինգ տարիներուն ետևեն դեռ կհիշե իշխանուհին այն քանի մը հասարակ խոսքերը, որ փոխանակեր ենք հոն իրարու հետ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հիշեր եմ ես մի՛շտ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Երախտապարտ եմ, իշխանուհի։ Մե՛ծ պատիվ մը, որ ես բնավ չեմ հանդգնած երևակայելու։ (Քիչ մը լուռ. վերջը հետզհետե գլուխը բարձրացնելով) Միայն... միայն այն Հովհաննեսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մոռցեր իշխանուհին, այն Հովհաննեսը, ան մեռած է վաղուց։ Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթե ծերունի մը, հեռու արքունիքեն ու ամենքեն, որ եկեր է քեզի հետ կառուցվող շենքի ծախքերու մասին խոսելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հովհաննեսը մեռեր է գուցե քեզի համար, չգիտե՛մ, բայց ո՛չ ինծի։ Ան միշտ կենդանի է եղեր հոգիիս մեջ և կենդանի ալ կմնա։ Անոր պատկերն է, վանահա՛յր, միակ պայծառ կետը իմ ամբողջ կյանքիս մեջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բայց ատ ըսողը կին մըն է, որ ամուսին է ունեցեր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տեսակ մը ընդհատելով) Եվ խիստ արժանավոր ամուսին մը, որ ես միշտ հարգեր եմ խորապես։ Եվ խորապես ալ տանջվեր, որ հարգանքե տարբեր բան մը անոր տալու անկարող եմ եղեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Բայց այդ ըսածդ կին մըն է, որ զավակներ է ունեցեր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Խիստ) Ես կատարեր եմ պարտքս։ Եվ շատ ծանր է եղեր սրտիս, որ պարտավորությունես ավելի ոչինչ չեմ կրցեր տալ զավակներուս։ Ունեցեր եմ ամեն ինչ և ամեն ունեցածս տվեր եմ իմ հարազատներուս, բայց բախտավորություն ոչ մեկուն չեմ տվեր և ոչ մեկեն ալ չեմ ստացեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կեցած է լուռ և ունքերը կիտած)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Լսե՛, պետք է ըսեմ բոլորը, որ մեր մեջեն վերնա այս անախորժ լարումը մեկ անգամ ընդմիշտ։ Նայե՛, ես պառավ կին մըն եմ, և դուն ինքդ ըսիր քիչ մը առաջ, որ ծերունի ես արդեն. վախնալու ոչին չունինք, քաշվելու ալ ոչինչ չունինք, քանի որ մաքուր է մեր խիղճը։ Այս քողարկումը, զգացումներու այս խեղաթյուրումը վայել չէ մեր դեմքին, ո՛չ քու և ո՛չ ալ իմ։ Լսե՛, ինչ որ շրթունքս երբեք չէ արտասաներ և ինչ որ սակայն լեցուցեր է իմ ամբողջ էությունս։ Իմ կյանքիս գորշ երկնքին դուն ես եղեր ինծի համար լույսի աստղը, ապրելու իմաստը, առանց այդ լույսին, առանց այդ մխիթարության, ես չգիտեմ, ինչո՞ւ էի ապրելու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Ձեռքովը ճակատը սեղմած) Հերի՛ք է, հերի՛ք է...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Քու պատկերդ է եղեր իմ դեմս մենությանս վայրկյաններուն։ Ինքս ալ աղեկ մը չգիտեմ՝ այն ջերմ աղոթքները, որ սրտես դուրս են հորդեր, ավելի խաչյալի նկարի՞ն են ուղղված եղեր, թե՞ քու պատկերիդ։ Իրա՛վ է, ես պաշտեր եմ քու պատկերդ իմ Աստծու հետ միասին։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Եվ չե՞ս վախցեր Աստուծմե։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Աստվա՞ծ։ (Բարձրացնելով սեղանեն ավետարանը) Աստված սե՛ր է, վարդապե՛տ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մտածկոտ գլուխը շարժելով) Այդպե՛ս... (Հանկարծ) Իսկ հիմա՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հիմա՞։ Հիմա ալ, տե՛ս, այս լուսամուտը, որ քու կղզիիդ կնայի ու քու լուսամուտիդ, այն քու փոքրիկ լուսամուտիդ, ուր մինչև կեսգիշեր անմար է ճրագը։ Դուն երևի կկարդաս ու կաղոթես. ես ալ հոսկե կաշխատիմ քու մտքերդ կարդամ ու քու աղոթքներդ։ Միթե այս բոլորը հոգիդ չէ՞ր գիտեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կտրուկ) Ո՛չ, բնա՛վ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Իրա՞վ։ Միթե քու հոգիդ նույնպես լիքը չէ՞ եղեր ինծմով, ինչպես իմ հոգիս քեզմով։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է)։



ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Պատասխա՛ն տուր. ուրախ չէի՞ր. միթե հոգիդ ուրախ չէ՞ր, երբ հոս այս մենության մեջ դեմ-դեմի նստած կխոսեինք ժամերով ու կծրագրեինք։ Պատասխա՛ն տուր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անհանգիստ) Չգիտե՛մ. ես ոչի՛նչ չգիտեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Չգիտես. ես գիտեմ, միշտ ալ վստահ գիտցեր եմ, որ կապրիմ միշտ հոգիիդ մեջ, թեև տարիներու այս երկար շարքին մեջ հազիվ ութը-տասը անգամ պատահած ըլլանք իրարու մինչև հոս գալս. և շատ ավելի նվազ մեկ-երկու խոսք փոխանակած ըլլանք իրարու. միշտ տափակ, միշտ անգույն ու միշտ կողմնակի բառերը։ Ըսե՛, ճիշտ չէ՞, ինչ որ կըսեմ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Թո՛ղ, իշխանուհի՛, հին, անցած-գացած օրեր. ի՞նչ իմաստ քրքրելը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հայր-սո՛ւրբ, եղիր շիտակ ու պատասխան տուր։ Այսօր պետք է մաքրվին հին հաշիվները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ կուզես, կի՛ն, ի՞նչ կուզես դուն ինծմե։ Ամբողջ կյանքիս կեսը տառապանք տվիր ինծի, տառապանք ու դառնություն, ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտասարդությունս, հիմա ալ մոխի՞րը քրքրել կուզես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Իմ խե՛ղճ Հովհաննես...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Արդեն կյանքը տառապանքե զատ ուրիշ ի՞նչ է տվեր ինծի... և՛ քեզմե առաջ, և՛ քեզմե ետքը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ— Ա՜խ, ես զգացեր էի...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Վերջ տանք։ Ի՞նչ միտք ունի այդ հին ու մարած մոխիրը խառնելը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Մարա՞ծ... մոխի՞ր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, այդ անողոք հուշերն ալ մյուս բոլոր աշխարհային ցավերուս հետ սրտես դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վերարկուն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Սրտեդ դուրս քամեցի՞ր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ կայծերը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, չմարեցան այդ կայծերը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, կըսեմ քեզի. չմարեցան այդ կայծերը։ Աշխատեցար, որ մարես. աշխատեցար, որ խաբես քեզի. օրոր ըսիր հոգիիդ ու համոզեցիր քեզի, թե մարեր ես. բայց չմարեցիր. չէիր կրնար։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խիստ) Իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ցած ձայնով) Եթե մարեցիր, հապա ի՞նչ է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մե՛ր եկեղեցին։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Սարսափած ետ քաշվելով) *Լռե՛, լռե՛, իշխանուհի՛։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ճշմարտությո՛ւնը, վարդապե՛տ։ Մենք այդ եկեղեցին չենք շինած քու բարձրյալ Աստծուդ համար, ինչպես որ միշտ կըրկըներ ես. մի՛ խաբեր քեզի, այդ եկեղեցին շիներ ենք մենք մեզի համար, մեր սիրու Աստծուն համար։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոռտակված) *Մարիա՛մ...*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այո՛, այդ քու եկեղեցիդ նվիրված է ո՛չ թե Մարիամ Աստվածածնին, այլ նվիրված է քու Մարիամ իշխանուհիիդ։ Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կեցած է լուռ ու գլխահակ):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է ու գլխահակ):

## 6

Անկյունը ճանկարծ կերևա ճերմակավորը:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛, ճիշտ չէ՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կցնցվի, կուղղվի ու ճայացքը ճերմակավորին ճառած կքարանա):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ի՞նչ եղավ քեզի։*

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛, որո՞ւն է նվիրված այն եկեղեցին, այն քու նո՞ր շինած եկեղեցին։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է):

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ըսե՛. պե՛տք է որ ըսես, պե՛տք է խոստովանիս։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոռտակված) *Այո՛։ Ճի՛շտ է։ Այդ... եկեղեցին նվիրված է... հի՛ն աստվածներուն։*

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— *Ի՛մ աստվածներուս։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Քո՛ւ աստվածներուդ։*

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ— (Կաներևութանա):

## 7

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Ճի՛շտ է։ Ես ողորմելի ու մեծամիտ մարդ մըն եմ. գոցեր եմ աչքերս ու կկարծեմ, թե կթռչիմ, պարզեր եմ թևերս գոռոզ ճե՞ք ու կարծեր եմ, թե հասա երկնքին։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Մի՛ խոսիր այդպես։ Մեր սրտերուն այդ կապը, մեր այդ ամբողջ սերը եղեր է սուրբ, ջերմ ու ազնիվ, ինչպես ջերմեռանդ*



*աղոթքի մը մրմունջը, ինչպես ընտիր կնդրուկին բույրը, որ դեպի երկինք կմխա։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Աչքերը միշտ ճառած դեպի ճերմակավորին երեցած կողմը) *Ո՛չ, ո՛չ։ Ճշմարիտ է այս բոլորը, բայց դեռ մի՛ հաղթանակեր. կանուխ է դեռ. դեռ կտեսնվինք...* (Ու արագ դուրս. առանց իշխանուհիին կողմը նայելու):

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Շվար ու վախով) *Հովհաննե՛ս, Հովհաննե՛ս, հայր սո՛ւրբ...* (Թուլցած կիյնա իր աթոռին)

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՎԱՆԱՀՈՐ ԽՈՒՑԸ

Ճակատը քառակուսի ցած լուսամուտ մը՝ ճաստատակ տախտակե փեղկով: Լուսամուտին մեկ կողմը քանի մը շարք դարակ՝ լիքը ամեն մեծության ու ձևի ձեռագիրներով ու մագաղաթներով: Գրադարանին ու լուսամուտին առջևը փայտե սեղան մը՝ վրան ճորեն գրքեր ու այլ մանր իրեր: Դուռը կողմնակի, գրասեղանին դեմը:

## 1

Բաց լուսամուտեն արևի առատ պայծառ ոսկի շերտ մը ինկած է սենյակի ճատակին ու սեղանին: Սեղանին առջևը լույսի այդ ողողումին տակ նստած է վանաճայրը՝ երկու արմունկը սեղանին ու գլուխը թաղած ափերուն մեջ:

Քիչ մը ատեն լուռ է: Կամաց կբացվի դուռը ու կմտնե Վարպետը՝ աշխատավորի փոշոտ ու աղտոտ ճագուստներով: Քայլ մը կընե դեպի սեղանը ու կկենա:

ՎԱՐԴԵՏԸ— *Ինծի կանչեր էիր, վանահա՛յր։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անշարժ է):

ՎԱՐԴԵՏԸ— *Հա՛յր-սուրբ, կանչեր էիր ինծի։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մանր կբարձրացնե գլուխը ու կնայի դիմացինին) *Հա՛։* (Քիչ մը լուռ) *Դե՛, ըսե՛ նայիմ, հիմա ի՞նչ պիտի ընենք։*

ՎԱՐԴԵՏԸ— *Ի՞նչը, հա՛յր-սուրբ։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Մենք հիմա ի՞նչ պիտի ընենք այդ շենքը։*

ՎԱՐՊԵՏԸ— Եկեղեցի՞ն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Գլուխը կշարժէ դրական)։

ՎԱՐՊԵՏԸ— Այսինքն ի՞նչպես։ Արդեն գիտես, հա՛յր սուրբ, որ մինչ Աստվածածնի տունը ավարտած կըլլա գմբեթը, մնացածը երկրորդական բաներ են։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մտածկոտ) Մինչև... Աստվածածին։

ՎԱՐՊԵՏԸ— Ի՞նչն է, որ քեզի հոգ կպատճառե, վանահա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ուրեմն... մինչև Աստվածածին կըլլա ավարտած։ Հը՛մ. այդպես հաստատ գիտե՞ս։

ՎԱՐՊԵՏԸ— Ես իմ խոսքիս տերն եմ, հա՛յր սուրբ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Տաք ու կտրուկ) Ե՛ս ալ, ե՛ս ալ իմ խոսքիս տերն եմ, վարպե՛տ։

ՎԱՐՊԵՏԸ— Ուրե՛մն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Քանի՞ տարի է, որ դուն վարպետ ես։

ՎԱՐՊԵՏԸ— Ե՞ս, ի՞նչ գիտնամ, քսան մը կըլլա։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ուրեմն քսան տարի է, որ կշինես ու կշինես. իսկ երբեք պատահե՞ր է, որ շինելեդ ետքը քանդես։

ՎԱՐՊԵՏԸ— Քանդե՞մ, իմ շինա՞ծս. ինչո՞ւ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ինչո՞ւ այդպես զարմացար։ Չէ՞ որ շինելն է դըժվարը, քանդելը դյուրին է միշտ։

ՎԱՐՊԵՏԸ— Այո՛, ուրիշի շինածը։ Իր շինածը քանդելը շատ դըժվար է, հա՛յր սուրբ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հայացքը լուսամուտեն դուրս նետած ու երազկոտ) Դժվար է, դժվար, ի՛հարկե՛. երբ մանավանդ կապված է հին հիշողություններու, հույզերու, վշտերու, երբ կապված է անցյալիդ, երիտասարդ օրերուդ, չէ՞, վարպե՛տ։ Դժվար է, իհարկե։ (Լուռ ու ակնապիշ կմնա քիչ մը՝ աչքերը լուսամուտեն դուրս, և հանկարծ գլուխը շրջելով՝ խիստ ու կտրուկ) Փակե՛ սա փեղկը։

ՎԱՐՊԵՏԸ— Փակե՞մ, լուսամո՞ւտը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, այո՛, լուսամո՛ւտը։

ՎԱՐՊԵՏԸ— Բայց ի՜նչ ախորժելի արև է, ինչպե՜ս ուրախ ու տաք։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ու փակես պիտի ճիշտ ատոր համար։

ՎԱՐՊԵՏԸ— Բայց...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Արև՜... Մեզի անպատճառ պետք է արև, ուրախ ու տաք արև։ Մենք դեռ արևապաշտներ ենք. արև՜... Չենք կրնար ապրիլ առանց ախորժելի արևի, առանց ուրախ ու տաք արևի։ Գոնե լուսամուտ մը, գոնե ճեղք մը, գոնե գողունի ներս սպրդած ճառագայթ մը... (Հանկարծ բռունցքը զարնելով սեղանին) Ո՛չ։ Գոցե՛, կըսեմ քեզի, ի՞նչ ես քարացեր։



ՎԱՐՊԵՏԸ— (Վարանոտ կերթա կգոցե փեղկը)։

Սենյակը գրեթե մութ է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այդպե՛ս։ Պետք է խցվի այդ անցքը, ուրկե արևը կնայի ներս, ուրկե ցամաքը կնայի ներս, ուրկե աշխարհքը կնայի ներս։

ՎԱՐՊԵՏԸ— Բայց բնակարանդ դարձավ խավար ու մռայլ, ինչպես դամբարան։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսե՝ ինչպես եկեղեցի։

ՎԱՐՊԵՏԸ— (Ուսերը կցնցե)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ինչո՞ւ կվախնաս խավարեն։ Խավարը խավար է կարճատես աչքերուն։ Բոլոր մեծ հղացումները խավարի ծոցն են գոյացեր, բոլոր մեծ խորությունները միայն խավարի մեջ կարելի է տեսնել։ Եվ այդ ձեր պաշտած լույսը միթե ծնունդը չէ՞ խավարի. ծնունդ մը ու մահկանացու մը։ Խավարն է միայն, որ կա ու կմնա անմահ ու հավիտյան։ (Ելած է ոտքի, կխոսի մտածելով)։

## 2

Վանահայրը լռած է ու մտասույզ. լուռ է նաև Վարպետը. կմտնե Աբեղան ու կկենա դռան քովը լուռ ու խոնարհ։

ՎԱՐՊԵՏԸ— Վանահայրը նոր հրաման ունի՞ ինծի տալու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛. միայն ո՛չ այս վայրկյանիս. նախ ուրիշ հաշիվ ունիմ մաքրելու։ Գնա առայժմ։ Շնորհակալ եմ քեզմե. Տերը քեզի հետ (Դառնալով Աբեղային) Դո՞ւն ինչու ես եկեր, աբեղա՛։

## 3

ԱԲԵՂԱՆ— (Նախ կսպասե մինչև Վարպետի հեռանալը. վերջը գլուխը ավելի խոնարհելով) Քեզի խոսելիք ունիմ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամփան, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Գիտե՛մ, գիտե՛մ, որ ալ փակ է ինծի համար քու հոգիիդ ճամփան։ Կհասկնամ, որ ասկե ետքը ես քեզի համար անարգ ու անարժան արարած մըն եմ, իսկ դուն ալ ինծի համար... (Կլռե)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսե՛, մի՛ քաշվիր։

ԱԲԵՂԱՆ— Կըսեի, եթե գիտնայի։ Ինքս ալ չգիտեմ. կզգամ միայն, որ մենք իրարու անհաշտ թշնամի ենք։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Թշնամի՞... Եվ հիմա ատիկա ըսելու համար է, որ եկեր ես ինծի։

ԱԲԵՂԱՆ— Ո՛չ։ Ես եկեր եմ ուրիշ բան մը հայտնելու։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Խոսե՛։

ԱԲԵՂԱՆ— Դուն ըսեր ես, որ հո՛ս, այս կղզին երբեմն ուրիշ աստվածներ են ապրեր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Իր ցնցումը զսպելով) Ծ՞երը։

ԱԲԵՂԱՆ— Ըսեր ես՝ շա՛տ-շա՛տ տարիներ մեզմե առաջ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ծ՞երը։

ԱԲԵՂԱՆ— Ըսեր ես՝ հիմա մեռած են բոլորը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է):

ԱԲԵՂԱՆ— Մեռա՛ծ, վաղո՛ւց մեռած։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Լուռ է):

ԱԲԵՂԱՆ— Ահա՛ եկեր եմ քեզի ըսելու, որ սխալ ես, այդ աստվածները մեռած չե՛ն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անհաբեկ ու ապշած): Իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն ատիկա ուրկե գիտես։

ԱԲԵՂԱՆ— (Ցած ու խորհրդավոր) Ես... ես տեսա՛։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Տեսա՞ր, դո՞ւն, իմ մե՞ջս. ինչպե՞ս տեսար։

ԱԲԵՂԱՆ— Քո՛ւ մե՞ջդ, ինչպես թե՝ քու մեջդ։ Ո՛չ. ես տեսա հո՛ն... դուրսը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՞ւր։

ԱԲԵՂԱՆ— Հո՛ն, հին ճգնարաններուն շուրջը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ տեսար հոն, ճգնարաններուն շուրջը։

ԱԲԵՂԱՆ— Տեսա՛ այն մյուս... հին աստվածներուն արարածները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Արարա՞ծ...

ԱԲԵՂԱՆ— Կսխալիս, վանահա՛յր։ Քեզի կըսեմ՝ հին աստվածները կապրին. ու հին աստվածներուն հետն ալ իրենց հին կյանքը։ Երբ մենք հո՛ս, մեր մութ ու նեղ եկեղեցիներուն մեջ գետնատարած կապաշխարենք, անոնք հո՛ն կապրին ազա՛տ. կապրին տաք ու պայծառ արևին տակ, կապույտ ծովուն վրա, ծփուն օդերուն մեջ, ավազուտ ափին. կապրին իրենց զվարթ ու եռուն կյանքը, լի, շարժուն ու հարափոփոխ։ Մենք կաղոթենք, անոնք կապրին։ Այս ծովը, այս սարերը, այս կղզին. անոնցն է այս բոլորը, մե՛րն է միայն այս խուցերն ու եկեղեցին։



ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՛չ։ Մերը չէ նաև ո՛չ այս խուցերը իրենց կեղծավոր լուսամուտներով, ո՛չ ալ եկեղեցին։ Անո՛նցն է, բոլո՛րն ալ անոնցն է։

ԱԲԵՂԱՆ— (Նախ ապշած, ետքը վախով) Հա՛յր, ատիկա ըսողը դո՞ւն ես։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Մեր Աստվածը հոս ոչի՛նչ չունի, ոչի՛նչ։

ԱԲԵՂԱՆ— Հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Անոնցն է այս բոլորը։ (Մոտենալով Աբեղային ու ցած) Ու քանդվի՛ պիտի այս բոլորը, աբեղա՛։ Մինչև Աստվածածին հոս քար մը քարի վրա չի պիտի մնա ո՛չ այս խուցերեն, ո՛չ եկեղեցիեն։

ԱԲԵՂԱՆ— Հա՛յր, կծաղրե՞ս ինծի։ Գեշ կատակ է ըրածդ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ծաղր մըն է եղեր իմ ըրածներս մինչև այսօր ու գեշ կատակ մըն է եղեր ըրածներս մինչև հիմա։ Բայց ասկե ետքը ալ լուրջ է։ Փոխվի պիտի այս կղզիին վրա ամեն բան։ Ոչի՛նչ, ոչի՛նչ չի պիտի մնա հոս, ո՛չ արդի շենքերեն, ո՛չ արդի հոգիներեն։

ԱԲԵՂԱՆ— Իսկ հին աստվածնե՞րը, հա՛յր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Պնդե՛ գոտիդ, որդի՛ս, կանչե՛ կամքդ ու դո՛ւրս վանե մեջեդ բոլոր այդ հին աստվածները։ Քանդե՛, քանդե՛. եթե պետք ըլլա, քանդե՛ ամբողջ հոգիդ։ Քու հոգիդ ազնիվ է, արժե այդ աշխատանքը։ (Դուրս):

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՄԵՀՅԱՆԻ ՄԸ ԳԱՎԻԹԸ

Երկու կողմը երկու շարք բարձր ու հաղթ սյուներ: Ճակատը մեջտեղը լայն ու մեծ կամար մը, որ ծածկված է վարագույրով: Կամարին երկու կողմերը նույնպես սյուներ են, որոնց ետևը քիչ մը տարածություն ու քարե պատ: Կամարի մութ-վարդագույն վարագույրին վրա ոսկենկար ճաճանչավոր արև մը:

Վարագույրին առջևը տեսարանին խորքը դրված է քարե փոքրիկ բագին մը, որ կմխա: Բագնի աջ ու ձախ կողմեն երկար քարե սեղաններ քիչ մը ծուռ դիրքով ու քարե նստարաններ. սեղանները մեջտեղի բագնին հետ միասին պայտ ձևը կկազմեն:

Սյուներուն առջևը բարձր աշտանակներ ու առկախ ջահեր: Բագինը, սյուները և աշտանակներուն մեջքը բոլորն ալ զարդարված է ծաղիկներով ու կանաչի շղթայով:

## 1

Վառ է միայն երկու ջահ բազնիքին երկու կողմեն, խորքը. այնպես որ աճապին բարձր շենքը դողդողուն կես-մութի մը մեջ է։

ՍԵԴԱ— (Ձախ կողմի առջևի սյուներուն ետևեն ետ-ետ ներս կումտենե, միշտ նույն հագուստով, թեքված քիչ մը դեպի առաջ ու երկու ձեռքը սրտանց կանչելով) Եկո՛ւր, երկո՛ւր...

ԱԲԵՂԱՆ— (Երևնալով) Սեդա՛, Սեդա՛...

ՍԵԴԱ— Եկո՛ւր։

ԱԲԵՂԱՆ— Տո՛ւր ինծի իմ հանգիստս, տո՛ւր ինծի իմ աղոթքներս. տո՛ւր իմ վստահությունս բրածիս, կյանքիս, ուժիս։ Ամեն, ամեն ինչ կ'իլի շուրջս։

ՍԵԴԱ— (Միշտ ետ-ետ դեպի աջ երթալով) Եկո՛ւր, եկո՛ւր։

ԱԲԵՂԱՆ— Ալ չկա ինծի հանգիստ ո՛չ խուցիս մենության մեջ, ո՛չ գուրսը, ո՛չ ալ եկեղեցիին կամարներուն տակը։ Սաղմոսներուն մեջեն քու ձայնդ կլսեմ, մութ կամարներուն տակեն քու աչքերդ ինծի կժըպտին, խունկի հոտին մեջեն քու թաց մազերուդ բույրը կզգամ... Ինչո՞ւ, ինչո՞ւ կտանջես ինծի։

ՍԵԴԱ— Եկո՛ւր, եկո՛ւր։

ԱԲԵՂԱՆ— Ե՛տ տուր ինծի իմ հպարտությունս, իմ մեծամիտ խորհրդածություններս. ե՛տ տուր ինծի իմ հավատքս, իմ Աստվածս. տո՛ւր, ե՛տ տուր ինծի իմ Աստվածս...

ՍԵԴԱ— Եկո՛ւր... եկո՛ւր... (Ու կքաշվի, կաներևութանա աջ կողմի սյուներուն ետին):

## 2

ԱԲԵՂԱՆ— Գնա՛ց նորեն։ Նորե՛ն մինակ... (Շենքի մեջտեղն է. կկենա, գլուխը կբարձրացնե, կնայի չորս դին ու զարմանքով) Աս ո՞ւր եմ ես։ Աս ո՞ւր բերավ ինծի։

Դուրսեն կլսվի հեռավոր աղմուկ ու ձայներ։ Շտապ ներս կմտնե ծերունի պաշտոնյա մը՝ ձեռքին լույս ու արագ կվառե ջահերն ու մոմերը։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ մոտենալով) Ծերունի՛, ի՞նչ շենք է աս. ո՞ւր եմ ես։

ԾԵՐՈՒՆԻՆ— Վա՜յ, վախցա, արևը վկա։ Ո՞վ ես դուն։



ԱԲԵՂԱՆ— Եկեղեցի՞ է, ի՞նչ բան է սա։

ԾԵՐՈՒՆԻՆ— Եկեղեցի՞, ի՜նչ հիմար լեզու կխոսիս։ Զարդվածներու ու խաչվածներու տեղը չէ հոս, հանգիստ եղիր։

Դուրսի աղմուկը հետզհետե կմոտենա։

ԱԲԵՂԱՆ— Ի՜նչ ուրախ է հոս, ի՜նչ տոնական։

ԾԵՐՈՒՆԻՆ— Անշո՛ւշտ, կյանքը ուրախության համար է տված մեզի։

ԱԲԵՂԱՆ— Եվ ատիկա ըսողը ալևոր ծերունի մըն է։

ԾԵՐՈՒՆԻՆ— Այո՛, ծերանալը ծանր բան է, բայց հոգիս առույգ է դեռ ու սիրտս երիտասարդ. դեռ կրնամ վայելել կյանքը և վայելեմ պիտի, արևս վկա, քանի շունչ կա շրթունքիս։ Իհարկե՜, ըլլալ քեզի նման երիտասարդ, ա՜, մեծ բախտ է։ Ափսո՜ս որ ետ չեն դառնար այդ խեթ ու անզուսպ օրերը։ Ըհը՛, եկա՛ն (Կերթա դեպի աղմուկը)

ԱԲԵՂԱՆ— (Կքաշվի ետ-ետ ու կծածկվի սյուներու ստվերին ետևը):

## 3

Ձախ կողմի խորքի սյուներուն մեջեն ներս կմտնեն Իշխանը իր ընկերներուն հետ՝ երեսուն հոգիի չափ. այդչափ մըն ալ մենենական աղջիկներ. այլև խումբ մը զինակիր պատանիներ՝ ջահեր բռնած։ Շենքը կողողվի լույսով։ Այրերը սաղավարտ ունին, վահան, մեջքերնուն սուր։ Կանայք հագված են թեթև ու սպիտակ, մազերնուն մեջ իբրև զարդ խրած ունին աստղ մը։

Ամենեն առաջ ներս կմտնեն քանի մը ջահակիր ու խումբ մը աղջիկներ ուրախ ու ոգևորված։ Ետքը Իշխանը՝ շրջապատված իր մեծերեն։ Անոնց ետևեն ալ՝ զինվորականներն ու աղջիկները խառն, ուրախության բացականչություններով. ջահակիրներ քովերեն ու ետևեն։

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ— (Սյուներեն ներս ոտք դնելնուն պես) Կեցցե՜ն հաղթողները... Կեցցե՜ն քաջերը...

ԲՈԼՈՐ ԿԱՆԱՅՔ— Կեցցե՜ն, կեցցե՜ն հաղթողները։

Իշխանը կերթա կանգ կառնե բազնիքին առջևը, բոլորը կըխնին անոր ետևը։ Աջ կողմի խորքի սյուներուն մեջեն դուրս կուգա քուրմ մը՝ ներմակներ հագած. ուրիշ երկու քուրմ աջեն ու ձախեն։

ՔՈՒՐՄԸ— (Գալով իշխանին ընդառաջ) Բարի գալուստ իշխանին։ Բարի գալուստ մարտնչողներու։

ԻՇԽԱՆԸ— Եկեր ենք մեր զենքերը դնելու Քաջն Վահագնի բագնին ոտքը ու իր սուրբ ծագումը երկրպագելու։

ՔՈՒՐՄԸ— Իր սուրբ ծագումը ձեզի զորավիգ, ձեր թևերը միշտ ամուր, ձեր սուրերը միշտ հատու, ձեր վահանը անխորտակ։ Լույս ու արև Վահագնի օրհնությունը ձեզի հետ, դո՛ւք, որ հաղթողներն եք կյանքի կռվին մեջ. ձերն ըլլա միշտ հաջողությունն ու հաղթանակը։

ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Հաջողությունը մեզի հետ. հաջողությունն ու հաղթանակը։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— Քաջն Վահագնի օրհնությունը ձեզի հետ։

ՔՈՒՐՄԸ— Դեռ բավական ժամանակ կա մինչև մեր լույս Տիրոջ ծնունդը, իշխա՛ն։ Նստեցե՛ք ու հանգստացե՛ք։ Նստեցե՛ք Մեծն Վահագնի ու Մեծն Աստղկան սեղանը։ Նստեցե՛ք ու վայլեցե՛ք, դո՛ւք, որ կռվողներն եք կյանքի մեծ կռվին մեջ, կռվողներն ու հաղթողները. ձե՛րն է հաղթությունը, ձե՛րն է վայելքը։

ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Մե՛րն է հաղթությունը, մե՛րն է վայելքը։

ՔՈՒՐՄԸ— Բացե՛ք, աղջիկնե՛ր, Տիրոջ սեղանը, բացե՛ք Վահագնի ու Աստղկան սեղանը։ Բերե՛ք գինի անապական և ուրախություն, բերե՛ք ձեր գեղեցկությունն ու ձեր նազանքը. բերե՛ք, մինչև արժանանանք երկրպագելու լուսածին Վահագնին ու փրփրածին Աստղկան։ Բացե՛ք, աղջիկնե՛ր, վայելքի սեղանը։ (Իր երկու ընկերներուն հետ կելլե դուրս):

4

Իշխանն ու իր զենընկերները կհանեն սաղավարտնին ու վահանները, կուտան զինակիրներուն, որոնք կառնեն ու սյուներուն մեջեն կտանին դուրս: Աղջիկներուն մեկ մասը կվազե ձախ սյուներեն դուրս, կբերեն ծաղիկներ, առատ շաղ կուտան քարե սեղանին, կբերեն սեղանի բազմանյութ աշտանակներ և գինիով լեցուն արծաթե ավազաններ. կբերեն ոսկի ու արծաթ թասեր. բաժակներ և եղջյուրե գավաթներ։ Զինակիրներ

Այդ պատրաստության միջոցին է, որ կխոսվի:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— (Առաջ գալով) Բայց կռիվ էր, տա՛ք կռիվ։

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— Թող անպակաս ըլլա կյանքեն սուրբ կռիվը։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Սարսափելի չարդ կերան։

ՈՒՐԻՇ ՄԸ— (Կատակով) Կմեղքնա՞ս. թող խնայեի՛ր։

ԻՇԽԱՆԸ— Ան ո՞վ է, որ խնայելու մասին կխոսի։ Երբե՛ք, որդինե՛րս. կյանքի կռվին մեջ չխնայեք երբե՛ք և ո՛չ ոքի։ Խնայելը թուլու-



թյուն է, մեղքնալը պարտություն։ Զարկե՛ք, ով ձեր դեմն է, ով ձեր ճամփան կգոցե։ Ով որ քեզի կարգիլե՝ քու թշնամիդ է։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Զարկե՛ք, հաղթողը մենք ենք։

ՈՒՐԻՇ ՄԸ— Ի՜նչ լավ է հաղթող ըլլալը։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Հաղթող ըլլալ ու կռվեն դառնալ։

ԻՇԽԱՆԸ— (Երթալով սեղանին գլուխը) Դե՜, հիմա եկե՛ք նստինք Տիրոջ սեղանը. արդար հատուցում մեր դաժան կռվին։

Աղջիկ ու զորական խառն կնստին: Աղջիկներեն շատերը կմնան ոտքի. կըմոտենան ու կծառայեն մեկուն-մյուսին, մեկ-երկուքը կերթան կուգան: Զինակիրները կշարվին իրենց տեղերուն ետևը ու կարծանանան:

Բազմության կեսը նստած է արդեն, կեսը դեռ ոտքի, որ կխոսվի:

ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— (Բաժակը վերցնելով) Կեցցե՜ կռիվը։

ԿՈՂՔԻ ԱՂՋԻԿԸ— Կեցցե՜ կռվողը։

ԴԵՄԻ ԶՈՐԱԿԱՆԸ— Կեցցե՜ գեղեցկությունը։

ՈՒՐԻՇ ՄԸ— Կեցցե՜ սերը։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— Կռիվը կյանքն է աշխարհի։

ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ— Սերը վայելքն է աշխարհի։

ԻՇԽԱՆԸ— (Ծիծաղելով) Կեցե՛ք, կեցե՛ք. մի՛ շտապեք. է՛յ, դո՛ւք, կռի՛վ, է՛յ, դո՛ւք, սե՛ր։ Մի՛ բռնկիք այդպես շուտ։ Նստեցեք հանգիստ. հպատակվինք հին կարգին։ Թասերը պատրա՛ստ, մեր մեծ Աստծուն ձոն եմ ձոնելու։

Աղջիկները գինի կլեցնեն թասերը մեջտեղի գինիի ավազաններեն: Լուռ լռություն:

ԻՇԽԱՆԸ —(Վերցնելով գինիի մեծ եղջյուր մը՝ կերթա կկենա բագնին առջևը, դեմքը դեպի վարագույրը դարձուցած ու գինին բարձր պահած) Քեզի՛, ով մեծդ Աստված, Վահագն արի, դուն արևը աշխարհի, դուն կյանքն ու աշխույժ, դուն կռիվ և ուժ, դուն լույս ու զտող, ազնիվը զատող, փառքը ազատող, դուն, որ հաղթեր ես վարի, խավարի, ամեն մռայլի, այլև երկնքին, սև ամպ ու թուխպին, դևին, վիշապին, աշխարհի ափին, քեզի՜, այգածին, ճառագայթածին, քեզի կձոնեմ այս վայելքի եղջյուրը՝ լիքը ազնիվ արբեցնող գինիով, դո՛ւն, որ ապրելու ու կռվելու արբեցումը կուտաս մեզի։ Տե՛ր, ընդունե՜ մեր ձոնը։ (Մեկ-երկու կաթիլ կթափե կրակին. ուժեղ ու պայծառ բոց):

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ— Ընդունվա՛ծ է… ընդունվա՛ծ է… ընդունվա՛ծ է…

ԻՇԽԱՆԸ— (Դառնալով իր տեղը) *Հաղթողի ձոնը հաղթողի բագնին վրա մի՛շտ է ընդունված։ Խմե՛նք։ Կեցցե՛ կյանքն ու իր կռիվը։*

ԲՈԼՈՐԸ— (Աղմուկով ու իրարանցումով, նստած, կեցած, թասերը իրարու բախելով) *Կեցցե՛ կյանքն ու իր կռիվը։*

Կխմեն ու կնստին. լռություն:

5

ԱԲԵՂԱՆ— (Դողդոջուն քայլերով առաջ կուգա, ամչկոտ վարանքով հայացքը գետին, ձեռքը առաջ մեկնած) *Տվե՛ք թաս մըն ալ ինծի։ Ես ալ կուզե՛մ։*

Ընդհանուր զարմանք ու խոր լռություն:

ԻՇԽԱՆԸ— *Դո՞ւն հոս ինչ գործ ունիս, սևազգե՛ստ։*

ԱԲԵՂԱՆ— *Տո՛ւր թաս մըն ալ ինծի. ես ալ կուզե՛մ։*

ԻՇԽԱՆԸ— *Այս եղջյուրեն խմել ուզողը կռվեն պետք է, որ գա։*

ԱԲԵՂԱՆ— (Աղաչավոր) *Մե՛կ թաս մը միայն, իշխան, ի՞նչ մեծ բան է որ։ Անգամ մը միայն, մեկ ո՛ւմպ մը միայն քու այդ կռվի ու վայելքի եղջյուրեդ։*

ԻՇԽԱՆԸ— (Արհամարհոտ) *Տիրոջ սեղանին վրա, ա՛յ թշվառ, ոչինչ չի ստացվիր աղաչանքով, գնա՛ մուրացիկներուն սեղանը։*

ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— (Ծաղրով) *Է՜յ, բարեկա՛մ, ո՞ր հովերն են քեզի այս կողմը նետեր։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— *Գինիի հոտ է ինկեր ծոմ պահողին քիթը։*

ԻՇԽԱՆԸ— *Տարին տասը չափ ցորեն նվիրեր եմ ես իմ կալերես ձեր անապատին. գնա՛ նստե ու կե՛ր։*

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— (Ծաղրով) *Ու աղոթե՛ քու աստվածներուդ մեր մեղքերուն համար։*

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— *Մե՞ղք...* (Փորը բռնած սաստիկ կխնդա) *Աղոթե՛, աղոթե՛ մեր մեղքերո՛ւն համար... մեր անթիվ մեղքերուն...*

Ընդհանուր հռհռոց:

ԱԲԵՂԱՆ— *Իշխա՛ն. դուն ինծի չե՞ս ճանչնար։*

ԻՇԽԱՆԸ— *Ա՛յսպես ալ աներես մարդ։* (Բարկացած) *Պիտի հեռանա՞ս, թե չէ։*



ՀԱՍԱԿԱՎՈՐԸ— *Ես կճանչնա՛մ քեզի, ե՛ս։ Դուն այն ցած վախկոտը չե՞ս, որ սուրդ նետեր ես գետին ու փախեր ես կյանքի կռվեն։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— *Դո՛ւրս, հայդե՜, ցա՛ծ արարած։*

ՈՒՐԻՇ ՄԸ— *Դո՛ւրս, վախկո՛տ։*

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ— *Դուն այն մեծամիտ տխմարը չե՞ս, որ կարհամարհես մեր վեհն Վահագնի նվիրած ամենեն վեհ նվերը՝ կյանքը. և քու թշվառ գլուխդ չես ուզեր խոնարհել անոր լույս պատկերին առջև։*

ԲՈԼՈՐԸ— *Կորսվե՛, կորսվե՛ դուրս։*

ՄԵԿԸ— *Կորսվե՛ դուրս այս սուրբ վայրեն։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— *Աստվածուրա՜ց։*

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ— *Դուն այն ամբարտավանը չե՞ս, որ երկրպագել չես ուզեր մեր փրփրածին Աստվածուհիին, ո՛չ անոր նվերը եղող սիրուն, ո՛չ ալ կնոջ գեղեցկությանն ու հմայքին։*

ԱՂՋԻԿՆԵՐԸ— *Դո՛ւրս այդ ամբարտավանը։*

ԱՂՋԻԿ ՄԸ— *Ապո՛ւշ...*

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ— *Դուն այն սրբապիղծը չե՞ս, որ կարհամարհես մարմինը, Վահագնի ու Աստղկան այդ հրաշալի կերտվածքը։*

ԱՂՋԻԿ ՄԸ— (Քովի տղան մատնանիշ) *Արհամարհե՞լ այս մարմինը. այս առո՛ղջ, այս ճկո՛ւն, այս ո՛ւժեղ մարմինը։*

ԱՂՋԻԿՆԵՐԸ— *Սրբապի՜ղծ...*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— (Քովի աղջիկը մատնանիշ) *Այս քնքո՛ւշ, այս գեղեցի՛կ, այս հոյակա՛պ մարմինը։*

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ— *Սրբապի՜ղծ։*

ԱԲԵՂԱՆ— (Ամեն հարձակման ավելի ու ավելի խորտակված, ավելի ու ավելի գլուխը վար կկախե ու քայլ-քայլ կքաշվի ետ: Վերջին խոսքերուն մտած է արդեն իր նախորդ տեղը՝ սյուներուն ետևը ու ալ չերևար):

6

ԻՇԽԱՆԸ— *Թողե՛ք, թողե՛ք կորչի։ Ես ձոն ունիմ ձոնելու։ Առե՛ք թասերը։*

Բոլորը կլեցնեն:

ԻՇԽԱՆԸ— (Եղջյուրը առած կերթա նորեն բագնին առջևը ու գինին վեր բարձրացնելով) *Քեզի՛, ո՛վ վեհդ դիցուհի, ո՛վ փրփրածինդ Աստղիկ, դո՛ւն, որ անարատ ես ու սքանչելի, քու ելած փրփուրիդ նման.*

դո՛ւն վերին գեղեցկություն, դո՛ւն գերագույն հմայք ու քնքշություն, քու տված լույսիդ նման։ Դո՛ւն, որ աղբյուրն ես սիրու, հույսերու և հուզումներու, քեզի օրորող ալիքներուն նման, քեզի՛, ծովածի՛ն, քեզի՛ կնվիրեմ այս վայելքի եղջյուրը՝ լիքը ազնիվ ու արբեցնող գինիով, դո՛ւն, որ գեղեցկության ու սիրու վայելքը, հեշտանքն ու արբեցումը կուտաս մեզի։ Ընդունե՛, դիցուհի՛, իմ ձոնս։ (Մեկ-երկու կաթիլ կթափե կրակին. ուժեղ ու պայծառ լոց):

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ— Ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է...

ԻՇԽԱՆԸ— (Դառնալով իր տեղը) Հաղթողի ձոնը մի՛շտ է ընդունված գեղեցկության բագինին վրա։ Խմե՛նք։ Կեցցե՛ գեղեցկությունն ու սերը։

ԲՈԼՈՐԸ— (Աղմուկով ու ծիծաղով, կատակներով, ըմպանակները իրարու բախելով) Կեցցե՜ գեղեցկությունն ու սերը։

Կխմեն ու կնստին. լռություն:

## 7

ԱԲԵՂԱՆ— (Դուրս կելլե իր անկյունեն և վճռական կմոտենա Հաստ զինվորականին, ձեռքը կդնե անոր ուսին ու կտրուկ) Տե՛ղ տուր ինծի։

Ընդհանուր զարմանք:

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— Նորե՞ն, ա՜յ մուրացկան։

ԱԲԵՂԱՆ— (Ավելի կտրուկ ու խեթ) Ե՛ս ալ կուզեմ նստիմ այս սեղանին։

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— Քեզի տեղ չկա այս սեղանին։

ԱԲԵՂԱՆ— (Գրգռված ու դողալով) Ես պե՛տք է նստիմ այս սեղանին։

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— Տեղ չկա՝ ըսինք քեզի. սուր չունեցողին հոս տեղ չկա. ի՞նչ ես կպեր, ձի՛ու ճանճ։

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ կփաթթվի Հաստ զորականի մարմնին, կվերցնե նստարանեն, կգլտորե գետին):

Նախ ընդհանուր անբարեհաճ ճուզում ու իրարանցում, որը սակայն հանկարծ տեղի կուտա բուռն ու միահամուռ ծիծաղի մը:



ԱԲԵՂԱՆ— (Ծունկը կդնե նստարանին ու բռունցքը սեղանին զարնելով) Ես պետք է նստիմ այս սեղանին։

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— (Վեր կթռչի կատղած, կքաշե սուրը ու կվազե Աբեղային վրա) Անդի՛ն, անզգա՛մ, չեմ ուզեր պղծել այս սուրս մեհյանին գավիթը քու պիղծ արյունովդ։

ԱԲԵՂԱՆ— (Հաստատ ու ծանր քայլերով կմոտենա անոր: Վայրկյան մը շեշտ կդիտեն իրար մոլեգին: Հանկարծ Աբեղան բոլոր ուժովը կզարնե դիմացինին թևին, որուն սուրը կիյնա վար: Աբեղան իսկույն կխլե ու նորեն ծունկը դնելով նստարանին) Ահա՛, իշխա՛ն, և իմ սուրս։

Ընդհանուր ոգևորություն. աղմուկ. հիացում:

ԱՂՋԻԿՆԵՐԸ— (Իրարու) Ի՜նչ ուժ, ի՜նչ ուժ...

ԱՂՋԻԿ ՄԸ— Ի՜նչ երկաթի ձեռք։

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— Ո՛չ, իշխա՛ն, դուն տեսար բռնությունը, դուն բոլորը տեսար. իմի՛նս է այդ սուրը։

ՁԱՅՆԵՐ— Ո՛չ, ո՛չ, ալ ո՛չ։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— Քու մեջքդ դպավ գետին։

ԻՇԽԱՆԸ— Սուրը անորն է, որուն ձեռքը որ է։

ԲՈԼՈՐԸ— Ապրի՛ մեր արդար իշխանը։

ՁԱՅՆԵՐ— Ապրի՛ մեր նոր ընկերը։

ՄԵԿԸ— (Մոտենալով պարտվածին) Կներե՛ս, բարեկա՛մ, բայց կըտեսնես, որ քեզի այլևս տեղ չկա հոս։

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆԸ— Աղե՛կ, ես կերթամ, բայց մենք դեռ կպատահինք, սևազգե՛ստ. կա՛մ սուրս կուտաս ինծի, կա՛մ կյանքդ։

ԱԲԵՂԱՆ— Կյանքս՝ գուցե։

## 8

ՁԱՅՆԵՐ— Գինի տվե՛ք հաղթողին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— Վերջուր անոր թասը։ Հիմա ան ալ քուկդ է։

ԱԲԵՂԱՆ— (Կառնե Հաստ զորականի ըմպանակը և կնետե անոր ետևեն) Ես չեմ ուզեր ուրիշին խմուկը։

ԱՂՋԻԿ ՄԸ— (Թևը երկարելով) Ա՛ռ, քա՛ջ, ի՛մ թասս։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— (Երկնցնելով իրենց թասերը) Ա՛ռ իմ թասս... ա՛ռ իմ թասս... առ իմի՛նս...

ԱԲԵՂԱՆ— Իշխա՛ն, քիչ մը առաջ ես քու եղջյուրդ խնդրեցի, ա՛յն եղջյուրը, որով ձոնք ձոնեցիր։

ԻՇԽԱՆԸ— (Եղչյուրի միջինը կրակին ու կուտա մոտի աղջկանը լուրջ ու հանգիստ) Լեցո՛ւր ու տուր իրեն։

ԱՂՋԻԿԸ— (Կկատարէ ու կուտա քնքշանքով խորապէս սրտանց) Ա՛ռ

ԻՇԽԱՆԸ— Առաջին թասը, նորե՛կ, գիտցի՛ր, միշտ Վահագնինն է. այդպես է աշխարհի հին օրենքը։

ԱՐԵՂԱՆ— Առաջին թասը... ձեր այս կյանքի սեղանին առաջին թասը ես կխմեմ... կյանքի ու աշխարհի օրենքովը... ես կխմեմ կովի կենացը. կովի՛, որ վերն է խավարին ու ամպերուն մեջը, ինչպես որ կը սեր. կովի՛, որ դուրսն է, աշխարհի վրա, ուրկե դուք կուգաք. կովի՛, որ հո՛ն է, ծովուն մեջ, փոքրիկ տանեն, ուրկե ե՛ս կուգամ։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— (Սաստիկ հետաքրքիր, փսփսուքով իրարու) Ծովե՞ն... ծովե՞ն...

ԱՐԵՂԱՆ— Թող օրհնվա՛ծ ըլլա կյանքի կովը։ (Կխմե):

ՁԱՅՆԵՐ— Անո՛ւշ, անո՛ւշ... Հաջողությո՛ւն, հաղթանակը միշտ քեզի՛...

ԻՇԽԱՆԸ— Աղե՛կ։ Լեցո՛ւր երկրորդ թասը։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— (Իրար անցած) Գինի՛, գինի՛։

ԱՂՋԻԿԸ— (Նորեն կլեցնե ու կուտա սրտանց) Ա՛ռ։

ԻՇԽԱՆԸ— Երկրորդ թասը, նորե՛կ, գիտցի՛ր, միշտ Աստղիկինն է. այսպես է աշխարհի հին օրենքը։

ԱՐԵՂԱՆ— Երկրորդ թասը... այո՛, Աստղիկի՛նն է. ա՛ն, որ ինչպես կըսեք, ծնավ գեղեցիկ հորդ փրփուրեն, դուրս ելավ սիրարծարծ հուզկոտ ու եռացող ալիքներեն. ա՛ն, որ փոքրիկի անդունդներուն մեջը կգավող ու եռացող ալիքներեն. ա՛ն, որ փոքրիկի անդունդներուն մեջը կգալարի ու կհափշտակե քեզի։ Իշխա՛ն, այս թասը ես կխմեմ քու աղջկանդ կենացը։ (Կխմե):

ԱՂՋԻԿՆԵՐԸ— Սեդա՞ն... Սեդա՞ն...

ԻՇԽԱՆԸ —Աղջի՞կս...

ԲՈԼՈՐԸ— (Սաստիկ հուզված, վախով ու սպասողական դիրքով կնային իշխանին կողմը):

ՀԱՍԱԿԱՎՈՐ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ— Իշխան, քո աղջի՞կդ...

ԻՇԽԱՆԸ— Կեցի՛ր, ա՛յ տղա, կարծես քու դեմքդ ծանոթ է ինծի։

ԱՐԵՂԱՆ— (Թեթև հեգնանքով) Հիմա, ինհարկե՛, իշխա՛ն. հի՛մա պե՛տք է, որ ճանչնաս։

ԱՂՋԻԿՆԵՐԸ— (Իրարու փսփսուքով) Ո՞վ է, ո՞վ է, ո՞վ է, որ։

ՔՈՒՐՄԸ— (Կերևա վարագույրին առջևը) Պատրաստ եղեք, հաղթողնե՛ր, ու թողեք սեղանը։ Արևելքը շիկներ է, ծովը ծիրան է հագեր, ու թարմ բնությունը թափ կուտա քունը աչքերեն Մեծ Աստծուն երկրպագելու։ Լուսատուն ու լուսաստղը գրկելու են հիմա իրար, պատրաստ եղե՛ք դուք ալ երկրպագելու։



ԱՄԵՆՔԸ— (Իսկույն վեր կցատկեն իրենց տեղերեն, զինակիրները շտապ կբերեն սաղավարտները ու վահանները իրենց տերերուն, որոնք կհագնին ու կերթան բագնին առջևը երկու զուգահեռ տողաշար կկազմեն երեսները վարագույրին, աջ՝ զորականները, ձախ՝ աղջիկները):

ԻՇԽԱՆԸ— (Մոտենալով Արեղային) Տո՛ւր ինծի ձեռքդ ու երթանք երկրպագելու. երկրպագելու մեր վեհ աստվածներուն։

ԱՐԵՂԱՆ— Երկրպագելու... նո՞ր աստվածներուն։

ԻՇԽԱՆԸ— Հի՛ն աստվածներուն. մի՛շտ հին ու մի՛շտ նոր ու մի՛շտ հավիտյան։ Եկո՛ւր։

ԱՐԵՂԱՆ— (Անշարժ ու համառ կեցած է. աչքերը գետին):

ԻՇԽԱՆԸ— Եկո՛ւր, կըսեմ քեզի. շո՛ւտ. դո՛ւն, որ խմեցիր կովի կենացը, դո՛ւն, որ խմեցիր իմ Սեդայիս կենացը, պե՛տք է, որ գաս։ Տո՛ւր ձեռքդ ինծի։ (Կբռնե անոր թևեն ու տեսակ մը կես-հրելով կտանի առաջ զույգ տողաշարին մեջեն: Բագնին մեկ կողմը ինքը կանգնի, մյուս կողմ մը կմնա Արեղան):

## 9

Վարագույրին ետևեն կլսվի շեփորին կանչը մեկ-երկու ելևէջ, որուն կհաջորդե քուրմերու ուրախ ու հաղթական երգը: Երգի միջոցին կբացվի կամաց-կամաց ճակտի վարագույրը, և տեսարանի մնացած բոլոր մասերը հետզհետե կքաղվին մութի մեջ:

Խորքի բեմը, որ ավելի ալ բարձր է, կներկայացնե Սևանի գագաթն իր ավերակով: Աջ՝ կեցած են քուրմերը, բոլորն ալ ճերմակազգեստ, կուրծքերնուն ոսկի արև մը. ձախ՝ կեցած են քրմուհիները, բոլորն ալ ճերմակազգեստ. հերարձակ ու մազերնուն մեջ խրած խոշոր աստղ մը: Հեղ մը քուրմերը կերգեն, հեղ մը քրմուհիները, վերջը բոլորը միասին:

Նոր բեմի խորքը հորիզոնն է, ծովուն ու երկնքին իրար կպչող ծիրը: Երկինքը շառագույն է, տեղ-տեղ դեղին. ծովը լերթ-կարմիր, տեղ-տեղ ծիրանի: Երգի միջոցին հետզհետե կնշմարվի հսկա արևի մը սկավառակը, որ կբարձրանա կամաց-կամաց: Երբ կեսին չափը դուրս է եկած ջուրեն՝ արևը կբացվի ոստրեի մը պես ու կափարիչը կիյնա ջուրին երեսը՝ արևի ցոլքին նման: Ոստրեին մեջը վառ կփայլի աչք խտիտ տվող արծաթ-մարգրիտ փայլով մը: Եվ այդ վառ փայլին մեջ կեցած է հաղթական Վահագնը մերկ, բարձր, շիտակ, հաղթ ու առողջ, աջ ձեռքը առաջ պարզած, մազերն ու մորուքը սուրական ձևի և շեկ, աչքերը բոցոտ: Անոր ձախ կողմը թեթև թեք է ինկած նազանքով ծովային խոտերու ու ծաղիկներու վրա Աստղիկը. սա թեթև մը փաթթված է Վահագնին ու գլուխը հենած անոր մարմնին. ինքը՝ մերկ, ճկուն, նուրբ. մազերուն մեջ ահագին ադամանդե աստղ մը ու մարմնին վրա մեկ-երկու թեյ ծովային նուրբ ու երկար սեզ։

Երգեցողությունը կտևե մինչև ոստրեի լրիվ բացումը։ Երբ երգը հանկարծ կկտրվի, կլսվի նորեն շեփորին կանչը ու բոլոր բազմությունը իսկույն կփռվի գետին կմնան։ Քուրմերն ու քրմուհիները կխոնարհին մինչև մեջքը։ Ոտ-
խորը երկրպագությամբ։
քի կմնա միայն Աբեղան՝ ուղիղ և անշարժ։

*ՔՈՒՐՄԸ*— (Խումբին մեջեն, ահեղ) *Երկրպագե՛, դո՛ւն, շվարած։*

*ԱԲԵՂԱՆ*— (Անշարժ է)։

*ԻՇԽԱՆԸ*— (Սարսափահար ու կիսաձայն) *Երկրպագե՛, անմի՛տ։*

*ԱԲԵՂԱՆ*— (Անշարժ է)։

*ՍԵԴԱ*— (Վերևը հանկարծ բարձր բեմի սանդուղներուն վրա, հանգիստ առաջ կուգա. կկենա ուղիղ Աբեղային դեմը, քնքուշ ու հրամայական) *Երկրպագե՛, երկրպագե՛ ծովուն ու իր աստծուն։*

*ԱԲԵՂԱՆ*— (Նախ գլուխը կթեքե. ետքը ծունկերը քիչ-քիչ կծալվին ու հանկարծ կիյնա գետին)։

Սաստիկ դղրդյուն մը. և մեկ անգամեն կկորչի ամեն բան, կտիրե խորին մութ ու լռություն։

## 10

Երբ թանձր մութը կսկսի փարատիլ՝ տեսարանը փոխված է։ Հետզհետե բացվող աղոտ լույսին մեջեն կնշմարվի հաստ ու ցած սյուներու զույգ շարք մը տեսարանին ճիշտ մեջտեղը։ Եկեղեցի է։ Խորքը կերևա միայն երկու վառ մոմ, որուն առջև երկու վանական սաղմոս կկարդան փոխնիփոխ։ Անոնց ետևը կիսաշրջանով կեցած են վանականները երեսնին դեպի խորանը։

Մռայլ ու մութ. ընթերցումը տխուր ու միալար։

Լռիկ աղոթող վանականներու շարքին մեջ հանկարծ խլրտում մը կիյնա։

*ՎԱՆԱԿԱՆ ՄԸ*— (Սյուներուն կռնակեն ծովելով դեպի ետ, փըսփըսուքով) *Ջո՛ւր, ջո՛ւր, երեսին ջո՛ւր։*

Ձախ կողմի խորքի սյուներուն մեջեն կերևան երկու վանական, որոնք Աբեղայի թևերը մտած ու բարձրացուցած կբերեն առաջ։ Աբեղան թույլ ու անզգա։ Մովսես վանականը կուգա անոնց ետևեն՝ օգնելով։

*ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ*— (Արագ դուրս աջ կողմի սյուներուն մեջեն, կմոտենա Մովսեսին, երբ Աբեղան արդեն անցուցած են, և կիսաձայն) *Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ եղավ։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ*— (Միշտ կիսաձայն) *Աբեղան մարեցավ։ Կեցեր էր առջևս կաղոթեր, մեյ մըն ալ տեսա՝ գլուխը կախեց, քիչ մը ծռեցավ ու բոլոր ուժովը ինկավ գետին։*



*ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ*— *Խե՛ղճ աբեղա. երևի գիշերը շատ է ճգներ։ Տարե՛ք աղբյուրը, տարե՛ք աղբյուրը։* (Եվ ինքը կդառնա ետ իր նախորդ տեղը)։

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ*— (Կշտապե գացողներուն ետևեն)։

Ու նորեն ամեն ինչ հանդարտ է, ու նորեն որոշ կլսվի սաղմոսասացներուն միալար, թախծոտ ու ծանրացած ձայնը։

*ԱՌԱՋԻՆ ՍԱՂՄՈՍԱՍԱՑ*— *«Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան Քո»։*

*ԵՐԿՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԱՍԱՑ*— *«Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց»։*

*ԱՌԱՋԻՆ ՍԱՂՄՈՍԱՍԱՑ*— *«Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանրացան ի վերայ իմ»։*

*ԵՐԿՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԱՍԱՑ*— *«Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ»։*

Սաղմոսի միջոցին կամաց-կամաց, շա՜տ հանգիստ, տեսարանը կգոցվի. այնպես որ վերջին բանի մը բառը կլսվի դեռ գոցվելեն ետքը։

# ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԻՇԽԱՆՈՒՀԻԻՆ ԱՌԱՆՁՆԱՍԵՆՅԱԿԸ

Փոքրիկ, կոկիկ, ցած առաստաղով սենյակ մը ամբողջովին գորգերու մեջ։ Ճակատը բազմոց, մոտիկը ցածլիկ աթոռակ մը։ Անկյունը ներմակ ֆոնի վրա սև սիրուն խաչելություն մը ներմակ նեղ սեղանին. երկու կողմը երկու ամանի մեջ վարդի թարմ փունջեր։ Առաստաղեն կախված է արաբական գունավոր լապտեր մը։

Մուտք աջեն ու ձախեն։

## 1

Իշխանուհին կեցած է բազմոցին առջևը ծիգ ու անշարժ։ Քիչ մը հեռուն, անոր դեմը, դռան մոտիկ կեցած է Վանահայրը։ Երկուքն ալ հայացքնին նետած են գետին։

*ՎԱՆԱՀԱՅՐԸ*— (Հանգիստ ու պաշտոնական)... *Ա՛ն է կապեր մեզի իրար, ան ծնունդն է մեր երկուքի, անիկա մեր կապն է. բայց մեր մեջը պիտի ըլլա ո՛չ մեկ կապ. մեր մեջեն պետք է խզվի ամե՛ն կապ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Գլուխը բարձրացնելով ու նույնպես հանգիստ) Վստահապե՛ս, այդ եկեղեցին ո՛չ ոք քանդել չի կրնար։ Ո՛չ դուն, ո՛չ ես, ո՛չ մեկը. անոր հիմը մեր սրտերուն մեջն է դրված։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խիստ) Անոր հիմը, իշխանուհի՛, մեղքի վրա է դըրված։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ինչպե՞ս թե՝ մեղքի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, մեղքի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Հպարտ) Մեղքը միշտ օտար է եղեր ինծի և միշտ ալ օտար պիտի մնա ինծի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կի՛ն, նորե՞ն խաբել կուզես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ապշած) Խաբե՞մ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛, խաբես ու կեղծես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ե՞ս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Դո՛ւն, դո՛ւն։ Ի՞նչ կզարմանաս. դո՛ւն, որ ամբողջ կյանքդ խաբեր ես ու շարունակ կեղծեր։ Խաբեր ես տարիներ ու տարիներ այն մարդը, որ իբրև իր կինը իր տունն է տարեր քեզի. խաբեր ես քու զավակներդ, որոնք շոյանքի կարոտով գիրկդ են վազեր։ Խաբեր ու կապեր ես բոլոր շրջապատողներուդ աչքերը. խաբեր ես և ինծի, թեև, այո՛, առանց խոստում մը տալու. առանց բառ մը արտասանելու. խաբեր ես և քեզի՛, քեզի քու աչքիդ նահատակ ես նկարեր, դուն, որ մարդդ մեռեր է թե չէ, վազեր եկեր ես հոս՝ ինծի հետ նոր շենք շինելու. քու կեղծիքիդ աստծուն նոր տաճար կառուցանելու։ (Քիչ մը լուռ)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Կեցած է ձիգ ու հպարտ, ունքերը կիտած. ո՛չ շարժում, ո՛չ ծպտուն)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իհարկե, չէ՞ որ քու աստվածդ սերն է։ Ո՛վ սոփեստություն։ Ի՞նչ է սերը. ինչի՞ սեր է Աստված, արուի՞ ու էգի՞։ Կին, մեղանչանք է քու անունդ, կեղծիք է քու հոգիդ ու զգայարանքներդ, քու աշխարհդ։ Մեղքի վրա է շինված այդ եկեղեցին։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ըսի՞ր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Դե՛, բա՛ց է դուռը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Վիրավորված) Իշխանուհի՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ի՞նչ է։ Գնա՛, գնա՛ քանդե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ատիկա իմ պարտքս է և ես գիտեմ. բայց պետք է, որ դուն ալ կատարես քու պարտքդ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այսի՞նքն։ Ի՞նչ է ուզածդ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Պետք է անմիջապես հեռանաս հոսկե, Ցամաքաբերքեն։



ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Հեռանա՞մ... այդպե՞ս կհրամայես։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Կհրամայե՞ս... (Հանկարծ բուռն բարկությամբ) Եվ ո՞վ ես դուն, ի՞նչ գործ ունիս հոս, հո՛ս, իմ դեմս, ո՞վ ես դուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ես... ես վանական մըն եմ, իշխանուհի՛, քաշված անապատը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Անապատ մըն ես դուն ինքդ և օտա՛ր, օտար հոգիիս, ինչպես ամենքը։ Ամբողջ կյանք մը ապրեր եմ ես օտարներու մեջ, օտար եմ եղեր ես ինքս բոլորին, օտա՛ր ու մինակ. մինա՛կ պալատներու ամբոխին մեջ, միս-մինակ իմ իսկ պալատիս, իմ սեփական ընտանիքիս մեջ, մինա՛կ, մի՛շտ։ Եվ հո՛գիիս միակ լուսավոր աստղը եղեր է այն մտածումը, որ հեռո՛ւ, հեռո՛ւ կա ուրիշ հոգի մը, իմինիս պես մինակ, իմինիս պես լքված, իմինիս պես կարոտ, եղբա՛յր հոգի մը, որ կհասկնա ինծի ու իմ կրած ծանր խաչս, որ մոտիկ է ինծի ու կսիրե ինծի։ (Լուռ)։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կեցած է անշարժ ու լարված. բռունցքները սեղմած՝ տեսակ մը կռվի պատրաստ դիրքով)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այդ սարսափելի, այդ հավիտենական, այդ խելագարցնող մենության ձեռքեն փախած, եկեր ապաստաներ եմ հո՛ս, վերջապես միասին ըլլալու, միասին ըլլալու հոգիի մը հետ, միասին ապրելու. միասին ստեղծելու շենք մը, այն միակ հոգիին հետ, որ ինծի կըհասկնա, որ հեռուեն ինծի հետ է եղեր ամբողջ կյանքս։ Եվ ահա՛ թե ինչպես կհասկնա ինծի այդ միակ հոգին։ Ես կի՛ն, ես մե՛ղք, ես է՛գ ու խաբեբա՛։ (Զայրացած) Գնա՛, հեռացի՛ր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ավարտե՛, ու կերթամ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ոչի՛նչ չունիմ քեզի հետ ավարտելու։ Ապրեր եմ միշտ մինակ ու օտար, մինակ ու օտար ալ կիջնեմ գերեզման։ Անմտություն է ճակատագրին հետ կռվիլը։ Գնա՛, գնա՛ քանդե՛, փո՛ւլ տուր այն քարերը. իմ տաճարս արդեն փուլ եկավ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոժոռ) Ների՛, իշխանուհի՛. եթե ավելորդ խոսք ըսի։ Ես ավելի ինծի կխոսեի, քան քեզի՛։ Ես ուզեցի, որ ճշմարտությունը մերկ կանգնի մեր առջև, ես ուզեցի բանամ մեր երկուքիս ալ աչքերը։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Եվ բացի՛ր, շնորհակա՛լ եմ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կցավիմ, եթե բաց աչքով տեսածդ ա՛ն չէ, ինչ որ կուզեիր։ Աշխարհիս երեսին եթե տեսնել կուզես, ինչ որ սրտիդ ուզածն է՝ պետք է նայիս փակ աչքերով։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ճշմարի՛տ է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այդ ճշմարտությունը ես քեզմե սորվեցա... ասկե

*ուղիղ քսանհինգ տարի առաջ։ Ներե՛, իշխանուհի՛։ Եվ կարծեմ մեր մեջ ալ մաքրվա՛ծ է ամեն հաշիվ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Իմ բոլոր հաշիվներս՝ ա՛լ մաքրված են կյանքի մեջ։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Մարդն վերի՛ն հաշիվներդ։ Մնաս բարո՛վ, իշխանուհի՛։*

Իշխանուհին կեցած է լուռ ու անշարժ, մինչ վանահայրը հանդարտ ու գլխահակ կելլե դուրս։ Իշխանուհին կամաց ու տեսակ մը ակամա կսահի վար ու խորտակված կնստի բազմոցին, ձեռքերը անուժ մեկը բազմոցին վրա նետած, մյուսը՝ գոգը. անկյանք հայացքը կետի մը հառած։

## 2

ՊԱՐԱՎԸ— (Մտնելով հակառակ դռնեն) *Մինա՞կ ես։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տխուր գլուխը հոճելով) *Մինա՛կ, մին...*

ՊԱՐԱՎԸ— *Գնա՞ց։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՞վ։*

ՊԱՐԱՎԸ— *Վանահա՛յրը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Չգիտե՛մ։*

ՊԱՐԱՎԸ— *Ի՞նչ ըսավ որ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ո՞վ։*

ՊԱՐԱՎԸ— *Վանահա՛յրը։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Չգիտե՛մ։* (Քիչ մը լուռ) *Բե՛ր ինձ այն...*

ՊԱՐԱՎԸ— *Ի՞նչը, իշխանուհի։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Հատակագիծը։*

ՊԱՐԱՎԸ— *Եկեղեցիի՞ն։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Տխուր գլխով կընե)։

ՊԱՐԱՎԸ— (Դուրս կելլե իր եկած դռնովը և իսկույն ալ կվերադառնա կոտա ոլորը)) *Ա՛ռ։* (Ինքը կքաշվի դեպի խաչելությունը)։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Կբանա հատակագիծը, կնայի քիչ մը, կբարձրացնե ,կհամբուրե և հանգիստ ու կանոնավոր շարժումներով կսկսի պատռել՝ զսպելով հեկեկանքը, մինչդեռ կուրծքը ուժգին կելևէջե, և արցունքները առատ կթափին, առանց ծպտուն մը հանելու)։

ՊԱՐԱՎԸ— (Եռ նայելով ապշած) *Ատ ի՞նչ կընես իշխանուհին։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Ձայնը դողդոջուն) *Չե՞ս տեսներ։ Կպատռեմ։*

ՊԱՐԱՎԸ— *Կպատռե՞ս. ինչո՞ւ։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Ալ... ալ վերջացա՛վ։*

ՊԱՐԱՎԸ— (Ուրախ) *Վերջացա՞վ. ավարտեցա՞վ եկեղեցին։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Այո՛, ավարտեցա՛վ։*



ՊԱՐԱՎԸ— *Ի՞նչ կըսես։ Դե՛, աչքը լույս իշխանուհիիս. ալ ինչո՞ւ ես վշտացեր։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— *Վշտացե՞ր, ո՞վ. ե՞ս, ամենեն։ Չե՞ս տեսներ՝ պատո՛վ, ինչպես ուրախ եմ, ինչպես բախտավոր։ Չե՞ս տեսներ՝ կուլամ։*

ՊԱՐԱՎԸ —(Հուզված ու երկյուղած) *Այո՛, իշխանուհիս կուլա...* (Առջևը չոքելով) *Կուլա՛ տիրուհիս։ Ես քու լացդ դեռ չէի տեսեր, այնքան վշտեր, այնքան ցավեր էիր տեսեր։ Եվ ի՛նչ տարօրինակ լաց է եղեր ուրախության լացը։*

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԱՐԵՂԱՅԻ ԽՈՒՑԸ. ԳԻՇԵՐ. ՃՐԱԳ.

## 1

Արեղան պառկած է անկողնին. սնարին կողմը նստած է Կույր վանականը արձանի նման շիտակ։ Ոտքին կողմը՝ անկողնի եզերքին նստած է Սիմոն վանականը, որ աներևույթ համրիչ կշրջե, շուտ-շուտ հորանջելով։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— (Կեցած է սեղանին մոտիկ, կխաղա ճրագին հետ ու կխոսի ծանր-ծանր, խորհրդածելով) *Եվ ինչքա՛ն, ինչքա՛ններ են սակայն այդպես անմիտ։ Ա՛յ, ամբողջ այդ դուրսինները։ Դժբախտնե՛ր։ Փա՛ռք քեզի, Աստված, որ լուսավորել ես մեր միտքը։*

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆԸ— (Հորանջելով) *Փա՛ռք քեզի, Աստվա՛ծ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— *Մեկ մը ատոնց հարցնող ըլլա՝ ո՛վ մարդ, ի՞նչ ես գտեր այդ ձախողություններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարոտություններու, այդ կռվի ու դառնության հովտին մեջ, որուն աշխարհք անունը կուտան։ Այդպես ալ հիմար հաշի՛վ։ Քանի մը խեղճուկ վայելքներու, քանի մը չնչին հաճույքներու համար մարդ առնե ու զոհե իր հանդերձյալ կյանքի հավիտենական երանությունը։*

ԱՐԵՂԱՆ— (Պառկած տեղեն առանց դիրքը փոխելու՝ հատիկ-հատիկ) *Հա՛յր սուրբ, տեսե՞ր ես դուն երբեք արևի ծագումը։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— *Ի՞նչ։*

ԱՐԵՂԱՆ— *Եղե՞ր ես դուն երբեք արևին տաճարը։*

Երկու վանականները ապշած կնային իրարու։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կմոտենա անկողնին ու ձեռքը հիվանդի ճակտին դնելով) Սա՛ռն է։ Արթո՞ւն ես, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Ես արթո՛ւն եմ։ Ես արթնցա, երբ արևը ծագեցավ։ Իսկ դո՞ւք, դո՞ւք...

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— Մենք կխոսինք, աբեղա՛։

ԱԲԵՂԱՆ— Կլսեմ՝ կխոսիս։ Գնա՛, դիտե՛ արևին ծագումը։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ձեռքով նշան կընե, որ հիվանդը հանգիստ թողնե ու պատասխան չի տա. և ինքը ոտքի ելլելով) Իրա՛վ կըսե, հա՛յր սուրբ, ո՛ւշ է արդեն, երթանք, որ ինքն ալ հանգստանա։ Գիշե՛ր բարի, աբեղա՛։ Այս գիշեր քեզի խոր քուն, վաղը ամեն բան անցած կըլլա։ (Դեպի դուռը):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ— Առողջությո՛ւն քեզի, աբեղա՛։ (Դեպի դուռը):

ԱԲԵՂԱՆ— (Առանց դիրքը փոխելու, հատիկ-հատիկ) Քեզի կըսեմ՝ տեսե՞ր ես դուն երբեք արևին ծագումը։

2

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ականջ կդնե, որ ոտքի ձայները հեռանան. վերջը քիչ մը ավելի ծռվելով դեպի անկողինը, խորհրդավոր ու կիսաձայն) Ես... ես տեսեր եմ այդ արևին ծագումը։

ԱԲԵՂԱՆ— (Աշխույժ վեր կթռչի իսկույն ու կիսովին կնստի հենվելով թևին. մատը կույրին ուղղած) Դո՞ւն... դո՞ւն... դուն տեսե՞ր ես։ Դո՞ւն, կո՛ւյր...

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ծանր գլխով կընե):

ԱԲԵՂԱՆ— (Ցած ձայնով ու ձիգ տալով) Եվ երկրպագե՞ր ես։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ծանր գլխով կընե):

ԱԲԵՂԱՆ— Դո՞ւն, դուն տեսեր ես արևին տաճա՞րը, քու այդ աչքերո՞վդ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Այո՛, տեսեր եմ իմ աչքերովս ու հաներ եմ այդ աչքերը, որ ալ չտեսնեմ։

ԱԲԵՂԱՆ— (Սարսափած) Հանե՞ր ես աչքերդ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կարդալու շեշտով) Այն անդամը, որ քեզի կգայթակղեցնե, կտրե՛ ու դուրս նետե՛ քեզմե. այսպես է գրված։

ԱԲԵՂԱՆ— Եվ դուն հանե՞ր ես աչքերդ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Այո՛։

ԱԲԵՂԱՆ— Հանե՞ր ես, քո՛ւ աչքերդ, քու այդ ձեռքերո՛վդ։



ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Ոչ, ո՛չ ձեռքովս. հաներ եմ կամքիս ուժովը։

ԱԲԵՂԱՆ— Կամքի՞դ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Դիմե՛ հավատքիդ, ու սարերը կելլեն իրենց տեղեն. աչքն ի՞նչ է, որ իր տեղը մնա։

ԱԲԵՂԱՆ— (Քիչ մը մտածելե ետքը տարակույսով) Եվ դուն կըսես թե՝ երկրպագեր ես արևի՞ն։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Այո՛, մեղանչեր եմ, աբեղա՛։ Եվ ճիշտ ատոր համար է, որ կհասկնամ քեզի, կտեսնեմ քու հոգիդ ու կըսեմ քեզի՝ «զգույշ, դևն է, որ արթնցեր է մեջդ, մեջիդ սև դևը»։

ԱԲԵՂԱՆ— Ա՞տ է քու հասկցածդ։ Ինծի քաշողը ինքը լույսն է ու գեղեցկությունը. ինծի քաշողը աստվածներն են։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Բոլոր դևերն ալ երբեմն աստված են եղած, աբեղա՛։ Ընկճված աստվածներն են ատոնք. պետք է, որ ընկճես։

3

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կմտնե տխուր ու կքուն)  Ողջո՛ւյն ձեզի։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Կելլե ոտքի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Մոտենալով անկողնին) Ի՞նչպես ես։ Նոր եկա ցամաքեն. ըսին՝ ինծի կանչեր ես։

ԱԲԵՂԱՆ— Այո՛, կզգամ ծովուն թարմությունը, որ հագուստներեդ կբուրե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Նոր ելա լաստեն։

ԱԲԵՂԱՆ— (Հիացումով) Լաստե՛ն... լաստե՞ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Խոժոռած) Ինչո՞ւ ես կանչեր ինծի։

ԱԲԵՂԱՆ— (Քիչ մը լուռ) Հա՛յր, ես երկրպագեցի հին աստվածներուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Դաժան ու խիստ) Շատ բնական է։

ԱԲԵՂԱՆ— Ի՞նչ...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. կսպասեի՛։ Չէ՞ որ քեզի խոստացավ իր տակի ձին, իր ձեռքի սուրը ու իր սեփական աղջիկը. գուցե և օր մըն ալ, ո՞վ գիտե, իր իշխանական ցուպը։

ԱԲԵՂԱՆ— (Սաստիկ վիրավորված) Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Անշո՛ւշտ, շատ բնական է։ Այդ բոլորի համար արժե աստված մը ուրանալ։ (Հանկարծ ու բարկությամբ) Բայց ինծի՞, ինծի՞ ինչու ես կանչեր հոս։

ԱՐԵՂԱՆ— (Հանդիմանորեն) Հապա ո՞վ կանչեր, վանահա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Սխալվե՛ր ես։ Կանչե՛ Հայր Անտոնը։

ԱՐԵՂԱՆ— Վանահա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Հայր Անտոնին լաստը միայն կհանե քեզի հոն, ուր քու սիրտդ է։

ԱՐԵՂԱՆ— Կվռնդես ինծի դո՛ւրս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ես կղրկեմ քեզի քու տենչացած աշխարհը։

ԱՐԵՂԱՆ— (Դառն ու ճանգիստ) Կղրկես ինծի իմ աշխա՞րհը։ Իսկ ո՞վ իրավունք տվավ քեզի՝ ուզած ժամանակդ դուրս քաշես ինծի աշխարհեն, ուզած ժամանակդ ետ նետես աշխարհ։ Ո՞վ քեզի իրավունք տվավ, որ կապես հոգիս, կապկպես զգացումներս։ Ո՞վ քեզի իրավունք տվավ, որ հիմա ելեր ես երեսիս հանդիմանություն կկարդաս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կոտրված) Իրա՛վ ես։ Ես ուզեր եմ անկարելին։ Ես ուզեր եմ ազատեմ քեզի այն երկար գալարուն ճամփեն, որու դառնություններուն ու տառապանքներուն մեջեն միայն կհասնին մարդիկ այս սուրբ մենարանը։ Ես ուզեր եմ անկարելին։ Հանե՛ քուրձերդ ու գնա։

ԱՐԵՂԱՆ— Երթա՞մ. ինչո՞ւ. և ո՞ւր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Աշխա՛րհ։

ԱՐԵՂԱՆ— Աշխա՛րհ... (Անխոս գլուխը կշարժե. և ապա շարախընդաց) Ո՛չ, վանահա՛յր, հո՛ս է իմ աշխարհս. աշխարհքը, ա՜յ, այս կըղզին է. ես հո՛ս ճանչցա հին աստվածները, հո՛ս ալ պիտի երկրպագեմ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Նախ զարմանքով կդիտե, վերջը ծանր ու վճռական) Ո՛չ. այդ մեկը չե՛մ թողներ, աբեղա՛։

ԱՐԵՂԱՆ— Կթողնե՛ս. դո՛ւն ես այդպես կամեցեր։ Ես ուրիշ աշխարհ չեմ տեսած, ես հո՛ս եմ շիներ իմ աշխարհս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կտրուկ) Լավ՛։ Հոս մենարան է ու սրբավայր, ուր այլևս աշխարհիկ հյուր մըն ես դուն, պատահական ուխտավոր մը։ Իսկ ուխտավորներուն իրավունքը, գիտե՛ս, երեք օր է միայն։ (Դեպի դուռը):

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Ետևեն) Վանահա՛յր, շատ ես խիստ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կիսովին նայելով) Ո՛չ, հա՛յր սուրբ, հիվանդ էր, ու գիշող եղա։ Չի լսեցի՞ր, ամբողջ երեք օր տվի իրեն։ Բայց երեք օրը չի լրացած պետք է հայր Անտոնին լաստը ցամաքը հանե այդ տղան։ (Դուրս):

# 4

ԱՐԵՂԱՆ— Լա՜ստը... լա՜ստը։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Մոռցի՛ր, մոռցի՛ր այն լաստը, աբեղա՛։ Մոռցի՛ր քեզի աշխարհին կապող այդ երերուն կամուրջը, մոռցի՛ր այդ իրարու կապված երկու գերանի կտորը...

ԱՐԵՂԱՆ— Իրարու կապվա՜ծ... այո՛... իրարու կապված։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Դեռ ուշ չէ՛. խեղդէ՛ մեջդ այդ հուշերը, ընկճե հին դևը ու այս բոլորը թող դառնա հիվանդություն մը, որ եկավ վրադ ու անցավ։ (Թևերը տարածելով անոր վրա) Ապավինե՛ Աստծուն, աբեղա՛։ (Կերթա դեպի դուռը և կես ճամփեն) Գիշերը եթե պետք ունենաս՝ զարկ պատը, գամ քեզի օգնելու։

ԱՐԵՂԱՆ— Ինծի ի՞նչ կրնաս օգնել դուն, կո՛ւյր. դո՛ւն, որ հաներ ես քու սեփական աչքերդ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Խարխափելով մուտքը կփնտրե) Կօգնեմ կերպ մը, աբեղա՛, խարխափելով, խարխափելով... Զա՛րկ պատը, եթե պետք ունենաս։ (Դուրս):

# 5

ԱՐԵՂԱՆ— (Նստած է անկողնին մեջ ծունկերը գրկած. քիչ մը ատեն լուռ ու անշարժ. վերջը հեզնոտ ու գլուխը շարժելով) Խարխափելով... խարխափելով... և կըսե՝ մոռցի՛ր լաստը։

ՍԵԴԱ— (Դռան մեջեն հազիվ կնշմարվի) Մոռցի՛ր, մոռցի՛ր լաստը...

ԱՐԵՂԱՆ— (Ցնցվելով ու շշուկով) Սեդա՜...

ՍԵԴԱ— Մոռցի՛ր և Սեդան։

ԱՐԵՂԱՆ— Ես մոռնամ քեզի՞։

ՍԵԴԱ— Մոռցի՛ր ինծի. ես քու մեջի սև դևն եմ։

ԱՐԵՂԱՆ— Դուն իմ հոգիիս ճերմակ թևն ես։ Նստեր էի անապատի ավազին վրա տխուր, շոր ու մինակ, դո՛ւն էիր, որ եկար թև տվիր կյանքիս, բնությունը տվիր զգայարանքներուս ու ծովը սրտիս. ծո՜վը, ուրկե արևները կծնին, ուր ես անգամ մը գրկեր եմ քեզի։

ՍԵԴԱ— Մոռցի՛ր, մոռցի՛ր այդ բոլորը. դեռ ուշ չէ՛. եղի՛ր նորեն ա՛ն, ինչ որ էիր. մտածե՛. դեռ ամբողջ երեք օր տվին քեզի։

ԱՐԵՂԱՆ— Ո՛չ, Սեդա, ո՛չ, ետ դարձ չկա. ո՛չ կրնամ, ո՛չ կուզեմ։ Ես երկրպագեցի քու աստվածներուդ, ես ձոնեցի քու աստվածներուդ, ես

խմեցի վայելքի՝ եղջյուրներն։ Ես հիմա միայն քեզի ծարավ եմ, ես հիմա միայն քու գիրկդ կուզեմ։

ՍԵԴԱ— (Քիչ մը առաջ գալով գրկաբաց) Եկո՛ւր, ես քուկի՛նդ եմ։

ԱԲԵՂԱՆ— (Ինքն ալ անկողնին վրայեն առաջ ծռելով) Սեդա՛... բայց չէ՞ որ դուն երազ մըն ես։

ՍԵԴԱ— Եկո՛ւր, դո՛ւն ալ դարձիր երա՛զ մը։

ԱԲԵՂԱՆ— Երա՞զ մը։

ՍԵԴԱ— Եկո՛ւր նորեն հո՛ն...

ԱԲԵՂԱՆ— (Վախցած ու ճափշտակված) Ծո՛վը...

ՍԵԴԱ— Հո՛ն, ուր անգամ մը գրկեր ես ինծի...

ԱԲԵՂԱՆ— Ուր դուն թևերուս մեջ կդողայիր քու մարմնիդ բոլոր մասնիկներովը...

ՍԵԴԱ— Ուր ալիքները կդողային ու փոթորիկը կգոռար...

ԱԲԵՂԱՆ— Ու զարկերուս տակ փրփուրը կեռար...

ՍԵԴԱ— Հո՛ն եկուր, հո՛ն, եթե նորեն գրկել կուզես ինծի, միայն հո՛ն։ Եկո՛ւր, հենց որ նորեն ջրերը հուզվին, հենց որ նորեն ծովը փըրփըրի։

ԱԲԵՂԱՆ— (Հետզհետե ծունկի գալով անկողնին վրա) Այո՛, երբ որ ջրերը հուզվին, երբ որ ծովը փրփրի...

ՍԵԴԱ— Եկո՛ւր, փաթթվինք իրարու ու տանիմ քեզի գրկիս մեջ անդունդե անդունդ, մթնոլորտե մթնոլորտ, տանիմ քեզի դեպի նոր անծանոթները, դեպի այն նոր աշխարհները, որոնց մասին դուն ու քու աշխարհքդ գաղափար անգամ չունիք։ Եկո՛ւր։

ԱԲԵՂԱՆ— Կուգա՛մ։ Առաջին անգամ, երբ քեզի գրկեցի, բացվեցան ինծի որքա՜ն, որքա՜ն անծանոթներ. գա՛մ նորեն քեզի գրկելու և թող բացվին նո՛ր անծանոթներ։

ՍԵԴԱ— Եկո՛ւր, տանիմ քեզի հեռո՜ւ, հեռո՜ւ քու կյանքիդ նեղ սահմաններեն, տանիմ քեզի նո՛ր գոյության, նո՛ր ձևերու, նո՛ր էության...

ԱԲԵՂԱՆ— (Վերացած) Նո՜ր, նո՜ր կյանքի, նո՜ր էության։

ՍԵԴԱ— Եկո՛ւր, ձուլվիս ծովին, ձուլվիս լույսին ու ջերմության, ձուլվիս ինծի ու Աստղկան, ձուլվիս Վահագնին ու աստվածներուն...

ԱԲԵՂԱՆ— Ա՜խ, շո՛ւտ, ա՜խ, շո՛ւտ։

ՍԵԴԱ— (Ետ-ետ քաշվելով) Հե՛նց որ ջրերը հուզվին, հե՛նց որ ծովը փոթորկի...

ԱԲԵՂԱՆ— (Խեղդված ձայնով) Հե՛նց որ ջրերը հուզվին, հե՛նց որ ծովը փոթորկի...



# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԵԿԵՂԵՑԻՈՒՆ ԱՌՋԵՎԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Նույնը, ինչ որ առաջին արարի երկրորդ տեսարանը։
Ցերեկ է։

### 1

Վանականները խռնված են ու կիսովին ճուզված: Աբեղան լուռ ու կեդրոնացած է ծառի մը հենած:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— (Ապշած) Ի՞նչ կըսես, ի՞նչ կըսես...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞վ էր լսեր այս տեսակ բան։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Ծաղրով) Հա՜, հա՜, հա՜, վանահայրը խռովեր է եկեղեցիեն։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Վերջ տուր այդ անպատկառ ծիծաղիդ։

ՈՒՐԻՇ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Բայց իրա՛վ է, որ ալ ժամ չի գար։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞ւր է հիմա ինքը։

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Քաշվեր է իր խուցը։ Կկարդա՞, կաղոթե՞, ո՞վ գիտե։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Ա՜, այդ կարդալը, կարդալը։ Չէ, այս բոլորեն աղվոր հոտ չի գար։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Ծերունի՜, մտածե՞ր ես՝ ինչ կխոսիս։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— (Հեռանալով) Ես բան չըսի։

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Մեր մեծավո՛րն է, մեր առաջնո՛րդը։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Ես բան մը չըսի։ (Դուրս):

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— (Ետևեն դուրս ելլելով) Կեցի՛ր, հա՛յր սուրբ, կեցի՛ր։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Մտածկոտ) Ճիշտ է. ամբարտավանությունը մեղք է մահացու։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Մարդս պետք է հեզ ըլլա ու խոնարհ։

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Խոնա՜րհ, խոնա՜րհ...

Ու երեքը միասին կելլեն դուրս:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Տեսակ մը ինքնիրեն) Վանահայրը խռովեր է եկեղեցիեն... (Ծիծաղը ափին մեջ խեղդելով անոնց ետևեն կելլե դուրս)։

## 2

ԱԲԵՂԱՆ— (Միշտ իր ծառին տակը՝ անշարժ):

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Նախորդ խումբեն միակ մնացողը. նախ բիչ մը կմնա մեջտեղը մտածկոտ. ետքը բան չհասկցողի շարժումով կօրօրե գլուխը ու կմոտենա Աբեղային) *Լսեցի՞ր, աբեղա՛, լսեցի՞ր։*

ԱԲԵՂԱՆ— *Կլսեմ, կլսեմ... թո՛ղ ինծի, մի՛ խանգարե՝ որ լսեմ։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Զարմացած) *Ի՞նչը։*

ԱԲԵՂԱՆ— (Խորքը մատնանշելով) *Ա՛յ, ականջ դի՛ր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ է որ։*

ԱԲԵՂԱՆ— (Խորհրդավոր) *Ջրերը կհուզվին, ջրերը հուզվիլ են սկսեր։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Է՛, ի՞նչ ընենք. երևի, գիշերը փոթորիկ ենք ունենալու։*

ԱԲԵՂԱՆ— (Սաստիկ հուզվելով) *Փոթորի՞կ, փոթորի՞կ...*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Անտարբեր) *Գուցե՛, եղանակները փոխվեցան։*

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ բռնելով ընկերոջը թևեն) *Ուրեմն այս գիշե՞ր... կկարծես՝ այս գիշե՞ր...*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Այդ ինչպե՛ս կդողաս։ Խե՛ղճ աբեղա, այն փոթորիկեն ի վեր, երևի, աչքդ վախցեր է։ Հանգստացի՛ր, հանգստացի՛ր։ Եկո՛ւր երթանք եկեղեցի. աղոթե՛, սիրտդ կթեթևի։*

ԱԲԵՂԱՆ— (Հանկարծ) *Եկուր երթանք ափը։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Ա՞փը։*

ԱԲԵՂԱՆ— *Եկո՛ւր, տեսնել կուզեմ փոթորկին գալը։ Բայց... բայց առանձին չեմ կրնար։ Գիտե՞ս, կքաշե, կարծես կքաշե, կքաշե...* (Ամուր կսեղմվի ծառին):

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— *Աբեղա՛, ավելի աղեկ է՝ երթաս ու պառկիս։ Դեռ իզուր ես ելեր ոտքի։ Տե՛ս, աչքերդ կատարյալ տենդ ունին դեռ։ Երթա՛նք, տանիմ քեզի խուցդ։*

ԱԲԵՂԱՆ— (Ծառին քսվելով կամաց մը կիջնե ու կնստի) *Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ ինծի։ Թո՛ղ, ես տեսնել կուզեմ փոթորկին գալը։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Կեցած է Աբեղայի գլխուն՝ չիմանալով ինչ ընե):

## 3

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— (Ներս վազելով) *Վանահա՛յրը, վանահա՛յրը։*

Կլավին ձայներ, զսպված աղմուկ ու մեկ-մեկ, երկու-երկու՝ խառն կմտնեն վանականները խոժոռ ու մտախոհ: Կուգան ու լուռ կշարվին իրարու քով: Վանական մը կառաջնորդե Կույրը:



ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— *Բայց ի՞նչ կա, է՛. ի՞նչ է պատահեր։*

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՎԱՆԱԿԱՆԸ— *Ըսի՝ չգիտեմ. վանահայրն է պատվիրեր։*

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— *Սո՛ւս. եկա՛վ։*

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Արթնցնելու պես) *Ոտքի՛, աբեղա՛, վանահա՛յրն է։*

ԱԲԵՂԱՆ— (Կնայի շուրջը ու կելլե ոտքի):

## 4

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կուգա խորքեն ծանր ու տխուր: Բոլորը գլուխ կուտան: Լուռ երկար նայվածք մը կնետե խումբին վրա)։ *Բոլո՞րդ եք։*

ՁԱՅՆ ՄԸ— *Այո՛, վանահա՛յր։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Կնստի բարձր քարի մը: Սպասողական լռություն) *Բան ունիմ ձեզի ըսելու։* (Կմտածե): *Կտեսնե՞ք այս եկեղեցին, որ գրեթե ավարտած է արդեն և ուր բավական ժամանակե ի վեր մեր աղոթքները կխնկենք մեր Աստծուն. այս եկեղեցին... այս եկեղեցին նվիրված չէ՛ մեր Աստծուն։*

Ընդհանուր զարմանք ու շարժում:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— *Ի՞նչ ըսիր, վանահա՛յր։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— *Այս եկեղեցին նվիրված չէ՛ մեր Աստծուն։ Այս եկեղեցին, երբ ես կշինեի, ես դեռ կտրված չէի աշխարհեն...* (Շշուկներ) *Ես կկարծեի, թե կտրված եմ։ Մենք բոլորս ալ, որ թողեր ենք աշխարհը ու եկեր անապատ, մեր հոգիին խորքը դեռ մեծ կտոր մը աշխարհք էինք բերեր մեզի հետ. ներքին վայելքի ծածուկ կարոտ մը, քողարկված հաճույքներու բարակ ծարավ մը, մեր անցած կյանքի, կռվի ու հուզումներու ամբողջ նուրբ ու կպչուն ցանց մը. և ակամա վերհուշներ։ Այս բոլորը դեռ մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կշինեինք։ Այդ ծածուկ, քողարկված հուզումներն են շիներ այս եկեղեցին, աշխարհեն անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կտորն է շիներ այս եկեղեցին։ Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր Աստծունը չէ՛։ Անոր կամարներուն տակ մենք այլևս աղոթել չենք կրնար. այդ կամարները պետք է քանդվի՛ն։*

ՁԱՅՆԵՐ— (Ապշած. սարսափած) *Քանդվի՞ն... քանդվի՞ն։*

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— *Մեր եկեղեցին քանդվի՞։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— *Մեր նոր եկեղեցին քանդվի՞։*

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Այո՛. պետք է քանդե՛նք ու շինենք նորը։

ՁԱՅՆԵՐ— (Զարմանք ու հեգնություն) Նո՞րը... նո՞րը...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Շինենք նո՞րը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Նո՛րը։ Եվ այդ նոր եկեղեցին պիտի շինենք մե՛նք ինքներս։ Աշխարհեն եկած դրամը աշխարհիկ զգացումներու նվերն է, աշխարհեն եկած վարպետները աշխարհիկ հասկացողություն է, աշխարհի արվեստը։ Մարդս ի՛նք միայն կրնա շինել իր Աստծուն նվիրված տաճարը, ի՛ր մեջքովը, ի՛ր ձեռքերովը, ի՛ր խելքովը։ Թե ինչ ձև է ունենալու մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ. ա՛յ, կնստինք միասին ու կխորհինք. կխորհինք ու կստեղծենք։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— (Հեգնոտ) Մենք ի՞նչ արհեստավորներ ենք, վանահա՛յր. մենք ի՞նչ կրնանք շինել, դիցո՛ւք, եթե ուզենք ալ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կա՛մքը. ծերունի՛. ուզե ու կշինես, եթե մանանեխի չափ հավատք ունենաս քու կամքիդ։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Է՜, անցեր են այն ժամանակները։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ո՛չ, չե՛ն անցեր. դեռ չե՛ն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիիս մեջեն պիտի երթանք դեպի այդ ժամանակները։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Լսե՛, վանահա՛յր. լսե՛ ինծի, ես ծերունի մարդ եմ։ Դուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ։ Քու բռնած ճամփադ ծառ ճամփա է։ Մի՛ չարչարեր գլուխդ, այդ ճամփան հերետիկոսներուն ճամփան է։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հպարտ) Այդ ճամփան առաքյալներու ճամփան է. այդ ճամփով է անցեր ինքը Քրիստոս։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Ո՜ւ... կլսե՞ք։

Շշուկ ու վրդովում:

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Մի՛ խոսիր այդպես անմիտ, վանահա՛յր։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ո՛չ ալ այդպես մեծամիտ։

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Եվ ձգե հանգիստ մեզի ու մեր եկեղեցին. մեզի պետք չեն նոր ձևի շենքեր. այս ձևն է մեզի մեր պապերեն ավանդ հասեր։

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Մենք ո՛չ քարտաշ ենք, ո՛չ վարպետ։

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Եվ չենք եկեր հոս պատեր քանդելու, պատեր շինելու։

ՈՒՐԻՇ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Մենք եկեր ենք հոս հանգստանալու։

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Այո՛, հանգստանալու ու աղոթելու։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Եվ ինչո՞ւ քանդենք մեր նոր շինած սիրուն աղոթատեղին. ոչինչ չեմ հասկնար. մի՞տքն ինչ է, ինչո՞ւ։



ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Որուն վրա այսքան ծախս է թափվեր, այսքան աշխատանք։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Եվ ի՞նչ ըսենք իշխանին, իշխանուհիին, որոնք հոգացեր են բոլոր ծախքը։

ՁԱՅՆԵՐ (Խառն) Իհարկե՛, իհարկե՛... իշխանը... իշխանուհին...

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Եվ ո՞վ կուտա այն ատեն տասը չափ ցորենը, պարենը, այսքան նվերը։

ՁԱՅՆԵՐ— (Խառն) Իհարկե՛... իհարկե՛... ցորենը... պարենը...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Հանգիստ թո՛ղ մեզի ու մեր ապրուստը։

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Քու շինելիք եկեղեցիդ հաց կուտա՞ մեզի։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Որքան ալ ըլլա մեր սեղանը սակավ, բայց հաց պետք է, որ ապրինք։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Որ կյանքի հոգը չխեղդե մեզի։

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Որ մեր աղոթքը չխանգարի։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Ուշքի եկո՛ւր, վանահա՛յր, քանի կանուխ է ու թո՛ղ մեր անապատը խաղաղ ու հանգիստ։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Նախ շվարածի պես է այս տարափին տակ, ետքը գլուխը վեր կառնե, կնայի շրջապատողներուն տեսակ մը ապշությամբ) Դուք... հո՛ս իմ շուրջս, ե՞ս... հոս կեցած ձեր մեջը... Ե՛ս ձեր վանահայրը, դո՛ւք իմ միաբանությունս, ի՛մ իսկ հիմնած։ (Ժպտուն) Միաբանությո՜ւն, ի՜նչ միություն ձեր ու իմ մեջ... (Աչքերը շփելով) Կարծես կապը կիյնա աչքերես։ Ի՞նչպես է եղեր, որ ես չեմ հասկցեր այսքա՛ն պարզ բանը, այսքան ակնհայտնի։ Մինչև հո՛ս, մինչև անապատ կրցեր ենք մենք միասին։ Մինչև հոս ես կրնայի բերել ձեզի, մինչև հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկե անդին... հոսկե անդին մարդ ի՛նքը պիտի երթա։ Ճշմարիտը դո՛ւք եք. այդ եկեղեցին պետք է, որ մնա. ա՛ն է ձեր եկեղեցին, գացե՛ք, գացե՛ք ներս. ան կուտա ձեզի անվերջ աղոթքներ ու մխիթարանք. ան կբանա ձեզի արքայության դռները. կազատե ձեզի բոլոր սատանաներեն, ան ձեզի ձեր հացն ալ կուտա ու ձեր հանգիստը. գացե՛ք, գացե՛ք ներս ու խաղաղությունը թող ըլլա ձեզի հետ։ Իսկ իմ փնտրածս ատիկա չէ. իմ փնտրածս աշխատա՛նքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նվաճումները բարձունքե-բարձունք, պարիսպե-պարիսպ, տարակույսներու անդունդներուն վրայեն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դեպի ճշմարտությունը։ Գացե՛ք, գացե՛ք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ ի՛մ եկեղեցիս. բայց այս անգամ ե՛ս, միայն ե՛ս, և կերտվածք մը, որ վայել ըլլա իմ Աստծուս բնակությանը, որու կամարներուն տակ իմ խըն-

Կելիք աղոթքիս ո՛չ մեկ բառը կեղծ չհնչե, ո՛չ մեկ բառի արձագանքը դատարկ չհնչե։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— (Մաղրով) Ատ ո՞ւր պիտի շինես, վանահա՛յր, քու նոր կերտվածքը։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Մաղրով) Եվ ինչե՞. գրանի՞տ պիտի ըլլա, թե՞ մարմարե։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Գրանիտ ու մարմար, որձաքար ու ամեն տեսակ քար ես կթողեմ աշխարհի աստվածներուն։ Իմ տաճարիս հիմքը իմ բանականությունս պիտի ըլլա, սյուները իմ կամքս է, ու գմբեթն ալ ըլլալու է հավատքս։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Շատ խախուտ է, վանահա՛յր, նոր շենքիդ հիմքը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Անփույթ) Խախուտ է՝ կփլի։

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Եվ այն ատե՞ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կշինեմ նորը։

ԾԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ— Բայց ատիկա վերջ չունի։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Կուզեիր, որ վե՛րջ ունենար։ Քանի կապրինք՝ շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք, շինենք ու շինենք միշտ, բայց երբե՛ք, երբե՛ք չավարտենք։ Հենց որ ավարտի, ալ տաճար չէ Աստծու, այլ... (Եկեղեցին մատնանիշ) կապտուն։

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— (Կատաղի) Կհայհոյե, կհայհոյե մեր Աստծուն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ամենեն սոսր հոգիները միայն հայհոյել կրնան այն Աստծուն, որուն երբեմն երկրպագեր են։ Բայց կտեսնեմ՝ ալ մենք իրար չենք հասկնար։ Մնաք բարով, ձեր Աստվածը ձեզի հետ։

Կուգե երբա՝ Աբեղան առաջ կուգա ու ճամփան կկտրե:

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ է։ Գուցե կուզես նորեն ինծի հետ, աբեղա՛։ Եկո՛ւր, քու հոգիդ թռիչք ունի, ես գիտեմ։

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր։ Ըսե՛. քու այդ նոր շենքեդ երևա՞ պիտի արևի ծագումը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Մոռցի՛ր արևն ու իր ծագումը, որ ծագի քեզի ծագումներուն ծագումը, որ արև է քեզի արևներուն արևը։

ԱԲԵՂԱՆ— Կեցի՛ր։ Ըսե՛. քու այն նոր շենքեդ լսվի՞ պիտի, տե՛ս, այս աղմուկը... (Խորքը մատնանիշ ընելով) Կլսե՞ս։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Ի՞նչ աղմուկ. այդ լսվողը ծովն է ալեկոծ։

ԱԲԵՂԱՆ— Այո՛, ատիկա՛։



ՎԱՆԱՀԱՅՐԸ— Քու փնտրածդ, մանո՛ւկ, մարդու կառուցած առաջին եկեղեցին է, նախնակա՛նը։

ԱԲԵՂԱՆ— Չէ՛, ալ ինծի չես խաբեր քու այդ արհամարհոտ բառերովդ։ Խոսե շիտակ. ըսե՛. հասնելո՞ւ է քու եկեղեցիդ ծովուն ձայնը։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— Իմ եկեղեցիս չէ հասնելու ո՛չ մեկ արտաքին հուզում, ո՛չ մեկ արտաքին աղմուկ։ Եթե կուզես ինծի հետ՝ հույսդ կտրե արևեն ու ծովեն։

ԱԲԵՂԱՆ— (Ճամփա տալով) Անցի՛ր այն ատեն։

ՎԱՆԱՀԱՅՐԸ— (Հեռանալով) Ափսոս, աբեղա՛, քու միտքդ երբեմն թևեր ուներ։ (Դուրս):

ԱԲԵ՛ՂԱՆ— (Ետևեն) Ափսոս, վանահա՛յր, քու սիրտդ երբեմն թևեր ուներ։

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— (Երկու ձեռքերը առաջ պարզելով) Ես... ե՞ս կուգեի քեզի հետ...

ՁԱՅՆԵՐ— (Շշուկով) Կո՞ւյրը... կո՞ւյրը...

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԲԱՐՁՐ ԾՈՎԱՓ

Աջ ու ձախ ժայռեր: Քարքարոտ գետինը քիչ-քիչ կբարձրանա ու ճակտին կկազմե ծովուն սեպ ջրքուճքը:

Գիշեր է. ալեկոծություն:

### 1

Ժայռի ջրքուճքին ալիքներուն կատաղի եռևեջը:

Ալիքները, որոնք կնոջ մարմին ունին, կերևան միայն մինչև մեջքը ու կաշխատին կախվին ժայռեն, բայց վայրկյան մը միայն, իսկույն վար կթափվին նորեն ջառաչելով:

ՁԱՆԱՁԱՆ ԱԼԻՔՆԵՐ— (Բերնե-բերան ու ընդհատ-ընդհատ)

— Պիտի կործի՞ս։
— Տեղ տուր լանջիս։
— Քարի՛ն փակչիս։
— Ա՜յ, հասա՛նք, հասանք։
— Հոսա՞նք է, հոսանք։
— Ի՞նչ վազեր ենք ափե-ափ։

— Ի՞նչ ցատկեր ենք չափե-չափ։
— Չա՞փ. ի՞նչ չափ։
— Անչա՛փ. անչա՛փ։
— Չա՛փ, չա՛փ։
— Աս թռչիլ է, վազել չէ։
— Աս եռալ է, ցատկել չէ։
— Կեցի՛ր, կեցի՛ր ու կանչե՛։
— Չէ՛, չէ՛, անցի՛ր. աս ա՛ն չէ։
— Ա՛ն է։
— Ան չէ՛։
— Է՛, մեկ չէ՞։
— Կանչե՛, կանչե՛։
— Մենք պարապ չե՛նք։
— Ոչի՛նչ, կանչե՛նք։
— Կանչե՞նք։
— Կանչե՛նք։

*ԽՈՒՄԲ ՄԸ ԱԼԻՔ*— (Միաբերան)
Հե՜յ, ականջե՛.
հույզ ու տենչ է ամեն լանջե,
կչառաչե.
քեզի ծո՛վն է, որ կկանչե,
հե՜յ, ականջե՛։

*ՈՒՐԻՇ ԽՈՒՄԲ ՄԸ*— (Հեգնանքով ու հեռանալով)
Ա՜, չէ՛, չէ՛, չէ՛.
նստե հողին ու քեզ տանջե։

*ՆԱԽՈՐԴ ԽՈՒՄԲԻՆ ՁԱՅՆԸ*— (Ավելի հեռուեն)
Հե՜յ, ականջե՛.
հույզ ու տենչ է ամեն լանջե...

Ու քիչ մը ատեն ժայռի շրթունքին լռություն կտիրե, և ավելի որոշ կլսվի բացերեն փոթորկի խ..ր ու խուլ աղմուկը:

2

*ԱՐԵՂԱՆ*— (Կողմնակի ժայռերուն մեջեն կնետվի ներս. մազերը խռիվ, հագուստը խառնակ, աչքերը մոլար) *Եկա՛, եկա՛...* (Ու հանկարծ կկենա, կշփե ճակատը, կնայի ետ ու կսկսի բարկացած չեշտով մը) *Դե՛, մնա՛ս բարով, կղզի՛, մնաս բարո՛վ, անապա՛տ, մնաք բարո՛վ, դուք ալ*



*մութ-մութ կամարները տաճարին, մնա՛ք բարով, իմ աղոթքներս ու խընկումը հոգիիս. մնաս բարո՛վ և դո՛ւն, ո՛վ անողոք ու վրեժխնդիր Աստված, որուն ուղղեր եմ իմ տենչերս ու աղոթքներս։ Դուն ալ մնաս բարո՛վ, խցի՛կս, իմ մենավոր ու լռիկ խցիկս, ալ չեմ դառնալու քեզի։ Ա՛, դեռ կվառի հող՝ ծոցիդ մեջ՝ ճրագիս աղոտ լույսը. առտվան դեմ մինակ, մինակը մարի պիտի ու ալ երբեք չի պիտի վառի։ Թո՛ղ մարի։*

Հովի ուժեղ թափը:

*ԱՐԵՂԱՆ*— (Կցնցվի՝ կդառնա ծովուն ու թևերը կարոտակեզ առաջ պարզելով) *Դե՛, բա՛ց գիրկդ, Սեղա՜, բա՛ց թևերդ. ահա՜ հույզքը ջրերուն, ահա՜ վազքը փոթորկին. բա՛ց թևերդ ու նորեն փարած քու խընկելի մարմնիդ, նորեն շունչդ շնչիս, ալիքներուն մեջեն, անցնիմ այն նո՛ր ու մե՛ծ անծանոթին, նոր գոյության ու նոր կյանքին. ա՛ն, որ խոստացեր ես ինծի։ Բա՛ց գիրկդ, Սեղա՛...*

3

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— (Վերի ժայռին վրայեն չիտակ անոր առջևը կցատկե ու կկտրե ճամփան հևալով) *Կեցի՛ր։* (Կուրծքը սեղմելով) *Շունչըս... շունչս...*

*ԱՐԵՂԱՆ*— (Հանկարծակիի եկած ու խոժոռ) *Մեկդի՛ ճամփես։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— *Կեցի՛ր, դժբա՛խտ, կեցի՛ր։ Վախցի՛ր Աստուծմե։*

*ԱՐԵՂԱՆ*— (Կռվի պատրաստվելով) *Մի՛ կտրեր առջևս։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— *Քու առջևդ մութ է ու անդունդ։*

*ԱՐԵՂԱՆ*— *Ե՛տ քաշվե, մա՛րդ։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— *Վախցի՛ր այդ մութեն ու անդունդեն։*

*ԱՐԵՂԱՆ*— (Կատղած) *Է՜, հերի՛ք է, հեռո՛ւ գացեք ձեր անդունդներովն ու մութերովը, հեռո՜ւ ձեր անվերջ վախերովը։ Վա՛խ լույսերեն ու բերկրանքեն. վա՛խ մութեն ու տանջանքեն, վա՛խ աստվածներեն ու դժոխքեն։ Հեռո՜ւ, բա՛ց ճամփաս։ Հոն ո՛չ մութ կա, ո՛չ անդունդ։ Սովն է միայն ու փոթորիկը իմ առջևս։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— *Մահն է քու առջևդ, թշվառակա՛ն։*

*ԱՐԵՂԱՆ*— *Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ*— *Աստվա՛ծ իմ, խելագար է։*

*ԱՐԵՂԱՆ*— *Մահը ա՛ս է, հո՛ս ա՜լ, այս ձեր անապատը, այս վախի ու մեռելության կյանքը. իսկ հոն ազատն է. հույզն ու շարժումը. հոն կյանքն է, և ես կուզեմ կյանքին գիրկը...* (Հանկարծ ուժով մը կնետ,

կենտե գոտին) *Հեռո՛ւ ճամփես։ Ես կուզեմ ապրի՛մ, ապրի՛մ։ Սեդա՛...*
(Կնետվի ծովը):

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ—* (Կես մը գետնեն բարձրանալով, սարսափահար ու խեղդված ձայնով) *Կորա՛վ. կորա՛վ իր հոգին...*

## 4

Ժայռերուն մեջեն հետզհետե կհասնին վանականները՝ հազուստ ու մազեր հովերուն:

*ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞ւր է, ո՞ւր է։*

*ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Գտա՞ր. ճի՞շտ է. տեսա՞ր։*

*ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Ո՞ր կողմը անցավ։*

*ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ—* (Ներս ցատկելով) *Ո՞ւր է. ո՞ւր է։*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ—* (Ծովը մատնանիշ) *Ա՛յ, հո՛ն...*

*ԽՈՒՄԲԸ—* (Սարսափելով, կիսաձայն) *Ծո՛վը...*

*ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Կորա՛վ իր հոգին։*

*ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Ա՛յ անիծված է այս ժայռը. հոսկե ճգնավոր մըն ալ նետեր է ինքզինքը ծովը։*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Ուրիշ վանականի մը թևեն կախված, շնչասպառ ու սաստիկ հուզված, թևերը անկարգ խարխափող շարժումներով առաջ պարզած՝ կմտնե ներս):

*ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Եկավ իր կո՛ւյրը, իր կո՛ւյրը...*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Կկենա անշարժ ու ամբողջ հասակովը ուղղվելով, ընդհանուր լռության մեջ) *Իրա՞վ է, իրա՞վ է։*

*ԲՈԼՈՐԸ—* (Քար լռություն. գլուխները կկախեն վար):

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Ձեռքերը վեր բարձրացնելով) *Ուրեմն... Աստվա՛ծ իմ։*

*ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ— Այո՛, Աստվա՛ծ։ Աստծու վրեժն էր ասիկա։ Եկեղեցին քանդել ուզելը անպատիժ չի մնար։ Մեծի վրեժը ինկավ ամենեն փոքրի գլխուն։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ— Ա՜խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր աբեղան։*

*ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ— Հեզ ու բարի, համեստ ու սուրբ։*

*ԽՈՒՄԲ ՄԸ— Ան սուրբ էր, սուրբ։*

*ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ— Եղե՛րքն իջնենք, եղբա՛րք, գուցե գտնենք դիակը. գոնե դիակը։*



*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Երթանք, բերենք լաստը։*

*ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Դժվար է, բայց պետք է, որ բերենք լաստը։*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Լա՜ստը։*

*ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ— Զարմանք բան է. ինքը ազատեց ուրիշի մը կյանքը ծովեն ու իր կյանքը տվավ ծովուն։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ— Երթա՛նք, երթա՛նք, որոնե՛նք։*

*ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—* (Աչքերը վեր հառած ու մարգարեական շեշտով մը) *Լսեցե՛ք, եղբա՛րք։ Եթե Աստված ողորմի ու դիակը գտնենք, պետք է տանինք թաղենք նոր եկեղեցիի սեմին։ Զոհի նոխազը կմորթեն տաճարի սեմին։*

*ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ— Տերը կխոսի քու բերնովդ։ Թաղենք եկեղեցիի սեմին։*

*ԽՈՒՄԲԸ—* (Հեռանալով) *Թաղե՛նք, թաղե՛նք եկեղեցիի սեմին։*

Բոլորը դուրս. կմոռցվի կույրը, որ կմնա մինակ:

## 5

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Խոտակված գլուխը կշարժե) *Գացե՛ք... թաղեցե՛ք... ձեր եկեղեցիի սեմին. հին աստվածներու սեմին. ա՜, կարող են, հզո՛ր, այդ հին աստվածները. դեռ շա՜տ են հզոր...*

*ՁԱՅՆ ՄԸ— Իզո՜ւր հանեցիր աչքերդ։*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Խորին հուզումով ու անճարեկ) *Ո՞վ է ան, որ կհանդգնի...*

*ՁԱՅՆԸ— Իզո՜ւր հանեցիր աչքերդ։*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ—* (Վախեն ետ-ետ երթալով) *Որո՞ւն ձայնն ես դուն... կուզեի նայիմ աչքերուդ խորքը...*

*ՁԱՅՆԸ— Իզո՜ւր հանեցիր աչքերդ։*

*ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ— Իզո՞ւր...*

# ԿԱՅՍՐ

Թատերակ բյուզանդական դարերեն

## ՆԱԽԸՆԹԱՑ ԱՐԱՐ

### ՏԵՍԱՐԱՆԸ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՏԵՂԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՎՐԱՆԻՆ ՏԱԿ

Աջ կողմը ցած ու լայն բազմոց մը, մեջտեղը ցածլիկ սեղան ու մեկ-երկու աթոռակ: Գլխավոր մուտքը ճակտեն. ուրիշ անցք մը ձախեն կտանի կից վրանը, ուր ննջարանն է: Մուտքերու վարագույրները գոց են ու վրանին տակ կես-մութ մը կտիրե:

1

Հրամանատար՝ Նիկեֆոր Ֆոկաս՝ նստած է բազմոցին եզերքը գլուխը կախ: Բայց կամաց-կամաց կշտկվի ու դանդաղ կելլե վեր:

Կարճահասակ գիրուկ մարդ մըն է, ճիտունը անց, դեմքը խիստ թուխ, խիտ ու երկար սև մազերով, կարճ ու ցանցառ մորուք, մանր ու անհանգիստ աչքեր:

*ՆԻԿԵՖՈՐ ՖՈԿԱՍ*— (Մտածկոտ) *Կա՛յսր։* (Հեգնոտ) *Կա՞յսր...* (Հանկարծ) *Ինչո՞ւ ոչ։ Սակայն...* (Ու կմնա նորեն անշարժ ու մտասույզ):

Ննջարանի վարագույրեն կմտնե տանու երեցը՝ ձեռքը ավետարան ու խաչ ծոցի մը մեջ փաթթած:

2

*ԵՐԵՑԸ— Ողջո՞ւյն և օրհնությո՛ւն մեծ սպարապետին։*

*ՆԻԿԵՖՈՐ— Ա՞խ ,արդեն ավարտե՞ր ես ժամասացությունը։*

*ԵՐԵՑԸ— Շիտակ Աստծու սեղանեն է, որ կուգամ։ Մեր Փրկչի աջն ու խաչը հովանի քեզի։*



*ՆԻԿԵՖՈՐ*— (Խոնարհ ու ջերմեռանդ կծռի ու կհամբուրե սրբությունները):

*ԵՐԵՑԸ— Մտա ննջարանդ, ըստ սովորության, բայց, ինչպես կերևա, դուն չես պառկած այս գիշեր. աչքերդ ալ կվառին տարօրինակ։ Կաղոթեի՞ր։*

*ՆԻԿԵՖՈՐ— Պետք էր, որ խոսեի Աստծու հետ։ Պետք էր, որ փորեի, քրքրեի, հասնեի խորքը, խորքը... Ա՜, շա՜տ մութ վայր է այդ հոգի ըսվածը, որ կսողոսկին անկուշտ ցանկությունները, կստոստեն ամբարտավան խորհուրդները, կհոհռան բնազդները անժուժկալ, և ուր կրքերը, միշտ արթուն, վագրի մը նման կծկտան են. որսի վրա նետվելու։*

*ԵՐԵՑԸ— Ճշմարի՛տ է, սպարապե՛տ, գծած պատկերդ, բայց խիպաս անհարիր քու շրթունքներուդ։ Ո՞վ կա ամբողջ բանակիդ մեջ քեզմե ավելի սանձ դրած իր մարմնին ու կրքերուն, քեզմե ավելի պարզ ապրող ու ժուժկալ, քեզմե ավելի աղոթքի, ժամի ու ծոմի հետևող։*

*ՆԻԿԵՖՈՐ— Երե՞ց, մի՛ ծածկեր վերքը շոյող պալասանով. թո՛ղ որ կսկծա։*

*ԵՐԵՑԸ— Սո՞ւտ է խոսածս։ Շաբաթվան չորս օրը միս չես ուտեր. երեք տարի է կնոջդ մահը, և դուն կին չես տեսեր. հոգիդ միշտ խոնարհ է եղեր ու ողորմած. զենքիդ բոլոր հաջողությունը վերագրեր ես ընկերներուդ, որոնք ատոր համար ալ կպաշտեն քեզի։*

*ՆԻԿԵՖՈՐ— Այդպե՞ս։ Իսկ ես կըսեմ քեզի՝ մո՛ւթ է, մո՛ւթ, մարդու հոգին։ Հերի՛ք է։ Եթե եկեր ես գովքս ընելու, շատ ձախորդ օր ես ընտրեր. ավելի լավ է՝ աղոթես ինծի համար։*

*ԵՐԵՑԸ— Ատ է արդեն իմ ըրածս տիվ և գիշեր. անարժան աղոթքս իմ սպարապետիս համար, իր հոգիին, իր անձին, իր ցեղին, ինչպես և իր բանակին համար, իր ձեռնարկին, արշավանքին, իմ անարժան բերնովս, տիվ և գիշեր։*

3

*ԹԻԿՆԱՊԱՀ ՄԸ*— (Ճակտի վարագույրներուն մեջեն) *Իսահակ Ֆոկաս, կեսարական քաղաքեն։*

*ՆԻԿԵՖՈՐ— Ա՜, վերջապե՞ս։ Նե՞րս բեր։* (Երեցը ճամփելով) *Լա՛վ։*

## 4

Կմտնէ Եօրէկը, այրված, առողջ ու խոշոր ալեխառն մարդ մը։ Նիկեֆոր կըշտապէ դէմը, ու կողջագուրվին։

ԻՍԱՀԱԿ ՖՈԿԱՍ— Խե՛ր ըլլա, Նիկեֆո՛ր։ Ի՞նչ կդառնա։

ՆԻԿԵՖՈՐ ՖՈԿԱՍ— Դարձածը... կիմանաս։ (Հանկարծ) Նախ ըսե ինծի՝ տեսա՞ր բանակս։

ԻՍԱՀԱԿ— Ի՞նչ։

ՆԻԿԵՖՈՐ— (Հպարտ) Չդիտեցի՞ր ճամփուդ վրա ճերմակ վրաններուս անսահման ծովը, չհամրեցի՞ր անվերջ գնդերուս խիզախ շարքերը, անվախ զորքերուս զվարթ դեմքերը։ Քեզի կհարցնեմ՝ տեսա՞ր բանակս։

ԻՍԱՀԱԿ— Նո՞ր պիտի տեսնեմ ես քու բանակդ։ Ճի՛շտ է, մեր հողերեն քիչ դուրս կուգամ, բայց առաջին անգամը չէ, կարծեմ, որ բանակիդ մեջն եմ։

ՆԻԿԵՖՈՐ— Հա՞։ Իսկ ես երեսուն տարի է, որ այդ բանակին մեջն եմ, այդ բանակին հետն եմ, այդ բանակին տերն եմ, այդ բանակը ես եմ ծներ. ես եմ կազմեր, ստեղծեր եմ ոչնչեն, բայց ինծի կթվի, որ այդ բանակը ես նո՛ր կտեսնեմ։

ԻՍԱՀԱԿ— Զարմա՛նք։ Ես մի՛շտ տեսեր եմ։

ՆԻԿԵՖՈՐ— Երեսուն տարի. ճանկռտելով-ճանկռտելով, քայլ-քայլ ամենեն խոնարհ աստիճաններեն մինչև հոս։ Ինչպե՛ս կռվեր եմ, ինչպե՛ս ջարդեր եմ արաբներուն քիթն ու պռունգը. պաշտպանե՛ր եմ ու ետ-ետ եմ քշեր արևելքի սահմանները, մաքրե՛ր եմ Կրետեն ու ծովն եմ թափեր դարերով հոն բուն դրած սարակինոսները, և խոնարհեցուցե՛ր եմ մահիկը բյուզանդական խաչին առջևը։ Բայց իմ բանակս ես դեռ տեսած չեմ եղեր, ես դեռ ըմբռնած չե՛մ եղեր, թե դա ինչ բացառիկ ուժ է, որ դրեր է Աստված իմ ձեռքերուս մեջ։ Եվ գիտե՞ս ուր էր, որ ես տեսա առաջին անգամ իմ այդ սարսափելի ուժը։

ԻՍԱՀԱԿ— Ո՞ւր տեսար։

ՆԻԿԵՖՈՐ— Պոլի՛ս, պալա՛տը, այն փոքրիկ սենյակին մեջ, Հովսեփ Բրինկասի աչքերուն խորքը։

ԻՍԱՀԱԿ— Խնամակա՞լը։

ՆԻԿԵՖՈՐ— (Դառն) Հա՛, Ռոմանոսի թողած փոքրիկներուն խնամակալը. այրի թագուհիին կեղեքիչը, արքունիքի ու պաշտոնեության վզին հեծած բռնակալը, մեր երկրի այսօրվան միահեծան տերը և իմ վատթար թշնամիս։

ԻՍԱՀԱԿ— Հա՛, լսեր եմ, որ կանչեր էին քեզի Պոլիս. թեև լուրերը դժվար կհասնին մեր լեռները։



ՆԻԿԵՖՈՐ— Երբ դեմս կեցած քնացնել կուզեր ինծի շողոմ խոսքերով, իր աչքերուն մեջ տեսա ես առաջին անգամ. տեսա այն անսահման վախը, որ ուներ ինծմե ու իմ բանակես։ Ա՛յն աստիճան մեծ էր երկյուղը իր աչքերու մեջ և ա՛յն աստիճան իմ ոչնչացումս կնյութեր այդ նայվածքը, որ վայրկյան մը վախը մտավ և ի՛մ մեջս. ըսի՝ այս պալատեն ես այլևս ողջ դուրս չեմ գալու։

ԻՍԱՀԱԿ— Ե՞տքը։

ՆԻԿԵՖՈՐ— Ետքը... ա՛յ, կեցած եմ դեմդ ողջ ու առողջ. և իմ վրաս է հիմա բոլոր խելացի մարդոց վերջին հույսը, միա՛կ հույսը։

ԻՍԱՀԱԿ— Երևի և անոնք էին, որ կերպ մը ազատեցին քեզի իր ճանկերեն։

ՆԻԿԵՖՈՐ— Լսե՛։ Հովսեփ Բրինկասը ո՛չ մեկ ուժ չունի, որ հավասար գա իմ գնդերուս, ո՛չ մեկ լուրջ բանակ, որ փռել կարողանա դեմը ճերմակ վրաններուս։ Բա՛ց է առջևս։ Շա՛տ դժվար բան է, Իսա՛կ, երբ դեմդ բաց է, երբ դեմդ արգելք չկա. սահման չկա. և երբ ամե՛ն ինչ կհասկնաս՝ ինչ կըսեմ, ամեն ինչ կախված է քու կամքեդ։ Ես կսարսափիմ հիմա ինքս ինծմե։

ԻՍԱՀԱԿ— Ի՞նչ է միտքդ, Նիկեֆո՛ր։

ՆԻԿԵՖՈՐ— Ա՛յ, կանչել եմ որ խոսինք։ Չէ՞ որ դուն Ֆոկասներուս մեջ մեծն ես, մեր ընտանիքին ավագը. և ես ու դուն միշտ հասկցեր ենք իրար լեզու։

ԻՍԱՀԱԿ— Հա՛, բայց պայմանով, որ այդպես հանելուկ չըլլան խոսքերդ։ Հողի հետ գործ ունեցողի ձեռքն ու գլուխը քիչ մը հաստ կըլլա. մի՛ մոռնար։

ՆԻԿԵՖՈՐ— Աղե՛կ, ըսե՛մ հիմա քեզի բան մը սաստիկ պարզ ու հստակ։

ԻՍԱՀԱԿ— Ըսե՛ նայինք։

ՆԻԿԵՖՈՐ— Քիչ մը առաջ հոս էր իմ տանու երեցը ու կգովեր ինծի, որ ես երեք տարի է կնոջ հետ չեմ եղեր։

ԻՍԱՀԱԿ— Գովելու բան չէ։

ՆԻԿԵՖՈՐ— Չգիտեմ։ Ճշմարիտը սակայն այն է, որ ես կցանկամ կնոջ մը։

ԻՍԱՀԱԿ— Վա՞յ։

ՆԻԿԵՖՈՐ— Այո, չորս ամիս եղավ, որ կցանկամ կնոջ մը, և գեղեցիկ կնոջ մը, շատ գեղեցիկ կնոջ մը, բյուզանդական պետության ամենեն գեղեցիկ կնոջը։

ԻՍԱՀԱԿ— Ի՞նչ կըսես։ Ըսե՛ տունը հարսնիքի պատրաստություն տեսնենք։ Ո՞վ է որ. կճանչնա՞մ։

ՆԻԿԵՖՈՐ— Քեզի կըսեմ՝ բացառիկ կնոջ մը, շա՛տ բարձր դիրքի կնոջ մը...

ԻՍԱՀԱԿ— Տե՛ր Աստված։

ՆԻԿԵՖՈՐ— Բյուզանդական պետության ամենեն բարձր դիրքի կնոջը։

ԻՍԱՀԱԿ— Թեոֆա՞նո։

ՆԻԿԵՖՈՐ— Այո՛։

ԻՍԱՀԱԿ— Ռոմանոսի այրի՞ն։

ՆԻԿԵՖՈՐ— Այո՛։

ԻՍԱՀԱԿ— Կայսրուհի է, Նիկեֆո՛ր, չի գրգռե՛ր իր դժգոհությունը։

ՆԻԿԵՖՈՐ— Բայց ինքն է որ կկանչե ինծի։

ԻՍԱՀԱԿ— Հա՞։ Հը՛մ։

ՆԻԿԵՖՈՐ— Անոր հույսն ալ իմ վրաս է միայն, ինչպես բոլոր բարեկամներուս։

ԻՍԱՀԱԿ— Այդ բոլոր ըսածներեդ այսքանը միայն խելքս հասավ, որ դուն միտք դրեր ես՝ դառնաս... (Կրնդհատե ու կնայի չուրջը):

ՆԻԿԵՖՈՐ— Վախցա՞ր։

ԻՍԱՀԱԿ— Այսինքն... ինչպես ըսեմ... հանկարծակիի բերիր։ Եվ իրավ է, ինծի կթվի, քիչիկ մը հանդուգն քայլ է։ Վախնամ իյնաս սովերին ետևեն ու մեր բերնեն բաց թողնենք պատվական միսը։ Դիրք, ազդեցություն, հողեր, կալված, բոլորը մեկ անգամեն կելլե մեր ձեռքեն և մերկ ու տկլոր կնստինք տափին։ Իսկ դուն ուղղակի կկոտրես վիզդ։ Ա՜խր, չափազանց բարձր ցատկել կուզես։

ՆԻԿԵՖՈՐ— Բա՛րձր, այո՛։ Ճիշտ այդ բառով ալ գուշակեր է իմ Սուրբս դեռ տարիներ, տարիներ առաջ, երբ ես տակավին պարզ զորավար մըն էի։

ԻՍԱՀԱԿ— Քու Սո՞ւրբդ։ Հա՛, քու վանահայրդ։ Ի՞նչպես էր իր վանքին անունը. լեզվիս ծայրն է. դեռ կապրի՞։

ՆԻԿԵՖՈՐ— (Ոգևորությամբ) Այո՛, Իսա՛կ, կապրի՛։ «Դուն պիտի կոխես այն բարձունքները, որոնց վրա միայն Աստծու ընտրյալները կդնեն իրենց ոտքը»։ Այսպես ըսին իր շրթունքները։

ԻՍԱՀԱԿ— Դուն շատոնց կոխեր ես այդ բարձունքները։ Բացարձակ պետն ես այս ահագին բանակին, ամբողջ Անատոլիի իսկական տերը և ընդհանուր հրամանատար բոլոր արևելյան սահմաններուն։

ՆԻԿԵՖՈՐ— (Մտածկոտ) Մինչև հիմա ես ալ այդպես կխորհեի. բայց հիմա կզգամ, որ այդ սուրբ մարդուն գուշակությունը դեռ հեռուն է, հեռուն, դեռ պետք է հասնիմ։ Միայն...

## 5

ԹԻԿՆԱՊԱՀ ՄԸ— (Ճակտի վարագույրներուն ետեվեն) Զորավար Օհան Գուրգեն։

Միևնույն միջոցին, առանց պատասխանի սպասելու, Օհան Գուրգեն մեկ կողմ կընե թիկնապահը ու կմտնե ներս:

Քառասունը անց, փոքր ու նուրբ, ճկուն ու ճամաչափ մարդ մըն է: Մազն ու մորուքը ավելի չեկ. արտահայտիչ ու գրավիչ դիմագծեր: Շարժումները կեցվածքըն ու խոսքը պարզ ու ազնվական:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ուրախ առաջ գալով) Օ՜, այս ե՞րբ ես եկել. անտես ընող գդակո՞վ։ Եվ ինչպե՞ս է պատահեր, որ սիրտ ես ըրեր, թողեր ես մինակ կալվածներդ, ծմակներդ։ Բարի՛ ես եկեր, և ճի՛շտ ժամանակին։ Ա՜յ, ձեռաց նստինք երեքով ընտանեկան խորհրդի։ Վերջապես ե՛ս ալ ընտանիքեն կհամարվիմ, թեև քիչիկ մը ծուռումուռ գիծով. բայց ըսեր են՝ ազգականի պորտին չեն նայիր, սրտին կնային։

ԻՍԱՀԱԿ— Ը՛, քու պորտն ալ, քո սիրտն ալ։ Եվ ի՞նչ ըսել կուզե, միշտ քեֆդ տեղը, միշտ բանի մը վրա և միշտ նույն խենթը։ «Տարիք» ըսված բանը ե՞րբ պիտի հասկնաս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ժամանակը որ գա՝ կանցնիմ ծմակներդ, որ հասկցնես։ Դուն հիմա ա՛յս մարդուն խոսք հասկցուր։

ԻՍԱՀԱԿ— (Լուրջ) Ինծի նայե՛, Օհան, ի՞նչ է քու կարծիքդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այս երկու շաբաթ է ամեն բանս թողած ինկեր եմ ամենուն պոչեն, մեծին ու պզտիկին, արյուն քրտինք եմ մտեր, որ բանամ աչքերնին, և հիմա դուն ինծի կհարցնես՝ ի՞նչ է իմ կարծիքս։

ԻՍԱՀԱԿ— Իսկ բանակի՞ կարծիքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Թո՛ղ, եղբա՛յր, պարապ խոսքերը։ Ո՞վ է որ հակառակ պիտի ըլլա իր առաջացմանը, իր բարձրացմանը. ո՞վ պիտի ուզե ձեռքեն փախցնե այս տեսակ առիթը։ Արդեն համոզված են ամենքը։ Ա՜յ, եթե շնորհք ունիս, դուն այս մարդը տեղեն շարժե։ Իմ հոգիս հանեց. «դեռ կանուխ է», «դեռ սպասե», «դեռ մտածենք» և «իրավունք», «պատասխանատվություն», չգիտեմ ինչ։

ՆԻԿԵՖՈՐ— Դուն շատ թեթև կնայիս ամեն բանի վրա։ Լավ չէ, Օհա՛ն, կյանքը լուրջ բան է։ Ամեն ինչ նախ կշռել պետք է, հապա ի՞նչ գիտցար։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կշռեր ենք արդեն հազար անգամ բոլոր թերն ու դեմը։ Եվ կկրկնե՛մ քեզի՝ պետք է անմիջապես շարժվինք, եթե հաջողիլ կուզենք։ Իսկ եթե այդպես միշտ ծռծռացնես, կփախցնենք հաջող վայրկյանը ու բոլորս ալ կնստինք հիմարներու աթոռին։

ՆԻԿԵՖՈՐ— Ես գիտեմ իմ ըրածս։ Հանգիստ ձգե՛ ինծի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Զարացած) Աղե՛կ, պինդ նստե՛ տեղդ ու նորեն ամեն ինչ ցորեն-ցորեն կշռե՛։ (Ծոցեն ծալլած թուղթ մը հանելով կնետե սեղանին վրա) Խնդրե՛մ, ասիկա ալ առ ու հետը միասին կշռե՛։

ՆԻԿԵՖՈՐ— Ի՞նչ բան է ատ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Սիրալիր նամակ մը։

ՆԻԿԵՖՈՐ— Գրո՞ղը ով է։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Գրո՞ղը։ Գրողի անունն է Հովսեփ Բրինկաս։

ԻՍԱՀԱԿ— Նամակա՞լը։

ՆԻԿԵՖՈՐ— (Ձեռքը ակամա նամակին երկարելով, սակայն առանց վերցնելու) Բրինկա՞ս։ Կգրե քեզի՞։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այո՛, ինծի՛։

ՆԻԿԵՖՈՐ— Ե՞րբ ես ստացեր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Գիտես որ երեկ բանակը չէի։

ՆԻԿԵՖՈՐ— Ա՛խ, ժամադրությո՜ւն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Եվ շա՜տ խորհրդավոր. բերող մարդուն հետ։

ՆԻԿԵՖՈՐ— Եվ՝ ի՞նչ կըսե։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ո՞վ։

ՆԻԿԵՖՈՐ— Հովսեփ Բրինկաս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Խելոք մարդու խոսք։

ՆԻԿԵՖՈՐ— Քեզի կհարցնեմ՝ ի՞նչ կըսե։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ի՞նչ պիտի ըսե. կգովե իմ զինվորական տաղանդս, հայկական վաշտերու մեծ համբավը, իմ վայելած համակրանքս մայրաքաղաքին մեջ և իմ մասին եղած բա՛րձր համարումը բարձր շրջանակներու մեջ։ Կարդա, կարդա՛, ու տեսնես. շա՛տ իմաստուն ու շա՛տ նուրբ ոճով գրված բան է։

ՆԻԿԵՖՈՐ— Ե՞տքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ետքը... կբարեհաճի ինծի իրավունք տալու, որ իմ հարմար դատած եղանակովս մեջտեղեն վերցնեմ քեզի, ինքզինքս հրատարակեմ արևելքի ընդհանուր հրամանատար, «փութամ Պոլիս», «Աստծու պահած քաղաքը», «բանակներուս գլուխը»։ Եվ այս բոլոր կողմնակի ծառայություններուս փոխարեն ներքինի Հովսեփ Բրինկասը ինծի կխոստանա ո՛չ ավելի, ո՛չ պակաս, քան բյուզանդական կայսրներու գահը. վրան ալ, իբրև հավելված, հանգուցյալ Ռոմանոս կայսեր այրին։

ԻՍԱՀԱԿ— Թեոֆանո՞...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հրամա՛նք ես։ Ինչպես կտեսնեք՝ Պոլսի մարդիկը, մեզի պես, մազին հաստն ու բարակը չեն փնտրեր և կհասկնան, որ



շատ ալ ժլատություն ընելու ժամանակը չէ։ Ինչե՞ն գիտես, որ ուրիշներուն ալ չեն եղած նմանօրինակ դիմումներ։

ՆԻԿԵՖՈՐ— Իսկ դո՞ւն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ես ի՞նչ։

ՆԻԿԵՖՈՐ— Տվե՞ր ես պատասխան։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իհարկե՛։ Չէ՛, քեզի պես, պիտի նստեի օրերով որոճալու։

ՆԻԿԵՖՈՐ— Ի՞նչ է պատասխանդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ըսի, որ ներքինի Հովսեփ Բրինկասը իմ թանկագին բարեկամս է, որ սարսափելի երջանկություն է ինծի համար կայսրներու գահին վրա ծալլապատիկ բազմիլը և ավելի ևս սարսափելի երջանկություն է Ռոմանոսի անկողնին մեջ պառկիլը։ Ըսի, որ երկու շաբաթը չի լրացած կլսեն իմ մասին, երբ բանակներս ըլլան Պոլսի ճամփուն վրա։ Այնպես, որ հիմա այս բոլոր սիրուն ծրագրին մեջ միակ խանգարիչը դուն ես։ Ահա՛ եկեր եմ միասին խորհուրդ ընենք, թե ինչ ձևով քեզի մեջտեղեն վերցնենք։

ԻՍԱՀԱԿ— Ա՛յ Գուրգեն, դե, մի լուրջ խոսե, բան հասկնա՜նք, է։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Լուրջը քու ծմակներուդ մեջն է։ Հոս եղածը աս է, ինչ որ ըսի. կուզես հավնե, կուզես՝ ոչ։ Ո՞վ էր, անցած օր կըսեր, թե Հովսեփ Բրինկասը նոր ձևի մարդ է։ Չգիտե՛մ, համենայն դեպս իր ընտրած զենքը շատ է հին. «Բաժնե որ տիրես»։ Եվ ի՜նչ սքանչելի աքլորակռիվ, ես ու դուն դեմ դեմի։ Մարդիկը ճաշակ ունին։

ՆԻԿԵՖՈՐ— (Վերցնելով թուղթը) Այս նամակը թանկագին է, իբրև գրավոր փաստ։ Շատ շնորհակալ եմ քեզի այս նամակին համար։ Ավելի ևս շնորհակալ եմ քու եղբայրական վարմունքիդ համար։ Քու այս ուղղամիտ քայլդ ես այլևս ամբողջ կյանքիս մեջ չեմ մոռնար։ Շնորհակալ եմ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Հուսահատ շարժումով) Ինչե՞ր կխոսի այս զարմանալի մարդը. ես այդ նամակը չեմ բերեր քեզի քու հիմար շնորհակալությանդ համար. բերե՛ր եմ, որ վերջապես հասկնաս. շոշափես, թե այլևս կորսնցնելու ժամանակ չկա։

ՆԻԿԵՖՈՐ— Աղե՛կ, աղե՛կ, դեռ կտեսնենք։ Առայժմ թողեք որ քաշվիմ սենյակս (Կերթա իր ննջարանը):

## 6

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ահա՛, հիմա տարի մըն ալ թուխս պիտի նստի այդ նամակին վրա։

ԻՍԱՀԱԿ— Անհանդա՛րտ մարդ ես, Օհա՛ն։ Արդեն դուք հայերդ անհանգիստ մարդիկ եք։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Իսկ դո՞ւք, Ցոկաններդ, ծա՛նր, ամեն բան կբարդացնեք, կդժվարացնեք։ (Ննջարանը մատնանիշ) Ըհը՛, ինչի՞ է նման. և կուզե, և՛ չուզեր. տոտիկ մը առաջ, տոտիկ մը ետ. դեռ հիմա փոխված է, այնքան գլուխ գայլի ավետարան ենք կարդացեր։ Հիմա գոնե գիտեմ, որ կուզե. առաջ ուզելու ալ կվախնար։

ԻՍԱՀԱԿ— (Համոզելով) Կտեսնե՞ս, սիրելի՛ս, ըսել է՝ կամաց-կամաց։ Ես գիտեմ, որ ան քու խոսքերուդ կարևորություն կուտա. բանակին մեջն ալ ուժեղ է ձայնդ։ Միայն քիչիկ մը զգույշ։ Քաշքշենք այսպես դեռ ամիս մը-երկու, տեսնենք՝ խնդիրը ինչ ձև կառնե։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Երկու ամի՞ս։ (Կխնդա): Ես քեզի կըսեմ՝ երկու շաբաթը չի լրացած մենք պետք է ըլլանք մայր քաղաքի պարիսպներուն տակը։ Կհասկնա՞ս, երկու շաբաթը չանցած։ Հոն կարգադրած են արդեն ամեն ինչ մեր բարեկամները. բոլորի տրամադրությունը՝ բարձր, դըժգոհությունները՝ հասած իրենց գագաթնակետին, բոլորի հույսը՝ դեպի մեզ։ Պետք է իսկույն օգտվինք այդ լարումեն. որ ուշանանք՝ աղեղը կըթուլնա։ Եվ հոս, կկարծես, դյուրի՞ն բան է ամեն անգամ այս ոգևորությունը առաջ բերելը բանակին մեջ։

ԻՍԱՀԱԿ— Մի՞թե արդեն այդ աստիճան...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Պե՛տք է որ շարժվինք, պե՛տք է. և հենց այսօ՛ր, այսօ՛ր։

ԻՍԱՀԱԿ— Նա՜, այդ մեկը արդեն կներես։ Փա՜ռք Աստծու, Նիկեֆորը ո՛չ այսօր, ո՛չ ալ վաղը տեղեն շարժվողը չէ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Հա՞. կկարծե՞ս։ Դե՜, հիմա տե՛ս. ես անիկա այնպես իր տեղեն շարժեմ, այնպես գլտորեմ, որ կանգ առնե շիտակ Պոլսի ամբարտակներուն տակը։

ԻՍԱՀԱԿ— Դո՞ւն. և այդ ինչպե՞ս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Իրեն որ թողնենք՝ ան իր տեղեն շարժվողը չէ ոչ միայն այսօր ու վաղը, այլ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը։ (Կրտուկ) Դուն կեցիր հո՛ս։ (Դուրս ճակտի վարագույրեն):



## 7

Ներս կուգան Գուրգենի հետ մոտ երկու տասնյակ բարձրաստիճան զորականներ: Ոմանք մտերմորեն, մյուսները ճարգալից կբարևեն Իսահակը:

ՄԵԿԸ— Հոս չէ՞ ինքը։

ՄՅՈՒՍԸ— Երևի, նե՛րսը։

ԵՐՐՈՐԴԸ— Չտեսա՞ր. դեռ չե՞ս խոսած հետը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Խոսեցա՛։

ԵՐՐՈՐԴԸ— Արդյո՞ւնքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Արդյունքը՝ ա՛յ, գնաց ներս։ (Հանկարծ) Լսեցեք ինծի. այլևս ուրիշ ճամփա չկա, սպառված են բոլոր միջոցները։ Կմնա, որ իրագործենք մեր որոշումը։ Համաձա՞յն եք։

ՄԵԿԸ— Կարծեմ, որոշված հարց է։

ՄՅՈՒՍԸ— Ի՛նքդ էիր ըսողը՝ «ըլլա իր կամքով, ըլլա ակամա»։

ՁԱՅՆԵՐ— Այո՛, այո՛, այդպես։

ՄԵԿԸ— Եվ արա՛գ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Իսկ դո՞ւրսը, պատրա՞ստ է ամեն ինչ։

ԵՐՐՈՐԴԸ— Ամե՛նքը. կսպասեն նշանին։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Զորավա՛ր Պոնդիս, մեր մեջ ամենեն տարեցը դուն ես։ Դո՛ւրս կանչե հրամանատարը։

ԻՍԱՀԱԿ— Ի՞նչպես թե։ Հոս դավ կա։ Նիկեֆո՛ր։ Նիկեֆո՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— (Ննջարանին դուռը ցույց տալով ու հեգնոտ) Ա՜խ, դո՞ւն կուզես հրամանատարը դուրս կանչես. խնդրե՛մ։

## 8

ՆԻԿԵՖՈՐ— (Դուրս կնետվի ննջարանեն, մեջքը կապած է կարճ սուր մը) Սա ի՞նչ աղմուկ է։ Ի՞նչ բանի եք հոս։ Ինչո՞ւ եք խռներ վրանիս տակը։

ԶՈՐ. ՊՈՆԴԻՍ— Հրամանատա՛ր, զորավարներդ խոսիլ կուզեն քեզի հետ։

ԻՍԱՀԱԿ— Չի լսե՛ս, Նիկեֆո՛ր, անոնց ըսածին։

ՆԻԿԵՖՈՐ— Դուն մի՛ խառնվիր։ Ի՞նչն է որ այդպես հուզեր է ձեզի։ Ինչո՞ւ լռեցիք։

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— Թո՛ղ խոսի Գուրգենը։

ՁԱՅՆԵՐ— Գուրգե՜նը... Գուրգե՜նը...

ՆԻԿԵՖՈՐ— (Զարմացած ու բնական կդառնա Օհան Գուրգենի կողմը):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բացե՛ք մուտքին վարագույրները։

ՆԻԿԵՖՈՐ— Ինչո՞ւ։

## 9

Կբացվեն արագ ճակտի վարագույրները. ներսում կերևա վրաններու ծովը, իսկ մոտիկ՝ խռնված զորքերում շարքերը: Խորին լռություն:

ՆԻԿԵՖՈՐ— Սա ի՞նչ բան է, Օհա՛ն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Նայե, հրամանատա՛ր, նայե՛, զորավարներուդ, նայե՛ քու զորքիդ. նայե՛ որ զգաս։ Լեցված է բաժակը. այլևս մեզմե ո՛չ ոք հանդուրժել չի կրնար նենգավոր ներքինիի մը անարգ լուծը։

ՆԻԿԵՖՈՐ— Զորավար Գուրգե՛ն, պետք է ընդհատեմ քեզի. քու խոսքերդ հակառակ են կարգապահության։

ԻՍԱՀԱԿ— Եվ պատշաճության։

ՆԻԿԵՖՈՐ— Այդ ուղղությամբ ո՛չ մեկ բառ. կարգիլե՛մ քեզի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Քեզի խոսողը, հրամանատար, Օհան Գուրգենը չէ, որ իսկույն պիտի հնազանդեր արգելքիդ։ Իմ շրթունքներովս ամբողջ բանակդ է, որ հիմա կխոսի քեզի, և դուն պե՛տք է լսես իր ձայնը։ Երկրորդ տարին է, որ թշվառական ներքինի մը հավաքեր է իր ձեռքին մեջ պետության բոլոր թելերը, կասեցուցեր է ամեն շարժում, կապեր է ամեն ձգտում ու մեր բանակները դատապարտեր է անգործության։ Թշնամին կամրանա մեր սահմաններուն վրա, իսկ մեզի թույլ չեն տար, որ շարժվինք. կխանգարեն ամեն ձեռներեցություն, չեն հասցներ ինչ պետք է բանակին, կկոտրեն մեր թափը։ Անոր ուժածը մեր քայքայումն է։ (Զորավարներուն) Այդպես չէ՞։

ՆԵՐՍԸ ԵՂՈՂՆԵՐԸ— Այո՛, այո՛, այո՛։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Քու գնդերդ այլևս չե՛ն ճանչնար այդ դավաճան ներքինիին կառավարությունը։ Քու բանակդ կճանչնա և կընդունի միայն քու՛յն կառավարությունը, որը իրը ըլլա, իրեն գործակից, իրեն հասկցող, իրմե ընտրված։ (Զորավարներուն) Այդպես չէ՞։

ՆԵՐՍԸ ԵՂՈՂՆԵՐԸ— Այո՛, այո՛, մե՛րը, մե՛րը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կլսե՞ս, հրամանատա՛ր։ Եվ ահա՛ ես քու զորավարներուդ, քու զորականներուդ և քու համորեն բանակներուդ անունով կհայտարարեմ քեզի...



ՆԻԿԵՖՈՐ— (Առաջ նետվելով ու կտրուկ) Կեցի՛ր, կեցի՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կհայտարարեմ Աստծու առջև, աշխարհքի առջև ու այս զինակիր բազմության առջև մեր միա՛կ արժանի կայսրը քեզի՛։

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՂՄՈՒԿ— Քեզի՛, քեզի՛... դո՛ւն... դո՛ւն...

ՆԻԿԵՖՈՐ— (Ականջները գոցած) Ո՛չ, ո՛չ։ Ես լսել անգամ չեմ ուզեր այդ տեսակ խոսքեր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Մերկացնելով սուրը) Խոնարհեցե՛ք սուրերը մեր կայսեր առջև։ Կեցցե՛ կայսր Ֆոկաս։

ԲՈԼՈՐԸ— (Դուրսն ու ներսը սուրերը քաշած) Կա՛յսր Ֆոկաս... կա՛յսր Ֆոկաս... Ֆոկա՛ս... կեցցե՛...

Դուրսը՝ միաժամտ բացականչություններու ալիքը կտարածվի վրաներն ներսում ու ներսում: Ձեռքերն ու դրոշակները կխոնարհին ու կբարձրանան. զանազան կողմերէ կլսվի շեփորներու ներավոր կանչը: Մինչ վրանին տակ ամենքը խառն ժխորով շրջապատած են ու կշնորհավորեն կայսրը, որ դեռ նաստատ ներքեր կրնե դիմադրելու:

Օհան Գուրգեն կառնե մոտի պաշտոնյային ձեռքեն նատ մը կարմիր կոշիկ. կշոփի Նիկեֆորին առջևը: Ընկերները կբռնեն կայսեր թևերեն, մեկը կբարձրացնե անոր ձախ ոտքը, և Գուրգեն կհագցնե կոշիկը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ուրախ ու հաղթական՝ վեր ցատկելով) Ահա՛, Նիկեֆո՛ր, հագցուցի ոտքիդ կայսերական կարմիրը։

ՕԳՆՈՂՆԵՐԵՆ ՄԵԿԸ— Ծիրանեզարդ նոր պաշտոնիդ այդ ծիրանի նշանը։

ՈՒՐԻՇ ՄԸ— (Ոգևորված) Ո՛տքդ կարմիր, բա՛խտդ կարմիր, ամբողջ կյանքդ ըլլա կարմիր։

ՏԱՐԻՔՈՏ ԶՈՐԱՎԱՐ ՄԸ— (Առաջ գալով ու սաստիկ հուզված) Ուղիղ քսանհինգ տարի է, Ֆոկա՛ս, իմ սուրս քու սուրին կից, իմ վրանս քու վրանիդ. ապրեր եմ քեզի հետ քու չարն ու բարին. և հիմա երջանիկ եմ, Ֆոկա՛ս։ (Լալով) Շնորհավո՛ր ծիրանիդ։ (Կփաթթվի Ֆոկասի վիզը):

ԱՄԵՆ ԿՈՂՄԵ— Շնորհավո՛ր ծիրանիդ։ Շնորհավո՛ր ծիրանիդ։

ԻՍԱՀԱԿ ՖՈԿԱՍ— (Մոտենալով կայսեր և ինքն ալ հուզված) Նիկեֆո՛ր, ալ իզուր է լռելը։ Ամենքը կսպասեն խոսքիդ։

Ֆոկաս ծանր ու գլխահակ առաջ կուգա: Խորին լռություն:

ՆԻԿԵՖՈՐ— Քանի որ այսպես է, թո՛ղ ըլլա Աստծու կամքը։ Դուք գիտեք, որ ես միշտ եղած եմ ձեզի հետ, ձեզի համար ու ձեզմով։ Եվ հիմա ալ, բնական է, ուզեմ-չուզեմ, պետք է համակերպիմ այսպես միահամուռ կերպով արտահայտած ձեր կամքին, Աստծու կամքին, ինչքան ալ որ ծանր ըլլա ինծի համար այդ նոր բեռը, որ վրաս կդնեք։

Դուք ճի՛շտ եք, ե՛ս ալ խոստովանիմ, ե՛ս ալ կզգամ ձեզի պես, որ պարտական եմ կռվելու այս ամենահին ու ամենաքրիստոնյա պետության ներքին քայքայիչներուն դեմն ալ, ինչպես որ կռվեր եմ մինչև հիմա անոր արտաքին թշնամիներուն դեմ։ Ներսինը հաճախ ավելի վատթար է, քան դուրսինը։ Եվ քանի որ պատերազմը հայտարարեցինք արդեն, այլևս իրավունք չունինք ժամանակ կորսնցնելու։ Զորավարներս հիմա.իսկ կկանչեմ խորհրդի. բանակները պիտի շարժվին։ Պետք չէ, որ այսօրվան դեպքերուն լուրը մեր գնդերեն առաջ հասնի Պոլիս։

ՁԱՅՆԵՐ— Պոլի՛ս, Պոլի՛ս…

ՁԱՅՆ ՄԸ— Ա՜, վերջապե՛ս, կշարժվինք։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱՎԱՐ ՄԸ— Վահանի վրա, վահանի վրա, մեր նոր կայսրը վահանի վրա։

ՈՒՐԻՇ ՄԸ— Ու դեպի Պոլիս։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂՄՈՒԿ— Պոլի՛ս, Պոլի՛ս…

Նորեն կշրջապատեն կայսրը. կբարձրացնեն վահանի մը վրա իրենց ուսերուն և խինդ ու ցնցումով կուղղվին վրանեն դուրս:

ԴՈՒՐՍԸ— (Կկրկնվի հեռանալով ու տարածվելով ալիք-ալիք) Դեպի Պոլի՛ս… Պոլի՛ս… Պոլի՛ս…

## 10

Վրանին տակ կմնա միայն Օհան Գուրգենը երկու ընկերով:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Քիչ մը ատեն լուռ կդիտե հեռացող թափորը, և հանկարծ կսկսի արտանց ծիծաղիլ) Տեսե՛ք, է՜, տեսե՛ք։ է՜, խե՛ղճ Ֆոկաս։ Սա մեյ մը իր կեցվածքը նայեցե՛ք, իր բռնվածքը, քիթ ու բերանը, հա՜, հա՜, հա՜…

ԸՆԿԵՐԸ— Հա՛, ըրիր, ըրիր, սարքեցիր, հիմա ալ կեցեր կխնդաս։

ՄՅՈՒՍԸ— Այդքան աշխատանքը որ դուն թափեցիր, ինքդ կրնայիր բարձրանալ գահը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ե՞ս։ Կներե՛ս։ Ես կնախընտրեմ կայսր շինելը, քան կայսր լինելը։ Զվարճալի է գոնե։ (Հորդ խնդումով) Նայեցե՛ք մեյ մը նայեցեք այդ թշվառ մարդուն, ինչպես կառչեր է վահանի եզերքին. հա՜, հա՜, հա՜…

ԸՆԿԵՐԸ— Քալե՛, քալե՛. առանց մեզի հանկարծ դուրսը բան մը չի ծռի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Թո՛ղ։ Ալ անիկա մեզի պետք չունի. ջուրը ճամփան կգտնե։ Ո՜ւհ, վերջապե՛ս։ Թե չէ արդեն սկսեր էի ձանձրանալ այս անհամ խաղեն։ Տղա՛, Պոլիս հասնինք թե չէ՝ թափ տանք մեզի անգամ մը մարդավարի։ Անոնք թող երթան պալատ իշխանություն խաղալու, իսկ ես կխոստանամ ձեզի գիշերային սքանչելի հարկինք մը Խրյուսոպոլսի պարտեզներուն մեջ։

ՄՅՈՒՍ ԸՆԿԵՐԸ— Որուն նմանը դո՛ւն միայն սարքել գիտես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բյուզանդիոնի ամենեն ճկուն պարուհիները, որ ձեր սրտի թելերը ոլորեն և ամենեն գեղեցիկ կնիկներուն շրթունքները, որ ձեր գինին ձեզի հետ կխմեն։

ԸՆԿԵՐԸ— Արժե՛, արժե՛, երթալը Պոլիս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հաղթողներուն մեջ պետք է ավարը հավասար բաժնվի։ Իշխանությունը անոնց…

ՄՅՈՒՍ ԸՆԿԵՐԸ— Սերն ու գինին մեզի։

ԸՆԿԵՐԸ— Արժե՛, արժե՛ երթալը Պոլիս։

ԴՈՒՐՍԻ ԱՂՄՈՒԿԸ— Դեպի Պոլիս… Պոլիս… Պոլիս…

# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ ԿԱՐՄԻՐ ՍՐԱՀԸ ՍՐԲԱԶԱՆ ՊԱԼԱՏԻՆ ՄԵՋ

Ճակատը լայն կամարով մուտք մը, որուն վարագույրները երբ բաց են՝ կերևա խորքի երկար ու կամարակապ միջանցքը: Այդ մեծ մուտքի երկու քովը երկու փոքր ոսկի դռներ առանց վարագույրի. կայսեր ու կայսրուհիին մասնավոր մուտքերը: Սովորական երևումի համար կողմնակի դուռ մը աջեն:

Սրահին մեջ դեպի ձախ գահն է պատվանդանին վրա: Հոս ու հոն գահավորակ ու աթոռ: Բոլոր կահերը, վարագույրները մութ-կարմիր բանձր թավիշ է, վրան ցրիվ ու մանր ոսկի խաչազարդերով: Պատերը նույնպես կարմիր են. տեղ-տեղ բուսած են եռաստեղ ու յոթնաստեղ ոսկի աշտանակներուն փունջերը:

## 1

Ճակատի վարագույրները բաց են: Բարձրաստիճան պաշտոնյաներու ու պալատականներու առվար խումբ մը կեցած է մասամբ միջանցքին մեջ, մասամբ սրահը երկու շարքով։ Այդ զույգ շարքին մեջեն է, որ կայսերական ամոլը առաջ կուգա խորքեն ծանր ու շուքով: Բոլորը կխոնարհին անոնց անցնելու ատենը:

Կայսրը՝ Նիկեֆոր Ֆոկաս, կայսրուհին՝ Թեոֆանո։ Երկուքն ալ հագած են կայսերական պաշտոնական լրիվ հանդերձանքը. ծիրանի մանթո, ծիրանի կոշիկ, ոսկի թագ ու գավազան։ Թեոֆանո շքեղ ու սլացիկ կազմով, 26—27 տարու, դեմքը երկարավուն, խոշոր նուշ աչքեր, գոռոզ նայվածք և առատ դեղձան մազեր, բացառիկ գեղեցկուհի։

Երբ կհասնին գահին ոտքը՝ կայսրը կանգ կառնե ու կդառնա դեպի Մեծ լոկոթետը, գահին ու արտաքին գործերու վարիչը, որը խիստ շարժուն ու ճարպիկ մարդ մըն է։

ԿԱՅՍՐԸ— Կմեծարե՛ս այդ ռուսները, ինչպես հարկն է. կընծայես մեյ-մեկ հարուստ խալաթ, բայց աչքդ վրանին կպահես։

ՄԵԾ ԼՈԿՈԹԵՏԸ— (Ժպտուն) Գիտե՛մ, տե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Ընտրե՛ նաև քանի մը կտոր հարմար բան, որ տանին իրենց Մեծ իշխանին։ Սա՛նկ, բա՛ն մը, որ մասնավոր կերպով սիրելի ըլլա իրենց բարբարոս ճաշակին։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Իրենց ամենեն ավելի սիրած բանը մեր բյուզանդական լիակշիռ ոսկին է, տե՛ր։

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ— Որը այսօր հրաշալի գործ տեսավ արդեն։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆԴԻՍ— (Ծեր, նախկին զորավար) Ինչպես մի՛շտ։

ԿԱՅՍՐԸ— Տեսա՞ր, Թեոֆանո, դաշինքը ասոր կըսեն։

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ— Ճորունկ է, տե՛ր, քաղաքականությանդ իմաստությունը։

ԿԱՅՍՐԸ— (Գոհ) Դե՛, թող այդ սկյութը քշե հիմա իր խուժանը դեպի Բուլկարիա։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Աղվոր անակնկալ մը բուլկարներու մեծ ցարին։

ՄԵԾ ԼՈԿՈԹԵՏԸ— Զատկի հրաշալի նվեր մը։

ԿԱՅՍՐԸ— (Հեգնոտ) Մեր ամենասիրելի ազգականին։

Բոլորը կխնդան զսպված։

ԿԱՅՍՐԸ— (Լուրջ) Եվ ալ հույս ունիմ՝ կհանգստանամ վերջապես մեր հյուսիսի սահմանները Բուլկար սպառնալիքեն։

ՄԵԾ ԼՈԿՈԹԵՏԸ— (Զարմացած) Ինչպես և մեր ափերը ռուս նավերու եյուզակ այցերեն։

ԿԱՅՍՐԸ— Թշնամիներդ պիտի կռվին, որ դուն հանգիստ քուն ըլլաս։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆԴԻՍ— Այդպե՛ս է, տե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Շնորհակալ եմ բոլորեդ, ձեր խորհուրդեն ու օգնությենե։

Բոլորը խոր գլուխ կուտան ու կհեռանան միջանցքէն, կգոցվին կամարին վարագույրները։



## 2

ԿԱՅՍՐԸ— Կուզե՞ս, Թեոֆա՛նո, ինծի հետ ըլլաս իրիկունը։

ԹԵՈՖԱՆՈ— Սիրով, տե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Այսօրվան աշխատանքես իրավունք ունիմ գոհ ըլլալու։ Իսկ դուն պետք է մոտս գտնվիս, որ գոհունակությունս լրիվ ըլլա։

ԹԵՈՖԱՆՈ— Դեռ միշտ նույն կարծիքի՞ն ես։

ԿԱՅՍՐԸ— Մի՛շտ։ (Քիչ մը խորհելեն ետքը) Դուն ինծի համար ո՛չ միայն կինս ես, ո՛չ միայն գահիս թագուհին, այլ... ինչպե՞ս ըսեմ, որ ճիշտ ըլլա. դուն... իմ բախտս ես։

ԹԵՈՖԱՆՈ— (Ժպտուն) Բա՞խտ.

ԿԱՅՍՐԸ— Կհիշե՞ս այն առաջին օրը, երբ առաջին անգամ ժպտեցար ինծի քու այն սուգի ճերմակ զգեստներուդ մեջեն. դո՛ւն այրի թագուհին, ե՛ս քու զորավարդ։ Այն օրեն, Թեոֆա՛նո, անընդհատ հաջողեր է ինծի ամեն բան, ինչ որ բռներ եմ, ինչ որ ըրեր եմ, և՛ վարչության մեջ, և՛ կռվի դաշտին վրա։

ԹԵՈՖԱՆՈ— Իրա՞վ։

ԿԱՅՍՐԸ— Ատոր համար է, որ ամեն անգամ, երբ նոր ու լուրջ քայլ մը կառնեմ, ա՛յ, ինչպես այսօր, կուզեմ, որ դուն քովս ըլլաս, կուզեմ նայիմ, ա՛յ, այսպես, քու այդ եղնիկի խոշոր աչքերուդ, որուն խորքեն բախտս միշտ ժպտեր է ինծի։ Աղոթքի պես անհրաժեշտ բան մը է ատիկա հոգիիս համար։

ԹԵՈՖԱՆՈ— Երջանիկ եմ։

ԿԱՅՍՐԸ— Գնա՛ փոխե հագուստներդ ու եկո՛ւր։ Վասի՛լ։

## 3

Թեոֆանո կերթա դեպի ետևի աջ ոսկի դռնակը, կբանա ծույլ շարժումով մը, կմտնե ու կգոցե։ Մինչ կողմնակի աջեն կուգա վասիլ Լեկապեն, բարձրահասակ ու թիկնեղ. ներքինի է, իր անմազ դեմքին վրա մշտական սառած ժպիտ մը։ Կայսեր առաջին սենեկապետն է ու անձնական խորհրդականը՝ պարոգիմոմենը։

Կայսրը անոր կերկարե ձեռքի գավազանը, անոր օգնությամբ կհանե ծիրանին ու թագը։ Այդ միջոցին է, որ կխոսվի։

ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ նոր։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Կյանքդ երկար, տե՛ր։ Հովսեփ Բրինկաս մեռեր է իր աքսորին մեջ։

ԿԱՅՍՐԸ— Նո՞ր է մեռեր։ Անիկա ինծի համար մեռավ ա՛յն օրը, երբ ես հաղթական գնդերուս գլուխն անցած Ոսկի դռներեն ներս մտա Կոստանդիանոսի այս աշխարհակալ քաղաքը ու բարձրացա այս գահը։ (Կբարձրանա կեցած):

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Այն օրը մեռան քու բոլոր թշնամիներդ, տե՛ր։
ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ արագ կթռչի ժամանակը։
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Գուցե, բայց ոչ ապարդյուն. ինչքա՞ն գործ է տեսնված այս մեկ երկու տարվան մեջ։
ԿԱՅՍՐԸ— Իրա՛վ է, շատ աշխատեցա։
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Եվ ի՛նչ գործ։ Պետք է մենք ետ երթանք դարեր ու դարեր, մինչև Հուստինիանոս, որ գտնենք վերջապես մեկը՝ արժանի քեզի հետ համեմատվելու։
ԿԱՅՍՐԸ— Հուստինիանո՛ս։ Իսկ ուրիշ ոչ ո՞ք։
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ուրի՞շ։
ԿԱՅՍՐԸ— Թո՛ղ հինը։ Բայց, ա՜յ, այնքան դեմքեր կան շուրջդ, պալատիս մեջ, դուրսը, բանակիս մեջ. միթե անոնց մեջ չե՞ս գտներ նույնիսկ մեկը։
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Տե՛ր, մեծ պետերուն մեծ ծառաներ, անշո՛ւշտ. բայց այդ բոլոր բազմության մեջ ո՞վ կա, որուն փառքը հավասար գա քու փառքիդ, որուն տաղանդը մրցի քու տաղանդիդ և ո՞ր անունն է, որ կրնա հնչել հոս քու անունիդ դեմ։

## 4

ԱՎԱԳ ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— (Բարձրացնելով ճակտի վարագույրը կհայտարարե բարձր ու պաշտոնական, հատիկ-հատիկ) Օհա՛ն Գուրգեն, արևելյան բանակներուն վերին հրամանատա՛րը, կո՛մս պատրի՛կ ու մագի՛ստրոս։
ԿԱՅՍՐԸ— (Կցնցվի ու խոժոռ) Թող գա՛։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Հազիվ ներս մտած՝ արարողապետին) Բայց, բարեկա՛մս, կարծեմ կարիք չկա այսպես ամեն անգամ իմ բոլոր տիտղոսներս շարելու։ Ձենք մոռնար, մի՛ վախնար։
ԱՎԱԳ ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— (Խոնարհ) Պալատական հնավանդ սովորություն մը միայն, ինչպես որ լավ գիտե մեծ հրամանատարը։ (Կրճաշվի դուրս):

## 5

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կերթա շիտակ կայսեր դեմը ու կկենա աջ ձեռքը վեր) Առողջությո՛ւն կայսեր։
ԿԱՅՍՐԸ— Ողջո՛ւյն, հրամանատա՛ր։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Որը սակայն արդեն սկսեր է մոռնալ, թե ինչ է գլուխը այն հեռավոր գնդերուն։



ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ ընեմ, Վասի՛լ, որ այս մարդը դժգոհ չըլլա։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Նուրբ հեգնությամբ) Դժգո՞հ. այսքան պատիվներուն, մեծարանքին ու այն բացառիկ ուշադրության հանդեպ, որ կայսերական բարձրությունդ հաճած է թափել իմ վրաս։
ԿԱՅՍՐԸ— Թո՛ղ։ Գիտեմ, որ Աստծու պահած այս քաղաքը մասնավոր հրապույր մը չունի քեզի համար. գիտեմ, որ քու խելքդ լեռներդ է, արաբական սահմաններդ։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ներող պիտի ըլլա կայսրը. հին զինվորի մը արմատացած նախասիրություն։
ԿԱՅՍՐԸ— Իսկ ե՛ս. կկարծես իմ հաճույքիս համա՞ր է, որ նստեր եմ այս ոսկեզօծ պատերուն ետին։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Դուն կայսր ես։
ԿԱՅՍՐԸ— Նախ զինվո՛ր։ Բայց զինվորը պիտի ըլլա հոն, ուր պարտականությունը կկանչե և ո՛չ թե հոն, ուր իր նախասիրությունները կքաշեն։ Հոս պե՛տք ես դուն ինծի։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բայց...
ԿԱՅՍՐԸ— Նորե՞ն բայց։ Բայց... դուն մարդը համբերութենե կըհանես։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Վիրավորված) Քու խոնարհ ծառադ։
ԿԱՅՍՐԸ— Թո՛ղ հիմարությունը։ Ես ալ քեզի պես ժամ մը առաջ արշավանքս կերազեմ ու Ամանոսի բարձունքը։ Թող որ ավարտեմ պատրաստությունս։ Այնպես չէ՞, Վասի՛լ։
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Կայսրը իրավունք ունի, հրամանատա՛ր, պետք է համբերես քիչ մըն ալ։

## 6

ՄԵԾ ԼՈԿՈԹԵՏԸ— (Կողմնակի աչեն) Վա՜յ, կո՛մս, այս ի՛նչ բախտ, ի՛նչ երջանկություն, ի՛նչ հազվադեպ պատիվ պալատին մեջ հանդիպիլը քեզի։ Եվ, ճշմարի՛տ, խելոքը դուն ես, դուրսը եղողներդ։ Հոս պալատին մեջ ո՛չ գիշերն է հայտնի, ո՛չ ցորեկը. գլուխ քերելու ժամանակ չկա։ Ա՜յ, հիմա ալ թեև անչափ կցավիմ, բայց ստիպված եմ ընդհատելու մեր այս հմայիչ տեսակցությունը։ (Կայսեր) Պետք է ստորագրվի, տե՛ր։
ԿԱՅՍՐԸ— Իսկո՛ւյն։ (Մոտենալով Գուրգենին) Մեր դաշինքն է Սվյատոսլավի հետ։ Ի՞նչ կըսես։ Հը՜. լո՞ւռ ես։
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կարծես ակամա) Ինչո՞ւ կկանչես այս վտանգավոր գազանը Բուլկարիա։

ԿԱՅՍՐԸ— Ե՞ս պիտի բացատրեմ քեզի։ Այդ անիծած ռուսները առաջին օրեն աչքերնին տնկեր են մեր հոյակապ քաղաքին վրա։ Չշեղե՞ի ուրիշ կողմ իրենց ախորժակը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Մինչև հիմա ծովուն ճամփան գիտեին. հիմա սորվեցուցիր և ցամաքի ճամփան. Դանուբ, Բալքան, Անդրիանուպոլիս, վաղը կըլլան մեր պարիսպներուն տակը։

ԿԱՅՍՐԸ— (Ծիծաղելով) Ի՞նչ։ Վա՞ղը... հ՜ը, հ՜ը, հ՜ը, հ՜ը։ (Ծեծելով անոր ուսը) Մի՛ վախնար. քեզի պես զորավար ունիմ ու քեզի պես քաղաքագետ, թող գան։ ((Արագ դուրս ելնե):

ՄԵԾ ԼՈԿՈԹԵՏԸ— Խորին հարգանքներուս մշտական հավաստիքը, կո՛մս։ Նախանձելի մարդ եք, ճշմարի՛տ. կայսեր փայփայանքն եք դուք, ժողովուրդի սիրելին, կանանց պաշտամունքը։ Ընդունեցեք և իմ երկրպագությունս։ (Դուրս կայսեր ետևեն):

7

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ այս կաշաղակի՞ պոչը ինչու կպահեք պալատին մեջ, ո՞վ պարոգիմոմեն։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Ծիծաղը զսպելու ջանքով ու խոնարհ) Կայսեր կա՛մքը, հրամանատա՛ր։ Անիկա անշուշտ գիտե իր ընտրածը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բարի վայելում. թող պահե՛։ Բայց ինծի՞. ինծի՛ ինչու կպահե։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Խոնարհ) Կայսեր կա՛մքը, հրամանատա՛ր։ (Ընդգծելով) Զորքեն ու ժողովուրդեն սիրվողը այս պատերուն մեջ չի՛ սիրվիր։ (Շեշտը փոխելով) Բայց դուն, ահա՛ կտեսնես, որ բացառություն մըն ես, բախտավոր բացառություն մը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այդպե՛ս։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Խորհրդավոր) Քաջ ու խելոք միջա՛կ մարդիկ շատ կան գուցե մեր շուրջը, բայց հանդուգն ու կարող... (Դժվար արտասանելով) ո՛չ ամենքը։ Հաջողություն կցանկամ քեզի, հրամանատա՛ր, կցանկամ մի՛շտ հաջողություն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Գիտե՛մ, Վասի՛լ Լեկապեն, որ բարեկամներ ունիմ պալատին մեջ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ցտեսություն, հրամանատա՛ր։ Կներես, որ երթամ տիրոջս ետևեն։ (Դուրս):



8

Օհան Գուրգեն կեցած է պահ մը մտածկոտ, անշարժ ու շիտակ: Զգույշ կբացվի ճակտի աջ ոսկի դռնակը ու կերևա Թեոֆանո: Հագված է թեթև, թափանցիկ մետաքսե. մազերուն մարգարտաշեն վարսակալ. վրայեն ալ երկար շղարշ մինչև ոտքերը: Ծածուկ ու անձայնուն կմոտենա Գուրգենին, քայլ մը հեռու կանգ կառնե:

ԹԵՈՖԱՆՈ— (Հանկարծ) Զորավա՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կցնցվի, կդառնա ու ակամա քայլ մը ետ) Թագուհի՞ն։

ԹԵՈՖԱՆՈ— Ի՛նքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ինչպե՞ս եկար և ուրկե՞։

ԹԵՈՖԱՆՈ— Ինչպե՞ս կուգա բախտը և ուրկե՞։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բա՞խտը։

ԹԵՈՖԱՆՈ— Այսօր ինծի ըսին, որ ես եմ բախտը։ Չէի՞ր սպասեր իր գալուն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ակնթարթ մը կխորհի) Կսպասեի։

ԹԵՈՖԱՆՈ— Այո՞...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այո՛, թագուհի՛։ Քու նայվածքդ սպասեր էր ինծի այդ երջանիկ հեքիաթը։

ԹԵՈՖԱՆՈ— Ատո՞ր համար է, որ մնալ չես ուզեր ու կփախչիս սիրտըդ հեքիաթներու այս քաղաքեն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ա՜խ, լսեր ես մեր խոսածը։

ԹԵՈՖԱՆՈ— Ես կլսեմ ամեն խոսված. զգո՛ւյշ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կտեսնեմ, թագուհի՛, կխոնարհիմ։

ԹԵՈՖԱՆՈ— Ես կսիրեմ հպարտներուն խոնարհիլը։ Ես կսիրեմ կըտրիճներուն հնազանդիլը։ (Կտրուկ) Դուն կմնաս հո՛ս, մեր երջանիկ քաղաքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Քանի որ այդպես կվճռե բախտս։

ԹԵՈՖԱՆՈ— Հաճո է ինծի քու լեզուդ, հաճո է ինծի քու արիությունդ, հաճո է ինծի քու առնությունդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ծունր իջնելով) Ահա՛ ես՝ քու ստրուկդ քու ոտքերուդ տակը։

ԹԵՈՖԱՆՈ— (Կերկարե ձեռքը) Բռնե՛ ու ելի՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կհամբուրե շրթունքին ծայրովը, կելլե ոտքի) Հրամայե՛, թագուհի՛, ինչ որ կուզես։

ԹԵՈՖԱՆՈ— Խոսքո՞վ պիտի ըլլա հրամանս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իրա՛վ ես։ Քու գալդ արդեն հրաման է։

ԹԵՈՖԱՆՈ— (Բարեհաճ ժպիտով մը կքաշվի ետ-ետ իր դռնակը) Ուրեմն...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Պահ մը մինակ, շիտակ ու հպարտ, հանկարծ կնետվի ճակտի վարագույրեն դուրս)։

## 9

Քիչ մը ետք աջեն կմտնե կայսրը հարգանքով բռնած ալեոր հոգևորականի մը թևեն, որ իր Սուրբն է, կորաքամակ ու դողդողուն։ Կբերե, կնստեցնե բազկաթոռին, ինքն ալ կքաշվի ետ դեպի գահը։

ԻՐ ՍՈՒՐԲԸ— (Շունչը կանոնավորել ջանալով) Նիկեֆոր կա՛յսր, կանչե՛ր էիր ինծի։

ԿԱՅՍՐԸ— Բայց հանգստացի՛ր, դեռ հանգստացի՛ր։

ՍՈՒՐԲԸ— Հանգիստը այս աշխարհի համար չէ։ Շուտո՛վ, շուտո՛վ, մոտ է, կուգա և իմ հանգիստը։

ԿԱՅՍՐԸ— Ներե՛, որ նեղություն կուտամ քու այդ հոգնած տարիքիդ։ Բայց վարժվեր եմ, կարոտն ունիմ քու սուրբ տեսքիդ, իմաստուն խոսքիդ։

ՍՈՒՐԲԸ— Նիկեֆոր կա՛յսր, սուրբն ու իմաստունը Աստված է միայն։ Ես մեղավոր մարդ մըն եմ, ապավինած իր անսահման ողորմությանը ու կսպասեմ հոգի կանչին։ Դուն խոսե քեզմե։

ԿԱՅՍՐԸ— (Քիչ մը լուռ) Քու շրթունքներդ էին, որ առաջին անգամ հայտնեցին ինծի Աստծու անճառ տնօրինությունը, թե հասնիմ պիտի այսքան բարձրերը։

ՍՈՒՐԲԸ— Այո՛, Նիկեֆոր, կա՛յսր։ Ինչո՞ւ կկրկնես։ Եվ կատարվեցավ Աստծու կամքը։

ԿԱՅՍՐԸ— Ահա՛։ Եվ ես հիմա կմտածեմ, քանի որ այդպես է Աստծու կամքը, ալ ուրիշ ոչ ոք չի պիտի ըլլա ինծի հավասար։

ՍՈՒՐԲԸ— Ո՞վ է քեզի հավասար աշխարհիս երեսին։ Կա՛յսր ես դուն։

ԿԱՅՍՐԸ— Ոչ ոք աշխարհիս երեսին, ոչ ոք աշխարհի դիմաց։ Բայց ատ հերիք չէ։ Ես չեմ կրնար հանդուրժել, որ ուրիշ մը քովս կեցած իր հոգիին մեջեն հանդգնի չափելու իր բազուկը իմինիս, իր արվեստը իմինիս ու հպարտանա իր սրտին խորքը։ Ո՛չ, չի՛ պիտի հպարտանա ո՛չ իր խելքովը, ո՛չ շնորհքովը, ո՛չ իր զենքովը, քանի որ այդպես է Աստծու կամքը։

ՍՈՒՐԲԸ— Իսկ ո՞վ է ան, որ կհպարտանա։



ԿԱՅՍՐԸ— (Քիչ մը լուռ) Կա՛ մեկը, որուն գոռոզ աչքերը վերեն կնային աչքերուս խորքը։

ՍՈՒՐԲԸ— Ո՞վ է այդ մեկը։

ԿԱՅՍՐԸ— Այդ մեկը... այդ մեկը... (Կլռե)։

ՍՈՒՐԲԸ— Քու ազգակա՛նդ է, քու զենընկե՛րդ, քու հին ընկե՛րդ։

ԿԱՅՍՐԸ— Ուրկե՞ գիտես դուն։

ՍՈՒՐԲԸ— Ուրիշ ո՞վ կրնա մրցիլ քեզի հետ թե՛ իր խելքովը, թե՛ շնորհքովը, թե՛ իր զենքովը։

ԿԱՅՍՐԸ— (Մռայլ) Ուրեմն կզգաս և դուն։

ՍՈՒՐԲԸ— Բայց անիկա քեզի հետ է եղեր միշտ, կռվեր է քեզի համար, իր կյանքը դրեր է հաջողությանդ։

ԿԱՅՍՐԸ— Իր ծառայությունը ես վարձատրեր եմ միշտ։

ՍՈՒՐԲԸ— Եվ այնքան ջանք է թափեր, որ դառնաս կայսր. իր ձեռքովն ալ ամբողջ բանակիդ առջևը կապեր է ոտքիդ այդ կարմիր կոշիկները։

ԿԱՅՍՐԸ— Ան որ չկապեր, պիտի կապեր ուրիշ մը։

ՍՈՒՐԲԸ— Խոսքերդ կպատմեն, որ հանգիստ չէ հոգիդ։ Նիկեֆոր, կա՛յսր, մի փաթթեր խղճիդ Կայենը։

ԿԱՅՍՐԸ— Հապա ինչո՞ւ իր ամբարտավան հոգին խոնարհել չուզեր առջևս։

ՍՈՒՐԲԸ— Ամբողջ աշխարհք մըն է քու առջևդ խոնարհեր և բյուր բյուրավորներ են քեզի երկրպագու։

ԿԱՅՍՐԸ— Ինչի՞ս է պետք բյուր բյուրավորներու երկրպագումը, եթե այդ մեկը պիտի չըլլա անոնց ամբոխին մեջ։ Տե՛ս, ես կեցած եմ հոս, գագա՛թը, հասեր եմ հոս իմ համառ աշխատանքովս ու տարիներու երկար պայքարով։ Հիմա իմս է այս գագաթը, իմ իրավունքս և միա՛յն իմ։ Մյուս ամենքը պետք է խոնարհին. և այն գլուխը, որ շիտակ կմնա իմ դեմս, պետք է թավալի։

ՍՈՒՐԲԸ— Մի՛ սպառնար, ինչ որ ընելու չե՛ս համարձակիր։

ԿԱՅՍՐԸ— Բայց չէ՞ որ Աստված իմ ձեռքս է դրեր սուրը, չէ՞ որ իմ կամքս է օրենքը։

ՍՈՒՐԲԸ— Այդպե՜ս։ Իսկ ի՞նչ կուզես հիմա ինծմե։

ԿԱՅՍՐԸ— Օրհնությո՛ւնդ, ինչպես միշտ։

ՍՈՒՐԲԸ— Օրհնությունս, որ սպաննես։

ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ ըսել է։ Այնքա՜ն-այնքան արյուն եմ թափեր ես՝ դուն քու օրհնությունդ չե՛ս զլացեր ինծի։ Այնքա՜ն-այնքան արյուն եմ թափեր ինծի համար՝ դուն քու օրհնությունդ չե՛ս զլացեր ինծի։

ՍՈՒՐԲԸ— Նիկեֆոր կա՛յսր, նախանձը գեշ խորհրդական է և անարժան ընկեր մը՝ կայսր հոգիներու։ Վռնտե՛ ականջիդ ետևեն։

ԿԱՅՍՐԸ— Մա՛րդ, դուն ապրեր ես աշխարհքե քաշված, դուն չես ճանչցած կյանքը. դուն չե՛ս եղած այն բարձունքներուն վրա, որ ինքդ ես գուշակեր ինծի համար։ Երկու հոգիի տեղ չկա՛ այսքան բարձրերը...

ՍՈՒՐԲԸ— (Կելլե ոտքի, ձեռքը կբարձրացնե վեր ու կըսե ճառ՚ընկճատիկ դողդոջուն ձայնով) Լսե՛, Նիկեֆոր կա՛յսր, այն մարդուն ձայնը, որ չէ եղեր այդքան բարձրերը։ (Լուռ): Նիկեֆոր կա՞յսր, եթե դուն ձեռք բարձրացնես քու եղբորդ վրա, որ հասցուց քեզի այսքան բարձրերը, եթե դուն ձեռք բարձրացնես ընկերոջդ վրա, որ կապեց ոտքիդ այդ կարմիր կոշիկները, գիտցի՛ր, չե՛ս մնար ինքդ այդ բարձրությանը, գիտցի՛ր, չեն մնար ոտքիդ այդ կարմիր կոշիկները։

ԿԱՅՍՐԸ— (Սեղմվելով իր գահին) Հա՛յր սուրբ... Հայր սուրբ...

ՍՈՒՐԲԸ— (Վար կառնե ձեռքը ու դեպի դուռը):

ԿԱՅՍՐԸ— (Կցատկե ոտքի, առանց գահը թողնելու) Կերթա՞ս, հա՛յր սուրբ. արդեն երթա՞լ կուզես։

ՍՈՒՐԲԸ— Կերթա՛մ, կերթա՛մ, որ աղոթեմ։ Կերթա՛մ, որ աղոթեմ Նիկեֆոր կայսեր համար, որուն ձեռքն է դրեր Աստված սուրը, որուն կամքն է օրենքը...

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԱՐՔՈՒՆԻ ՊԱՐՏԵԶ. ԾՈՎԵԶՐ

Ծառերով, գալարուկներով ու ճարակի բույսերով մեկուսացած ճեմասրահ անկյուն մը։ Ծառերը ծայրեր են, որ ծովու փոքրիկ խորշ մը կկազմեն։ Ավելի հեռուն բաց ծովն է, որ արևի կեսօրվան շողերուն տակ կցոլցլա ակնախտիղ։

Դեմ դեմի երկու քարե նստարաններ մաշիկածև ու թիկունքով, որոնցմե մեկուն վրա նստած է թագուհին. բարձեր մեջքին, թևերուն ու ոտքերուն տակ։ Երկու աղջիկներ կեցած են ետևը ու արմավենի հովհարներով հով կուտան մեջեմեջ. մոտը կեցած է երրորդ մը՝ ձեռքը ոսկի հայելի։ Ուրիշ պալատական տիկիններ ու օրիորդներ ցրված են հոս ու հոն, նստած, հենած ծառին, մեկ-երկու հոգի ալ գետինը, թագուհիի ոտքերուն մոտիկ։

### 1

Մեջտեղը կեցած է Կուզ պառավը, կարճահասակ, խիստ բոփ դեմքով, մազերը ցանցի մեջ, վրայեն բուղ կարմիր ժապավեն մը. ականջներուն երկար օղեր։

Երբ տեսարանը կբացվի, բոլորը բարձրաձայն կխնդան։ Թագուհին ընկողմանած է ու կժպտի։



ԴՔՍՈՒՀԻՆ— (Մուր տալով) Ը՛ը՛ը, գրողս քեզի։ Իսկ դուն գո՛ղ ես, գո՛ղ, գո՛ղ։

ԿՈՒԶ ՊԱՌԱՎԸ— Հա՛, բայց ինչքան ալ կաշխատիմ, չեմ հասնիր մարդուդ։

ԴՔՍՈՒՀԻՆ— Ի՞նչ ըսիր։

ԿՈՒԶԸ— Ես կգողնամ երկու մատով իր կնկանը ծակ գրպանեն, ան կգողնա լիքը բուռով կայսեր լեցուն գանձարանեն։

ԴՔՍՈՒՀԻՆ— (Կնետվի պառավին վրա. բայց կզսպե ինքզինքը ու կդառնա թագուհիին) Բազիլիսա՛, իրավո՛ւնք տուր՝ փետտեմ այդ անամոթին մազերը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԻՐԻՆԱ— Մազեր պիտի ըլլան որ փետտես։

ԿՈՒԶԸ— (Մատնանիշ Իրինան) Իրա՛վ կըսե իշխանուհիս։ Ես ու ինքը սովորություն չունինք մազ պահելու. կե՛ղծ են երկուքն ալ։

ՄԵԿԸ— (Իրինային) Կերա՞ր։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՛չ, դքսուհի՛, ձեռք բարձրացնել կարելի չէ պառավին վրա։ Լեզվով խեղդե՝ եթե կրնաս, տվեր եմ բացարձակ ազատություն։

ԴՔՍՈՒՀԻՆ— Ա՜խ, պիտի չըլլար թագուհիին արգելքը, որ ես աւոր կուզը տափակցնեի։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ ՄԸ— Հա՛, քրքրեինք քիչ մը կուզը. տեսնեինք ի՞նչ կա մեջը, որ այդպես գիշեր-ցերեկ շալակը առած կպտտցնե։

ԿՈՒԶԸ— Մի՛ վախնար, պարտիզպանին տղան չէ մեջինը. որովհետև ան ցերեկները ծաղիկներուն ծոցը կըլլա, գիշերները՝ քու։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆԸ— Աստծու կրակի՛ն գաս դուն։

Ընդհանուր ծիծաղ:

ԿՈՒԶԸ— Եվ վերջապես իմ կուզիկս շատ եք տեսեր։ Հետաքրքիր ձեր կուզերն են, ա՛յ, ասո՛րը, անո՛րը...

ՏԱՐԻՔՈՏ ԿԻՆ ՄԸ— Ե՞ս։ Ես կուզ չունիմ։

ԿՈՒԶԸ— Ունի՛ս։ Ձեզմե ամե՛ն մեկը ունի իր կուզը, որ գիշեր-ցերեկ շալակը առած կպտտցնե։ Միայն այսպես է աշխարհիս բանը՝ կուզիկի կուզը կտեսնե անկուզը, անկուզի կուզը կտեսնե կուզը։ Կուզե՞ս բանամ քու կուզը։

ՁԱՅՆԵՐ— (Խնդալով) Բա՛ց, բա՛ց, տեսնենք։

ԿՈՒԶԸ— Է՜, շատ բան չէ մեջինը. աղո՛թք ու բամբասանք։

ՏԱՐԻՔՈՏ ԿԻՆԸ— Տեսա՛ք կերած ապուրը։

ՁԱՅՆ ՄԸ— Հաջո՛րդը... հաջո՛րդը... Իշխանուհի Կազիան։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԿԱԶԻԱ— (Երիտասարդ աղջիկ մըն է, քաշվելով) Ո՛չ, ո՛չ ինծի, թո՛ղ ինծի, թո՛ղ։

ԿՈՒՋԸ— Ինչո՞ւ, իմ սիրունի՛կս, քու կուզիկիդ միջինը ազնիվ ապրանք է։

ՋԱՅՆԵՐ— Ի՞նչ է... ի՞նչ է... ըսե... ըսե...

ԿՈՒՋԸ— (Զինվորական բարևի կենալով) Արևելյան բանակներուն քաջարի հրամանատարը...

ՄԵԿԸ— Օ՛... Օհան Գուրգենը։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԿԱՋԻՆ— (Շիկնած) Սո՛ւտ է, սո՛ւտ է։

ԴՔՍՈՒՀԻՆ— (Ընդգծելով) Հաջո՛րդը։

ԿՈՒՋԸ— (Վարանոտ) Ա՛, պատրիկուհի Ապամբաս...

ՊԱՏՐԻԿՈՒՀԻ ԱՊԱՄԲԱՍ— (Խրոխտ) Անդի՛ն։

ԿՈՒՋԸ— (Մյուսներուն) Կվախնամ բանալու։

ԴՔՍՈՒՀԻՆ— Վա՞յ։ Չէ՞ որ խաղ մըն է աս, թագուհիին զվարճությո՞ւնը. ինչե՞ն կվախնաս։

ԿՈՒՋԸ— Կվախնամ, որ փոթորիկ բարձրանա, որովհետև անոր կուզին միջինը փուք է, մեծամտություն, ուռեցք ու քամի. Ծվո՛լոս...

Ծիծաղ ու ծիծաղը զսպելու ջանք:

ՊԱՏՐԻԿՈՒՀԻ ԱՊԱՄԲԱՍ— Բայց ինծի կթվի, որ այդ միմոսի լեզուն չափը անցնիլ սկսավ։

ԹԵՈՖԱՆՈ— (Խոժոռ) Կլսե՞ս, Անաստասի՛ա, պատրիկուհին կգտնե, որ իմ թույլտվությունս չափը անցնիլ է սկսեր։

ԿՈՒՋԸ— Որ ըսի՝ փոթորիկ պիտի բարձրանա։

ԹԵՈՖԱՆՈ— Հերի՛ք է։ Անցի՛ր ներս։ Անցե՛ք և դուք։ Կոմսուհի Արկիրան կբավե ինծի։

Կոմսուհին, խորամանկ դիմագծերով երկար ու չոր կին մը, նոր է ներս մտած ու լուռ կեցած է մեկդի՝ ձեռքերը ծալլած կրծքին: Այդպես ալ անշարժ կմնա, մինչև մյուս բոլորը կելլեն իրենց տեղերեն, խոր գլուխ կուտան ու կհեռանան ձախի ծառերուն մեջեն: Պատրիկուհին վերջիններից է, կուզե հետևի անոնց: Թագուհին կարգիլե ձեռքի թեթև շարժումով մը:

## 2

ԹԵՈՖԱՆՈ— (Ծանր կելլե տեղեն ու քայլ մը կընե դեպի պատրիկուհին) Այսպե՛ս ուրեմն, լեզվի չափը սիրող Պատրիկուհի Ապամբաս, դուն հունական ամենահին ընտանիքի մը ազնվական զարմն ես, իսկ ես գռեհիկ գինեպանի մը աղջիկը։

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ— (Սարսափահար ետ-ետ կերթա) Ի՞նչ։

ԹԵՈՖԱՆՈ— Մի՛ կեղծեր։ Չէ՞ որ այդպես ես ըսեր։



ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ— Ե՞ս։

ԹԵՈՖԱՆՈ— Դո՛ւն։

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ— Ատիկա քեզի ըսողը իմ կորուստս կնյութե։ Սո՛ւտ է, Բազիլի՛սա։

ԹԵՈՖԱՆՈ— Սո՞ւտ է։ (Քմծիծաղ) Ինչո՞ւ է սուտ։ Դուն գեղեցիկ ես, շա՛տ ես գեղեցիկ, բայց ես գեղեցիկ եմ քեզմե՛ ալ ավելի։ Ա՞ս ալ սուտ է։

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ— Բայց, Բազիլի՛սա...

ԹԵՈՖԱՆՈ— Գնա՛. պետք չէ ինծի քու արդարացումդ. միայն նայե՛, որ քիչ երևաս աչքիս։

Պատրիկուհին կհեռանա այլայլած:

## 3

ԿՈՄՍՈՒՀԻ ԱՐԿԻՐԱ— Աստվա՛ծ իմ, այդ տեսակ ալ խոսք։ Ո՛չ, թագուհի՛, ան չի՛ համարձակիր։ Ո՞վ ըսավ քեզի։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՛չ ոք։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Ուրե՞մն։

ԹԵՈՖԱՆՈ— Հապա իր հետաքրքիր աչքե՞րը, շարունակ ետևես ու առջևես։ Ոտքերուս դեմը քար չի պիտի իյնա, Մելա՛նիա։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Քարը իյնա թշնամիներուդ գլխուն։ Ո՞վ կրնա կենալ քու կամքիդ արգելք։ Ամե՛նքը, թագուհի՛, ու ամեն ինչ ստեղծված է ու վայելքիդ համար, քու վայելչությանդ։

ԹԵՈՖԱՆՈ— (Երազկոտ) Ես պե՛տք է մնամ գեղեցիկ, ես պե՛տք է մնամ թագուհի։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Թող արևդ երկար ըլլա. դուն կմնաս միշտ ան, ինչ որ ես։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՛չ այդպես։ Ես կցանկամ նորե՛ն ու նորեն գեղեցիկ. ես կցանկամ նորե՛ն ու նորեն թագուհի, միշտ նո՛ր թագուհի։ Պետք է լեցնես կյանքիդ բաժակը միշտ նոր ու նոր, որ չցամքի։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Ժպտուն) Ուրիշ խոսքով՝ տամ նշանը, որ նավակը մոտենա։

ԹԵՈՖԱՆՈ— (Հուզված կցատկե ոտքի) Նավա՞կը։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Այո՛, թագուհի՛, հրվանդանի ետին։

ԹԵՈՖԱՆՈ— Ինչո՞ւ չէիր ըսեր։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Թողի որ ասոնք քաշվին. և դուն կխոսեիր։ Կանչե՞մ։

ԹԵՈՖԱՆՈ— Կեցի՛ր։ Պետք է հանգիստ, բոլորովին հանգիստ։ Երիկմարդու սանձը պետք է ձիգ պահես։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Անոնց սանձը մի՛շտ է եղեր բուռիդ մեջ, թագուհի՛։ Բացառություն չէ և այս մեկը։

ԹԵՈՖԱՆՈ— (Կլոե պահ մը աչքերը գոց, ետքը կբանա կամաց ու կըսե հանգիստ) Թող գա՛։

4

Կայսրուհին նստած է իր տեղը մինակ ու հպարտ։ Ժայռերուն մեջեն պզտիկ նավակ մը կմտնե խորշը։ Օհան Գուրգեն անագին լայնեզր գլխարկ մը գլխուն կցատկե ցամաք, գլխարկը կհանե, կնետե նավակին մեջ ու ինքն ալ կուգա շիտակ դեպի կայսրուհին։

ԹԵՈՖԱՆՈ— (Ժպտուն, բայց կտրուկ ու հանգիստ շարժումով մը) Ո՛չ, ո՛չ, կեցի՛ր հոդ, մի՛ մոտենար։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կբարձրացնե գլուխը) Ինչպե՞ս։

ԹԵՈՖԱՆՈ— Հեռու՛ն, հեռու՛ն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ինչո՞ւ։

ԹԵՈՖԱՆՈ— Իմ կամքս չէ՞։ Այդպես կուզեմ ես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Նոր սահմաննե՞ր։

ԹԵՈՖԱՆՈ— Դիցո՛ւք։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բայց ես ատե՛ր եմ միշտ բոլոր սահմանները. թե՛ հին, թե նո՛ր։ (Կերթա դեպի կինը)։

ԹԵՈՖԱՆՈ— (Ոտքի կելլե ձեռքի արգիլող շարժումով մը) Ո՛չ ըսի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Բռնելով ձեռքը) Նայե՛ ինծի։

Վայրկյան մը լուռ ու համառ կեցած են աչք-աչքի, ձեռք-ձեռքի, կարծես պատրաստ կռվելու։ Հանկարծ կայսրուհին կքաշե ձեռքը ետ ու քներուն բոլոր ուժովը կզարկի անոր վիզը։ Կգրկվին։

ԹԵՈՖԱՆՈ— Միայն չերևակայես, թե կսիրեմ քեզի։ Ես ոչ մեկը չե՛մ սիրած կյանքիս մեջ, ո՛չ մեկը. և երբեք ալ սիրելու չեմ, կհասկնա՞ս, երբե՛ք, ո՛չ մեկը։ Աս, այնպես, խաղ մըն է. այդպե՛ս կուզե հաճույքս, քմահաճույքս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Լսե՛, Թեոֆա՛նո. ամիսե մը անցնի պետի զորքը արաբական սահմանը. երկու օրեն կմեկնիմ ես՝ բանակները շարժման մեջ դնելու։

ԹԵՈՖԱՆՈ— (Ծաղրով) Ա՜, վերջապես կազատիս բանտեդ. ոսկի վանդակեդ։ (Լուռ)։ Ո՛չ, չե՛ս ազատիր։ Ամբողջ ամառը քեզի, կռիվներուդ, արաբներուդ, ինչի որ կուզես։ Բայց աշունը գալուն պես դարձող



զորքին հետ պետք է ըլլաս հո՛ս։ Լսեցի՞ր։ Ձմեռն ու գարունը դուն իմս ես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ո՛չ, թագուհի՛. ես վճռած եմ այլևս ոտք չդնել այս քաղաքը... իբրև մուրացիկ։

ԹԵՈՖԱՆՈ— Մուրացի՞կ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ամեն գալուս նույն հաղթական տափակ ընդունելությունը Ոսկի դռներեն մինչև Կրկեսը. վրայեն ալ արքունի գանձեն նվեր մը խոշոր. ողորմությո՛ւն չէ, հապա ի՞նչ է, որ մուրացկանի մը առջև կարծես կնետեն։ Եվ վերջապես դո՛ւն, ինչ է այս քու սերդ, Թեոֆա՛նո։ Դուն ինքզինքդ կուտաս ինծի, ինչպես ողորմություն մը, որ կըհաճին մուրացկանին։

ԹԵՈՖԱՆՈ— (Խոժոռ) Զորավա՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ա՜յ, «զորավար» կնետես երեսիս, որովհետև զորավար ըսածդ սուր մըն է միայն ուրիշի ձեռքին։ Իսկ ես այլևս չեմ ուզեր ըլլալ սուր մը ուրիշի ձեռքին։ Կուզեմ ըլլալ իմ սուրս իմ ձեռքիս։

ԹԵՈՖԱՆՈ— Կըմբռնե՞ս դուն ինչ որ լեզուդ կխոսի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կուզե՞ս թարգմանեմ։ Այս քաղաքը ազատ ոտք դնել ուզողը իր բանակներովը պիտի գա։

ԹԵՈՖԱՆՈ— (Կեցած է լուռ ու խոժոռ)։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Լռեցի՞ր։

ԹԵՈՖԱՆՈ— Հանդո՛ւգն է խոսքդ. կվայլե՛ դեմքիդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ քու կա՞մքդ։

ԹԵՈՖԱՆՈ— Խոսքդ լսեցի. չտեսա՛ գործդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Լա՛վ. ուրեմն կրնանք բաժնվիլ։ (Ձեռքը կերկարե հրաժեշտի)։

ԹԵՈՖԱՆՈ— (Առանց ձեռքը տալու և երգիծանքով) Երբ գալու ըլլաս քու բանակներովդ, այն ատեն վճիռները կուտաս դուն. հիմա դեռ քիչիկ մը կանուխ է կարծեմ. դեռ ի՛մս է հրամանը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հրամայե՛։

ԹԵՈՖԱՆՈ— Այսպես, պարտեզի մը չորս ճամփուն վրա չենք կրնար բաժնվիլ իրարմե։ Վաղը կուգաս ինծի, հրաժեշտի։ Կուգաս նույն ժամուն, նույն ճամփով, որ գիտես. միայն, խնդրեմ, ո՛չ այդ լուրջ դեմքդ, ոչ ալ այդ ճգնավորի տրամադրությունդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Աշխույժ) Ո՛չ, Թեոֆանո։ Վաղը գիշեր լրջությունն ու ճգնությունը, ինչպես և բոլոր քրիստոնեությունս կհանեմ, կթողնեմ տունը ու կմտնեմ նավակս քու այն գողտրիկ ամարանոցդ գալու, ինչպես հին հեթանոս հույնը, երբ կնստեր իր նավը Աֆրոդիտեի կղզին սիրո տաճարը երթալու։ Ինչպես հին հեթանոս հույնը կուգամ վաղը գիշեր.

*Վերջին անգամ մը քու երկնային գեղեցկությունդ փառաբանելու ու պաշտելու քու աստվածային մերկությունդ։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Ձեռքովը կգոցէ բերանը)։ *Լռե՛։*

Հրամանատարը կհամբուրե կնոջ զույգ ձեռքերը, կցատկե նավակը, կդնե գլխարկը ու թիավարելով կելլե խորշեն դուրս։ Թագուհին կեցած է վայելքի ժպիտը երեսին ու կնայի հեռացող նավակին։ Գլխու թեթև շարժումով մը վերջին անգամ բարևելեն ետքը, վեհ ու հաղթական կշարժվի առաջ դեպի ձախի նիքը։

5

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ—* (Նույն միջոցին կմտնե աջեն, երկու քայլ կուգա դեպի թագուհին և լուռ ու խոր կխոնարհի)։

*ԹԵՈՖԱՆՈ—* (Նախ կանգ կառնե այլայլած, բայց իսկույն կզսպե ինքզինքը ու կսկսի խնդալ շինծու անհոգ ծիծաղով մը) *Մեծ պարոգիմոմենը ելեր է պտույտի. կարոտեր է ծովու հեքին, ծովուն բացին, անցուդարձին... Հա՜, հա՜, հա՜, հա՜։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Չգիտեի, որ այս կողմն է թագուհին։ Կթափառեի աննպատակ։*

*ԹԵՈՖԱՆՈ— Ո՞վ կկասկածի։ Ու կփնտրեիր հետք մը միայն. է՛, գո՞հ ես հիմա. գոնե ճանչցա՞ր. ըսե՛ նայիմ՝ ի՞նչ տեսար։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ես ոչինչ չտեսա՛, կայսրուհի՛։*

*ԹԵՈՖԱՆՈ— Դարձիր, դարձիր կրունկներուդ վրա ու վազե ինկի՛ր տիրոջդ ոտքերը, ինչպես որ կվայելե հավատարիմ շանը։ Վազե՛, ան կվարձատրե քեզի, կուտա պաշտոն։ Գնա՛, շո՛ւտ, ինկի՛ր ոտքը ու պատմե՝ ինչ որ տեսար։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ես ոչինչ չտեսա, կայսրուհի՛։*

*ԹԵՈՖԱՆՈ— Հա՜, պահել կուզես ձեռքդ այդ նոր ու սուր զենքը, որ խաղցնես աչքերուս դեմը արևուն տակ ու շինես ինծի ալ գործիք մը քեզի։ Բայց չե՞ս վախնար, որ հանկարծ խլեմ ձեռքեդ նոր զենքդ ու նույն զենքով թափել տամ աչքերուդ լույսը, որով դուն տեսար։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ես ոչինչ չտեսա, կայսրուհի՛։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Կտրուկ) *Այո՛, դուն ոչինչ չտեսար։ Իրա՛վ է։ Գաղտնիք մը չէ, Վասի՛լ Լեկապեն, ո՛չ քեզի և ո՛չ ինծի, որ մենք միշտ կեցած ենք եղեր իրար դեմ, ահա այսպես իբրև երկու թշնամի։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ինչպես կհամարձակի քու ոտքիդ փոշին։*

*ԹԵՈՖԱՐՈ— Դուն չես կրնար ներել ինծի, որ ես կին եմ ու կտիրեմ, ես չեմ կրնար ներել քեզի, որ քեզի դեմ անզոր եմ։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ—* (Խոնարհ) *Կայսրուհի՛...*



*ԹԵՈՖԱՆՈ— Այս պալատը հարս եկած օրես ենթարկեր եմ ինծի ամենքը, վարեր եմ ամենքը, ինչպես ուզեր եմ, անզոր եմ եղած միայն քու հանդեպ։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ինչպե՞ս, կայսրուհի՛։ Ինծի պես չնչին խորհրդական մը, հասարակ պալատական մը...*

*ԹԵՈՖԱՆՈ— Դուն հասարակ պալատական մը չես. դուն միակ պալատականն ես այս պալատին մեջ. դուն պալատը ինքն ես. քու ուսերուդ են հենած այս պատերը։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Շատ մեծ պատիվ կընե ինծի կայսրուհին իր շռայլ կարծիքովը։*

*ԹԵՈՖԱՆՈ— Ի՞նչ կարիք ծեքծեքումի. չէ՞ որ մենք իրար հասկցեր ենք միշտ. միևնույն է, խոսինք թե լռենք։ Վասի՛լ Լեկապեն, մե՛նք ենք այս պալատի հոգին, ես ու դո՛ւն, մի՛շտ բաժնված ու միշտ կապված իրարու, միշտ թշնամի ու մի՛շտ հենած իրարու։ Կապված ենք, որովհետև կատենք իրար. կատենք, որովհետև պետք է հաշվի առնենք իրար։ Ես գիտեմ, որ դուն հիմա չես հայտնելու ոչ ոքին ինչ որ տեսար։ Խոսե՛, ո՞րն է այն փրկանքը, որ դուն կպահանջես ինծմե։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Քա՛վ, կայսրուհի՛. ի՞նչ փրկանք։*

*ԹԵՈՖԱՆՈ— Խոսե՛. ի՞նչ է քու պահանջդ։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Խնդի՞րքս. ըլլալ քու խոնարհ ծառադ, ըլլալ արժանի վստահությանդ, ըղձիդ, ծրագրիդ։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Ժպտուն) *Տեղյա՛կ ըլլալ կուզես. կուզես իմանա՛. ինչ որ կդառնա, ինչ որ կուզեմ։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Եթե իմ կայսրուհիս արժանի համարե ինծի այդ գերագույն բախտին։*

*ԹԵՈՖԱՆՈ— Իսկ ուրի՞շ։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ողջությունդ, կայսրուհի՛։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Հպարտ) *Աղե՛կ։ Կըլլա ուզածդ. հանկարծակիի չես գար։ Կերդնում քեզի... գեղեցկությանս վրա։* (Դուրս)։

6

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ—* (Քիչ մը ատեն կմնա իր խոնարհ դիրքովը, վերջը կամաց-կամաց կբարձրանա, կշտկվի, կնայի անոր ետևեն հիացումի ու չարության խառն արտահայտությամբ ու կխոսի հետզհետե աճող դառնությամբ) *Թող գա՛, թող գա՛ աս ալ, թող գա աս մե՛կն ալ, և ամեն*

եկող թող գայ ու անցնի քու վրայեդ։ Ես կուզեմ, որ բոլորը՝ բոլորը գան ու անցնին քու վրայեդ, և բոլոր անոնք որ եկեր ու անցեր են քու վրայեդ, կոխեմ ես ոտքերուս տակը ու քալեմ անցնիմ իրենց վրայեն։ Մինչև որ... մինչև որ օր մըն ալ նետեմ քեզի քայլերուս տակը, կոխեմ ու անցնիմ և քու վրայեդ, քու այդ գոռոզութեանդ, քու այդ գեղեցկութեանդ վրայեն, քու... քու... էգ։

## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

#### ՀԱՇՏԵՆՔԻ ԱԿԼԵՐՈՒԴ ՏԻԳՐԻՍԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄՈՏԻԿՑԱԾ ԱՌԱՍՏԱՂՈՎ ՍԵՆՅԱԿ ՄԸ

Միակ մուտքը ճակտեն է, որ բաց է միշտ ու հնձած պայծառ լուսավորված սրահը։

**1**

Արխոնդ Դուկաս՝ խոժոռ արտահայտությամբ, ճաղատ ու տարիքոտ մարդ մը։ Արխոնդ Թոռնիկ՝ ներմկած, բայց բարմ ու կենսուրախ։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Տե՛ղն է, թող այդ Ցոկասը հոգիդ ալ հանե. քեզի պես կծծիին այդպես ալ պետք է։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Չի՛ մարսեր։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Դուռը ցույց տալով) Իսկ այս մե՞կը։ Տեսար դուն կայսր ըլլալու մարդը։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Հա՛. ախորժակը տեղն է։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Խեթ) Չի հավնեցա՞ր։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— (Մատներուն վրա համրելով) Ցոկասնե՛րը, Գուրգեննե՛րը, Սկլերոսնե՛րը. ահա՛ այս երեք տունը չէ՞, բռներ են Անատոլիի լավագույն թեմերը, լավագույն հողերը, ամեն պաշտոն, ամեն դիրք. այս ահագին բանակին ալ գրեր են մեջտեղը, հեծեր են վրան, դե՛ իհարկե, որ կուզեն կայսր դառնան։ Ցոկասը հասավ իր մուրազին, հիմա հերթը Գուրգեններինն է, վաղն ալ անշուշտ կուգան Սկլերոսները։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Իսկ մյուս օրն ալ... Դուկասները։ Չէ՞ որ դուք ալ մեծ տուն եք, ընդարձակ հողեր, ինչքան ալ որ Ցոկասը չորս ծայրերեն կխուզե։ Հը՛մ... ճաղատ գլխուդ մեջ գուցե դուն ալ երազ կտեսնես, հե՞... բյուզանդական գահին վրա, սա՛նկ, ոտքերդ փառավոր երկընցուցած։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Մի՛ խնդար, լավ չէ, լավ չէ։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Սաղրական) Ի՞նչը, ա՛յ քավթառ։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Հոն տիրող կայսերական տուն կա, օրինավոր ժառանգներ կան։ Սուրբ բան է ժառանգական իրավունքը։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Ա՜, սո՜ւրբ, իհարկե՛... ախոռներեն դուրս եկած։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— (Ապուշ շեշտով) Հը՞։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Գրգոված) Այդ քու սուրբ կայսերական տան հիմնադիրը ասկե ուղիղ հարյուր տարի առաջ պալատի ախոռներուն վերակացուն էր ու ինծի պես ալ պարզ ու անսուրբ հայ մը, բայց խելքը տեղը, ճարպիկ, ատիկա արդեն ուրիշ բան է։ Հիմա իր լակոտները դարձեր են մեյմեկ «ծիրանեծին», «ժառանգակա՜ն», «սուրբ»։ (Հռհելով): Հը՜, դո՛ւն, իշո՛ւ սուրբ։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Եղբա՛յր, խոսե՛ առանց հայհոյելու։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Կարելի՞ է քեզի հետ առանց հայհոյելու։ Եվ վերջապես հարցնող ըլլա՝ քու ինչո՞ւդ է պետք այդ բոլոր սուրբ ու նուրբ օրենսգիտությունը։ Հողերդ ետ ստանալ կուզե՞ս, թե ոչ։ Եվ գե՞շ կըլլա, որ տղադ նորեն ոտք դնե պալատը։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— (Խնդալով) Ինչո՞ւ պիտի գեշ ըլլա. շատ ալ աղեկ կըլլա։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Քանի որ դեռ այդչափ խելք ունիս խելապատակիդ մեջ, դե՛, գոց պահե բերանդ ու (Ներս մտնողները մատնանիշ ընելով) բա՛ց պահե աչքերդ։

**2**

Սրահեն կերևան չորս հոգի, որ խոսելով առաջ կուգան։ Իշխան Անդոկ՝ Հաշտենք գավառի տերը՝ բարի ու վիթխարի մարդ մը։ Կոմս Սկլերոս՝ հասուն տարիքի, խելացի դեմքով։ Զորապետ Վահրամ՝ տաք ու երիտասարդ։ Զորավարը՝ Օհան Գուրգեն։

ԿՈՄՍ ՍԿԼԵՐՈՍ— ...Ծամփա չի տար ոչ ոքի, ամե՛ն տեղ ինքը... ո՞ր մեկը ըսեմ։ Դժգոհ են ամենքը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ամե՜նքը։ Ո՞վ է այդ ամենքը։

ԿՈՄՍ ՍԿԼԵՐՈՍ— Մի՞թե չես զգար բանակին մեջի խուլ տրտունջը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Մտրուկներո՛ւ տրտունջը, գիտե՛մ։ Բավական է իր գահին բարձունքեն պոռա անգամ մը, որ բոլորն ալ մտնեն իրենց ծակերը։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Իրավ է հրամանատարը։ Այդպես է։

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— Ա՜, ո՛չ ամենքը, իշխա՛ն Անդոկ, ո՛չ ամենքը։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Այդպես որ ըլլար, հիմա պատկերը ուրիշ կըլլար։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Ամեն բանակ կարժե իր կայսրը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Եվ ամեն կայսր կարժե իր բանակը։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Հրամանատա՛ր, իզուր կմեղադրես։ Կամաց-կամաց։ Դուն ալ ձիդ շատ շուտ թամբող մարդ ես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ ժամանակը, կկարծե՞ս, որ սպասե քեզի ու քու ձիուդ։ Պետք է որսալ պատեհ ժամը։ Չե՞ս տեսներ, ինչպե՛ս խարխըլած, ինչպե՛ս քայքայված են ներքուստ մեր շուրջի արաբ իշխանությունները և ինչպե՛ս թեթափ է Մահմետի ոգևորությունը։ Պետք է խորտակել արագ, հուժկու զարկով մը այդ փտտած շենքերը և քշե՛լ մահմետականությունը դեպի իր անապատը, ուրկե ան դուրս է եկեր։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Հա՜, եթե կարողանայինք...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Եվ միայն ա՞տ։ Հապա բուլկարները, ռուսները և բոլոր մյուս բարբարոսները. ատոնց բոլորի մազեն պետք է բռնել ու քաղաքակրթության տակ պետք է քաշել։ Պետք է վերցնել մեջտեղեն մյուս մանր-մունր անկախությունները մեր պետության սահմաններուն վրայեն ու սահմաններուն ետևեն։ Եվ այդ բոլորի ավերակներուն վրա կառուցանել նո՛ր շենք մը, նոր ու ամուր միաձույլ պետություն մը Կովկասի ձյուներեն մինչև հարավի ծովը, պարսիկ ու արաբիկ անապատներեն մինչև սկյութ տափերը։

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— (Հափշտակված) Տա՛ր մեզի, հրամանատար, տա՛ր մեզի։ Մենք քեզի հետ ենք, քու ետևեդ. բոլոր գնդերդ քու ստվերիդ պես քու ետևեդ. տա՛ր մեզի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Պետությո՛ւն մը, որուն կենտրոնը, սիրտն ու գլուխը ըլլա մեր այս երկիրը, մեր այս սիրուն ու հարուստ Անատոլին։ Պետություն մը, որուն ստեղծողը ըլլանք մենք, բարձրացնողը ըլլանք մենք. մե՛ր պետությունը, մե՛ծ և նոր անատոլիկ պետություն մը. նո՛ր Անատոլի մը։

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— Նո՛ր, նո՛ր Անատոլի մը։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Գուրգենին, կատակելով) Իսկ կա՞յսրը. հարցուցե՞ր ես իր կարծիքը։



ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— Կա՞յսրը։ Թող ջարդենք իր հավատարիմ գունդերուն քիթը. անկե ետքը կհարցնենք իր կարծիքը։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Խնդալով) Ա՜, շուն. քու պոչդ ալ կոխեր է, հա՞, այդ կապադովկացի արջը։

ԿՈՄՍ ՍԿԼԵՐՈՍ— Լսե՛, Գուրգեն. այս պետության բախտը արդեն մի՛շտ է եղեր մեր ձեռքը, ինչի՞ կնմաներ Բյուզանդիան առանց Անատոլիի. ի՞նչ հող, ի՞նչ ուժ, ի՞նչ բանակ։ Մենք ենք տերը, մե՛րը պիտի ըլլա իշխանությունը, դուն ալ մեր կայսրը։

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— (Հրճվանքով) Ա՜խ, երբ պիտի բարձրացնենք քեզի վահանի վրա, ամբողջ բանակին դիմացը։ Կեցցե՜ մեր կայսրը։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Կամա՛ց, ա՛ տղա։ Այդ տեսակ բաները կըլլեն, չե՛ն պոռար։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Ա՛յ, այդ մեկը իրավ է. լռելո՜վ, լռելով։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Մեր բանակները արդեն քու ձեռքդ են։ Անունիդ հմայքը մեծ է և մյուս գնդերուն մեջ. պետք է միայն քիչ մը ավելի շահագործել առաջիկա արշավանքը։ Մնացածը քու գիտնալիք բանդ է։ Հրամանը կուտաս, երբ որ հարմար կգտնես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կարծես հեգնոտ) Շնորհակա՛լ եմ. լսեցի՛։

ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ— Բայց դուն կարծես վստահ չես և մեզի՛։ Կուզե՞ս երդում ուտենք քու մերկ սուրիդ վրան։

ՕՀԱՆ ԳՈՒԳԵՆ— Երդումն ի՞նչ բան է, տղա՛։ Մարդիկը իրար կապողը հափշտակությունն է, եթե մարդիկ սիրտ ունին։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— Այդպե՛ս է, հրամանատա՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Մարդիկը իրար կապողը հաշիվն է, եթե մարդիկ խելք ունին։

ԱՐԽՈՆԴ ԴՈՒԿԱՍ— Այդպե՛ս է, հրամանատա՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ես գիտեմ, որ դուք կուգա՛ք ինծի հետ, եթե կա մեջս այն բոցը, որ կվառե, եթե կա մեջս այն ուժը, որ կվարե։ Ես գիտեմ, որ մենք կապված ենք իրարու։ Ելեք, և ամեն մարդ իր գունդը։

ԿՈՄՍ ՍԿԼԵՐՈՍ— Ուրեմն կհանդիպենք Հալեպի տակ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Աստուծմո՛վ։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— (Սկլերոսին) Ես հրամանատարի հետ Եփրատեն, դուն Տավրոսեն, կայսրը Ամանոսեն։

ԱՐԽՈՆԴ ԹՈՌՆԻԿ— (Գուրգենին) Իսկ հոս դեռ կմնա՞ս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Խոսելիք ունիմ իշխանին հետ։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Հրամանատարը այսօր իմ հյուրս է։

## 3

Կմնա Օհան Գուրգեն, որ կերթևեկե սենյակին մեջ մտածկոտ։ Շուտով կըվերադառնա և տան տերը:

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Գիտե՞ս, Գուրգե՛ն, քու գծածը սքանչելի ծրագիր է։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իմ նոր Անատոլի՞ս։ Հավնեցա՞ր։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Գլո՛ւխ բեր, գլո՛ւխ բեր, Գուրգեն, ստեղծե՛ այդ մեծ ու հզոր պետությունը, այդ նոր Հռոմը ու դուն կդառնաս անմահ։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Անմա՞հ։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Այո՛. դարեր ու դարեր, որքան ատեն, որ այս աշխարհքը կա, որքան ատեն որ պատմությունը կա։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իրա՞վ. Անդո՛կ, քեզի այդպես կհետաքրքրե՞ն այդ դարերը, այդ պատմությունը, այդ հեռավոր աշխարհքը։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Քեզի ո՞չ։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ինծի համար վաղը չկա։ Վաղը իմս չէ՛։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Այո՛, նեղ մտքով։ Բայց գահը, փառքը, գործը, ատիկա կա ու կմնա։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ո՞վ ըսավ քեզի. ամե՛ն փառք ու ամե՛ն գործ ստեղծված է միայն օրվան մը համար։ Եվ վերջապես ինծի՞ ինչ՝ մնացեր, թե ոչ։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Բայց... այն ատեն ալ ո՞ւր կձգտիս. ինչո՞ւ այդ նոր պետությունը, որ ստեղծել կուզես, որուն վրա ամբողջ բախտդ ու ամբողջ կյանքդ կրնաս վտանգել։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Գուցե և ճիշտ ատոր համար։ Գրավիչ են միայն ա՛յն խաղերը, որուն վրա մարդ իր կյանքն ու մահը կդնե։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Ուրեմն միայն խաղի՞ համար։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հապա ի՞նչ կուզեիր։ Ըսե՛, խնդրեմ, ի՞նչ հրապույր, ի՞նչ իմաստ կմնա կյանքին մեջ, եթե հանես մեջտեղեն այդ խաղը, եթե հանես կյանքին մեջեն կյանքին, բախտին ու աշխարհին հետ խաղալը։ Ըսե՛, տեսնեմ, ապրած-տեսած մարդ ես դուն, ի՞նչ կմնա տակը։*

## 4

Դռներուն մեջ կերևա Իշխան Անդոկի աղջիկը Հաննա, բաանի չուրչ, նուրբ կազմով, ճառակ դիմագծերով, մեծ ու խոշոր աչքեր, առատ ճյուղ մը թիկունքին: Հագած է թեավոր ստոլա, որուն ծալքերը կծածկեն ոտքերը։



Հրամանատարը կկտրե խոսքը, կելլե ոտքի ու կմնա անշարժ, մինչ աղջիկը աչքերը անքարք անոր դեմքին հառած՝ հանգիստ կմոտենա ու կկենա դեմը։

*ՀԱՆՆԱ—* (Ձախ ձեռքը կրծքին, աջը վեր բարձրացնելով) *Գալդ բարի՛, զորավա՛ր։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ—* (Բարևի նույն դիրքով) *Բարին արևդ, օրիո՛րդ* (Վայրկյան մը լուռ ու համառ կնային իրար) *Ինչքա՞ն փոխվեր ես այս մեկ տարվան մեջ. կա՛զմդ, դե՛մքդ, արտահայտությո՛ւնդ։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Մեծցեր է, չէ՞։ Ահա՛, հրամանատա՛ր, ինչ որ կմնա կյանքին տակը, երբ բոլոր փոթորիկները կանցնին։ Ինչի՞ նման պիտի ըլլար իմ ծերությունս, եթե ուրախության այս շողը տված չըլլար ինծի Աստված, իր մորը թողած այս միակ արև հիշատակը, երիտասարդությանս այս վառ ու ոսկի հուշիկը։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կտեսնեմ։*

*ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Հա՛, քեզի պիտի զգուշացնեմ՝ աղջիկս նշանավոր սրբատեկ է. ամբողջ ձմեռը իմ ու քու կռիվներեդ է պատմել տվեր ինծի։ Իմ հոգիս հանեց, հիմա կարգը քուկինդ։* (Աղջկան) *Ահա՛, հրամանատարս կհանձնեմ քեզի, հարցո՛ւր ինչքան կուզես։* (Գուրգենին) *Ցնմ ուշանար, հրամանատա՛ր։* (Դուրս):

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ա՜, կրնա՞ս և ուշանալ, երբ հոս այսպես ընկեր տվիր ինծի։*

## 5

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ըսե՛, կուզեի լսեմ առաջին խոսքդ։*

*ՀԱՆՆԱ— Ուրա՛խ եմ, որ նորեն եկար։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ուրախ եմ և ես, որ նորեն կտեսնեմ քեզի, քու այդ խրոխտ ու ազնիվ կերպարանքդ, իմ այս հայրենի լեռներուս նման, քու բյուրեղ ու անբիծ հոգիդ, մեր այս սարերու ձյուներուն նման։*

*ՀԱՆՆԱ— Ո՛չ, զորավա՛ր, մի՛ հեգներ ինծի։ Դուն պե՛տք չէ, որ ծաղրես ինծի։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ծաղրե՞մ։*

*ՀԱՆՆԱ— Ես գիտե՛մ։ Դուն ապրած ես լայն ու թափով. տեսած, վայելած ու տիրած ես կյանքը, քու ոտքերուդ տակն են ամենեն գեղեցիկները, ամենեն բարձր դիրք ունեցողները, քեզի կերազեն ամենեն շքեղ, ամենեն հմայիչ հոգիները։*

*ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ձգե՛. մի՛ հիշեցներ ինծի վարի աշխարհը, հո՛ն, այն ցածի կյանքը։ Ես հիմա իմ ձյունոտ լեռներուս գիրկն եմ, իմ պատանեկությանս թարմ ու մաքուր ոլորտին մեջ, ուր ես հյուսեր եմ եր-*

քեմն միամիտ, ամենեն աղվոր ու ամենեն ավելի վեր խոյացող իմ երազներս։

ՀԱՆՆԱ— (Ջերմ) Հո՛ս... այս լեռներուն վրա...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այո՛, իմ այս անբիծ, վեհ լեռներս, որոնց թախիծը այնքան ավելի համառ կընկերանա միշտ ինծի, որքան ավելի ցած իջնեմ, որքան ավելի հեռո՛ւն։ Եվ գիտե՞ս, մեր անցած տարվան հանդիպումեն ի վեր, երբ մեղմ կարոտ մը կքաշե ինծի դեպի մեր սարերուն ճերմակ բարձունքները, այդ կարոտը քու ազնիվ կերպարանքիդ հետ զուգորդ կներկայանա աչքերուս։ Զմեռը հաճախ հիշեր եմ ես քեզի։

ՀԱՆՆԱ— (Գլուխը կախելով) Գիտե՛մ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Գիտե՞ս...

ՀԱՆՆԱ —Եվ ատոր համար է, որ վստահ էի վերստին գալուդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ուրեմն կսպասեիր։

ՀԱՆՆԱ— Ամբո՛ղջ տարին։ Իսկ երբ իմացա, որ բանակներդ այս կողմեն պիտի անցնին Եփրատը՝ կսպասեի ա՛մեն օր։ Եվ, ա՛յ, եկա՛ր։ Կտեսնե՛ս, որ այնքան ալ միամիտ չեմ, ինչպես որ կկարծես, և քու հոգիիդ մուտքը բոլորովին գոց չէ ինծի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ակնթարթ մը լուռ և ճանկարծ ջերմ շեշտով) Եկո՛ւր, եկուր նստե՛։ Եվ պատմե՛ ինծի՝ ինչ որ կապրիս հոս, ինչ որ կմտածես այս սարերուն մեջ։

ՀԱՆՆԱ— Ո՛չ. մի՛ հարցներ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Անախո՞րժ է քեզի։

ՀԱՆՆԱ— Ընդհակառա՛կը. միայն ատ է, որ սիրտս պոռալ կուզե, քանի եկեր ես, բայց կվախնամ, որ բեռ դնեմ խղճիդ վրա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Բե՞ռ, ի՞մ խղճիս։ Դի՛ր, դի՛ր այդ բեռը, մի՛ վախնար։

ՀԱՆՆԱ— (Գլուխը կախելով) Ո՛չ, չըլլար...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Խոսե՛, օրիո՛րդ, ես կուզե՛մ, որ ըսես։

ՀԱՆՆԱ— Կուզե՛ս՝ գիտցի՛ր։ (Կելլե ոտքի) Ես... ես... ամբողջ ժամանակը մտածեր եմ միայն քեզի. ապրեր եմ քու ըսած բառերովդ, քու հպարտությամբդ. ես ապրեր եմ քեզմով. իմ ամբողջ հոգիս կապրի միայն քեզմով։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ինքն ալ կելլե ոտքի ու մտածելով) Դուն դեռ չե՛ս ճանչնար կյանքը։ Ամբողջ հոգին կարելի չէ տալ ուրիշին։ Եվ կյանքի մեջ, գիտցի՛ր, ո՛չ մեկը չարժեր քու այդ նվերիդ։

ՀԱՆՆԱ— Այն ատեն կյանքը ի՞նչ կարժե ինքը առանց այդ նվերին։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Շեշտ ու լուռ դիտելեն ետքը) Իսկ ինծմե՞. ի՞նչ կսպասես հիմա ինծմե։



ՀԱՆՆԱ— Ոչի՛նչ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Սակայն ըսիր՝ կսպասեիր իմ գալուս։

ՀԱՆՆԱ— Քու տե՛սքդ, ձա՛յնդ, խո՛սքդ. գուցե շատ կգտնես և ատիկա։ Ա՛ռ, ատ ալ ե՛տ առ, եթե հարկ կզգաս։ Ահա՛ դուռը, ուրկե ներս մտա ես. կուզե՞ս քաշվիմ, ու ալ չտեսնես երեսս, բնավ չլսես անունս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ժպտուն) Ո՛չ. մնացի՛ր ու մի՛ սպառնար։

ՀԱՆՆԱ— Սպառնա՞մ, քեզի՞։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Թո՛ղ։ Ըսե՛ ինծի՝ ո՞ր ժամանակեն է, որ ես կապրիմ քու հոգիիդ մեջ։

ՀԱՆՆԱ— Այն վայրկյանեն, երբ աչքերս տեսան քեզի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ե՞րբ էր ատ. լավ չեմ հիշեր։

ՀԱՆՆԱ— Դուն չես գիտեր։ Բանակները կդառնային վերջին Կիլիկյան արշավեն, ու կայսրը իր հաղթական մուտքը կըներ Կեսարիա։ Ես հյուր էի հոն։ Անցավ կայսրը ահագին բազմության, բոլորի փառաբանության ու սաղմոսերգության մեջեն։ Հազիվ էր անցեր, շուրջս կանանց մեջ փսփսուք մը ինկավ. քու անունդ կանցներ շրթունքե շրթունք։ Հետաքրքիր աչքերս դարձուցի ու իսկույն տեսա քեզի։ (Ծանր ու երազկոտ) Ճերմակ ու հպարտ ձիուդ վրա... հագնած ժպիտ մը շրթունքիդ... և ինծի այնպես թվեցավ, թե դուն կխղճայիր այդ եռացող բազմությունը, որ իրարու վրա կմագլցեր իր կայսրը տեսնելու. ինծի այնպես թվեցավ, թե դուն կխղճայիր նաև կայսրը, որ ոսկեհուռ լայն ու երկար հագուստներուն տակ կորած՝ կեցեր էր անշարժ ոսկի կառքին վրա՝ իր փառաբանությանը ունկնդիր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Օրիո՛րդ։

ՀԱՆՆԱ— Բոլոր ձեռքերը հանկարծ բարձրացան դեպի քեզի, թընդաց անունդ հազարավոր բերաններե, կին ու աղջիկ իրենց ձեռքի, իրենց կրծքի ծաղիկները կնետեին ձիուդ ոտքերուն տակը. ժպիտ ու սեր կանձրևեր վրադ, երբ թեթե բարևով մը անցար մեր առջևեն։ Այնպե՛ս մոլոր էր նայվածքդ ու այնպես տխուր։ Այդ աղմկոտ բազմության ծովուն վրա հեռո՛ւ, հեռո՛ւ էր քու հոգիդ, տխո՛ւր ու մինա՛կ. մի՛ս- մինակ։ (Կլռե)։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կեցեր եմ դեմդ, կլսեմ քեզի, կնայիմ քեզի ու չեմ հավտար ո՛չ ականջիս, ո՛չ աչքերուս։ Ո՞վ ես դուն, զարմանալի՛ աղջիկ. և ո՞ւրկե հայտնվեցար ինծի։

ՀԱՆՆԱ— Ըսե՛ ինծի, զորավա՛ր, ինչո՞ւ էիր այն օրը տխուր ու մինակ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Մինա՞կ. ի՞նչ ըսել է մինակ. ո՞վ չէ մինակ, մարդըս ե՞րբ չէ մինակ։

ՀԱՆՆԱ— Այդպե՛ս։ Իսկ տխո՞ւր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Մտածելով) Ուրախություն ունի կռիվ երթալը, ուրախություն ունի կռիվ տալը, ես չեմ սիրեր կռվէ դառնալը։

ՀԱՆՆԱ— Բայց այնպես փառքո՛վ ու հաղթակա՛ն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հաղթանակը անխա՛րթ մըն է, իսկույն կցնդի, ու կիյնա աչքեդ հմայքին կապը։ Իսկ բաց աչքերը կտեսնեն միայն մեր խեղճությունը։ Կտեսնեն՝ թե ինչքան ողորմելի՛ ու չնչին բան է եղեր, որուն համար դուն կռվեր ես. կտեսնեն՝ թե ինչքան գռեհիկ ու թշվառ բան է եղեր հենց ինքը կռիվը, որ դուն կռվեր ես։

ՀԱՆՆԱ— (Մեծ կարեկցությամբ) Զորավա՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Չեմ կրնար մոռնալ Պեաքար լեռան գագաթը։

ՀԱՆՆԱ— Պետքար լեռան քու փառավոր կռիվդ, գիտե՛մ, կերգեն բերնե բերան։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ցից ու վիթխարի ապառաժ մըն է այդ լեռը. մենք կմագլցեինք։ Խելագար ու արյունալի գրոհ մըն էր. և արաբները կպաշտպանվեին առյուծի պես։ Վճռեր էի, որ առնեմ պիտի լեռը մինչև արևի մայր մտնելը։ Եվ իրա՛վ. ճիշտ ա՛յն վայրկյանին, երբ արևը կքսվեր դիմացի սարերուն՝ ես կեցած էի այդ անառիկ ապառաժին գագաթը։ Շուրջս կոռնար զորքը հաղթանակի արբեցումեն. հեռուներեն կպատասխաներ ուրախ արձագանքը վայրի կանչերով ու ամենքը հիացումով կշնորհավորեին իմ այդ անօրինակ ու հանդուգն հաղթությունս... Ես կեցած էի ժայռին գագաթը, ժայռ մըն ալ իմ մեջս. ու ոտքերուս տակ այն անթիվ թարմ ու խիզախ քաջերը, թե՛ իմ, թե՛ թշնամի, որոնց դիակները փռվեր, գորգ էին հյուսեր ամբողջ սարին վերելքը... Ու կխորհեի՝ ի՞նչը, ի՞նչը կրնար փոխարինել այդչափ առույգ, այդչափ կարմիր կյանքերը... Հանկարծ տեսա, որ շա՛տ վայրագ, շա՛տ խայտառակ, շա՛տ ցած բան էր իմ այդ ամբողջ հաղթանակս։ Եվ ի՞նչ պետք կար, ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար...

ՀԱՆՆԱ— (Կամաց կտանի ձեռքը դեմքին, կսկսի լալ):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Տխուր ժպիտով) Կուլա՞ս։ Անպե՛տք է և ատ։ Ինչո՞ւ կուլաս։

ՀԱՆՆԱ— Չգիտե՛մ։ Այդ խնկածնե՛րը... և դո՛ւն... և ե՛ս...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Մեղք է, մի՛ թափեր անգին ադամանդներդ քու այդ խոշոր ծով աչքերեդ։ Եվ իզո՞ւր։ Պետքարեն ետքը ես ինչքա՜ն- ինչքան կռիվներ եմ վարեր նորեն, ինչքա՜ն արշավ, ավեր ու հափշտակություն։ Ո՛չ թե լալ, խնդա՛լ է պետք այդ ամենուն վրա, և՛ խնկածներուն, և՛ ապրողներուն։ Ժպտե՛. և նայվածքիդ մեջ այդ շաղին ետևեն սիրուն ոսկի արևը թող նորեն շողա. ժպտե՛։ Այդպես, իմ լեռներուս չքնա՛ղ ոգին, այդպե՜ս։



6

Ներսեն կերևա իշխան Անդոկ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Նայե՛, Անդո՛կ, սարատեկ աղջիկդ կուլա։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Կուլա՞։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կուլա, որ մարդիկ կմորթեն իրար ու կխլեն իրար ձեռքե իրարու ինչքը, հողն ու առիքը, ճակտին քրտինքը, բախտն ու կնիկը... Լավ չէ՛։ Հասկցո՛ւր իրեն, որ մարդիկ եթե ատիկա չընեն, ուրիշ ի՞նչ կմնա իրենց ընելու։

ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ— Չգե՛ հանգիստ։ Շատ դժվար մոտենալու բան է աղջկան սիրտը, աղջկան լացը։ Երթանք, սիրելի՛ս, եկո՛ւր ու պատմե՛ իմ աղն ու հացը։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԲԱՆԱԿԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎՐԱՆԻՆ ՏԱԿ

Վրանը և ճետզճետե դեպի կեդրոնը բեճվող առաստաղը դեղին մետաքս է: Գետինը բավ զորգեր: Ճակատը եպենոսե գահը բարձր բիկունքով: Գահին մոտիկ երկար ու բարակ ոտքերու վրա ոսկի խնկամաև մր, որ կմխա: Մուտքեր աջեն ու ձախեն:

1

Լայն բաց են մուտքերուն փեշերը և վրան լեցուն է ահագին սպառազեն բազմությամբ. բոլորը բարձրաստիճան զորականներ են կեցած ուշադիր:

ԿԱՅՍՐԸ— Այս առաջին անգամը չէ անշուշտ, որ մենք հրաժեշտ կուտանք իրարու Սիրիա տանող այս ճամփաներուն վրա, մեր հաղթական արշավներեն ետքը։ Բայց ո՛չ մեկ անգամ գուցե մենք իրավունք չենք ունեցեր այսպես հպարտ ըլլալու ու այսպես գոհ, ինչպես այս անգամ։ Ահա՛ խորտակված է թշնամին, իր երկիրը ավեր ու ավար, իր բոլոր հարստությունը մեր զորքերու մեջքին։ Մնաց միայն խղճուկ միջնաբերդ մը այն գոռոզ Հալեպեն, որը խնայեցի, որովհետև հանձն առավ հարկ տալու ու ճանչնալու տիրությունս։ Կմնա Անտիոքը դեռ, ապավինած իր ամրակուռ պարիսպներուն։ Ես պահեմ պիտի անիկա ամբողջ ձմեռը պաշարված ու սովալլուկ. ու գալ տարի տուգանք ա՛ն ալ վերցնելու։ Այս տարվան համար այսչափը բավ է։ Դե՛, հաջող ճամփա բոլորիս, բախտավոր դարձ մեր տները և հանգիստ ձմեռ։ Բերե՛ք բաժակը

Կմտնե շատ թարմ մանկլավիկ մը՝ փոքրիկ ոսկի ափսեի մը մեջ երկու ոսկի բաժակ բռնած ու կերթա կկենա կայսեր պատվանդանին ոտքը:

*ԾԵՐՈՒՆԻ ԶՈՐԱՎԱՐ ՄԸ—* (Առաջ գալով) *Տե՛ր, թույլ կուտա՞ս, որ անարժան շրթունքներովս համարձակիմ մեր այս անչափման բաժակը քու պայծառ արևիդ շատությանը խմելու։*

*ԿԱՅՍՐԸ— Խմե՛, սիրելի Բարդա՛ս, կխնդրեմ բարի մաղթանքդ։*

*ԾԵՐՈՒՆԻ ԶՈՐԱՎԱՐԸ—* (Բաժակը վերցնելով) *Ո՜վ դուն առաքելանմանդ, աննվազ ըլլա մեր վրայեն քու առաքինի անունդ տարիներու հոլովումին մեջ, որովհետև անսահման է քու երախտիքդ մեր այս ամենաքրիստոնյա կայսրության վրա։ Տե՛ր, երկար կյանք քեզի և առողջություն։*

*ԲՈԼՈՐԸ—* (Աջ ձեռքերնին վեր բարձրացնելով) *Երկար կյա՜նք քեզի ու առողջություն։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱՎԱՐ ՄԸ—* (Հանկարծ ու ոգևորված) *Քաշեց պատյանեն Նիկեֆոր կայսրը իր անհաղթ սուրը, արև ծագեցավ մեր սուրբ պետության ու քրիստոնյա աշխարհին։ Դուն դալուկ մահն ես սարակինոսներուն, ո՜վ անմահդ Նիկեֆոր. դուն անմահ ես, Նիկեֆո՛ր։*

*ԲՈԼՈՐԸ— Դուն անմահ ես, Նիկեֆո՛ր։*

*ԾԵՐՈՒՆԻ ԶՈՐԱՎԱՐԸ— Շիջավ Հալեպի աստղը, շիջավ արաբներուն աստղը։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՐԱՎԱՐԸ— Քանի կփայլի Նիկեֆոր Ֆոկասի բախտավոր աստղը։ Փա՜ռք քեզի, աստվածայի՛նդ բազիլևս։*

*ԲՈԼՈՐԸ— Փա՜ռք քեզի, աստվածայի՛նդ բազիլևս։*

*ԿԱՅՍՐԸ— Փառք և ձեզի, իմ քաջերս։ Ամենքդ ալ աշխատեցաք. շնորհակալ եմ բոլորեդ ու չեմ մոռնար՝ ինչ որ իմ պարտքս է ձեր հանդեպ։ Բանակը կրնա ցրվիլ։ Աստված ձեզի հետ։*

*ԲՈԼՈՐԸ— Աստված քեզի հետ։* (Արագ կքաշվին դուրս):

## 2

Կգոցվին մուտքերուն փեշերը, վրանը կխավին կմթնե: Ներսը կմնա Մեծ Լոկոթեդը ձախ դռան մոտ:

*ԿԱՅՍՐԸ—* (Հանկարծ կիջնե գահեն ու քայլ մը ընելով դեպի Լոկոթեդը) *Ծա՜ղր կթվի ինծի, ծա՜ղր, այն բոլորը ինչ որ կըսեն, այն բոլորը ինչ որ կըսեք. ծա՜ղր, կհասկնա՞ս, ծա՜ղր...*

*ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— Ինչպե՞ս, տե՛ր։*



*ԿԱՅՍՐԸ—Ձեր արտասանած բառերուն տակեն ուրիշ բառեր կլսեմ ես։ Իմ անունիս գովքը կկարդա ինծի ձեր բոլորիդ լեզուն, բայց ձեր բոլորիդ լեզվին տակը ուրիշ անուն կկարդամ ես։*

*ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— Ուրիշ անո՞ւն։*

*ԿԱՅՍՐԸ— Մի՛ ստեր։ Ա՜յ, իր անունը շրթունքներուդ վրա, ա՜յ, իր կերպարանքը աչքերուդ մեջը, կնայի ինծի աչքերուդ մեջեն։ Կրնա՞ս ուրանալ։*

*ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— Թո՛ղ, տե՛ր, թող որ լեզուս ազատ խոսի առջևդ ինչ որ ծանրացած է հոգիիս վրա։ Իրա՛վ է. շա՛տ բարձրացավ իր դիրքն ալ, իր հռչակն ալ բանակներուդ մեջ, բայց դուն ի՛նքդ ըրիր, տե՛ր։ Դուն երես ես տվեր անոր արդեն մի՛շտ. իսկ այս վերջին արշավանքը կարծես հատուկ անոր համար էր ձեռնարկված։ Ինչո՞ւ հանձնեցիր անոր ամենեն աչքի իյնող հարձակումները... Ինչո՞ւ ղրկեցիր անիկա կռվի ամենեն տաք, ամենեն կարևոր տեղերը...*

*ԿԱՅՍՐԸ—* (Խոժոռ) *Հերի՛ք է։ Չի հարցուցի՛ քեզի քու կարծիքդ։*

*ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— Ներե՛, տե՛ր։*

*ԿԱՅՍՐԸ— Եղի՛ր նե՛րսը ու սպասե՛ հրամանիս։*

## 3

*ԿԱՅՍՐԸ—* (Երբ կմնա մինակ, ծանր ու մռայլ կերթա, ձեռքը կդնե գահի բազուկին ու կմնա կորացած, աչքերը հառած գետին՝ կետի մը):

*ՁԱՅՆԸ—* (Գետնին տակեն) *Ինչո՞ւ հանձնեցիր անոր ամենեն ծանր կռիվները, Նիկեֆոր կա՛յսր։*

*ԿԱՅՍՐԸ— Ձա՜յնը... իր ձա՜յնը։*

*ՁԱՅՆԸ— Ինչո՞ւ ղրկեցիր ամենեն տաք, ամենեն արյունոտ կռիվները, Նիկեֆոր կա՛յսր։*

*ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ կուզես։ Կռվի առեն ո՞վ կհարցնե։*

*ՁԱՅՆԸ— Հողե՛ն է, որ կխոսիմ քեզի, Նիկեֆոր կա՛յսր։ Ղրկեցիր, որ մեռնի։*

*ԿԱՅՍՐԸ— Աստծու ձեռքն է ամենուս կյանքը։ Եթե մեռներ՝ Աստծու կա՛մքը։*

*ՁԱՅՆԸ— Ինչի՞ են պետք սին խոսքերը, Նիկեֆոր կա՛յսր. հողեն է, որ կխոսիմ քեզի։*

*ԿԱՅՍՐԸ— Սուրբ է այն հողը, ուր դուն կհանգչիս։ Ըսիր, որ ձեռքչտամ իր կյանքին։ Ահա կապրի. ու սպրդիլ կուզե իմ ու բանակիս մեջտեղը, սպրդիլ կուզե իմ ու հաղթանակներուս մեջտեղը... Իմ դեմս է*

ան, որ կողմն ալ դառնամ, ինչ ալ որ ընեմ. ամե՛ն տեղ. իր անունը իմ անունիս հետ են, իր քայլերը իմ քայլերուս հետ են, իմ չար դևիս պես, սև ստվերիս պես։ (Կտրուկ) Թող ըլլա ո՛ղջ, թող ըլլա առո՛ղջ, քանի որ այդպես կուզես, բայց մնացածը դուն չարգիլեցի՛ր ինծի և պետք չէ՛, որ արգիլես...(Քիչ մը ատեն լուռ է ու կսպասե): Լռե՛ց։ Հեռացա՛վ։ Հանդարտացավ... (Կերթա դեպի խնկամանը, կչոփի, կխոնարհի) Ամեն տագրտացավ... բի յոթը պատարագ քու հոգիիդ վրա. տաճարին մեջ միշտ վառ կանթե՛ղ մը հոգիիդ լույսին. աղոթքներուս մեջ միշտ անպակա՛ս քու սուրբ անունդ. թող հաշտ ըլլա հոգիդ...

## 4

Կամաց կբարձրացնե գլուխը, կելլե ոտքի ու կդառնա դեպի աջ. կմտնե Օհան Գուրգեն: Երկուքն ալ կուգան քայլ մը իրար դեմ, կկենան լո՜ւռ ու շիտակ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ինծի կանչեր է կայսրը։

ԿԱՅՍՐԸ— (Զարնելով բռունցքը գահի բազուկին) Ըսե՛ տեսնեմ, ո՞վ է վերջապես տերը այստեղ. ե՞ս, թե դուն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ի՞նչն է քեզի զայրացուցեր։

ԿԱՅՍՐԸ— Ի՞նչ խլրտում է, ի՞նչ մութ շարժում Սկլերոսի գնդերուն մեջ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ատ ո՞վ ըսավ քեզի։

ԿԱՅՍՐԸ— Դուն պատասխան տուր ինծի, ո՛չ թե հարցում։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ո՛չ մեկ խլրտում և ո՛չ մեկ շարժում։ Գիտե՛ս, որ Սկլերոսը շատ ունի թշնամի։

ԿԱՅՍՐԸ— Եվ բարեկամ, ինչպես կերևա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Այո՛, կա՛յսր, որոնցմե մեկը ես եմ և մյուսը շատ կուզեի, որ ըլլայիր դուն։ Բայց որ տարտամ ու դժգոհ տրամադրություն մը կա սպաներու մեկ մասին մեջ, ատիկա ճիշտ է, և ոչ միայն Սկլերոսի գնդերուն։

ԿԱՅՍՐԸ— Մի՞թե... Քիչ մը ուշացած չե՞ս գտներ սակայն քու հայտնությունդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ընդհակառա՛կը, քիչ մը կանուխ, որովհետև ապարդյուն է հիմա ատոր մասին խոսիլը։ Կխոսինք վերջը, երբ բանակները ցրված կըլլան, ու կրնանք խորհիլ ավելի ազատ ու անկիրք, ապագայի համար։



ԿԱՅՍՐԸ— (Խիստ) Թո՛ղ պարապ խոսքերը և պատասխանե՛. ի՞նչ տրամադրություն է ատիկա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Դժգոհ են, որ կվերադառնանք առանց Հալեպը լրիվ տիրելու, առանց Անտիոքը նվաճելու, այսպես ամեն ինչ անկայուն ու թերի։

ԿԱՅՍՐԸ— Անկայո՛ւն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Մեր տղա հասակին միշտ նույնն ենք տեսեր. ամեն ամառ կա՛մ արաբները մեր սահմանեն ներս, կա՛մ մենք անոնց սահմանեն։ Քանի մը գերի, պատառ մը հող, քիչիկ մը ավար ու ձմեռվան հետ ամեն մարդ իր տունը։ Ի՞նչ զարմանք, որ շատերը արդեն կուշտ են կռվի այս ձևեն։

ԿԱՅՍՐԸ— Պատառ մը հո՞ղ ամբո՛ղջ Կիլիկիան, ամբո՛ղջ հյուսիսային Սիրիա՛ն, ամբո՛ղջ Կրետեն, որ ես խլեր եմ արաբներուն ճանկեն, պատառ մը հո՞ղ, ու իմ այսքան տարիներու աշխատանքս «քանի մը գերի», «կտոր մը ավար»։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Եթե համեմատենք գալիքին հետ։ Չէ՞ որ այդ բոլորը պատրաստական քայլերն են միայն այն մեծ գործին, որը ըլլալու է խոկապես մեծ ու հիմնական և որուն ծայրը կհասնի մինչև Բաղդադ, մինչև Մսըր։

ԿԱՅՍՐԸ— Բաղդա՞տ... Մսը՞ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ինչո՞ւ ոչ։ Մեծ կայսրե մը մե՛ծ պահանջ։ Եվ ատիկա կզգան բանակիդ ընտիրները, կզգան ու ծարավ են այդ լայն ու խիզախ շարժումին, կզգան ու դարձեր են անհամբեր. ահա բոլորը։

ԿԱՅՍՐԸ— (Կսկսի խնդալ բարձր ու բռնազբոսիկ):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կայսրը կխնդա։

ԿԱՅՍՐԸ— (Հանկարծ կկտրե ծիծաղը) Միթե խնդացի՞. չեմ հիշեր։ Ո՛չ, չեմ խնդար, այլ կցավիմ, շատ կցավիմ, որ... որ այսպես պզտիկ կա՜յսր մըն եմ ես, հասարա՛կ ու միջակ. պզտիկ կա՜յսր, պզտիկ ծրագիրնե՛ր, պզտիկ արշավնե՛ր... Մինչդեռ անո՛նք, այդ իմ բանակիս ամենեն ընտիր ընտիրները, այդ իմ բանակիս ամենեն տխմար մեծամիտները...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կայսրը իզուր կբարկանա, իսկ բարկությունը անիրա՛վ է միշտ։ Անոնք հին, փորձված մարդիկ են, վստահելի։

ԿԱՅՍՐԸ— Գիտե՛մ. այդ ծառին վրա է, որ կբուսնի քու և անոնց բոլոր հանդգնությունը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կա՜յսր...

ԿԱՅՍՐԸ— Իհարկե. չէ՞ որ չեմ համարձակիր, ա՛յ, օրինա՛կ, քեզի պես նշանավոր զորավարի մը ձեռք պարզելու։ Չէ՞ որ բանակներուդ սի-

*քելին ես դուն, Սկլերոսներու նեցուկը և այդ բոլոր դավաճան խլրտումներու հոգին։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— *Կա՛յսր...*

ԿԱՅՍՐԸ— *Ո՛չ, ո՛չ, սխալ է սակայն հաշիվդ։ Ես կկտրեմ այդ ծառը, կկտրեմ արմատեն։ Լա՛վ լսե։ Դուն նշանավոր զորավար մըն ես, այո՛, որովհետև ե՛ս եմ կեցած քու կռնակդ. դուն տաղանդավոր կազմակերպող մըն ես, այո՛, որովհետև իմ հրամաններս կկատարես. դուն հաղթեր ես ու կհաղթես կռվի դաշտին վրա, այո՛, որովհետև իմ մատս կղեկավարե քու շարժումներդ։ Այս մեկը աղեկ հասկցիր. դուն մեծ ես ու անվանի, որովհետև այդպես եմ կամեցեր ե՛ս. կկամենամ ու դուն կդառնաս ոչի՛նչ մը։ Կհասկնա՞ս, ոչի՛նչ մը, ոչի՛նչ։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Քիչ մը ետքը) *Շնորհակա՛լ եմ։ Իսկ ի՞նչ է հիմա քու միտքդ։*

ԿԱՅՍՐԸ— *Իսկ ի՞նչ է հիմա քո՛ւ միտքդ, քո՛ւ։ Կկարծես չե՞մ տեսներ, հա՞. կկարծես չե՞մ հասկնար, թե ուր կծռես դուն նավիդ ղեկը։* (Մատնանիշ ընելով գահը) *Ահա՛, հրամե՛, ելի՛ր, ու գնա՛ տիրե Սիրիան ու Բաբելոն, գնա՛ տիրե աշխարհքը... Ահա՛ կթողնեմ քեզի քու գահիդ հետ առանձին. առանձի՛ն քու մեծ-մեծ խոհերուդ հետ, քու հսկա ծրագիրներուդ...* (Կոպիտ ծիծաղով կելլե ձախեն դուրս):

## 5

Օհան Գուրգեն կեցած է վայրկյան մը խոժոռ ու լարված. ճանկարծ բռունցքը կուտա ինքզինքը ու արագ կդիմե դեպի աջի մուտքը: Կբացվին մուտքին փեշերը, և Օհանի դեմը կելլե պատրիկ Ապամբաս, տասնյակ մը թիկնապահներ ետևեն, որոնք կշարվին մուտքին առջևը:

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ— (Զինվորական բարևով) *Ների՛ք։ Կայսեր կամքըն է. սուրդ հանձնես պիտի ինծի։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— *Ըհը՛. այդպես ուրեմն. կկարծե՞ս։*

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ— *Իզո՛ւր է, զորավա՛ր։ Բռնված են մուտքերը, պաշարված է վրանը, հսկողության տակ են բոլոր արևելյան ու հայկական գնդերդ։ Կյանքիդ ձեռք տվող չկա. մեր կայսրը ողորմած է ու անհիշաչար։ Եղի՛ր իմաստուն և դուն։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Կքաշե պատյանեն սուրը ու կնետե Պատրիկի ոտքերուն տակ):

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ— *Այո՛, խելացին ատիկա է. կյանքը կյանք է*



*միշտ։* (Սուրը գետնեն վերցնելով) *Եվ վերջապես անարժան ձեռքի մը չէ, որ կհանձնես քու սուրդ։ Եթե դուն տարիներով կհաշվես ազնվականությունդ, ես կհաշվեմ դարերով։*

## 6

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— (Կմտնե ձախեն սաստիկ իրար անցած) *Այս ի՜նչ սարսափելի դեպք, այս ի՜նչ անակնկալ պատահար և ինչ դժբախտություն։ Ա՜, ո՛չ, ո՛չ. անպատճառ որևէ թյուրիմացություն մը կա մեջը, ես կպարզեմ, կո՛մս, բարեկամությանս վրա կերդնում քեզի, կուղղենք, կհարթենք։ Բայց առայժմ պետք է քաշվիս քու Ղոզանի կալվածներդ. իհարկե՛, բոլորովին ազատ ես քու կալվածներուդ սահմանին մեջ։ Լավ, տի հարված մըն էր ասիկա, որ ինկավ մեր ամենուս գլխուն, կարկուտի տարափ մը անամպ երկնքին։ Եթե գիտնայիր, ինչպես խոցված է հոգիս, ինչպես...*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— *Այդ ճարտասանությունը գուցե կարելի է և զեղչել այս անգամ, իշխա՛ն։*

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— (Սառն) *Հույս ունիմ չի՛ մերժեր կոմսը մեկ երկու ժամ հյուրս ըլլալու վրանիս տակ։ Մինչև որ կարգադրվի հարկ եղածը իրեն վայելուչ ուղևորության մը համար։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— *Կցավիմ, իշխա՛ն, որ մերժելու հնարավորությունը այլևս խլված է ինծմե։*

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԸ— *Խոնարհ ծառա՛դ։*

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— *Կհետևի՛մ։*

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՊԱԼԱՏԸ. ԾՈՎԱՀԱՅԱՑ ՊԱՏՇԳԱՄ

Տեսարանի առջևի մասը առաստաղ ունի և քանի մը սյուներով կբաժնվի ետևի մասեն, որ բաց է բոլորովին և խորքը կեզերվի ատամնավոր ցած որմով: Հատակը, առաստաղը, սյուները, որմը՝ բոլորը մարմար: Աջ կողմը քարե նըստարան մը, վրան գորգ, ու մոտը բարակ ու բարձր ոտքերով եռոտանի մը ճրագ դնելու համար: Հեռուն կերևա ծովը: Իրիկվան լույսի ու մութի կռիվն է:

## 1

Վասիլ Լեկապեն և ուրիշ ներքինի պալատական մը կեցած են կից բռնում ու կխոսին զգույշ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Սը՜ս։ Ամեն բան չեն ըսեր, ամենուն չեն ըսեր, մանավանդ ժամանակեն առաջ։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Դուն արդեն մի՜շտ իրավունք ունիս։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Անոնք ի՞նչ կհասկնան քու ըսածիդ խորությունը։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Բայց մենք կհասկնա՜նք, մենք, որ ներքինի ենք։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Իսկ անոնք ներքինի չե՜ն. դեռ չեն հասած այդ բարձրությանը, այդ իսկական բարձր մարդուն։ Անոնք դեռ մարդ չեն, այլ արու են միայն։ Դեռ չեն ըմբռնած, որ մարդ ըլլալու համար նախ պետք է դադրին արու ըլլալէ։ Անոնք իրենց ուժերուն լավագույն մասը կսպառեն սերնդելու վրա. մնացածն ալ կվատնեն իրենց սերունդին վրա։ Էգին ստրուկն են անոնք ու իրենց զավակներուն ճորտը։ Անոնք անպետք են տիրելու համար, անպետք են աշխարհքը դարձնելու համար։ Տիրելը մե՜րն է, մե՜ր կոչումը, մե՜ր իրավունքը, ներքինիներո՜ւ իրավունքը։ Մե՜նք պիտի վարենք. պալատը մե՜րը պիտի ըլլա և բոլոր պաշտոնները մե՜ր ձեռքը։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Բոլո՜ր, բոլո՜ր պաշտոնները։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Գահը իրենց. կարմիր կոշիկներն ալ իրենց. բայց գահակալը պետք է ըլլա բռունցքիս մեջ և կայսրության բոլոր թելերը։ Հիմա կհասկնա՞ս՝ ինչու կատեմ ես այդ մարդը։ Ուրիշ երկու կայսեր օրով ես նորեն հոս եմ եղած, ու եղած եմ իսկական տերը. այս մեկը շա՜տ է պինդ։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Իսկ Ապամբա՞սը. կարելի չէ՞ վրան հենիլ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Քամված արու մը. զեփյուռները որ փչեն՝ իրենց հետը կտանին։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Ուրեմն պետք է ուրիշ անուն մը։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Համբերությո՜ւն։ Ժամանակը հղի է։ Վերին խավերը դժգոհ, ժողովուրդը կմռլտա, հարկերը կավելնան, աչքի իյնող մարդիկը կտապալին, բանակներուն մեջ խլրտում, պալատին անկյունները փսփսուք... Ես կճանչնամ այդ հիվանդությունը. կվերջանա կարմիր կոշիկներու տապալումով։ (Նարհրդավոր) Կա՜ն աշխատողներ. դուն հանգի՜ստ եղիր։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Ուրեմն պատրաստ ըլլանք նոր փեսայի գալուստին։



ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Եվ լապտերիդ յուղը լի։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Իմաստուն կույսերուն նման։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Եվ լո՜ւռ։

ՄՅՈՒՍ ՆԵՐՔԻՆԻՆ— Ի՜նքը, ի՜նքը... (Արագ դուրս)։

## 2

Քիչ մը ետքը կերևա կայսրը խորհեն, աջեն։ Ծանր քայլերով կառաջանա ձեռքը ոսմին ու նայացքը ծովուն։ Դանդաղ կդառնա ետին ու կնկատե Վասիլը։

ԿԱՅՍՐԸ— (Մոտենալով) Ի՞նչ կընես հոս։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Կմտածեիր, չուզեցի խանգարել։

ԿԱՅՍՐԸ— Եվ գիտե՞ս ինչ կմտածեի։ Զարմա՜նք է։ Ինծի այնպես կթվի, որ վերջին անգամ Պոլսեն մեկնելես ի վեր՝ կարծես պալատը մեծցեր է, մեծցեր ու պարպվեր։ Ավելի դատարկ, ավելի լայն, ավելի լուռ, թեև գիտեմ, որ մարդիկը նո՜ւյնն են, ինչպես և կյանքն ու երթևեկը։ Ուրկե՞ կուգա ինծի այս տարօրինակ զգացումը։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ինչքան դուն կբարձրանաս, տե՜ր, ու ինչքան հոգիիդ մեծությունը կաճի, այնքան շուրջդ եղող մարդիկը կդառնան մանր ու փոքրիկ, և այլևս չեն լեցներ պալատներուդ ընդարձակությունը։

ԿԱՅՍՐԸ— Եթե ըսածդ շիտակ ըլլար՝ իմ սրահներս նեղ պիտի գային իմ մեծությանս, ոչ թե լայն։ Չէ՜, Վասի՜լ, պալատականի քու փորձված հաճոյախոսությունդ այս անգամ ծակ ունի իր վրան։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ըսած խոսքս գուցե ծակ ուներ իր վրան, տե՜ր, բայց քեզի ուրախ տեսնելու ցանկությունս ծակ չունի իր վրան։

ԿԱՅՍՐԸ— Չէ՜, ատոր ալ չեմ հավտար։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Տե՜ր, ինչո՞վ եղա արժանի։

ԿԱՅՍՐԸ— Մի՜ հավտար ո՜չ մեկուն։ Քեզի կըսեմ՝ մի հավտար ո՜չ մեկուն։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ծանր խաչ է, տե՜ր. մի՜ առներ ուսիդ։

ԿԱՅՍՐԸ— (Ծաղրով) Հապա՞։ Կուզես, որ հավտա՞մ և որո՞ւ. օրինակ քեզի՞...

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Խիստ վիրավորված) Տե՜ր...

ԿԱՅՍՐԸ— Լա՜վ։ Կուզե՜ս փորձենք։ Արդեն կուզեի խոսիլ քեզի հետ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Հրամայե՜, տե՜ր։

ԿԱՅՍՐԸ— Եկո՜ւր, մո՜տ եկուր. ավելի՜, ավելի՜. այդպե՜ս։ Եվ հիմա պատմե՜ ինչ որ գիտես... բոլո՜րը, ինչ որ գիտես։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ինչի՞ մասին, տե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Օհան Գուրգենի... և քու կայսրուհիդ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Սարսափած) Կայսրուհի՜ն...

ԿԱՅՍՐԸ— Այդ ի՛նչ շատ զարմացար. դո՛ւն, որ զարմանալու սովոր չես բնավ։ Գեշ նշան է, Վասի՛լ։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Բայց կայսրուհի՜ն... Ո՞վ է ըսեր քեզի ատիկա, ո՞վ է լսեր, ո՞վ է տեսեր։

ԿԱՅՍՐԸ— Ե՛ս, ի՛նքս։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Դո՞ւն։ Դուն տեսե՞ր ես...

ԿԱՅՍՐԸ— Այո՛, տեսա՛։ Երբ թողի ինքը առանձին գահիս ոտքը ու հեռացա. երբ ան դեռ կեցած էր իմ գահիս ոտքը, խորտակված ու ամբարտավան։ Տեսա, կարծես իրականին մեջ, բոլոր մանրամասներով, պարզ, հստակ ու զզվելի։ Եթե շիտակը կուզես՝ ես դեռ կանուխեն, շա՛տ կանուխեն գիտեի ատիկա, կզգայի հոգիիս խորերեն, գիտեի որ օր մը գալու էր ատիկա, այդ երկուքի մեղավոր կապը, կզգայի ու կսպասեի։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Սաստիկ ցաված) Ի՞նչ կխոսի իմ կայսրը։

ԿԱՅՍՐԸ— Այնքա՛ն աշխատեր եմ, որ խեղդեմ, արմատախիլ ընեմ այդ անպիտան զգացումը, բայց, կտեսնե՛ս, որ իրավունք ունեի։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Տե՛ր, ես ամեն բան կսպասեմ այդ հանդուգն մեծամիտ մարդեն, բայց ինծի կթվի, որ անիրավ ես թագուհիիս հանդեպ։

ԿԱՅՍՐԸ— Իսկ եթե քեզի ըսեմ, որ այդ մարդը եղած է կանանոցը։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ատիկա՞ ալ դուն ես տեսեր, ի՛նքդ։ Ու հոգիիդ մեջ։

ԿԱՅՍՐԸ— Ո՛չ, տեսեր են ուրիշները։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ուրիշնե՞րը...

ԿԱՅՍՐԸ— Այսինքն տեսնելը ճիշտ խոսքը չէ։ Երբ արշավեն վերադարձիս սկսա քրքրել, դուրս եկավ, որ կան կասկածներ, հետքեր... Դե՛, խոսե՛. խոսքը հիմա քուկդ է։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ի՞նչ ըսեմ, տե՛ր։ Կին ըսածդ ինքնին անոթ մըն է խարդավանքի ու երկպառակության։ Բայց որու մասին, որ կխոսիս այս պետության տիրուհին է և քու կյանքիդ ընկերուհին։ Ես իր մասին գեշ մտածել չեմ կրնար։

ԿԱՅՍՐԸ— Ա՜խ, դո՛ւն, ազնի՛վ, մտար արդեն փշոտ պատյանիդ տակը, ալ քեզի բռնել իհարկե չըլլար։ Եվ կըսեի՜ր, որ օգնել կուզես ինծի...

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Տե՛ր, ինչո՞ւ կմեղադրես ինծի։ Մի՞թե ինքդ կըհավատաս քու ըսածիդ, կրնա՞ս հավատալ։



ԿԱՅՍՐԸ— (Կոտրված) Ո՛չ. չե՛մ կրնար. ու չէ՛մ ուզեր, չե՛մ ուզեր. կխորտակվի բախտս, հպարտությունս, հաջողանքս. ինչպե՛ս հավտամ։ Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ համար մեջս այս գարշելի միտքը. ինչո՞ւ, ինչո՞ւ կուգան միշտ այդ երկուքը միասին. ա՜, այդ կոկոզավիզ կնամոլը, կնոջս հետ, իմ կնոջս հետ...

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Տե՛ր, կտեսնեմ՝ դուն աքսորեր ես հեռու եր մամինը, պահեր ես մոտդ իր հոգին։

ԿԱՅՍՐԸ— (Մռայլ կկախե գլուխը):

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Արժանի չէ՛ այդ պատվին։ Մի՛ հավտար, արհամարհե. աքսորե՛ մեջեդ և իր հոգին։

ԿԱՅՍՐԸ— Գուցե և իրա՛վ ես։ Ա՜, ես չպահեցի իմ ուխտս։ Որոշեր էի, որ ալ չըլլամ կնոջ հետ։ Արդար պատիժս է։ Ես չպահեցի իմ ուխտս։

### 3

Կեցած են լուռ իրարու դեմ, երբ խորքեն կերևա թագուհին ու վեճափառ կառաջանա դեպի զույգը։ Վասիլ կխոնարհի։

ԹԵՈՖԱՆՈ— (Կենալով սյուներուն մեջ) Գուցե խանգարեցի, կխոսեիք։

ԿԱՅՍՐԸ— Ո՛չ։ Եկո՛ւր։ Ուրախ եմ, որ եկար։

ԹԵՈՖԱՆՈ— Դեմքեդ չերևար։ Ինչո՞ւ ես այդպես դժկամ։ Ի՞նչ կըխոսեիք։

ԿԱՅՍՐԸ— Հարցո՛ւր Վասիլին։

ԹԵՈՖԱՆՈ— (Հարցական կդառնա անոր):

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Կասկածի վայրկյանները, կայսրուհի՛, հատուկ է բոլոր մեծ հոգիներուն։

ԹԵՈՖԱՆՈ— Կասկածի՞։ Ինչի՞ կասկած։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ըհը՜... ընդհանրապե՛ս։ Իր մեծության, իր կոչումին, հաջողանքին ու բախտին։

ԹԵՈՖԱՆՈ— (Ամուսնուն) Դուն կասկած ունիս և քու բախտե՞դ։

ԿԱՅՍՐԸ— Կարելի չէ՞։

ԹԵՈՖԱՆՈ— Չէ՞ որ ե՛ս եմ քու բախտդ. դուն ի՛նքդ ինծի այդպես ես ըսեր։

ԿԱՅՍՐԸ— Ըսեր եմ. այո՛։

ԹԵՈՖԱՆՈ— Ուրեմն ալ ի՞նչ երկմտում, երբ ես հո՛ս եմ, քու քո՛վդ, քեզի՛ հետ, քու կի՛նդ։

ԿԱՅՍՐԸ— (Ցաված) *Չէ՞, Թեոֆանո՛, դուն հո՛ս ես, իմ քո՛վս, ինծի՛ հետ, ի՛մ կինս...*
ԹԵՈՖԱՆՈ— (Վասիլին) *Ձգե մեզի առանձին։*

## 4

ԹԵՈՖԱՆՈ— (Կմոտենա ամուսնուն) *Ի՞նչ ունիս, Նիկեֆո՛ր։ Երկու մանր անհաջող լուրեր, ամեն բան սրտի չեն առներ։ Նայե՛ աչքերուս խորքը, նայե՛ քու բախտիդ աչքերուն խորքը ու եղի՛ր վստահ. հաջողությունը քեզի հետ է միշտ։ Շուտով կերթաս ազատելու սուրբ գերեզմանը։*
ԿԱՅՍՐԸ— (Բռնելով անոր թևեն ու ջերմ) *Այո՛, Թեոֆա՛նո, պիտի ազատեմ Փրկչի գերեզմանը։ Իրա՛վ ես, բախտն ու հաջողությունը ինծի հետ է միշտ։ Այս աչքերը ինծի խաբել չե՛ն կրնար, այս խոսվածքը ինծի խաբել չի՛ կրնար։ Եկո՛ւր, եկո՛ւր նստինք* (Կերթան նստարանը): *Ի՛նչ լավ է, որ եկար, Թեոֆա՛նո, ինչքա՞ն ուրախ եմ, որ եկար։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ավելի աղե՛կ։ Հիմա ավելի դյուրին է ինծի նպատակիս հասնիլը։ Դուն որ այդպես ուրախ ես, եկո՛ւր ուրախացնենք և ուրիշները։*
ԿԱՅՍՐԸ— (Զվարթ) *Ի՞նչ է ուզածդ։*
ԹԵՈՖԱՆՈ— *Գիտե՞ս, Նիկեֆո՛ր, ես հիմա քեզի խնդիրքով եմ եկեր։*
ԿԱՅՍՐԸ— (Բարեհաճ) *Խոսե՛։*
ԹԵՈՖԱՆՈ— *Բայց չի՛ պիտի մերժես։*
ԿԱՅՍՐԸ— *Ես քեզի ե՞րբ եմ մերժեր։ Խո...*
ԹԵՈՖԱՆՈ— *Ե՛տ կանչե աքսորեն Օհան Գուրգենը։*
ԿԱՅՍՐԸ— (Խայթվածի պես) *Ի՞նչ... ո՞վ... ո՞վ...*
ԹԵՈՖԱՆՈ— *Դուն խոստացար, որ չե՛ս մերժելու։*
ԿԱՅՍՐԸ— *Դուն կխնդրես ինծմե, որ ես... որ ես...* (Հանկարծ կնետվի դեպի սյուները՝ պոռալով) *Է՛յ, ո՞վ կա հոդ, ո՞վ կա հոդ։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ի՞նչ կուզես. ինչո՞ւ կկանչես։*
ԿԱՅՍՐԸ— (Ներս մտնող սենեկապետին) *Լո՛ւյս, լո՛ւյս կուզե՛մ, լո՛ւյս։* (Կնոջը) *Լա՛վ կուզեմ տեսնել քու դեմքդ, քու այդ Տիրամոր սիրուն դեմքդ. իսկ հոս արդեն մո՛ւթ է գրեթե, մո՛ւթ, կհասկնա՞ս։ Չէ՞ որ մութը ինծի ու քեզի համար չէ ստեղծված. մութը հանցանքի համար է ստեղծված, մեղքի ու դավի...* (Կշտապե կրկին ներս եկող սենեկապետին դեմ, կխլե ձեռքեն եռասռեղ աշտանակը, ինքը կդնե եռոտանիին վրա ու կնստի իր նախորդ տեղը) *Այ, այսպե՞ս։ Դե՛, հիմա խոսե՛։ Խոսե՛, տեսնեմ, ի՞նչ կըսես։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ինչո՞ւ ես այդպես տարօրինակ։* (Կատակով) *Բայց միև-*



*նույն է. գիտցի՛ր, մինչև որ քու համաձայնությունդ չառնեմ, ես հոսկե հեռացողը չեմ։ Հենց այդպես ալ խոստացեր եմ աղջկան։*
ԿԱՅՍՐԸ— *Չգիտեմ՝ ե՞ս եմ հիմարացեր, թե՞ դուն այսօր սաստիկ հիմար կխոսիս։*
ԹԵՈՖԱՆՈ— *Օրիորդներուս մեջ գիտե՞ս, չէ՞, Կազիան։*
ԿԱՅՍՐԸ— *Ո՞վ, ի՞նչ Կազիա։*
ԹԵՈՖԱՆՈ— *Բարդասի քույրը։*
ԿԱՅՍՐԸ— *Է՛, ետքը՞։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ետքը արդեն ըսի։ Դուն պատժեր ես քու զորավարդ, քու գործդ է, բայց դուն իրավունք չունիս իմ օրիորդս ալ պատժելու։ Չի՛ դիմանար խեղճը, իրա՛վ կըսեմ՝ կմեռնի։*
ԿԱՅՍՐԸ— *Պա՛րզ խոսե, կի՛ն։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ասկե պարզը ինչպե՞ս կըլլա։ Կսիրե՛։ Ես այր չեմ, կըներե՛ս, միայն քաղաքականությամբ կշտանալ չեմ կրնար, չեմ կրնար տեսնել խեղճ աղջկան հուսահատ վիշտը։ Թեև ինծի կթվի, որ հոս քաղաքականությունն ալ կշահի։ Հրամանատարությունը, որ առեր ես Գուրգենին ձեռքեն, շիտակը ես ալ շատ խելացի կգտնեմ, բայց մի՞թե ավելի աղեկ չէր ըլլար, եթե իրեն հո՛ս որևէ տակը պարապ պաշտոն մը տայիր։ Անվստահելի մարդը հոս ավելի դյուրին է հսկելը, քան հոն իր կալվածներուն վրա, կայսրության մյուս ծայրը։ Եվ վերջապես ես Կազիան կճանչնամ. ան շատ շուտով ձեռքը կառնե իր մարդուն սանձերը, և քու ըմբոստ Գուրգենդ, պիտի տեսնես, որ կխելոքնա։*
ԿԱՅՍՐԸ— (Մտածկոտ) *Բարդասի քո՞ւյրը... կըսես։ Եվ անոնք եղա՛ծ են իրար հետ կանանոցիս մեջ. հա՞։*
ԹԵՈՖԱՆՈ— *Չե՛մ կարծեր։ Կազիան լավ գիտե պալատիս խիստ կարգերը։ Սակայն ինչո՞ւ հարցուցիր։*
ԿԱՅՍՐԸ— *Որովհետև... որովհետև ատիկա կպարզե խնդիրը։ Որովհետև... Բարդասի քույրը... գուցե՛, կարելի՛ է... Ուրեմն Բարդասի քույրը։*
ԹԵՈՖԱՆՈ— *Չէ՞, մեղք է, չէ՞, դժբախտ աղջիկը։ Ըսե՛ բառ մը, երջանկացուր։* (Ոտքի ելլելով) *Ուրեմն հայտնեմ իրեն, որ նշանածը շուտով դառնա պիտի։*
ԿԱՅՍՐԸ— (Հանկարծ կփոխվի, կդառնա դաժան ու պինդ բռնելով կնոջը թևեն) *Կեցի՛ր, կեցի՛ր, շատ կշտապես. կեցի՛ր։ Իսկ եթե այս բոլորը կապիտ թակա՞րդ մըն է միայն... ծաղիկներով ու առվույտով ծածկված, էշեր բռնելու համար։*
ԹԵՈՖԱՆՈ— *Ի՞նչ։*
ԿԱՅՍՐԸ— (Հեգնոտ գրգռվելով) *Այդպե՛ս ուրեմն... Կխնդրես, որ ետ կանչեմ Գուրգենը... երջանկացնե՞մ։ Եկեր ես հոս հատուկ խնդ-*

*թելու.. եկե՛ր ես, որ երջանկացնեմ...* (Վայրի ու հիվանդ ծիծաղով մը կնոջ թևը կնետե անդին):

ԹԵՈՖԱՆՈ— *Ի՞նչ եղավ քեզի։ Ինչո՞ւ համար է այդ տգեղ ծիծաղը։*

ԿԱՅՍՐԸ— *Իհարկե՛, ես տգե՛ղ, ծիծա՛ղս տգեղ, ամե՛ն ինչս տգեղ։ Գեղեցիկ ես միայն դուն ու քու լրբությունդ։ Հանդուգն է, կի՛ն, խաղցած խաղդ ու հրեշային։ Արդեն լկտությունը հանդուգն է միշտ։ Ինչո՞ւ այդպես ապուշապուշ երեսս կնայիս։ Չէի՞ր սպասեր, հո՞ս, այս ելքին։ Կարծեցի՛ր, որ կանչեմ պիտի աղջիկը, հարցնեմ. ան ալ պիտի խաղա իր վարպետեն սորված դերը, իյնա ոտքերս, լա ու պաղատի, ես ալ մեղքնամ ու գիջեմ։ Դուն կարծեցիր, որ այս անգամ ալ կհիմարացնես ինծի քու անուշ երգերովդ. ա՜, դո՛ւն, Սիրենա։ Կհիմարացնե՛ս, կանչե՛լ կուտաս սիրականդ աքսորեն, գիշերները ծածուկ կառնես կանանոցս ու միասին կնստիք ու կխնդաք վրաս։ Չէ՞, այդպես չէ՞, խոստովանե՛։*

ԹԵՈՖԱՆՈ— (Անոր խոսելու միջոցին հետզհետե կուղղվի ամբողջ հասակովը ու մարմարե սյունին առջևը կարծանանա շիփշիտակ, հպարտ ու հանգիստ):

ԿԱՅՍՐԸ— *Ի՞նչ ես պապանձեր. չխոսի՞ս. ինչո՞ւ ես քար կտրեր այդ քարին տակը։ Ըսե՛, խոսե՛, եթե դեռ երես ունիս խոսելու, եթե դեռ կրնաս քեզի պաշտպանել, եթե այդ անամոթ շրթունքիդ արդարանքի խոսք մը ունիս..*

ԹԵՈՖԱՆՈ— (Առանց ոչինչ ըսելու կամաց մը կզատվի սյունեն ու նույն հպարտ, շիտակ դիրքովը կդիմե դեպի դուրս):

ԿԱՅՍՐԸ— *Ո՞ւր, ո՞ւր. ո՛չ, կեցի՛ր։* (Կուզե բռնել):

ԹԵՈՖԱՆՈ— (Սարսափելի բարկությամբ) *Քաշե՛ ձեռքդ ետ. չի գպիս ինծի։ Ողորմելի՛...* (Ել դեպի դուրս):

ԿԱՅՍՐԸ— *Կեցի՛ր. մի՛ երթար՝ կըսեմ քեզի։*

ԹԵՈՖԱՆՈ— *Դեռ չսպառեցի՞ր լուտանքդ։*

ԿԱՅՍՐԸ— *Կեցի՛ր։* (Կոտրված) *Նախ լսե՛...* (Կընդհատե):

ԹԵՈՖԱՆՈ— (Կմնա անշարժ, կիսովին ետ դարձած):

ԿԱՅՍՐԸ— *Քեզի ծանր վիրավորեցի. ճի՛շտ է. գուցե... իզուր։ Բայց ե՞ս, հապա ե՞ս։ Այս ամբողջ երեք ամիս է, որ ամուր խրվեր է հոգիս այդ սարսափելի բանը. առաջ հունդ մըն էր, հիմա մեծցա՛վ, ուռճացավ ու լեցուց հոգիս. ուր կերթամ, ինծի հետ է, ինչ կընեմ, ինծի հետ է, կեր՛ավ հոգիս այդ վերքը։*

ԹԵՈՖԱՆՈ— (Խուլ) *Երե՞ք ամիս...*

ԿԱՅՍՐԸ— (Լուռ է):

ԹԵՈՖԱՆՈ— *Երեք ամիս դուն կասկածով կնայի՛ս վրաս, երեք ամիս կպրպտես բոլոր խոսքերս, կհետևիս ամեն շարժումիս։*



ԿԱՅՍՐԸ— (Լուռ է):

ԹԵՈՖԱՆՈ— *Կտեսնեմ, որ ստիպված եմ մնալու, ու ինչքան ալ ծանր ըլլա ինծի, խոսելու։*

ԿԱՅՍՐԸ— *Խոսե՛։*

ԹԵՈՖԱՆՈ— *Գուրգենը պե՛տք է որ գա։*

ԿԱՅՍՐԸ— (Աչքերը լայն բացած կմնա ապշած):

ԹԵՈՖԱՆՈ— *Եվ ան պիտի գա ո՛չ թե իմ մեկ սպասուհիիս համար, այլ ինծի՛ համար, ինծի՛, կհասկնա՞ս, ինծի՛։*

ԿԱՅՍՐԸ— *Չե՛մ հասկնար քեզի։*

ԹԵՈՖԱՆՈ— *Ուզեցի խնայել պատիվդ, ուզեցի չվիրավորել հպարտությունդ. ահա՛ ինչպես գնահատեցիր։ Գուրգենը պե՛տք է, որ գա։ Եվ գիտե՞ս ինչու։ Որովհետև ամենքը մեկ բերան կկրկնեն, որ դուն կվախնաս իրմեն, որ դուն կնախանձիս իր տաղանդին, որ դուն քեզի նվաստ կզգաս իր ներկայությանը։ Իսկ ատիկա տանջանք է ինծի. ատիկա կըզարնե իմ կայսերական կոչումիս, ատիկա կզարնե իմ կանացի հպարտությանս։ Ես հազար հազարներուն մեջեն ընտրեցի քեզի, ձեռքս երկարեցի քեզի, բարձրացուցի գահիս, անունդ կապեցի իմինիս, որովհետև հաղթող էիր, քաջ էիր, մեծ էիր։ Ես այդպե՛ս կուզեմ քեզի։*

ԿԱՅՍՐԸ— *Ո՞վ կրնա խցկել սինլքոր մարդոց անդուռն բերանը. ատիկա վե՛ր է և կայսեր ուժեն։*

ԹԵՈՖԱՆՈ— *Ո՛չ. վեր չէ՛։ Արդեն միջոցը ես ըսի։ Կկանչես այդ բու Գուրգենդ, կդնես աչքի իյնող պաշտոնի մը գլուխը, բոլորովին անփույթ ու անտարբեր, որ տեսնեն ամենքը, թե անկե վախցողը չես դուն, դուն կայսր ես, իսկ ան քու ծառադ. քմայքդ ուզեց՝ աքսորեցիր, քմայքդ ուզեց՝ կներես։ Նիկեֆո՛ր, ատիկա կպահանջե՛մ ես քեզմե. ատիկա պե՛տք է կատարես դուն քո՛ւ անունիդ համար, պետք է կատարես ի՛մ անունիս համար։ Ես կուզեմ հպարտ նայիմ ամենուն աչքին մեջ և հեգնությունը չկարդամ անոնց շրթունքին անկյունը։ Դուն դեռ այս վայրկյանիս ոտքի տակ տվիր իմ ամենեն սուրբ սրբությունս. խնդրե՛մ, խնայե՛ գոնե հպարտությունս։*

ԿԱՅՍՐԸ— *Բայց, Թեոֆանո՛...*

ԹԵՈՖԱՆՈ— *Մեկդի՛ բոլոր բայց-երը։ Կամ այո՛, կամ ո՛չ։*

ԿԱՅՍՐԸ— *Կըմբռնեմ, որ պետք է կատարվի քու կամքդ։* (Լուռ) *Գո՞հ ես։*

ԹԵՈՖԱՆՈ— *Գո՞հ։* (Խիստ վշտացած, հազիվ զսպելով արցունքները) *Դեռ կծաղրե՞ս ալ։ Ա՜, երջանի՛կ եմ, անսահմա՜ն, այս քնքուշ տեսարանեն ետքը...*

ԿԱՅՍՐԸ— (Ձեռքը մեկնելով) *Թագուհի՜...*

ԹԵՈՖԱՆՈ— (Ետ քաշվելով) *Խնդրե՜մ, խնդրե՜մ...* (Հպարտ ու վիրավոր՝ սյուներուն մեջեն դուրս):

5

ԿԱՅՍՐԸ— (Նախ կեցած է պատկառոտ մինչև կնոջ հեռանալը. վերջը կերթա դեպի աջ ու նեղսիրտ) *Կանչե՜լ Վասիլը։* (Եվ քիչ մը ետքը Լևկապենին, ծանր-ծանր, կարծես թելադրելով) *Սուրհանդակ կհանես Օհան Գուրգենին, կգրես իմ անունես՝ անմիջապես ճամփա իյնա դեպի Պոլիս. հոս կարևոր պաշտոն ունիմ իրեն հանձնելու։ Այսչա՜փ։*

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— *Հրամա՜նդ, տե՜ր։*

ԿԱՅՍՐԸ— *Կեցի՜ր։* (Քիչ լուռ) *Լսածդ չզարմացրո՞ւց քեզի։*

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Ժպտուն) *Դժվար չէ ենթադրելը, տե՜ր, թե այդ ...նսակ մարդը ինչո՜ւ կկանչեն այսպես հանկարծ։*

ԿԱՅՍՐԸ— *Ինչո՞ւ կկանչեն։*

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— *Ազատելու իր հոգին երկրային ամեն հոգսերեն։ Եվ իրավունք ունիս, տե՜ր։ Բախտը իր հետն ունենալը լավ բան է, բայց և պետք է գիտնալ բախտը պինդ բռնել, և պետք է գիտնալ իր բախտին տիրել։* (Կխոնարհի ու դուրս):

ԿԱՅՍՐԸ— (Աչքերը գոց) *Պետք է գիտնալ իր բախտին տիրել...*

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԱԿԼԲԵՐԴ ԲԱԿԸ

**Խորքը հաստ պարիսպ ու բերդի դարպասը: Դարպասի երկաթե փեղկերը գոց են, բաց է միայն փեղկի վրայի փոքրիկ դռնակը: Պարիսպներուն վրայեն ձյունապատ լեռներ: Աջ կողմը քարե սանդուղ, խարխլած ու մամռապատ, որ լայն աստիճաններով դեպի բնակարանը կտանի: Ձախ կողմը երկու հինավուրց ծառ, տակը ճյուղերե շինված հասարակ փտտած նստարան մը: Ամեն դի թափած գույնզգույն տերև ու խիճեր: Ուշ աշուն է, պայծառ արև օր:**

1

**Չորս սպա խմբված միասին՝ լարված ուշադրությամբ կհետևին, մինչ Հաննա աղեղը ձեռքը նշան բռնելու վրա է: Քիչ մը առեն լուռ, ու հանկարծ նետը կթռչի: Ընդհանուր շարժում:**



ՏԱՐԻՔՈՍ ՍՊԱՆ— *Հրա՜շք է։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Պատահմո՜ւնք։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Պատահմո՜ւնք, երկո՞ւ անգամ իրար վրա։*

ԹՈՐՈՍ— (Չորրորդ սպան, թարմ տղա մը) *Հրաշալի է, Հա՜ննա։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Պատահմո՜ւնք է, ինչ կուզեք ըսեք։*

ՀԱՆՆԱ— (Թորոսին) *Տո՜ւր նետ մըն ալ։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Ո՜չ. պայմանը երկու էր. թող առաջ գա մրցողը։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Եթե մեր բոլոր զորավարներուն աղջիկները այսպես նետ քաշել գիտնային, ալ ինչի՞ էին պետք Նիկեֆոր կայսեր իր բանակները։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Բարեկա՜մ, սրախոսությունդ դիր կապարճը ու փոխարենը նետ մը վերցո՜ւր, եթե քաջ ես։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Եղբա՜յր սիրելի, նետ է ու չդիպավ. ե՞տքը, հաղթվինք աղջիկե՞ մը։*

ՏԱՐԻՔՈՍԸ— *Ես ինծի կհայտարարեմ հաղթված։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Այո՜, մե՜նք ալ, մե՜նք ալ։*

ՀԱՆՆԱ— *Ուրեմն կախե՜մ աղեղը։*

ՏԱՐԻՔՈՍԸ— *Կախե՜, օրիո՜րդ, ու հայտնե՜ կամքդ։*

ԹՈՐՈՍ— *Հրամանը քուկդ է, Հա՜ննա։*

ՀԱՆՆԱ— *Կհրամայե՜մ, իսկույն պատրաստ ըլլաք. պիտի ելլենք ա՜յ, հո՜ն... ձյունե գագաթները։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Ձյունե գագաթնե՞րը։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Ատոր համար երկու թև է պետք ամեն մեկուս ուսին։*

ՀԱՆՆԱ— *Ինչո՞ւ։* (Տարիքոտ սպան մատնանիշ) *Չէ՞ որ նոր է բարձրացեր, ամբողջ խմբով։*

ՏԱՐԻՔՈՍԸ— *Նախ՝ ան ուրիշ խումբ էր, օրիո՜րդ, լեռան վարժ մարդիկ։ Երկրորդը՝ մենք հասանք միայն մինչև պատռվածքը և շատ ալ դժվար։ Ըսի, որ գագաթը ելլողը Գուրգենն էր միայն։*

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— *Զորավա՞րը, և ինչո՞ւ։*

ՏԱՐԻՔՈՍԸ— *Ա՜յնպես, քմահաճո՜ւյք, և մեր բոլորիս ստիպումին հակառակ. սեպ ժայռ, փուխր ձյուն, տակն ալ անդունդ։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Ուրեմն, օրիո՜րդ, ուրի՜շ հրաման մը։*

ՀԱՆՆԱ— (Հանգիստ ու համառ) *Հո՜ն, ձյուներն ի վեր...*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— *Բայց լսեցիր, դժվար է, վտանգավոր։*

ՀԱՆՆԱ— *Ըլլար դյուրին ու անվտանգ, ելած կըլլային ամենքը։*

ՏԱՐԻՔՈՍԸ— *Իսկ հա՞յրդ. թույլ կուտա՞։*

ՀԱՆՆԱ— *Այդ հոգը թող իմ վրա։*

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— Աղեկ, երթա՛նք մինչև լանջի գյուղը, ձին կբարձրանա։ Քիչ մը կհանգստանանք ու կփորձենք ավելի վեր, որքան հնար է։

ՏԱՐԻՔՈՏԸ— Մինչև գյուղը կարելի է, իհարկե, թեև...

ՄՅՈՒՍ ՍՊԱՆ— Դե՛, ամեն մեկը իր ձիուն հոգը։

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ— Ուրեմն դեպի ձյուներն ու անդունդնե՞րը։

ՏԱՐԻՔՈՏԸ— Այդպե՛ս է, տղա՛ս, երբ աղեղը աղջկան մը ձեռքը իյնա։

## 2

Երեք սպաները կհեռանան: Հաննան կմոտենա Թորոսին, որ կեցած է երազկոտ՝ հենված նստարանին:

ՀԱՆՆԱ— Դո՞ւն ինչ ես մոլորեր։

ԹՈՐՈՍ— Հա՛ննա, ի՜նչ լավ է հոս, ի՜նչ լավ է ձեր այս բերդը։ Քանի եկեր եմ, արև է հոգիիս մեջ, ինչպես և շուրջս, ինչպես և երկինքը, այս ամբողջ շաբաթը։ Չգիտես ի՜նչ ձանձրալի է հո՛ն, մեր ամրոցը, ձորերուն ու մառախուղներուն ծոցը։ Օդը գորշ, մարդիկը գորշ, ապրուստը գորշ։ Հոս շարժո՛ւմ կա։ Հա՛ննա, թարմություն կա հոս։ Քու հա՛յրդ ալ ուրիշ է, դո՛ւն ալ ես ուրիշ։

ՀԱՆՆԱ— Իրա՞վ։

ԹՈՐՈՍ— Ա՜յ, քիչ մը առաջ, որ ըսիր՝ ելլենք այն վերի ձյունոտ սարերը, այնպե՜ս խորունկ, այնպե՜ս աղվոր բան մը կար ձայնիդ մեջ... (Հանկարծ ու խորհրդավոր) Ես կուզա՛մ քեզի հետ, Հա՛ննա, ես ու դուն կելլենք միասին մինչև ձյուները, մինչև գագաթը...

ՀԱՆՆԱ— Մինչև գագաթը՝ ո՛չ, մինչև պատռվա՛ծքը։

ԹՈՐՈՍ— Չե՞ս հավտար խոսքիս։

ՀԱՆՆԱ— Կհավտամ, բայց չեմ ուզեր։ Ես մինակ պիտի բարձրանամ գագաթը։

ԹՈՐՈՍ— Ինչո՞ւ։

ՀԱՆՆԱ— (Կատակելով) Այդպե՛ս է ճակտիս գիրը։

ԹՈՐՈՍ— Ես լուրջ կխոսիմ, Հա՛ննա։

ՀԱՆՆԱ— Իզո՛ւր։ Լուրջ խոսելուդ պես՝ կտխրիս. նայե՛, արդեն ունքերդ կախ ինկան, իսկ տխրիլը կյանքի ամենեն անմիտ բանն է գուցե։

ԹՈՐՈՍ— Բայց ինքդ բնա՛վ այդպես ուրախը չես։

ՀԱՆՆԱ— Ատոր համար ալ կըսեմ քեզի՝ մի՛ ըլլա լուրջ։

ԹՈՐՈՍ— Հա՛ննա, շիտա՛կ ըսե, երբեք սիրա՞ծ ես։



ՀԱՆՆԱ— (Շեշտ նայելով անոր աչքերուն) Դիցուք... այո՛։

ԹՈՐՈՍ— Եվ ո՞վ է այդ աստվածային բախտավորը։

ՀԱՆՆԱ— Ինչի՞դ է պետք աստվածներուն գործը։

ԹՈՐՈՍ— Անվանել չե՛ս ուզեր։ Ըսե՛ գոնե, ո՞ւր է, հո՞ս, բանա՞կը։

ՀԱՆՆԱ— Ո՛չ հոս, ո՛չ բանակը։

ԹՈՐՈՍ— Հապա՞։

ՀԱՆՆԱ— Ա՜յ, հո՛ն, վերը, ձյունոտ գագաթներն ի վեր, ուր ես հիմա երթալ կուզեմ։

ԹՈՐՈՍ— Է՜, դուն վրաս կխնդաս։

ՀԱՆՆԱ— Ինչո՞ւ։ Դուն գիտես, որ ես քեզի միշտ սիրեր եմ դեռ մեր մանուկ օրերեն։

ԹՈՐՈՍ— Ա՜խ, այն ուրիշ...

ՀԱՆՆԱ— Ինչո՞ւ ուրիշ. այնպե՛ս, մի՛շտ, այնպես։ Դե՜, գնա՛ թամբել տուր ձիերը, ես ալ երթամ հագվիմ։ (Զվարճանքով) Պիտի տեսնես, որ երեքն ալ մնալու են կես ճամփան. կճանչնամ երեքն ալ։

ԹՈՐՈՍ— Բայց կշարունակե՛նք ես ու դուն։ Քանի որ ախոյանս լեռան քաջք մըն է, ոչինչ, ես քաջքերե վախցողը չե՛մ, Հա՛ննա։ (Աշխույժ ձախեն դուրս):

## 3

Աղջիկը կմնա քիչ մը մինակ ու մտածկոտ, վերջը կդառնա, որ երթա դեպի սանդուղները, երբ խորքեն կմտնե Օհան Գուրգեն ու ձայն կուտա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հա՛ննա։

ՀԱՆՆԱ— (Կքարանա առանց ետ նայելու):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Մոտենալով) Հա՜ննա, չե՞ս լսեր։

ՀԱՆՆԱ— (Կապված շարժումով մը կդառնա անոր):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Անշուշտ գիտեիր, որ այս կողմերն էի։

ՀԱՆՆԱ— Լսա՛ծ եմ. եկեր ես կալվածներդ, եղեր ես և մեր Հաշտենքի հողը, հոն, վե՛րը, մեր լեռները...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այո՛, և չե՛մ եկած քեզի։

ՀԱՆՆԱ— (Գլուխը կախելով) Հանցանքը ի՛մս է։ Ըսի քեզի բաներ, որ երբեք պետք չէ ըսած ըլլայի։ Հիմա ճնշում կզգաս ինծի հանդիպելեն։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այնպե՛ս որ, ավելի կզարմանաս գուցե հիմա եկած ըլլալուս։

ՀԱՆՆԱ— Այդպե՛ս է։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Եկեր եմ հրաժեշտ առնելու։ Կհեռանամ այս կողմերեն և երևի երկա՜ր ժամանակով։

ՀԱՆՆԱ— Հապա աքսո՞րդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Անցավ։ Հիմա կերթամ Պոլիս։ Եվ գիտե՞ս ինչու։

ՀԱՆՆԱ— Ըսե՛։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կերթամ կայսր դառնալու։

ՀԱՆՆԱ— Կա՞յսր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Այո՛, բարձրանալու բյուզանդական կայսրներու գահը։

ՀԱՆՆԱ— Եվ ստեղծելու նո՛ր պետություն մը, որուն հոգին ըլլալու է մեր Անատոլին։ Ստեղծելու Մեծ Անատոլի մը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Նախ զարմացած կնայի): Ա՜խ, հա՛յրդ։ Այո՛, Հա՛ննա, այդպես է։ Կտարակուսի՞ս։

ՀԱՆՆԱ— Տարակո՞ւյս։ Դուն ունեցե՛ր ես, ինչ որ սիրտդ ուզեր է. դուն հասե՛ր ես, ուր ցանկացեր է հոգիդ. դուն եղեր ես, ինչ որ կամքդ վճռեր է։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կայսր դառնալը, այո՛, վճռեր եմ։

ՀԱՆՆԱ— Եվ ո՞վ է ավելի արժանի, քան դուն, ո՞վ է ավելի կարող, քան դուն։ Գնա՛, եղի՛ր կայսր, գնա՛ տիրե՛ ու ստեղծե՛ քու պետությունդ։ Դուն ստեղծված ես տիրելու համար, դուն ստեղծված ես ստեղծելու համար։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Հափշտակությամբ) Իսկ դո՞ւն։ Իսկ դո՞ւն ինչու համար ես ստեղծված, Հա՛ննա։

ՀԱՆՆԱ— Թո՛ղ, թող ինծի, խոսե՛ քեզմե։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Ինչպե՞ս թողնեմ, երբ եկած եմ հոս ճիշտ ատոր համար։ Երթալես առաջ դուն պետք է գիտնաս ամե՛ն ինչ։ Ես այլևս լռել չեմ կրնար, Հա՛ննա, ես այլևս լռել չեմ ուզեր։

ՀԱՆՆԱ— Ի՞նչ բան է ատ, որ չե՛ս կրնար, որ չե՛ս ուզեր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Հա՛ննա, ես չուզեցի ավելի խռովեմ քու հոգիդ, չուզեցի ավելի հրահրեմ քու զգացումներդ։ Մտածեցի՝ քու մեջդ դեպի ինծի եղածը աղվոր ու քնքուշ երազ մըն է, ձյունե փափուկ ու ճերմակ կերտվածք մը, որ հալի պիտի ու ցնդի՝ տաք շունչ մը քեզի դիպածին պես։ Իսկ ինչ որ իմ մեջս սկսեր էր խլրտիլ, կարծեցի քու անբիծ հմայքիդ մեկ սուրբ շոյանքը, մե՜ղմ ու վաղանցուկ։ Ու չեկա, չգրեցի, որ մարի, հատնի։

ՀԱՆՆԱ— Ձգե՛, զորավա՛ր, դուն արդարանքի պե՛տք չունիս։ Ես անչա՛փ, անչափ շնորհակալ եմ քեզմե։ Շնորհակա՛լ եմ և՛ այս այցիդ համար, և նախո՛րդ հանդիպումներուդ. շնորհակալ եմ քեզի քու պատ-



ճառած բոլոր ուրախություններուդ համար, քու տված վշտիդ, քու ներշնչած հպարտությանդ, մտածումներուդ. շնորհակալ եմ քեզմե եկած ամեն բանի համար։ Թո՛ղ. այդ մասին ալ չխոսինք։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Չհասկցա՛ր։ Լսե՛, խոսիմ քեզի բոլորովին մերկ։ Ես առեր եմ կյանքեն ինչ որ աշխարհի հոսանքը բերեր է ինծի, փրցուցե՛ր եմ կյանքեն, ինչ որ ուժս պատեր է, բայց հոգիս միշտ մնացեր է դժգոհ, մնացեր է կարոտ, ու խուլ կերպով, կարծես ինծմե իսկ ծածուկ, որոներ է ուրիշ բան մը, ուրիշ կյանք մը, որ վեր ըլլա առօրյայեն, որ չճանչնա սովորականի գռեհկությունը։ Հոգիս ծարավեր է ուրիշ տեսակ էակի մը, ազնվացնող, զտող, բարձրացնող։ Աղոտ ու հեռավոր մշուշի մը հածող շունչն էր այդ էակը ինծի համար, և ես անրջել իսկ չէի կրնար, թե օր մը ան պիտի կենար դեմս մարմին առած, խո՜ր, սո՜ւրբ ու հմայիչ, ինչպես հիմա դուն կեցած ես իմ դեմս։ Կեցած ես այդպես պարզ ու բնական, ու լավ ալ չես հասկնար, թե ի՛նչ կըսեմ քեզի, թե ի՛նչ ես դուն և թե ի՛նչ արժես։

ՀԱՆՆԱ— Ո՛չ, զորավա՛ր, լավ գիտեմ՝ ի՛նչ եմ ես, գիտեմ՝ ի՛նչ ես դուն։ Քու ազնվական հոգիդ կմեղքնա ինծի, սիրտս առնել կուզե, իզո՜ւր, չեմ ուզեր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ եթե ըսեմ քեզի, թե դուն հիմա հե՛տս ես մի՛շտ ու ամեն տեղ... Դուն հետս էիր վերջին կռիվներուս ատեն, դուն հետս էիր դարձիս, որսիս և հո՛ն, վե՛րը, ձյունոտ լեռներուն վրա։

ՀԱՆՆԱ— (Մեծ բերկրանքով) Հետդ էի, հա՞, հետդ էի և հոն վերը, ձյունոտ լեռներուն վրա...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Նեղ ու ծանր վայրկյաններուս քու կերպարանքդ է, որ կկենա դեմս, կարծես քեզի հետ է որ կխորհրդակցիմ, քեզի՛ է, որ կդիմեմ, երբ թև առնել կուզեմ, երբ վարերեն վե՛ր կձգտի հոգիս, դեպի վե՜ր։

ՀԱՆՆԱ— Հերի՛ք է։ Լռե՛։ Հասկցի՛ր, որ չեմ կրնար... որ չեմ կըրնար այս բոլորը մեկ անգամեն։ Արև՛ն է, արև՛ը, արև՛ը որ կթափանցե էությունս, որ կզրկե հոգիս... Ա՜խ, ալ ինչո՞ւ կապրիմ...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Մեղմով կմոտենա, հպարտ ազնիվ շարժումով մը կուզե բռնել անոր ձեռքը) Հա՛ննա...

ՀԱՆՆԱ— (Կամաց ետ կքաշե ձեռքը ու տարօրինակ խոսվածքով) Մի՛, մի՛, մի՛ դպիր։ Կփշրես, կկորչի, կցնդի։ Երջանկության չեն դպիր, կցնդի...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Պարզելով ձեռքը) Բռնե՛ ամուր ձեռքս, Հա՛ննա, ո՛չ կկորչի, ո՛չ կցնդի։

ՀԱՆՆԱ— Ձեռքդ...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Այո՛։ Բռնէ՛, ու բարձրանանք միասին կայսրներու գահը։

ՀԱՆՆԱ— (Մոլոր) Գա՜հը... բարձրանանք գա՜հը...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կամ գուցե կուզեիր, որ նախ երթամ տիրեմ գահերու, ժողովուրդներու, երթամ տիրեմ աշխարհներու ու ետքը գամ ոտքըդ, հպա՛րտ աղջիկ, քեզի կայսրներու գահը տանելու։

ՀԱՆՆԱ— (Հատու շեշտով մը. գուշակի մը պես) Դուն տիրե՛ս պիտի գահերու, ժողովուրդներու, դուն տիրե՛ս պիտի աշխարհներու. այդ բոլորը ըլլա՝ պիտի։ Բայց դուն ինծի քու գահդ չե՛ս տանելու, այդ մեկը պետք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ինչպե՞ս։

ՀԱՆՆԱ— Այդ մեկը պե՛տք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կմերժե՞ս։

ՀԱՆՆԱ— Այդ մեկը պե՛տք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ինչո՞ւ։

ՀԱՆՆԱ— (Քիչ լուռ) Կուզեմ արժանի ըլլալ քու այդ մեծ սիրուդ, կուզեմ ըլլալ արժանի քու հոգիիդ որոնումին, կուզեմ ըլլալ քեզի հավասար։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Մերժելո՞վ, երբ իմ հոգիս միայն քեզի կձգտի, երբ ամբողջ էությունս սիրուդ կտենչա ու քեզի է ծարավի։

ՀԱՆՆԱ— Ճի՛շտ ատոր համար։ Պետք է, որ դուն անգամ մը գոնե տենչաս ու չունենաս, ձգտիս ու չհասնիս, ծարավիս ու չհագենաս։ Կուզեմ որ գոնե անգամ մը չհասնիս Պետքար լեռան գագաթը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Պետքար լեռա՞ն...

ՀԱՆՆԱ— Որ շուրջդ միայն դիակ չտեսնես, որ տխրությունը չըխեղդե հոգիդ, որ չըսես՝ «ինչո՞ւ համար», որ չխորհիս՝ թե խեղճ բան մըն է այս բոլորը և չի արժեր ոչինչ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Դուն ո՞ր աշխարհեն իջած հոգի ես, Հա՛ննա, ո՞ր երկինքներեն կթափանցե շունչդ իմ հոգիս։

ՀԱՆՆԱ— Թող մի՜շտ, ընդմի՜շտ, այդպես հոգիդ լեցուն ըլլա ինծմով. և մի՜շտ, ընդմի՜շտ, ինքդ հեռու, հեռո՜ւ ինծմե...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Հա՛ննա, քու ընտրածդ ցավն է. անվերջ կարոտ ու տվայտանք։

ՀԱՆՆԱ— Չգիտե՛մ անունը, բայց ա՛տ է, որ չի անցնիր, որ չի՛ հատնիր, որ չի ցամքիր։ Կայսր քու գահի՞դ վրա, ո՛չ։ Ես կուզեմ ըլլալ կա՛յսր քու հոգիիդ վրա։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Զարմա՛նք է։ Ինչ որ կըսես՝ այնքան անբնական ու հակառակ կյանքին, բայց և այնքա՜ն հարազատ։ Կարծես ձայնդ հո-



գիս խորերեն կուգա, էությանս դեռ անճանաչ ու մշտահույզ ալիքներեն։ Դեպի անհասն ու անշեջը, որ այնպես կքաշե մեզի... Քու ձայնդ, Հա՛ննա, կքաշե ինծի։ Իրավունք ունիս, մենք պետք է բաժնվինք։ (Կլռե): Ալ չգիտեմ՝ ինչ ըսեմ քեզի։

ՀԱՆՆԱ— Ըսինք ամեն ինչ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Կմնա... որ հեռանամ։

ՀԱՆՆԱ— Կմնա... որ հեռանաս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Ալ չենք հանդիպիր մենք իրարու։

ՀԱՆՆԱ— Ալ չենք հանդիպիր մենք իրարու։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— Չունի՞ս վերջին խոսք մը ըսելու ինծի։

ՀԱՆՆԱ— (Աջ ձեռքը վեր) Երթաս բարո՛վ, զորավա՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԷՆ— (Նույնպես) Մնաս բարո՛վ, Հա՛ննա։

Գուրգենը արագ կհեռանա: Աղջիկը կեցած է պահ մը անշարժ իր հպարտաշիտակ դիրքովը, վերջը կքուլնա. քայլ մը-երկու կերթա ետ-ետ, դեմ կուգա ծառին, զույգ թևերով կգրկե ետևեն ծառին բունը, որ վար չիյնա ու կմնա այդպե՛ս խաչվածի պես:

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԿԱՅՍՐՈՒՀԻԻՆ ՆՆՋԱՐԱՆԸ

Ճակատը, չափազանց հաստ պատին մեջ քառակուսի լուսամուտ մը երկաթե ծանր փեղկերով: Ձախ կողմը լայն ու բարձր անկողինն է ամպհովանիին տակ: Աջի պատին մեջ ահագին մարմար բուխարիկը, որուն դեմը սենյակին մեջտեղը ցած ու փափուկ բազմոց մը ամբողջովին կորած գորգերու ու բարձերու տակ: Բազմոցին մոտիկ արաբական փոքր սեղաններ՝ վրան զարդի ու հարդարանքի իրերով: Աջի դուռը կտանի կանանոցին մյուս սենյակները, ձախը դեպի կայսերական բաժինը:

### 1

Գիշեր է: Տեսարանը վայրկյան մը պարապ ու մութ. միայն վառարանին կարմիր դեղին լույսը հատակին վրա: Դուրսը ուժեղ քուք ու քամի, որ կցնցե փեղկերը ու ներս կսուլե լուսամուտներեն: Երբ դուրսի աղմուկը կմեղմի, կլսվի կրակին աշխույժ ճարճաքը:

Աջեն կմտնե Կուզ պառավը՝ ձեռքը մոմ. միաժամանակ ձախեն կոմսուհի Արկիրա.

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Վրա վազելով ու կիսաձայն) Ջեկա՞վ։

ԿՈՒԶ ՊԱՌԱՎԸ— Դեռ ո՛չ, կոմսուհի՛։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Վեր առի՞ք ելարանը։

ԿՈՒԶԸ— Ներս մտա՞ն, թե չէ։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Ուրեմն քանի՞ հոգի եղան հիմա։

ԿՈՒԶԸ— Բուրցեսը, այն հաստ բեղերովը և ուրիշ մը քու սենյակդ են. ծովի կողմեն եկողներն ալ իմ քովի սենյակս։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Նշմարող ոչ ո՞ք, կասկածելի ոչի՞նչ։

ԿՈՒԶԸ— Թող հանգիստ ըլլա կոմսուհին։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Իսկ ներքինապե՞տը։

ԿՈՒԶԸ— Անիկա այնպես հրաշալի անհայտասալ գիտե, երբ կտեսնե, որ ավելորդ է իր ներկայությունը։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Եթե կհամարձակի, թող չանհայտանա։

ԿՈՒԶԸ— Սուր քիթ ունի. իսկույն հասկցավ, թե հոտերը ուրկե կուգան։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Քաշվե՛, եկա՛ն։ Եղի՛ր նշանակած տեղս ու աչքերդ չորս բաց։

ԿՈՒԶԸ— Կոմսուհին կճանչնա ինծի։ Պառավեր եմ, շիտա՛կ է, բայց գիտեմ, թե գործերը ինչպես կդառնան։ (Դուրս ձախեն):

## 2

Աջեն կմտնեն երկու պալատական օրիորդ՝ ձեռքերնին մեյ-մեկ մոմ: Անոնց ետևեն կայսրուհին՝ շրջապատված ուրիշ մը պալատական կիներով: Մեկը կառնե անոր վերնոցը, մյուսը՝ քողը, թևերեն ու փեշերեն բռնած կնստեցնեն, և իրենք ճարգալից կկենան դեմը:

ԹԵՈՖԱՆՈ— Շնորհակա՛լ եմ։ Գիշեր-բարի բոլորիդ։

ՄԵԿԸ— Չունի՞ ուրիշ հրաման մեր երջանիկ թագուհին։

ԹԵՈՖԱՆՈ— Հանգիստ քո՛ւն ձեզի։

ԽՈՒՄԲԸ— (Միաբերան) Գիշե՛ր-բարի, աստվածայինդ բազիլիսա՛։ (Խոր երկրպագումով կքաշվին աջեն):

## 3

ԹԵՈՖԱՆՈ— (Իսկույն դեպի կոմսուհին) Ի՞նչ լուր։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Սարսափելի ծով է, թագուհի՛։ Քաղկեդոնեն մինչև հոս հոսանքին ու հյուսիսին բերանը, ընկույզի կեղևի մը վրա. ուղղակի անկարելի բան է, թագուհի՛։ Չի՛ պիտի գա։



ԹԵՈՖԱՆՈ— Ժամը ըլրացած հոս է ան։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Եթե չեկավ, կորսված ենք բոլորս, թագուհի՛։ Լույսի հետ կբացվի ամեն բան։ Բերաններ կան, որ հիմա կարկմած են, առտուն այլևս խցել չենք կրնար։

ԹԵՈՖԱՆՈ— Ժամը ըլրացած հո՛ս է ան։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Կերթա կբանա ճակտի մեկ փեղկը) Եկո՛ւր, եկո՛ւր նայե։ Նայե ի՜նչ ծով է, ի՜նչ թիփի։ Ա՜, խաչյա՛լ Հիսուս, դո՛ւն օգնես մեզի։

ԹԵՈՖԱՆՈ— Գոցե՛ փեղկը։ Այդպե՛ս։ Լսե։ Ո՛չ ծովը, ո՛չ հովը, ո՛չ մրրիկ, ո՛չ տարերք, ո՛չ, արգիլել չեն կրնար՝ ինչ որ ես ու ան վճռեր ենք, որ պիտի կատարվի այս գիշեր։ Ժամը ըլրացած հոս է ան։ Իսկ ոտքը հոս դրավ թե չէ՝ ալ մենք ենք տերը։ Մարե՛ մոմերը, թող մնա մեկը։ Բա՞ց է իր ճամփան։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Բա՛ց է, թագուհի՛։ Մեր ներքինին է հոն։

ԹԵՈՖԱՆՈ— Իսկ կայսեր դո՞ւռը։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Կհսկեմ ի՛նքս։ Կարծես ոտքի ձայներ...

ԹԵՈՖԱՆՈ— Ի՛նքն է, ի՛նքն է։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Ա՜, Հիսո՜ւս փրկիչ... (Դուրս ձախեն):

## 4

ԹԵՈՖԱՆՈ— (Կնետվի Գուրգենին ընդառաջ) Իմ քա՛ջս, իմ քաջս, որ իր դեմը արգելք չի ճանչնար։ Այս հովերուն, այս ծովերուն դիմագրավողը, այդ կամքն ու վճռականությունը ունեցողը իրավունք ունի՛ բոլոր գահերուն, բոլոր դիրքերուն։ Ա՜, եկա՛ր, եկա՛ր։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Կեցի՛ր, կեցի՛ր, բան հասկնամ։ Ես եկե՛ր եմ, բայց մյուսնե՞րը։

ԹԵՈՖԱՆՈ— Այո՛, այո՛, յո՛թն ալ, բայց նախ նստե, շունչ առ։ (Կքաշե դեպի բազմոցը ու կնստեցնե քովը) Ա՜, ինչպե՜ս հանկարծ հոգնություն մը եկավ վրաս... Իսկ դո՞ւրսը, դուրսը ինչպե՞ս է։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Համակիր անթիվ, մասնակից քիչեր։ Շատ աշխատեցա թիկնապահներու գունդը գրավեմ։ Հրամանատարներեն մեկն է միայն մեզի հետ. մյուսներուն մոտենալը շատ էր վտանգավոր։ Բայց միևնույն է, ի՞նչ կրնան ընել այդ վարձկանները կատարված իրողության հանդեպ։ Թող ինծի՛ այդ ամենուն հոգը, քու վրադ է միայն, որ բաց պահես մեր առջևը ննջարանին մուտքը։

ԹԵՈՖԱՆՈ— Քիչ մը ետքը կերթամ մոտը ու պիտի խնդրեմ, որ իր

սենյակը գիշերեմ։ Սոսկալի հով է, անսովոր փոթորիկ, ամեն ծակե կըսուլե, չէ՞ որ կվախնամ։ Քնացավ թե չէ՝ բա՛ց է դուռը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Ռոֆի ելլելով) Ուրեմն վերջացավ։ Կեսգիշեր չեղած՝ ալ Ֆոկաս չկա։

ԹԵՈՖԱՆՈ— (Ինքն ալ ելլելով ոտքի) Այլ իմպերատոր, ավտոկրատո՛ր, կա՛յսր ու բազիլևս Օհան Գուրգեն։ Ինչ ալ աղվոր կվայելե անունիդ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Թո՛ղ հիմա այդ բոլորը։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՛չ։ Դուն չգիտես ի՛նչ սքանչելի զույգ ենք ըլլալու ես ու դուն։ Այդպիսի զո՛ւյգ դեռ չէ տեսած այս պալատը. այդպիսի զույգ դեռ չէ նստած ո՛չ բյուզանդական և ո՛չ աշխարհի որևէ գահին։ Երևակայե՛ ինծի ու քեզի քով քովի, ա՛յ, այսպե՛ս, մեծ դահլիճի ամպհովանիին տակը, մեր կայսերական բովանդակ շուքովը, շրջապատված ու պաշտված ամենքեն. մեր ոտքերուն տակ Ռումեական ամբողջ ավագանին, ամբողջ ազնվականությունը և քու բոլոր հաղթական բանակներդ։ Ատիկա է միակ արդարը. աշխարհը պիտի երկրպագե արիին ու գեղեցիկին։ Ո՞վ ավելի արի՝ քան դուն, ո՞վ ավելի գեղեցիկ՝ քան ես։ Պետք էր, որ գար այս օրը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ ես ինչքա՜ն, ինչքան ջանք եմ թափեր, որ այդ մարդը դառնա կայսր։

ԹԵՈՖԱՆՈ— Հապա ե՞ս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իրա՛վ է։

ԹԵՈՖԱՆՈ— Ես ու դուն բարձրացուցինք անիկա վեր, ես ու դուն ալ հիմա կզարնենք գետին։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Իսկ ո՞ւր են տղաքը։ Կուզեի տեսնել։

ԹԵՈՖԱՆՈ— Ա՜խ, ինչո՞ւ չբացվեցան մեր աչքերը ասկե վեց յոթը տարի ավելի կանուխ։ Իզո՜ւր կորած ու ճմռված տարիներ. ափսո՜ս... որոնց վրեժը սակայն պետք է լուծվի այս գիշեր։ (Հանկարծ կատաղի բողոքով) Զորցո՛ւց իմ կյանքս այդ չոր ճիվաղը, մաշեց երիտասարդությունս։ Ա՜, ես կատեմ իր այն աղվեսի աչքերը, իր հաստ շրթունքը, կատեմ իր զզվելի ձեռքերը, այն թաց ձեռքերը...

5

ԿՈՄՄՍՈՒՀԻՆ— (Ներս վազելով) Կա՛յսրը, կա՛յսրը, թագուհի՛։

ԹԵՈՖԱՆՈ— Հանգի՛ստ։ Առաջնորդե՛ կոմսը քու սենյակդ։ Եվ ոչ ոք չշարժի իր տեղեն մինչև ձայն չտամ։



ԿՈՄՄՍՈՒՀԻՆ— (Անհանգիստ և շտապեցնելով) Տե՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— (Տեսակ մը ակամա կհետևի անոր):

6

ԹԵՈՖԱՆՈ— (Արագ կնստի՝ կռնակը դարձուցած դեպի կայսեր դուռը, արմունկները ծունկերուն ու դեմքը ձեռքերուն մեջ):

ԿԱՅՍՐԸ— (Կմտնե շատ դանդաղ ու խիստ մռայլ և լուռ կնայի քիչ մը) Ի՞նչ կընես հոդ։

ԹԵՈՖԱՆՈ— (Ընդոստ) Վա՜յ, ինչպես վախցուցիր ինծի։

ԿԱՅՍՐԸ— Ո՞ւր են կիներդ, ինչո՞ւ ես մինակ։

ԹԵՈՖԱՆՈ— (Տխուր) Նոր ճամփու դրի. կուզեի պառկիլ, քունս չի տանիր։ Ի՞նչ գարշելի գիշեր է։ Ինչպե՛ս եղավ, որ հիշեցիր իմ գոյությունս պալատիդ մեկ անկյունը։

ԿԱՅՍՐԸ— (Ցավոտ ժպիտով) Կարոտե՞ր եմ։ Չէ՞ որ ես կզգամ՝ դուն դժգոհ ես միշտ, երբ ես կուգամ քեզի։

ԹԵՈՖԱՆՈ— Ինչպե՞ս կուզես, որ գոհ ըլլամ, երբ մեր հարաբերության մեջ մնացեր է միայն քարացած սովորություն մը, անհոգի ու անմտերիմ։

ԿԱՅՍՐԸ— Մտերի՞մ։ Ատ ի՜նչ շռայլություն է ինծի համար։ Բավ է և ան, որ դեռ հավատքի կտոր մը մնացեր է մեջս. և ան ալ գիտե՞ս ինչու։

ԹԵՈՖԱՆՈ— Ըսե՛։

ԿԱՅՍՐԸ— Որովհետև շատ կպնդեն, որ չհավտամ քեզի։ Կուզե՞ս ամենեն վերջին նմուշը։ (Ծոցեն ծալլված թղթի կտոր մը հանելով) Ա՛ռ կարդա։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՛չ, ո՛չ։ Ի՞նչ բան է։ Կարդա՝ ինքդ։

ԿԱՅՍՐԸ— Լա՛վ, կարդա՛մ, մեծ հաճո՛ւյք է։ «Այս գիշեր պառկելեդ առաջ անպատճառ խուզարկել տուր կանանոցիդ բոլոր անկյունները. ամբողջ բանակ մը պիտի գտնես թաքնված. չհավտա՛ս կնոջդ հնարքներուն։ Ահա կզգուշացնե քեզի քու անկեղծ բարեկամդ»։ Է՜, ի՞նչ կըսես իմ անկեղծ բարեկամիս խորհուրդին։

ԹԵՈՖԱՆՈ— (Կեցած է լուռ ու հանգիստ) Ի՞նչ պիտի ըսեմ, ի՞նչ կրնամ ըսել։ Հետևե՛ իր խորհրդին, և խնդրեմ, մի՜ հավտար ո՛չ ինծի, ո՛չ իմ խոսքիս, ո՛չ իմ հնարներուս։ Ինծի պետքը չէ քու հավատքդ, որ այդ տեսակ ստորին աղբյուրներե կըխի։ (Հեռզհետե աճող կատաղությամբ) Ահա՜ ես, ահա՜ քու կանանոցդ. կանչե՛ ներքինիներդ, կանչե՛ թիկնապահներդ, կանչե՛ բոլոր զորավարներդ, բանակներդ. թող գան,

խառնե՛ն, ոտքի տա՛կ տան, թող գան մերկացնե՛ն, պատռե՛ն, պղծե՛ն, խորտակե՛ն ամեն բան ու ամե՛ն սրբություն, միայն թե ալ ազատի՛մ ազատի՛մ, ազատի՛մ...

ԿԱՅՍՐԸ— Իջո՛ւր. չըսի՛, որ հուզվի՛ս, ըսի՛ որ հասկնաս։

ԹԵՈՖԱՆՈ— Ի՞նչ կուզեն ինծմե. Աստված իմ։ (Լալով) Ինչո՞ւ կըտանջեն, ինչո՞ւ կհալածեն, ես ի՞նչ եմ ըրեր անոնց։

ԿԱՅՍՐԸ— Չգիտե՞ս։ Հաղթե՛ր ես, բարձրացեր ես գագա՛թը, դուն կա՛յսր ես։ Մարդկային ծածուկ ու խորունկ ատելություն է ատիկա ամե՛ն բանի դեմ, ամե՛ն մարդու դեմ, որ հաջողեր է, որ հասեր է, որ գագաթն է։ Չհաջողածներու վրեժն է ատիկա, ե՛տ մնացողներու անքուն ատելությունը։ Հանգիստ չե՛ն տալու, խայթելու են և մութին մեջ արմատները կրծելու։ Նայե՛, դուն զայրացա՛ր, լացի՛ր, պոռացի՛ր ու թեթևցար։ Իսկ ե՛ս, ե՞ս ինչ ընեմ, Թեոֆա՛նո, ո՛չ կին եմ, ո՛չ լալ կրնամ, ո՛չ ալ մնալ անտարբեր։ Կկարծես դյուրի՞ն է ինծի։ Երբեմն այնպես ծանր վայրկյաններ կուգան վրաս, նե՛րսը, այն ընդարձակ ննջարանիս առանձնության մեջ։ Ա՛յ, մանավանդ այսպես խուլ ու դիվահար գիշերները, պատերուն ցայտերն ու քիվերն անգամ կարծես կյանք կառնեն մոմիս դողդոջ լույսին տակ և մոլեգնոտ հովը պատուհանիս ճեղքերեն գիտե՞ս ինչ սև դավեր կպատմե ինծի։

ԹԵՈՖԱՆՈ— Ի՞նչ ըսել կուզես... Նիկեֆոր։

ԿԱՅՍՐԸ— Թեոֆանո՛, կզգա՛մ, որ շուրջս բան մը կդառնա, կզգա՛մ, որ դավ մը կնյութվի մեզի դեմ։ Քիչ մը առաջ էր, նստեր էի ներսը մտածումներուս հետ, հանկարծ այդ նախազգացումս այնպես սարսափելի սուր կերպարանք առավ, որ կամքիս հակառակ ներսը մնալ չկրցա։ Ա՛յ, ելեր եկեր եմ քեզի, հո՛ս, շիտա՛կ հոս, ինքս ալ չգիտեմ, իսկապես ինչո՞ւ...

ԹԵՈՖԱՆՈ— (Ահ առած) Նիկեֆո՛ր... Նիկեֆո՛ր...

ԿԱՅՍՐԸ— Եկեր եմ ու այս բոլորը կպատմեմ քեզի։ Ուրիշ որո՞ւ երթամ, ուրիշ որո՞ւ ըսեմ, իսկ լռել չեմ կրնար. կզգամ, որ չեմ կրնար։

ԹԵՈՖԱՆՈ— Խոսե՛, խոսե՛... ինչ որ գիտես։ Ի՞նչ դավ է ատիկա, և արդյոք ո՞վ։ Ա՛խ, եթե գիտնայի՛նք։

ԿԱՅՍՐԸ— (Շեշտ կնոջը նայելով) Ես գիտե՛մ։

ԹԵՈՖԱՆՈ— (Ակամա քայլ մը ետ քաշվելով) Գիտե՛ս...

ԿԱՅՍՐԸ— Այո՛։

ԹԵՈՖԱՆՈ— Ո՞վ։

ԿԱՅՍՐԸ— Գիտե՛մ։

ԹԵՈՖԱՆՈ— (Հազիվ լսելի. ակռաներուն մեջեն) Ըսե՛...

ԿԱՅՍՐԸ— Ըսե՛ դուն ինքդ։



ԹԵՈՖԱՆՈ— Ե՞ս։ Ըսեմ ե՞ս...

ԿԱՅՍՐԸ— Ո՞վ կկարծես։

ԹԵՈՖԱՆՈ— Հազար անուն կանցնի մտքես։

ԿԱՅՍՐԸ— Ո՞րն է առաջին անցածը։

ԹԵՈՖԱՆՈ— Առաջի՞նը, պիտի զարմանա՛ս, Գուրգե՛նը։

ԿԱՅՍՐԸ— (Խնդալով) Չե՛մ զարմանար, սուր է եղեր մի՛շտ քու հոտառությունդ։

ԹԵՈՖԱՆՈ— Նորե՞ն այդ մարդը. նորե՞ն այդ մարդը կելլե իմ դեմս։

ԿԱՅՍՐԸ— Վարպե՛տ է և զգույշ, բայց կույր չեմ և ես։ Հիմա ինծի համար պարզ է, թե այն ինչ պատմություն էր Բարդասի քրոջը հետ։ (Կտրուկ ու դաժան կնոջը մոտենալով) Ան կուզեր իրեն համար դավակից մը կանանոցիս մեջ, ան կուզեր մեկը, որ ներսեն բանար դուռը...

ԹԵՈՖԱՆՈ— (Սարսափահար) Ի՞նչ կըսես, Նիկեֆո՛ր, ի՞նչ կըսես...

ԿԱՅՍՐԸ— Ես գիտե՛մ, կհսկե՛մ։ Անոր մատն է այս ամենուն տակը, անոր մատն է և այս նամակին մեջ։ Կուզե խափ տալ մեկ երկու հեղ, որ երբ օր մը ճշմարիտ որ գա՝ ես անհոգ ըլլամ ու չհավատամ։

ԹԵՈՖԱՆՈ— (Հանկարծ խիստ հանդիմանությամբ) Ինչո՞ւ չէիր ըսեր ինծի այդ բոլորը, ինչո՞ւ էիր լռեր։ Եվ վերջապես հիմա՞ ինչու ես կեցեր. ելի՛ր, զա՛րկ, սատկեցո՛ւր։

ԿԱՅՍՐԸ— Ինչո՞ւ... հը՛մ, ինչո՞ւ... (Ինքզինքը ծաղրելով) Որովհետև... որովհետև ա՛ն է կապեր առաջին անգամ ոտքիս այս կարմիր կոշիկները։

ԹԵՈՖԱՆՈ— Ի՛նչ միամիտ տխմար բաներ կխոսիս։

ԿԱՅՍՐԸ— Չէ՞։ Բայց ալ վերջացա՛վ։ Թող գա՝ ինչ որ գալու է, թող ըլլա՝ ինչ որ ըլլալու է։ Անիկա... պետք է մեռնի։

ԹԵՈՖԱՆՈ— Միայն թե շո՛ւտ։ Դուն վախ դրիր իմ մեջս։

ԿԱՅՍՐԸ— Ան կուզե այդ վախը դնե և ի՛մ մեջս, բայց ժամանակ չե՛մ տար իրեն։ Հյուսած եմ արդեն իր մահը։

ԹԵՈՖԱՆՈ— Ե՞րբ, ե՞րբ։

ԿԱՅՍՐԸ— Վաղը պիտի երթա որսի։ Գիտեմ, որ որսը շատ կսիրե. թող մեռնի որսի ատեն։ Շնորհ մըն է, որ կընեմ իրեն։ Դժբախտ պատահմունք մը։ Վերջը կնվիրեմ իրեն փառավոր թաղում մը արքունի գանձեն, և թող ո՛չ մեկը չանցընե մտքեն, թե Նիկեֆոր կայսրը վարձատրել չգիտե իր ծառաները։

ԹԵՈՖԱՆՈ— (Մեծ ուրախությամբ) Հիմա հանգի՛ստ եմ, հիմա կհավատամ։ Լա՛վ է, ի՛նչ լավ է. հրաշալի ես կարգադրեր։

ԿԱՅՍՐԸ— Կարգադրողը ե՛ս չեմ. կարգադրողը ի՛նքը եղավ։ Ինքն էր, որ կպատմեր, թե այս ամբողջ շաբաթը որսի է երթալու։ Դեռ կխո-

սեր, որ ես վճիռս տված էի արդեն. ճակատագրի վճիռն է ասիկա։ Վերջը-վերջը ըլլա՛ր պիտի, ուշ կամ կանուխ։ Ճակատագրին դեմ երթալ կարելի չէ։

ԹԵՈՖԱՆՈ— (Խորհրդավոր ու սարսափով) Այո՛, Նիկեֆո՛ր, այդպե՛ս է. ճակատագրին դեմ երթալ կարելի չէ։

ԿԱՅՍՐԸ— Ա՛, ճակտի գիրը։ Եթե գրված է, որ պիտի մեռնիս այս գիշեր, հի՛մա, պահի՛կ մը ետքը՝ կմեռնի՛ս, ոչի՛նչ չի փրկեր։ Կարծես աչքերդ կփակվին ու չես նշմարեր ինչ որ շուրջդ կկատարվի։

ԹԵՈՖԱՆՈ— (Միշտ նույն սարսափով) Այո՛, Նիկեֆոր, այդպես է, ու չե՛ս նշմարեր ինչ որ շուրջդ կկատարվի։

ԿԱՅՍՐԸ— Կարծես բանականությունդ կկողպվի. կուգան կըսեն երեսիդ, ու չես հասկնար։

ԹԵՈՖԱՆՈ— (Նույն եղանակով) Այո՛, Նիկեֆո՛ր, այդպե՛ս է. կուգան կըսեն երեսիդ ու չես հասկնար։

ԿԱՅՍՐԸ— Խախտեցան ու մեռան մեջս ամեն հավատք, վստահություն. մնաց ճակատագիրը. փաթթվեր եմ անոր։

ԹԵՈՖԱՆՈ— Լսե՛, Նիկեֆո՛ր, թող այս գիշեր գամ սենյակդ պառկելու։ Հոգիս ցունց ելավ ըսած խոսքերեդ, հովն ալ դուրսը գեշ-գեշ կուլա... Չե՛մ կրնար մինակ։

ԿԱՅՍՐԸ— Եկո՛ւր։ Անկողինս ազատ է։ Գիտե՛ս, որ ես կպառկիմ բազմոցին։

ԹԵՈՖԱՆՈ— Այո՛, փաթթված Սուրբիդ վերարկուին մեջ։

ԿԱՅՍՐԸ— Իմ ուխտս է։ Կուզեմ իր շուքին տակ, իր սրբության։ Երբ կփաթթվիմ իր վերարկուին, կարծես ճակատագրին է, որ կապավինիմ։ Քալե՛ երթանք։ Հոգնած ու քնատ եմ ես ալ։ Ա՛, շա՛տ եմ հոգնած։

ԹԵՈՖԱՆՈ— Փոխեմ հագուստս, կուգամ. դուն գնա՛։ (Կերթա աջի մուտքը) Մելա՛նիա։

ԿԱՅՍՐԸ— Աղե՛կ։ Եթե քնացած ըլլամ, չմոռնաս գնելու դռան մեծ նիգը։ (Ձախեն՝ դուրս):

ԹԵՈՖԱՆՈ— Ա՛, ճակտիդ գի՛րը։ Ալ չի՛ փրկեր քեզի ո՛չ մեկ դուռ, ալ չի փրկեր քեզի ո՛չ մեկ նիգ...

## 7

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Կմտնե ու կկենա դեմը վախով ու հարցական):

ԹԵՈՖԱՆՈ— Գնա՛ ներս, հայտնե՛... որ բաց է դուռը...

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Ակամա ետ-ետ կերթա ու կկենա):



ԹԵՈՖԱՆՈ— Չի լսեցի՞ր։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— (Դողալով) Այո՛, իսկո՛ւյն, իսկո՛ւյն... Հայտնեմ, որ բա՛ց է դուռը...

Կոմսուհին շտապ կելլե դուրս: Թեոֆանո կնարձակի, կմարե մոմը: Սենյակը լուսավորված է միայն կրակի կարմրավուն դողդոջ լույսովը: Թեոֆանո նախ ծանր հանի մը հայլ կընե այդ լույսին մեջ. կկենա ու կսկսի հանվիլ: Նորեն անշարժ կեցած՝ կլսե պահ մը, հագուստին մեկ կտոր ձեռքը. ու կշարունակե հանվիլ. վերջը կիսամերկ ու բոպիկ հայլ մը կընե դեպի ձախի դուռը ու հովնոցի վար ծռած, ականջ դնելու դիրքով կհարանա ամբողջ մարմնով: Ներս կվազե կոմսուհին շնչահեղձ: Թեոֆանո իսկույն կշտկվի ամբողջ հասակովը ձիգ ու պրկված: Կոմսուհին կնետվի անոր ոտքը՝ ձեռքերովը դեմքը ծածկած:

ԹԵՈՖԱՆՈ— (Խուլ ձայնով) Խոսե՛։

ԿՈՄՍՈՒՀԻՆ— Վերջացա՛վ։ Տեսա՛... սարսափելի է...

ԹԵՈՖԱՆՈ— Ելի՛ր, գոցե՛ ներս տանող դուռը, կողպե՛. ձգե՛ վարագույրները։ Բա՛ց անկողինս։ Շո՛ւտ, շո՛ւտ, գնա՛ սենյակդ, հանվե՛ դուն ալ։ Ներսեն աղմուկ լսվելուն պես կվազեք հոս ինծի արթնցնելու։ Կլսե՞ս... Կվազեք հո՛ս, ինծի արթնցնելու... բոլորդ միասին ինծի արթնցնելու... (Նետվում կպրդի անկողինը):

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԳԱՀԻՆ ԴԱՀԼԻՃԸ

Դահլիճը խոր, բարձր ու ընդարձակ: Ճակատը գահն է շքեղ ամպհովանիին տակ, հանի մը աստիճան բարձր պատվանդանին վրա: Աջ ու ձախ սյունաշար է, համակ ոսկեզօծ, կարմիր մետաքս կտորներով տոնազարդած։

## 1

Օհան Գուրգեն կեցած է ամպհովանիին տակ կայսերական լրիվ հանդերձանքով: Գահին երկու կողմը խռնված են բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ՝ պալատական, զինվորական, եկեղեցական, բոլորն ալ հարուստ պաշտոնական զգեստավորումով:

ԱՐՔՈՒՆԻ ԴՊԻՐԸ— (Գահի ստորին աստիճանին վրա կեցած, հիշ մը կողքով, ավարտելու վրա է ձեռքի երկար մագաղաթին ընթերցումը)։ «Մ՛անավանդ ա՛յն վայրկյանին, երբ Աստվածային Անքննելի Նա-

խախնամությունը ինծի հանձնեց այս միա՛կ քաղաքակիրթ ու ճշմարիտ քրիստոնյա պետության դարավոր սրբազան գահը։ Հաղթանա՛կ ու հաջողություն բանակներուս, վայե՛լք ու առատություն ժողովրդիս, փա՛ռք ու բարձրացում կայսերությանս և Աստվածային օրհնությունն ու իմաստությունը բոլորիս։ Տված է անդրանիկ հրովարտակս Տերն Մեր Հիսուս Քրիստոսի մարդեղության ինն հարյուր վաթսուն և ինը թվականին և մեր երջանիկ գահակալության առաջին տարին։ Կայսր Օհա՛ն»։ (Կզալարե մագաղաթը ու կիջնե պատվանդանեն):

ԱՎԱԳ ԱՐԱՐՈՂԱՊԵՏ— (Առաջ կուգա ընդհանուր լռության մեջ և խոր գլուխ տալով կայսեր) Օհա՛ն կայսր. երկար ապրե քեզի, երկար ապրե ու երջանիկ թագավորություն, ո՛վ դուն, արի՛ և իմաստուն ինքնակալ։ (Դառնալով բազմության) Եվ դո՛ւք, որ պայծառ աստղերն եք մեր այս փառահեղ պետության շքեղ երկնակամարին, եկե՛ք խոնարհինք ու երկրպագենք մեզի ծագած այս նո՛ր արեգակին, մեր աստվածընտիր նո՛ր գահակալին։

ԲՈԼՈՐԸ— (Լուռ կխոնարհին մինչև մեջքը):

ԿԱՅՍՐ ՕՀԱՆ ԳՈՒՐԳԵՆ— Վե՛ր բարձրացուցեք ձեր խոնարհած գլուխները, ձեռքերնիդ դրե՛ք ձեր սուրին ու ձեր ճակատը հպարտ ուղղեցե՛ք երկինք։ Ինծի պետք չեն խոնարհ գլուխներ. ես խրոխտ հոգիներու կուզեմ թագավորել։ Ձեր խելքն է, որ կվարե այս տերությունը ու ձեր բազուկն է, որ կպաշտպանե. դուք իրավունք ունիք հպարտ ըլլալու Ես ալ եկեր եմ ձեզի հետ միասին հպարտ գործ տեսնելու։ Պարզ ու շիտակ կխոստանամ ձեզի՝ քշե՛մ Մկյատոսյավը իր ռուսներուն հետ ոչ միայն մեր քաղաքի դռներեն, ուր ան հասած է հիմա գրեթե, մե՛ր սխալովք, այլև բուլկարական սահմաններեն ալ անդին, Մեծ Դանուբի հոսանքեն ալ անդին, մինչև իրենց վայրի ու անհամբույր տափաստանները։ Կխոստանամ ձեզի՝ հպատակության բերեմ արաբներն ու մահմեդականությունը և բարձրացնեմ այս գահին հմայքն ու իշխանությունը այն բարձունքներ, ուր ան դեռ չէ հասած երբեք մինչև օրս։ Հսկա գործ ունինք կատարելու ե՛ս ու դո՛ւք, մենք բոլո՛րս միասին։ Պետք կա մեր ամենուս ուժերուն, մեր ամենուս տաղանդին։ Ընդունեցե՛ք իմ կայսերական ողջագուրանքս, գացե՛ք ու եղե՛ք պատրաստ (Կիջնե ու կանցնի աջի սյուները):

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Կեցցե՛։ Կեցցե՛ մեր կայսրը։ Կեցցե՛ Օհան կայսրը։ Կեցցե՛ մեր նոր կայսրը։



2

Մինչ բոլորը կցրվին աջի ու ձախի սյուներուն մեջեն, Սենատոր Պոնտիս կամաց կմոտենա Կարևոր պալատականին, որ մտախոհ կեցած է մեկդի։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՍ— (Գոհ) Հը՛, բարեկա՛մ, ի՞նչ կըսես։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Ի՞նչ ըսեմ։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՍ— Դեռ երկու շաբաթ չկա. տե՛ս ինչպե՛ս շուռ տվավ ամենուն գլուխը. գինովցեր են։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Շա՛տ է թունդ գինին։ Ամենուն կցրվե իր դրամը, հողը, ամենուն կբաժնե իր իշխանությունը, ամենուն պատիվ ու պաշտոն։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՍ— Ցրվելն ալ արվեստ է, ի՞նչ գիտցար։ Նախորդը գնաց, որովհետև տալ չգիտեր։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Տեսնե՞նք, տեսնե՞նք. դեռ մեղրալուսինն է։

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՍ —(Դառնալով դեպի Վասիլ Լեկապենը, որ շիտակ անոնց կմոտենա) Ա՛յ, հավիտենական մարդը։ Կայսրներ կուգան, կայսրներ կերթան, իսկ սա՛ միևնույն է, հո՛ս է միշտ, պալատը և միշտ ալ ժիր ոտքերուն վրա։ Կատվի ցեղեն է. ինչպես ալ նետես՝ ոտքերուն կիյնա։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— (Աչքերը կծկելով) Ա՛յն գիշերը միայն պալատը չէր, ո՛չ ալ ոտքերուն վրա. թեև արդեն առտուն կանուխ...

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Խեղճանալով) Հա՛, այն գիշե՛ր... ակար էի քիչ մը. գացեր էի ձոր խմելու։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Տկա՞ր...

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Սովկալի խիթեր որովայնիս մեջ։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ— Այնպե՞ս որ... դարձուցին քեզի պալատին տերը, որովայնիդ իմաստուն խիթերը։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Ա՛, ինչպե՛ս մարդիկ չար են։ Ինչքան որ մանր ու մունր սև աշխատանք կա, բոլորը նետեր են վիզս, ետքն ալ թե...

ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՍ— Խե՞ղճ Վասիլ. բոլոր մա՞նր ու մո՞ւնր. սև աշխատանքը...

3

Հանկարծ քափով կրացվի խորքի մասնավոր դուռ մը ու ներս կվազե Թեոֆանոն, կատաղի կրակ մը աչքերուն մեջ: Կնայի շուրջը պարապ դահլիճին ու կնետվի դեպի երեքը, որոնք հարգանքով կխոնարհին:

ԹԵՈՖԱՆՈ— (Գոռալով, անոնց երեսին) Ո՞ւր է կայսրը։

ԵՐԵՔԸ— (Շփոթ ու շվար կնային իրար):

ԹԵՈՖԱՆՈ— Ո՞ւր է, ո՞ւր է կայսրը՝ կհարցնեմ ձեզի։

ԿԱՐԵՎՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ—— Չգիտե՛մ, կայսրուհի՛։ Կարդացին հրովարտակը ու գնաց ներս։

ԹԵՈՖԱՆՈ— Հա՜, գնաց նե՜րս... նե՜րս։ Պահել կուզեք ինծմե, փախցնել կուզեք ինծմե, հա՞, ձեր կայսրը։ Կկարծեք ես չե՞մ հասկնար։ (Ոտքը զարնելով գետին) Ես կա՜յսրը կուզեմ, կհասկնա՞ք. հո՛ս, ա՛յս վայրկյանիս, կա՜յսրը, կա՜յսրը...

## 4

Աջեն արագ ներս կմտնե Օհան Գուրգեն: Հանած է զգեստին պաշտոնական մասերը ու գլխաբաց: Նտևեն մեկ-երկու պալատական:

ԹԵՈՖԱՆՈ— (Կվազե վրան խենթ ուրախությամբ) Ա՛խ դո՛ւն. ահա՛ դուն։ Ա՜, վերջապես, քու աչքերուդ դեմը, քու թևերուդ տակը։ Ալ չեմ վախնար, ալ ոչինչե չեմ վախնար։ Սուտ են, սուտ, կուզեին խաբել ինծի։

ԿԱՅՍՐԸ— Հանդա՛րտ, հանդա՛րտ։ (Կդառնա մյուսներուն ու ձեռքով կընե, որ հեռանան):

## 5

ԿԱՅՍՐԸ— Ինծի տեսնել էիր ուզեր, և ես համաձայն էի։ Բոլորովին ավելորդ էր այս անտեղի տեսարանը։

ԹԵՈՖԱՆՈ— Վախցա, որ խափանեն։

ԿԱՅՍՐԸ— Խափանե՞ն. ո՞վ։ Ինչևէ. քանի որ արդեն եկած ենք դեմ դեմի՝ խոսե՛։ Գիտեմ, որ անիմաստ ու անախորժ բան մը պիտի ըլլա մեր այս տեսակցությունը, բայց քու վերջին ցանկությունդ էր, մեր այս տեսակցությունը, բայց քու վերջին ցանկությունդ էր, մերժել չեմ կրնար։

ԹԵՈՖԱՆՈ— Ի՜նչ բարի ես։ Ուրեմն այդպես, ուրեմն իրա՛վ է ինչ որ կըսեն, ինչ որ ինծի հայտնեցին քու անունեդ... Կայսե՛ր անունեն։

ԿԱՅՍՐԸ— Այո՛, Թեոֆա՜նո, պալատին մեջ մնալդ այլևս կարելի չէ։



ԹԵՈՖԱՆՈ— (Կխնդա կարճ) Հա՛, ըսի՛ն, ըսի՛ն։ Իհարկե՛, չէ՞ որ ժողովուրդը հակառակ է, չի՛ հանդուրժեր, որ ինծի նման մեկը համարձակիս գահիդ վրան պահելու։ Լսեցի՛, որ տիեզերական պատրիարքը ա՛տ է դրեր քեզի առաջին պայման, եթե կատարվածը սրբագրել կուզես, եթե օծվիլ կուզես։

ԿԱՅՍՐԸ— Ճի՛շտ է։ Բայց ատիկա ամբոխին դարձած երեսն է գործի։

ԹԵՈՖԱՆՈ— Գուցե կվախնա՛ս։ Չէ՞ որ հիմա ամենքը կոռնան փողոցներուն մեջ, թե ե՛ս եմ սպաններ առաջին ամուսինս, ինչպես և երկրորդը։ Որ երկրորդը ե՛ս սպաննել տվի, ատոր կարծե՛մ գոնե դուն կասկած պիտի չունենաս։ Ըսե՛, մի՛ քաշվիր. կվախնա՛ս միևնույն բախտեն։ Կռիվներու մեջ քաջերը վախկոտ կըլլան այս պատերուն մեջ. դո՛ւն ալ քաջի համբավ ունիս։

ԿԱՅՍՐԸ— Ես քու թույնե՛դ չէ, որ կվախնամ, ո՛չ ալ քու դավեդ։

ԹԵՈՖԱՆՈ— Հապա՞։ Չըլլա թե այն մյուսի ուրվականը հանկարծ եկավ ու կեցավ մեր մեջտեղը։ Քանի ողջ էր ան՝ դուն էիր անոր ուրվականը, հիմա որ մեռավ՝ ինքը դարձավ քու ուրվականդ։ Այն տխմար քավթառը քու ուրվականդ։

ԿԱՅՍՐԸ— Այդպես չէ՛ խոսիր դժբախտ ու ինկած մարդու մը մասին, որ քու ամուսինդ է եղած։

ԹԵՈՖԱՆՈ— Ատիկա նո՞ր ինկավ միտքդ (Հետզհետե անզուսպ բարկությամբ) Ա՜խ, դո՛ւն, զզվելի՛ փարիսեցի. պաշտպանե՛, պաշտպանե՛ իմ ամուսինս. արդարացո՛ւր քեզի աշխարհի աչքին, բոլոր հանցանքը նետե՛ իմ վրաս, քշե՛լ տուր ինծի մենավոր անկյուն մը, և դուն անմեղ ու սուրբ նստե՛ գահդ ու վայելե՛։ Ցորե՛ն թափել տուր ռամիկ ամբոխի գլխուն, մտի՛ր պատրիարքի փեշերուն տակը, նետե՛ ոսկոր մը ամեն շան բերանը, որ անոնց օգնությամբ գուցե պահես քեզի հափշտակած գահիդ վրա։

ԿԱՅՍՐԸ— (Հանգիստ ու տխուր) Միայն իզուր կպոռաս։ Կտեսնես, որ լսեմ պիտի քեզի մինչև վերջը։

ԹԵՈՖԱՆՈ— Իզո՜ւր, իզուր կպոռամ, հա՞։ Իհարկե՛, կուզեիր սուսիկ-փուսիկ տորրես ինծի, ոչնչացնես ու ազատիս։ Ո՛չ. պոռամ պիտի. պոռա՛մ պիտի, որ աշխարհքը իմանա։ (Պոռալով) Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն, գետինը սողացող ճիճու մըն էիր դուն, քաշեցի թևեդ, առի ծոցս, տաքցուցի, դրի այս գահին. օ՛ձ, օ՛ձ, օձի վարձատրությո՞ւն է, որ կուտաս։ Բայց դուն դեռ չե՛ս տեսած իմ կատաղությունս. շատ գլուխներ եմ ես ճզմեր այս գարշապարներուս տակը, կճզմեմ և քո՛ւ գլուխդ։

ԿԱՅՍՐԸ— Կհասկնամ քու բարկությունդ, կհասկնամ և քու ատե-

*լությունդ, բայց ինչի՞ են պետք այդ անզոր սպառնալիքները. թո՛ղ ատանք։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Լուռ ու շեշտ կնայի պահ մը ու հետզհետե կկորչի իր խռով կեցվածքը) *Իրավունք ունիս։ Ես ի՞նչ եմ, որ հիմա քու առջևդ։ Անզոր ու անատամ հալածված շուն մը։ Ես ինչպե՛ս կհամարձակիմ քու վրադ հաչելու։ Դուն հիմա գահերու բարձունքին, ես... ես հո՛ս...* (Կամաց-կամաց կիջնե, կչոքի, կնստի ու կուչ կուգա) *գետի՛նը... փոշիներու մեջ... քու ոտքերուդ տակը...* (Լացկոտ) *Աքացե՛... աքացե՛... հալածե՛...*

*ԿԱՅՍՐԸ— Ելի՛ր ոտքի, տղայություն պետք չէ՛։* (Աթոռ մը հրելով առջևը) *Ելի՛ր, նստե՛, թագուհի՛։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Դառն) *Թագուհի՞... ո՞վ ըսավ քեզի։ Անցա՛վ։ Ես թագուհի էի, ինչքան ատեն, որ իմ գեղեցկությունս զենք մըն էր ձեռքս էրիկ մարդիկը ինծի ծառայեցնելու։ Ա՛յն օրը, որ այս տխմար կիրքը բռնկեցավ մեջս դեպի քեզի, այն օրը զենքերս հանձնեցի քեզի։ Իմ զենքովս զարկիր ինծի. կիրքս շինեցիր քեզի սուր ու մարմինս՝ պատվանդան։ Հիմա, իհարկե՛, ալ պետք չեմ քեզի։* (Փաղաքուշ) *Օհա՛ն, մտածե՛։ Չէ՞ որ մենք կապված ենք իրարու, կապված ընդմի՛շտ, մեր մարմնովը, մեր բախտովը, մեր իղձովը. հիշե մեր անցած ճամփան և այն... գիշերը։*

*ԿԱՅՍՐԸ— Մեր հոգիներուն մեջ երբեք ոչ մեկ կապ չէ եղեր ու չի պիտի ըլլա։ Իսկ այն կապը, որ եղեր է մեր մեջը, ո՛չ, ալ չեմ ուզեր, պետք է փրցվի. պետք է պատռվի անցյալի այդ էջը մեր մեջեն։*

*ԹԵՈՖԱՆՈ— Բայց, անաստվա՛ծ, ապերա՛խտ. ի՞նչ վատ բան է ըրեր մեր անցյալը քեզի։ Եվ ինչ որ ըրեր եմ՝ քեզի համար եմ ըրեր, քեզի՛, քեզի՛...*

*ԿԱՅՍՐԸ— Կարծեմ ըսինք, ինչ որ պետք էր, գուցե նույնիսկ ավելին։ Ասկե անդին դժվար պիտի հասկնանք իրար։ Բաժնվի՛նք։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Վախով առաջ կնետվի) *Կեցի՛ր, կեցի՛ր դեռ։ Աղե՛կ, թող ըլլա քու ըսածդ, միայն ժամանակ տուր, որ գտնեմ ինքզինքս. մեկ երկու շաբաթ. թող որ հասկնամ եղածը, որ համոզվիմ...*

*ԿԱՅՍՐԸ— Ո՛չ։ Հի՛մա, իսկո՛ւյն. հոսկե շիտակ երթաս պիտի Պրինկիպո կղզին։ Կյանքիդ ու հանգստիդ պակաս չըլլար ոչինչ։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Վայրի ծիծաղով) *Հա՜, հա՜, հա՜... Հացս կշնորհես ինծի, հացս... դո՜ւն...* (Ներքին գալարումով) *Գողի մը պես եկար մտար սիրտս, մտար անկողինս, մտար պալատս, գողցար ու հափշտակեցիր ամե՛ն ունեցածս, գողցար փարթամությունս, փառքս, գահս։ Գո՛ղ, գո՛ղ, գո՛ղ... Ա՜խ, կուզեի՛ փակչիմ կոկորդիդ, կուզեի խածնե՛մ, փրցնե՛մ, կուզեի ծծե՛մ արյունդ. կուզեի ճանկեմ, հանեմ աչքերդ, որոնք այդպես*



*սառն ու ձանձրացած կնային ինծի. ճանկռտե՛մ, հանե՛մ այս եղունգներովս...*

*ԿԱՅՍՐԸ— Կտեսնեմ՝ դուն այլևս քու տեղդ չես։ Վասի՛լ։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Կլռե, կսառի ու կքարանա):

**6**

*ԿԱՅՍՐԸ—* (Վասիլին) *Առաջնորդե՛ թագուհին նավը։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Կնետվի կայսեր ոտքերը ու փարելով) *Ների՜, Օհա՜ն, ների՜. չգիտեմ ինչ կխոսիմ, չգիտեմ՝ ինչ կըսեմ։ Ա՜խ, գեշ երազ մըն է ասիկա։ Օհա՛ն, մեղք եմ։ Օհա՛ն սիրուհիդ եմ եղած։ Կխնդրե՛մ, կաղաչե՛մ քեզի, մի՛ քշեր ինծի պալատեն. չե՛մ կրնար, չե՛մ կրնար։ Պահե՛ ինծի հոս, իբրև քու աղախինը, իբրև քու հարճդ...*

*ԿԱՅՍՐԸ—* (Վասիլին չոր) *Հեռացո՛ւր այս կինը հոսկե։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ—* (Կամաց մը ձեռքը կդպցնե անոր ուսին) *Ելի՛ր, թագուհի՛։ Լսեցի՛ր հրամանը։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Մեկ ոստյունով կցատկե ոտքի) *Քաշե՛ ձեռքդ, լի՛րբ սկյո՛ւթ, ստրուկի՛ ծնունդ։ Ինչպե՞ս կփայլին աչքերդ, ինչպե՞ս ուրախ ես. հասար, հա՞, նպատակիդ. հաղթեցի՛ր. հիմա քու ձեռքդ է ամբողջ պալատը, հա՞... Այս բոլորը քու սարքած բաներդ են, քո՛ւ, քո՛ւ։* (Կհարձակի վրան ու բռունցքներ տեղալով անոր դեմքին ու կրծքին) *Շո՛ւն, շո՛ւն, շո՛ւն, կոտա՛ծ շուն, կոտա՜ծ շուն...*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ—* (Ետ-ետ ազատիլ ջանալով):

*ԿԱՅՍՐԸ— Քաշե՛ ձեռքդ ետ։*

*ԹԵՈՖԱՆՈ—* (Կդիտե ակնթարթ մը և հանկարծ կվազե գահը): *Ո՛չ, երբե՛ք, երբե՛ք. չըլլա՛ պիտի ատիկա, չըլլա՛ պիտի ձեր նյութածը։ Ե՛ս եմ այս պալատին տերը, ե՛ս եմ այս գահին տերը. ե՛ս, ե՛ս։ Ի՛մս է այս գահը, կհասկնա՞ք՝ ի՛մս... ի՛մս...*

**7**

Նույն միջոցին Վասիլ կերթա դեպի սյուները, նշան կընե: Վեց-յոթը ներքինի կարձանանան մուտքին մոտ։

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Օգնեցե՛ք թագուհիին ու փոխադրեցեք վա՛րը նա՛վը։*

*ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ—* (Վարանած կնային ու չեն շարժիր):

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Չլսեցի՞ք։

ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ— (Կմոտենան գահին, ոտք դնել կուզեն)։

ԹԵՈՖԱՆՈ— Հեռո՛ւ, ստրուկնե՛ր, չե՞ք տեսներ՝ ով է կեցած ձեր դեմը։ Ե՛ս. Ռումեական կայսրության թագուհին է, որ կհրամայե... (Կայսեր) Ո՞ւր պիտի գտնես ինձմե ավելի գեղեցիկը, ո՞ւր ինձմե ավելի վայելուչը այս գահին։ Չե՞ս ըմբռներ, որ ես ստեղծված եմ այս գահը զարդարելու, և որ այս գահը ստեղծված է ինձի՛ զարդարելու։

Ներքինիները, որ պահ մը ետ էին քաշված ակամա, կբարձրանան վճռապես պատվանդանը ու բռնել կփորձեն թագուհիին թևերը։ Թեոֆանո բոլոր ուժովը կփաթթվի գահին։ Ներքինիները կքաշեն, գահը կտապալի։ Վերջապես կես մը հրելով, կես մը թևերուն տակեն բարձրացուցած կիջեցնեն ու կհանեն դուրս։

ԹԵՈՖԱՆՈ— (Այդ միջոցին, ընդհատվող ու կոպիտ պոռացով, դիմադրելու ջանքերուն զուգրնթաց) Ա՛... ա՛... ո՛չ։ Ամբողջ գունդեր ալ որ բերես, ո՛չ, ես հոսկե հեռացողը չեմ... Ո՞վ ես որ դուն... ի՛մս է այս բոլորը... Թողե՛ք թևերս, թողե՛ք... կխածնեմ, թե չէ կխածնեմ... կորիճնե՛ր, կատաղա՛ծ կորիճներ... Ա՛յ, օգնեցե՛ք, օգնեցե՛ք, տարի՛ն, տարի՛ն ձեր թագուհին... Չ՛ի մնար, Օհան, քեզի ալ չի մնար, չ՛ի մնար...

8

Կայսրը, որ ամբողջ այդ վայրագ տեսարանի միջոցին կեցած է մեկ ձեռքովը աչքերը փակած, այդպես ալ անշարժ կմնա մյուսներու հեռանալեն ետքը։

Քիչ-քիչ շուրջը կսկսի մթնել, միայն գահի եղած տեղը մշուշոտ լույս մը, որ հետզհետե կսկսի պարզիլ ու կերևա կուսանոցի խուցին մեկ անկյունը։ Մեջտեղը քառակուսի լուսամուտ մը, քովը սեղանի մը մեկ մասը, վրան պղնձե մեծադիր խաչելություն։ Լուսամուտի տախտակե միակտուր փեղկը բաց է։ Այդ բաց փեղկին թիկն տված կեցած է Հաննա՝ կույսի ճերմակ հագուստներով, ինքը դալուկ. վիզեն շղթայով կախված է սև խաչելություն մը։ Ձեռքը դրած լուսամուտի եզերքին՝ երազկոտ աչքերով կնայի հեռուն [illegible] լեռներուն, որոնք կցոլան դուրսի պայծառ լույսին տակ։

ԿԱՅՍՐԸ— (Դանդաղ շարժումով ձեռքը վար կառնե դեմքեն ու կրխոսի հատիկ-հատիկ) Ահա՛ կեցած եմ նորեն, Հա՛ննա, Պետքար լեռան գլուխը. ահա նորե՛ն ես հաղթական, նորե՛ն ետիս մահ ու խորտակում, նորե՛ն սիրտս թույլ ու հոգիս խռով...

ՀԱՆՆԱ— (Հանդարտ խոսվածքով) Մի՛ կենար ու մի՛ նայիր ետ. ետիդ անդունդ է։



ԿԱՅՍՐԸ— Անդո՛ւնդ, դաժան ու մթի՛ն։

ՀԱՆՆԱ— Վե՛ր, մագլցե վե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Արժե՞։ Ել ո՞ւր։ Ահա գագա՛թ մը։

ՀԱՆՆԱ— Անո՛նց համար, որոնց շունչը կարճ է։

ԿԱՅՍՐԸ— Բոլոր գագաթներուն ալ աս է եղածը։

ՀԱՆՆԱ— Բայց և այնպես, քալե՛, քալե՛ վե՛ր։

ԿԱՅՍՐԸ— Ո՛վ դուն, իմ հոգիիս անվերջ ձգտումը, իմ անհանգիստ, իմ անհագ հոգիիս անզուսպ ու թևավոր ձգտումը, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ դուն, ինչո՞ւ այս ձգտումը. և մինչև ե՞րբ և մինչև ո՞ւր...

ՀԱՆՆԱ— (Մատնանիշ լեռները) Մինչև ճերմակ բարձունքները, մինչև միգոտ կատարները, մինչև անհաս տենչանքները, մինչև մահուն սահմանները...

ԿԱՅՍՐԸ— (Տխուր երերցնելով գլուխը) Մինչև անհուն տենչանքները... մինչև մահվան սահմանները։

ՀԱՆՆԱ— Վե՛ր, մագլցե՛ վե՛ր...

ԿԱՅՍՐԸ— Այո՛... մնացածը բոլորովին ոչինչ է։

ՀԱՆՆԱ— Վե՛ր, մագլցե՛ վե՛ր...

Կայսրը դանդաղ շարժումով նորեն կծածկե դեմքը։ Լույս է։ Նախորդ դահլիճը նախորդ դիրքով։

9

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— (Կվերադառնա, քիչ մը շվար ու ձախլիկ կմոտենա կայսեր) Ես քեզի ըսի, տե՛ր, որ պետք չկար այս ավելորդ աղմուկին. իզուր ընդունեցիր։ Կանայք այդպես են. մի՛ վշտանար, տե՛ր։ Այս պատերը շա՛տ են տեսեր նման կռիվներ. տեսեր եմ ես ալ։ Քանի՛-քանի կին զրկեր է հենց ինքը թագուհին, ա՛ն, որ հիմա գնաց իր հերթին։ Մի՛ վշտանար, տե՛ր։

ԿԱՅՍՐԸ— (Բացած է դեմքը ու մոլար նայվածքով) Ի՞նչ կուզես. ինչի՞ մասին է, որ կխոսիս։ Ա՛ն... ա՛ն ալ մնաց վարը, հեռո՛ւն, Պետքար լեռան ետևը։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Պետքա՞ր։ Հա՞, քու հաղթանակիդ լեռը։

ԿԱՅՍՐԸ— (Մտասույզ) Հաղթանա՞կ, թե՞ պարտություն. ո՞վ կրնա ըսել։ Ելքի՛ լեռը, կռվի՛։

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ— Այն օրեն ժողովուրդը կըսե՝ «արյան լեռը»։

ԿԱՅՍՐԸ— (Հանկարծ) Լսե՛, Վասի՛լ. ես գիտեմ քու վարչական շնորհքդ, գիտեմ շա՛տ կանուխեն։

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ*— (Համեստ) *Տե՛ր։*

*ԿԱՅՍՐԸ*— *Կհանձնե՛մ քեզի, քու փորձառությանդ այս անհանգիստ քաղաքը։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ*— (Համեստ) *Տե՛ր։*

*ԿԱՅՍՐԸ*— *Ավելի ուշ՝ գուցե և ամբողջ երկրին վարչությունը։ Գարունը բացվելուն պես պետք ունիմ իմ բոլոր ուժերուս։*

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ*— *Դեպի... Բուլղա՞րիա։*

*ԿԱՅՍՐԸ*— *Դեպի... «արյան լեռը»։* (Դուրս)։

## 10

*ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ*— (Քիչ մը լուռ կնայի անոր ետևեն, վերջը հեգնոտ կշարժե գլուխը) *Կա՞յսր... սա՞... մեր այս հնավանդ պետությա՞ն... Դուն կմնա՛ս իմ զորավարս, իմ գործի՛քս։ Կռիվն ու հաղթանակը քեզի՛, բայց տիրելը քո բանդ չէ։ Դուն գահեր կտապալես, բայց գահերը պահպանել չե՛ս կրնար։ Ատիկա ե՛ս... ե՛ս։ Կա՛յսրը... ե՛ս։* (Զգույշ կմոտենա գահի պատվանդանին, կնայի շուրջը, աստիճան-աստիճան կբարձրանա, կշտկե տապալած գահը, կհարդարե: Իր ծռած դիրքովը կնայի ետ, կդիտե մուտքերը, որ տեսնող չըլլա. կամացուկ մը կնստի գահին եզերքը ու հաճույքեն ձեռքերը իրար շփելով կծիծաղի) *Հի՛... հի՛... հի՛...*

# ԾՂԹԱՑՎԱԾԸ

## Խաղ մեր Միջնադարեն

«Զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս»

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

«Զրուցեն զսմանէ եւ պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք. եւ երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանայ ելանել եւ առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ բազումք ի դարբնաց յաւուր միաշաբաթուջ երիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ»:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

# ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԱՆԻԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԸ. ԴԱՀԼԻՃ

Ճակատը արաբական կամար վարագույրով. կեդրոնը փոքրիկ ավազան մը և շատրվան. արևի պայծառ խուրձ մը ինկած է շեղակի շատրվանի վրա. շուրջը զարդեր ու բարձեր: Մուտքեն աջեն ու ձախեն վարագույրներով:

## 1

Էմիրի շքախումբեն հինգ-վեց հոգի. բոլորն ալ նոր հագված գույնզգույն երկարեն կերպասներով, գլուխնին փաքքոցներ ու զինված:

*ՍՈՒԼԵՅՄԱՆ*— (Հսկա մարդ մը, խաղցընելով ձեռքի մերկ սուրը) *Լա՛վն է, շատ լա՛վն է, մարդուս զարնելը կուգա, ու մե՛կ զարկով կթռչի անհավատի գլուխը։ Արդեն սուրը ա՛ն է, որ մեկ զարկով։ Տղամարդը ա՛ն է, որ մե՛կ զարկով։ Այդպես է իմ սովորությունս. արյունը շատրվանի*

պես ցատկե, և մարդը դեռ կեցած ըլլա, երբ գլուխը գետինն է արդեն։ Ա՛ռ, բարով վայլես։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— Իսկ կո՞թը, կոթը տեսա՞ր. ի՛նչ բանվածք է, ի՛նչ փորվածք, շատ վարպետ մատներ ունի ատ շուն հայը։

ՀԱՋԻ— (Խիստ գեր) Մե՛ծ է Աստված և մեծ իր Մարգարեն։ Աստված վարպետ մատներ է տըվեր հայուն՛, որ քերե, փորե. ուժեղ մատներ է տըվեր Թուրքին, որ խլե՛, վայլե։

ԻԲՐԱՀԻՄ— (Նուրբ ու նիհար դեղին մարդ մը) Եվ ի՛նչ վայելք։ Նայեցե՛ք, քարեր շատ կան մատնիիս վրան, բայց ամենեն արժեքովը, ամենեն գեղեցիկը այս մեջտեղի կարմիր յախուտն է։ Մեր այս հարուստ ու անպարտ Անին, ահա այդ յախուտն է շրջակա բոլոր էմիրություններուն մեջ. չկա նմանը։

## 2

Կամաց մը կբացվի աջի դռան վարագույրը, և դուրս կուգա էմիրը զոռոզ և հանդիսավոր: Ետևեն Ապտուլլահը չոր ու կեննոտ ներքինի մը՝ տարիքեն կքած: Ամենքը ետ կքաշվին ու կխոնարհին:

ԷՄԻՐԸ—— Իբրահի՛մ, ուրեմն շուրջի էմիրներուն հետ կուզեիր համեմատես ինծի. ա՛ֆերիմ։ Եվ ո՞րը, Կարսի՞ էմիրը, Դվինի՞, Մանազկերտի՞։ Անոնք թող իրենց վարտիքը կապեն ամենեն առաջ և ետքը գան Մանուչեի տան հետ մրցումի մտնելու։

ԻԲՐԱՀԻՄ— Էմիրն ապրած կենա, իմ ըսածս ալ ատ է։

ԷՄԻՐԸ— Այս Անին, ի՛մ Անին, ո՛չ թե յախուտ է, այլ ադամանդ, մանավանդ այն օրեն, երբ հայրս զարկավ սուրը, բացավ անոր դռները ու ըսավ՝ «Ես եմ տերը»։ Որովհետև ադամանդը կվայլե միայն այն ձեռքին, որուն բռնած սուրը ադամանդները կկտրե. իսկ իմ հայրս ինքը սուր մըն էր ադամանդե։ Ո՞վ կրնա մրցիլ ինծի հետ, ինծի՛, Մանուչեի տղո՛ւն։

ՄԵԿԸ— Ո՞վ կհամարձակի, էմի՛ր, բախտավոր է այն հողը, որուն վրա քու ոտքը կկոխե։

ՍՈՒԼԵՅՄԱՆ— Մանուչեի տղա՛, ցո՛ւյց տուր ինծի ախոյանդ, ջարդեմ։

ՀԱՋԻ— (Պաշտոնական) Թող ներե ինծի էմիրը, որ իրեն բարի լույս մաղթեմ իմ ու իմ ընկերներուս կողմեն։ Կհուսամ քունին քաղցրությունը...



ՇԵՇ ՀԱՍԱՆ— Թող ներե ինծի էմիրը, որ իրեն բարի իրիկուն մաղթեմ իմ ու իմ ընկերներուս կողմեն, քանի որ հիմա արևը...

ՀԱՋԻ— Այ շե՛շ, նորեն մեջ ինկար։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Եվ ո՞վ է ըսեր, թե գիշերը քունի համար է. հավերու այդ հին սովորությունը մեր ապարանքին մեջ վաղուց է ջնջված։ Գիշերները ստեղծված են շատ ավելի հետաքրքիր ու կենդանի գործերու համար. այնպես չէ՞, էմի՛ր։

ԷՄԻՐԸ— Ճշմարտությունը աղբյուրի պես կհոսի այս շեշի բերնեն։ Իրա՛վ է, գիշերները ստեղծված են քեֆի համար։ (Դառնալով ետ քաշված կարճլիկ մարդու մը) Իսկ ո՞ւր էիր դո՛ւն երեկ գիշեր։

ԿԱՐՃԼԻԿԸ— Մեջքիս և գլխուս հին ցավերը, տե՛ր։

ԷՄԻՐԸ— Հիմար մեջք ունիս ու շատ ավելի հիմար գլուխ։ Զրկվեցար։ Այս անգամ խոհարարս գերազանցեր էր ինքզինքը։

ՀԱՋԻ— Այս տեսակ փորը լեցուցած գառը դուն դեռ կյանքիդ մեջ չես կերած։ Բրնձին հատը այսքա՛ն-այսքան. քիշմիշ, մեխակ, նուշ, շագանակ...

ԿԱՐՃԼԻԿԸ— Վա՛յ, ափսո՛ս, ափսո՛ս...

ՈՒՐԻՇ ՄԸ— Վրայեն ալ սքանչելի եղնիկի խորոված։

ԷՄԻՐԸ— Եվ ի՛մ նետիս զարկած եղնիկը։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Հապա՛, և իմ նետիս զարկած եղնիկը։

ԷՄԻՐԸ— Քու նետի՞, դուն ինչացու ես։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Իմ նետս այնքան հանցավոր է, ինչքան քու նետը, էմի՛ր։

ԷՄԻՐԸ— (Բարկացած) Ըսե՞լդ ինչ է, ա շե՛շ. իմ նետս չէ՞ր, որ գլորեց ահագին կենդանին։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Վա՜հ, իհարկե՛, ի՞նչ ըսելու բան է, իմ նետը հո չէ՛ր։ Իմ նետս հիմար չէ ինծի պես, որ քու նետի գործին խառնվի։

ՀԱՋԻ— Վրայեն ալ կերանք խմորեղեն. ամենապատվական, բեթև, շերտ-շերտ, տակի հյութը մեղրի նման ծոր տալով։

ԿԱՐՃԼԻԿԸ— Հա՛յ, ափսո՛ս, ափսո՛ս...

ԻԲՐԱՀԻՄ— Վեր կանչեցինք խոհարարը, պարել տըվինք։ Հաջին իր ձեռքովը շերպետ հրամցուց. իսկ մեր առատաձեռն էմիրը երեք կյավուրի գյուղ նըվիրեց անոր՝ իրենց բոլոր եկամուտներովը. երե՛ք գյուղ։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Առաջին գյուղը անոր համար կդառնա փորը լեցուցած գառը. երկրորդ գյուղը՝ եղնիկի խորոված, իսկ երրորդ գյուղի կյավուրներն ալ հունցե, հունցե ու խմոր բանա իրեն համար։ Չէ՞ որ խեղճ մարդը ինքն ալ պետք է կշտանա։

ՀԱՋԻ— Ով որ ուրիշի փորը այսպես կշտացնել գիտե, արժանի է, որ իր փորն ալ կուշտ ըլլա։

ՇԵՇ ՀԱՍԱՆ— Սուրբ Ղուրանեն է քու բոլոր խոսքերդ, ո՛վ Հաջի։

ԻԲՐԱՀԻՄ— Եվ մինչև լույս խաղցուցինք չինկյաներին աղջիկը. շա՛տ քան կորուսիր։

ՀԱՋԻ— Օձ կնմանի շան աղջիկը։

## 3

ԾԱՌԱ ՄԸ— Պահլավունի Վահան իշխանը։

ԷՄԻՐԸ— Հա՛։ Թողե՛ք ինծի մինակ։ Ապտուլլա՛հ, նե՛րս հրամցուր։

**Մյուսները կքաշվին աջի դռնեն:**

ՀԱՋԻ— **(Երթալու ատեն)** Արժե՞, էմի՛ր, որ այսքան երես կուտաս այդ անհավատ հայուն։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Խելացի հովիվը իր շները լավ կնայի, հաջի՛, **(Ձախեն դուրս):**

## 4

**Էմիրը կտեղավորվի ծալլապատիկ: Ձախեն կմտնե Պահլավունի Վահան իշխանը, ետևեն Սաղաթել ու Ապտուլլահ: Իշխանը հիսունի մոտ առույգ ու խոհուն: Սաղաթել՝ անհանգիստ աչքերով, փոքրիկ, ալեխառն:**

ԻՇԽԱՆԸ— Ողջո՛ւյն իմ էմիրին։

ԷՄԻՐԸ— Առողջություն քեզի, իշխա՛ն։ Իսկ դու՞ն, ոսկիի տոպրա՛կ, դո՞ւն ինչպես ես։

ՍԱՂԱԹԵԼ— **(Խոր գլուխ տալով)** Մարդուս աչքը դուրս գա, քան անունը։ Եղած չեղածը բուռ մը դրամ է, ան ալ փեշքեշ իմ էմիրին։

ԷՄԻՐԸ— Չի՛ երևար։ Ո՞ւր է սինին։

ՍԱՂԱԹԵԼ— Պիտի բերեմ։

ԷՄԻՐԸ— Դեռ չտեսա՛նք։ Երեկ մոտս էր ձեր սևագլուխը, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Անիի եպիսկոպո՞սը։

ԷՄԻՐԸ— Թող չե՛ն տալու, որ մարդ քիչ մը հանգիստ օր վայլե։

ԻՇԽԱՆԸ— Այդպես է, էմի՛ր։ Ո՛ր սեմեն, որ ներս մտնե հոգևորականը իր փեշերը ժողված, հոնկե անպատճառ դուրս կելլե անհամություն մը։

ԷՄԻՐԸ— Կխնդրե՛, որ ետ առնեմ արհեստներու վրա դրած տուրքերու



վերջին հավելումը։ Իսկ դուն ինծի խորհո՛ւրդ տըվիր։ Կըսե՝ շատ ծանր է. մեջերնին, կըսե, կան, որ բոլորովին անոթի են։

ԻՇԽԱՆԸ— Հի՛ն պատմություն։ Տուրք ըսածդ միշտ ծանր կերևա վճարողին։

ՍԱՂԱԹԵԼ— Եվ քիչիկ մը անոթի ըլլալը վնաս չունի. անոթությունը հնարագետ արհեստ է։

ԷՄԻՐԸ— Կա ավելին. զորքերս թալաներ են եղեր չգիտեմ վարի որ գյուղերը. կարծես թե զինվոր ըսածդ պարտական է քաղցած պտտելու։ Չի ալ ամչնար՝ եկեր է վրաս գանգատի քանի մը հավի ու քանի մը չուլի համար։

ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ, էմիր, ժողովուրդ ըսածդ միշտ կտրտնջա, միշտ ալ բեռը շալակը առած քաշ կու տա. այդպես է անոր հնադարյան սովորությունը։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Հա՛, բայց պետք չէ մոռնան այն բացարիկ ապահովությունը, որ անոնք կվայլեն Շիրակի մեջ։ Շուտով երեք տարի պիտի ըլլա, որ կռիվ չէ եղած էմիրի հողերուն վրա, եթե չհաշվենք Քել Հասանի մանր-մունր արշավանքները։

ԷՄԻՐԸ— Իշխա՛ն, նշանակած տուրքերս պետք է վճարվին։

ԻՇԽԱՆԸ— Տուրքերը կվճարվին, էմիր։ Թող անպակաս մնա մեր վրայեն Մանուչեի տան հովանին։

ԷՄԻՐԸ— Սրտա՞նց կխոսիս։

ԻՇԽԱՆԸ— Այդ հարցումը պետք չէ տայիր։ Դուն գիտե՛ս, ես մարդ մըն եմ, որ կսիրեմ իշխելը։ Իսկ ով կուզե, որ խոնարհին իր առջևը, **(Խոնարհելով)** պետք է ինքը խոնարհիլ գիտնա իրմե ուժեղին առջևը։ Մանուչեի տունը բախտը ավելի բարձր է դրեր, քան իմ տունս։

ԷՄԻՐԸ— Եվ Մանուչեի տունը միշտ բարեկամ է եղեր քու տանդ։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Կտեսնես, որ էմիրը ոչինչ չըներ այս քաղաքին մեջ առանց քու խորհուրդդ առնելու։

ԻՇԽԱՆԸ— Ես միշտ պատրաստ իր ծառայության։

ԷՄԻՐԸ— Այս գիշեր հացի կուգաս ինծի։ Դո՛ւն ալ, Սաղաթե՛լ։ Եվ քու արծաթե սինին դեռ չտեսանք։ Ի՞նչ մեղքս պահեմ, հին արծաթեղենը շատ կսիրեմ։

ՍԱՂԱԹԵԼ— Գիտե՛մ։

ԷՄԻՐԸ— Որ գիտես՝ չմոռնաս։ Գուցե իրիկունը սինին հետդ բերես։ **(Դուրս աջեն: Ապտուլլահն ալ անոր ետևեն):**

## 5

ՍԱՂԱԹԵԼ— «Սաղաթե՛լ, բե՛ր, Սաղաթե՛լ, բերես»։ Կարծես Սաղաթելը հանք ունի։ Ուզածն ալ միայն սինի ըլլար. պարապ սինին կրնա՞մ տանիլ, գլխուս կզարնե. ինչո՞վ լեցընեմ, ուրկե՞ հանեմ ես այդքան դրամը։ Քամե՛ց, քամե՛ց, հոգիս հանեց։ Ցորնա՛ ձեր բոլորիդ արմատը, ուրկե՞ եկաք մեր գլխուն։ Ուրկե՞ եկան, իշխա՛ն, այս անիծածները մեր գլխուն, ուրիշ տեղ մը չկա՞ր աշխարհիս երեսին։

ԻՇԽԱՆԸ— (Խորհրդավոր) Համբերե՛, Սաղաթե՛լ, համբերե՛ քիչ մըն ալ։ Բե՛ր, այս մեկ սինին ալ բե՛ր, լեցուն բե՛ր։

ՍԱՂԱԹԵԼ— Բայց վստա՞հ ես մեր ուժին, իշխա՛ն։ Հետո քարը քարին վրա չեն թողներ։

ԻՇԽԱՆԸ— Մի՛ վախնար։ Դուն կճանչնաս ինծի։

ՍԱՂԱԹԵԼ— Գիտեմ, իշխա՛ն, զգույշ մարդ ես։

ԻՇԽԱՆԸ— Զորքերուն ո՛չ թիվը, ո՛չ որակը մեծ բան չեն արժեր։ Ես ձեռքիս տակ ունեմ հարյուր մը ընտիր մարդիկ։ Մարզպետն ալ ունի, և մյուսները։ Կմնա, որ արհեստավորները հանենք ոտքի։ Անոնց ալ հասած է դանակը ոսկորին. տուրքերու վերջին նոր հավելումը չափը լեցուց։ Եպիսկոպոսն ալ կաշխատի։

ՍԱՂԱԹԵԼ— Այո՛։

ԻՇԽԱՆԸ— Ամեն կասկածի նշույլ էմիրի մտքեն փարատելու համար որոշեր եմ քիչ մը ատեն հեռանամ քաղաքեն. ի՞նչ կըսես, Սաղաթել։ Կերթամ քեռանցս, Լոռիի լեռները, որսի։

ՍԱՂԱԹԵԼ— (Աչքերը կծկելով) Միևնույն ժամանակ վրաց Դավիթ թագավորին ալ մոտիկ։ Գուցե և զգույշ տեսակցություն մը։

ԻՇԽԱՆԸ— Եվ կարծեմ պետք պիտի ըլլա նվեր մը, սա՛նկ, արքայավայել։ Հը՞, Սաղաթե՛լ, ի՞նչ կըսես։

ՍԱՂԱԹԵԼ— (Նշանակալից խոր շունչ մը քաշելով) Հա՛, իհարկե՛ պետք պիտի ըլլա։ Ինչքա՞ն է ուզածդ։

ԻՇԽԱՆԸ— Դեռ կխոսինք։ Իսկ դուն հոս աստնք զբաղեցուր, մանավանդ Ապտուլլահը, որովհետև էմիրին աչքերը այդ քավթառի տափակ քթին երկու քովերն են զետեղված։

ՍԱՂԱԹԵԼ— Ուրեմն հույս ունի՞ս Դավիթի վրա։

ԻՇԽԱՆԸ— Վրացիք միշտ դանդաղ են, երբ գործը զորք ղրկելուն կուգա, ոչ թե խոսք։ Բայց... բայց ազատեմ պիտի, ազատեմ պիտի այս քաղաքը ինչ ալ որ ըլլա. կտրեմ պիտի թուրքերուն ոտքը այս հողերեն։ Ազատվինք սա զարշելի լուծեն. ազատ շունչ քաշենք մենք, քիչ մը ազատ շունչ քաշե և մեր խեղճ ժողովուրդը, նորեն վերջապես ամեն ինչ անցնի հայու ձեռքը։ Հերի՛ք է։

ՍԱՂԱԹԵԼ— Ինչքա՞ն սիրտ կհատցնես, Իշխա՛ն, այս քաղաքին վրա. չգիտեմ՝ իսկի արժե՞ն։

ԻՇԽԱՆԸ— Կկատարեմ իմ պարտքս։ Պապերս դարերով աշխատեր են այս ժողովրդի համար։ Չէ՞ որ Անին, իսկն ըսած, իմ քաղաքս է, ի՛մ։ Որքա՞ն Պահլավունի արյուն է թափված Անիի պարիսպներուն վրա։

ՍԱՂԱԹԵԼ— Հա՛, հապա՛։

ԻՇԽԱՆԸ— Քալե՛, քալե՛ երթանք։

ՍԱՂԱԹԵԼ— Ես դեռ պետք է տեսնեմ այս քավթառը։

ԻՇԽԱՆԸ— Վերջը ինծի կուգաս։ Կսպասեմ։ (Դուրս)

## 6

ՍԱՂԱԹԵԼ— Իհարկե որ կսպասես։ Եվ կըսե՝ Անին ի՛մն է։ Հիմա՞ր։ Անին ի՛մս է, ի՛մս։ Ես եմ Անիի միակ տերը։ Ի՞նչ եք որ դուք բոլորդ առանց ինծի, առանց իմ սինիիս։ Անիին տե՞րը կուզեք։ (Քննական շուրջը նայելեն ետքը՝ կամաց մը ծոցեն կհանե փոքրի բանալը)։ Ա՜յ, Անիին տերը, իշխանը, էմիրը. ա՜յ, աշխարհքի էմիրը։ Դուք կռվեցեք, կռվըտեցեք, խառնեցեք իրար զորք ու արհեստավոր, հայն ու թուրքը, մորթեցեք իրար, ջնջեցեք իրար։ Հարցնող ըլլա՝ որու՞ համար։ Ո՞վ է մեջտեղը շահողը։ Սա՜-ղա՜-թե՜-լը՜։ Անոնք կկարծեն՝ իրենց ծառան է Սաղաթելը, իրենց գործերը իրենց կթաւն կովը ու չեն տեսներ, որ Սաղաթելն է բոլորին խաղցընողը իր մատներուն վրա, էմիր, Իշխան ու Ապտուլլահ։ Ով կուզե ըլլա։ Սա-ղա-թե-լը...

ԱՊՏՈՒԼԼԱՀ— (Ձախի դռան մեջեն) Սա-ղա-թել։

ՍԱՂԱԹԵԼ— (Արագ բանալը պահելով, խեղճացած ու խոնարհ) Հա՛, քեզի կսպասեի. եկա՛, իսկո՛ւյն, խոնարհ ծառադ... (Դուրս)։

## 7

Ծակտի վարագույրը բափով ետ կերթա ու ներս կնետվի հարճը, բարմ ու բոփ գեղեցիկ աղջիկ մը, ետևեն էմիրի ավագ կինը. տարիքը առած, սնկուրված, լայն ու փարթամ նազուտներով. անոր ետևեն ալ կմտնե Այիշեն, ուրիշ հարճ մը, հազիվ 15 տարեկան, ոսկի մազերով:

Երկու հարճերն ալ ներարձակ են. իրենց զազարին փոքրիկ արախճի ոսկի բանվածքով. բավիչ բանկանք լայն բաց կրողնեն բեկրն ու կուրծքը. լայն վարդագույն վարտիք մինչև ոտուները. բազիկ ոտքերնուն ոսկի բանված մաշիկներ:

ԿԻՆԸ— (Գրգռված) Ո՞ւր կվազես, աս ո՞ւր, աս ո՞ւր նորեն. քեզի՛ կըսեմ, նորե՞ն էմիրին գանգատի։ Սըվոր քալվածքը նայեցեք, սըվոր նայվածքը։ Մելիք-Շահի աղջիկը ըլլա կարծես։ Այս տան տիրուհին ե՛ս եմ, դուն իմ սպրուկս ես ու սպասուհիս, աղեկ հասկցիր։ Որ մտեր ես էմիրի անկողինը՝ կկարծես մե՞ծ բան մըն ես դարձեր։ Մուխերուն ու մոխիրներուն մեջեն դուրս քաշված հասարակ հարճ մըն ես դուն ու կյավուրի մը ձգնածը։ Խելքդ գլուխդ ժողվե՛։ Եթե մյուս անգամ գանգատի ես ելեր էմիրին, կրքրքեմ միսերդ, մազերդ թել-թել կփետտեմ։ Ասիկա ականջիդ օղ շինե։ Դե՛, հիմա գնա՛ գանգատե նայիմ։ (Դուրս վարագույրի եզերքեն)։

ԱՅԻՇԵ— (Լեզու կհանե կնոջ ետևեն ու առաջ գալով) Քա՛, չըլլա թե սիրտդ կոտրես։ Նախանձեն է. պառավեր է ջատուկը ու նախանձեն կճաթի։ Ականջ մի՛ կախեր։ Եկո՛ւր, նստե։ Նայե՛, ի՛նչ զով է հոս։ Օխա՜յ, ի՛նչ լավ է հո՛ս։ (Թևերով երեսին հով կուտա կանոնավոր շարժումներով ու երազկոտ) Օխա՜յ, օխա՜յ, ա՜յ այսպե՛ս, այսպե՛ս, այսպես թևեր ունենայի ու բանայի, թափթափ տայի, սլանայի, վերանայի։ (Պտույտ գալով ինքն իր վրա ու ավազանին շուրջը) Ու պար գայի ու դառնայի ու դառնայի ու դառնայի ու դառնայի... (Կանգ առնելով աղջկան դեմ) Ա՜խ, երանի՜ թռչունի պես երկու հատ թև ունենայի։ Հը՞, լավ չէ՞ր ըլլար։

ՀԱՐՃԸ— Ինչու չէ։ Բայց վարի թթենիներուն ծայրը ալ չէր մնար հատ մը սև թութ։

ԱՅԻՇԵ— Հա, սև թութը շատ կսիրեմ. և պարելը։ Գիտե՞ս, էմիրը որ կկանչե, միշտ կուզե, որ պարեմ։

ՀԱՐՃԸ— Գեղեցիկ ես. թարմ ու ճկուն մարմին ունիս։

ԱՅԻՇԵ— Բայց էմիրի սիրականը դուն ես։ Չէ՛, չկարծես՝ կխանդեմ։ Ուրիշը որ ըլլար՝ կխանդեի, աչքերը կփորեի, բայց քեզի՝ ո՛չ։ (Կչոքի ընկերուհիին կից) Այս հարեմին մեջ կրողս տանին բոլորը. մեկը փքված, մյուսը փտտած ու բոլորը գազազած։ Քեզի կսիրեմ, սև թութի պես կսիրեմ. ինչո՞ւ կսիրեմ։ Հա՜յ թե թռչուն դառնայի, պարեի՛, պարեի՛, մեյ մըն ալ թևերս բանայի ու թը՜ռռ... թե կրնաս՝ բռնե։

ՀԱՐՃԸ— Ինչքա՜ն նման ես քրոջս, Այիշե՛. ան ալ քեզի պես ուրախ էր այդպես, անհոգ ու թռվռուն։ Ի՜նչ լավ բան է երեխա ըլլալը։

ԱՅԻՇԵ— Ես երեխա՞։

ՀԱՐՃԸ— Հապա ի՞նչ։

ԱՅԻՇԵ— Ե՞ս։ Իսկ ո՞ւր է հիմա քու պզտիկ քույրդ։

ՀԱՐՃԸ— (Գլուխը կախելով) Չգիտեմ։

ԱՅԻՇԵ— Թողիր տու՞նը։

ՀԱՐՃԸ— Ես տուն չունիմ։



ԱՅԻՇԵ— Ինչպե՞ս, անտու՞ն։

ՀԱՐՃԸ— (Հանկարծ) Այրեցի՛ն, մեր տունը, տեղը, ինչքը, ամեն ունեցածը։

ԱՅԻՇԵ— Ինչու՞։

ՀԱՐՃԸ— Հայրս դիմադրեց, ինծի թող տալ չէր ուզեր, մինչև ինկավ ինքը աչքերուս դեմը։

ԱՅԻՇԵ— Մա՜յր ալ չունիս։

ՀԱՐՃԸ— Վերջին անգամ տեսա մեր տան բոցերուն մեջեն, երբ էմիրի զինվորները ինծի դուրս կքաշեին։

ԱՅԻՇԵ— Խե՜ղճ։ Տե՛ս, այդ բոլորը չէր ըլլար, եթե մյուսլուման եղած ըլլայիք։ Ինչ լավ է, որ դուն մյուսլուման ես դարձեր։ Ես ալ անգամ մը այդպես մեծ հրդեհ եմ տեսեր։ Այրըվեցավ ամբողջ շուկան, ինչքա՜ն շենքեր։ Հրաշալի՜ բան է. այնպե՜ս գեղեցիկ էր, այնպե՜ս գեղեցիկ էր։ Կայծերը աստղերու պես կնետվեին վեր, հարյուրներ, հազարներ, էլի հազար, վերեն, վարեն, կողքերեն. ետքը կարծես երկնքեն կթափեի՛ն, կթափեի՛ն, ուղղակի կթափեին։

ՀԱՐՃԸ— (Սառած ու կարկամ խոսվածքով) Այո՛, երկընքեն։ Երկընքեն կթափեին։ Ուղղակի երկընքեն։

ԱՅԻՇԵ— (Բերկրանքով) Եվ բոցե՜րը, բոցե՜րը, որ խենթի պես կ՛ըր կցատկեին, կթեքվեին, կկռանային, կփաթթվեին իրարու և կպարեին, գիտե՞ս, անոնք ալ կպարեին, ի՜նչ կպարեին։

ՀԱՐՃԸ— (Նույն ճարացումով ու աչքերը բևեռած) Կպարեին. այո՛, կպարեին։ Եվ առաստաղը կճարճաթեր... գերանները կքակվեին... զենքերը կշաչեին... ու կպոռային այրըվողները. ա՜, ի՜նչ կպոռային։

ԱՅԻՇԵ— (Ոտքի ցատկելով) Է՜, խենթ բաներ մի՜ ըսեր, մի՛ վախցըներ ինծի։ Հրդեհը իմ ամենեն սիրած բաներես մեկն է։ Բոցերը բոլոր պատուհաններեն դուրս, բոցերը բոլոր դռներեն դուրս, կդառնան, հա՜, կդառնան։ Ա՜յ, եթե ես ալ կարենայի այդպես պարեմ էմիրին առջև, բոցերու պես պարեմ։ Ա՜յ, այսպե՜ս, տե՛ս, այսպե՜ս։ (Ինքն իր վրա քեֆվելով ու պարելով դեպի ճակտի վարագույրը) Պատուհաններեն դո՛ւրս ու վեր, ու դռներեն դո՜ւրս ու վեր, կդառնան, հա՜, կդառնա՜ն, դառնա՜ն... դառնա՜ն... դառնա՜ն... (Դուրս է ելած վարագույրեն)։

ՀԱՐՃԸ— (Լայն բացած աչքերը գամած է շատրվանի ցայտին, ծանր խոսվածքով) Բոցերը կդառնա՜ն, բոցե՜րը, բոցե՜րը... և բոցերուն առջևը... բոցերուն ետին... բոցերուն մեջը... բոցերուն մեջեն... բոցերուն մեջեն... ա՜հ... (Սարսափահար կծածկե հանկարծ աչքերը երկու ձեռքով ու կկծկվի ինքն իր վրա)։

9

ՊԱՌԱՎԸ— (Զգույշ ներս մտնելով ու մոտենալով անոր) Ա՛յ աղջի՛կ, Նորե՞ն։ Այդպես կծկըվե՞ր ես Նորե՞ն։

ՀԱՐՍԸ— (Կամաց կբարձրացնե գլուխը, քիչ մը կդիտե և հանկարծ կցատկե ոտքի ու կշտկվի ամբողջ հասակովը) Իսկ ա՛ն ըսավ... ըսավ՝ պիտի գա, ըսավ՝ դուրս պիտի գա Ազատ Մասիսի խորին խորքերեն։ ըսավ՝ պիտի գա Արտավազդը ու պիտի քանդե աշխարհքը։ Ան այդպե՛ս ըսավ. ան այդպես ըսավ։ Իսկ ինչպե՞ս պիտի քանդե. այրե՞ պիտի. ըսե՛, պիտի այրե՞։ Ա՛խ, ինչ լավ կըլլար՝ վառելով քանդեր, կրակ տար, վառեր այս տունն ու տեղը, բերդն ու հարեմը, հետն ալ իմ տերը։

ՊԱՌԱՎԸ— Լռե՛, հիմա՛ր աղջիկ, լռե՛։ Հոս պատերը ականջ ունին։

ՀԱՐՍԸ— Իսկ ան ըսա՛վ... ըսավ՝ գա պիտի Արտավազդը ու քանդե պիտի այս աշխարհը։ Եվ տեսնելու էիր, թե ինչպես կվառվեին իր աչքերը, երբ ան կխոսեր, հո՛ն, այն ահագին բազմության դիմաց։

ՊԱՌԱՎԸ— Թո՛ղ, մոռցի՛ր այդ Նաղաշը։

ՀԱՐՍԸ— Ես նորե՛ն տեսնել կուզեմ Նաղաշը, նորեն կուզեմ հասնի ականջիս իր խոսքը, իր ձայնը։

ՊԱՌԱՎԸ— Երբե՛ք. այն մեկ անգամվան քաշած դողս հերիք է ինծի։

ՀԱՐՍԸ— Տա՛ր նորեն։ Կըլլամ խելոք, կըլլամ զգույշ, չի՛ ճանչնար ոչ ոք։ Թող նորեն անգամ մը վրաս իյնան իր աչքերը. իր վառվող աչքերը, իր այրող, իր վառող աչքերը։ Այդ աչքերու բոցերուն մեջեն կնայի Արտավա՛զդը, այդ աչքերու բոցերուն մեջե՛ն պիտի գա Արտավա՛զդը այս անիծած աշխարհքը քանդելու։

ՊԱՌԱՎԸ— Ինչե՛ր կխոսիս, միամի՛տ աղջիկ, հերիք է. թո՛ղ քու Նաղաշն ու իր Արտավազդը. դեռ չէ՛ լրացած Աստըծու կամքը, դեռ չէ լրացած տանջանքի կյանքը, ու դարբինները դեռ կզարնեն, կզարնեն դարբինները ամեն կիրամուտքի կռանը սալին, որ ամրանան շղթաները Արտավազդի։ Թո՛ղ, աղջիկ, թող, դեռ շատ հեռու է աշխարհքի վերջը։

ՀԱՐՍԸ— (Գրգռված ու ցրված) Հա՛ կզարնեն դարբինները, ու կըզարնեն դարբինները կռանը սալին, կզարնեն սալին, շղթաներուն, շըղթաներուն... (Հանկարծ գետինը մատնանիշ և ուշադիր) Կլսե՞ս. կլսե՞ս, պառա՛վ, կլսե՞ս... (Կլսվի կանոնավոր կռանահարություն նախ աղոտ, հետզհետե որոշ)։

ՊԱՌԱՎԸ— Ի՞նչը. չեմ լսեր ոչինչ։

ՀԱՐՍԸ— Կզարնեն, ա՛խ, կզարնեն. չէ՞ որ այսօր կիրամուտք է.



հապա կիրամուտք է։ (Լալով) Կարծես հոգիիս կզարնեն... Ա՛խ, ինչո՞ւ կզարնեն, ինչո՛ւ կզարնեն...

Դանդաղ կծածկվի տեսարանը։ Իսկ կռանահարությունը կշարունակվի միշտ հետզհետե ավելի մոտենալով ու սաստկանալով, մինչև կբացվի հաջորդ տեսարանը։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԴԱՐԲՆՈՑ

Աջ կողմը լայն ու երկփեղկ դուռն է դեպի ներս բացված. ձախ կողմը քէֆ դիրքով հնոցն ու փուքսը։ Ճակտի պատին վրա փոքրիկ քառակուսի պատուհան մը։ Դարբնոցի կեդրոնը սալն է։ Ամեն կողմ շինված ու շինվելիք երկաթեղեններ, ինչպես և գործիք ու կտորտանք։

1

Դարբինը երեսունի մոտ առույժ, մորվեղ ու մուրի մեջ կորած։ Բռնած Ա ունելիով շիկացած երկաթ մը և աշկերտին հետ դեմ-դեմի՝ կանոնավոր հարվածներ կիջեցնե։

Հայրը նստած է գետին. պատին տակ, կռնակը տված դռան փեղկին. կույտ մը մեխ դիզած է կողքը, որոնց ծայրերն ու գլուխները կխարտցե, կնետե մյուս կողմի կույտին վրա։ Կաշխատի չափազանց դանդաղ շարժումով մը, երբեմն անշարժ է, կարծես կնիրհե։ Խուլ է։

Դռան մեջ կերևա Դանիելը, ալեխառն մարդ մը, զինավանառի պաշտոնյա. իր բոլոր շարժումներուն ու խոսվածքին մեջ վախկոտ ու վարանոտ բան մը ունի։

ԴԱՆԻԵԼ— (Սեմեն) Բարի հաջողո՛ւմ։ (Ներս մտնելով) Բարի հաջողում, վարպե՛տ։ (Քիչ մը սպասելեն ետքը) Բարև կուտամ, ա՛յ մարդ, պատասխան չտա՞ս։

ԴԱՐԲԻՆԸ— Զոռ ու ցա՛վ, ա՛յ քեզի պատասխան։ (Մեծած երկաթը կնետե ջուրը)։

ԴԱՆԻԵԼ— Սա մարդավարությո՞ւն է։

ԴԱՐԲԻՆԸ— Մարդավարությո՞ւն, հորդ ողորմի. և որու՞ հետ։ Մեյ մը քեզի՛, մեյ մըն ալ տիրո՛ջդ։ Եվ ինչու՞ պիտի ըլլամ մարդավարի. ո՞վ է եղեր իմ երեսիս մարդավարի։

ԴԱՆԻԵԼ— Խաչ որ, նորեն ձիդ հակառակ ես հեծեր այսօր։ Դանակները պատրա՞ստ են։

ԴԱՐԲԻՆԸ— Հրամանք ես, պատրաստ են։ (Ոտքով կզարնե գետինը դրված լիքը տոպրակի մը) Ա՜յ, պատիվ ըրե, անգամ մը այդ պատվական մեջքդ ծռե՛ ու տե՛ս. ի՜նչ ամուր ու ծայրը սուր։ Ա՛ռ, վերցո՜ւր, տա՛ր տիրոջդ խանութը. հագցուցե՜ք կոթերը, սրեցե՛ք, սրեցե՛ք բերանը ու տարեք ծախեցեք թուրքին, զորքին, ավազակին և ձեր ոսկին դիզեցեք։ Մինչև որ օր մըն ալ անոնք գան, ձեզմե գնած դանակները, այդ իմ կըռած սուր-սուր դանակները, կոխեն ձեր կողը, կոխեն ձեր փորը, խլեն ու տանին ձեր բոլոր դիզածը։ Ա՜յ, մեկ Աստված տա, է՛, այդ ուրախ օրը, ի՜նչ քեֆ եմ ընելու։

ԴԱՆԻԵԼ— Հիմա այդ խոսքդ մարդու վայե՞լ կատակ է։

ԴԱՐԲԻՆԸ— Տո՛, ի՜նչ կատակ։ Երդում եմ տըվեր, այդ օրը որ գա, կավ մը գինի եմ կոնծելու քու պարոնիդ լույս հիշատակին, կավի տակի մրուրն ալ քու մութ հիշատակին։

ԴԱՆԻԵԼ— Ավա՛ղ, խաչ որ, ալ ոտքս քու դարբնոցը չեմ դներ։

ԴԱՐԲԻՆԸ— Հապա թե մարդ ես։

ԴԱՆԻԵԼ— Տես, է՛, ըսես ինքը ըլլա մեզի հաց տվողը։

ԴԱՐԲԻՆԸ— Ձեր տված հացը ձեր գլուխն ուտե։

ԴԱՆԻԵԼ— Վա՜յ։

ԴԱՐԲԻՆԸ— Կըսե՝ դարբնոցս չէ գալու։ Կուզա՛ս, կուզա՛ս։ Ո՞նց կապրիք դուք, ո՞նց առանց իմ ձեռքիս աշխատանքին։

ԴԱՆԻԵԼ— Այդ մեկը իրավ է։ Բնությունդ շա՛տ անպիտան, լեզուդ ա՛լ ավելի, բայց պատվական է ձեռքիդ աշխատանքը։

ԴԱՐԲԻՆԸ— Կուզա՛ս, կուզա՛ս։ Ո՞նց կապրիք դուք, ո՞նց, առանց իմ քրտինքս ծծելու։

ԴԱՆԻԵԼ— Վա՜հ, ի՜նչ է եղեր քեզի այսօր, ա մա՛րդ։

ԴԱՐԲԻՆԸ— Հայդե՜, հայդե՜, փեշերդ հավաքե, գնա՛ պարոնիդ ինծմե շատ բարև ըրե ու իրեն այսպես ըսե. կուզա՛ս, կուզա՛ս, ըսե՛. ո՞նց կապրիս, ըսե, առանց դարբին Ավագի քրտինքը ծծելու։ Չմոռնա՛ս, այդպես ըսե՛։ (Աշկերտին, ու ոտքը զարնելով գետնի տոպրակին) Վերցո՛ւր, շան ձագ, քաշ տուր տանենք։

ԴԱՆԻԵԼ— Մարդ չգիտե ինչպես խոսի քեզի հետ. խաչ ո՛ր չգիտե։ (Աշկերտի հետ դուրս)։

ԴԱՐԲԻՆԸ— (Ցուցամատով սրբելով ճակտի քրտինքը) Կուզա՛ս, կուզա՛ս։ Չէ՞ որ ոսկի է, ոսկի՛, ա՜յ այս ամեն մեկ կաթիլը ձեզի համար, հատուկ ձեզի՛ համար, մաքուր, խատակ ոսկի։ Ա՜խ ձեր հերը...

## 2

Կմտնե ջուլհակը ու տանու սովոր կմոտենա շիտակ դարբինին։ Անոր տարիքեն է, բայց խիստ նիհար, դեղնած և ուսերը դուրս ցցված։

ՋՈՒԼՀԱԿԸ— Ա՜յ տղա՛, հերիք է։

ԴԱՐԲԻՆԸ— Ը՛, խեր ըլլա, ջուլհա՛կ եղբայր, դո՞ւն ես սողացեր մանոցիդ փոսեն։ Բարո՛վ եկար։

ՋՈՒԼՀԱԿԸ— Ա՜յ տղա՛, լավ չէ՛։ Նստեր եմ, կբանիմ այդ անտեր պատին ետևը, կբանիմ ու կլսեմ. լավ չէ, Ավա՛գ, այդպես կարելի չէ։ Կա հարուստ, կա աղքատ. ուժեղը կա, խեղճը կա, ես ու դո՞ւն պիտի փոխենք աշխարհքի կարգը։ Վերջը-վերջը գլխուդ փորձանք մըն ալ կբերես։ Անոնք ալ մարդ են, կկատղին։

ԴԱՐԲԻՆԸ— Ասկե վատթարը ի՜նչ է ըլլալու։ Մութե մութ մուր ու քրտինքի մեջ, զարկ հա՛ զարկ այս անիծած չորս պատին ետևը։ Թե ի՜նչ է. պիտի պահես երկու պառավ, մեկը կողինքին, մյուսն ալ, ա՜յ, գետնին, պիտի կերակրես անտեր մնալու կնիկ մը ու յոթը երեխա. հա՜, հա՜, հա՜, յո՜թը երեխա։ Կըսե՝ փորձանք. ասկե ավելի փորձա՞նք։

ՋՈՒԼՀԱԿԸ— Մեղա՜ Աստծու, մեղա՜ Աստծու։

ԴԱՐԲԻՆԸ— (Հանկարծ կխլե կռանը սալին վրայեն ու կնետե անկին) Կշտացեր եմ այս բոլորեն. սա կյանք չէ. սա գերություն է, գերություն։

ՋՈՒԼՀԱԿԸ— «Ճակտիդ քրտինքովը ուտես քու հացը». այդպես է գրված, այսպես է կարգը։

ԴԱՐԲԻՆԸ— Հա՛, ինծի ու քեզի նման էշերու համար։ Այդպես կարգ դնողը թող այնպես դըներ, որ իմ աշխատանքս օր ու ցերեկով չգային ու չխլեին շունն ու գայլերը։ Թո՛ղ ամենուն քրտինքը մնար իրեն։

ՋՈՒԼՀԱԿԸ— Կտեսնեմ, իզուր է քեզի հետ խոսիլը։ Այդ մարդը քու գլուխդ ալ շուռ է տըվեր։ Քիչ ման եկուր, քի՛չ, այդ Նաղաշին ետևեն։

ԴԱՐԲԻՆԸ— Ինչո՞ւ, սուտ է ըսածը։ Անիծված են այս աշխարհքի բոլոր կարգերը։ Անե՛ծք կա մեր կյանքին վրա։

## 3

Կմտնեն ժամկոչը՝ միջին տարիքի ու կաղ, ներկարարը՝ երեսունի չուրջ, և երիտասարդ դարբին մը։ Երեքն ալ հուզված են ու կխոսին իրար բերնե խլելով։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Ինչո՞ւ չեկար, վարպե՛տ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— (Իր կապույտ ձեռքը օդին մեջ շարժելով) Ափսո՜ս, վարպե՛տ, ափսո՜ս։

ԺԱՄԿՈՉԸ— Այսօր պետք է եկած ըլլայիր։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Այսօրվան պես դեռ խոսած չուներ։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— (Արտասանելով) Մինչև այսօր, կըսե, խոսած էի ձեզի կես ճշմարտությունը։ Իմ խոսքերուս մեջ Արտավազդը ոչնչացումի հույսն էր, կըսե, վերջին մխիթարանքը անճար խոնարհ ժողովուրդին։ Արտավազդի գալը, կըսե, հանուր ոխ մըն էր, անուժ վրեժ մը ձեր բոլորի կրած անչափ տառապանքին։ Բայց հասուն է արդեն օրը և հասուն են արդեն ձեր ականջները։ Այսօր, կըսե, ձեզի տալ կուզեմ ամբողջ ճշմարտությունը։ Ո՛չ հույս է, ո՛չ ոխ, այլ... կռիվ է Արտավազդը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Դարեր ու դարեր ձեզի խաբեր են, կըսե, հավտացուցեր են, թե Արտավազդը եթե դուրս գա, քանդե պիտի Աստծու շինած աշխարհը. ձեր ուսերուն հեծնողներն են, կըսե, հնարեր այդ սուտը, որ ավելի պինդ հեծնեն ու ավելի երկար նստին ձեր կռնակը։

ԺԱՄԿՈՉԸ— Արտավազդը, այո՛, գա պիտի ու քանդե պիտի, կըսե, բայց ո՞ր աշխարհը։ Մարդու շինածը. կողոպուտի ու բռնության ու գոզերու աշխարհը։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Տիրողներու, հարուստներու ու թուրքերու աշխարհը։

ԺԱՄԿՈՉԸ— Պիտի քանդե, կըսե, ու պիտի գան նոր օրեր, նոր ժամանակ. արդարություն, հավասարություն բոլորի համար։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Մարդու ու մարդու մեջ խտրություն պիտի չըլլա։

ԺԱՄԿՈՉԸ— Արտավազդի շղթաներուն հետ պիտի խորտակվին ժողովուրդի բոլոր շղթաները։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Բայց այդ օրերը, կըսե, իրենք իրենց չեն գալու։ Կռիվ է Արտավազդը։ Այդ օրերը, կըսե, ձեր ձեռքով են գալու։ Այդ օրերը, կըսե, դուք եք բերելու, ձեր կամքովը, ձեր զենքովը։ Դուք պիտի խորտակեք Արտավազդի շղթաները, դուք պիտի ազատեք Արտավազդը։ Դարբի՛ն, դո՛ւն, դո՛ւն պիտի ազատես Արտավազդը։

ԴԱՐԲԻՆԸ— (Սաստիկ հուզված) Ե՞ս... ե՞ս... ես պիտի ազատե՞մ. ո՞վ ըսավ։

ԺԱՄԿՈՉԸ— Ի՛նքը։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Ի՛նքը, ինքը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Այսօր կիրամուտք է, ըսավ. գացե՛ք ըսեք ձեր դարբիններուն, որ դարբնոցները փակելե առաջ ալ թող չզարնե՛ն կռանը պարապ սալին, ալ չիջեցնե՛ն Արտավազդի զարկը, ալ չամրացնե՛ն անոր մաշած շղթաները։



ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Եվ թող բոլո՛րը, բոլո՛րը հետևին ձեր դարբիններու օրինակին։

ԺԱՄԿՈՉԸ— Կյանքի բոլոր տեսակի դարբինները, բոլոր կյանքի դարբինները։ Կռիվ է Արտավազդը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Մի՛, մի՛ ամրացընեք, կըսե, ձեր շղթաները, մի՛ աշխատիք ուրիշի հաշվին, ձեր աշխատանքը մի՛ տաք ուրիշին. ո՛չ հարկ տվեք, ո՛չ տուրք, ո՛չ մարս, ո՛չ տասանորդ. մի՛ թողնեք, որ կողոպտեն ձեզի. ձեր կռանները իջեցուցեք անոնց գլխուն, որոնք իրենց ձեռքը կերկարեն ձեր աշխատանքին։

ԺԱՄԿՈՉԸ— Անիծված են անոնք, որ նստեր են, կըսե, ու կլափեն ձեր արյուն քրտինքը իրենց մեծ-մեծ պալատներուն մեջ և այդ անհավատ անզգը, որ թառեր է հոն միջնաբերդի ժայռերուն ետին ու կճզմե ամեն ինչ ու ամենքին։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Ալ չես զարներ, վարպե՛տ, կիրամուտքի զարկը։

ՋՈՒԼՀԱԿԸ— Կզարնե՛ս, կզարնե՛ս, պիտի զարնե՛ս։ Մի՛ մոռնար, Ավա՛գ, հոր անեծքը կա Արտավազդի վրա, մեր հայրերու անեծքը։ Ով կռանը չիջեցնե կիրամուտքին, անոր գլխուն կիյնա այդ անեծքը և անոր գլխուն և անոր աշխարհին, մեր բոլորի գլխուն։ Դուն մեր դարբինն ես, իրավունք չունիս, դուն ծեծես պիտի։ Տե՛ս, ըսի քեզի՝ քու պարտքը քու երեսիդ. դուն չզարնելու իրավունք չունիս։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Իսկ ո՞վ ես դուն. դո՞ւն ինչ իրավունք ունիս այդ լեզվով խոսելու։

ՋՈՒԼՀԱԿԸ— Ես ձեր ջուլհակն եմ, մեր քաղաքի խեղճ ու անճար ջուլհակը. սև օր ու սև ցավ շատ եմ տեսեր, լավ սերտած եմ ուժեղներուն բարկությունը, հարուստներուն խստությունը ու թուրքերուն պազանությունը։ Ես ձեր ջուլհակն եմ, ձեր քաղաքի խեղճ ու անճար ջուլհակը։ Դուք բոլորդ ձեր Նաղաշի տաք խոսքերուն կհավտաք, իսկ ես իմ պաղ տեսածիս ու պաղ ապրածիս։

ԺԱՄԿՈՉԸ— Աղե՛կ. վարպետը լսեց քեզի ալ, մեզի ալ, թող վճռե՛։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Գարբինը թող վճռե՛։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Ավա՛գ, բոլոր դարբիններս կնայինք քեզի ու քու տալիք օրինակիդ, խոսե՛։

ԴԱՐԲԻՆԸ— (Վերցնե մեծ կռանը, կկենա վայրկյան մը լուռ, ետքը կտրուկ ու հանդիսավոր) Թող չորնա իմ այս աջ ձեռքս և թող Արտավազդի անեծքը իջնե գլխուս, եթե այս սալին վրա մյուս անգամ իջեցնեմ Արտավազդի զարկը։

Ամենքը կեցած են լուռ ու անշարժ, երբ դարբնի ետևեն հայրը, որ զարմանքով ելած է ոտքի ու կդիտե, կամաց մը ետևեն ձեռքը կդնէ դարբնի ուսին։ Դարբինը կցնցվի, բայց գլուխը չի դարձներ։ Ծանր շարժումով կքաշվի ետ, հայր ու որդի պահ մը կդիտեն իրար, հայրը հարցական, որդին հանցանքի մեջ բռնվածի պես ու հոխորդ։

ՀԱՅՐԸ— (Ձայնը խորքեն) *Աս ի՞նչ է, որդի՛, ի՞նչ առուտուր է։ Ի՞նչ կխոսիք։ Շատ կխոսիք։ Ո՛ւշ է, ելի՛ր. կիրամուտք իրիկուն է։ Փակե՛ դարբնոցը, ու երթանք։ Մնացածը դուրսը կխոսիք։ Ի՞նչ կխոսիք։ Շատ կխոսիք։ Կիրամուտք իրիկուն է։*

Բոլորը տեսակ մը անհարմար կնային իրար։

ԴԱՐԲԻՆԸ— (Շատ բարձր ու անբնական խոսվածքով) *Հա՛, աբի՛, հա՛, երթա՛նք, ո՛ւշ է։ Հանե՛ գոգնոցդ։* (Ինքն ալ կուզե իրը հանե)։

ՀԱՅՐԸ— (Արգիլելով) *Կեցիր. ու՞ր կհանես։ Չծեծե՞ս սալը. կիրամուտք իրիկուն է. մոռցա՞ր։*

ԴԱՐԲԻՆԸ— *Չեմ մոռցե՛ր, չէ՛։*

ՀԱՅՐԸ— *Ի՞նչ։*

ԴԱՐԲԻՆԸ— *Հերի՛ք է, աբի՛, արդեն այնքա՛ն, այնքա՛ն ծեծեր ես։*

ՀԱՅՐԸ— *Ի՞նչ կըսես. ծեսե՞ր է՝ կըսես։ Ծես է, հապա, սուրբ ու հին ծես. նո՞ր կհարցնես։* (Մյուսներուն) *Կհիշեմ, առաջ պապս էր. վերջը հայրս. վերջը ես. հիմա ալ Ավագս, մենք, բոլորս ալ այս դարբնոցին մեջ, աս կեցած տեղը. դեռ կիրամուտք իրիկուն չէ անցած, որ այս դարբնոցը գոցվի առանց այդ հին ծեսին, մեր պապերեն եկած այդ խոր ու սուրբ ծեսին։ Եվ գիտե՞ք ի՛նչ մեծ խորհուրդ կա անոր մեջ, գիտե՞ք ինչ մե՛ծ պաշտոն է դրված մեր վզին։ Մենք ենք պահողը աշխարհքը իր սյուներուն վրա. մենք ենք, որ շղթաներու տակ կպահենք անհնազանդ որդին, այն ըմբոստ հոգին, որ ճկվիլ չուզեր Աստծու կամքին։ Քանի դարբնոցը կա, Աստծու հրամանքով՝ վերջ չկա աշխարհին, կործանում չկա։ Թող շեն մնա այս դարբնոցը ու հաստատուն մեր սալը. ամո՛ւր ըլլա, որդի՛, քու կուռդ, ամո՛ւր կռանդ։ Զա՛րկ, որդի՛, զա՛րկ սալը, երթա՛նք, կիրամուտք իրիկուն է, ուշ է։*

ԴԱՐԲԻՆԸ— *Ի՞նչ ընեմ. ի՞նչ ըսեմ իրեն, ի՞նչ հասկցնեմ այս խուլ հալևորին. ալ աշխարհքեն ոչինչ չի լսեր. կլսե միայն ինքը իր ըսածը, իր հին լսածը, իր հին խոսածը։ Այս խուլ հալևորին ես ի՞նչ ըսեմ։*

ՀԱՅՐԸ— *Դե՛, պրծիր, երկար ըրի՛ր։*

ԴԱՐԲԻՆԸ— (Ձեռքի կտրուկ շարժումով) *Ո՛չ, աբի՛։*

ՀԱՅՐԸ— *Վա՜հ...* (Քննական կնայի որդուն ու մյուսներուն)։ *Դուն... դուն... զարնել չե՞ս ուզեր։ Չե՞ս ուզեր։ Հը՞։ Զարնել չե՞ս ուզեր։*



ԴԱՐԲԻՆԸ— (Գլխովը բացասական նշան)։

ՀԱՅՐԸ— (Քայլ մը ետ երթալով) *Ա՜յ թե ի՞նչ կխոսիք այստեղ այնքան երկա՜ր, երկա՜ր։ Արտավազդի զարկը տալ չի՜ ուզեր։ Եվ ինչու՞։ Բայց ե՛ս, ե՛ս դեռ չեմ իջեր գերեզման, դեռ տերը ե՛ս եմ այս դարբնոցին. քանի շունչս բերանս է՝ ես չեմ թողներ գիծ մը անգամ շեղիս մեր հին կարգերեն։ Դեռ ես կամ. դեռ ես եմ տերը իմ դարբնոցիս։ Ելի՛ր դուրս, բոլո՛րդ, դուրս...*

Ամենքը անհարմար կուղղվին դուրս, բացի դարբինեն։

ՀԱՅՐԸ— *Ելի՛ր դուն ալ, ելի՛ր դո՛ւրս։ Ե՛ս պիտի գոցեմ այսօր իմ դարբնոցս։ Ես, ես պիտի գոցեմ։ Քեզի կըսեմ՝ ելիր դո՛ւրս։*

ԴԱՐԲԻՆԸ— *Աղե՛կ, զա՛րկ. այսքա՜ն տարիներ շատ մեծ խեր ես տեսեր, զա՛րկ։* (Բարկությամբ կնետե գոգնոցը և դուրս)։

4

ՀԱՅՐԸ— (Մինակ է։ Դժվարով կկռանա, կվերցնե կռանը, կհանե գդակը, ջերմեռանդ դիրքով կնայի վեր ու դանդաղ կզարնե սալին երեք անգամ) *Թող ամրանա՛ն Արտավազդի շղթաները, թող ամրանա՛ն անիծվածի շղթաները, թող ամրանա՛ն ավերիչի շղթաները։* (Կհենե կամաց կռանը սալին, կհանե գոգնոցը, կգոցե ճակտի պզտիկ պատուհանին տախտակը, վրա կբերե դռան լայն փեղկերը ու կելլե դուրս)։

5

Կլսվի կողպեքի կրկնակի դարձը։ Լուռ է և մութ։ Քիչ մը ետքը շատ հեռուն, խորքը կերևա նախ աղոտ լույսի կետ մը, վերջը ուրիշ մը, նորեն ուրիշ մը, շատ լույսեր։ Հանքի լապտերներ են, որ առաջ կշարժվին։ Եվ հետզհետե կորոշվի թզուկներու կերպարանքը, որոնք խումբ-խումբ առաջ կուգան անձայն ու անթիվ։

Թզուկները՝ տարբեր չափի ու տարիքի՝ բոլորն ալ խիտ մազերով ու մորուքով. իբրև հագուստ լայն կաշի գոգնոց մը միայն, որ ամբողջ մարմինը կըփաթթե՝ ազատ թողնելով թևերն ու ոտքերը։ Բոլորի ձեռքը գործիք մը կա՝ քլունկ, կռան, բահ, լինգ կամ հանքի լապտեր, որոնց լույսովը հետզհետե կլուսավորվի տեսարանը։

Չքացած է դարբնոցի ճակտի պատը իր լուսամուտով։ Խորդուբորդ և ստալակտիտ առաստաղով խոռունկ քարայրի մը երկար անցքն է, որ դեպի խորքը կամաց-կամաց կիջնե վար, իսկ դեպի առաջ կուգա կբացվի դարբնոցի մեջ։

ԹԶՈՒԿՆԵՐԸ— (Դեռ խորքեն)
Թողե՛ք, թողե՛ք,
թողե՛ք հանքը,
աշխատանքը,
ու դուրս եկե՛ք
երկրի փորեն,
խորեն, հորեն,
բյուր ոլորեն,
նեղ խավերեն,
հոծ խավարեն,
սև ակներեն,
երակներեն,
կրակներեն,
խորեն, հորեն,
երկրի փորեն.
պահ մը ուղղե՛նք
թիկունքները,
դիմավորե՛նք
նորեկները։

Խռնված են դարբնոց. լռություն։

ՀՆԱԳԱՐՅԱՆ ԹԶՈՒԿԸ— (Աչքը դնելով դարբնոցի սալին)։
Լապտերները մոտ։
Ողջո՜ւյն ու կարո՜տ
մեր նոր աճմունքին,
նոր կյանքի մուտքին,
սուրբ կիրամուտքին,
սուրբ կիրամուտքին։

Ամեն կողմե լապտերները վրա են բերած։ Սալին ոտքը իրարու կծկտած երեք փոքրիկ թզուկներ՝ ծնունդը դարբինի երեք զարկերուն։

ԹԶՈՒԿ ՄԸ— Ա՜խ, ի՜նչ խարտյա՜շ,
ինչպե՜ս մատղա՜շ,
և ի՜նչ քնքո՜ւշ։
ՈՒՐԻՇ ՄԸ— Բայց և ի՜նչ ուժ.
նայե թևքին,
նայե՛ հևքին։
Ձեռք տուր ափի՛ն,
թող սթափին։



ԵՐՐՈՐԴ ՄԸ— Այ նորե՛կ,
զարթի՛ր քունեդ
աներեկ։
Դո՜ւրս հին հունեդ.
եկո՛ւր կյանքի,
աշխատանքի։
ՉՈՐՐՈՐԴԸ— Թիզ մը, թիզ մը, թիզ ու կես,
ուղիղ երեք թիզ ու կես,
սա ի՜նչ հսկա թզուկ ես։
ՀՆԱԳԱՐՅԱՆ ԹԶՈՒԿԸ— Եկեր եք բարո՛վ,
եկեր եք ոլոր,
ձիգ ճանապարհով։
Մի՛ նայիք մոլոր,
եղբայր ե՛նք բոլոր։
ԲՈԼՈՐԸ— Մենք բոլորըս, բոլորըս,
դարբնի զարկեն մզուկներ,
մենք բոլորըս, բոլորըս,
կյանքի դևին թզուկներ։
ԱՋ ԽՈՒՄԲԵՆ ՄԵԿԸ— Նորերը գան մե՛ր խմբակին.
ուժ տանք լինկին ու քլունկին,
ծակենք հողը և ընդերքեն,
խորքի քաոս հազար բերքեն
հանենք մարդուն դեղին ոսկի,
թույնն ու դավը ներս սողոսկի։
ԱՄԲՈՂՋ ԱՋ ԽՈՒՄԲԸ— Մարդուն բուռ-բուռ դեղին ոսկի,
թույնն ու դավը ներս սողոսկի։
ՁԱԽ ԽՈՒՄԲԵՆ ՄԵԿԸ— Թող գան մեզի՛. մատիկ-մատիկ
ժողվե՛նք գույն-գույն քարի հատիկ,
լալ ու հակինթ, զմրուխտ, ակաթ,
լազուր, սուտակ ու ադամանդ,
շարե՛նք մարդու մատին, թևքին,
ծանր թագին, հանդերձանքին,
քարե շղթա վիզ ու լանջին,
և՛ ականջին, և՛ իր խղճին,
քարե՛նք պատենք այդ անդունդը,
մուտք չունենա այնտեղ գութը։
ԱՄԲՈՂՋ ՁԱԽ ԽՈՒՄԲԸ— Քարենք պատենք մարդ անդունդը,
մուտք չունենա այնտեղ գութը։

ԽԵՌ ԹՋՈՒԿ ՄԸ— Երկրի ծոցին մեջ,
գոց ու հոծին մեջ,
ես մութ կզանձեմ,
խավար կհունցեմ,
մածուծիկ խավար,
աղջամուղջ անմար,
մտքերու համար,
պալատի կամար.
խրճիթի հարմար։
Ո՞վ կուգա ինծի
խավարի հունցի։
ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ՄԸ— Ո՛չ, ո՛չ անոր, մեզի՛ հետ։
ՆԱԽՈՐԴԸ— Շատ մի՛ խոսիր, քաշվե՛ ետ։
ՀՆԱԴԱՐՅԱՆ ԹՋՈՒԿԸ— Ավելորդ է կանգն ու վեճը մեր մեջը։
Մենք բոլորըս, բոլորըս,
կանչըված ենք կռելու,
Արտավազդի շղթաները
կռանելու, Նորելու։
ԽՈՐՔԻ ԽՈՒՄԲԵՆ ՄԵԿԸ— Բայց մեր գունդը
Նոր սերունդը։
Որ երթանք, տանք,
երկաթ տանք
մարդուն.
մարդիկ արթուն,
տի՛նկ-տանկ, տի՛նկ-տանկ,
դարբնեն սուրը պողպատի,
կարմիր արյունը ոթի։
ՆՈՒՅՆ ԽՈՒՄԲԵՆ ՈՒՐԻՇ ՄԸ— Երթա՛նք տա՛նք,
երկաթ տանք
մարդուն.
մարդիկ արթուն,
տի՛նկ-տանկ, տի՛նկ-տանկ,
դարբնեն իրար կուռ շղթան,
նիք ու վանդակ ու զընդան։
ԱՄԲՈՂՋ ԽՈՐՔԻ ԽՈՒՄԲԸ— Տի՛նկ-տանկ, տի՛նկ-տանկ...
ՀՆԱԴԱՐՅԱՆ ԹՋՈՒԿԸ— (Հանկարծ ու խիստ)
Կեցե՛ք, կեցե՛ք,



վե՛րջ աղմուկին։
Խոնարհեցե՛ք
մինչև գետին։
Կըզզամ մոտ է
Երկրի որդին.
Ինք՝ մեր տերը,
մե՛նք ճորտերը։
Կըզզամ հոտ է.
մեր մոտերը,
կյանքի դևը,
Երկրի որդին։
Խոնարհեցե՛ք
մինչև գետին։
ԲՈԼՈՐԸ— (Խոնարհելով) Ի՛նք՝ մեր տերը,
...՛նք ճորտերը։

## 6

Կլավի ուժգին ցնցում, կճեղքվի գետինը, ուրկե առատ պայծառ-կարմիր լույս մը կողողե տեսարանը։ Քարայրի բոլոր խորդուբորդ պատերը կվառին գույնզգույն քարերու ու ճաքերու փայլկտուքովը կարմիր լույսին տակ, ծիածանի բոլոր խաղերովը։

Հատակի ճեղքեն, լույսի մեջեն ծանր դուրս կուգա Կյանքի դևը։

Ճկուն ու սլացիկ մարմինը կաղապարված է նուրբ ցանցե վերտին մեջ։ Բաց է միայն դժգույն դեմքը, որու դուրս երկարող սուր քիթն ու սուր ծնոտը խորամանկ ու գիշատիչ արտահայտություն մը կուտան իր առնական գեղեցիկ կերպարանքին։ Գլխուն երկաթե սաղավարտ։ Ձեռքին երկար նիզակ։ Ցանցե վերտին վրայեն նետած է կես մը ուսին, կես մը թևին ու մարմնին՝ երկար ու լայն ծիրանի, որուն փեշերը ինկած կմնան ճեղքի կարմրության մեջ։

ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— Ե՛ս եմ տերը։ Ե՛ս եմ միակ տերը կյանքին։ Ես եմ, որ կիշխեմ ամեն, ամեն տեղ, ուր որ կյանքը կխլրտի. օդի ոլորտներուն մեջ, ծովուն հատակը, գեճ հողին վրա, մութ գետնին տակը, ամեն, ամեն տեղ. ուր որ կյանքը կսողա, ուր որ կյանքը կլողա, ուր որ կյանքը կթռչի, ուր որ կյանքը կկառչի, ե՛ս եմ, ե՛ս եմ, որ կիշխեմ։ Ե՛ս եմ միակ տերը կյանքին։

ՀՆԱԴԱՐՅԱՆ ԹՋՈՒԿԸ— (Խոնարհ)
Հոգին ամեն մաշկի տա..,
քու կամքին է հպատակ,

*քու պատվերն է, որ արդար*
*կիշխե կյանքին դարեդար։*
*Ըսիր՝*
*Թույլը սնունդ հզորին,*
*մեկը ընդդեմ բոլորին,*
*ամեն մեկը ի՛ր փորին,*
*ի՛ր սերունդի որկորին։*

*ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— Ե՛ս եմ կյանքի արարիչը, կյանքի ծնողն ու վարիչը։ Ես եմ ա՛կը կենդանական, արարածներն ուրկե կուգան։ Ես եմ կռվի շունչն ու ոգին, կռվին, թափին ու մրցանքին. հիմքը ամեն արարչության, զարգացումի ու վարչության, բախտի, տիրման, վայելչության։ Ե՛ս...* (Քիչ-քիչ կսուզվի իր ճեղքին մեջ ու կաներևույթանա կարմիր լույսին հետ):

*ՀՆԱԴԱՐՅԱՆ ԹԶՈՒԿԸ—* (Հաղթական երգիծանքով)
*Զարկե՛ք լինկն ու կռանը*
*մեծ բնազդին դռանը,*
*մարդը մարդուն ճիրանը,*
*տվեք կռվին բերանը.*
*հա՜, հա՜, հա՜, հա՜...*

*ԲՈԼՈՐԸ—* (Ծեծելով սալը, գործիքները շարժելով)
*Մենք բոլորս, բոլորս*
*զարնե՛նք լինկն ու կռանը*
*մեծ բնազդին դռանը,*
*մարդը մարդուն ճիրանը,*
*մարդը մարդուն բերանը,*
*Հա՜, հա՜, հա՜, հա՜...*

# ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՆԵՐՔԻՆ ՓՈՔՐԻԿ ԲԱԿԸ

Ճակատը երկրորդական պարիսպ մը. պարսպի վրա փորված նեղ սանդուղ և հին ու խարխուլ քառակուսի դարպաս. դարպասի անմիջապես կողքին սանդուղ մը կը-նե: Բակի աջ կողմը բնակության շենքերն են. ձախ՝ ուրիշ մուտքեր:



Հինավուրց բարձր ծառի մը բունը, որուն մեկ-երկու ճյուղերը միայն բե-բեակի կախված են տեսարանի վրա: Առանց տակեն ու ճակտի պարիսպներուն վրայեն կնշմարվի հեռուն մեկ-երկու եկեղեցիներու գմբեթները:
Ծառին տակ հասարակ ճատարան մը:

1

Ձախի մուտքեն երկու զինվոր խոշոր տիկով մը ջուր կքաշեն դեպի դարպասը, ուրկե զինվոր մը ներս կնետվի ու կվազե դեպի պարսպին նեղ սանդուղը, մինչ բնակարանի դռնեն շտապ դուրս կուգա աստիճանավոր մը ու վազողը կկեցնե։

*ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԸ— Ո՞ւր։ Կեցի՛ր։*
*ԶԻՆՎՈՐԸ— Էմիրի հրամա՛նը։*
*ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԸ— Ո՞ւր է ինքը։*
*ԶԻՆՎՈՐԸ— Մեծ դարպասի տակ։ Ամենեն ուժեղ հարձակումը մեյ մը դարպասին վրա է, մեյ մըն ալ վարի հին բուրգին եաևը։*
*ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԸ— Շան զավակները գիտեն բոլոր թույլ տեղերը։ Կորսըվե՛։*

Զինվորը կվազե սանդուղներեն վեր ու դեպի աջ: Աստիճանավորը կհեռանա ձախի մուտքեն: Մինչ ուրիշ զինվոր մը կերևի դարպասին մեջ:

*ՆՈՐ ԶԻՆՎՈՐԸ— Դե՜, շո՛ւտ, շո՛ւտ, ի՞նչ եղավ ձեր ջուրը։*
*ՋՈՒՐ ԿՐՈՂՆԵՐԵՆ ՄԵԿԸ—* (Տիկը ցած դնելով) *Ի՞նչ եղավ, ի՞նչ եղավ։ Ի՞նչ պիտի ըլլա. շուտով ոչինչ չի մնար ջրամբարը. ջուրը կտրեր են։*
*ՆՈՐ ԶԻՆՎՈՐԸ— Տրաքի՛ս, հա՜. իսկ ինքդ այնքան լակեր ես՝ փորդ դարձեր է ջրամբար, տեղեդ շարժըվիլ չես կրնար։* (Բռնելով ինքն ալ տիկի եզերքեն) *Դե՜, շո՛ւտ, շո՛ւտ, քա՛շ տուր, սատկեցան ծարավեն։*
*ՄՅՈՒՍ ԿՐՈՂԸ— Մեկ է. պիտի սատկինք ամենքս ալ, հապա ի՞նչ գիտցար։ Սա ի՞նչ բազմություն է, թափեր են միջնաբերդին վրա, ո՞ր մեկ կողմեն պաշտպանվինք։ Դատարկ բան է, ազատում չկա։*
*ՆՈՐ ԶԻՆՎՈՐԸ— Կողպե՛ ռեխդ ու քա՛շ տուր, կոմպալ գլուխդ վկա։*

Ծռելով տիկը կիջեցնեն դարպասի սանդուղներեն վար: Նույն միջոցին քանի մը զինվոր դուրս կուգան ձախի դռնեն, տասը տասներկու զինվոր ալ կիջնեն աջեն պարսպի նեղ սանդուղով ու խոսելով կխառնըվին իրարու:

*Ա ԶԻՆՎՈՐ— Տեսա՞ր դուն այս խարդախ հայերը։*
*Բ ԶԻՆՎՈՐ— Մեծ պարիսպներեն քաշվելու չէինք. ես ըսի ձեզի, գոնե Տրդատի պարիսպներեն քաշվելու չէինք։*

Ա ՁԻՆՎՈՐ —Ըսելը դյուրին է։ Հանկարծ զարկին, է՛, հանկարծ վրա տըվին։

Գ ՁԻՆՎՈՐ— Ո՞վ կըսպասեր այդ տեսակ կարկուտ անամպ երկընքէն։

Ա ՁԻՆՎՈՐ— Ինչպե՞ս ալ լուռ, մինչև հիմա ծակերն էին մտեր խլուրդի պես։

Բ ՁԻՆՎՈՐ— Բայց միևնույն է, ոչինչ չեն կրնար, եթե նույնիսկ իրենց Քրիստոսն ալ որ գա իր մորը ու իր չունեցած հորը հետ։ Կեցի՛ր, ցո՛ւյց տանք անոնց՝ ի՞նչ ըսել է զենք վերցընել Թուրքին դեմ։

Գ ՁԻՆՎՈՐ— Շա՛տ են անիծածները։ Տե՛ս, ամբողջ քաղաքը կխըժվըժա, մուխը կոխած փեթակ ըլլա կարծես։

Դ ՁԻՆՎՈՐ— Սև մուխը կիջեցնենք մենք իրենց գլխուն։ Կեցի՛ր, կեցի՛ր, մեր օգնական զորքերը թող հասնին, թող մեյ մը հասնին...

Ետ կուգա Աստիճանավորը. բոլորը կլռեն ու կշտկըվին:

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԸ— (Պաշտոնական) Շա՛տ ապրիք։ Կտեսնեմ բոլորդ ալ քաջ եք։ Պիտի երթաք վարի բուրգը, հինը. հոն պետք կա ձեր օգնության, հոգնած են ձեր ընկերները։ Գիտեք, որ մինչև իրիկուն կըհասնին օգնական գնդերը Կարսեն, ու խերը կանիծենք այդ սրիկաներուն, այդ ապերախտ, երախտամոռ շներուն։ Մեր թևին տակը կապրին, կհարստանան ու խոզի պես կխժռեն, հիմա ալ խոզի պես վրա են տըվեր։ Պետք է դիմանանք, տղա՛քս, միայն երկու ժամ, վերջը հաշիվը կտեսնենք։ Ամենքդ լսեցիք էմիրի խոստումը. մութը չկոխած ամբողջ քաղաքը կըլլա մեր գարշապարներուն տակը, մեր ոտքերը լիզելու. խնայել չկա՛։ Այս գիշեր, ամբողջ գիշերը, բոլոր արուները ձեր սուրին. այս գիշեր, ամբողջ գիշերը, բոլոր կինարմատները ձեր քեֆին. և իրենց բոլոր կայքն ու գանձերը ձե՛րը, բոլո՛րը ձերը, ով ինչքան կրնա. ով ինչքան ուզե։ Դե՜, շա՛տ ապրիք, տղա՛քս, անցե՛ք։

2

Զինվորները դարպասեն վար: Աստիճանավորը դեռ կեցած է իր պաշտոնական կեցվածքովը, երբ մոտեն կլսվի ամբոխի աղմուկ: Ու քիչ մը ետքը դարպասեն վեր կվազե էմիրը, ետևեն քավական մարդիկ:

ԽԱՌՆ ՁԱՅՆԵՐ— Հարե՛մն է, հարե՛մն է։ Չէ՛, չէ՛, մուխերը ճակտեն էին։ Խոհանո՛ցն է, կըսեմ ձեզի, խոհանոցը։ Այո՛, այո՛, քովի պատուհաններ։ Հարե՛մն է, հարե՛մն է։



Շատերը կվազեն պարսպի նեղ սանդուղով դեպի աջ, մյուսները դեպի բնակարանի մուտքը: Բնակարանեն դուրս կնետվի՝ ձեռքով աչքերը սեղմած՝ ծերունի Ապտուլլահը շնչասպառ:

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Այս կողմեն կարելի չէ։ Այս կողմեն կարելի չէ։ Վերե՛ն-վերե՛ն, կամ ետևեն։

Ու եկողները կվազեն նորեն ետ դարպասեն դուրս կամ պարսպի նեղ սանդուղով վեր:

Էմիրը կուզե մտնել բնակարանը:

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Ոչ, էմի՛ր, թո՛ղ։ Կայրըվի՛, կայրըվի՛ երեք-չորս տեղե մեկ անգամեն։ Թշնամի ձեռք է, թշնամի ձեռք է։

ԷՄԻՐԸ— Մարեցե՛ք, մարեցե՛ք, ինչ գնով որ ալ ըլլա պետք է մարեք։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Ջուր չկա, ջուր չկա, ճար չկա։

ԷՄԻՐ— Ճարե՛, ճարե՛, կհրամայեմ քեզի։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Թո՛ղ, էմի՛ր. ալ ուշ է, անօգուտ։ Ամենեն խելոքը՝ հեռանա՛նք։ Քանի դեռ Միջնաբերդը կպաշտպանվի, քանի դեռ ապահով է գաղտնի անցքը, հեռանա՛նք։ Հարեմը հոն է, կսպասե քեզի։

ԷՄԻՐ— Ապտուլլա՛հ, ազատե՛, ազատե՛ տունս, ազատե՛ քաղաքս։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Մանուչեի որդի՛, գիտես որ վարի բուրգը երկար դիմանալ չի կրնար, գիտես որ օգնություն չէ գալու ոչ ոքե. իզուր հույսեր են ու անկարելի։ Հրդեհն ալ հիմա ավելի սիրտ պիտի տա անոնց։

ԷՄԻՐ— Ապտուլլա՛հ, դուն միշտ օգներ ես ինծի, հասեր ես նեղ վայրկյանիս։ Ազատե՛ իշխանությունս, ազատե՛ իշխանությունս։ Ապտուլլա՛հ, կպաղատիմ քեզի։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Տե՛ս, ծերացեր եմ Մանուչեի ծածկին տակ, ծերացեր եմ ծառայելով հորդ ու քեզի. իմ շրթունքներս վատ խորհուրդ չեն տար Մանուչեի որդուն։ Հեռանա՛նք, քանի դեռ ուշ չէ։

ԷՄԻՐ— (Հուսահատ նետվելով նստարանին) Ո՛չ, ո՛չ երբե՛ք։ Այ, դո՛ւ, անպետք քավթա՛ռ, ու՞ր է, ու՞ր քու իմաստությունդ։ Ո՞ւր է քու բոլոր գիտցածդ։ Ու ու՞ր հեռանամ, ու՞ր, Կարսի էմիրի՞ն, ուրիշներուն դու՞ռը, ուրիշներու ձեռքի՞ն նայիմ, ուրիշներու բերնի՞ն, ե՞ս, ե՞ս։ Ու չէ՞ որ այս քաղաքը իմս է, իմ հորս, իմ հարստությունս որու՞ թողնեմ, ու՞ր թողնեմ։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Էմի՛ր, ուշքի եկուր, նայե՛ հրդեհը, սա ի՞նչ գաղտնի, ի՞նչ անիծված ձեռք է։ Մենք մատնըված ենք ներսեն ու դրսեն։

Հ դեճին լույսի տակ տեսարանը նետզնետե կարմիր է նագած: Պարսպի սանդուղներեն վար կվազե աստիճանավորը, ետևեն զինվորներ:

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐԸ— Էմի՛ր, վարի բուրգը... վարի բուրգը ձեռքե երթալու վրա է, հասի՛ր, քու ներկայությունդ գուցե փրկե, հասի՛ր, որ փրկես։

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, հիմա կուգանք, էմիրը հիմա կուգա։ Վազեցե՛ք, տղա՛ք, քաջ եղեք։ Ըսե՛ք, ըսե՛ք բոլորին՝ օգնական զորքերը երևցած են արդեն. ժամը չանցած հոս կըլլան, կկոխեն քաղաքը, շտապեցե՛ք, կռվեցե՛ք, քաջե՛ր, քաջ եղեք։ Շտապեցե՛ք։

Բոլորը կվազեն դարպասեն վար: Ապտուլլահ կերթա անոնց ետևեն, կգոցե ու կկողպե դարպասը, կմոտենա էմիրին ու բարձրացնելով թևեն:

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Մանուչեի որդի՛, ելի՛ր, քալե՛, քալե՛ ետևես։ Հեռանա՛նք։ Թե դանդաղիս՝ կորած ենք ամենքս։

ԷՄԻՐ— Բայց սա ի՞նչ անիրավ բան է. սա ի՞նչ անզգամ բան է։ Ինչո՞ւ, ինչո՞ւ, չէ՞ որ...

ԱՊՏՈՒԼԼԱՀ— Քալե՛, քալե՛։ (Դուրս կտանի ձախի մուտքեն):

## 3

Քիչ մը ատեն տեսարանը պարապ է: Կլսվի հրդեհին ճարճատը, թափն ու փլչիլը, և դողը իր կարմիր լույսին, մարվող ու վառվող:

Կամացուկ կբացվի բնակարանին դուռը, և ծանր դուրս կուգա Հարճը, շիտակ կեցվածքով, ձեռքերը ետին, մազերը թափված և լայն բացած աչքերով: Ներք ուրախություն մը դեմքին կնայի չուրջը. կնայի հրդեհի լույսին, կըմպե հաճույքով հրդեհին ձայնը:

ՀԱՐՃԸ— Կպարե՜ն... Ինչպե՜ս կգրկըվին, ինչպե՜ս կփաթթըվին. ու կդառնան, հա՜, հա՜, հա՜, ի՜նչ կդառնան։ Բոցե՜րը... բոցե՜րը... ի՛մ բոցերս, ի՛մ, այս անգամ ի՛մ բոցերս։ Ինչպե՜ս կգալարին, ինչպե՜ս կըլզեն, ինչպե՜ս կլափեն. այս անգամ ի՛մ բոցերս, իմ բոցերս...

Ամուր կծեծեն դարպասը:

ՁԱՅՆ ՄԸ— (Դուրսեն) Բացե՛ք, բացե՛ք, շո՛ւտ։ Մտան, մտան այդ անհավատ շուները, եկան։ Հիմա կհասնին մեր ետևեն։

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ ՄԸ— (Դուրսեն) Փախե՛ք, փախե՛ք մյուս կողմեն, մյուս կողմեն։ Եկա՜ն։

Լռություն:



ՀԱՐՃԸ— Եկա՜ն... եկա՜ն... բոցերուն հետ։ Ես գիտե՛ի, որ բոցերուն հետ... բոցերուն մեջեն... բոցերուն մեջե՛ն։

Կլսվի ճաղքական բազմության մը գոռում-գոչումը և կատաղի հարվածներ դարպասին:

ԽՈՒՊՈՏ ՁԱՅՆ ՄԸ— Անդի՛ն, անդի՛ն, ես կբանա՜մ։

Դղրդալից զարկ մը դռանը. երկրորդ զարկին նիգերը կխախտին, և դուռը թափով ներս կիյնա:

Սեմին վրա կեցած է Դարբինը, խռիվ մազերով, կուրծքը բաց, աչքերուն մեջ վայրագ հուր մը, ակռաներով դանակ մը խածած և ծանր տապարը բարձրացուցած օդին մեջ:

Ոռնելով և զգուշ քայլ մը կընե դեպի առաջ, իր ետևեն ալ բազմությունը։

ՀԱՐՃԸ— (Հանգիստ կմոտենա ու ծունր կիջնե Դարբնին առջև) Ես գիտեի... ես գիտեի, որ պիտի գար բոցերուն հետ, բոցերուն մեջեն։

ԴԱՐԲԻՆ— (Ապշած) Ո՞վ ես դուն։

ՀԱՐՃԸ— Ըսե, ըսե, եղբայր, փրցուցե՞ր է, փրցուցե՞ր է Արտավազդը իր շղթաները։

ԴԱՐԲԻՆ— Ո՞վ ես դուն։

ՀԱՐՃԸ— Հա՛յ եմ։

ԴԱՐԲԻՆ— Ո՞ւր է էմիրը։

ՀԱՐՃԸ— Էմի՞րը։ (Ընդոստ ոտքի ցատկելով) Հա՛, էմի՞րը կուզես։ Կուզես էմի՞րը։ Եկո՛ւր, եկո՛ւր ետևես... Եկե՛ք ետևես...

Կնետվի դեպի ձախի մուտքը։ Դարբինն ու բազմությունը անոր ետևեն: Բոլորը դուրս: Հրդեհի կարմիր լույսին տակ դուրսի ժխորն ու աղմուկը հետզհետե կվերածվի կանոնավոր կռանահարության ու թզուկներու երգին, նախ հեռուն, քիչ-քիչ ավելի մոտիկ:

ԹԶՈՒԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ— Երթա՛նք, տա՛նք։
երկաթ տանք
մարդուն,
որ ան արթուն
տի՜նկ-տա՜նկ, տի՜նկ-տա՜նկ.
դարբնե սուրը պողպատի,
կարմիր արյունը ոթի,
երթա՛նք, տա՛նք,
տի՜նկ-տա՜նկ, տի՜նկ-տա՜նկ։

Այդ միջոցին տեսարանը դանդաղ փակված է ու բացված է հաջորդ տեսարանը։ Կռանահարությունն ու երգը, թեև թույլ ու հեռուեն, բայց կլսվի նույնիսկ նոր տեսարանի առաջին խոսակցության ժամանակ. մինչև բոլորովին կհանգչի։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՍԵՆՅԱԿ ՄԸ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԵՋ

Քանդակազարդ խոշոր սեղան մը ու բազկաթոռ. սեղանին վրա եռաստեղ աշտանակ վառ մոմերով։ Պատերը, դռները, գետինը ամբողջապես գորգերու տակ։

### 1

Պահլավունի իշխանը նստած է սեղանին առջևը, դեմը կեցած է պաշտոնյա մը, իսկ խորքը՝ իշխանիկը։

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— ...շարան-շարան, փողոցե փողոց. աղմուկ, խրախճանքով, ճառեր։ Ահագին խումբ մըն ալ Ախուրյանի ձորափին։ Բայց ամենեն մեծ բազմությունը Մայր եկեղեցիին հրապարակն էր, վարշատան դիմացը։*

*ԻՇԽԱՆԻԿԸ— Իհարկե՛, այդպես օրերով անգործ պտտիլը համ տվավ իրենց բերնին. ալ գործի երթալու կդժվարանան, երկուշաբթի սատու կարդալու գացող մոնիթերուն պես։ Ծույլ է, ծույլ, մեր ժողովուրդը։*

*ԻՇԽԱՆԸ— Բայց չէ՞ որ ես կարգադրեր էի, որ եկեղեցականները...*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Եվ կխոսին ամեն տեղ։ Մայր եկեղեցիին մեջ սրբազանը ինքը քարոզեց և հիանալի։ Շնորհավորեց Թուրքի լուծեն մեր ազատումը. գովեց, օրհնեց և շատ վարպետ կերպով դարձուց, որ այլևս ամեն մարդ պետք է անցնի իր խանութը իր սուրբ սեղանին ու սուրբ գործին գլուխը, այն սուրբ գործին գլուխը, որ բարձրացուցեր է ու կբարձրացնե մեր տունն ու ընտանիքը, մեր քաղաքն ու մեր համբավը։*

*ԻՇԽԱՆԻԿԸ— Հա՛, մեր սրբազանը խոսքի տակ մնացողը չէ։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Շատ գեղեցիկ ալ գծեց, Իշխա՛ն, քու պատկերդ, քու ցեղի, քու անձի։*

*ԻՇԽԱՆԸ— Արդյո՞ւնքը։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Նարե՛, Իշխա՛ն, բայց ինծի կթվի՝ քարոզ ու խրախճանքով ոչինչ դուրս չէ գալու։ Վերջին օրերու կռիվները, հաղթանակը, գովասանքը, քեֆն ու գինին անոնց գլուխը բոլորովին շուռ է տվեր, հարբածի պես են, արդեն մեծ մասն ալ տաքգլուխ երիտասարդներ։*



*ԻՇԽԱՆԻԿԸ— Բայց չեմ հասկընար։ Վերջապես ուզածնին ի՞նչ է։ Տոնեցին, նվերը ստացան, Իշխանը իր ոտքով գնաց, գովեց, պարգևատրեց։ Ալ ի՞նչ։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Որոշ բան հասկընալը իհարկե դժվար է այս աղմուկին մեջ։ Բայց այսքանը պարզ է, Իշխա՛ն, մեջերնին մարդիկ կան, որ ժողովուրդը քեզի դեմ կգրգռեն։*

*ԻՇԽԱՆԻԿԸ— Ա՜խ, Աստված իմ, դեռ շաբաթ մը... շաբաթ մը չկա, որ դուն ազատեցիր այդ մարդիկը Թուրքերուն զզվելի լուծեն և ահա՛ արդեն ի՜նչ սև դավեր կնյութեն քու անձի դեմ։ Ա՜, անսիրտ, անհոգի ժողովուրդ է մեր ժողովուրդը։*

### 2

Արագ ներս կնետվի Տայեցին ու շիտակ կդիմե դեպի իշխանը։ Վայելչակազմ ու վայելչատես մարդ մըն է, հասուն տարիքի։

*ՏԱՅԵՑԻ— Վահան իշխան... Վահան իշխան... հայտնի՞ է քեզի դուրսի վիճակը։ Հոգիները հուզված են սաստիկ ու եռման մեջ։*

*ԻՇԽԱՆԸ— Այդպես կերևա դատելով քո հոգիեդ։*

*ՏԱՅԵՑԻ— Բայց ամբողջ Սուրբ Գրիգորը, ամբողջ Հայնկույսները, ուրիշ խոսքով քաղաքի ամենեն ազնվական ու ամենեն հարուստ մասը սարսափելի սպառնալիքի տակ է։ Հարյուրավոր զինված մարդիկ կանգնին ու կդառնան, չարագուշ դեմքերով։ Կվախնամ, որ անդարմանելի չարիք գործըվի, Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Գուցե կվախնաս ապարանքեդ ու ապրանքե՞դ։*

*ՏԱՅԵՑԻ— Լավ կըլլա, որ ամենքս ալ քիչ մը վախնանք։ Ով աչք ունի կտեսնե, այդ մարդիկը այլևս ոչ մեկ վստահություն չունին քաղաքի մեծավորներուն ու ազնըվականներուն վրա։ «Որոնք ազատ են, կըսեն, ամեն տուրքե ու մեր վզին տուրք կդնեն»։*

*ԻՇԽԱՆԻԿԸ— (Հեգնոտ) Հապա ինչպե՞ս կուզեին։*

*ՏԱՅԵՑԻ— Կցանկան, որ իրենցմե ալ մարդ գտնվի իշխանության մեջ, ամեն արհեստ իր ներկայացուցիչը...*

*ԻՇԽԱՆԸ— Ինծի՛ նայե։ Ինչ կվերաբերի հարուստ թաղերուն վրա հարձակումին՝ համաձայն եմ, եթե կուզեն՝ թող փորձեն, տեսնենք որո՞ւն քիթը կարյունի։ Ես արդեն նախատեսած եմ ու կարգադրած հարկ եղածը։ Իսկ ինչ կվերաբերի...*

ՏԱՅԵՑԻ— Ինծի կթվի, Վահան իշխան, պետք է ավելի զիջող ըլլանք։ Ամբոխը միշտ է անասունի պես, իսկ երբ հուզված է՝ կդառնա գազան։ Խելացի բան չէ այդ գազանը ավելի գրգռելը։

ԻՇԽԱՆԸ— Ուրիշ խոսքով՝ եկար ու օգնեցիր ինծի, երբ գազանը դուրս հանել կուզեինք իր վանդակեն մեր թշնամիին վրա քշելու համար. իսկ հիմա վախդ բռներ է, երբ գործը արդեն ավարտած է և նույն գազանը պետք է նորեն իր քառագեղը ներս քշենք։ Շա՛տ շուտով վախցար, տի՛ար Աշոտ Տայեցի։ Գնա՛, փակվե՛ քու տունդ ու ամուր փակե դռները. ե՛ս, ես ներս կքշեմ գազանը։ Եվ երբ իջեցընեմ քառագեղի երկաթե ամուր դռնակը, այն ժամանակ դուն ալ կբանաս նորեն կրպակիդ դռնակը ու կշարունակես ընդհատած առևտուրդ։ Ամեն մարդ իր կոչումին։ Ի՛մ պաշտոնս է, ի՛մ պարտավորությունս, արձակված գազանը իր վանդակը քշելը։ Վաղը առտու կանուխ մունետիկ է շրջելու. խստիվ արգիլված է ամեն խմբում, ամեն աղմուկ. ամեն մարդ իր գործին, ով չբանա խանութը՝ տուգանք, ով հրամանս անգոսնե՝ պատիժ։

ԻՇԽԱՆԻԿԸ— (Մաղրով Տայեցիին) Գո՞հ ես։

ՏԱՅԵՑԻ— Պարտքս կհամարեմ կրկնելը. մեկ-երկու փոքրիկ զիջում, ա՛յսպես, գոնե ձևի համար։

ԻՇԽԱՆԸ— Ինծի՛ նայե։ Էմիրը ձեռքիս մեջ խաղալիք էր, կդարձնեի ինչպես ուզեի, բայց չթողի ու տապալեցի. ինչու՞, որ հիմա ինքս դառնամ խաղալիք քանի մը ռամիկ ու սինլքոր խառնակիչներու ձեռքը։ Ո՛չ։ Ե՛ս եմ տերը։ Միա՛կ տերը։ Եվ ի՛մս է այս քաղաքը։ Պա՞րզ է։

3

ԾԱՌԱ ՄԸ— Եկած են մեկ-երկու արհեստավոր, անմիջապես Իշխանը տեսնել կուզեն, կըսեն՝ խի՛ստ կարևոր։

ԻՇԽԱՆԸ— Թող գա՛ն։

Ծառան ու պաշտոնյան դուրս:

ԻՇԽԱՆԻԿԸ— Կտեսնե՞ս ատ սրիկաներուն գործածած լեզուն։ «Անմիջապես», «խիստ կարևոր». կարծես Բյուզանդիոնի կայսեր կողմեն կուգան։ Ես քու տեղդ, Իշխան, բնավ ներս չէի ընդունիր։

ԻՇԽԱՆԸ— Պարապ մի՛ խոսիր։

ՏԱՅԵՑԻ— Վահա՛ն իշխան, եղիր զիջող։



4

Կմտնե Ներկարարը ուրիշ երկու ընկերներու հետ. գլխու բերև բարևով մը՝ ուղղված ընդհանուրին՝ կկենան իրարու քով:

ՏԱՅԵՑԻ— Ա՛, վարպետ Արթի՛ն, դու՞ն ես։ Իշխա՛ն, կներկայացնեմ քեզի մեր քաղաքի ամենեն հայտնի ու ամենեն ճաշակավոր ներկարարը, միևնույն ժամանակ խիստ խելացի ու խիստ ազնիվ մարդ մը, որ մեծ ազդեցություն ունի իր արհեստակիցներուն վրա։ Խոսե՛, վարպետ Արթի՛ն, Իշխանի հետ ճիշտ այս վայրկյանիս կխորհեինք մեր քաղաքի անդորրության ու բախտավորության մասին։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Իշխա՛ն, կրնա՞մ խոսիլ։

ԻՇԽԱՆ— Կլսեմ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Եկած եմ հայտնելու քեզի, որ բոլոր արհեստներու պետերեն կազմըված է այս իսկ ժամին Անիի նոր կառավարությունը։ Եվ մեր քաղաքի այդ նոր կառավարության անունով կհայտարարեմ. մե՛նք, արհեստավորներս, Անիի քաղաքացիներս, ջարդեցինք թուրքերը, դուրս քշեցինք մեր քաղաքեն էմիրն ու իր արբանյակները և մաքրեցինք մեր Անին, հիմա մե՛նք ենք այլևս մեր քաղաքի տերն ու տնօրենը։ Մենք արհեստավորներս ենք այս քաղաքը հարստացուցեր, բարձրացուցեր իր այս դիրքին մե՛ր քրտինքովն ու շնորհքովը։ Հիմա ալ ահա՜ ազատեցինք անօրեն թշնամիեն մեր արյունովը ու կպաշտպանենք մեր բազուկներովը։ Քաղաքի երիտասարդությունը զենքի տակ է արդեն, և մեր նոր կառավարության հրամանով այդ զորքի գլուխը անցած է մեր մեծ հերոսը։

ԻՇԽԱՆԻԿԸ— Ձեր մեծ... ո՞վ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Մեր քաջարի դարբինը, վարպետ Ավագը, մեր ամբողջ ժողովուրդի պաշտամունքի առարկան. ա՛ն, որ առաջինը բարձրացավ բուրգին վրա, խորտակեց դռները, գրավեց ամրությունները։

ԻՇԽԱՆԻԿԸ— Հա՛, սա, խոշոր գլխով... հասկըցա՛։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Իշխա՛ն, եկած է օրը և մեծ գուշակությունը պետք է որ կատարվի։ Մինչև հիմա շղթայված էր մեր ժողովուրդը. ամեն տեսակի իշխաններ, էմիրներ կապեր, կաշկանդներ էին ծանր շղթաներով։ Ժողովուրդը հիմա ելեր է ոտքի և ալ չի ուզեր ոչ մեկ տեր իր գլխուն։ Այսօրվընե ինքն է իր տերը իր գլխուն։ (Կլռե):

ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, շա՛տ լավ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Գլխավոր պարիսպներուն զորքը այս վայրկյանիս քու հրամանիդ տակն է. ներքին քաղաքի մեկ քանի կետերը նույնպես։ Նմա-

*նապես այն հարստություններուն մեծ մասը, որոնք մնացին էմիրի ձեռքեն։ Այդ բոլորը անմիջապես պետք է հանձնվի նոր կառավարության։*

*ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, շա՛տ լավ։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ամեն ձգձգումի կամ չկամության հետևանքով եթե առաջ գան կորուստներ, դո՛ւն ես պատասխանատու քու ինչքովդ։ Իսկ եթե զենքով դիմադրության որևէ փորձ պատահի՝ գիտցած եղիր, Իշխա՛ն, սոսկալի արյունհեղություն առաջ կուգա։ Արդեն հազիվ կզսպենք մեր ընկերները։ Չե՛նք խնայեր ոչ ոքի, ո՛չ ձեզի, ոչ ձեր զավակներուն. ամե՛ն բան, ամե՛ն բան աչքերնիս առած ենք։ Բոլոր արյունը քու վիզդ. մի՛ հաներ եղբայրը եղբոր դեմ։* (Կլռե):

*ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, շա՛տ լավ։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Այսինքն ինչպե՞ս։*

*ԻՇԽԱՆԸ— Քանի որ ուժը ձեր կողմն է, բազմությունը ձեր կողմն է, զորքը ձեր կողմն է, քանի որ կազմեր եք կառավարությունը և քանի որ իմ օգնությանս քաղաքը այլևս պետք չզգար, քանի որ այսպես եք վճռեր՝ լա՛վ, շա՛տ լավ։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ուրե՞մն։*

*ԻՇԽԱՆԸ— Վաղը թող գա՛ն ձեր մարդիկը, հանձնեմ իրենց բոլոր պարիսպները և մնացած հարստությունը։ Ես իմ մարդիկներուս հետ կքաշվիմ քաղաքեն, ըրե՛ք ինչ որ կուզեք։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Գիտցիր, Իշխան, որ այդ բոլորը բառ առ բառ հաղորդելու եմ արհեստներու խորհուրդին։*

*ԻՇԽԱՆԸ— Կարծե՛մ։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Բոլոր սրտովս ուրախ եմ, Իշխա՛ն, որ այսպես խոհուն եղար ու հեռատես։*

*ԻՇԽԱՆԸ— Կցավիմ, որ քու և քու ընկերներուդ մասին նույնը ըսել չեմ կրնար։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ես կմեկնիմ, Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Լավ։*

## 5

**Ներկարարը ընկերներուն հետ դուրս: Իշխանը կցատկե աթոռի ու շիտակ կերթա Տայեցու վրա:**

*ԻՇԽԱՆԸ— Է՛, Տիա՛ր Աշոտ, ի՞նչ կըսես։ Ի՞նչ է հիմա քու կարծիքըդ։ Զիջումներ ընե՞նք, թե ոչ, և ի՞նչ զիջումներ խորհուրդ կուտաս։ Իմ ըրած զիջումս հերի՞ք է քեզի։ Թողնեմ ամեն ինչ, ձգեմ քաղաքս,*



*հայրերուս իրավունքը, ամբողջ անցյալս, անունս, պատիվս, հեծնեմ ձիս ու փախչիմ. հերի՞ք է, թե՞ ատ ալ քիչ է։ Գուցե գիտես դուն, թե ուրիշ ինչ զիջումներ դեռ կրնամ հանձնել այս ներկարարի կապույտ ձեռքերուն և այն դարբնի մրոտ թաթերուն. ըսե՛, ալ ի՞նչ կրնամ տալ, ալ ի՞նչ կրնամ զիջել։*

*ՏԱՅԵՑԻ— Խելքերնին կորուսեր են այդ մարդիկը։ Մեր քաղաքը կեցած է կորուստի անդունդին եզերքը։ Սարսափելի փոթորիկ է գալու։*

*ԻՇԽԱՆԸ— Սարսափելի փոթորիկ է գալու. հապա ի՞նչ գիտցար։ Միայն փոթորիկը կմաքրե այդ պղտորած մտքերը, այդ գրգռված ողորմելի ախորժակները։ Արյուն թափեցին ու կատղեցան, սովոր չէին արյուն թափելու, մինչև չթափվի իրենց արյունը՝ խելքի չեն գալու։ Հասկըցա՞ր, տիար Աշոտ Տայեցի. գնա՛ ու ալ մի՛ խանգարեր ինծի։* (Իշխանիկին) *Կանչե՛ անմիջապես իշխան Մարզպետը։*

*ԻՇԽԱՆԻԿ—* (Դուրս):

*ՏԱՅԵՑԻՆ— Սարսափելի փոթորիկ է փրթելու։ Պիտի կործի որքա՛ն, որքա՛ն աշխատանք, ինչքան հարստություն, ինչքան ջանք ու ծրագիր...* (Դուրս):

## 6

**Իշխանը մտածկոտ կերթա կնստի իր տեղը, աչքերը անթարթ հառած կետի մը: Կմտնե իր կինը՝ բարձրահասակ, տխրադեմ ու խիստ լուրջ, ծանր-հանգիստ շարժումներով:**

*ԻՇԽԱՆ—* (Գլուխը բարձրացընելով) *Դո՞ւն ես։*

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Կխանգարե՞մ քեզի։*

*ԻՇԽԱՆԸ— Ба՞ն ունիս ըսելու։*

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Եկա տեսնեմ քեզի։*

*ԻՇԽԱՆԸ— Ձգե՛ ինծի առանձին։*

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Կարծեմ շատ չի պատահիր, որ ձանձրացընեմ քեզի իմ ներկայությամբ։*

*ԻՇԽԱՆԸ— Բայց կտեսնես, որ զբաղված եմ։*

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այո՛, դուն մի՛շտ զբաղված ես։ Ամենուն մտածելիքը դո՛ւն պիտի մտածես, ամենուն ընելիքը դուն պիտի հրամայես։*

*ԻՇԽԱՆԸ— Չեմ հասկընար՝ ինչի՞ դեմ է, որ եկեր ես, կգանգատիս։*

*ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ես չեմ եկած գանգատելու։*

*ԻՇԽԱՆԸ— Աղե՛կ, քաշվե՛ սենյակդ։ Դուն չես գիտեր, ի՛նչ գիշեր է այս գիշեր։*

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ես... գիտեմ։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ գիտես։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Գիտեմ, որ մինակ ես, բոլորովին մինակ։ Ես ալ եկեր եմ, մոտդ ըլլամ, եկեր եմ քեզի հետ ըլլալու։

ԻՇԽԱՆԸ— Ինչե՞ր կխոսիս։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ինչու՞ կուզես, որ ամենքը քու ունքերուդ նային, որ ամենքը դեմդ խրտվիլակ դառնան, ինչու՞ կապել կուզես ամենուն հոգին ու ձեռքդ պահես ամեն մեկուն սանձը։ Միթե ավելի բախտավոր բան չէ՞ բանաս ուրիշի բանտին դռները, արձակես կապը, իր վիզը նետես իր բերնին սանձը. միթե ավելի բախտավոր բան չէ՞։

ԻՇԽԱՆԸ— Ինչպե՞ս։ Ո՞ր օրեն է, որ այդ մտքերը գլխուդ մեջ կըդառնան։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այն օրեն, երբ քու պալատիդ պատերուն ետին ցամքեցավ պատանի տարիներուս զըվարթությունը։ Այն օրեն, երբ զգացի, որ ես ալ հոս բանտարկյալ մըն եմ, ինչպես ամենքը։ Այն օրեն, երբ տեսա, որ բոլոր քեզի շրջապատողները, որոնք ամեն տեղ քու կամքդ ու քու գովքդ կընեն, քու հացովդ կապրին, իրենց սրտին խորքը կատեն քեզի ու քու հացը։

ԻՇԽԱՆԸ— Ես պետք չունիմ անոնց սիրուն և չեմ վախնար անոնց ատելութենեն։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Քաջ ես, գիտեմ։ Բայց ըսե՛, խնդրեմ, ի՞նչ մեծ քաջություն է նստիլը քեզմե թույլերու գլխուն և ի՞նչ մեծ փառք է ստրուկներուն տիրելը։ Թող ժողովուրդը ինքը գա իյնա ոտքերդ ու իմաստությունդ ու քու բաղուկդ քեզմե խնդրելու, իսկ եթե չեն գար ու չեն խընդրեր՝ թող այդ դժբախտները իրենց ցավին, իրենց կռվին ու ճաշակին. իրենց արյունը իրենց գլուխը։

ԻՇԽԱՆԸ— Մյուս անգամ, խնդրեմ, ականջ չդնես դռներուն ետևեն, իսկ հիմի ելի՛ր սենյակդ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ո՛չ, այս գիշեր ես չեմ լսելու քու խոսքդ։ Ես պետք է մնամ ու գիտնամ, թե ինչ կկատարվի։

7

ԻՇԽԱՆ ՄԱՐԶՊԵՏ— (Զինվորական բարևով) Ինծի կանչեր ես, Իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Մնա՞լ կուզես, լա՛վ։ Կուզես գիտնալ՝ թե ի՞նչ պիտի կատարվի այս գիշեր, լա՛վ։ Լսե, Մարզպետ. կորսընցընելու վայրկյան



չկա։ Կըշտապես խսկույն պարիսպները վերջին պատրաստություններդ տեսնելու։ Ճիշտ կես գիշերին, կլսե՞ս, ճիշտ կես գիշերին պարիսպի զինվորները երեք գլխավոր փողոցներով պիտի շարժվին դեպի կեդրոնը, հնար եղածին չափ արագ ու հանկարծակի. մինչև վերջին վայրկյանը ոչ-ոք ոչինչ պետք չէ գիտնա։ Ես ալ կուգամ ներքին պարիսպներեն ու Սուրբ Գևորգեն երկու գծով։ Եվ մեկ անգամեն հինգ երեսով պիտի իյնանք անոնց կեդրոնական որջին վրա։ Թըվով շատ են, ճիշտ է, բայց ո՛չ մեր վարժությունն ունին, ո՛չ ալ մեր զենքն ու արվեստը։ Երկու ժամեն ավարտած կըլլա մեր գործը։ Չի պիտի փախցընես ո՛չ մեկը, կըհասկընա՞ս։ Ո՞վ ձեռքը զենք ունի՝ մա՛հ. զենքը հանձնողը կուղարկես պարիսպները։ Լույսը չծագած պետք է վերջանա ամեն խլրտում, ամեն խեղկատակություն։ Ալ հերի՛ք է։ Զենքը, կռիվն ու հրամայելը, տիկի՛ն, ազնվականներու գործն է, աշխատանքն ու հպատակիլը՝ ռամիկի։

ՄԱՐԶՊԵՏ— Հոս տարբեր կարծիք չի կրնար։

ԻՇԽԱՆԸ— Ուրեմն, ով ձեռքը զենք ունի՝ մա՛հ, ով զենքը վար դնե՝ շղթա՛։

ՄԱՐԶՊԵՏԸ— Այո՛, Իշխան, ով մեր դեմ է՝ մահ կամ շղթա։ (Դուրս)։

8

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— (Նետվելով դեպի ամուսինը) Իշխա՛ն...

ԻՇԽԱՆԸ— Բա՛վ է։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Մի՛ ըներ, Իշխա՛ն, մի՛ ըներ։ Անգամ մը միայն լսե՛ կնոջդ խոսքին։ Միթե չե՞ս տեսներ հոգիիս խռովքը։

ԻՇԽԱՆԸ— Հանգստացի՛ր, կանչե՛ կանայքդ ու մինակ մի՛ մնար։ Արդեն ըսի, մինչև առտու կխաղաղի ամեն ինչ, իզուր է վախդ, հուզումդ իզուր։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Վախը չէ, որ կխեղդե ինծի։

ԻՇԽԱՆԸ— Ուրեմն ալ ի՞նչ։

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Այսքա՜ն արյուն, այսքա՜ն արցունք, այսքա՜ն անեծք, ատելություն... և այս բոլորը քո՛ւ գլխուդ, այս բոլորը իմ մանկանս գլխուն. ա՞ն ինչ հանցանք ունի, ա՞ն ինչ հանցանք ունի... (Կուլա)։

ԻՇԽԱՆԸ— Եթե լալու ախորժ ունիս՝ քաշվե սենյակդ, հոս լալու տեղ չէ։ Գիտես, որ արցունքը կատեմ։ (Դեպի մյուս դուռը) Ա՛յ տղա, ո՞վ կա հոս։ Զենքերս։ (Ներս մտնող զինակրին) Վերցո՛ւր մոմը, ինկի՛ր առջևս։

*ՋԻՆԱԿԻՐԸ*— (Կնայի լացող կնոջը և չի համարձակիր մոմը առնե-լու)։

*ԻՇԽԱՆԸ— Չլսեցի՞ր։ Վերցո՛ւր մոմը։ Ջինարա՛ն։*

## 9

Ջինակիրը աշտանակը կառնե սեղանեն և դուրս. Իշխանը ետևեն։ Մութին մե-ջեն կլսվի լացող կնոջ թեթև հեծկլտուքը։

Հեռուն, խորքը, խավարին մեջ, կրակին կայծկլտալ թզուկներուն լապտեր-ները, և կհասնի նախ թույլ, հետզհետե ավելի ուժեղ երգը թզուկներուն և կռա-նահարությունը։

*ԹԶՈՒԿՆԵՐԸ— Երթա՛նք, տա՛նք,*
*երկաթ տանք*
*մարդուն,*
*որ ան արթուն*
*տի՛նկ-տա՛նկ, տի՛նկ-տա՛նկ,*
*զարկնե ծանր իր կուռ շղթան,*
*օղակ-օղակ, նման օձին,*
*հոգնած թևին, պարանոցին,*
*և՛ իր համար, և՛ ընկերին.*
*դառնան բոլոր իրար գերին,*
*իրար նզովքն ու ատելին,*
*տի՛նկ-տա՛նկ, տի՛նկ-տա՛նկ։*

Բացված է հաջորդ տեսարանը։ Կռանահարությունն ու երգը, թեև շատ նվա-ղած, բայց կլսվի դեռ նոր տեսարանի առաջին խոսքերու ժամանակ. մինչև ճիշ-ճիշ բոլորովին կմարի։

# ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱՆԻԻ ՎԱՐՁԱՏՈՒՆԸ

Սյունազարդ ընդարձակ դահլիճ մը։ Միակ մուտքը ետևեն՝ վարագույրներով։ Սկիզբը վարագույրը բաց է, որու միջով կերևի հաջորդ սենյակի դուրս տանող դուռը։ Դահլիճի աջ կողմի սյուներուն տակ երկար սեղան մը, շուրջը աթոռներ։



## 1

Սեղանին շուրջը կեցած կամ նստած՝ խռնված են զանազան արհեստներու պետերը, որոնց մեջ նաև Դարբինն ու Ներկարարը։ Դահլիճին կեդրոնը կեցած են Սաղաթել և Տալեցին. իսկ անոնց ետևեն ու քովերը, ավելի խորքը բազմություն մը արհեստավորներու ամեն տարիքի թե՛ զինված, թե՛ անզեն։ Բոլորի դեմքին ու դիրքին վրա ինքնավստահ ու խրոխտ շեշտ մը կա։

*ՍԱՂԱԹԵԼ— Չէ՞ որ դուք մեզմով կապրիք, մենք ալ ձեզմով։ Դժգոհություններ եղած է մեր մեջ։ Է, ո՞ւր չի ըլլար։ Ա՛յ, ամեն արհեստ ղրկեր է իր գլխավորը և կազմեր եք նոր կառավարություն. հիանալի՛, վերջապես գտնըվեցավ մեր քաղաքի միակ արդար ու իսկական տերը։ Բայց ատ ինչպե՞ս է եղեր, որ մոռցեր եք մեզի, արհեստավո՛ր եղբայրներ, չէ՞ որ մենք ալ փորձառություն ունինք քիչ մը, աշխարհի բաներուն կհասկնանք, մեզմե մեկուն մեկալին ձեռքը գուցե քանի մը ստակ ալ ճարվի։ Երկրորդ՝ պզտիկ գանգատ մըն ալ ունին վաճառա-կանները. այս վերջին օրերը բավական կողոպուտ է եղած ու հափշտա-կություն մեր խանութներեն ու մթերքեն։ Իհարկե այս տեսակ խառնակ օրերուն այդ կարգի բաներ կպատահի. ամենքը ձեզի պես ազնիվ ու պարկեշտ չեն ըլլար իհարկե։ Եվ վստահ ենք, որ մեր իմաստուն կառա-վարությունը շուտով թալանի առջևը կառնե, և բոլոր քաղաքացիներու ստացվածքը հավասարապես կպաշտպանվի։ Ես գոնե համոզված եմ, արհեստավո՛ր եղբայրներ։*

*ՆԵՐԿԱՐԱՐԸ— Վերջացա՞ր։ Է՛, ի՞նչ կըսեք, ընկերնե՛ր։ Լսեցիք. վաճառականները կուզեն իրենց մարդը ունենան մեր կառավարության մեջ։* (Քի՛չ մը լուռ)։

*ՊԵՏԵՐԵՆ ՄԵԿԸ— Կկարծեմ՝ թող գան մեկ-երկու հոգի։*

*ԵՐԿՐՈՐԴԸ— Թող ղրկեն մեզի երկու վաճառական։ Ի՞նչ վնաս։*

*ԵՐՐՈՐԴԸ— Քանի որ կըսե՝ թե դրամ ալ կբերեն։*

*ՉՈՐՐՈՐԴԸ— Առայժմ թող մնա. խորհի՛նք, տեսնե՛նք։*

*ԴԱՐԲԻՆԸ*— (Առաջ գալով) *Բարև՛, տիա՛ր Սաղաթել, ատ ի՛նչ անուշ-ցեր է լեզուդ, շրթունքներեդ մեղր կվազե։ Գիտե՞ս ինչ, եկուր գրպանդ դիր քու կեղծավորությունդ և լավ ականջ ըրե՛ ըսածիս։ Ինչ որ մենք ըրինք մինչև հիմա թուրքերուն ու Պահլավունիներուն հետ, ատիկա միայն գործին կեսն էր, հիմա կարգը հասած է ձեզի, հիմա պիտի մաք-րենք մեր հաշիվը ձեզի հետ։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ— Հապա՛, հապա՛։*

*ԴԱՐԲԻՆ— Դուք մեր եղբայրը չեք, դուք մեր թշնամին եք և մեր*

թշնամիներեն ամենեն գեշը. դուք մեր մարմնին փակած տզրուկներ եք։

ՇԱՏԵՐԸ— (Գրգռված) Ճի՛շտ է, ճի՛շտ է։

ԴԱՐԲԻՆ— Դուք այդպես ուռեր եք մեր արյունը ծծելով։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Մեր արյո՛ւնը, մեր արյո՛ւնը։

ՏԱՅԵՑԻ— Ինծի լսե՛, Ավա՛գ, ըրածդ լավ բան չէ, իզուր տեղը մի՛ գրգռեր ժողովուրդը, մի՛ գրգռեր մեր քաղաքի մեկ մասը մյուսի դեմ։ Այս վայրկյանիս հաղթական ենք, քաղաքը մեր ձեռքն է, բայց ատիկա երկար չի տևեր, եթե այս ճամփով երթանք։ Մի՛ խաբվիր, ժողովո՛ւրդ, Թուրքն ու Պահլավունին նորեն փորձեն պիտի ետ գալու, մանավանդ երբ իմանան, որ մենք հոս մեր մեջը կռվըռտելու վրա ենք արհեստավոր ու վաճառական։ Խելքի գանք՝ քանի ուշ չէ, թե չէ ետքը շատ կզղջանք, երանի կուտանք հին օրերուն։ Ես մի՛շտ իմ շահս արհեստավորներու շահին մեջն եմ տեսեր. մի՛շտ ձեր բարեկամն եմ եղեր, միշտ մեր քաղաքի բարձրացմանն եմ աշխատեր, ատոր համար ալ կըսեմ հիմա ձեր երեսին ճշմարտությունը։

ԴԱՐԲԻՆ— Անիի քաղաքացինե՛ր, լսեցի՞ք ճշմարտությունը։ Ահա՛ ձեզի արհեստավորներուն բարեկամը։ Եթե այս Տայեցիներն ու Սաղաթելները չըլլան Անիի պատերուն ետևը՝ Անի քաղաքը կկործանվի, և բոլոր թշնամիները կուգան ու կխեղդեն մեզի։ Չէ՞ որ անոնք էին, որ մագլցեցան Միջնաբերդի պարիսպներուն վրա, չէ՞ որ անոնք էին, որ խորտակեցին դարպասները, գրավեցին աշտարակները, սատկեցուցին Թուրքը, ջարդեցին ու բուրդ ու կծիկ փախցուցին ձեր նշանավոր Պահլավունին. չէ՞ որ անոնց կռներն էին, որ թուլցան ներսի ու դուրսի բոլոր թշնամիները թրատելեն։ (Ծաղր ու ծիծաղ ընդհանուր):

ՁԱՅՆԵՐ— Իհարկե՛, իհարկե՛։ Սաղաթելը, Սաղաթելը։ Մտեր էին ծակերը։

ՁԱՅՆ ՄԸ— Մկան ծակը հարյուր ոսկի։

ԴԱՐԲԻՆ— Է՜, դուն, արհեստավորներու մե՛ծ բարեկամ, քանի որ ճշմարտությունը այդքան կսիրես, հասկցի՛ր վերջապես, որ մենք հիմա զգացե՛ր ենք մեր ուժը, հիմա մենք գիտենք մեր կարողությունը։ Մինչև հիմա մենք զենք ենք դարբներ գզվելի և ումարդի տերերու համար. ա՛լ վերջացավ, ասկե ետքը մենք զենք ենք դարբնելու միայն մեզի՛ համար։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ— Մեր զենքերը միայն մեզի։

ԴԱՐԲԻՆ— Դուք եկեր եք գանգատելու, որ ձեզի թալներ են, կողոպտեր են ձեր մեկ-երկու խանութը, ձեր մեկ քանի իրերը։ (Դառնալով ընկերներուն) Իսկ ես ահա՛ եկեր եմ հայտնելու ձեզի, Անիի քաղաքացիներ՝ ինչ որ ունին այս մարդիկը, իրենց բոլոր դիզած ոսկին, ինչքն ու



կալված, իրենց բոլոր ստացվածքը. բոլորը ձե՛րն է, ձեր արդար իրավունքը, որ անոնք խլեր էին, կողոպտեր էին, գողցեր էին ձեզմե՛, ձեզմե՛։ Պետք է ե՛տ առնել անոնց ձեռքեն, պետք է ե՛տ խլել մեր աշխատանքը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Պետք է ե՛տ խլել, պետք է ե՛տ խլել։

ԴԱՐԲԻՆ— Խլե՛լ ու բաժնե՛լ մեր աղքատին, չունևորին, տանջըվածին, զրկըվածին։

ՁԱՅՆԵՐ— Ըսե՛՝ բոլորի՛ն, բոլորի՛ն։

ՁԱՅՆ ՄԸ— Մեր աշխատանքը մեզի։ Մեր քրտինքը մեզի։

ԴԱՐԲԻՆ— Ա՜յ, դուք ինծի հանձնեցիք և ընկերներուս, որ բանակ պատրաստեմ. հիմա զենք է պետք, զգեստ է պետք, ուտեստ է պետք, իսկ այդ բոլորի դրամը ատոնց տռզած քսակներուն մեջն է։

ՇԱՏԵՐԸ— Խլե՛, խլե՛, վերցո՛ւր։

ԴԱՐԲԻՆ— Գացե՛ք, ըսե՛ք ձեզի ղրկողներուն. ձեր դարը վերջացավ, ձեր անիվը դարձավ։ Մինչև հիմա դուք էիք մեր տերը, հիմա մենք ենք ձեր տերը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Հիմա մե՛նք ենք, մե՛նք ենք տերը։

ԵՐԻՏ ՍԱՐԴ ՄԸ— (Բռունցքը ցույց տալով) Հիմա մե՛նք ենք ձեր տերը։

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— Հիմա մե՛րն են ձեր գանձերը։

ՁԱՅՆ ՄԸ— Տըվե՛ք, տըվե՛ք մեր հարստությունը. տըվե՛ք ինչ որ գողցեր եք մեզմե։

ԴԱՐԲԻՆ— Կառնենք մենք ինքներս. հանգի՛ստ։ Հիմա հանգիստ. կերթանք կառնենք մենք ինքներս։

ՁԱՅՆ ՄԸ— Կեցցե՜ վարպետ Ավագը։

ՁԱՅՆԵՐ— Կեցցե՜։ Կեցցե՜ Ավագը։ Կեցցե՜ վարպետ Ավագը։

ՄԵԿԸ— Քալե՛, Ավա՛գ, երթանք առնենք մեր հարստությունը։

ՈՒՐԻՇ ՄԸ— Եվ բաժնե՛նք, իսկույն բաժնենք մեր մեջը։ Չէ՞, Ավա՛գ, դուն այդպես ըսիր։

ՏԱՅԵՑԻ— Շատ կցավիմ, Անիի քաղաքացինե՛ր, շատ կցավիմ, բայց կտեսնեմ ալ խոսիլը անօգուտ է։ Միայն գիտցե՛ք, մեզի զարնելով կզարնեք ձեզի. ալ Անին վերջացա՛վ. մե՜ղք մեր շքեղ, չքնաղ Անին, մե՜ղք և ձեզի։

ՄԵԿԸ— (Վրա հարձակելով) Գող, ավազակ, տզրուկ...

ՀԱՍՏ ՁԱՅՆ ՄԸ— Տըվե՛ք գլխուն, սատկեցուցե՛ք. տեսնենք ո՞վ է վերջացողը, Անի՞ն, թե ինքը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— (Տիրաբար) Թողեք, թողեք, որ երթան, ձեռք մի տաք։ Եվ ցրվեցե՛ք, հիմա ուշ է արդեն։ Վաղը կուգաք, երբ մունետիկները կան-

չեն, կհավաքվենք, երբ մունետիկները կանչեն։ Վաղը կվճռենք ու կը-կարգադրենք։

Խառն աղմուկով, սպառնալիքով, ոգևորությամբ, ծաղրական բացականչություններով բոլորը կելլեն դուրս երկու պատգամավորներուն ետևեն:

## 2

Կմնան Ներկարարն ու Դարբինը: Ներկարարը կերթա կգոցե ճակտի վարագույրները և կմոտենա ընկերոջը, որ կեցած է մտածկոտ:

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Կամաց-կամաց կկարգադրենք. բոլորը կկարգադրենք։

ԴԱՐԲԻՆԸ— Իսկ ինչպե՞ս վճռեցիք մինչև իմ գալս ցորենի հարցը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Մնաց առայժմ անորոշ։ Մեր կողմինները իհարկե համաձայն են, բայց դերձակները, թիթեղ գործողները, ոսկերիչներն ու Համբարձումը հակառակ են նորեն։

ԴԱՐԲԻՆԸ— Քոսո՛տ շներ։ Գործի որ գա՝ մեջտեղ չկան, խոսքի ատեն կելլեն մեջտեղ։ Ինչու՞ են հակառակ։ Եվ վերջապես քանի՞ կուտ արժե անոնց հակառակությունը։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ատ ըսե։

ԴԱՐԲԻՆԸ— Դուն կարգադրե՛ այնպես, ինչպես ես ու դուն վճռեր ենք։ Տեսնենք ի՞նչ են ընելու։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ի՞նչ պիտի ընեն, ի՞նչ կրնան ընել, ո՞վ կա իրենց ետև։

ԴԱՐԲԻՆԸ— Ուժը մեր ետևն է, մե՛ր։ Կռվողները մերոնք են, արյուն թափողը մերո՛նք են, սուրը մե՛ր ձեռքն է։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Անշո՛ւշտ։ Ի՞նչ կըլլար հիմա մեր քաղաքի վիճակը, եթե չըլլային դարբիններն ու ներկարարները, եթե չըլլային մեր ետևի կրակի նման կտրիճները։

ԴԱՐԲԻՆԸ— Կուզե՞ս խոսքին կարճը։ Ըսե խնդրեմ, այս եղածներեն, այս հրաշքներեն ո՞ր մեկը կըլլար, եթե չըլլայինք ես ու դո՛ւն։ Ըսե՛, ո՞վ գլուխ բերավ այս բոլորը, ո՞վ ոտքի հանեց այսքան մարդիկը, ո՞վ գլուխ անցավ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ճի՛շտ է, այդպե՛ս է։

ԴԱՐԲԻՆԸ— Մե՛րն է այս քաղաքը, մե՛րը. ե՛ս ու դո՛ւն։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Այո՛, Ավա՛գ, ե՛ս ու դո՛ւն։



ԴԱՐԲԻՆԸ— Մե՛ր խոսքը, մե՛ր խելքը, մե՛ր կամքը։ Եվ ո՛չ ոք պետք չէ, որ հակառակի։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— (Հեգնոտ) Հակառակի՞։ Թող փորձե, տեսնենք, ո՞վ կհամարձակի։

## 3

ՍԱՂԱԹԵԼ— (Վարագույրի ետևեն զգույշ ներս մտնելով) Վարպե՛տ Ավա՛գ, քեզի հետ երկու կարճ խոսք ունիմ։

ԴԱՐԲԻՆԸ— (Զարմանքով) Ինծի՞ հետ։ Խոսե՛։

ՍԱՂԱԹԵԼ—(Ծամծմելով) Ե՛ս... ես ամբողջ կյանքս չարչարվեր եմ և հիմա մեկ-երկու քսակ ոսկի է ունեցածս, Աստուծմե որ ծածուկ չէ, քեզմե ինչո՞ւ ծածկեմ։ Այժմ սիրտս կցավի, որ շուն ու գայլի ձեռքը պիտի անցնի. պիտի ուտեն ու փճացնեն, այնքան չարչարվեր եմ վրան։ Կուզեի բանի մը պետքի գար։ Դուն ըսիր՝ բանակներ ես կազմելու. դուն ոսկի սիրտ ունիս, ես քեզի կհավտամ, բայց անոնց չեմ հավտար։ Հիմա կուզեմ քեզի բերեմ իմ ունեցածս. վարպե՛տ Ավագ, ա՛ռ, կազմե՛ բանակներդ, պաշտպանե՛ մեր քաղաքը. Աստված քեզի ավելի ուժ տա, ավելի բախտ տա քեզի, որ մենք ալ հանգիստ ապրինք վերջապես գոնե մեր ծերութքի օրերուն քու շուքիդ տակը, քու կազմած բանակներուդ շուքին տակը։ Բերե՞մ։

ԴԱՐԲԻՆԸ— Բե՛ր. ո՞վ է քու ձեռքդ բռնողը։

ՍԱՂԱԹԵԼ— Հա՛, բայց կվախնամ, որ մյուսները [illegible] հան-կարծ, և ես ինքս կիյնամ շուն ու գայլի բերանը։

ԴԱՐԲԻՆԸ— Ի՞նչ ըսել է։

ՍԱՂԱԹԵԼ— Շատ կխնդրեի, որ այս դրամի մասին մարդու բան չըսեք. այսպես միայն մեր մեջ, մեր երեքիս մեջ։

ԴԱՐԲԻՆԸ— Ինչու՞։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Լա՛վ, լա՛վ, դուն բե՛ր Ավագին քու բերելիքդ, կմտածենք։

ՍԱՂԱԹԵԼ— Հա՛յ, շնորհակալ եմ, շա՛տ շնորհակալ եմ։ Այս իրիկուն երեք քսակ կղրկեմ քու տունդ, վարպե՛տ Ավագ, իմ բոլոր խնայողությունս, թող օգտըվի՛ քաղաքը, թող օգտըվի՛ քու զորքդ։ Շնորհակալ եմ, վարպե՛տ Ավագ, շա՛տ շնորհակալ եմ։ (Դուրս):

## 4

ԴԱՐԲԻՆԸ— (Վարանոտով) Հիմա ինչպե՞ս, Արթի՛ն, որ ստանամ՝ հայտնելու չեմ մերոնց։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ի՞նչ կարիք կա անպատճառ հայտնելու, քանի որ մարդը կխնդրե չհայտնես։ Եվ վերջապես մեր ձեռքը ինչքան շատ ու ինչքան ազատ ստակ ըլլա՝ այնքան ավելի աղեկ, այնքան ավելի անկախ կըլլանք։ Չե՞ս տեսներ մեր ժողովներուն մեջ ինչպես փայտե գլուխ մարդիկ են բոլորը, վախկոտ, զգույշ. ամեն բանի կհակառակին, կդըժվարացնեն, իսկ վնասվողը զորքն է։

ԴԱՐԲԻՆԸ— (Մտածկոտ) Իհարկե, իհարկե, լավ է, որ անկախ ըլլանք ու մեր ձեռքերը ազատ։ Վնասվողը զորքն է։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Եվ Սաղաթելի պես մարդը թևի տակ ունենալը ավելորդ բան չէ. անիկա մեզի ուրիշ անգամ ալ կրնա պետքի գալ։ (Ժըպտուն) Երեք քսակով ան չազատիր իմ ձեռքես։ (Կուղղվի դեպի ելքը: Վարագույրներում մեջ կհանդիպի Հարճին) Ավա՛զ, քեզի կհարցընեն։ (Դուրս):

## 5

ԴԱՐԲԻՆԸ— Ա՛, դո՞ւն ես։ Եկո՛ւր, մո՛տ եկուր։ Ինչո՞ւ ես եկեր։ Ի՞նչ լավ է, որ եկեր ես։

ՀԱՐՃԸ— Եկա քեզմե խնդրելու, որ ղրկես ինծի ուրիշ տեղ մը։ Ըսին, որ առանց քու հրամանիդ ինծի հեռանալու թույլ չեն տար։

ԴԱՐԲԻՆԸ— Եղած տեղեդ դժգո՞հ ես։ Լավ մարդիկ են, կճանչնամ։

ՀԱՐՃԸ— Ո՛չ։ Բայց ես կուզեմ հեռու գյուղ մը, տեղ մը։ Կարգադրե՛, որ թող տան երթամ Քարունչ գյուղը։

ԴԱՐԲԻՆԸ— Քարու՞նչ։ (Արհամարհոտ ծիծաղով) Հը՜, ը՜, ը՜, Նազըշը քաշվեր է Քարունչ, մե՜ծ քարոզիչը քաշվեր է Քարունչ, հիմա դուն ալ կուզես Քարունչ, բախտավոր գյուղ է, Աստված է վկա։ Մեծ Նազաշի՜, իհարկե՛, չէ՞ որ ան է, որ աշխարհքը կփոխե. իհարկե՛, իհարկե՛, միայն դժբախտաբար... բառերով, միայն բառերով։ (Հանկարծ ու զայրույթով) Ո՛չ, աշխարհքը քանդողը ան չէ՛, աշխարհքը փոխողը ան չէ՛։ Աշխարհքի կարգը պարապ խոսքերով չի փոխվիր. ուժ պետք է, ո՛ւժ, զենք է պետք, բանակ ու քաջություն։ Ուրեմն դուն Քարունչ գյո՞ւղը երթալ կուզես. գուցե կուզես մոտիկ ըլլաս իր քարոզին, լույս երեսին, ան հիմա չի բարեհաճիր մեզի հետ, մեր պարիսպներուն ետևը, մեր իշխանության տակ...



ՀԱՐՃԸ— Ես կուզեմ միայն հեռու ըլլամ քաղաքեն։

ԴԱՐԲԻՆԸ— Եվ ինչո՞ւ։

ՀԱՐՃԸ— Ատելի է ինծի. գեշ հիշատակներ կան հոս։ Ամենքը կարծես վրաս կնային, երբ կանցնիմ, կարծես մատով ինծի ցույց կուտան։ Կուզեմ օտար տեղ մը, որ ո՛չ ես ճանչնամ, ո՛չ ինծի ճանչնան։

ԴԱՐԲԻՆԸ— Պարա՜պ խոսքեր։ Եվ իհարկե պետք է մատով իրար ցույց տան քեզի։ Չէ՞ որ դուն ես զարդը մեր քաղաքի։ Դուն նշանակն ես մեր հաջողության։ Քու վառած հրդեհիդ լույսովը մտանք մենք բերդը. դո՛ւն եղար մեզի առաջին դիմավորողը, երբ դռները խորտակվեցան։ Դուն պետք է, որ մեր մեջը մնաս ու միշտ մեզի հետ։

ՀԱՐՃԸ— Եղբա՛յր, ինծի ամենեն մեծ բարիքը կընես, եթե ղրկես ուրիշ տեղ մը, օտար տեղ մը, հեռու գեղ մը, օրինակ, ինչպես ըսի, Քարունչ։

ԴԱՐԲԻՆԸ— Ո՛չ։ Ալ ատոր մասին չխոսիս ինծի։

ՀԱՐՃԸ— Բայց...

ԴԱՐԲԻՆԸ— Եվ կուզե՞ս ըսեմ քեզի՝ ինչու. բաց ու շիտակ։

ՀԱՐՃԸ— Ըսե։

ԴԱՐԲԻՆԸ— Միթե դուն ինքդ չե՞ս զգար, թե ես ինչպե՛ս կսիրեմ քեզի։ Քեզի տեսած առաջին օրերս սիրտս կպավ քեզի։ Այնպե՜ս սիրուն հագված, զարդարված, մի՞տքդ է այն օրը խորտակվող բերդի դռան մեջ բոցերու լույսին տակ։ Կհասկնա՞ս հիմա, թե դուն ինչու պետք է հոս մնաս, մի՛շտ հոս, մի՛շտ իմ մոտս։

ՀԱՐՃԸ— Եղբա՛յր, ինչե՞ր կխոսիս. ատ ի՞նչ կխոսիս։

ԴԱՐԲԻՆԸ— Ի՞նչ կա զարմանալու, կսիրեմ քեզի։

ՀԱՐՃԸ— Թո՛ղ, այդ բոլորը թո՛ղ։ Եվ դո՛ւն, որ այնպես լավ կին ունիս, ի՜նչ լավ կին ունիս։

ԴԱՐԲԻՆԸ— Կի՞ն. հա՛, ունիմ, բայց ես կուզեմ քեզի, քեզի ունենալ կուզեմ։ Դուն չգիտես. ազզի՛կ, թե ի՛նչ սիրուն ես դուն։ Դուն չգիտե՛ս։ Քու աչքերը կքաշեն, ինծի։ (Մոտենալով) Ի՞նչ կա, ի՞նչ կա քու աչքերուդ մեջ, որ այսպես կքաշե ինծի։

ՀԱՐՃԸ— (Սարսափած ետ-ետ երթալով) Էմի՛րը... Էմի՜րը...

ԴԱՐԲԻՆԸ— Ի՞նչ։

ՀԱՐՃԸ— Ճի՛շտ այդ բառերով... ճիշտ այդ բառերով...

ԴԱՐԲԻՆԸ— Թո՛ղ էմիրը, մի՛ վախնար, սատկեցուցի՛։ Հիմա ե՛ս եմ էմիրը։

ՀԱՐՃԸ— Լռե՛, լռե՛։

ԴԱՐԲԻՆԸ— Քեզի կըսեմ՝ հիմա ես եմ էմիրը։ (Թևեն բռնելով) Չե՞ս

տեսներ՝ ամբողջ քաղաքը ոտքերուս տակը, հարյուրավոր կտրիճներ իմ հրամանիս. ա՛լ ե՛ս եմ տերը, ե՛ս և միա՛յն ես։

ՀԱՐՃԸ— Թո՛ղ ինծի, թող ինծի երթա՛մ, թող երթա՛մ։

ԴԱՐԲԻՆԸ— Ո՞ւր։ Ո՛չ։ Դուն ինքդ ոտքովդ եկար ու դուն այս վայրկյանես իմս պիտի ըլլաս։ Նայե, ամենքը կխոնարհին կամքիս, ամե՛նքը։ Պիտի խոնարհիս և՛ դուն։

ՀԱՐՃԸ— Թո՛ղ ինծի, չե՛մ ուզեր։

ԴԱՐԲԻՆԸ— (Բարկությամբ) Պիտի խոնարհիս՝ կըսեմ քեզի, պիտի պառկի՛ս։ Ես այդպես կուզեմ։ Ես կուզեմ վայելեմ բոլո՛րը, բոլո՛րը։ Ես կուզեմ վայելեմ և քեզի՛։

ՀԱՐՃԸ— Ա՜խ, Աստված իմ, մի՞թե հերիք չէ քաշածս։ Թո՛ղ ինծի։ (Կուզե հեռանալ):

ԴԱՐԲԻՆԸ— (Հասնելով և նորեն բռնելով թևեն) Ո՞ւր կփախչիս, ա՛լ չփորձե՛ս։ Ինչու՞ կըլլաս դուն Թուրքի մը հարսը, իսկ իմս ըլլալ չես ուզեր։ Ինչու՞ քիթդ այդպես բարձր ես բռներ. դուն հարս մըն ես, Թուրքի մը հարսը։

ՀԱՐՃԸ— Երեսի՞ս կուտաս։ Բայց չէ՞ որ ես այրեցի, այրեցի ամբողջ անցյալը, չէ՞ որ ես այրեցի...

ԴԱՐԲԻՆԸ— Ի՞նչդ փոխվեցավ, որ փտտած տան մը կրակ տըվիր։ Իսկ ես բերդ մը գրավեցի, տիրեցի Անի քաղաքին, պիտի տիրեմ և քեզի։ Քեզի կըսեմ՝ պիտի տիրեմ՝ աշխարհք ալ որ քանդըվի, գիտցիր, պետք է տիրեմ քեզի։ Մի՛ հակառակիր, այդպես կուզեմ ես։

ՀԱՐՃԸ— (Քարացած դիրքով և խռովածքով) Իզո՜ւր այրեցի... իզուր այրեցի։ Ահա՜ մուխին ու բոցերուն մեջեն կծլի նորեն հին բերդը, կըբուսնի նորեն հին շենքը, հին պատերը, հին կապերը, և իմ ճակտիս հին սև գիրը։ Ա՜խ, իմ ճակտիս հին սև գիրը... որուն դեմ իզուր է, իզո՜ւր մաքառիլը։

ԴԱՐԲԻՆԸ— (Մեղմ) Խելո՛ք եղիր։ Ինչո՞ւ բարկացուցիր։ Հապա ինչու՞ կդիմադրես կամքիս։ Կտեսնես, որ կսիրեմ քեզի։ Չէ՞ որ կսիրեմ քեզի, ա՛յ սիրուն աղջիկ։ Կսիրեմ քու այդ աղվոր ճկուն մեջքդ, քու այդ սև-սև հյուսք մազերդ և աչքերդ քաշող, և աչքերդ քաշող, հմայող... Դուն ի՛մս ես, դուն ի՛մս ես, դուն իմս ես...

Հետզհետե փարած է անոր չերմ ու կրքոտ փաթաթվածքով: Աղջիկը անշարժ ու անդիմադիր կեցած է շիփ-շիտակ, արձանի պես:



# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԵԿ ԺԱՅՌՈՏ ԿՏՈՐԸ

Ճակատը ձորի բարձր եզերքն է, շրջանքին՝ Անիի պարիսպներուն մեկ մասը: Վարը՝ Ախուրյանն է:

Իրիկնամուտ: Ձորը թանձր ստվերի մեջ, վերը պարիսպները դեռ լույս ունին իրենց վրա՝ դեղնավուն կարմիր մը, որ տեսարանի կեսերուն ֆիշ-ֆիշ կոժգունի ու կմարի:

1

Խոշոր ժայռի մը ստվերին տակ հավաքված են Ժամկոչը, Ներկարարը և ուրիշ երկու հոգի:

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Ե՛ս, ե՛ս եմ դրդեր, ե՛ս եմ սորվեցուցեր, ե՛ս եմ առաջնորդեր։ Ան ի՞նչ էր որ առանց ինծի։ Առանց իմ խոսքիս տեղեն չէր երերար, առանց իմ խորհրդիս քայլ մը չէր առներ։ Իսկ հիմա, որ իմ աշխատանքովս մարդ դարձավ, հիմա որ կռնակը զորք ունի, հիմա կուզե ամեն բան իր քեֆովը, ինչ որ իր խելքին փչե, ես այնպես միայն, ձևի համար, կողքն ի վեր։ Ո՛չ, ես իր խաղալիքը չեմ։

ԺԱՄԿՈՉԸ— Կեցի՛ր, ես անոր խերը անիծեմ։ Երեկ գիշեր մոտն էի, քանի մը խոսք ըսի իրեն, այնպես, ընկերավարի։ Ինչ որ կըսեմ, «հա» կըսե, կարծես համոզված է ու իմ կարծիքես, բայց աչքերեն կտեսնեմ, որ մտքին մեջ վրաս կխնդա։

ԵՐՐՈՐԴԸ— Պա՛հ, դու՞ն ով ես որ, անիկա հիմա մեծ մարդ է, մեծ հերոս։

ԺԱՄԿՈՉԸ— Հերո՜ս, հա՛, իհարկե, մե՛ր շինած հերոսը, մե՛ր։ Ես էի՝ ամեն ծակուծուկ կվազվզեի, ուգցուցինք, բարձրացուցինք՝ հիմա փքվեր է իր դարբնոցի փուքսին պես. հերո՜ս...

ՉՈՐՐՈՐԴԸ— Բոլոր շնորհքով մարդիկը կփախցընե մոտեն, քանի մը լակոտներ դրեր է չորսդին, որ ամեն կողմեն խունկ կծխեն քթին։ Ըսե՛ք, խնդրեմ, օրինակ ինծի, ինչու՞ ճամփու դրավ։ Որ տեղս տա այն սրիկա լկտածի՞ն, այդպես չէ՞։ «Անպե՛տք» եմ եղեր, կհասկնա՞ք, գործիս համար անպետք եմ եղեր։ Կտեսնենք, դեռ կտեսնե՛նք՝ ով է անպետքը։

ԵՐՐՈՐԴԸ— Տո՛, միայն դու՞ն, դժգոհ են ամենքը, բայց ձայներնին քաշեր են, չեն համարձակիր. ամենքը կկարծեն՝ մենք իր հետն ենք, իր եռևը, մանավանդ, ա՛յ, Արթինը։

ԺԱՄԿՈՉԸ— Անցի՛ր այդ դժգոհներուն գլուխը, Արթի՛ն, ամենքը կուզան ետևեդ։

ՉՈՐՐՈՐԴԸ— Ամենքը կնային քեզի, Արթի՛ն։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Գիտեմ և կզգամ, որ ատիկա իմ պարտքս է. պետք է ազատել մեր քաղաքը այդ մարդու քեֆեն։ Բայց նախ հաստատ պետք է գիտնամ, որ դուք, ա՛յ, դո՛ւք, այս երեքդ. իմ ետևս եք ըլլալու միշտ ու ինծի հետ։

ԵՐԵՔԸ— Մենք քեզի հետ ենք ու քու ետևդ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Աղե՛կ. ես ալ ահա՛ խոսք կուտամ ձեզի, երբ այդ դարբինը մեջտեղեն վերնա և Անիի կառավարությունը մնա իմ ձեռքս, ես ալ միշտ ըլլամ ձեզի հետ, ձեզի կրթնած, ձեր սրտովը շարժըվիմ ու ձեր բարեկամությամբը։ Այդպե՞ս է։

ԵՐԵՔԸ— Այո՛, այո՛։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Աղեկ, ցրվինք։ Առայժմ աշխատեցե՛ք նիզակավորներու մեջ լուր տարածելու, որ ես իրենց ամսականը ավելցնել կուզեմ։ Ավագը կհակառակի։ Զորքի այդ մասը ամենե խախուտն է, հոտկե պետք է բռնկցընել։

ԺԱՄԿՈՉԸ— Այդ հողը դուն թող ինծի։ Ես արդեն քիչիկ մը հողը պատրաստած եմ։

ՆԵՐԿԱՐԱՐԸ— Գիտեմ, որ ճարպիկ մարդ ես։

ԵՐՐՈՐԴԸ— Պա՛հ, ո՞վ չի ճանչնար մեր ժամկոչը։

ՉՈՐՐՈՐԴԸ— Կաղ ու մաղ է, խելքի մաղ է։

Դուրս տարբեր կողմերե։

## 2

Ճակտի ժայռերուն մեջեն նեղ կածանով վար կիջնե Նաղաշը գլխահակ ու մտածկոտ։ Ներս կնետվի ձախեն Հարճը, կուգա ու կկենա ժայռին ստորոտը, կածանին բերանը։

ՀԱՐՃԸ— (Նաղաշի առջևը կտրելով, երբ իրեն կհասնի) Կեցի՛ր։

ՆԱՂԱՇԸ— Ի՞նչ կուզես, քույրի՛կ։

ՀԱՐՃԸ— Ո՞ւր է քու Արտավազդը, որ դուրս պիտի գար աշխարհքը քանդելու։ Ինչու՞ կնայիս գետին, նայե՛ ինծի, աչքերուս, պատասխա՛ն տուր, ո՞ւր է քու Արտավազդը։



ՆԱՂԱՇԸ— Հարցո՛ւր քո հոգիիդ, քույրի՛կ, հարցո՛ւր քո հոգիիդ։

ՀԱՐՃԸ— Ա՛, հոգիս հավտացեր էր քեզի, և ինչպե՞ս քու խոսքերուդ դեմը կվազեր սիրտս, ինչպե՛ս սուրբ էր ինծի քու Արտավազդիդ անունը և քո՛ւ անունդ։ Օրերով-գիշերներով շրթունքներս օրհնանք են տվեր քեզի։

ՆԱՂԱՇԸ— Օրհնված են քու շրթունքներդ, քույրի՛կ։

ՀԱՐՃԸ— Բայց հիմա կատեմ, կատեմ ես քեզի ու քու Արտավազդը։ Ո՞ւր է, ո՞ւր է, որ դուրս պիտի գար, ինչո՞ւ չի գար, ինչո՞ւ չի գար, ինչու՞ չի քանդեր, ինչու՞ չի վերջացըներ այս աշխարհը։

ՆԱՂԱՇԸ— Արտավազդը, քույրի՛կ, քանդելու համար չէ, որ պիտի գա, այլ՝ շինելու, կառուցելու։

ՀԱՐՃԸ— Ի՞նչ։ Սո՛ւտ է։ Ա՞տ որտեղեն հանեցիր։ Ան գա պիտի քանդելու համար, ավերի համար, վրեժի համար։ Չէ՞ որ ես կըզգամ, կըզգամ հոգիիս խորքերեն։

ՆԱՂԱՇԸ— Ես ալ, քույրի՛կ, ես ալ այդպես կըզգայի, երբ մանուկ էր վիշտս ու բողոքս՝ երեխա։ Քանդելը եռուն արյան ու խակ մտքի պահանջ է, քույրի՛կ։ Հասած հոգին, հասուն դժգոհությունը նորել կտենչա, շինել, ստեղծել։

ՀԱՐՃԸ— Ի՞նչը, ի՞նչը պիտի նորես, ինչո՞վ պիտի նորես և ինչու՞, որու՞ համար։ Նայե՛ շուրջդ, տե՛ս, մարդը գազան է, կինը՝ անասուն։ Իսկ դու՞ն ինչ ես, դու՞ն ինչ կուզես։ Ի՞նչ կփնտրես այս մութերուն մեջ, այս խավարին մեջ, բուի պես մինակ, բուի պես համառ, բուի պես քաշված, ի՞նչ կթփրըտաս ու կզարնըվիս, բոլոր պատերուն։ Ա՛, եթե գիտնաս՝ ինչպե՛ս կատեմ ես քեզի, ինչպե՛ս կատեմ ես քեզի։

ՆԱՂԱՇԸ— Բայց չէ՞ որ, քույրի՛կ, ես լույս կփնտրեմ և ազատություն և՛ քեզի համար, և՛ ինծի և ամենուն։

ՀԱՐՃԸ— Սո՛ւտ է, ազատությունը դուն կփնտրես քեզի համար, միայն քեզի։ Ուրիշի ազատությունը քու շղթան է։ Դուն ուժ ունիս, կամք ունիս, բերնիդ մեջ լեզու, և տխմար բազմությունը հմայքիդ գերի. ինչու՞ ես կեցեր, ելի՛ր, հեծի՛ր վրան ու քշե՛, որու՞ կսպասես։ Միևնույն է, վերջը այդտեղ ես գալու։

ՆԱՂԱՇԸ— Թո՛ղ ինծի, քույրի՛կ։ Հեռացի՛ր։

ՀԱՐՃԸ— Հա՛, վռընտե՛ ինծի, վռընտե՛։ Քեզի՞ ինչ, որ ես պաշտեր եմ քեզի Աստծուս պես։ Ա՛, եթե գիտնաս՝ ինչպե՛ս կատեմ ես քեզի, ինչպե՛ս կատեմ ես քեզի։

ՆԱՂԱՇԸ— Քու կամքը, քույրի՛կ։ Ես երախտապարտ եմ քեզի և՛ պաշտումիդ համար, և՛ ատելությանդ։

ՀԱՐՃԸ— (Հանկարծ) Եկո՛ւր, եկո՛ւր ինծի հետ, եկո՛ւր քանդելու

Այս աշխարհքը, այսպես է աշխարհքը, դուն չես նորելու, դուն չե՛ս փոխելու, եկուր ինծի հետ, եկուր քանդելու։ Եղիր ի՛նքդ Արտավազդը, եղիր հի՛ն Արտավազդը, եղիր ի՛մ Արտավազդը։

ՆԱՂԱՇԸ— Թող ինծի մինակ, քուրի՛կ, թող հիմա ինծի մինակ. կուգաս խոսելու, երբ վերքերդ սպիանան, երբ խոցերուդ մրմուռը մարի։

ՀԱՐՃԸ— Նորեն գամ քեզի՞, երբե՛ք։ Դու խաբեցիր ինծի։ Ո՞ւր է իմ Արտավազդը, ու՞ր է իմ Արտավազդը։ Ես կատեմ քեզի։ (Ճակտի տրամետով կանցնի ժայռերու ետին):

3

Նաղաշը տխուր կուգա առաջ կկենա, քիչ մը վերջը կնստի քարի մը, կքած ինքն իր վրա, արմունկները ծունկերուն և դեմքը ծածկած երկու ափին մեջ:

Ձախ կողմեն կմտնեն երկու հոգի, կմոտենան Նաղաշին, կկենան դեմը ու քիչ մը սպասելեն ետքը:

ՄԵԿԸ— Հավաքվեր են, եղբա՛յր։

ՄՅՈՒՍԸ— Գետին եզերքը։

ՄԵԿԸ— Հավաքվեր են քու խոսքերուդ ծարավի։

ՄՅՈՒՍԸ— Ինչպես հոգնած ու տապեն լեզուն կախած հոտը ակունքներու ջրին ծարավի։

ՆԱՂԱՇԸ— (Կամաց կբարձրացնե գլուխը կնայի անոնց):

ՄԵԿԸ— Ների՛, եղբայր, չէինք ուզեր ընդհատենք քու մտքերդ։

ՄՅՈՒՍԸ— Բայց արդեն եկեր են ու կսպասեն վարը, գետակի ափին։

ՄԵԿԸ— Կըսպասեն պատուկը շրթունքին։

ՆԱՂԱՇ— (Սթափելով) Հա՛, գետակի ափին։ Լավ է, որ հավաքվեր են։ Թող գա՛ն, ըսե՛ք, որ մոտ գան։

4

Երկուքը կըշտապեն ետ իրենց մտած կողմեն: Նաղաշ կմնա նստած, անշարժ, գլխահակ և աչքերը շեշտ հառած կետի մը:

Հետզհետե կլսվի ավելի մոտիկեն ոտքի ու խոսակցության խլրտում, և բազմությունը կխռնի ներս լուռ ու հարգանքով:

Նաղաշ հանդարտ կբարձրացնե գլուխը. կնայի, նշան կընե, որ նստին: Նստերը կտեղավորվին գետնին կամ քարերուն վրա: Պահ մը լռություն:

ՆԱՂԱՇ— (Ուժեղ, հպարտ ու տիրող շեշտով) Ես գիտե՛մ, Հետաքրքրությունը չէ՛, որ ձեզի այսօր բերեր է հոս, սովորությունը չէ՛, որ ձեզի այսօր բերեր է հոս, Նոր հույսերու ծարավը չէ՛, որ ձեզի այսօր բերեր է հոս։ Խոստովանեցե՛ք ամեն մեկդ ձեր հոգիին մեջ։ Կասկա՛ծն է, որ ձեզի այսօր բերեր է հոս, այս քարին ոտքը, այս ձորին խորքը։



«Ո՞ւր է, ու՞ր է Արտավազդը,— կպոռան հիմա ձեր սրտերը,— որ դուրս պիտի գար, նոր օր պիտի տար»։

Ահա նորեն սակավ է հացը, առատ՝ սովածը, իրավունքը պտղունցով. պարտք ու տուրքը պղինձով. կամքն ու վճիռ՝ միայն մեկուն երկուքին, խոնարհիլը պարտադիր է ամենքին, և հալածանք, սպառնալիք, բանտերը լիք. ողջ քաղաքը տակնուվրա, ուժը հեծած թույլի վրա։

Ո՞ւր է, ու՞ր է Արտավազդը,— կպոռան հիմա ձեր սրտերը, ոմանք հուսահատ, ոմանք վարանքով,— ինչու՞ դուրս չի գար. ու դուրս պիտի գա՞, և ե՞րբ վերջապես»։

Ու ես ահա կըսեմ ձեզի։ Ամրացուցե՛ք ձեր ոտքերուն կապիչները, պնդեցե՛ք ձեր գոտին ու ձեր սրտերը։ Դեռ երկար, դեռ շատ է երկար այն ճամփան, որ քալեք պիտի։ Արյուն քրտինքի, արյուն արցունքի այդ ոլոր ճամփան, գազանության ու բռնության այդ մոլոր ճամփան դեռ քալեք պիտի, դեռ շատ է երկար։

Բարձրացե՞ր եք դուք բարձր սարերը, մագլցե՞ր եք դուք ժայռ գագաթները։ Ես ալ գագաթը մոտ կկարծեի։ Քանի վարեն կդիտեի, մոտիկ կերևար, քանի իրեն կմոտենամ, հեռո՛ւ է, երկար։

«Ինչպե՞ս,— կըսեն հիմա ձեր սրտերը,— չէ՞ որ կործանեցինք բռնությունը, չէ՞ որ տապալած են էմիրն ու թուրքը, իշխաններն ու հարուստները, բոլո՛ր կեղեքողները, բոլո՛ր բռնակալները»։

Անոնք տապալեցան։ Բայց ի՞նչ շահեցաք դուք։ Միթե ավելի ծանր ու անտանելի չէ՞ ընկեր բռնակալը. ա՛ն, որ ձեր մեջեն, ձեր վզտեն ու ձեր արցունքեն է ծներ ու նստեր է ձեր հացին, ձեր բաղդին ու ձեր հոգիին վրա։

«Մա՛հ, մա՛հ և անոր»,— գուցե պոռան հիմա ձեր վրդոված սրտերը։

Իզո՛ւր։ Տապալեցիք հին բռնակալը, եկավ նորը. կտապալեք նորը՝ կուգա հաջորդը։ Ատոր վերջ չկա։ Գիտցե՛ք, ոչինչ չեք շահելու դուք, մինչև որ չխորտակեք այդ ամենքը ծնող, այդ ամենքը սնող մա՛յր բռնակալը, միակ բռնակալը, բո՛ւն, իսկակա՛նը։

ՁԱՅՆԵՐ— Ո՞վ է։ Ո՞վ է։ Ըսե՛։ Ցո՛ւյց տուր։

ՆԱՂԱՇԸ— Կըսեմ։ Բարձրացե՞ր եք դուք բարձր սարերը, մագլցե՞ր եք դուք ժայռ գագաթները։ Քանի վարն էի, ամենեն բարձր կթըվեր ինծի տեսած գագաթս։ Քանի վեր կելլեմ՝ անոր ետևեն նո՛ր-նոր գագաթներ կելլեն առջևս։ Ըսե՛մ, ըսե՛մ ձեզի։

Եթե՞ կուզե՛ք, որ փրթին ձեր բոլոր շղթաները, եթե կուզեք, որ փըրթին ձեր բոլորի շղթաները, ընկճեցե՛ք այն բռնակալը, որ կտիրե ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ, մեռցուցեք ձեր մեջի՛ բռնակալը։

Զարմացա՛ք, գիտեմ. ատ չէր ձեր լսել ուզածը. դուք կսիրեք դուրսի բռնակալները, որոնց դեմ կարելի է բողոքել, աղմկել, կրճըտել ու դավել։ Բայց ես կըսեմ ձեզի. հո՛ն է, հո՛ն, ձեր հոգիներուն թավ խավարին մեջ թափառող այն հզոր, այն անզուսպ բռնակալը, որ կուզե իշխե ամենուն վրա, կուզե խլե ուրիշներուն ունեցածը, կուզե ուտե ուրիշներուն աշխատանքը. կուզե, որ բոլորը երկրպագեն իրեն ու ծառայեն իր քմայքին ու հաճույքին. հո՛ն է, հոն, ձեր հոգիներու թավ խավարին մեջ, հո՛ն, ձեզմե ամեն մեկուն կրծքին տակ։

Պիտի ըսեք՝ Աստված է ստեղծեր մեր բնությունը։ Բայց ո՛վ ըսավ ձեզի, թե Աստված ավարտեր է արդեն իր ստեղծագործությունը։ Չե՞ք տեսներ՝ ի՜նչ խեղճ, ի՜նչ թերի աշխարհք է սա, ի՜նչ վայրի ու վայրիվերո արարչություն, և մենք բոլորս ի՜նչ թշվառ ու հակասական արարածներ։ Ո՛չ, դուք դեռ մարդ չեք, դուք դեռ այն մարդը չեք, որ Աստված ստեղծել կուզե. դուք դեռ մարդու մեկ նախնական նմուշն եք միայն։ Աստծու առաջին փորձերը անասունեն մարդը ստեղծելու։

«Ո՞ւր է, ո՞ւր է Արտավազդը» կպոռա հիմա ի՛մ սիրտս։ Ե՞րբ պիտի փրցընե ան իր կապանքները. ձեր կապանքները. ե՞րբ պիտի դուրս գա ան ձեր հոգիներու թանձր խավարեն, ձեր ներքին անդունդներուն խորին խավերեն. ե՞րբ պիտի դուրս գա, ըսե՛ք, հիմա ես եմ, որ կհարցնեմ ձեզի։ Ո՞ւր է, ո՞ւր է իմ Արտավազդը։ Ինչու՞, ինչու՞ ամուր կպահեք կալանքներու տակ, կապանքներու տակ, փականքներու տակ, ձեր կրծքերու տակ։ Ո՞ւր է, ո՞ւր է իմ Արտավազդը։ Հիմա ե՛ս եմ, որ կհարցընեմ ձեզի, հիմա ե՛ս եմ որ...

## 5

Հետզհետե տեսարանը բոլորովին մթնած է և ոչինչ չերևար: Վերջին խոսքերուն կհյուսվի հեռվեն լսվող թզուկներուն փառաբանությունը, որ քիչ-քիչ կմոտենա:

ԹԶՈՒԿՆԵՐԸ— Փա՜ռք մեր տիրոջ, Կյանքի դևին,
Փա՜ռք արարիչ իր կուռ թևին,
տիրելու տենչն հնարողին,
հաղթանակը նըվիրողին,
հեռ ու նախանձ հորինողին,



փա՜ռք մեր տիրոջ, Կյանքի դևին,
փա՜ռք արարիչ իր կուռ թևին...

Երգի ուժեղացման հետ ծայր կուտա և կարմիր լույս մը, որ գետնեն կհորդե ու հետզհետե կպայծառանա: Բացված է հաջորդ տեսարանը:

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱԶԱՏ ՄԱՍԻՍԻ ԽՈՐԻՆ ԽՈՐՔԵՐԸ

## 1

Ընդարձակ քարայր մը բարձր կամարով: Բոլոր պատերը խորդուբորդ և ստալակտիկ, որոնց վրա ամեն կողմեն բյուրեղները գույնզգույն կայծկլտան:

Գետնեն հորդող կարմիր լույսին մեջ կեցած է Կյանքի դևը լուռ ու մտախոհ: Քայլ մը ետ Հնադարյան թզուկը, խոնարհ:

ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— Ի՞նչը, ի՞նչը կմղե ինծի հո՛ս, Ազատ Մասիսի այս խոր խորքերը. ինչու՞ քայլերս ակամա կուղղվին հո՛ս, ուր շղթայված է ա՜ն, վիհերուն տակը, կրունկիս տակը, ապառաժներու տակը, ա՛ն... (Հեգնոտ) որ քանդե պիտի իմ օրենքներս, կործանե պիտի իշխանությունս։

ԹԶՈՒԿԸ— Երբե՛ք, երբե՛ք չէ ըլլալու ատիկա, կյանքի՛ տեր։

ԴԵՎԸ— Ա՛, գաճաճ, կուզեմ որ ջնջվի այդ տխմար գուշակությունը դարերուն էջեն, ջիղերուս մեջեն։

ԹԶՈՒԿԸ— Ո՞վ է ան, որ գուշակեր է։

ԴԵՎԸ— Չգիտե՛մ. գիտեմ, որ կա, պետք է չքանա։ Պետք է վերանա այդ երկմտումը մտքերուս ցանցեն, պետք է գողցըվի այդ Արտավազդը հուշերուս գանձեն։ Գուցե համոզեմ. կուզեմ արձակեմ դրած կալանքիս դարավոր ծոցեն։ Գաճա՛ճ, ի՞նչ կըսես։

ԹԶՈՒԿԸ— Ինչպես որ կուզես։

ԴԵՎԸ— Պիտի փորձեմ. գուցե համոզեմ։ Ուժեղը ե՛ս եմ, տիրողը ես եմ, ներողը ըլլալը վայել է ինծի։

ԹԶՈՒԿԸ— Տիրողին վայել է ինչ որ ուզենա։

ԴԵՎԸ— (Ոտքը գետնին տոփելով) Գետի՛ն, մա՛յր գետին, որու արգանդին սև մութին ետին գեճը կծլի, կաճի, կգլի, ուր աճումը կսաղմնանա, ուր սուրբ սաղմը կմարմնանա, ուր կխրե ու կորոնե արմատն անո-

թի, ամէ դի, իր թևերն ագահ՝ ուր կյանքի կուգա ու կխլրտի նյութը կենդանի, կսողա առաջ հյութի սնունդի, կեռա կզեռա սեռի ծնունդի, դո՛ւ մա՛յր գետին ու կյանքի՛ մայր. բաց քու կուրծքդ կյանքի դևին, երկրի զավկին, ցո՛ւյց տուր ուղին այն խոր վիհին, ուր ես օր մը վար հրեցի, գլորեցի, կալանեցի ու կնքեցի մարդու որդին, այն խեռ հոգին, ըմբոստ ոգին, այն մեծամիտն ու հանդուգը, հուսամ իջած ըլլա փուքը, թող խոնարհի ու ազատի։ Գետի՛ն, մա՛յր գետին ու կյանքի՛ մայր, բա՛ց քու կուրծքդ կյանքի դևին, երկրի զավկին, և բացվին դեմս Ազատ Մասիսի խորին խորքերը. քաշե՛, ետ նետե քու որձ ժայռերը, հանքի շերտերը՝ կավի փեռթերը, թանձր մամլըված մոխրի կուտերը, խիճի կույտերը, շըվար ջրերուդ խարխափող վազքը, մթին լճերուդ խոժոռ դիզվածքը և անդունդնե՛րդ, ճեղք ու ճաքերը, փոսն ու բացերը և քու բոցերը, քու հուրն ու լավան, որ դուրս կհևան։ Ու թող քանդըվի աչքիս կնիքը, խախտի, խարխլի՛ զոդվածքն ու նիքը, ու ցիրուցան գա այն հսկա շեղջը զայրույթիս հսկա, խորտակվի՛ դուռը՝ դուռն ու կտուրը դարավոր բանտին Արտավազդին, մարդու որդին... (Ոտքը զարնելով գետին) Բա՛ց։

## 2

Կտիրե մութ: Կլսվի գետնաշարժի ցնցում, թափվող ու պատռվող զանգվածներու թավալումը, խուժող ջրերու շառաչը, մեջեմեջ գետնեն բոցեր կցատկեն, մինչև կտիրե խորին լռություն:

Քարակույտերու անեղ ավերակի մը մեջ այրի մը լայն մուտքը, ուր աղոտ ու դալուկ լույսի մը մեջեն հազիվ կնշմարվի մարդկային կերպարանք մը տարածված ճակտի պատին:

ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— (Քարայրի մուտքին) Արտավա՛զդ, արթո՞ւն ես։

Կլսվի շղթաներու շռինդը. և լռություն:

ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— Նիրհա՞ծ ես, կխորհի՞ս, թե՞ կանիծես։

ԱՐՏԱՎԱԶԴԻ ՁԱՅՆԸ— Կտենչա՛մ։

ԴԵՎԸ— Իզո՛ւր։ Ուզե՛ ինծմե և կունենաս։ Հերիք չէ՞, ու՞ր կձգտիս ինծմե դուրս, ու՞ր կձգտիս ինծմե վեր, մարդո՛ւ որդի. մարդն ալ հասարակ կենդանի մըն է և հավիտյան հպատակ ինծի։ Խոստովանե՛ և տամ քեզի ու քու հպարտությանդ ամբողջ աշխարհներ. զորքերուդ գնդերը մորեխի նման ծածկեն բոլոր ցամաքներուն երեսը, քու առջևեդ սարսափը երթա ու ետևեդ երկրպագումը։ Թափեմ քու գիրկդ բոլոր դիզված, հափշտակված գանձերը, ադամանդներուդ խոշորությունը մանկանդ բռունցքին հետ մրցի, մարգարիտներուդ շարանը կանանոցիդ



բոլոր կին ամբոխը անծայր շղթայով մը իրարու կապե, և պետությանդ բոլոր սայլերը ճռան ու տըքան հպատակներուդ հարկն ու տուրքը անվերջ քեզի կրելեն։ Եվ փառք, պատիվ, հռչակ, մարմնիդ կորով, ճկունություն, խելք ու շնորհք, կտրուկ լեզու։ Կյանքի դևն է, որ կխոսի քեզի՝ կյանքի դևն է, որ կխոստանա։ Կյանքի կռվին բոլոր զենքերը քեզի ու քու հպարտությանդ, որ ընկճես, տիրես։

ՁԱՅՆԸ— Ես ընկճել կուզեմ քեզի. գիտե՛ս, միա՛յն քեզի։

ԴԵՎԸ— Ի՞նչ իմաստ, անմի՛տ, դարեր ու դարեր համառիլն ու կատաղիլը այդ մութ ու լռին մենության խորքը և երազելը սին երազներու, որոնք չիք են և չեն գալու։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ իմաստ ունի։

ՁԱՅՆԸ— Ի՞նչ իմաստ ունի երկրի ծոցին մեջ բոցեղեն ծովը, որ կա ու կեռա ու կփրփրի ու դուրս կձգտի, ու կուզե հորդի երկրի ընդերքեն, իր մարմնի հազար մխացող վերքեն. ինչո՞ւ կդողան ու կցնցվին իր մկանները այդ ներքին ճիգեն, իր բուռն ջանքեն, անզուսպ տենչանքեն, անանց տանջանքեն...

ԴԵՎԸ— Կտեսնեմ քեզի ոչինչ չեն ուսուցեր քար պատերը քու չորս դին, շղթաներուդ մեղեդին։ Մե՞ղք, կուզեի հաշտըվիմ ու փըշրեմ շըղթաներդ։

ՁԱՅՆԸ— Այս շղթաները փշրելու համար պիտի գա նոր ցեղ ու նոր ձեռքեր։ Քու ձեռքերդ կարող չեն։

Կլսվի կռանահարության զարկեր, որոնք կնեծեն կամարներուն տակ. կչաչեն Արտավազդի շղթաները. շներու կլանչ:

ԴԵՎԸ— (Ծաղրով) Ահա՛ քու նոր ցեղդ։ Ո՛չ, կիրամուտքներ շա՛տ կան և դեռ շատ պիտի ըլլան ժամանակներուն մեջ, դարբիններ շա՛տ կան և դեռ շա՛տ պիտի ըլլան քու հին ցեղիդ մեջ։ Իզուր ես դրեր քու հույսդ մարդուն վրա։

ՁԱՅՆԸ— Բայց պիտի գա, պիտի գա...

ԴԵՎԸ— Զարկե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին, զարկե՛ք, որ հուսա կիրամուտք է. հա՛, հա՛, հա՛, հա՛, դեռ կհուսա, զարկե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին, հա՛, հա՛, հա՛, հա՛, ան կտենչա... Թող տենչա՛։ (Հանկարծ և հատու) Սո՛ւտ է՝ սուտ գուշակությունը. ո՞վ է գուշակեր. բանդագուշանք է ու տխմար ցնորք։ Ո՛չ, այդ օրը չէ գալու։ Դուն կմնաս հո՛ս, հավիտյան դուն կմնաս հոս. քեզի ելք չկա։ (Ոտքը ուժեղ կզարնե գետին. կտիրե մութ, աղմուկ և փլուզում) Գետի՛ն՝ մա՛յր գետին, պնդե՛ քու գոտին, քաշե՛, վրա՛ բեր փեշերդ մթին, քու որձ ժայռերը, հանքիդ շերտերը, կավի փեռթերը, թանձր կույտերը, մոխրիդ կուտերը

*ու պաղած լավաշ։ Հո՛ւպ տուր՝ խառնան, պնդին, միանան։ Գետի՛ն, մա՛յր գետին, սեղմե՛ քու գոտին, քաշե՛, վրա՛ բեր քու սև քղանցքը, իր անել բանտին թող խցվի՛ անցքը։ Ահա՛ կդնեմ աչիս կնիքը, որ անխախտ մնա զոդվածքն ու նիքը այս հսկա շեղջին զայրույթիս հսկա, որուն տակ կքած՝ թող տենչա, խոկա...*

Դեռ վերջին խոսքերուն կից՝ հեռուեն և մութին մեջեն կլսվի թզուկներուն երգն ու կռանահարությունը, որ կշարունակվի առժամանակ մը մութի փարատելեն ալ ետքը, երբ բացված է արդեն հաջորդ տեսարանը։

*ԹԶՈՒԿՆԵՐԸ— Փա՜ռք մեր տիրոջ, Կյանքի դևին,*
*փա՜ռք արարիչ իր կուռ թևին,*
*ժանիք, մագիլ ստեղծողին,*
*քարը զենքի վերածողին.*
*խլելու սերն արծարծողին,*
*փա՜ռք մեր տիրոջ, Կյանքի դևին,*
*փա՜ռք արարիչ իր կուռ թևին...*

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՓՈՂՈՑ

### 1

Ճակատը նեղ ու երկար փողոց է, որ կշարունակվի դեպի խորքը հետզհետե ինքն իր վրա ծռվելով դեպի աջ, ուր կերևան մի ու երկհարկ տներու, խանութներու ներս ու դուրս ինկած անհավասար մասերը, ցուցանակներ, կախված լապեր։ Տեղ-տեղ դեմ-դեմի բել է նետած։

Փողոցի բերանը աջ կողմը տուն է, տակը մաշիկ կարող Զենոբի խանութը. դուռը դեպի տեսարանը, մեկ-երկու աստիճան նեղ սանդուղով, որը փոքրիկ պատշգամի պես բան մը կկազմե։ Փողոցի բերնի ձախ կողմը զինետուն է, մուտքը լայն ու երկփեղկ, ուրկե կերևա ներսը՝ կարասներու և կավերու շարքեր և զինեվաճառի սեղանը։ Գինետան առջևը կիսաշոր ծառի մը տակ քարե հասարակ նստարան մը ու քարե սեղան հաճախորդներու համար։ Դռանը ճակտին նախնական կոպիտ նկար մը գինի ծախողի իբրև նշանակ։

Գինետան մեջ սեղանին ետևը կեցած է զինեվաճառը չափազանց երկար պեխերով ճաղատ մարդ մը. մինչ նույն սեղանին առջևը ցած՝ աթոռակի մը վրա նստած է կարճ ու հաստ մարդ մը, անսովոր հաստ թևերը կես մը վեր հավաքած, մազի մեջ կորած լայն կարմիր դեմքով. սպանդ զենող Համբոն է, որ լուռ ու լուրջ



նստած է, ունքերը կիտած, գինիին կավը բռնած ծունկին։ Մեկ-երկու հոգի կեցած են անոր կողքը։

Դուրսի քարե սեղանին, դեմ-դեմի նստած են երկու զինվոր իրենց կավերուն առջևը՝ գոհ ու աղմկոտ տրամադրությամբ։

*Ա ԶԻՆՎՈՐԸ— Հայա՜... հայա՜... ի՞նչ գիտցար։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ—* (Ծիծաղելով) *Հա՜յ, ես քու...*

*Ա ԶԻՆՎՈՐԸ— Վե՛ր կալ, վե՛ր կալ կավդ։ Կենա՛ցդ։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ—* (Կավերը իրար զարնելով ու ծիծաղին մեջեն)։ *Շո՛ւն շան որդի...*

Կխմեն ու կլռեն։

*ԶԵՆՈԲ—* (Մաշիկ կարողը, որ իր խանութի բարձր դռանը կեցած կդիտեր, քիչ մը ավելի դուրս գալով) *Իսկ իրա՞վ է, բարեկա՛մ, կըսեն Պահլավունին զորք է առեր վրացիներեն ու կբերե մեր վրա։*

*Ա ԶԻՆՎՈՐԸ— Վրացի՞։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ— Թող գա՛, եթե կհամարձակի։ Խնդրե՛մ։ Ձեր նշանավոր Պահլավունին, իրա՛վ է, անգամ մը փախցուց իր կաշին մեր ձեռքեն. այս անգամ կքերթենք ու կկախենք մեծ դարպասի ճակատեն, որ ալ ո՛չ տանի, ո՛չ բերե։*

*Ա ԶԱՆՎՈՐԸ— Ո՛չ Պահլավունի, ո՛չ թուրք, ո՛չ վրացի, այլև ո՛չ ոք չի կրնար խլել այս քաղաքը մեր հրամանատարին ձեռքեն։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ— Մեր հրամանատարի կենա՛ցը։ Զորավար Ավոյի կենա՛ցը։*

*Ա ԶԻՆՎՈՐԸ— Կեցցե՛ Անիի փրկիչը։ Մե՛րն է, մերն է այս քաղաքը ալ հավիտյանս հավիտենից։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ— Է՜յ, գինեպա՛ն, վերցո՛ւր կավերդ։ Կգրես հաշվիս։*

*Ա ԶԻՆՎՈՐԸ—* (Կերթա քայլ մը դեպի Զենոբը) *Հասկցա՞ր, այս քաղաքը ալ ո՛չ ոք առնել չի կրնար մեր ձեռքեն։ Մենք կեցած ենք հոս, մե՛նք, արթո՛ւն ու պատրաստ։ Թող գա՛, տեսնեմ, ո՞վ պիտի առնե իմ ձանկես։ Դուն գնա՛ հանգիստ քու բանիդ, մտի՛ր կնկանդ ծոցը ու խորմփացո՛ւր. մի՛ վախնար։*

*Բ ԶԻՆՎՈՐԸ— Փո՜ւհ, գլուխդ մկա՛. քու Պահլավունի՛ն ու քու վրացի՛ն։*

Զինվորները վերջին խոսքերուն հետ կմտնեն նեղլիկ փողոցը ու կհեռանան աղմուկով ու ծիծաղով։

## 2

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— (Գավաթները հավաքելով) «Կգրե՛ս հաշվիս». ճոր-թած բերանդ վկա։ Մինչև ե՞րբ։ Կուգան, կլակեն, կլակեն ու «կըգրե՛ս հաշվիս»։ Աստծու պատիժը գրեմ ձեր հաշվին։ Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ ասոնց ձեռքը։ Քարուքանդ եղանք։ Ա՜, այդ նզոված դարբինները։

ՋԵՆՈԲ— (Մոտենալով գինետանը) Լսեցի՞ր, Համբո՛, լսեցի՞ր. երեկ-վա՛ն սատկած շները առյուծ են կտրեր մեր գլխուն։ Սպասեցե՛ք, շուտով իշխանությունը կանցնի ժողովուրդին, բո՛ւն ժողովուրդին, մեզի՛, ա՜յ, Համբոյի պես մարդը և՛ հայտնի, և՛ սիրված, և՛ ուժեղ։ Ո՞վ կա, ո՞վ, քեզ-մե ավելի ուժեղ. տավարի պոզերեն որ հուպ տաս՝ գետին կչոքին եզն ու երինջը։ Ըսե՛, ինչու՞ քեզի պես մարդը չի պիտի ըլլա մեր գլխուն այլ այդ սատկած շները։

ՀԱՄԲՈ— (Խոր ու ուժեղ շնչելով՝ վայրի ու անորոշ մռլտուք մը քթին մեջեն) Հը՜մմ...

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Ելի՛ր, Համբո՛, իջեցո՛ւր երկաթե բռունցքդ դարբ-նի մարդոց ռեխին, որ կորչին. ո՞վ են որ, քանի՞ հոգի են։ Դուն քու ետևդ այնքա՛ն մարդ ունիս և ի՞նչ մարդ, բոլոր տավար զենողները, տե՛ս, այս կտրիճները։ Ես ալ իմ ետևս մարդիկ ունիմ։ Մեզի հետ է ինքը Նաղաշը և բոլոր նաղաշյանները։ Կորչի՛ն դարբնի մարդիկը։ Եթե անոնք հպարտ են, չը իրենց ձեռքերը մրոտ են ու ներկոտ, նայե՛, իմ ձեռքերս գինիոտ են, իսկ քուկինդ՝ արյունոտ։

ՀԱՄԲՈ—(Նույն վայրի մռնչյունով բռունցքը կզարնե սեղանին) Հը՜մմ...

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Տո՛ւր, սատկեցո՛ւր մեկ-երկուքը. մնացածները կուգա՛ն ետևեդ։

ՋԵՆՈԲ— Կորչին բռնակալները. պլոկեցին, սրբեցին ամբողջ քա-ղաքը, կերան, լափեցին ամեն ինչ, քիչ մըն ալ որ սպասենք՝ ալ ոչի՛նչ չի մնար մեզի։ Քիչ մըն ալ մեզի։ Կեցցե՜ ժողովուրդը, կեցցե՜ Նաղաշը։ Ուժեղ բռունցք է պետք, Համբո՜, ուժեղ բռունցք է պետք։

ՀԱՄԲՈ— Հը՜մմմ... (Մեկ թափով կխմե կավը գլուխը, կդատարկե, կդնե սեղանին, կելլե ոտքի ու ձեռքերը կողքերուն դրած, ճոճուն քայլվածքով կերթա դեպի ճակտի փողոցը։ Իր մարդիկն ալ անոր ետևեն):

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Ապրի՜ Համբոն։

ՋԵՆՈԲ— Համբո՛, մենք քեզի հետ ենք, աչքդ բա՜ց պահե։



## 3

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Խելքդ ի՞նչ կկտրե, Ջենո՛բ, բան դուրս պիտի գա՞ այդ տավար զենող տավարեն։ Աստված անոր մարմինը ստեղծելու ատեն խուքի է բռնվեր, գլուխ շինելու համար վերցուցած հողը մոռցեր է ու փակցուցեր է թևերու միջին։

ՋԵՆՈԲ— Աստծու բաները անքննելի են, հարևա՛ն։ Անոր գլուխը Աստված դրեր է իմ ու քու ուսին։

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Գիտե՞ս ինչ, Դարբինը չէ, բայց Ներկարարը շուն մարդ է, հանկարծ քիթը հոտ չառնե. բաներնիս բուրդ կդառնա։

ՋԵՆՈԲ— Ա՜յ խելքի՛ տոպրակ, աչք չունիս, ի՞նչ է։ Դարբինն ալ Ներկարարն ալ արդեն զույգ մը մաշված մաշիկ են, ինչ ոտքի ալ որ անցընես՝ պճեղները դուրս կիյնան. պետք է նետվին աղբյուսը։ Չե՞ս տեսներ ինչ որ կդառնա չորս կողմը։ Պետք է նետվին աղբյուսը։ Բանը ա՛ն է, թե ով պիտի գա անոնց տեղը։

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Ուրեմն ես ու դու՞ն։

ՋԵՆՈԲ— Եթե ամուր նստինք այդ տավարին մեջքը։

ԳԻՆԵՎԱՃԱՌԸ— Եթե ամուր նստինք ու ամուր խթենք։

ՋԵՆՈԲ— Հա՛, հերթը մերն է. վերջապես քիչ մըն ալ մե՛նք յուղո-տինք, թե չէ այսպես մաշիկ կարելով, քոշ կարկտելով...

## 4

Ձախեն աղմուկով ու վենով կմտնեն խառն-խառնրինց հոգի զանազան արհեստի աշկերտներ ու օգնականներ՝ տասը տարեկանեն սկսած մինչև հասուն մարդիկ։

ԽՈՒՄԲ ՄԸ— Նամարտ է ով երթա գործի։ Նամարտ է ով երթա գործի։

ՄԵԿԸ— Կերթամ՝ ո՞նց չէ, վարպետիս կակալ քիթը վկա։

ՏՂԱ ՄԸ— (Պարելով) Ջա՜ն, ջա՜ն, քեֆ... Ալ ո՛չ ապտակ, ոչ մշտի, ո՜չ ականջ քաշուկ, ո՛չ քացի, ո՛չ կսմիտ... ալ պրծավ, տփոցը պրծավ...

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— Վարպե՛տ, գինի՛ բեր, գինի՛ բեր ինծի։

Գլխավոր խմբին մեջ աղմկոտ վեճ է, որոշ կլսվին ընդհատ նախադասություններ։

ՁԱՅՆԵՐ— Դատարկ խոսքեր են։
— Ո՛չ, կեսը մեզի, կեսը մեզի։
— Ինծի ո՛ր մնա...
— Թողե՛ք որ խոսի։
— Վա՜հ, մե՛նք ալ մարդ ենք։

ՍՈՂՈՄՈՆ— (Թարմ երիտասարդ մը, խիստ նուրբ ու քնքուշ կազմով, գրեթե աղջկա գեղեցկությամբ, աչքերը կվառին, ձայնին մեջ դող, կցատկե քարե նստարանին վրա և ոգևորված) Ո՛չ, ո՛չ, ձեր բոլոր ըսածը կիսատ բաներ են։ Լսեցե՛ք ինծի, լսեցե՛ք ինծի։

ՁԱՅՆԵՐ— Թողե՛ք, թողե՛ք խոսի Սողոմո՛նը, Սողոմո՛նը։

ՁԱՅՆ ՄԸ— Սողոմո՛ն, խոսե՛։

ՍՈՂՈՄՈՆ— Ի՞նչ ըսել է՝ քառորդը մեզի, կամ կեսը մեզի։ Հիմար խոսքեր են։ Ամենքս կաշխատինք, ամեն մեկս մեր տարիքին ու կարողության համաձայն, ուրեմն հավասար ենք ամենքս։ Սա հանցավո՞ր է, որ դեռ տղա է, կամ ա՞ն, որ դեռ սեփական իր գործը չունի։ Ուրեմն ի՞նչ ըսել է վարպետ կամ աշկերտ։ Չէ՞ որ մեր վարպետները խլեցին բոլոր վաճառականներուն ունեցածը, ըսին՝ պետք չէ ըլլա հարուստ ու աղքատ, ինչու՞ պիտի ըլլա վարպետ ու աշկերտ։

ՁԱՅՆԵՐ— Այո՛, այո՛, ինչու՞։
— Ո՛չ վարպետ, ո՛չ աշկերտ։

ՍՈՂՈՄՈՆ— Բոլորիս պետք է պատկանի խանութն ու ապրանքը. ինչպես աշխատանքը, այնպես ալ շահը։ Ամեն մեկը լավ մը կուշտ պիտի ըլլա և տաք հագվի մարդավարի։ Չէ՞ որ՝ ամենուն փորն ալ միևնույն փորն է։

ՁԱՅՆԵՐ— Ամենուն փորը միևնույն փորը։

ՏՂԱ ՄԸ— (Խնդալով) Բոլոր փորերը իրար հավասար։

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ— Ջա՜յնդ, լակո՛տ։

ՄԵԿԸ— Կպահանջենք Սողոմոնի ըսածին պես։ Վարպետ չենք ուզեր։ Խանութը մեզի, ապրանքը մեզի, բոլոր շահը մեզի։

ԲՈԼՈՐԸ— Չե՛նք ուզեր, վարպետ չենք ուզեր։

ՄԵԿԸ— Կպահանջենք, կպահանջենք։

ՈՒՐԻՇ ՄԸ— Աղե՛կ, որ չտա՞ն։

ՍՈՂՈՄՈՆ— Չտա՜ն, ինչպե՜ս թե չտան։ Սրբթանք կառնենք, կխլենք։ Իրենք ինչպե՞ս ըրին։ Հիմա այլևս արդարություն է, հավասարություն։

ՁԱՅՆԵՐ— Արդարություն է, հավասարություն։ Կեցցե՜...

ՈՒՐԻՇՆԵՐ— Սո՜ւս, սո՜ւս... (Դեպի խորքը նայելով) Սա ի՞նչ բան է։



## 5

Մթնած է բավականին:

Ճակտի փողոցին մեջ իրարանցում. կվազվզեն, շատերը դուրս կթափին տներէն ու խանութներէն:

ՇՇՈՒԿ— (Բերնէ բերան) Դարբնի գլո՜ւխը։ Դարբնի գլո՜ւխը։

Տեսարանի աջէն ներս կմտնէ Համբոն իր հետևորդներով: Զենոբ կերևա իր խանութի հարթակին: Տեսարանի ձախ կողմը աշկերտներն են: Իսկ խորքէն կհառաջանա ժամկոչը՝ խոսելով գրգռված մեկ-երկու հոգիի հետ: Հետաքրքիր բազմություն մը անոնց խոսածը լսելու ջանքով անոնց ետևեն:

ԺԱՄԿՈՉԻ ԽՈՍԱԿԻՑԸ— (Ոգևորված) Ինքը ներկարա՞րը, ներկարա՞րը։

Երբ կհասնին գինետան առջևը՝ ժամկոչը կանգ կառնէ՝ ձեռքի լռության ուզող շարժումով մը: Բոլորը կանգ կառնեն ու կլռեն:

ԺԱՄԿՈՉԸ— Ինկա՛վ զզվելի բռնակալը, Անիի քաղաքացինե՛ր, և հիմա իր գլուխը հովեն կերերա այն շենքի ճակտին, ուրկե կուզեր ձեզի, մեզի, բոլորիս իր սարուկը դարձընել։ Մեր քաղաքի ամենեն շիտակ, ամենեն անձնվեր ու ամենեն քաջ մարդը հաջողեցավ փրկարար հարվածը իջեցընելու։ Զինվորներու մեծագույն մասը իր հետն են արդեն։ Կեցցե՜ ժողովուրդի իսկական բարեկամը, մեր ազատության անքուն պահապանը։ Կեցցե՜ ներկարար Արթինը։

ԺԱՄԿՈՉԸ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԽՈՒՄԲԸ— Կեցցե՜ մեր ներկարարը։

ՁԱՅՆ ՄԸ— Կեցցե՜ մեր փրկարարը։

ԺԱՄԿՈՉԸ— Կավետեմ քեզի, Անիի՛ ժողովուրդ, կատարվեցավ գուշակությունը. ահա՜ վարպետ Արթինի կերպարանքին տակ Արտավազդը փրցուց իր շղթաները և դուրս եկավ ծեր Մասիսի այրերեն ու բերավ տենչալի ազատությունը ամենքին։ Այլևս ամեն բան ժողովուրդի ձեռքով ու ժողովուրդի համար։ Շնորհավորեցե՛ք իրար, ավետեցե՛ք բոլորին ու քեֆ ըրեք, քեֆ ըրեք ամբողջ գիշերը. ծախքը կհոգա գանձարանը։

Խժլտուք, խառն խոսակցություն:

ԺԱՄԿՈՉԸ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԽՈՒՄԲԸ— Կեցցե ներկարարը, կեցցե՜ գանձարանը։

ՄԵԿԸ— (Իր քովինին) Արտավազդը եկեր է վարչատու՞ն, նե՞րսն է։ Սրբթանք տեսնենք։

ՔՈՎԻՆԸ— Տո՛, սարսա՛ղ, Արտավազդը բաժը բաց է, քա՛ջք, ո՞նց պիտի տեսնես։

ՆԱԽՈՐԴԸ— Հաա՞։

## 6

Աշկերտներուն ետևեն կլսվի կնոջ սուր ու հիվանդոտ ծիծաղ մը: Աշկերտներեն մեկ-երկուքը կփաշվին ետ: Կերևա Հարճը, կարմիր լաթով մը մազերը կապած. երկու ձեռքերը կրծքին սեղմած՝ կխնդա: Հանկարծ կկտրե ծիծաղը, բարկացկոտ կնայի շուրջը վայրի նայվածքով, կցատկե քարե նստարանին վրա և կխոսի գրգռված ու գրգռող շեշտով մը:

ՀԱՐՃԸ— Ի՞նչ եք կեցեր ապուշի պես, բերաննիդ բաց։ Չե՞ք տեսներ, որ ձեզի նորեն իշացնել կուզե, որ նորեն ցատկե ձեր կռնակը։ Մի՛ խաբվիք, մի՛ խաբվիք։ Այդ նոր դիշատիչը քանի դեռ չէ տեղավորվեր ձեր մարմնին վրա, ձեր հոգիին՝ վրա՛ տվեք, ջարդեցեք, սատկեցուցեք. ատոնք բոլորը միևնույն են, նույն գազանը, երբ անգամ մը ուժը իրենց ձեռքն անցնի։ Վազեցե՛ք, վաղը արդեն ուշ կըլլա, ուշ...

ՎԱՐԴԵՏ ՋԵՆՈԲԸ— (Իր հարթակեն) Համբո՛, կլսե՞ս, Համբո՛, ինչ կխոսի այդ կինը։ Աստված կխոսի իր բերնովը։

ՀԱՐՃԸ— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, վազեցե՛ք, բռնեցե՛ք ու քաշ տվեք անոնց մազերեն (Կքաշե իր գլխու կարմիր թաշկինակը, մազերը կթափին դեմքին ու ավելի կատաղի արտահայտություն կուտան, մինչ ինքը կխոսի շարժելով ձեռքի կարմիր թաշկինակը) Քաշեցե՛ք, փռեցեք գետին, ձեր ոտքերուն տակ, մեր բոլորիս ոտքերուն տակ, հանե՛նք վերջապես մեր բոլորի վրեժը։ Հերիք է, բոլո՛ր տերերը մեր ոտքերուն տակ, բոլոր, բոլոր իշխողները մեր ոտքերուն տակ։

ԱՇԿԵՐՏՆԵՐԸ— Այո՛, մեր ոտքերուն տակ, բոլո՛ր վարպետները մեր ոտքերուն տակ։

ՎԱՐԴԵՏ ՋԵՆՈԲ— Համբո՛, կլսե՞ս, ի՞նչ կպահանջեն ամենքը։

ՀԱՐՃԸ— Երթա՛նք, երթա՛նք, ավերենք իրենց տները, իրենց բույները։ Այրե՛նք, այրե՛նք իրենց բոլոր որջերը։

ՋԱՆԱԶԱՆ ԿՈՂՄԵՐԵ— Այրե՛նք, այրե՛նք...

ՀԱՐՃԸ— Մինչև բոցերը երկինք չլիզեն, մինչև բոցերը ավեր չդիզեն՝ մեր ցավերուն հովացում չկա։ Վազեցե՛ք, վառեցե՛ք ձեր ջահերը, ձեր մարխերը, կրակները, վառեցե՛ք ձեր վրեժը, ձեր այրող ոխն ու կատաղությունը... Առա՜ջ, ամե՛նքս առաջ, հոս մարդ չմնա։



ՍՈՂՈՄՈՆ— Սո՛ւրբ ես դուն ու քու խոսքերդ՝ հայտնությունք երկրնքի։ Առա՛ջ ինկիր, սրբուհի՛, մենք բոլորս քու ետևեդ։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Մենք բոլո՛րս, բոլո՛րս։

ՎԱՐԴԵՏ ՋԵՆՈԲ— Համբո՛, դուն ալ։ Մենք բոլոր քու ետևեդ։

ՀԱՄԲՈՅԻ ՇՐՋԱԳԱՍՏԸ— Մենք բոլո՛րս, բոլո՛րս։

ԺԱՄԿՈՉԸ— Կեցե՛ք, կեցե՛ք, դուք չգիտեք ինչ կընեք։ Այդ խելագար կինը ձեր խելքը առավ։ Չե՞ք տեսներ, անառակ կին մըն է, ցափ ու խառնակյաց աղիճ մը։

ՍՈՂՈՄՈՆ— Ի՞նչ։ Ո՞վ է ցափ, ո՞վ է աղիճը. այս սուրբ աղջի՞կը։

ՈՒՐԻՇ ՄԸ— Ցափը դուն ես, կա՛ղ շուն, դուն ես լկտին, անառակը։

## 7

Կհամարձակվի ժամկոչին վրա: Ժամկոչը շրջապատողները կվազեն պաշտպանելու: Հանկարծ Համբոն խոր ու խուլ մռնչյուն մը կարձակե ու կնետվի բազմության մեջ. բռունցքի մեկ հարվածով գետին կփռե ժամկոչը: Ճիչ, պոռոց ու փախուստ:

ՁԱՅՆԵՐ— Մեռա՛վ, մեռա՛վ։ Փախե՛ք։ Մարդ կըսպանեն, փախե՛ք։

ՁԱՅՆԵՐ— Ապրի՜ Համբոն, ապրի՜ Համբոն։

ՋԵՆՈԲ— Դե՜, տղա՜ք, առա՜ջ, շիտա՛կ վարչատուն. սատկեցընենք այն մյուսն ալ, այն մյուսը, այն խորամանկ ներկած աղվեսը։

ՀԱՐՃԸ— (Հափշտակված ու ինքնամոռ) Այո՛, առա՜ջ, առա՜ջ, բոցերուն մեջե՜ն։ Երթա՜նք ու վառե՛նք, և ամեն ինչ անցնի բոցերուն մեջեն, պարող ու դարձող բոցերուն մեջեն, թեքվող, ոլորվող բոցերուն մեջեն. բոլորը, բոլորը բոցերուն մեջեն, բոլոր տերերը ու պալատները, իրենց քուրջերը, իրենց որջերը, բոլո՛ր քաղաքը բոցերուն մեջեն։ Կործանվի՜ այս անիծած քաղաքը, ա՜, կործանվի այս անիծած քաղաքը։ Բոցերուն մեջեն, բոցերուն մեջեն...

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— (Հարճի թևերեն բարձրացուցած, մեծ ոգևորությամբ ու հաղթանակով, ուղղվելով դեպի ճակտի նեղ փողոցին խորքը) Բոցերուն մեջեն... բոլոր տերերը ու պալատները, իրենց քուրջերը, իրենց որջերը, բոլորն անցընենք բոցերուն մեջեն, բոցերո՛ւն մեջեն, բոցերուն մեջեն...

Կմնա միայն ժամկոչի դիակը գետնին:

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԸՆԴԱՐՁԱԿ ՍՐԱՀ ՄԸ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԵՋ

Սրահը մեկ-երկու սյունով բաժնված է ետևի մասեն, ուր սանդուղներու գլուխն է և գլխավոր մուտքը: Կողմնակի դռներ աջեն ու ձախեն:

### 1

Սանդուղի գլխուն ճանի մը զինվոր իբրև պահակ: Վրացի զորավարն ու վրացի գնդապետ մը կեցած են իրար քով սպասողական: Խորքի սանդուղներեն ծանր կբարձրանա Իշխան Պահլավունին. ետևեն՝ պաշտոնյա մը:

Բոլորը զինվորական բարև կուտան:

*ԻՇԽԱՆ ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆ— Բարի օր ու բարի լույս իմ թանկագին հյուրերուս։ Կցավիմ, որ ամեն բան ավեր է ու կողոպտված պալատիս մեջ, ինչպես որ կտեսնեք, և ես անկարող ձեր ճաշակին ու սովորույթներուն համար ու վայել դյուրություններ ընծայելու։ Առայժմ պիտի գոհանաք, ինչ որ կա, մինչև որ ապարանք մը կարողանամ քիչ-շատ կահավորել ու դնել ձեր տրամադրության տակ։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Մենք շատ շնորհակալ ենք, իշխա՛ն, ձեր հարկեն, ձեր պատիվեն ու ձեր հյուրասիրութենեն։ Իզուր կգանգատիք, մեզի ոչինչ պակաս չէ եղած։ Եվ սքանչելի ալ քնացանք։*

*ԻՇԽԱՆԸ— Այդ մեկում չեմ զարմանար։ Վերջին օրերու արագ արշավեն, կռիվներեն ու հոգնութենեն ետքը ձեր արդար իրավունքն է քունը։ Զորավա՛ր, ո՛չ ես և ո՛չ ալ այս քաղաքը այլևս երբեք մոռնալու չենք այն սրտագին օգնությունը, որ վրացի զորքը ցույց տվավ։ Այս լիակատար ու արագ հաջողությունը ես կպարտիմ քու և քու զորքիդ արի քաջությանը, զորավա՛ր։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Այս լիակատար ու արագ հաջողությունը մենք կպարտինք քու խորհուրդներուդ ու փորձառությանդ, Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Դեսպաններս վաղը կհասնին Դավիթ թագավորին ավետելու ուրախ լուրը։ Քաղաքը լիովին մեր ձեռքը, խռովարարները ջարդուբուրդ, սինլքորը փախստական, ապստամբության հրդեհը մարած, և ժողովուրդը բերկրանքի մեջ իր ազատությանը համար։ Անի քաղաքը այսօրվընե սկսած կգտնըվի Դավիթ մեծ թագավորի քրիստոնեական վերին հովանիին տակ։*



*ԶՈՐԱՎԱՐԸ— Երջանիկ ենք իմ թագավորս ու ես, որ կրցանք մեր օժանդակությունը բերել քեզի, Իշխա՛ն, և հայ ժողովուրդին։*

*ԻՇԽԱՆԸ— Անհուն շնորհակալ եմ և խնդրեմ առայժմ ներող ըլլաք, որ հարկադրըված եմ ձեզի թողնելու։ Գիտե՛ս, որ դեռ գործ շատ կա կատարելու։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Խնդրեմ, Իշխա՛ն, խնդրեմ։*

*ԻՇԽԱՆԸ—* (Աջեն դուրս):

### 2

*ԳՆԴԱՊԵՏԸ— Կտեսնե՞ս խռովածքը, շեշտը, ինքզինքը պահելը։ Մցխեթի պալատին մեջ բոլորովին ուրիշ տեսակ էր։ Աքլորը քաջ է իր բունին մեջ։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Բայց իր բունի պարիսպներուն վրա մե՛ր զորքն է թառած ու իր բունի միջնաբերդն ալ՝ մե՛ր զորքին ձեռքը։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Հա՛, բայց ան մեզի բերեր է, որ մենք կռվինք, ինքը իշխե։ «Վրաց թագավորի վերին քրիստոնեական հովանիին տակ». չըլսեցի՞ր, գոլորշիացանք, ամպերուն հասանք։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Համբերությո՛ւն...*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Հայ է, զորավա՛ր, մի՛ մոռնար։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Ահա՛ կեցած եմ ես հոս ու ինծի հետ ալ վրացի զորքը ու կըսեմ քեզի՝ այլևս ո՛չ ես դուրս կուգամ հոսկե, ո՛չ ալ վրացի զորքը։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Եթե այդ հայը արգելք չդառնա։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Թե արգելք դառնա՝ մեջտեղեն կմաքրենք։ Մե՛րը պիտի ըլլա այս սքանչելի հարուստ քաղաքը, մե՛րը պիտի ըլլա, ինչ գնով ալ ուզե ըլլա։ Եվ գիտե՞ս ինչ հեռանկարներ կբացվին աչքիս առջև. Վրաստանի սահմանները ետ-ետ կփախչին սուրիս առջևեն և մինչև ու՞ր, մինչև ու՞ր, ո՞վ կրնա ըսել։ Մեծ հաջողություն պարգևեց Աստված մեզի։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Որու համար, զորավա՛ր, կարծեմ արժե, որ մեկերկու գավաթ։*

*ԶՈՐԱՎԱՐԸ— Ա՛, Պահլավունի իշխանի գինին, ա՛յ, ատոր ըսելիք չունիմ, պատվական բան է. իր ծածուկ նկուղներեն, որոնց մուտքը մեր արդար ու բարի Աստվածը կարծես անձամբ ինքն է պահպաներ մեզի համար գռեհիկ ամբոխի սրբապիղծ հպումեն։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Գինին լավն է, գեշ չեն և աղջիկները, ճաշակիդ պիտի գան։*

ԶՈՐԱՎԱՐԸ— Հա՛, արդեն համը առեր ես։

ԳՆԴԱՊԵՏԸ— Աստված որ հաջողությունը տա, հայտնի բան է, երկու ձեռքով կուտա։

ԶՈՐԱՎԱՐԸ— (Անոր ուսը ծեծելով) Եղբայր, խմենք մեր ամեն տեսակի հաջողություններուն կենացը... (Մաղրով) Պահլավունի նկուղներու հին ու ծածուկ գինիեն...

ԳՆԴԱՊԵՏԸ— Որ արդար ու բարի Աստվածը անձամբ է պահպաներ մեզի համար։ (Խոսելով կիջնեն միասին ճակտի սանդուղներեն):

3

Ձախեն կմտնե պաշտոնյա մը, ետևեն՝ Հարճը: Պաշտոնյան կերթա դեպի աջի մուտքը, կբանա դուռը, ուրկե քիչ մը ետքը դուրս կուգա Իշխան Պահլավունին:

ԻՇԽԱՆԸ— (Պահ մը շեշտ կինը դիտելեն ետքը) Ինծի անձամբ տեսնել ես ուզեր։

ՀԱՐՃԸ— (Գլխով կընե):

ԻՇԽԱՆԸ— Ըսեր ես՝ կարևոր բան ունիս հայտնելու։

ՀԱՐՃԸ— (Գլխով կընե):

ԻՇԽԱՆԸ— Իսկ ո՞վ ես դուն։

ՀԱՐՃԸ— (Լուռ է):

ԻՇԽԱՆԸ— Խոսե՛։

ՀԱՐՃԸ— Գիտեմ, եկեր ես վրեժ լուծելու։ Բարի՛ ես եկեր։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ։

ՀԱՐՃԸ— Երկու օր է, որ եկեր ես և երկու օր է, որ արյունը կհոսի, և երկու օր է, որ բանտերը կլեցվին. վրեժը լա՛վ բան է, բարի՛ ես եկեր։ Ես ալ եկեր եմ ահա՛ քեզի օգնելու։

ԻՇԽԱՆԸ— Օգնելու՞։

ՀԱՐՃԸ— Ես կուտամ քեզի քու բոլոր թշնամիներուդ անունը, որ արյունը հոսի ու բանտերդ լենան, և շա՛տ-շատ է անոնց թիվը. չի խնայես, չարժե՛ն, որ խնայես։

ԻՇԽԱՆԸ— Անվանե՛ տեսնեմ։

ՀԱՐՃԸ— Նախ պայման մը։

ԻՇԽԱՆԸ— Կլսեմ։

ՀԱՐՃԸ— Կա ատոնց մեջ մեկը, որուն ձեռք չես տալու. միա՛յն մեկը։ Խո՛սք պիտի տաս։

ԻՇԽԱՆԸ— Քու ի՞նչդ է։



ՀԱՐՃԸ— Ի՞մ։ Ոչի՛նչ։

ԻՇԽԱՆԸ— (Ժպտում) Ոչի՞նչ։ Իսկ ինչ է քու անունդ, հարցուցի քեզի։

ՀԱՐՃԸ— Ամենքը ինծի կկանչեն հարճ։

ԻՇԽԱՆԸ— Ա՜... դո՞ւն ես այն նշանավոր հրձիգը։ Մենք կփնտրեինք քեզի։

ՀԱՐՃԸ— Ե՛ս եմ վառեր, այո՛, բոլոր այն տխմար ու վախկոտ մարդոց սրտերը, ե՛ս եմ վառեր անոնց հոգիներուն մեջ վրեժն ու կատաղությունը, ե՛ս եմ վառեր ձեր բոլոր պալատներն ու տները, գազաններու այդ զզվելի բույները։ Ե՛ս, ի՛մ ձեռքիս գործն է այդ բոլորը։ Հարցո՛ւր ու տե՛ս, այդ բոլորին մեջ Նաղաշը ոչ մեկ դեր չունի։

ԻՇԽԱՆԸ— Ա՜խ, դուն կխոսիս այն կեղծ մարգարեի մասի՞ն։

ՀԱՐՃԸ— Քեզի կըսեմ՝ ես եմ ըրեր ու լուծեր եմ վրեժս. հիմա ալ ահա՛ եկեր եմ քեզի. կուզես՝ շինե՛ ինծի քու վրեժիդ գործիքը. կուզես՝ զա՛րկ վրեժդ իմ գլխուս, իբրև քու ամենեն անկուշտ թշնամիդ, որովհետև զզվելի ես դուն ալ ինծի համար այնպես, ինչպես բոլոր մյուսները։ Թողե՛լ տուր ինծի, կախե՛, սպանե՛, թափե՛ իմ վրաս քու բոլոր կատաղությունդ, իրավո՛ւնք ունիս։ Բայց հարգե՛ պայմանդ. բա՛ց թող Նաղաշը, ձեռք մի՛ տար անոր։

ԻՇԽԱՆԸ— Այդպե՞ս. լա՛վ։ (Ձեռքի նշան մը կընե պաշտոնյային, որ կհեռանա սանդուղներեն վար):

4

ՀԱՐՃԸ— Եվ ինչու՞ ես բռներ, ան ի՞նչ է ըրեր։ Դուն չգիտես, (Հեգնոտ) ան շինե՛լ կուզե միայն, շինել ու կառուցել։ Քանդողը, այրողը և սպանողը մե՛նք ենք, մե՛նք, ես ու դուն։

ԻՇԽԱՆԸ— Եթե իրավ այդպես կսիրես ու կցանկաս, որ Նաղաշը ապրի, լա՛վ, ազատե՛։

ՀԱՐՃԸ— Ե՞ս։

ԻՇԽԱՆԸ— Թող ե՛տ առնե իր ըսածները։ Ահա՛ կբարձրանա, գնա՛ դեմը ու համոզե՛, թող ուրանա՛ իր հիմար Արտավազդը, և ես կխոստանամ՝ կապրի ի՛նքը, կապրիս դո՛ւն։ Գնա դե՛մը։

## 5

Հարճը սաստիկ ցնցումով կքաշվի ետ-ետ: Խորքեն կլսվի շղթաներու շխկ-կը. սանդուղներեն ծանր կբարձրանա Նաղաշը ձեռքերն ու ոտքերը շղթայված: Երկու կողմեն մեյ-մեկ զինվոր, ետևեն՝ պաշտոնյան:

Նաղաշը կուգա շիտակ Իշխանին դեմը կանգ կառնե առանց չուրջը նայելու:

*ԻՇԽԱՆԸ— Առա՛ջ եկուր, կի՛ն։ Առաջին խոսքը քուկդ է։*

Նաղաշ ծանր կդարձնե գլուխը Հարճի կողմը, և երկուքը վայրկյան մը շեշտ կնային իրար լուռ ու անշարժ: Հարճը դողդողուն քայլ մը կընե դեպի Նաղաշը և ճանկարծ բուռն շարժումով կնետվի գետին անոր ոտքերը և բարձրացնելով անոր ձեռքերուն երկար շղթան, թափով կսեղմե շրթունքին:

Ամենքը մռայլ ու լուռ:

*ԻՇԽԱՆԸ— Լա՜վ, հերի՛ք է։ Ելի՛ր։ Կըսպասեմ խոսքիդ։*

*ՀԱՐՃԸ—* (Հանկարծ վեր կթռչի ու դառնալով դեպի Իշխանը, այլակերպ խոսվածքով) *Դուն հաղթեր ես, դուն հաղթող ես ու եկեր ես, դուն տերն ես. ըրե՛ ինչ որ կուզես, ըրե՛ ինչ որ կրնաս, ազատ ես։ Բայց ա՛ն թո՛ղ ապրի, անոր ձայնը թո՛ղ որ ապրի, ապրի մեր մեջը ու մեր հոգիներու խորքը։ Ի՞նչ վնաս քեզի. անոր ըսածը չկա հիմա ու չի կրնար ըլլար. ձայն մըն է, երգ մը, անուշ եղանակ մը, նո՛ր, աղվոր, հեռավոր։ Դուն իրավունք չունիս մարելու այդ ձայնը, դուն իրավունք չունիս խեղդելու, մեռցընելու հոգիի ամեն շարժում, ամեն ձգտում և չե՛ս կրնար. անոր խոսքը մեր բոլորի հոգիներեն է, որ կուգա, և քո՛ւ, և քու հոգիեդ, չէ որ դուն ալ մարդ ես։ Հանե՛լ տուր, հանե՛լ տուր իր շըղթաները, թող երթա՛, ապրի՛։ Քեզի մարմին է պետք, քեզի մարմին է պետք, որ հոշոտես, մարմին, որ տիրես, մարմին, որ վայլես. ահա՜ մենք բոլորս, մենք բոլորս միս քեզի...*

*ԻՇԽԱՆԸ—* (Պաշտոնյային) *Հեռացո՛ւր այդ մոլեգնած բանդագուշող կինը։ Եվ կհսկես վրան։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ—* (Բռնելով Հարճի թևեն) *Քալե՛։*

*ՀԱՐՃԸ— Ե՜ս... ես կուգամ, ես կուգամ։ Մենք ի՜նչ, մենք բոլորս իրեն միս, մենք բոլորս մի՛ս իրեն, մենք բոլո՛րս միս իրեն։*

Կիջնեն սանդուղներեն վար:



## 6

*ԻՇԽԱՆԸ— Դուն... դուն շատո՞նց է, որ կճանչնաս այդ կինը։*

*ՆԱՂԱՇ—* (Կեցած է շիտակ, թեթև մը գլխահակ ու լուռ):

*ԻՇԽԱՆԸ—* (Հեգնոտ) *Ասո՞նց ձեռքովն է, որ փրցընել կուզես Արտավազդի շղթաները։ Արտավազդի շղթաները դուն խորտակել չե՛ս կըրնար, բայց ես կրնամ խորտակել քո՛ւ շղթաներդ։ Հանեցե՛ք իր շղթաները։*

Զինվորները կաշխատին, ու շղթաները շռինգով կիյնան դաստակներեն ու ոլոքներեն: Իշխանը ձեռքի շարժում մը կընե, և զինվորները շղթաներուն հետ կելլեն դուրս, ճակտեն:

## 7

*ԻՇԽԱՆԸ— Նաղաշ Նաթա՛ն, դուն խելոք մարդ ես և երկու խոսքերը կկարծեմ ավելորդ են մեր մեջը։ Ես եկեր եմ կարգն ու կանոնը վերահաստատելու։ Դուրսի կարգն ու հանգիստը ես կբերեմ. ա՛տ իմ գործս, բայց հոգիներու մեջ, ուր դուն ձգեցիր շփոթը, դո՛ւն պետք է բերես կարգն ու հանգիստը։ Ատ կպահանջեմ ես քեզմե, ատ նաև կըլլա ամենեն շիտակ և միա՛կ ճամփան ծանր հանցանքդ քավելու։*

*ՆԱՂԱՇ— Ի՞նչ է ուզածդ։*

*ԻՇԽԱՆԸ— Արտավազդը խառնակիչ մըն է, ըմբոստ մը, անհնազանդ ու մեծամիտ արքայորդի մը, նախանձոտ ու անիծված զավակ մը. իր արդար պատիժն է, որ կկրե ան Մասիսի խորունկ խորքերուն տակը, և հոնկե երբե՛ք, երբեք դուրս գալու չէ, չար սպառնալիք մըն է մարդկության համար անոր դուրս գալը և խանգարում կյանքի կարգ ու կանոնին։ Այսպե՛ս է ըսեր ի՛նքը ժողովուրդը, այսպե՛ս են ըսեր դարերը, այսպես պիտի ըսես և դո՛ւն։* (Լուռ): *Գնա՛, բացատրե՛, որ քեզի թյուր են հասկցեր, գտիր ձև մը, հնարող մարդ ես, բայց հոգիներուն շփոթը պետք է հանդարտես։ Եթե համաձայն ես՝ բաց են առջևդ բոլոր դռները։* (Լուռ): *Խոսե՛։*

*ՆԱՂԱՇ— Կանչե՛ ծառաներդ։*

*ԻՇԽԱՆԸ— Համաձա՞յն ես։*

*ՆԱՂԱՇ— Բերե՛ն շղթաներս։*

*ԻՇԽԱՆԸ—* (Կատղած) *Ո՛չ, այս անգամ հարցը շղթայով չի վերջանար։ Լա՛վ մտածե. ես տերն եմ այս քաղաքին, տերն եմ քու ամբոխին, տերն եմ քու Արտավազդին և քու անձին և այն կնոջը, որ ոտքերուդ*

*տակ ինկեր էր գետին։ Ըմբռնե՛, որ հոս կատարվի պիտի իմ կամքս։ Եթե ընդդիմանաս՝ ո՛չ թե շղթա, մա՛հ կըսպասե քեզի. կփնտրեմ ամենեն զզվելին, ամենեն անարգը, ամենեն անգութը մահերուն մեջեն, և՛ քեզի և՛ անոր կնոջ։ Եվ չերևակայե՛ս թե կմոռանաս. գիտցի՛ր չեմ թողներ, որ նահատակ խաղաս։ Այնպես կընեմ, որ անեծքով հիշեն ամենքը քու անունդ ու նզովք կարդան վրադ դարերը։* (Լուռ) *Իմաստո՛ւն եղիր, կատարե՛ ինչ որ կըսեմ քեզի, և կապրիս իշխանավայել. դիրքեդ, կյանքեդ ու վայելքեդ պակաս չըլլար ոչինչ։ Մենք միայն անգամ մը կծնինք. վայլե՛ կյանքը և վերցո՛ւր ինչ որ բախտը բերեր է առքդ, եթե հիմար չես։ Այդ կինը, հավա՛տա վկա, գեղեցիկ կին է. կտեսնեմ, որ ճաշակ ունիս։* (Լուռ) *Ուրեմն վճռե՛։* (Լուռ): *Որոշումիդ կսպասեմ։* (Քիչ մը վերջը գրգռված): *Չե՞ս լսեր, քեզի կըսեմ։ Արժանի չես համարեր ինծի և քու պատասխանիդ, հա՞։ Տո՛, շո՛ւն, ո՞վ ես որ դուն, ի՞նչ ես որ դուն, որ այդպես խրոխտ կնայիս վրաս վերերեն։ Մարդու տեղ դրի քեզի ու երես առիր. այդպես են բոլոր ստրուկները։ Անասունի լեզվով պետք է խոսվի քեզի պեսին հետ, որ պատասխան տաս։* (Կատղած և ինքզինքը զսպելու անկարող) *Շո՛ւտ, խոսե՛, խոսե՛ իսկույն, պատասխան տուր, խոսե՛... թե չէ հիմա կնետեմ քեզի ոտքերուս տակը, կփշրեմ ոսկորներդ, կջարդեմ, կճարճատեմ, քու... քու...։* (Հետզհետե վրան երթալով, մինչ Նաղաշ կեցած է միշտ տխուր, հանգիստ, անշարժ): *Խոսե՛, խոսե՛, պատասխա՛ն տո՛ւր, քեզի՛ կըսեմ՛ պատասխա՛ն տուր...։ Պիտի խոսի՞ս...* (Ամուր ապտակ մը կիջնե): *Ասիկա առայժմ առնելիքիդ բեհը։ Կպատասխանե՛ս, կըկակուղնաս ու կպատասխանե՛ս. ես քեզի պատասխանել կուտամ։ Կտեսնե՛նք, կտեսնե՛նք հիմա՝ որու՞ կամքը պիտի հաղթե, ի՞մ թե քու՞... Հիմա՛, հիմա, այս վայրկյանիս, երբ միսերդ կտոր-կտոր փրցնեն...* (Արագ դեպի ճակտի սանդուղները ու վար):

Տեսարանը դանդաղ կըսկսի փակվիլ երկու կողմեն, պահ մը ցույց տալով իր երկու փեշերուն մեջ միայն Նաղաշի կերպարանքը, որը միշտ անշարժ կեցած է կարեկցոտ դեմքով:

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՀՐԱՊԱՐԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ՊԱԼԱՏԻՆ ԱՌՋԵՎԸ

Ճակատը պալատի մուտքն է, որ կպահպանե ջոկատ մը զինվոր: Ձախ՝ պատվանդանի նման քարե փոքր բարձրավանդակ:

Բազմությունը, այր ու կին, մեծ ու փոքր, ամեն աստիճանի ու դիրքի, կմտնեն ու կելլեն աջեն, ձախեն՝ քանի մը ուղղությամբ:



**1**

Մեկ կողմ խմբված են հինգ-վեց բարեկեցիկ քաղաքացի:

*Ա ՔԱՂԱՔԱՑԻ— Մե՛ծ մարդ է, մե՛ծ մարդ է։*

*Բ ՔԱՂԱՔԱՑԻ— Ինչպե՞ս ալ համոզեց վրացիները. դյուրին բան չգիտնաս, մեծ արվեստ է հարկավոր։*

*Գ ՔԱՂԱՔԱՑԻ— Դավիթ թագավո՞րս որն է. մեր Իշխանը Բյուզանդիոնի կայսեր անգամ քիթեն բռնած կպտտցընե։*

*Ա ՔԱՂԱՔԱՑԻ— Շաբաթվան մը մեջ, տե՛ս, ինչպե՛ս մաքրեց ամբողջ քաղաքը և ամբողջ շրջակայքը։ Երկաթե կամք ունի։*

*Գ ՔԱՂԱՔԱՑԻ— Եվ երկաթե բազուկ։*

*Դ ՔԱՂԱՔԱՑԻ— Աստվա՜ծ իմ, ի՞նչ պիտի ըլլար մեր վերջը այդ սանձերը փրցուցած սրիկաներուն ձեռքեն, եթե վրա չհասներ։*

*Բ ՔԱՂԱՔԱՑԻ— Երազ ըլլա կարծես այն բոլոր սարսափները. ճիվաղային երազ մը։*

*Գ ՔԱՂԱՔԱՑԻ— Իսկ ու՞ր են հիմա։ Քիթերնին թող դուրս հանեն տեսնենք։ Սմքեցա՛ն, ավազակնե՜րը։*

*Բ ՔԱՂԱՔԱՑԻ— Կեցի՛ր, կհանե՛նք, տեղը կհանե՛նք, այնպես հո՛ւպ տանք հիմա անոնց կոկորդը, այնպես չոքե՛նք անոնց կրծքին, որ մյուս անգամ...*

*Դ ՔԱՂԱՔԱՑԻ— Հա՜, Ռոմա՛ն, ճիշտ է, դուն շատ տուժեցիր։*

**2**

Երկու հոգի կմոտենան խոսողներուն:

*Ա ՆՈՐԵԿԸ— Իսկ ե՞րբ պիտի դուրս հանեն այդ մահապարտ շունը։*

*Ա ՔԱՂԱՔԱՑԻ— Մենք ալ ձանձրացանք, երևի շուտով։*

*Ա ՆՈՐԵԿԸ— Բայց արդեն մթնելու վրա է, կիրամուտք իրիկունով, ամեն մարդ տուն կուզե երթա։*

*Բ ՆՈՐԵԿԸ— Չե՜ն հրթար։ Այսպես տեսարան ամեն օր չըլլար։ Տեսա՞ք խարույկը. ոչ թե մեկ հոգի, ամբողջ վաշտ մը կարելի է վառել այդքան ցախով։*

*Դ ՔԱՂԱՔԱՑԻ— Չըլլա՝ փայտը կմեղքընաս։ Գիտե՜ս այս տարի դուն շա՛տ սուղցուցիր քու փայտիդ գինը։*

*Ա ՆՈՐԵԿԸ— Բայց ի՞նչ թամաշա է ըլլալու։ Ո՞ղջ-ողջ պիտի այրեն։*

Բ ՆՈՐԵԿԸ— Բա ինչ, մորթեն ու ե՞տքը։ Ալ այդքան փայտը ինչու՞ էին փչացընելու։

Ա ՔԱՂԱՔԱՑԻ— Խռնիլ սկսան։ Երևի դուրս կբերեն։

Գ ՔԱՂԱՔԱՑԻ— Հա՛, հա. երևի հանեն պիտի։

Բ ՔԱՂԱՔԱՑԻ— Ի՛նչ բազմություն է, է՜։

ԲԱՄԲ ՁԱՅՆ ՄԸ— (Պահանջկոտ) Մահապա՛րտը... մահապա՛րտը...

ԲԱՐԱԿ ՁԱՅՆ ՄԸ— Շո՛ւտ ըրեք։ Տեսքին կարոտ ենք մնացեր։

Ընդհանուր հոհոռց:

Դարպասի դռներեն մեկը քիչ մը ետ կերթա:

ԲԱՑԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ— Ա՜... Օհո՜... վերջապե՜ս...

## 3

Դարպասի բացված նեղ ճեղքեն դուրս կուգա մունետիկը և ետևեն պաշտոնյա մը: Պաշտոնյան կբարձրանա fuirl պատվանդանը, մունետիկը կմնա վարը ու ձեռքի ճիպոտը վեր կբարձրացնե:

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— (Ալիք-ալիք) Սը՜ս... սը՜ս... սը՜ս... սո՜ւս...

ՄՈՒՆԵՏԻԿԸ— Անիի բախտավոր քաղաքացինե՛ր, ձեզի հիմա պիտի խոսին ձեր բարի ու բարերար տիրոջ անունեն. ձեզի կխոսին Պահլավունի Վահան Իշխանի անունեն։ Լո՜ւռ, ժողովո՛ւրդ, լսե՛։

Լռություն:

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ամենեն առաջ կհայտնեմ ձեզի մեր պաշտելի Իշխանի սերն ու խնամքը։ Իր բոլոր մտածմունքը ձեր բարեկեցությունն է ու մեր քաղաքի բարգավաճումը։ Որպեսզի ձեր վիճակը թեթևցընե, ահա՜, կշնորհե ձեզի բոլոր հետնյալ տուրքերը, մաքսերը, բաժերը, հասերը, ինչպես և այս տարվան հարկերուն կեսը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Կեցցե՜ Իշխանը։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Շատ կցավի ու կարյունի մեր ազնիվ Իշխանի հայրական սիրտը, որ այսքա՜ն-այսքան զոհեր հարկ եղավ կարգն ու օրենքը վերահաստատելու համար։ Իսկ դեռ կենդանի մնացած հանցավորներու դեմ՝ Իշխանը կուզե ներող ըլլա ու երկայնամիտ, մանավանդ որ անոնք բոլորը արդեն իրենք կըզգան, թե ինչպես չարաչար խաբված են եղեր։ Իշխանի բանալ տրված քննությունը ցույց տրվավ, որ այն բոլորը ինչ որ կատարվեցավ, էապես մեկ մարդու մը սարքած մեքենայնությունն էր։ Ամեն Նաղշարար Նաթան անիծյալ անունով, որ օգտըվելով ժողովըր-



դի բարի միամտությենեն լուր է տարածեր, թե ինքը կապ ունի դևերուն հետ և պիտի տա ամենուն ոսկի ու գանձեր, և ամենքը պիտի դառնան իշխան, թագավոր, կայսր, ամե՛նքը։ Եվ ահա՜ դուք ձեր բարի աչքերով տեսաք, թե ի՞նչ դուրս եկավ դևերու այդ բարեկամությենեն, տեսա՛ք հոսած արյունը, վառված տուները, անվերջ սանձարձակությունը, ցոփություն ու հափշտակությունը օրը ցերեկով և անվերջ կռիվները այս վերջին ամիսներուն. տեսա՛ք։

ՁԱՅՆԵՐ— Անիծվի՜, անիծվի՜...

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Բայց դուք չտեսաք ու չէիք կրնար տեսնել, ինչ որ հիմա մեջտեղ հանեց կատարված մանրակրկիտ քննությունը։ Որոշված է եղեր, որ այլևս ոչ ոք չունենա իր ընտանիքը, իր կինը. բոլորի կանայքը բոլորին...

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Լիրբը... անամո՛թ... լկտի՜...

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Արդեն հաստատված է, որ ամեն գիշեր հավաքումներ են ունեցեր գաղտնի տեղեր՝ ցոփ կնիկներ ու պոռնիկներ իրենց հետը՝ մինչև լույս խառնակյաց շվայտությամբ։ Եվ այդ բոլոր խառնակեցության գլուխը իր նշանավոր տարփուհին։

ՁԱՅՆ ՄԸ— Ո՞վ... ո՞վ։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Էմիրի հին հարճը։

ՁԱՅՆԵՐ— Հարճը՜... Հարճը՜...

ՁԱՅՆ ՄԸ— Ես չէի՞ ըսեր, ես չէի՞ ըսեր։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Հա՛, Հարճը, ան, որ կախարդությամբ կըզբաղվի ու բժժանքով. ձեր աչքով տեսաք, երբ մազերն ու կուրծքը բաց եղբայրը եղբոր դեմ կգրգռեր, երիտասարդները խելքե կհաներ ու ամեն ինչ վառել կուտար, որպեսզի այդ բոլոր մոխիրներուն, խառնակության ու անառակության վրա թագավորեն իրենք երկուքով՝ սուտ մարգարեն ու պոռնիկ հարճը։

ՁԱՅՆ ՄԸ— Աստծու կրակը երկուքի գլխուն։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Այո, Աստծու կրակը երկուքի գլխուն։ Ճիշտ է քու դատաստանդ, ժողովուրդ. մեր իմաստուն Իշխանն ալ փրկելու համար ձեզի դևերու ու կախարդներու դյութեն ու հմայքեն, պահպանելու համար ձեր զավակները տիղմերու մեջ թավալելեն՝ վճռեց, որ այդ հանցապարտ գարշելի զույգը հանձնըվի խարույկին։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Խարույկի՜ն... խարո՜ւյկին...

ՁԱՅՆԵՐ— Դո՛ւրս բերեք, դո՛ւրս բերեք։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Եվ այլևս վերնա չարը մեր մեջեն, անցնի անեծքը մեր քաղաքին վրայեն, դադրի խեռն ու խռովքը, չքանա անիշխանու-

Թյունը և տարածե ամենուս վրա իր ամուր ու պահապան բազուկը Աստուծմե ընտրված Պահլավունի Իշխանը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Ամե՛ն։

ՁԱՅՆԵՐ— Մահապա՜րտը, մահապա՜րտը։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Բացե՛ք դարպասները, և թող շարժվի թափորը դեպի խարույկ։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Դեպի խարո՜ւյկ, դեպի խարո՜ւյկ։

## 4

Բազմությունը նախ լարված ու հետաքրքիր կխուժե դեպի բացվող դռները, բայց դուրս շարժվող թափորին առջևը երկուքի կճեղքվի ու ճամփա կուտա։ Թափորը կուղղըվի քիչ մը դեպի առաջ և աջ կողմեն կելլե դուրս։

Թափորի առջևեն կերթան մեկ-երկու տասնյակ զինվոր. անոնց ետևեն կուգան ութը լուցիքներ կարմիր հագուստներով, խոշոր ու վառ ջահերը ձեռքերնուն, որոնք դալուկ-կարմիր լույսով մը կգունավորեն արդեն զգալի դարձած մութը։ Լուցիքներուն ետևեն հոգևորական մը սևերու մեջ, ձեռքը փղոսկրե խաչելություն։ Հոգևորականին ետևեն կուգան մահապարտները՝ երկուքն ալ երկար ճերմակ շապիկներ հագած, գլխաբաց ու հերարձակ, ոտքերնուն շղթա, ձեռքերնուն շղթա. առանձին թելով մըն ալ երկուքը կապված են իրարու, երկու քայլ իրարմե հեռու և իրար ետևե, առջևեն Նաղաշը, ետևեն Հարեը։ Թափորը կփակե վաշտ մը զորք։

Նաղաշը ամբողջ ճամփին խիստ հանգիստ է, տխուր ու ցավված դեմք ունի. շրթունքները սեղմ, աչքերը հառած իր առջևը։ Հարեը, ընդհակառակը, սաստիկ գրգռված, դեմքի և ուսերու հանկարծական ցնցումներով, քանի մը անգամ կանգ կառնե հոգնածի պես, տեղ-տեղ վախով ետ կքաշվի իր դեմ եղած սպառնալիքներեն, և աչքերը կատաղի ու ահռելի նայվածքով կթափառին շուրջի աղմկոտ, հայհոյող և սպառնացող բազմության վրա։

Առանձին խոսողները անոնք են, որոնց առջևեն որ այդ միջոցին անցնելու վրա է հանցավոր զույգը։

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— (Միահամուռ) Հո՜ւ... հո՜ւ... հո՜ւ...

ԿՆՈՋ ՁԱՅՆ ՄԸ— Թուք ու մուրս ձեր երեսին, գետին պատռի մտեք մեջը։

ԽՈՇՈՐ ՄԱՐԴ ՄԸ— (Շուրջիններին հրելով և առաջ անցնելու ճիգով) Թողե՛ք ես ցույց տամ ատոնց, ես ցո՛ւյց կուտամ... (Գոռալով և բռունցքները օդին մեջ) Դո՛ւն, դո՛ւն մեր հանգիստը վրդովող, մեր քաղաքը ավերող, մեր...

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ— (Տաղրով) Խնդրեմ, չանպատվես մեր հարսն ու փեսան։ Նայե՛, նայե՛, սա ի՜նչ զույգ է, ի՜նչ անամոթ, ի՜նչ գեղեցիկ, ո՞վ է տեսեր այսպես հարսնիք. ուղտերու պես իրար կապած, շներու պես իրար պոչի։



ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ— Կորչի՜... կորչի՜...

ՊԱՌԱՎ ԿԻՆ ՄԸ— (Մուր տալով Հարեին) Կրո՜ղս վրան, վրա՛ն նայեցեք, հովին տված մազերը, կցատկոտեն ծծերը...

ՊԱՇՏՈՆՅԱ ՄԸ— Իշխանություն ճանչնալ չե՞ս ուզեր, մեծ ու փոքր գիտնալ չե՛ս ուզեր. ա՛ս է վերջը։

ՁԱՅՆ ՄԸ— Մոխիրներու վրա նստեցուցիր մեզի։

ԿՆՈՋ ՁԱՅՆ ՄԸ— Զավա՛կս տուր ինծի, կորիճ զավա՛կս տուր ինծի։

ՄԵԿԸ— Չխոսի՞ս։ Ո՞ր է լեզուդ։ Պապանձեր ես, հա՞։

ՔԱՆԻ ՄԸ ՁԱՅՆԵՐ— (Խառն) Խաբեբա... կեղծավոր... խարդախ սրիկա...

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԻՆ ՄԸ— (Գրկի երեխան առաջ երկարելով) Թուքը, գառնո՛ւկս, թո՛ւք երեսին, թո՛ւք իր երեսին։

ՏԱՐԻՔՈՏ ԿԻՆ ՄԸ— (Վրա վազելով Հարեին) Ծատուկին, վհուկին, ցախավել մը վհուկին, տվեք հեծնի, տվեք թռչի խարույկին մեջեն, հա՜, հա՜, հա՜, հա՜, մուխերուն մեջեն, բոցերուն մեջեն...

ՀԱՐԵԸ— (Հանկարծ կանգ կառնե, աչքերը կհառե կնոջ ու խորին ոգևորությամբ) Հա՛, քուրա՛կ, հա՛, մուխերուն մեջեն, բոցերուն մեջեն, մի՛շտ, մի՛շտ։ (Բուռն թափով ու ձեռքերը երկինք տարածած) Մայրի՛կ, մայրի՛կ, մուխերուն մեջեն, ե՛ս ալ, ես ալ քեզի պես բոցերուն մեջեն։ Ա՜, ամենքը, ամենքը բոցերուն մեջեն։

ԽՈՒՄԲ ՄԸ— (Տաղրով) Բոցերուն մեջեն... բոցերուն մեջեն...

ՄԵԿԸ— Հա՜, հա՜, հա՜, հա՜, թռչի պիտի, փախչի պիտի բոցերուն մեջեն...

ՈՒՐԻՇ ՄԸ— Բռնեցե՛ք, հա՛, պինդ բռնեցեք շապիկին փեշեն։

ԴԵՌԱՏԻ ԱՂՋԻԿ ՄԸ— (Խնդալով) Երթա՛նք, քա՛, երթանք, որ լավ տեղ բռնենք։

ԽՈՒՄԲԸ— Բոցերուն մեջեն... Հա՜, հա՜, հա՜, հա՜, բոցերուն մեջեն...

## 5

Բազմությունը թափորին հետ կքաշվի, բայց կլսվի դեռ աղմուկն ու ժխորը, որ աննկատելի կերպով կվերածվի թզուկներու երգին։ Մութ է։

ԹԶՈՒԿՆԵՐԸ— Հա՜, հա՜, հա՜, հա՜,
զարկե՛ք մուրճն ու կռանը
մեծ բնազդին դռանը,

*մարդը մարդուն ճիրանը,*
*մարդը մարդուն բերանը,*
*հա՜, հա՜, հա՜, հա՜...*

Երգի միջոցին ճակտի դարպասներուն մեջեն կպլպլան թզուկներուն լապտերները և անոնց անթիվ բազմությունը կուգա, կլեցընե դարպասներուն ներսն ու դուրսը:

Ու ճիշտ դարպասի սեմին տակեն ճանկարծ դուրս կպոռթկա կարմիր լույսը, որուն մեջ կեցած է անշարժ ու հպարտ Կյանքի դևը:

*ԿՅԱՆՔԻ ԴԵՎԸ— Ես եմ տերը: Ես եմ միակ տերը կյանքին, անսահմանին և սահմանին: Օդի ոլորտներուն մեջ, ծովուն հատակը, գեն հողին վրա, խոր գետնին տակը. ամեն, ամեն տեղ, ուր որ կյանքը կթռչի, ուր որ կյանքը կլողա, ուր որ կյանքը կքալե, ուր որ կյանքը կսողա, ուր որ մարդը կվազե, ուր որ մարդը կհևա... Ես եմ տերը: Ես եմ միակ տերը կյանքին:*

Քար լռություն:

Եվ հանգիստ կգոցվի տեսարանն ու խաղը:

# ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

**Թատերակ**

Դեպքը կպատահի ԺԲ դարուն սկիզբը

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԲԵՐԴԻ ՄԸ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՎԻԹԸ

Լայն սրահ, սյուներով բաժնված է ետևի մասեն, որ ուղղակի բակը կնայի:

Գորգեր ու բազմոց: Անկյուն մը դրված է բարձր երկաթե մոմկալը, որուն ծայրը մոմ մը կմխա՝ աղոտ լույս սփռելով չուրջը:

Դուրսը պայծառ լուսին գիշեր է:

1

Բազմոցին եզերքին նստած է, արձանի մը պես, անշարժ ու չխտակ, իշխանուհի Աննա, երեսունի մոտիկ, թարմ ու առույգ ու բարձրահասակ կին մը, տանոււ անփույթ ճերմակ ճագուստներով. առատ սև մազերը կկազմեն երկու երկար հյուսք, որոնք կիսովին քրքրված են:

Քովը կեցած է Շաղինե, նիհար ու նրբակազմ, ձեռքերը ծալլած կրծքին, գլուխը կախած հուսահատ սուգով:

Գետինը, գորգին վրա, իշխանուհիի ոտքերուն մոտիկ, նստած է, ինքն իր վրա կքած, պառավ դայակը, գլուխն ու մարմինը ամբողջովին սևերու մեջ:

Քիչ մը ավելի ետ ու մեկուսի կեցած է նաժիշտ մը, թաշկինակը աչքերուն:

Դուրսը խռոված ու  տնճածայն կլսվի:

*ՊԱՌԱՎԸ—* (Արագ բարձրացնելով գլուխը) *Ո՞վ է հոն: Ի՞նչ կուզեն:*

*ՆԱԺԻՇՏԸ— Անո՛նք են: Գազաննե՞ր, գարշելինե՞ր: Բոլոր դռներուն, բոլոր անցքերուն պահակ կդնեն:*

*ՇԱՂԻՆԵ— Անիծվի՜ն:*

*ՊԱՌԱՎԸ—* (Կամաց մը ձեռքը իշխանուհիին ծնկանը դնելով) *Դե՜, շարժվե՛ վերջապես, բա՛ց բերանդ, խոսե՛:*

*ՇԱՂԻՆԵ— Լա՛ց, իշխանուհի՛, լա՛ց: Տե՛ս, ես կուլամ: Մարդ կարծես քիչ մը կթեթևի:*

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Դու՛ն լա՛ց, Շաղինե՛, դու՛ն լա՛ց։ Դուն պետք է որ լաս, դուն իրավունք ունիս։ Ինկավ ամուսինդ իմինիս կողքին. իմինիս պես քաջ, իմինիս պես ազնիվ, իմինիս պես ընտիր։ Այսօրվընե դո՛ւն ալ այրի մըն ես. լա՛ց. վաղը քարշ պիտի տան քեզի ալ ուրիշներուն դըռները, թշնամիներուդ տուները։ Դուն պե՛տք է որ լաս. դուն կրնա՛ս։ Չէ՞ որ դուն զավակներ չունիս, որ սպաններին, դուն զավակներ չունիս, որ մորթեի՞ն...

ՇԱՂԻՆԵ— Ա՜խ, լռե՛, լռե՛։

ՊԱՌԱՎԸ— (Խիստ ու հանդիմանելով) Թող խոսի՛։

ԱՆՆԱ— Մտածումներուն մեջեն) Պայծա՜ռ, զով առավոտ մըն էր, կեցած էի ես Յոլակս գրկիս, կեցած էի վարի բակը։ Զատիկ էր. մեր վերջի՜ն զատիկը։ Սեմին վրա չառը կմորթեին. Յոլակս ապշած, աչքերը մեծ-մեծ բացած կնայեր անմեղ կենդանիին. ես ծածկեցի աչքերս ու լացի, այն օրը լացի գաղտուկ լացի, որ վրաս չխնդաք, այն օրը գառը կմորթեի՜ն... (Հանկարծ վեր թռչելով ու դեպի պառավը) Զավակնե՜րս, Սաբե՛թ, ո՞ւր են զավակներս. ո՞ւր են տղաքս։ Իմ երկո՛ւ մանչս, ուր են իմ երկու մանչերս, ինչո՞ւ նէրս չեն բերեր։ Նայե, մութը բոլորովին կոխեր է արդեն. փոքրիկներու ժամանակն է պառկելու։ Պատրաստե՞ր ես ամեն ինչ, բացե՞ր ես անկողինները, դրե՞ր ես գիշերվան շապիկները, երկու փոքրիկ կապույտ շապիկները... (Հանկարծ թուլցած կնստի՝ ձեռքը սեղմած կրծքին ու խորը տնքալով) Ա՜խ...

ՇԱՂԻՆԵ— Հանգստացի՛ր, իշխանուհի՛, հանգստացի՛ր։

ԱՆՆԱ— Շուտո՛վ, շուտո՛վ, կհանգստանա՜մ. տղոցս քովի՛կը. հավիտյա՜ն։ (Գրգռված) Բայց նախ պետք է տեսնե՛մ ես այն մարդը, որ ամուսինս սպաննեց, գրավեց բունս ու զավակներս մորթել տվավ։ Կուզեմ տեսնե՛մ. պետք է որ տեսնեմ։ Ինչո՛ւ, չգիտեմ, բայց պե՛տք է տեսնեմ. կուզեմ նայիմ իր աչքերուն խորքը. և հետո... կհանգստանամ։

ՊԱՌԱՎԸ— Օր մը պիտի հանգստանանք ամենքս։

ԱՆՆԱ— Օ՞ր մը։ Երկու քայլ է հոսկե դեպի պարիսպը։ Ոստյուն մը և անոնց հե՛տ եմ. ընդմի՛շտ։ Չէ՞ որ սպաններ են ու նետեր են ձորը, սատկած շան մը պես, այդպե՛ս ըսին։ Ա՜խ, մեր բերդին աղվոր ձորը։ Հիմա ինկած են հո՛ն, անոնց փոքրիկ մարմինները, արյունլվա ու ըըզկտած, ո՞վ գիտե ո՛ր չոր անկյունը, ո՛ր քարին վրա...

ՇԱՂԻՆԵ— (Երկու ձեռքով կփակե աչքերը) Մի՛ մտածեր, մի՛ մտածեր։

ԱՆՆԱ— Գուցե ճիշտ այն հսկա ժայռին վրա, ուր նստած էի այն տաք կեսօրին։ Ի՜նչ տաք էր այն օրը։ Ջուրը մեր երկու կողմեն խելագարի պես կաղմկեր. կարելի չէր իրարու խոսք հասկնալ. լուռ նստեր էինք. հին ընկուզենին կախեր էր մեր վրա իր ընկոտ ճյուղը. գլուխս դրեր էի իմ անբախտ Հովսեփի ուսին, աչքերս ջրերու խաղին, փրփուրնե ու շողերու խաղին... Եվ կզգայի, որ ո՛չ իմ դիմացի բերդիս նման ուրիշ բերդ կար աշխարհիս երեսին, ո՛չ մեր Կապուտանի նման եռուն գետ, ո՛չ Հովսեփիս նման տղամարդ, ո՛չ ալ ինծի նման բախտավոր կին։ (Քիչ լուռ) Հիմա անոնք երկուքն ալ ինկած են հո՛ն, նույն ընկուզենիի կոտըրտած ճյուղերուն քովիկը, իմ հոգիիս կոտրտած ճյուղերը։

ՇԱՂԻՆԵ— (Աղաչանքով) Մի՛ մտածեր, իշխանուհի՛ Աննա, մի՛ մըտածեր։

ԱՆՆԱ— Բան չկա, Շաղինե՛, ինչո՞ւ կվախնաս։ Նայե՛, քանի մը քայլ է միայն մինչև քերծին գլուխը։ Չե՛մ ուշանար, ձագուկնե՛րս, չե՛մ ձգեր ձեզի մինակ։ Հիմա ինծի կյանքին կապողը մե՛կ նայվածք մըն է միայն, մեկ կա՛րճ նայվածք մը։

ՆԱԺԻՇՏ— (Դեպի սյուները վազելով) Իշխանուհի՛, մարդիկ կուգան. բազմությո՛ւն, ջահե՛ր...

ԱՆՆԱ— Հա՞, կուգա՞ն։ (Ոտքի ելլելով հպարտ ու շիտակ) Թող գա՛ն։ Ես պատրա՛ստ եմ։

ՇԱՂԻՆԵ— Անիծվի՜ն։

Կիները կխմբվին իշխանուհի Աննայի շուրջը:

## 2

Կմտնեն չորս զինվոր՝ ձեռքերնին վառած մարխեր բռնած: Անոնց ետևեն տասնյակ մը բարձր դիրքի զորականներ, Կամսարական իշխանը, Ապիրատ իշխանը: Անոնց ետևեն Քեսունի Վասիլ իշխանը, որուն կհետևին իր երկու որդիքը: Ամենեն վերջը ֆանի մը թիկնապահ, որոնք խորքը կմնան:

Քեսունի տերը հիսունը անց, շատ թեթև ներմկած, խելացի դեմքով, միջահասակ, քիչ մը դեպի գիրությունը հակվող, առույգ մարդ մըն է: Իր մեծ տղան՝ Սեպուհը՝ 26—27 տարեկան, փոքրահասակ, նուրբ ու դժգույն, երազկոտ դեմքով և քաշվող: Եղբայրը՝ Ատոմ՝ 23—24 տարեկան, ընդնակառակը, սլացիկ հասակով, արևառ դեմքով, զվարթ ու առաջ նետվող:

Հանդուգն ու դեռատի երիտասարդ է նաև Կամսարական իշխանը. մինչ Ապիրատ իշխանը տարիքը առած ու կյանքը ապրած հաստատուն կաղնի:

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Կանգ կառնե պահ մը սրահին մեջտեղը և հանկարծ ոտքը գետին խփելով) Աստված այս բերդն ալ հանձնեց իմ ձեռքս։ Եվ ես հպարտ եմ, որ ահա՜ ոտքս կդնեմ առած բերդիս միջնա-

կէտը, որ դեռ երեկ մեր համառ թշնամիին բնակարանն էր, իսկ այսօրվընե արդէն իմս է ու իմ ոտքերուս տակը։ Դո՛ւք, իմ հաղթաբազո՛ւկ ընկերնե՛րս, այս իններորդ բերդն է, որ կվերցնենք մենք միասին մեր զենքովն ու մեր ուժովը։ Մինչև Մարաշ այլևս բոլո՛րը իմ հողերս են, իմ շեներս, իմ բերդերս. բոլո՛րը իմ ձեռքիս մեջ, բոլորը կպատկանի Քեսունի տիրոջը։ Եվ այսօրվընե արդեն անառիկ ու բարդ բերդ մըն է ինքը այս ամբողջությունը, Տավրոսի այս ամուր կտորը, ցցված Հույներու ու Իկոնիայի, Սելճուկներու ու Լատիններու զարմանքին ու իրենց թուքը կուլ տվող ախորժակներուն մեջտեղը։ Թող մոտենա տեսնեմ՝ ո՞վ է մոտենալու։ (Քայլ մը կընե դեպի Աննա իշխանուհին. Իրչ մը կդրոշ ու տեսակ մը խոնարհ) Տիկի՛ն, քու ամուսինդ ուղիղ չորս ամիս չարչարեց ինծի. քաջ էր ու դիմադրեց քաջի պես, մինչև իր բերդը գրավեցի։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Սո՛ւտ է. դուն չգրավեցիր իր բերդը. դուն դավեցիր, դուն խարդախեցիր, դուն գողցար այս բերդը անոր ձեռքեն։ (Մատնանիշ ընելով Կամսարական իշխանը) Ա՛յ, այդ մարդը, որ հիմա սեցած կեցեր է կուշտդ, այդ մարդն էր, որ սելճուկներուն ձեռքեն փախած, քրքրված ու աստանդական, եկավ, զարկավ օր մը բերդին դարպասը. ամուսինս ընդունեց իր փոքր եղբոր պես։ Մեր փոքր եղբոր պես կըփայփայեինք։ Ահա՛ այդ մարդը այսօր մեր հացը տվավ ոտքի տակ, դավաճանեց ասպնջականությունը և բացավ առջևդ մեր բերդին մուտքը։ Անիկա՛ պիտի հպարտանա, դո՞ւն ինչու կհպարտանաս։ Բերդիս գրավումը քու ձեռքերուդ գործը չէ՛. մատղաշ ու անմեղ երեխաները մորթել տալը, հա՛ անիկա, քու ձեռքերիդ գործն է. ատով կրնա՛ս հպարտանալ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Մռայլ) Այս բերդը իմ կալվածներուս մեջտեղը ցցված, սուր փուշ մըն էր աչքիս մեջ խրված. պետք է հանեի. ժայռի այս ամուր քերծը պետք է իմս ըլլա և ընդմի՛շտ։ Եվ ատոր համար պետք չէ՛ մնա այս բերդի վրա ո՛րևէ ուրիշ պահանջ, ո՛րևէ ուրիշ ժառանգ։ Ասկե ետքը այս բերդը իմս է և միա՛կ ժառանգը՝ իմ զավակներս։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— (Նոր բան մը տեսնողի մը պես, խոր ու երկար շունչ մը ներս քաշելով) Ա՛... զավակնե՛րդ...

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Սառն) Այո՛, տիկի՛ն։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Հա՛, դուն զավակներ ունիս։ Լսած էի... երկու տղա։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Այո՛, տիկի՛ն, երկու տղա. երկուքն ալ կեցած են ահա՛ քու դեմդ։ Ա՛ս իմ կրտսերը. ան էր, որ ներս խուժեց այսօր առաջինը քու բերդիդ դռնեն։ Հայրդ գոհ է քեզմե, Աշո՛տ. ապրի՛ս, աղ-



ջերս գոհությամբ կհետևեին քու խիզախ արշավիդ։ Ա՛ս ալ իմ մեծ տըղաս։

ՍԵՊՈՒՀ— Տիկինը թող նկատե, որ հայրս գովասանք չունի ինծի համար։ Ես քու բերդիդ դռներեն ներս չեմ խուժեցեր մերկ սուրը ձեռքիս. մտեր եմ ակամա և ոչինչ չեմ ըրեր, որ քայքայեմ ու արյունեմ քու բույնը։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Ես խնայեցի քու ասնությունդ և ոչինչ չըսիր։ Լավ է՝ քիչ մըն ալ ինքդ խնայես քեզի ու լռես։

ՍԵՊՈՒՀ— Ես քեզմե այնքա՞ն խնդրեր եմ, հա՛յր, որ չբերես ինծի ո՛չ քու կռվին, ո՛չ քու հաղթանակին։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Ո՛չ, չեմ թողներ քեզի քու կամքիդ. իմ արյունս պիտի քալե իմ ճամփես։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ, իշխա՛ն, մի՛ զայրանար. ամեն բնավորություն մեկ չի ըլլար։ Ան ալ կուգա քու ճամփեդ, մի՛ վախնար՝ թեև դանդաղ՝ ա՛ն ալ կուգա։ (Սեպուհին, մեղմ) Պե՛տք է, որ գաս, տղա՛ս. պետք է, որ մասնակցիս այս բոլորին. տեսնե՞ս, ապրի՞ս, որ վարժվիս. պետք է վերջապես վարժվիս։ Ա՛ս է, որդի՛, աս է կյանքի մեջ միակ պիտանի բանը, ամենեն անհրաժեշտ բանը այս կյանքին մեջ։ Երթա՞նք, իշխան։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Իսկո՛ւյն։ Պիտի հասկնաս, տիկի՛ն, որ քեզի այլևս այս բերդին մեջ թողնելու հնարավորությունը չունիմ։ Ո՞ւր կուզեիր, որ փոխադրեմ քեզի. և ինչպե՞ս կուզեիր, որ վարվիմ քեզի հետ։ Նոր անախորժություններ տալու պատճառ չունիմ։ Ըսե՛ ինքդ՝ ինչպե՞ս վարվիմ քեզի հետ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— (Լուռ է ու անշարժ):

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Խոսե՛, մի՛ քաշվիր։ Ըսե՝ ինչ որ կցանկաս, ինչի որ պետք ունիս։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Ես այլևս միայն մեկ բանի մը պետք ունիմ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Խոսե՛։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Ազատվի՛լ քու ներկայութենեդ։

Խեք ու բեքև ընդհանուր իրարանցում մը:

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— (Հանդիմանական) Սակայն իշխանը շատ ողորմած եղավ քեզի հետ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Քայլ մը ավելի առաջ կուգա և համառ դիտելով կնոջ դեմքը) Այդպե՞ս... Կուզեիր ինծի բզիկ-բզիկ ընես, չէ՞, ու նետես շներուն առջևը կերակուր։ Ինծի նայե՛. ես լսեր էի, որ դուն գեղեցիկ ես. և չէին ստած, բայց ա՛յն, ինչ որ կվառի հիմա քու աչքերուդ

մեջ, վեր է իմ բոլոր տեսածես։ Քու դեմքդ, մարմինդ, կեցվածքդ՝ քու ամբողջ էությունդ, կզգամ, առեղծությամբ լարված նետ մըն է ուղղված կրծքիս. և հաճելի՜ է ինծի քու առեղծությունդ։ Դուն կռի՞վը կսիրես, աղե՜կ, կսիրեմ ե՛ս ալ. և կընդունիմ քու հրավերը։ Կուզամ հիմա, ա՜յս վայրկյանիս։ Կուզեմ մոտե՛ն ճանչնամ քեզի։ (Դառնալով մյուսներուն) Վաղը առտու կանուխ, լույսի առաջին ճեղքին հետ ճամփա պիտի իյնանք բոլորս, որ արևի մուտքին հետ մտնենք Քեսուն։ Պատրա՛ստ բոլորդ։ Կամսարակա՛ն իշխան, իրավ կըսե այս կինը, շատ մեծ էր ինծի բրած ծառայությունդ։ Իմ սովորությունս է աշխատանքը վարձատրել իսկույն, և հավատարմությունը կաշառել կանխիկ վստահությամբ։ Այս բերդը՝ որուն դռները դուն բացիր ինծի, իր բոլոր շրջակայքովը կհանձնեմ քու վարչությանդ ու քու խնամքիդ։ Դեռ շատ երիտասարդ ես, և ամոթ չէ, որ քու նոր պաշտոնիդ հետ, զույգ մը խրատ դնեմ ձեռքդ։ Չընեղե՛ս երբեք գյուղացին. ա՛ն է, որ կուտա մեզի մեր հացը ու մեր զինվորը. և իշխաններս շատ պետք ունինք իր հացին ու իր զինվորին։ Իսկ ստորադիր պաշտոնյաներուդ հանդեպ երբեք չմոռնաս կանոնը. «Ապրե ինքդ ինչպես պետք է, բայց ապրո՜ւստ տուր և ուրիշին»։ Ապիրա՛տ իշխան, ոսկին, արծաթը և հավաքված բոլոր արժեքավոր իրերու փոխադրությունը կվարես դուն ինքդ անձամբ։ Գերիներուն կհետևի Մանվելը։ Իսկ հիմա երթանք բանակ՝ վերջին հրահանգները տալու։ (Կդիմե դուրս, իր ամբողջ խումբն ալ ետևեն):

## 3

Կանայք կեցած են անշարժ, իշխանուհին ալ իր ճպարտ դիրքովը, մինչև մյուսները կքաշվին:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— (Հանկարծ) Զավա՛կ ունի. զավա՛կ ունի. երկո՛ւ զավակ ունի։ (Ու կնետվի դեպի դուրս):

ՇԱՂԻՆԵ— (Այուներուն տակը անոր առջևը կտրելով) Մի՛ ըներ, իշխանուհի՛, մի՛ ըներ. այդ անմիտ քայլը մի՛ ըներ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Ձգե՛, ձգե՛, թող տեսնեմ՝ թող որ տեսնեմ. երկու զավակ ունի եղեր, երկու կտրիճ. երկու հասուն կտրիճ, թող որ նայիմ։

ՇԱՂԻՆԵ— Անիծվի՛, ինքն ալ, իր զավակներն ալ։ Թո՛ղ այդ խելագար քայլը. ի՞նչ օգուտ. ինչո՞ւ նետվիս, ինչո՞ւ մեռնիս. դուն ալ որ մեռնիս՝ ես ի՞նչ ընեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Մեռնի՞մ. ո՞վ ըսավ քեզի։ Ինչպե՞ս. մեռնիմ, ալ աղջիկ, ինչպե՞ս մեռնիմ։ Չլսեցի՞ր երկո՛ւ զավակ ունի եղեր։ Զըտեսար երկո՛ւ տղա։ Մինչև չմեռնին իր երկու տղաքը՝ ալ ինծի համար մահ չկա, ինծի համար հանգիստ չկա։ Իմ ամբողջ հոգիս այդ միտքն է հիմա, այդ նո՛ր, պայծա՛ռ, երջանի՛կ միտքը։ (Հանդիսավոր) Վկա եղեք դո՛ւք տված խոստումիս։ Վկա թող ըլլա այս հարկը, ուր ես սիրեցի, ուր ես սիրվեցա, ուր հեծեցին ծնունքիս ցավերը, ուր զավակներուս խայտալը տեսա, ուր զավակներս խլեցին գրկես, տարին սուրբով կուրծքը պատռելու։ Թող վկա ըլլա նրդեն վար նայող լրիվ լուսինը իր աստղերուն հետ, թող վկա ըլլան աված երդումիս։ Պետք է մեռնի՛ն իր երկու զավակները, պետք է մեռնի՛ն այդ երկու հասուն կտրիճները։ Ամեն մեկ կտրիճը նվեր իմ ամեն մեկ զավկիս։ Նվե՜ր ձեզի, իմ մատղաշ ձագուկներս, դո՜ւք՝ որ խոցոտ ու արյունոտ ինկած եք հիմա, ով գիտե, ո՛ր չոր քարին, ո՛ր փշոտ թփին, անթաղ ու անլաց ու դայլերուն կեր։

ՊԱՌԱՎԸ— Հերի՛ք է։ Ես վաղը կերթամ ինքս, կիջնեմ ձորը՝ կփընտրեմ, կգտնեմ ու իմ ձեռքովս կթաղեմ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Հա՛, դու քու ձեռքովդ խնամեցիր, քու գըրկիդ մեջ մեծցուցիր. հա՛, դուն իրավունք ունիս. գնա՛, գնա՛, գտիր ու քու ձեռքովդ տեղավորե հողի գրկին մեջ։ Եվ ըսե՛՝ ըսե՛ իրենց, որ ես առայժմ դեռ չեմ գալու, չեմ պառկելու իրենց քովիկը. կամացուկ մը ըսե՛ իրենց ականջին, որ ես դեռ գո՜րծ ունիմ։ (Հիվանդ ու բարձր ծիծաղով) Հա՜, հա՜, հա՜, կհասկնա՞ս, պառա՛վ, կհասկնա՞ս, ան երկու մա՛նչ ունի, երկու մա՛նչ, երկու հասուն մա՛նչ զավակ...

## 4

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Հանկարծ ներս մտնելով) Ահա՜ և ե՛ս։ (Մոտեցող թիկնապահներուն) Կկենաք մուտքին. ներս չթողնե՛ք ոչ ոքի, ով կուզե ըլլա։ Իսկ դուն՝ տիկի՛ն, հրամայե՛ բերեն ինծի փարչ մը գինի։ Գիտեմ՝ կճարվի. հյուրասեր տուն է հայու։ (Բարկացոտ) Հե՜յ պառավ, չլսեցի՞ր ինչ ըսի. փարչ մը գինի ու երկու բաժակ։ Վազե՛. մեյ մըն ալ որ ետիս նայիմ, բերած ըլլաս. շարժե հնամաշ ոտքերդ։ (Պառավը դուրս): Հոգնած եմ շատ ու ծարավ. ամբողջ օրը ոտքի էի. բայց և այնպես նախ պետք է հոգալ զորքը. ա՛ն է վերջապես, որ կտանի հաղթանակը և կուտա ինծի այս բերդերը։ Բավական խոշոր ու կոկիկ շենք է քու ամրոցդ, տիկի՛ն. ել ու էջ և ծակուծուկ շատ ունի. հոգնեցուց ինծի։ Եկա, որ հանգչիմ. այս գիշեր քու հարկիդ տակ պիտի հանգչիմ. եկա

*քեզի հյուր. քու հարկիդ տակ ես այս գիշեր քեզի հյուր։* (Պառավը գինին կբերե) *Բերի՞ր։ Այդպե՛ս. հիանալի՛. դի՛ր վար։ Իսկ ինքդ անհայտացի՛ր անմիջապես, կուզես դռնեն, կուզես երդեն, կուզես մտիր գետնին տակը։* (Շաղինեին) *Հեռացի՛ր դուն ալ. հոս մարդ չմնա։*

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— *Կմնաք այստե՛ղ. ոչ ոք տեղեն չի շարժի։*

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Ոտքը տիրաբար տոփելով գետին) *Դո՛ւրս։ Եվ քաշեցե՛ք վարագույրները։*

ՊԱՌԱՎԸ— *Իշխա՛ն, վերը Աստված կա...*

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— *Որը այս բերդը այսօր հանձնեց ինծի։ Հայդե՛, ձեր շուքն անգամ չերևա աչքիս։* (Կանայք հեռանալ կուզեն) *Վարագույրնե՛րը, ըսի ձեզի։*

## 5

Իշխանը կնստի բազմոցին ու կսպասե մինչև վարագույրները կգոցվին։ Իշխանուհին կեցած է իր տեղը։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— *Տիկի՛ն, վայել չէ քեզի, որ կենաս այդպես իմ դեմս։ Դիցո՛ւք և պարտված, դիցո՛ւք և կատաղած, բայց վնաս չունի, եկո՛ւր քովս, եկո՛ւր նստե։ Չե՞ս ուզեր։ Եվ ի՞նչ կմտածես այդպես համառ, այդպես անշարժ։ Գուցե կխորհիս ամուսինդ։ Վրայեն արդեն գրեթե ամբողջ օր մըն է անցեր, ա՛յ կին, միթե դեռ կհիշե՞ս։* (Լուռ) *Մոմի մը բոց էր, կվառեր, փչեցիր անցավ։ Եթե կուզես նորեն վառես կյանքիդ մոմը, բե՛ր կայծքարը ու ամո՛ւր զարկ երկաթին. պետք է նո՛ր կայծ, որ վառվի մոմդ նոր բոցով։* (Բաժակները կլեցնե) *Ըսիր՝ կատես ինծի։ Եթե իրավ որ կատես ինծի՝ վերցո՛ւր այս բաժակը, խմե՛ կենացս. խմե՛ մինչև հատակը և այնպես ատե՛. անիծե ինծի գինին շրթունքիդ. որովհետև ես կսիրեմ քու ատելությունդ, ինչպես որ կսիրեմ քու այս գինիդ. գինին ալ արդեն հավողի ատելությունն է, որթի հավաքած եռքն ու զայրույթը։ Ա՛ռ, խմե՛։*

Կինը ընդոստ շարժումով մը ետ կնրե անոր ձեռքը. բաժակը կիյնա ու կփշրի։ Իշխանը ժպտուն կնայի պահ մը անբարբ կնոջ աչքերուն։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— *Քանի որ դուն չես ուզեր, լա՛վ, ես ալ չեմ ուզեր։* (Իր բաժակն ալ կդնե վար)։ *Այսօր դո՛ւն եղիր իմ ամբողջ գինիս։ Թող որ քու շրթունքներեդ խմեմ իմ գինիս։* (Կուզե դեպի կինը)։



ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— (Փոքրիկ դանակ մը դուրս քաշելով հագուստին ծալքերեն) *Չմոտենա՛ս, չի՛ զաս. քայլ մը որ առնես՝ կզարնե՛մ։*

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— *Վա՜յ, այդպես է բանը...*

Կանգ կառնե, և կարծես ետ քաշվիլ կուզե. հանկարծ կցատկե կնոջ վրա. կբռնե ամուր անոր երկու դաստակներեն ու կջանա դանակը ազատելու։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— (Ճնշատ) *Չե՛մ տար, չե՛մ տար. թեև ալ կոտրես՝ չե՛մ տար...*

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Դանակը ձեռք ձգելով) *Ա՜խ, դո՛ւն. սա վագրի ձագին նայեցեք...*

Առանց կինը գրկեն բաց թողնելու, մեկ ձեռքովը դանակը կբարձրացնե վեր օդին մեջ, մյուսով հետզհետե իրեն կսեղմե կինը անոր դիմադիր ջանքերուն հակառակ, և աչքերը գամած անոր աչքերուն շրթունքներովը կհարի անոր շրթունքին։ Հանկարծ կթողնե ու կքաշվի քայլ մը ետ։ Կինը դողդոջուն կհենվի սյունին։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Կկոտրե դանակը) *Նախ այս խաղալիքը նետենք մեկդի։ Երկրորդ ալ, գիտցի՛ր, այդ տեսակ երեխայական բաներով ինծի արգիլել չես կրնար։ Քու դիմադրությունդ ավելի տենչալի կդարձնե քեզի։ Եվ որպեսզի ավելի լավ դիմադրես՝ հիշե՛, որ ես այսօր սպաններ եմ քու ամուսինդ, մեջտեղեն վերցուցեր եմ քու զավակներդ, ցրվեր, զարկեր ու գերեր եմ զորքերդ, խլեր եմ բերդդ, մտեր եմ տունդ։ Եվ այս բոլոր մահերուն, ավերներուն ու հափշտակության վրա, ինչպես փափուկ անկողնի մը վրա, փռեր եմ իմ ցանկությանս սավանը, որուն մեջ այս գիշեր պիտի պառկիմ քեզի հետ։ Եվ հենց քու այս հարկիդ տակ, ուր դուն պառկեր ես քու մարդուդ հետ, ուր դուն զավակներ ես ծներ քու մարդուդ, ու դուն...*

Իշխանուհին քիչ-քիչ կսահի սյունեն ի վար ու կիյնա գետին նվաղած։ Իշխանը ակնթարթ մը կմնա սառած։ Արագ կվերցնե գինիին բաժակը և կխոսի կնոջ գլուխը առնելով իր թևերուն մեջ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— *Այս մեկը իզուր էր, բոլորովին իզուր. և քու դերիդ անհարմար, բոլորովին ավելորդ։ Մինևնո՛ւյն է, ես իմ գրկես բաց չեմ թողներ քեզի։ Խմե՛, խմե՛ ումպ մը, որ ուշքի գաս, խմե՛, որ արյունդ շարժվի։ Խմե՛, խմե՛ կըսեմ քեզի, խմե՛...*

Տեսարանը հանդարտ կփակվի։

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՔԵՍՈՒՆԻ ԲԵՐԴԻՆ ՄԵՋ ԲԱԿ ՄԸ. ՏԻԿՆՈՋ ԲԱԺԻՆԸ

Գետինը սալահատակ. ճակատը պարիսպի կտորի մը քիվը, խորքը լեռնային տեսարան: Ձախ կողմը մեկ երկու ոտք սանդուղով բնակարանին մուտքն է: Աջ կողմը, դեպի խորքը, անցք մը, որ բակի մյուս բաժանմունքները կտանի:

Բակին մեջտեղը ամպհովանի թեք դիրքով. տակը գորգ, գահավորակ, մեկ երկու աթոռ, մեկուն վրա ձեռագործի իրեր:

### 1

Ամպհովանիին տակ բազմած է Քեսունի տիկինը՝ իշխանուհի Սոֆիա, նիհար ու չոր, մոտ քառասունի, խնամքով և խոսվածքը բարձրեն: Շատ երկար ու նեղ հյուսվածք մը ունի ձեռքը, որ կբանի և որուն բանված մասը ինկած է գետին:

Ձեռքի աշխատանք ունի նաև դեմը նստած իր սենեկապետուհին՝ Իրինա, 35-ը անց, նույնպես չոր ու նիհար. շրթունքները պինդ սեղմած, ու սուր ժպիտ մը միշտ դեմքին:

Քիչ մը ավելի հեռուն ու բոլորովին մեկուսի փայտե թիկնաթոռի մը բազկերուն մեջ խրված կնիրհե Անդրոնիկոս, հասուն տարիքի մարդ մը, ցանցառ մորուքով ու բոլորովին ճաղատ:

Երեքն ալ հույն են:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՍՈՖԻԱ— ...Այն տարին Հայրս կապրեր Կեսարիա. խառն օրեր էին, ինքն անձամբ պետք է հոն ըլլար. ըսենք՝ անիկա միշտ սիրած է ոտքին մեկը միշտ իր կալվածներուն վրա: Իսկ մենք մնացինք Բյուզանդիա, և կհրավիրվեինք պալատական բոլոր նշանավոր հանդեսներուն: Եվ ի՜նչ հանդես. շքեղությունը հոն պիտի տեսնեիր. վարմո՜ւնքը, հագո՜ւստը, հարստությո՜ւն, շո՜ւք ու փա՜ռք: Ո՜ւհ, Աստված իմ, հոս ի՞նչ կյանք է որ: Խոսիլ մը չգիտեն, շարժվիլ մը չգիտեն:

ԻՐԻՆԱ— Վրանուն հագուստը որ ըսես՝ մեյ-մեկ մաշված տոպրակ:

ՍՈՖԻԱ— Ի՞նչ կըսեի: Հա՜: Հայրս, որ վերադարձավ ու պալատը պիտի ներկայանար՝ ինծի հետը տարավ: Խոնարհեցանք թե չէ՝ կայսրը խնդաց. «Քաշվեցիր, ըսավ, քու Կեսարիան ու թագավորդ մոռցար»: Հայրս շտկվեցավ ու պատասխանեց. «Կեսարիա էի, Կեսարինս էի. Կեսարիայեն կուգամ, Կեսարիս կուգամ»:

ԻՐԻՆԱ— Ա՜խ, ի՜նչ լավ է ըսեր: Ուրիշ է մեր լեզուն ալ, մեր ըսվածքն ալ: Այս բարբարոսներու լեզուն կոպիտ, մարդը կոպիտ, կյանքը կոպիտ, նա՜, դիմացի քարերուն պես, բոլորն ալ կոշտ ու անտաշ:

ՍՈՖԻԱ— Մե՛նք ալ քարացանք այս քարերուն մեջ, վայրենացանք:



ԻՐԻՆԱ— Հապա՛, ատ է իմ ըսածս ալ:

ՍՈՖԻԱ— Է՜, ինչ ընենք, քանի որ այդպես կպահանջեն պետության բարձր շահերը: Զմոռնա՛նք, այս հողերը ես եմ, որ կապած կպահեմ կայսեր գահին: Քեսունի իշխանը պետքի մարդ է և վերջապես ուժեղ մարդ է:

ԻՐԻՆԱ— Անտարակո՛ւյս: Բայց կատա՞կ է, շուտով երկու տարի պիտի ըլլա. այս անծա՜յր ու անհատնո՜ւմ սարերուն գագաթը:

ՍՈՖԻԱ— Ես, իհարկե, կգերադասեի իմ Բյուզանդիոնի այրի կնոջ կյանքս, բայց... ինչպես ըսի, ամենեն առաջ պետության շահերը: Թե չէ ութը տարի ապրեր էի այրի, ալ ի՞նչ կարիք կար: Քիչ մըն ալ բախտը. այն ամառ Կեսարիա էի, մինակ էի. իշխանը, որ եկավ խնդրեց ձեռքս, հայրս ալ խոսեց, համոզեց. եղա՛վ, վերջապե՛ս, ճակտի գիր:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— (Ձեռքերն ու ոտքերը ձիգ տալով կկոտրատվի իր աթոռին մեջ) Այո՜, ճակտի՛ գի՜ր...

ՍՈՖԻԱ— (Արհամարհոտ) Ի՜նչ հազվագյուտ բան. արթընցե՛ր ես, ինչպես կերևա:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Թեև դուն դեռ չե՛ս վերջացուցեր, ինչպես կերևա:

ՍՈՖԻԱ— Ի՞նչը չեմ վերջացուցեր:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Հավիտենականության պատմությունը:

ՍՈՖԻԱ— Ի՞նչ կըսե:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— (Ոտքի ելլելով և չափազանցուցած շարժումներով) Սկսելով աղջիկության շրջանեն, կամաց մը քսվելով առաջին ամուսնության շրջանին և այրիության շրջանին ճի՛շտ մեջտեղովը դեպի երկրորդ ամուսնության շրջանը:

ՍՈՖԻԱ— Կխնդրեի՝ լեզուդ քիչիկ մը քաշես քեզի, սիրելի մորեղբայրս:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Երկար լեզվի առաքինությունը չէ՛ տվեր ինծի Աստված, սիրելի քեռաղջիկս: Այդ կողմեն ո՞վ կրնա մրցիլ քեզի հետ:

ՍՈՖԻԱ— Որովհետև երկար քնանալու առաքինությունն է տվեր քեզի Աստված: Խոստովանե՛, որ հոդ արդեն ոչ ոք մրցիլ չի՛ կրնար քեզի հետ: Ո՛ր աթոռին որ նստիս՝ քունդ կտանի:

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ատիկա իմ հոգևոր ուխտս է: Սովորաբար կքաշվին վանք ու անապատ, լեռներուն ծերպերը, ժայռերուն խոռոչները, որպեսզի ազատվին այս անմիտ ու հանցավոր կյանքի շփումեն: Ատոնք բոլորը սուրբ մարդիկ են, իհարկե, բայց խելոք մարդիկ չեն: Եթե իրենց սրբության չափ խելոք ըլլային, կհետևեին իմ օրինակիս: Այս անիմաստ կյանքեն փախչի՞լ կուզես, այս սնոտի աշխարհքեն կտրվի՞լ կուզես, քրոջդ աղջկան անվերջանալի կենսագրութենեն ազատվի՞լ կուզես, թազ-

վե՛ աթոռիդ մեջ, գլուխդ դի՛ր կողքի չոր բարձին ու մտի՛ր խավարի աշխարհըր։ Սա միևնույն ժամանակ կդառնա նաև նախնական մարզանք մը մեր հանդերձյալ կյանքի ճամփորդության համար։ Օր մը մեր ամենաուղղափառ եկեղեցին պիտի գնահատե իմ ճգնությունս և պիտի դասե ինծի «Վարք Սրբոց»-ին մեջ սուրբերուն կարգը. «Սուրբն Անդրոնիկոս, որ ի Քեսուն, ի յաթոռին նահատակվեցավ»։

ՍՈՖԻԱ— Ա՜խ, Աստված իմ, հայրս ալ մարդ դրավ հետս, որ ինչ է, օտարության մեջ մինակ չըլլամ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Այսինքն՝ անիրավ չըլլանք հորդ մեկ կտորին դեմ։ Հայրդ չէր, որ ինծի դրավ քեզի հետ ու ղրկեց հոս, այլ հորդ միայն մեկ կտորը, թեև, իրա՛վ է, իր ամենեն կարևոր կտորը։ Ըսել կուզեմ՝ իմ սիրելի քեռայրիս կծծիությունը։ Որովհետև ես ու իմ բերանս, ինչքան ալ որ սուրբ ըլլանք ու «Վարք Սրբոցի»-ի արժանի, բայց և այնպես մարդ մըն ենք ու բերան մը, որ պետք է կերակրել։ Անգամ մը բախտը այնպես է տնօրիներ, որ քու մայրիկիդ բերած օժիտին մեջ իմ բերանս ալ կար պատահաբար։ Եվ քանի որ հին ու սրբ ազգականի մը ավելորդ բերանը դեռ միշտ պետք է կերակրվի, թող քիչ մըն ալ կերակրվի նոր ազգականի մը շտեմարաններեն։ Ինչպես կտեսնես, հայրիկիդ տրամաբանությունը ուժեղ է։ Ուրե՛մն, Քեսունի տիրուհին արդյոք կրնա՞ ըսել ինծի՝ ինչ ունինք այս իրիկուն ընթրիքին։

ՍՈՖԻԱ— Հանգիստ ձգե՛ ինծի։

ԻՐԻՆԱ— Դժբախտաբար, տիա՛ր Անդրոնիկոս, քու ուզած ձուկդ այսօր չեն ճարած։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ալ ինչո՞ւ համար է ուրեմն այս ահագին դղյակը, ինչո՞ւ համար են այսքան մարդիկը, ինչո՞ւ համար են մեր բոլոր հրամանները, եթե մարդ սրտին ուզած ձուկն անգամ ուտել չի կրնար։ Կմնա նորեն միակ մխիթարությունը. ապավինեմ աթոռիս գիրկը։ (Կտեղավորվի իր նախորդ տեղը իր նախորդ դիրքով)։

## 2

Տան սանդուղներեն ծանր կիջնե իշխանուհի Աննա։

ՍՈՖԻԱ— (Խիստ պաշտոնական) Իշխանուհի՛ Աննա, հարկադրված եմ նկատելու, որ նորեն ուշացար։

ԱՆՆԱ— Ներեցե իշխանուհին. կարծեմ եկած եմ ճիշտ ժամանակին։

ՍՈՖԻԱ— (Գրգռված) Հիմա դո՞ւն պիտի սորվեցնես ինծի պալատական կարգերը։ Ծքախումբիս պատկանող տիկինը պետք է շուրջս ըլլա՝ իրիկվան կոչնակները զարկին, թե չէ։ Եվ պետք է մնա ծառայությանս կա՛մ մինչև ընթրիք, կա՛մ մինչև անկողին, նայելով թե մեծ իշխանը միասին կընթրե, թե ոչ։ Այսպես է և կայսերական պալատին մեջ։ Խնդրե՛մ կատարես ինչ որ քեզմե կպահանջվի և միտքեդ հանես քու ինկած բերդիդ քամիները։ Հոս Քեսուն է, և ես՝ տիրուհիդ։ Հուսա՛մ՝ կրկնել չես տար։

ԱՆՆԱ— Կջանամ, իշխանուհի՛։

ՍՈՖԻԱ— Եվ վայելչությունը կպահանջե, որ ինծի այդպես կարճ չանվանես։ «Իշխանուհի՜»։ Քեզի պես ինկած բերդի մը իշխանուհին ալ «իշխանուհի», և ե՞ս ալ «իշխանուհի»։

ԱՆՆԱ— Ներե՛, մեծ իշխանուհի, կվարժվիմ։

ՍՈՖԻԱ— Այո՛, այո՛. ուշ դիր։ Եվ ավելի լավ է, որ անվանես ինծի բոլորովին լրիվ. «Մեծ իշխանուհի և սեբաստե»։ Ես ու հայրս այնքան աշխատեցանք, որ մեծ իշխանը դառնա սեբաստոս։ Բյուզանդական արքունիքը երբ տիտղոս մը կուտա, անոր համար կուտա, որ գործածվի, և որ ամենքը իմանան, թե մեծ իշխանը սիրելին է ու շնորհակալը բյուզանդական կայսեր։

ԱՆՆԱ— Կըմբռնե՛մ, մեծ իշխանուհի։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Այնպես որ այս տան մեջ մնաց հիմա միայն մեկ բան մը, որ դեռ ոչ ոք չէ ըմբռնած։

ՍՈՖԻԱ— Ըսածդ ի՞նչ է նորեն։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Թե ի՞նչ է մեր ընթրիքը այս իրիկուն։

ՍՈՖԻԱ— Տիա՛ր, Անդրոնիկոս, խնդրե՛մ, չմոռնաս լռջությունը, երբ ես կայսեր մասին կխոսիմ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ո՞րն է անլուրջը, մեծ իշխանուհի և սեբաստե։

ՍՈՖԻԱ— Երբ առաջիկա անգամ նորեն անցնելու ըլլամ Բյուզանդիա, անպատճառ մեր «սեբաստոս» տիտղոսը վերածել պիտի տամ «Պան-սեբաստոսի», կամ, ավելի հնչուն է, չէ՞, Իրինա՛, «Պրոդո-սեբաստոս»։

ԻՐԻՆԱ— (Փորձելով) «Մեծ իշխան և Պրոդո-սեբաստոս. Մե՛ծ իշխանուհի և Պրոդո-սեբաստե»։ Ա՜, իհարկե, անհամեմատ ավելի ազնիվ է ու հնչուն։ Ա՜խ, ի՜նչ գեղեցիկ լեզու է մեր լեզուն։

ՍՈՖԻԱ— (Խորհրդավոր) Մանավանդ որ մինչև այն ժամանակ մեր իշխանության սահմանները քիչիկ մը ավելի լայնացած կըլլան, և տիտղոսն ալ ավելի արդար։

ԻՐԻՆԱ— (Ժպտուն) Նոր բա՞ն։

ՍՈՖԻԱ— Համբերությո՜ւն։ Գիտես, որ գործը կատարելես առաջ՝

խոսիլը չեմ սիրեր։ Տրագիրներ կան։ Գրած եմ պալատ. գրած եմ և Տարսոնի Օշինին. ան կայսեր հավատարիմ մարդ է։ Քեզի ըսեր եմ, Իրի՛նա, պետք է մաքրեմ սա անհավատ լատինները մեջտեղեն և ատոր համար պետք է հենվիլ սուլթաններուն. ատիկա իմ քաղաքականությանս հիմքն է։ Տանիլ չեմ կրնար այդ լատիններուն ծեսը, եկեղեցին, մեծամտությունը. զզվելի են ինծի. ի՞նչ գործ ունին արևելքի մեր հողերուն վրա։ Եկան սուրբ հողերը ազատելո՞ւ, թե սուրբ հողերը հափշտակելու։ Պետք է խուզե՛լ անոնց պոչը. պետք է խուզե՛լ անոնց անհավատ պոչը։

ԻՐԻՆԱ— (Ոտքի ելլելով) Մեծ իշխանը, տիրուհի՛։ (Ամենքը կելլեն ոտքի):

### 3

Ձախի խորքեն կմտնե Քեսունի իշխանը:

ԻՇԽԱՆԸ— Բարև՛ բոլորին։

ՍՈՖԻԱ— Սա ե՞րբ ես եկեր, որ ինծի չըսին։

ԻՇԽԱՆԸ— Ճիշտ այս վայրկյանիս ձիես վար իջա։

ՍՈՖԻԱ— Շաբաթներով երեսդ չենք տեսներ։

ԻՇԽԱՆԸ— Զբաղմո՛ւնք, տիկի՛ն։ Հապա քեզի պատկերացո՛ւր Ռապան բերդը, Քերծը, Սևատ, Հարթուն, Համսուր, Կարկառ, Բերդուս, Թուբեր. մեկը ո՞ւր, մյուսը ո՞ւր. և այս բոլորը քանի՞ օրվան մեջ։ Ե՞րբ էր՝ գնացի. կիրակի՞. չէ՛, երկուշաբթի՛։ Հազար մարդ, հազար գործ, հազար տեղ։ Կրնաս՝ աչքե թո՛ղ, աչքդ կհանեն։ Երեք հատ արաբական նժույգ եմ բերեր, սքանչելի։

ՍՈՖԻԱ— Իրա՞վ։ Ո՞ւր է, վա՞րն են։

ԻՇԽԱՆԸ— Ատոմի հետ. կհասնին շուտով։

ՍՈՖԻԱ— Ուրեմն տղա՞քդ ալ հետդ էին։

ԻՇԽԱՆԸ— Տղա՞քս։ Այսինքն Ատո՛մը։ Ան մյուսի անունը, խնդրեմ, ինծի չի տաս. քանի կերթա անհամ կդառնա։ Եթե Աստված հատուկ ստեղծել ուզեր մեկը, որ ամեն բանի մեջ իմ ուզածիս ճիշտ հակառակը ըլլար, ահա՛ ատկե ավելի լավը ստեղծել չէր կրնար։ Անիկա պետք է կնիկ ծնած ըլլար, կնիկ. զարմանալի խաղեր ունի բնությունը։ Իսկ դո՞ւն, իշխանուհի՛ Աննա, վարժվեցա՞ր բերդիս։ Սովրեցա՞ր քիչ մը նոր կյանքիդ ու նոր պայմաններուդ։ Ըսելու բան մը չունի՞ս ինծի։

ԱՆՆԱ— Շնորհակա՛լ եմ, իշխա՛ն Վասիլ։

ԻՇԽԱՆԸ— Լա՛վ է, լա՛վ, մի՛ վախնար, կբացվի հոգիդ։ Հոգի ըս-



վածը սովորություն է. ինչ բանի որ մարդս վարժվի, իսկ մարդս կվարժըվի ամեն վիճակի։ Ի՜նչ օրեր եմ անցուցեր, ի՜նչ վիճակներ։ Իսկ ուրիշ նոր ոչինչ չկա՞ կնիկներուդ աշխարհին մեջ։

ՍՈՖԻԱ— Կնիկներուս աշխարհին մեջ նորություն կա՛։ Եվ բոլոր ենթադրությունները արդարանալու վրա են։

ԻՇԽԱՆԸ— Այսի՞նքն։

ՍՈՖԻԱ— Նամա՛կ եմ ստացեր։

ԻՇԽԱՆԸ— (Անտարբեր) Հա՞, նորե՞ն։

ՍՈՖԻԱ— Իշխանուհի՛... (Գրգռված) Ինկա՛ծ բերդի իշխանուհի, չե՞ս լսեր, ո՞ւր է ուշքդ։ Ներսը, սնդուկիս վրա նամակ մը կա, պալատական կապույտ կնիքով...

ԻՇԽԱՆԸ— (Խիստ կտրուկ): Չէ՛, չէ՛, չուզե՛ր, թո՛ղ։

ՍՈՖԻԱ— Կարևոր բան է, Քեսունի՛ տեր։

ԻՇԽԱՆԸ— Ո՞վ կկասկածի, ինչպես մի՛շտ։

ՍՈՖԻԱ— (Բարկությունը զսպելու ջանքով) Ինկա՛ծ բերդի իշխանուհի, ե՛տ եկուր։ Քեսունի տերը հակառակ է իմ նամակներուս։

ԻՇԽԱՆԸ— Հակառա՞կ, ո՞վ ըսավ քեզի։ Ընդհակառակը. հիանալի զբաղմունք է. գրե՛ ու ստացի՛ր ինչքան սիրտդ ուզենա, թուրքերեն ա՛ռ, լատիններուն տո՛ւր, լատիններեն ա՛ռ, թուրքերուն տո՛ւր. պարապ ամաներ դատարկ ամանը, դատարկ ամանեն պարապ ամանը։ Միայն, ի սեր Աստծո՛ւ, խնայե՛, մի՛ կարդար ինծի։

ՍՈՖԻԱ— Սակայն, Քեսունի տեր, կայսերական պալատի...

ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ, սիրելի՛ս, քանի անգամ ըսեր եմ քեզի, կնկա քաղաքականութենեն ես բան չեմ հասկնար, չեմ ալ ուզեր հասկնալ և տանիլ չե՛մ կրնար։ Ի՞նչ ընեմ, տիկի՛ն, ասիկա ալ իմ քաղաքականությունս։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— (Իր աթոռին խորքեն) Եվ ի՛մ քաղաքականությունս։

ԻՇԽԱՆԸ— (Փնտրելով) Ըհը՛. չէի տեսեր. բարի լո՛ւյս. ի՞նչ բանի ես հոդ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ինչպե՞ս ըսեմ, Քեսունի՛ տեր, որ կարճ ըլլա։ Կըխորհեի՜։

ՍՈՖԻԱ— Թե այս իրիկուն ընթրիքին ի՞նչ պիտի ուտենք։ Ահա՛ և ձեր նշանավոր էրիկ-մարդիկդ։

ԻՇԽԱՆԸ— (Բարձր ծիծաղելով) Հա՞։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Երբ կանայք քաղաքականությամբ կզբաղին՝ մեզի կմնա խոհանոցը։ Կարծեմ, ատ ալ կարևոր հարց է։

ԻՇԽԱՆԸ— Եվ չափազանց կարևոր։ Ուտե՞լը, օ՜...

4

ԱՏՈՄ— (Ներս նետվելով խորքեն, ոգևորված) Կրակի կտոր է, հա՛յր, ա՛ն, ճերմակ նիշովը գավակին. հագին սանձերը կդողեին։ Ան ի՛մս է, հա՛յր, չե՛մ տար ոչ ոքի։ Բայց տեսնելո՛ւ բան է, քայլքը, կեցվածքը, մարմինը...

ՍՈՖԻԱ— (Հպարտ) Հա՛, ձի ըսվածը ազնվական կենդանի է։ Կարելի՞ է՝ երթանք նայինք։

ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ չէ։

ԱՏՈՄ —Հապա՛, հապա՛. ամե՛նքդ։

ՍՈՖԻԱ— (Պաշտոնական) Ով ուզե՝ կրնա միասին գալ։

Ինքն ու իշխանը առաջ կանցնին. Իրինան ու Անդրոնիկոսը անոնց ետևեն։ Ատոմ ետ քաշված կեցած է մյուսներուն ճամփա տալու համար: Իշխանուհի Աննա ցուցադիր կերպով և ծանր կուղղվի դեպի բնակարանին սանդուղները:

ԱՏՈՄ— Իշխանուհի Աննան չէ՞ գալու։

ԱՆՆԱ— Ո՛չ, Ատո՛մ իշխան։

ԱՏՈՄ— (Կոտրված) Ափսո՜ս։

ԱՆՆԱ— (Հանկարծ կկենա, կդառնա ետ, խոր ու տաք նայվածք մը կնետե տղուն) Իրա՞վ... (Ու քաշող ժպիտով մը հանկարծ նորեն կդառնա ու կնետվի սանդուղներեն վեր):

ԱՏՈՄ— (Նախ կեցած է իր տեղը գամվածի պես, մեկեն բուռն շարժում մը կընե դեպի սանդուղները անոր ետևեն. բայց կզսպե, կնայի աջ ու ձախ մոլորվածի պես, և դանդաղ, մտածկոտ քայլերով կերթա դուրս մյուսներուն ետևեն):

5

Պահ մը տեսարանը պարապ է:

Սանդուղներեն զգուշությամբ ետ կուգա իշխանուհի Աննան, աչքերն ու քայլերը մեկնողներուն կողմը, բռունցքները սեղմած ու դեմքին կատաղի արտահայտություն մը: Մեջտեղը կանգ կառնե, լարումը կթուլնա, կամաց մը կնստի, գլուխը կկախե ու կհառաչե:

ԱՆՆԱ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ— Ա՜խ, Աստված իմ...

Խորքեն որոնող հայացքով կմտնե իշխանին մեծ տղան. հուշիկ քանի մը քայլ կընե դեպի կինը ու կանգ կառնե:



ՍԵՊՈՒՀ— (Խորին կարեկցությամբ) Աննա՛ իշխանուհի։

ԱՆՆԱ— (Կցնցվի, գլուխը հպարտ կբարձրացնե և դեմքի բոլորովին փոխված արտահայտությամբ, հանգիստ ու անտարբեր, կդառնա խոսողի կողմը):

ՍԵՊՈՒՀ —Դեռ միշտ սիրտդ ջարդված, և հոգիդ կտառապի։

ԱՆՆԱ— Ո՛չ, Սեպո՛ւհ իշխան։ Կյանք է, օր մը չեն, օր մը խորդ։ Եվ ի՞նչ բան է որ հոգին։ Չգիտե՞ս, քեզի չե՞ն սորվեցուցեր. ինծի սորվեցուցին։ Հոգի ըսածդ սովորություն է, ինչ բանի որ մարդս կվարժվի։ Իսկ մարդս կվարժվի ամեն բանի։ Ուրեմն, ի՞նչ կարիք կա տառապելու։

ՍԵՊՈՒՀ— Բայց դուն կտառապիս, Աննա՛ իշխանուհի. ես գիտե՛մ, ես կզգա՛մ, և կտառապիս քեզի տեսած առաջին վայրկյանես, քու հարկիդ տակը։

ԱՆՆԱ— Հայրդ նոր նժույգներ է բերեր. ինչո՞ւ չես երթար նայելու։

ՍԵՊՈՒՀ— Տեսա հեռուեն՝ անոնք կիջնեին ախոռները. տեսա դուն չկաս անոնց մեջ. շտապեցի հոս, գուցե քեզի հանդիպիմ։ Չէի սխալած։

ԱՆՆԱ— Բա՞ն ունիս ըսելու։

ՍԵՊՈՒՀ— Ո՛չ։ Մասնավոր ոչինչ։ Այսինքն... ինչպես ըսեմ։ Մինա՛կ եմ, Աննա՛ իշխանուհի, բոլորովին մինակ։ Բոլոր շուրջս եղողները ուրիշ տեսակի են, ես՝ ուրիշ տեսակի։ Կմտածեմ, երևի, ես եմ վատը. բայց մա՞յրս. հապա մա՞յրս. անիկա վատ ըլլալ չէր կրնար. ան հրեշտակ մըն էր երկինքեն իջած, և հրեշտակի մը պես ելավ երկինք։ Կմտածեմ, եթե ես անպետք մարդ մըն եմ, ինչպես հայրս կըսե, և եթե իմ բոլոր մտածածս ու զգացածս սխալ է, հապա ինչո՞ւ մայրս ինծի կսիրեր։ Ա՜խ, մայրս ինծի շատ կսիրեր, Աննա՛ իշխանուհի։ Եվ ինչո՞ւ համար անիկա ալ այնպես կտառապեր. ինչո՞ւ համար կտառապիս դուն։ Մի՛ ծածկեր, ես կտեսնեմ, դուն ալ ճիշտ մորս պես ես։ Միթե չե՞ս զգար, քանի դուն այս բերդն ես եկեր, ես կպտտիմ քու չորս դիդ։ Գիտե՛մ, որ դուն պիտի հասկնաս ինծի։ Եթե գիտնաս ինչպե՜ս օտար մըն եմ այստեղ։ Եվ հոս ինչ որ կըսեն, ինչ որ կընեն, ինչ որ կուզեն, կարծես ամե՛նը, ամե՛նը կուգա ու իմ խղճիս վրա կնստի։ Չէ՞ որ անգութ ու անիրավ բաներ են ամենը, ինչ որ հոս կընեն, ինչ որ հոս կուզեն։ Գիտե՞ս ինչ է այս ամրոցին հին անունը։

ԱՆՆԱ— Քեսունի՞։ Ի՞նչ է։

ՍԵՊՈՒՀ— Անգղներու բույնը:

ԱՆՆԱ— Իրա՞վ։

ՍԵՊՈՒՀ— Ա՜յ, նայե՛, ա՛ն, վե՛րի, ամենեն բարձրի աշտարակը. հիմա անպետք է, կիսավեր. շա՛տ առաջ իսկական բերդը այդ մասն է եղած. հիմա լքված է, կիսափուլ և լեցուն է անգղներով, կվխտան։ Եվ

ժամանակ մը հանցավորները այդ աշտարակին ողջ-ողջ կկախեն եղեր, որ անգղները կտոր-կտոր փրցնեն կենդանի միսերը և ուտեն. եթե այր մարդ է՝ ոտքերեն, եթե կին է՝ մազերեն։

ԱՆՆԱ— Կինե՞ր ալ։ Ի՜նչ սարսափելի բան է։

ՍԵՊՈՒՀ— Կըսեն՝ երկուքը արդեն կախված է, Աստված ազատե երրորդեն։

ԱՆՆԱ— Երրո՜րդը... (Մտածկոտ) Ուրեմն երրո՜րդը...

ՍԵՊՈՒՀ— Ինչպե՞ս։

ԱՆՆԱ— Ըսել կուզեմ՝ կուգա ինչ որ գալու է։ Բայց սարսափելի է։

ՍԵՊՈՒՀ— Չէ՞։ Ա՜յ, ատիկա է հիմա մտեր գլուխս, թե մե՜նք ալ այս բերդին մեջ այդ տեսակ անգղներ ենք։ Զա՜րկ կտուցդ, փրցո՜ւր, խլե՜ ու լափե՜, կտոր մը ասոր մարմինեն, կտոր մը անոր, անվերջ։ Աչքս բացած օրեն ատիկա եմ տեսեր. այս ամբողջ ընդարձակ իշխանությունը հայրս կազմեր է իմ աչքիս առջևը. կացնելո՜վ, հափշտակելո՜վ. երբեմն բռնի՜, երբեմն խաբեությո՜ւն, հո՜ս սպառնալիք, հո՜ն դարան։ Ա՜յ, դեռ երկու տարի չկա առացանք հույներեն ամբողջ Ջահան գավառը Հոնի ամրոցին հետ, իբրև թե օժիտ մայրացուիս. ի՞նչ օժիտ, կրնայի՞ն չի տալ։ Քու ամրոցդ ինքդ գիտես։ Ռապանը, Բերդուսը լատիններեն ենք խլեր, մեկ երկու հատը թուրքերեն, իսկ Համսուրը, Կարկառը և քանի մը ավելի մանրերը առեր ենք մեզի նման այս կողմերը նոր հաստատվող հայ իշխաններեն։ Եվ ամեն անգամ ինչքա՜ն արյուն ու սպանություն, ինչքա՜ն հափշտակություն։ Եվ ինչքան ալ դեռ կա առջևնիս։ Դեռ ամենեն խոշորը մեր առջևն է. երևի շուտով կսկսինք մեծ կռիվը Թորոս իշխանի հետ։

ԱՆՆԱ— Թորո՞ս. չէ՞ որ ձեր դաշնակիցն է։

ՍԵՊՈՒՀ— Դաշնակի՜ց։ Այո՜. ի՞նչ ընենք։ Ի՜նչ միամիտ ես։ Երեք տարի է հորս ցերեկվան մտածմունքն է ատիկա ու գիշերվան երազը. թեև, իհարկե, ծածուկ կպահվի։

ԱՆՆԱ— Անարգափայի՞, Սիսի՞, Վահկա՞ տերը։

ՍԵՊՈՒՀ— Այո՜, այո՜։ Հա՜յ մարդ, լա՜վ մարդ, և՜ դաշնակից, և՜ բարեկամ, գրեթե ազգական։ Աստվա՜ծ իմ, որ կմտածե՜մ։ Սա ի՞նչ խելագար, անկուշտ բան է մարդուս այդ ցանկությունը. զա՜րկ, լացո՜ւր, սպաննե՜. ամեն կողմ անեծք ցանե ու ատելություն, և ինքդ ժողվե՜, ժողվե՜, դիզե՜ իրարու վրա, ու վրան նստե՜։ Երբեմն այնպես կդիզվի մեջս. կըսեմ՝ երթամ պոռամ հորս երեսին՝ «Դուն անգղ ես, անգղ, դուն գող ես, ավազակ»։ (Կլոճ):

ԱՆՆԱ— (Խոր մտածմունքի մէջէն) Խոսե՜, խոսե՜, շարունակե՜։



ՍԵՊՈՒՀ— Է՜, ի՞նչ օգուտ խոսելեն. գուցե քու սիրտդ ալ ավելի կըխռովեմ. չէ՞ որ դուն ալ մեկ զոհն ես հորս անկշտում ախորժակին։ Ահա՜ այս բոլորը հոգիիս մեջ կթափառիմ մինակ, կմտածեմ, կմտածեմ և այնքան ինքս իմ աչքիս խեղճ կերևամ, այնպես թշվառ ու դժբախտ։ Ես ի՞նչ եմ որ. ինչո՞ւ կապրիմ։ Հայրս ինծի վախկոտ կհամարե ու թուլամորթ։ Աստվա՜ծ է վկա, Աննա՜ իշխանուհի, ես ո՜չ վախկոտ եմ, ո՜չ թուլամորթ, և ինչե՞ն պիտի վախնամ, մեռնելե՞ն. բայց ատելի է ինծի անոնց քաջությունը, բայց զզվելի է ինծի անոնց անվախությունը։ Սակայն ի՞նչ ըսեմ, որո՞ւ ըսեմ, ո՞վ կհասկնա. ու կլռեմ։

ԱՆՆԱ— (Ոտքի ելլելով վճռաբար) Եվ իզո՜ւր։

ՍԵՊՈՒՀ— (Զարմացած) Ինչպե՞ս։

ԱՆՆԱ— (Խորհրդավոր ու տիրական խոսքով) Դուն իզո՜ւր ես լռեր մինչև հիմա. դուն իրավունք չունի՜ս լռելու. դուն պե՜տք է խոսիս, դուն պարտակա՜ն ես խոսելու։

ՍԵՊՈՒՀ— (Ապշած) Աննա՜ իշխանուհի...

ԱՆՆԱ— Խոսելո՜ւ ու գործելո՜ւ։ (Քրմաբար) Լսե՜ ու գիտցի՜ր։ Աստված է դրեր քու մեջ այդ կայծը։ Քու սուրբ մորդ սուրբ շրթունքներովը Աստված է դրեր քու հոգիիդ մեջ այդ կրակը։ Դրեր է, որ խոսիս, որ վառես, որ մաքրես։ Աստված է դրեր քու մեջդ այդ բողոքը։

ՍԵՊՈՒՀ— (Ենթարկված) Աննա՜ իշխանուհի...

ԱՆՆԱ— Աստված դրեր է քեզի քու հանցավոր հորդ քովը, որ խայթես մեղավոր խղճի մը պես, խայթե՜ս իր հոգին ու քալե՜ս... քալե՜լ տաս իր ոճիրը։

ՍԵՊՈՒՀ— (Հափշտակված) Աննա՜ իշխանուհի...

ԱՆՆԱ— Ո՜չ միայն խոսիս ու խայթես, այլ պետք է կռվի՜ս հորդ հետ, պետք է հակառակիս, պետք է խանգարես, քայքայես իր անօրեն ծրագիրները, առաջն առնես նոր հանցանքներու, սրբագրես հինները։ Աստված ատոր համար է դրեր քու մեջդ այդ կրակը. Աստված ատոր համար դրեր է քեզի քու հորդ քովը որ... (ակռաներուն մէջէն) արդարությունը տեղը գա, որ երկնային արդարությունը տեղը գա...

Պահ մը երկուքն ալ կեցած են լուռ աչք աչքի:

ԱՆՆԱ— Առաջ քու մորդ վրա էր դրված այդ պարտքը. և մայրդ մեռավ. և ատո՜ր համար մայրդ մեռավ։ Եվ իր պաշտոնը իր հոգիին հետ ավանդեց քեզի։ Հիմա վերեն կնայի քեզի, կհետևի քեզի, քու միայնակ թափառումներուդ միջոցին կգրկե քեզի ու կսպասե խոսքիդ, գոր-

ծիդ, վարմունքիդ... Հասկցի՛ր, որդի՛, իմ շրթունքովս հիմա ինքն է, որ կխոսի քեզի...

ՍԵՊՈՒՀ— (Կամաց մը անոր առջևը ծունկի գալով) Մա՛յր... մա՛յր իմ...

ԱՆՆԱ— Հիմա՛ գիտես։ Ելիր ոտքի՛։

ՍԵՊՈՒՀ— (Ոտքի ու երազկոտ) Ինծի կթվի, թե կքալեի խոր մութին մեջէն, կույր ու մոլորուն, ու չգիտեի՝ ո՞ւր կերթամ, ի՞նչ կընեմ. և ահա՛ հանկարծ կտեսնեմ դեմս լույսի ճեղքը, դուրսի ելքը, ճամփուս գիծը, կյանքիս ուղին... Աննա՛ իշխանուհի, օրհնված է քու գալուստդ այս բերդը, օրհնված է այս բերդը քեզմով, օրհնված ես ինքդ ու շըրթունքիդ ամեն մեկ խոսքը, որ ասկե ետքը իմ պատգամս է։

ԱՆՆԱ— Ո՛չ. ես ի՞նչ եմ որ. ես ո՞վ եմ որ. ես օտար մըն եմ. թո՛ղ ինծի։ Դուն լսե՛ միայն քու սրտիդ խոսքը. դուն հետևե՛ միայն քու մորդ խոսքին. ա՛ն թող ըլլա քու պատգամդ։ Երթա՛ս բարով։

ՍԵՊՈՒՀ— Բայց դո՛ւն ալ, Աննա՛ իշխանուհի. դո՛ւն ալ. չէ՞ որ երկինքն է ղրկեր քեզի։

ԱՆՆԱ— Գուցե...

ՍԵՊՈՒՀ— Չէ՞ որ իմ մայրս է ղրկեր քեզի։

ԱՆՆԱ— Ո՞վ կրնա գիտնալ երկնքի տնօրինությունը։ Երթաս բարո՛վ։

ՍԵՊՈՒՀ— Իմ մայրս է ղրկեր քեզի։ Մնաս բարո՛վ։ (Դուրս)։

## 6

Կիսամութ է արդեն:

Իշխանուհին, վայրկյան մը սպասելեն ետքը, կվազե դեպի բնակարանը կանչելով կիսաձայն.

ԱՆՆԱ— Սարե՛թ, Սարե՛թ։ (Եվ կանգնած կմնա աչքերը փակած):

ՊԱՌԱՎԸ— (Սանդուղներեն) Ինծի՞ կանչեց իշխանուհին։

ԱՆՆԱ— Աստված մեզի հետ է, Սարե՛թ։

ՊԱՌԱՎԸ— Ի՞նչ է պատահեր։

ԱՆՆԱ— Ինծի հետ է Աստված։ Ի՛նքը կբանա դուռները իմ դեմս։ Ի՛նքը ցույց կուտա ճամփան, խսկակա՛ն ճամփան։ Աստված ի՛նքը կըհարթե ուղին, ի՛նքը, ի՛նքը, իմ առջևս, քայլերուս առջևը։ Շո՛ւտ, շո՛ւտ, գնա բե՛ր, շո՛ւտ։



ՊԱՌԱՎԸ— Ի՞նչը։ Ի՞նչ կուզես։

ԱՆՆԱ— (Ամբողջ մարմնով կչտկվի, դեմքեն կավրվի ամեն արտահայտություն և նայելով դատարկության մեջ) Շապիկնե՛րը...

ՊԱՌԱՎԸ— (Ապշած) Ի՞նչպես։ Հիմա՞։ Հո՞ս։

ԱՆՆԱ— Հա, հո՛ս. հո՛ս, և շո՛ւտ, քանի դեռ չեն եկեր։ Ձե՞ս տեսներ լրիվ լուսինը. այսօր ամիսը լրացավ. կուզեմ լրիվ լուսնին տակ։ Շո՛ւտ ըրե, շո՛ւտ։ Աստված ինծի հետ է։

ՊԱՌԱՎԸ— (Դուրս):

ԱՆՆԱ— Ձեր վերջին մնացորդը, ձեր վերջին հիշատակը, ձեր միա՛կ հիշատակը, որոնցմով քնացեր եք դուք վերջին անգամ, որով պառկեր եք դուք ձեր պզտիկ, տաքուկ անկողիններուն մեջ ձեր այդ պաղ անկողինները մտնելեն առաջ։ Ձեր մարմնեն ու ձեր գոյութենեն ինծի մնացած միա՛կ նյութեղենը։ Ա՛խ, դո՛ւք, իմ մարմնիս մարմինը, իմ արյանս արյունը, դո՛ւք, իմ մսիս մեկ կտորը, և հատորը իմ հոգիիս...

Պառավը կերևա սանդուղներուն վրա՝ երկու ձեռքով փոքրիկ կապոց մը բռնած: Իշխանուհին հանդիսավոր քայլվածքով կերթա դեմը, կրոնական արարողության մը պես երկու ձեռքով կառնե պառավին ձեռքեն կապոցը և առաջ կուգա:

ԱՆՆԱ— (Կապոցը թեթև մը վեր բարձրացնելով և երգելու նման) «Եվ սրբությո՛ւն սրբոց»։ Իմ կյանքիս միա՛կ սրբությունը, իմ կյանքիս միա՛կ էությունը։ (Մեկ ձեռքովը զգույշ կբանա կապոցին ծայրերը և երկյուղածությամբ կհամբուրե) Ահա՛ այս աշխարհիս երեսին ձեզմե մնաց ինծի միայն այս հոտը։ Ձե՛ր հոտը, ձեր անո՛ւշ մարմնին, ձեր անուշ հոտը... այս վերջին մնացորդը ձեր անուշ հոտին, իմ անո՛ւշ. իմ աննմա՛ն, իմ նահատա՛կ զավակներս։ Անդունդն ի վա՜ր, խոր ձորն ի վա՜ր, հորդ գետն ի վա՜ր, իմ սպանված, իմ մորթված, իմ նահատա՛կ զավակներս։ (Լուռ կհանե զույգ կապտավուն շապիկները, կապոցը կուտա պառավին, իսկ զույգ շապիկները, կնունքի երեխայի նման, երկու թևով կբարձրացնե երկինք, դեպի լուսինը. և դաժան հանգստությամբ) Բաց երկնքին տակ, լրիվ լուսնին տակ, զավակներուս հոշոտման ամսադարձին տակ ահա՜ ելած եմ լրացնելու իմ երդումս, իմ սուրբ ուխտս, ավելի հրահրելու վրեժին բոցը, ավելի սրելու արդարության սուրը։ Ի՛մ երկու զավակներուս ի՛ր երկու զավակները. մեռնին պիտի երկուքն ալ. բայց ո՛չ իմ ձեռքովս, ինչպես կկարծեի, ո՛չ ալ ուրիշի մը ձեռքովը, ո՛չ։ Ահա՜ կերդնում ձեզմե մնացած այս վերջին հյուլեներովը, կերդնում ձեր մատղաշ մարմնին այս դեռ ապրող հոտովը, որ իր երկու զավակները, իր երկու հասուն զավակները պետք է մորթվին իրենց հարազատ հորը

ձեռքովը. ի՛ր, ի՛ր, ի՛ր իսկ ձեռքովը։ Այն ձեռքերը, որոնք զավակներուս մահվան ծաղիկը կկրեն, իր զավակներուն մահվան ծաղիկն ալ պիտի կրեն։ Ծաղիկ կյանքերը փետտել կսիրե՜, թո՛ղ բռնե հիմա ամբողջ փունջը։ (Տեսակ մը բարկությամբ շապիկները երկարելով պառավին) Ա՛ռ։ Փաթթե՛։ Կպահե՛ս։ (Կոտրված) Լա՛վ կպահես իմ գանձս։

ՊԱՌԱՎԸ— (Կապոցը փակելով) Լա՛վ, լա՛վ։ Այս չարչարանքին վերջ չկա՞, այս վառումին մարիլ չկա՞, այս մրմուռին մեղմիլ չկա՞։ Մինչև ե՞րբ։

ԱՆՆԱ— Կուգա՛, կուգա՛, հարսնիք կուգա և մե՛ր դուռը. սպասե։ (Հանկարծ) Սաբե՛թ, մտածե՛, ի՞նչ բան է, որ երկու տղոց մահը ուրիշի մը ձեռքեն . ի՞նչ արժեք. ի՞նչ փոխարեն։ Հիմա ուրիշ է։ (Բուռն ուրախությամբ) Կհասկնա՞ս։ Քեզի կըսեմ ի՛ր ձեռքերովը, իր սեփակա՛ն ձեռքերովը, իր հայրակա՛ն ձեռքերովը. ատիկա արդեն ուրիշ բան է։ Ա՜յ, այն ատեն արցունքները կբխին, ա՜յ, այն ատեն արցունքները կըթափին այս աչքերեն։ (Մեծելով կուրծքը) և այս կրակը գուցե մարի, այս հնոցը կմարի, հրաբուխը կմարի... Կմարի՛։

# ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԸՆԴԱՐՁԱԿ ԿԱՄԱՐԱԿԱՊ ՍՐԱՀ

**Ճակատը ահագին բուխերիկ մը, ուր ահագին ճյուղեր ու կոճղեր կվառին բարձր ու զվարթ բոցով մը, որուն ճարճատյունը կլեցնե սրահը և որուն կարմիր շողքը կխաղա պատերուն ու կահերուն վրա։**

**Մուտքերը աջեն ու ձախեն։**

### 1

**Քեսունի իշխանն ու Ապիրատ իշխանը նստած են դեմ դեմի, ոտքերնին երկընցուցած դեպի կրակը։**

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— «Թորոսի երկի՜ր». անունը կնքեցիր, էլի՜. «Թորոսի երկի՜ր...»։ Դեռ կտեսնենք որուն երկիրն է ատիկա։ (Մաղրանքով) Պա՜հ. Սիսեն մինչև Մերսին, Տավրոսի բարձունքեն մինչև ծով «Թորոսի երկի՜ր»։ Ռուբենի ունեցածը սարերուն մեջ կորած երկու բերդ



էր. ես ինքս եմ օգներ, հազիվ կդիմանար հույներուն դեմ։ Տղան մեկ երկու բերդ ալ ավելցուց. և նորեն ես եմ օգներ։ Հիմա եկեր է թոռը, հասեր է մինչև ծով, ու... «Թորոսի երկի՜ր»։ Նոր հավեր են ելեր, երկաթե հավկիթ կածեն։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Այն ատենը գործը ձեռքե բաց թողնելու չէինք։ Երկու տարի առաջ, նեղն էր, քեզի ըսի՝ «Վրա՛ տանք», չլսեցի՛ր։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Մա՛րդ Աստծու, նախ պետք է կռնակս ամրացնեի՞, թե չէ։ Ըսե՞լդ ինչ է։ Պարա՞պ եմ նստեր այդ երկու տարին։ Կրկնապատկե՛ր եմ, չէ՞, և՛ հողերս, և՛ ճորտերս։ Հիմա կրկնակի զորք կրնամ հանել. և ավելի ալ կուռ ու կոփ են հիմա հիմնական գնդերս։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Հա՛, բայց այդ միջոցին քու Թորոսդ ալ իր ոտքերուն տեղ կընե։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Թող ընե՛։ Այնպես սառո՜ւյց դնեմ ես անոր ոտքերուն տակը։ Էմիր Ղազիի հետ արդեն եկած ենք համաձայնության։ Այդ հավատը փոխած շունը գարունը բացվելուն պես շարժվելու է Թորոսի վրա. գինիեն նոր դարձած քացախը թունդ կըլլա։ Եթե միաժամանակ կայսեր զորքերն ալ արևմուտքեն շարժել կարողանամ Տարսոնի վրա, ա՜յ, կդառնա գործ։ Բյուզանդիոնի կոկորդն ալ խրված է, չէ՞, այդ Թորոսը։ Մինչև ամիս մը ղրկած մարդիկս պետք է որ դառնան, և կասկած չունիմ, որ համաձայնություն են բերելու։ Թող երկու կողմեն աքցանը հուպ տամ, ա՜յ, այն ժամանակ կտեսնենք «Թորոսի երկիրը»։ Կդառնա, ափիս պես, բաց ու անպաշտպան տեղ մը, կիջնենք քեզի հետ ու կվերցնենք առանց շատ մեծ աղմուկի։ Մեյ-մեկ խոշոր պատառ աջի ու ձախի շներուն, մնացածը կհավաքեմ ձեռքս, և ա՛ռ քեզի «Թորոսի երկի՜ր...»։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Ուրեմն քու հաշվով ամենեն ուշը առաջիկա ամառ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Հա՛, այս ամառ անշուշտ, եթե Տերը կամենա։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Աստուծմո՛վ, Աստուծմո՛վ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Երեսուն տարի է քրտինք ու արյուն կթափեմ այս սարերուն վրա. ինչո՞ւ. որ այդ հրաշալի, հարուստ հողերը թողնեմ հիմա Ռուբենի լակոտներուն ձե՞ռքը։ «Թորոսի երկի՜ր»։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Ես պատրա՛ստ եմ, Վասի՛լ։ Գիտե՞ս, չէ՞, մի՛շտ։ Ուր ըսես՝ հո՛ն։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Դուն հիմա հանգիստ գնա Համսուր, ձմեռդ անցո՛ւր բույնիդ մեջ։ Հենց որ մարդիկս դառնան կայսեր մոտեն, ես կուգամ քեզի, ու կերթանք որսի։ Քու տանձատափիդ շամբուտը սքանչելի վարազի որջ է, գիտե՛մ։ Կուգամ քեզի, կնիկդ ալ սքանչելի տանտիկին. կուտենք, կխմենք ու կխոսինք վերջնականը։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Աչքի՛ս վրա։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Միայն, ինչպես մինչև հիմա, դեռ ոչ մեկ խոսք ոչ մեկուն։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Ատիկա ինծի՞ է, որ կըսես, Վասի՛լ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Իրավո՛ւնք ունիս։ Խոսք էր, ըսի։

2

Ձախեն կմտնե Աննա իշխանուհին և օտար մարդ տեսնելով կանգ կառնե:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՆՆԱ— Ներե՛, իշխա՛ն, կարծեցի առանձին ես։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Մեծ զարմանքով) Իշխանուհի Աննա՜...

ԱՆՆԱ— Կուգա՛մ վերջը։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Ո՛չ, ո՛չ, ես չեմ խանգարեր իշխանը։ Արդեն ուշ է, մեկնիմ պիտի, ձիս ալ թամբած։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Ատոմը ճամփու կդնե քեզի։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Դե՛, մնաս բարո՛վ, Քեսունի տե՛ր։ Բայց չը-մոռնա՛ս տված խոսքդ։ Ես, կինս ու վարազներս անհամբեր պիտի ըս-պասենք քեզի։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Խոսքս խոսք է։

ԱՊԻՐԱՏ ԻՇԽԱՆԸ— Ուրեմն, բարի՛ հաջողում։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Ճամփա՛դ բարի։

3

Ապիրատ աջեն դուրս: Քեսունի իշխանը կերթա դեպի կինը և ճաղքական տրամադրությամբ:

ԻՇԽԱՆԸ— Խե՞ր ըլլա, Աննա՛ իշխանուհի։

ԱՆՆԱ— Կուզեի հետդ երկու խոսք։

ԻՇԽԱՆԸ— Վե՛րջապես։ Այս առաջին անգամն է։ Ուշ ու դժվար, բայց վե՛րջապես։ Ուրախ եմ, իշխանուհի՛ Աննա, շատ եմ ուրախ։

ԱՆՆԱ— (Զարմանքով) Ինչե՞ն, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ ձևերը. չէ՞ որ մենք հրաշալի կըմբռնենք իրար։ Դուն, որ այդքան խելացի ես, չէիր կրնար չի հասկնալ, որ չե՛ս եկած այս ամրոցը ամրոցիս տիկնոջ իբրև սենյակի կին։ Բայց ուզեցի, որ այս



անգամ գայիր ինքդ, անպատճա՛ռ գայիր ինքդ, քու ոտքովդ։ Եվ ահա՜ վերջապես։ Բարի՛ եկար։

ԱՆՆԱ— Ես եկած եմ, իշխա՛ն, խոսելու հետդ լուրջ հարցի մը վրա։

ԻՇԽԱՆԸ— Հա՛, իհարկե՛, եկած ես միայն խոսելու համար, եկած ես միայն լուրջ հարցի մը համար, ո՞վ չգիտե։ Բայց և այնպես թե՛ ինծի համար և թե՛ քեզի՝ ան է միայն լուրջն ու կարևորը, որ եկած ես։ Թո՛ղ. մենք իրար խաբել չենք կրնար, և դիմակներու պետք չունինք։ Քու այդ բնական դիմակդ, այնպես, ինչպես որ կա, հաճելի եղավ ինծի հենց առաջին հայացքես. և ատոր համար է, որ ես գիտեի, թե պիտի գայիր։

ԱՆՆԱ— (Լուրջ) Իշխա՛ն Վասիլ...

ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ վերջացնեմ խոսքս. երկար լռեցի։ Եվ մինչև հի-մա չեկա քեզի, զսպեցի ինծի, բառ մը, ակնարկ մը չըրի, սպասեցի, որ դո՛ւն գաս։ Եվ հիմա որ եկեր ես, պետք է գիտնաս։ Հոս ոտք դրած օրեդ քու գոյությունդ այս ամրոցին մեջ տարօրինակ գրգիռ մը ու կենդանի շունչ մը տվեր է շուրջիս կյանքին։ Սուր հոտով ու բացառիկ ծաղիկներ կան, որոնք միայն լեռներու բարձր դարավանդներուն վրա կբուսնին, և որոնց հոտը ո՛չ քիթեդ դուրս կուգա և ո՛չ հոգիեդ, երբ անգամ մը ներս շնչես։ Աննա՛, խոստովանե՛, դո՞ւն ալ կհիշես, չէ՞, հաճախ կհիշես այն առաջին խենթ գիշերը... քու հին բերդիդ մեջ, քու հին երդիդ տակ։

ԱՆՆԱ— (Կիսով մեծ ճիգով, ընդհատ ու աչքերը գոց) Ես... ես եկեր եմ... խոսելու։ Ես... ես արդեն ըսի... հարցի մը համար։

ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, խոսե՛։ Գուցե դժգոհ ես հռոմներեն։ Գուցե այդ ցա-ցառ կնիկը կնեղե քեզի։ Գուցե արդեն կնախանձի։ Ես հատուկ պատվի-րեր եմ, որ հետդ լավ վարվի։ Թեև, իհարկե, այդ տեսակի պատվերները ամենեն գեշ հանձնարարականն է երբեմն։

ԱՆՆԱ— Ես չեմ եկած գանգատի։

ԻՇԽԱՆԸ— Այո՛, ան չի համարձակիր հրամանս անգոսնելու։ Հրա-մանս թող կատարե, նախանձն ու մնացածը կարևորություն չունին ինծի համար. և թող քեզի համար ալ կարևորություն չունենան։ Կա՛մ, եթե կուզես, փոխադրեմ քեզի ուրիշ ամրոց մը, առանձին։

ԱՆՆԱ— Ո՛չ։

ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ այդպես կտրուկ։

ԱՆՆԱ— Հասկցի՛ր, ես կին մըն եմ, որու գլխուն անգամ մը արդեն զարկեր է բախտը. ես դեռ ցնցված եմ ու գլուխս պղտոր։ Հազիվ սկսեր եմ հանգստանալու, մոռնալու այն ամենը ինչ որ էր. և ինչ որ սկսեր է քիչ-քիչ կորսվիլ հեռավոր ու թանձր մշուշի մը մեջ։ Հազիվ սկսեր եմ հարմարվիլ նոր կյանքիս, նոր ապրումներու, նոր բախտի բերած նոր օրերուն, որոնք կարծես այդ խավարին ծոցեն նոր-նոր կբացվին։ Ես

Հիմա մինակ մնալ չեմ կրնար, իշխան Վասիլ։ Պիտի հասկնաս, որ ես դեռ մինակ մնալ չեմ կրնար. դեռ չեմ կրնար։ Ավելի լավ է այնպես, այդ հույներուն հետ։

ԻՇԽԱՆԸ— Աղե՛կ. կհասկնամ լեզուդ։ Թող ըլլա ուզածիդ պես։ Թող անցնի ատեն մըն ալ։

ԱՆՆԱ— Եվ վերջապես պետք է, որ փարատի նախ այն վախը, որ հիմա մտեր է մեջս։

ԻՇԽԱՆԸ— Վա՞խ։ Ի՞նչ վախ։

ԱՆՆԱ— Այս բերդը շատ ամուր է, ճիշտ է, գրեթե անառիկ. մյուս ամրոցներդ ալ, կըսեն, պակաս չեն։ Եվ զորքերուդ թիվը մեծ է, գիտե՛մ, որ դուն կրնաս ոտքի հանել։ Բայց շատ մեծ են ըլլալու և անո՛ր ուժերը։

ԻՇԽԱՆԸ— Ինչի՞ մասին կխոսիս դուն։

ԱՆՆԱ— Եվ անշուշտ գալու է մեծ պատրաստությամբ. թե չէ՝ ինչպե՞ս կհամարձակեր։

ԻՇԽԱՆԸ—Ո՞վ, ո՞վ է գալու. ո՞ւր։

ԱՆՆԱ— Եվ վերջապես դուն վստա՞հ ես մարդոցդ վրա, չգիտեմ որ։ Վստա՞հ ես հոս բոլորին վրա։

ԻՇԽԱՆԸ— (Լրջացած ու քննական նայվածքով) Ի՞նչ բաներ կըխոսիս. և որո՞ւ մասին է խոսքդ։

ԱՆՆԱ— Իշխա՛ն, մի՛ ծածկեր ինծմե։ Եվ ավելորդ է. չէ՞ որ արդեն գիտեմ։ Ես հաստա՛տ գիտեմ։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչը։

ԱՆՆԱ— Որ ձյուները այս սարերուն վրայեն վերնան թե չէ՝ ողողելու է քու ամբողջ երկիրդ ու պաշարելու է Քեսունը։

ԻՇԽԱՆԸ— Ատ ո՞վ։

ԱՆՆԱ— Թորո՛ս իշխանը։

ԻՇԽԱՆԸ— (Ապշած) Թորո՛ս...

ԱՆՆԱ— Այո՛, Անարզաբայի Թորոս իշխանը։ Սիսի ու Վահկա բերդի տերը։ Կտեսնե՞ս, որ գիտեմ։

ԻՇԽԱՆԸ— (Հեգնոտ շեշտվող զարմանքով) Անարզաբայի Թորոս իշխա՞նը... Կըսես՝ մեր վրա է արշավելո՞ւ։ Ձյուները վերնան թե չէ՞... Ուրկե լսեցիր այդ հիմարությունը։

ԱՆՆԱ— Ինծի նայե՛, Վասի՛լ իշխան. դուն քիչ մը առաջ կըսեիր, որ մենք իրար խաբել չենք կրնար։ Այն մարդը, որ կերթա կխլե ուրիշին կինը, կբերե իր մոտը և կուզե պահե իրեն, պետք է կարող ըլլա և պաշտպանելու։ Վստա՞հ ես քու մարդոցդ վրան. վստա՞հ ես քու ուժերուդ վրան։ Ես չեմ կրնար երկրորդ անգամ քաշքշվիլ հիմա ալ Թորոս իշխանի մը ավարին ետևեն, մինչև Անարզաբա, մինչև Սիս, մինչև չգի-



տեմ դժոխքի ո՛ր ծայրը, թշնամի զինվորներու հետ, թշնամի զինվորներու մեջ... Ո՛չ, ես այլևս չե՛մ կրնար, չե՛մ կրնար, կխելագարիմ։

ԻՇԽԱՆԸ— Բայց ո՞վ է մտցուցեր այդ հիմար պատմությունը քու գլուխդ։ Ի՞նչ արշավանք, ի՞նչ բան, ատիկա ո՞վ է ըսեր քեզ։

ԱՆՆԱ— Ա՛, ես գիտե՛մ, ես գիտե՛մ։

ԻՇԽԱՆԸ— Քեզի կհարցնեմ՝ ո՞վ է ըսեր քեզի։

ԱՆՆԱ— Ո՞վ։ (Մտածկոտ) Ո՞վ է ինծի ըսեր։ Ի՞նչ կարևորության ունի, , թե ո՞վ է ըսողը։ Իրա՞վ է, թե ոչ։

ԻՇԽԱՆԸ— Բայց ես կպահանջեմ քեզմե. ո՞վ է ըսեր այդ բոլորը քեզի։

ԱՆՆԱ— Կպահանջե՞ս։ Բայց որ ըսել չեմ կրնա՛ր։

ԻՇԽԱՆԸ— Չե՞ս կրնար. և ինչո՞ւ։

ԱՆՆԱ— Որովհետև... որովհետև (Հանկարծ) Որովհետև չգիտեմ։

ԻՇԽԱՆԸ— (Խոժոռ) Ի՞նչ։

ԱՆՆԱ— Անցած գիշեր սաստիկ բռներ էր նորեն գլխուս ցավը, ելեր էի պատշգամ. սառը օդը քիչ մը կթեթևցնե կարծես սարսափելի ցավը։ Մո՛ւթ, մինա՛կ, լո՛ւռ. ձյունը անընդհատ կտեղար։ Հանկարծ կլսեմ վարեն թեթև խոսակցության ձայն և ոտքերու ճռճռոց։ Մեր սանդուղներուն տակեն երկու մարդ կանցնեին, դանդաղ ու կամաց խոսելով. և ես պարզ, շա՛տ պարզ լսեցի։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ լսեցիր։

ԱՆՆԱ— Ե՛վ Թորոս իշխանի անունը, և՛ մեր վրա արշավելը. հենց այդպես ալ ըսավ՝ «Հենց որ ձյունը մեր սարերեն վերնա»։ Ըսին, որ դուն ալ կպատրաստվիս Թորոսի դեմ։ Մեկ խոսքով հասկցա, որ գարնան սարսափելի փոթորիկ է պայթելու։

ԻՇԽԱՆԸ— Իսկ ե՞տքը, ե՞տքը...

ԱՆՆԱ— Այդ ետքը ես եկեր եմ քեզմե իմանալու։

ԻՇԽԱՆԸ— Իսկ անո՞նք, սանդուղներուն տակ. ուրիշ ի՞նչ ըսին։

ԱՆՆԱ— Քիչ մը որ հեռացան ձայները նվաղեցին, հասկնալ չէի կրնար, ձյունն ալ կճռճռար. մտան վարի բակը։

ԻՇԽԱՆԸ— (Քիչ մը խորհելեն ետքը) Է՛, ով գիտե, ո՞վ են եղեր և ի՞նչ են խոսեր։ Դուն պարզապես սխալ ես հասկցեր։

ԱՆՆԱ— Պիտի ներես ինծի, որ ես ավելի կհավատամ իմ սուր ականջներուս, քան քու այդ հանգստացումիդ։

ԻՇԽԱՆԸ— Եվ վերջապես դուն լա՛վ գիտես, որ Թորոս իշխանը մեր բարեկամն է, մեր դաշնակիցը, մեր ազգակիցը։

ԱՆՆԱ— Է՛, ազգակից, բարեկամ... Գիտեմ ես այդ բոլորը. ատոր համար ալ վախ ունիմ։

ԻՇԽԱՆԸ— Բայց նույնիսկ այդ տեսակ բան մը եթե պատահելու ալ

ըլլա, դուն նորե՛ն պատճառ մը չունիս վախ ունենալու։ Իմ իշխանությանս տակն են այս բոլոր սարերը, կիրճերը, բերդերն ու ամրոցները, և Քեսունի տեր Վասիլ Իշխանն եմ ես։ Գնա՛ հանգիստ քու գործիդ, քու տազիդ գպչող չի ըլլար։

ԱՆՆԱ— (Դառն) Այդ խոսքերը, և գրեթե բառացի, և ճիշտ այդ ձևով. ես լսած եմ անգամ մը։ Բայց այդ բոլորը արգելք չեղան, որ այդ խոսքերուն առաջին արտասանողը պառկած ըլլա հիմա գետնին տակը. իսկ իր կինը ահա՛ քու դեմդ կեցած... քու պաշտպանությունդ կմուրա։ (Հանկարծ) Վասի՛լ իշխան, մի՛ հավտար հարևաններուդ և մի՛ վստահիր քու ամենեն մոտիկ մարդոցդ։ Կհասկընա՞ս ինչ կըսեմ. այդ ամենը ես արդեն ապրեր եմ անգամ մը. ես գիտե՛մ։

ԻՇԽԱՆԸ— (Անհանգիստ) Տարօրինակ պատմություն է, ճշմարիտ։ Տեսա՞ր դուն այդ մարդոց դեմքը, գոնե կերպարանքը։ Որո՞ւն կնմանցընես։

ԱՆՆԱ— Ըսի մութ էր ու ձյուն։

ԻՇԽԱՆԸ— Գուցե կհիշե՛ս ձայնը։

ԱՆՆԱ— Կիսաձայն լսված խոսքեր։ Իշխա՛ն, իրա՞վ է այդ մարդոց խոսածը։

ԻՇԽԱՆԸ— (Կտրուկ) Ո՛չ. այդ տեսակ բան չկա։

ԱՆՆԱ— Բարեբախտաբար չեմ հավտար խոսքիդ։ Որովհետև, եթե հավտամ, կըլլա սարսափելի. ա՜յ, այն ժամանակ է, որ վիճակը կդառնա սարսափելի։ Ատիկա կնշանակե՝ բերդիդ մեջ մարդիկ կան, որ քեզմե ավելի բան գիտեն, որ քեզմե ավելի կապեր ունին դուրսի հետ։

ԻՇԽԱՆԸ— Իշխանուհի՛ Աննա...

ԱՆՆԱ— Ո՛չ, չեմ հավտար խոսքիդ։

ԻՇԽԱՆԸ— Տարօրինակ պատմություն է ճշմարիտ։ Եվ... և ես հիմա չգիտեմ՝ ինչ ըսեմ քեզի, որ հանգստացնեմ։

ԱՆՆԱ— Ճշմարտությո՛ւնը։

ԻՇԽԱՆԸ— (Մտածկոտ) Ճշմարտությո՜ւնը... Ճշմարտությունը, իշխանուհի՛ Աննա, ինչպես ձեռք բերելը, այնպես ալ ըսելը, կարծածիդ չափ դյուրին բան չէ։ Քիչիկ մը համբերություն է պետք։ Այնպես որ...

## 4

Աշեն ներս կմտնե Շահին: Փոքրահասակ, գունդ ու կլոր, ալեխառն, ժիր ու դյուրաշարժ մարդ մըն է:

ՇԱՀԻՆ— (Դեռ դռներուն մեջեն) Իշխա՛ն, սայլերը եկան։ Ա՛, ողջո՛ւյնս տիկնոջ։



ԻՇԽԱՆԸ— (Անձային) Այնպես որ, հիմա դուն գնա՛ ու հանգիստ եղիր։ (Կատակի շեշտով) Քու ճշմարտությունդ կիմանաս օր մը։

ԱՆՆԱ— Կյսե՛մ, իշխա՛ն։ (Ջախեն դուրս):

## 5

ՇԱՀԻՆ— Ի՞նչ է պատահեր։ Շատ այլայլած կերևար։

ԻՇԽԱՆԸ— (Անփույթ) Կնկա պատմություն։

ՇԱՀԻՆ— Սայլերը եկան, բայց ընդամենը ութը հատ. մյուսները պահեր է Թիփին Գայլ-Խեղդուկի բերանը։ Այս ութը հատը առաջ են եղեր, կիրճը արդեն անցած։ Հիսունչորս տոպրակը դաշտի ցորեն է, քաշել տվի հիմնական շտեմարանը. դարձավ հազար ութը հարյուր փաթուն ու չորս։ Մնացած բեռները սովորական. ըսի որ դատարկեն ներքևի պահեստները։ Բայց դուն ինծի չե՛ս լսեր, իշխա՛ն։ Ի՞նչ կմտածես։

ԻՇԽԱՆԸ— Ուշացան մարդիկս կայսեր մոտեն, Շահի՛ն. արդեն ջատոնց դարձած պիտի ըլլային։

ՇԱՀԻՆ— Երկար է Բյուզանդիոնի ճամփան, իշխա՛ն. ծովե՜ր ու ցամաք։

ԻՇԽԱՆԸ— Երկար է Բյուզանդիոնի ճամփան, այո՛. երկա՜ր ու ոլորուն, ու խարդա՛խ, ճիշտ իրենց քաղաքականության պես։ (Տեսակ մը ինքն իր մտքերուն հետ) Ինչո՞ւ չէ. հույն են. կխոստանան ինծի, որ օգնեն պիտի ինծի ու պիտի հարձակվին Թորոսի վրա. հոն ալ կրնան խոստանալ հակառակը և Թորոսը կնետեն իմ վրաս։ Եվ դեռ շատ խոշոր հարց է, թե ո՞ւրկե ավելի կվախնան, ինծմե՞, թե Թորոսեն։

ՇԱՀԻՆ— Բայց Թորո՞սը։ Միթե այդ տեսակ բան կրնա՞ մտածել, միթե կընդունի՞։

ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ համար ես կմտածեմ, իսկ ան չի պիտի մտածե։ Ուզելը իհարկե որ պիտի ուզենա. բայց թե կհարձակվի՞, ատիկա արդեն տարբեր հարց է։ Ա՜յ, ատիկա է, որ պիտի տեսնենք։ Կտեսնե՛նք։

ՇԱՀԻՆ— Իշխանը նոր լո՞ւր ունի, մա՞րդ է եկած։

ԻՇԽԱՆԸ— Թորոսը չէ՛ ինծի զարմանք պատճառողը։ Ճիշտ է, մինչև հիմա թեև ընավ կասկածի տեղիք չէ տված մեզի, բայց չէ՞ որ մինչև հիմա ես ալ իրեն կասկածի տեղիք չեմ տված։

ՇԱՀԻՆ— Կասկա՞ծ։ Այնպես հանկարծ ու անսպասելի իջնենք մենք անոր գլխուն, ինչպես ձյունը օգոստոսի կեսին։

ԻՇԽԱՆԸ— Իսկ հոս մարդիկ կան, որոնք կխոսին Թորոսին արշավանքի մասին մե՛ր վրա, մեր սարերու ձյունը դեռ չվերցած։

ՇԱՀԻՆ— Մե՞ր վրա։

ԻՇԽԱՆԸ— Ո՞ւրկե գիտեն անոնք, ինչպե՞ս գիտեն, և ինչո՞ւ կխոսին. ի՞նչ հաշիվ ունին։

ՇԱՀԻՆ— Հո՞ս, մեր Քեսունի՞ մեջ։ Պարապ խոսքեր են, իշխանս, ո՞վ է հնարեր։ Եթե Թորոս իշխանը այդ տեսակի քայլ մը առնել մտածեր, հոս Քեսունի մեջ ամենեն առաջ երկո՛ւ մարդ պիտի տեղյակ ըլլար. մեյ մը դո՛ւն, մեյ մըն ալ ե՛ս։

ԻՇԽԱՆԸ— Իսկ ես քեզի կըսեմ՝ այս բերդին մեջ մարդիկ կան այս վայրկյանիս, որ կխոսին Թորոսի արշավանքի մասին. կփսփսան իրարու ականջի, ինծմե հեռու, քեզմե հեռու, մեզմե ծածուկ։ Ասո՞ր ինչ կըսես։ Ա՜յ, ասիկա է, որ իսկապես ինծի զարմանք կպատճառե։

ՇԱՀԻՆ— Ստո՛ւտ է, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Իսկ եթե... իսկ եթե լսեր եմ ինքս։

ՇԱՀԻՆ— Դո՞ւն. քու ականջո՞վդ. և ինչպե՞ս։

ԻՇԽԱՆԸ— Պատահմո՛ւնք, մութին մեջեն, չիմացան իմ հոն ըլլալս։

ՇԱՀԻՆ— (Անհանգիստ) Ի՞նչ կըսես, իշխա՛ն։ Ո՞վ էին անոնք և ի՞նչ կըսեին։

ԻՇԽԱՆԸ— Ըը՞, անհանգստացա՞ր։

ՇԱՀԻՆ— Շա՛տ անակնկալ է ըսածդ, և շատ տարօրինակ ըսելուդ ձևը։

ԻՇԽԱՆԸ— Չէ՞։ Ի՞նչ կապ կա անոնց ու Թորոսի արշավանքին մեջ. ի՞նչ է իրենց հաշիվը. և ինչո՞ւ ինծմե ծածուկ. ինչո՞ւ չեն հայտներ ինծի։

ՇԱՀԻՆ— Բայց ո՞վ են անոնք. ըսե՛ վերջապես։

ԻՇԽԱՆԸ— Եթե գիտնայի, այսչափ պարապ խոսելու տեղիք չէր մնար։

ՇԱՀԻՆ— Չի ճանչցա՞ր։ Չի հետապնդեցի՞ր։ Ավելի ևս տարօրինակ։ Պետք է, որ իսկույն իմանանք։ Նկարագրե՛ ինծի ձայնը, կերպարանքը, տեղը, դիրքը, իրենց բառերը։ Իսկույն պետք է գիտնա՛նք, ինչ գնով ալ որ ըլլա։

ԻՇԽԱՆԸ— Ուրեմն... արդեն գլուխդ մտավ. ուրեմն կարելի բան է։ (Հանկարծ փոխված շեշտով ու ծաղրով) Շա՛տ շուտով հավատացիր, Շահի՛ն, չափազա՛նց շուտով, այդպես հիմա՛ր պատմության։

ՇԱՀԻՆ— Բայց ըսիր՝ ինքդ ես լսեր։

ԻՇԽԱՆԸ— Է՜, քի՞չ կխոսին մարդիկ հիմար բաներ։ Կամ երևակայի, որ սխալ եմ լսեր։

ՇԱՀԻՆ— Ատ ուրի՛շ հարց է։ Բայց պետք է ստուգել։

ԻՇԽԱՆԸ— Իսկ եթե այդ բոլորը հնարեր եմ գլխես։



ՇԱՀԻՆ— (Զարմացած կնայի անոր ու ծանր) Առանց կրակի մուխ չըլլար, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— (Բարկությամբ) Է՜, հիմար ես դուն, ինչպես և այս ամբողջ պատմությունը։ Վե՛րջ տուր։ Կզարմանամ, որ դեռ չկռահեցիր. երա՛զ եմ տեսեր։

ՇԱՀԻՆ— Երա՞զ։ Այդ մեկը, իրա՛վ որ, զարմանքի տեղ չունի. գիշեր ցորեկ գլխուդ մեջ Թորոսն է նստած։ Աղե՛կ. ան թող երազներուդ մեջը հարձակվի մեր վրա, մենք կհարձակվինք իր վրա արթուն ժամանակ։

ԻՇԽԱՆԸ— Հա՛, մեր սարերուն ձյունը շատ ուշ կվերնա։

## 6

Աջեն կմտնե Սեպուհ, վրայեն հայտնի է, որ ցուրտ է ու ճամփեն կուգա: Քիչ մը ետքը կմտնե Աստղ ու կկենա մեկ կողմ:

ԻՇԽԱՆԸ— Աս ո՞ւրկե այդպես։ Ճամփե՞ն կուգաս։

ՍԵՊՈՒՀ— Կուգամ Ռապանեն։

ԻՇԽԱՆԸ— Ռապա՞ն։ Ի՞նչ գործ ունեիր հոն։

ՍԵՊՈՒՀ— Ա՜յ, շտապեցի, որ եղելությունը լսես իմ շրթունքես ու շատ չի բարկանաս։

ԻՇԽԱՆԸ— Տխմարություն մը ըրեր ես նորեն։

ՍԵՊՈՒՀ— Դուն Ռապան էիր կալանավորեր Եդեսիայի դուքսի քեռորդին։

ԻՇԽԱՆԸ— Ռայմո՞նդը։ Այո՛։ Ի՞նչ կա որ։

ՍԵՊՈՒՀ— Գացի ու արձակեցի։

ԻՇԽԱՆԸ— (Զըմբռնելով) Ի՞նչ։

ՍԵՊՈՒՀ— Բերդապահը, իրա՛վ է, քիչ մը վարանեցավ, բայց ես հրամայեցի քու անունովդ։ Եվ քու անունովդ ալ հայտնեցի իշխանին, որ ազատ է։ Ըսի, որ քրիստոնյա ու ազնվական է ինքը, քրիստոնյա ու ազնվական է իր քեռին և որ հայ քրիստոնյա ու ազնվական ես դուն, Քեսունի տերը, այս լեռներուն ու ճամփաներուն տերը, և որ քու հողերուդ վրա բոլոր բարեկամ ու ազնվական մարդիկ ազատ կրնան երթալ ու գալ և որ պատահածը դժբախտ թյուրիմացություն մըն էր։ Մենք բոլորս եղբայրներ ենք։ Եվ ըսի, որ Քեսունի իշխանեն բարևները տանի Եդեսիայի դուքսին։

ԻՇԽԱՆԸ— Եվ... և... և ո՞ւր է հիմա իմ բանտարկյալս։

ՍԵՊՈՒՀ— Ուր պիտի ըլլա։ Իր երկրի ճամփուն։

ԻՇԽԱՆԸ— (Շահինին) Շո՛ւտ, ձիավորնե՛ր. ուր ալ որ ըլլա՝ առջևը կտրեն։

ՍԵՊՈՒՀ— Իզուր աշխատա՛նք է, հա՛յր։ Ես իմ տակիս ձին տվի իրեն, մեր Ճանճկինը. ի՞նչ ձի կհասնի անոր. հիմա երևի անցած կըլլան Մարաշը։

ԻՇԽԱՆԸ— (Վայրկյան մը կատաղի հայացքով կնայի տղուն և բռունցքները սեղմած կվազե անոր վրա, որ կեցած է առանց ինքնապաշտպանության) Տո՛, իշի գլո՛ւխ, տո՛, անասո՛ւն, ինչպե՞ս համարձակեցար։ Ո՞վ ես դուն, որ կարգադրություններ կընես քու գլխուդ, ան ալ իմ անունովս և իմ գործերուս մեջ։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ արձակեցիր։ Աստված է վկա, առիքը կփլցնեմ գլխուդ. ինչպե՞ս համարձակեցար խառնըվիլ իմ գործերուս։

ՍԵՊՈՒՀ— Կխոսինք, երբ բարկությունդ անցնի։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ։ Տո՛, ավանա՛կ, երկու հազար ոսկի փրկանք էի առնելու։ Կհասկնա՞ս, երկո՛ւ հազար ոսկի։ Դուն ինքդ երկու անպետք սև դրամ չես արժեր։

ՍԵՊՈՒՀ— Մարդը հանգիստ կանցներ քու հողերուդ ծայրեն, պաշարել տվիր, թիկնապահները սպաննեցիր, ինքն ալ ամիս մըն է պահեր ես բերդը. հիմա ատո՞ր համար է, որ փրկանք կպահանջես։

ԻՇԽԱՆԸ— Ա՛յ տխմա՛ր, ես, որ իյնայի իր ձեռքը՝ նույնը չի՞ պիտի ըներ։ Բոլոր դատողություններդ կարճ շապիկի պես են, տակեն կերևա խայտառակությունդ։

ՍԵՊՈՒՀ— Ա՛տ է, է՛, ա՛տ է։ Դուն անո՛ր, ան քեզի՛, անվե՛րջ, անվե՛րջ։ Միշտ նո՛ր կռիվ, նո՛ր թշնամի, անվեր՛ջ կռիվ, անվե՛րջ թշնամի...

ԻՇԽԱՆԸ— Աստվա՛ծ իմ, դուն ինծի համբերություն տաս։ Տո՛, խելքի սպո՛ւկ, այդքան, որ խելոք ես, վե՛ր կաց, կորսվե՛, գնա՛ իմ տունես-տեղես, գնա՛ քու Ռայմոնդներուն, ուրիշներուն, անոնց գլխուն կարդա՛ քու ապուշ քարոզներդ։ Գնա՛, վե՛ր կաց, կորսվե՛։ Աստված իմ. ե՞ս ինչու պիտի պատժվիմ, եթե դուն այս թշվառին խելքը պակաս ես կշռեր։

ՍԵՊՈՒՀ— Գիտմ, որ շատ ուրախ կըլլաս, եթե կորսվիմ մեջտեղեն։ Ո՛չ, ես հեռացողը չեմ ո՛չ այս հողեն, ո՛չ քու մոտեն։ Ռայմոնդներուն ու մյուսներուն կողքը Աստված կդնե երևի ուրիշները, որ արդարությունը և իրավունքը հիշեցնե անոնց ալ. ատիկա Աստծու գիտնալու բանն է։ Ինծի մայրս ծներ է քեզի համար. մայրս դրեր է ինծի քու քովդ, քու գործիդ, քու ըրածիդ։ Ես քալեմ պիտի քու ետևեդ քայլ առ քայլ, քու ստվերիդ պես, անվերջ կրկնելու քեզի՝ որ իրավունք չունիս ամենքը



զրկելու, ամենքեն խլելու, ամենուն զարնելու. գիտցիր և Աստված ուժ է դրեր քու ձեռքդ։

ԻՇԽԱՆԸ —(Աչքերը շփելով) Արդյոք երազի մե՞ջ եմ։ Ա՛յ շուն, ո՞վ ես դուն, որո՞ւն շունն ես դուն, ինչպե՞ս կհամարձակիս իմ երեսիս... (Կրակին վրայեն ահագին ածխակոր մը վերցնելով) իմ երեսի՛ս... իմ երեսի՛ս... Դո՞ւն ես ըլլալու ինծի խրատողը...

ՇԱՀԻՆ— (Առաջ կնետվի ու կբռնե ածխակորը) Իշխա՛ն, իշխա՛ն, զավակդ է...

ԱՏՈՄ— Հա՛յր...

ԻՇԽԱՆԸ— Թող որ ջարդեմ ես այդ անզգամի գլուխը, ցրիվ տամ իր չրիկ ուղեղը։

ՍԵՊՈՒՀ— (Ընկճված) Ներե՛ ինծի, հա՛յր, որ քեզի ցավ կպատճառեմ, բայց ուրիշ կերպ չե՛մ կրնար։ Իմ պարտքս է ատիկա. այդպես է որոշեր Աստծու կամքը, և... և մորս կամքը։

ԻՇԽԱՆԸ— Հա՛, մա՛յրդ, շիտա՛կ է, իր շաղվածն ես ու իր հյութը. ինծմե ոչի՛նչ չկա մեջդ, ոչի՛նչ, ոչի՛նչ։ Ան ալ, քեզի պես, խեղճ ու կրակ թշվառական մըն էր, ամբողջ կյանքը տնքաց ու լացավ, չգիտեմ ինչու համար, չգիտեմ ինչու վրա. իր լացովն ալ զզվեցուց ինծի ու իր լացովն ալ իջավ գերեզման։ Հա՛, հա՛, ճիշտ քեզի պես, կարճամիտ ու թուլամորթ կնիկ մը։

ՍԵՊՈՒՀ— (Խիստ) Հա՛յր, եթե այդ ածուխին կոթը գլխուս զարնելը հաճույք է քեզի՝ ահա՜, խնդրե՛մ, զա՛րկ։ Եթե ինծի հայհոյելը բավականություն է քեզի՝ հայհոյե՛ ինչքան սիրտդ ուզե։ Բայց մայրս, գիտցի՛ր, սրբուհի մըն էր, իմ մայրս սրբություն մըն էր. հարգանքո՛վ պետք է տաս իր անունը։

ԻՇԽԱՆԸ— (Սառած ու բերանը բաց կեցած է վայրկյան մը, ետքը շատ դանդաղ կդառնա Շահինին) Լսեցի՞ր, լսեցի՞ր, հասկցա՞ր։

ՇԱՀԻՆ— Թո՛ղ, իշխա՛ն, թո՛ղ. ճամփու դի՛ր, թող երթա՛։

ԻՇԽԱՆԸ— (Երկու ձեռքերը բարձրացուցած կնետվի դեպի տղան) Ես հիմա անիկա այնպես ճամփու դնեմ, որ ալ ետ գալիքը չըլլա։ Ես կսատկեցնեմ քեզի. ես կփրցնեմ քու չորնալիք լեզուդ։ Ես կպոկեմ քու լեզուդ, որ մյուս անգամ... որ մյուս անգամ...

ՇԱՀԻՆ— (Փաթթված է իշխանին) Զսպե՛, իշխա՛ն, զսպե՛ քեզի. Կտեսնե՛ս, որ պակաս է։

ԱՏՈՄ— (Քաշելով եղբոր թևեն) Քալե՛, քալե՛ եղբայր, ի՞նչ ես կեցեր։ Հեռացի՛ր, թե չէ փորձանք մը կբերես։

Եղբոր ձեռքեն բռնած, փոքրիկ երեխայի մը պես, հանգիստ ու ճնշված, կհանե դուրս:

## 7

**Իշխանը կնստի բազկաթոռին, երկու ձեռքերովը երկու կողմեն բազկաթոռի թևերուն կառչած և սկնարկը հառած գետին, անբարբ ու անշարժ։ Շահին կեցած է անոր ետևը ու կխոսի ողորմիչ շեշտով մը։**

*ՇԱՀԻՆ— Այդ աստիճան ալ դյուրագրգիռ կարելի չէ, իշխա՛նս։ Դըժվար է, կհասկնամ, ծալքը պակաս զավակը, բայց վերջապես նոր բան մը չէ քեզի համար։ Միայն, ինչպես կերևա, ասկե ետքը պետք է ավելի զգույշ ըլլալ։ Հիվանդության պես է, քանի կերթա կուժեղնա։ Ես կկարգադրեմ ամեն կողմ, որ ասկե ետքը չկատարեն անոր ոչ մեկ խոսքը։ Եվ քիչ մըն ալ պետք է ետևեն հսկել. Նոր խենթություն մը չընե։ Հանդիմանելը պարապ բան է, իշխա՛նս. բարկանալը՝ բոլորովին ավելորդ։ Մեղմությա՛մբ, մեղմությա՛մբ։ Պետք չէ հետը գլուխ դնել, «հա՛» պիտի ըսել. ինչո՞ւ այդպես սրտիդ կառնես։ Ըսածներուն մեջ այս մեկը շիտակ էր, ինքը ի՞նչ ընե. ծնունդի բան է. Աստծու կամքը։ Հանգստացի՛ր, իշխա՛նս. հանգստացի՛ր, մոռցի՛ր...*

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՄԻՋԱՆՑՔ ՍԵՆՅԱԿ ՄԸ ԿԱՆԱՆՑ ԲԱԺՆԻՆ ՄԵՋ

**Ճակատը գլխավոր մեծ դուռը. փոքր մուտքեր աջեն ու ձախեն։**

## 1

**Իշխանուհի Աննա նստած է. դեմը կեցած է Ասոմ.**

*ԱՍՈՄ— Չէ՛, չե՛մ սիրեր արջի որսը։ Ճիշտ է, ավելի դյուրին է հետքը բռնելը, մանավանդ ձմեռը ձյունին վրա. բայց ժամերով պետք է փնտրես, և ան ալ շատ զգույշ, երբ մանավանդ քիչվոր ես։ Այնպես թաքնվել գիտեն անիծածները ծառերուն ետին, ցախերուն ու թփերուն տակ, փոս ու փչակներուն մեջ։ Որս ըսածդ տեսնելդ ու վրա նետվիլդ մեկ է ըլլալու. Նետերը թափվին, նիզակները փայլին, բարակներդ հարձակվին և կաս-կարմիր արյունը ծաղկի ճեպ-ճերմակ ձյունին վրա։ Եվ, գիտե՞ս, ես վատ աղեղնավոր չեմ։ Ինչո՞ւ այդպես կժպտիս։ Կարծես՝ պարծենկոտությո՞ւն է ըրածս։*



*ԱՆՆԱ— Ո՛չ, սիրելի՛ս. ես գիտեմ, որ դուն իմ առջևս չե՛ս պարծենար։*

*ԱՍՈՄ— Իրա՛վ է։ Բայց կուզեմ, որ գիտնաս. ես լա՛վ նետվոր եմ, շատ լավ նետվոր եմ։*

*ԱՆՆԱ— Արդեն գիտեմ։*

*ԱՍՈՄ— Ո՞վ է ըսեր քեզի։*

*ԱՆՆԱ— Խոսե՛ր են։ Բայց միևնույն է, առանց ուրիշներու ըսելուն ալ ես գիտեմ։*

*ԱՍՈՄ— Այդ ինչպե՞ս։*

*ԱՆՆԱ— Ըսե՞մ։*

*ԱՍՈՄ— Հապա՛։*

*ԱՆՆԱ—* (Կամաց կելլե ոտքի, կմոտենա տղուն, մեկ ձեռքը քնքշությամբ կդնե անոր ուսին, մյուսով թեթև մը կբռնե անոր դեմքը ու շեշտ կնայի աչքերուն) *Ա՛յ, այսպես, որ կնայիմ աչքերուդ՝ ես ամեն բան գիտեմ։ Ինչ որ ես, ինչ որ կընես, ինչ որ կմտածես, ինչ լավ բան որ ունիս։ Բոլո՛րը... Բոլո՛րը։* (Հանկարծ ետ քաշվելով) *Հիմա հասկցա՞ր։*

*ԱՍՈՄ—* (Բախտավոր) *Ամե՞ն բան. ամե՞ն բան։*

*ԱՆՆԱ— Կարծե՛մ։*

*ԱՍՈՄ—* (Քմայքոտ) *Իսկ ես չե՛մ կարծեր... որ ամեն բան։*

*ԱՆՆԱ— Վա՛յ, այդ տեսակ ինծմե ծածուկ բաներ ալ կա՞ն։*

*ԱՍՈՄ— Այսինքն, քեզմե ծածուկ... ճիշտ չէ. բայց... չգիտեմ, չգիտե՛մ, ինքս ալ չգիտեմ։*

*ԱՆՆԱ— Լա՛վ, որ այդպես է, պատմությունդ շարունակե՛։*

*ԱՍՈՄ— Դուն... դուն ինծի հետ կվարվիս ինչպես երեխայի մը հետ։ Եվ իզո՛ւր, իզո՛ւր. ես երեխա չեմ։*

*ԱՆՆԱ— Ո՛չ։ Ես քեզի հետ կվարվիմ ինչպես... իմ... իմ... նա՛, ըսենք, իմ կրտսեր եղբորս հետ, իմ լավ եղբորս հետ, իմ սիրած, իմ շատ սիրած եղբորս հետ։ Ա՞ս ալ է իզուր։*

*ԱՍՈՄ— Չգիտե՛մ, չգիտեմ, ոչինչ չգիտեմ։*

*ԱՆՆԱ— Վա՛յ. ես քեզի այդպես սրտանց խոսք ըսե՛մ, և դուն ինծի այսպե՞ս պատասխան տաս։ Սիրալիր չես։*

*ԱՍՈՄ—* (Սաստիկ հուզված) *Իշխանուհի՛ Աննա...*

*ԱՆՆԱ— Սո՛ւս։ Ինծի կանչեցին։*

*ԱՍՈՄ— Ձայն չկա։*

*ԱՆՆԱ—* (Խնդալով) *Կա՛, կա՛։ Ես որսկան չեմ, բայց իմ ականջներս ավելի սուր են։ Դեռ հեռուն են, բայց պիտի գան. հիմա կուգան. երևի հայրդ է, կամ մայրացուդ։ Անոնք չեն սիրեր, որ քեզի հետ շատ խոսիմ։ Հեռացի՛ր, թող մեզի միասին չտեսնեն։*

ԱՏՈՄ— Ուրիշ խոսքով՝ նորեն կճամփես ինծի։

ԱՆՆԱ— Այո՛, հոգի՛ս, պետք է։ Գիտես, որ ազատ մարդ չեմ։ Ես քու հորդ գերին եմ ու քու մայրացուիդ ծառան։

ԱՏՈՄ— Բայց այդ մայրացուն ու բոլոր մնացածները միասին առած քու մեկ մազդ չեն արժեր։

ԱՆՆԱ— Հա՞, այդպե՞ս կկարծես։ Ուրեմն այդքա՜ն կհավնիս ինծի։ Ի՜նչ լավ է։ (Կատակով) Քանի որ այդպես է, դե՛հ, փախի՛ր, շո՛ւտ. հետքդ անգամ չի մնա՛։

Ինքը կնետվի ձախի մուտքեն դուրս, մինչ Ատոմ իշխանը կհեռանա ետկատեն: Իսկ աջեն խոսելով կմտնեն իշխանուհի Սոֆիա ու Իրինա:

2

ԻՐԻՆԱ— Վա՞յ. մի՞թե չի նկատեցիր երեկ իրիկուն։ Այնպե՜ս ծիծաղելի էր։ Սեպուհ իշխանը նստեր էր, ա՜յ, հո՛ս, սուսիկ ու ետ քաշված, ինչպես միշտ. նստեր էր ստվերին մեջ անշարժ, բայց իր աչքերը կվառեին։ Ո՛ր կողմը որ կերթար ձեր այդ նշանավոր «իշխանուհին», այդ ինկած բերդի իշխանուհին, այն կողմը կերթային և իշխան Սեպուհի աչքերը. կարծես թելով կապված ըլլային. շա՜տ էր ծիծաղելի. ուղղակի հայի՜լ-մայիլ։ Ինչպե՞ս է, որ դուն չտեսար։ Իսկ ինծի այնպես թվեցավ, թե դուն ալ կհետևեիր անոնց շարժումներուն։

ՍՈՖԻԱ— Ես Աննաներով հետաքրքրվելու սովորությունը չունիմ, սիրելի՛ս։ Եվ ատելի են ինծի այդ տեսակի թեթևաբարո կիները, որոնք վայելչությունը պահել չգիտեն։

ԻՐԻՆԱ— Թեթևը թեթև՛, բայց միևնույն ժամանակ ի՜նչ հարդի տակեն ջուր։ Դուն անոր հնազանդ ու կեղծավոր ձևերուն մի նայիր։ Տեսա՞ր, ինչպես բռներ է Սեպուհ իշխանի քիթեն։ Ինչպե՜ս ալ իսկույն գտավ, թե որուն քիթեն կարելի է բռնել։

ՍՈՖԻԱ— Ասոնց արյունն է հասարակ, արյունը. իսկ հասարակ արյունը միշտ անառակ է ու լիրբ։ Ես սկիզբեն գիտեի. կզգայի. իսկո՜ւյն, տեսա թե չէ այդ կնոջ խոշոր ու միշտ բան մը փնտրող աչքերը։

ԻՐԻՆԱ— Եվ հիմա ի՜նչ է իշխանուհիիս դիտավորությունը։

ՍՈՖԻԱ— Դիտավորությո՞ւնս։ Ի՞նչ դիտավորություն։

ԻՐԻՆԱ— Գուցե իմաց տաս Մեծ իշխանին։

ՍՈՖԻԱ— Մեծ իշխանի՞ն. ինչո՞ւ։ Երբե՛ք։ Ես հայր ու տղա կռվեցնելու ցանկություն չունիմ։

ԻՐԻՆԱ— Ճի՛շտ է. մանավանդ որ տղան ալ հորը շատ աչքին լույսը չէ. ո՞վ գիտե՝ ի՜նչ կրնա պատահիլ։ Իրա՛վ է, իրա՛վ է իմ իշխանուհիս. Մեծ իշխանը պետք չէ, որ իմանա. երբե՛ք, երբե՛ք։ Այն ժամանակ երևի իշխանուհիս խոսիլ կուզե այդ անպիտան կնոջ հետ, որ քիչ մը իր սանձերը իրեն քաշե։

ՍՈՖԻԱ— Ե՞ս։ Ես պիտի նվաստանամ այդ կարգի կեղտոտություններու մասին խոսելու լկտած կնկան մը հե՞տ։ Կզարմանամ քու այդ աստիճանի անտեղի մտածումիդ։

ԻՐԻՆԱ— Ա՜խ, ինչքան իրավունք ունի Մեծ իշխանուհին։ Ճշմարիտ է, չմտածեցի։ Այն ժամանակ... այն ժամանակ... ուրեմն ինչպե՞ս...

ՍՈՖԻԱ— Ինչո՞ւ այդպես կհետաքրքրե քեզի այդ. պատմությունը։

ԻՐԻՆԱ— Չէ՛, ինծի բնա՛վ չի հետաքրքրեր. միայն կուզեի իմանամ իշխանուհիիս կարծիքը. ի՞նչ դիրք պետք է բռնեմ, ի՞նչ պետք է ընեմ։

ՍՈՖԻԱ— Ոչի՛նչ, քիթդ չես խոթեր ուրիշներու գործին, վերջացավ գնաց։ Քեզի՞ ինչ, ինծի՞ ինչ։ Ես հոս չեմ եկեր այս լեռնցիներուն բարոյականություն դաս տալու։

ԻՐԻՆԱ— Իրա՛վ է, մենք հոս չենք եկեր այս վայրենիներուն բարոյականություն դաս տալու։ Մեզի՞ ինչ, մենք ի՞նչ գործ ունինք։ Ուրիշ խոսքով՝ ոչինչ չենք տեսեր, ոչինչ չենք լսեր և ոչինչ չգիտենք։

ՍՈՖԻԱ— Եվ որպեսզի մեր աչքն ու ականջը չի վիրավորվի, երբ կտեսնես, որ անոնք իրարու կուգան, կամաց մը ձգե՛ ու հեռացի՛ր։ Ամենեն շիտակ ճամփան. մինա՛կ թող. իրենց արյունը իրենց գլուխը։

ԻՐԻՆԱ— Կատարյալ իրավունք ունի իմ Մեծ իշխանուհիս։ Եվ ինչքան ալ զվարճալի կըլլա այդպես. հեռուեն հեռու կնայիս ու կխնդաս։ Բայց շատ է ծիծաղելի, երբ երկու հոգի՝ խելքերնին վրա տված՝ իրարու չորսդին կդառնան և կկարծեն՝ հենց իրենք գիտեն միայն։ Շատ ապուշ բան է այդ սեր ըսվածը և շատ տգեղ, թեև հեռուեն՝ շատ զվարճալի։ Մանավանդ որ մարդս այնքա՜ն քիչ զվարճություն ունի հոս։

3

ԱՆՆԱ— (Դանդաղ ներս կմտնե ձախեն):

ԻՐԻՆԱ— Կխոսեինք զվարճության մասին, Աննա իշխանուհի։ Այնպես չէ՞, մարդս այնքան քիչ զվարճություն ունի հոս, այս հաստ ու ամուր պարիսպներուն ետևը։

ԱՆՆԱ— Զվարճությունը մարդ իր հոգիին մեջ պետք է ունենա։

ԻՐԻՆԱ— Հոգիին մեջ, հոգիին մեջ, իհարկե որ հոգիին մեջ։ Քու հոգիդ ալ այս վերջին ժամանակներս քիչ մը ավելի զվարթ կերևա։ Անչափ ուրախ եմ։

ԱՆՆԱ— Պատճառ չունիմ տխուր ըլլալու։

*ԻՐԻՆԱ— Շա՛տ ուրախ է և Մեծ իշխանուհին։ Այնպես չէ՞, Մեծ իշխանուհի։*

*ՍՈՖԻԱ— Այո՛. ինչո՞ւ ոչ։ Ես միշտ ջանացեր եմ դյուրություններ տամ իր պարտավորություններուն, և ներողամիտ եմ եղած միշտ։*

*ԱՆՆԱ— Երախտապարտ եմ, Մեծ իշխանուհի։*

*ԻՐԻՆԱ— Իշխանուհի Աննան, անշուշտ, ինքն ալ նկատած է, թե ինչպես ամենքը դեմ կուգան իրեն մեծ սիրով։ Օրինակ, ե՛ս, նվաստս, սրտանց համակրեցի իրեն, իր ոտքը հոս դրած օրեն, քրոջս պես։*

*ԱՆՆԱ— Կզգամ, քիրի՛ Իրինա, կզգամ։ Իմ ճակտիս գիրն էր ու Աստծու բարի կամքը, որ այս շրջանակին մեջ նետեց ինծի։*

*ԻՐԻՆԱ— Ա՜, այս բերդը բախտավորություն է բերեր ամենուն։ Վըստա՛հ եղիր և դուն։*

## 4

Ճակտեն կմտնեն Սեպուհ և Անդրոնիկոս խոսելով։

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ—* (Չափազանցված շարժումներով) *Ա՜, ո՛չ. ա՜, ո՛չ, Սեպուհ իշխան, այդ մեկը ո՛չ. ատիկա ընդունիլ չեմ կրնար. երբե՛ք, երբե՛ք։ Դուն ալ գիտես, և բոլորն ալ գիտեն, թե ինչքա՜ն կհարգեմ ես քեզի, և ինչքա՜ն կհարգեմ այն ամենը, ինչ որ դուն կըսես. որովհետև քու ըսածներդ միշտ հակառակ է այն ամենուն, ինչ որ բոլոր մյուսները կըսեն. ատոր համար ալ և՛ հաճելի են, և՛ հետաքրքիր. մանավանդ, երբ լողներդ ապուշ-ապուշ երեսդ կնային, շա՛տ է հետաքրքիր։ Բայց այս մե՛կը՝ ո՛չ։*

*ՍԵՊՈՒՀ— Եվ ինչո՞ւ անպատճառ այս մեկը՝ ո՛չ։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Մի՞թե պարզ չէ։ Հոս հարցը արդեն դուրս կուգա մտքի ու սրտի վերին ոլորտներեն ու կիջնե շատ ավելի վարի, բայց և շատ ավելի կարևոր ոլորտները. ըսել կուզեմ, հարցը կհասնի փորի պատերուն։*

*ԻՐԻՆԱ— Այդ ինչի՞ մասին է խոսքը, տիա՛ր Անդրոնիկոս։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Սեպուհ իշխանը այն համոզմունքին է, որ մարդիկ պետք է դադրին միս ուտելէ. որ միս ուտելեն կծնի բոլոր գազանությունը։*

*ԻՐԻՆԱ— Գազանությո՞ւնը...*

*ՍՈՖԻԱ— Մի՞ս...*

*ՍԵՊՈՒՀ— Այո՛, տիկի՛ն. մի՞թե այդ աստիճանի զարմանալի՞ է քսածս։ Ինչքան ատեն, որ անասունները կմորթենք, կուտենք, ինչո՞վ*



*ենք տարբեր մեր մորթած անասուններեն։ Կսիրենք արյուն ոթել, կսիրենք բզկտել ու լափել։ Շատ հեռու չե՛նք գայլի բարքեն ու ճաշակեն։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ո՛չ. շատ հեռու չենք։ Ա՛յնպես... քիչի՛կ մը։ Այսինքն ան ալ... գուցե։ Վե՛րջապես, համաձայն եմ։ Այդչափին համաձայն եմ. այդպե՛ս է։*

*ՍԵՊՈՒՀ— Ուրե՞մն։ Պետք է դադրի՞ն վերջապես մարդիկը իրար արյուն թափելէ ու իրար միս ուտելէ, թե ոչ։ Մինչև ե՞րբ այս անվերջ կռիվներն ու կոտորածը։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Մինչև որ գա... երկնքի արքայությունը։ Հո՛ն կըվերջանա այդ բոլոր կոտորածը, իշխա՛նս, ան ալ եթե հավատանք մեր սուրբ հայրերու ըսածին։ Մեր սուրբ հայրերը, ճիշտ է, թեև սուտ խոսելու սովորություն չունեին, բայց... վե՛րջապես... ինչևէ։ Իսկ քանի դեռ կապրինք հո՛ս, այս վարի ու փորի թագավորության մեջ, մեր ձեռքերը ճանկել կուզեն ու մեր ակռաները՝ ծամել։*

*ՍԵՊՈՒՀ— Իսկ ես կըսեմ քեզի, որ և այս աշխարհիս վրա մարդիկ գան պիտի շուտով ուրիշ հասկացողության։ Օր մը դադրի պիտի ուժի ու գայլերու թագավորությունը, և գա պիտի գութի ու արդարության թագավորությունը։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Կհասկնա՛մ, կհասկնա՛մ. ոչխարներու թագավորությունը. այսինքն՝ խոտաճարակներու ու անճարակներու թագավորությունը։ Բայց գիտե՞ս, Սեպո՛ւհ իշխան, շա՜տ մտածելու բան է. ոչխարներո՞ւ բարքն ու ճաշակը, թե՞ գայլերու* (Խոժոր ծամածռություններով) *Դժվար ընտրելու բան է։*

*ՍԵՊՈՒՀ— Ինչո՞ւ անպատճառ ոչխարներու։ Ամենքը կդառնան եղբոր պես։*

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ա՜, գայլերու ու ոչխարներու եղբայրությունը։* (Խոժոր ծամածռություններով) *Դժվա՛ր հավատալու բան է։*

*ՍՈՖԻԱ— Իրի՛նա, կարծեմ մենք կրնանք հեռանալ։ Անասուններու լեզուեն ես շատ բան չեմ հասկնար։*

*ԻՐԻՆԱ— Հրամա՛նդ, Մե՛ծ իշխանուհի։*

Երկուքով աջեն դուրս։

## 5

*ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Իմ քեռաղջիկս շատ համեստ ըլլալուն համար է, որ այդպես ըսավ. ապա թե ոչ պիտի ըսեր, որ ո՛չ անասուններու լեզուեն շատ բան կհասկնա, ո՛չ սասուններու։ Գալով մեր անտեր թողած ոչ-*

խարներուն, իհարկե՛, շատ հետաքրքիր բան կըլլար, որ Հանկարծ կռիվ ըսվածը վերնար մեջտեղեն։ Եվ ուժը, բռունցքն ու բռնությունը հանկարծ, խխունջի մը պես, խեյոքիկ մը կծկտեին իրենց պատյանին տակը։ Երբեմն-երբեմն միայն իրենց փափուկ ու բարակ կոտոշիկները երկարեին դուրս, ա՛յնպես, հետաքրքրության համար, տեղեկանալու համար, թե ի՞նչ կա-չկա արդարության այդ ձանձրալի աշխարհին մեջ։ Ոչխարներու համար, անշո՛ւշտ, սքանչելի ծրագիր։ Բայց կարծեմ այդ մասին պետք է լսել նաև գայլերուն կարծիքը, գոնե պարզ քաղաքավարության համար։ Եվ քանի որ գայլերը դեռ չեն գացեր սափրիչի մոտ իրենց ժանիքները քաշել տալու՝ հարցը կստանա վտանգավոր կերպարանք։ Այս բոլորը աչքի առաջ ունենալով, և ավելի մերկ խոսելու համար ալ ցրտահարութենե վախնալով՝ կուգամ այն եզրակացության, իմ շա՛տ սիրելի Սեպուհ իշխանս, որ ո՛չ լեզվի, ո՛չ ստամոքսի համար շատ ձեռնտու մարզանք մը չէ ոչխարներուն միսը պաշտպանելը։ (**Ճառտասանորեն**) Ես ըսի՛։ Հիմա կմնա, որ ինծի թույլ տաս երթամ իմ սիրելի քեռաղջկանս սիրտը կարկտելու, որովհետև շատ դյուրաբեկ սիրտ մը ունի. դպչելուդ պես կպատռի։ (**Դուրս աջեն**):

## 6

ՍԵՊՈՒՀ— Կտեսնե՞ս, Աննա՛ իշխանուհի, նորեն մեզի առանձին ձգեցին։

ԱՆՆԱ— Դժգո՞հ ես։

ՍԵՊՈՒՀ— Իմ երջանկությունս է ատիկա։ Կտեսնես, որ կուգամ շարունակ, թեև շարունակ ալ կվճռեմ, որ այլևս ուշ-ուշ գամ։ Դուն ես իմ ուժերուս հենարանը ու իմ կյանքիս նեցուկը։ Հոգիս գալարուկի թուփին պես փաթթված է քեզի, և երբ դուն չկաս, ես կկախվիմ գետին։ Սակայն երբ կուգամ՝ միշտ վախ ունիմ, որ անախորժ դառնամ քեզի։

ԱՆՆԱ— Ինչո՞ւ։

ՍԵՊՈՒՀ— Կրնան վրադ խոսիլ։ Պիտի բամբասեն։

ԱՆՆԱ— Թո՛ղ, բարեկա՛մս, ի՞նչ արժեք ունի մեզի համար ուրիշներուն բամբասանքը. թող մտածեն ու թող ըսեն՝ ինչ որ կուզեն։ Բա՛վ է, որ մարդ բամբասանքի նյութ չտա իր սեփական հոգիին։

ՍԵՊՈՒՀ— Ա՜խ, ի՜նչ բացառիկ էակ ես դուն։ Եվ ինչքա՜ն տարբեր, ինչքան բա՜րձր մեր շրջապատեն։

ԱՆՆԱ— Ձգե՛։ Եվ օգտվինք մեզի թողնված այս առանձնութենեն։ Նոր ի՞նչ կա։ Գործը կքալե՞։

ՍԵՊՈՒՀ— Այո՛։ Խոսեր եմ արդեն մեկ-երկուքի հետ. նոր մանրամասնությունները կլրացնեն պատկերը։ Մեր ուժերը, պաշարը, բերդերուն վիճակը, արշավանքի ծրագիրը, բոլորը, ինչի մասին որ խոսեր ենք, գրեթե բոլորը արդեն ունիմ ձեռքի տակ։ Ծերունի սպա մը ունինք, հիմա անոր չորսդին կդառնամ, մորս կողմեն ազգական է, քիչիկ-քիչիկ կխոսեցնեմ. պետք է տեղեկանամ ամե՛ն, ամեն բան։

ԱՆՆԱ— Իսկ մա՞րդ. մարդ ճարե՞ր ես Թորոսին ուղարկելու։

ՍԵՊՈՒՀ— Մարդն ալ եմ ճարեր։

ԱՆՆԱ— Երևի այն կարը, որ կըսեիր՝ ժամանակ մը զինվոր է եղած. ի՞նչ էր անունը. վստահելի՞ մարդ է։

ՍԵՊՈՒՀ— Անունը Ուսեփ, Օրզուն գյուղեն, կտրիճ մարդ է և կապված է ինծի, իրեն շատ եմ օգներ։ Եղած է Անարզաբա, Սիս։ Սիսի մոտերը քույր մը ունի հարս տված. հիմա թող երթա քրոջը տեսության։

ԱՆՆԱ— Բայց գիտե՞ս, իշխա՛ն Սեպուհ, պետք է ըլլաս շատ զգույշ. հանկարծ կնկատեն։

ՍԵՊՈՒՀ— Ի՞նչը պիտի նկատեն։ Որո՞ւն մտքեն կրնա անցնիլ, որ ես ալ հիմա, հորս պես, գիշեր-ցորեկ Թորոսի մասին կմտածեմ. որո՞ւն մտքեն կրնա անցնիլ, որ Օրզուն գյուղի կաղ Ուսեփի ձեռքով նամակ եմ ղրկելու Թորոս իշխանին։ Ե՞ս ով, Ուսե՞փը ով, Թորո՞սը ով։ Դուն հանգիստ եղիր, հայրս ոչինչ գիտնալ չի կրնար, մինչև ժամանակը հասնի։ Ա՜յ, ուրիշ բան է, երբ Թորոսը ամեն ինչի տեղյակ դառնա. հենց որ Թորոսեն պատասխան ստանամ, կերթամ շիտակ հորս մոտ ու կպատմեմ եղելությունը։

ԱՆՆԱ— Իսկ հետևա՞նքը. ինչպե՞ս կմտածես։

ՍԵՊՈՒՀ— Երբ հայրս տեսնի, որ հակառակորդը ամեն բան գիտե ու պատրաստված է, այս տարի արշավանքը կիյնա ջուրը. իսկ ասկե ետքն ալ կդառնա շատ դժվար։ Ես հայրս կճանչնամ, պիտի աշխատի ցույց տալու, որ սուտ է բոլորը, հանցանքը պիտի նետե իմ հիմարությանս ու անհասկացողությանս վրա. մեղավոր պիտի հանե ինծի Թորոսի առաջ։ Գուցե նույնիսկ իսկական դաշինք մը հաստատվի ավելի ամուր ու ավելի անկեղծ հիմքերու վրա, քանի որ այլևս իրար խաբել չեն կրնար։

ԱՆՆԱ— Եվ դա կդառնա կյանքիդ ամենեն մեծ գործը։ Սեպո՛ւհ իշխան, պարտականությանդ ամենեն համարձակ իրականացումը, և սուրբ կոչումիդ ամենեն իմաստուն գործադրումը, եթե հաջողի՜ս...

ՍԵՊՈՒՀ— Պե՛տք է հաջողիմ, Աննա՛ իշխանուհի, պե՛տք է որ հաջողիմ։

ԱՆՆԱ— Բայց գիտե՞ս, որ հայրդ փրփրի պիտի։ Բնավ մտածե՞ր ես։ Հանկարծակիի պիտի գա։

ՍԵՊՈՒՀ— (**Մտածկոտ**) Գիտե՛մ. մտածե՛ր եմ...

ԱՆՆԱ— Գուցե կմեղքնա՜ս։ Չէ՞ որ հայրդ է վերջապես, ինչքան ալ որ սեր չունենա քեզի համար։ Եվ դուն այսքա՜ն, այսքան տարիներ վարժվեր ես հարգելու։

ՍԵՊՈՒՀ— Իրա՛վ է, որ կմտածեմ, կարծես սիրտս կցավի, երբե՛մն։ Կչանամ չի մտածեմ։

ԱՆՆԱ— (Խիստ ու կրճոտ) Բայց քու հայրդ այդ տեսակ բաներ չմտածեց. ո՛չ ալ մեղքցավ, երբ իր ձեռքովը, իր իսկ ձեռքովը թույնի բաժակը կերկարեր մորդ։

ՍԵՊՈՒՀ— (Ապշած) Թո՞ւյն։ Մո՞րս։

ԱՆՆԱ— Ինչպե՞ս։ Մի՞թե դեռ չգիտեիր։ Վա՜յ, ինչքան կցավիմ, որ հայտնեցի քեզի, քանի որ դեռ չգիտեիր։ Բայց ինչպե՞ս թե չգիտեիր։ Չէ՞ որ դուն ինքդ ես պատմեր ինծի, որ այս հույն կինը ահագին գավառ մըն է բերեր իր հետը. դուն չէի՞ր ըսողը, որ եթե ամուսնությունը քիչ մըն ալ ուշանար, Իկոնիայի սուլթանը խլեր պիտի այդ հողերը. դուն չէի՞ր ըսողը, որ մորդ մահեն չգիտեմ քանի ամիս ետքը արագ կատարվեցավ հորդ երկրորդ ամուսնությունը, որ տարօրինակ հիվանդություն մըն էր մորդ հիվանդությունը...

ՍԵՊՈՒՀ— Այո՛. այդ բոլորը այո՛, բայց մնացա՞ծը։

ԱՆՆԱ— Մնացածը... ես մտածեցի, որ լեզուդ վրա չերթար ինծի քսելու. չէ՞ որ մյուսները կխոսին, չորս կողմս ամենքը կխոսին։ Եվ մի՞թե ինքնին պարզ չէ։ Մայրդ պետք է մեռներ, որ այդ հողերը չկորչեին, որ այդ հողերն ալ գային միանալու հորդ կալվածներուն, վերջապես ձեր կալվածներուն։

ՍԵՊՈՒՀ— (Ներքին հուզումը զսպած, բայց արցունքները կթափին) Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, մի՞թե իրավ է, մի՞թե մինչև հոտ... Միշտ է, որ հայրս շատ կանգ առնել չգիտե դժվարություններու առջև, և ամեն զենք ալ զենք է եղեր միշտ իրեն համար, բայց... բայց այս մեկը արդեն... Ա՜, ո՛չ, այս մեկը երբե՛ք մտքես չէր անցած։

ԱՆՆԱ— Բայց դուն կըսեիր ինծի անցած օր, որ երբ իր առջևը մորդ անունը կուտաս ու կպաշտպանես, հայրդ կկատղի։

ՍԵՊՈՒՀ— (Մտածկոտ) Իրա՛վ է... (Հանկարծ դեմքը ծածկելով) Սարսափելի՛ է... սարսափելի՛ է...

ԱՆՆԱ— Դե՜, լա՛վ. լա՛վ. այդքան ալ հուզվելու կարիք չկա։ Իր գազանությամբ ու անառակությա՞մբն է թունավորեր մորդ ամբողջ կյանքը, թե՞ երկու կաթիլ թույն է խառներ մորդ խմիչքին մեջը՝ մեծ տարբերություն մը չկա։ Թո՛ղ, հանգստացի՛ր. կտեսնե՛մ, որ դեռ երեխա ես։ Եթե հաշտվեր ես ու մոռցեր մորդ ամբողջ կյանքի ընթացքին իր խմած թույնն ու լեղին, ի՞նչ բան է, որ այդ վերջին երկու կաթիլը բա-



ժակ մը օշարակի մեջ. մոռցի՛ր ատ ալ։ Վերջ տուր այդ անմիտ լացին։

ՍԵՊՈՒՀ— (Ցնկվելով ու սրբելով աչքերը) Ներե՛ ինծի, իշխանուհի՛ Աննա։ Այո՛, անմիտ լաց է. ներող եղի՛ր. բայց շատ էր անսպասելի այդ... այդ նորությունը։ Նորություն. հա՛, ինծի նման տխմարի համար։ Ճի՛շտ է։ Ատոր համար է, ուրեմն, որ մորս անունը հանգիստ տալ չի կրնար։ Է՜, լավ է հեռանամ. թող որ վարժվիմ այդ նոր մտքին, թո՛ղ որ այդ թույնն ալ մարսեմ։

ԱՆՆԱ— Կցավի՛մ, Սեպո՛ւհ իշխան, որ պատճառ տվի։ Ես եմ բոլորի հանցավորը, թեև անգիտակ։

ՍԵՊՈՒՀ— Ո՛չ, Աննա՛ իշխանուհի։ Ես շնորհակալ եմ քեզմե ամեն բանի համար. ես երախտապարտ եմ քեզի ամեն բանի համար։ Գոնե հիմա գիտեմ, գիտեմ ամեն ինչ. լռի՛վ։ (Դուրս ճակտեն):

## 7

Հազիվ ելած է Սեպուհ իշխանը, որ աչեն կմտնեն պառավը

ԱՆՆԱ— Ա՜խ, դուն հո՞դ էիր։

ՊԱՌԱՎԸ— Քու պատվե՛րդ, իշխանուհի։ Հեռուեն կհետևեի, որ ձեզի լսող չըլլա։

ԱՆՆԱ— Հա՛, հետևե՛. աղե՛կ է։ Անոնք պիտի լսեն միայն ա՛ն, ինչ որ ես ուզեմ, որ լսեն. անոնք պիտի տեսնեն միայն ա՛ն, ինչ որ ես ուզեմ, որ տեսնեն. ի՛մ կամքովս, ի՛մ չափովս։ (Հանկարծ) Տեսա՞ր, Սաբե՛թ, լացա՜վ։ Է՜, ի՞նչ արժեք ունի անոր լացը. իմ փոքրիկներս ալ շատ ճվացին, ո՞վ ականջ կախեց։ Ա՜յ, ուրիշ բան է բոլորովին, երբ արցունք քամվին անոր քարե հորը ապառաժ աչքերեն, ա՛յ, ատիկա ուրիշ բան է։

ՊԱՌԱՎԸ— Քալե՛, քալե՛ ներս։ Սաստիկ հոգնած դեմք ունիս։ Քիչ մը պառկե, որ հանգչիս։

ԱՆՆԱ— Ի՞նչ պառկելու ժամանակ է հիմա, երբ աշխատանքը կեփի, երբ գլուխս մեջ մտքերը կեռան. հիմա մտածելու ժամանակ է, հնարելու, թափանցելու խո՛րքը, խո՛րքը, տակե՛րը, քովե՛րը, մարդուս հոգիին բոլոր ծուռ ու շիտակ ճամփաները։ Այդ աշխատանքն է, պառա՛վ, որ կապրեցնե հիմա ինծի, կսնուցե ինծի, կլեցնե կյանքս, օրերս ու ժամանակը։ Ինչքա՞ն ժամանակ է, որ հոս ենք, Սաբե՛թ, այս նզոված ամրոցը։ Չորս ամիս եղա՛վ. թե՞ հինգ, է՜, միևնույն է։ Ինծի համար այդ բոլորը օր մըն է միայն, մեկ հատիկ օր մը, երկար բարակ ու, ժամանց

պես, ձի՜գ օր մը։ Իրարու հյուսված սև ու սպիտակ նարոտ մը, որ անեծքի մը պես փաթթեցին գլխուս շուրջը զավակներուս հարսնիքին օրը, ամուսնուս մահվան հարսնիքին օրը, իմ սև հարսնիքիս օրը։ Այդ նարոտը ես փրցնեմ պիտի, երբ գա վերջապես այս անծայր օրվան երջանիկ իրիկունը, երբ ես ալ պիտի կարողանամ լալ իմ զավակներուս վրա, իմ ամուսնուս վրա, ի՛մ վրաս, ի՛մ վրաս, որ դարձեր եմ այսպես անճանաչելի, որ դարձեր եմ դահիճ, որ դարձեր եմ սուտի ու խաբեության անսիրտ մեքենա մը, որ դարձեր եմ մեջը փորած գործիք մը այրող վրեժի։ Ա՜խ, ե՞րբ պիտի վազե այս ցավը իմ աչքերուս աղբյուրեն, ե՞րբ պիտի լվացվի հոգիս այս հուրեն ու այս մուրեն, ե՞րբ պիտի հալի ու դուրս հոսի այս վրեժը, որ, ա՜յ, կարծես, արճիճի ահագին գունդի մը նման, քարացեր, ծանրացեր է կրծքիս վրա ու կճնշե, կխեղդե ինծի։ Լացա՛վ. անիկա լացա՛վ։ Ա՜, ինչպե՞ս կարելի է, մորը թույն են տվեր։

ՊԱՌԱՎԸ— Որո՞ւն մորը։

ԱՆՆԱ— Որո՞ւն պիտի ըլլա։ Ո՛չ մեկուն։ Դուն ինծի ան ըսե, հո՞ս էիր, լսեցի՞ր ոչխարներուն ու գայլերուն հեքիաթը։ Իսկ ես կըսեմ քեզի՛. չեն ապրիր, չեն կրնար ապրիլ, չի պիտի ապրին ոչխարն ու գայլը նույն վանդակին մեջ։ Ո՛չ։ (Կմնա մտամոլոր)։

ՊԱՌԱՎԸ— (Կամաց մը թևեն քաշելով) Քալե՛ ներս, հոս անհարմար է. ոտքի ձայն կուգա. մարդիկ ներս կուգան։

ԱՆՆԱ— Մարդի՞կ։ Ի՞նչ բան են որ մարդիկ։ Ով քեզի ո՞վ ըսավ, որ ներս կուգան մարդիկ։ Ո՛չ. եկողները մարդիկ չե՛ն. կա՛մ ոչխարներ են, կա՛մ գայլեր։ Կուզես՝ մնացի՛ր ու տե՛ս։ (Երթալով) Մարդի՞կ. ո՞վ ըսավ. մարդի՛կ...

Դուրս կելլե ձախեն, պառավն ալ ետևեն։

8

Աջեն դուրս կվազե Իրինա և շտապ կերթա կկենա ճակտի դռան դեմ սպասողական. ուրկե ֆիշ մը ետքը դանդաղ կմտնե իշխան Վասիլ։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Մինա՞կ ես։ Ի՞նչ կընես հոս։

ԻՐԻՆԱ— (Խորին բարևով ու ֆծնոտ ժպիտով) Տեսա, որ բակեն կուգար Մեծ իշխանը մինակ. փութացի իր դեմը հարգանքս մատուցանելու։

ԻՇԽԱՆԸ— Ըսելի՞քդ ինչ է, ըսե՛ նայիմ։

ԻՐԻՆԱ— Մեծ իշխանը շատ բարի է. մասնավոր ըսելիք մի չունիմ, միայն անհանգիստ է հոգիս։



ԻՇԽԱՆԸ— Գիտեմ, որ Իրինան շատ նուրբ ու փափուկ հոգի մը ունի, այդ նուրբ հոգին փաթթող իր նուրբ ու փափուկ մորթին նման։

ԻՐԻՆԱ— (Ամաչած կտրտուքով) Լավ չէ՛, որ Մեծ իշխանը կհիշեցնե. ըսենք թե մարմինս տկար է եղած Մեծ իշխանի տաք համակրանքին հանդեպ։ Լավ չէ՛։

ԻՇԽԱՆԸ— Իսկ հիմա ի՞նչ պիտի ըսեիր։

ԻՐԻՆԱ— Վերջերս քու մեծ որդիդ հաճախ կուգա կանանց բաժինը, քանի Աննա իշխանուհին եկած է. անշուշտ կրնա պատահիլ, որ պարզ զուգադիպություն մըն է ատիկա. վերջապես ինծի չվերաբերիր։ Ես միայն կուզեի գիտնամ՝ Սեպուհ իշխանը քու կամքո՞վն է, որ կուգա, թե՞ իր գալը հակառակ է քու կամքին։ Եթե քու կամքովդ է այդ բոլորը՝ իմ սկզբունքս եղած է միշտ չխառնվիլ էրիկ մարդոց գործերուն։ Իսկ եթե քու կամքովդ չէ, այն ժամանակ... այն ժամանակ չգիտեմ ճշմարիտ ինչպես պետք է վարվիմ։ Օրինակ, իմ Մեծ իշխանուհիիս կարծիքը այն է, որ ամեն կերպով պետք է նպաստենք այդ երկուքի իրար գալուն. և իմ Մեծ իշխանուհիս անշուշտ ունի իր խորին ու ծանրակշիռ պատճառները։ Այնպես որ, ինչպես ըսի, հոգիս հանգիստ չէ։

ԻՇԽԱՆԸ— (Կատակով) Հիմա որ այդ բոլորը խոստովանեցար ինծի, կհուսամ, որ ասկե ետքը ավելի հանգիստ կըլլա հոգիդ։ Գնա՛ ու ինծի ղրկե իշխանուհի Աննան։

ԻՐԻՆԱ— Բայց... բայց իհարկե չես տար իմ անունս։

ԻՇԽԱՆԸ— Հայդե՜. քեզի կըսեմ՝ հոս ղրկե իշխանուհի Աննան։

ԻՐԻՆԱ— Ինչպես որ Մեծ իշխանը հրամայե (Դուրս)։

9

Իշխանը մտածկոտ կերթևեկե, մինչև Աննայի երևալը։

ԱՆՆԱ— Իշխանը կանչե՞ր է ինծի։

ԻՇԽԱՆԸ —Քանի մը անգամ ըսեր ես դուն իծի խոսքի մեջ, թե տղաս՝ Սեպուհը, շուտ-շուտ կուգա հոս։

ԱՆՆԱ— Այո՛, կպատահի, որ կուգա կանանց բաժինը։

ԻՇԽԱՆԸ— Ես կսիրե խոսիլ քեզի հետ։

ԱՆՆԱ— Ուրեմն պետք է ըսած ըլլամ նաև, որ ատիկա մեծ պատիվ մըն է ինծի. իշխան Վասիլի անդրանիկ զավակն է։

ԻՇԽԱՆԸ— Եվ միշտ կխոսիք տաքեն ու ցուրտե՞ն, ամոթ չըլլա հարցնելը։

ԱՆՆԱ— Միթե մեր մյուս տիկինները այդ փափուկ կետը արդեն չե՞ն բացատրած քեզի։ Գոնե ինծի լիովին բացատրած են... իրենց նայվածքովը, ժպիտներովը։

ԻՇԽԱՆԸ— Թե՝ ի՞նչ։

ԱՆՆԱ— Թե ես ու տղադ սեր ենք տված իրարու։

ԻՇԽԱՆԸ— Թո՛ղ անոնք։ Ոչ դո՛ւն այդ տեսակի կին ես, ո՛չ ալ այդ խեղճ ու ողորմելի հիմար տղան է, որ պիտի գրավեր քու ուշքդ։ Ճիշտ ատոր համար է արդեն, որ վերջերս ակամա կմտածեմ ու կզարմանամ՝ ի՞նչ պիտի ունենա այդ տղան քեզի հետ խոսելու այդպես հաճախ. ան որ միշտ քաշված է եղեր ինքն իր մեջ ու կտրված ամենքեն։

ԱՆՆԱ— Կարծեմ սխալ հասկցար։ Դոն կխոսիս Սեպուհ իշխանի՞ մասին։ Ա՞ն է այդպես աշխարհքե կտրված, հիմար ու ողորմելի։

ԻՇԽԱՆԸ— Հապա ո՞վ։

ԱՆՆԱ— Ըսել է՝ բերանս կփորձես։ Դուն անշուշտ ինծմե աղեկ կըճանչնաս տղուդ ուժեղ հատկությունները։

ԻՇԽԱՆԸ— Այդ ի՞նչ նշանավոր բաներ է ըսեր քեզի, որ այդպես ազդեր է վրադ։ Պատմե՛, մենք ալ իմանանք։

ԱՆՆԱ— Կգերադասեի՝ չպատմեմ։ Տղադ քեզի չի սիրեր։

ԻՇԽԱՆԸ— Հա՛, այդ կարգի քնքշությունները փոխադարձ կըլլան միշտ։ Ի՞նչ է խոսեր իմ մասին, օրինակի համար։

ԱՆՆԱ— Ի՞նչ կխոսի վիրավորված ու խայթված մարդը։ Անոր պետք է լսող ականջ մը, որ գանգատի ու տրտնջա։ Ինծի ալ պետք է խոսող լեզու մը։

ԻՇԽԱՆԸ— Քո՞ւ ինչուդ է պետք այդ խոսող լեզուն։

ԱՆՆԱ— Ա՜, պետք է... Պե՛տք է։ (Հանկարծ) Ի՞նչ ես ըրեր իրեն, որ այդպես գրգռեր ես քեզի դեմ։ Ներե՛, բայց ինծի կթվի, որ հոդ շատ մեծ սխալ ես գործած դուն։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ է ըսեր քեզի։

ԱՆՆԱ— Իզուր ես այդպես զայրացուցեր ու կատղեցուցեր քեզի դեմ. հետևանքը լավ չէ։

ԻՇԽԱՆԸ— Դու՛ն պատմե՛ ինծի, ինչ որ ըսեր է քեզի։

ԱՆՆԱ— Ի՞նչը պատմեմ։ Դյուրի՞ն է։ Օրինակ, որ... Բայց չնեղանաս. որ... որ դուն գող մըն ես, ավազակ մը, ամենուն ձեռքեն, ամենուն բերնեն ամեն բան խլող անկուշտ... գայլ մը, անգղ մը, ես ի՞նչ գիտնամ. որ այս բերդիդ անունը ատոր համար ալ դրեր են անգղի բույն, և որ քեզի դուրսը ամենքը կկանչեն գող Վասիլ։ Ետքը թե... է՜, կարծեմ լավ է ընդհատենք։

ԻՇԽԱՆԸ— (խիստ) Շարունակե՛։



ԱՆՆԱ— Թե դու մարդասպան մըն ես. աջ ու ձախ մարդիկ մորթել կուտաս. նույնիսկ սպաննել ես տվեր քու աներձագդ, Մեծ իշխանուհիին եղբայրը, որ հողերը անցնին քու կնոջդ վրա։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ։ Այդ հույնը սպաննված է, ճիշտ է, բայց ե՞րբ, քանի՞ տարի է արդեն։ Դեռ կենդանի էր առաջին կինս։

ԱՆՆԱ— Հա՛, առաջին կինդ. նաև առաջին կինդ։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ... առաջին կինս։

ԱՆՆԱ— Որ դուն թունավորեր ես քու առաջին կինդ։

ԻՇԽԱՆԸ— Ե՞ս... ի՞նչ եմ ըրեր։

ԱՆՆԱ— Թույն ես խմցուցեր քու տղուդ մորը, որ ամուսնանաս այս հույնին հետ ու տիրանաս հողերուն։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նքն է ըսեր. ի՞նքն է ըսեր քեզի ատիկա։

ԱՆՆԱ— Սուտ է, չէ՞, սո՛ւտ է։ Ես ալ գիտեմ, որ սուտ է։ Եթե սուտ է, հապա ինչո՞ւ համար են այդ բոլոր սուտերը։ Ահա՜ ինչ որ հարցուցեր եմ՝ ինքս ինծի։ Հիմա կհասկնա՞ս, թե ինչու համար պետք էր ինծի երկար-երկար հետը խոսիլը քիթ-քիթի։ Թողեր եմ, որ հայհոյե, սպառնա ու սիրտը թափ տա. նույնիսկ միացեր եմ իր ըսածին, հավանություն ու իրավունք եմ տվեր իրեն. չէ՞ որ ես ալ զրկված մըն եմ քու ձեռքովդ։ Հիմա, հուսամ, կհասկնաս, թե ուրտեղեն կուգա իր վստահությունը դեպի ինծի։ Մենք միասին ատեր ու նզովեր ենք քեզի, Աստծու պատիժն ենք կանչեր քու գլխուդ. և այդ միջոցին ես կամաց-կամաց ջանացեր եմ ըմբռնեմ, թե ինչ է նստած տղուդ գլխուն ետևները, և դեպի ուր կքշե ան իր նժույգը։

ԻՇԽԱՆԸ— Եվ ո՞ւր կքշե ան իր նժույգը։

ԱՆՆԱ— Ինչո՞ւ կհարցնես ինծի բաներ, որ դուն ինծմե աղեկ գիտես։ Ինչո՞ւ արձակեց ան Եղեսիայի կոմսի քեռորդին առանց փրկանքի։

ԻՇԽԱՆԸ— (Լույս առած) Կկարծե՞ս...

ԱՆՆԱ— Եղեսիայի կոմսը շատ մոտիկ է կըսեն Թորոս իշխանին։ Ուրեմն և մոտիկ է քու տղուդ։ Այդպես չէ՞։

ԻՇԽԱՆԸ— Շա՞տ ժամանակ է, որ այդ բաները դուն գիտես։

ԱՆՆԱ— Ինչպես կտեսնես՝ բավական ատեն է։

ԻՇԽԱՆԸ— Ինծի ինչո՞ւ չըսիր մինչև հիմա։

ԱՆՆԱ— Ես ըսեր եմ քեզի ի՛նչ որ կրնայի և ի՛նչ ձևով որ կրնայի։

ԻՇԽԱՆԸ— Հա՜, պատշգամեն լսա՛ծդ. կհասկնա՛մ։ Հերյուրված պատմություն մըն էր անիկա. ես միշտ ալ այդպես եմ մտածած։ Ուրեմն այն բոլոր ըսածներդ Թորոսի մասին առեր էիր տղուս բերնեն։

ԱՆՆԱ —Ավելի ճիշտ հետեցուցեր ու կարկտեր եմ տղուդ խառնաշփոթ սպառնալիքներեն։ Եվ այն օրը, որ որոշ կերպով հասկցուց ինծի,

թե քեզմե հանելիք իր վրեժը կուզե Թորոս իշխանի ձեռքով, անմիջապես եկա հայտնեցի քեզի։ Ինչպե՞ս տայի զավկիդ անունը. վախցա, որ փրփրիս ու չհավտաս խոսքիս. փաստ պիտի ուզեիր. ի՞նչ տայի։ Ես այն ժամանակը իհարկե չգիտեի, որ տղուդ վարմունքը և տղուդ այդ կապերը արդեն հայտնի են քեզի և որ դուն կհետևեիր քու տղուդ։ Եվ ատոր համար ալ սաստիկ վախցա։

ԻՇԽԱՆԸ— Իսկ հիմա ինչե՞ն գիտես, որ այդ բոլորը հայտնի է ինծի։

ԱՆՆԱ— Ինչպե՞ս թե։ Ա՜յ, քու խոսվածքդ, քու շարժումներդ, քու վարմունքդ։ Դուն ինծի ապուշի տե՞ղ ես դրեր, թե՞ կկարծես, որ ես քեզի ապուշի տեղ կդնեմ։ Եվ վերջապես տղադ ինքն է ըսեր, որ իր ետևեն մարդ կպտտցնես։ Ան գիտե՛, ան ամեն բան գիտե։ Ահա՜ հիմա ալ եկեր ես ու ինծի կհարցուփորձես. ինչո՞ւ համար, այնպե՞ս, ժամանցի՞։ Եվ հարցնելու ձևեդ կտեսնեմ արդեն, որ իմ ըսածներուս մեջ նորություն չկա քեզի համար։ Վասի՛լ իշխան, սիրտդ թող չնեղանա, որ երեսիդ կըսեմ, բայց շատ քսու ու զզվելի տղա ունիս. և ի՜նչ նենգավոր. այնպես միամիտ ձևանալ գիտե։ Քանի անգամ նկատեր եմ, ահա՜, սապես նստած է դեմս, վայրի կատուի մը պես կծկտած, կատաղի աչքերով, կըսես հիմա, հա՜, հա՛, ճանկերը կոկորդդ կխրե. մեյ մըն ալ հանկարծ տեսար դեմքը մեղմացավ, անուշցավ, հեզ ու խոնարհ, կարծես, ինչպե՞ս ըսեմ... սուրբ մը, ճգնավոր մը։ Այդ տղան ընդունակ է ամե՛ն տեսակ անսանձ ու հախուռն քայլի։ Բայց դուն ինծի չե՛ս լսեր։ Դուն ուրիշ բան կմտածես։

ԻՇԽԱՆԸ— Ո՛չ։ Ես կլսեմ քեզի։ Ու կլսեմ ամեն մեկ բառդ։

ԱՆՆԱ— Հիմա որ ըսի քեզի բոլոր գիտցածս, և հիմա որ, փա՜ռք Աստծու, հաստատ գիտեմ, որ հայտնի է քեզի ամեն բան ու կհետևիս իրեն, հիմա պիտի խնդրեմ քեզմե, իշխա՛ն, որևէ պատրվակով մը կըտրես տղուդ ոտքը կանանոցեն։ Ալ տանիլ չեմ կրնար. ալ զզված եմ։

ԻՇԽԱՆ— Ո՛չ։ Պետք է շարունակես, ինչպես որ սկսեր ես։ Չես փոխելու ոչինչ։ Ընդհակառա՛կը։ Դուն խելացի կին ես և կհասկնաս, թե ինչ կսպասեմ քեզմե։

ԱՆՆԱ— Ո՛չ, իշխա՛ն. խնդրե՛մ, հերի՛ք է. չե՛մ ուզեր։

ԻՇԽԱՆ— Մինչև հիմա ինչ որ ըրեր ես, ըրեր ես քեզի համար. ասկե ետքը ինչ որ ընես, պիտի ընես ինծի համար։ Կհուսամ կհասկնաս ըսածս։

ԱՆՆԱ— Կհասկնա՛մ, իշխա՛ն։ Կտեսնեմ, որ բախտը օր օրի կկապե մեզի իրար։



# ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՔԵՍՈՒՆԻ ՏԻՐՈՋ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ.

Ճակատը խորանաձև հնգանկյունի պատ, մեջտեղի հատվածին վրա նեղ ու երկար կամարակապ լուսամուտ մը, որ գրեթե անմիջապես հատակեն կսկսի. լուսամուտը ծածկված է երկու երկաթե փեղկով:

Ձախ կողմը թեք դիրքով սեղան մը. ետին բազկաթոռ մը, վրան մանր-մունր իրեր, զենք ու մագաղաթներ: Սեղանին մոտիկ բարձր ճյուղավոր մոմկալ, որուն վրա երկու մոմ կվառի:

Միակ մուտքը աջեն է, սեղանին դեմը:

### 1

Պարապ սեղանին դիմացը գլուխը կախ կեցած է Կաղ Ուսեփը. աթոռի մը վրա նստած է Շահին մտածկոտ: Սկիզբը երկուքն ալ լուռ են:

ՈՒՍԵՓ— (Հուսահատ գլուխը շարժելով) Չէ՛, աս պատմության տակեն աղեկ բան չէ դուրս գալու։ (Շահինին) Հիմա ի՞նչ կըսես, իշխանը ինծի ի՞նչ է ընելու։

ՇԱՀԻՆ— Ա՜յ, քիչիկ մըն ալ համբերե՝ կտեսնես։ Պիտի վերադառնա, ճակատդ պաչ ընե ու պիտի ըսե՝ ապրի՛ս։

ՈՒՍԵՓ— Գլխուս փորձանք է գալու, գիտե՛մ։

ՇԱՀԻՆ— Քիչիկ մը ուշ ես մնացեր։ Ատիկա մտածելու էիր առաջուց։

ՈՒՍԵՓ— Ա՜խր, ես ի՞նչ հանցանք ունիմ, է՜։ Հրամայողը Սեպուհ իշխանն էր. ըսավ՝ պիտի տանիս. ի՞նչ պիտի ըսեի։ Ա՜յ, թող գա Սեպուհ իշխանը, հարցուցե՛ք։ Ես այնպես գիտեի Մեծ իշխանի կամքով է։

ՇԱՀԻՆ— Եթե այդպես գիտեիր՝ ինչո՞ւ իսկույն չխոստովանեցար. ինչո՞ւ համար էր այն սուտ ու փուտ պատմությունները, ինչո՞ւ էիր նամակները պինդ-պինդ թաքցուցեր։

ՈՒՍԵՓ— Ա՜խր, իշխան Սեպուհը պատվիրեր էր ինծի, որ ոչինչ չըսեմ ոչ ոքի, որ շատ կարևոր բան է, որ ինքս իմ ձեռքովս նամակները տամ Թորոս իշխանին, ուրիշ ո՛չ մեկուն. ա՜խր, ո՞նց տայի։

ՇԱՀԻՆ— Լսեցի՛նք, այդ բոլորը լսեցի՛նք։

ՈՒՍԵՓ— Ես ատոր մեջ ի՞նչ հանցանք ունիմ։ Բայց կտեսնեմ՝ իշխանը շա՛տ է զայրացած։ Աստվա՛ծ, ի՞նչ կար այն նամակներուն մեջ։ Ի՞նչ էր գրված, որ այդպես մթնեց, մռայլեց, հենց տեսավ թե չէ։

ՇԱՀԻՆ— Այդ նամակներուն մեջի՞նը կուզես։ Ա՜յ, ըսեմ քեզի։ Գըր-

ված է. վահան մի՛ չիներ քու հաստ կաշին ուրիշին, որ ի հաշիվ ուրիշին չի ծակծկվի քու կաշին։

ՈՒՍԵՓ— Հա՛, վախնամ՝ թակոց տան ինծի։

ՇԱՀԻՆ— Փա՛ռք տուր Մարութա Սուրբ խաչին, եթե թակոցով ազատիս։

ՈՒՍԵՓ— Վա՜հ, տնաշե՛ն, հո կախելու չե՞ն ինծի։

ՇԱՀԻՆ— Ա՜յ, հիմա կտեսնես։

## 2

Կմտնե Իշխանը ձեռքը թղթեր:

ԻՇԽԱՆԸ— Սա դեռ այստե՞ղ է։

ՇԱՀԻՆ— Պահեցի՛։ Ըսի՝ գուցե նոր հարցեր կունենաս տալու՝ բոլորը աչքե անցնելեդ ետքը։

ԻՇԽԱՆԸ— Հեռացո՛ւր. կհոկե՛ս։

ՇԱՀԻՆ— (Դուրսեն) Հուսի՛կ։ (Դռան մեջ երևցող զինված մարդուն) Կտանիս Նորեն քու մոտդ։ Մի՛ս-մինակ։ Հետը ո՛չ ոք չէ խոսելու։ Ո՛չ ոքի հետ չէ տեսնվելու։ Ես հիմա կուգամ։

ՈՒՍԵՓ— (Տեղեն շարժվելեն առաջ, վարանքով) Ա՜խր, ես ի՞նչ հանցանք... (Բայց կնայի Իշխանի դեմքին, կլռե, գլուխը կկախե ու կհետևի Հուսիկին):

## 3

ԻՇԽԱՆԸ— Ալ պետք չկա ոչ մեկ հարցի։ Հոս կա ամե՛ն ինչ. ամե՛ն ինչ. հոս կա՛, կա՛։ Եվ ալ կասկած չկա՛։ (Հանկարծ) Ամենեն առաջ՝ այս բոլոր կատարվածի մասին պետք չէ՛ որ խոսվի. պետք չէ տարածայնըվի ո՛չ մարդուն բռնվիլը, ո՛չ այս նամակներուն գոյությունը և ո՛չ մանավանդ տղուս անունը. միայն դուն ու ե՛ս։ Այդ կաղ թշվառականը կխցես բերդերես մեկը հարմար անկյուն մը, և այնպե՛ս, որ ո՛չ ոք գիտնա, ո՛չ իր ըլլալը, ո՛չ իր անունը։ Կմնա տղաս. անոր հետ կխոսիմ ես ինքս։ Կխոսի՛մ։ Հիմա արդեն եկած է ժամանակը խոսելու։



## 4

Կմտնե իշխանուհի Աննա և ճարգական ու լուռ կերթա շիտակ դեպի Իշխանը։ Իշխանը ոտքի կելլե ու քայլ մը կընե դեպի Նկողը: Շահին լուռ կելլե դուրս:

ԻՇԽԱՆԸ— Դուն տվեր ես ինծի Ուսեփի մը անունը, Օրզուն գյուղեն։

ԱՆՆԱ— Ե՞ս։

ԻՇԽԱՆԸ— Որուն հետ կըսեիր տղաս կապեր ունի։ Դո՛ւն ես տվեր ինծի այդ անունը։

ԱՆՆԱ— Հա՜, կարծե՛մ։ Ինչ էր։ Ե՞տքը։

ԻՇԽԱՆԸ— Գյուղացին միշտ հսկողության տակ էր։ Վերջին օրերը նկատեր էին, որ պատրաստության վրա է։ Նախորդ գիշերը ծածուկ մեկներ էր իր գյուղեն։ Թողեր են, որ հեռանա, հետևեր են իրեն բավական տեղ, խոշակի կիրճերուն մեջ կտրեր են առջևը. ու բերին հոս. ձիու թամբին մեջեն հանեցինք այս թղթերը։

ԱՆՆԱ— Ի՞նչ թղթեր են որ։

ԻՇԽԱՆԸ— Ես երբեք չէի կրնար երևակայել, որ իմ տղաս, այդ գլուխը կախ, իբրև թե ոչինչով չի հետաքրքրվող տղան այս աստիճանի տեղյակ է մեր ռազմական ուժերուն և լավ ծանոթ մեր վիճակին, դիրքին, մեր տեսած պատրաստություններուն, մեր ծրագրին և այս աստիճանի հասկացողություն ունի պատերազմի ու տնտեսության գործերեն։ Եթե չըլլային այս նամակները ձեռքիս մեջ, ինծի չէին համոզեր ոչինչո՛վ, ոչինչո՛վ, երբե՛ք։

ԱՆՆԱ— Է՜, ե՞տքը։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ ետքը։ Ալ կասկած չկա, իշխանուհի՛ Աննա, ալ կասկած չկա։ Տղան ծախել կուզեր ինծի Թորոս իշխանին։

ԱՆՆԱ— Միայն այդչա՞փ։ (Անտարբեր) Որ տղադ կապեր ունի Թորոսին հետ, ատիկա գիտե՛նք երեք ամիսե ի վեր և՛ դուն, և՛ ես, և՛ այնքա՜ն ուրիշները։

ԻՇԽԱՆԸ— Ուրիշնե՞րը։

ԱՆՆԱ— Հապա ի՞նչ։ Մի՞թե կերևակայես, որ քու տղադ միայն իմ ետևես է ինկած, միայն ինծի՞ կուզե քու դեմդ հանե ու գործիք շինե իր ձեռքը։

ԻՇԽԱՆԸ— Խոսած է քեզի նոր բա՞ն։

ԱՆՆԱ— Նորը թո՛ղ։ Ինչե՞ն գիտնամ, որ մեր շուրջը իր լրտեսները չունի ու չի հետևիր մեր ամեն մեկ քայլին։ Եվ ո՞վ գիտե, հիմա քանի՜-քանիներն են, որ լռիկ-մնջիկ իրենց պատրաստությունը տեսնելու վրա են այս բերդին մեջ. մարդի՛կ, որոնց պատվին դիպեր ես, մարդի՛կ, որոնց շահին դիպեր ես, քի՞չ կան։ Ինչե՞ն գիտնամ, որ ատոնք բոլորը կապ-

ված չեն հիմա քու տղուդ ու չեն սպասեր տղուդ նշանին իրենց բռունցքները բարձրացնելու համար։

ԻՇԽԱՆԸ— Ո՛չ, այդ մեկը ո՛չ. իզուր են վախերդ. ես կճանչնամ իմ մարդիկս։

ԱՆՆԱ— Դուն կճանչնայիր և քու տղադ։ Չգիտե՛մ։ Իսկ հիմա ինչո՞վ կրնամ ծառայել քեզի։

ԻՇԽԱՆԸ— (Քիչ մը լուռ) Ճշմարիտ ըլլալու համար պիտի ըսեմ քեզի, որ դո՛ւն բացիր առաջին անգամ աչքերս, և քու բոլոր ըսածներդ ելան։ Եվ ակամա, երբ այս նամակները կարդացի, առաջին միտքս եղավ խոսիլ քեզի հետ։

ԱՆՆԱ— Խոսի՞լ։ (Արհամարհանքով) Լա՛վ, խոսե՛։ Խոսի՛նք։ Երբ տղադ դուրսը ամեն վայրկյան կրնա այս ամրոցը շուռ տալ մեր գլխուն, մենք նստինք ու խոսինք։ Վասիլ իշխան, դուն շատ իզուր ես կանչեր ինծի։ Դուն ինծի հետ չէ՛, որ պիտի խոսիս։ Դուն պետք է խոսիս քու տղուդ հետ։

ԻՇԽԱՆԸ— Ատիկա ի՛ր կարգով, ատիկա ի՛ր կարգով։

ԱՆՆԱ— Պիտի խոսած ըլլայիր վաղուց, վաղուց։ Եվ կտրո՛ւկ։

ԻՇԽԱՆԸ— Թողի՛, որ փաստ ունենամ։

ԱՆՆԱ— Լսե՛, իշխա՛ն։ Քիչ մը առաջ ըսիր, որ իմ ըսածներս կատարվեր են մինչև հիմա։ Շատ կցավիմ, որ այդպես է։ Թույլ կուտա՞ս, որ հիմա ալ ըսեմ քեզի, ինչ որ պիտի կատարվի։ Ըսեմ ու հեռանամ։

ԻՇԽԱՆԸ— Կլսե՛մ։

ԱՆՆԱ— Ես քեզի խորհուրդ տվողը չեմ, ո՛չ ալ դուն իմ խորհուրդիս պետք ունիս։ Բայց բավականին առիթ ունեցա ճանչնալու քու բարի ծաղիկ տղադ, և հիմա կուգամ այն համոզումին, որ դուն քու տղուդ հետ գուպար մտնել կարող չես. դուն անոր հաղթել չե՛ս կրնար։ Եվ քանի որ անիկա դեռ չէ կերեր քու գլուխդ և քեզի՛ ալ, ինծի՛ ալ և քու բոլոր ունիմչունիմդ Թորոսի ճանկը չէ նետեր, կանչե՛ տղադ մոտդ, ձևացուր քեզի բոլորովին անտեղյակ իր ըրածին, ըսե՛, որ դուն արդեն տարիքդ առեր ես, հոգներ ես, կշտացեր ես, վերջապես, ըսե՛ ինչ որ կուզես, և իշխանությունը դի՛ր տղուդ ձեռքը, կամ կիսեցե՛ք ձեր մեջը, եթե կարելի է։ Ես կտեսնեմ, որ հարցը ատով է վերջանալու։ Միևնույն է. կամքով որ չտաս, բռնի է խլելու։ Եվ վերջապես չէ՞ որ ժառանգդ է, քու հաջորդդ, քու օրինավոր անդրանիկ զավակդ։ Ութը-տասը տարի մը ավելի շուտ կամ ավելի ուշ, միևնույն չէ՞։ Ան շա՛տ ավելի խորամանկ է քեզմե և շա՛տ ավելի հանդուգն ու խարդախ, ո՛չ մեկ բանի առջև կանգ առնողը չէ, ո՛չ հայր կհասկնա, ո՛չ որդի. և երիտասարդ է, անսանձ ու համառ։ Այսպե՛ս է, իշխա՛ն, մերկ ճշմարտությունը. այսպե՛ս է. կամ ա՛ն պետք



է մեջտեղեն քաշվի, կամ դո՛ւն։ Եվ քանի որ անիկա ոչ մեկ պայմանով տեղի տվողը չէ, խելացին ան է, որ դուն տեղի տաս, քանի դեռ ուշ չէ։ (Կլռե):

ԻՇԽԱՆԸ— Վերջացուցի՞ր։

ԱՆՆԱ— Ջիջե՛ տղուդ, իշխա՛ն Վասիլ։ Աստված քու զավակդ քեզմե ավելի ուժեղ է ստեղծեր։

ԻՇԽԱՆԸ— Վերջացուցի՞ր։

ԱՆՆԱ— Այո՛, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Կրնաս երթալ։

ԱՆՆԱ— Կանչեցիր ինծի, որ հիմա ալ վռնդե՞ս։

ԻՇԽԱՆԸ— Կանչեցի քեզի, որ դեմս կենաս ու ինծի ծաղրե՞ս։

ԱՆՆԱ— (Բարկությամբ ու հպարտ) Հապա ուրիշ ի՞նչ կուզեիր։ Եթե ծաղր չես սիրեր, խնդրե՛մ, կեցիր դեմս, ինչպես վայել է Քեսունի տիրոջը, ինչպես վայել է իմ ձեռքես հափշտակած ամրոցին տիրոջը։ Քու զավա՛կդ, քու սեփական զավակդ, գարշելի լակոտ մը, նենգ ու դավաճան, առեր է քեզի իր մատներուն ծայրը ու կխնդա քիթիդ։ Ե՞ս եմ ծաղրողը։ Ես կի՛ն եմ, ես ո՛ւժը կսիրեմ ու վճռական մարդիկը։ Ինչո՞ւ ես կանչեր ինծի։ Աս դուն, ան ալ քու տղադ. մաքրեցե՛ք ձեր մեջը ձեր կեղտոտ հաշիվը։ Ե՞ս ինչ գործ ունիմ։

ԻՇԽԱՆԸ— Այդ մեկը իրավո՛ւնք ունիս։ Գնա՛։

ԱՆՆԱ— (Քիչ մը լուռ մնալեն ետքը՝ կոտրված) Ների՛, Քեսունի տեր, իմ հախուռն խոսքերս։ Ների՛, որ հոգիս զսպել չի կրցա։

ԻՇԽԱՆԸ— Գնա՛։

ԱՆՆԱ— Քու հրամա՛նդ։ Քեսունի՛ տեր։ (Դուրս):

## 5

ԻՇԽԱՆԸ— Քեսունի տե՛ր... Այո՛, դեռ Քեսունի տեր։ Ատ ալ ծաղր է. Քեսունի տե՛ր... (Ներս մտնող Շահինին) Է՛յ, քավթա՛ռ. ի՞նչ կըսես, մենք արդեն հինցանք, անցանք. և հիմա կըսեն մեզի, որ պետք եղածեն ավելի կապրինք։ Այսպես կըսեն մեր տղաքը։ Մարդիկը անհամբեր են, ինչ կրնանք ընել։ Զավակ ըսածդ այդպես պիտի ըլլա։ է՛, հիմա ի՞նչ պիտի ըսես, ծերո՛ւկ. գուցե նորեն չես հավտար։ (Նամակները զարնելով սեղանին) Ասո՛նց, ասո՛նց ինչ պիտի ըսես տեսնեմ, որ նորեն մեղմացնես, արդարացնես...

ՇԱՀԻՆ— Ալ խելքս բան չի կտրեր, իշխա՛ն, ի՞նչ ըսեմ։ Տղադ միշտ է եղեր տարօրինակ ու կարգե դուրս, բայց գոնե կհասկնայի իր ուզածը։

Հիմա սա ի՛նչ է իր ըրածը, ի՞նչ է իր ուզածը։ Չե՛մ հասկնար, ոչի՛նչ չեմ հասկնար։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ կա չհասկնալու։ Մարդը միշտ երեսիս ըսեր է, որ քայլ առ քայլ պետք է հետևի ինծի, պիտի փոխե, պիտի քանդե ամեն շինածս, իմ ամբողջ գործս, իմ ամբողջ կյանքս։ Ի՞նչ կա չհասկնալու։ Մարդը խնդացնել կուզե վրաս իմ թշնամիները։ Ականջ պետք է ունենալ հասկնալու համար։ Անիկա ի՞նչ հանցանք ունի, որ մենք կույր ենք եղեր ու խուլ մինչև հիմա։ Անիկա կուզե իմ իշխանությունս, իմ բերդերս կուզե անիկա և իմ մահս կուզե անիկա։ Հիմա հասկցա՞ր վերջապես՝ թե ի՞նչ կուզե իմ տղաս։ Ուրախացե՛ք, հայրե՛ր, որ ձեր կինը զավակ ծնավ ձեզի, ժառանգ ձեր աշխատանքին, նեցուկ ձեր տարիքին ու մխիթարանք ձեր ծերութքին։ Զավա՜կ... Ձեռքերս կդողան, Շահի՛ն. ձեռքերս կդողան։ Ինչպե՞ս պահեմ ես այս թանկագին զավակը. ինչպե՞ս հայտնեմ իրեն իմ շնորհակալությունս, ինչպե՞ս հայտնեմ իմ երախտագիտությունս, իմ հայրակա՛ն երախտագիտությունս։ Ըսե՛, ըսե՛, ինչպե՞ս վարձատրեմ, ինչո՞վ վարձատրեմ։ Պետք է բացառիկ բան մը, արտակարգ բան մը, իրե՛ն նման, իրե՛ն արժանի։ Ըսե՛, ըսե՛, ինչո՞վ վարձատրեմ, որ պարտքի տակ չմնամ։

ՇԱՀԻՆ— Իշխա՛ն, ամենեն առաջ հանգիստ ու սառը։ Եթե կուզես արդար ըլլալ, պետք է մնաս սառը։

ԻՇԽԱՆԸ— Արդա՛ր, արդա՛ր, իհարկե որ արդար. կշիռքը կշիռքին. ոչի՛նչ ավելի և ոչինչ պակաս։ Ես ալ ատ է, որ կփնտրեմ, ա՜յ կփընտրեմ։

ՇԱՀԻՆ— Սա՛ռը մնանք ու սա՛ռը մտածենք։

ԻՇԽԱՆԸ— (Հանկարծ) Կեցի՛ր, կեցի՛ր։ (Կամաց մը գլուխը կդարձնե դեպի լուսամուտը և շատ հանգիստ) Բա՛ց սա փեղկերը։

ՇԱՀԻՆ— Բանամ լուսամո՞ւտը։

ԻՇԽԱՆԸ— (Հետզհետե տաքնալով) Լուսամո՞ւտը... հա՛, լուսամուտը։ Բա՛ց, բա՛ց լուսամուտը։

ՇԱՀԻՆ— Այս ցուրտի՞ն։

ԻՇԽԱՆԸ— Թե չէ՝ կխեղդվի՛մ. կկտրի՛ շունչս. թե չէ՝ կկտրի՛ շունչս, կըսեմ քեզի։ Շո՛ւնչս...

Արագ կերթա ու կբանա լուսամուտի ճռնչացող փեղկերը ու կկենա դեմը: Դուրսը խավար գիշեր է:

ՇԱՀԻՆ— (Մոտենալով ու մեղմով) Կմրսի՛ս, իշխա՛ն, կմրսի՛նք։

ԻՇԽԱՆԸ— Այդքան մրսկո՞տ ես։ Իսկ ինծի կըսես՝ սա՞ռը, սա՞ռը... Եթե այդքան կմրսիս, կրնա՛ս հեռանալ։ Ինծի համար լավ է հոս։ (Թիկն տալով բաց փեղկին) Ա՜յ, այսպե՛ս։ (Քիչ մը ետքը) Եվ ի՜նչ սքանչելի



մութ է դուրսը, ի՜նչ դավաճան խավար, ձյունն անգամ սև է դարձեր։ Ո՞ւր են դեմի հսկա սարերը, ո՞ւր են թաքնվեր։ Իսկ վա՛րը լո՛ւռ, կատաղի գետն անգամ փորն է քաշեր իր ձայնը, որ ավելի լավ խաբե. անհայտացեր են բոլոր քարափներն ու ժայռերը. ինչպե՜ս վարպետ կերպով քողարկեր են իրենց բոլոր նենգ դիտավորությունները։ (Կխնդա) Հոն ալ դա՛վ մը կնյութվի։ Անոնք ալ խաբել կուզեն, անոնք ալ կուզեն թակարդը ձգեն ու իրենց սուր-սուր ծայրերը քու կողդ խրեն։ Չէ՞ որ անոնք ալ մեյ-մեկ հոր որդի են, մեյ-մեկ իշխանի ժառանգ, ժառանգելու ծարավի ու անհամբեր իշխանության... Ա՜յ, ա՜յ, հո՛ն, վա՛րը, տա՛կը, բոլորովին մութին մեջ, սքանչելի մութին մեջ։

ՇԱՀԻՆ— Զգո՛ւյշ, իշխա՛ն, մի՛ կախվիր այդպես։

ԻՇԽԱՆԸ— (Հանկարծ ետ քաշվելով ու շտկվելով իր ամբողջ հասակով) Կվախնաս, որ իյնա՞մ։ Ո՛չ. կսխալիք բոլո՛րդ ալ. ես իյնողը չե՛մ։ Ինծի Վասիլ կըսեն, Վասիլ իշխանը Քեսունի... գող Վասիլ իշխանը։ Գո՞ղ, հա՞, լա՛վ, թող ըլլա գող։ Բայց տե՛րն եմ, տե՛րը, այս բերդի՛ն, այս հողի՛ն, այս աշխարհի՛ն. և ո՞վ է հավասար ինծի իր ուժո՛վը, իր կիրքո՛վը, իր ազդած ահո՛վը, ո՞վ։

ՇԱՀԻՆ— Եկո՛ւր, եկո՛ւր, ասդի՛ն եկուր։ Թո՛ղ որ փակեմ։

Կամաց մը կճռռացնե ու կգոցե փեղկերը: Իշխանը ծանր կերթա կնստի իր տեղը, լուռ ու մռայլ:

ՇԱՀԻՆ— (Անոր դեմը անցնելով) Ինծի լսե՛, իշխա՛ն, այսպես կարելի չէ։ Ալ մի՛ մտածեր։ Լավ խորհուրդ կբերե լույսը։ Վաղը առտու կանուխ...

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ։ Ամբողջ դար մը կա մինչև վաղը առտու։ Դուն ցընդե՞ր ես։ Ո՛չ. ա՛յս գիշեր, ա՛յս գիշեր, հի՛մա, իսկո՛ւյն։ (Հանկարծ անդրադառնալով) Բայց ո՞ւր է, ինչո՞ւ ուշացավ։

ՇԱՀԻՆ— Արդեն կանչե՞ր ես։ Իզո՞ւր։

ԻՇԽԱՆԸ— Պետք է արդեն եկած ըլլար։ Ինչո՞ւ ուշացավ։ Չըլլա՞ հանկարծ... Չըլլա՞ հանկարծ հոտ է առեր, չըլլա՞ հանկարծ իմացեր է։ Չըլլա՞ հանկարծ փախած ըլլա։

ՇԱՀԻՆ— Մա՞րդ էիր ղրկեր ետևեն։

ԻՇԽԱՆԸ— (Հետզհետե անհանգիստ ու տաքի ելլելով) Շահի՛ն, փախա՛վ։ Շահի՛ն, փախա՛վ, կըսեմ քեզի։ Պետք է բռնես, պետք է բռնես. թամբե՛լ տուր մեր ամենեն արագ ձիերը, ճամփա՛ հանե մեր ամենեն փորձ կտրիճները- ճամփա հանե ամեն կողմ, Անարզափա տանող բոլոր ճամփաները։ Շահի՛ն, պե՛տք չէ որ փախչի, պետք չէ՛ որ ձեռքես փախչի, պետք չէ՛ որ...

## 6

Հանկարծ կմտնէ Սեպուհ, ճայլ մը կընէ ու զարմացած կկենա։

Հայրը պահ մը դեռ կմնա քարացած, ձեռքերը օդին մեջ, ետքը կամաց մը կիջեցնէ, կդնէ սեղանին ու ինքն ալ ծանր կնստի։

ՍԵՊՈՒՀ— Ինծի կանչե՛ր ես, հա՛յր։

ԻՇԽԱՆԸ— Ո՛չ, որդի՛ս։ Որպեսզի արագ ու դյուրին հաջողինք, պետք է որ Թորոսը ոչինչ չկասկածի, գիտե՞ս, չէ՞։ Հիմա ան անպատրաստ է ու բոլորովին ապահով. գարունը որ բացվի, ո՞վ գիտե, մեր պատրաստությունները լուրը կրնա հասնիլ իր ականջը, ինչքան ալ որ զգույշ ըլլանք։

ՍԵՊՈՒՀ— Դեռ շա՛տ է կանուխ. դեռ շա՛տ է կանուխ։ Հիմա բանակը շարժել կարելի չէ, պաշարը շարժել կարելի չէ։ Եվ մեր պատրաստություններն ալ դեռ չեն լրացած. մեզի ալ պետք է ժամանակ, որ ուժերը կեդրոնացնենք, որ զորքին մեջ տրամադրություն ստեղծվի. գոնե մեկերկու շաբաթ։

ԻՇԽԱՆԸ— Փա՜ռք քեզի, Աստվա՛ծ, սա ի՜նչ հրաշք է. տղաս սկսեր է կռվի գործերը հասկնալ։ Այդպե՛ս է, մա՛նչս, այդպե՛ս է. բոլորովին իրավունք ունիս, եթե միայն չվախնայինք, որ հանկարծ Թորոսի քիթը հոտ առնե։

ՍԵՊՈՒՀ— Թորո՞սը։ Թորոսը մեր դաշնակիցն է, մեր բարեկամը։ Թորոսը ի՞նչ կրնա երևակայել այդ տեսակ բան մեզի նման բարեկամեն ու դաշնակցեն։

ԻՇԽԱՆԸ— Այդպե՛ս է, մա՛նչս, այդպե՛ս է։ Բայց ինչո՞ւ համար են աշխարհիս երեսը դավաճաննե՛րը, մատնիչնե՛րը...

ՍԵՊՈՒՀ— Ինչո՞ւ այդպես շեշտակի կնայիս աչքերուս։

ԻՇԽԱՆԸ— Որովհետև, տղա՛ս, աշխարհիս երեսը մատնիչներ կան, դավաճաններ կան, կա՛ն, ամեն տեսակ հրեշներ կան. հանկարծ կբռնեն ու ամեն բան կգրեն Թորոսին, մեր ունեցած ուժերը, վիճակը, դիրքերը, ծրագիրը, ես ի՞նչ գիտնամ։ Քո՞ւ դեմքդ ինչու փոխվեցավ։

ՍԵՊՈՒՀ— Դե՞մքս...

ԻՇԽԱՆԸ— Իզո՜ւր։ Դեռ կանուխ է։ Դեռ մի՛ շտապեր։

ՍԵՊՈՒՀ— Հա՛յր, խելքս չի՛ հասնիր քու այդ տարօրինակ խոսվածքին։

ԻՇԽԱՆԸ— Ըսել է՝ քու խելքեդ ավելի խելոք է քու երեսիդ գույնը. արդեն փախավ։ Կեցի՛ր, հիմա կփախցնենք և քու այդ նշանավոր խելքդ։ Կճանչնա՞ս այս թղթերը։

ՍԵՊՈՒՀ— (Սառած) Ա՜խ, այդպե՛ս է բանը...



ԻՇԽԱՆԸ— Այո՛, այսպես է բանը։

ՍԵՊՈՒՀ— Ափսո՜ս...

ԻՇԽԱՆԸ— Այո՛, ափսո՜ս։

ԻՇԽԱՆԸ— Հա՛։ Եկա՛ր։ Եկո՛ւր։ Լա՛վ է։ Շա՛տ լավ է։ (Շահինին) Դուն կրնաս երթալ։

ՇԱՀԻՆ— Իշխա՛ն, թող որ մնամ հոս։

ԻՇԽԱՆԸ— Հայր ու տղա խոսելիք ունինք։ Թո՛ղ մեզի մինակ։

ՇԱՀԻՆ— Թող մնա՛մ, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— (Անհամբեր) Կկանչեմ, ըսի՛, երբ պետք ունենամ։ Եվ մէկ ոք ներս չես թողներ։

Շահին ակամա կելլե դուրս։

## 7

Երկար լռութենե մը ետքը։

ԻՇԽԱՆԸ— Դուն... դուն իմ անդրանիկ որդիս ես, իմ ժառանգս. դուն պե՛տք է գիտնաս։ Լուր ունիմ, որ Անարզաբայի Թորոս իշխանը կպատրաստվի մեր վրա հարձակվելու, կործանելու իմ այսքա՜ն տարիներու աշխատանքով կազմած այս ընդարձակ իշխանությունս, մեզի բոլորիս սուրի և հուրի մատնելու և տիրելու մեր աշխարհին։ Ի՞նչ կըսես։

ՍԵՊՈՒՀ— Կըսեմ, որ սուտ է։

ԻՇԽԱՆԸ— Այդպես կարծե՞ս։

ՍԵՊՈՒՀ— Սուտ է և քու հնարածը, որ քու արշավանքդ արդարացնես։ Գաղտնիք մը չէ կարծեմ այս բերդին մեջ շա՛տ շատերուն, որ դուն ես պատրաստվողը Թորոսին վրա հարձակվելու։ Եվ ես գիտե՛մ, չէ՞ որ դուն այդ ծրագիրը կորոճաս երկա՜ր-երկար տարիներ։

ԻՇԽԱՆԸ— Իհարկե՛ որ գիտես. չէ՞ որ զավակս ես. մարդ իր զավկեն ինչպես ծածկե, իր ժառանգեն ինչո՞ւ թաքցնե։ Քանի որ այդչափը գիտես, դե՛, հիմա գիտցի՛ր ամբողջը։ Քեզի կանչեր եմ հայտնելու համար, որ շաբաթե մը կսկսի մեր արշավանքը Թորոսի վրա։

ՍԵՊՈՒՀ— Շաբաթե՞ մը։ Ինչպե՜ս թե շաբաթե մը։

ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ վախցար։

ՍԵՊՈՒՀ— Բայց... բայց... հիմա ի՞նչ արշավանքի ժամանակ է։ Դեռ ձյուները չեն վերցեր գետնեն, դեռ կիրճերը բաց չեն կարգին ու վտանգավոր. դեռ... դեռ... Սպասե՛նք գոնե քանի մը շաբաթ։

ՍԵՊՈՒՀ— Ինչպե՞ս անցավ քու ձեռքը։ Զարմա՜նք է։

ԻՇԽԱՆԸ— Իսկ զղջումի ո՛չ մեկ խոսք։ Ոչ իսկ գոնե կեղծ շարժում մը ներում խնդրելու։

ՍԵՊՈՒՀ— Ինչի՞ ներում և ի՞նչ զղջում։ Դուն չարաչար կսխալիս, հա՛յր. եթե կերևակայես, որ հանցավոր եմ բաներ։ Կցավի՛մ, շա՛տ կըցավիմ, որ այսքան աշխատանքս իզուր կորավ, և ժամանակեն առաջ նամակներուս բովանդակությունը հայտնի եղավ քեզի։ Բայց ատիկա բուն իրողութենեն չի փոխեր ոչինչ։ Հա՛յր, համոզվե՛, որ ընեմ պիտի ամե՛ն բան, ամե՛ն բան, որ անկարելի դառնա քու արշավանքդ Թորոսի վրա։ Չե՛մ թող տալու՝ քանի շունչ կա բերանս։

ԻՇԽԱՆԸ— Այդպե՛ս։ Եվ չե՛ս քաշվիր ատիկա շիտակ երեսիս ըսելու

ՍԵՊՈՒՀ— Դուն ամբողջ աշխարհ մը դարձնել կուզես մոխիր ու ավեր, ու չե՛ս քաշվիր երեսիս ըսելու, ես ինչո՞ւ պիտի քաշվիմ խոսելու քեզի ճշմարտությունը։

ԻՇԽԱՆԸ— Ալ ավելո՛րդ են կարծեմ այդ պարապ խոսքերը։

ՍԵՊՈՒՀ— Պարապ չէ՛, հա՛յր, մտածե՛. ի՞նչ արժեք ունի քու այդ անվերջ խելը. որո՞ւ համար. և մինչև ե՞րբ։ Անմահ չես դուն. իսկ իմ ձեռքս անցավ թե չէ, ահա՛, ըսե՛մ քեզի հիմիկվնե, իսկույն բաժնեմ պիտի իրենց տերերուն, ուր տերը չկա՝ բարեկամներու, գյուղացիներու։ Ալ ի՞նչ իմաստ. ինչո՞ւ համար է այսքան տանջանք ու չարչարանքը։

ԻՇԽԱՆԸ— Հա՞, արդե՛ն, արդեն բաժնե՛ր ես, արդեն խոստացեր ես։ Այդպե՞ս ես խոստացեր, հա՞, որ քու կողմդ քաշես բոլոր հին տերերը, «բարեկամները», «գյուղացիները»։ Եվ եկեր ես կպարծենա՜ս ինծի։

ՍԵՊՈՒՀ— Հերի՛ք է, հա՛յր, թո՛ղ, նստե՛, վայլե՛. քանի՞ տարվան կյանք ունիս այս աշխարհիս երեսին։

ԻՇԽԱՆԸ— Կտեսնե՛նք, կտեսնե՛նք։ Համենայն դեպս շա՛տ ավելի երկար, քան դուն կկարծես։ Հիմա դուն ինծի ա՛ն ըսե. ի՞նչ է խոստացեր Թորոսը քեզի քու այդ բոլոր ծառայություններուդ փոխարեն։

ՍԵՊՈՒՀ— Թորո՞սը։ Ինծի՞։

ԻՇԽԱՆԸ— Ալ ավելորդ է, ըսի՛ քեզի։ Հանե՛ դիմակդ ու պատասխան տո՛ւր։ Ի՞նչ է խոստացեր Թորոսը քեզի, երբ բերդերս հանձնես իրեն, երբ հողերս հանձնես իրեն, երբ գլուխս հանձնես իրեն։

ՍԵՊՈՒՀ— Հա՛յր։

ԻՇԽԱՆԸ— Իհարկե խոստացեր է՝ թողնե քեզի նախ այս բերդը, երեք և Համսուրը, գուցե և Ռապանը. չէ՞, իսկ մյուսները՝ իրեն։ Դուն փոտեի՛ր, դուն շո՛ւն ես, դուն շո՛ւտ հասկցար, որ փոքր եղբորդ ալ թողնելու ամեն բան, որ քեզի ոչինչ չեմ տալու, քեզի ոչինչ չէ հասնելու. անո՛ւ



ուրկե կբխի քու բոլոր սև կատաղությունդ, քու բոլոր սուտն ու կեղծը, նենգությունը։

ՍԵՊՈՒՀ— Հա՜յր...

ԻՇԽԱՆԸ— Զա՛յնդ։ Հա՜յր... Ի՞նչ հայր. եղբե՛ք։ Քու եղած օրեդ մեջդ բան մը կար, որ ատելի էր ինծի, բնազդներս կզգային։ Ո՛չ. դուն իմ զավակս չե՛ս. դուն զազի՛ր վիժուկ մըն ես ու դավադիր մատնիչ մը. դուն ցած ու նենգավոր դավաճան մըն ես. հորդ մահը պատրաստող օձիկա մըն ես. դուն իմ ոխերիմ թշնամին ես։

ՍԵՊՈՒՀ— Դուն հիվանդ ես։ Ես քեզի հետ այլևս խոսիլ չեմ ուզեր։

Կուղղվի դեպի դուռը: Հայրը վրան կնետվի, և թևեն ամուր բռնելով՝ կհրե սենյակի հակառակ կողմը:

ԻՇԽԱՆԸ— Ո՞ւր. ո՞ւր կփախչիս։ Սպասե՛։ Ո՛չ, այս անգամ այդպեսով չե՛ս ազատիր։ Ո՛չ, այս անգամ մեր հաշիվները պետք է մաքրըվին. և արմատապե՛ս։ Լսեցի՞ր, չէ՞, ինչեր ըսի քեզի։ Դե՜, պաշտպանե՜ ինքզինքդ, ժխտե՛, ուրացի՛ր, հերքե՛, եթե կրնաս։ Ըսե՛ ինչ որ կրնաս, քեզի արդարացնելու համար։ Վերջը թող չըսվի, թե քեզի արդարացնելու միջոց չտվի։ Պաշտպանե՜ քեզի դատավճիռդ լսելե առաջ։ Դուն սատկեցնել կուզես ինծի, որ տեղս անցնիս. լա՛վ, ոչինչ չունիմ հակառակ։ Միայն ինծի կթվի, սկսեր ես գործ մը, որ շատ վեր է քու ուժերեդ և պետք է տուժես։ Չէ՞ որ ես ալ պարտական եմ պաշտպանվելու. չէ՞ որ չեմ թողնելու, որ մսացու տավարի մը պես ծախես ինծի քու Թորոսիդ։ Գիտցի՛ր, այս վայրկյանիս քու դատաստանդ է, որ կտեսնվի, և կյանքդ սպառնալիքի տակ է։

ՍԵՊՈՒՀ— Անօգո՛ւտ են սպառնալիքներդ, հա՛յր, ինչպես և շինծու՝ մեղադրանքներդ. ո՛չ կշեղեն ատոնք ինծի, ո՛չ կվախցնեն։

ԻՇԽԱՆԸ— Հա՛, կտեսնե՛մ, ամո՛ւր է կռնակդ։ Դուրսը արդեն նետեր ես երևի ուռկանդ, ինչպես հարկն է։ Ըսե՛ նայիմ, ո՞վ է կեցած ետեվըդ։ Գուցե անոնց համար էր, որ այդպես դուրս կվազեիր։ Հանկարծակի՞ եղավ, հա՞. ծուղակը ինկար։ Այդպե՛ս է՝ ուրիշին հոր փորողը ինքը մեջը կիյնա։ Ալ մոռցի՛ր դուրսը. վերջացա՜վ. ձեռք վերցուր բոլոր մյուսներեն։ Մեր հաշիվը պիտի մաքրենք ես ու դուն։ Ի՞նչ գործ ունինք ուրիշներու հետ։

ՍԵՊՈՒՀ— Ի՞նչ կուզես ինծմե։

ԻՇԽԱՆԸ— Ուզա՞ծս։ Իսկո՛ւյն։ (Կերթա ու կբանա լուսամուտին փեղկերը) Նայե՛, նայե՛ հոս, դուրսը. լա՛վ նայե։ Սա է դավադիրներո՛ւ, հայրասպաններո՛ւ, նենգամիտներո՛ւ ելքի ճամփան։ Այն մյուս սովո-

բական դուռը ալ փակվա՛ծ է քեզի համար... (Կենալով դռան ճանդեպ) Նայե՛, իմ մարմնովս։ Կրնա՞ս, տապալե՛ ինծի ու ելի՛ր, չէ՞ որ ատիկա է երազդ։ Խնդրե՛մ։ Եթե չե՛ս կրնար, եթե չկրնաս, կմնա միայն մե՛կ ելք մը, այդ... խավարի ու անդունդի դուռը։ Ահա՛ կեցած եմ. ընտրե՛ ճամփադ. ելի՛ր ուրկե որ կուզես։

ՍԵՊՈՒՀ— Կհասկնա՛մ քեզի, հա՛յր. բե՛ռ մըն եմ քու վարքիդ ու վարմունքիդ վրա, խղճի խայթ մըն եմ խրված քու կողդ. ու դուն կըտենչաս իմ մահս։ Կյանքը երբեք մեծ հրապույր մը չէ ունեցեր ինծի համար, և անոր կորուստը մեծ ցավ մը չէ ինծի։ Բայց վա՜յ քեզի, եթե իրավ որ...

ԻՇԽԱՆԸ— (Ընդհատելով) Վայը կարդա քո՛ւ գլխուդ։ Թո՛ղ քու ճառերը ու շարժե ոտքերդ։ Անցի՛ր։ Եթե քու ոտքերդ կվարանին՝ իմ թևերս չե՛ն վարանիր, կուգան քեզի օգնության։

ՍԵՊՈՒՀ— Գիտե՛մ. չէ՞ որ անոնք չվարանեցան, երբ թույնի բաժակը մորս կերկարեին։

ԻՇԽԱՆԸ— Ստախոս շուն մըն ես դուն, և շան մը բամբասանքը շրթունքիդ։ Սուտ ու քսություն եղավ քու ամբողջ կյանքդ. դե՛, սուտով մըն ալ փաթթե՛ քու մահդ։ (Վրա գալով) Քալե՛, քալե՛...

ՍԵՊՈՒՀ— Աստվա՛ծ իմ, ի՜նչ գազան նայվածք ունի... Եվ ի՜նչ սոսկալի ծալեր է դեմքդ։

ԻՇԽԱՆԸ— (Միշտ վրա գալով և հետզհետե տղան ետ-ետ դեպի լուսամուտ քշելով) Հայհոյե՛, հայհոյե՛, մինչև սատկիս։ Գազա՞ն, հա՞։ Ես գազա՞ն, հա՞։ Իսկ հորը դավե՜լը... թշնամիներուս դաշնակցե՜լը... գաղտնիքներս մատնե՜լը... Հիմա կտեսնե՛ս գազանը, հիմա կտեսնե՛ս գազանը, հիմա կտեսնե՛ս գազանը։ Քալե, քալե՛...

ՍԵՊՈՒՀ— Հա՛յր, մտածե՛. անդո՛ւնդ է տակը։

ԻՇԽԱՆԸ— Հողե՜րս կուզեիր. կուզեիր բերդե՛րս։ (Տղուն գլուխը կոխելով պատուհանին մեջ) Ա՛ռ քեզի հող. ա՛ռ քեզի բերդ... գնա՛, աչքդ կշտանա, գնա՛, գնա՛... անեծք քու ծնունդին... գնա՛, ա՛ռ... կոխե՛ աչքդ... կո՛խե բերանդ... խլե՛ ձեռքես, տեսնե՛մ... գնա՛...

Տղան, որ իզուր ջանքեր կըներ դիմադրելու ու կառչելու, կկորսնցնե վերջին հենարանը և կոնակն ի վար կգլտորի անդունդը:

Հայրը ակնթարթ մը ապշած կնայի լուսամուտի պարապին, սարսափահար ետ-ետ կքաշվի՝ գլուխը բռնած: Կնայի շուրջը, կշփե աչքերը և ճանկարծ կնետվի դեպի դուռը, կբանա ու կպոռա.

ԻՇԽԱՆԸ— Օգնեցե՛ք... օգնեցե՛ք... շո՛ւտ, օգնեցե՛ք... օգնեցե՛ք...



## 8

Ներս կվազեն Շահին, ծառա մը և ուրիշ մը:

ԾԱՌԱՆ— (Վախցած-զարմացած նայելով շուրջը) Ի՞նչ կհրամայեք իշխանը։

ՇԱՀԻՆ— Իշխա՛ն, ո՞ւր է զավակդ։

ԻՇԽԱՆԸ— (Մանր) Ես ունեցեր եմ միայն մե՛կ զավակ։ Միա՛յն մեկ զավակ մը ունիմ ես։ Այն... այն մյուսը... քու հարցուցածդ... ինկա՛վ վար։ Ան ինկավ վա՛ր. նետվեցա՛վ վար։

ՇԱՀԻՆ— Իշխա՛ն...

ՄՅՈՒՍԸ— Լուսամուտե՞ն. այս լուսամուտե՞ն...

Իշխանը առանց պատասխան տալու կերթա կնստի իր տեղը սեղանին առջև, գլուխը կհենե երկու բռունցքներուն, անթարթ աչքերը կետի մը հառած:

ՄՅՈՒՍԸ— Գուցե դեռ կապրի՛։

ՇԱՀԻՆ— Այս բարձրութենե՞ն։

ՄՅՈՒՍԸ— Աստվա՛ծ իմ...

## 9

Ներս կվազե իշխանուհի Սոֆիա, ետևեն Իրինա և ուրիշները:

ՍՈՖԻԱ— Սա ի՞նչ աղմուկ է, ի՞նչ է պատահեր. սիրտս կդողա։

ՇԱՀԻՆ— Իշխան Սեպուհը բացեր է լուսամուտը ու նետվեր է ցած։

ՍՈՖԻԱ— Ցա՞ծ. անդո՞ւնդը... (Ուշագնացի պես) Ա՜...

ԻՐԻՆԱ— (Գրկելով) Իշխանուհի՛, իշխանուհի՛, Մե՛ծ իշխանուհի։

ՋԻՆՎԱԾ ՄԱՐԴ ՄԸ— (Գնալով դեպի լուսամուտը) Սարսափելի՛ է...։

ՇԱՀԻՆ— Բայց ասիկա պատահելու էր օր մը. խելագարության բոլոր նշանները ան ուներ վաղուց, խե՜ղճը...

ՍՈՖԻԱ— Հապա որ ես կըսեի՜։ Ես միշտ կվախնայի։ (Նորեն թուլնալու պես) Ա՜...

ԻՐԻՆԱ— (Նորեն գրկելով) Իշխանուհի, իշխանուհի։ Մեծ իշխանուհի։

ՇԱՀԻՆ— (Իրինային) Ներս տար իշխանուհին։ (Հավաքված մարդոց): Իսկ դո՞ւք ինչ եք կեցեր շվարած, բերաննիդ բաց, վազեցե՛ք վար, բերդին տա՛կը. հոս ոչինչ չկա։ Ինծի՛ հետ, ինծի՛ հետ, բոլորդ ինծի հետ։

Մյուսները իր առաջն առած կհանե դուրս, կդառնա, կնայի անգամ մը Իշխանին և ինքն ալ կհետևի անոնց:

## 10

Եվ իսկույն սեմին վրա կերևա Իշխանուհի Աննայի կերպարանքը. նախ կդիտե Իշխանը, ետքը ճուշիկ քայլերով կմոտենա լուսամուտին, զգուշությամբ կծռի վար և ճանկյարձ կքաշվի ետ, կշտկվի, ճանդիսավոր քալվածքով կմոտենա Իշխանին թիկունքի կողմեն, կկենա անոր ետևը և կխոսի ծիգ կեցվածքով, ակռաներուն մեջեն ու ճ[illegible]իկ-ճատիկ:

**ԱՆՆԱ**— *Խոստովանե՛. դո՛ւն նետեցիր անիկա անդունդը։*

**ԻՇԽԱՆԸ**— (Կցնցվի, թեթև մը կշտկվի աթոռին վրա, բայց առանց գլուխը ետ շրջելու, նորեն կքարանա):

**ԱՆՆԱ**— *Քու ձեռքե՛րդ հրեցին անիկա անդունդը։*

**ԻՇԽԱՆԸ**— (Միշտ առանց դիրքը փոխելու) *Ի՞նչ գործ ունիս դուն հոս։*

**ԱՆՆԱ**— *Լա՛վ է։ Այդպե՛ս պետք էր։ Անիկա կպահանջեր արդարություն։*

**ԻՇԽԱՆԸ**— *Հեռացի՛ր։ Քաշվե՛ սենյակդ։*

**ԱՆՆԱ**— (Խորին ճաղթանակով ու խորին վշտով, թևերը տարածելով Իշխանին վրա) *Ա՜, արդարությունը...*

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՔԵՍՈՒՆԻ ԴԱՐՊԱՍԻ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԵՆ

Ճակատը երկու խոշոր անկյունավոր բուրգերու մեջ բերդի խորունկ մուտքը, վրան կամար և ատամնավոր պարիսպ:

Լայն բացված դարպասներուն մեջեն կերևա շղթաներով իջեցուցած կամրջակը խրամին վրա:

Դեպի առաջ, աջ կողմը, մեկ ճատիկ սալորենի մը ամբողջովին իր սպիտակ ծաղիկներուն մեջ:

Պայծառ առև օր է:

## 1

Բազմության ամեն կողմ: Երեխաներ բուրգերուն ու պարիսպին վրա: Դարպասեն դուրս զորք կերևա: Սալորենիին տակ խմբված են կանայք, անոնց առջևը Իշխանուհի Սոֆիա, Իրինա, Իշխանուհի Աննա, կանանց ձեռքը ծաղկած թարմ ճյուղեր։



Ձախ կողմը բերդապահ զորքը, նիզակավոր. այլև ամեն կարգի ու տեսակի պաշտոնյաներու խումբ մը:

Ընդհանուր ոգևորության, ուրախության, աղմուկի ու կեցցեներու մեջ՝ կամուրջին վրա ձիեն կիջնա Քեսունի իշխանը և շրջապատված տասնյակ մը զորականներով կառաջանա դեպի ներս:

**ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ**— (Հրճվանքով) *Կեցցե՜ Վասիլ իշխանը... կեցցե՜...*

**ՎԱՐԴԱՊԵՏ ՄԸ**— (Զատվելով պաշտոնյաներու խումբեն կանգ կառնե Իշխանին դեմը) *Բարի գալո՛ւստ։ Քեսունի՛ տեր. բարի դալուստ քու բերդդ, բարի վերադա՛րձ քու բույնդ, մեր քա՛ջ, մեր անպարտելի՛, մեր պաշտելի իշխան։ Քու անսահման քաջությանդ անառիկ պատին դեմ կանգ առին սելճուկներու անթիվ հորդաներն ալ, իսկ քու խիզախ ու աքանչելի հարձակմանը թափին տակ խորտակվեցան անոնք ու փշրվեցան ամեհի ժայռի մը զարնվող ձյունագնդի մը պես։ Սահման չունի, իշխա՛ն, մեր ամենուս ուրախությունը։ Դո՛ւն ազատեցիր Քրիստոսի խաչը նոր անպատվութենե, դո՛ւն ազատեցիր այս քրիստոնեությունը սարսափելի կոտորածե և մեր հայ ժողովուրդը՝ իսպառ ջնջումե։ Բարի՛, բարի՛ քու հաղթական վերադարձը, վրայեդ անպակաս Աստծու աջը։*

**ՇԱՀԻՆ**— *Հոգիս լեցուն ու հպարտ կուգամ քու դեմդ, Վասի՛լ իշխան. մի՛շտ այսպես տուն դառնաս թշնամիներուդ հետ ընդհարումնե։ Ահա՜ քու բերդդ անեղծ ու անթերի կդարձնեմ քեզի, այնպե՛ս, ինչպես որ դուն հանձնեցիր ինծի քու երթալեդ առաջ։*

**ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ**— (Հոգնած) *Շնորհակա՛լ եմ, հա՛յր սուրբ, շնորհակա՛լ եմ, Շահի՛ն, շնորհակա՛լ եմ բոլորեդ։ Իրա՛վ է, Աստված մեծ հաջողություն պարգևեց ինծի այս անգամ և ահարկու վտանգե ազատեցանք մենք բոլորս։ Բարկխարուխի տղան, Մելիք Շահի թոռը, չէ՛ր կրնար երազել այս պարտությունը «հայու կտորե» մը, «սարի արջե» մը, «գող Վասիլե» մը։ Ղրկեր էր իր գոռոզ գնդերը, որ սրբեն, մաքրեն, ավլեն ամբողջ նորակազմ հայությունը, մինչև բյուզանդական սահմանները և այդ սահմաններեն ալ անդին։ Եվ ահա՜ հազարներով կհաշվիմ բռնած գերիս։* (Ծափեր և բացականչություններ) *Սպանվածները եռապատիկ են, և անթիվ փախստականները, որոնք խելագարի պես իրար խեղդելով Եփրատը անցան, որ փախչին հասնին Պարսկաստան, իրենց ղրկող սուլթանին սուրիս բարևը տանին։* (Աղմուկ ու ծիծաղ): *Իսկ ինչ կվերաբերի բերած ավարիս, դեռ գալու է օրերով, շաբաթներով, դրամատներուն մյուս ծայրը, քեսունցինե՛ր, հազիվ ամիսե մի տեղ հասնի։* (Ծափ, ուրախություն, պոռչտուք) *Գո՛ղ, հա՜, անունս դրեր են գող։ Լա՛վ, թող ըլլամ գո՛ղ։ Մինչև գող չըլլաս, մինչև չի հափշտակես, մինչև չքրքես ու չի հավաքես, չի կազմվիր այս ուժը, որուն հենած ահա՜ այսօր չարքեր եմ*

մեր բոլորի ահեղ թշնամին, մեր արյունխում, մեր անհավատ թշնամին։ Իմ գողությո՛ւնս է, որ այսօր ազատեր է ձեզի, իմ գողությո՛ւնս է, որ կտոնեք ու կծափեք դուք հիմա, իմ գողությանս կպարտի այս լեռները ապավինած ամբողջ քրիստոնեությունն ու հայությունը իր կյանքն ու գոյությունը։ Հարստությունները գողությամբ կդիզվին, պետությունները գողությամբ կկազմվին, և վանք ու մատուռներն անգամ գողությամբ կշինվին։ (Թեքև մը դառնալով իր եռնի խումբին) Լևո՛ն իշխան, առա՛ջ եկուր։ Կհայտնե՛ս մեր այս ընդհանուր հաջողության համար իմ անչափ ուրախությունս Թորոս իշխանին, կհայտնե՛ս խորին շնորհակալությունս իր ուղարկած օգնական գնդին համար. թվով փոքր էր, իրա՛վ է, բայց քա՛ջ կռվեցավ։ Ավարի իր բաժինը և իմ անձնական նվերներս կհանձնե քեզի Ապիրատ իշխանը։ Ըսե՛ Թորոս իշխանին՝ երկյուղ չունի՛ հայությունը այս սարերուն մեջ, քանի մենք՝ ես ու ան՝ կեցած ենք կռնակ կռնակի. ան իր զենքն ու երեսը դարձուցած հույնին ու Իկոնիային, ես իմ երեսս ու բանակներս դարձուցած Պարսկաստանի սելճուկներուն և պոչ խաղցնող լատին իշխաններուն։ Այսպե՛ս ըսե և տո՛ւր իրեն սիրուս ողջույնները։ Երթաս բարով։

Լևոն իշխանը, որ քաջ երիտասարդ մըն է, կծռի, կհամբուրե իշխանին ձեռքը ու կմեկնի:

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Փնտռելով իր եռնը) Ապիրա՛տ իշխան, ո՞ւր ես։ Գնա՛ եռնեն. կկերցնե՛ս, կխմցնե՛ս, կլեցնես բոլոր քսակները բերներերան, այնքան, որ ձիերը ծանրության տակ չոքին. կպատվես այնպե՛ս, ինչպես վայել է պատվել մեր թանկագին ազգակիցն ու դաշնակիցը. և ճամփու կդնես։ (Բազմության) Դե՜, դո՛ւք ալ ցրվեցեք։ Երեք օր ուրախություն է բերդիս մեջ։ Մի՛ վախնաք, ամեն մեկուդ բաժին մը կհասնի ավարեն. Պարսկաստանեն ամեն բան մեկիկ-մեկիկ ընտրեր են ու բերեր են մարդիկը հատո՛ւկ ձեզի համար. միայն թե չմոռնա՛ք բերողներու անհավատ հոգիին գոնե ողորմիս մը տալու։

Ընդհանուր ճռճռոց, աղմուկ, և այրերը կսկսին ցրվիլ:

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— (Ինքը մինակ մոտենալով կանանց խումբին) Ողջույննե՛րս տիկիններուն։ Այս պատմությունը ամիսե մը ավելի տևեց։ Երևի անհանգի՛ստ էիք քիչիկ մը։

ՍՈՖԻԱ ԻՇԽԱՆՈՒՀԻ— Դե՛, իհարկե՛, իշխա՛ն-սեբաստոս, պատերազմ է, վտանգով լի, ու թշնամին ալ անթիվ։

ԱՆՆԱ ԻՇԽԱՆՈՒՀԻ— Ո՛չ, իշխա՛ն, անհանգիստ չէինք մենք։ Երբ մեր գնդերուն դո՛ւն կառաջնորդես՝ հոս ո՛չ մեկ կին պատճառ չունի անհանգիստ ըլլալու։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Շնորհակա՛լ եմ, Աննա՛ իշխանուհի, քու կարծիքիդ համար։ Եվ գիտե՞ս, նորեն քու խոսքդ ելավ։

ԱՆՆԱ ԻՇԽԱՆՈՒՀԻ— Չգիտեմ՝ իշխանը ի՞նչը կակնարկե։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Կհիշե՞ս. ըսի՛ր ինծի, որ թշնամին Բերդուսեն առդին անցնիլ չի կրնար։ Ուղի՛ղ Բերդուսի քարերուն տակն էր, որ կերան առաջին ջղմեցնող ապտակը։

ԱՆՆԱ ԻՇԽԱՆՈՒՀԻ— Ուրա՛խ եմ, իշխա՛ն։

ՔԵՍՈՒՆԻ ԻՇԽԱՆԸ— Եվ ե՛ս, իշխանուհի՛։ (Մյուս կանանց) Դե՛, շտապեցե՛ք դուք ալ ձեր տները։ Տանջված են ձեր մարդիկը այսքան շաբաթներու չարչարանքեն, և կարոտ ունին ձեր թևերու նվիրելիք լվացումին ու խնամքին և գգվանքին, գալարանքին։ Անցե՛ք։

Կանայք կքչքչան կե՛ս-ամաչած, կե՛ս-ծիծաղով ու ցրվելով: Իշխանը ձախեն կելլե դուրս, իր շքախումբն ալ իր եռնեն:

## 2

Կմնա Մեծ իշխանուհին իր փոքրաթիվ խմբով:

ՍՈՖԻԱ— (Հազիվ զսպելով կատաղությունը) Իշխանուհի՛ Աննա, ես քանի՞ անգամ ըսեր եմ քեզի, որ կոտրած շերեփի պես, ամեն խոսքի մեջ չի մտնես, ամենքի խոսքին մեջ չիյնաս։

ԱՆՆԱ— Կարծեմ, Մե՛ծ իշխանուհի, քեզի ոչինչ չըսի՛ ես։

ՍՈՖԻԱ— Հազա՛ր անգամ ըսեր եմ քեզի՝ պատասխանե՛ երբ քեզի հարց տան։ Եվ ընդհանրապես, երբ ես ներկա եմ՝ դուն շատ խոսելու պետք չունիս։ Անվայե՛լ բան է։ Եվ մանավա՛նդ Մեծ իշխանի հետ։

ԱՆՆԱ— Քեզի հետ, Մեծ իշխանուհի՛, կարգադրե՛ ինչպես կուզես։ Կուզես՝ ամենևի՛ն չխոսիմ։ Բայց ուրիշներու հետ, Մե՛ծ իշխանուհի, լեզվիս տերը ես եմ։ Եվ մանավանդ Մեծ իշխանի հետ։

ՍՈՖԻԱ— Սվո՛ր լեզո՛ւն նայեցեք, ավելի երկար մազերուն հյուսքեն։ Բայց ալ չափը անցնիլ սկսար։ Ես մինչև հիմա ներեր եմ քեզի, աչք եմ գոցեր, ըսեր եմ՝ տգետ է, անկիրթ է, անվարժ ու դժբախտ։ Բայց դուն ալ պետք է գնահատել գիտնաս իմ բարությունս։ Եթե եկած ես ինծի ծառայելու՝ եղի՛ր ինչպես որ մեծ տիկնոջ մը ծառայողին կվայլե։ Թե չէ՝ գիտցի՛ր, կնետեմ նորեն քեզի փողոցը, ուրկե քեզի բերեր են։

ԱՆՆԱ— Մի՛ տար սպառնալիքներ, որ գործադրել չես կրնար։ Ինքդ ծիծաղելի կդառնաս, չէ՞։ (Դուրս աչեն):

## 3

ՍՈՖԻԱ— (Զայրույթեն ու ապշումեն խոսելու անկարող, կատաղի աչքերով կնայի ետևեն) Ա՜...

ԻՐԻՆԱ— Ուշ մի՛ դարձներ, Մե՛ծ իշխանուհի, ուշ մի՛ դարձներ։ Կտեսնես, որ երես է առեր։

ՍՈՖԻԱ— Իհարկե՛, հանցանքը անորը չէ, հանցանքը Մեծ իշխանինն է, որ երես կուտա։ Այսքան բազմության առաջ բառ մը անգամ չի պատասխանեց ինծի. ամբողջ ամիս մըն է տունը չէ եղած և հաղթանակե կուգա։ Միայն «Աննա՜ իշխանուհի»։ Ինչպե՞ս լռեմ, ինչպե՞ս ուշ չի դարձնեմ, երբ ամբողջ բերդը ուշ դարձուց արդեն։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ —Ա՜յ, իմ սիրելի՛ քեռաղջիկս, հանցանքը անոնցը չէ. հանցանքը հոն է, որ ես ու դուն շատ գեշ նշան բռնող ենք։

ՍՈՖԻԱ— Դո՞ւն ինչ կըսես։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Արձակած նետդ չի դիպավ։ Ա՜յ, այն կինը զարկավ ճիշտ մեջտեղը։ Ժամանակի՛ն ու իր տեղի՛ն։ Ա՜, մե՜ծ արվեստ է նշան բռնելը, մի՜շտ։ Խոսքով զարնելը ամենեն առաջ, որ դժբախտաբար մեր ընտանիքին մեջը չկա։ Դուն ալ, ես ալ, ծուռ կզարնենք։ Մենք, սիրելի՛ս, վրիպակնե՛ր ենք, վրիպածներ...

ՍՈՖԻԱ— Է՜, վե՛րջ տուր հիմար խոսքերուդ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Մե՛ծ սիրով մինչև անգամ այդ սիրուն խորհուրդը կուտամ նույնիսկ քեզի։ Որովհետև մինչև հիմա ինչ որ ըսիր, ճիշտն ան է, ինչ որ պետք չէ ըսեիր։ Պետք է ըսեիր ուրիշ բաներ, որ դուն չըսիր։

ՍՈՖԻԱ— Ցույց կուտամ, ցույց կուտամ ես իրեն ըսելն ու չըսելը։ Ո՛չ, ալ չեմ թողներ։ Մինչև հիմա լռեցի, համբերեցի. բայց ամեն բան սահման ունի։ Կշպրտե՜մ ես անիկա այս պատերեն դուրս։ Կտեսնե՛, կտեսնե՛... (Դուրս):

## 4

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Իրինա՛, սև ամպերը կուտակվիլ սկսան. վախնամ՝ իրա՛վ որ, շուտով փոթորիկը պայթի։

ԻՐԻՆԱ— Ես քեզի չէի՞ ըսեր։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Լավ չէ՛, լավ չէ՛, քամիները գեշ կփչեն։

ԻՐԻՆԱ— Շա՛տ գեշ. մեզի տեղահան պիտի ընեն. արմատե՛ն։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Չէ՛, այդ ծայրահեղության չերթանք։ Բայց լաց, աղմուկ, սպառնալիք, այո՛։ Այսինքն՝ կարկտախառն անձրև։



ԻՐԻՆԱ— Արմատախի՛լ, արմատախի՛լ, կըսեմ քեզի։ Ես կճանչնամ այդ քու իշխանդ։ Ան որ իր զավակը ոչնչացուց այդ Աննայի սիրուն, իշխանուհի՞ս պիտի խնայե, թե՞ ինծի ու քեզի։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Գիտեմ այդ մասին քիրիա Իրինայի խարաթափանց կարծիքը, ուր կանաչ-աչվի բամբասանքը թևատարած կսավառնի։

ԻՐԻՆԱ— Ի՞նչ բամբասանք։ Երբ հայր ու տղա միևնույն կնկա ետևեն են, տղան պետք է վերնա մեջտեղեն, որ բացվի հորը ճամփան։ Ի՞նչ կա հոս չի հասկնալու։ Խե՜ղճ Սեպուհ իշխանը։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Տրամաբանությունդ ճի՛շտ է։ Կրնամ բերել և ուրիշ նման օրինակ մը։ Երբ երկու կին ինկած են միևնույն իշխանին ետևեն, հինը պետք է քաշվի, որ տեղը տա նորին։

ԻՐԻՆԱ— Չհասկցա՛ ըսածիդ կապը։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Ա՜խ, անպատճառ կա՞պը կուզես։ Կապը ան է, որ սերը կկապե լեզուն, իսկ նախանձը լեզվին կապը կարձըկե։

ԻՐԻՆԱ— Նախա՞նձ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Իրինա՛, եկուր խոստովանե՛, և թողություն տամ քեզի։ Դուն շա՛տ կուզեիր գողնալ իմ սիրելի քեռաղջկանս ամենամասնավոր իրավունքները, բայց այդ Աննան խանգարեց քեզի։ Գողը գողեն գողացավ, Աստված տեսավ՝ զարմացավ։

ԻՐԻՆԱ— Տիա՛ր Անդրոնիկոս, կատակնե՛ր կան, որ կատակելն անգամ վայելուչ չէ։ (Արագ կհեռանա):

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Կամա՛ց, կամա՛ց, այդպես արագ ես չեմ կրնար քալել։ Եթե կկարծես՝ փախչիլը հերքումներու շարքեն է, քիչիկ մը կըսխալիս։ (Դուրս անոր ետևեն):

## 5

Վայրկյան մը տեսարանը պարապ է:

Ձախեն Ատոմ իշխանը, աջեն Աննա իշխանուհին միաժամանակ կմտնեն ու իրար դեմ կշտապեն:

Ծառին տակը կկենան իրար դեմ ակնթարթ մը լուռ, աչք-աչքի:

ԱՆՆԱ— (Ձեռքի ծաղկած ճյուղը անոր տալով) Կվայլե հաղթանակեն եկող քաջին։ Բայց ավելի լավ է, որ վերջացավ։ Ի՜նչ սարսափելի ամիս էր, հանգիստ քուն չէ իջեր աչքիս։ Աչքերս կկպցնեմ թե չէ՝ ահա՜ իսկույն կռիվ է. կա՞մ կզարնես, կա՛մ կզարնվիս, կա՛մ ինկած ես վիրավոր թաց ու խոպան դաշտին մեջ, շուրջդ անմարդ ձիերը կվազվզեն երա-

սանակներն ու ասպանդակները օդին. և ես խելագարի պես աչքերս կըբանամ։

ԱՍՈՄ— Ուրեմն քիչիկ մը հիշե՛ր ես ինծի։ Իսկ ե՞ս, ի՞նչ կկարծես, բնավ հիշե՞ր եմ քեզի։

ԱՆՆԱ— Ա՜խ, արշավի ժամանակ, այդպես կռվի մեջ, ո՞վ կմտածե կնոջ մը մասին։

ԱՍՈՄ— Կռիվ թե հանգիստ, արշավ թե դադար, դո՛ւն ես, դո՛ւն, միայն դո՛ւն աչքերուս դեմը։ Ինչ որ ըսեմ՝ քեզի կըսեմ, ինչ որ լսեմ՝ քեզի կլսեմ։ Եվ հոգիիս ընդարձակ կամարներուն տակ անդադար քու անունդ է, որ կհնչե, Աննա՜։

ԱՆՆԱ— (Գլուխը կախելով) Լռե՛։

ԱՍՈՄ— Բարձրացո՛ւր այդ անուշ դեմքդ, նորե՛ն նայե ինծի և ըսե՛, ըսե՛, վերջապես, կսիրե՛ս ինծի, չէ՞, կսիրե՛ս ինծի։

ԱՆՆԱ— (Աչքերը խորը սիրով հառած տղու աչքերուն՝ բացաաբար կշարժե գլուխը և առանց որևէ պչրանքի, պարզ ու տխուր) Չէ՛, չէ՛։

ԱՍՈՄ— Այո՛, այո՛, այո՛։ Եվ շուտով ի՛մս պիտի ըլլաս. կի՛նս պիտի ըլլաս, պսակո՛վ օրհնած կինս պիտի ըլլաս։

ԱՆՆԱ— Չէ՛, չէ՛. երբե՛ք։

ԱՍՈՄ— Հապա աչքե՞րդ։

ԱՆՆԱ— Աչքե՜րս. ի՞նչ։

ԱՍՈՄ— Նայե՛, նայե՛, ինչպե՜ս կխոսին։ Տե՛ս, ինչպես հստա՛կ կխոսին։

ԱՆՆԱ— (Ժպտուն) Եվ ի՞նչ կըսեն։

ԱՍՈՄ— Կըսեն, որ ինծի կսիրե՛ս, որ շա՛տ կսիրես, որ շատ-շատ կսիրես։

ԱՆՆԱ— Մի՛ հավտար աչքերուս ըսածին, հավտա՛ շրթունքներուս խոսածին։ Եվ ի՞նչ ընեմ, Աստվա՛ծ իմ, որ աչքերս այդպես չխոսին։ Կուզե՞ս, հանե՛մ։ Ճշմարիտ կըսեմ՝ կհանեմ։

ԱՍՈՄ— Կհանես ու կյանքիս արևը կխավարի։ Արդեն առաջին օրեն քու այդ խոսուն աչքերդ են եղեր իմ միակ բարեկամս, իմ դաշնակիցս, իսկ քու այդ միշտ լուռ շրթունքներդ՝ իմ թշնամիս։ Բայց, տե՛ս, կռվեն է, որ կուզամ, և կուգամ հաղթած։ Հույսով ու վստահությամբ լիքն է միշտ հաղթողի կուրծքը. կհաղթե՛մ, իշխանուհի Աննա՛, շուտով շրթունքներդ ալ կհաղթեմ։

ԱՆՆԱ— Ո՛չ, իմ իշխա՛նս, ո՛չ։ Ըսի՛ քեզի, անկարելի՛ է։

ԱՍՈՄ— Սակայն ինչո՞ւ։ Ի՞նչն է արգելքը։ Պիտի գիտնա՞մ վերջապես։



ԱՆՆԱ— Չգիտե՛մ։ Խոսի՛նք ուրիշ բանի։

ԱՍՈՄ— Ա՜խ, տանջեցի՛ր դուն ինծի։

ԱՆՆԱ— Իրավո՛ւնք ունիս։ Թո՛ղ ինծի, թո՛ղ ինծի, մոռցի՛ր ինծի։ Եվ շատ իզուր եկա հիմա քու դեմը։ Բայց այն տեսակ վայրկյան է, մարդ ինքն ալ չգիտե՝ ինչպես։ Զգե՛ հեռանամ, ձգե՛ հեռանամ։ Մի՛ գար, մի՛ գար ինծի հետ, մի՛ գար ետևես. տե՛ս, արդեն մարդիկ ալ կուգան։

ԱՍՈՄ— (Աղաչանքով) Իշխանուհի Աննա՜...

ԱՆՆԱ— (Նույնպես խորին խնդիրքով) Մոռցի՛ր, իշխա՛ն։

Իշխանուհին արագ կհեռանա. իշխան Ասոմ կմնա երազկոտ, քիչ մը հենված ծառին, ծաղկի ճյուղը բռնած դեմքին։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՓՈՔՐԻԿ ՔԱՐԱԿՈՒՍԻ ԲԱԿ

Երեք կողմեն սյունաշար վրան ծածկով։ Ճակտի ծածկին խորքը կերևա բնակարանին դուռը։ Սալերը, սյուները, ինչպես և ծածկին քիվը ծածկված է խոտով ու մամուռով։ Սյուներուն զուգարված է առատ բաղեղ, մանավանդ ճակատը. քիչ մը աջ, այդ թավ կանաչին տակ դրված է պարզ թախտ մը, վրան գորգ։

Բակին մեջտեղը փոքրիկ ու բարձր ավազան, որուն շրթունքներեն ջուրը տակի ավելի լայն ավազանը կթափի։

Բակի մուտքը ձախի սյուներուն մեջեն։

### 1

Խոսելով ներս կմտնեն պաշտոնյա մը և բարապանը։ Պաշտոնյան՝ հասարակ մարդ մը մեծավոր խաղալու ձևերով։ Բարապանը՝ ահագին ճերմակ բեղերով բարձրահասակ ծերունի մը, կքած. խոշոր բանալիներու ահագին տրցակ մը ունի ձեռքը։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Կտրե՛լ կուտաս խոտերը, կարգին սրբել կուտաս սալերը. հայելիի պես պիտի փայլի, տե՛ս։ Շատրվանն ալ շտկե՛լ կուտաս, որ ջուրը զարնե։ Վարեն կբերես քանի մը թաղար ծաղիկ. մեկը կդնես հո՛ս, նայե՛. երկուքը հո՛ն։ Կբերե՛ս դուրսի երկու հատ լիմոնի ծառերը. և կկառարե՛ս, ինչ որ իշխանուհին կհրամայե։

ԲԱՐԱՊԱՆԸ— Ըսել է՝ ալ միշտ հո՞ս է բնակելու իշխանուհին։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Հրամա՛նք ես։

ԲԱՐԱՊԱՆԸ— Սա հիմա ինչպե՞ս հասկնանք։ Տիկնոջ մեռնելեն ետքը բերդի այս բակը չէր բացված։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Իսկ հիմա կտեսնես, որ բացվեցավ։ Շատ բան չկա հասկնալու։

ԲԱՐԱՊԱՆԸ— Հա՛, բայց ի՞նչ մտքով հասկնանք։

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ինչ մտքով որ կուզես. երկա՛ր մտքով, կա՛րճ մտքով։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ըսել կուզեմ՝ հապա հոռոմնե՞րը։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Հոռոմներո՞ւն հետ ինչ գործ ունիս։ Հոռոմները իրենց համար, իշխանուհին իրեն համար։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Հա՞։ Ըսել է՝ հոռոմ կնկան բանը գեշ է։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Եթե այդքան կմեղքնաս, կուզես՝ մեկ երկու թաղար ծաղիկ ալ անոնց բակը տար։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Գրողին ծաղիկը դնեմ ես անոնց բակը։ Շատ աչքիս լույսն են։ Հա՛յ, ես անոնց սուտ հավատը ու ծամռիկ լեզուն...*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Աղե՛կ, աղե՛կ, հերի՛ք է. մի՛ բանար նորեն հայհոյանքիդ տոպրակը։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Հիմա նե՞րսն է իշխանուհին։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Քիչ մը կամաց խոսե՛։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Փոխադրվեր է, հա՞։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Հա՛, ըսինք։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ընտի՛կ կնիկ է։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Չըլլա՞ր որ քու ծանրակշիռ կարծիքդ պահես քեզի։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ինչո՞ւ։ Ա՜յ, կերևա, որ մեր իշխանը համակարծիք է ինծի։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Իհարկե՛, ինչպես մի՛շտ։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ո՛չ միշտ։ Այդ հոռոմ կնիկը, որ բերավ, ըսի՝ վա՜յ, բաներնիս ծուռ բուսավ։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ատ որո՞ւն ըսիր։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ոչ մեկուն։ Ըսի ինքս իմ մեջս։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Է՛, ինչե՞ն գիտես, որ իշխանն ալ ինքն իր մեջը միևնույն բանը չըսավ։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Այդպե՞ս է բանը։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ես ի՞նչ գիտեմ. ո՞րտեղեն կրնամ գիտնալ. խոսքի համար է ըսածս։ Եվ քեզի՞ ինչ։ Քեզի կըսեն այս բաժանմունքը բա՛ց՝ բա՛ց։ Կհրամայեն՝ պատրա՛ստ եղիր իշխանուհիին հրամանին՝ պատրա՛ստ եղիր։ Քեզի կըսեն՝ կարգի՛ բեր այս բակը, կարգի՛ բեր։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Աղե՛կ, հապա այն մյո՞ւսը։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Նորե՜ն։ Փա՜ռք քեզի, Աստված։ Այն մյուսը արդեն կարգի է. կարգի բերելու բան չկա։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Բայց մեր եկեղեցին թույլ չի տար երկու կնիկ։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ջա՛յնդ։ Ինչպե՞ս թե երկու կնիկ։ Մենք կխոսինք բակերու մասին։ Խելքդ գլո՛ւխդ հավաքե և անցի՛ր իսկույն գործիդ*



*գլուխը, եթե չես ուզեր, որ փորձանքը անցնի քու գլուխդ։ Գիտե՞ս, չէ՞, իշխանը չի սիրեր ո՛չ պարապ մարդիկը, ո՛չ պարապ խոսքեր։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Աղե՛կ, բայց երկո՛ւ... երկու բակ մեկ անգամե՞ն։ Ինծի որ հարցնես՝ այս մեկը, որ բացինք, այն մյուսը կգոցեինք։*

## 2

Կմտնե Քեսունի իշխանը։ Ծառայողները բարևի կ'լնան։

*ԻՇԽԱՆԸ— Հը՞, ի՞նչ բանի եք հոս։*

*ՊԱՇՏՈՆՅԱՆ— Բակի մասին, իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, կկարգադրես ետքը. հիմա անցե՛ք։* (Իր առջևեն անցնող բարապանին, ժպիտով) *Հապա դուն չե՞ս ամչնար քու այդ ահագին ճերմակ բեղերեդ, որ մեջքդ արդեն ծռեր ես։ Մեջք ըսվածը չի պիտի ծռվի երբե՛ք։*

*ՊԱՐԱՊԱՆԸ— Տարիները, իշխա՛ն, հեծեր են տարիները։*

*ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ ես թույլ տվեր։ Դուն ի՛նքդ հեծիր տարիներուդ վրան։ Կամ գուցե բանալիներուդ այս տրցակը արդեն ծանր կուգա ձեռքերուդ։ Քանի՞ տարի է, Հովա՛կ, որ այդ կապուկը քու ձեռքդ է։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Ի՞նչ գիտնամ, իշխա՛ն. երեսուն տարին շատոնց անցած պիտի ըլլա։*

*ԻՇԽԱՆԸ— Ծախե ինծի այդ բանալիներդ։ Ի՞նչ կուզես, որ վճարեմ քու ծերությանդ այդ տրցակին փոխարեն։*

*ԲԱՐԱՊԱՆԸ—* (Վախցած) *Ինչո՞վ թերացա, իշխա՛ն, իմ պաշտոնիս մեջ։ Ինչո՞ւ զրկել կուզես ինծի իմ բանալիներես։ Ալ անկե ետքը ինչո՞վ ապրիմ, ինչո՞ւ ապրիմ։ Իշխա՛ն, կկոտրես մեջքս, ո՛չ թե կծռես։*

*ԻՇԽԱՆԸ—* (Սրտանց ու ծեծելով անոր ուսը) *Հանգի՛ստ եղիր, ո՞վ կհամարձակի քու բանալիներուդ ձեռք տալու։ Այդ բանալիները ես կառնեմ քու ձեռքեդ դագաղիդ մեջը։*

*ԲԱՐԱՊԱՆԸ— Աստված երկար կյա՜նք տա իմ իշխանիս։*

*ԻՇԽԱՆԸ— Պզտիկ տղադ վերցո՛ւր քեզի օգնական, որ ստացվի երկու ոտքիկ. իսկ մեծդ ես նշանակեր եմ իր գնդին պետ։*

*ԲԱՐԱՊԱՆԸ—* (Սաստիկ հուզված) *Աստված առողջություն տա քեզի, իշխա՛ն, հաջողություն ու բախտ։* (Իր բնակարանի դռնեն հանգիստ դուրս եկող իշխանուհի Աննային) *Սա ի՜նչ բախտավոր բակ է. ի՜նչ լավ է, որ բացինք։ Ի՜նչ թեթև ոտք ունիս, իշխանուհի՛։*

*ԻՇԽԱՆԸ—* (Կ'ելլե դեպի Աննան)։

*ԱՆՆԱ— Ներսեն լսեցի ձայնդ։*

Պաշտոնյան ու Ծերունին հեռացած են։

## 3

ԻՇԽԱՆԸ—Երկու օր է այնպե՛ս զբաղված եմ, գլուխս քերելու ժամանակ չկա։ Մինչև հիմա չի կրցա գալ քու նոր բնակարանդ շնորհավորելու։ Գո՞հ ես։

ԱՆՆԱ— Շնորհակա՛լ եմ, իշխա՛ն։ Կտեղավորվիմ։ Պատվե՛ հարկս, եկո՛ւր նստե։

ԻՇԽԱՆԸ— (Նստելով թախտին) Նստի՛մ, եթե միայն թողնեն. ուր որ է՝ հիմա մեկը կուգա ետևես։

ԱՆՆԱ— Անտիոքի դեսպանը գնա՞ց։

ԻՇԽԱՆԸ— Կմեկնի վաղը. վերջացուցինք։ Այնպես երկաթե օղակ մըն եմ անցուցեր քու Թորոսիդ վիզը, որ ան այլևս գլուխը մեջեն չի հաներ։

ԱՆՆԱ— Ես ալ այս երկու օրը հաճախ կհիշեմ քու մեռած տղադ։

ԻՇԽԱՆԸ— Քեզի ըսեր եմ, որ անոր անունը չի տաս ինծի։

ԱՆՆԱ— Կնեղվի՞ս։ Կամ գուցե...

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ։

ԱՆՆԱ— Ես ի՞նչ գիտնամ, երեխադ է վերջապես. կարելի է կզղջաս պատահածին վրա։

ԻՇԽԱՆԸ— Անցածի մասին խորհիլը անմիտ բան է. ինչ որ անցավ՝ անցավ։ Հիմա անիկա ինծի համար պարզապես մութ ու սև պարապ լուսամուտ մըն է, որուն մեջեն ավելի ևս մութ ու մռայլ պարապ մը կնայի ինծի։ Դատարկությունները ես չե՛մ սիրեր։ Զխոսի՛նք։ Ինծի նստեցուցիր, իսկ ինքդ չես նստիր։ Եկո՛ւր։

ԱՆՆԱ— Սիրո՛վ։ (Կնստի բովը):

ԻՇԽԱՆԸ— (Կամաց մը կբռնե կնոջ ձեռքը) Ոչինչ չունի՞ս ինծի ըսելու։

ԱՆՆԱ— (Ժպիտով) Բայց նախ կխնդրեմ՝ բաց թողնես ձեռքս։

ԻՇԽԱՆԸ— Զարմանալի բան է քու այդ համառ դիմադրությունդ, կխարազանե ինծի։ Ըսենք՝ ընդհանրապես ուրիշ խմորե ես դուն. քու մեջդ բան մը կա, շարժումներուդ, նայվածքիդ. ինչպես ըսեմ...

ԱՆՆԱ— Անախո՞րժ...

ԻՇԽԱՆԸ— Ա՜, ո՜չ. բայց կկճե ու քոր կուտա. և՛ հաճույք է, և՛ ցավ։ Ըհը՛, ա՛ռ քու ձեռքդ, և ըսե՛, տեսնեմ, ինչ պիտի ըսես։

ԱՆՆԱ— Նախ, իշխա՛ն, այլևս իհարկե մտքեդ անգամ չես անցներ կրկնել ինծի հետ նորեն բանի, ինչ որ անգամ մը կատարեր ես։ Գիտցի՛ր, եթե փորձել ուզես, կնետեմ ինծի ճիշտ այն սև ու մութ լուսամուտեն ցած, ուրկե քու զավակդ նետեցիր վար։



ԻՇԽԱՆԸ— Սպառնալիքները ավելորդ են։ Բայց ես կուզեմ, որ դուն իմս ըլլաս ամբողջովին։

ԱՆՆԱ— Եթե իրավ է ըսածդ, ատոր համար, պետք է գիտնաս, միայն մե՛կ ճամփա մը կա։

ԻՇԽԱՆԸ— (Ժպտուն) Կենթադրեմ։ Գիտեի, որ ծայրը հոս է գալու։

ԱՆՆԱ— Ուրախ եմ, որ կենթադրես։ Դուն խլեցիր ինծմե իշխանությունս, բերդս, անունս։ Փոխարենը կուզեմ բաժնեմ քեզի հետ քո՛ւ իշխանությունդ, քո՛ւ դիրքդ, քո՛ւ անունդ։

ԻՇԽԱՆԸ— Գիտեմ, որ հպարտ ես ու իշխելը հասկցող։

ԱՆՆԱ— Ուրեմն գիտե՛ս և ընելիքդ։

ԻՇԽԱՆԸ— (Խնդալով կբռնե նորեն Աննայի ձեռքը, որ չի դիմադրեր) Ի՜նչ ճարպիկն ես։ Եթե այր ըլլայիր՝ կդառնայիր առաջնակարգ ռազմագետ։ Հրաշալի կշռել գիտես թե՛ քու և թե դեմի՛դ ուժերը, և շահագործել հարմար վայրկյանը։ Իսկույն զգացիր, որ թուլցած է թշնամին ու պետք է հարձակվիլ։

ԱՆՆԱ— Ո՛չ, իշխա՛ն. կին եմ պարզապես։ (Հանկարծ ոտքի ելլելով) Թո՛ղ ձեռքս. տղա՛դ։

## 4

Վայրկյան մը սպասում. կմտնե Ատոմ:

ԱՏՈՄ— (Շատ զուսպ ու չոր) Հավաքված են արդեն, կսպասեն քեզի։

ԻՇԽԱՆԸ— Հիմարնե՜րը. այսօր կրնային քիչ մը ուշանալ, այս անգամ չէի բարկանար։ (Կամաց մը բարձրացնելով տղուն ծնոտը) Դո՞ւն ինչու ես ունքերդ կիտեր։ Սրվոր նայեցեք. կովե՞ր ես, ի՞նչ է։ Իշխանուհի Աննա, պահե՛ մոտդ քիչիկ մը. գուցե քշես իժանները։

ԱՆՆԱ— Եթե Ատոմ իշխանը ընե ինծի այդ պատիվը։

ԱՏՈՄ— (Չոր) Կներե իշխանուհին. պետք է երթամ հավաքույթին։

ԻՇԽԱՆԸ— Ես կազատեմ քեզի այդ պարտավորութենեն. մնացի՛ր։

ԱՏՈՄ— Ո՛չ։ Շնորհակա՛լ եմ։

ԻՇԽԱՆԸ— Կկարծես՝ առանց քեզի վճիռ հանել չե՞նք կրնար։

ԱՏՈՄ— Բայց... պատճառ չկա մնալու...

ԻՇԽԱՆԸ— Ե՛ս կհրամայեմ քեզի։

ԱՏՈՄ— (Զինվորականի դիրքով) Կլսե՛մ։

ԻՇԽԱՆԸ— (Աննային) Ահա՜ քեզի և մեկ ուրիշ ռազմագետ։ Կատակ չեմ ըներ, իշխանուհի՛ Աննա, այս շան լակոտը անցնի պիտի ին-

ծի։ Տեսնելու ես կուզի ժամանակ․ բան մը որ միտքը դրավ՝ վերջացավ։ Հիմա կմնա, որ սովրի քիչիկ մըն ալ ինքզինքը զսպելը․ ամենեն դժվարը և ամենեն կարևորը հաղթելու համար։ Ատ ալ կուգա տարիքի հետ։ Դե՜, ես գնացի։

## 5

*ԱՏՈՄ— Տեսա՛։ Ես տեսա։ Ձեռքդ ձեռքին մեջ։ Ես հիմա գիտեմ։ Կհասկնամ։ Հիմա կպարզվի ինծի ամեն բան։ Թա՛նձր, թանձր ամպ մըն էր, որ աչքերուս առջևեն քաշվեցավ։ Եվ ես հիմա կտեսնեմ։ Հիմա այլևս ամեն բան կտեսնեմ...* (Կեցած է սարսափահար և աչքերը հառած)։

*ԱՆՆԱ—* (Նայվածքը գետին) *Այո՛․ ես քու հորդ սիրուհին եմ։*

*ԱՏՈՄ—* (Կցնցվի) *Այդպե՞ս... Եվ հիմա ինծի պահեցիր, որ վրաս խնդաս։ Ես ի՛նչ եմ որ քեզի համար․ իհարկե՛, ես ի՞նչ եմ որ քեզի համար։* (Հանկարծ) *Հա՛յրս, հա՛յրս, հարազատ հա՛յրս։ Աստվա՛ծ իմ, ես կխելագարիմ։* (Քիչ մը մտածելեն ետքը) *Ուրեմն... Հայրս։ Իսկ ե՞ս։ Հապա դուն ինչո՞ւ ինծի հետ... Չէ՛, չէ՛, ես քեզի մեղադրել չեմ կրնար։ Ո՛չ, ո՛չ, դուն հանցանք չունիս, դուն մի՛շտ ետ տվիր․ դուն մի՛շտ ետ ես տվեր ինծի։* (Աղաչական, գրեթե լալով) *Բայց ինչո՞ւ չըսիր ինծի, ինչո՞ւ կանուխեն չըսիր ինծի։*

*ԱՆՆԱ— Ի՞նչ ըսեի ես քեզի․ ինչպե՞ս ըսեի ես քեզի։ Գիտեի՝ օր մը իմանաս պիտի․ թողի որ ինքդ իմանաս։ Եվ վերջապես չէ՞ որ՝ ըսեի թե չէ՝ կորսնցնեի՛ պիտի քեզի․ կորսնցնեի՛ պիտի քու այդ խոր, այդ ուժգին, այդ թարմ ու մաքուր սերդ, որ կբխի այդպես հորդ ու առատ քու երիտասարդ բուռն սրտիդ անարատ ակունքներեն․ չէ՞ որ կորսնցնեի պիտի քեզի։*

*ԱՏՈՄ— Ալ ինչի՞դ էր պետք քեզի իմ սերս, երբ սիրտդ ուրիշին ես տվեր։* (Կատաղի) *Հո՞րս... հո՞րս... դո՛ւն ու հա՞յրս։ Ծաղր է, ծա՛ղր է այս բոլորը։ Սա ի՞նչ ողորմելի մարդ եմ ես, ի՞նչ ծիծաղելի երեխա եմ ես։ Ի՞նչ թեթևամիտ երազներ էի շիներ գլխուս մեջ, ի՞նչ բախտավորություն կհյուսեի...* (Խառն հեգնությամբ) *Հա՞, հա՞, հա՞, ատոնք բոլորը սին ու սնոտի մտածմունքներ, ապուշ երեխայի մը մտքին խաղերը։* (Հուսահատ ցավով) *Իշխանուհի Աննա՛ն, իմ իշխանուհի Աննան, իմ անհասնելի իշխանուհի Աննան հորս սիրուհին։*

*ԱՆՆԱ—* (Խիստ) *Ինծի մեղադրելե առաջ, խնդրեմ, հիշե՛, որ ես ազատ մարդ չեմ, որ ես իմ տերս չեմ, որ ես գերի կին մըն եմ, որ ես հորդ ստրուկն եմ։*

*ԱՏՈՄ— Ի՞նչ ըսել կուզես։ Մի՞թե քու կամքը...*



*ԱՆՆԱ— Կա՞մք։ Ո՞վ կհարցնե խորտակված, կողոպտված ու ավարի առնված կնոջ մը կամքը։*

*ԱՏՈՄ—* (Ետ-ետ երթալով) *Քու... քու բառերուդ մեջեն ատելություն կխոսի։*

*ԱՆՆԱ— Հապա ինչը կուզեիր, որ խոսեր։*

*ԱՏՈՄ— Ուրեմն... բռնի՞։*

*ԱՆՆԱ—* (Կատաղի) *Հա՛, հրամմե՛ր ես․ բռնի՛։ Դե՜, հաղթանակե՛, ա՛ռ վրեժդ, ծաղրե՛․ դուն ալ հիմա նետե՛ ինծի քու հեգնությանդ ոտքերուն տակը։ Չէ՞ որ դուն գիտե՛ս, դուն շա՛տ լավ կզգաս, որ միայն քու խոսքդ է, որ արժեք ունի ինծի համար, միայն քու նայվածքդ է, որ կյանք կուտա ինծի, միայն քու այդ խելագար ու անսահման սերդ էր, որ ուժ ու կարողություն կուտար ինծի տոկալու։ Ալ վերջացա՛վ, գիտե՛մ, ալ վերջացա՛վ։ Ալ պատռվա՛ծ է բոլոր հմայքը․ այլևս ես չկա՛մ քեզի համար։ Այս վայրկյանիս ես կորուսի քեզի, կորուսի անդարձ։ Ալ հիմա մինա՛կ եմ, խորտակված ու արհամարհված, ամենուն ոտքին տակը։ Ա՜, ի՞նչ տառապանք է տված ինծի քու հայրդ և ի՞նչ ստորնացում։*

*ԱՏՈՄ— Եվ դուն կատես մեր տունը։*

*ԱՆՆԱ— Այո՛, կատե՛մ քու հայրը։ Բայց տարե՛ր եմ, տարեր եմ ամե՛ն զզվանք, ամե՛ն ստորություն, որ տեսնեմ քեզի, որ մոտիկ ըլլամ քեզի...*

*ԱՏՈՄ—* (Ինքն իրմե ելած) *Ի՞նչ կխոսիս։ Ինչե՞ր կխոսիս, Աննա՛։*

*ԱՆՆԱ— Է՜, շրթունքներս ալ պետք չունին ծածկելու քեզմե։ Ես կսիրե՛մ քեզի։ Խելագա՛ր սիրով, հանցավո՛ր սիրով, հուսահա՛տ սիրով, ես կսիրեմ քեզի։*

Եվ երկուքն ալ լուռ կեցած են դեմ-դեմի։

*ԱՏՈՄ—* (Վճռաբար) *Հայրս ինծի հաշիվ ունի տալու։*

*ԱՆՆԱ—* (Տիրական) *Երբե՛ք․ չհամարձակի՛ս հորդ առջևը բառ մը արտասանելու։ Ինծի, ինծի կխոցես, ինծի կծակես, եթե անոր առջևը բառ մը իյնա շրթունքներեդ իմ ու քու մեջ եղած այն սուրբ, այն խոր, այն լուսեղեն կապի մասին, որ անցավ, անցավ... Կուզես հիմա ալ հորդ ծաղրն ու հեգնությո՞ւնը վայլել տաս ինծի։ Եվ կարծես չե՛ս ճանչնար քու հայրդ․ դուն ի՞նչ ես որ անոր առջևը․ անկե ի՞նչ հաշիվ առնել կրնաս դուն․ և ինչի՞ հաշիվ պիտի ուզես իրմեն։*

*ԱՏՈՄ— Իրա՛վ ես։ Ուրեմն... ուրեմն քու կարծիքովդ հիմա ի՞նչ պետք է ըլլի։*

*ԱՆՆԱ— Ի՞նչ պիտի ըլլի․ ոչի՛նչ։ Դուն երևի շուտով կմոռնա՛ս*

ինծի։ Իսկ ես կապրիմ առայժմ, ինչպես ապրեր եմ մինչև հիմա, մինչև որ... մինչև որ համոզվիմ, որ դուն արդեն մոռցար ինծի։

ԱՏՈՄ— Կզարմանամ քեզի։ Դուն ի՞նչն ես սիրեր իմ մեջս, եթե այդ կարծիքը ունիս իմ մասին։ Ես մոռնա՞մ քեզի, ան ալ հիմա, ես լքե՞մ քեզի այս բոլորը լսելես ետքը։ Ո՛չ, Աննա՛, դուն դեռ չես ճանչցեր ինծի։ Եվ պե՛տք է, որ ճանչնաս։ Այս բոլորը շա՛տ էր. չափեն ավելի շատ մեկ անգամվան համար։ Թող գտնե՛մ ինքզինքս. կգիտնա՛մ ընելիքս։ (Դեպի դուրս):

ԱՆՆԱ— (Խոր ու սրտանց) Իշխա՛ն...

ԱՏՈՄ— (Կենալով) Ի՞նչ կուզես։

ԱՆՆԱ— (Փաղաքշանքով) Ոչի՛նչ, ոչի՛նչ։ Գնա՛, գնա՛։

## 6

Իշխանուհի Աննա երկա՜ր-երկար կնայի հեռացող երիտասարդին ետևեն խորին հուզումով ու տխրությամբ: Կամաց կուգա կնստի թախտին ծայրը՝ աչքերը հառած գետին խոր մտածմունքի մեջ:

Բնակարանի բաց դռնեն կմտնե բակը Պառավը գուլպա գործելով: Անխոս կմոտենա Աննային և կկենա պահ մը անճշմար միշտ իր գուլպան գործելով: Վերջն ալ կխոսի աչքերը անբաժան իր աշխատանքեն:

ՊԱՌԱՎԸ— Ա՜խ, իմ անգի՛ն իշխանուհիս, իմ թանկագի՛ն հոգյակս, իմ թևաթա՛փ աղավնի, ինչպե՜ս սիրտդ կչարչարես, ինչպե՜ս հոգիդ կփորփրես։ Ծանր է, շատ ծանր է այս կարծր լուծը քու այդ փափուկ ուսերուդ։ Չէ՞ որ բնութենեն հեզ է քու հոգիդ և սիրտդ բարի։

ԱՆՆԱ— Եվ դարձա անգութ, դարձա անողոք, և սիրտս չա՜ր, չա՜ր։

ՊԱՌԱՎԸ— Ինչո՞ւ։ Ի՞նչ օգուտ։ Ուրիշները չէ՛, որ կպատժես. պատժեցի՛ր քեզի։

ԱՆՆԱ— Կարելի է՝ իրա՛վ ես։

ՊԱՌԱՎԸ— Հա՛, միայն քեզի՛, հավատա՛ խոսքիս, միայն քեզի՛։ Անոնք այդպես են, այր մարդիկը, կկոխեն կանցնին։ Կնոջ հոգին է, որ գամված կմնա իր կոխած տեղը, և ոտքե-ոտք կանցնի նույն կետին վրա։ Հերի՛ք տանջես քեզի։

ԱՆՆԱ— Հերի՛ք, այո՛, հերի՜ք. եթե միայն կարող ըլլայի։

ՊԱՌԱՎԸ— Ինչո՞ւ չես կարող։ Թո՛ղ, ձե՛ռք քաշե, բա՛վ է ու վերջացավ։ Ի՞նչ ես ստանալու քու այդ համառ ու խելագար տենչանքեն, այդ տանջանքեն։ Ահա՜ մեկը մեռավ, և ուզածիդ պես, իր հո՜րը բազկեն, ի՞նչդ թեթևցավ, ի՞նչդ ավելցավ, բացի մռայլ հուշերեն։



ԱՆՆԱ— (Միշտ աչքերը գետին ու մտածկոտ) Կկարծե՞ս։

ՊԱՌԱՎԸ— Եվ ա՛ս ալ գիտցիր։ Առաջին անգամ դիպվածը բերավ, ուզածդ եղավ. խելոք եղիր ու բավականացի՛ր. երկրորդ անգամ խաղը չի՛ կրկնվիր։

ԱՆՆԱ— Կկարծե՞ս։

ՊԱՌԱՎԸ— Դժվա՛ր է, իշխանուհի՛, դժվար բան է հոգիներու հետ խաղալը, և ահագին մարդիկը ուզածիդ պես դարձնելը։

ԱՆՆԱ— Կկարծե՞ս։ (Հանկարծ շտկվելով) Ա՜, ընդհակառա՛կը, շատ ավելի դյուրին է, քան կերևակայես։ Քեզի կըսեմ՝ խղճուկ բան է մարդ ըսվածը. էրիկ-մարդը՝ ավելի ևս. և անոնց մեջն ալ քաջն ու ազնիվը ամենե՛ն ավելի։ Կարթով ձուկ բռնած ունի՞ս։ Երկու բան է հարկավոր։ Նախ՝ պետք է ճանչնաս ձկան սիրած խայծը, որ անցընես ասեղիդ. երկրորդ ալ՝ գիտնաս համբերել։ Նետես թելը, նստիս հանդարտ, որ չի խրտնին, և սպասես մինչև որ ձուկը ինքը գա ու հա՛փ։ Վերջացա՛վ։ Ասեղը որ խրվեցավ քիմքը, ալ քաշե՛, քաշե՛ այդ երկոտանի ձուկը ասդին, քաշե՛ անդին, ո՛ր կողմ որ կուզես։ Դժվա՜ր. ո՞վ ըսավ քեզի։

ՊԱՌԱՎԸ— Եթե այդպես է, եթե բոլորն ալ կարթերուդ ծայրն են, քաշե՛ նայիմ։ Քաշե՛, վե՛րջ տուր, ինչո՞ւ ես կեցեր։

ԱՆՆԱ— (Նորեն կկախե գլուխը ու կլռե):

ՊԱՌԱՎԸ— Լռեցի՛ր։ Ուժ չունի՞ ձեռքդ, թե՞ վրա [illegible]։ Կմեղքընա՞ս...

ԱՆՆԱ— (Շեշտ նայվածքով կդառնա Պառավին):

ՊԱՌԱՎԸ— Քու նետած կարթեդ ինքդ ես բռնվեր, քու ընտրած խայծըդ քիմքի՛դ է կպեր։ Կըսես դյուրին է։ Ես այս տեսակ որս դեռ չէի տեսեր. ձկնորսը կախված իր նետած թելեն։

ԱՆՆԱ— (Այլայլած ու դանդաղ կելլե տեղի ու կխոսի խեղդված ձայնով) Դո՞ւն ուրկե գիտես։

ՊԱՌԱՎԸ— Կծածկե՛ս ինծմե և կո՛ւյր կկարծես։ Կմոռնաս, որ ծունկերուս վրա ես մեծցեր, և որ հոգիդ թևերուս մեջն է բացվեր։ Ավելի բանա՞մ սրտիդ վարագույրը. հիմա ո՞վ էր հոս իմ գալես առաջ։

ԱՆՆԱ— (Հուսահատ ճիգով) Լռե՛, լռե՛։

ՊԱՌԱՎԸ— Է՜, ի՞նչ օգուտ եղավ, որ մինչև հիմա սեղմեր եմ շրթունքներս։ Ալ չե՛մ կրնար լռել։ Դուն կսիրե՛ս։ Դուն իրա՛վ կսիրես։

ԱՆՆԱ— (Սաստիկ գրգռված) Ո՞վ ըսավ քեզի։ Ո՞վ ըսավ քեզի։ Ո՜չ. ո՛չ, սո՛ւտ է։ Երբե՛ք, երբե՛ք այդ սարսափելին, այդ անկարելին։ Սո՛ւտ է։

ՊԱՌԱՎԸ— Կրակի հետ չե՛ն խաղար։ Եթե ատել կուզես մարդիկը, պետք չէ անոնց մոտենաս։

ԱՆՆԱ— Հեռուեն ինչպե՞ս սեր ներշնչեի, ինչպե՞ս կամքիս կապեի, առանց հոգիներու մոտիկ շփումի։

ՊԱՌԱՎԸ— Դուն ուզեցար կրակ վառել, առանց ինքդ այրվելու է՛, հոգի՛ս, ատոր համար պետք էր շատ ավելի կարծր կայծքար, քան քու հոգնած, տանջված սիրտդ։

ԱՆՆԱ— Ես հանցանք չունիմ. ես հանցանք չունիմ։ Ինքս ալ չգիտեմ՝ սա ինչպես եղավ, այս զգացումը ինչպես մեջս սպրդեցավ։ Առաջ սկսա, կարծես, մեղքնալ. կտրիճ տղա է, ազնիվ, մաքուր, շիտակ։ Եվ կապվեցավ։ Ա՜խ, դուն չգիտես՝ ինչպես խո՜րը, ինչպես անսահմա՜ն, ինչպես աննմա՜ն սեր տվավ ինծի։ Ես չգիտեի, որ կարելի է այդպես հոգի տալ, այդպես պաշտել ու դողալ. ես այդպիսի սեր դեռ չէի տեսած, այդքան ուժեղ հորձանքին դեմ ոտքի մնալ չի կրցա, զարկավ ինծի, քաշեց, տարավ։ Ինծի՛ խաբել ուզեցի, չի նկատել ուզեցի, վրայես թոթվել ուզեցի այդ անկարելին, այդ սարսափելին։ Ես հանցանք չունիմ, Աստվա՛ծ է վկա, ես հանցանք չունիմ։ Ինչո՞ւ ինծի կհանդիմանես։ Չէ՞ որ կկռվիմ, չէ՞ որ կկռվիմ։

ՊԱՌԱՎԸ— Ա՜խ, ի՞նչ հանցանքի մասին կխոսիս։ Միթե ես քեզի կհանդիմանե՞մ։ Եվ մի՞թե լեզուս վրա կերթա։ Բայց ինչպե՞ս լռեմ, ալ չեմ դիմանար այս անլուր տառապանքին դեմ։ Այս բոլորը վե՛ր է քու ուժեն. այս բոլորը վեր է մարդկային ուժեն։ Թո՛ղ. թո՛ղ. ալ բա՛վ է. եղածը բավ է։ Ինչ որ եղեր է, եղեր է անցե... ալ կորսվածը ետ չես դարձներ։ Ինչ իմաստ ունի անվերջ կռիվը ճակատագրի դեմ։ Պետք է հաշտվի՛ս։

ԱՆՆԱ— Բայց խոստո՛ւմս, իմ երդո՛ւմս։

ՊԱՌԱՎԸ— Ահա՝ հո՛դ է քու հանցանքը, քու մե՛ծ, միա՛կ հանցանքը։ Ո՞վ ես դուն, ի՞նչ ես դուն, որ կեցեր ես հանդուգն ու ինքդ տալ, թելադրել կուզես բախտին վճիռը, ինքդ քու ձեռքով հասցնել կուզես արդարության պատիժը։ Մի՛. Աստծու գործն է ատիկա։ Մի՛ հոխորտար ու մի՛ գրգռեր քու դեմ արդարության բարկությունը։ Խոնարհվե՛ ճակատագրիդ առջևը, որ թեթևիս։

ԱՆՆԱ— Ա՜խ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ... Լա՛վ, ըսե, ի՞նչ ընեմ. ըսե՛, ի՞նչ ընեմ։

ՊԱՌԱՎԸ— Այդ կտրիճը քեզի Աստված է ղրկեր, և այդքան սերը Աստված է դրեր անոր կրծքին տակ։ Պետք է վերջանա այս տառապանքը. ամեն բան վերջ մը ունի այս աշխարհիս երեսին։ Եվ վերջապես հանցավո՛ր է դաժան հայրը, ի՞նչ մեղք ունի արդար որդին։

ԱՆՆԱ— Ա՜խ, արդար անարդար հարցնող չեղավ, երբ զավակներս կփողոտեին։

ՊԱՌԱՎԸ— Դուն ալ կորուսիր իր հասուն, անմեղ անդրանիկ որդին։



ԱՆՆԱ— Հա՛. կրտսերը կմնա։

ՊԱՌԱՎԸ— Եվ պիտի մնա։ Ան ընտրված է քեզի երկինքեն, քու զավակներուդ ցավին փոխարեն։ Այո՛. ատե՛լ տուր իրեն գարշելի հայրը. խլե՛ իր հորմեն, քաշե՛ քու կրծքիդ ու պահե՛ քեզի։

ԱՆՆԱ— (Սաստիկ հուզումով կծածկե դեմքը դայակի կրծքին) Ա՜խ, լռե՛. խնայե ինծի. լռե՛...

ՊԱՌԱՎԸ— (Գրկած, օրորելով ու օրորի պես) Լա՛վ է, լա՛վ է, հանգըստացի՛ր։ Ոչի՛նչ բաներ են, կանցնի՜։ Ամե՛ն ինչ կանցնի. այս ցա՛վն ալ կանցնի։ Եվ սե՜ր, և ո՜խ, ատելությո՜ւն, կանցնի՛, բոլո՛րը կանցնի։ Մարդ ու ժամանակ, և՛ հայր, և՛ որդի, ամե՛ն ինչ կանցնի։ Տանջանքն ալ կանցնի, տենչանքն ալ կանցնի, այս կյանքն ալ կանցնի, աշխա՛րհքն ալ կանցնի... Չնչին բանե՛ր են, ամեն ինչ կանցնի, ամե՛ն ինչ կանցնի...

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՄԻՋԱՆՑՔ

Կամարակապ, սալահատակ, ծուռ ու անկանոն տարածություն մը։ Ճակատը նեղ անցք մը, ուրկե սանդուղները հետզհետե վար կիջնեն իրենց վրայի կամարին հետ։ Ձախ կողմեն անդուռն մուտք մը կտանի Մեծ իշխանուհիին բնակարանը, աջ կողմի մուտքը՝ դեպի մյուս բաժինները։ Առաստաղի մեջտեղեն կախված է լապտեր մը։

### 1

Իշխանուհի Սոֆիա և Անդրոնիկոս խոսելով առաջ կուգան սանդուղներեն։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Է՜, թո՛ղ, սիրելի՛ս, ատոնք բոլորը անախորժ քամիներ են։ Երբ այդ տեսակ քամիները պատահի որ փչեն, մարդս պետք է ծռի, ճկե գլուխը պահ մը, մինչև փչեն ու անցնին, որ վերջը նորեն գլուխը բարձրացնե։ Իմաստությունը ա՛տ է. սիրելի՛ս, իմաստությունը ա՛տ է. ավելորդ ու անիմաստ աղմուկեն ի՞նչ օգուտ։ Իզուր հուզում, կռիվ, տեսարան, ծանր խոսքեր, որոնք ետքը երբե՛ք չեն մոռցվեր։ Քամի է, կփչե. թող որ փչե ու անցնի՝ կըսեմ քեզի։

ՍՈՖԻԱ— Իսկ այդ ճկվելե՞ն ինչ օգուտ։ Եվ սա մեկ օր չէ, երկու չէ, երեք չէ։ Մինչև ե՞րբ դառնամ սուտ խուլ ու սուտ կույր։ Եվ վերջապես վայելչություն ըսված բան մը կա. գոնե ձևերը պահեին։ Ա՜յ, Իրինայի պատմությունն էր, լռեցի. չըսի, ի՞նչ ընեի, երեսով որ զարկի՝ ալ

ապրիլ կարելի չէր. իսկ միս-մինակը հոգիս կճաթի այս պատերուն մեջ։ Բայց այն ժամանակ գոնե երևույթը կփրկեի։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Եվ եղար խելո՛ք, կգովե՛մ։ Տեսա՞ր, քամի էր, անցավ, վերջացավ։ Դուն այդ մարդը փոխել չե՛ս կրնար։ Որ եկեր ենք՝ պետք է հարմարվինք։

ՍՈՖԻԱ— Ա՜, ո՛չ, այս անգամ ո՛չ։ Մինչև հիմա վրան գոց է եղած. այս անգամ ուրիշ է. բաց ու աշկարա. նույն բերդին մեջ, առանձին բնակարան. դուռնես կերևա իր բակը, ուր կմտնեն կելլեն։ Ո՛չ, ո՛չ, չե՛մ կրնար։ (Լալով) Ա՜խ, ես ի՛նչ դժբախտ կին եմ, Աստված իմ. ի՛նչ դըժբախտ կին եմ։ Տասնյոթ տարեկան չկայի, որ հայրս տվավ ինծի իմ առաջին ամուսնուս, այն մաշված ու հիվանդ մարդուն, ի՞նչ է՝ պալատին մեջ դիրք ունի եղեր, կապեր ունի եղեր. ունեցած դիրքն ալ բա՛ն մը ըլլար գոնե։ Ամբողջ այրի ժամանակս տարիներ, երկար տարիներ, ինկած եմ եղեր հորս տունը ավելորդ իրի մը պես. իր տեղը չունեցող կարասի մը, կդնեն ա՛յս անկյունը, ա՛յն անկյունը, սպասելով, որ դուրս տարվի վերջապես այդ անպետք բանը։ Ա՜, հայրս ալ, գիտե՛ս, ամեն անգամ երեսիս տալով, որ բեռ մնացի իր հոգնած գլխուն։ Վերջն ալ ահա՜ նետեց ինծի այս հայուն ձեռքը, որ ազատե իր կալվածներուն մնացորդը սուլթանին ձեռքեն։ Այդ կալվածները չե՛ն ազատվելու. և տե՛ղն է. անիծված ըլլան այդ կալվածները, որ ինծի այս կրակին մեջը նետեցին։ (Կուլա):

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Աղե՛կ, կտրե՛ լացդ. երեխա՞ ես, ի՞նչ է։ Այսպե՛ս է կյանքը։

ՍՈՖԻԱ— Սա ի՞նչ կյանք է։ Մի՛ս-մինակ, օտար մարդոց մեջ, օտար հոգիներու, որոնք իմ թշնամիս են, դժբախտությանս վրա կուրախանան և իրենց սրտին մեջ վրաս կխնդան։ Ես, կկարծես, չե՞մ հասկնար, միթե դուն ինքդ չե՞ս զգար։ Հենց ի՛նքը, ի՛նքը, իշխա՛նը։ Ա՜խ, անոնք բոլորը մեր թշնամիներն են. ի՞նչ գործ ունինք մենք հոս, ինչացո՞ւ եմ ես հոս, ինչո՞ւ է ղրկեր հայրս ինծի հոս։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Հանգստացի՛ր, Սոֆի՛, հանգստացի՛ր, սիրելի՛ս։ Ըսածներուդ մեջ ճիշտ բաներ շատ կան, բայց այս է կյանքը, ի՞նչ կըրնանք ընել. Եղե՛ր է, պատահե՛ր է, պիտի քաշես։ Լալեն ու աղմկելեն ի՞նչ օգուտ. ավելի՛ գեշ։

ՍՈՖԻԱ— Ես խեղճ կնիկ մըն եմ, ճի՛շտ է, մաշված ու ավելորդ, ամեն տեղի համար անտեղի, բայց ես ի՞նչ ընեմ, ի՞նչ հանցանք ունիմ։ Եվ վերջապես իրե՞նք ինչ են. ինծի ղրկողները, ինծի զրկողները, ինծի առնողները, շուրջս եղողները, ո՞րն է, ո՞րն է ինծմե լավ. ինչո՞վ են ինծմե ավելի աղեկ։ Ինչո՞ւ անպատճառ ե՛ս պիտի նետվիմ անկյունե



անկյուն, ե՛ս պիտի կրեմ, ե՛ս պիտի լռեմ։ Ա՜խ, սա ի՛նչ դժբախտ կին եմ ես։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Դե՜, լա՛վ, ամոթ է. սրբե՛ աչքերդ։

ՍՈՖԻԱ— (Վճռական) Ո՛չ, ալ չե՛մ դիմանար։ Ալ չե՛մ թողնելու։ Ալ չե՛մ լռելու։ Ե՛ս եմ վերջապես այստեղ տիրուհին. այն աներես պառնիկը հոսկե պետք է հեռանա. այս բերդեն գոնե պետք է հեռանա։ Ես կպահանջե՛մ... եթե ո՛չ...

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Եթե ո՞չ։

ՍՈՖԻԱ— Կձգեմ կերթա՛մ. կա՛մ ես, կա՛մ ան. կերթամ նորեն հորս մոտ։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Չգիտե՛մ, քու բանդ է, բայց կճանչնաս քու հայրդ։ Գիտես, որ անիկա իշխանը պիտի արդարացնե։

ՍՈՖԻԱ— Եթե այդ լիրբ կինը մնաց այս բերդը, ես հոս չե՛մ մնար, ինչ կուզե ըլլա։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Լա՛վ, դո՛ւն գիտես։

ԻՐԻՆԱ— (Ձախի մուտքեն կիսովին ներս գալով) Վերադարձա՞ք։ Ատ ո՞ւր էիք, ուշացա՛ք։ Երևի, աշտարակը։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Այո՛. կշրջեինք պարիսպին վրա։ Սարի ստվերը ինկավ թե չէ՝ ախորժելի է պարիսպին վրա։

ԻՐԻՆԱ— Բայց հոս իզուր է կեցեր Մեծ իշխանուհին. հոս միշտ հոսանք է այս մուտքերուն մեջ, մարդ շուտ կմրսի։ Եվ ընդհանրապես առանց վերնոցի պետք չէ, որ դուրս գա իմ իշխանուհին. իրիկունները զով են. այս լեռներուն մեջ խարդախ է կլիման, ճիշտ իրենց բնակիչներուն պես։ Արև է, մեղմ, ախորժելի, բայց ստվերները թանձրացան թե չէ՝ կխածնեն։ Դե՜, հարբուխդ ա՛ռ ու պառկե՛։

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Եթե քիչ մըն ալ երկնցնես հոս այդ հարբուխի պատմությունը՝ կբռնվինք բոլորս ալ։

ԻՐԻՆԱ— Այո՛, այո՛, նե՛րս անցնինք, մանավանդ որ հոգնած կերևա իշխանուհին։ Ինծի իմաց չի տվիք, թե չէ ես ալ կուգայի։ Գոնե կհետևեի, որ չի հոգնի ու չի մրսի Մեծ իշխանուհին։

Երկուքին ետևեն կելլե ինքն ալ ձախեն դուրս:

## 3

Վայրկյան մը տեսարանը պարապ է:

Սանդուղներեն հանդարտ կբարձրանա և առաջ կուգա Աննա իշխանուհին։ Հասած է լայն մասը և կուզե թեքվի դեպի աջի մուտքը, որ վեր կվազե սանդուղներեն իշխան Ատոմ և կկանչե կես-ձայնով:

ԱՏՈՄ— Իշխանուհի՛ Աննա։

ԱՆՆԱ— (Կցնցվի ու կկենա մեխվածի պես, առանց ետևը նայելու)։

ԱՏՈՄ— (Շունչը կանոնավորելու ջանքով) Տեսա քեզի հեռուեն, որ կանցնեիր բակով, շտապեցի, որ հասնիմ։ Իրա՛վ է. դուն ինծի արգիլած ես քեզի մոտենալը, բայց ես պե՛տք ունիմ խոսելու, անհրաժեշտ պե՛տք ունիմ խոսելու։ Երկո՛ւ վայրկյան։ Երկո՛ւ վայրկյան։

ԱՆՆԱ— Խոսե՛։ Միայն շո՛ւտ։

ԱՏՈՄ— Հա՛, իսկո՛ւյն, իսկո՛ւյն։ Բայց ո՞րը. ո՞ւրկե սկսիմ։ Թող շունչս հանդարտի։ Լսե՛. ես այսպես չե՛մ կարող, ո՛չ, չե՛մ հնազանդիր, չե՛մ կարող, այս մեկ կետին մեջ ես քեզի չե՛մ կրնար հնազանդիլ. քեզի չտեսնել չեմ կրնար. սպաննե՛ ինծի։ Եվ արդեն մահ է, ավելի գեշ, քան մահը, վերջին օրերու իմ վարած կյանքս։ Ո՛չ հանգիստ ունիմ, ո՛չ դադար, ո՛չ զբաղում։ Ո՛չ մեկուն հետ խոսիլ չեմ կրնար, երբ կըխոսիմ՝ ըսածս չեմ գիտեր, արդեն ո՛չ մեկուն հետ ըլլալ չեմ ուզեր։ Ես կխելագարիմ, իշխանուհի՛ Աննա, ինծի մի՛ հեռացներ, ինծի մի՛ փախցըներ. ես կմեռնիմ։

ԱՆՆԱ— (Հանկարծ կդառնա անոր ու սրտագին ջերմությամբ) Ինծի մի՛ սիրեր... ինծի մի՛ սիրեր...

ԱՏՈՄ— Իշխանուհի՛ Աննա։

ԱՆՆԱ— Անիծվի՜ իշխանուհի Աննան. սատկի՛ իշխանուհի Աննան։ Ինծի մի՛ սիրեր։ Ինծմե միայն տառապանք կուգա քեզի։ Ես թո՛ւյն եմ, ես սո՛ւր եմ, ես մա՛հ եմ դաժան։

ԱՏՈՄ— Տո՛ւր, տո՛ւր ինծի այդ մահը. քու տված մահը հարյուր կյանքի հետ չեմ փոխեր։ Թող որ շրթունքներեդ ծծեմ այդ մահը։ Թող ծծեմ քու շունչը, քու բույրը, քու թույնը ու մեռնիմ։

ԱՆՆԱ— Մի՛ մոտենար, մի՛ մոտենար։ Ա՜խ, իշխա՛ն, կաղաչեմ, կպաղատիմ քեզի, փախի՛ր, փախի՛ր այս տեղեն, փախի՛ր այս բերդեն, փախի՛ր այս աշխարհեն։ Ա՜խ, փախի՛ր, փախի՛ր։

ԱՏՈՄ— Հա՛, ճիշտ ատոր համար էր, որ եկա խոսիմ։ Ես ալ հասած եմ միևնույն մտքին։ Քու այս բերդին մեջ մնալդ այլևս կարելի չէ՛։ Ես ալ մնալ չեմ կրնար, միևնո՛ւյն է, ես ալ մնալ չեմ կրնար։ Ես այդ մարդը այլևս տեսնել չեմ կրնար, անունը տալ չեմ կրնար։ Զզվելի է իր ձայնը, որով խոսեր է քեզի, գարշելի են իր աչքերը, որով նայեր է քեզի, մեյ-մեկ օձ են իր ձեռքերը, որոնք բռներ են քեզի, իսկ արյուն ծծող տզրուկներ են իր շրթունքները, որոնք...

ԱՆՆԱ— Լռե՛։

ԱՏՈՄ— Լռե՛մ։ Լռե՛մ։ (Զարնելով գլխուն) Իսկ հոսկե՞ ինչպես դուրս



քաշեմ։ Սուր-սուր ու հաստ մեխերու պես ցցվեր են անոնք ուղեղիս մեջ և հուպ կուտան, և հուպ կուտան։ Ա՜, եթե գիտնա՛ս, ինչպե՛ս կատեմ ես այդ մարդը, որ գողցեր է քեզի ինծմե, որ խլեր է քեզի ինծմե, որ աղճատեր է քու մաքուր հոգիդ, տանջեր է քեզի ու կտանջե։ Եվ ան իմ ծնո՞ղս է։ Ծնո՞ղ։ Ի՞նչ ծնող։ Իմ նզովքն է անիկա, իմ տանջանքս է անիկա, իմ կրծքիս տակ ծորող վերքիս ժահրն է անիկա։ Հա՛, ծնո՛ղն է, ծնո՛ղը, սիրտս ճանկռտող այս սև նախանձին։ Նախանձ ըսեմ, գարշանք ըսեմ, ինքս ալ չգիտեմ։ Կտեսնե՞ս, չէ՞. կտեսնես, որ ես այլևս այս հողին վրա ման գալ չե՛մ կրնար, ոտքերս կայրին, դո՛ւն ալ չես կրնար։ Փախչի՛նք, փախչի՛նք։

ԱՆՆԱ— Ա՜խ, ինչպես կուզեի՜, ինչպես կուզեի՜...

ԱՏՈՄ— Գուցե մեծ բան մը չեմ արժեր, չգիտեմ, բայց քաջ եմ, հավտա՝ քաջ եմ, կռվել գիտեմ և մահեն ալ վախ չունիմ։ Կառնեմ, կըտանիմ քեզի հեռո՜ւ, հեռու այս խեղդող մթնոլորտեն, տզրուկներու, լորդուներու այս ճահիճեն, հեռո՜ւ, հեռու հորս բոլոր կալվածներեն։ Լա՜յն է աշխարհքը։ Կքշենք, կերթանք Թորոս իշխանի հողերը։ Անկյուն մը կճարեմ, կգտնեմ բերդ մը, ուր քեզի տանիմ, ուր քեզի պահեմ, քեզի պաշտպանեմ ու քեզի պաշտեմ։ Ալ չի չարչարվի՛ս, ալ ստրուկ չըլլա՛ս. ըլլաս ազա՛տ. ինքդ տիրուհին, ինքդ սիրուհին, ինքդ բոլորի վեհ աստվածուհին։

ԱՆՆԱ— Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ...

ԱՏՈՄ— Ունիմ ընկերներ, ամբողջ հոգիով կապված են ինծի. քարերեն վար կնետվին ինծի հետ, դժոխք կերթան ինծի հետ։ Կտրիճ են, անվախ ու քեզի կպաշտեն. առանց գիտնալու իմ ու քու կապը՝ քեզի կպաշտեն։ Ո՞վ չի պաշտեր քեզի, եթե անգամ մը տեսեր է քեզի։ Փախչի՛նք, փախչի՛ք շուտով այս ատելի անկյունեն։

ԱՆՆԱ— Ի՜նչ լավ տղա ես դուն, ի՜նչ լավ տղա ես դուն...

ԱՏՈՄ— (Ուրախացած) Կտեսնե՞ս. մենք պե՛տք է, որ խոսինք, խոսինք ու կարգադրենք. և շո՛ւտ, շո՛ւտ։ Կա՛մք տուր, որ գամ քեզի հարմար ժամ մը, խոսի՛նք երկար, ամեն կողմեն, և որոշե՛նք։ Կա՛մք տուր, իշխանուհի՛ Աննա, կա՛մք տուր։

ԱՆՆԱ— (Թուլցած) Եկո՛ւր. քանի որ այդքան կուզես՝ եկո՛ւր։

ԱՏՈՄ— Ե՞րբ. ե՞րբ գամ, իշխանուհի Աննա, ե՞րբ։

ԱՆՆԱ— Այսօր այլևս չըլլար։ Եկո՛ւր վաղը, վաղը իրիկուն, երբ մութը նստի, երբ բերդին մեջ ոտքը խաղաղի։

ԱՏՈՄ— Լա՛վ. վաղը գիշե՛ր։

ԱՆՆԱ— Դե՛, հիմա թող որ հեռանամ։ (Կարոտով կնայի տղուն) Ցտեսությո՛ւն։ (Դուրս աջեն)։

ԱՏՈՄ— (Կմնա հափշտակված նայելով անոր ետևեն, մինչև որ սանդուղներու կողմեն խոսակցության ժխոր կլսվի. կցնցվի ու կնետվի ձախ մուտքեն դուրս)։

## 4

Սանդուղներեն կբարձրանան ու առաջ կուգան Քեսունի իշխանը և երկու զինվորական, որոնցմե մեկը շարունակ ետ դառնալու վրա է իշխանի վերջին խոսքեն կախված։

*ԻՇԽԱՆԸ— Լա՛վ, լա՛վ, ինչպես գիտես։*

*ԵՏ ԴԱՐՁՈՂԸ— Մասնավորապես վերջին հաղթանակեն ետքը. հիմա ամենքը կապաստանին քու հողերդ, և ըստ երևույթին այսպես շարունակվելու է դեռ երկար։*

*ԻՇԽԱՆԸ— Դուն կազմե առայժմ երրորդ գունդը։ Կընտրե՛ս ամենեն ընտիրները միայն. և քեզի տեսնեմ, կազմե՛ս կուռ գունդ մը։*

*ԵՏ ԴԱՐՁՈՂԸ— Հրամա՛նդ, իշխա՛ն։ Եվ գիտեմ, որ գոհ պիտի մընաս։ Եկածը լա՛վ տարր է. երիտասարդ, ուժեղ մարդիկ, և վարժ կռվի, չարքաշության։*

*ԻՇԽԱՆԸ— Այո՛, մաղի պես է գաղթելն ու փախչիլը. թույլն ու տըկարը կմնան ճամփին. տոկունն է, որ տեղ կհասնի։ Ատոնցմե շատերը Վասպուրականեն է, որ կուգան, Այրարատեն։*

*ՄՅՈՒՍ ԶՈՐԱԿԱՆ— Թուրքեր, քյուրդեր, պարսիկ, սելջուկ. ո՞ր մեկին դեմ դնե խեղճ ժողովուրդը. փչացա՛վ, փչացա՛վ մեր աշխարհը։*

*ԻՇԽԱՆԸ— Հինը փչացավ, կհիմնե՛նք նորը։ Հոն ողողվեցավ, ա՛յ, կխմբվինք հոս։*

*ԵՏ ԴԱՐՁՈՂԸ—* (Մյուսին) *Մեր ժողովուրդը չի՛ ոչնչանար, մեր իշխանությունը չի՛ կործնիր. մի՛ վախնար։ Քեզի երկար կյա՛նք, Վասիլ իշխան։ Ես երթա՛մ։* (Դուրս)։

*ԻՇԽԱՆԸ— Երթաս բարո՛վ։*

*ՄՅՈՒՍ ԶՈՐԱԿԱՆԸ— Հաջողությո՛ւն, գնդապե՛տ։*

## 5

*ԻՇԽԱՆԸ— Ծանրաշարժ մասը, ընտանիքավորը կնստեցնե՛ս։ Բերդուսի շուրջը, մշակության համար հարմար է։ Կենտն ու ամուրին, զենքի մարդիկը կխմբես ավելի մոտիկ։ Սքանչելի բանակ է դուրս գալու, կը-*



*տեսնե՛ս։ Կախարդական շրջանակ է, Թաթո՛ւլ, գունդերը հաղթանակ կբերեն, հաղթանակը համբավ, համբավը նոր գնդեր, նոր գնդերը նոր հաղթանակ, նոր հաղթանակը...*

Երկուքով հասած են արդեն աջի մուտքին դեմ, երբ ձախեն ներս կնետվի իշխանուհի Սոֆիա ու ձայն կուտա։

*ՍՈՖԻԱ— Իշխա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ—* (Ետ դառնալով) *Ի՞նչ է պատահեր։*

*ՍՈՖԻԱ— Կուզեի վայրկյան մը խոսիմ քեզի հետ։*

*ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ բան է։ Խոսե՛։*

*ՍՈՖԻԱ— Կուզեի առանձին։*

*ԶՈՐԱԿԱՆԸ— Թող ներե իշխանուհին։* (Դուրս աջեն)։

## 6

*ԻՇԽԱՆԸ— Խոսելիքդ հո՞ս բռնեց, սանդուղներուն գլո՛ւխը, միջանցքներուն մե՛ջ։*

*ՍՈՖԻԱ— Ի՞նչ ընեմ, քանի որ իշխանը մոռցեր է բնակարանիս ճամփան և ինծի պատիվը չըներ...*

*ԻՇԽԱՆԸ— Ճի՛շտ քու այդ հավիտենական գանգատներուդ համար։*

*ՍՈՖԻԱ— Գանգա՞տ։ Ե՞րբ եմ քու առջևդ բերանս բացեր։*

*ԻՇԽԱՆԸ— Հո՛դ է սխալդ։ Միայն բաց բերնով չէ՛, որ մարդիկ կըգանգատին ու կտրտնջան։ Դեմքեդ, աչքերեդ, քայլքեդ ու խոսվածքեդ այդ հավիտենական տրտունջն է, որ կկաթկթի։*

*ՍՈՖԻԱ— Զարմանալի է, ճշմարի՛տ, դո՛ւն մեղադրանք կնետես վրաս, երբ ե՛ս պետք է բողոք կարդամ քեզի։*

*ԻՇԽԱՆԸ—* (Արհամարհանքով) *Ի՞նչ պիտի կարդաս ինծի։ Կարդա՛ նայինք։*

*ՍՈՖԻԱ— Բայց ես պատճառ չեմ տվեր քեզի՝ այդ շեշտով ինծի խոսելու։*

*ԻՇԽԱՆԸ— Խոսե՛, խոսե՛. ըսելիքդ ըսե՛։*

*ՍՈՖԻԱ—* (Գրգռված) *Ես եկեր եմ քեզի ըսելու, որ այս բոլորը արդեն անցեր է վայելչության սահմանը և չի հարմարիր ազնվական հույն տիկնոջ մը դիրքին, ո՛չ ալ իմ ու քու իշխանական կոչումին։ Եկեր եմ քեզի ըսելու, որ ես այլևս լռել չեմ կրնար, ինչքան ալ որ միշտ համբերող եմ եղեր քեզի հետ։ Եկեր եմ քեզի ըսելու, որ այդ կինը, որ դուն տեղավորեր ես իմ քթին տակը հարևան բակը, ես հանդուրժել չեմ կը-*

նար այլևս այս բերդին մեջ։ Տա՛ր ուր որ կուզես, ըրե՛ հետը ինչ որ կուզես, բայց հեռո՛ւ, հեռու խնդրեմ, ինծմե հեռու...

ԻՇԽԱՆԸ— Վերջացուցի՞ր։ Իրավո՛ւնք ունիս։ Այդ մասին ե՛ս ալ մտածած եմ և ունիմ իմ որոշումը։ Այդ կինը իր ներկայությամբը պետք չէ՛, որ քեզի նեղացնե. և ատոր համար ալ, ես արդեն վճռիր եմ, որ դուն հեռանաս հոսկե։

ՍՈՖԻԱ— Ե՞ս։ Հեռանամ ե՞ս։

ԻՇԽԱՆԸ— Այո՛, իշխանուհի. այդպե՛ս է հարմար։

ՍՈՖԻԱ— Եվ ո՞ւր կհրամայես։

ԻՇԽԱՆԸ— Սուրբ Հարության կույսերուն հույն վանքը։

ՍՈՖԻԱ— (Ապշած) Ինծի... Ինծի վա՞նքը ղրկել կուզես։

ԻՇԽԱՆԸ— Այո՛, իշխանուհի. այդպես է հարմար։

ՍՈՖԻԱ— Հարմար գուցե քեզի համար, բայց ո՛չ ինծի։ Ես վանք մտնելու միտք չունի՛մ։

ԻՇԽԱՆԸ— Կկարծեմ, որ միտք ունիս, իշխանուհի, ունի՛ս։

ՍՈՖԻԱ— Ինչո՞ւ կկարծես. և ի՞նչ ընելու։

ԻՇԽԱՆԸ— Աղոթելո՛ւ։ Հավատքի պահանջ, ջերմեռանդությո՛ւն։

ՍՈՖԻԱ— Ուրեմն խաբեությա՞մբ, բռնի՞։ Ո՛չ, չե՛մ թողներ, կպռռա՛մ աշխարհքին, որ դեմ է ատիկա իմ կամքիս, և իմ հավատքս հոդ գեր չունի։

ԻՇԽԱՆԸ— Իզո՛ւր, իշխանո՛ւհի։ Այն ատեն ես ալ ստիպված կըլլամ հայտնելու աշխարհքին բաներ, որոնց մասին խոսվիլը գուցե քեզի համար այնքան ալ հաճելի չըլլա։

ՍՈՖԻԱ— Օրինակի՛ համար...

ԻՇԽԱՆԸ— Սիրային հարցե՛ր, անկողնի խնդի՛ր...

ՍՈՖԻԱ— (Սարսափած)) Ե՞ս։ Ե՞ս։ Եվ որո՞ւ հետ։

ԻՇԽԱՆԸ— Ա՜յ... (Քիչ մը փնտռելով) իշխան Կամսարականի։

ՍՈՖԻԱ— Կամսարակա՞ն։ Բայց ես անոր հետ երեք անգամ չե՛մ խոսած։

ԻՇԽԱՆԸ— Է՜, ի՞նչ գիտնամ. երիտասարդ, սիրուն, ճարպիկ տղա է, անոր անունը եկավ բերանս։ Եթե անիկա անհարմար է, կընտրենք ուրիշ անուն մը, որուն հետ ավելի հաճախ տեսնված ըլլաս։ Հասկցի՛ր, իշխանուհի՛, պետք է, որ դուն քաշվիս վանքը։

ՍՈՖԻԱ— Երբե՛ք։ Չե՞ս ուզեր ինծի, մեր ամուսնությունը լուծե՞լ կուզես. խնդրե՛մ, կկարծես սաքապի՞մ պիտի, թե՞ մեծ արժեք մը ունիս ինծի համար։ Ես վաղն իսկ կմեկնիմ Կեսարիա, հորս մոտ։

ԻՇԽԱՆԸ— Մեր ամուսնությունը լուծելու մասին, չգիտեմ դեռ, կը-



խորհինք վերջը։ Առայժմ անհարմար է ինծի, որ այդ հարցին շուրջը շատ աղմուկ բարձրանա։

ՍՈՖԻԱ— Բայց ե՛ս, բայց ե՛ս, բայց հա՛յրս։

ԻՇԽԱՆԸ— Հորդ համար շատ ավելի նվազ է ձեռնտու։ Հորդ գործերը փտտած են, գիտցի՛ր։ Եթե օր մը իր վրայեն ձեռքս քաշեմ, հորդ ոչինչ չի մնար։ Սուլթանը բարեկամս է, և նստած է հոն հորդ կռնակին։ Հայրդ շատ պիտի ցանկա, որ պահվին մեր մեջ ձևերը գոնե։ Կարծեմ խնդիրը պարզ է։

ՍՈՖԻԱ— (Կեցած է շիփ-շիտակ ու ֆառացած):

ԻՇԽԱՆԸ— Վերջապես քեզի համար ալ ամենեն օգտակարը ա՛տ է. ես մտածեր եմ. մտածե՛ և կըմբռնե՛ս։ Համենայն դեպս չմոռնա՛ս, որ ես վճռե՛ր եմ։ Արդեն կարգադրված է, և վանքը քեզի հարմարություն կստեղծեն, ինչպես որ կվայլե Մեծ իշխանուհի կույսի մը, որը իր հավատքեն ու ներքին մղումեն դրդված, թողած է այս սնոտի աշխարհը և քաշվիլ կուզե մենաստան աղոթելու ու հանգստի։ Կհուսամ, որ երբ քիչիկ մը մտածես, կհամոզվիս ըսածիս և ավելորդ անախորժություններ չես հաներ ո՛չ քեզի, և ո՛չ ինծի։ Ինչպես որ, մինչև հիմա, պետք է խոստովանի՛մ, մեր այս մոտ երկու տարվան կենակցության մեջ մասնավոր անախորժություններ չես պատճառած ինծի։ Շնորհակա՛լ եմ։ (Քիչ մը լուռ) Ունի՞ս ուրիշ բան մը ինծի ըսելու։ Ուրեմն՝ ո՛չ։ Գիշե՛ր բարի, իշխանուհի՛։

Գլխու բերև բարևով մը աջեն կելլե դուրս: Իշխանուհին իր ֆառացած դիրքովը պահ մըն ալ կմնա անշարժ. ճանկարծ կտատանվի և ուշաթափ կփովի գետին:

Եվ ճանցի՞սա կծածկվի տեսարանը:

# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՑԱԾ ԱՌԱՍՏԱՂՈՎ ՓՈՔՐԻԿ ՍԵՆՅԱԿ ՄԸ.

Աջ կողմը բազմոց. մուտքը ձախեն։ Ճակատը նեղ ու փոքրիկ դուռ մը սառնապակով մոզաիկած, որ ննջարանը կտանի: Այդ դռան մոտիկ ֆարե դարա ցցվածքի մը վրա կվառի ճրագը։

## 1

Իշխանուհի Աննա փռված է բազմոցին վրա, ամբողջ հասակովը ու ֆիթ ու բերեին: Կմտնե Պառավը, նախ կդիտե ֆիչ մը, վերջը կուգա կամաց ու կնստի անոր քովը բազմոցին եզերքը: Իշխանուհին հանգիստ կբարձրացնե գլուխը:

ՊԱՌԱՎԸ— Արթո՞ւն ես։ Կարծեցի՝ քուն էիր։

ԱՆՆԱ— Կմտածեմ։

ՊԱՌԱՎԸ— Չե՞ս խոսելու վերջապես։ Չի՞ պիտի գիտնամ, թե ինչ կդառնա գլխուդ մեջ։ Ինծի կվախցնե քու այդ լռությունը, ինծի կվախցնե մանավանդ քու այդ անսովոր խորին հանգիստը։ Անճանաչ ես դարձեր այս առտըվնե ի վեր։ Երկա՜ր-երկար ժամանակ է՝ ես չէի տեսած քեզի այդպես խաղաղ ու անդորր, մանավանդ այս վերջին երկու շաբաթը։

ԱՆՆԱ— (Երազկոտ) Հա՜, այս վերջին երկու շաբա՜թը. այս երկու սարսափելի՜ շաբաթը. երկմտումի, վարանումի, խղճմտանքի, չարչարանքի շաբաթը։ (Հանկարծ նստելով) Անցա՛վ։ Ալ անցա՛վ։ Վճիռներն ալ, Սաբե՛թ, կծնին երեխայի նման, ծանր երկունքով։ Վճիռը պիտի աշխարհ գա, որ վերանան ցավերն ու գալարումները։

ՊԱՌԱՎԸ— Եվ այդ վճի՞ռը։

ԱՆՆԱ— (Հանգիստ ելլելով ոտքի) Միթե պա՞րզ չէ քեզի։ Խոստացե՛ր եմ... երկո՛ւքը. ես երդվեր եմ երկո՛ւքը։

ՊԱՌԱՎԸ— Նորե՞ն այդ սև մտքերը։

ԱՆՆԱ— Սև՞։ Սևը մեր այն մյուս մտքերն էին, ի՛մ ու քո՛։ Նորե՛ն ապրելու, նորե՛ն վայլելու այն գե՛շ մտքերը. զավակներուս դիակներուն վրայեն նորեն կյանքին երթալու այն վա՛տ մտքերը։

ՊԱՌԱՎԸ— Բայց... բայց... չէ՞ որ...

ԱՆՆԱ— Ժողվե՛ այդ գայթակղիչ բայցերդ քեզի։ Բա՜յց, ի՞նչ բայց։ Ինչպե՛ս բռնել գիտես սրտիս թույլ թելերը, շոյել տկար կողմերը։ Թաքուն հույզե՛րս, թաքուն հույսե՛րս, ծածուկ տենչե՛րս, ներսն ու մեջերս։ Ա՜, չէ՞ որ կրծքիդ վրա եմ մեծցեր։ Բայց ալ անզոր են, անզո՛ր, բախտավորություն երգող խոսքերդ, թովիչ կայծերդ, վառած լույսերդ ու գովաբանած հանցավոր սերդ։

ՊԱՌԱՎԸ— Իշխանուհի՜...

ԱՆՆԱ— Մի՛ վրդովվիր։ Ես քեզի չէ, որ կխոսիմ. կխոսիմ իմ սրտիս իմ սայթաքուն, անհաստ սրտիս։

ՊԱՌԱՎԸ— Աստված վարե քու սիրտդ։

ԱՆՆԱ— Նույնիսկ ինքը Աստված այլևս ոչինչ չի կրնար փոխել։ Աստված ինքն էր, որ փրցուց ձյունի հյուսքը սարի գագաթեն։ Հյուսքը հիմա փրթեր է ու կգլտորի։ Պիտի գլտորի՛, կանգ առնել չկա։ Ցնորքը



խզուր, գութը՝ անտեղի, սերը՝ հանցավոր։ Պիտի գլտորի մինչև անդունդը, մինչև հատակը. հո՛ն, ուր պառկած են անոնք, իմ արյուններս քամված, իմ միսես ձևված, իմ մարմնես ծնված։ Քանի՞ հատ են անոնք։ Ըսե՛։

ՊԱՌԱՎԸ— Հերիք է, այ կին, հերիք է։

ԱՆՆԱ— Երկո՛ւ հատին երդվեր եմ երկու հատ։ Իրենց դեռ տաք մարմիններուն վրա, իրենց դեռ մխացող վերքերուն վրա երդվեր եմ երկու հատ։ Անոնց դիակները սառեցան, անոնց վերքերը մարեցան. և դուն կարծեցիր, որ սառեցավ նաև երդումը ու մարեցավ ոխը։ Դուն այդպե՛ս մտածեցիր։

ՊԱՌԱՎԸ— Բայց, իշխանուհի՛...

ԱՆՆԱ— Մի՛ վրդովվիր։ Ես իմ սրտի՛ս է, որ կխոսիմ, իմ ստորին սրտիս, իմ անարժա՛ն մոր անպիտան սրտիս։ Դուն ոխի տեղը սեր դնել ուզեցիր. հին զոհին տեղը նոր զոհին սերը. միևնույն չէ՞։ Հանճարե՛ղ խաղ է։ Ի՜նչ վարպետորդի ես, պառա՛վ։ Իմ սիրտս քեզմե հնարագետ է, դուն իմ սրտես։ Պետք եղավ, որ իրե՛նք, երեխաներս, ելլեն ու գան, որ աչքերս բացվին։

ՊԱՌԱՎԸ— Երեխանե՞րդ։

ԱՆՆԱ— Իրե՛նք, հապա՛, իրե՛նք, իրենց ձորեն, իրենց խորեն, իրենց անաղոթք հողաթումբերեն։

ՊԱՌԱՎԸ— (Սարսափահար) Եկա՞ն։ Հո՞ս։ Ե՞րբ։

ԱՆՆԱ— Երեկ գիշեր։ Ա՜յ, հոսկե, ա՜յ, այդ դուռնեն, այս սեմեն ներս. իրենց դողդոջուն ոտիկներովը, ոսկոր ու կաշի։ Տեսնելու էիր իրենց կիսամերկ մարմինները դեղնա՜ծ, կնճռած, հողոտ ու կանաչավուն։ Պզտիկիս վիզը այնպես խե՜ղճ-խեղճ կախվեր էր, սուրը ուսին էր դիպեր, գլուխը շիտակ պահել չէր կրնար։

ՊԱՌԱՎԸ— (Կսկսի բարձր հեծկլտալ):

ԱՆՆԱ— Ինչո՞ւ կուլաս։ Ի՞նչ կա լալու։

ՊԱՌԱՎԸ— (Արցունքին մեջեն) Եվ խոսեցա՞ն։ Խոսեցա՞ն քեզի։

ԱՆՆԱ— Իհարկե՛, որ խոսեցան։ Հապա ինչո՞ւ պիտի գային այդքան երկա՜ր, երկար ճամփան։

ՊԱՌԱՎԸ— Խոսեցա՞ն, հա՞, իրենց փոքրի՛կ, իրենց քնքո՛ւշ, անուշ շրթունքներովը։

ԱՆՆԱ— Ա՜, ոչ շրթունքներով։ Շրթունքները փակած էին, պինդ սեղմված իրարու, անձրևի տակ ինկած երկու չորցած տերևի պես։ Կըվառեին միայն աչքերնուն տեղը խոր ինկած փոսերը։ Կխոսեին այդ սև փոսերը։

ՊԱՌԱՎԸ— Ի՞նչ կըսեին։ Ի՞նչ կըսեին։

ԱՆՆԱ— Ինչ որ կըսե ինծի միշտ իմ ներքին ձայնս։ Ինչ որ կըսե ինծի միշտ հեռուեն, մեր բերդին տակեն, գեռ ականջիս մեջ հնչող մեր ականատես գետին աղմուկը։ Ինչ որ կըսե ինծի միշտ լուսինը երկնքեն, որ այն գիշերը վկա կանչեցի։ Ինչ որ կըսեն ինծի ամբողջ տիեզերքը և Աստված ի՛նքը։ Ինչ որ ըսեր եմ ես ինքս իմ երդումիս մեջ, բնության խորքերեն ծնած, բնությանս խորքերեն հոսող իմ խոստումիս մե՛ջ։

ՊԱՌԱՎԸ— (Վեռական) Ո՛վ Տիրամայր, դուն ըլլաս մեզի պահապան։ Թող կատարվի քու սուրբ կա՛մքը։

ԱՆՆԱ— Այո՛, պիտի կատարվի։ Իրա՛վ է, կորիճ տղա է ու շատ սիրելի. ճիշտ ատոր համար պետք է որ մեռնի։ Լավագույննե՛րն է, որ կտանին Աստծուն զոհի։ Ճի՛շտ է, սիրեցի ու կսիրեմ. ճիշտ ատոր համար պետք է, որ մեռնի։ Մե՛ր սիրածն է միշտ, որ բախտը կպահանջե մեզմե անողոք կերպով։ Եվ ի՞նչ արժեք ունի արդարության ոտքին չսիրածդ զոհելը. ատիկա զո՛հ չէ, այլ սպանդ։

ՊԱՌԱՎԸ— Այո՛, կզգամ, որ դուն քու մեջդ մտածեր ես ամեն ինչ և որոշեր ես ընելիքդ։

ԱՆՆԱ— Որոշեր են իմ ընելիքս կյանքի անողորմ ու անըմբռնելի մեծ օրենքները, որոնք կապրին մեր մեջը ու կվարեն մեզի չգիտեմ ո՞ւր, չգիտեմ ինչո՞ւ, բայց կվարեն անշեղ ու անհեղլի. մենք ոչինչ փոխել չենք կրնար։ Ես հասկցա երեկ գիշեր այս բոլորը, երբ զավակներուս պարապ աչքերը կնայեին ինծի։ Եվ կտեսնես՝ ինչպես հանգիստ եմ հիմա։

ՊԱՌԱՎԸ— Հա՛, կտեսնեմ, ծանր ու խեղդող հանգիստը փոթորիկեն առաջ։ Թող կատարվի՛ Տիրամոր կամքը։

2

ԱՍՈՄ ԻՇԽԱՆ— (Սեմեն) Ե՛ս եմ, իշխանուհի՛։

ԱՆՆԱ— Եկո՛ւր, իշխա՛ն։ (Պառավին) Գոցե՛ դուռը և կսպասե՛ս դուրսը։ Իսկույն իմաց կուտաս, եթե պատահի, որ դեպի մեր բակը մոտեցող ըլլա։ Համենայն դեպս ես հիվանդ եմ ու պառկած. ոչ ոք ներս չէ մտնելու։

Պառավը գլուխը կախ կելլե դուրս։ Պահ մը երկուքը կեցած են դեմ-դեմի իրար դիտելով։

ԱՆՆԱ— (Ժպտուն) Լա՛վ. ինչո՞ւ ես եկեր։ Ի՞նչ կուզես ինծմե։

ԱՍՈՄ— Նո՞ր պիտի ըսեմ։ Որ վճռենք, որ որոշենք մեր ընելիքը։

ԱՆՆԱ— Եվ դուն կըսես, որ կսիրես ինծի։



ԱՍՈՄ— Միթե կկասկածի՞ս։

ԱՆՆԱ— Դուն ո՛չ սիրած ես ինծի, ո՛չ ալ կսիրես։ Ահա ինչու համար մինչև հիմա ես խույս եմ տվեր քեզմե։

ԱՍՈՄ— Միթե կտարակուսի՞ս. միթե չե՞ս հավատար։

ԱՆՆԱ— Դուն չե՛ս սիրեր ինծի։ Եթե սիրեիր, չէիր գար ինծի, որ նոր-նոր որոշենք մեր ընելիքը։ Դուն արդեն վաղուց կիմանայիր քու ընելիքը։

ԱՍՈՄ— Առաջարկեցի փախուստ։

ԱՆՆԱ— Ինծի սիրողը կմնա ինծի հետ, ինծի սիրողը կմեռնի ինծի հետ։ Իսկ դուն փախչիլ կուզես։

ԱՍՈՄ— Բայց քեզի՛ հետ, քեզի՛ համար։

ԱՆՆԱ— Ես փախչի՞մ։ Ո՞ւր։ Եվ ո՞վ պիտի լուծե այն ատեն անպատվությանս վրեժը։ Ո՛չ, ես պիտի մնամ հո՛ս, այս բերդը. պարտք կա իմ վրաս, ես հոս գործ ունիմ կատարելու։ Կամ ե՛ս պիտի ոչնչանամ, կամ այն գարշելի մա՛րդը, որ դուն քու հայրդ կանվանես։ Տե՛ս, ալ չե՛մ ծածկեր քեզմե հոգիիս գաղտնիքը։ Որպեսզի հասկնաս ու փախչիս։ Հոս մնացողը կա՛մ ինծի հետ է ըլլալու, կա՛մ ինծի դեմ։ Փախի՜ր։ (Խոր հուզումով) Ես չե՛մ կրնար, որ դուն ըլլաս ինծի դեմ։ Այդ մեկը՝ ո՛չ, չե՛մ կրնար։ Փախի՛ր։

ԱՍՈՄ— Ուրեմն դու կրնա՛ս մտածել, որ ես ըլլամ քեզի դեմ։

ԱՆՆԱ— (Ուսերը ցնցելով) Հա՛յր է։ Հորդ դեմ ձեռք չե՛ս բարձրացներ. թեև այդ ոխերիմ հայրը ինքն իր ձեռքովը իր զավակը լուսամուտեն նետեց վար։

ԱՍՈՄ— Դո՞ւն ալ ունիս այդ կասկածը։

ԱՆՆԱ— Դա կասկած չէ՛. իրողությո՛ւն։ Եվ այնպես հեզ ու բարի տղա մը, ինչպես եղբայրդ էր։ Զգո՛ւյշ, չի խնայեր հայրդ և քեզի՛, եթե ամենաչնչին կասկած մը ունենա մեր այս կապին ու զգացումին, թևեդ բռնածին պես կնետե քեզի ալ դուրս՝ բերդին հատակը՝ կտավի սատկած ձագի մը նման։ Ատոր համար է, որ ես միշտ վախցեր եմ, երբ դուն խոսեր ես ինծի հետ, եղեր ես ինծի հետ. և կվախնամ այս վայրկյանիս. վախցի՛ր և դուն. զգո՛ւյշ։ Ան մա՛րդ չէ, այլ մարդակեր բորենի, երբ իր շահին, երբ իր հաշվին կդպչի։ Հեռացի՛ր, շո՛ւտ, փախի՛ր սենյակես, փախի՛ր ինծմե, փախի՛ր այս բերդեն, ու մի՛ խանգարեր մեր կռիվը, մի՛ խանգարեր իմ վրեժս։

ԱՍՈՄ— Աննա՛, դուն կփորձե՛ս ինծի։ Իզո՞ւր է։ Դուն շա՛տ լավ գիտես, որ կսիրեմ ես քեզի։

ԱՆՆԱ— Գիտե՛մ, սիրելի՛ս, որ կսիրես ինծի։ Ինչպես որ թարմ տղա մը կսիրե երիտասարդ կինը, որ իրեն դուր է եկած։ Բայց, հասկը-

ցի՛ր, ատիկա քիչ է ինծի. շա՛տ է քիչ իմ այս տանջված, իմ այս ճմրթված հոգիիս համար։ Ինծի պետք է այն կույր, անզուսպ ու անսանձ հափշտակությունը, որ բոցի մը պես կգրկե մարդուս ամբողջ էությունը, և այդ բոցեն վառվողը մահը կգրկե իր սիրածը գրկելու համար։

ԱՏՈՄ— Բայց ես արդեն նստեր եմ քեզի, որ հոժար ու սիրով կգրկեմ մահը քեզի գրկելու համար։

ԱՆՆԱ— Եթե ըսածդ իրավ ըլլար, դուն կհարթեիր այն ճամփան, որ քեզի կբաժնե ինծմե։ Մի՞թե դուն կրնաս երևակայել, որ իմ հոգիս հանգիստ ստանա և ատելությունս՝ դադար, կամ որ ես պատկանիմ քեզի, մինչև չվերնա մեջտեղեն այն գարշանքը, որ մորթեց իմ անուշ ու անմեղ մանուկներս և անոնց դեռ տաք մարմիններուն վրա տիրացավ ինծի ուժով հենց նույն գիշերը։

ԱՏՈՄ— (Կատղած) Լռե՛։

ԱՆՆԱ— Եվ երդո՛ւմ տվի հենց նույն գիշերը, որ փոխարենը ստանա պիտի։

ԱՏՈՄ— (Խուլ ձայնով) Եվ քու երդումը պե՛տք է կատարվի. ան փոխարենը ստանա պիտի։

ԱՆՆԱ— Ի՞նչ ըսիր։ Կհասկնա՞ս խոսքիդ իմաստը։

ԱՏՈՄ— Կհասկնամ։ Վերջին օրերը ես ալ եմ եկեր հաճախ միևնույն մտքին։ Մեր երկուքին այլևս հոս տեղ չկա։ Այս աշխարհիս երեսին, ուր դուն կապրիս, այլևս տեղ չկա հորն ու տղուն։

ԱՆՆԱ— Կրկնե՛, կրկնե՛. ի՞նչ ըսիր։

ԱՏՈՄ— Ա՛խ, Աննա՛, մի՞թե կարիք կա ըսելու։ Ի՞նչ է որ աշխարհք ըսվածը։ Զույգ մը մութ, խոր, անհուն, թավիշ աչքեր, և այդ թավիշ ծովուն խորունկ նայվածքը, ու իր գգվանքը, խոստովանանքը։ Այս աշխարհիս երեսին ուրիշ ի՞նչ կա։ Ի՞նչ արժեք ունի մնացածը։ Դո՛ւն ես, դո՛ւն, աշխարհքը։ Եվ այդ աշխարհքը ի՛մս է և ի՛մս պիտի ըլլա. միա՛յն իմս։ Ով դպչի քեզի, ով դպեր է քեզի, ով կուզե ըլլա, պիտի խորտակվի, պիտի տապալի։ Այդ հանցանքին ներում չկա. այդ ոճիրին ներում չկա։ Ե՛ս քու տերդ. ե՛ս քու գերի՛դ։

ԱՆՆԱ— (Ձեռքերը տարածած երթալով դեպի տղան) Եվ իմ տե՛րս, և իմ սե՛րս, և իմ սո՛ւրս, և սարսո՛ւռս, ու նեցո՛ւկս, ու անցո՛ւկս... Ա՜խ, ա՛ռ ինծի, ա՛ռ ինծի, և ա՛ռ իմ վրեժս, գրկե՛ ինծի, մաքրե ինծի և հանգի՛ստ տուր հոգիիս։ Հանե՛ ոխը իմ մեջես, քերե՛ սրտես ատելությունը, ազատե՛ ինծի, մեղքցի՛ր ինծի։

**Պահ մը ամուր գրկված կեցած են, բայց առանց ճամբուրվելու։ Եվ կամաց մը կբաժնվին։**



ԱՆՆԱ— (Բռնելով տղու ձեռքեն ու քաշելով) Եկո՛ւր, եկո՛ւր նըստինք, եկո՛ւր նստինք իրարու քով խելոքիկ, ու խոսինք, խելոք-խելոք խոսինք։ (Կնստին իրարու կից։ Անկուշտ նայելով տղու աչքերուն) Ա՜յ, հիմա կսիրես. ա՜յ, հիմա կտեսնեմ, որ կսիրես. աչքերուդ մեջ կտեսնեմ, որ կսիրես։ Շա՞տ կսիրես, հա՞, շա՛տ կսիրես։ Ո՞րչափ։ (Հետզհետե բանալով թևերը իբրև չափ) Ա՞յսչափ։ Ա՞յսչափ։ Ա՞յսչափ։ Ավելի՞։ Ա՞յսչափ։

ԱՏՈՄ— Անչա՛փ, անչա՛փ. երկնքի՛ չափ։

ԱՆՆԱ— Որը սակայն կսղմի իմ թևերուս մեջ։ (Կգալարե թևերը տղուն վիզը ու ջերմ, ուժեղ համբույրներուն մեջեն) Իմ թևերո՛ւս մեջ։ Թևերուս մեջ։ Ի՛մ, ի՛մ թևերուս մեջ։ Դո՛ւն... իմ թևերուս մեջ։ Դուն թևերո՛ւս մեջ։ (Հանկարծ ետ քաշվելով ու տղու գրկեն ազատվիլ ջանալով) Թո՛ղ, թո՛ղ, հերի՛ք է։ Թո՛ղ, հոգի՛ս։ Թող շունչ քաշե՛մ։ Խեղդեցի՛ր։ (Կելլե ոտքի)։

ԱՏՈՄ— Այո՛. կխեղդե՛մ։ Քեզի կըսեմ՝ կսիրեմ քեզի։

ԱՆՆԱ— Լո՛ւրջ ըլլանք. լո՛ւրջ ըլլանք։ Նախ մեր պարտքը։

ԱՏՈՄ— Ի՞նչ կուզես։ Ըսե՛։

ԱՆՆԱ— Արդարության հարվածը պետք է իջնե քո՛ւ ձեռքովդ, քո՛ւ, քու սեփական ձեռքովդ։ Նայե՛, ես իմ ամբողջ գաղտնիքս դրի քու ձեռքըդ, ամբողջ վրեժս դրի քու ձեռքդ։ Մտածե՛, իմ ահեղ երդումս դրի քու ձեռքդ։ Մտածե՛, աղե՛կ մտածե. եթե չես կրնար, եթե չես ուզեր. տե՛ս, դեռ ժամանակ կա, դեռ կրնաս, քաշվե՛ ու մի՛ խոստանար։ Մի՛ խոստանար ոչինչ. այն ժամանակ կջանամ ես ինքս, կաշխատիմ ես ինքս։ Սուրի սովոր չեն ձեռքերս, բայց կրնամ, կրնամ. վերջապես պետք է որ կարողանամ։ Այնպես որ, թո՛ղ, քաշվե, հեռացիր. դեռ ժամանակ ունիս, դեռ ժամանակ կա՛։

ԱՏՈՄ— Ավելորդ խոսքեր են ատոնք։ Ես ետ նայիլ չգիտեմ, երբ վճիռս տվի։

ԱՆՆԱ— Գիտե՛մ, որ քաջ ես ու կտրուկ. ատոր համար ալ սիրեցի քեզի. ատոր համար ալ կուզեմ, որ հոգիս ու մարմինս սրբվի կեղտեն քու ձեռքովդ։

ԱՏՈՄ— Կսրբվի ի՛մ ձեռքովս։

ԱՆՆԱ— (Քայլ մը ետ կքաշվի և կենալով հպարտ ու հաղթական) Եվ այն ժամանակ դուն կըլլաս արժանի տերը և ա՛յս սենյակին, և ա՛յս ամրոցին, և ա՛յս աշխարհին։ Կըլլաս արժանի տերը ամբողջ պետության մը, կվարե՛ս մեր բանակները, կըլլաս հիացումն ու պաշտամունքը ամենուն, և ես քու գերիդ։ Արդեն այս անգամ ե՛ս քու գերիդ. քեզի պաշտող, քեզի գգվող, քեզմով ապրող, քեզմով հպարտ, միա՛յն քեզմով, քու գերիդ, քու կինդ։ Քու կի՛նդ։

*ԱՏՈՄ— Քանդեմ աշխարհքը քեզի համար, շինեմ աշխարհքը քեզի համար, Թափառիմ աշխարհքը քեզի համար, բերեմ աշխարհքը քեզի համար, որ դուն ըլլաս իմ կինս, իշխանուհի Աննա՛. իմ կի՛նս, իմ գերի՛ս։*

*ԱՆՆԱ— Այն ատեն շուտով. ալ մի՛ ուշացներ։*

*ԱՏՈՄ— Ուշացնել չե՛մ կրնար արդեն, երբ որոշումս տված եմ։ Այլև դադար չկա ինծի համար մինչև չիջնե վճռական հարվածը։*

*ԱՆՆԱ— Եվ ես կուզեմ, որ հարվածը իջնե շիտակ կրծքին, և տեսնե ինքը իր պատիժը տվող ձեռքը։ Եվ չեմ ուզեր՝ ըսեն, որ գողի մը պես եկար զարկիր կռնակեն։*

*ԱՏՈՄ— Այդ տեսակ խոսք չէ՛ ըսվելու ինծի համար. ատիկա չկա բնությանս մեջ։*

*ԱՆՆԱ— Եվ ես կուզեի ամենուն աչքին առջևը. հանդուգն ու համարձակ, ճակատդ բաց։*

*ԱՏՈՄ— Կըլլա ուզածիդ պես, և ամենուն աչքին առջևը։*

*ԱՆՆԱ— Ինչպես Աստծու արդար պատուհասը արևի արդար լույսին տակ։*

*ԱՏՈՄ—* (Հրաժեշտի ձևով) *Ուրիշ հրաման ունի՞ ինծի տալու իմ կինս, իմ տիրուհիս։*

*ԱՆՆԱ— Միայն տենչա՛նք մը։*

*ԱՏՈՄ— Ըսե՛։*

*ԱՆՆԱ— Սիրե ինծի։*

*ԱՏՈՄ—* (ժպտուն) *Իրա՞վ։* (Եվ հաղթական քայլվածքով կելլե դուրս)։

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԴԱՀԼԻՃ

Աջ պատի տակ գահավորակներու շարք մը, մեջտեղինը ավելի մեծ: Ձախ պատի վրա դուռ մը վարագույրով: Ճակտի մեկ մասը ավելի խոր է և կտանի դեպի գլխավոր մուտքը:

### 1

Խորքին մեջ կեցած է Կամսարական իշխանը ուրիշ զինվորականի մը հետ ու կխոսի: Ձախի դռնեն արագ կմտնե իշխանուհի Աննա շուրջը որոնելով: Կամսարականը կթողնե խոսակիցը, որ շուտով կքաշվի և կհետվի դեպի Իշխանուհին։

*ԿԱՄՍԱՐԱԿԱՆ—* (Խոր գլուխ տալով) *Հարգա՛նքս։ Ո՞վ կփնտրե իշխանուհի Աննան։*



*ԱՆՆԱ—* (Արհամարհանքով դիտելեն ետքը) *Համենայն դեպս ոչ քեզի։* (Կուզե ճամփան շարունակե)։

*ԿԱՄՍԱՐԱԿԱՆ— Իշխանուհի՛, կխնդրեմ զսպես վայրկյան մը սրտիդ բարկությունը ու կանգ առնես։ Շատոնց է կուզեի խոսիմ քեզի հետ. ներկայացեր է առիթը. երկո՛ւ խոսք։*

*ԱՆՆԱ— Դուն ի՞նչ կրնաս ունենալ ինծի հետ խոսելու։*

*ԿԱՄՍԱՐԱԿԱՆ— Գիտեմ, որ համարեր ես ինծի քու Թշնամին, համարեր ես ինծի դավաճան մը բերդիդ ու ամուսնուդ։ Մինչև հիմա դիցուք կըմբռնեի քու հակակրությունդ, բայց ասկե ետքը, ճշմարի՛տ, չե՛մ ըմբռներ։*

*ԱՆՆԱ— Չե՛մ հասկնար քու ոլոր լեզուդ։*

*ԿԱՄՍԱՐԱԿԱՆ— Ուրեմն խոսիմ ավելի հստակ։ Կուզեի գիտնամ ի՞նչ տարբերություն կա քու և իմ մեջս, որ ա՛յս աստիճան բարձրեն կնայիս վրաս։ Եթե ես դարձեր եմ պարզ օգնական մը Քեսունի իշխանին, դուն ահա՛ դարձեր ես ինքդ, Թեև անպաշտոն, բայց արդեն գաղտնիք մը չէ ոչ ոքի, ներե՛, դարձեր ես ինքդ միահեծան տիրուհին և՛ Քեսունին, և՛ Իշխանին։ Եթե կա դավաճանություն մը քու ամուսնուդ դեմ ու քու անցյալիդ, ըսե՛ խնդրեմ, որո՞ւնը ավելի ծանր է, քո՞ւնը, Թե ի՞մս։ Ներե՛, իշխանուհի՛ Աննա, ես, իհարկե, քեզի նեղացնելու համար չէ, որ կխոսիմ այս բոլորը։ Ընդհակառակը. կուզեմ հարթեմ Թյուրիմացությունը մեր մեջեն։ Եթե բախտը զարկավ մեկուն իր աքացին, և ան գլտորվելու վրա է, անմտություն է անոր կառչիլը, կխորտակվիս միասին։ Պետք է քաշվիս ու տեղի տաս. և եթե կրնաս՝ կոխե՛ ավերակի Թափված քարերուն վրա ու բարձրացի՛ր վեր, հո՛ն, ուր բախտն է կեցած, ուրկե զարկավ իր աքացին։ Ուրիշի անկումը մյուսներուն ոտքատեղն է։ Այսպե՛ս է, իշխանուհի՛ Աննա, աշխարհքի կարգը, որը ո՛չ ես կրցա փոխել և ո՛չ դուն։ Ինչո՞ւ համար է այլևս քու այդ հակակրանքդ ու Թշնամությունը դեպի ինծի։ Մենք վիճակակից ենք իրարու, և կվայլե, որ ըլլանք նաև դաշնակից։ Մինչև հիմա չմոտեցա ես քեզի, զա՛տ էին մեր ճամփաները. բայց հիմա կտեսնեմ, որ նորեն հանդիպինք պիտի իրարու, քանի որ նորեն պիտի դառնաս իշխանուհի։ Կուզեի նախօրոք մաքրեմ մեր մեջեն հինցած ու Թյուր հաշիվները, որ սխալներ չգործվին։ Դուն, իհարկե՛, հիմա կրնաս վնասել ինծի. սակայն իզո՛ւր. չէ՞ որ ես ալ կրնամ պետք գալ քեզի։ Եվ ի՞նչ պատճառ այդ անտեղի հակառակության։ Ես քեզ դեմ ոչինչ չեմ ունեցած երբեք, բացի հարգանքե. և հիմա ալ ոչինչ չունիմ, բացի հարգանքե։*

ԱՆՆԱ— Ես ալ քեզի համար ոչինչ չեմ ունեցած, բացի զզվանքէ. և հիմա ալ ոչինչ չունիմ, բացի զզվանքէ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ— Աղե՛կ։ Դո՛ւն գիտես։ Բայց քու ո՞ր առավելությանդ համար։

2

Քեսունի Իշխանը կերևա գլխավոր անցքին մեջ և առաջ գալով:

ԻՇԽԱՆԸ— Իշխանուհի Աննա՛ն... Ի՞նչ կընե հոս։

ԱՆՆԱ— (Ցույց տալով Կամսարականը) Բարձրացուցե՛ր ես իր պաշտոնը. շնորհավորեցի՛։

ԻՇԽԱՆԸ— Իրավո՛ւնք ունիս։ Աչքաբաց երիտասարդ է. և արժանի է ամե՛ն գովասանքի։

ԱՆՆԱ— Իսկ ես կփնտրեմ քեզի։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ— Ես կսպասեմ դուրսը, իշխա՛ն։ (Դուրս):

ԻՇԽԱՆԸ— Ինչո՞ւ ես եկեր հոս։ Ի՞նչ կուզես։

ԱՆՆԱ— Սուրդ վրա՞դ է, իշխա՛ն։

ԻՇԽԱՆԸ— Իմ սուրս մի՛շտ է իմ վրաս։

ԱՆՆԱ— Հա՛, հա՛, գիտե՛մ. բայց ուզեցա ստուգեմ, ուզեցա աչքերովս ստուգեմ։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ ունիս։ Ի՞նչ է պատահեր։

ԱՆՆԱ— Գե՛շ նախազգացում մը կա մեջս, հանկա՛րծ մտավ մեջս, շա՛տ գեշ նախազգացում մը։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ նախազգացում։

ԱՆՆԱ— Չգիտե՛մ, չգիտե՛մ։ Հիմա ժողով ունիս կարծեմ։ Ձեռքդ զենքիդ պահե, իշխա՛ն, և ուշադրությունդ արթուն։

ԻՇԽԱՆԸ— Լսե՞ր ես բան մը։ Բան մը իմացե՞ր ես։

ԱՆՆԱ— Ոչի՛նչ, ոչի՛նչ, բացարձակապե՛ս ոչինչ, միայն կզգամ, կըզգամ։

ԻՇԽԱՆԸ— Է՛, կնկա անմիտ վախեր են։ Ի՞նչ կա վախնալու, ինչե՞ կվախնաս։ Բոլոր ինծի շրջապատողները իմ փորձված, իմ մտերիմ, իմ վստահավոր մարդիկս են, իմ լավագույն զենքի ընկերներս։ Խախուտ մարդը այդ Կամսարականն է, որ, ինչպես կտեսնես, հեռու կպահեմ ու աչքս վրան։

ԱՆՆԱ— Իմ նախազգացումս ինծի չէ խաբած երբեք։

ԻՇԽԱՆԸ— Անցի՛ր։ Գնա քու բաժինդ ու հանգիստ եղիր։ Ժողովեն ետքը, թեև շատ ժամանակ չունիմ, բայց վայրկյան մը կհանդիպիմ քեզի։ Հիմա հեռացի՛ր։ Տե՛ս, արդեն հավաքվեր են։



ԱՆՆԱ— Խո՛սք տուր, որ ձեռքդ պահես պիտի զենքիդ վրա։ Եվ լսե՛ ինչ կըսեմ։ Չի՛ խնայե՛ս. զա՛րկ անմիջապես. թշնամին չի՛ խնայե՛ս. վրադ ձեռք բարձրացնողին չի խնայե՛ս. զա՛րկ անմիջապես, ժամանակ չի՛ տա՛ս։

ԻՇԽԱՆԸ— Տե՜ր Աստված, դո՛ւն խելք տաս կնիկ ըսված արարածին։ Խռովեցի՛ր և իմ հոգիս։ Հեռացի՛ր։

ԱՆՆԱ— Բայց նախ խոսք տուր, որ ձեռքդ սուրիդ։

ԻՇԽԱՆԸ— Աղե՛կ, աղե՛կ, չե՛մ քնանար։ Հեռացի՛ր։

4

Երբ կողմնակի դռնով դուրս կելլե Իշխանուհին, ճակտի խորության մեջ արդեն երևցած են քանի մը հոգի. Իշխանի հրամանատար ընկերները, որոնք խոսելով ու ծիծաղելով առաջ կուգան:

Իշխանը, որ վայրկյան մը կեցած էր շվար ու անհանգիստ, հանկարծ վճռաբար ինքզինքը թափ կուտա և համարձակ կհառաջանա դեպի ընկերները:

ԻՇԽԱՆԸ— Բոլո՞րն են ներսը։ Ձայն տվեք մյուսներուն ալ։ Ժամանակ չկա՛ կորսնցնելու։

ՄԵԿԸ— Մանավա՛նդ ես. իսկույն պետք է երթամ. վարը ներկայությունս անհրաժեշտ է։

ՈՒՐԻՇ ՄԸ— Դե՛ լավ, դե՛ լավ, գործ ունինք ամե՛նքս, նորեն իրար մի՛ անցնիր։ Եվ հավտա՛, որ դուն քու բոլորովին ավելորդ հրամաններովդ ավելի պիտի խանգարես, քան օգնես. թո՛ղ, անոնք գիտեն իրենց բանը։

ՆԱԽՈՐԴԸ— Մեյ մը անոնք գիտեն իրենց բանը, մեյ մըն ալ դուն։

ԵՐՐՈՐԴ ՄԸ— Ահա՛, այս երկուքը նորեն կպան իրար։ Ի՞նչ կըլլա, որ հարցի մը մեջ նույն կարծիքի ըլլաք երկուքդ։ Գոնե մե՛կ հարցի մը մեջ նմուշի համար։

ՉՈՐՐՈՐԴ ՄԸ— Կսխալի՛ս. մեկ հարց մը կա՛, ուր երկուքն ալ համակարծիք են։

ԵՐՐՈՐԴԸ— Վա՞յ։ Եվ այդ հարցն է...

ՉՈՐՐՈՐԴԸ— Որ պետք է ջախջախել Թորոսի ուժը։

ԱՌԱՋԻՆԸ— Եթե միայն չենք ուշացեր։

ԵՐԿՐՈՐԴԸ— Ինչո՞ւ ենք ուշացեր. ճի՛շտ ժամանակն է։

ԵՐՐՈՐԴԸ— Տեսա՞ք, նորե՛ն տարակարծիք։

ԻՇԽԱՆԸ— Դե՛, նստեցե՛ք, նստեցե՛ք, որ վերջացնենք շուտով։

Իշխանը կնստի իր աթոռին, հին ու նոր եկողներն ալ անոր շարքը, աջեն ու ձախեն:

ԻՇԽԱՆԸ— Դուք բոլորդ ալ իմ ամենեն թանկագին ընկերներս եք, իմ ամենեն հզոր, ամենեն մտերիմ իշխաններս։ Դուք եք իմ հենարանս և իմ ուսս։ Եվ դուք բոլորդ շա՛տ աղեկ գիտեք, թե ի՞նչ մեծ կարևորություն ունի այն գործը, որուն մենք հիմա կձեռնարկենք։ Վաղվնե կըսկըսինք գործ մը, որուն հետևանքները անչափելի են. մե՛կ անգամեն կկրկնապատկվին մեր հողերը, մե՛կ անգամեն կհասնինք ծովուն, մե՛կ անգամեն կտասնապատկվի մեր բանակներուն կշիռը։ Թուրքը այս անգամ ալ չազատիր մեր ճանկեն. իր օրերը համրված են։ Սուլթանը նըստած է արդեն Կապանի անցքերուն վրա. Պոհեմունդը Անտիոքեն ոտք է դրեր անոր հողերուն. Թուրքը բոլորովին անպատրաստ ու երկուքի ճեղքված։ Պե՛տք է վրա նետվիլ բազեի նման։ Պետք է, որ մեր երթալը ավելի արագ շարժվի, քան մեր երթի լուրը։ Եթե անգամ մը Անարզաբան գրավենք, ցածերը պաշտպանելը անկարելի կդառնա, պետք է քաշվի լեռները, հոն ալ կխեղդենք։ Կճզմենք երկու քարի մեջ Սուլթանն ու մենք։ Ձեզմե ամեն մեկը գիտե արդեն իր դերն ու տեղը, իր բռնելիք ուղղությունն ու շարժումը։ Հիմա կմնա որոշենք քանի մը վերջին վայրկյանի հարցեր, ուրկե ետքը ամեն մարդ իր գործին։ Ուրեմն՝ ես ու իշխան Համազասպը ճամփա կիյնանք լուսաբացին. իշխան Ներսեսը այս իրիկուն իսկ կհասնի իր գնդերուն. մնացածներդ...

5

Ճակտի խորհեն ճուզված ու արագ առաջ կուգա Ատոմը և կկենա մեջտեղը շիտակ ճորը դեմ:

ԻՇԽԱՆԸ— (Որ խոսքը կտրած էր, զարմանքով) Չե՞ս տեսներ, որ զբաղված ենք։

ԱՏՈՄ— Գիտեմ, հավաքված են քու ընկերներդ, մեր իշխանները, և հավաքվա՛ծ են վերջին անգամ։ Ճիշտ ատոր համար է, որ պիտի ներե՛ն ինծի իշխանները, եթե վայրկյան մը զբաղեցնեմ իրենց՝ շա՛տ ավելի կարևոր բանով մը։

ԻՇԽԱՆԸ— Ի՞նչ կխոսի այս տղան։ Հիմա՞ր ես։

ԱՏՈՄ— Ես քեզի չէ՛, որ կխոսիմ, այլ ասոնց։ Եվ երկար չէ՛ իմ դատը։ Պիտի տեսնե՛ք, որ շատ է կարճ։

ԻՇԽԱՆԸ— (Հրամայական) Հեռացի՛ր, ա՛յ տղա. գիտես, որ ես անկարգ բաներ չեմ սիրեր։ Երբ վերջացնենք՝ կկանչեմ քեզի, տեսնե՛նք ի՛նչ կըսես։



ԱՏՈՄ— Քեզի կըսեմ՝ քեզի չէ՛, որ կխոսիմ, այլ ասոնց, քու ընկերներուդ, քու իշխաններուդ։ Ասոնց դեմը ես կամբաստանե՛մ քեզի։

Իշխանը զայրույթով կցատկե ոտքի. ամենքը ճուզված:

ՄԵԿԸ— Թո՛ղ, իշխա՛ն, թո՛ղ, որ խոսի. տեսնենք՝ ինչ կըսե։

ՀԱՄԱԶԱՍՊ— Ատո՛մ, ա՛յ տղա, ի՞նչ է պատահեր քեզի։

ԱՏՈՄ— Ինչ է պատահե՞ր։ Համազա՛սպ իշխան, հիմա կիմանաս, ատոր համար եմ ահա՛ եկեր հոս. և միևնույն է, հոսկե հեռացողը չե՛մ ես, մինչև դատս չտեսնվի։

Իշխանը շարժում մը կընե դեպի առաջ: Համազասպ կբռնե թևեն:

ՀԱՄԱԶԱՍՊ— (Իշխանին) Հանգի՛ստ։ (Ատոմին) Խոսե՛։

ԱՏՈՄ— Կտեսնե՞ք այդ մարդը, որ ինքզինքը իմ հայրս կանվանե, այս մարդը թույն է խմցուցեր իմ մորս։

Ընդհանուր իրարանցում: Կբացականչեն միաժամանակ:

ՄԵԿԸ— Ի՛նչ կխոսի...

ԵՐԿՐՈՐԴԸ— Խելքդ գլուխդ ժողվե՛։

ԵՐՐՈՐԴԸ— Ատո՛մ, Ատո՛մ...

ՉՈՐՐՈՐԴԸ— Խենթեցե՛ր է։

ԻՇԽԱՆԸ— (Տեսակ մը կոտրված) Աստվա՛ծ իմ, նորե՞ն այդ անմիտ պատմությունը։ Հիմա ալ դո՞ւն։ Ինչո՞ւ համար է ինծի այս պատիժը, Աստվա՛ծ։

ԱՊԻՐԱՏ— (Տղուն թևեն քաշելով) Անմիջապե՛ս հեռացիր։

ԱՏՈՄ— Սպասե՛, սպասե՛, Ապիրա՛տ իշխան, դեռ չվերջացուցի։

ԱՊԻՐԱՏ— (Համոզելու ձիգով) Հեռացի՛ր, հեռացի՛ր։

ԻՇԽԱՆԸ— (Կտրուկ) Թո՛ղ։ Թողեք տեսնեմ՝ ուրիշ ի՞նչ ունի ըսելու։ Խոսե՛, զավա՛կս, խոսե՛, նայիմ։

ԱՏՈՄ— Ո՛չ կեղծավորությունը կօգնե քեզի այլևս, ո՛չ ուրացումը։ Կտեսնե՞ք այս մարդը, որ ինծի իր զավակը կանվանե, այս մարդը սպաններ է իմ եղբայրս, իր զավա՛կը, ի՛ր, իր մյուս զավակը։ Լուսամուտեն նետեր է վար, անդո՛ւնդը։

ԻՇԽԱՆԸ— (Հանկարծակիի եկած տեսակ մը կկծկվի ու շարժում մը կընե դեպի ետ):

ՀԱՄԱԶԱՍՊ— Ատո՛մ, լռե՞ս պիտի։

ՄԵԿԸ— Հիմարությո՛ւն է խոսածը։

*ԵՐԿՐՈՐԴԸ— Մի՞թե իրա՞վ է։*

*ԱՏՈՄ— Դեռ չվերջացուցի։*

*ԵՐԿՐՈՐԴԸ— Խոսե՛։*

*ԱՌԱՋԻՆԸ— Հերի՛ք է։*

*ԻՇԽԱՆԸ— Իսկ դո՛ւն, իսկ դո՛ւն. ի՞նչ կուզես դուն. հիմա ալ դո՛ւն։ Համենայն դեպս հավներ եմ քեզի, գովեր եմ քեզի, համարեր եմ քեզի միշտ իմ արյո՛ւնս, իմ կորո՛վս, իմ ժառա՛նգս, իմ որդի՛ս, երե՛ս եմ տվեր քեզի, չե՛մ խնայեր ոչինչ. դո՞ւն ինչ կուզես. դո՞ւն ինչ կուզես։ Աստվա՛ծ իմ, միթե բոլորի՞ զավակներն են այսպես։ Սա ի՞նչ ձեռք է, որ ձեզի կզինե իմ դեմս. և ինչո՞ւ, ինչո՞ւ։ Քեզի ի՞նչ եմ ըրեր ես. քեզի ի՞նչ եմ ըրեր ես։*

*ԱՏՈՄ— Ինձի՞։ Կտեսնեք այս մարդը, որ կպարծենա, թե այդքան բարիք է թափեր իմ վրաս, այդ մարդը լեղի՛ է դարձուցեր իմ կյանքս. կե՛ղտ. անպատվությո՛ւն, տանջա՛նք ու ատելությո՛ւն է լեցուցեր հոգիիս մեջ. ա՛չք է տնկեր սիրած կնոջս ու դանակ է ցցեր կուրծքս։* (Հանկարծ գոտիեն կքաշե դաշույնը, կհարձակվի հորը վրա ու անոր կրծքին զարնելու փորձելով) *Ա՛յ, այսպե՛ս, դանա՛կ է ցցեր իմ կուրծքս... դանա՛կ է ցցեր... դանա՛կ... դանա՛կ...*

Իշխանը ետ քաշվելու շարժում մը կընե՝ ձախ թևը պաշտպանվելով, արագ կքաշե սուրը ու կնետվի տղուն վրա:

Բոլորը կխառնվին ու կխռնվին: Եվ կռվողները իրարմե բաժնելու վայրկյանին, ճիգին ու աղմուկին մեջեն է, որ կլսվի ռռոչ.

*ԸՆԴՀԱՏ ՁԱՅՆԵՐ— Բռնեցե՛ք թևը։*

*—Դանա՛կը...*

*— Ի՞նչ կընես... ի՞նչ կընես, իշխան։*

*— Կեցի՛ր։ Կեցի՛ր։*

*— Տե՛ր Աստված...*

*— Դիպա՞վ... դիպա՞վ...*

*— Քնա՞ծ եք, ի՞նչ է։*

Աստմի ձեռքեն դաշույնը կիյնա. երկու ձեռքով կուրծքը սեղմած ետ-ետ կերթա: Քանի մը թևեր կգրկեն ետևեն, կամաց կդնեն գետին ու կհակին վրան:

*ՎՐԱՆ ՀԱԿՈՂՆԵՐԵՆ ՄԵԿԸ— Վիրաբո՛ւժը, վիրաբո՛ւժը։*

*ՄԵԿԸ—* (Դուրս վազելով) *Վիրաբո՛ւժը, վիրաբո՛ւժը. կանչեցե՛ք վիրաբուժը։*

Համազասպն ու Ապիրատը մտած են Իշխանի թևերը, որ կեցած է քարացած: Սուրը առած են ձեռքեն: Իսկ ձախ թևեն թեթև արյուն կվազե:

Եվ ակնթարթ մը ընդհանուր լռություն:



*ՁԱՅՆ ՄԸ— Սարսափելի՛ է։*

*ՈՒՐԻՇ ՄԸ—* (Քովեն) *Լռե՛, լռե՛։*

*ՎԻՐԱՎՈՐԻՆ ՕԳՆՈՂՆԵՐԵՆ ՄԵԿԸ— Զգո՛ւյշ, զգո՛ւյշ, շապի՛կը։*

*ՕԳՆՈՂՆԵՐԵՆ ԵՐԿՐՈՐԴԸ— Թո՛ղ, որ վիրաբուժը գա։*

*ԵՐՐՈՐԴԸ— Ավելո՛րդ է. շիտա՛կ սրտին. դիպեր է սրտին։*

*ՉՈՐՐՈՐԴԸ—* (Ոտքի ելլելով ու ետ քաշվելով) *Վայրկենակա՛ն։*

*ԻՇԽԱՆԸ—* (Ազատելով թևերը) *Թողե՛ք, թողե՛ք։ Մի՞թե սա իրականություն է, մի՞թե հիմար երազ չէ սա։ Ի՞նչ ծանր ճակատագիր է, Աստվա՛ծ իմ։ Ինչո՞ւ տվիր ինձի այս զավակները, եթե այսպես ու այս ձևով առնելու էիր ձեռքես։ Եվ ինչու ի՛մ ձեռքովս, անպատճառ ի՛մ ձեռքովս։ Ես անոնց հա՞յրն եմ, թե՞ անոնց դահիճը։ Եվ ի՞նչ կուզեր ինձմե այս տղան. ի՞նչ կըսեր. ի՞նչ էր պատճառը։*

## 6

Խորքեն ներս կվազե իշխանուհի Աննան և շիտակ դեպի Աստմը: Վրան հակվածները կելլեն ոտքի:

*ԱՆՆԱ— Մեռա՞վ։* (Ձեռքերը հուսահատ կբարձրացնե վեր, հանկարծ կփրթի հորդ հեծկլտանքը, և լալով կշոքի դիակի վրա):

Ամենքը լռած են, իրար խմբված:

Իշխանը նախ զարմանքով կդիտե, ետքը խոժոռ կմոտենա կնոջը, պահ մը նորեն կդիտե, և հանկարծ կզարնե անոր ուսին:

*ԻՇԽԱՆ— Դուն ի՞նչ գործ ունիս հոս։ Քեզի՞ ինչ։*

*ԱՆՆԱ—* (Կուղղվի և շարժելով գլուխը) *Իսկո՛ւյն, իսկո՛ւյն։* (Կշորցընե աչքերը, կծռի, կհամբուրե տղու շրթունքները և դանդաղ կելլե ոտքի)։ *Վերջացա՛վ։*

*ԻՇԽԱՆԸ—* (Սպառնալից) *Ինձի նայե՛։ Ի՞նչ կըսեիր դուն այսօր։*

*ԱՆՆԱ— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն։*

*ԻՇԽԱՆԸ—* (Վրա վազելով ու խելազար նայվածքով) *Միթե իրա՞վ է, միթե իրա՞վ է կասկածս։*

*ԱՆՆԱ— Կտեսնե՛մ, որ այլևս աչքերուս մեջի ատելությունը հաճույք չի՛ պատճառեր քեզի։*

*ԻՇԽԱՆԸ—* (Ձեռքերը սարսափահար տարածած, բերանը բաց ու երկար շունչ մը ներս քաշելով, մեկ-երկու քայլ ետ կընկրկի) *Ա՜ա՜...*

*ԱՆՆԱ— Դուն մորթե՛լ տվիր իմ երկու անմեղ երեխաներս, ես մորթել տվի քու երկու կորիճ տղաքդ. մեր հաշիվը փակված է։ Եվ մորթել տվի քո՛ւ իսկ ձեռքովդ, որ հիշողությանդ մեջ ամուր նստի։*

ԻՇԽԱՆԸ— (Կատղած ու դողալով առաջ կուգա՝ ձեռքերը խեղդելու պատրաստ դիրքով) Դո՞ւն... դո՞ւն... ուրեմն այս բոլորը... դո՞ւն։ Իմ երկո՛ւ զավակներս... Ես կխեղդե՛մ քեզի. ես կխեղդեմ քեզի։

ԱՆՆԱ— (Աչքերը կգոցե ու թևերը կախ) Խեղդե՛. զա՛րկ. զավակիդ արյունը կրող սուրը խրե կողս։ Զա՛րկ, սպաննե՛. ես ավարտեցի իմ գործըս, ես կատարեցի իմ պարտքս. կատարե՛ քու պարտքդ։

ԻՇԽԱՆԸ— (Որ բոլորովին մոռեցեր էր կնոջը, հանկարծ նորեն ետ-ետ կքաշվի) Ո՛չ, ո՛չ, ո՛չ այսպես. ո՛չ սուրով. ո՛չ ձեռքով. ո՛չ։ Ես կուզեի քեզի համար երկա՜ր, երկա՜ր մահ մը, անվե՜րջ մահը մը. ես կուզեի հարյուր հոգի ունենայիր ու հարյուր անգամ քերթել տայի քեզի, բութ ու ժանգոտ դանակով, որ միսերդ կտոր-կտոր... (Հանկարծ) Հա՛, կեցի՛ր. կանչեցեք, խուրշի՛տը, խուրշի՛տը։ (Խնդալով) Դուն արժանի ես բացառիկ մահվան, դուն բացառիկ կին մըն ես. դուն արժանի ես իր մահը ապրող, իր մահը վայելող մահվան, դուն հանճարեղ կախարդ մըն ես։ Դուն քու ժառանգներուդ վրեժը լուծեցիր ինծմե. աղե՛կ։ Ես ալ հիմա իմ ժառանգներուս վրեժը հանեմ քեզմե, որ տեսնես։

Ներս կբերեն կարճահասակ ու չլափիկ, կապիկի դեմքով մարդ մը:

ԻՇԽԱՆԸ— Հա՛, խուրշի՛տ, մո՛տ եկուր, կտեսնե՞ս այս գեղեցիկ կնիկը. կբռնես մազերեն և հոսկե շիտակ քարշ կուտաս անգղներու աշտարակը. կմերկացնե՛ս, կթքե՛ս, կմրե՛ս, կանպատվե՛ս, կընես ինչ որ սիրտդ ուզենա։ Միայն գիտցի՛ր, դեռ մութը չկոխած ան պետք է կախված ըլլա իր մազերեն ու մորե մերկ աշտարակին գերանեն, և կենդանի՛։ Ես խոստացեր էի՝ մեր ժողովեն ետքը պիտի երթայի իրեն։ Ահա՜, տիկի՛ն, կպահեմ իմ խոստումս, կուգամ անգղներու աշտարակը քեզի վերջին այցելության։ (Վայրի ծիծաղով) Հա՜, հա՜, հա՜. այդ տեսակ մարմին, այդ տեսակ հարկինք դեռ չե՛ն տեսած անշուշտ այդ հին աշտարակի հին անգղները։ Ապրող միսդ ամեն մեկ փերթը փրցնե՛ն քեզմե կտոր-կտոր և դեռ զգացող հոգիդ տեսնե իր մարմնին հոշոտվիլը և վայելե քայքայումը իր գոյության. և թող հասկնա՛, թե ինչ ըսել է վրեժը, թե ինչպես կառնեմ ես ալ ի՛մ վրեժը։ Հայդե՛. քա՛րշ տուր. տա՛ր։

ԱՆՆԱ— (Շատ մեղմ ու հանգիստ) Կեցի՛ր, իշխա՛ն։ Վայրկյա՛ն մը։ Բան մը ունիմ խղճիս վրա քեզի ըսելու։ Այն մարդիկը, որոնց հանձներ էիր իմ ձագուկներուս սպանությունը, կիսատ էին զարկեր և ծուռ էին զարկեր։ Անցած գիշեր եկեր էին տղաքս. տեսա պզտիկիս վե՛րքը, ա՛յ, հո՛ս էր, տե՛ս... (Ձախ ձեռքովը ցույց կուտա տեղը իր մարմնին վրա) վզին տակովը. խեղճը չէր կրնար գլուխը շիտակ պահել։ Լա՞վ չէ։ Ա՜յ, ուրիշ բան է քու զարկածդ. նայե՛, խկույն կերևա վարպետի զարկ է. ճի՛շա կրծքին. վիզեն վա՛ր. բավական վա՛ր. ա՜յ հո՛ս... (Ձախ ձեռքովը իր մարմնին վրա կմատնանշե տեղը. և հանկարծ աջ ձեռքին բոլոր ուժովը կզարնե այդ տեղը) Տե՛ս։

ՁԱՅՆ ՄԸ— Զարկա՛վ, զարկա՛վ իրեն։

Խլրտում: Մեկ-երկու հոգի կվազեն օգնության. ուրիշները սարսափով կծածկեն դեմքերնին ու կդարձնեն գլուխնին:

ԻՇԽԱՆԸ— (Առանց իր տեղեն շարժվելու, հուսահատ ու ջարդված) Մի՛ թողնեք, մի՛ թողնեք. խլեցե՛ք զենքը։

ԱՆՆԱ— Իմս էին քու երկու զավակներդ ալ։ (Իյնալով դեպի Ատոմի մարմինը) Ի՛մս, ի՛մս, ի՛մս...

ԻՇԽԱՆԸ— (Խորտակված) Բաժնեցե՛ք... բաժնեցե՛ք իրարմե։

ՀԱՄԱԶԱՍՊ— Քալե՛, քալե՛, երթանք։ Քու տեղդ չէ հոս։ Այլևս քո տեղդ չէ հոս։

ՈՒՐԻՇ ՄԸ— Ել պետք է խնամել թևդ. կարյունի։

ԻՇԽԱՆԸ— (Ցնցվելով և վճռաբար) Հա՛, իմ տեղս չէ հոս։ Երթա՛նք։ Իշխաններս կներե՛ն ինծի այս անսպասելի ու ծանր պատահարը։ Ես հանցանք չունիմ, եթե ակամա դուք ալ ներկա եղաք իմ ընտանեկան դժբախտության։ Ապրա՛ծ իշխան, Ատոմը քեզի շատ կսիրեր։ Իր մարմինը կհանձնեմ քեզի. կթաղես ամեն հարգանքով, ինչպես վայել է մեծ իշխանի մը միակ ժառանգին։ Ես ու իշխան Համազասպը կմեկնինք վաղը լուսաբացին. վաղը առավոտ զորքը պետք է շարժվի։ Մահը իր ճամփով, կյանքը իր ճամփով։

Իշխանը կուղղվի դեպի խորքը. սավար խումբ մը ետևեն: Բոլորն ալ լուռ ու սգավոր: Ուրիշներ դեռ կանգնած են ինկած մարմիններուն շուրջը ապշած ու կարեկցոտ կեցվածքով:

# ՕՇԻՆ ՊԱՅԼ

Թատերակ Կիլիկյան կյանքե
ԺԴ-դարու երրորդ տասնամյակին

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ ՎԵՑԱՆԿՅՈՒՆ ՍՐԱՀ ՄԸ ԿՈՌԻԿՈՍԻ ԲԵՐԴԻՆ ՄԵՋ
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԾՈՎԱՓԻՆ

Ճակատը արտակարգ հաստ պատին մեջ դուռն է լայն ու ցած երկաթե փեղկով մը, որ բաց է և կհանե բերդի պարիսպին վրա: Պարիսպեն վար կերևա անսահման փռված ծովը իրիկնամուտի ուրախ արևին տակ: Արևի լայն շերտ մը դուռնեն ինկած է խորը սենյակին մեջ:

Դռան կից ձախի շեղ պատը ամբողջապես ծածկված է գրքերու ու մագաղաթներու դարակներով ինչքան որ մարդու թևը կհասնի. անկե վեր ամեն տեսակի զենքեր, զրահներ ու վահաններ են կախված ու շարված:

Դրադարակներուն առջևը հաստատուն ու խոշոր գրասեղան մը՝ վրան գրքերով ու թղթերով լեցուն: Ու ետևը նման խոշոր բազկաթոռ մը:

Հանդիպակաց աջ շեղ պատեն կախված է շքեղ լայն գորգ մը, տակը լայն բազմոց մը՝ նմանապես գորգերով ծածկված, ինչպես և գետինը: Քանի մը գահավորակ ու բազկաթոռ. և երկու ահագին երկաթե ջահակալներ:

Երթևեկի մուտքը աջեն է:

### 1

Գրասեղանին առջևը ետ ինկած՝ նստած է Օշին իշխանը, Կոռիկոսի տերը, երազանքի մեջ: Քառասունի չհասած, միջահասակ, թուխ, խոհուն նայվածքով ու կտրուկ շարժումներով, տիրական կերպարանք մը:

Քիչ մը ետքը ճակտի դռան մեջեն պարիսպին վրա կերևան Ռիթա ու Ալիս իրարու փաթթված՝ երկուքն ալ թեթև, ներմակ հագուստներով: Ռիթա քսան տարեկանի շուրջ, բարձրահասակ ու շեկ. իր դեմքին, շարժումներուն, հարդարանքին ու խոսվածքին վրա կա հին ու ընտիր ցեղե ըլլալու դրոշմը, պարզություն ու ճշմարտություն: Ալիս տասներկու տարեկանի մոտ աղջնակ մըն է խելացի դեմքով, շատ նիհար ու շատ թուխ:

Երկու աղջիկները իրենց ծիծաղը բռնած զգույշ կմոտենան դռանը ոտքի ծայրերուն վրա ու կդիտեն վայրկյան մը իշխանը և ետքը բարձրաձայն խնդուքով կնետվին ներս դեպի գրասեղանը: Ռիթա կանգ կառնե քայլ մը հեռու, իսկ Ալիս քմայնոտ ու փաղաքշոտ կնետվի հորը վրա:



*ԱԼԻՍ— Մի՛ թողներ, հայրի՛կ, մի՛ թողներ այս գիշեր, որ երթան։*

*ՕՇԻՆ— Քույրս ալ քիչ մը առաջ միևնույն բանը ըսավ, Ռի՛թա։*

*ԱԼԻՍ— Տեսա՞ր, տեսա՞ր, հորքո՛ւրն ալ։*

*ՌԻԹԱ— Ես... սիրով. բայց հայրիկս ըսավ՝ գործ ունի։*

*ՕՇԻՆ— Իրա՛վ, ի՞նչ եղավ հայրդ. վար գնաց ու չեկավ։*

*ՌԻԹԱ— Չգիտե՞ս, ան հոս եկավ թե չէ՝ ձեր Միքայելն չի զատվիր. հորս միայն մարդ մը տուր, որ ձիու մասին խոսի։*

*ԱԼԻՍ— Ես հիմա կերթամ քու հայրիկիդ կհամոզեմ. կուզե՞ս։*

*ՌԻԹԱ— Եթե կրցար։*

*ԱԼԻՍ— Ինծի համբուրե՜։*

Կհամբուրվին, և Ալիս ցատկոտելով կվազե կողմնակի դռնեն դուրս:

### 2

*ՕՇԻՆ— Աղջիկս ալ կախարդեր ես։*

*ՌԻԹԱ—* (Ամչնալով) *Լռե՛։*

*ՕՇԻՆ— Ինչո՞վ կկապես դուն այսպես ամենուն սիրտը քեզի։ Քույրս ալ անցած օր կըսեր, թե շատ կսիրե քեզի, իսկ քույրս շատ ապրածտեսած կին է և ամեն մարդու չի հավնիր։*

*ՌԻԹԱ— Իսկ... դեռ ոչինչ չէ՞ զգացած։*

*ՕՇԻՆ— Ո՛չ, շատ պիտի զարմանա։ Նստե՛։*

*ՌԻԹԱ—* (Նստելով սեղանին մյուս կողմը) *Այնպե՜ս կամչնամ, երբ աչքերուս խորքը կնայի. ինծի այնպես կթվի, որ հոն ամեն բան գրված է։*

*ՕՇԻՆ— Խե՜նթ աղջիկ։ Ես շիտակը մեծ հաճույք կզգամ, երբ ուրիշներուն առջևը առանց ոչ ոքե հասկցվելու մեր հոգիները կխոսին իրարու։*

*ՌԻԹԱ— Կկարծես ես ո՞չ։*

*ՕՇԻՆ— Ես կզարմանամ ի՛մ վրաս։ Կկարծեի արդեն ամեն ինչ ապրեր եմ ու հաշիվս մաքրեր, որովհետև սրտանց սիրած եմ ես իմ կինս և խորապես տառապած իր կորուստեն։ Սակայն ինչ որ հիմա ինծի հետ կկատարվի՝ բոլորովին ուրիշ տեսակի բան մըն է։ Այսպես կապվիլ քու տարիքիդ աղջկա՞ն մը։*

*ՌԻԹԱ— Գիտե՛մ, ըսել կուզես՝ ինծի նման հիմար երեխայի մը։ Իմ անխելքությունս ու խեղճությունս կվիրավորե քեզի։*

*ՕՇԻՆ— Ավելորդ խոսքեր։ Ես քեզի միշտ իբրև ընկեր եմ զգացեր և միշտ ալ իբրև հավասարի հետ եմ խոսեր քեզի հետ։ Միթե չե՞ս տեսներ։*

*ՌԻԹԱ— Այո՛. դուն այնքան հասուն ես, այնքա՜ն ուժեղ ու բա-*

ցառիկ, որ անկարելի է արդեն քու հոգիիդ շփվիլ առանց բարձրանալու, առանց հասուննալու։

ՕՇԻՆ— (Խնդալով) Ա՜խ, այդպե՜ս։

ՌԻԹԱ— Կռիվներուն մեջ քեզմե քաջ ու հանդուգն կռվող չկա. շատերուն եմ պատմել տվեր։ Պալատին մեջ քեզմե վճռական ու համարձակ խոսող չկա։ Այս աշխարհի իշխաններուն մեջ քեզմե ավելի խելքի տեր մեկը չկա։ Հայրիկս ալ նույն կարծիքի է։

ՕՇԻՆ— Այսինքն՝ քիչիկ մը կսիրես ինծի։

ՌԻԹԱ— Երբեմն ինծի հարց կուտամ՝ թե ես ինչ էի, ի՞նչ արժեք ուներ իմ կյանքս, երբ դուն դեռ հյուսված չէիր իմ հոգիիս։ Եվ մի՞թե այդ տեսակ ժամանակ եղեր է։ (Հանկարծ) Գիտե՞ս ո՛րն է մեր տան ամենեն բախտավոր անկյունը։ Ծովա՛փը, ամենեն վերջին ծայրը. դիտա՞ծ ես, հոնկե Կոռիկոսը ամբողջ կերևա։ Տունը գործե ազատ ըլլալուս պես կվազեմ հոն, կնստիմ ծովուն դեմը, բերդիդ դեմը, արևուն դեմը, ձեռագործ մը ձեռքս։ Ու կհյուսեմ, կհյուսեմ, չգիտեմ՝ ձեռքիս բանելի՞քը, թե ուրիշ բանվածք մը աննյութ ու անսահման։ Գիտեմ միայն, որ երբ ուշքի կուգամ, ձեռագործիս միլը ինկած է ձեռքես. իսկ հոգիիս մեջ... ծո՜վը, երկի՜նքը, արև՜ը ու... դո՛ւն, ու դո՛ւն։ (Գլուխը կամաց մը կախած է կրծքին):

ՕՇԻՆ— (Դանդաղ շարժումով մը սեղանին վրայեն կբռնե աղջկան ձեռքը, կմոտեցնե իրեն, կծռի, կսեղմե շրթունքին և նորեն կամաց մը վար կդնե) Եվ քանի որ իրար պիտի խոստովանինք, շատ անգամ իմ ալ գրիչս ձեռքես կիյնա։

ՌԻԹԱ— (Բախտավոր ու աշխույժ կցատկե ոտքի) Բայց ես քեզի խանգարել չեմ ուզեր. ես կուզեմ քեզի դրդիչ մը ըլլամ, կուզեմ օժանդակ մը ըլլամ։ Կըսեիր աշխատությանդ մեկ-երկու աղբյուր կպակսին, գտա՞ր։

ՕՇԻՆ— Գրեցի հայր սուրբիս, որ անպատճառ տեղե մը ձեռք բերե։ Աշխատանքս քանի կերթա կխորանա, աղվոր բան պիտի ըլլա, Ռիթա։ Այն տեսակի հարցեր կբացվին դեմս, որ բնավ լսած ու մտածած չէի։ Երբ պատմական իրողության մը վրա «ինչո՞ւ» մը կդնեմ, այդ ինչո՞ւին տակեն թել մը կելլե անպատճառ. թելը որ բռնեցիր, կծիկի ծայրին կնմանի, ինչքան քաշես՝ կքակվի։ Այս ձևով եթե լրացնեմ, ո՛չ թե պարզ պատմություն մը պիտի դառնա մեր թագավորներու ու մեր աշխարհի, այլ բոլորովին ուրիշ տեսակի ստեղծագործություն մը։ Ինչպես ըսեմ, որ պարզ ըլլա։ Մեր այս Կիլիկիայի թագավորությունը մարդու մը կնմանի, ապրող կենդանի էակի մը. և ես պարզ կտեսնեմ անոր ծնունդը, տղայությունը, պատանությունը և առնությունը. կատարված բոլոր



դեպքերը, առաջ եկող բոլոր դեմքերը բոլորովին ուրիշ իմաստ և ուրիշ լույս կստանան, երբ այս ձևով հարցին կմոտենաս։

ՌԻԹԱ— Իրա՞վ։ Ի՜նչ աղվոր պիտի ըլլա։

ՕՇԻՆ— Եվ այդ ապրող ու աճող էակը հայն է, հայ տարրը այս հողերուն վրա, հայ հոգին, հայ պետականությունը։ Ատոր համար է, որ Լուսինյաններու, Ամորիներու և բոլոր լատինական խմորի մարդոց ազդեցությունը միայն տկարացում կբերեն այս երկրին։ Հայության վրա է հիմնված այս թագավորության ուժն ու դիմացկունությունը։

ՌԻԹԱ— Գիտե՞ս ինչ կա, իշխա՛ն։ Քեզի բան մը պիտի ըսեմ, բայց վրաս չխնդաս։ Գնչու կին մը օր մը թևս ծակեց, արյունս առավ ու գիտե՞ս ինչ կարդաց մեջը, ըսե՞մ։ Ըսավ՝ որ ես բարձրանամ պիտի մինչև թագավորական գահը։

ՕՇԻՆ— Օ՜, ատիկա աղվոր լուր չէ։ Ես ո՛չ թագավորություն ունիմ, ո՛չ ալ գահ, որ քեզի տալ կարողանամ։

ՌԻԹԱ— Ո՞վ գիտե։ Քեզի պես մարդ պետք է այս պետության գլուխը։

ՕՇԻՆ— Վա՜յ, այդ տեսակ փառասիրություննե՞ր ալ ունիս քու այդ սիրուն գլխուդ մեջ։

ՌԻԹԱ— Ասիկա փառասիրություն չէ. գնչուհիին գուշակությունն է։

## 3

ԱԼԻՍ— (Շտապ ներս նետվելով) Հայրի՛կ, հորեղբայրը։ Հորեղբայրը եկավ, ուրիշ հյուրերու հետ։

ՕՇԻՆ— Կոստանդինը, Սիսե՞ն. ո՞վ ըսավ քեզի։

ԱԼԻՍ— Ո՞վ պիտի ըսե. ձիերեն նոր իջան. ինծի գրկեց։ Ա՜յ։

Դուրսը խառնակցության աղմուկ:

ՌԻԹԱ— Ես փախա։ (Դուրս ճակտի դռնեն):

## 4

Կողմնակի դռնեն ներս կմտնեն Սրբազանը, Աբել, Բագուր, Կոստանդին, Հեթում ու Սմբատ իշխանները և Օշին իշխանի հայրը:

Աբել իշխանը՝ Պապեռոնի տերը՝ խնդումերես ու սրտաբաց, խիստ բարձրահասակ ու ալեխառն:

Բագուր իշխանը՝ Կապանի տերը՝ սաթի նման սև մազ ու մորուքով, փոքր ու սուր աչքերով և կաս-կարմիր այտերով:

Հեթում իշխանը միջին տարիքի, կարճահասակ, խիստ շարժուն ու անհան-

դարու, մշտապես զվարթ. սենեշալ է, այսինքն՝ արքունիքի և ներքին գործերու վարիչը:

Կոստանդին իշխանը՝ Օշինի եղբայրը՝ հայտնի զորավար, Օշինեն ավելի երիտասարդ է և քիչ մը գիտության հակվող, առույգ ու հանգիստ:

Սմբատ իշխանը՝ Բերդուսի տերը, Ռիթայի հայրը. տարիքոտ և քիչ մը կքած, բայց վայելուչ:

Օշինի քույրը սևազգեստ ու սպիտակահեր:

*ՕՇԻՆ— Հրամմեցե՛ք, Սրբազան հայր. այս ի՜նչ անակնկալ։ Վա՜յ, Աբե՛լ իշխան, իմ բերդս ո՞տք կդնես. կարծեմ առաջին անգամ։ Հեթո՞ւմ, դո՞ւն ալ, պալատը մնացեր է առանց քեզի. սա ի՞նչ հրաշք է. և ի՞նչ բանի եմ պարտական այս հրաշքը։ Ի՞նչ է պատահեր, Կոստանդի՛ն։ Բարև՛, Բագո՛ւր իշխան։ Հրամմեցե՛ք, հրամմեցե՛ք. ու խոսեցե՛ք նայիմ։*

*ՍՐԲԱԶԱՆԸ— Համբերություն ունեցի՛ր, օրհնա՛ծ, շունչս թող տեղը գա, սանդուղդ քիչ մը շատ է երկար։ Նստինք՝ ամեն բան կհասկնաս։ Քեզմե ծածուկ պահելու համար չենք եկած այսքան երկար ճամփան։*

*ՕՇԻՆ— Տունս ու ես ձեր խոնարհ ծառան։*

*ՍՐԲԱԶԱՆԸ— Ուրեմն առանց հառաջաբանի։ Աստված դեռ երկար կյանք տա մեր Օշին թագավորին, բայց ամենքս մահկանացու ենք, և ժամանակները շատ են խառնակ, արքայորդին ալ դեռ տղա մըն է. լավ է ամեն պատահականության դեմ պատրաստ գտնվինք, որ հանկարծակիի չի գանք։ Աստված մի՛ արասցե, ի՞նչ կըլլա մեր վիճակը, եթե հանկարծ մանուկ թագավորը, պալատը և կառավարությունը իյնա մեր սուրբ եկեղեցին լքած մարդոց ձեռքը։ Չէ՞ որ թագավորին ամենեն մոտիկ ազգականները՝ Զապելն ու անոր որդիքը իրենց կյանքով ալ, արյան կապերով ալ, հոգիով ալ լատինացած մարդիկ են. և հախուռն մարդիկ են, իրենց ուժեղ կողմնակիցներն ունին թե՛ ներսը և թե՛ մանավանդ դուրսը։ Անցած օր բավական բազմաթիվ խորհրդակցություն մը տեղի ունեցավ պալատը, որ եկանք այն եզրակացության, որ հիմակվընե լավ է ընտրվի խնամակալություն մը, որ Օշին թագավորի մահվան պարագային անմիջապես թագավորության սանձերը առնե իր ձեռքը և վարե Լևոն թագավորի կրթությունը մինչև անոր չափահաս դառնալը։ Եվ միաձայնությամբ եկանք այն եզրակացության, որ այդ խնամակալության գլուխը պիտի գտնվի անպատճառ Կոռիկոսի տերը՝ ամենքես սիրված ու հարգված Օշին իշխանը։ Թագավորը ինքն ալ այդ կարծիքեն էր, ինչպես և իմ հոգևոր պետս Վեհափառ կաթողիկոսը։ Այդ ժողովի հրահանգով և հանուն այդ ժողովի եկած ենք ահա՛ քեզի հայտնելու։ Ի՞նչ ունիս ըսելու։*



*ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Օշի՛ն, շատ խոսելու բան արդեն չկա։ Պալատն ու իշխանությունը պետք է մնա մեր ձեռքը. կա՛րճ, պարզ է ասիկա։ Խնամակալության գլուխը կըլլաս դուն։ Ընկերներդ են՝ եղբայրդ՝ Գունդստապլը։ Հեթում իշխանը՝ քու սիրականդ։ Եվ իշխան Պոլտին։ Լավ է, որ գոնե անունով ըլլա նաև լատինական մը, գոնե ծագումով. հանգիստ մարդ է, մեր բոլորիս վստահությունը կվայլե և եղբորդ ալ թևին տակն է։ Դե՜, կարճ կապե. ըսե՝ համաձայն ես, որ այս գիշեր քու բերդիդ մեջ փառավոր խնճույք մը ընենք, իսկ վաղը՝ դուն ալ մեզի հետ, իջնենք Սիս ու լրացնենք հարկ եղած ձևակերպությունները։ Օշին թագավորի առողջական վիճակը աղեկ չէ։*

Խորին լռություն:

*ՍՐԲԱԶԱՆԸ— Օշի՛ն իշխան, խոսքիդ կսպասեն մեր թագավորության այս բոլոր պատկառելի մարդիկը։*

*ՕՇԻՆ— Եվ ճիշտ ատ է, Սրբազա՛ն, որ շատ դժվար կդարձնե տալիք պատասխանս։ Մասնակից եմ ձեր բոլորիդ մտահոգություններուն. համաձայն եմ ձեր կատարած ընտրության մեծագույն մասին։ Հեթումը, եղբայրս ու Պոլտինը, երեքն ալ ամենեն հաջող մարդիկն են և արդեն իսկ ամենեն կարևոր դիրքերու վրա և տեսակ մը ինքնին բնականեն ընտրված։ Հեթումի ձեռքն է եղեր միշտ բոլոր ներքին ղեկավարությունը, և ես չեմ կրնար երևակայել պալատը առանց անոր։ Պոլտինը թագավորի սիրելին է, և՛ մեր, և՛ հակառակորդներուն, որ անշուշտ մեծ առավելություն մըն է։ Կոստանդինն ալ ճանչցված ու հարգված հայտնի զորավար է։ Այնպես որ ձեր ընտրության մեջ միակ անտեղին ե՛ս եմ. և արդեն մեր տունեն միայն Կոստանդինը լիովին հերիք է, մեզմե երկու հոգի նույն խնամակալության մեջ շատ աչքի կիյնա։*

*ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Այդ բոլորը, Օշի՛ն, երկար մտածված է, կշռված է, իզուր ժամանակ կկորսնցնես, ուրիշ բան գիտես՝ ան ըսե։*

*ՕՇԻՆ— Գիտե՞ք ինչ. ես վարչական գործերու հարմար մարդ չեմ. պալատ մը ու պետություն մը վարելու համար մասնավոր շնորհք է պետք, որ ես իմ մեջս չեմ գտներ։ Ա՜յ, Հեթումը, իմ թանկագին Հեթումը, մե՛կ հատիկ է։ Թողե՛ք ինծի խնամակալութենեն դուրս, բայց ես ինքզինքս կդնեմ խնամակալության տրամադրության տակ, կօգնեմ ու կաշխատակցիմ ինչով որ կրնամ. թող հրամայե՛ն։*

*ՀԵԹՈՒՄ—* (Որ միշտ ոտքի վրա է ու շարունակ կքալե ասդին ու անդին, հանկարծ կկենա): *Քանի որ դուն քեզի կդնես այդ խնամակալության հրամանին տակ, աղե՛կ, ահա՜ այդ խնամակալությունը*

կհրամայե քեզի, որ անցնիս իր գլուխը և դառնաս պայլը մեր պետության։

ՕՇԻՆ— Զգե՛, Հեթո՛ւմ։ Գիտեմ, շատոնց է, որ դուն ինծի մեջ քաշել կուզես։ Մեկ-երկու անգամ արդեն ծուղակը ձգեցիր ինծի՝ իմս չեղող գործերու մեջ խառնելով ինծի։ Եվ ամեն անգամ ալ գործը չեղավ իմ ուզածիս պես, ո՛չ ալ անշուշտ ձեր ակնկալածին պես։

ՀԵԹՈՒՄ— Պարապ խոսքեր են ատոնք, սիրելի՛ս։ Ամեն անգամուն ալ սքանչելի կերպով կատարեր ես քու ընելիքդ, իհարկե, ինչ որ հնարավոր էր ընելը. և շատ իզուր կբամբասես քու կարողություններդ։ Ավելի լավին ու ավելի կատարյալին կտենչա հոգիդ. ո՞վ չուզեր։ Բայց եթե չենք կրնար ընել, ինչպես որ կուզենք, ուրեմն չընե՞նք ինչ որ կրնանք։ Մի՛ չարչարեր մեզի, Օշի՛ն, հոգնած մարդիկ ենք։ Դուն պիտի ըլլաս մեր պայլը, վերջացա՛վ։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— (Արվեստակյալ զարմանքով) Լսեցի՞ք, Հեթումը ըսավ՝ հոգնած է։ Սեննեշալ Հեթումը հոգնած...

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Այս ձեր Կոռիկոսի քարքարուտները Հեթումներն անգամ կհոգնեցնեն, ծիուդ վրա մեյ մը վեր, մեյ մը վար, փոթորիկի բռնված նավու մը մեջ ըլլաս կարծես։

ՀԵԹՈՒՄ— (Օշինին) Ուրե՞մն։

ՕՇԻՆ— Բայց վերջապես ինչո՞ւ անպատճառ ես։

ՀԵԹՈՒՄ— Պատճառ շա՛տ։ Ամենեն առաջ, որովհետև թագավորը փեսադ է։

ՕՇԻՆ— Ի սեր Աստծու, թագավորը փեսաս էր, երբ թագուհի քույրս կապրեր։ Հիմա մեր թագուհին յոթը ծովեր անդիեն եկած օտար կին մըն է։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Բայց այդ օտար կինը յոթը ծովերեն դուն ես բերեր մեր թագավորին կին։

ՕՇԻՆ— Հա՛. ատիկա ալ Հեթումի սարքած պատմություններեն է։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Օշի՛ն։ Մեզի պետք է ընդհանուր հարգ ու հարգանք վայելող, խելքի ու կամքի տեր մարդ մը. ժամանակը քնանալու ժամանակ չէ։

ՍՐԲԱԶԱՆԸ— Մեր աշխարհի հոգևոր դասը մեր ազնվական դասին հետ միասին քու մեջդ կտեսնե, իշխա՛ն, մեր սրբություններուն ու մեր եկեղեցիին պատվարը։

ՕՇԻՆ— Սրբազանը կմոռնա, որ հայրս մեռած է Կիպրոսի մեջ իբրև լատին կրոնավոր։

ՍՐԲԱԶԱՆԸ— Որը ավելի ևս կշեշտե քու ազգային համոզումներուդ ուժը։



ԿՈՍՏԱՆԴԻՆ— Քիչ մը տարբեր էր մեր մանկության ժամանակը, Օշի՛ն եղբայր։ Հայ ու լատին ատելությունը չուներ հիմակվան սրությունը։ Մեր հայրը ամբողջ կյանքը մաշեր է կռիվներու ու վարչության մեջ մեր այս հայ պետության համար և լատին վանքին մեջն ալ նստած լատին լեզվով հայ պատմություն է գրեր։

ՕՇԻՆ— Ե՞ս եմ, որ պիտի հերքեմ։ Ես միայն առարկել ուզեցի Սրբազանի տված վստահությանը։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Դուն միայն քու փախուստիդ համար դուռ մը բանալ ուզեցիր, իզո՛ւր աշխատանք. չե՛նք թողնելու, որ փախչիս։

ՕՇԻՆ— Թողե՛ք ինծի մեկդի. մտածեցե՛ք ուրիշ մը։

ՀԵԹՈՒՄ— Մտածենք. ցո՛ւյց տուր ինծի ուրիշ մը։ Ինչո՞ւ կեցար, անվանե՛։

ՕՇԻՆ— Ես հիմա ինչպե՞ս... Պետք է փնտրել։ Դյուրին չէ, գիտեմ։

ՀԵԹՈՒՄ— Ա՛յ մարդ, եթե քեզմե հարմարը ունենայինք, այս հինգ պառավներս մեր ճերմակ մորուքները առած քու շեմքը եկած չէինք ըլլար, հիմա կըլլայինք անոր ամրոցը։

ԿՈՍՏԱՆԴԻՆ— Օշի՛ն եղբայր, շիտակը կուզե՞ս, ելք չունիս, ընդունիս պիտի։

ԲԱԳՈՒՐ ԻՇԽԱՆ— Ես զարմացած եմ։ Կոռիկոսի տերը հաճախ կկրկներ, թե իշխան մը միայն իր մասին մտածելու իրավունք չունի, այլ մանավանդ ընդհանրության, թե իշխան ըսվածը պետության ծառան է, և որ ամենքս պարտական ենք կատարելու ինչ որ վայրկյանն ու պատմությունը կպահանջեն մեզմե։ Ահա՛, մեր թագավորությունը, վայրկյանը և պատմությունը կկանչեն իշխան Օշինը պայլության, իսկ ան կհրաժարի։ Շատ եմ զարմացած։

ՕՇԻՆ— Աստվա՛ծ իմ, այսպես ամեն կողմեն։ Թողե՛ք, որ մտածեմ, թողե՛ք, որ խորհիմ մինչև առավոտ։

ՀԵԹՈՒՄ— Հա՛, ատիկա արդեն ուրիշ բան է, թեև բոլորովին ավելորդ։ Գիտցի՛ր. կտրո՛ւկ, եթե դուն հանձն չառնես պայլ դառնալը, ե՛ս ալ չկամ կազմվելիք խնամակալության մեջ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ— Օշի՛ն եղբայր, նույնը և ես։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Որ ըսել է կլքենք մեր դիրքերը լատիններուն ու լատինացածներուն։

ՍՐԲԱԶԱՆԸ— Եվ որ կըլլար անանուն դասալքություն մը մեր հավատքեն ու իրավունքեն. և որ իմ ազնիվ իշխաններս իհարկե չեն ըներ և ոչ մեկ պայմանով։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Օշի՛ն, քու հրաժարումդ փառավոր կերպով կհար-

թե ճամփան Ջապելի տղոց. Հանրին արդեն թագավորական գործերը իր տանու մասնավոր գործը կնկատե, թագավորի միակ քրոջ անդրանիկ տղան է մարդը։

ՍՐԲԱԶԱՆԸ— Ես կհամարեմ Օշին պայլի հավանությունը արդեն առնված։ Հանուն սուրբ եկեղեցվո և հանուն իմ հայրապետական վեհապետիս կուտամ օրհնությունս այս խնամակալության և կմաղթեմ ինքը աստվածային աջը զորավիգ ըլլա անոր բոլոր գործառնություններուն։ Եվ ասով ալ կարծեմ կրնանք ավարտած նկատել մեր այս պատվիրակության դերը։

ՀԵԹՈՒՄ— (Մոտենալով Օշինին) Ձե՛ռքդ։

ՕՇԻՆ— (Կեցած է մտասույզ՝ բազկաթոռի մը կռթնած)։

ԿՈՍՏԱՆԴԻՆ— (Նմանապես մոտենալով) Օշի՛ն եղբայր, տո՛ւր ձեռքդ, դուն ալ գիտես, որ քեզմե զատ ուրիշը չկա։

ՕՇԻՆ— Բայց թողեք մտածեմ, թողեք մտածեմ։

ՀԵԹՈՒՄ— Աղե՛կ, ձեռքդ կուտաս վաղը, գիշեր մըն ալ ազատ եղիր պայլութենե։ Դուն խելոք մարդ ես ու կըմբռնես տեղն ու պետքը։ Այնպես որ, գերազնի՛վ իշխաններ, դուք կրնաք ամբողջ գիշերը տաքցնել ձեր գլուխներն ու ձեր ճառերը Կոռիկոսի դղյակի պատվական գինիովը։ Իսկ ես՝ մեղավորս, պետք է շտապեմ Ատանա. մեկ-երկու մանր գործեր կան կարգադրելիք, վաղն ալ ձեզմե առաջ շտապեմ Սիս, հայտնեմ թագավորին, կարգադրեմ հարկ եղածը և հրովարտակը պատրաստել տամ։ Բայց դուք ալ շատ չուշանաք։ Այս մարդուն թևեն բռնած կուգաք, որ խնամակալության լրիվ կազմով ներկայանանք թագավորին, հրովարտակը ստորագրվի և այս հարցը փակվի։ Դե՛, Բագուր իշխան, դուն ինծի հետ։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Հա՛, վազե՛, վազե՛, պալատը հանկարծ տեղեն կփախչի առանց քեզի։

ԿՈՍՏԱՆԴԻՆ— Բայց կեցի՛ր, հաց ուտենք գոնե։

ՀԵԹՈՒՄ— Չէ՛, սպասել չեմ կրնար, որ շատ չմթնած հասնիմ Ատանա։ Իսկ ոտքի վրա պատառ մը բան երևի վարը կճարվի, մինչև ձիերը քաշեն։ Քալե՛, Բագուր իշխան։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Ա՛յ Հեթում, ի՞նչ եղավ քու այն նշանավոր հոգնությունդ։

ՀԵԹՈՒՄ— Ի՞նչ։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Մոռցա՞ր Կոռիկոսի քարքարուտները։

ՀԵԹՈՒՄ— Անցա՛նք քարքարուտը, Սմբա՛տ, անցա՛նք։ Հոգնություն չկա, երբ գործը կքալե, երբ աշխատանքը կգլտորի, երբ բան կա



դարձնելու։ Հոգնությունը կսկսի հոն, ուր մանգաղդ քարին դեմ կառնե։ Դե՛, հա՞ց պիտի տաք, ի՞նչ պիտի տաք, շո՛ւտ ըրեք։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— (Ետևեն) Ջուլհակի մաքոք է անիծածը։

Հեթում ու Բագուր իշխանները Կոստանդինի առաջնորդությամբ կելլեն դուրս։

## 5

ՍՐԲԱԶԱՆԸ— (Կելլե ոտքի, կանցնի Օշինի գրասեղանին գլուխը և մատին ծայրովը խառնելով թղթերը) Աս ինչի՞ վրա կաշխատիս, Օշին իշխան։

ՕՇԻՆ— Կուսումնասիրեմ մեր վերջին երեք հարյուր տարիներուն պատմությունը։

ՍՐԲԱԶԱՆԸ— Հա՛, հորենական ժառանգություն. հորդ գործը շարունակել կուզես։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Կգրե՛, հա՛ կգրե, Սրբազա՛ն. կզարմանամ իր համբերությանը։

ՍՐԲԱԶԱՆԸ— Ավարտա՞ծ ես արդեն։

ՕՇԻՆ— Կթողնե՞ք, որ ավարտեմ։ Երեք անգամ սկսեր եմ, երեք անգամ ընդհատվեր է. աս պատերազմ է, աս դեսպանություն է. վճռեր էի այս անգամ ո՛չ մեկ գնով չհեռանամ աշխատանքես։ Հրաշալի ու գրավիչ գործ է, Սրբազա՛ն, բայց ահա՛ հազիվ բռներ եմ թելերը, հազիվ նյութիս մեջն եմ մտեր, որ նորեն եկեր եք, բռներ կդիզեք վիզս ու կքաշեք ինծի դուրս։

ԱԲԵԼ ԻՇԽԱՆ— Դուն դեռ ազատ ես, քանի Օշին թագավորը կապրի։

ՕՇԻՆ— (Բարկությամբ) Ատոնք պարապ խոսքեր են. այն վայրկյանեն, որ հանձն առնեմ, այլևս ես իմս չեմ, այլևս մեռավ իմ աշխատանքս։ Թողե՛ք, եղբա՛յր, ինծի, թողե՛ք մնամ սիրած գործիս, ուր կըքաշեն ինծի իմ հակումներս։ Ինչո՞ւ կխրեք ինծի շարունակ հոգիս չխոսող գործերու մեջ։ Ո՛չ, չե՛մ ուզեր. ձգեցե՛ք ինծի, հանձն չեմ առներ, չեմ կրնար, չե՛մ կրնար։

ՍՐԲԱԶԱՆԸ— Իզուր կչարանաս, Օշի՛ն իշխան։ Նախ՝ միշտ ալ կըրնաս գրել գրելիքդ, եթե այդքան կփափագիս. պայլ ըլլալդ ինչո՞ւ պիտի խանգարե։ Երկրորդ ալ՝ դուն գրելը ձգե՛ մեզի՝ վարդապետներուս, դուն ուրիշ գործ ունիս կատարելու, աշխատանքը պետք է բաժնվի։ Դուն պատմությունը պիտի ընես, մենք պատմությունը պիտի գրենք։

## 6

ԿՈՍՏԱՆԴԻՆ— (Ներս մտնելով՝ շիտակ դեպի Սրբազանը) Սրբազա՛ն հայր, ինչպես և դուն, Աբե՛լ իշխան, պատառ մը հաց ուտելե առաջ, պատիվ կընեիք ինծի, որ առաջնորդեմ ձեզի ձեր սենյակները. դեռ ճամփու փոշին վրանիդ է, երևի կկամենայիք լվացվիլ։

ՍՐԲԱԶԱՆԸ— Առաջնորդե՛, նայինք. գիտեմ, որ զորքերդ աղվոր կառաջնորդես։

ԿՈՍՏԱՆԴԻՆ— Թեև հոգևորին մեջ առաջնորդելու իրավունքը քուկդ է, Սրբազա՛ն, և մեզի մեր մեղքերեն մաքրողն ալ քու աղոթքդ, բայց իմ հայրենի ամրոցիս հյուրասիրությունը պարտք կդնե իմ վրաս, որ հոս ես առաջնորդեմ քեզի աշխարհային փոշիներեն մաքրվելու։

ՍՐԲԱԶԱՆԸ— (Խնդալով) Սակայն այդ աղվոր բառերուդ տակեն գիտե՞ս ինչ դուրս եկավ, զորավա՛ր. որ դուն իմ աղոթքներս քու օճառդ կնկատես։

Ու խոսելով ալ ճեռացած են ամենքը Կոստանդինին ետևեն:

## 7

Կմնա միայն Օշին մտածումներու մեջ, կորեած իր գրասեղանին, թիկունքով դեպի ճակտի մուտքը: Հոն կերևա Ռիթա. կտեսնե, որ մինակ է, կամաց կմոտենա ու կխլե Օշինի ձեռքը:

ՕՇԻՆ— Դո՞ւն ես, Ռի՛թա։

ՌԻԹԱ— Եկեր են քեզի առաջարկելու, որ...

ՕՇԻՆ— Այո՛։

ՌԻԹԱ— Հապա որ քեզի կըսեի։

ՕՇԻՆ— Ի՞նչ կըսեիր։

ՌԻԹԱ— Ըսի՝ գնչուհին կարդա՛ց, ու արյանս մեջ, մինչև թագավորական գա՛հը։

ՕՇԻՆ— Ուրեմն դո՞ւն ալ կուզես, որ հանձն առնեմ։

ՌԻԹԱ— Միթե ինքդ չե՞ս ուզեր։

ՕՇԻՆ— Չգիտե՛մ։ Ա՛յս վայրկյանես այլևս չգիտեմ։

ՌԻԹԱ— Եվ ի՞նչ օգուտ ունի, իշխա՛ն, ուզելը կամ չուզելը։ Դուն քու բախտեդ չե՛ս կրնար փախչիլ, դուն քու արժեքեդ չե՛ս կրնար փախչիլ, դուն քու կոչումեդ չե՛ս կրնար փախչիլ։

ՕՇԻՆ— Բայց կորսնցնեմ պիտի, Ռի՛թա, կորսնցնեմ պիտի թանկագին բան մը։



ՌԻԹԱ— Ի՞նչ պիտի կորսնցնես։

ՕՇԻՆ— Ա՛յ այս հրաշալի խաղաղ անկյունը, իմ լռիկ աշխատանքս, այս անդորր ու բարձր մթնոլորտը՝ լեցուն քու շնչովդ, շնորհքովդ։ Ա՛խ, Ռիթա, կվախնամ, որ կորսնցնեմ պիտի այս բոլորը. այնպե՛ս կվախնամ, որ կորսնցնեմ պիտի այս բոլորը, հավիտյա՜ն, հավիտյա՜ն։

ՌԻԹԱ— Կզարմանամ։ Չէ՞ որ մեր հոգիներեն է, որ կբխի այս ջերմությունն ու խորությունը. ուր ըլլանք մենք, այդ ամենը կհետևի մեզի։

ՕՇԻՆ— Դուն չե՛ս ճանչնար պալատը, Ռիթա։ Հոս ես իմ սեփական ստեղծած աշխարհիս մեջն եմ, իմ մտածումներուս բարձր ու ընտիր ոլորտներուն մեջ. հոս ո՛չ կիրք կա, ո՛չ շահ, ո՛չ հաշիվներ, ո՛չ ալ մարդոց տգեղությունը. հոս այդ ամենուն վրա ես վերեն կնայիմ, Աստծու մը պես։ Իսկ պալատը ես ալ անոնցմե մեկն եմ, անոնց հետը, անոնց մեջը. բոլոր մարդկորեն ցածը, մանրը և աղտը կքսվի և ինծի։ Հոս մտածումի աշխարհն է, Ռիթա, իմ այս առանձնությանս մեջ, իմ այս ծովուն դիմաց ու քու այդ ծով հոգիիդ։ Հոն գործի աշխարհն է, հոն ուրիշ ծով է, ուրիշ փոթորիկ։

ՌԻԹԱ— Դուն կըսեիր ինծի, որ առօրյա կյանքին տափակությունը բարձրացնելու համար ձգտում մը, գաղափար մը պետք է դնել անոր մեջը։ Ահա՛ այդ ձգտումը, այդ գաղափարն է, որ կուզե քեզմե մեր թագավորությունը։

ՕՇԻՆ— Թագավորությունը չգիտեմ, բայց կտեսնեմ, որ դուն կուզես։

ՌԻԹԱ— Գուշակությունը պետի կատարվի, իշխա՛ն։

## 8

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— (Կողմնակի դռներեն) Ո՞ւր ես, ա՛յ աղջիկ, ամեն տեղ քեզի կփնտրեմ։

ՌԻԹԱ— Այո՛, հայրի՛կ, ձիերը պատրաստ են. և ե՛ս։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Կոստանդինը ինծի թողնել չուզեր, կուզե՞ս մընանք գիշերը։

ՌԻԹԱ— Ո՛չ, հայրի՛կ, օտարներ կան, ես չեմ մնար։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Հասկցանք. որ այդպես է՝ շուտ հագվե, ժամվան մը չափ ճամփա ունինք դեռ։ (Օշինին) Ուրեմն վաղ առտու դուն կմեկնիս Սիս։

ՕՇԻՆ— (Ցրված) Ինչպե՞ս։ Հա՞... Չգիտեմ ճշմարիտ, գո՛ւցե։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Ալ ի՞նչ գուցե։ Այլևս քու առջևդ լա՛յն բաց է ճամփան. թագավորին փոխանորդն ես, առանց թագի թագավոր ես, դուն պայլ ես։

ՌԻԹԱ— (Հուզումով) Պա՞յլ։ Այդպե՞ս պիտի կոչվի։

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ— Հապա՛, չգիտեի՞ր։ Դե՛, շնորհավորե՛ իշխանը ու երթանք։

ՌԻԹԱ— Ես իշխանը չէ՛, որ պիտի շնորհավորեմ։ Ես կշնորհավորեմ քեզի, մեզի, իշխանները, մեր թագավորությունը, ամենքը։ Կյանք ու հաջողություն քեզի, Օշի՛ն պայլ։

# ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԴԱՀԼԻՃ ՄԸ ՍԻՍԻ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ՄԵՋ

Զույգ պարզ ու նուրբ սյուներու վրա կհանգչին առաստաղի չորս անկյուններեն և մյուս սյուներեն եկող ծանր կամարները:

Գմբեթի փոսեն շեղակի իջնող ճառագայթներու խուրձ մը կխաղա ջահի զարդերուն հետ և կիջնա գետին դեպի սյուներուն ետևը:

Ճակատը սյուներուն մեջեն կերևա ոսկենամուկ դուռ մը, որ Օշին պայլի աշխատանոցը կտանի: Ծլումունքի գլխավոր դուռը ձախ պատին վրա է ծանր վարագույրներով:

Կլոր ցածլիկ սեղան մը և աթոռներ մեկ կողմը գորգի մը վրա. երկու բազկաթոռ դեմ-դեմի առանձին գորգի մը վրա ուղիղ ջահին տակը:

## 1

Կողմնակի դուռնեն ներս կուգա Պալոնց վարդապետը, խիստ ցանցառ մորուքով, գլխաբաց, երիտասարդ, նիհար, երբեմն շատ հանդուգն և երբեմն շատ խոնարհ նայվածքով ու շեշտերով:

ՊԱԼՈՆՑ— (Վարագույրի բացվածքեն դեպի դուրս) *Եկո՛ւր, եկո՛ւր, մարդ չկա, մտի՛ր։*

Կմտնե Ժոսլին Անճող. կարճահասակ, նրբակազմ ու գեղեցկադեմ երիտասարդ զինվորական մը, վրան-գլուխը կոկ ու փայլուն, բայց մաշված:



ՊԱԼՈՆՑ— Ասիկա ընդունարանն է, պայլ իշխանի մասնավոր ընդունարանը, երբ մարդիկ ունկնդրության կուգան։

ԺՈՍԼԻՆ— Է... փոքր չէ՞ քիչիկ մը։

ՊԱԼՈՆՑ— Առաջ հանգուցյալ թագավորին օրովը ընդունարանը պալատի մյուս թևին վրան էր. այն ընդարձակ դահլիճը, որ քիչ մը առաջ տեսար, ուր գահն էր դրած, հատակը կարմիր մահուդ։

ԺՈՍԼԻՆ— Հա՞... անիկա քիչիկ մը ավելի հարմար էր, ինչո՞ւ նե փոխեր։

ՊԱԼՈՆՑ— Փոխեց ի՛նքը։ Թագ ու գահ եղած սենյակները չի սիրեր մեր պայլը։

ԺՈՍԼԻՆ— Ես կկարծեի՝ շատ պիտի սիրեր։

ՊԱԼՈՆՑ— Այսինքն... ինչպես ըսեմ։

ԺՈՍԼԻՆ— Ըմբռնեցի. քիչիկ մը անհարմար առարկաներ են, քիչի՛ն մը... առայժմ։

ՊԱԼՈՆՑ— Կամա՛ց (Մատովը ցույց կուտա ճակտի դուռը) Իր աշխատանոցն է. այն խոհանոցը, ուր կթխվին մեր թագավորության բոլոր պիտանի ու անպիտան գործերը։

ԺՈՍԼԻՆ— Հիմա ինքը հո՞ն է։

ՊԱԼՈՆՑ— Հիմա՛ և մի՛շտ և հավիտյա՛նս, գիշեր-ցերեկ, գոմեշի պես կաշխատի։ Շուտով տարի մը պիտի ըլլա իր ներս մտնելը, շատ քիչ ալ դուրս կուգա այդ ծակուռեն, ննջարանն ալ անոր մյուս քովի սենյակն է։ Առաջ ո՞վ էր տեսեր այս տեսակի լարված խենթի աշխատանք. կարծես գութանի լծված տավար ըլլանք բոլորս ալ. չորեք է ամենուս վզին երկանաքարի պես։

ԺՈՍԼԻՆ— Հիմա հոս իսկապես ի՞նչ է պաշտոնդ։

ՊԱԼՈՆՑ— Դպիր եմ ու թարգման արքունի քարտուղարության մեջ։

ԺՈՍԼԻՆ— Ուրիշ խոսքով Ֆրանկներու լեզուն և լատիներենդ ճամփան բացավ քիչիկ մը դեպի պալատ։

ՊԱԼՈՆՑ— Ի՞նչ պաշտոն է որ, ի սեր Աստծու։ Ես ա՞յս տեսակ պաշտոնի վրա պիտի ըլլայի։ Տխմարնե՛րը։

ԺՈՍԼԻՆ— Միտքդ է սուրբ-Անտոնյան հայրերուն մենաստանը, երբ դեռ մոնթ կինք ես ու դուն. ի՛նչ ճառասանն էիր, հա՛, քիչիկ մը։

ՊԱԼՈՆՑ— Իսկ հիմա ինչո՞ւ ես եկեր Սիս։

ԺՈՍԼԻՆ— Հապա ո՞ւր կուզեիր, որ երթամ։ Մեր հողերը անցան անհավատներուն ձեռքը, հայրս ալ մեռավ։ Եկա տեսնեմ Հեթում իշխանը, հորս բարեկամն էր։ Ան ալ հիմա կըսե, որ մտնեմ բանակը։ Կըսե՝ քիչիկ մը ինքզինքդ ցույց տուր, մնացածը բան մը կնենք։ Ինքզինքը ցույց տալը աղեկ, դժվար բան չէ, բայց որ հանկարծ նորեն Սուրիայեն մամ-

լուքները ինքզինքնին ցույց տա՞ն։ Էջ նահատակ ըլլալու բնավ ախորժակ չունիմ։ Հերիք է. բերդերնիս առին, քանդեցին, ամեն ինչ փչացավ. իմ բաժինս այսքանը հերիք է, քիչիկ մըն ալ թող ուրիշները։ Իրենք նստեր են իրենց դղյակներուն ու բերդերուն ետևը և ինծի խորհուրդ կուտան՝ «Գնա՛ և ինքզինքդ ցույց տուր քիչիկ մը»։ Ես ալ կարծեմ ազնըվական մարդ եմ քիչիկ մը, հին ընտանիքի սեպուհ, միա՛կը, որ մնացեր եմ մեր տոհմեն. այդ խնամակալ իշխանները պետք է քիչիկ մըն ալ իմ մասին մտածեն։ Միայն թագավորին տեղը նստիլը հերիք չէ, պետք է քիչիկ մըն ալ թագավորի վասալներուն մասին մտածեն։ Սա ինչի է նման, սեպուհ, իշխա՛ն, ժառա՛նգ և առանց հողի. և «Գնա՛ ինքզինքդ ցույց տուր քիչիկ մը»։

ՊԱԼՈՆՑ— Լսե՛, Ճոսլի՛ն, դուն ասոնց վրա հույս մի դներ. կծծի ու կծկված մարդիկ են և երկար չեն մնալու, ես գիտեմ ինչ որ կըսեմ։ Լևոն թագավորի իսկական խնամակալը իր հորաքույրն է, Զապել թագուհին։

ՃՈՍԼԻՆ— Իհարկե, Զապել Ամորին, քիչիկ մը Կիպրոսի հին թագուհին։

ՊԱԼՈՆՑ— Թե խելք ունիս՝ մոտեցիր Զապելի տղոց։ Սիր Հյուկը մանավանդ շատ ասպետ ու ձեռքը բաց մարդ է. կապվե՛ անոնց, վաղը անոնք պիտի գան հոս։ Եվ երբ այս ընդունարանը նորեն կարմիր դահլիճը փոխադրելու ըլլանք՝ քեզի համար ալ աղվոր կտոր մը հող կճարենք. և ինքս ալ կշարադրեմ լատին լեզվով քու նոր կալվածքիդ հրովարտակը։

ՃՈՍԼԻՆ— Կարծեմ իրավունք ունիս քիչիկ մը...

## 2

Ներս կմտնեն նույն դռնեն Սիր Պոլտին մարաջախտը և իշխան Հայկամ։ Առաջինը գեր ու տարիքոտ կենսուրախ մարդ մըն է. Հայկամ վայելչակազմ, խելացի դեմքով, փայլուն սպա մը։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Հոս ի՞նչ կուզես, վարդապետ։

ՊԱԼՈՆՑ— Մեր արքունիքը ցույց կուտամ բարեկամիս, սի՛ր, որ առաջին անգամ Սիս կուգա։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Հրամանագրերը պատրա՞ստ են։

ՊԱԼՈՆՑ— Կսպասեն պայլ իշխանի ստորագրության, սի՛ր։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Պատրաստե՛ մնացած թղթերն ալ. ես այս իրիկուն մեկնիմ պիտի։

ՃՈՍԼԻՆ— Իրա՞վ է արդյոք, իշխա՛ն, որ մամլուքները նորեն մեր վրա կուգան։



ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Ատանկ կերևա տեղեկություններեն, մեր սահմաններուն վրա նոր ուժեր են երևցեր։

ՊԱԼՈՆՑ— Դեռ տարի մը չեղավ սակայն, որ անգամ մը ետ մղվինք. դաս չառի՞ն։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Կփորձեն մեր դիմադրական կարողությունը։ Եվ զարմանալու ալ բան չկա. սրբեցին բոլոր քրիստոնյա իշխանությունները Սուրիայեն. հիմա մենք ենք իրենց աչքին փուշը. և գիտեն, որ կողոպտելու բան կա։

ՃՈՍԼԻՆ— Իսկ մե՞նք, սի՛ր։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Մենք ի՞նչ։ Ինչպես միշտ։ Պիտի կռվինք։

ՀԱԼԿԱՄ— Բարեբախտաբար Կոստանդին սպարապետը աղեկ կճանչընա այդ անհավատ շները։

ՊԱԼՈՆՑ— Երթա՛նք, իշխա՛ն Ճոսլին, մյուս բաժինները։

Վարդապետն ու Անճոռը դուրս։

## 3

ՀԱԼԿԱՄ— Պետք է կտրուկ հարված մը. անոնք այլևս մեր օձիքը ձգելու չեն։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Այո՛, եթե մեր այս ներքին պառակտումները չըլլային, ի՞նչ են որ վերջապես այդ քանի մը անվճռական գնդերը։

ՀԱԼԿԱՄ— Կկարծե՞ս, սի՛ր, որ հիմա շարժում մը ընեն Զապելի կողմեն։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Անշուշտ պիտի ջանան մեր դժվարությունները օգտագործեն։ Արդեն դուրսերը ամեն տեղ իրենց մարդիկը ունին, պապին մոտ, Ֆրանկներու թագավորին մոտ, Տարենտո և աղվոր կաշխատին։

ՀԱԼԿԱՄ— Ազգակցական կապեր կան, սի՛ր։ Մերոնք շատ են միս-մինակ։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Այո՛, պայլ իշխանը շատ է համառ. և ընդհանրապես հայերդ շատ կողքի ինկած մարդիկ եք. ճկունություն չունիք։

ՀԱԼԿԱՄ— Հա՛, շատ երևելի բաներ են քու Ֆրանկներդ։ Ատոր համար է, որ մեկը մյուսի ետևեն շոգիացան իրենց բոլոր հիմնած իշխանությունները։ Բերանս բանալ մի՛ տար, սի՛ր։

ՍԻՐ ՊՈԼՏԻՆ— Վերջապես, ի՞նչ ըսեմ, կռի՛վ է, կռի՛վ, միշտ ու ամեն տեղ. նե՛րսն ալ, դո՛ւրսն ալ. կյանքը ա՛ս է։

## 4

Ճակտի դռնեն կմտնեն Օշին պայլ և Հեթում իշխան:

ՕՇԻՆ— Հա՜, լավ է, որ արդեն հասեր ես, իմ երիտասարդ բարեկամս։ Բարի՜ ես եկեր։

ՀԱԼԿԱՄ— Ողջույն ու առողջություն մեր մեծ իշխանին։ Սպարապետ եղբայրդ հրահանգեց, որ անմիջապես ներկայանամ քեզի։ Ահա՜ կկատարեմ իր հրամանը։

ՕՇԻՆ— Ուրախ եմ։ Եղբայրս անշուշտ հայտնած է քեզի նաև պատճառը։ Լևոն թագավորը մտած է արդեն այն տարիքը, որ տղայական մարզանքներեն անդին, ժամանակ է, որ կամաց-կամաց տիրանա զինվորական առաքինություններուն ու արվեստին։ Պետք էր հմուտ մարզիչ. այդ պաշտոնին համար եղբայրս մասնավորապես հանձնարարեց քեզի, Հալկա՛մ իշխան։ Ես աղեկ կճանչնայի քու հայրդ. շատ ազնիվ ու շատ անձնվեր մարդ էր մեր պետության. իր մահն ալ գտավ կռվի դաշտին վրա։ Քեզի համար ալ իմ պաշտոնակից ընկերներս կվկայեն, որ հմուտ մարդ ես զինվորական գործին, քաջ ես ու խելացի։ Կհրավիրեմ քեզի մեր թագավորին զինվորական ղեկավարը ըլլալու պատվին։ Առարկություն ունի՞ս։

ՀԱԼԿԱՄ— Թագավորիս ծառայելը իհարկե ամենեն մեծ պատիվն է ինծի, իսկ Օշին պայլի նման անձի մը ինծի ուղղած այդ խոսքերը՝ իմ ամենեն մեծ հպարտանքս։ Ես քու խոնարհ ծառան, պա՛յլ իշխան. հրամայե՛։

ՕՇԻՆ— Սիր Պոլտինը քեզի կներկայացնե թագավորին և կուտա գործիդ հարկ եղած բացատրությունները։ Ես միայն այսքանը ըսեմ, իշխա՛ն. եղի՛ր պահանջկոտ ու խիստ թագավորին հանդեպ, երբ խնդիրը իր պարտավորություններուն կվերաբերի։ Ուրիշներեն հնազանդություն պահանջողը պետք է ինքը հնազանդիլ գիտենա իր պարտավորություններուն։ Բայց նայե՛ մանավանդ, որ սիրով ու հարգանքով կապես քեզի իր թարմ սիրտը, եթե կուզես, որ խոսքդ, օրինակդ ու թափած ջանքերդ բեղմնավորվին։ Եղի՛ր իր ընկերը իր ուսուցչեն ավելի։ Եվ իր քովը եղած ժամանակդ մի մոռնար երբեք, որ մեր այս հայ պետության ապագան է, որ կխոսիս։

ՀԱԼԿԱՄ— Ինչպե՞ս կրնամ մոռնալ Օշին պայլի իմաստուն հրահանգները։

ՕՇԻՆ— Եվ չխնայես ո՛չ իր կոչումին, ո՛չ իր դեռափույթ տարիքին. աշխատցո՛ւր, հոգնեցո՛ւր, արշավիլ տո՛ւր, ընել տո՛ւր ինչ որ գործը կպահանջե։ Չարչարված մարմիններուն մեջն է, որ կամքը ընակի[լ] կսիրե։ Իսկ թագ մը կրել ուզողը՝ նախ կամք մը կրել պիտի սորվի։



ՀԱԼԿԱՄ— Պա՛յլ իշխան, այդ կամքը պիտի ունենա Լևոն թագավորին թագը. պիտի՛ ընեմ ձեռքես եկածը և ավելին։ Ու կմաղթեմ, որ փառքություններուս համեստ դեմքը սևերես չմնա պայլ իշխանիս աչ[քին] վստահության առջև։

ՕՇԻՆ— Սի՛ր Պոլտին, Հալկամ իշխանը կհանձնեմ քեզ հոգածությանդ։

Հալկամ խորք կխոնարհի և Պոլտինի հետ դուրս:

## 5

ՀԵԹՈՒՄ— Կարծեմ անհաջող չեղավ ընտրությունը։

ՕՇԻՆ— Քիչ մը շատ է պատրաստաբան և պետք եղածեն ավելի հղկված կերևա աչքիս։

ՀԵԹՈՒՄ— Իզուր չէ, որ ֆրանկի արյուն կա երակներուն մեջ։

ՕՇԻՆ— Վա՞յ։

ՀԵԹՈՒՄ— Հապա՛, մոր կողմեն. մե՞ծ մայրը, թե մեծ մորը մայրը Պրոմոններեն է։

ՕՇԻՆ— Բավական երկար ճամփա է. միայն, ինչպես ըսի՝ լեզուն ու մեջքը շատ են ճկուն։

ՀԵԹՈՒՄ— Կկռե՛նք. կամաց-կամաց անոր մեջքն ալ կշտկենք, մի՛ վախնար։ Չէ՞ որ հիմա գիշեր-ցերեկ ծռած մեջքեր շտկելով ենք զբաղված, սկսելով մեր թագավորության ծուռ մեջքեն։

ՕՇԻՆ— Այո՛, մեր սեփական մեջքերը ծռելու պայմանով։

ՀԵԹՈՒՄ— Ա՞տ ինչ խոսք էր։

ՕՇԻՆ— Նստե՛։ (Ինքն ալ նստելով) Վա՜յ, ինչպե՜ս հոգնած եմ։ (Դեմքը կծածկե ձեռքերով ու արմունկները ծունկերուն վայրկյան մը կմնա անշարժ):

ՀԵԹՈՒՄ— Գիտե՞ս ինչ կա, Օշի՛ն. գուցե ավելի աղեկ է, երթաս քիչ մը հանգստանաս։ Երեկ գիշեր զինվորական խորհուրդը շատ երկար տևեց. ետքն ալ երկար-բարակ նստեր էիր ջամցլերին հետ մաքսերու հարցովը. ատկե անդին ալ արդեն չգիտեմ։ Իսկ առավոտը կանուխ ոտքի ես։ Գնա՛, պահ մը գլուխդ բարձին դի՛ր։

ՕՇԻՆ— (Հանկարծ գլուխը բարձրացնելով) Այդ ինչպե՞ս է, Հեթո՛ւմ, որ այլևս չես խոսիր ինծի այրի թագուհիի մասին։ Ալ կշտացա՞ր այդ հեքիաթեն։

*ՀԵԹՈՒՄ— Ի՞նչ խոսիմ. ամեն խոսելիք արդեն խոսված է. ավելի պարզ ու բնական ոչինչ չկա, քան քու և Հովհաննայի ամուսնությունը։ Եվ երբեք ալ չեմ հասկցեր, թե ի՞նչն է իսկապես քեզի այդպես խրտնեցնողը, որ այդ հարցի մասին լսել անգամ չես ուզեր։ Հովհաննան ճշմարտապես գեշ կին չէ։ Այո՛, Օշին թագավորը շատ սիրելի էր քեզի, գիտեմ. իրար շատ կհարգեիք, և դուն ինքդ ես բերեր այդ կինը մեռած քրոջդ տեղը, և տեսակ մը քրոջ պես բան է ան քեզի համար. կհասկնամ այդքանը. բայց այս տեսակ պայմաններու մեջ շատ բարակը ընտրել կարելի չէ, սիրելի՛ս. ասիկա պետական հարց է, թագավորության մը պահանջը։*

*ՕՇԻՆ— Այո՛, իհարկե՛, թագավորության պահանջ։*

*ՀԵԹՈՒՄ— Ինչո՞ւ կհեգնես։ Ես քու տեղդ վայրկյան մը չէի վարաներ և մեկ անգամեն կամրացնեի մեր խնամակալության դիրքը անհամեմատ չափերով, մեկ անգամեն կկտրեի մեր հակառակորդներուն միակ հենարանը. վերջապես ինչի՞ վրա են իրենց հույսը դրած Զաբելն ու իր մարդիկը։ Նապոլիի թագավորին քույրն է Հովհաննան, կատակ չէ. խնամին կփոխվի արևմուտքի հետ մեր դիրքը. և Պոլտինը իրավունք ունի, անոնց ու Տարենտոյի միջոցով կարելի է ազդել նաև Եգիպտոսի մամլուքներուն վրա։*

*ՕՇԻՆ— Մեկ խոսքով աշխարհքի տակը կդառնա վրան։*

*ՀԵԹՈՒՄ— Զգիտե՛մ։ Իմ խորին համոզումովս այն օրը, որ աղջիկդ ամուսնացուցիր Լևոն թագավորին հետ, այդ նույն օրը պետք էր, որ դուն ալ ամուսնանայիր Հովհաննա թագուհիին հետ. այդ երկու բաները իրար լրացնող իրողություններ են և սերտորեն իրարու կապված։ Կեսը ընել ու կեսը թողնել՝ խելոք բան չեղավ։ Ըլլալ թագավորին աներհայրը, իհարկե բան մըն է, բայց դառնալ ամուսինը օծված թագուհիի մը և դառնալ թագավորահայր բոլորովին ուրիշ բան է։*

*ՕՇԻՆ— Թագավորին մորեղբայրը, թագավորին աներհայրը, թագավորին երկրորդ հայրը։*

*ՀԵԹՈՒՄ— Է, հա՛. ի՞նչ կա զարմանալու. գե՞շ է։*

*ՕՇԻՆ— Ո՞վ ըսավ. սաստիկ է աղվոր։*

*ՀԵԹՈՒՄ— Այդպե՛ս էր պետք, այդպե՛ս էր պետք։ Եվ այս տեսակ հրաշալի առիթը չօգտագործեցինք։ Ոչ միայն ե՛ս կզարմանամ, այլ բոլոր մեր բարեկամները և բոլոր մեր թշնամիներն անգամ։*

*ՕՇԻՆ— Քիչ է մնացեր՝ ես ալ զարմանամ։*

*ՀԵԹՈՒՄ— Է՛, ձգե՛։ Ինչո՞ւ բացիր այս անհամ խոսակցությունը։*



## 6

*ՊԱՇՏՈՆՅԱ ՄԸ—* (Ճակտի դռան մեջեն) *Այրի թագուհին եկած է քեզի, պայլ իշխա՛ն։*

*ՀԵԹՈՒՄ— Թագուհի՞ն։ Ի՞նչ գործ ունի։ Երևի նորեն իր կալվածքին գրին համար։*

*ՕՇԻՆ— Երևի նորեն իր կալվածքի գրին համար։ Ձգե՛ մեզի առանձին, տեսնեմ ինչ կըսե։* (Պաշտոնյային) *Հրամցո՛ւր հոս։*

Հեթում կհեռանա կողմնակի դռնեն, իսկ Օշին դանդաղ շարժումով մը կդառնա դեպի ճակտի դուռը։

## 7

Կերևա Հովհաննա, այրի թագուհին, բարձրահասակ, շիկահեր, իր առույգ ու լեցուն տարիքին մեջ պատկառելի կին մը ամբողջովին սևերու մեջ, սև քող մըն ալ գլխուն և ուսերեն վար։

Ետևեն ներս կմտնեն երկու կին, կկենան դռան մոտ։

Օշին պայլ կշտապե թագուհիին դեմ, կխոնարհի, կհամբուրե անոր ձեռքը ու հարգալից կհրամցնե առաջ։

Թագուհին նմանապես անխոս կդառնա ետ, ձեռքի թեթև շարժումով մը կհրամայե ընկերացող կիներուն, որ դուրսը սպասեն, և ինքը կուգա առաջ։ Կիները կքաշվին՝ գոցելով դուռը։

Թագուհին քողը կնետե դեմքեն ետ ու կնստի գմբեթի տակի բազկաթոռին, ուր առաջնորդած է իշխանը. կից աթոռին կնստի Օշին։

*ՀՈՎՀԱՆՆԱ— Ինծի տեսնել էր ուզած Օշին պայլը։*

*ՕՇԻՆ— Բարի եկավ թագուհին։ Եվ կհուսամ ներող կըլլա, որ իրեն նեղություն պատճառեցի։ Եթե ինքս կանանոց գայի՝ շատ ավելի պաշտոնական կերպարանք կառներ հարցը. այս ձևով շատ ավելի սովորական է և գործնական։*

*ՀՈՎՀԱՆՆԱ— Հոս գալը նեղություն մը չէր ինծի։ Ի՞նչ կցանկա պայլ իշխանը։*

*ՕՇԻՆ—* (Վայրկյան մը լուռ ու մտածկոտ. շատ լուրջ ու ծանր խոսվածքով) *Աշխարհիս վրա ամեն մարդ դեր մը ունի կատարելու։ Քու դերդ, թագուհի՛, ըլլալն է կապը այս պետության և արևմուտքի, բախտը այսպես է որոշեր։ Մեռավ Օշին թագավորը, Աստծու կամքը, և թուլցավ քու պահած կապդ. իսկ կյանքը կպահանջե, որ ամրացնենք։ Հիմա աստվածային տնօրինությունը իմ ձեռքս է դրեր այդ թագավորական իշխանությունը և իմ վրաս կիյնա այդ մասին հոգալու պարտավորությունը.*

Հովհաննա՛ թագուհի, պայմանները կհարկադրեն, որ մենք մեր երկուքին բախտը կապենք իրարու։

ՀՈՎՀԱՆՆԱ— (Դանդաղ շարժումով մը թաշկինակը կտանի աչքերուն ու լռիկ կուլա)։

ՕՇԻՆ— (Քիչ մը սպասելեն ետքը) Ներե՛, թագուհի՛, եթե այս խոսքերովս ակամա վիշտ կպատճառեմ քեզի։ Ես ալ իմ մեջս երկար-երկար մաքառեր եմ, որ այս առաջարկը չբերեմ քեզի։ Շուրջս ամենքը առաջին օրեն այս քայլը կսպասեին ինձմե, կպահանջեին ինձմե. դիմադրեցի այսքան ժամանակ, ուզեցի զանց ընեմ, խուսափիմ, չեղավ։ Չեղավ, որովհետև ինքս ալ կըմբռնեմ, որ արդար է անոնց պահանջը մեր պետության համար։ Եվ ահա՛ այնքան ներքին մաքառումներե ու վարանումներե ետքը եկած եմ այն եզրակացության, որ անխուսափելի է մեզի համար այս քայլը. մեր ճակտի գիրեն չեղիլ չենք կրնար։ Եվ կկրկնեմ, թագուհի՛, ներե՛ ինծի։

ՀՈՎՀԱՆՆԱ— (Արցունքներուն մեջեն) Ներելու ոչինչ չկա։ Եվ վերջապես ես ինքս ալ կհասկնամ, թե ինչ է ըլլալու ասկե ետքը այրի թագուհիի մը դիրքը այս պալատին մեկ անկյունը, երբ ինքն չէ մեծցող թագավորին հարազատ մայրը։ Մտածեցի վերադառնամ հայրենիք, բայց երիտասարդ այրին միշտ բեռ մըն է եղբայրներու համար, մանավանդ եղբորս կինը. գիտեմ, հաշտ աչքով չէ նայելու ինծի։ Ես ալ խորհեր եմ, և արդեն կզգայի, որ կյանքը կվարեր ինծի, ա՛յ, հոս։ Թող ըլլա Տիրոջ կամքը։ (Կուլա)։

ՕՇԻՆ— Թագուհի՛, կտեսնես, որ գիշեր-ցերեկ գործերու մեջ խրված մարդ մըն եմ, զբաղված ու հանձնված կյանք մը. կկատարեմ ձեռքես եկածին չափ ինչ որ պետությունը և պարագաները կդնեն վզիս. երիտասարդ ալ չեմ, արդեն ճերմակը ինկեր է մորուքիս մեջ։ Միայն մեկ բան մը կրնամ քեզի խոստանալ ու հաստատել՝ պարկեշտ մարդ մըն եմ ու մաքուր մարդ մըն եմ։ Պարկեշտ ու մաքուր անուն մըն է, որ կառաջարկեմ քեզի. անշուշտ չէ փոխարինելու Օշին թագավորին անունը, բայց այսպես է անողոք կյանքին օրենքը՝ մեռնողները տեղի պիտի տան ապրողներուն։

ՀՈՎՀԱՆՆԱ— Ինքզինքդ ներկայացնելու պետք չունիս, իշխա՛ն, ես կճանչնամ քեզի. հանգուցյալ թագավորը քեզի բացառիկ կերպով կհարգեր. «Միակ մեծ մարդն է, կըսեր, թագավորությանս մեջ»։ Եվ վերջապես ես ճանչցած եմ քեզի հոս հասնելես ալ առաջ։ Առաջին հայն էիր, որ տեսա մեր Տարենտոյի պալատին մեջ, հայությունը քու վրադ չափեցի, քեզմով չափեցի և քու թագավորը, որուն համար հարս տանելու եկած էիր ինծի։



ՕՇԻՆ— Ուրեմն, թագուհի՛, համաձայն ենք երկու կողմեն։

ՀՈՎՀԱՆՆԱ— (Լուռ ու տխուր գլուխը կկախե)։

ՕՇԻՆ— Ըսե՛, թագուհի՛, եթե չես ուզեր։

ՀՈՎՀԱՆՆԱ— (Ցրտասվելով) Կուզեմ։

ՕՇԻՆ— Այն ատեն պետք է պատրաստվիս. մինչև երկու շաբաթ պետք է ամուսնանանք։ Քանի դեռ մամլուքները չեն համախմբած իրենց ուժերը, քանի դեռ լուրջ ընդհարումները չեն վերսկսած, վերջացնենք այս պատմությունը։

ՀՈՎՀԱՆՆԱ— Բայց այսպես պատերազմի իրարանցումին մեջ։

ՕՇԻՆ— Երբ ես վճիռ մը կայացուցած եմ, պետք է իրագործեմ, որ հանգստանամ. և վերջապես պատերազմը որ չըլլար, ինչ էր փոխվելու։ Կյանքի մեջ միշտ ալ հարսնիք ու կռիվ խառնված են իրարու։

ՀՈՎՀԱՆՆԱ— (Ոտքի ելլելով) Կարգադրե՛ ինչպես կամենաս։ Ուրիշ ըսելիք մը ունի՞ իշխանը։

ՕՇԻՆ— Ո՛չ, թագուհի՛, ըսի ըսելիքս։

ՀՈՎՀԱՆՆԱ— Ուրեմն, պա՛յլ իշխան, մնաս բարով։

Քողը կիջեցնե և նույն ծանր քայվածքովը կուղղվի ճակտի դուռը ու դուրս:

## 8

Օշին, որ քանի մը քայլ ճարգանքով հետևած էր թագուհիին, վայրկյան մը կկենա շիտակ՝ աջ ձեռքովը դեմքը գոցած. վերջը կմոտենա սեղանին ու կհնչեցնե փոքրիկ զանգակը:

Իսկույն կերևա պաշտոնյա մը կողմնակի դռան վարագույրներուն մեջ:

ՕՇԻՆ— Քեզի ըսի՝ ինծի իսկույն իմաց տաս, երբ գալու ըլլա Սմբատ իշխանին օրիորդը։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Դեռ ոչ ոք չէ եկած, տե՛ր. ո՛չ օրիորդը և ո՛չ ալ մեկ ուրիշը Բերդուսեն։ Դուրսը քեզի հետ խոսիլ կուզե Մխիթար հայրսուրբը։

ՕՇԻՆ— (Հոգնած) Թող գա։

## 9

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ— (Դեռ վարագույրներուն մեջեն) Չե՞մ խանգարեր իշխանը։

ՕՇԻՆ— Եկո՛ւր, Մխիթար. քու խոսքերդ, ինչպես և երգերդ, միշտ մխիթարանք են բերեր ինծի, անունիդ պես։

ՄԽԻԹԱՐ— Բայց այս անգամ եկեր եմ պաշտոնապես։

ՕՇԻՆ— Դո՞ւն ալ։ Խոսե՛։

ՄԽԻԹԱՐ— Եկեր եմ խնդիրքով. արձակե՛ ինծի պաշտոնես։ Ջեն պակսիր արժանավորները այս գիրքին ու պատվին. կցանկան շատերը, որ դառնան խոստովանահայրը պալատին. կանչե անոնցմե մեկը։

ՕՇԻՆ— Իրավ է. գիրքն ու պատիվը սովերի կնմանին. երբ կվազես ետևեն՝ կփախչի, երբ կվազե ետևեդ՝ կփախչիս։

ՄԽԻԹԱՐ— Ես փախա մեր դղյակներեն ու հագա այս սքեմը ո՛չ անոր համար, որ նստիմ պալատական տիկիններուն հետ իրենց թըշվառ մեղքերը վերլուծելու, կամ ձանձրացած ու մարսողությունը խանգարված դրանիկներուն քարոզ խոսիմ, կամ պետական դատարանչն մեջ բազմած աշխարհքիս բոլոր կեղտոտությունններուն ու ցածություններուն ունկնդիր ըլլամ և վճիռներ տամ։ Ընդունե՛, որ ասիկա շատ տարօրինակ եղանակ մըն է աշխարհքե քաշվելու։ Օշի՛ն, դուն ըսիր եկուր, չկրցա խոսքդ կոտրեմ. բայց ալ հերիք է. թո՛ղ որ երթամ։

ՕՇԻՆ— Երթաս, հեծնես աշխետ ձիդ և ազատ ու անհոգ թափառիս գյուղե գյուղ, ժողվես ժողովուրդին բերնեն երգեր, եղանակներ. աս է, չէ՞, ուզածդ։

ՄԽԻԹԱՐ— Ամեն մարդուն իր սիրածը։

ՕՇԻՆ— (Հանկարծ զայրույթով ոտքի կցատկե) Ո՞վ ըսավ քեզի. ատիկա դուն ո՞ւրտեղ ևս տեսեր։ Իմ գիտցած աշխարհիս մեջ այդ տեսակ բան չկա։ Լծկանին ո՞վ կհարցնե իր սիրածը կամ չսիրածը։ Պատմությունը իր արտերը կվարե. և մենք ամենքս եզներ ենք, հասարակ եզներ, որ ան լծեր է իր գութանին ու կվարե։ Կախե՛ գլուխդ ու քաշե՛ լուծդ։ Եվ քալե՛ որ կողմը որ կվարե վարողիդ ճիպոտը։ Եվ քալես պիտի մինչև արտին վերջը կամ մինչև իյնաս ու սատկիս. կես ճամփան կենալ չկա. հասկցա՞ր, ճամփու կեսին կենալ չկա. պիտի երթաս, ուր որ քշե քեզի պետության ճիպոտը։

ՄԽԻԹԱՐ— Բայց ինչո՞ւ կքշե ինծի այդ նշանավոր ճիպոտը. ի՞նչ իմաստ։

ՕՇԻՆ— Իմա՞ստ։ Այս պալատը հայ շունչով պիտի թաթխվի, մեր պատանի թագավորը այդ շունչին տակ պետք է, որ մեծնա։ Քեզի բերեր եմ հոս, որովհետև դուն ունիս այդ հայ շունչը, դուն ժողվեր ես այդ շունչը հայ բերդերեն, հայ լեռներեն, հայ գյուղերեն, հայ երգերեն։ Դուն կմընաս հո՛ս։

ՄԽԻԹԱՐ— Բայց, Աստվա՛ծ իմ, հասկցի՛ր և ինծի։

ՕՇԻՆ— (Նեղտ անոր աչքերուն նայելով) Կհասկնամ. կտառապի՞ս, չէ՞։ Ճիշտ ատոր համար ալ դուն պետք է մնաս հոս, այս պալատին մեջ,



ձանձրալի կնիկներու հետ պետք է մեղքեր վերլուծես, հորանչող պալատականներու առջև քու հոգիիդ խոսքերը պիտի թափես. և երբ քու Նիրտդ դեպի լեռներն ու գյուղերը, դեպի երգերն ու լույսը պիտի ձգտի՝ դուն նստիս պիտի դատարանին ցած կամարներուն տակը և մարդոց ամենեն կեղտոտ կիրքերը և ամենեն վարնոց գործերը պիտի քրքրես։

ՄԽԻԹԱՐ— Սակայն ինչո՞ւ, ինչո՞ւ համար։

ՕՇԻՆ— Ինչո՞ւ... Շա՞տ կուզես գիտնալ. աղե՛կ, գիտցի՛ր. որովհետև քու այդ ներքին տառապանքը կարծես տարօրինակ թեթևություն մը կբերե հոգիիս. շատ դժգույն ու շատ խղճուկ թեթևություն մը։

ՄԽԻԹԱՐ— Ի՜նչ չար բաներ կխոսիս, Օշի՛ն։

ՕՇԻՆ— Ալ չգիտեմ չարն ու բարին. մեջս ամեն ինչ խառնվեր է իրար։ Կյանքն է չարը, Մխիթա՛ր, կյանքն է չարը։

## 10

ՊԱՇՏՈՆՅԱՆ— (Կողմնակի դռան վարագույրներուն մեջեն) Եկած է, տեր, Սմբատ իշխանին օրիորդը։

ՕՇԻՆ— Աղե՛կ. իսկույն։ Այնպես որ, հայր-սո՛ւրբ, այս բոլորը լսելեդ ետքը ալ կարծեմ բերանդ չես բանար պալատեն հեռանալու մասին։ Ինծի՛ հետ։ Շրթունքներդ ամուր գոցե՛, եկած սա դուռդ ալ ամուր գոցե՜ ու գնա՛ պաշտոնիդ գլուխը։

ՄԽԻԹԱՐ— Ինչպես որ կհրամայես։ (Դուրս կողմնակի դռնեն):

## 11

Օշին կեցած է սպասողական-անբնական կեցվածքով մը՝ աչքերը հառած ճակտի դռան:

Կմտնե Ռիթա, վայրկյան մը կկենա և հանկարծ թևերն առաջ պարզած, անսող կարոտով կնետվի դեպի Օշինը: Օշինը ինքն ալ քայլ մը կընե դեպի առաջ, կբռնե աղջկան երկու ձեռքերեն ու կպահե հեռու, որ չգրկվին:

ՕՇԻՆ— Բարի՛ եկար։

ՌԻԹԱ— Այսպե՞ս կընդունիս ինծի՝ երեք ամիս չտեսնելես ետքը, և ինչպե՜ս փոխվեր ես այս քանի մը ամսվան մեջ. ի՞նչ ունիս։

ՕՇԻՆ— Նստե՛, որ ըսեմ։

ՌԻԹԱ— Աստվա՛ծ իմ, այդ խոսվածքը, այդ կեցվածքը վախ կազդեն ինծի։ Ինչո՞ւ համար է այս սառնությունը։

ՕՇԻՆ— Նստե՛, նախ նստե՛։ Երեկ լսեցի, որ հորդ հետ եկած ես Սիս, իսկույն մարդ ղրկեցի, որ գաս ինծի տեսակցության։ Եթե Սիս եկած չըլլայիր, ես պիտի գայի ետևեդ Կոռիկոս ու Բերդուս որևէ պատրվակով մը, որ հանդիպիմ քեզի։ Կուզեմ, որ իմ շրթունքես իմանաս վատ ու անպիտան իրողությունը։

ՌԻԹԱ— Ի՞նչ է պատահեր։

ՕՇԻՆ— (Աչքերը կխոնարհե գետին և հատիկ-հատիկ ու դժվար արտասանելով) Երկու շաբաթը չըրացած ես ամուսնացած կըլլամ այրի թագուհիին հետ։

ՌԻԹԱ— (Մեկ ոստյունով վեր կցատկե նստած տեղեն ու շիփ շիտակ կկենա անշարժ աչքերը խոշոր բացած)։

ՕՇԻՆ— (Միշտ աչքերը գետին ուղղած) Ներե՛ ինծի, եթե կրնաս։ Դուն չես կրնար ըմբռնել, թե ես ներքին ինչ պատուհաս եմ կրեր մինչև հասեր եմ այդ վճռին։ Ես գիտեմ, որ քու քայլերովդ հիմա հոսկե անդարձ մեկնի պիտի կյանքիս ուրախությունը։ Եվ կրծքիս տակ կմնա գորշ ու պարզ մոխիր։ Իսկ դուն... իսկ դուն... ի՞նչ ըսեմ, Աստված իմ, որ մեղմեմ քեզի պատճառած ցավս։ Կուզեմ, որ բախտավոր ըլլաս. մոռցի՛ր ինծի և ապրե՛ նոր կյանքով։ Այդպե՛ս է պետք, թեև ամբողջ էությամբ կտենչամ, որ երբեք, երբեք չմոռնաս ինծի, որ ես միշտ ապրիմ հոգիիդ մեջ, ինչպես ապրեր եմ մինչև հիմա։ Այսպես է, եսական է ու անպիտան մարդկային շաղախը, եթե իրեն թողնելու ըլլաս։ Դուն մոռցի՛ր, մոռցի՛ր ինծի ու բախտավոր եղիր ուրիշի մը հետ. կուզեմ, որ բախտավոր ըլլաս, կուզեմ, որ չունենաս հոգիի տանջանք, բայց ինչպե՞ս ստեմ, չեմ ուզեր, որ մոռնաս այն բուռն կապը, որ միասին շնչել է տվել մեզի մինչև հիմա, և ինչպե՞ս կրնաս մոռնալ... Բայց չէ՛, չէ՛, ատ ալ մոռցիր, ամեն ինչ մոռցի՛ր, մոռցի՛ր, պե՛տք է, որ մոռնաս։ (Կլռե. կոտրված ձայնով) Այլևս... չգիտեմ ինչ ըսեմ քեզի։ Ես վերջացուցի։

Ռիթա կամաց մը կարձակվի կարծես իր քարացումեն, մազերը մեքենաբար կքաշե ճակտեն ետ և հանգիստ քայլվածքով մը կքալե դեպի իր մտած դուռը։
Օշին խելագարի պես կվազե, կկտրե առջևը առանց ձեռք տալ համարձակելու։

ՕՇԻՆ— Կեցի՛ր, կեցի՛ր, մի՛ ըներ. այդ մեկը մի՛ ըներ. բա՛ռ մը, գոնե բա՛ռ մը։

ՌԻԹԱ— (Կկենա, կնայի անոր և կոկորդը խեղդող լացը զսպելու հուսահատ ճիգով մը) Ես... ես... շատ շնորհակալ եմ. կանչեցիր ինծի, քու շրթունքովդ հայտնեցիր ինծի. այդչափ քաղաքավարության համար



խորապես շնորհակալ եմ։ Ահա՛ ըսի կարծեմ, ինչ որ պետք է ըսեի. բա՛ց ճամփաս, որ հեռանամ։

ՕՇԻՆ— (Ջերմ) Ռի՛թա, Ռի՛թա...

ՌԻԹԱ— (Անզուսպ բարկությամբ և թափվող արցունքներուն մեջեն) Ալ ի՞նչ Ռիթա։ Ալ ի՞նչ կուզես ինծմե։ Հուսահատությո՞ւնս վայելել կուզես, լա՞ցս տեսնել կուզես։ Ոչ, դուն իմ լացս չե՛ս տեսնելու. ես հուսահատություն չունիմ։ Ասիկա լաց չէ, մի՛ խաբվիր, ասիկա հին թուլության մը մնացորդն է, ասիկա հին կապի մը փեռեկտումն է, ասիկա լաց չէ, ասիկա զայրույթ է։ Ես շատոնց է, որ դուրսը կլսեմ քու այդ ամուսնությանդ մասին, բայց վայրկյան մը անգամ չեմ հավատացած, որ դուն կրնայիր թողնել ինծի, որ դուն կրնայիր ծրագրել քու ճամփադ առանց ինծի, որ դուն նետեիր ինծի անդին առանց այլևայլի քաղաքական տխմար հաշիվներու համար։ Աղե՛կ, հասկցա, սորվեցա, շնորհակա՛լ եմ։

ՕՇԻՆ— Ցավ, այո՛, կհասկնամ, Ռիթա, բայց վիրավորանք պետք չէ, որ զգաս։

ՌԻԹԱ— Թո՛ղ։ Քեզի՞ ինչ այլևս իմ վիշտս կամ վիրավորանքս։ Թո՛ղ, որ անցնիմ. ու գնա՛ քու ընտրած ճամփադ։

ՕՇԻՆ— (Գլխահակ ետ քաշվելով) Անցիր։

Ռիթա փախչողի մը պես կնետվի դուրս։ Իշխանը ետևեն երթալու նման տարտամ շարժում մը կընե ու կանգ կառնե երկար։ Ետքը ընկճված առաջ կուգա, կնետվի բազկաթոռին ու գլուխը կառնե ձեռքերուն մեջ։

## 12

Կմտնե Գանձապետը մագաղաթներու փաթեթ մը թևին տակը. քիչ մը լուռ կկենա, ետքը կհազա։

ՕՇԻՆ— (Դանդաղ գլուխը բարձրացնելով) Ի՞նչ կուզես։

ԳԱՆՁԱՊԵՏԸ— Պահանջեցիր վերջին հաշվեզեկույցը. դուրսը կսպասեի, որ հյուրերը հեռանան. բերեր եմ։

ՕՇԻՆ— Ի՞նչ զեկույց։ Հա՛, այո՛, կարծե՛մ...

ԳԱՆՁԱՊԵՏԸ— Շատ մտազբաղ կերևա ավագ-պարոնը։ Եթե հրամանքդ կկամենա՝ կուգամ ավելի ուշ, քիչ մը ետքը։

ՕՇԻՆ— Ինչո՞ւ ո՛չ։ Ինքս եմ կարգադրեր, ու եկեր ես։ (Թեթև տրքոցով մը գլուխը կհենե բազկաթոռին) Կարդա՛։

ԳԱՆՁԱՊԵՏԸ— (Քիչ մըն ալ վարանքով իշխանը դիտելեն ետքը, դեմը ոտքի կեցած կբանա մագաղաթ մը) Նախ՝ ստացած ենք Այասի վերջին ամսվան հաշիվները. մուտքի թիվերը շատ թեթև հավելում մը

ունին նախորդ ամսվան հետ համեմատած, բայց կարևոր բան չէ, ինչպես որ հրամանքդ ալ պիտի տեսնես։ Փոքր նավահանգիստներուն եկամուտները մեջը չէ հաշված։ Բոլոր հաշիվները բռնված են նոր սակերով և ընդհանուր գումարն է վեց հազար յոթը հարյուր հիսուն ու... (Կընդհատե ընթերցումը տեսնելով, որ իշխանը աչքերը գոցած է, կարծես կքնանա) բայց, ավագ-պարո՛ն, հրամանքդ շատ է հոգնած։

ՕՇԻՆ— (Առանց աչքերը բանալու և շատ դանդաղ) Հաշիվդ շարունակե։ Ընդհանուր գումարն էր ուրեմն վեց հազար յոթը հարյուր հիսուն ո՞ւ...

ԳԱՆՁԱՊԵՏԸ— Այո՛, տե՛ր, վերջին ամսվան ընդհանուր մուտքը, միայն Այասի համար, կընե վեց հազար յոթը հարյուր հիսուն ու...

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԲԵՐԴՈՒՍԻ ԾՈՎԵԶԵՐՅԱ ՊԱՐՏԵԶԸ

Դարավոր մայրիներու տակը փոքր բացատ մը: Ձախ կողմը մայրիներու բուներուն մեջեն նեղ ճամփա մը դեպի բնակարանը կտանի: Աջ կողմեն գետինը կիջնե դեպի ծովեզրը:

Ճակատը ցած է, սաղարթ ու թուփեր իրարու հյուսված, որոնց թավ շրջանակին մեջ խոշոր կտոր մը բաց կմնա, ուր կցոլցլա ծովը պայծառ ու արևոտ: Եվ այդ ցոլքին մեջ կերևան հեռուն մեծ բերդի մը աշտարակներն ու պարիսպը, որոնք բարձր հրվանդանեն վար կուգան ու կխրին ջրերուն գիրկը: Կոռիկոսի բերդն է ու իր ամուր կղզյակը:

Քիչ մը հովնոց մեկ-երկու նստարան ճյուղերե հյուսված և սեղան մը նույնպես ճյուղերե շինված:

1

Խումբ մը աչքակապուկ կխաղա. յոթը հոգի են: Ռիթան, իր եղբայրը՝ Աշոտ, զինվորական հագուստով թարմ երիտասարդ մը, ուրիշ զինվորական մը՝ Աշոտի ընկերը, երրորդ երիտասարդն է Ժուան Ամորի, բարձրահասակ, շեկ ու նուրբ, գրավիչ արտաքինով, իր դիրքին ու առավելություններուն գիտակից: Աղջիկներեն մեկը՝ Վարսենիկ՝ բուխ դեմքով ու խոր նայվածքով, մյուսը՝ Ակնի՝ քիչիկ մը ավելի տարիքով դժգոհ հոգի մը, երրորդը ընդհակառակը՝ Զարուկ ավելի մանկամտի ու մանուկ հոգի:

Ձախի ծառերուն մեջեն քիչ-քիչ դեպի բացատը կուգա խումբը խաղալով: Կապած են Աշոտին աչքերը:

Ռիթա ետ-ետ կքալե ոտնուտուն, անձայն աշխուժով, խաղ տալով և ո՛չ բնական բարձր ու հնչուն ծիծաղով մը:



ՌԻԹԱ— Հո՛ս, հո՛ս, ինծի՛. բռնե՛, բռնե՛ ձեռքս. ա՛չ, քիչ մըն ալ աջ։ (Փախչելով) Հա՜, հա՜, հա՜...

ՎԱՐՍԵՆԻԿ— Ի՞նչ ես ինկեր քրոջդ ետևեն։

ԱԿՆԻ— Ու ծառերը գրկելուդ տեղ՝ բռնե՛ մեզի։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— Ըսել կուզե՝ գրկե՛ մեզի։

ԱԿՆԻ— Հողե՜մ գլուխդ. գրկելու համար պետք է թևեր ունենալ. իսկ ձեր բոլորիդ թևերն ալ դեռ չեն բուսած։

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— (Վրան երթալով) Կկարծե՞ս։ Եկո՛ւր փորձենք։

ԱԿՆԻ— Անդի՛ն, խե՛նթ։

ՌԻԹԱ— (Վարսենիկը ետևեն եղբոր առջևը հրելով) Բռնե՛. Աշո՛տ, բռնե. քու մեծխոսիկ Վարսենիկն է. հա՜, հա՜, հա՜։

ՎԱՐՍԵՆԻԿ— (Փախչելով) Չէ՛, հրել չկա, հրել չկա։

Խումբը խաղալով կծռի նորեն դեպի ձախ. և կիսովին ծառերուն ետևն է իր աղմուկին հետ: Մեջտեղը կմնան Ռիթան ու Ակնին:

ԱԿՆԻ— (Փաթթվելով Ռիթայի մեջքին) Ինչպե՜ս ուրախ ես այս վերջերս, Ռիթա. ի՞նչ լավ է։

ՌԻԹԱ— Ինչո՞ւ չըլլամ ուրախ. ապրիլը ուրախություն է։ Այնպես չէ՞։

ԱԿՆԻ— Ո՛չ ամենուն համար։

ՌԻԹԱ— Ապրելեն աղվոր բան ի՞նչ կա. երիտասարդ ըլլալեն ավելի աղվոր բան ի՞նչ կա. անհոգ ու անվիշտ ըլլալեն ավելի աղվոր ի՞նչ կա... Հա՜, հա՜, ինչո՞ւ պիտի չըլլանք ուրախ։

ԱԿՆԻ— Ամենքը քեզի պես չեն։ Եվ վերջապես դուն ալ միշտ այդպես չես եղած։

ՌԻԹԱ— Իրա՞վ։ Կկարծե՞ս։ Հապա ի՞նչպես եմ եղած։ Հիմա՞ր եմ եղած։ Ուրա՛խ եղիր, ուրա՛խ եղիր. խնդա. հա՜, հա՜, հա՜... (Հանկարծ կնետվի գետին ու կմնա անշարժ՝ աչքերը անթարթ կետի մը հառած)։

ԱԿՆԻ— (Չոքելով քովը) Ի՞նչ կմտմտաս։

ՌԻԹԱ— Ոչի՛նչ։ Մտմտալու ոչինչ չկա։ Բայց կուզեի պոռալ, այնպես կուզեի ճչալ, որ ամբողջ աշխարհքը իմանար։

ԱԿՆԻ— Ինչո՞ւ։

ՌԻԹԱ— Ինչո՛ւ։ Նորեն քու հիմար ինչուդ։ Չե՞ս տեսներ ինչպե՜ս զվարթ ենք, ինչպե՜ս կխաղանք, ինչպե՜ս բախտավոր։ Պոռալ կուզեմ ուրախութենես, պոռալ կուզեմ բախտավորութենես։ Հապա՛. հա՜, հա՜, հա՜, հա՜... (Ու դեմքին վրա կփռվի գետին)։

ԱԿՆԻ— *Տարօրինակ բնություն ունիս։ Եվ երևի, իրավ որ, բախտավոր աղջիկ ես։**

Խաղը կանգ է առած։

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՁԱՅՆԸ— *Զարո՛ւկն է, Զարուկը, կապեցե՛ք աչքը։*

ԺՈՒԱՆ ԱՄՈՐԻ— (Մոտենա փոված Ռիթային) *Օրիորդ Ռիթան հոգնեցա՞վ։*

ՌԻԹԱ— (Նստելով) *Օրիորդ Ռիթան ձանձրացավ։*

ԺՈՒԱՆ ԱՄՈՐԻ— *Քու առաջարկած խաղն է սակայն։*

ՌԻԹԱ— *Հիմար խաղ է։*

ԺՈՒԱՆ ԱՄՈՐԻ— *Փոխե՛նք։ Ի՞նչ կուզես։*

ՌԻԹԱ— (Հանկարծ ոտքի ցատկելով) *Վազել կուզեմ։ Ո՞վ կբռնե ինծի։*

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— *Աղջի՞կ, թե տղա։*

ԱՇՈՏ— *Աղջիկները Ռիթան բռնել չեն կրնար։*

ԺՈՒԱՆ ԱՄՈՐԻ— *Աղե՛կ, դուն վազե, ես բռնեմ։*

ՎԱՐՍԵՆԻԿ— *Իշխա՛ն Ամորի, դուն ալ չես հասնիր անոր վազելուն։*

ԺՈՒԱՆ ԱՄՈՐԻ— *Իրա՞վ։*

ՋԱՐՈՒԿ— (Մեծ լրջությամբ) *Իշխանը կրնա՛։*

ԱՇՈՏ— *Ան ալ չի կրնար։ Ա՛յ կտեսնե՛ք։ Ռիթա, ամոթով չձգե՛ս։ Պատրաստ։ Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք։*

Ռիթան կսլանա դեպի վար, դեպի ծովեզրը, Ժուան ետևեն. մնացածները վայրկյան մը կդիտեն։

ՋԱՐՈՒԿ— (Պոռալով) *Չէ՛, չէ՛, շիտակ ճամփեն, շիտակ. ժայռերուն մեջ իրավունք չունիս։*

ԱՇՈՏ— (Խնդալով) *Անգամ մը, որ նետվեցավ ժայռերը, դե՞, ալ հասիր, որ բռնես։*

ՎԱՐՍԵՆԻԿ— *Այծ կնմանի, կատարյալ այծ, քույրդ։*

ԱՇՈՏ—(Բռնելով Վարսենիկի ձեռքը) *Հապա ի՞նչ կուզեիր, որ նմանի. կատվի՞ քեզի պես։*

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— (Դիտելով) *Վա՜յ, ինչո՞ւ նստեցավ. ինկա՞վ։*

ՋԱՐՈՒԿ— (Ոգևորված) *Հասա՛վ, հասա՛վ. ա՛յ, որ ըսի՝ կբռնե իշխանը։*

ԱՇՈՏ— *Բայց ատիկա հաշիվ չէ։ Ինկա՛վ։*



ՋԱՐՈՒԿ— *Հաշիվ է։*

ՎԱՐՍԵՆԻԿ— *Հաշիվ չէ, հաշիվ չէ։ Չեղա՛վ։*

ՋԱՐՈՒԿ— *Եղա՛վ. հրաշալի՛. թող չի նստեր. ինչո՞ւ նստավ։*

Եվ վենին հետ բոլորն ալ կիջնեն դեպի ծովեզրը: Աղմուկը պահ մը կշարունակվի ու հետզհետե կմարի:

Քիչ մը ատեն լուռ:

## 2

Տան կողմեն կուգան Սմբատ իշխանը ու կինը՝ Աննա իշխանուհին և կուղղվին դեպի նստարանները, ուր և վերջապես կնստին. իշխանուհին կսկսի ձեռքի աշխատանքը: Այդ միջոցին ալ կխոսվի:

ՍՄԲԱՏ— *Աննա՛, տեսա՞ր։*

ԱՆՆԱ— *Դո՛ւն տես. ես շատոնց եմ տեսեր։*

ՍՄԲԱՏ— *Զարմա՛նք է։ Մինչև հիմա Ժուանի հետ խոսիլ անգամ չէր ուզեր։*

ԱՆՆԱ— *Էրիկ-մարդիկդ ձեր քիթեն անդին չեք տեսներ երբեք։ Աղջիկ մը երբ կուզե, չեմ ու չումեն կսկսի։*

ՍՄԲԱՏ— *Այդպե՞ս կկարծես։*

ԱՆՆԱ— *Ա՛յ մարդ, բնավ քեզի հարց տված չունի՞ս, թե ինչպես է, որ Ժուանը ամեն անգամ Ատանա իջնելուն ու ելլելուն՝ գիշերները միշտ մեզի է։*

ՍՄԲԱՏ— *Հոգկե ի՞նչ հասկցանք։ Հեռուեն հեռու վերջապես ազգական ենք իրարու։*

ԱՆՆԱ— *Ազգականությունը նո՞ր միտքը ինկավ։ Եվ վերջապես ի՞նչ գործ ունի ատ տղան ասանկ շուտ-շուտ Ատանա։* (Տաղրով) *Ատանա՛։ Հոս է, հոս, մեր Բերդուսն է անոր Ատանան։ Եվ ատիկա իմ գործս է, ի՛մ, այդ Ատանան։*

ՍՄԲԱՏ— *Ըսենք թե հա՛։ Բայց կկարծե՞ս, որ մայրն ալ պիտի բերես քու խելքիդ։*

ԱՆՆԱ— *Նախ տղուն ոտքը ամուր մը կապեմ, ետքը միայն ալ կմտմտանք, թեև ատիկա քիչիկ մը ավելի դժվար է անշուշտ։*

ՍՄԲԱՏ— *Աղեկ որ գոնե այդչափը խոստովանեցար։ Թե որ այդպես է՝ գործին այդ կտորն ալ ձգե ինծի։ Դժվա՞ր է եղեր։ Ինչո՞ւ է դըժվար. թագավորին քույրն է, հասկցա՛նք. ե՞տքը։*

ԱՆՆԱ— Եվ ինքն ալ թագուհի։

ՍՄԲԱՏ— Ատ «թագուհին» վրաս գրե։ Ջմեռվան մը թագուհի։ Ուրիշ բան է, եթե մարդը սպաննված չըլլար ու մինչև հիմա Կիպրոս բլլար. Կիպրոսի մեջ ընդամենը չորս ամսվան թագուհի։ Հիմա անիկա պարզապես այրի կին մըն է՝ վերադարձած հարենական կալվածքը։

ԱՆՆԱ— Բայց իր սեփական-ամուսնական կալվածն է Կիպրոսի հողերուն կեսը։

ՍՄԲԱՏ— Ատիկա ալ վրաս գրե՛։ Կիպրոս ըսածդ ծովեն անդին է և հիմա ալ ուրիշ թագավորի մը ձեռքին տակը։ Իսկ իմ կալվածներս, շիտակ է, Կիպրոսին կեսը չէ, բայց ունի այն շատ մեծ առավելությունը, որ ծովուն ասդիի կողմն է և անմիջապես ալ Ջահելի դղյակին պատերուն տակը։ Եթե, օրինակ, ատկե աղվոր կտոր մը փրցվի, կարծեմ գեշ օժիտ չըլլար. այդքանը կարծեմ հասկցեր է «թագուհին», այսինքն՝ հոգացեր եմ, որ հասկնա։

ԱՆՆԱ— Ուրեմն քու ըսելովդ...

ՍՄԲԱՏ— Ըսելով-մըսելով չկա։ Գիտե՞ս ինչ կա։ (Ռաֆի կեղլե և ձեռքի ու մարմնի շարժումներով կընդգծե խոսքին կարևոր մասերը) Մեր հողերը դրեր է Աստված մեր այս Բերդուսին հետ Ամորիներու հին դղյակին ու Կոռիկոսի ճիշտ մեջտեղը։ Այդ երկուքի տերերն ալ ուժեղ մարդիկ են և իրար ալ թշնամի։ Աննա՛, Աստված տվավ մեզի տղա մը ու աղջիկ մը։ Աշոտս հանձներ եմ մեր մեկ հարևանին, և գիտեմ, որ Օշին Պայլը շատ կսիրե տղաս։ Քանի Օշինն է այս երկրին տերը, կռնակնիս ամուր է։ Բայց ի՞նչ գիտնամ վաղվան գալիքը. անհաստատ են աշխարհիս բաները։ Եթե հանկարծ բան մը պատահի, մեր բանը աղվոր չըլլար. պիտի համարվինք Օշինի մարդոց կարգեն։ Ուրիշ բան է, եթե Ռիթան ալ դառնա Ամորիներուն հարսը. ա՛յ, այդ կողմեն ալ մեջքս կամրանա. կհասկնաս։ Մեկ ոտքի վրա կենալը խելոքություն չէ. ատիկա հիմար արագիլներուն սիրած քաղաքականությունն է։ Ես կսիրեմ ձիու վրա ըլլամ թե գետինը՝ միշտ ամուր հենած ըլլամ երկու ոտքիս վրա։ Եվ այն ատեն թող կռվին Ամորիներն ու Օշինը ինչքան կուզեն, թող հաղթե ո՛րը կուզե, մենք միշտ կըլլանք երկու ոտքի վրա։ Ի՞նչ կըսես, ա՛ կին, քիթես անդին կտեսնե՞մ եղեր, թե՞ չեմ տեսներ։ Դուն հոգդ մի՛ ըներ և շարունակե՛ քու Աստանան։

ԱՆՆԱ— Կամա՛ց։ Եկա՛ն։



## 3

Մովեզերենն խոսելով կբարձրանան Ժուան Ամորի և Աշոտ։

ԱՇՈՏ— Ո՛չ, ես կմեկնիմ երկուշաբթի։

Ժուան— Սի՞ս, թև բանակը։

ԱՇՈՏ— Ի՞նչ գործ ունիմ Սիս։ Շիտակ բանակը։

ԱՆՆԱ— Մյուսները ո՞ւր մնացին։

ԱՇՈՏ— Հյուրերը մեկնեցան։

ԱՆՆԱ— Իսկ Ռիթա՞ն։

ԺՈՒԱՆ— Վազելու ատեն ոտքը քարին զարկավ, ինկա՞վ, թե ինչ եղավ՝ չհասկցա. միայն նստավ և երևի քիչ մը սրտին առավ, որ բռնըվեցավ։ Լալու պես եղավ, խնդաց, բարկացավ, ձգեց ու գնաց տուն. օրիորդ Վարսենիկն ալ հետևեն։

ԱՆՆԱ— (Սիրալիր) Հիմա կուգա, Ժուա՛ն իշխան. հիմա կուգա ուր որ է. աղջիկ է, կպատահի։ Աշո՛տ, գնա՛ ըսե՛ քրոջդ, թե մայրիկդ քեզի կկանչե։

ԱՇՈՏ— Գլխուս վրա. հիմա ալ վազենք ազնվաշուք օրիորդներուն ետևեն։ (Կուրս):

## 4

ՍՄԲԱՏ— Է՛, տղա՛ս, քիչ մը վարժվեցա՞ր մեր օդերուն։

ԺՈՒԱՆ— Միշտ պայծառ արև ունիք, Սմբա՛տ իշխան։

ՍՄԲԱՏ— Այո՛, արև ունինք ամբողջ տարին. վերջապես ամեն մարդ բան մը պիտի ունենա։ Ամառները քիչիկ մը պետք եղածեն ավելի տաք կըլլե, իրավ է, բայց իմ ու Աննայի հին ոսկորները շատ չեն տրտնջար. աղջիկս ու տղաս ալ մանկուց վարժ են. կտրտնջա միայն կնոջս քույրը. անոնց տունն ալ, ձեր դղյակին պես, սարերուն ու ամպերուն մեջ վարսված ժայռի կտոր մըն է, զարմանք չէ։

ԱՆՆԱ— Գոհ մնա՞ց իշխանը իր նոր սենյակեն, որ իրեն համար պատրաստել եմ տվեր։ Անցած անգամ գանգատեցար ծովուն ձայնեն, ասիկա հիմա ամենեն հեռու սենյակն է ծովեն։

ԺՈՒԱՆ— Շատ շնորհակալ եմ, տիկին իշխանուհի, բայց իզուր հոգնություն եք քաշեր։ Փոթորիկ էր, ես ալ վարժ չէի ու քունս չտարավ այն օրը, ուրիշ ոչինչ։

ԱՆՆԱ— Դուն ըսե՛ միշտ ինծի, եթե որևէ բան պակաս է կամ չես ախորժիր։ Անշուշտ քու թագուհի մայրիկիդ մեծ դղյակին համարու-

թյուններ չունինք, բայց կրնեմ ինչ որ կրնամ մեր այս պզտիկ բերդին մեջ։

ԺՈՒԱՆ— Ինչո՞ւ պզտիկ. համենայն դեպս շատ հին ու ազնիվ։ Ոչինչ պակաս չէ եղած երբեք ինծի հոս. շատ շնորհակալ եմ, իշխանուհի՛։

ՍՄԲԱՏ— Շիտակ ես, տղա՛ս։ Մենք հին ծառ ենք, արմատները խոր, հյութերը ընտիր, սաղարթը բարձր. ինչո՞ւ չըսեմ։ Մեր այս լեռներուն ու քարքարուտներուն մեջ շատ քիչ կան հիմա այս հին մայրի ծառերեն։ Բոլորը նորելուկ տունկեր են. և ինչքան մացա՜ռ։

5

ՌԻԹԱ— (Տան կողմեն) Ի՞նչ է, մայրիկ. կարոտե՞ր ես ինծի։

ԱՆՆԱ— Ի՞նչ քաղաքավարություն է, աղջի՛կս. հյուրն ասանկ մինակ կթողնե՞ս։ Այս աղջիկը բոլորովին վայրենի է, Ժուան իշխան. մեզմե անգամ կփախչի։ Երևակայե՝ Աստծու առտուն բերանը պատառ մը բան հազիվ դրած՝ կցատկե ձիու մը վրա, ձիավոր ճորտ մըն ալ կձգե ետևեն ու կ՚երթա լեռները։ Վերջին նորությունն է ասիկա. կեսօրվան մոտերը հազիվ կդառնա, հոգնած, ջարդված, ալ հետը խոսի՞լ կըլլա։ Շատ անգամ հացի ալ չի գար. սիրտս-փորս կհատի։ Դժվար բան է, Ժուա՛ն իշխան, աղջիկ զավակ մեծցնելը. ան ալ ասանկ խելագար աղջիկ։

ՌԻԹԱ— Ասոր համա՞ր կանչեցիր ինծի, մայրի՛կ։

ԺՈՒԱՆ— Ձիավարությունը շատ վայել է ազնվական օրիորդի մը։

ՍՄԲԱՏ— Շիտա՛կ է, տղա՛ս, միայն ատոր չափը կա, ձևը կա։ Դուն շատ կչարչարես Ցոլակը, աղջի՛կս. մեղք է անասունը։

ՌԻԹԱ— (Բարձր խնդալով) Կկարծե՞ս, հայրի՛կ։ Ինծմե ավելի ուրախ է քու անասունդ, երբ սանձերը բաց կձգեմ, որ չափ իյնա։ Լսելու ես ինչպե՛ս կխրխնջա, ինչպե՛ս թափ կուտա բաշը և ի՛նչ կթռչի։ Արդեն ատիկա է արժեք ունեցողը. ալ կդադրի գլխուդ մեջ ամեն մտածում. կզգաս, որ կտրված ես գետնեն, հողեն ու կյանքեն. օդին մեջն ես, ոլորտին մեջ. ու դեմդ հոսուն ճամփա մը միայն. երբեմն կծկտած ժայռի փերթ մը կամ կիսաշոր թզենի մը փոշիով ծածկված, որոնք խենթի նման վրադ կվազեն տարօրինակ սպառնալիքով մը, բայց կվրիպին, քովեդ կանցնին, ու դուն կթռչիս, կթռչիս...

ԱՆՆԱ— Դե՛, հիմա եկուր ու ասոր խելք հասկցո՛ւր։ (Ոտքի ելած՝ թելերը կժողվե) Պարապ բան է։



ՍՄԲԱՏ— Աննա՛, ես երթամ անգամ մը ախոռները։ Աշոտը որ իջնե՝ դուք ալ եկեք ախոռները։ Ցոլակդ ցո՛ւյց տուր Ժուան իշխանին։ (Մարդ ու կին իրար ետևե դուրս):

6

ԺՈՒԱՆ— (Մտածումներուն մեջեն) Այո՛, ձիերուն մեջն ալ բախտավորները կան։

ՌԻԹԱ— Ահա՛ մեզի նորեն առանձին ձգեցին։

ԺՈՒԱՆ— Եվ դուն իհարկե դժգոհ ես արդեն։

ՌԻԹԱ— Մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս խաղը, իշխա՛ն։

ԺՈՒԱՆ— Մինչև որ տաս քու համաձայնությունդ, իշխանուհի՛։ Կըտեսնես, որ ես հուսահատողը չեմ։ Եվ վերջապես ինչո՞ւ կմերժես, ըսե՛ պարզ երեսիս։ Չե՞ս հավնիր ինծի, կո՞ւյր եմ, կա՞ղ եմ։ Հրեշ մը չեմ, կարծեմ։ Թե՞ չես հավնիր տունիս, տեղիս, ծնունդիս։ Թագավորական արյուն եմ և մայրս ալ թագուհի։

ՌԻԹԱ— Խոսքիդ այդ մասը կրնաս բոլորովին զեղչել. մայրիկս ատոր մասին շատ է խոսած ինծի ու շատ է գոված։

ԺՈՒԱՆ— (Ժպտուն) Այդպե՞ս է։ Է՜, ավելի աղեկ։ Բայց բաներ կան, որ միայն ես կրնամ ըսել քեզի։ Ճիշտ է, այսօր բախտը վայրկյան մը երես է դարձուցած մեզմե. այս օրը մերը չէ, բայց վաղը մերն է։ Եվ մեզի հետ է սրբազան պապին օրհնությունը, ֆրանկներու թագավորին օգնության խոստումը և ինչքա՜ն-ինչքա՜ն իշխաններ. հին խելքի հայերեն զատ ամենքը մեզի հետ են. մայրիկս հարազատ քույրն է հանգուցյալ թագավորին և ան պիտի ըլլա խնամակալը Լևոն թագավորին։ Գիտցի՛ր, մեծ պատրաստություն կտեսնվի, և քիչ ատենեն մայրս ու երկու մեծ եղբայրներս հայտարարելու են խնամակալ։

ՌԻԹԱ— Իսկ Օշին Պա՞յլը։

ԺՈՒԱՆ—Կջախջախենք այդ սրիկան, օձի մը նման կճզմենք մեր կրունկներուն տակը։

ՌԻԹԱ— Դուն կճանչնա՞ս մոտեն Օշին Պայլը։

ԺՈՒԱՆ— (Արհամարհանքով) Ո՛չ, այդ պատիվը չեմ ունեցած։

ՌԻԹԱ— Բայց ես ունեցած եմ այդ պատիվը։

ԺՈՒԱՆ— Անշո՛ւշտ, քանի որ հարևան եք։

ՌԻԹԱ— Եվ կըսեմ քեզի. ո՛չ մայրդ, ո՛չ ալ եղբայրներդ չափվիլ չեն կրնար Օշին Պայլին հետ ո՛չ իրենց խելքովը, ո՛չ իրենց կամքովը։

ԺՈՒԱՆ— Խոսքերուդ մեջ զուցե ճշմարտություն մը կա։ Եղբայր-

ներս ուժեղ մարդիկ չեն դժբախտաբար, մայրս ալ կին է վերջապես։ Բայց մեծ է ամենուն ալ ատելությունը Օշինին դեմ և ատիկա ուժ մըն է։

ՌԻԹԱ— (Տարօրինակ ծիծաղով մը) Հա՛։ Ամենուն հոգիներուն մեջն ալ նստած է ա՛ն, Օշին Պա՛յլը, ամենո՛ւն, ամենո՛ւն։

ԺՈՒԱՆ— Կզգամ, որ քու հոգիդ ալ լեցուն է իր ատելությամբը, անշուշտ նաև ծնողներուդ։ Եվ բնավ չեմ զարմանալու, եթե իր անկուշտ ագահությունը ձեր հողերուն վրա ալ աչք տնկած ըլլա։ Մի՛ վախնար, իշխանուհի՛, ատիկա երբեք իրականություն պիտի չդառնա. պիտի ըլլա ատոր ճիշտ հակառակը։

ՌԻԹԱ— Այսինքն ի՞նչ պիտի ըլլա ճիշտ հակառակը։

ԺՈՒԱՆ— Մենք մինչև հիմա տկար ենք եղած ու անվճռական, գիտե՞ս ինչու, որովհետև մերիններուն խելքը իսկապես Կիպրոսի վրա է։ Մայրս իր Կիպրոսի անցյալը կփնտրե, եղբայրներս ալ՝ Կիպրոսի իրենց կալվածական իրավունքները։ Հոստեղի խնամակալության ալ, որ կցանկան, քիչ մը պատվի և իրավունքի հարց է, բայց գլխավորապես որովհետև նոր առավելություններ կուտա Կիպրոսի մեջ հաջողելու։ Իսկ ես, իշխանուհի՛, ուրիշ կերպ կմտածեմ. ես այս հողին վրա մեծցա և այս հողը ավելի կսիրեմ. ես կուզեմ, որ Ամորիներս հաստատ նստինք այս հողին վրա, զորանանք և տիրողն ըլլանք այս երկրին։ Երբ Կիլիկիան մերը ըլլա, Կիպրոսը վերջը շատ ավելի դյուրին մերը կդառնա։ Կհասկընա՞ս։

ՌԻԹԱ— Կսպասեմ եզրակացությանդ։

ԺՈՒԱՆ— Հիմա մայրս քիչ-քիչ սկսած է իմ համոզումիս գալու Եվ իրևակայե՛, եթե անգամ մը կեդրոնացնենք մեր բոլոր ճիգերը այս գահին վրա, եթե անգամ մը հաջողինք բոլոր դժգոհները ստիպելու, որ չկատարեն պալատեն եկող ոչ մեկ հրաման և հալածանք հանենք ամեն հեշտատակողի դեմ, կկոտրենք այդ Օշին Պայլին մեջքը։ (Հանկարծ խիզախ շեշտով մը) Իմ եղբայրներս թույլ մարդիկ են, ճիշտ է, անոնք հայրս են քաշեր, որ ճիշտ այդ պատճառով ալ կորսնցուց Կիպրոսի գահն ու իր կյանքը։ Ես ավելի մորս կնմանիմ և մեջս ավելի կամք կա, կսիրեմ համարձակ քայլերը։ Եվ առաջին քայլը կառնվի. երբ Սիսի արքունիքի մեջ մայրս կնստի խնամակալ։

ՌԻԹԱ— (Թեթև ճնշվածությամբ) Եվ դո՛ւ։

ԺՈՒԱՆ— Ո՛չ ես։ Ես պիտի նստիմ, ա՛յ (Կոռիկոսը մատնանիշ) այդ ամրոցը։ Կոռիկոսը իր հրաշալի նավահանգիստով, իր անմատչելի բերդով, իր բացառիկ պատերազմական դիրքով Կիպրոսին ճիշտ դիմացը, իր կղզիովը և քու հողերուդ դրացնությամբը, այդ Կոռիկոսը մե՛րը պիտի ըլլա, Ամորիներո՛ւնը։ «Մեր» բառս ձև մըն է միայն, որովհետև



ի՛մս պիտի ըլլա. կհասկնա՞ս, ի՛մս։ Իմս պիտի ըլլա, որպեսզի քուկդ ըլլա, իշխանուհի՛։ Դուն կոչվիս պիտի Կոռիկոսի տիրուհին։

ՌԻԹԱ— (Կսկսի խնդալ ցավագին, լալու նմանող խնդուքով մը):

ԺՈՒԱՆ— Դուն հիմա խնդա՛ ինչքան որ կուզես, բայց այդ օրը գա պիտի. կտեսնե՛ս։ Եվ ավելին, դեռ ավելին։ Թագավորական արյուն կըվազե երակներուս մեջեն և թարմ երիտասարդ եմ դեռ. ինչո՞ւ համար պիտի ըլլա անկարելի ինչ որ կմտածեմ։ Բռնե՛ քեզի պարզած ձեռքս, իշխանուհի՛, և ես կբարձրացնեմ քեզի մինչև թագավորական գահերուն պատվանդանը։ Կլսե՞ս ինչ կըսեմ, թագավորական գա՛հը...

ՌԻԹԱ— (Լռջացած) Զարմանալի՛ է։ Զարմա՛նք է, այդ բառերը քու շրթունքիդ...

ԺՈՒԱՆ— Դո՛ւն դրիր, իշխանուհի՛, դո՛ւն դրիր այդ բառերը իմ շըրթունքիս։ Երբ դուն հետս ես ու դեմս, զարմանալի ուժ կզգամ մեջս։ Քու աչքերուդ մեջ, քու հեգնությանդ մեջ, քու տարօրինակ ծիծաղիդ մեջ, նույնիսկ քու մերժումիդ մեջ բան մը կա, որ կխթանե, որ հանդգնություն կմղե։ Քեզի հետ, իշխանուհի՛, ես կզգամ, որ պիտի հաջողիմ. ո՛չ մեկ Օշին Պայլ դեմս կտրել չի կրնար, կխորտակե՛մ. պիտի՛ խորտակեմ։

ՌԻԹԱ— (Հանկարծ) Աղե՛կ։ Այդ պայմանով ես պատրաստ եմ. ես կըլլամ քեզի հետ։

ԺՈՒԱՆ— (Սաստիկ ուրախացած) Կհոժարի՞ս. համաձա՞յն ես։

ՌԻԹԱ— (Խոժոռ) Վերջապես պետք է վերջ դնենք այս անհամ պատմության։ Քանի որ ծնողներս ինծի նետել կուզեն իրենց վիզեն անպատճառ և քանի որ դուն այդքան կպնդես, աղե՛կ, թող ըլլա քու ուզածդ։ Չեմ ծածկեր, որ ինծի համար մասնավոր կերպով գրավիչ է քու Ամորի անունդ։ Ամորիները հավիտենական ու բնական թշնամիներն են անոր... Օշին Պայլին։ Եվ ես կուզեմ այդ ընտանիքին պատկանիմ։

ԺՈՒԱՆ— Ուրեմն տո՛ւր ձեռքդ ինծի, եկուր նստե՛ ու ավելի պարզ խոսինք։

ՌԻԹԱ— Ավելի պարզը կխոսիս մորս հետ։

ԺՈՒԱՆ— Բայց նախ քո՛ւ խոսքդ։ Ուրեմն կընդունի՛ս առաջարկս. կուզե՛ս կինս ըլլաս։ Եվ եթե կուզես... (Ձեռքերը անոր կպարզե):

ՌԻԹԱ— (Բարկությամբ) Դե՛, ալ մի՛ ձանձրացներ ինծի։ Մնացածը ըսի՝ կխոսիս մորս հետ։ (Արագ կհեռանա դեպի տուն):

ԺՈՒԱՆ— (Կեցած է անշարժ, անքարթ կհետևի անոր հեռանալուն, վիրավորված ու զարմանքեն ուսերը վեր քաշած):

# ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՕՇԻՆ ՊԱՅԼԻ ԱՇԽԱՏԱՆՈՑԸ

Ցած առաստաղով փոքր սենյակ մը ամբողջապես ընկույզի տախտակե. մուտքը աջեն է քանձր վարագույրներով:

Ձախ կողմը քիչ մը թեք դիրքով դրած է պայլի աշխատության սեղանը՝ բեռնավորված թղթերով ու մագաղաթներով. ետևը դարակներու վրա դիզված են «գործեր» ու գրություններ: Սեղանին շուրջը ընկուզե աթոռներ բարձր մեջքերով:

Գիշեր է: Սենյակը լուսավորված է գրասեղանին վրայի զույգ երկստեղ աշտանակներով նույնպես ընկույզի փայտե:

1

Օշին Պայլ նստած է իր գրասեղանին առջևը. անոր աջ կողմը՝ Հեթում իշխանը. անոնց թիկունքը կեցած է գործավարը ձեռքը գրիչ ու մագաղաթ և հույ կառնե:

Իսկ այդ երեքին դեմ, կռնակնին դեպի ելքի դուռը, նստած են բարձրաթիկունք աթոռներուն վրա պարոն Պոհեմունդ՝ մեջտեղը. անկե աջ՝ կոմս Սիր-Ասան և երիտասարդ հայ իշխան մը՝ Թորոս. Պոհեմունդեն դեպի ձախ նստած է իշխան Սարգիս՝ տերը Կոպիտառի՝ գեր ու տարիքոտ մարդ մը:

*ՍԻՐ-ԱՍԱՆ— Մեր առաջին պահանջն ան է, որ արքունի գունդը անմիջապես թողնե ու քաշվի Ամորիներու դղյակեն. և Զապել թագուհին ու իր որդիքը ազատ արձակվին ամեն կալանքե։ Երբ թագուհին ու իր զավակները արձակվին, անկե ետքը այս երկու տարի տևող աղմուկները հարդարելու և ամեն բան խաղաղությամբ կարգադրելու համար մեր իշխաններուն կողմե քեզի կառաջարկենք հետևյալ պայմանները։ Առաջին՝ հիմակվան խնամակալությունը չեղյալ կնկատվի. երկրորդ՝ կհայտարարվի նոր խնամակալություն մը, գլուխը, ինչպես վայել է, և պարտ է, Զապել թագուհին և իր անդրանիկ որդին՝ Հենրիկ իշխանը. երրորդը կըլլաս դուն՝ այլև փոխադարձ համաձայնությամբ ուրիշ երկու հոգի ևս որպեսզի քեզի խնամակալության մեջ առնելու մեր ցանկությունը արգելքի չի հանդիպի և նոր խնամակալության կշիռը ծանր ըլլա Արևմուտքի հանդեպ և սրբազան պապին աջակցությունը մեզի հետ ըլլա՝ պետք է որ ընդունիս պապական դավանությունը։*



*ԻՇԽԱՆ ԹՈՐՈՍ— Արդեն եղած տարբերությունը ի՞նչ է որ, իշխա՛ն. մեկ-երկու ծես ու աղոթք. այսքան փոքրիկ զիջում մը պետք է ըլլա քու կողմեդ։*

*ՍԻՐ-ԱՍԱՆ— Ատոր փոխարեն մենք ալ՝ իբրև վերջին կետ՝ հանձն կառնենք ամեն միջոցի դիմենք, որ Ասկուռ ամրոցը մնա քու զավակներուդ հավիտենական սեփականությունը և որ այդ իմաստով ստանանք սրբազան պապի հավանությունն ու օրհնությունը։ Գիտենք, որ կցանկաս այդ ամրոցը ունենալ և այդ ուղղությամբ աշխատանքներ կըկատարես որբևայրի թագուհիին հետ ամուսնանալեդ ի վեր։ Ահա մեր կարծիքով միակ ելքի ճամփան այս խառնակ և ապօրեն վիճակեն։*

*ՊՈՀԵՄՈՒՆԴ— Եթե մեր այս կետերուն վրա Օշին իշխանը որևէ նոր կետ մը ավելցնել կփափագի՝ մենք իհարկե պատրաստ ենք լսելու։ Ցեմ ծածկեր քեզմե, Օշին իշխան, վերեն հրահանգ ունինք մենք սրբազան աթոռեն ընել բոլոր մեր ձեռքեն եկածը հաշտ կերպով այս վեճերը մաքրելու և այս երկրին մեջ կարգը վերահաստատելու։ Մամլուքներու համարձակությունը կտեսնես, որ օր-օրի կմեծնա և՛ մեր դեմ, և՛ Արևմուտքի։ Հիմա ինչպե՞ս օգնին մեզի անոնք, երբ սուրբ աթոռն իմանա, որ Զապել թագուհին կալանքի տակ է։*

Քիչ մր լուռ, սպասողական:

*ՕՇԻՆ— (Գլուխը բարձրացնելով) Վերջացուցի՞ք։*

*ՊՈՀԵՄՈՒՆԴ— Կսպասենք քու պատասխանիդ։*

*ՕՇԻՆ— Մենք երկու տարբեր լեզուներ կխոսինք, երկու շատ տարբեր լեզուներ, պարոն Պոհեմունդ, և հազիվ թե իրար հասկնանք։*

*ՍԻՐ-ԱՍԱՆ— Ի՞նչ կա հոս իրար չհասկնալու։*

*ՕՇԻՆ— Դժբախտաբար շատ բան։ Ըսե՛, խնդրեմ՝ ո՞վ է այս աշխարհին թագավորը։*

*ՍԻՐ-ԱՍԱՆ— Միթե կասկա՞ծ կա։ Օշին թագավորին որբը՝ մանուկն Լևոն։*

*ՕՇԻՆ— Քու այդ թագավորդ, քու այդ պաշտպանության կարոտ պատանին, քու այսուզերենդ քեզի զենքի կանչեց և հիմա ալ այս վայրկյանիս կովի վրա է. ինչո՞ւ չեկար իր կանչին. ինչո՞ւ չես գար։*

*ՍԻՐ-ԱՍԱՆ— Դուն ինծմե աղեկ գիտես, թե ինչու։*

*ՕՇԻՆ— Իմ գիտցածս մեկ բան մըն է. կո՛մս. որ դուն և քեզի նըմանները, որ ամենեն բարձր պարոնները ըլլալու պատիվը ունիք այս երկրին մեջ, ամենեն գեշ օրինակը կուտաք ձեզմե վար եղող ազնվականներուն. որ դուն և քեզի հոս ղրկողները ծանր հանցավոր եք ձեր թագավորին առջևը և ձեր տված ավատական երդումին առջևը։*

ՊՈՀԵՄՈՒՆԴ— Բայց մենք հոս չենք եկած դաս առնելու, ոչ ալ խրատ լսելու համար։ Մենք եկած ենք քեզի որոշ առաջարկով. անցնինք գործին։

ՕՇԻՆ— Կներեք պարոն Պոհեմունդը։ Այս վայրկյանիս մանու՛, թագավորի մը իրավունքները իմ ձեռքերուս է հանձնված. ներսեն ու դուրսեն ամեն կողմեն թշնամիներով լեցուն երկրի մը բախտը իմ ուժերուս է վստահված։ (Ռոֆի նայելով) Այս վայրկյանիս այս պետության վարիչը ես եմ. դուք ինչպե՞ս կհամարձակիք ինծի պայմաններ բերելու և հաշտության առաջարկներէ խոսելու. դուք ի՞նչ եք, այս երկրին վասալնե՞րը, թե՞ թշնամիները։

ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆ— Օշին իշխանը իզուր այդպես կտաքնա։ Մեր կողմնակիցները, այսինքն՝ մեր կուսակցությունը...

ՕՇԻՆ— Մինչև հիմա լռեր էիր, Կոպիտառի տե՛ր, և լավ է, որ նորեն լռած մնաս։ Ասոնք նորեն օտար են, եկվոր ու մեզմե չեն. իսկ դո՞ւն, դուն այս աշխարհի ամենեն հին ազնվական տունեն զտարյուն հայ մը. քու պապերդ իրենց կյանքն են դրեր այս երկրի հայացմանը։ Ռուբեններու և Հեթումներու իշխանության բարձրացմանը համար։ Քու վարմունքդ ըավ մըն է անոնց դարավոր աշխատանքին դեմ, քու ծագումիդ դեմ և քու կոչումիդ։

ՊՈՀԵՄՈՒՆԴ— Այս կերպ խոսակցութենեն օգուտ չկա, իշխա՛ն։ Այդ պարապ մեղադրանքները մենք ալ կրնանք քու գլխուն թափել, սակայն ի՞նչ օգուտ. մենք ատոր համար չէ, որ եկած ենք։ Հիմա դուն ըսե՛ մեզի՝ ի՞նչ պատասխան տանինք մեզի հոս ղրկողներուն։ Զապել Ամորին անմիջապես պիտի արձակե՞ս, թե ոչ։

ՕՇԻՆ— Եթե այդքան հոգածու եք Զապել Ամորիի վիճակի մասին, ես խորհուրդ կուտամ, որ երթաք և աղոթեք իր հոգիի փրկության համար, իր գործած բազմաթիվ մեղանչումներուն համար։ Թող Աստված ներող ըլլա անոր մարդկային ծանր սխալանքներուն, քանի որ ամենքս թերի ու տկար ստեղծագործություններ ենք իր աստվածային կամքին։ Ուրիշ որևէ հոգածության այլևս պետք չունի Զապել Ամորին։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Ի՞նչ ըսել կուզե իշխանը։

ՕՇԻՆ— Կռվի վրա ենք ու պատերազմական դրություն. մենք մեր բոլոր ուժերը կեդրոնացնել կուզենք մեր աշխարհի ընդհանուր ոխերիմ թշնամիին դեմ. Զապել Ամորին իր անունով ու դրությունով կդրդեր ամենքը, որ չմիանան մեզի, ուժ չտան մեզի, լքեն մեզի, չերթան թշնամիին դեմը։ Պատերազմական ատյանը հայրենիքի դեմ գործված դավաճանություն անվանեց Զապելի և իր երկու որդիներուն վարմունքը ու դատապարտեց մահվան։



ՊՈՀԵՄՈՒՆԴ— Մահվա՞ն։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Զապել թագուհի՞ն...

ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆ— Օշին թագավորին հարազատ քո՛ւյրը։

ՊՈՀԵՄՈՒՆԴ— Եվ հետո՞։

ՕՇԻՆ— Հետո ի՞նչ։ Կատարված է բարձրագույն դատարանին վճիռը։ Աղոթեցեք իր հոգիին համար։

ԹՈՐՈՍ ԻՇԽԱՆ— Աստվա՛ծ իմ...

ՊՈՀԵՄՈՒՆԴ— Բայց... բայց հավտալ չեմ կրնար։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Ինչպե՞ս համարձակեցար, Օշի՛ն իշխան։ Ինչպե՞ս համարձակեցար այսպիսի սարսափելի գործ։

ՕՇԻՆ— Համարձակողը մենք չէինք. դո՛ւք եղաք համարձակողը, դո՛ւք ըրիք, դո՛ւք ուզեցիք։ Ես փորձեր եմ ամեն բան, ինչ որ մարդկորեն հնարավոր է, որ հասկցնեմ այդ դժբախտ ու կարճամիտ կնոջ իր դիրքը, մեր վիճակը ու պայմանները. այս երկու տարի է՝ սպառեր եմ ամեն միջոց։ (Տեսակ մը մատնանիշ ընելով Թորոս իշխանը) Դո՛ւք անիկա սխալ ճամփու վրա դրիք, դո՛ւք մղեցիք, դո՛ւք դրդեցիք։

ԹՈՐՈՍ ԻՇԽԱՆ— Չգիտեմ ինչու Օշին իշխանը իր խոսքը ինծի կուղղե։ Ես գոնե ոչ մեկ դեր չեմ ունեցած. ես եղած եմ միայն դրացի մը ու բարեկամ մարդ մը թագուհիին. ես ի՞նչ գործ ունիմ ձեր տոհմային կռիվներուն մեջ. ես միշտ չեզոք եմ եղած. ես հարգած եմ միշտ և՛ քեզի, և՛ թագուհին. ես միշտ չեզոքություն եմ պահած։

ՕՇԻՆ— Պինդ պահե՛ քեզի քու այդ գարշելի չեզոքությունդ, բայց պինդ պահե՛ միտքդ և Զապել Ամորին։

ԹՈՐՈՍ ԻՇԽԱՆ— Սակայն թագավորահայրը կսխալի. թյուր տեղեկություններ են հաղորդած անշուշտ մեծ իշխանին։ Ես ի՞նչ ունիմ քեզի հանդեպ։ Ես, այնպե՛ս, հաշտություն մը. ընդհանուր համերաշխություն մը. ինչպե՞ս ըսեմ. այնպես... տեսակ մը...

ՕՇԻՆ— Կա՛րճ. ամեն դիմադրություն պետք է վերջ գտնե. և ամեն գլուխ պետք է խոնարհի թագավորի հրամանին առջև։ Այս թագավորությունը պետք է բարձրանա. հարգանք ու պատկառանք պետք է ազդե շուրջի բոլոր թշնամիներուն. ատոր վրա են աշխատեր երեք դար բոլոր հայ իշխաններն ու թագավորները։ Ես ալ ատոր համար եմ հոս։

ՊՈՀԵՄՈՒՆԴ— Քալե՛, Սի՛ր-Ատան, ալ ընելիք չունինք հոս։ Կտեսնես, որ վճռեր է մարդը կանգ չառնել ոչ մեկ բանի առաջ և բոլոր իշխանությունը առնել իր ձեռքը։ Դժվար ու շատ բարդ գործ է, իշխա՛ն. և դեռ շատ արյուն կա ատոր տակը. ու չգիտեմ ինչով կվերջանա։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Երբ լսեցի Ամորիներու դղյակին հանկարծակի գրավումը՝ հասկցա, որ գեշ է միտքդ. ատոր համար էր, որ աշխատեցա մեր

*համախոհներուն մեջ միջին ճամփա մը գտնելու. ահա՛, իզո՛ւր։ Դուն կըսես, թե այս թագավորության բարձրացումը կուզես. այդ բարձրացումը անկարելի է առանց արևմտյան պետություններու բարեկամության, որ ըսել է՝ առանց սրբազան պապի սուրբ միջնորդության։ Երբ որ դուն ալ գաս ու հասնիս այս ճշմարտության՝ մենք շատ ավելի դյուրին իրար կհասկնանք։*

*ԻՇԽԱՆ ԹՈՐՈՍ— Հապա՛, հապա՛. մեր բաժն ալ ատիկա է։*

*ՊՈՀԵՄՈՒՆԴ— Կկատարվի՛ Աստծու տնօրինությունը։ Մնա՛ս բարով։*

Ընդհանուր խոնարհություն մը իրարու և չորս կմեկնին Հեթումի առաջնորդությամբ։

2

Օշին երկու ձեռքով գրասեղանին հենած կնայի անոնց ետևեն։ Գործավարը, որ անոնց ճամփա տալու համար՝ բարձր բռնած է դռան վարագույրը՝ կձգե ձեռքեն ու ժպտուն կմոտենա իշխանին։

*ԳՈՐԾԱՎԱՐԸ— Քիթերնին քսվեցավ գետին. այս տեսակ պատասխան անոնք բնավ չէին երևակայեր։ Մե՛ծ իշխան, քու մինչև հիմակվան ներողամտությունը անոնց խելքին բանը չէր։ Անոնք միայն ա՛յս լեզուն կհասկնան, ուժի ու գործի լեզուն։ Վեհանձն ու նրբահոգի վարմունքը թուլություն է անոնց աչքին։ Եթե այս հարվածը տարի մը առաջ զարկած ըլլար թագավորահայրը, շատ մը ավելորդ գլխացավերե ազատ կըլլար մեր գլուխը։*

*ՕՇԻՆ— Անցի՛ր գործի։ Իսկույն եղբորս նամակ պիտի ղրկվի։ Գրըվելիքը. թող շարունակե ճնշումը, մինչև որ թշնամին բոլորովին քաշվի մեր լեռներեն. կանգ չառնե՛լ, ուժերը կեդրոնացած պահել, մինչև երկուշաբթի կհասնին նաև նոր 300 կռվող։ Լեռներեն դուրս կրնա գալ միայն այն պարագային, երբ մամլուքներու դիմադրական ուժը հիմնովին կոտրված է։ Նամակ մըն ալ կգրես իսկույն Մովսեսին. կարճ կըպատմես ինչ որ քիչ մը առաջ հոս տեղի ունեցավ և...*

3

*ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ—* (Ներս նետվելով) *Իրա՞վ է լուրը, պա՛յլ։*

*ԳՈՐԾԱՎԱՐԸ— Այո՛, հայր-սո՛ւրբ, ուրախացի՛ր։ Քիչ մը առաջ եկավ սուրհանդակը բանակեն։ Մեր առաջին մեծ հաջողությունը* (Դուրս)։



4

*ՄԽԻԹԱՐ— Տեղեկություն տանք կաթողիկոսին, վաղը մաղթանք կատարվի բոլոր վանքերուն ու եկեղեցիներուն մեջ։*

*ՕՇԻՆ— Հանգի՛ստ կեցիր. աղմուկ պետք չէ դեռ։ Եղածը առաջին հաջողություն մըն է միայն, թեև իրավ է՝ շատ կարևոր։ Գիշերով 600 հոգի մերիններեն կանցնին մամլուքներուն թիկունքը անանցանելի ճամփաներով. մութին մեջ սարսափահար անոնց աչ թևը չի դիմանար ու կդիմե խառն փախուստի. մյուս մասերն ալ կհարկադրվին իրենց դիրքերը ձգելու և հապճեպ ետ քաշվելու խոր ձորերուն մեջեն։ Մեր Սև լեռներուն կիրճերը գիտե՛ս. կրնաս երևակայել, թե ինչ խառնիճաղանջ տիրած պիտի ըլլա և ի՛նչ ջարդ կերած պիտի ըլլան անզգամները։*

*ՄԽԻԹԱՐ—* (Դանդաղ շարժումով մը կհանե վեղարը, կտարածե բազուկները և խորին հուզումով) *Տե՛ր ամենակալ, օրհնյա՛լ ըլլա քու անունդ։ Դուն ես զորավիգը մեր գնդերուն, դուն ներշնչում մեր զորքերուն, դուն առաջնորդ մեր զենքերուն։ Եվ թող անիծվի՛ անօրեն թըշնամին, խորտակվի՛ հարձակողը, հափշտակողը, նենգն ու անկուշտը։ Տե՛ր, դուն եղիր վահանը քու հոտիդ, քու ժողովրդիդ։ Դուն եղիր սուրը մեր թշնամիներու գլխուն։*

*ՕՇԻՆ—* (Որ կեցած էր երկյուղած խոնարհումով) *Ամե՛ն։*

5

*ՀԵԹՈՒՄ— Օշի՛ն, հայտնեցի այդ դավանափոխներուն մեր նոր հաղթանակը. տեսնելու էիր, թե ինչ տպավորություն ըրավ. բոլորովին իջացան։*

*ՕՇԻՆ— Ես դիտմամբ բան չըսի, դուն ալ ըսելու չէիր։*

*ՀԵԹՈՒՄ— Ինչո՞ւ։ Սա ի՞նչ ներհակ խմորե են շիներ քեզի, ա՛յ մարդ։ Երբ ամենքը կոտրված են ու վախը հոգիներուն խորքը՝ սա՛ է, որ միշտ վստահ է ու հաստատ մեր հաղթության։ Իսկ երբ ահա՛ կուգա այդ հաղթանակը, երբ ամենուն սիրտը ուրախությունեն կխայտա՝ դո՛ւն ես, որ սանձ դնել կուզես, կարծես վախ ունիս ու կկասկածիս։*

*ՕՇԻՆ— Ո՛չ վախ ունիմ, ո՛չ կասկած, բայց չեմ ուզեր, որ հոգիներուն լարումը թուլնա։*

*ՀԵԹՈՒՄ— Հոգիներուն լարումը չթուլցնելու համար այս իրիկուն երկուքդ ալ իմ հյուրս եք. կկանչեմ և իշխան Դավիթը. այլև... չէ՛, Մինասը չուզեր, անոր քունը շուտով կուգա, գավաթ մըն է անոր ուժը։ Կիպրոսեն նոր գինի եմ ստացեր, պատվական տեսակեն. վրան ավել-*

ցուր Հայր-սուրբի ավելի ես պատվական ձայնը. մնացածը կրնաս հասկընալ. մինչև առտու հրաշալի քեֆ մը, հոգիներուն լարումը չթուլցնելու համար։

ՕՇԻՆ— Տնաշե՛ն, երկու օր ալ սպասե՛, թող որ գործը լրանա։

ՀԵԹՈՒՄ— Դուն միշտ դժգոհ ես եղածեն, միշտ ամեն ինչ թերի է քեզի համար, այդ պատճառով ալ ուրախություն ըսված բանը չունիս։ Ես կսիրեմ այսօրը, կգոհանամ եղածով, ատոր համար ալ հոգիս ուրախ է։ Ա՛յ մարդ, այս գիշեր առնենք հաղթանակին ծայրը. գիշերներ շա՜տ, քանի մը օրեն ալ կառնենք հաղթանակին միջուկը, ետքն ալ լրումը, որ սրտերնիս ինչպես պետք է լիանա։ Ո՛չ իմ Կիպրոսի տակառիկներս սպառվելե վախ ունին, ո՛չ ալ Մխիթարի անուշ ձայնը. այնպես չէ՞. և երկուքն ալ շատ են ընտիր, շատ են հին ու շատ սրտի զարնող։ Օշի՛ն, այս անգամ պետք չէ հակառակիս, թե ինծի կսիրես։

ՕՇԻՆ— Փորձանք ես։ Դուք գացեք, սկսեցեք և ինծի մի՛ սպասեք. գիտե՛ս, որ գործ ունիմ. վերջը տեսնեմ, կաշխատիմ գալու, եթե կարողացա։

ՀԵԹՈՒՄ— Փա՜ռք քեզի, Աստված, որ այսչափ հավանությունը գոնե բերնեն փրցուցինք։ Ասիկա ամենեն մեծ նշանն է, Մխիթա՛ր, որ մեծ է մեր տարած հաղթանակը և վերջնական, ես կճանչնամ իմ մարդս։ Քալե՛, Հայր-սո՛ւրբ, քալե՛։ (Երկուքով դուրս):

## 6

Օշին կնստի ու գրիչը ձեռքը կքաղվի իր թղթերուն մեջ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Մե՛ծ իշխան, սպան վերադարձավ Ամորիներու ղըղյակեն։

ՕՇԻՆ— (Առանց զբաղումը ընդհատելու) Մինա՞կ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Հետն է Լուսինյաններուն նոր հարսը, տիկին Սիթա Ամորի։

ՕՇԻՆ— (Միշտ գլուխը կախ և զբաղված) Աղե՛կ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Որ ընդունարանը կսպասե հրամանիդ։

ՕՇԻՆ— (Զբաղված է ու լուռ):

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Թագավորահա՛յր, դուն իմաստուն մարդ ես և ինծի նման մեկուն խորհուրդներուն պետք չունիս. բայց ես, որ կտեսնեմ քու ձեռնարկներուդ կատարյալ հաջողությունը՝ պարտք կզգամ ըսելու, որ իզուր տեղը անձամբ տեսակցել կուզես տիկնոջ հետ։ Կին է, նոր ամուսնացած, պիտի խնդրե, պաղատի, պիտի ստե, որ կերպով մը ամուսինը արդարացնե. դուն ալ մեղքնաս պիտի։ Մի՞թե մեր արդեն ունեցած տեղեկությունները հերիք չէին քեզի։

ՕՇԻՆ— (Միշտ իր թղթերուն հետ) Ժուան Ամորիի դեմ լուրջ մեղադրանք մը չտեսա։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Կզարմանամ, որ պայլ իշխանը այդ համոզումին է։ Բայց ենթադրենք, որ արդար է, ինչ որ չէ, սակայն մի՛ մոռնար՝ Լուսինյաններու շառավիղ է, Զապելին հարազատ զավակը։ Երկու մեծ եղբայրները և մայրը մեռան, պետք է մեռնի նաև կրտսերը, որ այս հարցը հիմնապես մեջտեղեն մաքրվի. արդարն ու անարդարը ալ Աստծու որոշելիք գործն է։

ՕՇԻՆ— (Լուռ է ու կգրե):

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Ես անշուշտ կհասկնամ քու սրտիդ բարությունը, բայց...

ՕՇԻՆ— (Գլուխը հանկարծ բարձրացնելով) Բարությո՞ւն։ Դուն կհամարես ինծի բարի՞, այս բոլոր կատարվածներեն ե՞տքը։ Հիմա՛ր ես։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Սակայն, տե՛ր...

ՕՇԻՆ— Կովի դաշտին վրա հարյուրներու մահ տվողը, այո՛, կրնա իր հոգիին խորը բարի մեկը ըլլալ։ Բայց իր բերդին մեջը դժբախտ ու թշվառ կին մը սպաննել տվողը, ո՛չ, բարի ըլլալ չի կրնար։ Ես մահ շատ եմ տեսած, բայց այս զզվելի զգացումը, ինչ որ հիմա կա հոս, ես երբեք չեմ ունեցած։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Դուն կատարեր ես քու պարտավորությունդ։

ՕՇԻՆ— Գարշելի պարտավորություն մը։ (Զայրույթով) Կատարեցի և այդ գարշելի պարտավորությունը. չկշտացա՞ք. ալ ի՞նչ կուզեք ինծմե։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Ների՛, պա՛յլ իշխան. ես միայն...

ՕՇԻՆ— Գնա՛, ներս մտցո՛ւր իշխանուհի տիկինը։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Տե՛ր, քանի որ այդ է կամքդ, քանի որ ինքդ անձամբ խոսեցնել կուզես, աղե՛կ։ Միայն վերջին անգամ մը, քու ինծի հանդեպ ցույց տված մեծ վստահության փոխարեն, նույնիսկ քեզի անհաճո ըլլալու վախը հանձն առնելով՝ կըսեմ քեզի, մե՛ծ իշխան. եթե ապրի երրորդ եղբայրը, եթե այս երկրին մեջ շարունակվի Զապելի տունը՝ կրնա գալ օր մը, որ ստիպված ըլլանք խոստվանելու, թե իզուր էր Զապելի մահը։

ՕՇԻՆ— (Պաշտոնական) Լսեցի՛։ Շնորհակալ եմ։ Գնա՛ ու ինծի ղրկե իշխանուհի տիկինը։ (Գործավարը դուրս):

# 7

Քիչ մը ետքը կամաց կնեղվի դռան վարագույրը և ծանր ներս կմտնե Ռիթա ու կկենա վարագույրին առջև առանց վարագույրին ծայրը թողնելու։

Եվ պահ մը երկուքը դեմ-դեմի կնային իրարու լուռ, անշարժ ու համառ։

Օշին վերջապես թեթև մը գլուխը կխոնարհե բարևի ձևով և մատնանիշ կընե իր դիմացի բազկաթոռը։ Ռիթա կհառաջանա ու կնստի։

ՕՇԻՆ— *Տիկին Ռիթա, իշխանուհի Ամորի Լուսինյան։*

ՌԻԹԱ— *Կլսեմ։*

ՕՇԻՆ— *Պատերազմական բարձրագույն ատյանի վճռովը Ջապել Ամորի տիկինը և իր երկու որդիքը՝ Հյուկ ու Հանրի Ամորիները քավեցին իրենց հանցանքը իրենց կյանքովը։ Ամուսնուդ ընտանիքին պատահած այս դժբախտությունը արդեն գիտես։*

ՌԻԹԱ— *Այո՛, երկու օր առաջ հայտնեցին ինծի։*

ՕՇԻՆ— *Գիտես նաև, որ ամուսինդ ողջ է ու առողջ։*

ՌԻԹԱ— *Ատիկա ալ ըսին։ Արդյոք կրնա՞մ գիտնալ՝ ինչպե՞ս եղավ, որ ամուսինս ազատ մնաց իր ընտանիքի ճակատագրեն։*

ՕՇԻՆ— *Կրտսերն էր, դեպքերուն մեջ լուրջ մասնակցություն մը չուներ, ոչ ալ ազդեցություն։*

ՌԻԹԱ— *Ուրեմն ատ է պատճառը։*

ՕՇԻՆ— *Այո՛։*

ՌԻԹԱ— *Ո՛չ։ Կուզե՞ս ես ըսեմ քեզի բուն պատճառը։*

ՕՇԻՆ— *Խնդրե՛մ։*

ՌԻԹԱ— (Շեշտ անոր աչքերուն նայելով) *Որպեսզի ես չմտածեմ, թե դուն ամուսնուս մահը կցանկաս։*

ՕՇԻՆ— (Վայրկյան մը գլուխը կկախե) *Դիցո՛ւք, տիկի՛ն, ատիկա ալ դեր մը խաղցած ըլլա։ Պատճառ մը չունիմ ո՛չ ծածկելու, ո՛չ ամչնալու։ Ամուսնուդ կյանքին դեմ վճիռ չկա, բայց ան այլևս մնալ չի կրնար այս պետության սահմաններուն մեջ։ Իրեն հայտնված է արդեն, որ երեք օրը չլրացած, պետք է դուրս ելած ըլլա հայ հողերեն. և այլևս չվերադառնալու պայմանով. ընդմի՛շտ։* (Քիչ մը լուռ)։

ՌԻԹԱ— *Այդպե՞ս։ Աղե՛կ։ Երախտապարտ ենք։ Ուրիշ ի՞նչ ունի ինծի ըսելու Օշին իշխանը։*

ՕՇԻՆ— *Ուրի՞շ։ Ոչի՛նչ։*

ՌԻԹԱ— *Ինչպե՞ս։ Միայն ասիկա հայտնելու համա՞ր էր, որ ինծի բերեր ես հոս, ցերեկ մը ամբողջ ձիու մեջքին։ Այնքա՛ն սիրալիր կերպով մյուս տեղեկությունները ինծի հաղորդող պաշտոնյաները այս մեկն ալ կարծեմ կրնային ըսել ինծի։*



ՕՇԻՆ— *Անշո՛ւշտ կրնային ըսել, բայց ես այդպես չուզեցի։ Եվ քանի որ կպահանջես ամեն բան իր անունովը անվանեմ, աղե՛կ. ես կանչեր եմ քեզի հոս, ցորեկ մը ամբողջ ձիուդ մեջքին, վերջին անգամ մը քեզի տեսնելու համար։ Գիտեմ, վարմունքս խիստ ասպետական չէ։ Պետք չէ կանչեի՝ ինչպես որ կթելադրեն և՛ հպարտությունը, և՛ ազնվությունը. բայց չկրցա։ Երկու տարի է ամբողջ՝ չեմ տեսեր քեզի. դիմացա. ո՛չ ջանացի տեսնել, ո՛չ փորձեցի. բայց հիմա, որ ընդմիշտ պիտի թողնես մեր հողերը ու ալ հավիտյան չեմ տեսնելու քեզի, ա՛լ չկրցա։ Ատիկա ավելի զորեղ էր, քան կամքս, քան դիմադրելու ուժս, քան ամեն հաշիվ ու մտածում։ Դատե՛, ինչպես կուզես։*

ՌԻԹԱ— *Ըսել է՝ և ես ընդմիշտ աքսորված եմ մեր աշխարհեն։*

ՕՇԻՆ— *Աքսորվա՞ծ... ո՛չ։ Այդ տեսակ կարգադրություն մը չկա. և պետությունը պատճառ մը չունի այդ տեսակ որոշում հանելու քեզի դեմ։*

ՌԻԹԱ— *Բայց ըսիր՝ ընդմիշտ պիտի հեռանամ։*

ՕՇԻՆ— *Չէ՞ որ ամուսինդ հեռանա պիտի։*

ՌԻԹԱ— *Այսինքն՝ ես կամովի՞ն։ Այն ատեն պետք է հայտնեմ քեզի, որ Օշին Պայլի կառավարությունը շատ կսխալի։ Ես իմ կամքովս այս երկրեն հեռացողը չեմ։ Ամենևի՛ն։*

ՕՇԻՆ— (Ակնթարթ մը շեշտ դիտելեն ետքը) *Բայց ամուսինդ...*

ՌԻԹԱ— *Ան կրնա հեռանալ, քանի որ պետք է հեռանա, իսկ ես պետք է մնամ, քանի որ պետք է որ մնամ։*

ՕՇԻՆ— *Պե՞տք է։*

ՌԻԹԱ— *Մնամ, որ աշխատիմ, որ հարկադրեմ, որ ամուսինս ետ բերեմ։*

ՕՇԻՆ— *Ատիկա իզուր հույս է, տիկի՛ն, և իզուր ջանք։*

ՌԻԹԱ— *Դեռ կտեսնենք։*

ՕՇԻՆ— *Կրնաս վստահ ըլլալ ըսածիս, գոնե ինչքան ժամանակ որ իշխանությունը իմ ձեռքս է։*

ՌԻԹԱ— *Այդքանը կհասկնամ։*

ՕՇԻՆ— *Ուրեմն դուն կմտածես, դուն կհուսաս կամ պիտի աշխատիս, որ այս երկրի իշխանությունը խլվի՞ իմ ձեռքես։*

ՌԻԹԱ— *Ուրեմն դուն կմտածես, դուն կհուսաս, թե պիտի աշխատիմ, որ այս երկրի վարչությունը մնա քու ձե՞ռքդ։*

ՕՇԻՆ— (Լայն բացված աչքերով կնայի անոր)։

ՌԻԹԱ— *Ի՞նչ կա հոս զարմանալու։ Առաջին օրեն քու պայլությունդ իմ թշնամիս եղավ անձնական։ Հիմա ատոր վրա կավելնա նաև թշնամությունը ընտանեկան։*

*ՕՇԻՆ— Ընտանեկա՞ն։*

*ՌԻԹԱ— Արքայական արյունե մեծ ընտանիք մըն է, որ դուն փրշացնել կուզես· մեծ ճյուղերը կոտրտեցիր արդեն· մնացեր ենք ամուսինըս ու ես· և մեր վրա է հիմա այդ ընտանիքի պատիվը, անունը· վրեժը և դիրքը վերականգնելու բոլոր պարտավորությունը։*

*ՕՇԻՆ— Ա՛խ, այդպես։*

*ՌԻԹԱ— Ամեն նոր կապ իր նոր պարտավորությունները կդնե մեր վրա· և ամեն բանե վեր մեր պարտավորությո՛ւնը· ասիկա դուն սորվեցուցիր ինծի։ Բոլորովին անիմաստ է այն տարբերությունը, որ դուն կդնես Զապել տիկնոջ, իր երկու զավակներուն և մեր միջև։ Հիմա ես եմ Զապել տիկինը և իմ ամուսինս է Ամորիներուն անդրանիկը։* (Կոծ)։

*ՕՇԻՆ— Խոսե՛, խոսե՛։*

*ՌԻԹԱ— Այս վայրկյանիս ես ալ, ամուսինս ալ քու ձեռքդ ենք։ Եթե դուն լրջորեն վճռեր ես վերջնապես ազատվիլ այդ ընտանիքեն՝ վարվե մեզի հետ ալ այնպես, ինչպես վարվեցար այդ ընտանիքի ավագ անդամներուն հետ։ Մաքրե մեզի ալ քու հաղթական քայլերուդ առջևեն, քանի դեռ ուշ չէ, ու բարձրացի՛ր։*

*ՕՇԻՆ— Այսինքն՝ կսպաննես ինծի։*

*ՌԻԹԱ— Ո՛չ։ Չունիմ այդ ուժը, որ քեզի սպաննալ կարողանամ, ո՛չ ալ այս վայրկյանիս։ Դուն այսօր ամենազոր ես· այնքան զորեղ որ կրնաս համարձակ ներողամտություն խաղալ իմ ու ամուսնույս հանդեպ։ Բայց ես ալ չեմ ուզեր պարտքի տակ մնամ քու առջևդ· և մանավանդ չեմ ուզեր մտածես, որ կռնակեդ զարկինք քեզի։ Թշնամություն է ու կռիվ· բաց ու շիտակ· պիտի ընենք ինչ որ մեր ձեռքեն կուգա, դուն ալ, ես ալ· ի՞նչ կա հոս սպաննալու, երբ կըսեմ քեզի, որ օգտագործես քու հաջող օրդ։ Վերջապես ի՞նչ կարևորություն ունի՝ երկու հոգի ավելի՞, թե պակաս ընդհանուր սպանդին մեջ։*

*ՕՇԻՆ— Ես արդեն հայտնեցի քեզի, տիկի՛ն, դատական որոշումը։ Եվ նոր բան մը չունիմ ավելցնելիք։ Քու ամուսինդ ժուան Ամորի Լուսինյան երեք օրը լրացած կըլլա այս թագավորության սահմաններեն դուրս։ Իսկ իր տիկնոջ՝ իր ազատ կամքը ազատ է ընկերանալու ամուսնուն կամ մնալու իր դղյակը, ինչպես ինքը կհաճի։*

*ՌԻԹԱ— Ուրիշ խոսքով՝ բանի տեղ չես դներ ինծի ու կարհամարհես։ Բնական է· ես ի՞նչ եմ որ· ի՞նչ կրնամ որ· ես ո՞վ եմ որ· Ռիթա՞ն, փոքրիկ Ռիթան, որ կառնեիր թևերուդ մեջ, կգրկեիր, կգգվեիր, քանի որ դղյակիդ մեջ անգործ էիր ու կձանձրանայիր· և որ անպետք թաշկինակի մը պես նետեցիր անդին, երբ զբաղումներն ու պետական բարձր*



*հաշիվները եկան ու անոր գոյությունը քեզի համար անհարմար դարձուցին։*

Օշին ձեռքովը կգոցե աչքերը։ Ռիթա խորին ճնշումով կդիտե անոր դեմքը։ Լուռ։ Քիչ մը ետքը Օշին դանդաղ շարժումով մը կբանա աչքերը, կինն ալ կհագնի իր նախորդ դեմքը։

*ՕՇԻՆ— Տրամադիրը գեշ չէ· բնական է, արդար· «ակն ընդ ական»· քաղաքականության դեմ քաղաքականություն։* (Ժպտուն) *«Անպետք թաշկինակը» կուզե բացվի ու ծածանի դեմս իբրև հաղթական դրոշակ մը։ Չեմ ծածկեր ու կխոստովանիմ քեզի, որ ծածուկ ու խորունկ հաճույքով մը դիտեմ պիտի դեմս իր ծածանումը։*

*ՌԻԹԱ—* (Բարկությամբ) *Եվ որուն դեմ երբեք ձեռք չես բարձրացնելու, գիտե՛մ։*

*ՕՇԻՆ— Չես սխալիր· քեզմե զատ ամենուն դեմ։*

*ՌԻԹԱ— Ա՛, դուն ատով զինաթափ ընել կուզես ինծի։*

*ՕՇԻՆ— Ո՛չ, քաղաքականությունը չէ, որ հիմա կխոսի քեզի, այլ պարզ մարդկային հոգի մը։ Ըսի՝ ինչ որ կզգամ։*

*ՌԻԹԱ— Բայց ես ալ ըսի, որ զինաթափ չեմ ըլլալու։*

*ՕՇԻՆ— Իրավո՛ւնքդ։ Գնա՛ ու կատարե՛։*

*ՌԻԹԱ— Ըսել է՝ ես այլևս ազատ եմ· կրնամ հեռանալ հոսկե, ուր որ կամենամ։*

*ՕՇԻՆ— Երկնքի թռչուններուն պես։* (Կզանգե, կմտնե գործավարը) *Կհոգաս ինքդ անձամբ, որ ոչինչ պակաս ըլլա տիկնոջ ճամփու պետքին ու հանգստին, ուր ալ որ ինքը երթալ ցանկանա։ Իսկ Հեթում իշխանը անմիջապես կղրկես ինծի։*

Գործավարը քայլ մը կընե ու գլուխ կուտա տիկնոջը։

*ՌԻԹԱ— Ուրեմն կմնա, որ հայտնեմ Օշին Պայլին իմ... Ինչպե՞ս ըսեմ... իմ շնորհակալությունս, իմ երախտագիտությունս իր այս... անսահման ողորմածության հանդեպ։*

*ՕՇԻՆ— Առողջություն կցանկամ տիկնոջ։*

Գործավարը բարձր կբանե վարագույրը և տիկնոջ ետևեն դուրս։

8

Օշին անբնական շարժումներով ու տեսակ մը հապճեպով կսկսի խառնել առջևի թղթերը, կժողվե, աջին կդնե, անդին կդնե, գզրոցները կբանա, կգոցե: Ակնթարթ մը կանգ կառնե ու կկենա անշարժ, աչքերը տարածության մեջ և ինքը ժպտուն. և հանկարծ նորեն կսթափի ու կվերսկսի իր անհանգիստ շարժումները:

Կմտնե Հեթում իշխանը:

*ՀԵԹՈՒՄ— Խե՞ր է։*

*ՕՇԻՆ— Եկա՞ր. վախցա գացած ըլլաս։*

*ՀԵԹՈՒՄ—* (Դիտելով անոր շարժումները) *Ի՞նչ բանի ես։*

*ՕՇԻՆ—* (Խնդալով) *Խանութս կգոցեմ։*

*ՀԵԹՈՒՄ— Ի՞նչ։*

*ՕՇԻՆ— Չէ՞ որ հյուր կանչեցիր ինծի։*

*ՀԵԹՈՒՄ—* (Զարմանքով) *Գա՞լ կուզես։ Հիմա՞։*

*ՕՇԻՆ— Միտքս փոխեցի, Հեթո՛ւմ։ Դուն իրավունք ունիս. այսօր բացառիկ օր մըն է, այսօր բախտավոր օր մըն է, այսօր տոնելու օր մըն է. երթա՛նք։*

*ՀԵԹՈՒՄ—* (Շվարած) *Ատիկա նո՞ր հասկցար։ Հա՛. սուրհանդակ է եկեր. նո՞ր։*

*ՕՇԻՆ— Նո՞ր։ Չգիտեմ նորն ու հինը. բոլորը խառնվեր է գլխուս մեջ։* (Աշխուժով) *Քալե՛, քալե՛ երթանք։*

*ՀԵԹՈՒՄ— Կեցի՛ր, նախ բան հասկնամ։ Փախե՞ր են, ջարդվե՞ր են, սպանվե՞ր են, ի՞նչ են եղեր։*

*ՕՇԻՆ— Ո՞վ։*

*ՀԵԹՈՒՄ— Ո՞վ պիտի ըլլա. թշնամիները։*

*ՕՇԻՆ— Թշնամինե՞րը։ Ո՛չ, թշնամիները չեն պակսած, ընդհակառակը։* (Բարձր ու ցնցող ծիծաղով) *Ավելցեր են, ավելցեր են... Թշնամիները ավելցեր են...*

*ՀԵԹՈՒՄ— Ինչե՞ր կըսես, կխնդա՛ս։*

*ՕՇԻՆ—* (Լուրջ) *Հեթո՛ւմ, ուրախ է հոգիս. այսօր երջանիկ օր է. սիրտս կուզե, սիրտս երգ լսել կուզե։* (Հուզումով) *Երգ լսել կուզեմ ու արտասվել...*

*ՀԵԹՈՒՄ—* (Տարակուսած) *Փա՛ռք քեզի, Աստվա՛ծ. ա՛ս ալ չէի լսած։ Երթա՛նք։*



# ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԼԱՏԻՆ ՎԱՆՔԻ ՄԸ ԴԱՀԼԻՃԸ

Ընդարձակ սրահ մըն է, ճակատը մեկ-երկու կամարաձև անցքեր կհանեն կամարածածկ պատշգամբը, ուր շենքին բոլոր բաժանմունքները իրարու կհաղորդակցին:

Սրահը աջեն ու ձախեն մուտքեր ունի: Սրահին մեջտեղը դրված է եղևնուսև ու ցած քառակուսի սեղան մը, վրան փղոսկրե փոքր խաչելություն մը: Սեղանին երկու կողմերը դեմ-դեմի նույնպես եղևնուսե բազկաթոռներ բարձր ու քանդակված մեջքերով: Գորգեր ու վարագույրներ՝ բոլորն ալ մութ ու թանձր գույներով:

1

Բազկաթոռներեն մեկուն մեջ նստած է պապական նվիրակը, երկարահասակ, նրբակազմ, շիկահեր ու ծալլի աչքերով, քառասունի մոտիկ մարդ մը աշխույժ նայվածքով և ուսումնասիրված շարժումներով: Բաց-բրեմ մետաքսե պարեգոտ և նույն գույնի կոշիկներ, ինչպես և մաքուր ածիլված դեմքն ու ճեփ-ճերմակ նուրբ ձեռքերը հակադրություն մը կկազմեն սրահի ամբողջ մութ-վանական կահավորումին:

Ձախի բազկաթոռին նստած է Ռիթա Ամորի ամբողջովին սևերու մեջ: Իր ետևը ոտքի վրա կեցած են երկու կույսեր: Իսկ բոլորովին մեկուսի և դեպի աջ կեցած է շիփ-շիտակ և հարգալից դիրքով տաճարական ասպետ մը իր կարգին հատուկ զգեստավորումով, միջին տարիքի, քիչ մը ճերմկած և շատ սուր նայվածքով:

*ՄՈՆՍԵՆՅՈՐ ԴԸ ՇԱՊ՝ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԸ— Այո՛, դքսուհի՛, բոլորովին անիրավ չեն ձեր դիտողությունները։ Իմ նախորդս շատ... ինչպես ըսեմ... շատ ներողամիտ է եղեր, շատ զգույշ. շատ մեղմ է եղած, ինչ որ քաջալերած է հակառակորդներուն հանդգնությունը։ Այնպես չէ՞, հա՛յր Տոմինիկ։*

*ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ ՏԸ ԼԱ-ԹՈՒՐ՝* տաճարականը— *Դժվար էր այլ կերպ շարժիլը, ձերդ սրբազնություն. մերիններուն ուժերը ցրված են, շահերը տարբեր, շատերն անտարբեր։*

*ՌԻԹԱ— Հարցն ալ ճիշտ հոդ է, սո՛ւրբ-հայր, պետք է ընդհանուր շահեր ստեղծել, բերել ամենքը իրարու, կապել և ուժ առաջացնել։*

*ՆՎԻՐԱԿԸ— Ճշմարիտ է, դքսուհի՛. պետք է խոստովանինք առանց*

այլևայլի. պապական սուրբ աթոռին նվիրակները եթե մինչև հիմա ատիկա չեն ըրեր՝ թերի մըն են ըրեր, ասկե ետքը կփոխվի։

ՌԻԹԱ— Թող ներե ինծի ձեր սրբազնությունը, մոնսենյո՛ր, բայց մեջս տարակույս ունիմ։

ՆՎԻՐԱԿԸ— Այսինքն... ինչպե՞ս։

ՌԻԹԱ— Անցած անգամ, մոնսենյոր, դուն էիր ըսողը, որ Կիլիկիան ու Կիպրոսը վերջին կղզյակն է քրիստոնեության այս մահմեդական ովկիանոսին մեջ։ Աղե՛կ։ Ահա՛, իմ ամուսինս է՝ իշխան Ժուան Ամորին՝ միակ օրինական ժառանգը Կիպրոսի գահին, ահա՛, իմ ամուսինս է միակ օրինական խնամակալը հայկական գահին. և ո՞ւր է հիմա իմ ամուսինս, մոնսենյոր. անարգ փախստական մը, իրավազուրկ հալածական մը, անցնցելի ամոթ մը կաթոլիկ աշխարհին և դժբախտաբար նաև նվաստացում մը հռոմեական պապական գահին ու նվիրակին։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— (Վիրավորված) Դքսուհին շատ խիստ կխոսի։

ՆՎԻՐԱԿԸ— Ոչի՛նչ, հայր Տոմինիկ, ոչինչ։ Ես այդ խստությունը ավելի կսիրեմ, քան մինչև հիմա մեր կրած թուլամորթ պարտությունը։ Ցարմանալի է. քանի եկած եմ՝ չորս կողմս արի ու ձեռներեց մարդիկ կփնտրեմ. մեկ այր հոգիի մը հանդիպեցա մինչև հիմա, ան ալ ահա՛ կանացի զգեստներու մեջ։

ՌԻԹԱ— Հաճելի խոսքեր ընտրելու մեջ ձեր սրբազնությունը ժլատ չէ. բայց ես եկած եմ լսելու քիչ մը ավելին. գիտենալ կուզեի, թե ինչի՞ կրնամ հույս ունենալ, վերջապես ի՞նչ ենք ընելու։ Մի՞թե Օշին Պայլ Համփոյան այսպես նստելու է մեր գլխուն և անպատիժ հեգնելու է արդարությունն ու կաթոլիկությունը։

ՆՎԻՐԱԿԸ— (Հանդիսավոր) Ո՛չ, տիկի՛ն. կրնաս վստահ ըլլալ, որ արդարությունն ալ կուգա շուտով իր իրավունքին, ինչպես և կաթոլիկությունը։

ՌԻԹԱ— (Ոտքի ելլելով) Ուրիշ խոսքով այս անգամ ալ նորին սրբազնությունը կհաճի ճամփու դնելու ինծի պարապ խոսքերով։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— (Վիրավորված) Նորին սրբազնության այդ խոսքերը... պարապ խոսքե՞ր։

ՆՎԻՐԱԿԸ— Կըմբռնեմ, որ խորը խոցված է քու հոգիդ, տիկի՛ն. մեջդ կեռա ատելությունը. և թող օրհնված ըլլա այդ սուրբ ատելությունը։ Միայն թե կին ես. և չես կրնար ազատիլ քու սեռիդ բնական թերություններեն։ Կին մը՝ ինչ որ ուզե՝ կուզե որ ստանա անմիջապես։ Համբերությո՜ւն, դքսուհի՛ Ամորի, քիչիկ մըն ալ համբերություն։ Եվ ամեն անգամ որ տիկինը ազդվելություն զա Հրեշտակապետի մեր սրբակենցաղ կույսերուն, կխնդրեմ, որ նորեն այսպես չմոռնա ինծի հանդիպելու։



ՌԻԹԱ— (Խոնարհելով) Սուրբ օրհնությունդ, մոնսենյոր։

ՆՎԻՐԱԿԸ— Միշտ քու հետդ Աստծո՛ւ օրհնությունը։

Դքսուհին ձախի դուռնեն դուրս, երկու կույսերն ալ անոր ետևեն։

2

ՆՎԻՐԱԿԸ— (Համառ կդիտե Ռիթայի կերպարանքը, եւքը չառնալով տաճարականին) Ի՞նչ կին է. և ի՛նչ գեղեցիկ։ (Հանկարծ ոտքի ելլելով) Եվ շիտակ կըսե։ (Ամբողջ հաջորդ խոսակցության միջոցին երբեմն կքալե սենյակին մեջ, երբեմն կկենա զանազան դիրքերով) Թո՛ւյլ ենք եղած, թո՛ւյլ, թո՛ւյլ և տկար։ Ջուկը գլխեն է հոտած։ Հանգավորը աթոռակալն է ու իր շրջապատը։ Հռոմի սրբազան պապը ծառա մըն է դարձեր Ֆրանսիայի թագավորին։ Տո՛ւր ինծի մեր խմորի մարդ մը, և տարին չանցած սրբազան աթոռը Ավինյոնեն Հռոմ փոխադրեմ, և այս մահմեդական հորդաները ետ-ետ նահանջեն Պաղեստինի հողերեն. ուխտավորներուն գունդերը նորեն դեպի սուրբ վայրերը և տաճարական ասպետները անցնին նորեն ձեր փսկական ու սրբազան կոչումին։ Իշխանությունը մերիններուն ձեռքը պիտի ըլլար, կարմիր գլխարկները՝ մեր կուսակիցներուն գլուխը, և դուն կտեսնեիր այն ատեն հետևանքը։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— Բայց ըստ երևույթին դեռ շատ պինդ են նստած անոնք իրեն աթոռներուն։

ՆՎԻՐԱԿԸ— Ո՛չ քու կարծածիդ չափ։ Ատանկ որ ըլլար՝ ես հիմա հոս ղրկված չէի ըլլար։ Իհարկե, անոնք իրենց հաշվով ինծի աքսոր մըն է, որ ղրկեցին. բայց ատիկա արդեն ինքնին նշան մըն է, որ ոտքերնուն տակ հողը կերերա։ Եվ ես շուտով իրենց ցույց կուտամ, թե ի՞նչ կծլի այս աքսորեն։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— Եվ ի՞նչ պիտի ծլի, ձերդ սրբազնություն։

ՆՎԻՐԱԿԸ— Հայ եկեղեցիին վերջնական միացումը։ Այդ անճարակները այսքան ժամանակ է կգրեն, հա՛ կգրեն, պարապ թղթակցություններ, պարապ խոսակցություններ, բայց վճռական ոչ մեկ քայլ։ Դուն ինծի կճանչնաս, հա՛յր Տոմինիկ. ես չեմ սիրեր ավելորդ խոսք ըսել, բայց ահա՛ կըսեմ քեզի՝ տարին չբոլորած Կիլիկիայի թագավորությունն ալ Կիպրոսի նման պետք է ըլլա զուտ կաթոլիկ և մեր առաքելական աթոռին հրամաններուն ներքև։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— (Քաղաքավար բերանավառությամբ) Կցանկամ հաջողություն բոլոր սրտովս։

ՆՎԻՐԱԿԸ— Ձգե՛ այդ թերահավատությունը, ո՞վ է քեզի այդպես վախցուցեր. հաստագլուխ Օշին Պա՞յլ մը. ես կբարակցնեմ անոր գլուխը, և դուն ալ կզարմանաս. և շատ շուտով, որովհետև ես հոս երկար մնալ չեմ կրնար. իմ ներկայությունս անհրաժեշտ է հոն. և անհրաժեշտ է, որ այդ միացման թուղթը գտնվի իմ կալոցներուս մեջ, երբ Ավինյոն վերադառնամ. ատիկա բոլորովին ուրիշ դիրք և ուրիշ կշիռ կուտա ինծի ու իմ խոսքիս. կհասկնա՞ս։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— Կհասկնամ, կուզես քեզի համար կարդինալի գլխարկ մը կարել տաս հայերու միացման թղթովը։

ՆՎԻՐԱԿԸ— Ես կուզեմ մեր կուսակցության հաղթանակը, ես կուզեմ պապերու բարձրացումը, ես կուզեմ Վենետիկի հարստացումը։ Գիտե՞ս տարեկան քանի հազար տուքատի կորուստ է Վենետիկի համար, եթե Այասը հանկարծ վերջնապես իյնա մամլուքներուն ձեռքը, և ասիական ծովեզերքը իսպառ խցկվի մեր առևտրական նավերուն առջև. տարեկան երկու-երեք հազար միմիայն իմ եղբորս առևտրական տունը կտուժե։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— Այո՛, վենետիկցի ես և հայրենիքիդ շահը չես մոռնար երբեք։

3

Պատշգամեն կուգա հոգևորական մը ու կկենա խոնարհ ու հարգալից:

ՆՎԻՐԱԿԸ— Ձիավորները կերևա՞ն։

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ— Դեռ ո՛չ, մոնսենյոր։ Հայ վարդապետը մեկնելեն առաջ կուզե մնաս բարով ըսե սրբությանդ։

ՆՎԻՐԱԿԸ— Աղե՛կ, բե՛ր հոս։ Լսե՛, կհուսամ՝ ամեն պատրաստություն տեսնված է, և գիտե՞ն ամենքը իրենց նշանակված տեղերը. իսկ քույրերը եկա՞ն Հրեշտակապետաց վանքեն։

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ— (Բոլոր հարցերուն գլխով դրական նշան կընե խոնարհությամբ):

ՆՎԻՐԱԿԸ— Առաջին ձիավորները երևան թե չէ՝ մեր տասներկու ձիավորները պետք է առաջ շարժվին, վանքի մեծ դարպասին առջևը կդիմավորե վանքի ամբողջ միաբանությունը, եկեղեցիին առջևը դեմը կելլեն մեր կույսերը։ Բոլորդ կընկերակցիք իրեն մինչև այս մեծ սանդուղները, և դուն ինքդ, կլսե՞ս, դուն ինքդ կուգաս ինծի իմաց տալու, որ սանդուղին գլուխը իրեն դիմավորեմ, միայն այնպես պիտի ընես, որ



իրը ու ես միաժամանակ հասնինք սանդուղին գլուխը, կհասկնա՞ս, բոլորովին միաժամանակ։

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ— Այո՛, միաժամանա՛կ, ձերդ սրբազնություն։

ՆՎԻՐԱԿԸ— Եվ ուշադիր եղեք, որ հետի մարդիկը պակաս չզգան հյուրասիրության. ուտելիքն ու խմելիքը առատ ըլլա։ Սիրալիր եղեք և ուշադիր, ինչքան կրնաք։ Դե՛, առաջնորդե՛ հոս Հայ վարդապետը։ (Հոգևորականը դուրս):

4

ՆՎԻՐԱԿԸ— Իշխանը, երբ ես իրեն այցելեցի, իրավ որ իշխանաբար ընդունեց ինծի. չեմ ուզեր, որ թերի գտնվիմ, երբ հիմա ինքն է, որ կփոխադարձե այցելությունս։ Սկիզբը կուզեմ, որ առանձին ըլլամ հետը, ինչպես և ճաշի ատեն, ինչպես որ կպահանջե պատշաճությունն ու իր դիրքը։ Բայց ճաշեն ետքը կկանչեմ քեզի և մեր քանի մը աչքի իյնող հոգևոր անձերը և պիտի տեսնես, որ անխելք մարդ չէ բոլորովին։

ՀԱՅՐ ՏՈՄԻՆԻԿ— Ինչպես որ կհրամայե ձեր սրբազնությունը։

5

Նվիրակը կերպա կնստի իր աթոռին վրա՝ շիտակ ու տիրական դիրք մը առնելով: Հոգևորականին առաջնորդությամբ աջի դռնեն ներս կուգան Ներսես Պալոնց վարդապետը և Մախտում Երանի, որ փոքրահասակ ու գունեղ դեմքով մարդ մըն է: Հոգևորականը թեկույն հետ կերպա, իսկ երկուքը քիչ մը առաջ կուգան և խոնարհ կբարևեն Նվիրակը: Նվիրակին մեկ կողմը նորեկներն են, մյուս կողմը՝ տանարականը:

ՆՎԻՐԱԿԸ— Եկած ես հրաժե՞շտ առնելու, հա՛յր Ներսես։

ՊԱԼՈՆՑ— Այո՛, մոնսենյոր, և քու օրհնությունդ։

ՆՎԻՐԱԿԸ— Դուն ունիս արդեն իմ օրհնությունս, դուն ունիս սրբազան պապին օրհնությունը։ Ո՛չ ես և ո՛չ ալ Քրիստոսի սրբազան փոխանորդը ալ չեն մոռնար քեզի և քու բոլորանվեր նվիրումդ։ Բերած տեղեկություններուդ և նուրբ դիտողություններուդ համար շնորհակալ եմ։ Ընկերոջդ հետ հոսկե կմեկնիս, երբ իշխանի մարդիկը հացի նստած կըլլան, և կմեկնիս դղյակին փոքր մուտքովը։ Եվ ասկե ետքն ալ կուգաս ինձի տեսնելու, երբ ես քեզի կանչեմ, և միայն ա՛յն ժամանակ, երբ կանչեմ, միշտ ալ հայր Տոմինիկի միջոցով։

ՊԱԼՈՆՑ— Իսկ երբ ինքս հաղորդելի՞ք մը ունենամ, կամ հարցնելի՞ք մը։

ՆՎԻՐԱԿԸ— Միշտ նույն ճամփով իմաց կուտաս հայր Տոմինիկին, ես կկարգադրեմ։ Այս զգուշությունները, բարեկա՛մս, անհրաժեշտ են գործի հաջողության համար։ Բացառիկ ու շատ կարևոր դեր է վիճակված քեզի. դուն մեր աչքն ես, դուն մեր ականջն ես թագավորի պալատին մեջ։ Մեծ հույսեր ունիմ քու վրադ. ձեր տեղացի տգետ ու նեղմիտ, մոլեռանդ ու աղանդավոր հոգևորականության մեջ քու ճկուն ու բաց միտքը գանձ մըն է աստվածատուր։ Աստված ղրկեր է քեզի քու հայրենակիցներդ լուսավորելու, որոնք նստած են խավարին գիրկը, և առաջնորդելու անոնք աստվածային փարախը՝ սրբազան պապի սուրբ մականին տակ. վստահ եմ, որ խորապես ու լրիվ կըմբռնես քու կոչումդ։

ՊԱԼՈՆՑ— (Հափշտակությամբ) Մոնսենյո՛ր, ես կցանկամ, որ վերնան բոլոր մանր, տեղական ու ցեղական քրիստոնեությունները, վերնան մեջտեղեն զանազան եկեղեցիներն ու աղանդները. ես կցանկամ, որ բոլորը միացած՝ կազմեն միա՛կ, մեծ, սուրբ ու ճշմարիտ քրիստոնեական եկեղեցին, Քրիստոսի միահեծան թագավորությունը։ Ես կհավատամ, որ միայն պապական եկեղեցիին վեմը կարող է այդ հրաշալիքը գլուխ բերել. Հռոմեն պիտի գա այդ համասփյուռ երջանկությունն ու միությունը։ Ահա՛ այդ քրիստոնեական միության ծառայելու համար դրեր եմ իմ անձս և իմ շատ համեստ ուժերս քու տրամադրության տակ։ Այո՛, ես հայ մըն եմ և հայ եկեղեցիի վարդապետ մը, բայց ահա՛ կըսեմ քեզի, որ խեղդեմ պիտի իմ մեջս ինչ որ հայ է և քայքայեմ պիտի այն եկեղեցին, որուն վարդապետն եմ։ Ի՞նչ է հայը, կամ ծագումը, կամ տեղական մանր-մունր հաշիվները, երբ տիեզերական հավատքի մը, երբ համայնապարփակ իդեալի մը, երբ ընդհանրական քրիստոնյա եկեղեցիի մը հավատքը կեցած է առջևս։

ՆՎԻՐԱԿԸ— Կլսե՞ս, հայր Տոմինի՛կ։ Ահա այդ միակ ու ճշմարիտ քրիստոնյա եկեղեցին է, որ տիրե պիտի ամբողջ աշխարհին. ևատոր խութերուն վրա է, որ պետք է փշրվին բոլոր ընդդիմությունները. ատոր առջևն է, որ վերջապես խոնարհին պիտի բոլոր աշխարհական իշխանությունները, որովհետև ատիկա է գերագույն կամքը և գերագույն ուժը։ Հրճվանքով կլսեմ քու խոսքերդ, հա՛յր Ներսես, և հրճվանքով տեղեկագրելու եմ այդ բոլորը մեր սրբազան Մայր աթոռին. և Հռոմի մայր աթոռը չի՛ մոռնար երբեք և չի՛ լքեր երբեք իր արի ու հավատարիմ զինվորները։



## 6

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ— (Արագ ներս մտնելով խորքեն) Իշխանը հասած է եկեղեցիին առջևը։

ՆՎԻՐԱԿԸ— (Ոտքի ելլելով) Այո՛, իսկո՛ւյն։ Ուրեմն, հա՛յր Ներսես, դուն կհեռանաս քու եկած սենյակներով և երթա՛ս բարով։

Նվիրակը, հոգևորականը և հայր Տոմինիկ դուրս ճակատեն։

## 7

ՊԱԼՈՆՑ— Կտեսնե՞ս, Մարքո՛ւտ, ի՛նչ կրթություն, ի՛նչ ճաշակ և ի՛նչ նրբություն։ Մեր հոգևորականները անոր քովը խոզ են, խոզ։ Է՛, ուժ ունին մարդիկը, խելք ունին, կռնակ ունին, հարստություն ունին. ինհարկե իրենցն է ապագան ու հաջողությունը։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Ատոր որ չհավտայինք, ալ ինչո՞ւ պիտի կախվեինք ատոնց պոչեն. թեև այդ քու նոր մոնսենյորեդ ես այնքան ալ հիացած չեմ շիտակը։

ՊԱԼՈՆՑ— Ինչո՞ւ։ Իր կրթությունը, իր խելքը, իր խոսքը...

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Հասկցա՞նք, լսեցինք։ Դուն կրնաս ոգևորվիլ. քեզի խոստացավ, որ կգրե Հռոմ. մեկ-երկու տարիեն կդնեն քեզի փառավոր պաշտոնի մը գլուխը և ամենու գլխուն լիմոն կքամես։

ՊԱԼՈՆՑ— Ինչո՞ւ կտրտնջաս։ Չէ՞ որ քեզի ալ ըսավ, թե շուտով...

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Շուտո՛վ, շուտո՛վ, գիտեմ ես այդ շուտովը։ Ես կզգամ, որ ան ինծի չի սիրեր, թեև խերն եմ անիծեր անոր սիրուն։ Անիկա քեզի պես ապագային սպասող մարդիկ կուզե և առայժմ քիչով բավականացող։ Իսկ ես հնչյուն վճարի մարդ եմ, ինչպես կտեսնես. ամեն գործին իր վարձատրությունը. պարապ խոսքերու և ապագաներու ականջ չեմ կախեր. և ատոր համար ալ քու մոնսենյորդ ինծի չհավնիր։ Զտեսա՞ր, մնաս բարով մը անգամ չըսավ ինծի։

ՊԱԼՈՆՑ— Իրարանցումին մեջ խեղճը ընդհանուր բարև մը ըսավ, տեսնել նեղ մի՛ մտածեր։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Դուն կրնաս լա՛յն մտածել, ապագա խոշո՛ր հաշիվներ ունիս. բոլոր վարդապետները գրպանդ դնել կուզես. քու հաշիվներդ լայն են, դուն կրնաս լայն մտածել։ Եվ վերջապես դուն երկուքով մեկ անգամեն կկթես. իմ բանս ուրիշ է, ես իմ հաշիվներս միշտ ... կրռնեմ, և իմ առուտուրս ապառիկ չի վերցներ։ (Ականջ դնելով) Հա-

սա՛նւ Ներքին բակն ենւ Իշխանն ու իր շքախումբը հիմա ինչ ըսես կըրնան մտածել աշխարհիս երեսին. բայց չեն կրնար մտածել, որ ես ու դուն հիմա հոս ենքւ

ՊԱԼՈՆՑ— Սակայն քիչ մըն ալ որ տնտնանք՝ ո՛չ միայն կմտածեն, այլև կտեսնեն իրենց երկու աչքերովըւ Քալե՛, քալե՛, շուտւ

*Պալոնց կշտապէ աջի դուռնէն դուրս: Մաքսուտ Երանի կհետևի անոր՝ գլուխը միշտ ետ դարձուցած և կամարներուն ետևէն բան մը ավելի տեսնելու ջանքով:*

## 8

*Վայրկյան մը տեսարանը լուռ է ու պարապ:*

*Պատշգամբի աջէն նախ կերևան զինվորներ, որոնք կշարվին խորքի կամարակապ եզերքին: Զույգ-զույգ կուգան հոգևորականներ զանազան աստիճանի ու կարգի և կույսեր, որոնք անցք մը կկազմեն մինչև սրահին ճակտի մուտքը: Այդ անցքին մեջէն վերջապես կերևան իշխանն ու նվիրակը, քով-քովի, ծանր քայլվածքով: Ամենքը թեթև մը կխոնարհին անոնց անցնելու ատենը: Անոնց անմիջապես ետևէն կուգան իշխանի չորս թիկնապահները՝ չորս լեռնցի այրած դեմքեր, լայնաթիկունք ու լավ զինված:*

*Նվիրակը իր հյուրը կառաջնորդէ և դեմ-դեմի կնստին բազկաթոռներուն: Իսկ խորքի բազմությունը արագ կքաշվի աջէն ու ձախէն: Պատշգամբը կմնան չորս թիկնապահները անշարժ քարացումով. և ավելի խորքը բոլորովին մեկուսի նախորդ հոգևորականը:*

ՆՎԻՐԱԿԸ— Բարի՛ ըլլա քու գալուստդ իմ հարկիս տակ, պա՛յլ իշխանւ Ես բախտ ու պարտավորություն ունիմ հայտնելու քեզի ամենեն առաջ իմ սրբազնասուրբ քահանայապետիս օրհնությունն ու համակրանքը, նոր սուրհանդակ ունիմ և թուղթւ

ՕՇԻՆ— Անչա՛փ ուրախ եմւ Արդեն մենք ամենքս կձգտինք սուրբ հայրապետի օրհնության ու համակրանքինւ Ամեն կողմե մահմեդականներով ու թշնամիներով շրջապատված՝ բնականաբար ամենուս աչքը միշտ կդառնա դեպի արևմուտք, դեպի ծովեն անդին ապրող բախտավոր և հզոր քրիստոնյա պետությունները. և անոնց մեջ ո՞վ ամենեն ավելի բարձր ու հարգված, քան Հռոմի սրբազան պապըւ Մենք հոս պահակ մըն ենք միայն, այս հայ պետությունը քրիստոնեության սահմանապահն է, քրիստոնյա աշխարհի վերջին ամրությունը, որ միշտ կարոտը ունի իր ետևի հարազատ քրիստոնեության համակրանքին և օգնությանւ

ՆՎԻՐԱԿԸ— Համեմատությունդ շատ ճիշտ է, մե՛ծ իշխան. ճիշտ այդպես կմտածե և իմ սրբազան քահանայապետս, և ե՛ս՝ նվաստ նվի-



րակը իր սրբությանւ Քանի եկած եմ այս երկիրը, և մանավանդ քեզի հետ իմ առաջին հանդիպումես ի վեր, երբ քեզի մոտեն ու անձամբ ճանչնալու պատիվը ունեցա, տիվ և գիշեր միայն այդ հարցն է ինծի զբաղեցնողըւ Այո՛, իշխա՛ն, պետք է անառիկ դարձնել քրիստոնեության այս ամրոցը, այս միակ ու վերջին ամրոցը ասիական հողերուն վրաւ Ատիկա քրիստոնեական պարտավորություն մըն է ամեն մեկ հավատացյալի համար. և ատիկա կարելիություն մըն էւ

ՕՇԻՆ— Ուրախ եմ, որ այդպես կմտածե մոնսենյորըւ

ՆՎԻՐԱԿԸ— Մանավանդ հիմա, երբ այս երկրի վարիչը դուն ես, խոսքը մեր մեջւ Այս երեք ամիս է գալս, շարունակ կճամփորդեմ, կայցելեմ, կընդունիմ, ամենուն հետ շփման մեջ եմ, ճանչնալ կուզեմ մարդիկըւ Դիոգինեսի լապտերով մարդ, ուժ, կարողություն կփնտրեմ շուրջս. չկա՛ւ Խխունջներ ու կրիաներ են բոլորը՝ քաշված իրենց բերդերուն պատյանին տակը. իրենց քիթեն անդին ո՛չ կտեսնեն և ո՛չ տեսնել կուզեն. և ամենքը կորուսած են իրենց ուղին, սմքած, շվարած, իրենք ալ չգիտեն՝ ո՞ւր կերթան, չգիտեն՝ ի՞նչ է բերելու վաղըւ Իշխա՛ն, ես միայն քեզի գտա հոս, որ պարզ հայացք ունիս իրերուն վրա, հեռուն կտեսնես, գիտես, թե ինչ կուզես և ունիս կամք անշեղ նպատակիդ դիմելոււ

ՕՇԻՆ— Շնորհակալ եմ, մոնսենյոր, քու այդ կարծիքիդ համար, թեև անշուշտ մեծ չափազանցություն կա իր մեջւ

ՆՎԻՐԱԿԸ— Պատահականություն մը չէ, որ հիմա քու ձեռքդ կգըտնըվի այս երկրին ղեկըւ Աստվածային պարգև մըն է ատիկա, որ շնորհվեր է մեզի քրիստոնեական այս բերդի ամրացմանը համարւ Ամենեն առաջ պետք էր ուժեղ մարդ մըւ Ահա տարիներու աշխատանքով հասեր ես նպատակիդ մեկ մեծ ու խոշոր մասին. ահա՜ հետ են նետված մամլուքները, ահա՜ Իկոնիան տեղեն երերալ չի համարձակվիր. ներսն ալ ընկճեր ես բոլոր հակառակորդներդ և լավ ես ըրերւ Դու ես տերը այսօր հաստատ ու անվիճելի, ուրա՛խ եմ. բայց վա՞ղըւ

ՕՇԻՆ— Վաղը ի՞նչւ

ՆՎԻՐԱԿԸ— Քանի՞ տարեկան է հիմա թագավորդ. կարծեմ տասնըյոթը լրացնելու վրա է արդեն, չէ՞, ըսել է՝ վաղը կամ մյուս օրը այս երկրին գլուխը կեցած պիտի ըլլա անուժ ու անփորձ մանուկ մըւ

ՕՇԻՆ— Ա՜խ, ատիկա՞ է քեզի մտահոգություն պատճառողը, իզո՛ւրւ Առայժմ դեռ ամեն ինչ ես եմւ Այդ քու ըսած վաղն ալ ես միշտ կըլլամ իր քովը՝ իմ ճերմակած փորձառությունս իր խարտյաշ մազերուն անփորձությանը խառնելոււ

ՆՎԻՐԱԿԸ— Սակայն դուն գիտե՛ս, որ քսան տարեկանին մոտերն է,

որ մենք մեզի ամենագետ և ամենակարող կնկատենք, և ամենեն ավելի նեղություն ու ճնշում կզգանք ճերմակ մազերու միջամտութենեն։

ՕՇԻՆ— (Խնդալով) Ես այդպես հոռետես չեմ իմ և իմ թագավորիս իրարհասկացողության վերաբերմամբ։

ՆԻՎԻՐԱԿԸ— (Նմանապես խնդալով) Լավատեսությունն արդեն բոլոր հայերու տկար կողմն է։ Եվ ընդունե՛, որ քու կարծիքեդ չեն ըլլալու ներքին հակառակորդներդ, որոնց բնական հենարանը պիտի դառնա պատանի թագավորը, և որը անոնք ջանալու են իր հորը դեմ հանելու. իր «բռնակալ» հորը դեմ։

ՕՇԻՆ— Ջանալը իրենց իրավունքն է, կարողանալն է բանը։

ՆՎԻՐԱԿԸ— Շատ գոհ եմ, որ այդպես վստահ ես։ Միայն այդ վստահությունը դժվար է ներշնչել նաև հեռավոր արևմուտքին, հեռավոր արքայական տներուն, որոնցմե ամեն մեկուն մեջ այդ ընտանեկան կռիվները կան ու ծանոթ են և գիտեն, թե ի՛նչ աստիճան կտկարացնեն պետության ուժը։ Մինչդեռ անոնց համոզում տալ պետք է, թե հոս տևական կերպով ուժեղ ու կարող ձեռքերու մեջ է իշխանությունը, որ դրամ և օգնություն ստանալը կարելի դառնա։

ՕՇԻՆ— Այսինքն՝ ի՞նչ կրնամ ընել։

ՆՎԻՐԱԿԸ— Ինչ որ մինչև հիմա ըրեր ես։ Երկրին ցրիվ եկած ուժերը ճկե՛լ հրամանիդ տակ. զինվորական բոլոր կարելիությունները, ինչպես և հարստությունները ամփոփե՛լ քու ձեռքերուդ մեջ, ըլլա՛լ միակ և հզոր տերը այս աշխարհին, քու ուզածդ աս չէ՞, աղե՛կ, արևմուտքի ցանկացածն ալ ատիկա է, այսինքն՝ ուժեղ ու խելահաս թագավոր մը այս վտանգավոր սահմանային դիրքին վրա։ Եվ ինչպես ես կըմբռնեմ, եթե ատոր համար հարկ է, որ իրական իշխանությունը ունենալեդ ետքը, նաև իրավական իշխանությունը ունենաս քու վրադ, աղե՛կ, ունեցի՛ր։ Դարձնենք քեզի թագավոր։ Ես ինքս կաշխատիմ ձեռքես եկած բոլոր միջոցներով դյուրացնելու և արագացնելու քու թագավորությունդ, և իրավունք ունիմ պնդելու... ենթադրելու, որ Հռոմի սրբազան աթոռը ամեն կերպ աջակից կըլլա քեզի։

ՕՇԻՆ— Իսկ Լևո՞ն թագավորը։

ՆՎԻՐԱԿԸ— (Ծամծմելով) Հա՛, այդ պատանին. իրա՛վ է. ես այդ հարցին հատուկ պատասխան մը չունիմ, այս կամ այն կերպով պետք է չեզոքացվի։ Դուն, որ հին զինվորական մըն ես, կյանքդ կռիվներու մեջ ես անցուցեր և քու հաջողությանդ ճամփան բանալու բոլոր զենքերը փորձած ես՝ կկարծեմ՝ կգտնես միջոց մը այս արգելքն ալ ճամփեդ հեռացնելու։ Ես հոգևորական մարդ եմ, աղոթքի ու խոհանքի նվիրված, ես հարցին կրնամ մոտենալ միայն սկզբունքի տեսակետեն, քրիստոնե-



ական աշխարհի օգուտին ու բարձրացմանը տեսակետեն։ Մենք հիմա կխոսինք այս երկիրը ամուր պատվար մը դարձնելու հնարավորության մասին, որուն ինչքան որ գան ու զարնվին մահմեդական ալիքները՝ միշտ ալ խորտակվին ու փշրվին։

ՕՇԻՆ— Ատոր համար, մոնսենյո՛ր, անհրաժեշտ է երկու բան։

ՆՎԻՐԱԿԸ— Խոսե՛, Օշի՛ն Պայլ։

ՕՇԻՆ— (Քիչ մը մտածելեն ետք) Մենք շատ կհարգենք Հռոմի սրբազան պապը, մենք շատ կհարգենք լատին եկեղեցին, ինչպես և ձեր արևմտյան կենցաղն ու ապրուստը։ Տեսե՛ք, ինչքա՜ն վանքեր ու բերդեր ունիք հոս մեր հողերուն վրա։ Ա՛յ, այս վանքն ալ, ուր քու հյուրդ ըլլալու պատիվն ունիմ, մեր Լևոն մեծագործ թագավորի նվերն է տաճարական ասպետներուն. և դեռ ինչքա՜ն-ինչքա՜ն ուրիշներ։ Այս բոլորի փոխարեն մենք ալ կսպասենք ձեզմե, որ դուք ալ հարգեք մեր հայությունը, մեր պետությունը, մեր եկեղեցին, մեր կյանքն ու բարքը։

ՆՎԻՐԱԿԸ— Այդ բոլորը մենք հարգած ենք միշտ։

ՕՇԻՆ— Քանի որ եկած ես այս աշխարհը սրբազան պապին ու մեր թագավորության միջև բարեկամական կապը դառնալու՝ գրե՛, համոզե՛, ներշնչե՛, որ մեր ազգային զգացումներուն դեմ բաներ չմտածեն, որ մեր հայ շունչին և հայ հակումներուն ձեռք չի դպցնեն։ Եթե ձեռք դպցընելը շարունակեք, այո՛, կքանդեք մեր աշխարհը, կրնաք ավերել ու փչացնել մեզի, բայց ինքներդ ոչինչ չեք շահիր, ոչինչ ամրացնել չեք կրնար և քրիստոնեության ալ օգուտ մը չեք տար։ Այս երկրի բացառիկ տարբերությունը և բացառիկ ուժը հայ տարրին մեջն է, հայ ոգիին, որ ամեն կողմ իր գոյության ու ստեղծագործության համար ամուր կայան մը հաստատել կփորձե. ա՛ն է, որ մինչև հիմա դիմացեր է հոս ու կդիմադրե. օգնեցե՛ք իրեն և օգտվեցե՛ք իրմեն, բայց մի՛ ջանաք քայքայել մեզի և աղճատել մեր հոգին։ Ասիկա առաջին։

ՆՎԻՐԱԿԸ— Եվ երկրո՞րդը։

ՕՇԻՆ— (Ժպտուն) Երկրորդը կբխի առաջինեն։ Եթե կուզես, որ ուժեղ պատնեշ մը դառնա այս պետությունը, ամո՛ւր պատվար մը մահմեդականության դեմ, մի՛ հաներ երբեք այս երկրի իշխաններն իրենց թագավորին դեմ, եթե նույնիսկ այդ իշխանին անունը Օշին Պայլ ըլլա։

ՆՎԻՐԱԿԸ— Զարմանալի է արևելքը. նույնիսկ քեզի նման մարդը նախապաշարումները թոթվել չուզեր իր վրայեն։ Ես քեզի մատնացույց ըրի ամենեն շիտակ ու ամենեն կարճ ճամփան գործի հաջողության համար։ Բայց քանի որ դուն այդ ճամփեն քալել չես ուզեր, ի՞նչ կրնամ ընել. շատ կցավիմ, բայց ստիպված ենք քալելու ավելի երկար ճամփաներե։ Է՜, կքալենք ավելի երկար ճամփաներե...

## 9

Խորքի ձախեն կմտնե պաշտոնյա մը և գալով մինչև Նվիրակը կկենա լուռ, բերև խոնարհելով մը երկը:

*ՆՎԻՐԱԿԸ— Սեղանը պատրաստ է, պա՛յլ իշխան։ Խնդրեմ, պատիվ քնես ինձի սեղանիս վրա պատառ մը հաց կտրելու։ Ու կխոսինք նորեն Հրամմե՛, իշխան։*

Օշին կելլե ոտքի և Նվիրակի ցույց տված ուղղությամբ կանցնի խորքը, ուր դեմը կփութան երկու ծառա, մեկը ոսկե լական ու ածիկ բռնած, մյուսը՝ մեծ սրբիչ մը: Իշխանը կլվա ձեռքերը:

*ՆՎԻՐԱԿԸ— (Որ ետ մնացած է, ծուռ դիրքով մը և աչքին պոչովը կդիտե իշխանին կռնակը) Ես քեզի ցույց կուտամ ինձի խրատ կարդալը։ Չես քալեր, հա՞, իմ ուզած ճամփես. աղե՛կ. կընտրենք երկարը, բայց երկար ճամփան կանցնի քու այդ լայն ու տափակ կռնակիդ վրայեն. տխմա՛ր անասուն։*

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ՊԱԼԱՏԱԿԱՆ ՄԱՏՈՒՌԻՆ ԲԱԿԸ

Բակը պատած է ճառակուռի ու մաշված խոշոր սալերով, որոնց ճեղքերուն մեջեն խոտեր են բուսած; Աջ կողմը հսկա ճացիի մը հաստ բունը կբարձրանա, որուն ճյուղերը կկախվին տեսարանին վրա: Ծառին տակը քարե նստարան մը ու սեղան քարե։ Աշուն է, և ծառին գույնզգույն տերևները թափած են գետին, սեղանին ու նստարանին վրա և մեջեմեջ ալ ճառ-ճառ ճյուղերեն կիջնան:

Տեսարանին ձախ եզերքը բարակ սյուներու շարք մըն է՝ վրան ծածկված, սյունաշարը կտանի տեսարանին խորքը պալատական մատուռը, որուն փոքրիկ ճայկական գմբեթը հստակ կնկատվի ծառերու և ճյուղերու բերև ցանցին ետևվեն:

Ձախ կողմը փոքր ու ցած դուռ մը սյունաշարին տակը, որ կտանի պալատին գլխավոր բակը, իսկ աջ կողմեն կերթցվի պալատական կողմնակի դարպասներեն մեկը:

## 1

Աջեն կուգան Լևոն թագավորը և իշխան Հալկամ, երկուքն ալ զինվորական հագուստով, նստելու կդառնան: Լևոն տասնյոթը տարեկան պատանի մըն է չկա-մակերպված մորուքով, նուրբ ու գեղեցիկ դիմագծերով, միջահասակ, վառվռուն, որոնող ու խելացի աչքեր ունի:



*ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ— (Բաժնվելու վրա) Ուրեմն առտուն շամբո՞ւտը։*

*ՀԱԼԿԱՄ— Լուսաբացին շքախումբը պատրաստ կըլլա։ Կվերադառնանք պալատ արևմուտքին հետ:*

*ԼԵՎՈՆ— (Մտածկոտ) Իսկ եթե գիշերեի՞նք նորեն գյուղը։*

*ՀԱԼԿԱՄ— Շատ լավ գիտե իմ ազնիվ թագավորս, որ ես անձամբ պատրաստ եմ և մեծ սիրով։ Բայց Հայր-իշխանի հրամանը գիտես՝ արևուն մուտքին հետ պետք է դառնանք պալատ։*

*ԼԵՎՈՆ— (Ձանձրույթով) Պալա՜տ, պալա՜տ։*

*ՀԱԼԿԱՄ— Ուրիշ անգամ մը կջանամ համարձակել և թույլտվություն կստանամ։*

*ԼԵՎՈՆ— (Աշխույժ) Համարձակէ՛ր երկուշաբթի օրվան համար։*

*ՀԱԼԿԱՄ— Անկարելի է. երկուշաբթի և ուրբաթ խնամակալության ժողովներուն օրն է. պետք է ներկա գտնվիս։*

*ԼԵՎՈՆ— (Հուսախաբ) Ա՜խ, ճիշտ ատոր համար։*

*ՀԱԼԿԱՄ— Կհասկնամ, սիրելի՛ս, որ այդ ամենը խիստ ձանձրալի պիտի ըլլա քու թարմ տարիքիդ համար, բայց Հայր-իշխանը, որ այնքան հոգածու է քու ապագայիդ համար, ան ուրիշ կերպ կդատե և իհարկե անորն է իրավունքը։*

*ԼԵՎՈՆ— Բայց դուն կըսեիր՝ ուրիշ կերպ կմեծնան արևմուտքի իշխանազուններր։*

*ՀԱԼԿԱՄ— Այո՛, արևմուտքը տարբեր է. հոն ավելի կարևորություն կուտան սրտի ուրախության, կյանքի վայելքին ու զվարճության. երիտասարդ տարիները հոն երգի ու պարի տարիներ են։*

*ԼԵՎՈՆ— Ես ալ շատ կսիրեմ ուրախ մարդիկը։ Ա՛յ, քեզի ալ կսիրեմ, որովհետև հոգիդ զվարթ է, լեզուդ՝ խոսող ու պատմող։*

*ՀԱԼԿԱՄ— Դուն սակայն տրտնջալու պատճառ մը չունիս կարծեմ. այնքա՜ն ընկերներ ունիս և ի՜նչ ազնվական հին ընտանիքներե։*

*ԼԵՎՈՆ —Տաղտկալի են բոլորն ալ, ա՜յ, այս լուռ պատերուն պես, այս ցուրտ դռներուն պես։*

*ՀԱԼԿԱՄ— Այդպես մի՛ խոսիր։ Հայր-իշխանը քեզի համար ամեն ինչ կհոգա։ Վերջապես ան իր սեփական աղջիկը տվավ քեզի ընկեր ու թագուհի։*

*ԼԵՎՈՆ— Ու ամենեն նդպված բերանը ճիշտ իր աղջիկն է, ամենեն ձանձրալին։*

*ՀԱԼԿԱՄ— Լռե՛, թագուհիի մասին կխոսիս, ավագ պարոնի աղջկան մասին. դուն պետք է երախտապարտ ըլլաս իր հանդեպ։*

*ԼԵՎՈՆ— Մեծ ձանձրույթ մըն ալ ատիկա է, շարունակ միևնույն բանը քու բերնեդ լսելը։ Իշխա՜ն Հալկամ, մի՛ նեղանար, որ երեսիդ*

ընեմ բաց. քու մեջդ միակ պակասությունը ատիկա է. առտուընե մինչև իրիկուն Հայր-իշխանը կգովես և իր մեծ երախտիքը։

ՀԱԼԿԱՄ— Բայց չէ՞ որ ես ալ քեզի պես երախտապարտ մըն եմ անոր. անիկա իմ ալ բարերարն է ու պաշտպանս, ես պարտավոր եմ միշտ իր գովքը ընելու, ինչպես և դուն։

ԼԵՎՈՆ— (Խոհուն) Ատո՞ր համար։

ՀԱԼԿԱՄ— Նույնիսկ եթե ենթադրենք վայրկյան մը, որ Հայր-իշխանը շատ կծծի, շատ մռայլ ու շատ բռնակալ մեկը եղած ըլլար, դիցուք ամեն ուրախություն, ամեն ազատություն խանգարող և ամեն ինչ անհամցնող, դիցո՛ւք, բայց և այնպես անիկա տված է ինծի մեծ ու անփոխարինելի բախտավորություն մը, որ ամեն դառնություն, ամեն դժգոհություն մոռցնել կուտա։

ԼԵՎՈՆ— Ատ ի՞նչ անփոխարինելի բան է, որ Հայր-իշխանը տվեր է քեզի։

ՀԱԼԿԱՄ— Միշտ իմ թագավորիս հետ ըլլալու բախտավորությունը, իմ թագավորիս առույգ ու թարմ հոգիին կապված ըլլալու բախտավորությունը, այս ձանձրալի մթնոլորտին մեջ իմ թագավորիս քանի մը կաթիլ ուրախություն, քանի մը զվարճություն ու շարժում պատճառելու երջանկությունը։

ԼԵՎՈՆ— Շնորհակալ եմ, Հալկա՛մ իշխան։

ՀԱԼԿԱՄ— Եվ եթե պատահի, որ թերի գտնվիմ իմ երախտագիտությանս մեջ, եթե Հայր-իշխանը փոքրիկ կասկած մը ունենա, թե իմ սիրտս ավելի Լևոն թագավորի հետն է, քան պայլ իշխանի՝ իսկույն դուրս կնետե ինծի, ինչպես միշտ դուրս է նետեր այն ամեն անձերը, որոնք սիրեր են քեզի, ուզեր են ծառայեն քեզի, ուզեր են զվարճություն մը ավելի պատճառեն քեզի։

ԼԵՎՈՆ— Զարմանալի է։ Դուն դեռ ինծի այս լեզվով չէիր խոսած։

ՀԱԼԿԱՄ— Քու ըրած մեղադրանքը շատ ծանր եկավ սրտիս, ներե՛, եթե ըսի բաներ, որ պետք չէ ըսեի։ Մոռցի՛ր։

ԼԵՎՈՆ— Ո՛չ, ընդհակառակը. շնորհակալ եմ քեզի. հիմա կարծես քիչ մը ավելի հստակ կտեսնեմ շուրջս։ (Դուրս ձախի դռնեն)։

## 2

Մատուռի կողմեն, սյունաշարին տակեն առաջ կուգա Պալոնց Ներսես վարդապետը։ Իշխան Հալկամ կեցած է կռնակը անոր և աչքերովը կհետևի հեռացող թագավորին։



ՊԱԼՈՆՑ— (Հանկարծ) Այո՛, Հալկա՛մ իշխան, մեծցավ, մեծցավ մեր թագավորը։

ՀԱԼԿԱՄ— (Կցնցվի, կդառնա ետ ու տեսակ մը հարցական ու դժգոհ կնայի անոր)։

ՊԱԼՈՆՑ— Շուտով կդառնա բոլորովին չափահաս, և երբ ողորմությամբն Աստծու դառնա թագավորության իրական տերը, այն ժամանակ իմ սիրելի Հալկամ իշխանն ալ կդառնա պալատի ու վարչության իսկական տերը։

ՀԱԼԿԱՄ— Ի՞նչ արտառոց բաներ կխոսիս, վարդապե՛տ։

ՊԱԼՈՆՑ— Ինչո՞ւ արտառոց։ Միթե հիմա հոս կեցած թագավորին ետևեն նայելու ատենդ ատիկա չէ՞ր, որ կանցներ մտքեդ։

ՀԱԼԿԱՄ— Անմիտ ու տափակ ենթադրություն։

ՊԱԼՈՆՑ— Ինչո՞ւ, ամենեն բնական ենթադրությունը. բան մը, որ բնական կերպով կատարվելու է շատ չանցած, բան մը, որ բարեկամներուդ շրջանակին մեջ համաձայնության արժանացած է արդեն։ Քու բախտիդ տակառը այդ ուղղությամբ կգլորի, իշխա՛ն։

ՀԱԼԿԱՄ— Այդ ի՞նչ բարեկամներու մասին կբարբաջես, վարդապե՛տ, լավ չեմ հասկնար։

ՊԱԼՈՆՑ— Անոնք, որ անցած գիշեր հավաքված էին կոմսուհի Ռիթա Ամորիի ապարանքին մեջ։

ՀԱԼԿԱՄ— (Հանկարծ կշտկվի և շեշտ ու լուռ կնայի անոր)։

ՊԱԼՈՆՑ— (Ժպտուն) Զարմացա՞ր։ Ես նույնպես շատ զարմացա, երբ ինծի տեղեկացուցին, որ Հալկամ իշխանն ալ գաղափարակից մըն է մեզի և անփոխարինելի գործակից մը։ Կլայննա, իշխան, կամաց-կամաց կլայննա մեր շրջանակը։ Խորտակվի պիտի այս փտտած շենքը, և գալու է մեր դարը. ավելին կոթը անցնի պիտի մեր ձեռքը, որ մաքրենք ու սրբենք այս Ալգերյան ախոռը։ Եվ հեռու չէ այդ օրը։ Ես հիմա կներկայանամ քեզի, իշխան Հալկա՛մ, շատ բարձրադիր մեկու մը հրահանգովը, որ անշուշտ կըմբռնես. և ինքզինքս կդնեմ հրամաններուդ տակ։ Ինչով որ կարող եմ՝ պատրաստ եմ օգնելու քեզի ու ծառայելու սուրբ գործին։ Որո՞նք են քու հրամաններդ։

ՀԱԼԿԱՄ— Առաջին հրամանս այն է, վարդապե՛տ, որ մյուս անգամ երբեք չմոտենաս ինծի ու հետս չխոսիս, երբ առանձին եմ։

ՊԱԼՈՆՑ— Կհասկնամ. զգուշություն է այն սանդուղին անունը, որով վեր կմագլցի հաջողությունը։ Իսկ երկրո՞րդ հրամանդ։

ՀԱԼԿԱՄ— Առաջինին գործադրությունը։ Ես աջ, դուն ձախ։ (Ու կհեռանա իր եկած կողմովը)։

ՊԱԼՈՆՑ— (Քիչ մը ատեն հեգնոտ անոր ետևեն դիտելեն ետքը)

Այո՛, դուն ալ իմ աչքիս լույսը չես, բայց ունիս հանդգնություն ու ապագա. ուրեմն պետք է լռել ու խոնարհիլ. ով խոնարհիլ չի գիտեր, խոնարհեցնել չի կրնար։ Առայժմ ուղեկից ենք իրարու, սիրելի՛ իշխանս։

Կդիմե դեպի ձախի մուտքը, իր դեմը կուգան Օշին իշխանն ու իր խոսակիցները: Քիչ մը ետ կքաշվի, ճամփա կուտա անոնց և ինքը կհեռանա:

### 3

Կմտնեն խոսելով՝ Օշին իշխանը, Աբել իշխանը՝ տերը Պապեռոնի, Բագուր մեծ իշխանը և Հեթում իշխանը, վերջինը քիչիկ մը ետ քաշված:

ՕՇԻՆ— (Համոզումով) Պետք է մասնակցին բոլորը, բոլորը անխտիր. ամեն մեկը իր ունեցածին, իր կալվածներուն և իր մարդիկներուն չափովը։ Այդ գունդերը պետք է կազմվին։ Վերջին տարիներու փորձը բավականին ցույց տվավ, որ իշխաններու պարտաճանաչության վրա վստահիլ չըլլար նեղ վայրկյանին. և անոնք ձիավոր են. մեզի պետք են հետևակ գնդեր, մշտական թագավորական գնդեր, անմիջապես մեր հրամանին տակ ու միշտ պատրաստ վտանգված սահմաններուն վրա. տեսանք, որ ատիկա է մեր փրկությունը, ատ է մեր կենդանի պատնեշը մեր լեռներուն վրա։ Այդ գունդերուն ներկայությունը կըլլա նաև լուռ սպառնալիք մը մեր ներքին հակառակորդներուն և սուր խթան մը մեր անտարբեր իշխաններուն համար, որ քիչ մը ավելի ականջ կախեն արքունի կոչերուն։ Այդ հետևակ գնդերը պետք է կազմվին։ Ես եկած եմ այն խորին համոզումին, որ հոգ է մեր փրկությունը։

ԲԱԳՈՒՐ— Իմ կարծիքս ըսի քեզի, երբ քու փորձերդ քու ու թագավորի կալվածներուն մեջ և ձեր սեփական միջոցներով, բայց հանգիստ ձգե՛ վանքերն ու վասալները։

ՕՇԻՆ— Մեր հողերուն վրա մեր ընելիքը մենք գիտենք. արդեն մասամբ եղած ալ է. բայց հերիք չէ ատիկա. շատ ավելի մեծ գումարներ են անհրաժեշտ և շատ ավելի մեծ թիվով մարդ։ Սա գործ մըն է անխտիր ամենուն պաշտպանության համար, հիմքը մեր ամենուս դիմադրական կարողության։ Մամլուքները Եգիպտոսեն նորեն գան պիտի, թուրքն ու թուրքմենը և ամեն շուն ու գայլ. բոլորին աչքերը մեր հողերուն վրա է, որ գան գողնան ու կողոպտեն։ Անոնք, որ գան, ավրեն, առնեն ու տանին, ամեն բան կուտաք, բայց չեք ուզեր բան մը տալ ձեր թագավորին, որ ուժ կազմե այդ ավազակներուն առջևը պատնեշ քաշելու համար։

ԱԲԷԼ ԻՇԽԱՆ— Ինչ կվերաբերի վանքերուն, քու ուզածդ բացար-



ձակ անկարելիություն է, չլսված նորություն մը, պետք է նկատվի նոր տեսակի կողոպուտ մը քու կողմեդ։ Թագավորներն ու իշխանները վանքերուն տվեր են միայն, վանքերեն առնել վայել չէ։

ՕՇԻՆ— Բայց մեր եկեղեցիներուն ու մեր դավանանքի պաշտպանության համար է, որ առնել կուզեմ, ա՛յ մարդ։ Այս պետության մնալուն և հայ մնալուն համար է, որ կազմել կուզեմ այդ պետական գունդերը։ Ինչո՞ւ համար առինք մենք իշխանությունը մեր ձեռքը, ինչո՞ւ բերիք ինծի հոս, ինչո՞ւ կանչեց ինծի հազարապետությունը այս պաշտոնին, եթե օգնելու չէիք ինծի, եթե նեցուկ դառնալու չէիք, որ իրագործեմ ինչ որ ժամանակը և պայմանները կպահանջեն մեզմե հարկադրաբար։

ԲԱԳՈՒՐ— (Խիստ) Այդ հարկադրությունը տեսնողը սակայն միայն դուն ես, մյուս իշխանները պետք չեն զգար այդ քու սարօրինակ ու վտանգավոր նորություններուդ։

ՕՇԻՆ— Վտանգավո՞ր, ինչո՞վ։ Թո՛ղ ուրիշները. և ըսե՛ ճակտիս. ինծի հե՞տ ես դուն։

ԲԱԳՈՒՐ— Դուն գիտես, որ ամեն բանի մեջ մինչև հիմա եղեր եմ քեզի հետ ու միշտ ալ պաշտպաներ եմ քեզի, բայց այս տեսակ ապօրեն և վտանգավոր, այո՛, վտանգավոր առաջարկի մը մեջ դեմ եմ քեզի։ Ես իմ վասալի հնավանդ պարտավորություններես զատ՝ ոչ մեկ զինվոր և ոչ մեկ տրախմ չեմ տար թագավորին։

ՕՇԻՆ— (Հեգնոտ) Ուրիշ խոսքով՝ ինծի հետ ես եղեր միշտ, երբ զոհաբերողը և բեռն ու չարչարանքը կրողը եղեր եմ ես. իսկ այլևս ինծի հետ չես, երբ այս անգամ ալ բան մը տալու ու բեռ մը կրելու կարգը քուկինդ է։ Ինչո՞ւ անպատճառ զոհաբերությունը ինծմե կպահանջվի միայն։

ԲԱԳՈՒՐ— Ո՞վ է քեզմե բան պահանջողը. և ես մինչև հիմա ի՞նչ եմ ստացեր քեզմե։ Եթե հոս բան մը ստացող կա՝ ան ալ դուն ես եղեր միշտ։ Մեր ձեռքովը դարձար խնամակալ. մեր համաձայնությամբը դարձար թագավորին հայր ու աներ, թագուհին քեզի կին առիր ու կնոջդ հետ նոր կալվածներ՝ միշտ մեր վրա հենված։ Անունդ պայլ է, բայց եղար փսկապես թագավոր մը. հիմա ալ բնականաբար մեր գլխուն դառնալ կուզես կատարյալ թագավոր մը, նորեն մեր ձեռքովը կազմել կուզես գունդեր ու բանակ, որ արդեն ուղղակի հրամայես մեզի. հիմարի տե՞ղ ես դրեր դուն մեզի։

ՕՇԻՆ— Այսպե՞ս ուրեմն։ Շատ շնորհակալ եմ, Բագուրա՛ն։

ԱԲԷԼ— Բագո՛ւր իշխան, կարծեմ քիչ մը չափն անցար։

ԲԱԳՈՒՐ— Օշինը գիտե, որ ես իրեն ցավ պատճառելու համար չէ.

որ կըսեմ այս բոլորը. բայց պետք է խոսիմ, որ ան գիտնա, թե ինչպես կդատեն իր բոլոր բարեկամները և ատոր համեմատ առնե իր քայլերը։
ՕՇԻՆ— Այո՛, բարեկամները...
ԲԱԳՈՒՐ— Եվ եթե մեր հակառակորդները ուրախացնել չենք ուզեր՝ պետք է մեկդի դնես այդ տեսակի մեր սովորություններուն ու շահերուն հակառակ եղող անբնական ծրագիրները։ Կապերը, բարեկամություն-ները, կուսակցությունները անոր համար են, որ մարդիկ իրարմով շա-հին ու բարձրանան, հոդ գեշ բան չկա ինքնին. բարձրացի՛ր. սակայն կա սահման մը, որ պետք չէ անցնիլ, ըսածս ատիկա է։ Ներե՛, եթե անա-խորժ թվեցավ խոսքս քեզի։ Եվ ներե՛, որ մեկնիմ։ Եվ անչափ ուրախ պիտի ըլլամ, ինչպես ըսի, եթե կարողանաս ներկա գտնվիլ աղջկանս նշանտուքին գալ կիրակի։
ՕՇԻՆ— (Տխուր) Շատ շնորհակալ եմ։
ԲԱԳՈՒՐ— (Կատակով) Ա՛յ Հեթում, գոնե դուն մինչև հիմա խելքդ գլուխդ մարդ էիր. խոսք հասկցուր խնամակալ ընկերոջդ։ (Ձախէն դուրս):

4

ԱԲԵԼ— (Հարթելու ջանքով) Սրտիդ չառնես, իշխա՛ն. գիտես, որ Բագուրը քիչ մը բռի մարդ է, բայց գեշ մարդ չէ ու քեզի ալ կսիրե։
ՕՇԻՆ— Այո՛, դուն ալ գեշ մարդ չես, դո՛ւն ալ ինծի կսիրես, դուն բռի ալ չես, բայց դուն ալ անոր պես կմտածես։
ԱԲԵԼ— (Կխնդա) Մոտավորապես։
ՕՇԻՆ— Ես ատիկա նոր չէ, որ կգիտակցիմ։ Բավական ժամանակ է, որ կզգամ, թե սկսավ ինծի համար կռվի նոր շրջան մը, ամենեն ծանր շրջանը և ամենեն վտանգավոր։
ԱԲԵԼ— Ի՞նչ կռիվ։
ՕՇԻՆ— Մինչև հիմա մեր կռիվը արտաքին թշնամիներու հետ էր. ամենեն դյուրինը։ Մինչև հիմա մեր կռիվը ներքին հակառակորդներու հետ էր. ավելի դժվար կռիվ և ավելի ճնշող, բայց վերջապես տանելի։ Հիմա ահա՛ կսկսի ամենեն ծանր ու ամենեն տաժանելի կռիվը. կռիվը քու սեփական կողմնակիցներուդ հետ, քու բարեկամներուդ հետ, քու ընկերներուդ։ Ամենեն մեծ կռիվը, ամենեն վճռական ճակատամարտը։ Եթե հոս տեղի տվի, եթե հոս կռվեն փախա՝ կորած են մինչև հիմա իմ կատարած բոլոր ջանքերս, կործանված ու փշրված է այս վեց-յոթը տա-րիներու ամեն աշխատանք, ամեն հաջողություն և իզո՜ւր, բոլորովին իզուր կատարված ամեն զոհաբերություն։
ԱԲԵԼ— Կչափազանցես, թագավորահա՛յր։ Ո՞չ կռիվ կա բարեկամ-



ներուդ հետ, ո՛չ փախուստ կամ պարտություն։ Եղածը ըմբռնումներու որոշ տարբերություն մըն է. քիչ մըն ալ դուն անհանգիստ հոգի ունիս, միշտ բան մը կհնարես։ Շատ սիրտ մի՛ հատցներ, ջուրը ճամփան կգըտ-նե. կընենք ինչ որ կրնանք, կթողնենք ինչ որ չենք կրնար. ո՛չ մեզմով կսկսի աշխարհքը, ո՛չ ալ մեզմով կվերջանա։ (Կատակով) Սիրելի՛ իշ-խանս, ետքեն եկողներուն ալ ընելու բան մը պետք է պահել։ Եվ ասով ալ կըսեմ քեզի մնաս բարով. ձիս բերած կըլլան հիմա, ուշացա։ (Դուրս ձախէն):

5

ՀԵԹՈՒՄ— Կտեսնե՞ս, Օշի՛ն, ըսի ես քեզի։ Հաշիվներդ ճիշտ են ու գաղափարդ՝ կարևոր. բայց ամեն ճիշտ ու աղվոր բան իրագործելի չէ. գոնե հիմա, մեզի համար։ Կհաջողվին միայն այն գաղափարները, որոնք մարդոց օրվան շահերուն ետևեն կերթան։
ՕՇԻՆ— Բայց մեծ են ու բարձրացնող այն գաղափարները, որ բոլոր մասնավոր շահերը ոտքի տակ կուտան ու ամենուն առջևեն կերթան։
ՀԵԹՈՒՄ— (Ուսերը թոթվելով) Բայց այդ ճամփով մարդ չի մնար այլևս մեր շուրջը, և մենք ալ հոս չենք մնար։
ՕՇԻՆ— Եվ ի՞նչ արժեք ունի մեր հոս մնալը. և ալ ինչո՞վ ենք մենք տարբեր մեր հակառակորդներեն. այս թագավորությունը կործանել ու մահվան դուռը հասցնել անոնք ալ կրնան, այս աշխարհը հանձնել պա-պին ու թուրքին անոնք ալ կրնան, և մեզմե շատ ավելի աղեկ։
ՀԵԹՈՒՄ— Լեզուդ հասկցող չկա, Օշի՛ն։
ՕՇԻՆ— (Ձեռքը ճակտին զարնելով) Ա՜խ, ինչպե՜ս չեն տեսներ, ինչ-պե՜ս չեն տեսներ գալիքը։ Առանց նոր, հանդուգն ու բուռն ճիգերու այս երկիրը չի մնար, չի դիմանար. կիյնա այսքան թշնամիներու ոտքին տակ։
ՀԵԹՈՒՄ— Բուռն ճիգերը մեկ հոգիով չեն ըլլար։ Մեկ զինվորով բանակ չըլլար։
ՕՇԻՆ— Այն ատեն իզո՜ւր է... իզո՛ւր է... իզո՜ւր է այս ամենը, Հե-թո՛ւմ։

6

Ձախի մուտքեն դանդաղ ներս կմանե Ալիս, տասնվեց տարեկան, գունատ, կլոր դեմքով, երկար սև մազերով, երկար թարթիչներ ու սլացիկ հասակ։

ՕՇԻՆ— Ի՞նչ ունիս, աղջի՛կս, ի՞նչ կա։
ԱԼԻՍ— (Կժպտի հիվանդոտ ու կկենա):

ՕՇԻՆ— Ինչո՞ւ ես եկեր, ան ալ հոս՝ աս բակը։
ԱԼԻՍ— Ըսին՝ հոս էիր։
ՕՇԻՆ— Ինչո՞ւ ես մինակ։
ԱԼԻՍ— Եկա քեզի. եկա հետդ խոսելու։
ՀԵԹՈՒՄ— (Քաշվելով) Ես երթա՛մ։ Հարգանքս իմ թագուհիին։

## 7

ՕՇԻՆ— Ի՞նչ ունիս, աղջիկս, ի՞նչ է պատահեր։

ԱԼԻՍ— Ոչի՛նչ։ Կարոտեր եմ քեզի. եկեր եմ քեզի. կարելի չէ՞, ա՛տ ալ կարելի չէ։

ՕՇԻՆ— Ինչո՞ւ պիտի կարելի չըլլա։ Բայց ինչպե՞ս է, որ մինակ ես, դո՛ւն, թագուհի՛ն, ո՞ւր են կիներդ։

ԱԼԻՍ— Փախեր եմ, հայրի՛կ։

ՕՇԻՆ— Փախե՞ր ես. ինչո՞ւ։

ԱԼԻՍ— Որ գամ քեզի, որ մինակ ըլլամ քեզի հետ, որ ըլլանք միայն ես ու դուն։ Մի՞տքդ է, հայրի՛կ, մեր Կոռիկոսը. ինչպես լա՛վ էր, միշտ ինծի հետ էիր։ Ի՜նչ աղվոր էր մեր Կոռիկոսը. ինչպե՜ս լավ էին մարդիկ. ինչպե՜ս ուրախ էր ամեն ինչ, ուրախ ու լուսավոր, երկինքեն միշտ պայծառ նայող իր արևին նման։

ՕՇԻՆ— (Երազկոտ) Այո՛, աղջի՛կս, Կոռիկոս արևոտ աշխարհ է։

ԱԼԻՍ— Արևոտ և՛ երկինքը, և՛ ծովը. այնպե՜ս կարոտեր եմ ծովը, ծովուն տեսքը, ծովուն շունչը, շարժումը։ Ի՜նչ աղվոր էին այն արևմուտք իրիկունները, երբ կերթայինք լողալու։ Ռիթայի հետ կերթայինք լողալու. ի՜նչ հրաշալի լողալ գիտեր Ռիթան։ Մի՞տքդ է, հայրի՛կ, Ռիթան։ մեր դրացի իշխան Սարգիսին աղջիկը։ Կհիշե՞ս, հայրի՛կ, Ռիթան։

ՕՇԻՆ— Ինչպե՞ս կրնամ չհիշել, աղջի՛կս։

ԱԼԻՍ— Կհիշե՞ս, որ կուգայինք քու սենյակդ ու դիտմամբ կխանգարեինք աշխատանքդ։

ՕՇԻՆ— Աշխատա՜նքս, իմ սենյա՜կս, Ռիթա՜ն, արև՜ն ու ծո՜վը։ Այո՛, աղջի՛կս, այո՛, ատոնք անցան։

ԱԼԻՍ— Ինչո՞ւ անցան։ Ինչո՞ւ կանցնին բոլոր աղվոր բաները։

ՕՇԻՆ— Կյանքի մեջ կանցնի ամեն բան։

ԱԼԻՍ— Չեմ ուզեր, որ անցնի։ Ո՛չ։

ՕՇԻՆ— Ի՞նչ ունիս, աղջիկս։ Նոր ի՞նչ է պատահեր։

ԱԼԻՍ— (Հազիվ լացը զսպելով) Ո՛չ, ես Կոռիկոսը կուզեմ, ես մեր գյուղակը կուզեմ, ես մեր արևն ու ծովը կուզեմ, ես մեր իրիկունները կուզեմ, ես մեր Ռիթան կուզեմ... (Բուռն լացով) Ես քեզի կուզեմ, հայրի՛կ, ես քեզի կուզեմ։



ՕՇԻՆ— (Կգրկե իր լացող աղջիկը, մեկ-երկու անգամ կհամբուրե գլուխը շոյելով): Դուն դժբախտ ես, Ալի՛ս։

ԱԼԻՍ— (Հանկարծ գլուխը բարձրացնելով) Ինչո՞ւ թողինք Կոռիկոսը, հայրի՛կ, ինչո՞ւ եկանք հոս. ի՞նչ կա հոս. ի՞նչ ունինք հոս։

ՕՇԻՆ— Դուն... դուն թագուհի ես, աղջի՛կս։

ԱԼԻՍ— Ինչո՞ւ դարձուցիր ինծի թագուհի. ինչի՞ս է պետք թագուհին։ Ես չեմ ուզեր թագուհի։ Տա՛ր ինծի ետ նորեն Կոռիկոս։

ՕՇԻՆ— Նախ պատմե՛ ինծի, ինչ որ պատահեր է։ Նոր ի՞նչ եղավ։

ԱԼԻՍ— Նոր ոչինչ չկա. միշտ հինը, միշտ հինը։ Ես չեմ ուզեր ամուսին, ես չեմ ուզեր թագուհի. չեմ ուզեր. ալ չեմ կրնար, չեմ կրնար։

ՕՇԻՆ— Նորե՞ն թագավորը կոպիտ էր հետդ։

ԱԼԻՍ— Տա՛ր ինծի դուրս այս պալատեն։

ՕՇԻՆ— Մանր խո՞սք բրավ։ Ըսե՛։

ԱԼԻՍ— Ինչո՞ւ բերիր դուն ինծի այս պալատը, դուն, որ ինծի այնքան կսիրեիր։

ՕՇԻՆ— Միթե հիմա չե՞մ սիրեր։ Ես միշտ սիրեր եմ քեզի, հոգիիս պես։

ԱԼԻՍ— Հապա ինչո՞ւ ինծի մարդու տվիր։

ՕՇԻՆ— Աշխարքի օրենքը, աղջի՛կս։ Ես քու բախտավորությունդ ցանկացա. ի՞նչ ըսեմ՝ այսպես դարձավ. բախտ է, չըռնեցիք իրար։ Կամ գուցե շտապեցի, կամ սխալեցա, գուցե պետք չէ այսպես ըներ։ Դառն ճակատագիր է, երբ լավը ըսել կուզես, երբ ամենեն լավը ընել կուզես և միայն ցավ կքաղես։ Ներե՛, աղջիկս. ես հանցավոր չեմ. կամ գուցե հանցավոր եմ. չգիտեմ, այլևս ինքս ալ չգիտեմ։

ԱԼԻՍ— Դառնա՛նք Կոռիկոս։

ՕՇԻՆ— Աղե՛կ, աղե՛կ, կհարմարցնեմ, շուտով կղրկեմ քեզի Կոռիկոս, ձմեռվան համար, առողջությանդ համար։

ԱԼԻՍ— Բայց պիտի գաս դուն ալ։

ՕՇԻՆ— Գիտես՝ որ ես չեմ կրնար։

ԱԼԻՍ— Կրնա՛ս, կրնա՛ս, պետք է, որ գաս. ի՞նչ ես կորսուեր հոս, ի՞նչ կփնտրես։

ՕՇԻՆ (Երազկոտ) Անգին զավա՛կս, ես ալ կուզեի մեր հին, այն հին, աղվոր օրերը...

ԱԼԻՍ— Ուրեմն...

ՕՇԻՆ— (Սթափումով) Ալի՛ս, հիմա գնա քու կանանոցդ. ալ չի լաս,

ալ մի՛ տխրիր. ես կհոգամ. ասկե ետքը շուտ-շուտ կուգամ քեզի, կխոսինք, կկարգադրենք։ Բայց հիմա գնա՛, պալատական դուռներուն մեջտեղը քու տեղդ չէ. և անհարմար է քու լացդ այսպես բակին մեջտեղը։ Մի՛ լար, դժբա՛խտ աղջիկս. քալե՛։ (Կես մի գրկած կհանե ձախի դռնեն դուրս):

## 8

Աջեն իսկույն կմտնե իշխան Հալկամ, որ շիտակ կերթա դեպի նախորդներուն մեկնած դուռը, քիչ մը կդիտե ու կդառնա դեպի պաշտոնյան, որ Հալկամին ետևեն եկած և սպասողական կեցած է մեջտեղը:

ՀԱԼԿԱՄ— Վերջապես հեռացան։ Կարծես խոսք մեկ էին ըրեր բոլորը հոս ժողվվելու. օրերով մարդ ոտք չի դներ այս բակը, հակառակի պես այսօր... Ուրեմն ինծի նայե՛, դուն քու աչքովդ տեսա՞ր, որ եկողը ներս մտավ դարպասեն։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Այո՛, իշխա՛ն. բարձրահասակ ու շատ լավ հագնված կին մը։

ՀԱԼԿԱՄ— Եվ ո՞ւր գնաց։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Գնաց շիտակ, մտավ մատուռը։

ՀԱԼԿԱՄ— Իսկ պահա՞կը։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Տեղեն չերևաց։

ՀԱԼԿԱՄ— Ինչպե՞ս կարելի է։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Երևի կարելի է, երբ Հալկամ իշխանը այդպես կըցանկա։

ՀԱԼԿԱՄ— Հիմա կերթաս շիտակ թագավորին հարկաբաժինը, կերպով մը կմոտենաս թագավորին ու կհայտնես, որ իրեն կսպասեմ. ուրիշ ոչ մեկ խոսք. ան գիտե։ Միայն ոչ ոք պետք չէ նկատե քու խոսիլդ։ Իսկ երբ թագավորը այս բակը անցնի՝ դուն կմնաս մեծ բակը ու կհսկես։ Հո՛ս, մանավանդ օրվան այս ժամերուն անցնող չըլլար. բայց բան է, եթե պատահի, որ հանկարծ անսպասելի կերպով նորեն մեկը այս բակը մտնել ուզե՝ պիտի խանգարես։ Ինչպեսը կձգեմ քեզի. դուն փորձված մարդ ես ու հնարամիտ. վստահությունս չխաբես։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Բայց, իշխա՛ն Հալկամ, շատ վտանգավոր խաղ է ասիկա. գիտես, որ ավագ-պարոնը կատակել չսիրեր։

ՀԱԼԿԱՄ— Ավագ-պարոնները, իրավ է, կատակել չեն սիրեր, բայց երիտասարդ թագավորները կատակելը շատ կսիրեն։ Երիտասարդու-



թյունը, բարեկա՛մս, իր պահանջներն ունի։ Եվ երիտասարդ թագավորի մը ծառայել ցանկացողը քիչիկ մը ճարպիկություն պետք է որ ունենա իր հոգերուն մեջ։ Եվ վարձատրել գիտցողն ալ երիտասարդ թագավորներն են, ոչ թե ավագ-պարոնները։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ատիկա շիտակ է։

ՀԱԼԿԱՄ— Որ շիտակ է՝ շտապե՛ ուրեմն։ Միայն զգո՛ւյշ, որ ուրիշներուն ուշադրությունը չգրավես։

## 9

Իշխան Հալկամ կանգնի սյունաշարին տակը ու կկենա աջ ձեռքը վեր բարձրացուցած: Քիչ հետո սյունաշարի վարի ծայրեն կերևա կնոջ կերպարանք մը, որ կհառաջանա:

ՀԱԼԿԱՄ— (Ծո՛ւն Լայլ դեմ երթալով ու հարգալից բարևելով) Ահա՛, կոմսուհի՛, կատարված է կամքդ։

ՌԻԹԱ— Եվ շնորհակալ եմ խորապես։

ՀԱԼԿԱՄ— Շնորհակալությունդ ավելորդ է. քողին տակեն վառվող քու այդ գոհ նայվածքդ կատարելապես հերիք է ինծի։

ՌԻԹԱ— Գիտեմ, որ անձնվեր ես գործին և շնորհակալության պետք չունիս։

ՀԱԼԿԱՄ— Բայց մի՞թե ավելի պարզ ու ավելի ապահով չէր ըլլար ուրիշ տեղ մը այս տեսակցությունը։

ՌԻԹԱ— Ո՛չ, ըսի։ Ես կուզեմ խոսիմ թագավորին հետ իր պալատին մեջ։

ՀԱԼԿԱՄ— Է՛, կնոջ ուզածը ո՞վ կհասկնա. և ե՞րբ է կին մը գործ բռներ համաձայն մարդկային առողջ դատողության։ Եվ ահա կեցած եմ քեզի հետ այս միջանցքներուն ու կողմնակի բակերուն մեջ։

ՌԻԹԱ— Եվ մտքիդ մեջեն կհայհոյես ինծի։

ՀԱԼԿԱՄ— Այդ մեկը երբե՛ք, կոմսուհի՛։ Լսե՛։ Հիմա իսկույն կուգա թագավորը, միայն կխնդրեմ՝ կարճ ըրեք. ամեն վայրկյան կրնան վրա հասնիլ։ Եվ երբ տեսակցությունը ավարտի՝ կվերադառնաս առանձին եկած ճամփովդ մատուռին առջևեն. դարպասեն երբ քիչ մը հեռանաս՝ նորեն քեզի կընկերանա քեզի բերող մարդը։ Իսկ ես հիմա, ներե՛, որ հեռանամ։ (Աջեն դուրս):

## 10

Ձախի դուռնեն կմտնե Լևոն և կուգա շիտակ դեպի Ռիթան, որ խոր գլուխ կուտա և կբարձրացնե դիմքեն քողը։

ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ— (Վայրկյան մը հիացումով անոր դիմքը դիտելեն ետքը) Հանուն մեզի իրարու կապող ազգականության, հանուն իմ ժառանգած արյունիս ինծմե խնդրեր էիր տեսակցություն մը։ Եվ Հալկամ իշխանը հասկցուց, որ հարցը քու ամուսնույդ դարձին կվերաբերի։

ՌԻԹԱ— (Հանդիսավոր) Հարցը ամենեն առաջ իմ թագավորիս դարձին կվերաբերի։

ԼԵՎՈՆ— Թագավորի՞դ։

ՌԻԹԱ— (Ջերմ թափով) Լևո՛ն թագավոր, մինչև ե՞րբ թողնես պիտի քու ժառանգությունդ ուրիշներուն ձեռքը. մինչև ե՞րբ քու թագդ ու իրավունքներդ խաղալիք պիտի ըլլա՛ն մեկ-երկու մարդու։ Արևմուտքի ու արևելքի թագավորներուն արյունը կվազե քու երակներուդ մեջ. և դո՛ւն ես տերը այս աշխարհին։ Կհասկնա՞ս՝ ինչ կխոսիմ, Լևո՛ն թագավոր, կհասկնա՞ս, թե ինչու համար հիմա եկեր եմ քեզի։ Թե՞ դեռ, իրավ որ, երեխա մըն ես տակավին և Օշին Պայլերը իրենց գդալով պիտի կերցնեն քեզի քու ապուրդ։

ԼԵՎՈՆ— Տիկին Ամորի՛, թագավորի մը կխոսիս։

ՌԻԹԱ— Որուն թագավոր մը ըլլալը տեսնել կուզեինք որևէ նշանով։

ԼԵՎՈՆ— Ի՞նչ նշան կուզես։

ՌԻԹԱ— Արդեն ըսի՛ր ինքդ։ Քու արյունակիցդ աքսորի մեջ է, ա՛ն, որ իր ամբողջ հոգիով նվիրված էր քեզի և ատոր համար ալ հալածված։ Եթե իրավ թագավոր մըն ես՝ ան ե՛տ կուգա իր աքսորեն։

ԼԵՎՈՆ— Աղե՛կ. ան ետ կուգա իր աքսորեն։ Կուտամ քեզի իմ թագավորական խոսքս։

ՌԻԹԱ— Արի ու այր մարդու մը պես կխոսիս. լսե՛ ուրեմն ու գիտցի՛ր. այս երկրի բոլոր մեծ ու կարևոր իշխանները, քու բոլոր այն վասալներդ, որոնք արևմտյան պետություններուն հետ կապ ու ազգակցություն ունին, բոլոր լատին հոգևոր կարգերը, պապական նվիրակը ինքը, այդ ամենքը իմ շրթունքներովս հիմա կխոսին քեզի։ Մենք ամենքս կեցած ենք քու կողմդ, կսպասենք քու հրամանիդ ու նշանիդ. միայն քեզի կճանչնանք մեր թագավորը և կտենչանք քու կամքդ ու քու իշխանությունդ։

ԼԵՎՈՆ— Զարմանալի է։ Եկեր ես ու կըսես՝ ինչ որ սիրտս միշտ կճմլե, ինչ որ միտքս միշտ կմանե։ Գեղեցիկ երազ մը կարծես ըլլաս։



ՌԻԹԱ— Ո՛չ, գեղեցիկ երազ մը չեմ, այլ տգեղ հեգնություն մը, ծաղր ու ամոթ, որ ես հոս եկած եմ գողի մը պես ծածուկ իմ թագավորս տեսնելու, իմ թագավորիս հետ խոսելու։ Ամո՞թ ու նախատինք, որ ես ու դուն կեցած ենք հոս, վախը մեր սրտին, որ հանկարծ ամեն վայրկյան կրնա ներս մտնել իմ ու քու ու ամենուս հզոր տերը, Օշին Պայլը, և չախել ու հանդիմանել քեզի հանցավոր երեխայի մը պես և վռնդել ինծի պատեն ներս ցատկած ստահակի մը պես։

ԼԵՎՈՆ— (Սարսափով) Ահա՞ իրավ և ինքը։

ՌԻԹԱ— (Իսկույն կիջեցնե քողը և ամբողջ հասակովը չոկված՝ կկենա անշարժ)։

## 11

ՕՇԻՆ— (Շատ դանդաղ առաջ կուգա և երկար ու լուռ դիտելեն ետքը երկուքը) Ուրեմն շիտակ կըսեին. իսկ ես վայրկյան մը հավտալ չուզեցի։ Ոչինչ, կշնորհավորեմ, շատ հարմար ու ծածուկ անկյուն մըն է հոս, եկեղեցիին փեշերուն տակը, փողոցեն եկող կնիկներու հետ ժամադիր ըլլալու համար։ Տեղի ընտրությունը հարմար, ժամանակի ընտրությունը հարմար, երբ ներսը քու սեփական կինդ, իմ սեփական աղջիկս պառկած է հիվանդ։ Այն կինը, որ դուն չարունակ լացուցիր և որուն արցունքներուն անարժան ես դուն։ (Դառնալով Ռիթային քիչ մը լուռ) Իսկ դո՛ւն, կի՛ն, որ այդպես զգույշ ծածկեր ես դեմքդ, արդյոք կարելի չէ՞ր, որ մենք ալ տեսնեինք քու հրապուրիչ երեսդ։ Այդ ճամփեն քալողը կարիք չունի իր կերպարանքը քողարկելու։ (Հանկարծ ու զայրույթով) Չե՞ս լսեր. քեզի կըսեմ, անառա՛կ կին, բա՛ց դեմքդ։

ՌԻԹԱ— (Հանգիստ ու ազնվական շարժումով մը կբարձրացնե ու ետ կնետե քողը, լուռ ու լուրջ)։

ՕՇԻՆ— (Ապշահար քայլ մը ետ կերթա խորին հուզումով) Ռիթա՛... Դքսուհի՛... դքսուհի՛ Ամորի։ (Ինքզինքը գտնելով ու ծանր) Ի՞նչ գործ ունի հոս դքսուհի Ամորին։

ԼԵՎՈՆ— Ես եմ կանչեր, հա՛յր-իշխան։

ՕՇԻՆ— Դո՞ւն։ Եվ ինչո՞ւ։

ԼԵՎՈՆ— Բայց մեր մերձավորն է ու ազգականը։

ՕՇԻՆ— Եվ ատոր համար է, որ կտեսակցիս բակերուն անկյունը ու գաղտագողի։

ԼԵՎՈՆ— Քանի որ ուրիշ կերպ կարելիություն չունիմ տեսակցելու։

ՕՇԻՆ— Եվ ի՞նչ կարիք ունիս տեսակցելու։

ԼԵՎՈՆ— Տիկինը ինծմե խնդիրք ունի։ Հա՛յր-իշխան, ալ հերիք է, շուտով երկու տարի պիտի ըլլա իր ամուսնուն արտաքսումը, այլ թող վերադառնա։

ՕՇԻՆ— Ատո՞ր համար ուրեմն։

ԼԵՎՈՆ— Հա՛յր-իշխան, մի՛ մոռնար, ես ու Ժուանը եղբայր ու քրոջ զավակներ ենք. ինչ որ անցեր է, անցեր է, ալ թող դառնա իր երկիրը, իր ընտանիքին։

ՕՇԻՆ— (Պարզ) Ո՛չ։

ԼԵՎՈՆ— Հա՛յր-իշխան, ես շատ կուզեմ, որ ան վերադառնա։

ՕՇԻՆ— Մի՞թե։ Ո՛չ։

ԼԵՎՈՆ— Բայց ան պետք է, որ վերադառնա, հա՛յր-իշխան։

ՕՇԻՆ— Պե՞տք է։ Ինչո՞ւ։

ԼԵՎՈՆ— Որովհետև ես խոսք տվի դքսուհիին։

ՕՇԻՆ— Է՜, ի՞նչ ընենք։

ԼԵՎՈՆ— Իմ թագավորական խոսքս, որ իր ամուսինը պիտի վերադառնա։ Վստահ եմ, որ թագավորին տված խոսքը չես կոտրեր։

ՕՇԻՆ— Լսե՛, զավա՛կս։ Թագավորական խոսք տալու համար՝ մարդըս դեռ խսկապես ու հասուն թագավոր մը պետք է դարձած ըլլա, իսկ իսկապես հասուն թագավոր մը դառնալու համար նախ պետք է սորվի հանդիպած տեղը իր թագավորական խոսքը չտալու և մանավանդ կնոջ մը։ Եթե նույնիսկ ուրիշ ծանրակշիռ պատճառներ գոյություն չունենային, որոնք սակայն կան և դուն գիտես և մանավանդ դուն լավ պետք է որ գիտնաս, նույնիսկ այդ պարագային Ամորի Ժուան իշխանի վերադարձը անկարելի է։ Գիտցիր և միմիայն անոր համար, որ ասիկա դաս մը ըլլա, և Լևոն թագավորը սորվի, թե ուր կրնա իր թագավորական խոսքը տալ և ուր պետք չէ, որ ան իր խոսքը տա։ Հիմա՛, զավա՛կս, կրնաս հեռանալ։ Ես դքսուհիին համար ավելի հարմար ուղեկցող մը կճարեմ։

ԼԵՎՈՆ— (Սաստիկ գրգռված) Աղե՛կ, ես կերթամ. բայց ավա՛ղ-իշխան, գիտցի՛ր, որ ես այլևս երբե՛ք, երբեք մոռնալու չեմ, որ իմ տված առաջին թագավորական խոսքս կոտրեցի. ես ասիկա մոռնալ չեմ կրնար, աս ալ դաս մըն է ինծի... (Արագ ձախի դռնեն դուրս):

12

ՕՇԻՆ— (Մտնր կդառնա Ռիթային) Իշխանուհին կարծեմ կրնա գոհ ըլլալ. հասավ իր նպատակին։

ՌԻԹԱ— Դեռ ո՛չ լիովին։



ՕՇԻՆ— Սակայն ասիկա առաջին դիմադարձություն էր, առաջին ընդվզումը, որ ան համարձակեցավ իմ դեմս։

ՌԻԹԱ— Այո՛, միայն առաջինը։

ՕՇԻՆ— Կհուսամ, որ ըլլա և վերջինը։ Հազիվ թե մյուս անգամ բախտ ունենա քու խոսքիդ հմայքը վայելելու։

ՌԻԹԱ— Այո՛, քանի որ այսպես աչալուրջ հսկողություն կա իր վրա, քանի որ ճիշտ հանցանքի վայրկյանին վրա հասավ Օշին իշխանը։

ՕՇԻՆ— Հսկելը իմ պարտավորությունս է։

ՌԻԹԱ— Ուրիշ անգամներ կհավատամ անշուշտ, որ դուն իրավունք ունիս քու հսկողությամբդ հպարտանալու։ Բայց այս անգամ պիտի ներես, եթե քիչ մը տարակուսիմ։ Առանց իմ ղրկած երկու տողիս՝ դուն հազիվ թե գիտնայի՛ր, թե ո՞ւր էր այդ վայրկյանին թագավորը և որո՞ւ հետ։

ՕՇԻՆ— (Ապշած) Ինչպե՞ս։ Քեզմե՞ էր այդ գրությունը։ (Ցոցնե հանելով) Քո՞ւ գրածդ է այս տոմսը։

ՌԻԹԱ— (Ժպտուն)— Չի ճանչցա՞ր։ Մոռցե՛ր ես գիրս։

ՕՇԻՆ— Այո՛, աղոտ զգացում մը ունեի, թե ծանոթ էր ձեռքը։ Բայց... բայց այն ատեն ոչինչ չեմ հասկնար. ինչո՞ւ հայտնեցիր ինծի։

ՌԻԹԱ— Ի՞նչ կա չհասկնալու։ Գործով եկած էի պալատդ, ուզեցի անգամ մը տեսնեմ քեզի։ Դուն օր մը ըսիր ինծի, թե պահանջ ունիս մեջեմեջ գոնե ինծի տեսնելու, ձայնս, խոսքս լսելու։ Աղե՛կ. այդ պահանջը ես ալ ունիմ, Օշի՛ն իշխան։ Գոնե այսպես գողունի, փողոցեն եկող անառակ կնոջ մը պես, եկեղեցիին փեշերուն տակը, պալատիդ կողմնակի բակերուն ծածուկ մեկ անկյունը։

ՕՇԻՆ— Եթե եկած ես հաղթական մը, մեծություն մը, հերոս մը տեսնելու, սխալ ես եկած։

ՌԻԹԱ— Սակայն ամենքը քու անդադար բարձրացումդ կխոսին, քու տաղանդդ, քու նոր կազմած ուժերդ. չէ՞ որ հիմա ամենքը խոնարհած են առջևդ։

ՕՇԻՆ— Խոնարհա՛ծ են, այո՛, գլուխները և մտքին մեջեն կպատրաստվին հարված տալու։

ՌԻԹԱ— Ինչպես օրինակ ես։

ՕՇԻՆ— Ո՛չ, դուն միակն ես, որ խոնարհած չես գլուխդ իմ առջևս և մտքերուն մեջ գործ չունիս։ Բայց բոլո՛ր մնացածները...

ՌԻԹԱ— Ինչպե՞ս։ Հապա այնքա՞ն բարեկամներդ։

ՕՇԻՆ— Բարեկամ ըսվածը շատ հաճախ քու ամանեդ ուտող թշնամի մըն է։ Կյանքը ինծի միակ մեկ հաճելի խոր ու խոկական մտերիմ

հոգի մը տվավ։ Եվ ո՞վ գիտե՝ այս աշխարհի համար ատիկա ալ շռայլություն մըն էր գուցե և ատոր համար է, որ կտառապիմ։

ՌԻԹԱ— Ո՞վ է ան, կճանչնա՞մ, եթե գաղտնիք մը չէ։

ՕՇԻՆ—Գաղտնիք մըն է, քեզմե զատ ամենուն համար. իսկ քու առջևդ իմ շրթունքս գաղտնիք չունի։

ՌԻԹԱ— Ո՞վ է ուրեմն այդ զարմանալի բացառությունը։

ՕՇԻՆ— Ինչո՞ւ իզուր կհարցնես։ Գիտես, որ դո՛ւն ես։

ՌԻԹԱ— Բայց չէ՞ որ ես դաշնակից մըն եմ բոլոր քու ոխերիմ թշնամիներուդ և անոնց գործոն մեկ աշխատակիցը։

ՕՇԻՆ— (Ժպտուն) Գիտե՛մ. կըսեն՝ դուն ոգին ես ու դրդիչը դեմս եղած ատելության ու շարժումին։

ՌԻԹԱ— Եվ լսե՞ր ես, որ անունս դրեր են «Դքսուհի Ատելություն»։

ՕՇԻՆ— Մարդկային աչքը այդչափ միայն կտեսնե, անոնց հասկացողությամբ դուն ատելություն ես, և ես՝ բռնակալություն, այդպես կեցած դեմ-դեմի։

ՌԻԹԱ— Իսկ քու հասկացողությամբ ի՞նչ ենք մենք հապա այսպես կեցած դեմ-դեմի։

ՕՇԻՆ— (Գլուխը կախելով) Դուն՝ սրբություն մը, ես՝ տխմարություն։

ՌԻԹԱ— Բայց ինչպե՞ս քեզի համար միակ սրբությունը այս թագավորության բարձրացումն էր, այս պետության հայացումը։ Թե՞, միգուցե, քու այդ սիրականդ ալ արդեն բեռ մըն է դարձեր քեզի, որ վրայեդ նետել կուզես, ինչպես ինծի նետեցիր։

ՕՇԻՆ— Եթե գիտնայիր ինչքա՜ն անգութ են խոսքերդ, ինչքա՜ն սուր ու շեշտակի կխոցեն, և ինչքա՜ն թույն ու ճշմարտություն ունին իրենց մեջը, գուցե չէիր ըսեր։

ՌԻԹԱ— Իրար խնայելը մեր սկզբունքներուն մեջ չկա կարծեմ։

ՕՇԻՆ— Եթե եկեր ես հոգիիս թշվառությունը վայելելու՝ ահա՜ հոգիս մերկ կդնեմ քու առջևդ։ Այո՛, կզգամ, որ անզոր եմ ընելու ինչ որ ընել կուզեի։ Կզգամ մինակ եմ ու լքված, կզգամ զուր են եղած և զուր են անցնելու բոլոր ճիգերս։ Ժամանակներն են, որ հաջողությունները կբերեն, ոչ թե մարդիկ։ Կզգամ, որ ես ապրեր եմ սովորականի գծեն ելած, ժամանակի գծեն խոտորած, ապարդյուն սպառում մը, որ կյանք կանվանեմ։ Ասկե ավելի հետաքրքիր բան մը չունիմ քեզի ըսելու, իշխանուհի՛։

ՌԻԹԱ— Որ ըսել է՝ տեսակցության ժամը լրացած է, և քողերը նորեն կիջնեն մեր դեմքերուն վրա, և մեր հոգիներուն վրա և մենք կըրնանք երթալ նորեն մեր սորված դերերը շարունակելու, ինչ որ կյանքը բեռան մը պես դրեր է մեր մեջքին։



ՕՇԻՆ— Իսկ ատոր համար ամենեն առաջ պետք է, որ կտրվի քու վերստին մուտքը այս պալատի դարպասներեն։ (Քայլ մը կընե դեպի ձախի դուռը ու բարձրաձայն կկանչե) Հայտնեցեք Հալկամ իշխանին, որ հոս իրեն կսպասեմ։

ՌԻԹԱ— Իշխան Հալկա՞մը. ա՞ն ինչու կկանչես։

ՕՇԻՆ— Քաղաքավարությունը կպահանջե, տիկի՛ն, ինչպես որ բերավ քեզի ներս, այդպես ալ պետք է, որ քեզի դուրս հանե։

ՌԻԹԱ— (Զարմանքով) Բայց ատիկա՞ դուն ուրկե գիտես։

ՕՇԻՆ— (Քմծիծաղ) Կտեսնես, որ սխալ չէր ենթադրությունս։

## 13

ՀԱԼԿԱՄ— Ինձի կանչեր է՝ ավագ-իշխանը։

ՕՇԻՆ— Ժուան Ամորիի տիկինը, մեր ազնվականության ծաղիկը. թագավորին մերձավորը կխնդրե տեսակցություն մը Լևոն թագավորեն. և դուն փոխանակ արքայական դահլիճները առաջնորդելու մեծահարգ տիկինը՝ կառնես կբերես ծածուկ մուտքերով պալատական այս ետևի բակերը. վայե՞լ է այդ վարմունքը մեզի։

ՀԱԼԿԱՄ— Ատիկա ինքը տիկի՞նը քեզի ըսավ։

ՕՇԻՆ— Իբրև պատիժ կընկերանաս նորեն իրեն և նույն դռներով, ուրկե ներս բերիր, նույն դռներով կհանես դուրս։ Քեզի հետաքրքրող բոլոր հարցերը ճանապարհին կրնաս իրմեն տեղեկանալ։ Եվ որպեսզի այս պալատին մեջ մյուս անգամ նման անքաղաքավարություն մը կրկնել չկարողանաս՝ կարգիլեմ քեզի այդ ետևի դուռնեն դուրս ելլելեդ ետքը մյուս անգամ նորեն ներս մտնելդ ո՛չ այդ ետևի դռնով, ո՛չ ալ որևէ ուրիշ դռնով։

ՀԱԼԿԱՄ— (Շփոթված և քիչ մը անշարժ մնալեն ետքը) Եթե... եթե ատիկա է ավագ-պարոնին կամքը, գոնե ատեն տրվեր, որ հրաժեշտ առնեի Լևոն թագավորեն։

ՕՇԻՆ— Լևոն թագավորը կրնա ապրիլ և առանց այդ հրաժեշտին։ Հետևե՛ իրեն, տիկին։

Հալկամ ու Ռիթա աջեն դուրս: Օշին կեցած է լուռ. տերև մը ծառեն օրորվելով կիյնա անոր գլխուն ու գետին:

ՕՇԻՆ— Եվ այսպես մեկիկ-մեկիկ կթափին մարդիկը շուրջս, ցուրտը խածած աշնան տերևներու պես։ Եվ աշունը կմոտենա իր վերջին։

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ՀՆԱՄՅԱ ԴՂՅԱԿԻ ՄԸ ՄԻՋԱՆՑՈՒԿ ՍՐԱՀԸ

Պատերուն ու կաներուն ճնուրյան կնիք։ Ճակատը միափեղկ ցած ու նատ դուռ մը, որ կնանե գլխավոր դահլիճը։ Մատուռեր աջեն ու ձախեն։

**1**

Ճակատի դուռը բաց է, և ներսը բազմություն կերևա. երբեմն, ժողովի մը ցրումն է զանազան կողմերով։

Պարոն Պոհեմունտ Սիր-Ստանի թևը մտած, ճակտի դուռնեն առաջ կուգա։

*ՊԱՐՈՆ ՊՈՀԵՄՈՒՆՏ— Այս անգամ, Ստա՛ն, արդեն վերջն է կարծես։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Ատանկ կերևա. դանակը ոսկորին է հասեր. ամենքն են դժգոհ։*

*ՊԱՐՈՆԸ— Նույնիսկ իրենցմե. պառակտում կա մեջերնին. նոր հարկերը, այդ նոր հիմար գունդերը...*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Ամենեն կարևորը թագավորն է, որ մեզի հետ է։*

*ՊԱՐՈՆԸ— Պետք է միայն արագ շարժիլ. և մե՛կ անգամեն, ամե՛ն կողմե։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Որոշելը հրաշալի որոշեցինք, մեր բոլորիս ուժերը. միայն եթե գործադրենք։*

*ՊԱՐՈՆԸ— Այս անգամուն կգործադրենք. ամենուն վրա վստահություն մը կա և տրամադրությունը բարձր։ Սի՛ր-Ատան, պատմական ժողով մըն էր, ասիկա քու բերդիդ մեջ, քու հարկիդ տակ և քու շունչիդ։ Ծամփան կբացվի առջևդ լայն դեպի պալատը։ Մեծ դեր է վերապահված քեզի։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ—* (Կենալով ձախի մուտքին առջևը) *Հարցը, որ հոդ հասնի՝ դուն ինծմե առաջ։* (Դռան մեջը ճամփա տալով) *Անցի՛ր, պարո՛ն Պոհեմունտ։*

*ՊԱՐՈՆԸ—* (Խնդալով ու ետ քաշվելով) *Ո՛չ, Սիր-Ատան, քու ետևեդ։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Անցի՛ր, պարո՛ն, անցի՛ր։*

*ՊԱՐՈՆ— Ո՛չ. անկարելի է. քեզմե ետքը, Սիր-Ատան։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Սարսափելի մարդ ես, Պոհեմո՛ւնտ. ամեն տեղ ամենուն առջևը կկտրես, և հիմա իմ դռանս մեջ ինծմե առաջ անցնիլ չես ուզեր։ Անցի՛ր, անցի՛ր. ես դեռ վար իջնելու չեմ. ներսը մոնսենյորը մինակ թողնել չեմ կրնար։*

*ՊԱՐՈՆԸ— Իրավունք ունիս, դուն գնա՛ ներս. միայն թե ինծի շատ չըսպասեք։* (Դուրս)։



**2**

*ՍԻՐ-ԱՏԱՆ—* (Ետ կդառնա դեպի ճակատի դուռը և դեմ-դեմի կուգա իր կնոջն ու Ռիթային) *Դքսուհի Ամորին շատ լավկյաց էր այսօր։*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Ան կխոսեր այն ժամանակ, երբ ձեր բերաններդ կապ էին. հիմա, որ ձեզմե ամեն մեկը մյուսեն ավելի բարձր խոսիլ կուզե՝ ալ ի՞նչ պիտի խոսի տիկին Ամորին։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Իշխանուհի՛ Ռիթա, բացառիկ դժբախտ եղավ քու ամուսնությունդ. առաջին օրեն բաժան, մինակ, վշտահար ու դառնացած։ Ջապելի հետ հաճախ ենք խոսած այդ մասին։ Բայց քիչ մնաց, չա՛տ քիչ. ես վստահ եմ՝ շուտով ժուանը հոս կըլլա, դուն ալ վստահ եղիր։* (Կնոջը) *Իսկ մոնսենյո՞րը։*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Շրջապատված է։ Կխոսի։*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Այո՛, ան ալ շատ ոգևորված էր այսօր. ըսենք, ամենքը, ամենքը. ամենքը կզգան հաղթանակին հոտը. ամենքը կզգան, որ վերջին օրերն են Օշին Պայլի թագավորության և իր ապուշ խմբակին։* (Կերթա դահլիճ)։

**3**

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Ուրախ են ամենքը, Ռիթա՛, տխուր ես միայն դուն հոգիիդ խորքը. խոստովանե, որ տխուր ես։*

*ՌԻԹԱ— Ի՞նչ ունիմ ուրախ ըլլալու։*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Գիտե՛մ, հոգի՛ս, մասնավոր կապ մը չունիս ամուսնուդ հետ և մեծ բան մը չէ փոխվելու հոգիիդ համար անոր գալեն կամ չգալեն։ Բայց կա խորտակումը մեր թշնամիներուն, որոնց անկմանը դուն այնքան ձգտեր ես ու դրդեր. չէ՞ որ վերջապես պիտի հասնիս նպատակիդ։*

*ՌԻԹԱ— Ո՞րն է իմ նպատակս։*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Ի՞նչ հարց է։ Ես ո՞ս պիտի ըսեմ։*

*ՌԻԹԱ— Այո՛, ըսե՛, եթե գիտես: (Շատ մռայլ) Ես... ես ինքս չգիտեմ:*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Այսօր քեզի բան մը պատահեր է, Ռի՛թա. սովորական չես. դուն առույգ ես եղած միշտ:*

## 4

Խոսելով առաջ կուգա խումբը: Մեջտեղը հարգանքով շրջապատված Մոնսենյոր դը-Շառ, մեկ կողմը Սիր-Ատան, մյուս կողմը իշխան Սարգիս, Ճոսլին Անձող, Հայր Ներսես Պալոնց և Մախսուտ Երանի:

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Այո՜, շատ մեծ և շատ կարևոր է հիմա ձեր դերը մասնավորապես, և ձեր վրա կմնա գլխավորը՝ բարոյական հարձակումը: Որովհետև ժողովուրդ ըսածդ շան կնմանի. կքծնի, կսիրե ու կպաշտե իր տերերը, ով ալ կուզե ըլլա: Եվ շատ լուրջ աշխատանք է պետք անոնց վարկը ժողովուրդին աչքեր կոտրելու համար:*

*ՃՈՍԼԻՆ ԱՆՁՈՂ— Ձերդ սրբազնություն, չենք խնայած մենք մեր ջանքերը, կմտնենք ամեն տեղ, կխոսինք ու կբացատրենք:*

*ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Թե ի՞նչ գարշելի բռնակալ մըն է, ապօրինի ավազակ մը. թե ի՛նչ հրեշային ծախքեր կըլլան, թե ինչպես բոլոր հողերը իր անունին գրել կուտա, ինչպես...*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Այդ բոլորը շատ չնչին է, բարեկա՛մս: Ամեն իշխան ու ամեն թագավոր միևնույնը կընե. ատով մարդ չես զարմացներ: Պետք է զարնել ժողովրդի երևակայության, պետք է դպչիլ անոր ներքին բարոյական լարերուն:*

*ՃՈՍԼԻՆ— (Պալոնցին) Լավ չեմ հասկնար սրբազանին միտքը:*

*ՀԱՅՐ ՊԱԼՈՆՑ— Ես ալ, մոնսենյո՛ր, ձեր խոսքի ներքին տարողությանը դեռ թափանցել չկրցա:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Դուն կարծեմ պալատն էիր, երբ մեռավ Օշին թագավորը: Չգիտե՞ս ինչպես մեռավ:*

*ՊԱԼՈՆՑ— Ես պալատը նորեկ մըն էի այդ միջոցին. բավական երկար հիվանդ էր. արդեն միշտ հիվանդկախ մարդ մըն էր, մինչև հանգավ:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Նորեկի մը ու անփորձի մը համար այդ պատասխանը անշուշտ ներելի է, բայց այս տարիքիդ մեջ քու խելքդ ու քու կարողություններդ ունեցող մեկուն համար այդքան միամիտ ըլլալը ներելի չէ արդեն:*



*ՊԱԼՈՆՑ— Այսինքն՝ մոնսենյորը կկարծե...*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Ես ոչինչ չեմ կարծեր, այլ կըսեմ ինչ որ ըսեր են ականատես պալատականները, բայց ո՛չ իհարկե նորեկ պալատականները: Այո՛, հա՛յր Ներսես, այո՛, ձեր այդ պայլը գարշելի արքայասպան մըն է. ան է թունավորած ամենեն սիրված ձեր մեծ թագավորը, որ հարգված էր նաև եվրոպական արքունիքներեն և ջերմապես գնահատված սրբազան առաքելական աթոռեն:*

*ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ— Պետք է խոստովանիմ, մոնսենյոր, որ առաջին անգամ կլսեմ, թեև իրավ որ խելքի մոտիկ է:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Իրենց մեղքերը ծածկել գիտեն. վարպետ են այդ կողմեն մեր թշնամիները: Անոնք կծածկեն, բայց մենք կբանանք: Դո՛ւք պետի բանաք ժողովուրդին աչքերը:*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Մի՞թե իրավ է, մոնսենյո՛ր, այս զարհուրելի նորությո՞ւնը:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— (Հեգնոտ) Դուցե նորություն է Սիր-Ատանին համար նաև անոր ամուսնությունը Հովհաննա թագուհիին հետ:*

*ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Մոնսենյորը ըսել կուզե, որ սպանության մասնակից է և Հովհաննա՞ն:*

*ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ— Ատոր, նայե՛, չեմ զարմանար. այդ երկուքը հին ու մութ կապեր ունեին իրարու հետ. չէ՞ որ Օհաննան Իտալիայեն բերողը Օշին իշխանն էր:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Կերևակայեմ. Միջերկրականի ալիքներուն վրա. լուսին գիշեր մը, երբ Օհաննան կտաներ իր թագավորին կին, ինչպես ոճիրը սաղմ առավ: Հարավային Իտալիան ես լավ կճանչնամ. խիզախ կիներ են և պագշոտ: Բացե՛ք, բացե՛ք, ըսե՛ք այս բոլորը ժողովուրդին, որ ամենքը գիտնան: Եթե քիչ մըն ալ ուշ ըլլաք՝ պետի կատարվի ավելի սարսափելին:*

Ամենքը հարցական կնային իրարու. և կբացականչեն միաժամանակ.

*ՃՈՍԼԻՆ— Ի՞նչ:*

*ՍԻՐ-ԱՏԱՆ— Այսի՞նքն:*

*ՊԱԼՈՆՑ— Ի՞նչը, մոնսենյո՛ր:*

*ՄՈՆՍԵՆՅՈՐ— Քարը երբ տեղեն փրթի՝ կգլտորվի մինչև անդունդին հատակը: Հիմա ինչի՞ մասին կմտածե ձեր պայլը գիշեր-ցերեկ, և՛ հին մեղքերը ծածկելու համար, և՛ ապագա վրեժեն ազատվելու համար: (Ընդհանուր լարված հետաքրքրություն) Ան ինչպես սպաննեց հայրը, հիմա ալ սպաննել կուզե որդին:*

ԺՈՍԼԻՆ— Որդի՞ն. ա՜, քիչիկ մը...
ՍԱՐԳԻՍ ԻՇԽԱՆ— Լևոն թագավո՞րը։
ՍԻՐ-ԱՏԱՆ— Մոնսենյո՛ր, ա՞տ ով ըսավ քեզի։ Նորեն պալատե՞ն։
ՄՈՆՍԵՆՅՈՐ։ Ո՛չ։ Այս մեկը արդեն ըսավ ինծի ինքը Օշին Պայլը։
ՊԱԼՈՆՑ— Ըսավ ի՛նքը՝ Օշին Պա՞յլը։ Խենթեցե՞ր է։
ՄՈՆՍԵՆՅՈՐ— Ամենևին. շատ խելոք է, և հաշիվն ալ շատ պարզ։ Եկեր էր հետս առուտրի. խոստացավ ընդունիլ մեր սուրբ կաթոլիկ դավանանքը, ինքը և իր երկիրը, եթե ես ու կաթոլիկ եկեղեցին աչք գոցենք իր այդ գարշելի արարքին, և ինքը վերջնապես տիրանա իր խլած գահին։
ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Աղվո՛ր առուտուր է։
ԺՈՍԼԻՆ— Այո՛, քիչիկ մը։
ՍԻՐ-ԱՏԱՆ— Ե՞տքը, մոնսենյո՛ր։
ՄՈՆՍԵՆՅՈՐ— Ալ ի՞նչ ետքը։ Դուռը ցույց տվի ու վռնտեցի։ «Մեր մայր սուրբ եկեղեցին ոճիրներ ծածկելու վերարկու չէ՛», պոռացի երեսին. սմքեցավ ու գնաց։ Բայց պատանի թագավորին կյանքը կախված է մազե մը։ Այս բոլորի մասին ներսը ժողովին մեջ խոսիլ չուզեցի. նախ որ խոստովանանքի նման բան մըն է աս ալ. մեկ մըն ալ իմ դիրքս չի ներեր, որ ամեն բան խոսիմ բաց, բայց ձեր լե՛զուները ազատ են։
ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Եվ պիտի խոսին, և պիտի խոսին։
ԺՈՍԼԻՆ— Եվ ինչպե՛ս պիտի խոսին։ Ձե՛րդ սրբազնություն, ես հիմա արդեն ամեն բան գիտեմ քիչիկ մը։
ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Ա՛խ, այդ զզվելի մարդեն ե՞րբ պիտի ազատվինք վերջապես։
ՀԱՅՐ ՊԱԼՈՆՑ— Շուտո՛վ, մեծ տիկին, Աստուծմով շուտով։
ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ— Քանի մը շաբաթեն, կոմսուհի՛, մերն է Սիսը և պալատը։
ՌԻԹԱ— (Զսպված հեգնությամբ մը) Շատ շուտով կհաղթանակես, տե՛ր Կոպիտառի. այդպես մի՛ շտապեր, դեռ Օշին Պայլը նստած է իր արքայական պալատը, իր բանակներուն գլուխը և Լևոն թագավորն ալ իր ձեռքին տակը։
ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ— Բայց ո՛չ երկար, կոմսուհի՛։
ՌԻԹԱ— Այդ խոսքերը ես շատ եմ լսեր այս տարիներու ընթացքին։ Երբ հարցը կուգա մեղադրանքի, հայհոյանքի ու բամբասանքի՝ ա՜, կթափի ամեն կողմե, կարծես առատության եղջյուրեն։ Իսկ երբ հարցը կուգա գործելուն, իրագործելուն՝ ուրիշ բան է, արդեն ամեն մեկը կքաշվի իր ղլյակը, իր գործերն ունի ու իր հաշիվները։ Եվ ես եկեր եմ այն համոզումին, որ ձեր հայհոյած ու ձեր բամբասած Օշին Պայլը հսկա



մըն է մեր ամենուս քովը, և ան իզուր չէ, որ նստեր է հոն. մենք բոլորս թզուկներ ենք անոր դեմը։ Դեռ կանուխ է, իշխա՛ն Սարգիս, դեռ մի՛ հաղթանակեր, դեռ իր գահին վրան է Օշին Պայլը։
ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ— Բայց, դքսուհի Ամորի, կարծեմ...
ՄՈՆՍԵՆՅՈՐ— Դքսուհի Ամորիի շրթունքներուն կվայլե այդ համդիմանությունը։ Ատիկա իր զենքն է, իր իրավունքը խթանելու համար մեր մեջի տկար հոգիները, ինչպես որ իր ներկայությունը և իր ազնիվ կերպարանքին հմայքը եղեր է միշտ խթան մը մեր մեջի ուժեղ հոգիներուն համար։
ՍԻՐ-ԱՏԱՆ— Բայց անցքերուն մեջը մնացինք, մոնսենյոր։ Երթա՛նք ճաշարան։ Հյուրերս զվարճացնելու համար այսօր ձեռնածու մը ունինք, որուն մատներուն ճարպիկությունը չտեսնված բան է։ Հրաշք բաներ կընե անբացատրելի. զարմանք է ու ծիծաղ։ Արդյոք քու սրբությունդ կհաճե՞ր թույլ տալ իր ներկայության։
ՄՈՆՍԵՆՅՈՐ— Ինչո՞ւ չէ։ Շատ հետաքրքիր արվեստ է, Սիր-Ատա՛ն, և շատ մարդկային։ Եթե կուզես՝ ամեն մարդու հոգիին մեջ ձեռնածու մը կա թաքնված. և ինչքան այդ ձեռնածուն ճարպիկ է ու վարպետ, այնքան ալ հոգին հետաքրքիր։ Երթանք նայինք ձեր ձեռնածուն։

**Իրարու ետևե և խոսակցելով ամենքն ալ կքաշվին աջի կողմնակի դռնեն։**

## 5

**Ետ է մնացած Ռիթան մտածումի մեջ։ Իսկ անոր շարժումներուն կհետևի հեռուեն և տեսակ մը դարանակալ Հալկամ իշխանը։**
**Երբ Ռիթան ալ վերջապես դեպի դուրս կշարժվի, իշխանը առաջ կնետվի և ճամփան կկտրե։**

ՀԱԼԿԱՄ— ԻՇԽԱՆ— Դքսուհի Ամորի՛։
ՌԻԹԱ— (Զարմանքով կնայի անոր)։
ՀԱԼԿԱՄ— Վայրկյան մը. խնդրեմ. երկու խոսք։
ՌԻԹԱ— Ինծի՞ հետ։
ՀԱԼԿԱՄ— Դուն միթե իրա՞վ չես տեսներ՝ ինչ որ իմ մեջս կկատարվի՝ թե՞ չտեսնել կձևացնես։
ՌԻԹԱ— (Ցրված) Ինչպե՞ս։
ՀԱԼԿԱՄ— Ամբողջ ժողովի ընթացքին իզուր անգամ մը հայացքդ բռնել փորձեցի։ Ես այլևս չեմ կրնար այսպես, չեմ կրնար։ Ի՞նչ, կկար-

ժես՝ ես եկեր եմ հոս ժողովի՞, ի՞նչ ժողով։ Ես եկեր եմ հոս, որովհետև գիտեմ, որ դուն հոս ես ըլլալու։ Ես եկած եմ քեզի համար, քեզի տեսնելու համար։

ՌԻԹԱ— Ահա՛ կեցած եմ դեմդ. ի՞նչ կուզես ինծմե։

ՀԱԼԿԱՄ— Խոսիլ կուզեմ, վերջապես խոսիլ կուզեմ։ Դուն գոցեր ես ոսկիե դղյակիդ դուռը, դուն գոցեր ես շրթունքներս, որ բան մը չհամարձակիմ ըսելու և միայն գործածել կուզես ինծի քու նպատակներուդ համար։ Ես հակառակ չեմ, ըրեր եմ քեզի համար՝ ինչ որ ինծմե պահանջեր ես, և ասկե ետքն ալ պատրաստ եմ կատարելու՝ ինչ որ ինծմե պահանջես։ Քու այդ աչքերուդ համար, քու այդ նայվածքիդ համար, քու ամեն խոսքեդ, քու ամեն շարժումեդ ծորող հմայքիդ համար։

ՌԻԹԱ— Բայց դուն կմոռնաս, թե որու հետ կխոսիս։

ՀԱԼԿԱՄ— (Սաստիկ գրգռված) Ինչո՞ւ այդքան անառիկ բարձրերեն։ Որո՞ւն համար կպահես դուն քեզի ու քու այդ վայրենի գեղեցկությունդ։ Ամուսնո՞ւդ համար, ո՞վ խաբել կուզես։ Դուն կկարծես՝ ես չգիտե՞մ։ Փառասեր կին մըն ես դուն, այո՛, և հայացքդ միշտ բարձրերը կիյնա։ Եվ իրավունք ունիս։ Եթե քու շնորհներուդ հուրին տակ ինծի նման մարդիկ չեն դիմանար, եթե մոնսենյորին պես հին շունը քու հրապույրիդ չի կրնար դիմադրել, ի՞նչ է որ Լևոն թագավորը, այդ թագակիր պատանին, որ քու հմայքիդ դեմ դնել կարողանա։ Ի՞նչ զարմացած երեսս կնայիս։ Կկարծես աչքերը եղած են չտեսնելո՞ւ համար։ Միայն խնդրեմ ինծի սխալ չհասկնաս. ես հակառակ չեմ քու ծրագիրներուդ. ամեն մարդ իր ունեցած զենքերը կգործածե բարձրանալու համար ու հաջողելու։ Դուն կրնաս պալատին մեջ մեծ դիրք ձեռք բերել, մեծ ազդեցություն, կրնաս և ատիկա հակառակ չէ իմ ծրագիրներուս, նույնիսկ կլրացնե իմ հաշիվներս, մենք իրարու օգնել կրնանք, իրարու հենիլ և իրար բռնել։ Միայն մեկ բան մը պետք չէ մոռնա դքսուհին, որ ես ալ իր ծրագիրներուն մեջ տեղ մը ունիմ և խոշոր տեղ մը։ Ես կրնամ նպաստել քեզի, որ հասնիս մինչև արքայական գահուն պատվանդանը, կրնամ և խանգարել, կրնամ և խորտակել բոլոր հաշիվներդ։ Ծամփա՛դ, դքսուհի Ամորի՛, ահա՛ այսպես իմ առջևես կանցնի. և ես կսիրեմ քեզի։

ՌԻԹԱ— (Ոտքը ամուր գետին զարնելով ու զզվանքով) Հեռացի՛ր, հեռացի՛ր այս վայրկյանին քովես և չհամարձակիս մյուս անգամ մոտս գալու։

ՀԱԼԿԱՄ— Դքսուհի՛ Ռիթա, մտածե՛, մի՛ մղեր ինծի ծայրահեղության։

ՌԻԹԱ— Հեռացի՛ր իսկույն, թե չէ կպոռամ ու ամբողջ դղյակը գլխուդ կժողվեմ։



ՀԱԼԿԱՄ— Չէ՛, աղմուկը ավելորդ է։ Չես ուզեր՝ կերթամ։ Բայց կտեսնես, դքսուհի՛, ես կլուծեմ ասոր վրեժը. մի՛ ստիպեր։
(Դուրս աչեն):

## 6

Նախ կեցած է լարված ու դողդոջ, ֆիշ-ֆիշ կքուլնա և ճանկարծ դսան լոսով կիյնա մոտի բազկաթոռին գիրկը:

ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— (Մեջի դուռնեն ներս նետվելով ու շփոթ դեպի Ռիթան) Ո՞ւր ես, քեզի կփնտրեմ. ի՞նչ կընես հոս մինակ։ Ռիթա՛, ի՞նչ ունիս դուն այսօր։ (Փաքքվելով) Ինչո՞ւ կուլաս։

ՌԻԹԱ— Կուլամ կյանքս, կուլամ իմ ամբողջ կյանքս, իմ ծռած, ճմռտած, եղծված ու անպետք դարձած իմ կյանքս, իր ճամփեն ելած իմ խե՛ղճ կյանքս։ Կյա՞նք, ի՞նչ կյանք. կյա՞նք է ասիկա, քաշքշուկ, դժբախտություն, խեղաթյուրում ու խեղկատակություն։ Ուզածս ուրիշ, ըրածս ուրիշ։ Իմ ո՞ր մեղքիս համար։ Եվ որո՞նց հետ, Աստվա՛ծ իմ, որո՞նց հետ։ Ես ի՞նչ գործ ունիմ անոնց հետ։

ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Որո՞նց մասին կխոսիս, Ռիթա։ Նոր ի՞նչ է պատահեր։

ՌԻԹԱ— Նո՞ր։ Նոր ոչինչ, Ջապե՛լ, նոր ոչինչ. իմ ճակատագրիս դառնությունը հոդ է։ Միշտ հինը, միշտ նույնը, հավիտյա՜ն։ Ինծի համար նոր չկա։

ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Կփոխվի՛, հոգիս, կփոխվի՛։ Այդպես մի՛ խոսիր, շուտով քու կյանքդ ալ կփոխվի, շատը գնաց, քիչը մնաց. կուգան ավելի բախտավոր օրեր։

ՌԻԹԱ— Բախտավոր օրե՞ր. ո՛չ. ատոնք ինծի համար չեն։ Բայց... բայց կա մեկ հատիկ բախտավոր օր մը, մեկ հատիկ, այո՛, կա՛. և կըզգամ, որ կմոտենա, կմոտենա։

ՏԻԿԻՆ ԱՏԱՆ— Թող գա՛ այդ մեկ հատիկ օրը. մեկալներն ալ անոր կհետևին. բախտն ալ դժբախտության պես խումբերով կուգա։ Ելի՛ր, երթանք լվացվե՛, ներսը կսպասեն մեզի։ Գիտե՛ս, որ մոնսենյորը քու պակասդ միշտ կզգա։

# ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ՊԱԼԱՏԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄԻ ՍԵՆՅԱԿԸ

**Պարզ սենյակ մը ընդարձակ ու սալահատակ. սեղան մը ու աթոռներ։**

**Ճակատը չորս բարակ սյուներով զատված է ետևի մասեն, սյուներուն մեջ վարագույրներ։ Երբ վարագույրները բաց են՝ խորքը կերևա դեպի վերին հարկը տանող լայն ու բարձր մարմար սանդուղը բազմաթիվ աստիճաններով։ Ելքի կեսին աստիճանները կընդհատին, կկազմեն բավական լայն հարթակ մը, և ետքը նորեն կշարունակվին աստիճանները։**

**Սենյակի սյուներեն մինչև սանդուղը ընդարձակ անցք մըն է, որ կերթա աջեն ձախ։ Սանդուղին վարը երկու կողմեն բարձր ձույլ աշտանակներ բազմաթիվ մոմերով. նույնը նաև կեսի հարթակին վրա։ Սանդուղի ամբողջ երկայնքովը երկու եզերքեն գեղեցկակերտ ու ոսկեզօծ հենարան, իսկ մեջտեղը կարմիր կերպաս վերեն վար՝ վրայեն քալելու համար։**

### 1

**Սպասման սենյակի ճակտի սյուներուն վարագույրներեն միայն մեջտեղինն է կիսովին բաց։**

**Ա. պաշտոնյան նստած է մտածկոտ ու գլխահակ։ Բ. պաշտոնյան անհանգիստ կերթևեկե սենյակին մեջ։ Դուրսը իրարանցում, երկու պաշտոնյաները ականջ կդնեն, ներս կմտնե Գ. պաշտոնյան։**

*Ա. ՊԱՇՏՈՆՅԱՆ— Ի՞նչ բան է։*

*Գ. ՊԱՇՏ.— Վաշտ մը։ Միջին անցքերը կամրացնեն։*

*Բ. ՊԱՇՏ.— Իսկ գրավվա՞ծ մասը։*

*Գ. ՊԱՇՏ.— Ոչի՛նչ։ Գրավեր են ու նստեր։ Առայժմ հանգիստ է։*

*Բ. ՊԱՇՏ— Փոթորիկեն առաջ եղող հանգիստը։*

*Գ. ՊԱՇՏ.— Հա՛, երևի հարձակման կպատրաստվին։*

*Ա. ՊԱՇՏ.— Իսկ իշխա՞նը։*

*Գ. ՊԱՇՏ.— Բերդապահներուն հետն է Գայլի դուռը։*

*Բ. ՊԱՇՏ.— Ալ օգուտ չունի։ Ալ օգուտ չունի։*

*Ա. ՊԱՇՏ.— Կկարծե՞ս։*

*Բ. ՊԱՇՏ.— Ալ ի՞նչ կարծեմ կամ չկարծեմ։ Ամբողջ քաղաքը իրենց ձեռքն է, ժողովուրդը իրենց հետ է, պալատին մեկ թևը իրենց ձեռքն է։*

*Գ. ՊԱՇՏ.— Անզգամները գիտեին, որ մեր բոլոր ուժերը սահմաններուն վրան են։*

*Բ. ՊԱՇՏ.— Բնականաբա՛ր. ատոր համար ալ այսպես հանկարծ*



*Գ. ՊԱՇՏ— Եթե սա աջ թևերնիս կտրած չըլլային՝ մնացածին շատ կարևորություն չէի տար։*

*Բ. ՊԱՇՏ.— Անոնք գիտեն բոլոր մեր թույլ ու տկար կողմերը, կացինին կոթը մեզմե է։*

*Ա. ՊԱՇՏ.— Քեզի՞ ինչ է եղեր, որ իրար ես անցեր։ Ո՛չ զավակ ունիս, ո՛չ ընտանիք։ Աստվա՛ծ իմ, ի՞նչ պիտի ըլլա իմ զավակներուս վիճակը։*

*Գ. ՊԱՇՏ.— Իշխա՛նը։*

### 2

**Երեքն ալ կմոտենան մուտքի վարագույրին ու կկենան խոնարհ ու տխուր։**

**Կմտնեն Օշին, բերդապահը, ուրիշ երկու զինվորական և թիկնապահներուն պետը։**

*ՕՇԻՆ—* (Վայրկյան մը խեթ կնայի պաշտոնյաներուն և հետո հանգիստ, բայց խիստ)։ *Վախ ունենալ ու երկբայիլ ես կհասկնամ, երբ վտանգը հեռու է դեռ։ Շտկեցե՛ք ձեր այդ կտրած քիթերն ու մեջքերը. թշնամին արդեն ձեր որջին մեջն է։ Հիմա վախը բոլորովին ավելորդ շռայլություն մըն է։ Դեռ երեկ, դեռ առաջին օրը, եթե այդքան կվախնայիք, եթե այդքան վստահություն չունեիք, պետք է ձգեիք ու փախչեիք, ինչպես ձեր ընկերներեն իմաստունները ըրին. հիմա այլևս ուշ է, բարեկամնե՛րս։ Ձեր իսկ լավության համար խորհուրդ կուտամ՝ զենք վերցուցե՛ք և օգնեցե՛ք կռվողներուն։ Կռվի ժամանակ ամենեն դժբախտ ու ամենեն տառապողն ան է, ով անգործ է։ Անցե՛ք և պետքի՛ եկեք։* (Պաշտոնյաները դուրս)։

### 3

*ՕՇԻՆ—* (Դառնալով բերդապահին)։ *Բոլոր խնդիրը օր մը դիմադրելն է, լրիվ օր մը գիշեր ու ցորեկ. ատկե առաջ անկարելի է, որ եղբայրս հասնիլ կարողանա. իսկ մինչև մարաջախտը իր գունդերով չերևա՝ Սիսը չի մաքրվիր։ Երբ որ հասավ՝ կառնենք այդ լատինները երկու սուրի մեջ։ Ուրեմն ամբողջ օր մը պետք չէ թողնենք, որ անոնք մեջի բակեն ասդին շարժվիլ կարողանան։* (Մյուս զորավարին) *Կանանոցը հիմա դատարկած պիտի ըլլան. թագուհին փոխադրված է ձախ թևը՝ ամենեն ապահով մասը շենքին։ Դուն կանանոցը կամրացնես ինչպես պետք է, կդարձնես անառիկ. ատիկա մեր թիկունքն է և կհանձնեմ քեզ՛։*

*ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐՈՒՆ ՊԵՏԸ— Ուրեմն թիկունքեդ ապահով եղիր, ավա՛ղ իշխան։*

*ՕՇԻՆ— Գիտե՛մ։ Ճակատը կպաշտպանենք ես ու Օրզանը։ Դե՛, դուն գնա՛ գործիդ։* (Թիկնապահներուն պետը կհեռանա. իսկ իշխանը կդառնա սպային) *Իսկ թագավո՞րը։*

*ՍՊԱՆ— Քաշված է իր բաժինը։*

*ՕՇԻՆ— Իր տրամադրությո՞ւնը։*

*ՍՊԱՆ— Գիտե, որ լուրջ վտանգի տակ ենք։*

*ՕՇԻՆ— Խոսեցա՞ր հետը։*

*ՍՊԱՆ— Լուռ է ու մտածկոտ. և անհանգիստ։*

*ՕՇԻՆ—* (Քիչ մը մտածելեն ետքը) *Աղե՛կ, կըսես իրեն իմ անունես՝ թող զինվի ու թող գա իմ սեփական պահակ գունդս, ըլլանք միշտ միասին։*

*ՍՊԱՆ— Հրամա՛նդ, տե՛ր։* (Դուրս):

## 4

Օշին ճոգնած կնստի վայրկյան մը, կմտնե Մխիթար ճայր սուրբը:

*ՄԽԻԹԱՐ— Մինա՞կ է մեծ իշխանը։*

*ՕՇԻՆ— Այո՛, հայր սո՛ւրբ, անցան ամենքն ալ մաղին ծակերեն։ Երբ ծովուն ափը ավազ կմաղեն՝ լեցնելուն պես, նախ նուրբ ու նրբին ավազն է, որ ծակերեն կփախչի. ետևեն սովորական ավազը՝ ավելի խոշոր. կմնան խիճերը. բայց երբ մաղողը կտանի անդին և ուժեղ ցընցումը կուտա՝ չգիտես ինչպես այդ խիճերն ալ կանցնին ծակերեն ու մաղին մեջ կմնան ամենեն խոշոր քարերը, բացառիկները։ Իմ մաղիս մեջ մնաց միայն Հեթումը, իմ լավ Հեթումը, ան ալ երեկ ես ստիպեցի, որ հեռանա։*

*ՄԽԻԹԱՐ— Ինչո՞ւ։*

*ՕՇԻՆ— Կյանքի մարդ է անիկա. կսիրե ապրիլը. թող քաշվի առայժմ իր բերդը, վերջը քիչ-քիչ նորեն ջուրին երեսը կելլե. անոր դեմը ոխ չունին, ի՞նչ կարիք կա, որ ան ալ ինծի հետ մնա փլատակներուն տակը։*

*ՄԽԻԹԱՐ— Ուրեմն... ուրեմն քու կարծիքովդ... Ուրեմն կկարծես, որ փլի՞ պիտի։*

*ՕՇԻՆ— Ինծի համար հարցը վճռված է արդեն շատոնց։ Ես պարտված եմ։ Իմ ուզածս մյուսներուն ուզածը չէ։ Ինչ որ ինծի համար*



*նպատակ մըն է ինքնին, ուրիշներուն համար միջոց մըն է միայն երկրի ու վայելքի։ Իսկ միս-մինակ մարդը ի՞նչ ուժ է որ գործնական կյանքին մեջ, ինչքան ալ կուզե համոզված ըլլա իր հոգիին մեջ։ Միտք մը պետք է հասուննա կյանքին մեջ, ինչպես պտուղը ծառին վրա։ Նախ կարծեցի, որ ետևս ինծի նման մտածող բազմություններ կան, գուցե քիչ մը վարանոտ. ետքը հուսացի, որ ետևես ինծի նման բազմություններ պիտի գան. հաշիվս սխալ ելավ. հիմա անկարելի է իրագործել. կտեսնեմ՝ դեռ խակ է պտուղը. և ժամանակ չկա, որ հասուննա. ցավը հոն է, որ ժամանակ չկա հասուննալու, որ գոնե քաղեն ուրիշները։ Այս փոթորիկներուն իր այս վիճակով չի դիմանար այս ծառը։*

*ՄԽԻԹԱՐ— Մի՞թե եկած ես այդ եզրակացության...*

*ՕՇԻՆ— Դուն գիտես ի՞նչ դառն բան է, երբ հոգիիդ առջևը կտեսնես, որ կքայքայվին սիրած ծրագիրներդ, կտարտղնին հիմնած հաստատություններդ։ Ատկե ավելի ծանր բան չկա մարդուս համար։ Կյանքի մեջ արտաքին անկումները, արտաքին փլուզումները, ա՛յ, ինչպես հիմա այս տակնուվրայությունը, այնքան աղմուկ ունի և այնքան մեծ ու փոքր հոգ ու զբաղում իր հետ, որ ցավը կմոռցվի՛, կխեղդվի՛։ Բայց երբ միս-մինակ եղկար գիշերները նստած կխորհիս ու կգիտակցիս, որ իզուր ապրեցար, իզուր աշխատեցար, իզուր նվիրեցիր ուժերդ, ուրախությունններդ ու անհատական բախտավորությունդ գաղափարի մը հաղթանակին, որ կտեսնես հաղթանակել չի կրնար։Պարտությունը ի՞նչ է որ դուրսը կռվի դաշտին վրա, պալատին մեջ կամ ուր որ կուզես. պարտությունը իսկապես լեղի է հոգիին մեջ։ Եվ որ հոգիին մեջ պարտված է՝ ալ անոր փրկություն չկա։ Մարդիկ նախ հոգիին մեջ կհաղթվին, հոգիին մեջ չհաղթվածը անպարտելի է։ Թող տարի մը.առաջ ըլլար այս հարձակումը իմ վրաս՝ անոնք քաղա՞ք կառնեին իմ ձեռքես, անոնք այս պալատը ո՞տք կդնեին։ Ա՜, հիմա՛. դյուրին է գրավել քաղաք մը, երբ խորտակված են, բաց են անոր դարպասները։*

*ՄԽԻԹԱՐ— Այն ատեն սակայն, չեմ հասկնար, ալ ինչո՞ւ կմնաս, ալ ինչո՞ւ այս դիմադրությունը։*

*ՕՇԻՆ— Անգամ մը բարձրացուցեր եմ այս դրոշակը, անգամ մը հանձն եմ առեր այս պետության պաշտպանությունը, Լևոնի ժառանգությունը և Լևոնը ինքը. խնամակալ եմ ու հայրացում. պետք է խաղամ իմ դերս մինչև վերջը. ո՞ւր թողնեմ, որո՞ւն թողնեմ, ինչպե՞ս թողնեմ, ինչպե՞ս լքեմ թագավորը։*

*ՄԽԻԹԱՐ— Բայց կըսես՝ իզուր է, անխուսափելի։*

*ՕՇԻՆ— Միևնույն է ատիկա։*

ՄԽԻԹԱՐ— Եվ քո կյանքդ է վտանգի տակ, որ պետք է խնայես։

ՕՇԻՆ— Մինչև հիմա իմ կյանքս զինանշան մըն էր ու թանկ էր. արժեր, որ պաշտպանեի ու խնայեի։ Հիմա այլևս պարապ է հոգիս, պատռտած է զինանշանը. ալ ի՞նչ արժեք ունի այդ կյանքը, որ խնայեմ։ Հաշիվներս սխալ տեսա. այս տեսակի սխալները չեն սրբագրվիր. սխալները կվճարվին։

ՄԽԻԹԱՐ— Սարսափելի է, Աստվա՛ծ իմ, ի՞նչ պիտի ըլլա այս ամենուն հետևանքը

5

Վարագույրը արագ կբարձրացնե նախորդ սպան և այլայլած կնետվի ներս ու կմնա անխոս։

ՕՇԻՆ— (Ոտքի ելլելով) Ի՞նչ է պատահածը։ Խոսե՛։

Սպան— Տե՛ր, թագավորը...

ՕՇԻՆ— Ո՞ւր է թագավորը։

ՍՊԱՆ— Փախա՛վ։

ՄԽԻԹԱՐ— Ի՞նչ։

ՍՊԱՆ— Պարտեզի կողմի քարած դռնեն. ամբողջ խումբ մը հետ անցան հակառակորդին կողմը. հանկարծ, արագ ու անսպասելի, առաջվընե կարգադրեր էին ամեն ինչ։

ՕՇԻՆ— Ատոր համար էր ուրեմն այս ձախ թևի հարձակումը, որ այս կողմը ըլլա մեր ուշադրությունը։ (Գլուխը բանալով) Տիրոջ կամքը օրհնված ըլլա։ Ահա՛, Մխիթա՛ր, վերջացավ իմ դերս։ Տարօրինակ զգացում է, և՛ թեթևացում, և՛ անէացում։ Ալ հոգ չունիմ։ Եվ ալ չգիտեմ ինչո՞ւ կապրիմ։

6

Դուրսը իրարանցում, և ամենուն ուշադրությունը կուղղվի այն կողմ։ Երկու զինվորական՝ խումբ մը զինվորներով, կբերեն ներս երեք ճոզի, որոնցմե մեկը նախկին գործավարն է Օշինի։

ԶԻՆՎՈՐԱԿԱՆԸ— Ավա՛գ իշխան, ներկայացան մեծ դուռը, թե խոսիլ կուզեն ավագ-պարոնին, երեքն ալ անզեն։



ՕՇԻՆ— (Գործավարին) Դո՞ւն։ Եկա՛ծ ես խոսելու։ Կա՞րճ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Գիտեմ, որ ավագ իշխանը գործի ժամանակ ավելորդ խոսքերը չի սիրեր։ Ընտրեցին ինծի նվաստս, իբրև քեզի բարեկամ ու անձնվեր մարդ մը, միշտ քու բարիքդ ցանկացող։ Եվ իմ շրթունքովս Լևոն թագավորն է, որ կխոսի քեզի։ Լևոն թագավորը, որ հիմա իր հպատակներուն ու իր բարեկամներուն հետն է և իր հավատարիմ զինվորության գլուխը, կհայտնե քեզի, որ դուն դադրած ես քու խնամակալի պաշտոնեդ. և կպահանջե, որ ինծի հանձնես պետական կնիքը և բանաս անմիջապես պալատին դռները։

ՕՇԻՆ— Այդչա՞փ։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Ինծի այսչափն է պատվիրված։

ՕՇԻՆ— Աղե՛կ։ Ուրեմն կվերադառնաս ու կհայտնես Լևոն թագավորին իմ խորին երախտագիտությունս։

ԳՈՐԾԱՎԱՐԸ—Պատրաստ եմ հայտնելու։ Իսկ կնի՞քը, դռնե՞րը։

ՕՇԻՆ— Կնիքը կմնա հոն, ուր մինչև հիմա եղեր է. տեղը դուն ինծմե աղեկ գիտես, այն օրերեն, երբ այս նույն թափով ու նույն հավատարմությամբ, որով հիմա կծառայես ուրիշներուն, կծառայեիր ինծի։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Ես կծառայեմ իմ հայրենի թագավորությանս, իշխա՛ն։ Դուն էիր այս պետության գլուխը՝ կաշխատեի քու ձեռքիդ տակ. հիմա իմ թագավորս է, որ կանցնի պետության գլուխը, ինծի կմնա աշխատիլ իմ թագավորիս հրամանին տակ։

ՕՇԻՆ— Իրավունք ունիս. որուն ձեռքը, որ անցնին կառքին սանձերը, անոր կհպատակին լծված անասունները։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Իսկ դռնե՞րը, իշխան։

ՕՇԻՆ— Բնական է, Լևոն թագավորին չենք ստիպելու, որ վերադառնա իր հայրերուն գահը պարտեզներուն ետևի գոց ու քարած ծուռ դռներեն. կհոգանք ավելի փառավոր ընդունելություն մը։

ԳՈՐԾԱՎԱՐԸ— Թող ներե իշխանը. պարզ չեղավ ինծի խոսքերուդ միտքը։

ՕՇԻՆ— Ուրեմն կսորվեցնես քու մանուկ թագավորիդ, որ մյուս անգամ իբրև բանբեր ընտրե մեկը, որուն ականջները ավելի արթուն ըլլան, քան իր խիղճը։ (Ձեռքով վռնդելու շարժում մը կընե)։

Զինվորները կշարժվին դեպի դուրս, բանբերները իրենց առջևը ձգելով։ Անոնց ետև ելլել կուզե նաև թիկնապահներուն պետը։

## 7

ՕՇԻՆ— Թիկնապե՛տ։

ՊԵՏԸ— Հրամանդ, իշխա՛ն։

ՕՇԻՆ— Կժողվես իսկույն Կոռիկոսեն բերած իմ սեփական փոքրիկ գունդս. միայն մերոնք. քանի՞ հոգի եք։

ՊԵՏԸ— Քսանչորս, իշխա՛ն։

ՕՇԻՆ— Քեզմո՞վ։

ՊԵՏԸ— Այո՛, իշխան։

ՕՇԻՆ— Ինծմով կըլլանք քսանհինգ։ Պատրաստ եղեք, այս իսկ վայրկյանին ճամփա պիտի իյնանք դեպի Կոռիկոս։

ՊԵՏԸ— Քու գունդդ պատրաստ է, տե՛ր։

ՕՇԻՆ— Գնա՛։ (Թիկնապահը դուրս. Օշին խոսքը կուղղե երկու զորականներուն) Ես կմեկնիմ բերդի ու քաղաքի վարի դռնեն, որ դեռ ազատ է բոլորովին։ Բերդին վարի դուռը ետևես գոցվելուն պես, դուք երկուքդ ձեր ձեռքովը կբանաք բերդին ու պալատին բոլոր մյուս դռները և կերթաք թագավորի հրամանին։

Ա. ԶՈՐԱԿԱՆԸ— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ։ Անոնք այս արքունիքը առնել չեն կրնար. թող գան, նայիմ։ Անոնք մեր բերդերը առնել չեն կրնար. ձախ թեր հանկարծ եղավ, բնավ չէինք սպասեր, դիմադրություն ալ գրեթե չեղավ։ Հիմա թող գան, խնդրեմ։ Չեն կրնար, իշխա՛ն. ո՞ւր կերթաս. ինչո՞ւ կհանձնես. վաղը եղբայրդ կհասնի, ու կջարդենք անոնց բոլորին քիթ ու պռունգը։

ՕՇԻՆ— Անո՞նք։ Այսինքն՝ որո՞նց քիթ ու պռունգը. քու թագավորի՞դ։

Ա. ԶՈՐԱԿԱՆԸ— Բայց... բայց դո՞ւն, ավագ պարո՛ն։

ՕՇԻՆ— Ես ի՞նչ։ Չլսեցի՞ր թագավորիդ հրամանը. ես այլևս ավագ պարոն չեմ. և հոս այլևս գործ չունիմ։

Բ. ԶՈՐԱԿԱՆ— Ես քեզի չեմ թողներ, Օշի՛ն իշխան, ես քեզի լքել չեմ կրնար։

ՕՇԻՆ— Ալ պետք չունիս իմ մասին հոգալու։

Բ. ԶՈՐԱԿԱՆ— Ես մինչև հիմա քու հրամանիդ տակն եմ աշխատեր. ասկե ետքն ալ միայն քու հրամանները լսել կուզեմ։

ՕՇԻՆ— (Խիստ կտրուկ ու պաշտոնական) Իմ հրամանս արդեն լսեցիր։ Գացե՛ք, բացե՛ք իր պալատին դռները Լևոն թագավորին առջևը և խոնարհեցեք։ Անցե՛ք։

Զորականները զինվորական բարև կուտան ու կելլեն դուրս։



## 8

ՕՇԻՆ— (Դառնալով Մխիթարին) Հա՛յր սուրբ, մնացինք ես ու դուն. կմնա, որ մենք ալ բաժնվինք։ Մնաս բարո՛վ, Մխիթա՛ր։ Մտա այս պալատը հարուստ հույսերով ու ձգտումներով, լեցուն հոգիով. ծախսեցի ու մաշեցի բոլորը, ահա՛ կհեռանամ պարապ ձեռքերով։ Վատնված կյանք մը։

ՄԽԻԹԱՐ— Նվիրվա՛ծ կյանք մը։

ՕՇԻՆ— Անիծվա՛ծ կյանք մը։ Իսկ քեզի կցանկամ բախտավոր օրեր։

ՄԽԻԹԱՐ— Գալու են սև ու տխուր օրեր։

ՕՇԻՆ— Նայելով որո՞ւն։ Համենայն դեպս դուն անձնապես պատճառ չունիս դժգոհ ըլլալու։ Ահա՛ կուտամ քեզի վերջապես քու այնքան ցանկացած ազատությունդ։ Գնա՛ վանքդ, գնա՛ գյուղերը, գնա՛, թափառե՛, երգե՛ ու աղոթե՛ ու երջանիկ եղիր։ Մնա՛ս բարով։

Կբռնեն իրարու ձեռք. ու ձախ ձեռքերնին իրարու ուսին դրած կմնան վայրկյան մը լուռ աչք-աչքի։

ՄԽԻԹԱՐ— Աստված քեզի հետ, Օշին իշխա՛ն։

ՕՇԻՆ— (Հեգնոտ) Հայոց թագավորին պալատը կհանձնեմ քեզի, Մխիթա՛ր հայր սուրբ։ Այսպես է խեղկատակ բախտը. կուտա չուզողին։ (Դուրս)։

## 9

ՄԽԻԹԱՐ— Իսկ ես կհանձնեմ քեզի, Տե՛ր, ամենակալ ու ամենազոր. կհանձնեմ քեզի հայ թագավորին այս տունը. անպակաս ըրե իր վրայեն քու սուրբ աչքդ. և մեր վրայեն. այս դժբախտ, այս չարչարված, այս պառակտված ժողովուրդին վրայեն։

Դուրսը կլսվի հեռավոր աղմուկ ոտքի ու զենքի և խոսակցության, որ հետզհետե կմոտիկնա։ Մխիթարը կցնցվի, կընդհատե աղոթքը ու ականջ կդնե առանց շատ դիրքը փոխելու։ Բայց քիչ-քիչ կշտկվի և կկենա ուղիղ՝ երեսը դեպի վարագույրները դարձուցած։

Դուրսեն նախ կանցնին խումբ մը զինվորներ աջեն ձախ զինվորական քայլով. անոնց ետևեն քանի մը հոգի։

ՁԱՅՆԸ ՄԸ— Բռնեցե՛ք մուտքերը. բոլո՛ր մուտքերը։ Դուք հո՛ս, սանդուղին գլուխը։

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ ՄԸ— Անզգամները մտեր են ծակը։ Զգո՛ւյշ, զգո՛ւյշ. զենքերը մի՛շտ պատրաստ։

ՁԱՅՆԸ— Բա՛ց սա վարագույրները։

Երկու հոգի արագ կբանան սյուներուն մեջի բոլոր վարագույրները. սենյակը կդառնա սանդուղներու ստորոտին շարունակությունը: Ներս կմտնե սենյակը սպա մը մերկ սուրը ձեռքին:

ՍՊԱՆ— (Մխիթարին) Ո՞վ ես դուն։

ՄԽԻԹԱՐ— Կտեսնե՛ս, բարեկա՛մս. եկեղեցիի սպասավոր մը։

ՍՊԱՆ— Բայց ի՞նչ կընես հոս։

ՄԽԻԹԱՐ— Կսպասեմ Լևոն թագավորին։

ՍՊԱՆ— (Խիստ) Թագավորին կսպասեն դուրսը և ո՛չ վարագույրներուն ետևը։ Տարե՛ք մյուս կալանավորներուն քովը։

Կուգան երկու զինվոր ու իրենց առջևը ձգած կտանին վարդապետը առանց ձևով տալու կամ որևէ վիրավորանքի:

Սանդուղին առջևը իրարու դեմ կուգան աջեն ու ձախեն շարժվողները։

ԱՋ ԽՈՒՄԲԵՆ ՄԵԿԸ— Չկա՞։ Չգտա՞ք։

ՁԱԽԵՆ ՄԵԿԸ— Փախեր է։

ԱՋԵՆ ՁԱՅՆ ՄԸ— Ո՞ւր պիտի փախչի։ Փնտրեցե՛ք. պահված կըլլա։

Ու կանցնին ամեն մեկը իր ուղղությամբ:

ՁԱՅՆԵՐ— (Դուրսեն) Կեցցե՜... բռներ են, բռներ են։

ՄԵԿԸ— (Ներսեն) Բռնե՞ր են։ Պայլը բռնե՞ր են։

ԴԻՄԱՑԻՆԵՆ ՈՒՐԻՇ ՄԸ— Ո՛չ, ո՛չ, ան չէ. ես կճանչնամ։

ՆԱԽՈՐԴԸ— Իհարկե որ կճանչնաս. հոգիդ հաներ է։

ԴԻՄԱՑԻՆԸ— Ա՛յ թե հիմա աչքիս իյնա։

ՔՈՎԵՆ ՄԵԿԸ— Աչքդ վկա։ Ան յոթը սարեն անդին է հիմա. վազե՛, որ բռնես։

ՆԱԽՈՐԴԸ— Շան որդին, փախե՞ր է կըսես։

ԽՈՒԼ ԱՂՄՈՒԿ— (Աջեն ու հեռուեն) Կեցցե՜, կեցցե՜ թագավորը... կեցցե՜ թագավորը...

Ամենքը կդառնան դեպի աջ, ամեն կողմեն ետ կուգան ու կխռնին սանդուղներու և սյուներու մեջտեղի տարածության վրա:

ՄԵԿԸ— (Խռնումին մեջեն): Ի՛նքն է, ի՛նքը՝ թագավորը, Պոհեմունտին ետևեն։



ՔՈՎԻՆԸ— Հա՛, պարո՛նը. Սիր-Ատանն ալ։

ՆԱԽՈՐԴԸ— Ո՞վ է քովինը։

ՁԱՅՆ ՄԸ— (Բազմության մեջեն բարձր ու հնչեղ) Կեցցե՜ Լևոն թագավորը։

ԲՈՂՄՈՒԹՅՈՒՆԸ— Կեցցե՜...

ՊԱՇՏՈՆՅԱ ՄԸ ԲԱՐՁՐԱԴԻՐ— (Աջեն գալով և իրար անցած) Ճամփա բացեք թագավորին։

ՁԱՅՆ ՄԸ— Թագավորը իր պալատը կուգա։

ՈՒՐԻՇ ՄԸ— Եվ հաղթակա՜ն։

ՁԱՅՆԵՐ— Ե՛տ, ե՛տ. տեղ բացե՛ք։

## 10

Բազմությունը երկուքի կճեղքվի:

Ծափերու, կեցցեներու, ոգևորության և աղմուկի միջով նախ կուգա վաշտ մը զինվոր, որ կբարձրանա սանդուղներեն. ետևեն թագավորական զինանշանը, ետևեն խումբ մը բարձրաստիճան անձեր սուրեր մերկ. ետևեն Լևոն թագավորը իշխան Սարգիսի ու Սիր-Ատանի մեջտեղեն. թագավորին ետևեն նորեն իշխաններու, պաշտոնյաներու և զորականներու բազմություն մը, այլև քանի մը լատին հոգևորականներ. ետևեն թիկնապահ գունդ մը:

Հառաջապահ զինվորներուն մեկ մասը սանդուղը բարձրանալով վերեն կերթան ներս, մեկ մասը կմնա սանդուղին գլուխը շրջանաձև: Սանդուղի միջին հարթակի վրա կանգ կառնե արքայական զինանշանը կրողը և անոր շուրջը կխռնին ընտրանին: Զինանշանին տակ կկենա թագավորը: Հարթակեն վար սանդուղի երկու կողմը կշարվին թիկնապահ զինվորները, իսկ պաշտոնյաներուն մեծագույն մասը կխռնին սանդուղներուն ստորոտը:

ՄՈՒՆԵՏԻԿԸ— (Առաջ կուգա հարթակին եզերքը՝ ձեռքը լռության շարժումով մը վեր բռնած) Կկանչեմ հայ թագավորության պարոնները, դուքսերը, իշխանները, բոլոր վասալները. կկանչեմ հոգևոր պետերը, զորքերուն պետերը, պաշտոններուն տերերը և ամբողջ ժողովուրդը։ Կկանչեմ, լսեցե՛ք։ Ձեզի կխոսի Օշինի որդին՝ Լևոն թագավորը։ (Կդառնա ու խոնարհություն կընե թագավորին):

ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ— (Խորին լռության մեջ քիչ մը կենալեն ետքը հստակ ու կտրուկ) Կհայտարարեմ իմ թագավորությանս բոլոր վասալներուն, բոլոր իշխաններուն, հոգևոր թե աշխարհիկ, բոլոր հրամանատարներուն ու պաշտոնյաներուն, որ այսօրվընե լուծած եմ խնամակալությունը գահիս վրայեն, որ այսօրվընե ես իմ ձեռքս եմ առած թագա-

վորությանս բոլոր գործերուն ղեկավարությունը. ես եմ իմ աշխարհիս տերը և թագավորը։

ԱՄԲՈՂՋ ԸՆՏՐԱՆԻՆ— (Ձեռքերը շարժելով և մեծ ոգևորությամբ) Կեցցե՛ Լևոն թագավորը։

ԶՈՐՔՆ ՈՒ ԱՄԲՈԽԸ— Կեցցե՛...

ԼԵՎՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ— (Երբ նորեն խոր լռություն և հանգիստ կիջնե) Կհայտարարեմ իմ իշխաններուս, զորականներուս և պաշտոնյաներուս, որ զորքերուս սպարապետությունը այսօրվընե կհանձնեմ իմ սիրելի և հորամույն մեծ իշխանին, պարոն Պոհեմունտին, որ կդառնա մարաջախտ։ Կանվանեմ իմ մշտական խորհրդականս կոմս Սիր-Ատան, որ կդառնա ջամպելայն։ Մշտական խորհրդականս կանվանեմ նաև Կոպիտառի տերը՝ Սարգիս իշխանը։ Պալատիս, ինչպես և թագավորությանս ներքին ապահովությունը կհանձնեմ իմ անձնվեր բարեկամիս, Ասկուռի տեր Հալկամ իշխանին, որ կդառնա սենեշալ։ Բոլոր դրամական հաշիվներուն հսկողությունը կհանձնեմ Հայր դը Լաթուրին, որ կդառնա պրաքսիմոս։ Իսկ հայր Ներսես Պալոնց վարդապետը կնշանակեմ քարտուղար պալատիս, որ է ջանցլեր։ Եվ կհրամայեմ ամեն մեկուն ասոնցմե, որ անցնին անմիջապես իրենց պաշտոններուն գլուխը, կուզեմ, որ տիրե կարգը, հանգիստը և արդարությունը իմ թագավորությանս մեջ։

ԽՈՒՌՆ ՈՒ ԽԱՌԸ ՁԱՅՆԵՐ— Ամե՛ն... ամե՛ն...

ՈՒՐԱԽ ՈՒ ԲԱՐՁՐ ՁԱՅՆ ՄԸ— Շնորհավո՛ր նոր պաշտոնները։

ԲԱԶՄԱԹԻՎ ՁԱՅՆԵՐ— Շնորհավո՛ր... շնորհավո՛ր...

Թագավորը ավագանիին հետ կբարձրանան սանդուղներեն վեր, անոնց ետևեն ալ թիկնապահ զորքերը: Իշխաններեն քանի մը հոգի դեպի վար կուգան: Վար եկողներուն մեջն է Հալկամ իշխանը, որուն կմոտենան շատերը վարի բազմութենեն, կսեղմեն ձեռքերը ու կշնորհավորեն: Զորավարի մը հետ կհամբուրվին: Ու քիչ-քիչ վարի բազմությունն ալ կքաշվի աջ ու ձախ:

## 11

Մաքսուտ Երանի քաշելով Ճոսլին Անհողի թևեն՝ կբերե սպասումի սենյակը։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Բաժնեցի՛ն, տեսա՞ր. մեծերը իրենք իրենց մեջ բաժնեցին. և նորեն ես ու դուն դուրսը։ Երբ պետք է կռվեցնեն, վազցնեն, գլուխդ փորձանքի մեջ նետեն՝ մենք ալ մարդու կարգ կանցնինք, մեզի ալ կկանչեն, փիսիփիսի. գործը վերջացավ մի՝ փի՛ստ։

ՃՈՍԼԻՆ ԱՆՀՈՂ— Մի՛ վախնար. կստանաս, դուն ալ քու ոսկորդ կստանաս։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Ոտքերս կստանաս։ Շուն են, կխաբեն, կխաբեն. հիմա ալ ասոնք պիտի հեծնեն մեր մեջքը։ Շուն են, չհավտաս։ Դուն նորեն նույն անհողն ես մնալու, ինչ որ եղեր ես միշտ, ես ալ նորեն՝ նույն անկուտին։



ՃՈՍԼԻՆ ԱՆՀՈՂ— Հապա՛, թող փորձեն. այս շենքը իրենց գլխուն կփլցնեմ։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— Իրա՞վ։ Դուն ի՞նչ ես որ. ո՛ւժդ ինչ է որ։ Մենք գլուխը չենք, որ կոտոշ ունենանք, մենք ոտքերը չենք, որ սմբակ ունենանք. գիտե՞ս մենք ինչ ենք. մենք պոչն ենք, պոչը։

## 12

Սյուներուն մեջ կերևա Հալկամ իշխանը քանի մը զորականներու հետ:

ՀԱԼԿԱՄ— (Դեպի դուրս) Հազարապե՛տ, պալատին այս մուտքը կհանձնեմ քու հսկողությանդ։ Առանց քու գիտության ո՛չ մեկը, կհասկընա՞ս, ո՛չ մեկը, ո՛չ ներս է մտնելու և ո՛չ ալ դուրս գալու։ Ամեն քիչ-միչ կասկածելի անձ կբերես ինծի։ Ա՛յ, ես կըլլամ հոս, ամենեն հարմար տեղն է։ (Կմտնե սպասումի բաժինը) Հա՛, դուք եք հոս. պիտի գրավեմ ձեր անկյունը. կներեք, զինվորական վիճակ է։

ՃՈՍԼԻՆ— Խնդրե՛մ, խնդրե՛մ, իշխան Հալկամ։ Նախ բոլոր սրտովս կշնորհավորեմ քու այդ նոր բարձր պաշտոնդ, որուն իրավ որ միայն դուն էիր արժանի։ Եվ ինքզինքս կդնեմ քու տրամադրությանդ տակ. քեզի համար գիտես որ պատրաստ եմ ամեն ինչի։

ՀԱԼԿԱՄ— Շնորհակալ եմ. տեսնեմ, կջանամ, բան մը կընենք։ Իսկ առայժմ կխնդրեմ, որ ձգեք մեզի առանձին, խոսելիք ունիմ զորավարին հետ (ցույց տալով իր ետևեն եկող երկու զորականները): Եվ կխընդրեի, որ ձեր հեռանալեն առաջ՝ գոցեիք սա վարագույրները։

ՄԱՔՍՈՒՏ ԵՐԱՆԻ— (Ծաղրով, ընկերոջը) Տեսա՞ր. աս ալ մեր բաժինը։

Վարագույրները կքաշեն ու դուրս:

## 13

ԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ— (Գրեթե պատանի, կխոսի մեծ ջերմությամբ) Ի՛նչ հաղթություն, Հալկա՛մ, ի՛նչ հաղթություն։ Փառավոր հաղթանակ, լիակատար. հաղթել ասանկ կըլլա. ասոր կըսեն՝ եկա՛, տեսա՛, հաղթեցի՛։

ՀԱԼԿԱՄ— Բայց Օշինը փախավ. ատիկա մեծ թերի է. պետք չէ ձգեինք մեր ձեռքեն։ Վարի մուտքերը չխցկեցինք. սխալ էր։

ՀԻՆ ԶՈՐԱՊԵՏ ՄԸ— Բոլոր մուտքերը երբեք չեն խցկեր, իշխա՛ն Հալկամ. հին պատերազմական օրենք է. միշտ փախուստի ճամփա մը պետք է թողնես պարտվածին։ Եթե վարի դուռները բռնեինք՝ այսպես դյուրին և այսպես աժան չէինք գրավեր պալատը։ Փախուստի ելք մը ձգելը պայման է միշտ հաջողության։

ՀԱԼԿԱՄ— Ուրեմն դուն տեսար աչքովդ, երբ կփախչեին։

ՀԻՆ ԶՈՐԱՊԵՏԸ— Այո՛, աշտարակեն, թեև արդեն հեռու էին։

ՀԱԼԿԱՄ— Ինչքա՞ն կըլլային։

ՀԻՆ ԶՈՐԱՊԵՏԸ— Երեսուն, քառասուն։

ՀԱԼԿԱՄ— Միա՞յն։ Աղե՛կ։ Ես անիկա ձեռքես բաց չեմ ձգեր։ Պետք է բռնվի, քանի դեռ եղբորը հետ չէ միացեր, ինչ գնով կուզե ըլլա։ Պետք չէ իրեն ժամանակ տանք, որ խելքի գա։ Զորավար, իսկույն երեք հարյուր ձիավոր կդնես Արտակի հրամանին տակ, կազմ ու պատրաստ, քու լավագույն կտրիճներեդ, ամենեն խիզախ։

ՀԻՆ ԶՈՐԱՊԵՏԸ— (Վարանոտ ուսերը ցնցելով) Ինչպես որ կհրամայես։

ՀԱԼԿԱՄ— Դե՛, գնա՛ շուտ ու կարգադրե, վայրկյան մը պետք չէ կորսվի։ (Զորավարը դուրս): Արտա՛կ, լսեցի՞ր։ Օշինը բռներ է Ատանայի ճամփան։ Գիտես ի՞նչ սպառնալիք է մեր գլխուն։ Ահա՛ իր գլուխը կհանձնեմ քեզի, և միայն քեզի։ Այդ հին զորավարներուն վստահություն չունիմ. կամ դանդաղ են, կամ վարանոտ, կամ գութ ունին, կամ վախ ունին։ Ինծի պետք է քեզի պես կտրիճ մը, որ իր սրովը իր ճամփան բանալ կուզե։ Իսկ քեզի պետք է կենդանի ու հանդուգն գործ, քեզի պետք է կռիվ, ոստյուն, փառք ու բարձրացում։ Այդպես չէ՞։

ԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ— Հապա ալ ինչո՞ւ կապրինք. հապա ալ ինչո՞ւ ենք աշխարհ եկեր, իշխա՛ն։

ՀԱԼԿԱՄ— Ահա՛ քու բախտը կդնեմ քու ձեռքդ։ Ա՛ռ այդ կտրիճները ու գնա՛. ջախջախես պիտի այդ օձին գլուխը։ Կհասկնա՞ս ինչ կըսեմ։

ԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ— Կրկնելու պետք չունիս։ Ցտեսություն։

ՀԱԼԿԱՄ— Կեցի՛ր։ Բանի մը պետք ունի՞ս։

ԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ— (Սյուներուն մեջեն) Շա՛տ. կհաշվենք, երբ վերադառնամ, երբ իր գոռոզ գլուխը նետեմ ոտքերուդ տակ։ (Կդառնա, որ դուրս ելլե, դեմ-դեմի կուգա թագուհիին հետ, կխոնարհի ու կշտապե դուրս):



## 14

Կմտնե Ալիս թագուհին, հետը երկու պահակ։

ԹԱԳՈՒՀԻՆ— (Դժգույն ու դողդոջ) Ըսին ինծի, որ դուն ես հոս տնօրենը։

ՀԱԼԿԱՄ— Այո՛, թագուհի՛. այդպես է Լևոն թագավորին հրամանը։

ԹԱԳՈՒՀԻՆ— Իսկ ո՞ւր է հայրս։

ՀԱԼԿԱՄ— Հա՞յրդ։ Չգիտեմ, թագուհի։ Մենք ալ հիմա ճիշտ քու հայրդ փնտրելու վրա ենք։ Կգտնենք. ասեղ չէ, որ կորչի։

ԹԱԳՈՒՀԻՆ— Ես քեզի կհարցնեմ, ո՞ւր է Օշին թագավորահայրը։

ՀԱԼԿԱՄ— Իսկ ես հիմա քեզի ուրիշ բան մը պիտի ըսեմ, քանի որ ինքդ ոտքովդ եկեր ես ինծի։ Քեզի դեմ, իբրև մեր թագավորի կողակցին դեմ, շատ ծանր ամբաստանություններ կան։

ԹԱԳՈՒՀԻՆ— Ի՞նչ։ Ինչե՞ր կխոսիս։

ՀԱԼԿԱՄ— Շատ ծանր մեղադրանքներ։ Մինչև այդ բոլորը քննվին, մինչև դատավորները իրենց վճիռը տան, դո՛ւն, թագուհի՛, Լևոն թագավորի հրամանովը ձերբակալված ես։

ԹԱԳՈՒՀԻՆ— (Կեցած է շիտակ, քարացած, աչքերը խոշոր բացած ու ձեռքերը առաջ):

ՀԱԼԿԱՄ— (Դեպի դուրս) Հազարապե՛տ։ (Երբ վերջինը կերևա սյուներուն մեջ) Առաջնորդե թագուհին աշտարակի կապույտ սենյակը։ Կղրկվի քեզի, թագուհի՛, ինչ որ պետք է. միայն ոչ ոքի հետ պետք չէ տեսնվիս. և առանց թույլտվության դուրս գալու իրավունք չունիս. ուրիշ ոչինչ։ (Դուրս):

Թագուհին թեթև մը կերերա, քայլ մը ետ կընե քայլ և գետին իյնալու վրա է, որ պահակները առաջ կնետվին ու կգրկեն: Թևերեն մտած կհանեն դուրս:

## 15

Նույն միջոցին խոսելով առաջ կուգան Սիր-Ասան ու նոր արարողապետը:

ՍԻՐ-ԱՍԱՆ— (Գլխովը թագուհիին կողմը ցույց տալով) Ասոնք գործի տխուր կողմերն են։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Խե՛ղճ կին, այո՛, բայց պետք է։

ՍԻՐ-ԱՍԱՆ— Անտարակույս, Լևոն թագավորին առջևը ճամփան պետք է մաքրվի։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Նոր թագավորին նոր թագուհի։ Պետք է Արևմուտքեն հարս մը, իսկական թագուհի։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Իհարկե. ազնիվ արյունով, նոր պայմաններուն նոր կապեր։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Նո՛ր, նո՛ր, ամե՛ն ինչ նոր և ամե՛ն ինչ արևմրտյան։ Աստվա՛ծ իմ, ինչպես վայրենի է հոս ամեն բան. պետք է փոխել, ազնվացնել։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Ահա՛, իշխա՛ն, ատոր համար կանչված ես՝ պալատը մեր ոտք դրած օրեն. գործի դիր քու հին փորձառությունդ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Այո՛, երկար տարիներ աշխատած եմ Տյուրոսի արքունիքին մեջ, վերջն ալ Կիպրոս Կամակուստայի արքունիքը։ Կճանչընամ, Սի՛ր, Արևելքը. և ջանացեր եմ բոլոր ուժերս ի սպաս դնելու՝ մեղմելու համար արևելյան կոպտությունը, գոնե մասամբ պատրաստելու համար, ներարկելու համար մեր լատին բարքերը, մեր ֆրանկ լեզուն, մեր ուտելիքը, մեր հագուստները, մեր նիստն ու կացը, մեր ծեսերը, հանդեսները։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Այո՛, հանդես մը. պետք է անմիջապես պալատական փառավոր հանդես մը, պարերով, ներկայացումով ու պերճ խնճույքով, որ ամենքը զգան, թե այն հին փտտած բաները անցան, թե եկած են նոր մարդիկ ու նոր կարգեր, թե հիմա իսկապես պալատ մըն է ասիկա, արքայի մը ապարանքը, արևմտյան արքունիք մը։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Դուն ատիկա ձգե ինծի։

ՍԻՐ-ԱՏԱՆ— Մանավանդ որ պետք է ներկա ըլլա և մոնսենյորը։ Հա՛, տես, մոռցա. աբբա հայրը պետք է տեսնեի։ Իսկույն պետք է մարդ ղրկել։

Կդառնա, որ դուրս ելլե, կմտնե Ռիթա Ամորի, զինվորականի մը առաջնորդությամբ։

## 16

ՁՈՐԱԿԱՆԸ— Հալկամ իշխանը հոս չէ՞։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԸ— Նոր դուրս ելավ։ Իսկույն կանչեմ, դքսուհի Ամորի Լուսինյան։ (Դուրս):

ՍԻՐ-ԱՏԱՆ— Դքսուհին եթե կհաճի նստիլ։ Կշնորհավորեմ բոլոր սրտովս։ Դուն հիմա իրավամբ իրավունք ունիս հպարտ ըլլալու, այս ամենուն մեջ մեծ է քու ազդեցությունդ։ Արդար ըլլալու համար՝ այս պալատը այլևս քուկինդ է. և կհուսամ շատ շուտով մեծ բախտը կունենանք ամենքս ողջունելու հոս քու ազնիվ ամուսինդ՝ ժուան մեծ դուքսը։ (Կմտնե Հալկամ) Ինծի կներե դքսուհին։ (Դուրս):



ՀԱԼԿԱՄ (Հանգիստ առաջ կուգա և լուրջ կխոնարհի հարգանքով) Կոմսուհի Ամորին ինծի է հարցուցեր։ Պիտի խոստովանիմ՝ մեծ անակընկալ մըն է։ Արտասովոր պատիվ մը, որ մեր հաղթանակի այս առաջին վայրկյաններուն հիշեր է ինծի իշխանուհին։

ՌԻԹԱ— Իշխան, ո՞ւր է պայլը, ո՞ւր է Օշին պայլը։

ՀԱԼԿԱՄ— Աստված է վկա, բախտավոր մարդ է այդ Օշին պայլը։ Այսօր ինծի հանդիպող բոլոր կիները Օշին պայլը կհարցնեն։

ՌԻԹԱ— Իսկ ո՞ւր է ան։

ՀԱԼԿԱՄ— Ա՞ն: (Հեգնոտ) Քանի քեզի կճանչնամ՝ անոր անունն է քու շրթունքիդ և անոր անունն է քու հոգիիդ մեջ։ Չկա՛, չկա՛ այլևս Օշին պայլ. հիմա փոշի մըն է անիկա մեր ոտքերուն տակ. փշացած, ջնջված, ճզմված զեռուն մը մեր կրունկներուն տակ։ Թո՛ղ, ալ հերիք է. նայե՛ շուրջդ. տե՛ս, այլևս մերինն է և՛ իշխանությունը, և՛ թագավորը, և՛ պալատը. և ես եմ հիմա հոս տերը։

ՌԻԹԱ— Գիտեմ. և ատոր համար է, որ եկեր եմ քեզի. ո՞ւր է Օշին պայլը։

ՀԱԼԿԱՄ— Ալ ի՞նչ կուզես իրմեն. չէ՞ որ խորտակված է։

ՌԻԹԱ— Այո՛, բայց կապրի՛։ Ես կուզեմ իր մահը, և ի՛մ հրամանովս, ի՛մ աչքերուս տակ։

ՀԱԼԿԱՄ— Դքսուհի Ամորի՛, ճիշտ խոսքը կուզե՞ս. այս վայրկյանիս կուզեի ես ըլլամ այդ հաղթված, այդ զզվելի փախստականին տեղը։ Ինչ բախտավոր է այդ սրիկան, որ բռներ է այդպես պինդ քու խելքդ ու միտքը։ Ես կուզեի, որ ինծի ալ այդպես ատես. ատե՛ս, բայց կապվիս. այդպե՛ս կապվիս։

ՌԻԹԱ— Ըսե՛, իրա՞վ է, որ կենդանի է։

ՀԱԼԿԱՄ— Կենդանի է, սակայն մի վախնար, չի ազատվիր մեր ձեռքեն։ Միայն թե դուն այլևս պիտի չտեսնես այդ մարդուն երեսը, պետք չէ նայիս անոր աչքերուն. երբե՛ք։ Գուցե հիմար է ըսած խոսքս, բայց կնախանձիմ, կըմբռնե՞ս, կնախանձիմ պարզապես։

ՌԻԹԱ— Ուրեմն զրկել կուզես ինծի իմ միակ զենքես։

ՀԱԼԿԱՄ— Ի՞նչ։

ՌԻԹԱ— Չե՞ս թողնելու, որ ազատվի հոգիս վերջապես իր կապանքեն։ Եվ դուն կըսես թե սիրեր ես ինծի ու հիմա ալ՝ թե կնախանձիս, ա՞ս է քու սերդ։

ՀԱԼԿԱՄ— Ի՞նչ է քու միտքդ, ա՛յ կին։ Զարհուրելի հոգի ունիս դուն։ Բացառիկ կին էիր, առաջին օրեն գիտեի, բայց անըմբռնելի մութ

Հոգի մը ունիս, մարդ ճամփան կկորսնցնե։ Ի՞նչ է հիմա ուզածդ։ Ատել կհասկնամ, վրեժ լուծել նույնպես կհասկնամ, մարդ ենք բոլորս ալ. բայց այն վրեժխնդրությունը, ինչ որ քու հոգիիդ մեջն է, հիվանդոտ բան մըն է, անբնական, անհասկնալի։

ՌԻԹԱ— Նախ օգնե ինծի, կհասկնաս վերջը։

ՀԱԼԿԱՄ— (Հանկարծ) Աղե՛կ։ Կառաջարկեմ քեզի փոքրիկ առուտուր մը, եթե տամ քու ձեռքդ այդ մարդուն մահը, ի՞նչ պիտի ըլլա քեզմե իմ ստանալիք փոխարենը։

ՌԻԹԱ— (Կտրուկ) Որոշե գինը ինքդ։ Ի՛նչ որ ուզես, ի՛նչ որ ուզես. անսահման իրավունք։

ՀԱԼԿԱՄ— Ռիթա, կհասկնա՞ս խոսքերուդ իմաստը։ Կըմբռնե՞ս ինչ կխոստանան շրթունքներդ։

ՌԻԹԱ— Շրթունքներս կխոստանան, ինչ որ հոգիս կհասկնա, գիտե ու կուզե։

ՀԱԼԿԱՄ— Եվ կուզե՞...

ՌԻԹԱ— Չե՛ս զգար, ա՛յ կույր, որ այս բոլորը քեզի համար կընեմ։

ՀԱԼԿԱՄ— Ինծի՞ համար, որ միշտ արհամարհեր ես ու վռնտեր։

ՌԻԹԱ— Այր մարդիկդ, որ ամեն բան հասկնալ կերևակայեք, չեք հասկնար արևուն տակի ամենեն պարզ բաները. աչքեր ունիք ու չեք տեսներ։ Այո՛, հեռու եմ պահեր քեզի ինծմե, որովհետև երդում եմ ըրած ատծո ահեղ դատաստանին օրովը՝ սեր չունենամ, բախտավորություն չունենամ, վայելք և ուրախություն չունենամ, մինչև որ աչքերուս դիմացը անոր մահը չտեսնեմ։ Հասկցա՞ր վերջապես, թե ինչու հիմա վազեր եկեր եմ մոտդ և թե ինչու այսպես կշտապեմ։ Ազատե՛ ինծի երդումես. դարձո՛ւր ինծի ազատությունս, բախտս ու կյանքին վայելքը տուր ինծի...

ՀԱԼԿԱՄ— Խե՛նթ են կանայք, կատարյալ խենթ են կանայք, ինչո՞ւ կուտայիր այդ տեսակ երդում. ի՞նչ երդում. ի՞նչ իմաստ։

ՌԻԹԱ— Այդ պարապ խոսքերը ձգե հիմա և օգնե, օգնե ինծի անմիջապես, եթե իրավ որ արժեք մը ունիմ ես քեզի համար։

ՀԱԼԿԱՄ— Արժե՞ք մը... (Ուրախ ոգևորությամբ) Այս վայրկյանիս հատուկ սուրհանդակ կհանեմ ամենախիստ հրամանով, որ սպասեն քեզի ու քու կարգադրությանդ։

ՌԻԹԱ— Շնորհակալ եմ։

ՀԱԼԿԱՄ— Բայց, Ռի՛թա, մեկ բացահայտ պայմանով. ինչ ալ որ ըլլա արդյունքը քու արշավիդ, վերադարձիդ դուն իմս ես։

ՌԻԹԱ— Կրկնելդ ավելորդ էր. արդեն տվի քեզի իմ բացարձակ պատասխանս. ի՞նչ կուզես ավելին։



ՀԱԼԿԱՄ— (Կմոտենա, դողդողուն կբռնե անոր ձեռքը և շեշտ նայելով աչքերուն) Այն ատեն... այն ատեն... թող որ անգամ մը շրթունքնե՛րդ...

Ռիթա աչքերը կգոցե ու կմնա անշարժ։ Հալկամ կգրկե, կհամբուրե ու կփաշվի ետ։

ՀԱԼԿԱՄ— Գնա՛։ Գնա՛ ու դարձիր շուտով. հետդ կդնեմ իմ լավագույն մարդիկս։ (Վարագույրը բարձրացնելով) Հազարապե՛տ, առաջնորդե դքսուհին փոքր ընդունարանը և ղրկե իսկույն Աշոտը ինծի։ Իշխանուհի՛ Ամորի, կուգամ քիչ մը հետո ինքս անձամբ ճամփա դնելու քեզի։ (Բարձր պահած է վարագույրը, ուրկե Ռիթան կանցնի դուրս)։

## 17

Հալկամ պահ մը կեցած է մինակ, անշարժ ու ճափշտակված, կռնակը վարագույրին և դեռ մեկ ձեռքով վարագույրին եզերքը բռնած։ Վերջը ծանր ու հաղթական քայլածքով կուգա առաջ։ Կմտնեն երկու բարձրաստիճան պաշտոնյաներ։

Ա. ՊԱՇՏՈՆՅԱՆ— Զբաղվա՞ծ է իշխանը. չխանգարե՛նք։

ՀԱԼԿԱՄ— Ո՛չ, ո՛չ, եկո՛ւր։ Եկո՛ւր, սիրելիս, ընդհակառակը։ Կըմտածեի։ Եվ գիտե՞ս՝ ինչ կմտածեի։ Ի՞նչ քաղցր բան է հաղթանակը. կյանքի հաղթանակը։ Երբ արգելքները մեկը մյուսի ետևեն կթափին վար, դռները կբացվին, պարիսպները կխոնարհին, և... ըմբոստ հոգիները կենթարկվին։ Հաղթե՜լ ու բարձրանալ. հաղթե՜լ ու պահանջել. հաղթե՜լ ու վայելել։ Աս է կյանքը. աս է կյանքի մեջ միակ արժեք ու հրապույր ունեցող բանը։ Արժե ապրիլ միայն այդ վայրկյաններուն համար։ Արժե ապրիլ միայն հաղթելու, հաջողելու համար։ Հոգիս այնպե՜ս ուռած է հիմա այս բոլոր արագ ու անհավատալի դեպքերեն, այս նետի պես վեր սլացող բարձրացումեն, որ հոգիս պտտալ կուզե ամբողջ աշխարհին, հնչեցնել կուզե ամենուն ականջին հաղթանակը, գովքը հաղթանակին։

ՊԱՇՏՈՆՅԱՆ— Իրավունք ունիս. ատոր մեջն է ուրախությունը. և ատոր համար է արդեն, որ կանայք ալ միշտ կդառնան հաղթողին շուրջը։

ՀԱԼԿԱՄ— (Դառնալով մյուս պաշտոնյային) Ինծի նայե՛. կհրամայես արքունի մառանապետին ամենեն ընտիր գինիները թող դուրս հանե այսօր, ամենեն հին ու փրփրուն գինիները իր հին ու մգլոտ մառաններեն։ Այսօր իրիկունը կուզեմ, որ մեր բոլոր ընկերները, մեր բոլոր

*թարենկամներն ու ամբողջ պալատը, կուզեմ, որ ուրախություն խմե այս իրիկուն և հաղթանակը հնչեցնե։ Կլսե՞ս, այս իրիկուն պալատին մեծ սրահը, ընթրիքի սեղանին վրա գինին պետք է գետի պես հոսի. մեր ուրախությունը, մեր հաջողությունը, մեր հաղթանակն ու խնդությունը հյուսվին հոսող գինիին ու հորդին, հորդին սեղանեն վար, սրահներեն վար, սանդուղներեն վար, պալատեն ու քաղաքեն ալ վար. հորդի, ուռի ու ողողե ամբողջ մեր աշխարհը, ամբողջ մեր թագավորությունը. մե՛ր թագավորությունը։ Ես մեր հաղթանակը տոնել կուզեմ։ Կեցցե՜ հաղթությունը...*

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԱՏԱՆԱ. ԼԱՏԻՆ ՎԱՆՔԻ ՄԸ ՊԱՐԶ ՍՐԱՀԸ

Ծակատը երկփեղկ դռներ, որոնք բաց են և կճաճեն նեղ ու փոքրիկ պատշգամը, որ բակին վրա կնայի:

Ձախի դուռը սովորական երբևեկի դուռն է. աջի մուտքը կտանի ներքին սենյակները:

Դեպի ձախ սեղան մը և պարզ աթոռներ: Սեղանի վրա երկու մոմ։ Քանի մը մոմեր պատերուն։

### 1

Գնդապետ Արտակ նստած է սեղանին առջևը. քովը աթոռին ուրիշ մը. տասնապետ մը կեցած է ոտքի:

*ԳՆԴԱՊԵՏԸ— Ո՛չ մեկը, ո՛չ մեկը, ո՛չ հոգևոր, ո՛չ աշխարհական։ Թող երթան-գան ետևի բակով։ Այս բակը ո՛չ ոք. ո՛չ ներս, ո՛չ դուրս։ Եվ ինչպես ըսի՝ մարդ պետք չէ գիտնա, թե ով է ներսը։ «Բակը գրավված է թագավորի հրամանով ժամանակավորապես». վերջացավ. ուրիշ ոչ մեկ բացատրություն* (Տասնապետը դուրս):

*ԸՆԿԵՐԸ— Բայց մեյ մը պատմե տեսնեմ՝ ինչպե՞ս եղավ ասիկա. ո՞ւր վրա հասաք։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Ամբողջ գիշերը հոգին հանեցի գունդիս, բայց, ա՛յ հետևանքը, գրեթե շարունակ ձիերը չափ ձգած են եղեր և ամենեն կարճուկ, անսովոր ճամփաներով. հետս հրաշալի առաջնորդներ ունեի։ Լուսաբացին Ատանայի մոտերն էինք, գրավել տվի ճամփան. մարդ ղրկեցի, որ հեռվեն դիտեն իր բռնած ուղղությունը և մոտեցան թե չէ՝ շրջապատված էին։ Ներկայացա ինքս և խորին հարգանքով հայտնեցի, որ ավելի առաջ երթալ չի կրնար, մինչև որ Լևոն թագավորեն հատուկ հրաման չգա։ Նայեցավ ինծի, նայեցավ մեր գրաված դիրքերուն, քիչ մը մտածեց ու ըսավ՝ ինքը կմնա, եթե իր մարդիկը ազատ ձգենք, որ մեկնին։ Ես ավելի ուրախ էի. և ան բոնի հարկադրեց իր մարդիկը, որ հեռանան և ինքը մնաց։*

*ԸՆԿԵՐԸ— Ատ ի՞նչ խելք է. ինչո՞ւ ճամփեց իր մարդիկը. ա՞ս է ձեր նշանավոր Օշին Պայլը։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Աստված որ ուզե մեկը պատժել՝ ամենեն առաջ անոր խելքը կառնե գլխեն։*

*ԸՆԿԵՐԸ— է, ե՞տքը։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Ետքը ի՞նչ։ Շրջապատեցինք ու առոք-փառոք բերինք այս լատին վանքը. ամենեն մոտիկն էր. վախցա, որ դուրսը եթե երկար մնա՝ կճանչնան, և ով գիտե ինչ կպատահի. ինքն ալ շուն մարդ է և իմ տղոցս մեջն ալ շատ կապը կտրածները կան. որ թողնեի՝ տեղնուտեղը շանսատակ կընեին։*

*ԸՆԿԵՐԸ— Է՜, ինչո՞ւ չթողիր. ինչո՞ւ կպահես, որ մեր գլխուն նորեն փորձա՞նք մը հանե։*

*ԳՆԴԱՊԵՏԸ— Ես ի՞նչ գիտեմ. ետևես հատուկ հրաման, հատուկ սուրհանդակ, որ անպատճառ ողջ բռնենք։ Հոս հասանք թե չէ՝ տարի ներսի սենյակը, իսկույն փռվեցավ բազմոցին վրա, վերարկուն քաշեց գլխուն ու անմիջապես քնացավ։ Մինչև հիմա ալ քնացած է։*

Բակեն աղմուկ կլսվի, ձիերու տրոփ. ընկերը դեպի պատշգամ կվազե ճայելու։

*ԸՆԿԵՐԸ— Ձիավորներ են։*
*ԳՆԴԱՊԵՏԸ— Երևի պալատեն։*
*ԸՆԿԵՐԸ— Կին մը կա մեջը։*
*ԳՆԴԱՊԵՏԸ— Վա՜յ. աղեկ նշան չէ։*

Երկուքը միատեղ դուրս կելլեն ձախեն: Վայրկյան մը պարապ, դուրսը խառն խոսակցություն: Ձախեն կմտնե իշխանուհի Ամարի և անոր ետևեն՝ գնդապետը խիստ ճարգալիր։

### 2

*ՌԻԹԱ— Ո՞ւր է։*
*ԳՆԴԱՊԵՏԸ—* (Աջի դուռը մատնանիշ) *Նե՛րսը։*
*ՌԻԹԱ— Մինա՞կ։*

ԳՆԴԱՊԵՏԸ— Անշո՛ւշտ։

ՌԻԹԱ— Սենյակն ու շենքը ապահո՞վ։

ԳՆԴԱՊԵՏԸ— Ոչ մեկ ելք փախուստի։

ՌԻԹԱ— Հսկողությո՞ւնը։

ԳՆԴԱՊԵՏԸ— Դքսուհին թող վստահ ըլլա իմ վրաս։

ՌԻԹԱ— Այո՛, պալատը մեծ վստահությամբ կխոսեին քու վրադ. և Հալիմ Իշխանը հատկապես հանձնարարեց, որ ամեն ինչ ընեմ քու օգնությամբ։

ԳՆԴԱՊԵՏԸ— Մեծ պատիվ է ինծի։

ՌԻԹԱ— Արդեն կեցվածքեդ ու աչքերեդ ալ կերևա, որ խելացի ու համարձակ մարդ ես. և շատ ուրախ եմ, որ քեզի պես արթուն մեկը ըլլալու է իմ աջակիցս։ (Տոցեն թուղթ մը հանելով) Կարդա՛։

ԳՆԴԱՊԵՏԸ— (Թուղթը արագ աչքե անցնելեն ետքը) Այո՛, դքսուհի՛ Ամորի, արդեն բերանացի ալ նույն հրահանգը բերած են ինծի, որ անպայման հետևիմ հրամաններուդ։ Կլսե՛մ։

ՌԻԹԱ— (Քիչ մը մտածելեն ետքը): Զենքը առա՞ծ ես ձեռքեն, թե դեռ վրան է։

ԳՆԴԱՊԵՏԸ— Զուցեցի ավելորդ խնդիր հանեմ. չուզեցի, որ կասկած ունենա, մանավանդ պատվիրած եմ՝ կռիվե խուսափիմ։

ՌԻԹԱ— Այո՛, բայց ստիկա քիչ մը անզգույշ գործ չէ՞։

ԳՆԴԱՊԵՏԸ— Ո՛չ, դքսուհի՛. ձեռքը սուր մը կա թե ոչ՝ կարևորություն չունի։

ՌԻԹԱ— Բայց ան քաջ մարդ է ու կռվի վարժ։

ԳՆԴԱՊԵՏԸ— Է՛, հետը մենամարտություն ըլլելու միտք չունենք։

ՌԻԹԱ— Բայց իր հաշիվը պետք է մաքրվի։

ԳՆԴԱՊԵՏԸ— Թող ատ ըլլա քու հրամանդ, ես գործը կկարգադրեմ շատ ավելի դյուրին ու անաղմուկ։

ՌԻԹԱ— Այսինքն... ինչպե՞ս...

ԳՆԴԱՊԵՏԸ— Օրինակի համար այս պատշգամբը. երբ քիչիկ մըն ալ մութը կոխե և երբ վառենք ներսի մոմերը, հոս կըլլա լույս և դուրսը մութ. դուրսը բակն է. բավական է, որ մոտեցնեմ մարդը դեպի պատշգամբ ու վերջացավ. կուզե առյուծի պես քաջ ըլլա և արջի պես ըմբիշ։

ՌԻԹԱ— Չհասկցա։

ԳՆԴԱՊԵՏԸ— Ներսեն դուրս աչքը շատ բան չի տեսներ, բայց դուրսեն ներս՝ հիանալի և վարը ունիմ աղեղնավորներ, որոնց նմանը Թուրքի հորդաներուն մեջ չես գտներ. ոչ մեկուն նետը իզուր չի թռչիր աղեղեն. բավական է, որ գլուխը երևա վարեն, վերջացավ, վայրկենական



ՌԻԹԱ— (Մտածկոտ) Այդպե՞ս։ (Կելլե կերթա դեպի պատշգամբ, կկենա, կնայի վար, կդիտե սենյակի այդ մասն ու կդառնա իր նախորդ տեղը): Այդպե՞ս։ Աղե՛կ։ (Կնստի ու քիչ մըն ալ մտածելե ետքը) Այդ բոլորը աղեկ. բայց նախ գործ ունինք կատարելիք։ Լսե՛ և փորցիր միայն դո՛ւն։ Քու նետերդ անոր գլխուն մեջ ցցելեդ առաջ՝ կան բաներ անոր գլխուն մեջ, որ պետք է հոնկե դուրս հանել. շատ կարևոր պետական գաղտնիք. կան և քանի մը շատ անհրաժեշտ թղթեր իմ հանգուցյալ կեսրոջս կալվածներուն, Կիպրոսի թագուհիին, որոնց պահված տեղը ան գիտե միայն։

ԳՆԴԱՊԵՏԸ— Հա՛, հիմա կհասկնամ, բայց շատ դժվար գործ է. չենք հաջողելու. ան լուռ է քարի պես և զարմանալի կերպով խուլ ու անտարբեր ամեն բանի։

ՌԻԹԱ— Ես ունիմ ձեռքս բանալիներ անոր հույսերը և սրտահոգությունը բանալու, իսկ եթե համառի՝ խնդիրը շատ կվերջանա։ Ինչպես որ ըսիր՝ որևէ կերպով մը իշխանը կբերեմ կմոտեցնեմ պատշգամբին, և այդ պարագային կուզեմ, որ ամեն ինչ կատարվի իսկույն, իմ աչքիս առջևը և առանց աղմուկի։

ԳՆԴԱՊԵՏԸ— Այդ կողմեն բոլորովին հանգիստ թող ըլլա դքսուհին. նետերու ամբողջ խուրձ մը, շունչ քաշելու ժամանակ չունենար և աղմուկ ալ չըլլար։

ՌԻԹԱ— Եթե խոսքդ պահել չկրնաս՝ գիտցիր, որ վրա կուտաս գլուխդ։ Եվ ափսո՜ս կըլլա քու այդ գեղեցիկ կերպարանքիդ ու կտրիճ երիտասարդությանդ և քու փառավոր ապագայիդ, որ ես արդեն հիմակվընե կնախատեսեմ։

ԳՆԴԱՊԵՏԸ— Իմ երիտասարդությունս, իմ կյանքս ու ապագաս անշուշտ որ քաղցր բաներ են, դքսուհի՛, որոնց համար արժե, որ մեր նետերը չվրիպին. բայց հիմա այդ բոլորեն բարձր քու խոսքդ կա, քու այդ տաք նայվածքդ և քեզի հաճելի ըլլալու իմ բուռն տենչանքս, որ երբեք, երբեք չի կրնար վրիպիլ։ Ամբողջ ժամանակ մեր աչքերը այս դռանն է ըլլալու, և մեր նետերը՝ մեր աղեղներուն։

ՌԻԹԱ— Շնորհակալ եմ քու ազնիվ զգացումիդ համար։ Իսկ եթե այնպես դարձավ խնդիրը, որ հաջողիմ համոզել և հարկ ըլլա առայժմ հետաձգել, այն ժամանակ ես ինքս իր հետը դուրս կուգամ այս ձախ դուռնեն ու կկանչեմ քեզի։ Կպատվիրես պահակներուն՝ ոչ ոք տեղեն չշարժի, և ինչ որ հրամայեմ քեզի, կկատարես անմիջապես. ինչ ալ որ պետք ըլլա, որ հրամայեմ. նույնիսկ եթե հրամայեմ, որ բանաք դռները և ձին տաք իրեն, որ հեռանա։

ԳՆԴԱՊԵՏԸ— Բայց... բայց եթե հանկարծ չվերադառնա՞։

ՌԻԹԱ— Այդպես միամիտ մի՛ ըլլար. դուրսը վրան խիստ հսկողներ կան. ատիկա արդեն մե՛ր գործը։

ԳՆԴԱՊԵՏԸ— Հրամանը քուկդ է, դքսուհի՛։

ՌԻԹԱ— Դե՛, ուրեմն գնա՛ ու ներս բեր։

ԳՆԴԱՊԵՏԸ— Բայց դքսուհին նախ քիչ մը հանգստանար գույցե. հեռու ճամփե է եկած և կին է. նախ պատառ մը հաց ուտեր. վանքեն բերել կուտամ։

ՌԻԹԱ— Շատ շնորհակալ եմ քեզի՝ քու այդ հոգածությանդ համար. վե՛րջը. նախ գործս վերջացնեմ, ատիկա վերջը. հանգիստը վերջը։ Բե՛ր կալանավորը։

ԳՆԴԱՊԵՏԸ— Քու հրամանդ։

### 3

Գնդապետը կերթա աջի դռնեն դուրս: Ռիթա դեմքի խոր ու տխուր արտահայտությամբ մը երկու ձեռքերով կսեղմե կուրծքն ու կջանա ճնշումը խեղդելու: Վերջը կամաց մը կնստի սեղանին գլուխը հանդիսավոր ու լուրջ արտահայտությամբ:

Կբացվի նորեն աջի դուռը և կմտնե Օշին՝ գնդապետին ետևեն: Օշին քայլ մը կընե և իր դեմը տեսնելով իշխանուհին՝ ապշած ու ցնցված կանգ կառնե:

ԳՆԴԱՊԵՏԸ— Ավա՛ղ պարոն, դքսուհի Ամորին այս վայրկյանիս կուգա Սիսեն, պալատեն, կարևոր խնդիրներու մասին քեզի հետ խոսելու։ Պարտք կհամարեմ հայտնելու՝ որ ունի թագավորական կնիքով հարկ եղած լիազորությունները և ինչպես ես ու մենք ու ամենքս, այնպես ալ դուն, իր բացարձակ հրամանին տակն ենք. ամեն ինչ կախված է իր խոսքեն ու որոշումեն։ Դիտցիր ասիկա ձեր խոսակցության միջոցին։ Դքսուհի Ամորին որևէ ուրիշ հրաման մը ունի՞։

ՌԻԹԱ— Վառե բոլոր մոմերը, որ լույս ըլլա ներսը. կուզեմ, որ լույս ըլլա հոս ներսը։

Գնդապետը կվառե սեղանին մոմերեն մեկը և անով բոլոր մյուս մոմերը: Այդ միջոցին լուռ են:

ԳՆԴԱՊԵՏԸ— (Ավարտելեն ետքը) Ուրիշ հրամա՞ն։

ՌԻԹԱ— Եղի՛ր դուրսը և եղի՛ր պատրաստ... հրահանգիս։

ԳՆԴԱՊԵՏԸ— Հրամա՛նդ, դքսուհի՛։ (Խոր գլուխ կուտա և ձախեն դուրս):



### 4

ՌԻԹԱ— (Երկար լռութենե մը ետքը) Խոսե՛, Օշի՛ն իշխան։

ՕՇԻՆ— Խոսքը քուկինդ է, իշխանուհի՛, քանի որ նեղություն ես կրեր և այսքան ճամփա ես կտրեր իմ ետևես։

ՌԻԹԱ— Կհուսամ՝ չես զարմանար ետևեդ եկած ըլլալուս։

ՕՇԻՆ— Ո՛չ. այսինքն՝ չգիտեմ. համենայն դեպս եկած ես ճիշտ վայրկյանին։ Ահա՜, ես պարտված, փախստական ու կալանավոր թագավորի հրամանով։

ՌԻԹԱ— Եվ գիտե՛ս անշուշտ, թե ինչու եմ եկած։

ՕՇԻՆ— Եկած ես լսելու, թե ինչքա՜ն հիմար ու անպետք է եղած իմ ամբողջ կյանքս ու վարմունքս, թե ի՜նչ ապիրճան տմարդի եմ եղած քեզի հետ, ինչպե՜ս տանջեր ու ճմռեր եմ քու հոգիդ ու երիտասարդությունդ։ Խոսե՛, ես պատրաստ եմ լսելու դատապարտությունս քու շրթունքներեդ. այդ շրթունքներեն հոսող դատափետումը ես հրճվանքով կըմպեմ, կխմեմ ագահ գինովի մը պես. խոսե՛, իրավունք ունիս, զա՛րկ երեսիս։

ՌԻԹԱ— Ո՛չ, դուն իմ մասին այդպես ցած մտածել չես կրնար. դիտմամբ կկեղծես։ Ես երբեք ոչ մեկ մեղադրանք չեմ ունեցած քու երեսիդ նետելու, ինչպես հաջողությանդ ու հաղթանակիդ օրերուն, այնպես ալ հիմա ձախողանքիդ վայրկյանին։ Այո՛, շատ եմ լացեր ու տանջվեր. ծածկելեն ի՞նչ օգուտ, դուն անշուշտ գիտես և առանց իմ ըսելու։ Ցավ՝ շատ, մեղադրանք՝ բնավ։ Եվ ի՞նչը մեղադրեի. դուն պակա՞ս ես տառապեր. մենք միշտ հասկցեր ենք իրար։ Ես հարգեր եմ քու հոգիդ օր-օրի ավելի բարձր, ես խոնարհեր եմ քու հոգիիդ մեծության առջևը օր-օրի ավելի ջերմեռանդ, ինչ չափով որ տեսեր ու հասկցեր եմ, թե որքա՜ն բացառիկ ես դուն, աննման ուրիշներուն, թե ինչպե՜ս մինակ ես դուն, ի՜նչ ապիրճան անշահախնդիր ու ազնիվ և ինչքա՜ն դժբախտ ես դուն։ Դուն այս ժամանակի մարդը չես։ Դուն գալիք մարդն ես գուցե, և ժամանակեդ առաջ ես եկած։ Ես կուզեմ, որ դուն մնաս ու շարունակես։ Եկեր եմ, որ բանամ դռներդ ու արձակեմ կապանքդ։

ՕՇԻՆ— Այո՛, քուկինիդ նման ազնվական հոգիներուն վրեժը այս կերպով կառնվի. կըմբռնեմ, որ դուն չես խնայելու ինծի. և արդար է։

ՌԻԹԱ— Ի՞նչ վրեժ, իշխա՛ն, մի՛ բարդացներ իմ դժվար վիճակս նոր բարդումներով։ Լսե՛ մերկ ու պարզ եղելությունը. դուն դատապարտված ես մահվան անմիջապես. մինչև հիմա կատարված կըլլար, եթե ես միջամտած չըլլայի։ Ես մեծ ճիգով ու ծանր գնով գնեցի մեր այս տեսակցության իրավունքը, հիմա քեզի հետ ըլլալու իրավունքը, քանի

մը ժամ քու կյանքիդ ու քու մահվանդ տերն ըլլալու իրավունքը։ Հիմա կրնամ ամե՛ն ինչ. մեկ-երկու ժամ ետքը գուցե արդեն ուշ ըլլա, արդեն անկարելի։ Հիմա ես կարձակեմ քեզի, գնա՛ շուտով միացիր եղբորդ. և եթե արագ շարժվիս ու կտրուկ, ինչպես քու բնավորությունդ է, կհաջողիս նորեն. անոնց մեջը միաբանություն չկա. նախանձ, կռիվ ու անվստահություն փոխադարձ՝ ինչքան կուզես։ Գնա՛, զա՛րկ ու շարունակե քու գործդ։

ՕՇԻՆ— Գո՞րծ. ո՞ր գործը. որո՞ւն համար։ Ինչո՞ւ համար։ Եվ դո՞ւն. իսկ դո՞ւն։

ՌԻԹԱ— Դուն նորեն մի մտածեր ինծի, ինչպես որ մինչև հիմա չես մտածած, երբ կյանքը պահանջեր է քեզմե, որ չմտածես։ Իմ ճակտիս ալ աս է գրած, որ զոհը ըլլամ, որ փրկանքն ըլլամ մեծ մտածումի մը հաջողության։ Մինչև հիմա եղած եմ կամքիս հակառակ, տեսակ մը կռվելով ու դիմադրելով. հիմա ահա՛ կուգամ քեզի իմ կամքովս, կըլլամ այդ փրկանքը իմ ուզելովս։ Չէ՞ որ ավելի արժեքավոր է ատիկա գործին համար և քեզի համար ալ կարծեմ ավելի գնահատելի։ Միթե կրնա՞ս մերժել, միթե կհամարձակի՞ս ետ մղելու այս տեսակ առաջարկ մը։ Չէ՞ որ կուզեմ քեզի հետ ըլլամ, քեզի համար ըլլամ, քեզի նման ըլլամ։

ՕՇԻՆ— (Կուլա, բայց առանց խոսքը ընդհատելու և առանց որևէ ցնցումի) Աստվա՜ծ իմ, ինչ թշվառ ու կարճամիտ է մարդ արարածը։ Ով ըսես կանչեցի ինծի, մոտեցուցի ինծի, կապել ուզեցի ինծի ու իմ գաղափարիս, ամեն անսիրտ, ամեն ապուշ ու սրիկա. և հեռացուցի ինծմե այն միակ անձը, այն միակ հոգին, որ իմս էր, հարազատս էր, և նույնալար, որ կըմբռներ մտածումս և կձգտեր ինծի հետ։ Լսե՛ ինծի, դուն, որ հրեշտակ մըն ես։ Ես շնորհակալ եմ քեզի անհո՛ւն քու այս տեսակցությանդ համար, քու այս անքող խոսքերուդ համար, քու պատճառած մեծ ու անփոխարինելի մխիթարանքիդ համար։ Շնորհակալ եմ անչա՛փ. բայց այսչափը հերիք է. ալ ուրիշ ոչինչ չառաջարկես ինծի։ Ես ո՛չ արժանի եմ այդ տեսակ զոհաբերության մը և ո՛չ ալ ինքնին կարելի բան մըն է ատիկա։ Ձգե՛ ինծի ու դարձիր տուն։

ՌԻԹԱ— Ինչպե՞ս ձգեմ։ Քեզի կըսեմ՝ այս սենյակեն ելլեմ թե չէ, մահն է ներս մտնելու։

ՕՇԻՆ— Թող կատարվի Աստծու կամքը. ես շատոնց հաշտ եմ մահվան հետ։ Ես այլևս պարապ աման մըն եմ, ուրկե թափված է թանկագին յուղը։ Ես կյանքի մեջ այլևս տեղ չունիմ։

ՌԻԹԱ— Իսկ ե՞ս։ Հասկցի՛ր. ես մինչև հիմա ապրեր եմ քեզմով և



միայն քեզմով. առանց քեզի չեմ ապրիր ես։ Եթե մեռնիլ կուզես. աղեկ. բայց նախ պարտք մը ունիս ինծի հանդեպ. պետք է ինծի մեռցնես։

ՕՇԻՆ— Ե՞ս, ձեռք բարձրացնեմ քու վրա՞։

ՌԻԹԱ— Տե՛ս, քու սուրդ մնաց քու մեջքիդ մինչև հիմա՝ այդ գերագույն գործածության համար։ (Ոտքի ելլելով ու առաջ գալով) Ահա՛ ես։

ՕՇԻՆ— Դուն կհավտա՞ս, որ ես իմ սրովս խոցեմ քեզի։

ՌԻԹԱ— Դուն անգամ մը արդեն խոցեր ես ինծի քու այդ սուրեն շատ ավելի սուր սրով մը։

ՕՇԻՆ— (Խեղճացած) Կտեսնե՛ս, որ թշվառական մըն եմ, տկար ու վատոգի։ Հոգիդ սպաննելու քաջությունը ունեցա, մարմինդ սպաննելու չեմ համարձակիր։ (Հանկարծ) Ռի՛թա, բա՛ց աչքերդ, արթնցի՛ր քու այդ ապուշ երազեն. ու հասկցի՛ր, ես անարժան մըն եմ եղեր միշտ քու սիրուդ ալ, քու վշտիդ ալ, արցունքիդ ալ, նվիրմանդ ալ։ Լսե՛. դուն երիտասարդ ես և գեղեցիկ և օժտված նուրբ ընդունակություններով. նետե՛ ինծի հոգիեդ. իմ մահս ու չքացումս թող հաշտեցնե քեզի կյանքին հետ. գնա՛, ապրե՛ քու երիտասարդ կյանքդ, գնա՛ վայելե քու արևդ։

ՌԻԹԱ— Ուրիշ խոսքով՝ նորեն կլքես ինծի։

ՕՇԻՆ— Բայց քու խնդրածդ չի խնդրվիր, Ռի՛թա. այդ տեսակ բան կատարել կարելի չէ. ձգե այդ միտքը. ձգե ընդհանրապես մահվան միտքը. դուն պետք է ապրիս. և, ա՜խ, բախտավոր ապրիս։

ՌԻԹԱ— Աղե՛կ, աղե՛կ։ Քանի որ չես ուզեր... քանի որ այդպես կցանկաս... քանի որ քու ձեռքդ վրա չերթար... քանի որ այդ է բացարձակ կամքդ։ Փորձեմ, փորձեմ քու ըսածդ։ Բայց... կուզեմ, որ տեսակ մը հետս ըլլաս. կուզեմ շոշափելի բան մը քեզմե, քու ունեցածեդ։

ՕՇԻՆ— Ի՞նչ ունիմ, որ ինչ տամ քեզի, Ռի՛թա. ես հիմա աղքատ մըն եմ ու կալանավոր մը, և ինչո՞ւդ է պետք։

ՌԻԹԱ— (Հանկարծ ու պահանջկոտ) Ա՜յ, տո՛ւր ինծի ապարոշը գլխուդ։

ՕՇԻՆ— Անպետք բան է, Ռի՛թա։

ՌԻԹԱ— Բայց քանի որ կխնդրեմ։

ՕՇԻՆ— (Հանելով գլխեն և ուսերեն մետաքսե ապարոշը, կդնե սեղանին վրա ժպտելով) Բայց ի՞նչ պիտի ընես։

ՌԻԹԱ— Կըսեմ, չեմ ծածկեր քեզմե։ Բայց նախ նստե՛. քիչ մը երկար է և շատ ալ նոր բան չէ։

ՕՇԻՆ— Ի՞նչը։

ՌԻԹԱ— Պատմելիքս։ Կհիշե՞ս, Բերդուսի մեր ծովափը. ժայռերուն վրայի այն գեղեցիկ հարթակը կանաչներով բաղեղված ու առանձին, որ

դուն այնքան կսիրեիր և ուր կքաշվեինք մենք՝ ես ու դուն, երբ մեզի կուգայիր. հո՞ն էր, որ դուն առաջին անգամ գրկեցիր ինծի, կհիշե՞ս։

ՕՇԻՆ— Ե՞տքը։

ՌԻԹԱ— Օր մը այսպես դուն նոր էիր մեր տունեն հեռացեր, շուրջս այդ մեր առանձնոցը դեռ լեցուն էր քու ձայնովդ, քու շունչովդ, էությամբդ, գգվանքովդ. և հոգիս ալ լեցուն քեզմով կխայտար ու կդողար։ Եկավ հայրս շիտակ դուրսեն, շիտակ իր ձիուն վրայեն. եկավ քաշեց գլխեն ապարոշը, դրավ նստարանին և հոգնած նստեցավ։ Մեջս պահանջ կար խնդալու, կատակելու, խենթություն մը ընելու. ուզեցի խաղ մը ընեմ հայրիկիս։ Առի նստարանեն ապարոշը, նետեցի մազերուս (Կընե ինչպես որ կըսե) ահա՜ այսպես ու կեցա դեմը։ Հայրս կժպտեր։

ՕՇԻՆ— Է, ե՞տքը։

ՌԻԹԱ— «Է, ե՞տքը», ըսավ ան ալ ճիշտ քեզի պես։ «Ա՛յ՝ ըսի. հիմա կտեսնես»։ Եվ սկսա ետ-ետ երթալ դեպի ծովը, դեպի ժայռին ծայրը, դեպի անդունդը։ (Ինքն ալ կամաց-կամաց ետ-ետ կերթա դեպի պատշգամբ) «Կեցի՛ր, պոռաց հայրս, հերիք է, ետևդ ծովն է»։ Վարը ծովն էր ետևս, ծով մըն ալ իմ մեջս. վարը ծովը կալեկոծեր, ալեկոծ էր և իմ մեջիս ծովը, ուր դուն էիր, ուր քու փոթորիկդ էր։ Ըսի հորս. «Չշարժվիս, չըլլա թե տեղեդ շարժվիս. այն ատեն իրավ որ կիյնամ»։ Տեսնելու էիր հայրիկիս աչքերը. կխնդար ակամա, և սարսափ կար նայվածքին մեջ։ Իսկ ես գինով էի. գինով էի քեզմով. քու սիրովդ, գգվանքովդ ու կքաշվեի միշտ ետ, միշտ ետ, դեպի եզերքը, դեպի ժայռին վերջը... դեպի վերջը... վերջը...

Նետերու ամբողջ խումբ մը շաչյունով կուգան ու կգամվին դռան եզերքին ու դեմի պատին, նետերեն ոմանք աղմուկով կթափին գետին։

Օշին բնազդորեն ձեռք սուրին կցատկե վեր. Ռիթա անշունչ փռված է գետին՝ երեսն ի վար։ Օշին խելագար նայվածքով ու դողդոջուն քայլ մը կառնե դեպի Ռիթան ու կծռի վրան։

Այդ միջոցին դուրսը աղմուկ կբարձրանա, ձախի դուռը կբացվի թափով և ներս կնետվի գնդապետը և ամբողջ խումբ մը նիզակավոր։

Օշին գլուխը կբարձրացնե և դանդաղ կշտկվի, կելլե ոտքի։

ԳՆԴԱՊԵՏԸ— (Ապշած) Դուն դեռ ոտքի՞ ես։

ՕՇԻՆ— (Ամբողջ հասակովը կուղղվի) Ինչպես որ կտեսնես։

ԳՆԴԱՊԵՏԸ— (Սարսափած) Ա՜... դքսուհի՛ն։

ՕՇԻՆ— Այո՛, ձեր դքսուհին՝ ես սպաննեցի։

ԳՆԴԱՊԵՏԸ— Նենգ, ու դավ ու ոճիր մինչև վերջին վայրկյանդ։ (Կդառնա իր զինվորներուն բուռն կատաղությամբ) Ահա՜ այս մարդն է մեր թագավորությունը կործանողը, մեր բոլոր դրացիները մեզի թշնամի



դարձնողը, ձեզի, մեզի, բոլորս սուրին բերանը տվողը, մեր թագավորը մորթել ուզողը, ահա՜ դքսուհին սպաննողը, սատկեցուցե՛ք այդ գարշելի արարածը...

Ընդհանուր շնչառության նմանող թառանչ մը կլսվի, և ամբողջ խումբը նիզակներն առաջ ուղղած կիսաշրջանաձև կշարժվի Օշինի վրա։

Օշին կեցած է արձանի պես անշարժ, հարձակողներուն մեջեն հազիվ կնկատվի իր թեթև ընկրկիլն ու թեքվիլը անոնց միահամուռ կատաղի զարկին տակ։

ԳՆԴԱՊԵՏԸ— (Կվազե դեպի Ռիթայի մարմինը և խորին ցավով կհակի անոր վրա) Իշխանուհի Ամո՛րի...

## ԳՐՔԵՐ ՈՒ ՄԱՐԴԻԿ

("Die zeitgenössische Französen", von M. Nordau.

*Մաքս Նորդաու, Ժամանակակից ֆրանսացիները)*

### I

*Թեև գրքի անունը «Ժամանակակից ֆրանսացիներ» է, բայց այդքան էլ խիստ առնելու չէ բառը։ Այդտեղ կան մի-երկու հինավուրց ծանոթներ էլ, Բալզակի ու Միշլեի նման, որոնք դարու մյուս կեսից են մեզ նայում։ Կա նույնիսկ մի գերմանացի, այն էլ Շիլլերը, որ իր մարքիզ Պոզայի թևը մտած կարծես զարմանքով չորս կողմն է նայում, թե ինչպե՞ս է ընկել այդ ֆրանսական սալոնը։*

*Գալով «ժամանակակից» ֆրանսիացիներին՝ բոլորը չեն այդտեղ հրավիրվածները, բայց և այնպես՝ բավականաչափ, և ամենքն էլ այնպես տիպիկ, որ դրանց ասածին ու խոսածին քիչ ականջ դնելուց հետո դըժվար չէ ըմբռնելը վերջին քսան-քսանհինգ տարիների ֆրանսական գրականության դեմքն ու ոգին։*

*Ավելի ոգին, քան դեմքը, որովհետև Նորդաու շինող քննադատներից չէ, որոնք իրանց ուսումնասիրած հեղինակի, երբեմն և ամբողջ մի ժամանակաշրջանի ցայտուն, հաճախ և գեղարվեստական պատկերն են տալիս։ Սա բանդող քննադատներից է, փորփրող, փնտրող, ու փընտրածը ներքին արժեքն է, ներքին էությունը, բանաստեղծորեն խոսը. գրվածքի կենսունակությունը, երկերի ոգին, հեղինակի հոգին։*

*Եվ հոգու այդ խորերից գեղարվեստական ստեղծագործության վրա նայողի համար՝ բնականաբար շատ քիչ բան է դիմանալու արդի ֆրանսական գրականությունից։ Ավելացնեմ իսկույն՝ և ընդհանրապես ամեն գրականությունից։*

### II

*Նախ գալիս է վիպասանների մի խումբ։*

*Այդ առաջնության պատիվը գուցե նրա համար է, որ Ֆրանսայում իրոք վեպն էր գրականության տիրողն ու ղեկավարողը վերջին տասնամյակներին։ Ասենք ոչ միայն վերջը, այլ ամբողջ դարը, այլև ընդհանրապես ամբողջ իրանց գրականության ընթացքում, վեպը, պատմվածքը ֆրանսական գրական ձևն է* par excellence*։ Ֆրանսացին, և գրեթե բոլոր խավերը, մի մասնավոր սեր ունի ասելու, պատմելու, մանավանդ կասկածավոր, խճճված, սկանդալի ու պիկանտ դեպքեր։ Նրանց քնարերգությունն անգամ հաճախ այնքան է մոտենում վեպին, որ դժվար է ջոկելը, որովհետև պատկերն է տիրում, ո՛չ թե զգացումը։ Իսկ դրաման Ֆրանսայում, թե՛ իր թույլ շենքով, թե՛ իր ծավալուն մշակումով, բեմի լույսին հանած վեպ է ուղղակի, և շատ թատերական անուն հանած երկեր, հայտնի է, որ նախ գրված են եղել իբրև վեպ։*

*Վերջին վիպասաններից Նորդաուի այս հատորը խոսում է Էդմոն դը Կոնգուրի մասին, Անատոլ Ֆրանսի, Մոպասանի, Բարրեսի ու Ֆրանսուա դը Նիոնի։ Եվ իր հանած եզրակացությունները վերջնական կետում նպաստավոր չեն դրանցից և ո՛չ մեկին։*

*Բոլորովին մի կողմ թողնելով ինքնամոլ, տափակ-հոգի ու շինծու բառերի որսորդ Կոնգուրին ու իր* "Journal"*-ը, մի-երկու խոսք մյուսների մասին։*

*Մոպասանի դիտելու պայծառ ընդունակությունը և արտահայտության գրավիչ գեղեցկությունը դուրս է ամեն կասկածից։ Բայց ի՞նչ է նրա դիտածը, ի՞նչ է նրա գրվածների մշտական նյութը, և գրեթե միա՛կ նյութը։ Սեռական սեր, այն էլ ընդհանրապես ցած ու հաճախ հիվանդոտ տեսակի։ Նրա հերոսների երկար շարքը, երբ առաջիցդ անց ես կացնում, երբ տեսնում ես այն գրական տաղանդն ու ընդունակությունը, որ վատնված է այդ վատուժները նկարելու, ակամա մի տեսակ զայրույթ ես զգում։ Մեզ հետաքրքիր չեն, մեզ պետք չեն, մեզ չեն ոգեվորում ա՛յն մարդիկը ու մարդոց այն կողմը, որ նրանց անասունին է կապում։ Մեզ գրավողը, տևական կյանքի իրավունք ունեցողն ու գեղարվեստորեն հետաքրքիրը մարդկայինն է միայն. ինչ որ մարդը մարդ է շինում, այսինքն՝ ինչ որ ջոկում ու բարձրացնում է մեզ անասունից։*

*Մի ուրիշ անպայման մեծ տաղանդ ու մի թարմ գրիչ է Անատոլ Ֆրանսը։ Իր մասնագիտությունը՝ երգիծանքը (*Jronie*) և ի՜նչ գեղարվեստական հմտությամբ է գործածում այդ նուրբ զենքը, որ, ինչպես բոլոր շատ նուրբ ու բարակ զենքերը, երկսայրի է սակայն։ Ծաղրելն ու հեգնելը, այն էլ շարունա՛կ ու միա՛յն ծաղրելն ու հեգնելը, մարդու մեջ անհրաժեշտաբար սպանում է կարեկցությունը. ծաղրողը կամ չունի, կամ հետզհետե ստիպված է խեղդելու իր գութը, որպեսզի ավելի սուր ու ավելի անխնա կերպով կոխել կարողանա իր երգիծանքի սառն նշտրակը։ Գործիքի այդ սառնությունը քիչ-քիչ հեղինակից անցնում է ընթերցողին, և ընթերցման ավարտումից հետո մի պաղ տպավորություն է մնում մեջդ, չնայելով, որ կարդալիս կարծես քեզ շատ գոհ էիր զգում*

ու ժպտում։ Երգիծանքի թերությունն է դա։ Դիտող աչք ու դիտող ականջ ունենալուց առաջ՝ դիտող սիրտ ունեցող մարդիկը ամեն կերպ խույս են են տալիս այդ զենքից ու գործ են դնում միայն հումորը, որ երգիծանքի կոպտությունը չունի գուցե, բայց չունի և նրա սառն թույնը։ Թարմ, կենսալից ու կյանքի խորքը դեռ չնայած երիտասարդն է միայն գործածում այդ զենքը, կամ միայն չար մարդիկ։ Որ Անատոլը վերջիններից չէ, վկա են գալու իր նոր գործերը, բայց նրա նախկին երկերը կմնան սառն, որչափ էլ մեծ հաճույքով ժպտենք նրա նրբության ու տաղանդին։

Գալով Barrés-ի ու François de Nion-ի այսպես ասված վեպերին, այդտեղ կարելի է գտնել ամեն բան։ Դա մայրաքաղաքի ծնունդ ու մայրաքաղաքի համար շինված գրականությունն է։ Այդտեղ կա պատմություն, կան լրագրական մանրալուրերից քաղած իրողություններ, կա հասարակական կյանքի պատկեր, թեև շատ միակողմանի, կա զանազան հարցեր ու գիտական թեորիներ, կա սրախոսություն, գուցե և տաղանդ, և՛ հակասություններ, և՛ անբնականություն, և՛ այս բոլորը խառնըված իրար առանց ընդհանուր կապի, առանց ներքին միության։ Ինչ որ այդ հաստ խառնուրդին մեջ մեկ կողմ է թողնված, դա գեղարվեստն է, մանավանդ խոր գեղարվեստը։ Մենք էլ նրանց թողնենք մի կողմ։

III

Ինչպես հայտնի է, բանաստեղծները ամեն տեղ աղմկոտ, չհավան ու մեծ-մեծ փրթող ժողովուրդ են։ Այնպես որ «օրինավոր» մարդկանց ընկերության մեջ խիստ մեծ զգուշությունով են ներս թողնում։ Երևի այդ է պատճառը, որ Նորդաուն այս անգամ միայն նրանց «երեք իշխաններին» է կանչել. Վերլեն, Մալարմե ու Leon Dierx։ Ես այսպես բացատրեմ, դուք հասկացեք ինչպես ուզում եք։

Այս եռապետության երրորդ անձը, ինչպես ընդհանրապես պատմության մեջ բոլոր եռապետությունների երրորդ անունը, մի պատահական անմեղ մարդ է, որ հանգամանքների բերմամբ ընկել է հրապարակ։ Ես նույնիսկ չգիտեմ ինչպես կարդամ իր անունը. դա անշուշտ միայն իմ տգիտությունս է ցույց տալիս, մխիթարվում եմ սակայն այն շաբլոն մտածումով, թե գոնե ես միակը չեմ։ Ահա՛ ինչպես է սկսում Նորդաուն իր հոդվածը.

«Ֆրանսայի վաթսուն լիրիկները կանչված էին, իբրև կայսրընտիր, Մալարմեի մահից հետո թափուր մնացած գահին մի գահակալ ընտրելու։ Սրանցից տասնեհինգ հոգի, այսինքն՝ ձայների ամենաբարձր



թվով, որ մի անվան վրա հավաքվել էր, ընտրեցին Leon Dierx-ին։ Ընտրության արդյունքը մի ընդհանուր վարմանք եղավ և՛մեծամասնության համար, որովհետև Dierx-ին չէին ճանաչում, և՛ փոքրամասնության համար, որովհետև Dierx-ին ճանաչում էին»։

Բայց այս մի քանի տողերի մեջ ուրիշ շատ ավելի հետաքրքիր ու բազմիմաստ բաներ կան թաքնված, և մարդ բոլորովին մոռանում է Dierx-ին, որ ինչպես երևում է մի խի՛ստ արտասովոր քաղցրահնչյուն բառախաղաց է, ու մի խի՛ստ սովորական բանաստեղծ։

Այդ կտորը կարդացողի համար պարզ է լինելու իմիջիայլոց, թե ինչպե՞ս մի Վերլեն կամ Մալարմե դարձել են իշխան։ Չէ՞ որ ասված է. «ամեն ժողովուրդ իր իշխանին է արժանի»։

Վերլենը։ Որպեսզի առողջ գլուխս ավետարանի տակ չդնեմ, Վերլենի մասին բոլոր հաջորդ տողերը, այլև բոլոր բառերը քաղում եմ Նորդաուի հոդվածից։ Ով կռիվ ունի, թո՛ղ գնա նրա հետ կռվելու։

Նախ մա՛րդը. ախտավոր, հարբեցող, ստորին կրքերի ձեռքը գերի ընկած մի թուլամիտ էակ, աղքատ, թափառաշրջիկ ու մեկուսի, որ ունի իր արցունքի, խղճի խայթի ու սթափման վայրկյանները։ Մի միստիկ, որի մշուշոտ ու երազկոտ գիտակցությունը աստվածն ու սուրբերն են ողողում, և որը ընդհանրապես առած իրան շատ լավ է զգում։

Ահա՛ և գործը. անկապ խոսքերի ու խառնակ պատկերների մի խճողում, բացակայում որոշ մտքի ու մտածության։ Խղճահարության անմխիթար վայրկյաններին ստորության ու ոչնչության զգացումի արցունքից գոյացած մի քանի մարգրիտ։ Ամենալավերը երեք-չորս հատ, ոչ ավելի, բայց որոնց մեր դարը տալու է հաջորդ դարերին, իբրև թանգարանում պահվելիք թանկագին գոհարներ։

Անշո՛ւշտ, մի բանաստեղծի համար քիչ չէ դա, բայց մի իշխանի՞ համար։ Է՛, չէ՞ որ մեր դեմոկրատ դարում շատ ավելի աղքատ իշխաններ ենք ճանաչում։

Իսկ ինչ վերաբերում է Մալարմեին, թե՛ իր իշխանությունը և թե՛ իր բանաստեղծությունը, ce nést que pour rire։

Նա հայտնի էր իբրև մեծ բանաստեղծ, երբ դեռ ոչինչ չէր տպած, որ իհարկե ոչի՛նչ, բայց երբ դեռ ոչինչ գրա՛ծ էլ չէր։ Նա մինչև անգամ զարմանում էր, որ մարդիկ ա՛յդ ատիճան հասարականում են, գրում են ու տպում, թեև դա արգելք չեղավ, իհարկե, որ ինքն էլ տպի իր ցընդի-փնթի ոտանավորները և «տակից-գլխից դուրս տված» արձակները։ Զակերտների մեջ գրածս իր գրքի անունն է (Divagations), ի՛ր դրած և ո՛չ իբրև կատակ. այնպես որ կարծեմ մեկնությունները ավելորդ են։ Կարգին մտածելը խուժանին է վայել, հասկանալի լինելը տափակ գլուխ-

ներին. ընտրյալները զառանցում են միայն ու բերնին եկածը «դուրս տալիս»։ Եվ նա քիթը բռնած քամիներին՝ դուրս է տալիս և հպարտանում, երբ իր ասածը հասարակ մահկանացուները չեն հասկանում։ Արդեն բոլոր դարերի ընկնավորները, լինին մեհենական, թե ոչ, նույն սիստեմն են ունեցել խոսելու ու նույն հպարտությունը իրանց աստվածային բացառիկության։

## IV

Ամեն ժամանակ իր գրական գերիշխող ձևն ունի, արդյունք օրվա տնտեսական-հանրային պայմանների ու մտավոր ուղղության։ Մեր ժամանակի ձևը դրաման է։ Գերման լեզուներով խոսող ժողովուրդների մեջ ավելի վաղ է կատարվել այդ տիրապետությունը և ավելի կտրուկ։ Հիմի էլ, այսպես մի տասնյակ տարի է, սկսած է նույնը Ֆրանսայում, [՝]ևև քիչ տատամսոտ ու խարխափելով կարծես։ Դեռ չի խոսում իշխողի լեզվով և չունի դեռ իշխողի հեղինակությունը, բայց ունի հավակնությունը ե հրամայական ժեստեր անում է արդեն։

Թվով քիչ չեն դրամայի արդի զինվորները, բայց ինչպես միշտ, «շատերն են կանչված ու քիչերը ընտրված»։ Դրանց մեծ մասը հին կարգերով են վարժված ու հին զենքերով զինված, Դոնեի ու Հերվիոյի նման, բայց կան և նոր խիզախներ, «նոր հավեր, որոնք երկաթե ձվեր են ուզում ածեն», ինչպես առածն է ասում, սրանից է Բրիո (Brieux), Գյուրել, այլև Միրբո իր «Վատ հովիվներովը»։

Paul Hervie և Maurice Donnay այն վարքագիր հեղինակներից են, որոնք կոչում են զգում գրելու, անշուշտ ոչ «Հարանց վարքը», այլ դժբախտաբար «որդոցը», իրանց ժամանակինը։ Նրանց ջանքն է, բեմ հանեն փարիզյան վարքն ու բարքը, այն էլ միայն մի որոշ շրջանի։ Իրանց նյութը գրեթե բացառաբար ամուսնական անհավատարմության շուրջն է դառնում, երբեմն զուտ, երբեմն էլ բարոյախոսական քարոզներով համեմած, որ իհարկե ավելի դժվարամարս է դարձնում։ Գործողության տեղը՝ միշտ փարիզյան սալոնը։ Իսկ հերոսները, ա՜հ, ի՜նչ հերոսներ, կոմս, մարքիզ, երեցփոխան, դրամատեր, մինիստր, բարձրագույն պաշտոնյաներ, մի խոսքով բոլոր խոշոր կենդանիները՝ մորթուց դատելով։ Իսկ նե՞րսը. խե՜ղճ Ֆրանսա, եթե հավատանք այդ հարգելի վարքագիրներին, ֆրանսական վերին շրջաններում բոլորն էլ ցածհոգի, աղտոտ մարդիկ են, ո՛չ մի սրբություն չճանաչող, ո՛չ մի մարդկային արժանավորության գին չտվող, բացի քաղաքավար ձևերից ու կեղևից, որոնց միակ ձգտումը փողն է, իսկ կյանքի նպատակակետը՝ կանանց ներքին շրջազգեստը։



Սա գրական այն ժանրն է (roman rose), որի վիպասանական ձևը ողողում է գրավաճառանոցների ցուցափեղկերը և «բարձր շրջանի» ընթերցանության նյութն է կազմում (Gip, Lavedan, Hermand)։

Մասնավորապես Հերվիո ու Դոնե մեծ հաջողություն են վայելում փարիզյան բեմի վրա։ Հաջողության գլխավոր պատճառները արտաքին են։ Նախ՝ առատ շաղ տված կատակներն ու սրախոսությունները, որոնց մի բավական մեծ մասը շատ ցած տեսակի ապրանք է սակայն, երկրորդ արժանիքը՝ լեզուն ու ոճը՝ թեթև, մարզարտահեռ, կենդանի, իսկ դա շատ գնահատված բան է Ֆրանսայում, ուր մեծ կարևորություն են տալիս երաժշտականության. մոռանալու չէ, որ կլասիկները խաղալիս ավելի երգում են, քան խոսում։ Եվ վերջապես երրորդն էլ այն, որ դրանք շնորհք ունեցող մարդիկ են, օգտվում են բոլոր գրական ու բեմական միջոցներից և մեջեմեջ էլ տալիս են իսկապես ցնծող ու սիրուն տեսարաններ։

Գալով թերություններին՝ անճիշտ ու խեղաթյուրված է այդ վարքագիրների նկարած վարքը. Փարիզի սալոնաբնակները ո՛չ այդ տեսակ ապուշ են, ո՛չ այդ տեսակ հրեշ։ Տկար ու շինծու է նույնպես դրանց դուրս բերած մարդկանց հոգեկան աշխարհը, այլև խախուտ ու թաց ամբողջ գրվածքի շենքը։

## V

Մեզ համար ավելի հետաքրքիր են նորերը, նոր հովերը։

Ամենից տարօրինակ Ֆրանսուա դը Գյուրելն է։

Տարօրինակ ու մի տեսակ հնարովի իր ընտրած նյութերը, որոնց ազնվականության ծակերից երևում է բացառիկ լինելու սնափառությունը։ Ինքը դը Գյուրել ազնվական է։

Տարօրինակ է ու անշնորհք իր նյութերը մշակելու եղանակը։ Բոլոր գրությունները կարծես բռնի ու զոռով են ստեղծված, բայց երբ գիրքը մի անգամ կա, մնացածը նկարված է վարժ ու վարպետի ձեռքով։

Տարօրինակ ու չգիտես ո՞ր աշխարհից են եկած նրա մարդիկը. ո՛չ արյուն ունեն, ո՛չ ոսկոր։

Տարօրինակ է ընթերցողի կրած տպավորությունը. նրա գրածները կարդալիս շարունակ մտածում ես, որ սարքած բան է այդ բոլորը ու կեղծ, բայց և այնպես զգում ես, որ տակը մի բան կա, ինչ-որ կարծես մի արժեքավոր բան։ Դը Գյուրել բանաստեղծ է։

Տարօրինակ է վերջապես իր երկերի բախտը, որոնք մեկը մյուսի հետևից ընկնում են բեմ հանելիս, բայց ընկնում են «պատվով»։

Բեմին դիմացավ «Նոր կուռքը», որ համեմատաբար ավելի «այս աշխարհից» է ու ավելի էլ բեմական։ Նյութը երկու հավիտենական ախոյաններն են՝ կրոնն ու գիտությունը։

«Գիտությունը շինել ենք մի կուռք, որը սակայն սնանկ է ինքը ու մեր հոգու հարցերին ու պահանջներին բավականություն տալ չէ կարող. ճշմարիտ աստվածը կրոնքն է», ահա միտքը երկու խոսքով։ Դը Գյուրել ֆրանսացի է ու ազնվական, հետևաբար կաթոլիկ, և այդ կաթոլիկ տգիտության աչքովն է նայում գիտությանը։

Շատ ավելի բեղմնավոր, շատ ավելի «մոդեռն» ու շատ ավելի հռչակավոր է Բրիոն, որի հռչակը սակայն, որ չէ ծնում ո՛չ հեղինակի գեղարվեստական մեծությունից, ո՛չ գրվածքի ուժից, ո՛չ էլ հոգեբանական խորությունից, այլ ամենից առաջ որովհետև ժամանակի էտիկետը ունի իր վրա ու զբաղվում է օրվա հարցերով։

Դրամայի դրոշակները արդի եվրոպական գրականության մեջ «օրվա չարիքը» քրքրողներն են, որոնք գեղարվեստի ու գիտության վերջին խոսքն են ուզում ասեն միաժամանակ։ Եվ ճիշտ դրա համար էլ ոչինչ չեն ասում։

Նրանց երգը գեղարվեստական է կա՛մ իր արտաքինովը միայն, կա՛մ, այսպես ասած՝ պատահաբար, գրչից դուրս է պրծել մի խոր ու իրական գիծ, մի ճշմարիտ մարդ, մի ազդող տեսարան. իսկ էակա՛նը այն հարցն է, հանրային այս կամ այն երևույթը, որ հեղինակը ուզում է լուսաբանե ու քննադատե։ Ուրիշ խոսքով՝ ժուռնալիստներ են դրանք ու հրապարակախոսներ, և մեծ մասով շա՛տ վայրիվերո, որոնք սխալմամբ մտել են գեղարվեստի դռնեն ներս, իսկ լավագույն դեպքում՝ ստեղծագործող տաղանդով օժտված մարդիկ, որ ընկել են հասարակական գիտությունների պարտեզը ու մի բան գողացած ուզում են դուրս գան, բայց ցանկի մացառների մեջ խճճված պատռվում են ու քրքրում իրանց էլ, իրանց գեղարվեստն էլ ու այն մի կտոր գողունի գիտությունն էլ։

Բրիոն այս վերջին տեսակի ներկայացուցիչն է, գուցե և լավագույն ներկայացուցիչը։ Բայց ո՛չ լավը կօգնե այստեղ, ո՛չ լավագույնը, որովհետև գործը ինքն է հիվանդ։ Գեղարվեստական երկով կատարված ուսումնասիրությունը, վերլուծությունն ու քննադատությունը անհրաժեշտորեն միակողմանի է, նեղ ու ծուռ փաստերը խեղաթյուրված, պատճառները թերի, որովհետև նա անկարող է երևույթի բոլոր կողմերը և բոլոր հարցերը մեջ քաշելու ու անխուսափելի կերպով ստիպված է ամբողջ հարցը այս կամ այն անհատի բախտին կապելու, իսկ օրենքներն ու հանրային երևույթները անհատի հետ գործ չունեն։ Խոշոր հարցերը ճմլվում են, ընդհանուր շարժումը կծկվում, հանրային աղետը գալիս



կենտրոնանում է մի քանի մարդկանց գլխին։ Գեղարվեստը ուրիշ հնար չունի, եթե ուզում է կարդացվի, եթե ուզում է ազդե։ Բայց դրածը դուրս է գալիս սուտ։

Նկարել կյանքը իր հոսանքներով ու շարժումներով, պատկերել նրա կռիվը, տառապանքը, պրկումները, հաղթանակը, տալ մարդու հոգին, իր հույսը, երազները, անկումը, ձգտումը, պայքարը — մի խոսքով ներկայացնել ինչ որ մարդն է ու մարդկայինը, որ գեղարվեստի գործն է ու միակ գործը։ Բայց մեկնություններ տալ, քննադատել, ապացուցանել, պարսավել ու քարոզել գիտական այսինչ խնդիրն ու թեորին, տընտեսական կամ քաղաքական այնինչ հարցը, դրությունը, ուղղությունը, դա գեղարվեստի գործը չէ։ Իսկ երբ բռնի նրա վիզն եք փաթաթում, դառնում է կաղաղած մեղու, որ իր վրեժն է ուզում, սպանում է թե իրան և թե իր վրա հարձակվող հարցը։

Ահա այսպիսի մեղվական մի վրեժխնդրություն է, որ հանում է գեղարվեստը «կապիտալիզմից» Միրբոյի հայտնի դրամայում՝ Les mauvais berders։ Ի՜նչ աշակերտական ու հաստագլուխ կապիտալիստներ են այդ երեք մեծ գործարանատերերը, և ի՛նչ տկար ֆրազներով լեցված մի լիրիկ միամիտն է այդ Ժան Ռուլը, որ սոցիալիզմն է ճառում, և վերջապես ի՜նչ շինծու կապեր, ինչպե՜ս անիրական ու անճիշտ՝ մեր աչքի առաջ կատարվող այդ գործողությունը։ Երևակայեցե՛ք մեկը, որ այդ գիրքը կարդա ու դրանով հասկանա ու բացատրե կապիտալի ու բանվորի մաքառման պատճառները, երևույթը, հետևանքն ու նշանակությունը, մի այդ աստիճանի լուրջ, բարդ, խոր ու ահագին նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական պայքարի ինչությունը։ Արժի ծառայություն է սա, որ մատուցվում է սոցիալիզմին, իսկ դրա հետ էլ ծռմռվում է ու տափակում գեղարվեստը, չնայելով Միրբոյի ուժեղ ու խորազգաց տաղանդին։

## VI

Մի դեմք էլ, և հրաժեշտ առնենք ֆրանսական դրամայից։

Ռոստանի (Rostand) մասին է խոսքս, որ վերը հիշված ուղղությունների ու մարդկանց հետ ո՛չ մի գործ չունի, և եթե ուզում եք՝ ո՛չ մի ուղղության և ո՛չ մի մարդու հետ գործ չունի։ Հենց դրա մեջն է նրա հրապույրը։

Հեքիաթի բանաստեղծն է նա, և իր երկերն էլ հեքիաթի թարմությունը, միամտությունը, զվարթությունն ու առողջությունն ունեն։ Խոր միտք, կյանքի մարդիկ, իրական կյանք այստեղ փնտրելու իրավունք

չունենք, բայց դա իհարկե չի նշանակում, որ նրա աշխատությունների մեջ դրանց ամենևին չենք պատահի։

Ահագին հաջողություն ունեցավ նրա Cyrano de Bergerac-ը։ Ֆրանսիացին սիրեց սաստիկ. սիրե՛ց, որովհետև իդեալական ֆրանսիացին կար մեջը, բո՛ւն ֆրանսիացին, ֆրանկը։ Մի դյուրագրգիռ սուրի-մարդ, մի հանդուգն սուր-լեզու, մի տկարի պաշտպան ասպետ ու մի գալան բանաստեղծ։

Փոքր իդեալ չէ, ինչպես տեսնում եք, մանավանդ մեր այս եսական ու դրական դարում, ուր սուր լեզուն շատ թշնամի է սուրի մարդուն, ուր ասպետները իրանց են միայն պաշտպանում, իսկ գալանի հոգում ամեն բան գուցե կա, բացի բանաստեղծությունից։

## VII

Եթե հիմա մի հայացք գցենք հետ վերը հիշած մարդկանց ու գործերին, կգտնենք և՛ տաղանդ, և՛ սրություն ու երգիծանք, և՛ կյանքի պատկերներ, և՛ բանաստեղծական ճիգեր, և՛ դրամաներ, որ մտածել են տալիս, և՛ ոճ, և՛ լեզու, միայն չենք գտնի ապրո՛ղ, տևո՛ղ, խո՛ր երկեր։

Այդ բոլորը մի տեսակ հոսանքի երեսին է լողում, և մենք միայն արևի տակ ցոլցլան այդ մակերեսն ենք տեսնում ու իր ծփանքը, մեր առաջ չի՛ բացվում նրա տակի եռքը, թավալքը, հոսանքի բուն պղտորությունը, ու նրա քշած-վարած բեկորներն ու ժայռերը։

Տեսնում ենք շատ մարդիկ, շատ երեսներ, շատ վարք ու բարք, շատ նիստ ու կաց. շատ քիչ ենք տեսնում մա՛րդը, մարդու հոգին, և այն քիչն էլ, որ տեսնում ենք՝ դժբախտաբար կամ կեղծած է, կամ շատ ցածն է առած՝ անասունի դրացին։

Այս տեսակետից դեռ խիստ թարմ է ու ահագին նատուրալիզմի ազդեցությունը, որքան էլ հակազդը պարթած լինի արդեն։

Այսպիսով՝ վերջին տարիների ֆրանսական գրականությունը տվել է մեզ սիրո՛ւն կարդացվող գրքեր, երբեմն նաև սիրո՛վ կարդացվող գրքեր, բայց չէ տվել սրտո՛վ կարդացվոր գիրքը։

## VIII

Նորդաուի այս հատորը ո՛չ ամբողջական մի գործ է, ո՛չ էլ լրիվ. շատ աչքի ընկնող հեղինակների մասին խոսք չկա, եղածների էլ միայն մի քանի երկերն են աչքի առնված։ Բայց այդ բոլորը պահանջելու



իրավունք էլ չունենք. ղանազան ժամանակ գրած քննադատական ցրիվ հոդվածներ են դրանք, որոնց հավաքել է վերջը ու դրել մի շապիկի տակ։

Այդ լրագրականությունը զգալի է ամեն կտորի մեջ. մեկ, թե՞ երկուսն են միայն քիչ ավելի ձույլ ու ավարտ։ Տեղ-տեղ խառնակ է նյութը, հաճախ երկար, երբեմն կողմնակի հարցը տիրապետող, իսկ երբ այդ կողմնակի հարցն էլ մութ է ու քիչ հետաքրքիր՝ հարվածը դառնում է ձիգ, եթե ոչ ձանձրալի։

Սակայն որքան պատահական լինեն այդ հոդվածները, որքան և անավարտ, բայց և այնպես տալիս են տեղի ու ժամանակի ոգին, և կարևորն էլ այդ է։

Ուշադրության արժանի են նաև հատվածների մեջ այս կամ այն կողմ նետած գեղարվեստական տեսություններն ու սկզբունքները, մանավանդ մեր ընթերցողի համար։ Գեղարվեստականի այդ ըմբռնումը ու հայացքները որքան էլ պարզ ու ինքնին հասկանալի լինեն բուն գեղարվեստագետի, բուն գրագետի համար, մեզնից շատերի՛ն սակայն օտարոտի են թվալու, և հենց այդ պատճառով, որ ճիշտ հակառակն է պնդված ու փառաբանված մեր գրական հրապարակի վրա, ուր դժբախտաբար անդրշրհեղեղյան հայացքները և շաբլոն ֆրազները թագավորում են դեռ կոկոզավիզ, ինչպես ուրիշ շատ բաների, այնպես էլ մասնավորապես գրականության նկատմամբ։

Եվ ինչ որ ամենից ավելի ինձ դուր է գալիս այդ գրքի մեջ, դա հեղինակի ունեցած բարձր ըմբռնումն է գեղարվեստի, որ գրեթե ամեն էջից զգացվում է, նրա այն բա՛րձր չափը, որով չափում է քննադատելի անձերն ու երկերը. բա՛րձր ու բուն գեղարվեստակա՛ն չափը։

Տեսնում ես, որ մարդն է որոնում նա ամեն տեղ, մանավանդ առողջ մարդը։ Մարդու մեջ էլ մարդկայինը, բայց չկեղծած, չծռած, ճշմարիտ մարդկայինը, և մարդկայինի մեջն էլ վերի՛ն մարդկայինը։

# ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ ԴԵՐԸ

## Ի՞ՆՉ Է ԳԻՐՔԸ

### Ա Անժամանակ զբաղում

«Ի՞նչ ժամանակ է հիմա գրական հարցերու։ Պերճանք է ու շռայլություն գրականությունը ինքը, և շվայտություն մըն է ուժ ու ժամանակ վատնելը այդ կարգի պարապ խնդիրներու վրա, երբ մեր առջևը

ցված են մեր ժողովրդի հալածանքն ու ձուլումը, մեր գոյության ու մեր ոչնչացման դաժան հարցերը»։

Այսպես կմտածե հայ մարդը ակամա, երբ գրական երկի մը կամ գիտական ուսումնասիրության մը համար գրիչ վերցնել կուզե։ Եվ շատ բնական է անշուշտ այդ մտածումն ու տրամադրությունը մեր արդի պայմաններուն մեջ ապրող հայուն համար։ Բայց շատ բնական է նաև հաջորդ քայլը, երբ այդ բոլորը մտածելէն ու ըսելէն ետքը՝ նորեն կըվերցնենք գրիչը մեր գեղարվեստական երկը գրելու համար, որ կառուցել կցանկանք, վերլուծելու համար մեր գիտական նյութը, որ մշակել կցանկանք։

Որովհետև՝ կապրի կյանքը անընդհատ իր բոլոր կողմերով և կըպահանջե, որ դուն ալ ապրիս ու աշխատիս կյանքի բոլոր կողմերով։ Ինչպես որ անհատը չի կրնար չուտել, չմտածել ու չհուզվիլ՝ պատերազմ ըլլա թե խաղաղություն, սպառնալիքի տակ ըլլա թե հալածանքի, այդպես ալ ժողովուրդները չեն կրնար թողնել ու անտեսել իրենց ֆիզիկական ու հոգեկան բազմադիմի պահանջները՝ ինչ պայմաններու տակ ալ որ գտնվին։ Անշուշտ երբեմն ավելի թափով կքալե կյանքի այս ու այն կողմը, երբեմն կաղ ու ընկճված։ Երբեմն կանգ կառնե զարնելե մարդուս սիրտն անգամ, բայց վայրկյան մը միայն։

Ապրող ու ապրիլ ուզող ժողովուրդի մը համար անիմաստ խոսք է բոլորովին, թե «Ի՞նչ ժամանակն է հիմա գրական աշխատանքի», և մասնավորապես մե՛ր դիրքը և մե՛ր պատմությունը ունեցող ժողովուրդի մը համար։ «Ժամանակի» ու «անժամանակի» նրբազգացությունները են գուցե խնկական շռայլությունը մեզի համար, որուն վրա իրավունք չունինք ժամանակ կորսնցնելու։ Այդպես կսորվեցնե մեզի գոնե մեր հայ պատմությունը։

Հայուն համար ի՞նչ գրականության ժամանակ էր հինգերորդ դարը։ Սասանյաններուն ամենեն փրփրած օրերուն. մեր պետությունը քայքայված, վերջն ալ կործանված։ Ժողովուրդը ենթակա բուռն քաղաքական ու կրոնական հալածանքներու, երբ մեկ կողմեն մեր աշխարհը կդառնար ավեր ու անտեր, մինչ մեր նախարարներն ու հոգևորականությունը, այսինքն՝ այն օրերու մտավորական ու ղեկավար մարդիկը, կենթարկվեին աքսորի ու մաշումի պարսկական անապատներուն ու բերդերուն մեջ՝ հուսահատ ու կտրիճ դիմադրութենե ետքը։

Մինչև հինգերորդ դարը հայ պետությունն ու ազգությունը դեռ երբեք չէր գտնված ոչնչացման այս աստիճանի մեծ սպառնալիքի մը տակ։ Եվ ահա՛ ճիշտ այդ օրերուն է, որ մեկ կողմեն կողբա Խորենացին իր նշանավոր «Ողբը», մյուս կողմեն կհորինե ավելի ևս նշանավոր դյուցազներգությունը ժողովրդական վեպերեն քաղելով, որուն անունը կդնե «Հայոց պատմություն»։ Եղիշե վարդապետը գրի կառնե իր յոթը արարով դրաման, որուն անունն է «Վարդանանց պատերազմին պատմությունը»։ Եվ այդ դարուն է, այդ երկու մեծ գրքերեն քիչ մը առաջ կամ քիչ մը ետքը, որ Եզնիկ կվերլուծե մարդկային հավատալիքները։ Ուրիշներ ալ հույն փիլիսոփաները կթարգմանեն, պատմական երկեր կշարադրեն, կերգեն տաղեր ու շարականներ, կհորինեն քերականություններ ու քերթողական արվեստի ուսումնասիրություններ, այլև ճառ, քարոզ ու մեկնություն, բազմակողմանի գրական հարցեր, ամբողջ նոր ու ընդարձակ գրականություն մը, որ գրաբարի «ոսկեդարը» կհամարենք հիմա։

Եվ ինչո՞ւ համար է այս բոլոր «անժամանակ» աշխատանքը։ Հիմնապես մեկ նպատակի մը համար. բարձրացնել ու զորացնել ազգային դարձած քրիստոնեական կրոնը, բարձրացնել ազգային միտքն ու գիտակցությունը և նոր ուժ տալ ազգային դիմադրության։

Այդպես ալ՝ ի՞նչ ժամանակ էր գրական ստեղծագործության թաթարական խաժամուժի հեղեղներու շրջանին, ԺԱ-էն մինչև ԺԴ դարերու ընթացքին, որ սրբեց ու քանդեց նորեն արմատ նետած հայ անկախություններն ու քաղաքականությունը, որ կիսովին ցրվեց ու սպառեց մեր ժողովուրդը և ոչնչացուց մեր ազնվականությունը։ Ճիշտ այդ դարերուն է սակայն, որ փախստական դեպի արևմուտքի սահմանները, մեկը ամրացած ծովքի ղղյակը, մյուսը Հռոմկլայի բերդը, երրորդը Լամբրոնի անառիկ ամրություններու ետին, կգրեն, կերգեն ու կհորինեն մեր փախստական մտավորականները, մեր կաթողիկոսները, մագիստրոսները, իմաստասերները։ Մինչ հայրենի հողեն չբաժնվողները կկծկտին լեռներուն ծերպերը, սարերուն խորքերը, վանքի մը հովանիին տակ, կգրեն, կվիճին, կսորվեցնեն ու կայրվին իրենք իրենց հոգիներուն մեջ Նարեկացիեն ու Լաստիվերտցիեն սկսած մինչև Գոշն ու Երզնկացին։

Թաթարական լուծի վատթարագույն դարերը մեր գրաբարի երկրորդ ծաղկումն է՝ հայ հույսը, հայ լույսը, հայու հավատն ու ոգին վառ պահելու բուռն տենչանքով։

Իսկ Լենկթեմուրեն սկսած և ամբողջ թուրք-պարսկական անվերջ պատերազմներու ընթացքին, որոնք մեր հայրենիքի ո՛չ մեկ անկյունը չեն չթողին, ի՞նչ ժամանակ էր երգի ու բանաստեղծության։ Բայց այդ մռայլ ԺԵ և ԺԶ դարերուն է, որ մեր աշխարհիկ նոր բանաստեղծությունը կվերընձյուղե. Նաղաշ, Կոստանդին, Թլկուրանցի, Աղթամարցի և դեռ այնքան ուրիշներ ավելի երկրորդական կամ նվազ հայտնի։ Այդ բոլոր մարդիկը գրեր են մեծ մասով երկու հալածանքի ու երկու ավե-

րածության մեջտեղը, երբեմն այդ անծայր աղետներու անմիջական ճնշման տակ իրենց նեղությունը, իրենց դժգոհանքը երգելու համար։ Բայց ավելի հաճախ և ավելի սովորականը փախստականներ են, բոլորն ալ շուրջի ծանր իրականութենեն, որոնք փոխարինում ու մխիթարանք կփնտրեն անձնական ապրումներու ու վայելքի մեջ։

Քաղաքական ճնշման և քնարական զարթոնքի ներքին բնական կապ մը անսովոր երևույթ չէ ժողովուրդներու պատմության մեջ։

«Անժամանակ» աշխատավոր մըն էր և՛ Մխիթար Սեբաստացին, որ իր խելքի քանի մը հետևորդներու հետ կդեգերի Հոնիականի ու Ադրիականի եզերքները ԺԸ դարուն սկիզբը՝ ապահով անկյուն մը գտնելու համար, բույն մը հյուսելու համար հայ գրականության ու հայ գրքին, հեռո՜ւ իր հայրենի հողերեն, ուր մեռած է ամեն շարժում, հեռո՜ւ իր ժողովուրդեն, որ կտքա ցրիվ ու տրորված, հանգստի խոր շունչ մը քաշելու անկարող։

Վարդապետը կծախե նույնիսկ իր հավատքը, և Սուրբ Ղազարի կղզիին մեջ ամբողջ դար մը իր աշակերտները կգրեն ու կթարգմանեն հին ու նոր գեղարվեստական ու պատմական երկեր՝ Կիկերոն, Հոմերոս ու Վիրգիլիոս։ Ի՞նչ ժամանակն էր։ Ու կշարադրեն աշխարհագրություն, քերականություն, բառարաններ, կվերակենդանացնեն հայ լեզուն, որ աղճատեր ու քայքայեր էին ունիթորները։ Եվ մեր գրաբար գրականությունը կունենար իր վերջին ծաղկումը։

Եվ վերջապես ի՞նչ երևելի ժամանակ մըն էր հայու ԺԹ դարը գրական զարգացման համար, երբ հազիվ քիչիկ մը օրենքի սովերը տեսած, քիչիկ մը եվրոպական շփում, քիչիկ մըն ալ Մխիթարի այդ «անժամանակ» գործին ազդեցությունը, մե՛կ անդամեն կտրուկ կերպով սկսավ գրական հարցերու տարափ մը և ուժեղ գաղութային գրականություն մը երկու ճյուղերով իրարու զուգահեռ և իրարու զուգընթաց։ Ո՜չ պատերազմներն են պակաս եղեր մեր հողերուն վրա ու մեր շուրջը, ո՜չ ճնշումներն ու սիսթեմատիկ հալածանքները, ո՜չ բանտ, աքսոր ու կախաղաններ, ո՜չ տնտեսական ճնշում, գաղթ ու պանդխտություն։

Բայց այդ բոլորին հյուսված, այդ բոլորեն անբաժան, ամեն դարի բռնկելով, ամեն փոթորկի վայրկյան մը մարելով, եղեր են միշտ հրապարակի վրա գրական խնդիրները և այդ համառ հայ գրականությունը։

Եթե հայ ժողովուրդը սպասեր գրականության համար հանգիստ ու հարմար ժամանակներու, մենք հիմա գրականություն չէինք ունենար։ Եվ եթե այսօր սկսինք «շռայլություն» նկատել գրականությունը և իբրև «պերճանք» մը համարել մյուս գեղարվեստներն ու գիտությունները մե-



ղի համար, վաղը կմնանք տկլոր ու զուրկ ամեն ստեղծագործումե, քանի մը աստիճան կիջնենք վար քաղաքակրթության սանդուղեն։

Ժամանակը ոչ մեկ ինքնարդարացում չի ընդունիր և ո՜չ մեկ բացատրություն անոր գլուխը չի մտներ։ Այն միայն գործ կպահանջե և հաջողիլ. իսկ հաջողելու համար անընդհատ աշխատանք է պետք, կամք ու հարատևություն։ Ատոր համար է, որ մեր նոր երիտասարդությունը իր առողջ բնազդով կհետևի մեր դարավոր պատմության բռնած գծին, մեր շատ չար ու բարի տեսած ժողովուրդի ներքին բուռն պահանջին, ստեղծելո՛ւ, բարձրանալո՛ւ, ազնվանալո՛ւ։ Եվ ան կգրե. կսորվի կստեղծե ու կզբաղի նաև գրական հարցերով և՛ տարագրության ճամփուն վրա, և՛ պանդխտության կայաններուն մեջ, և՛ դեռ չտեղավորված գաղթականի բոլոր տեսակի զրկանքներուն ընդմեջեն։

Մեր ժողովուրդի վերջին ամենածանր աղետներուն ու տարագրության օրերուն կատարված գեղեցիկ խորհրդանիշ մըն է հետևյալ պատկերը։ Հյուծված ու տանջանքի մրուրը խմած հայ կինը, որ իր մատին ծայրովը Տեր Զորի ավազներուն վրա գրե՛լ կսորվեցնե իր փոքրիկին։

## Բ  Որո՞ւ համար է գրականությունը

«Այդ բոլորը աղե՛կ մեր գրականության համար և մեր գրիչ շարժողներուն համար, բայց ի՞նչ պետք ունի լայն հասարակությունը ձեր գրածին ու մրածին։ Ի՞նչ կարևորություն կներկայացնեն այդ գրությունները ժողովուրդի մը լայն խավերուն համար»։

Այսպե՛ս կդատե որոշ մտայնություն մը։ Եվ այդպես մտածող մարդը, ինքը գիտակցի թե ոչ, «ուսումնական» ըլլա թե «աշխատավոր», դեռ միշտ կեցած է այն հին հասկացողության վրա, թե գիտությունն ու արվեստը որոշ խումբի մը համար է միայն, որոշ առանձնաշնորհյալներու։ Այս կերպ մտածող մարդը դեռ չէ հաշտված ներքնապես նոր դարերու մեծ նորությանը, թե ամեն ինչի հիմքը ժողովուրդն է և ամեն ինչ ժողովուրդի համար։ Ցույց նույնիսկ լեզվով ու տեսականորեն ինքն ալ կրկնող մըն է այդ արդիական սկզբունքին, քանի որ սարսափելի ուժ ունի ժամանակի ոգին և մեզի ըսել կուտա հաճախ բաներ, որոնք դեռ չեն դարձած մեր ներքին ըմբռնումը և մեր իսկական համոզումը։

Մանավանդ որ ժողովուրդը, մեր ժամանակներու այդ «Նորին մեծությունը», դեռ իրականին մեջ շատ խեղճ և ստորին պայմաններու մեջ կգտնվի թե՛ աշխատանքի, թե՛ ապրուստի, թե՛ կրթության և թե՛ վայելքի տեսակետեն, որով և շատերուն համար «ժողովուրդ» գաղա-

փարը և ժողովրդապետական սկզբունքները դեռ շոշափելի չեն հարկ եղած չափով։ Հեգնանքի ու թերահավատության ընդարձակ ասպարեզ կա դեռ։ Զարմանալու պատճառ չունինք, եթե այդ տեսակի հոգիներուն մեջ բացարձակ կերպով կամ քիչ մը ծպտված, բայց կտրիճ միշտ հին ռեժիմի մտայնությունը, թե «ժողովուրդը» կամ «լայն հասարակությունը» ուրիշ տեսակի արարած մըն է, բարձր մարդուն և անասունին մեջտեղը գտնվող միջին վիճակ մը, որուն համար անպետք ու ավելորդ են մարդկային «վերին շերտերու» կամ «նեղ հասարակության» հնարած ու մտածած բաները։

Կա և ուրիշ խումբ մը, «դրական» մարդիկը, որոնք ընդհանրապես արհամարհանք մը կցուցադրեն ամեն բանի դեմ, որ իր վրա «գրական» անունը կկրե, կուզե լայն շերտերեն ըլլա, կուզե նեղ։ Գրական մարդը, գրական երկը և գրական հարցերը հավասարապես արհամարհելի են ատոնց համար, իբրև անպետք ու հիմարական բաներ, քանի որ ասկի չեն ծնիր։ Մարդկային է երևույթը. մեր չճանչցած ու չգիտցած բաները բնականաբար գնահատել չենք կրնար, մեր չգնահատած բաներն ալ ավելորդ կհամարենք ամենուն համար և մեր ավելորդ համարած բաներով երբ ուրիշները կզբաղին ու կոգևորվին՝ մեր արգահատանքը կշարժեն կամ մեր բարկությունը։ Մութին մեջ վախ կամ անախորժություն զգալը բնական է ամենուն, և այդ զգացումը փարատելու համար, ինչպես հայտնի է, կաղմկենք, կմենախոսենք, քիչ մըն ալ հոխորտալից ձևեր կառնենք։ Եվ այդ հոխորտանքն ու արվեստական բարձր խոսվածքը զգալի է «դրական» մարդոց արհամարհանքին մեջ։

Ավելի բարեմիտները կավելցնեն իբրև չքմեղանք, թե «Ձեր գիտությունները ու գրությունները ժողովուրդը չի հասկնար, չի կրնար հասկընալ»։ Ասոնց ալ պետք է ըսվի ու ընդգծվի, որ գիտական ու գեղարվեստական երկերուն մեջ, ինչպես և ընդհանրապես ամեն տեսակի հարցերու ուսումնասիրության մեջ, ոչինչ չկա խրթին ու անհասկանալի, մատի վրա համրվող մարդոց միայն ըմբռնելի։ Խրթինն ու անհասկանալին անոնց նյութին մեջը չէ, այլ արտահայտության ձևին մեջը։ Միևնույն բանը կարելի է ըսել գիտական բարբառով, որը հասկնալու համար կպահանջվի նախնական որոշ պատրաստություն։ Նույն բանը կարելի է ըսել չոր ու պարզ ֆորմյուլներով ու մասնագիտական բառերով, որ հասկնալի է միայն բացառիկ ընտրյալներուն։ Նույն բանը կարելի է ըսել զանազան ոստումներով, ակնարկներով, գալարումներով ու հազար տեսակ պաճուճանքով, որ անվարժ մարդը ճամփեն կհանեն ու կըխըրտնեցնեն։ Եվ վերջապես միևնույն բանը կարելի է արտահայտել



պարզ ու առօրյա մարդավարի լեզվով ու ձևով։ Խրթինն ու անհասկանալին ոճի հարց է, ո՛չ նյութի։

Անշուշտ, ամեն ընթերցող միևնույն բովանդակությունը չէ, որ կըհանե որևէ գիտական կամ գեղարվեստական գրվածքե մը, ինչքան ալ պարզ ու թեթև ըլլա հորինվածքը։ Ամեն մարդ նույն խորությամբ ու նույն լայնքով չէ, որ կընդգրկե արծարծված հարցերը, ներկայացված տեղեկությունն ու իրականությունը։ Բայց ամեն մարդ ալ բան մը կըմբռնե ու բան մը կհանե գրվածքին մեջեն։ Եվ եթե բուռի առաջին հանածները խիստ համեստ ալ ըլլան, հաջորդ բուռերը ավելի հարուստ ավարով դուրս կուգան։ Ամեն պարագայի այդ ճիգերեն է, որ կմարզվի միտքը ու կխորանան դատողությունները։ Աստված անգամ վեց օրեն ստեղծեց աշխարհքը քաոսեն. և ամեն ըմբռնում աշխարհք մըն է, որ կծնի մեր հոգիի քաոսեն։ Կամաց-կամաց պետք է պատվին լույսերը մութերեն, ցամաքը ջուրերեն, որ վերջապես ստեղծագործությունը ձև առնե։

Մեծ հանցանք է, երբ «լայն հասարակության» ներարկել կուզենք, թե այս ու այն գիտությունը իրեն համար չէ, իրեն անպետք է ու անհասկնալի, թե գեղարվեստները «նեղ հասարակության» համար են, և գրական երկերն ալ՝ գրագետներու։ Այս տեսակի քարոզները մեզի դեպի հին ռեժիմի դասակարգերը կտանի, դեպի դասակարգային չինական պատերը։ Մինչդեռ մարդկությունն ու հառաջադիմությունը արյան ու քրտինքի հեղեղներով քանդելու կտքնին այդ հնադարյան պատնեշները և կձգտին ամենուն համար մատչելի դարձնեն և՛ գեղարվեստները, և՛ գիտությունները, և՛ անոնց տված վայելքը, և՛ անոնց տված հոգեկան բարձրացումը։ Եվ մենք բոլորս պարտական ենք ամեն հնարավոր միջոցներով դրդելու, արթնցնելու, գործի դնելու ժողովրդի և՛ «նեղ», և «լա՛յն» խավերուն միտքը, վարելու ու բոցավառելու անխտիր ամենուն հոգեկան ու քաղաքակրթական պահանջները և ո՛չ թե «անպետքության» ու «ավելորդության» սուտ քարոզներով օրոր կարդանք աշխատանքի բեռին տակ ճզմված քնկոտ հոգիներուն։ Մտքերու այդ սթափումեն, քաղաքակրթական պահանջներու այդ ծարավեն կծնի նաև աշխատանքի բեռին թեթևացումը, որովհետև արթնցնել հեղափոխել ըսել է։

### Գ Ընթերցող հասարակություն

Հին ու միջին դարերուն կարդալ գիտնալը և կարդացողներուն թիվը շատ էր սակավ, ժողովուրդի մը շատ փոքր մեկ տոկոսը։ Տպագրության գյուտեն սկսած և մանավանդ ժողովրդավար նոր կարգերու ընդ-

հանրացումեն ի վեր, այս վերջին դարու մը ընթացքին, իբրև հետևանք գիտություններու տարածման, լրագիրներու առաջացման և պարտադիր ուսման, գիր գիտնալը և գիրք կարդալը հասավ չտեսնված թափի ու չափի։

Բայց և այնպես հիմա այս վայրկյանիս ալ մարդկության ահագին մեծամասնությունը զուրկ է գրքե և ընթերցումե։ Երկրագնդիս վրա ապրելու երջանկությունը ունեցող մարդ ըսված արարածներուն թիվը մեկ միլիարդ և վեց հարյուր միլիոնի չափ կհաշվեն այսօր։ Այդ թվի հազիվ մեկ քառորդը կարդալ գիտե։ Նախ՝ բազմաթիվ ցեղեր կան և ամբողջ ժողովուրդներ, որ ո՛չ գիր ունին, ո՛չ գրականություն, թեև հասուն և ընդունակ ժողովուրդներ են արդեն և հաճախ տեր են շատ հետաքրքիր անգիր բանահյուսության մը, ինչպես օրինակ քյուրտերը։

Երկրորդ՝ ժողովուրդներու մեկ մեծ մասը՝ «արևելյան» ըսված ժողովուրդները, որոնք և՛ գիր ունին, և՛ գրականություն, երբեմն նույնիսկ շատ հին, շատ հարուստ ու բազմակողմանի գրականություն, ինչպես օրինակ Չինը, Պարսիկը և մանավանդ Հնդիկը, բայց ուր մինչև հիմա ալ կշարունակվի դեռ ու կտիրե միջնադարյան վիճակը, գիրն ու գիրքը բացառիկներու մենաշնորհն է և ընդհանրապես հոգևորականության սեփականությունը։ Բայց նույնիսկ «արևմտյան» երկիրներուն մեջ պակաս չեն դեռ ժողովուրդներ, ուր գիր ու կարդալ գիտնալու դրությունը մեծ տարբերություն մը չունի այդ ասիական երկիրներեն։

Երրորդ՝ հարցը միայն գիր ունենալը և գրել-կարդալ գիտնալը չէ. մինչև անգամ այն «քաղաքակիրթ» պետություններուն մեջ, ուր իրա՛վ որ մտցված է պարտադիր ուսումը և ուր գրեթե բոլորն ալ գրել-կարդալ գիտեն, ասով դեռ չեն դարձած ընթերցող ժողովուրդներ։ Ուրիշ բան է կարդալ գիտնալը և բոլորովին ուրիշ բան է կարդալ ուզենալն ու կարդալ կարողանալը։

Նույնիսկ այդ «քաղաքակիրթ» երկիրներուն մեջ մարդոց ստվար մեծամասնությունը այն աստիճան խեղդված է աշխատանքի տակ, այն աստիճան շատ աշխատություն կպահանջվի իրմեն և այն աստիճան չնչին է իր հացի աշխատանքեն դուրս իրեն մնացած ժամանակը, որ բնավ հնար չունի այդ կարգի բաներու մասին մտածելու։ Սակայն միայն բանվորն ու գյուղացին չեն այդ լարված ու անդուլ աշխատանքին տակ տքնողը, նվազ լարված չէ նաև այդ աշխատանքը կազմակերպող, վարող ու շահագործող մասը։

Ամենուն վրա ալ դարուս կնիքը կա, կապիտալի կնիքը. ամենուն աշխատանքն ալ տաժանակիր աշխատանքի կնմանի։ Ամենքն ալ հոգնած, լեզունին հոգնութենե դուրս կախված, ամենքն ալ ջղային և ամենքն ալ



անդադար, անհանգիստ ու խելակորույս վազքի մը մեջ։ Մարդիկ ո՛չ թե կաշխատին ու կարտադրեն ապրելու և վայելել կարողանալու համար, այլ ընդհակառակը, կապրին խմիջիայլոց ու կերպ մը քաշ կուտան կյանքերնին աշխատելու և արտադրել կարողանալու համար։

Մեր դարու տնտեսությունը բռնված է խելագար սպորտով մը, խոշոր թիվերու, խոշոր չափերու սպորտովը։ Հին ու միջին դարերուն մարդոց բոլոր հաշիվները ընդհանուր առումով հազիվ կանցնեին տասնավորներեն ու հարյուրակներեն դեպի հազարավորները։ Հիմա մենք ո՛չ թե հազարներով ու տասնյակ հազարներով, այլ միլիոններով ու միլիարդներով անգամ չենք կրնար մեր հաշիվները փակել, կշտացնել մեր տենչանքները և մեր ծարավը հագեցնել։

Հին, բարի ժամանակներուն մեջ մեր «անկիրթ» նախահայրերը կըբավականանային իրենց գյուղի, իրենց շրջապատի մարդիկը շահագործելով, իրենց դրացի ժողովուրդներու աշխատանքը ծծելով։ Հիմա մեր «կիրթ» դարուն մեջ, երբ ծովերու միջոցով և շոգիի աշխատանքով բոլոր ցամաքները կապված են իրարու, հիմա մարդիկ կջանան շահագործելու բոլոր ժողովուրդներուն աշխատանքը, կուզեն տիրել աշխարհիս հեռավոր անկյուններեն բոլոր ժողովուրդներու գլխուն և աշխատցնել աշխարհը իրենց հաշվին։

Համաշխարհայի՜ն արդարություն, համաշխարհայի՜ն շուկաներ, համաշխարհայի՜ն կայսրություններ. Լոնտոն, Փարիզ, Պերլին, Նյու-Յորք ուղեղները կաշխատին, և այդ գլուխներու ղեկավարության տակ կաշխատին գործարաններ, նավարաններ, զինարաններ. շատ մը գործարաններու մուխը չի մարիր տարիներով անընդհատ։ Մարդիկ կմաշեն ինքզինքնին, իրենց հոգին ու մարմինը, հևհև կբանեցնեն իրենց աշխատավորները, կքերթեն ուրիշ իրենցմե ավելի փոքր ու տկար ժողովուրդները, որպեսզի ամեն կողմեն ոսկին հոսի իրենց սնտուկները, որպեսզի այդ ոսկիներով նոր, ավելի բարդ մեքենաներ, գործարաններ ու շահագործարաններ բարձրացնեն, որպեսզի նոր ու նոր միլիոններ ու միլիարդներ դիզել կարողանան միևնույն նպատակով, և այսպես անվերջ։

Կատարյալ եռացող ու կախարդական կաթսա մը. ինքն իր մեջ պղպջող, ինքն իր մեջ գալարվող, ինքն իր մեջ տառապող եռք մը, եփ մը մարդկային բանական էակներու։ Միջնադարյան երևակայության ստեղծած «Վհուկներու կաթսան», որ հիմա իրականություն ու մարմին է ստացեր հսկայական չափերով և որուն մեջ մարդկային մարմինները, մարդկային հոգիները, մարդկային խիղճերը և ոսկին կհալին, կըգալարին, կթավալին ու կեռան երանության խմիչքը պատրաստելու խարդախությամբ։

Ապագայի մարդը, այսինքն մեզմէ աւելի մարդկային մարդը զարմանքով ու ապշութեամբ ուսումնասիրէ պիտի օր մը մեր արդի այս խելագար, հիւանդ ու անսանձ կիրքը. այս ամէն բան խլելու, ամէնքէն հափշտակելու, ամէնքը ոտքի տակ տալու, ամէնուն զարնելու և ամէն ինչ իր ձեռքին մէջ հաւաքելու արդի դիւային մոլուցքը: Մինչդեռ ինչքա՜ն, ինչքա՜ն քիչ բան է հարկավոր և՛ կուշտ ըլլալու, և՛ առողջ, և՛ հանգիստ ունենալու, և՛ հոգեկան թռիչք, և՛ ազատութիւն, և՛ վայելք. և ամէնո՛ւն համար, ամէնո՛ւն:

Հիմա մարդիկ կարծես բոլորովին մոռցեր են կյանքի վայելքը, եթե հաշվի չառնենք ամենէն բնապղծական ու ամենէն կոպիտ վայելքները: Հիմա մարդիկ կճանչնան միայն վազելու, աքացելու ու իրար ձեռքէ խլելու սպորտը, որուն վրա կնային ինչպես գերագույն վայելքի մը վրա, և այդ վայրագ սպորտին անունը դրեր են գործ, աշխատանք:

Հիմա մեր դարը դեռ տաժանակիր աշխատանքի դարն է, ստրուկներու դարը. պատմության առաջին օրերեն եկող կոպտության և ստրկության տիրապետությունը մարդկային ընկերության վրա և ոչ թե խորհող ու ապրող, աշխատող ու վայելող ազատ էակներու դարը. դեռ հեռու է այդ բախտավոր մարդկության արշալույսը: Հիմա հազվագյուտ բացառություն են մեր մեջ այն մարդիկը, որոնք բախտ ունին ու կարելիություն, որոնք կուզեն ու կրնան վայելել բնությունը, ճամփորդությունը, վայելել գեղարվեստները, գիտությունը, վայելել ընկերական կյանքի հանգիստն ու զվարթությունը, ընտանիքի առողջ ու մտերիմ մթնոլորտը, և վերջապես վայելել աշխատանքը: Որովհետև վայելքներուն վայելքն է աշխատանքը, եթե մարդուս վրա բռնի պարտադրված չէ, եթե մարդուս ուժերեն ու պետքերեն վեր չէ, եթե մարդուս բնական հակումներեն դուրս չէ, և եթե իր աշխատանքին բերած արդյունքը ուրիշներու ճանկերուն ու ժանիքներուն համար չէ:

Վաղվան մարդկությունը մեզմե ավելի նվազ հափշտակելու ու տիրելու ծարավի, մեզմե ավելի քիչ մեքենա, և մեզմե ավելի իմաստուն, մեր այս կարճլիկ կյանքը խելացի կերպով ապրելու ու վայելելու համար՝ շատ ավելի մեծ ուշ պիտի դարձնե կյանքի բոլոր նուրբ ու ազնիվ վայելքներուն վրա, բարձր վայելքներու բոլոր զովարար աղբյուրներուն վրա: Եվ բարձր վայելքներու այդ աղբյուրներուն մեջ շատ մեծ ու շատ կարևոր տեղ մը կբռնե ընթերցանությունը: Քանի մարդկությունը բարձրանա՝ մարդիկ այնքան մեծ ծարավով վազեն պիտի գիտություններու ու գեղարվեստներու ետևեն, և ատոր համեմատ ալ մեծնա պիտի օր օրի ընթերցողներուն թիվը և խորանա պիտի ընթերցանության պահանջն ու արժեքը:



## Դ Գրքերուն բազմակողմանի արժեքները

Այդ գործի արագությանը նպաստելու համար լավ է, որ մենք ալ մեր կողմեն ջանանք հստակ ու գիտակից դարձնելու մեր մտքին դեմ գրքերու ունեցած բազմակողմանի ու բացառիկ դերը թե՛ անհատական, թե՛ հանրային տեսակետեն:

Ոչ միայն «լայն», այլ նույնիսկ «նեղ» ու «նեղագույն» հասարակության անդամներն անգամ չունին հաճախ ընթերցանության արժեքներուն խոր ու լրիվ ըմբռնումը: Կգիտակցին սովորաբար գրքին արժեքը այս կամ այն կողմեն միայն՝ նայելով ընթերցողի գործին, ստացած կրթության, իր ապրած շրջանակին կամ անոր բոլորովին պատահական դատումին ու մերձեցումին: Ընթերցանության մնացած կողմերուն վրա կա՛մ բնավ չի մտածվիր, կա՛մ ներկա կըլլա հոգիին մեջ պղտոր, ընդհանուր ու կիսովին բնազդական զգացում մը միայն:

Համեմատորեն շատ ավելի դյուրին ու պարզ է գործնական գրական երկի մը դերն ու պետքը ըմբռնելը: Զուտ դիտական երկերուն կարևորությունը շատ ավելի քիչեր կհասկնան իսկապես: Իսկ գեղարվեստական գրություններուն դերն ու անհրաժեշտությունը կհասկնան անհամեմատ ավելի քիչերը, և հասկցողներն ալ ո՛չ լրիվ չափով, ո՛չ հարկ եղած խորությամբ ու հարգանքով: Թե՛ զուտ գիտական և թե՛ մանավանդ գեղեցիկ գրականության երկերուն վրա շատ շատերը կնային տեսակ մը խաղի վրա և խաղ ըսելով կհասկնան գլխավորապես ժամանց, քանի որ խաղն ալ չէ ըմբռնված դեռ իր բովանդակ իրական մեծ արժեքով: Խաղերուն անհրաժեշտությունն ու կարևորությունն ալ կխուսափի դեռ շատերու դիտողութենեն, թեև ամենքն ալ գիտեն, որ մանուկը գոնե իր կյանքի առաջին վեց-յոթը տարիներուն ինչ որ կսորվի՝ կսորվի խաղով ու խաղալով, և որ կյանքի ամբողջ ընթացքին խաղը միշտ գոյություն ունի աշխատանքին զուգընթաց:

Մինչդեռ ընթերցանության վրա և գրական ստեղծագործության վրա պետք է լրջորեն խորհիլ և պետք է դիտել գրությունները բոլոր կողմերեն, որ բացահայտ դառնա գրքերուն և ընթերցման անփոխարինելի դերը թե՛ անհատներու և թե՛ ազգերու զարգացման, բարձրացման ու ազնվացման տեսակետեն:

Երբ գրքերուն բազմադիմի արժեքները վերլուծման կուզենք ենթարկել՝ բնական կերպով կզատվին իրարմե գրական երկերու անհատական արժեքները իրենց ունեցած հասարակական արժեքներեն, այսինքն՝ անհատ էակներուն տված օգուտեն ու վայելքեն ետքը աչքի կիյնան նաև գրքերու բերած օգուտն ու բարձրացումը ամբողջ ժողովուրդին՝ անհատներու

ամբողջ հանրության մը։ Թեև պարզ է ինքնին, որ այդ երկուքը՝ անհատն ու հանրությունը, միշտ ու ամեն տեղ սերտ կապեր ունին իրարու հետ, հաճախ պարզապես հյուսված են իրարու, քանի որ ժողովուրդի մը անհատը մեկ մասնիկն է հանրության և իր վրա ներգործող ամեն ազդեցություն՝ ազդեցություն մըն է ամբողջին համար, ինչպես և ամբողջության մը կրած ազդեցությունը վերջապես իրողություն մըն է նաև հանրության մասնիկը կազմող անհատին համար։

Գրքերու անհատական արժեքի տեսակետեն նախ դիտենք ընթերցանության տված օգուտն ու վայելքը, այսինքն գրքի ու ընթերցողի մեջ եղած կապը։ Ետքն ալ կանցնինք գրքերու նորեն անհատական արժեքին, բայց հեղինակի տեսակետեն, այսինքն հեղինակի ու ստեղծագործության կապը, վերջապես անցնելու համար գրքի ու գրության համայնական-ազգային արժեքներուն։

## Ե Գիրքը ուսում

Գիրքը ընթերցողի կողմեն դիտած քանի մը օգուտ ու արժեք ունի, մեկը մյուսեն պիտանի, մեկը մյուսեն կարևոր։ Իր ամենեն առաջին դերը, ամենեն շատ նկատվողը և ընդհանրապես դյուրին ըմբռնվողը ուսման և ուսուցման ծառայելու իր կոչումն է։

Գրքերը ըստ էության փոքրիկ տուփեր են ու սնտուկներ, ուր կանոնավոր կերպով դարսված են ու կպահվին մարդկային տեղեկությունները, ուսումնասիրությունները, փորձերը, դիտողությունները, մտածումները, եզրակացությունները, ներքին աշխարհի վերլուծումները, մարդկային հոգեկան ապրումները, մեկ խոսքով մարդու բովանդակ գիտցած, խորհած ու հասկցած բաները։ Ընթերցանությունը ամեն բանե առաջ դպրոց է, ուսում ու կրթություն։ Միթե դպրոց մը ամբողջ կյանքի համար, անընդհատ, ամեն տեսակի համար, ամենուն համար, ով որ ուզենա օգտվիլ անոր իմաստութենեն և հարմարվող ամեն ճաշակի, ամեն պետքի, ամեն տեսակի ընդունակության ու հակումներու։

Ուր որ տիրեր է կամ դեռ կտիրե որոշ դասակարգերու ու բռնակալներու տիրապետությունը, և ժողովուրդը դեռ հպատակ մըն է ու ճորտ մը աշխատանքի, բնականաբար այդ տիրողներուն ձեռքը կկեդրոնանա ինչպես ամեն մարդկային վայելք ու իրավունք, այնպես ալ արհեստները, գեղարվեստները և գիտություններ ունենալու և գործածելու մենաշնորհը։ Նյութական հարստություններուն հետ անոնք տեր կդառնան նաև հոգեկան հարստություններուն։

Տարբեր հարց է, որ այդ տիրողները, ինչպես նյութական, այնպես



ալ հոգեկան այդ դիզված գանձերը շատ նեղ, շատ միակողմանի, շատ տգետ չափերով ու կերպով կրցած են օգտագործել նույնիսկ իրենց համար։ Մինչև հիմա տիրող ու ղեկավարող դասակարգերուն միայն մատչելի մենաշնորհ մըն է եղեր գիրքը, գրականությունն ու գիտությունը։ Իզուր չէ՛ անշուշտ, որ Աստված, այսինքն իշխողը, այնպես խստիվ ու խստիվ արգիլեր էր Ադամին, այսինքն հպատակ մարդուն, որ չըլլա թե ուտե «բարիի ու չարի գիտության» թուզեն։ Սակայն մարդկային հոգիին մեջ դժբախտաբար ու բարեբախտաբար արթուն է միշտ սատանան, որ արգիլված պտուղները ավելի տենչալի կդարձնե. հոտկե ծընունդ կառնեն ըմբոստացումները ամեն տեսակի հին ու նոր տիրապետողներուն դեմ և ամեն կարգի արգելքներու և սահմանափակության դեմ և այդ ակեն է, որ դուրս կծորին, կհոսին, կգետանան ու կհեղեղվին հեղափոխությունները։

Ադամ-Եվայի այդ նշանավոր թուզին պատմությունը հավիտենական պատմությունն է մեկ կողմեն բռնակալության և մյուս կողմեն գիտության ու բարձրացման ձգտող մարդկային տենչանքին. թեև ամեն անգամ ալ այդ հուշակավոր թուզեն ճաշակողը զգացեր է միշտ թե՛ իր իմացական, թե՛ իր գիտական խեղճությունը և նույն թուզին տերևներովը ջանացեր է կերպ մը իր հասողության մերկությունը ծածկելու։

Այսպես թե այնպես, հիմա որ միլիոնավոր Ադամ-Եվաներ, և հետըզհետե Ադամ-Եվաներու ավելի ու ավելի միլիոններ, համը առեր են արդեն եդեմական դրախտի «գիտության» թուզին, հիմա արդեն ուղղակի զարմանալի է, որ ժողովուրդի մը հոգեկան ու տնտեսական բարձրացման համար այս աստիճանի սուր ու կարևոր զենք մը, ինչպես է ընթերցանությունը, թողնված է պատահականության ու երեսի վրա։

Միայն համը առած ըլլալը շատ չնչին ու ապարդյուն բան մըն է. պետք է, որ գիտությունը դառնա տևական ու մշտական սնունդ։ Եվ ով որ կձգտի ժողովրդական սկզբունքներու իրական հաղթանակին, ով որ կտենչա լայն խավերու բարձրացումը և ավելի բախտավոր տնտեսական վիճակ մը անոնց համար, ով որ կերազե ժողովուրդներու քաղաքական հավասարեցումը և եղբայրացումը, ան պետք է ձգտի ամեն բանե ավելի ժողովուրդներու հոգեկան մակարդակի բարձրացումին, գիտական ըմբռնումներու խորացումին և զգացական պահանջներու ազնվացմանը։ Ժողովուրդը «տեր» հայտարարել և միևնույն ժամանակ պահել ժողովուրդը նույն հին մտավոր ստորին աստիճանին վրա, ետ մնացած ու զուրկ օրվան գիտական հասողութենեն, իմացական թռիչքներեն և հոգեկան պահանջներեն, ո՛չ թե քաղաքական ու տնտեսական թեթևացում կբերե ժողովուրդին, այլ նո՛ր ստրկություն և

*նո՛ր շահագործում հենց ժողովուրդի անունով և ժողովուրդին մեջեն վեր ցատկած նո՛ր բռնակալներու ձեռքով։*

*Այս պատճառով ալ ազգերը ինչ չափով որ կհասուննան, այնքան ավելի լուրջ ուշադրություն կդարձնեն դպրոցներու լայնացման ու հանրացման գործին, և այնքան ալ հետզհետե ավելի ու ավելի կհետաքրքրըվին ժողովրդական կրթության բոլոր կողմերովը և բոլոր զենքերովը, որոնց թվին մեջ առաջնակարգ տեղ կբռնե ընթերցանությունը։ Եվ հեռու չէ այն օրը, երբ պառլամենտներն ու կառավարությունները իրենք իրենց ձեռքը պիտի ուզեն առնել ժողովուրդներու ընթերցանության գործին կազմակերպումը։*

*Բոլոր կուսակցությունները մրցին պիտի իրարու հետ այդ ուղղությամբ ամենեն ավելի ջանք թափելու ամեն մեկը իր փարախին մեջ։ Պակաս չէ ըլլալու և մասնավոր ձեռնարկություններու և ընկերություններու աշխատանքը, և պետք չէ, որ պակաս ըլլա, քանի որ ամեն տեսակի հոգեկան ու տնտեսական շարժումներու պետականացումը կտանի դեպի անհոգի աշխատանք, դեպի դանդաղաշարժություն ու քարացում, իսկ կուսակցական ջանքերը միշտ ալ ըլլալու են միակողմանի և որոշ գույնի ակնոցներով։*

*Միաժամանակ ձգտին ու աշխատին պիտի բոլոր ընթերցանությունը տարածելու ու ղեկավարելու հոգերով։ Մարմին պիտի առնեն պարբերական դասախոսություններ հասարակության բոլոր խավերուն և անկյուններուն համար ընթերցանության էությունը բացատրելով, ուղիները մատնանշելով և հետաքրքրություն արթնցնելով։ Գյուղե գյուղ և ավանե ավան շարունակ պիտի երթևեկեն մշտական շրջուն մասնագետ օժանդակներ ամեն տեսակի, կարգի, վիճակի, հակումներու ու նպատակներու համապատասխանող ընթերցման պահանջած մանրամասն ցուցմունքներ տալու և կատարված աշխատանքները ստուգելու։*

*Պետք է մշակվին ամեն նյութի ու աստիճանի մանրակրկիտ հատակագիծեր ու ծրագիրներ, թե այսինչ նյութեն ի՞նչ կարդան, ինչպես կարդան, ինչ խնդիրներու վրա մասնավոր ուշ դարձնեն, ինչ հարցերու պատասխանը փնտրեն և ինչ կետերուն շուրջ հանեն իրենց վճիռն ու տեսությունը։ Կյանքի պիտի կանչվին դավառական հարուստ կայուն գրադարաններ և անոնց կից բազմաթիվ շարժուն օթո ու վակոն գրադարաններ ամեն պետքերու հասնող բովանդակությամբ, և ողողեն պիտի հրապարակը աժան, չափազանց աժան, պատկերազարդ, գունավոր, գեղեցիկ, ընտիր ու ճոխ հրատարակություններ ամեն տեսակի գրքերու, քարտեզներու, ալպոմներու ու պարբերականներու, գիտության ու արվեստի բոլոր ճյուղերուն վրա։*



*Աս ու ասոնց նման բոլոր աղվոր-աղվոր բաները [illegible] են դժբախտաբար, որով մինչև ատոնց իրականություն դառնալը գործի բոլոր ծանրությունը ինկած պիտի ըլլա նորեն հոս ու հոն հատ ու բրդուճ հավաքական ճիգերու վրա և մանավանդ անհատական ջանքի՝ ամեն մեկը իր հաշվին։ Ամեն մարդ ի՛նքը ձգտելու է իր ձեռքեն եկած չափազանց թերի ու տկար միջոցներով հնար եղածին չափ վեր մագլցելու ընթերցանության սանդուղեն։*

*Պետք է ամեն մարդ համակվի այն խորին ճշմարտությամբ, թե ով օրական գոնե ժամ մը կհատկացնե կանոնավոր, հանգիստ և ընտրովի ընթերցանության, անիկա ո՛չ միայն իր վայելքին ու բարձրացման կաշխատի, այլ կծառայե ամբողջ մարդկության մարդկայնացմանը, նըրբացմանը, ազնվացմանը, անիկա կմաքառի ժողովուրդներու իրար մորթելու ու իրար սպաննելու ու գազանությանը դեմ, անիկա կպայքարի ազգերու ու «դասակարգերու» իրար ատելու ու իրար դառնացնելու փոխադարձ տխմարությանը դեմ, անիկա կկռվի ուրիշները ստրկացնելու վայրենի տենչանքին դեմ և ուրիշներու աշխատանքը ուտելու նախամարդկային բնազդներուն դեմ։ Որովհետև այդ բոլոր երևույթները ծագում են առած մարդ-անասունի հոգեկան և ընկերական կյանքի շատ ցած և ստորին աստիճանի պահանջներեն ու վիճակեն, և թե այդ բոլորը փոխվիլ ու վերացվիլ չեն կրնար, մինչև որ մարդկային լայն ու ստվար մեծամասնության հոգին ինքը չսթափի ու չբարձրանա իր թմրած, իր սըմքած ու իր տգետ վիճակեն։*

## Զ Գիրք ընկեր

*Գիրքը խոսք է ու խոսակցություն և միշտ բացարձակապես անհատական. այսինքն կա միշտ մեկը, որ կխոսի մեզի գրքին մեջեն, կբանա մեզի իր հոգին, կպատմե մեզի իր կյանքը կամ իր տեսածը, կբացատրե մեզի իր մտածումներն ու եզրակացությունները։*

*Գրքերուն մեջեն մեզի խոսողը հաճախ հեղինակն է միայն. մենք հեղինակի հետ է, որ անմիջական հարաբերության մեջ ենք։ Բայց շատ անգամ հեղինակը ավելի կամ պակաս չափով ետ կքաշի, ինքը կմնա ստվերի մեջ և մեզի հարաբերության մեջ կդնե պատմութենեն կամ ժամանակակից իրականութենեն եկած անձերու հետ, անոնց կյանքը, գործերը, անոնց ներքինն ու արտաքինը անոնց մտքերն ու իղձերն են, որ մենք կտեսնենք ու կլսենք, անշուշտ, հեղինակի երևակայած, ուզած կամ հասկցած ձևերովը, հեղինակի դիտակին մեջեն։ Շատ անգամ ալ ամբողջապես հեղինակի հնարած և ամբողջովին հեղինակի հոգիեն ծը-*

նած էակներ են, որոնք որոշ անհատականությամբ և որոշ կենդանի կերպարանքով կուգան մեր դեմը, կխոսին, կգործեն և կապրին։

Եվ մենք կարդալու միջոցին, ինչպես և ընթերցումեն ետքը, սերտ հոգեկան հաղորդակցության մեջ կմտնենք այդ բոլոր տեսակի անձերուն ու մարդիկներուն հետ մեր հոգիին մեջ, կվերլուծենք անոնց ըրածը, կըխոսինք ու կվիճենք անոնց հետ, կհավնինք, կժխտենք, կվշտակցինք, կատենք ու կսիրենք։ Ուրիշ խոսքով կապրինք ու կկապվինք անոնց հետ, և ինչքան խոր ու մեծ ըլլա այդ անձերու մտքին, սրտին ու գործերուն թողած ազդեցությունը մեր հոգիին վրա, այնքան ալ խոր ու տևական կըլլա բնականաբար մեր կապն ու հաղորդակցությունը անոնց հետ։ Ճիշտ այն ձևով, ինչ ձևով որ կկատարվի իրական կյանքի մեջ մեր իրական հանդիպումներու միջոցին մեր կապն ու շփումը ծանոթներու, ուղեկիցներու, կենակիցներու ու գաղափարակիցներու հետ։

Ատոր համար է, որ մեծ հաճույք կզգանք մեր կարդացած ու սիրած գրքերը նորեն ու նորեն կարդալու ատեն, ինչպես որ կյանքի մեջ մեր սիրելի բարեկամներուն վերստին հանդիպիլը խոր ուրախություն կպատճառե մեզի։ Ատոր համար է, որ շտապ ու վայրիվերո ընթերցումը հնար չի տար ներքին ավելի լուրջ մերձեցումի, երկաթուղիի կառքին մեջ կապված ու լուծված հարևանցի բարեկամության մը պես, երեկույթի մը իրարանցումին մեջ մեզի հետ կարճ ու հապշտապ շփումի եկած նոր բարևածանոթի մը պես։ Մինչդեռ ուշադիր ու կրկնակի ընթերցումներեն է, որ հետզհետե կընտրվին մեր գրենի մտերիմները, ինչպես որ դուրսի հաճախակի ու սրտաբաց հանդիպումներեն է, որ կըկազմվի կյանքի մտերիմներուն մեր նեղ շրջանակը։ Ատոր համար է դարձյալ, որ երկի մը թարգմանիչը կամ իր նախընտրած դերը խաղցող դերասանը շատ հաճախ խոր ու սրտագին մտերմությամբ կկապվին և՛ հեղինակին հետ, և՛ իրենց թարգմանած կամ ներկայացուցած դեմքերուն հետ։ Ատոր համար է, որ գրքերը և գրքերուն մեջ պատկերացված մարդիկը իրենց ջերմ պաշտպաններն ունին, իրենց սիրահարները, ինչպես և իրենց բուռն ու կրքոտ հակառակորդները։

Հոգեբանական իրողություն մըն է ասիկա ու կենդանի ներքին իրականություն մը։ Գրքերուն մեջեն խոսող ու գործող մարդիկը, ըլլան իրական ու պատմական դեմքեր, ըլլան բանաստեղծական մարմնացումներ, ինչպես և հեղինակը ինքը, ասոնք բոլորն ալ անխտիր ապրող ու կենդանի արարածներ են մեր հոգիներուն մեջ, իսկական մարդիկ, որոնք դուրսի աշխարհեն մեր հոգիները մտած մյուս մարդոց նման և անոնց հավասար, կան հոն, գոյություն ունին, կշարժին, կգործեն, կըխոսին ու կազդեն։



Այդ պատճառով ալ ով սովոր է կարդալու, կապրի մշտապես լայն, բազմերանգ ու խիստ հետաքրքիր ծանոթներու շրջանակի մը մեջ, կապրի լայն աշխարհքի մը մեջ, և կապրի մանավանդ ընտիր աշխարհքի մը մեջ, քանի որ մշտապես հաղորդակցության և անձնական մտերմության մեջ է հին ու նոր դարերու և բոլոր ժողովուրդներու ամենեն խոր, մեծ, իմաստուն, տաղանդավոր ու առաքինի դեմքերուն հետ. ամենաընտիր մարդիկը, որոնք երբևիցե ապրած են արևի լույսին տակ կամ մարդկային տենչանքներուն և երազանքի լույսին տակ։

Գիրքը այդ ընկերական ծանոթացումներու ժամադրավայրն է, համամարդկային ու համադարյան ակումբ մը։ Գիրքը ընկերական շրջանակ մըն է, և այդ իմաստով գիրքը ընկերն է մարդուս։

Եվ մեր այդ գրենի մտերիմներն ու ծանոթները, ճիշտ մեր աշխարհային ծանոթներուն ու մտերիմներուն նման կազդեն մեր վրա ամեն ուղղությամբ ու կազդեն խորապես։

Իրենց գոյությամբը, իրենց գործերովը, իրենց խոսքերովը կհարըստացնեն մեր ծանոթություններու ու տեղեկություններու գանձարանը. կճանչնանք նոր մարդիկ, նոր տեսակի հոգիներ, նոր գործե՛ր, նոր դատում, նոր զգացական աշխարհ, կնպաստեն մեր ըմբռնումներու խորացմանը, մեր աշխարհայացքի լայնացմանը, իրենց դատումներովը մեզի մտածելու կդրդեն, իրենց առանձնահատկություններովը կհրեն մեր ուշադրությունը նոր որոնումներու։

Անոնք կազդեն մեր զգացումներուն, մեր համակրանքներուն, մեր ճաշակին՝ վարակելով մեզի իրենց էությամբը, իրենց սերերովն ու տրամադրություններովը, և խորը դրոշմ կդնեն մեր զգացական գնահատումներուն վրա իրենց պատճառած հաճույքներովն ու զվարճություններովը։

Անոնք կազդեն մեր կամքին ու գործունեությանը իրենց օրինակով, իրենց շարժումներով, իրենց սկզբունքներով, իրենց ներշնչած հիացումով, իրենց գծած կյանքի նպատակներով։ Անոնք սիրտ կուտան գոյության համառ կռվին մեջ, կոգևորեն, կբռնկցնեն մեզի, հաճախ կդառնան մեր իտեալը, մեր իտեալին ջահակիրը։

Եվ այսպես շարունակ գրքերու միջոցով ուրիշներու հոգին մըտնելը, ուրիշներու հոգերովն ու ցավերով ապրիլը, շատ ու հեռավոր մարդոց հետ կապված ըլլալը, շատ «օտար» հոգիներու մեր առջև մերկացվիլն ու մեզի սիրելի ու թանկագին դառնալը, կամաց-կամաց մեր էության մեջն եսն ու ոչ-եսը որոշ չափով կխառնե իրարու, կհյուսե իրարու, և մենք կսկսինք նկատել մեզի իբրև մեկ մասը խմբակցության մը, ամբողջության մը, և մեր շահն ու հաճույքը կփնտրենք նախ խմբակցության, վերջն ալ ամբողջության օգուտին ու բախտավորության մեջ։

Գրքերը իբրև ընկեր ու ընկերական շփում կսրեն ու կզարգացնեն մեր մեջ ընկերական զգացումը, մեր հոգիի հանրային-համայնական կողմերը, մեր մարդկային ու համամարդկային գիտակցությունը։ Այսինքն՝ կկրթեն ու կքաղաքակրթեն մարդը, մարդու մեջի հին ու խորը նստած անասունը հետզհետե կմարդկայնացնեն. կամրացնեն խիղճը, ամոթը, քաղաքավարությունը, պարտականության զգացումը, արդարության պահանջը, ներողամտությունը, անձնվիրությունը, որովհետև այս բոլոր հոգեբանական բառերը մեզմե կպահանջեն միայն մեկ բան մը՝ մտածել նաև ուրիշներու մասին, այսինքն՝ սանձել եսը։

Այսպես է. մեր սիրած գրքերու էջերուն մեջեն կխոսին մեզի մեր հոգիի լավագույն և մեծագույն ընկերները, որոնք մեկ կողմեն ընկերական շփման բազմադիմի վայելքներն ու առավելությունները կուտան մեզի, մյուս կողմեն ալ կընդլայնեն մեր աշխարհայացքը, կնըրբացնեն, կմարդկայնացնեն մեր ամբողջ էությունը։

Անշուշտ, որ այս բոլորը ճշմարիտ է միայն լավ ու ընտիր գրքերու վերաբերմամբ։ Ինչպես կյանքի մեջ լավ ու ընտիր ընկերներու կից՝ շատ կան նաև գեշ ուղղությամբ վարակիչ օրինակներ, այդպես ալ գրքերու աշխարհին մեջ պակաս չեն վնասակար ու վատօրինակ գրություններ, որոնք ստորին զգայություններ կհրահրեն, ընկերական ցած ու ծուռ ըմբռնումներ կներարկեն, գեշ օրինակ ու գեշ ճաշակ, անառողջ մտայնություն կբերեն ընթերցողին։ Ատոր համար ալ շատ կարևոր հարց է, ինչպես կյանքի իրականության մեջ կենակցության համար ազնիվ ու բարձր անձերու և օրինակներու ընտրությունը, այդպես ալ գրենական աշխարհի մեջ կրթիչ ու գեղեցիկ, ազնվացնող ու բարձրացնող գրքերուն ընտրությունը։

## Է Գիրքը վայելք

Ինչպես որ գրքերը գիտության, ուսման և մտածմունքի ջտեմարաններն են, այնպես ալ անոնք միևնույն ժամանակ շտեմարան են բազմատեսակ մեծ ու փոքր մտավոր զվարճություններու, հաճույքներու ու վայելքներու, որովհետև ամեն մեկ մտավոր շարժում, ամեն մեկ մտավոր ստացում ու յուրացում իր վրա ու իր մեջ ունի զգայություններու ամբողջ փունջ մը։

Մտքի աշխատանքը ինքը հաճույք մըն է, մտածելը, դատելը, դիտելը, երևակայելը, հիշելը, այսինքն, մեր մտքի մեքենային զանազան ուղղությամբ բանիլը զանազան տեսակի բավականություններ են մեզի համար, և ինչքան որ այդ աշխատանքը համաչափ ըլլա մեր մեքենայի տրամադրելի ուժերուն և համապատասխան մեր մեքենայի հակումներուն, այնքան ավելի շեշտված կըլլա նաև իր արտադրած զվարճությունը։

Մտքի աշխատանքին նման ներքին բնական հաճույքներ են նույնպես այդ աշխատանքին արդյունքը եղող ամեն ըմբռնում, ամեն թափանցում, ամեն տեսակի մտավոր նոր կառուցում ու կերտում։ Այդ բոլոր նոր-նոր աշխարհները, որ հետզհետե կգոյանան ու կկազմվին մեր մըտքի խավարչուտ տիեզերքին մեջ և կներկայանան մեզի իբրև նոր մտապատկեր, նոր հասկացողություն, նոր սկզբունք, նոր հավատք, նոր իտեալ, նոր ձգտում ու նոր որոշում, այս բոլորը կբերեն իրենց հետ նուրբ ու խորին հաճույքներ ու ոգևորություն։

Հաճույք ունին ո՛չ միայն ատոնց ծնունդը, այլև այդ ծնունդները կարապետող մեր մտքի կատարած բոլոր որոնումները, ինչպես և հետագա ամեն տեսակի սրբագրությունները, հավելումները, լրացումները, մեր մտածումներու հղկվիլը, տաշվիլը, կոկվիլը, կլորնալն ու հստակիլը. մեկ խոսքով՝ ամեն յուրացում, ամեն խորացում։

Եվ վերջապես մտավոր հաճույքներ կուտան մեզի մեր արդեն վաղուց կազմված ու ավարտած համոզումները, աշխարհայացքը, սկըզբունքներն ու իտեալները, երբ կտեսնենք, որ ուրիշներն ալ նույն ատվածներուն կերկրպագեն, որ ուրիշներն ալ իրենց ուրույն ճամփաներով մեր տաճարը կհասնին։ Եվ ինչքան մեծ ու լրիվ է մեր կարդացած գըրքերուն ու մեր մտքին մեջ եղած գաղափարակցությունը, ինչքան էական կետերու մեջ զույգ կերթան մեր դատողություններն ու եզրակացությունները, մեր տեսություններն ու մեկնությունները, այնքան ավելի խոր կըլլա բնականաբար և մեր զգացած բավականությունը։ Եվ, ընդհակառակը. դժգոհություններու և անախորժություններու աղբյուր են միշտ մեր չընդունած, մեզի անդուր եղող, մեր սկզբունքները խաչաձևող գըրքերուն ընթերցումը։ Ատոր համար է, որ ամեն մարդ իր կուսակցության թերթը կարդալ կսիրե և ամեն մասնագետ կկարդա մասնավոր սիրով իր դավանակիցներուն գրությունները։

Նույն է իրողությունը նաև ընկերական շփման տեսակետին։ Ինչպես որ գրքերն ժամադրավայր են նոր հանդիպումներու, նոր ծանոթություններու, կամ հին ու սիրելի դեմքերու վերստին տեսության և ավելի մոտիկ մտերմության, այդպես ալ այդ նույն գրքերը ժամադրավայր են ընկերական ամեն գույնի ու երանգի հուզումներու ու զվարճության, որովհետև ընկերական շփում ու կենակցում ըլլա կյանքի թե գրքի մեջ, ունի զգայություններու և հաճույքներու սարդի ոստայն մը, որուն նուրբ թելերուն մեջ սիրտը իսկույն ճանճի մը պես կխճճվի։

Հաճույք ունի նոր մարդիկ ճանչնալը, երբ հոգիներու նոր ծալքեր

*կբացվին մեր առջև, ինչպես և հոգեկան այդ խորքերուն մեջ թափանցելը։ Ասոնց բոլորին կապված են հազար տեսակի հարաբերություններ, զգացումներ, ուրախություններ ու տհաճություններ։ Եվ ինչքան զարգացած է ու դյուրազգացիկ մեր զգայական աշխարհը, այնքան խոր են ու բարդ նաև մեր զգացած տպավորությունները այդ հոգեկան մոտիկ հարաբերություններու միջոցին։ Ինչքան նվազ զգայուն է մեր հոգեկան կազմը, այնքան ավելի հանգիստ է բնականաբար նաև մեր զգացած բավականությունը։ Եվ ատոր համար է, որ պատանեկան տարիքը, ինչպես և կանացի հոգին, մասնավորապես սիրահար է զգացումին զարնող գրքերու «հետաքրքրությունը հարող» երկերու։*

*Անշուշտ, այդ գրենական հին ու նոր շփումներու միջոցին մասնավոր կերպով հաճույքի աղբյուր կդառնա մեզի, երբ կհանդիպինք մեր որոնած, մեր ուզած, մեր երազած, մեր գնահատած մարդիկներուն, որոնք կընեն, ինչ որ մենք կուզեինք որ ընեն, և կընեն այնպես, ինչպես կցանկայինք, որ ընեն և որոնք մարդ արարածի մասին մեր հոգիի ունեցած բարձր, առաքինի ու ազնիվ խոեալացումները կմարմնավորեն։ Ատոր վրա է հիմնված «տրամատիկ» դեմքերու հմայքը բանաստեղծության մեջ և գրավչությունը մեծ մարդոց կենսագրություններուն։*

*Գիրքը, ըլլա ընկեր մը, թե ուսուցիչ մը, թե երկուքը միասին, ինքնին ստեղծագործություն մըն է արվեստի, և անխտիր թե՛ գիտական գիրքը, թե՛ գեղարվեստական։ Ատոր համեմատ ալ գիտական վայելքներու և ընկերական վայելքներու կից՝ կան նաև զուտ արվեստի վայելքները ամեն գրական երկի մեջ։*

*Ամեն գրություն կառուցում մը ունի, շենք մը, ճարտարապետություն մը՝ համարվելով իր նյութին, գաղափարին, ձգտումին ու ոգիին։ Ամեն ուսումնասիրություն ու պատմություն ունի իրեն հատուկ մասերու կապակցում մը, մտածումներու հյուսք մը և գործողություններու ընթացք։ Արդ՝ նայելով, թե ի՞նչ աստիճան ամբողջական է իր ճարտարապետությունը, ի՞նչ աստիճան համարած է իր նյութին ու նպատակին, ի՞նչ աստիճան արտահայտիչ է իր ներքին ձգտումին ու գաղափարին, և նայելով, թե ի՞նչ աստիճան բնական է մասերու կապակցումը, հստակ է հյուսքը, և կենդանի է շարժումը, մեզի հիացում կազդե, գոհունակություն և գնահատություն, այսինքն կդառնա վայլեքի առարկա. կզգանք իբրև վսեմ, գեղեցիկ կամ գրավիչ, որ ըսել է հաճելի։ Նույն ու նման վայելքներ կառաջացնեն գրքերու մեջ ներկայացված տիպերն ու դեմքերը՝ նայելով, թե ինչ աստիճանի լրիվ են նկարված, ի՞նչ աստիճանի ցինց են իրենց բնավորության գծերը, ի՞նչ աստիճանի բնական է անոնց վարմունքն ու շարժումը, մտածումն ու զրույցը, և ի՞նչ աստիճանի կենդանի՝ անոնց հոգին։ Նմանապես բավականություն ու հիացում կպատճառե մեզի, երբ կտեսնենք, թե հեղինակը ի՞նչ աստիճան ճիշտ է դիտած, ճիշտ է ընդօրինակած, ըլլա արտաքին, ըլլա ներքին բնությունը. ի՞նչ աստիճան նուրբ է, խոր ու ճշմարիտ իր դիտելու ու վերարտադրելու արվեստը։*

*Եվ վերջապես հաճույքի աղբյուրներ են նաև բոլոր զարդերը, ինչպես կյանքի, այնպես ալ գրքերու մեջ։ Նկարագրական զարդարանքը, լեզվական հարդարանքը, ճարտասանական փեշերը, հանգերուն ներդաշնակությունը, չափերուն ելևէջը, խոսքի հոսումին անուշությունը, սրամտության կայծկլտուքը, համեմատություններուն ժանյակը, այլաբանություններուն մանյակը, բացականչական ասեղներ, բառախաղի գնդասեղներ, ո՞ր մեկն ըսեմ, ասոնք բոլորը զվարճության կաթիլներ են և հաճույքի ծորումներ։*

*Ընթերցողներուն մեծ մասը այս բոլոր մեծ ու փոքր վայելքները արվեստի կիմե մեկ ումպով, բոլորը իրար խառնած, իբրև ընդհանուր տպավորություն մը։ Մինչդեռ անոնք, որ սեր ունին ու վարժություն գրի ու գրքի, մեղվի մը պես կծծեն ամեն մեկ ծաղիկեն իր անուշ ու գինովցնող հյութը և «կըմբոշխնեն» ամեն մեկը առանձին։*

## Ը Գրքերուն մեջ մեր եսը

*Գիտական, ընկերական ու արվեստի վայելքները գրքի մը տված հաճույքներուն երեք հիմնական խումբերը կներկայացնեն իրենց բոլոր ստորաբաժանումներով ու անհատնում խառնուրդներով։ Սակայն այդ ամենը միասին առած դեռ չեն սպառեր գրքի մը մեզի ընծայած բոլոր ուրախություններն ու հուզումները։ Պատկերը լրիվ դարձնելու համար ատոնց վրա պետք է ավելցնենք ուրիշ խումբ մը վայելքներ, որոնք ընթերցանության ժամանակ դուրսի առարկաներու էությենեն չէ, որ մեզի կհաղորդվի, այլ՝ թեև անոնց ազդեցության տակ, բայց կբխին մեր ներքին էությենեն, մե՛ր կյանքեն, մեր սեփական անձեն։ Ամեն գիրք բացի իր տեսակ մը ընդհանուր և ամենուն համար եղող «առարկայական» վայելքներեն՝ կուտա մեզի նաև զուտ մեր եսեն ու մեր անհատականութենեն ծնող վայելքներ՝ «անձնական» վայելքներ։*

*Եվ գրականության պատճառած բավականություններուն մեջ ամենեն ավելի սուր կերպով զգացված հաճույքները ճիշտ ատոնք են, որոնք այս կամ այն չափով ու ձևով կկապվին մեր անձնական կյանքին։*

*Առարկայական վայելքներն ալ անշուշտ կապված են մեր անձին,*

*քանի որ վայելողը մենք ենք և քանի որ վայելքը մեր սեփական մեքենայի գործածության մեջն է, բայց ատոնք կապված են մեր անձին, այսպես ըսեմ, մե՛կ ծայրով. ստացողը մենք ենք, բայց ազդողը, ցուցադրվածը, բացատրվածը դուրս է մեր եսեն, դուրսի աշխարհ է, «օտար» առարկա։ Իսկ երբ գրքին մեջ ներկայացված կյանքը, նկարագրված գործը, պատկերացված մարդը, վերլուծված հարցը ինքն ալ որևէ կերպով առնչություն կունենա մեր անձին հետ, բնականաբար գրվածքը իր երկո՛ւ ծայրովը կկապվի մեզի, կրկնակի՛ չափով «հետաքրքիր» կդառնա, կրկնակի՛ ուժով «գրավիչ» ու «կարևոր»։*

*Այսպես՝ գիտական խնդիրներու մեջ միշտ մեզի համար մասնավոր հրապույր ու արժեք ունի և մեզի մասնավոր կերպով կզբաղեցնե ու կհուզե, եթե խոսքը մեր սեփական մասնագիտության մասին է, մեր գործի ու արհեստի մասին, երբ կշոշափե մեր նպատակները, մեր ծրագիրները, երբ կդպչի մեր շահին, մեր համոզումին, մեր կուսակցության, մեր տեսակետներուն, մեր հավատքին, մեր իտեալներուն, մեր գավանած «դպրոցին» և ուղղության։*

*Այսպես՝ գիրքերուն մեջեն կյանք առնող դեմքերը մասնավոր կերպով հետաքրքիր կդառնան մեզի, եթե մեր սիրած, մեր հարգած, մեր երազած, մեր որոնած մարդիկը կներկայացնեն։ Մեր մեջեն ավելի ճախրանք ունեցող հոգիները իրենց տենչերուն, իրենց անուրջին, իրենց ծարավին մարմնացումը եղող իտեալացված դեմքերը կսիրեն։ Մեր մեջեն ավելի դրական հոգիները կփնտրեն իրենց ծանոթ դեմքերուն ճիշտ ու իրական պատկերացումը։ Բայց միևնույն է օրենքը երկուքին համար ալ, կուզե ոտքը ամուր փակած ըլլա հողին, կուզե թևածի երկնքի կապույտներուն մեջ, միշտ կփնտրե ի՛ր գիտցածը, ի՛ր տեսածը, ի՛ր հասկցածը, կամ ի՛ր ուզածը, ի՛ր ըղձանքը, ի՛ր երազը։ Մասնավոր կերպով գըրավիչ, հուզիչ ու «գեղեցիկ» է այն գրվածքը, որ ամենեն ավելի սերտ կհյուսվի ընթերցողի եսին։*

*Հետևապես ամենեն ավելի հետաքրքրեն պիտի մեզի այն գրական երկերը, որոնց մեջ նկարված ու վերլուծվածը կարծես թե մենք ինքներս ենք, այսինքն, երբ գրքին «հերոսը» կամ հեղինակը գոնե իր հիմնական կողմերովը կկրե մեր հոգին, մեր հակումները, մեր վարանքը, մեր զգալու ու գործելու առանձնահատկությունները, ունի մեր մտավոր և զգացական ծալքերը։*

*Այս ստորճանի բազմաթիվ կողմերով նույնությունն ու նմանությունը շատ հազվադեպ է անշուշտ գրքի անձին ու մեր անձին միջև, բայց չափազանց սովորական երևույթ է, երբ գրքերուն մեջ նկարված ու նկարագրվածը մեր հոգիի այս ու այն կողմը կկրե, մեր զգացական*



*ու կամեցական եսին այս ու այն որոշ առանձնահատկությունը, մեր անձնավորության մեկ կտորը, մեկ երեսը։ Մեր անձի այդ մասնակի գյուտը գրքին մեջ և հոտկե առաջացող անխուսափելի ներքին համեմատությունը չափազանց կզբաղեցնե մեզի և բավականություն կպատճառե, որովհետև միայն դիցանույշ Նարգիզը չէ, որ կդողար հաճույքեն, երբ իր դեմքին արտացոլումը կդիտեր ջրերու ավազանին մեջ։*

*Անձնականության խաղցած դերը սակայն ասով ալ չի վերջանար գրքերու բերած վայելքին մեջ։ Ուրիշ ճամփով մըն ալ մեր անձը կդառնա ուրախությունններու և հաճույքի աղբյուր, երբ շփման մեջ կուգա գրքերու հետ, և այս ճամփան շատ է բանուկ ու սովորական։ Ընթերցումը մտքերու զուգորդությամբ և որոշ նմանություններու հետևանքով կարթնցնե մեր հուշերը, իբրև վկա կամ օրինակ կկանչե մեր կյանքի սեփական հիշատակները կամ պարզապես կհիշեցնե մեզ մեր ապրումները, անցած դեպքերը, մեր եղած տեղերը, մեր ճանչցած դեմքերը, կվերակենդանացնե երբեմն սաստիկ պայծառ կերպով մեր կյանքի այս ու այն վայրկյանը, ամբողջ եղելություններ, պատմություններ։ Այդ վերհուշները իրենց հետ կբերեն իրենց երբեմնի հուզումները, այսինքն վերապրիլ կուտան մեզի մեր հին հաճույքները։*

*Եվ ինչքան որ մեր մտքին մեջ կենդանացած այդ իրերը, տեղերը, դեպքերն ու անձերը կապված ըլլան ուժեղ զգացումներու, ինչքան որ արթնցնող հիշատակները, հիշողությունները մեր անցյալի թանկագին ու կարևոր վայրկյանները ներկայացնեն, և ինչքան որ խորունկ ու հստակ կերպով կատարվի այդ զարթնումը ինքը, այնքան ավելի խոր ու բուռն կըլլան բնականաբար մեր զգացած հաճույքները։*

*Արդեն հոսկե ալ կբխի գեղարվեստական երկի մը հրապույրին մեկ խոշոր բաժինը։ Գեղարվեստական ստեղծագործությունը իր տեսակի կախարդ մըն է, կոգեկոչե մեր հին ու անցած աղվոր օրերը, հին ու անցած անփոխարինելի դեմքերը, հին ու հմայիչ խոսքերը, հին ու դյութիչ շարժումները, կեցվածքները։ Ամեն գրական գեղարվեստական երկի մրոտ տողերեն ու էջերեն կայծեր կթափին մեր հոգին և հոն կվառեն մեր ներքին, մեր սեփական կրակները, երբեմն կըոնկցնեն ամբողջ հին հրդեհներ։ Օտար նյութերեն և օտար կառուցումներեն հոսող վայելքներուն կհյուսվին մեր կյանքի հուշերեն ժայթքող հուզումները։*

*Այս բոլորը ընթերցման միջոցին կձուլվին իրարու, և մենք շատ անգամ որոշել ալ չենք կրնար՝ ո՞րը մեզմեն է և ո՞րը գրքեն Բայց այդ ձուլլ ու ընդհանուր ազդեցության տակ է, որ մենք կգնահատենք գըրքերը, կսիրենք, կմերժենք կամ անտարբեր կնետենք մեկդի։*

## Թ Գիրքը ամոք

Բացի բազմերանգ հաճույքներու և վայելքներու անմիջական աղբյուր մը ըլլալե, գիրքը է նաև աղբյուր մը բավականություններու, բացասական առումով։ Գրքերը շատ անգամ կթեթևցնեն մեր վշտերը, կըքնացնեն մեր ցավերը, կմեղմեն ներքին փոթորիկը կամ ընդհակառակը կվերցնեն ձանձրույթը. այսինքն այս կամ այն ձևով կցրվեն մեր հոգիին վրա ծանրացած անախորժություններու մութ ու մռայլ ամպերը։

Ինչպես որ աշխարհիս երեսին ընկերն ու մտերմությունը ամենեն մեծ մխիթարիչն է մարդուս իր ձախողանքի, ցավի ու վիրավոր վայրկյաններուն, նույն ձևով ալ նույն ազդեցությունը ունին մեր հոգիին վրա գրքերուն ծոցեն մեզի հետ կապված մեր ընկերներն ու մտերիմները։ Մյուս կողմեն ալ գրքերու միջով մշտական հաղորդակցության մեջ ըլլալը մարդկային անհատնում հոգիներու հետ, ականատես ու վշտակից ըլլալը այդքան-այդքան հին ու նոր, երկրածին ու մտածին մարդիկներու կրած տանջանքին, զրկանքին ու անարդարության, կփոքրացնե, կպակսեցնե մեր անձնական զրկանքներուն ու տառապանքին պատճառած ցավը։ Որովհետև այդպես է անագորույն իրականությունը, կամ գուցե գորովասիրտ իրականությունը, որ ցավակցությունը կմխիթարե մեզի, և ինչքան շատ են ցավակիցները, նույն ցավը կրողները, այնքան ավելի դյուրին է ցավը կրելը։ Մեծ ու համայնական աղետները ավելի արիաբար կտարվին, ավելի լուռ ու ստոյիկ կերպով, քան անձնական ու մենավոր շատ ավելի փոքր անախորժությունները։

Ուրիշներու հոգերուն ու վշտերուն գիտակ ու մասնակից ըլլալը այրուցքը հանդարտող պալասան մըն է, որ կքսվի մեր բաց վերքին վրա։

Քիչ մը ավելի ոլոր ճամբով, բայց նման հետևանքի կբերե նաև զուտ գիտական ընթերցումը։ Բնության անմեռ ուժերուն և հավիտենական անխախտ օրենքներուն դիմաց, տիեզերքներու մշտափոփոխ ու մշտաթավալ գոյացման ու քայքայման հանդեպ, վառումներու և մարումներու, ծնունդներու և մահերու այդ հավերժական խելագար անհունության մեջ, մենք ու մեր բոլոր անձնական-վայրկենական գոյությունն ու հոգերն ու հոգինները այն աստիճան կպզտիկնան, որ կկորսընցնեն իրենց իմաստը, ու մեր «խոշոր» եսը իր «խոշոր» ցավերով կդառնա հանկարծ մեր աչքին ծիծաղելի։

Եվ ո՛չ միայն մենք, այլ ընդհանրապես բոլոր «մարդ» ու «ժողովուրդ» կոչվող փոշիները։ Գիտական ընթերցումը փիլիսոփայության շիճուկը կներարկե մեր կաշվին տակ, շիճո՛ւկ մը, որ աշխարհին բոլոր մորֆիններեն ու բոլոր թմրեցուցիչ նյութերեն շատ ավելի խոր ու տեվական կերպով հանդարտություն ու հաշտություն բերելու կարողությունը ունի մեր հոգիին։ Իսկ հանդարտությունն ու հաշտությունը վշտի ժամանակ մեղմացում ըսել է՝ ամոքում։ Ինչպես գեղարվեստական, այնպես ալ գիտական գիրքը ամոք կուտան մեզի՝ մեկը իր ցույց տված օրինակելի նմուշներովը, մյուսը իր փիլիսոփայությամբ։

Կա՛ և մոռացումը, որ նորեն թեթևացում կուտա մեր ցավի այրուցքին, կշեղե մեր ուշադրությունը մեր սիրտը կրծող վիշտեն, կզբաղեցնե մեզի հեռավոր ու բոլորովին տարբեր հարցերով, դուրս կքշե մեր հոգին մեր եսի սահմաններեն։ Թեև անշուշտ շատ ավելի խախուտ և առժամյա է ընթերցանության մոռացում տվող ազդեցությունը, և չունի ո՛չ խորությունը, ո՛չ տևականությունը ուրիշներու օրինակեն եկող մխիթարանքին և փիլիսոփայութենեն հոսող վերին հաշտեցումին։

Այս տեսակ առժամյա թեթևություն բերող և երկրորդական արժեքով միջոց մըն է գիրքը նաև հոգեկան անգործության դեմ, անգործության պատճառած հոգնածության դեմ, ձանձրույթի դեմ։ Երբ ընթերցումը կկատարվի ո՛չ թե առավել կամ նվազ որոշ նպատակով կամ ներքին մղումով, այլ պարզապես ժամանցի համար, «ժամանակ սպաննելու» համար, ինչպես որ կըսենք շատ ճիշտ ու պատկերավոր արտահայտությամբ մը։

Պարապ մնացած մարդը թուղթ կխաղա, մեկը կփնտրե, որ հետը խոսի աչեն, ձախեն ու իր դրացին բամբասե, քանի որ ամեն տեղ ալ խոսակցության համեմն է բամբասանքը։ Իսկ երբ այս սովորական և ընթացիկ զվարճություններեն ո՛չ մեկը չիյնար ձեռքերնիս, կվերցնենք պատահած գիրքը, կսկսինք կարդալու պատահած երեսեն, մինչև որ ճարվի խոսակից մը կամ վրա հասնի մեր խաղընկերը։ Այս տեսակի ընթերցումը տարածված է չափազանց։ Եվ ինչքան ալ խեղճ ըլլա իր արժեքը, բայց և այնպես արժեք մըն է, քանի որ շատ հաճախ կքաշե մեր ուշադրությունը իր ետևեն ու կփախցնե ձանձրույթին տհաճությունը։

---

Ուսում և ընկեր, վայելք և սփոփանք, ահա՛ գիրքը։

Ահա՜ մշտահոս ու առատաբուխ աղբյուր մը գիտության, իմաստության, հոգեկան շփման, մտերիմ կապերու, խորին հուզումներու և մխիթարության, հոգեկան զվարճության ու վայելքներու, բարձրացման ու ազնվացման։ Հին հեքիաթներու «անմահական» աղբյուրը, որուն կենդանարար ջուրը երիտասարդություն կուտա, պառավ(?) ջություն և հովացում հոգնած, տանջված և որոնող հոգիներուն։

Արևելքը, որ հարուստ է անապատներով, աղբյուրներու պաշտա-

մունք ունի, և հոն աղբյուր մը բանալը ամենեն սուրբ ու ամենեն բարեպաշտ գործերեն մեկն է համարված միշտ։ Հոգեկան տեսակետեն մարդկությունը լայն խավերովն առած դեռ միշտ արևելքի ժողովուրդ է. մարդկային հոգին դեռ անապատներու մեջ կապրի, պատառ մը չոր հացի չոր ավազներուն վրա և բարկ եսականության կիզիչ ճառագայթներուն տակ, և դեռ մարդկության ամենաստվար մեծամասնության համար բացարիկ կերպով սուրբ ու նվիրական գործ մըն է մարդու քալած այդ անապատին մեջ աղբյուր մը բանալը, ուր իսկույն ովասիս մը կանաչի։

Գիտենք, ամեն անգամ, որ մարդ մը կմոտեցնենք գրքերուն և ընթերցանության սերն ու վարժությունը կուտանք անոր, կենսատու և զովարար աղբյուր մըն է, որ կբանանք անոր խոպան ճամփուն վրա։

## Ժ Իսկ հեղինակը ինչու կգրե

Մինչև հիմա կդիտեինք գրական երկերը ընթերցանության տեսակետեն, այդ ստեղծագործություններուն ընթերցողի՛ն համար ունեցած զանազան արժեքները. կդիտեինք միայն ընթերցողին դարձած երեսը երևույթին, մինչդեռ գրական երևույթ մը մեզի կներկայանա միշտ երկու երեսով։

Բոլորովին տարբեր բան մըն է գիրքը ստեղծող հեղինակին համար և բոլորովին տարբեր բան մըն է ընթերցողին համար։ Մեկուն համար գրական երկը երկունք մըն է, հղացում մը, երկար որոնում մը, կտոր-կտոր լրացում մը ու հետզհետե միայն գոյացած ամբողջացում մը։ Մինչդեռ մյուսներուն համար անիկա պատրաստ ու ձույլ ամբողջություն մըն է առաջին իսկ վայրկյանեն, պարզ ու զատ գոյություն մը կյանքի ու բնության մյուս երևույթներուն նման։

Մեկը շինող-կառուցողն է, ոչինչեն ինչ մը ստեղծողը, մյուսները պատրաստ ստացող են ու օգտագործողը։ Երկուքի համար ալ գիրքը վայելքի աղբյուր է. երկուքի համար ալ գիրքը կներկայացնե միշտ շատ մը արժեքներ, բայց բոլորովին իրարմե տարբեր տեսակի վայելքներ ու իրարմե տարբեր տեսակի արժեքներ, նույնիսկ տեսակ մը իրար հակադիր արժեքներ։

Արդ, ինչի՞ մեջն է գրական երկի մը արժեքն ու կարևորությունը ստեղծագործողին համար։ Ինչո՞ւ համար մարդիկ գիրք կշարադրեն։ Ի՞նչն է հեղինակները դրդողը, որ գրական երկեր հորինեն։

Այդ դրդիչները շատ են, կրնանք վերածել երեք խումբի։ Նախ՝ ներ-



քին հոգեբանական մայր դրդիչներ։ Երկրորդ՝ կիսահոգեկա՛ն-կիսաընկերական դրդիչներ։ Եվ երրորդ՝ հավելյալ ու հետևանք դրդիչներ։

Ամենեն նախնականն ու ամենեն խորունկը բնականաբար հոգեբանական մայր դրդիչներն են։

Եվ ամենեն առաջ այն պարզ իրողությունը, որ լեցված հոգին ներքին, բնական պահանջ ունի թափվելու, հոսելու, զեղումի։ Բան մը գիտցողը, լուր մը իմացողը, նոր բան մը մտածողը ներքին մղում մը ունի իր գիտցածը ուրիշներուն ալ հաղորդելու։ Բան մը լավ հասկցողը ուրիշներուն ալ կուզե հասկցնե. սուտ թե իրավ ճշմարտության մը տիրացողը կցանկա, որ ուրիշներն ալ դավանող դառնան իր ճշմարտության՝ ամեն հավատացյալ փափաք ունի, որ ամենքն ալ դառնան իր սուրբ հավատքին, եթե պետք է՝ նույնիսկ սրով և հրով։

Այդպես ալ ամեն մարդկային հոգի կարիք ունի իր հույսերը, կարոտները, սպասումները, ուրախություններն ու ակնկալությունները ուրիշներուն հետ բաժնելու։ Իր վշտերն ու կասկածները, իր մտահոգություններն ու անախորժությունները մոտիկ ու մտերիմ, երբեմն նույնիսկ օտար ու պատահական մարդոց հետ կիսելու։ Ուրիշ խոսքով մեր հոգին պահանջ ունի իր ներսը դիզված ու փոթորկող ապրումները արտահայտելու։ Եթե լռե ու միայն պահե՝ կնեղվի։ Պետք է երթա ընկերոջ մը, բարեկամի մը, հարևանի մը, ըսե, խոսի, պատմե, որ քիչ մը հանգստանա։

Եվ ամեն մարդ ալ, ինչպես լավ գիտենք, կխոսի միշտ իր հոգիին մեջ տիրող խնդիրներու և նյութերու մասին. իր ցավերեն կխոսի։ «Ի յաւելվածոյ սրտի խոսի բերան»։ Հավելվածը լեցվածն է, զեղվածն է, եզերքներեն դուրս թափվողը։

Ահա՛ այս տեսակի հոգեկան թեթևացում մըն է նաև ամեն գրական արտահայտություն։ Փոխանակ բանավոր կերպով անմիջապես ըսելու, պատմելու, երգելու կամ բացատրելու, նույնը կընե հեղինակը գրիչով թուղթի վրա։ Եվ այդ գրված թղթերը աչքի առաջ ունին և ուղղված են կա՛մ որոշ անձի մը, որոշ մեկ-երկու անձերու, կա՛մ որոշ խումբի մը, որոշ հավաքականության մը և կա՛մ ավելի ևս սովորականը ընդհանբության, հասարակության, այսինքն այդ տեսակի հարցերով ու խնդիրներով հետաքրքրվողներուն, գաղափարակիցներու, զգացակիցներու։

Խոսքին մեջ ուրեմն բոլորովին նույնն է. թափել ինչ որ իր հոգիին մեջ լեցված է, դիզված է, որ կհուզե ու կճնշե, ինչքան ուժեղ կերպով մտահոգություն ու անհանգստություն պատճառե, այնքան ալ ուժեղ ու բուռն կըլլա հորդելու, թափելու, արտահայտվելու ներքին դրդումը։

Գիր չունեցող, գրի ազատ գործածությունը չունեցող, գրի վարժու-

թյունը չունեցող մարդը կունենա նույն գրական հորդումը, բանավոր կերպով կըսենք անգիր բանահյուսություն։

Գիր գիտցող, գրքերու հետ ապրող ու գրականության ընտել մարդը, հետևելով գրի մարդոց օրինակին, գրելով կըսե իր ըսելիքը, որ շատ մը առավելություններ կբերե իր հետ։ Իր խոսքը կերթա մարդկային շատ ավելի լայն խավերու։ Իր խոսքը կերթա հեռավոր վայրեր ու հեռավոր դարեր։ Եվ իր խոսքը կըլլա շատ ավելի կոկ ու գեղեցիկ, քանի որ գիրը հնարավորություն կուտա գրվածը կրկին ու կրկին կարդալու, վրան մտածելու, սրբագրելու և մշակելու ուրիշներուն ներկայացնելե առաջ։ Եվ գրածդ կդառնա քու սեփականությունդ քու անձիդ ու քու անունիդ սերտորեն կապված, փոքրիկ անմահության պես բան մը, որ բոլոր դարերու մարդոց սին ու կարճամիտ տենչերեն մեկն է եղած։

Հոգեբանական այս հիմնական ներքին դրդումին վրա անմիջապես կավելնան երկը ստեղծելու, ձևակերպելու գործադրութենեն առաջացող քանի մը նոր հրապույր ունեցող դրդիչներ, նորեն ներքին հոգեբանական։

Ամենեն առաջ աշխատելու, ստեղծագործելու հաճույքը։ Մեր ուժերուն համապատասխանող, մեր բնական հակումներե ծնունդ առնող ամեն աշխատանք ու գործադրություն մեծ բավականության աղբյուր է միշտ, երբ մանավանդ ներքին հոգեկան առատութենե ինքնաբուխ կհոսի։

Ինչքան դյուրին, ինչքան ինքնին բխի աղբյուրը, այնքան մեծ կըլլա մեր աշխատանքին հրապույրը և իր բերած ուրախությունն ու ոգևորությունը։ Նույնիսկ իր պատճառած չարչարանքն ու հոգնությունը կըկրենք սիրով, որ կդառնա իր տեսակի բավականության աղբյուր։

Այս աշխատանքի պատճառած ուրախությունը կսկսի արագ հարըստանալ, երբ հնարելու, կառուցելու, դասավորելու, գյուտեր ընելու և ամբողջություններ կերտելու գոհացումը կուգա վրան կավելնա։ Ամեն գրված նոր գլուխ, ամեն ստեղծված նոր տեսարան, ամեն նոր փաստ ու ապացույց, ամեն սուր նկատողություն, ամեն սիրուն համեմատություն, ամեն նոր ելք ու շարժում, ամեն թռիչք ու խոյացում նոր հըրճվանք ու նոր հրապույր կբերեն ստեղծագործ հոգիին, որ հետզհետե կտեսնե իր կարողությունները, կգիտակցի իր ուժին, որ առաջվնե չգիտեր, թե ունի։

Ինչքան խո՜ր ու լա՜յն կարողանա, ինչքան բա՜րձր հաջողի, այնքա՜ն ալ մեծ կըլլա ավելի խոր թռիչքներու պահանջը, ավելի նոր ու ավելի համարձակ ձեռնարկներու ձգտումը։ Գրելը, հորինելը, ստեղծա-



գործելը կդառնա իր գործն ու արվեստը, կյանքի իմաստ ու ոգևորություն։

Երբ կենդանի ապրում մը, խոր մտածում մը կամ բուռն հուզում մը և գրելու այս ծարավն ու հաջողելու գիտակցությունը հոգիին մեջ կփաթթվին իրարու՝ գրական երկի մը ծնունդը գրեթե անխուսափելի է։

---

Այս ստեղծագործ բո՛ւն ներքին դրդիչներուն ընդհանրապես կմիանան կիսաներքին-հոգեբանական և կիսաարտաքին-ընկերական դրդիչներ, բոլորն ալ արդյունք մարդկային մշտական ընկերակցության և անհատի ու համայնքի ներքին խոր կապին։

Ամեն քիչ-շատ ապրած, փորձված, տեսած ու սորված անհատ ընկերական բնական պահանջ ունի ուրիշները կրթելու, միջավայրը բարձրացնելու, տգիտության դեմ պայքարելու, նախապաշարումներն ու հինցած ըմբռնումները խորտակելու, հոգիները քիչ մը ավելի լուսավորելու, ազնվացնելու ու բարձրացնելու և իր շրջապատողներուն ճաշակը քիչ մը ավելի հղկելու։

Այս ուրիշներու մասին մտածող ընկերական ձգտումները ունին անշուշտ իրենց ավելի եսական երեսները։ Մակերեսի ուսուցիչ դառնալը գոզավորություն մըն է իր տակի երեսին համար. հեղինակ մը այդ բոլոր ընկերական ճիգերը կթափե, որովհետև հոգեբանորեն, իր ներսեն ուրիշներուն ազդել, ուրիշներու դատողության վրա տիրել կուզե. իր շրջապատողներն ու ընթերցողները իր համոզումներու ուժին և զգացումներու թափին ենթարկել կուզե, վարակել կուզե իր հոգիով, իր անձով, իր մտածելու եղանակով ու ճաշակով, այն ամե՛ն բաներով, ինչով ինքն է լեցուն։ Կձգտի իր ետևեն քաշե «ամբոխները», «ուսումնականները», «երիտասարդությունը» իր խելքի ուժով, իր կամքի ուժով, իր սրտի ուժով։ Իշխել կուզե հոգիներուն վրա. իր հոգին սուզվիլ կտենչա հոգիներու այդ ծովուն խորքը։

Միևնույն ժամանակ իր կառուցած երկը հանրության որաշ զգացումներուն, ձգտումներուն ու որոնումին մեկ մարմնացումը կնկատե, գիտե, որ մարդկային հոգիի մնարտաքին մեջ ինքը բրած է գյուտ մը, մնայուն պատկերացում մը, գաղափարի մը ընդգծումը։ Իր համայնքին, իր ժողովուրդին կամ մարդկության համար եղած է պիտանի արտահայտիչ մը, գիտական կամ գեղարվեստական կամ գործնական գրական գործք մը։

Մինչև հիմա հիշված պատճառ-դրդիչներուն կավելնան քանի մը

հետևանք-դրդիչներ, այսինքն՝ արդեն կատարված աշխատանքի և ստեղծագործության արդյունքը եղող հավելյալ դրդիչներ։

Ամենեն բարձրը՝ բան մը ստեղծած, նորություն մը բերած և ընկերական դեր մը կատարած ըլլալու գիտակցությունը բնականաբար կբարձրացնե իր հոգին իր աչքին, գիտե որ արժեք մըն է և կճանչնա իր առավելությունները առանց իր թերություններն ու իր տկար կողմերը անտեսելու. ո՞ր բանն է կատարյալ այս աշխարհիս երեսին, ո՞ր գործն է անթերի։ Ինչքան ալ շատ թերիներ ունենա՝ որոշ շնորհք ու որոշ առավելություններ կմնան, որոնք բնական ու արդար հպարտություն կներշնչեն և տրամադրության բարձրացում կուտան։ Հոգեկան այդ բարձրության վրա մնալու և ավելի ևս բարձրանալու ջանքը կըդառնա հավելյալ մեծ դրդում մը նախորդներեն ծնող։

Այս ներքին գնահատանքին սակայն կմիանան նաև ուրիշներու արտաքին գնահատական արտահայտությունները, հեռուեն ու մոտեն, բերանացի ու գրավոր. այսպես ալ շրջապատողներուն համակրանքը, գովքը, հիացումը։ Հեղինակը կդառնա առարկա ընդհանուրի խոսակցության, քննության, վեճի ու աղմուկի և ուշադրության։ Ամեն կողմե ջերմ նայվածք, սիրալիր խոսք, սիրառատ վերաբերում, շռայլված հարգանք ու պատիվ։ Այս բոլորը կշոյեն մարդուս զգացումները ու կդառնան աղբյուր մեծ ու փոքր ուրախություններու և ախորժանքի, և բնազդորեն կմղեն հեղինակը նոր աշխատանքի, նոր արժեքներու ստեղծագործության։

Իսկ հեղինակ մը ինչքան շատ ստեղծե, որչափ շատ գրե ու անուն հանե, այնքան ալ շատ կկարդացվի ընդհանուր առումով, բնականոն պայմաններու մեջ. ըսել է՝ իր երկերը ավելի շատ կծախվին և ավելի եկամուտ կբերեն. աս ալ կդառնա վերջին հավելյալ դրդիչ մը, վերջին, բայց ո՛չ չնչին։ Ամեն հեղինակի աշխատանքին մեջ կա ա՛յս կամ ա՛յն չափով նաև այս դրամական կողմը, ապրուստի հարցը, եկամուտի ու առուծախի հաշիվները և չի կրնար չըլլալ, քանի որ հեղինակը բոլոր մյուս մտավոր աշխատավորներու շարքին, ուսուցչի, խմբագրի, դերասանի ու երաժշտագետի նման, արհեստավոր մըն ալ ինքն է, և ամեն արհեստավոր պետք է ապրի իր աշխատանքով։ Արժեքավոր հեղինակ չկա, որ գրե միայն դրամի համար իր ձեռք բերած համբավը շահագործելով. բայց դրամի հաշիվները կան միշտ ու ամենուն համար ամեն աշխատանքի մեջ, շատ հազվագյուտ բացառիկներ ազատ են այդ հոգեն, ուրեմն և դրդիչեն։

Իր՝ արդեն կատարած գործին գիտակցությունն ու հոգեկան բարձրացումը, հանրության գնահատանքն ու ուշադրությունը, և դրամի ու



դիրքի տված առավելությունները կյանքի մեջ. ահա՛ երեք հավելյալ դրդիչներ, որոնք հեղինակը աշխատանքի կմղեն։

Ես մինչև հիմա գրելու միայն ուրախությունները, հաջողիլն ու գնահատվիլը շեշտեցի՝ ատոնց դրդիչ ըլլալը ավելի ցայտուն կերպով մատնանշելու համար։

Կյանքի մեջ սակայն հեղինակներու հետ կապված չեն միայն հաջողանք ու գնահատություն, դյուրություն ու վայելք, այլ նաև շատ մեծ անհաջողություններ, սայթաքումներ, մեծ տառապանք, երբեմն տաժանակիր աշխատանք, անվերջ փորձեր ու որոնումներ, առանց իրենց ընել ուզածը գլուխ բերելու, առանց իրենց հոգին բավարարել կարողանալու, միշտ դժգոհ իրենց ըրածեն, ինքզինքնին քննադատելով։ Ուժեղ նախանձներ կան, երբ իրենց ջանքերն ու արդյունքը ավելի մեծ տաղանդներու կամ ընկերակիցներու գործին հետ կհամեմատեն։ Ճնշող ու չարչարող բան է, երբ կզգաս, որ արժեք ունիս և արժեքավոր երկ մըն ես մեջտեղ դրած, որ չի գնահատվիր, որուն վրա ուշ չեն դարձներ կամ կխծբծեն։ Անախորժություն մըն է հեղինակին համար, երբ իր ստեղծագործության մեջ բաներ կփնտրեն ու բաներ կգովեն, որ իրեն համար անարժեք է։ Այդպես ալ մանավանդ երբ իր ամբողջ կյանքը կչարչարվի պատառ մը հացի համար և ծայրը ծայրին բերել չի կրնար, որ իր կերտել ուզած երկը հանգիստ ստեղծագործել կարողանա, կամ երբ հրատարակչի մը առևտրական քմայքին պետք է համարցնե իր աշխատանքը կամ ընթերցող հասարակության պահանջին ու ճաշակին։

Հեղինակներու ճամփան ալ, ինչպես կյանքի բոլոր ճամփաները, հարդարված ու զարդարված չէ միայն վայելքներով և հաջողությամբ։ Ամեն տեսակի դառնություններ, հոգեկան ծանր ապրումներ, համառ ու լարված աշխատանք, հաճախ չափազանց հոգնեցուցիչ և բազմատեսակ զրկանքներ ու աղքատություն ցանված են նաև գրականության նվիրված մարդոց ճամփուն վրա։ Բայց այս բոլոր դժվարություններն ու դառնությունները հեղինակը չեն հեռացներ հեղինակելե. ընդհակառակը, կարծես ավելի կսրեն ստեղծելու ծարավը և ավելի կամք ու համառություն կդնեն հեղինակի հոգիին մեջ։ Եթե ուրախությունը, հաջողությունը, սերն ու վայելքը, փառքն ու դրամը ստեղծագործության դրական դրդիչներն են, այս ձախողանքը, չհասկցվիլը, չըմբռնվիլը, ուզածը ընել չի կրնալը, աղքատ ու անփառունակ մնալը ստեղծագործության «ի բացասականե» դրդիչներն են։ Ու կներկայացնեն այն հսկայական համառ ջանքերը, որով հեղինակները կճգնին հաղթահարել բոլոր ար-

գելքներն ու թշնամանքը, արժեքավորելու համար իրենց աշխատանքը և պարտադրելու համար հասարակության իրենց անձն ու իրենց գործը։

Թե՛ գիտական ու գործնական երկերու հառաջաբաններուն մեջ, թե՛ գեղարվեստական երկերու հերոսներու բերնով շատ հաճախ կպատմվի կամ կնշմարվի հեղինակին կրած զառնությունները իր արհեստին երեսեն և իր հոգեբանական տվայտանքը իր երկի դժվար երկունքեն։

Հեղինակի մը համար հեղինակելու հետ կապված ամեն ինչ, դրական կամ բացասական, դրդիչ մըն է միշտ այս կամ այն ձևով, այս կամ այն չափով։

## ԺԱ. Ընթերցողի կապը հեղինակի հետ

Պատահական ու թեթև ընթերցանության սովոր անձերը ընդհանրապես քիչ հետաքրքրվին հեղինակով, չեն փնտրեր ու չգիտեն, թե որո՞ւ գրածն է, որ կկարդան, ըլլա լուր, տեղեկություն, թե պատմություն մը։ Ճիշտ այնպես, ինչպես որ բերնե բերան.կրկնվող.եղելությունները, կատակները ու երգերը ըսելու կամ լսելու ատեն հեղինակի մասին խոսք չկա։ Գրքերուն վրա սովորաբար հեղինակին անունը միշտ գրված կըլլա և միշտ ալ մեքենաբար կկարդացվի, բայց ուշադրության առարկա չի դառնար ու կմոռցվի։

Քիչ մը ավելի հարատև ընթերցողներուն համար շարք մը երկեր գրած հեղինակին անունը կմնա շրթունքներուն վրա ու կգործածվի, բայց ավելի իբրև որոշ տեսակի գրության անուն, քան նեղ մտքով հեղինակի։ «Թովոտ մը տվեք ինծի». կդիմե գերմանուհին գրադարանապետին «Մայն-Րիտա ո՞վ է վերուցեր». կփնտրե ուրիշ մը իր կորուստը։ «Ի՞նչ կկարդաս, Բաֆֆի՛», այսինքն ստեղծագործողը չէ, որ աչքի առաջ ունի խոսողը, այլ ստեղծագործությունը։

Ընթերցողի հոգին հեղինակին հետ դեռ մասնավոր կապ մը չունի, հեղինակի անձով դեռ չես հետաքրքրված, իր անունը լսած ես, գիտես, իբրև որոշ տեսակի գրություններու հեղինակ։

Հեղինակի անձը կըեշտվի, երբ ընթերցանության կմոտենաս հատկապես այսինչ մարդու գրածը ըլլալուն համար։ Կա՛մ իր գրական համբավեն, կա՛մ գիտական հռչակեն դրդված, կա՛մ բարեկամներուդ գովասանքեն ու գնահատանքեն ոգևորված։ Հոս արդեն միայն հեղինակին անունը գիտնալը չէ հարցը, այլ հեղինակի գրական կամ գիտական որոշ առավելությունները լսած ըլլալդ և տեսնել ուզելդ է կարևորը։ Հեղինակի մը տաղանդն ու գիտությունն է, որ մեջտեղ է դրած, հեղինակի մը կարողություններն են արդեն, որ հետաքրքրություն կարթնցնեն։



Հեղինակի անձին ստացած կարևորությունը շատ ավելի կմեծրանա, երբ ո՛չ թե ուրիշներու խորհրդով, հանրային ճաշակով կամ գրավաճառի մը, քննադատի մը հանձնարարությամբ կառաջնորդվիս, այլ այդ հեղինակի նախորդ երկը կամ երկերը կարդացած ես ու կճանչնաս անձամբ իր կարծիքները, իր գրելու եղանակը, իր աշխարհայացքը, իր վերաբերումը քեզի հետաքրքրող հարցերուն, այսինքն՝ ծանոթ ես հեղինակի ստեղծագործ հոգիին, գիտես անոր առավելությունները, ուժը, շնորհքը ու կհավնիս։ Ուրիշ խոսքով անհատապես շփման մեջ ես հեղինակի ստեղծագործ հոգիին հետ, կճանչնաս հեղինակը իբրև հեղինակ։

Այս ծանոթությունն ու համակրանքը արդեն կդառնա ուղղակի սէր ու մտերմություն, երբ հեղինակը կարտահայտե քու համոզումներդ, քու գիտական տեսություններդ ունի, քու գեղարվեստական ճաշակդ ու քու գրական ըմբռնումներդ կմարմնավորե կամ քու իրական ապրումներդ շատ մոտ ու նման տեղեր, դեմքեր ու դեպքեր կնկարե, քու սեփական երազներուդ, կարոտներուդ ու ձգտումներուդ մարմին կուտա. այսինքն՝ երբ հեղինակը քու հոգիիդ բանաստեղծն է, քու մտքերուդ գիտնականը և քու տեսակետներուդ բանասերը։ Այլես այդ հեղինակը ո՛չ միայն տաղանդ մըն է քեզի համար, այլ հոգիի բարձր ընկեր մը, չես կըրնար անոր երկեբեն և ո՛չ մեկը չկարդալ. ջերմությամբ կխոսիս իր մասին, կսքանչանաս և՛ կարդալու ատեն, և՛ հանձնարարելու։ Խնդիրը կրնա հասնիլ մինչև մոլեռանդության, մինչև կույր պաշտամունքի և պատշաճության սահմանները անցնող միակողմանի փառաբանության։ Իր ապրումներն ու պնդումները և քու սեփական զգացումներդ ու դատումներդ սերտորեն հյուսված են իրար։ Ո՛չ միայն իր ստեղծագործությունը սիրելի է քեզ, այլև իր գրությունը, այլև տպված գիրքը, որ միշտ սեղանիդ վրա է ու քու ձեռքիդ շոյանքին տակը։ Սիրահարվածի մը հոգեբանությունն է. քու սիրած էակիդ կապված ամեն իր թանկ է քեզի համար, և հեղինակի հասցեին եղած ամեն քննադատություն, ամեն պարսավ ուղղակի քու հոգիդ կծակե, կզգաս իբրև անձնապես քեզի դեմ ուղղված, կզգաս իբրև թշնամանք ու թշնամություն։

Երբ մտերմությունը այս խորության է հասած՝ ընթերցողը այլևս չի կրնար չհետաքրքրվիլ իր հեղինակին նաև անձովն ու կյանքովը։ Միայն իբրև հեղինակ ճանչնալն ու հոգեկից ըլլալը հերիք չի գար այլևս. իր մասին ամեն բան կհետաքրքրե քեզի և մանավանդ իր ապրած իրական կյանքը, իր կյանքի ամբողջ ընթացքը, իր տառապանքներն ու թըռիչքները, իր ստեղծագործության դրդիչները և իր կյանքի բոլոր ներքին ու արտաքին պարագաները. ընթերցողը կսկսի փնտրել իր սիրած հեղինակի կենսագրության բոլոր ծալքերն ու մանրամասնությունները։

Եվ բնական կերպով այս բոլոր կենսագրական տեղեկությունները նոր կապեր կստեղծեն ընթերցողին ու հեղինակին միջև. մինչև հիմա հեղինակի երկերուն մեջեն հոսող ու ցայտող հոգին էր սիրվածը, հիմա ատոր կավելնա հեղինակի կյանքին վեպեն ծորող սերն ու համակրանքը և կենդանությունը։ Ընթերցողի հոգիին մեջ հեղինակը կամբողջանա և կմարմնավորի ծանոթ ու մտերիմ իսկական անձի մը պես։

Բոլորովին տարբեր է անձնական ու իրական ծանոթության դերը հեղինակի ու ընթերցողի մեջ եղած կապի տեսակետեն։ Բնականաբար հարցը կվերաբերի միայն ժամանակակից հեղինակներու, որոնց համբավը կրնա արդեն հաստատված ըլլալ կամ դեռ հաստատված չըլլալ։ Այս երկու պարագային ալ դեր մը ունի անշուշտ հեղինակին տեսած ըլլալդ, հետը շփման եկած ըլլալդ կամ ավելի ևս հեղինակը մոտիկեն ճանչցած ըլլալ կամ ուղղակի հեղինակին հետ մտերիմ, բարեկամ, ընկեր ըլլալդ։ Շատ կան հեռուեն հեռու հիացումներ որևէ հեղինակի մը գրություններով, որ ավելի կամ պակաս չափով կպաղին, երբ առիթը կներկայանա հեղինակին հետ անձնական շփման գալու։ Հոս դեր ունին հեղինակի անձին ներքին ու արտաքին գծերն ու թերություններըը։ Հոս դեր ունի մարդկային հոգիի բնական պահանջը իր հավնած ու սիրած էակը իտեալացնելու, ամեն թերություններե ու ճղճիմութենե ազատ ու բարձր երևակայելու, իսկ այս իտեալացման բոլոր պահանջներուն շատ քիչ հեղինակներ կրնան հաջողությամբ դիմագրավել։ Հետևանքը կըլլա ընթերցողի հոգիին մեջ ջերմության աստիճանացույցին անկումը։ Եվ վերջապես հոս դեր ունի նաև այն բնական իրողությունը, որ անձ մը ինչքան կուզե ազնիվ ըլլա, շնորհալի ու բարձր հեռուեն դիտած, երբ կմոտենանք ու կապրինք հետը առօրյա շփումով՝ կարծես կվարժվինք, սովորական կդառնա ու կարծես կպզտիկնա այս կամ այն աստիճանի։ Մյուս կողմեն ալ կենակցությունը կմերկացնե, իսկ մերկությունները ինչքան ալ սիրուն ըլլան՝ իրենց ամեն մասերով ու կետերով դիմանալ չեն կրնար արևու լույսին. Հոս ծռություն մը, հոն բիծ մը, անախորժ ծալք մը կամ գիծ մը։ Եվ այս բոլոր մարմնական ու հոգեկան ծուռն ու թերին, որ սովորական մարդոց վրա կտեսնենք ու կանցնինք մեր բարձր դատած, մեր շատ գնահատած ու իտեալացուցած դեմքերուն վրա շատ ավելի անախորժ կզգանք, և մեր հիացումը կվիրավորվի, մեր համակրանքը կգաղջանա։

Բայց շատ անգամ ալ կպատահի հակառակը. հեղինակ մը, որ կա՛մ բնավ չէինք կարդացած, կամ կարդացած էինք առանց որևէ մասնավոր ուշադրության, հանկարծ երբ անձնապես տեղ մը կհանդիպինք կամ քիչ մը ավելի մոտիկեն շփման կուգանք՝ կսկսինք հետաքրքրվիլ իր երկերով.



տեսնելեդ ու հետը խոսելեդ ետքը կարծես պահանջ կզգաս իր երկերուն ավելի մոտիկեն ծանոթանալու։ Կապը փոխադարձ է. ինչպես երկերուն ընթերցումը հետաքրքրություն կառաջացնե դեպի հեղինակին անձը, այնպես ալ հեղինակին անձը հետաքրքրություն կներշնչե դեպի իր երկը։

Ընթերցողներու հոգիին մեջ հեղինակներու հանդեպ կան անշուշտ հաստատուն սերեր, որոնք ամբողջ կյանքը կտևեն, դիցուք և որոշ թեթև ելևէջներով։ Բայց շատ սովորական են նաև այն սերերն ու մտերմությունները, որոնք որոշ շրջան մը հոգիդ կգրկեն, և կյանքիդ, պայմաններուդ ու տարիքիդ փոփոխության հետ կմարին։ Զմարողներն ալ, որոնք կտևեն ու կմնան մինչև ընթերցողի կյանքին ավելի հասուն ու ծանրագլուխ տարիները, մինչև կյանքի էջքին ու վերջքին տարիները, անոնք ալ բնականաբար պահել չեն կրնար պատանության ու երիտասարդական օրերուն խենթ հատկությունները։ Տարիքին հետ զգացումներն ալ կապրին ու կհոլովվին բնության անխուսափելի օրենքներով։ Եվ վերջապես նոր զգացումները թե՛ ապրումի, թե՛ փորձի, թե՛ մտքի և թե՛ գրականության գավառներուն մեջ կբերեն նոր հեղինակներ, նոր ոգևորություն, նոր տեսություններ, նոր գիտություն և նոր ստեղծումներ, որոնք եթե մեր նախորդ ոգևորություններուն ու սերերուն հակընդդեմ ալ չեն, բայց և այնպես բոլորովին նույն ալ չեն և ատոր համեմատ ալ ընթերցողի գերադասություններն ու գնահատումները որոշ տեղափոխություններ ու թեքումներ կկրեն։ Նոր հեղինակներ կուգան նոր մտքերով, նոր արվեստով, նոր գրավիչ ուժերով։ «Նոր» կըսենք ընթերցողի տեսակետեն, թե չէ անոնք կըլլան հաճախ շա՜տ հին, դարավոր հին հեղինակներ, որոնց հետ ընթերցողը նոր շփման կուգա, նոր կճանչնա և նոր կսկսի թափանցել անոնց գեղեցկությունն ու բարձրությունը։ Ու կկապվին հոգեկան նոր մտերմություններ։

## ԺԹ Հեղինակին կրած ազդեցությունները

Հեղինակն ալ որոշ կապեր ունի իր ընթերցողներուն հետ և որոշ չափով մը կենթարկվի իր ընթերցողներու ազդեցությանը։ Իր ընկերներուն, բարեկամներուն ու մտերիմներուն կամ ավելի պատահական անձերու արտահայտած կարծիքը, գնահատանքը, ինչպես և անոնց ըրած նկատողություններն ու ցանկալի համարած ուղղումները անշուշտ որ մտածել կուտան հեղինակին և տեսակ մը վերաքննության կենթարկեն իր ստեղծագործությունը իր հոգիին մեջ։

Այլև լրագրության ու գրախոսության վերաբերումը, քննադատու-

թյունն ու վերլուծումները անշուշտ դեր մը կխաղան։ Այդպես ալ իր գրվածքին տարածվիլն ու կարդացվիլը, կամ, ընդհակառակը, իր գրքին արմատ չբռնելը, անոր մասին չխոսվիլը և շատ քիչ տարածվիլը բնականաբար կազդե հեղինակի և՛ տրամադրության վրա, և՛ ոգևորության. կնպաստե կամ կխանգարե որոշ չափով մը անոր աշխատանքը. կրնա նույնիսկ դրդել որոշ ուղղումներու, որոշ զգուշության, որոշ սրբագրություններու իր հաջորդ ստեղծագործություններու միջոցին ընթերցող հասարակության մատնանշած ուղղությամբ՝ ավելի մեծ հաջողություն ու գնահատանք քաղելու համար։ Այսինքն իր ընդհանուր աշխատանքին ու ստեղծագործության վրա ընթերցողները որոշ ազդեցություն կբանեցնեն, գեթ որոշ չափով մը կստիպեն ենթարկվիլ իրենց ճաշակին, իրենց ուզածին։

Սակայն այդ չափը ընդհանուր առումով շատ համեստ է և շատ քիչ անգամ կրնա իսկապես խորքին վրա ազդել։ Արտաքին զեղչումներու, ձևական սրբագրություններու և թեթևակի փոփոխություններու մեջ է ընդհանրապես, որ հեղինակը կհոժարի ընթերցողներու պահանջքին։ Որովհետև ամեն հեղինակ ծառ մըն է որոշ հողի ու տեղի վրա բուսած, որոշ պտուղի մը սերմեն և որոշ պայմաններու տակ սնած ու աճած. քննադատության հովերը կրնան քիչ մը ծառը թեքել, եթե ուժեղ են ու տևական, և կամ ծառը ինքը եթե շատ է բարակ, կրնան փչող հովերը տերևաթափ ընել որոշ ժամանակի մը համար, բայց ծառի բնական էութենեն լուրջ բան մը փոխել չեն կրնար։ Բարդին կմնա բարդի, տանձենին ալ՝ տանձենի։ Ամեն հեղինակ, հատկապես ամեն արժեքավոր հեղինակ, իր էությամբ, իր զգացումներով, դատումներով, աշխարհայացքով, ճաշակով ու ոճով որոշ ու կազմակերպված արդյունքն է քանի մը շատ կարևոր իրողություններու, որոնք արդեն ո՛չ թե թեթևակի ու երկրորդաբար, այլ շատ խոր, հիմնական ու մշտական ազդեցություն կբանեցնեն ամեն մեկ հեղինակի վրա։

Մենք հեղինակ ըսելով սովորաբար կըմբռնենք անհատ մը, որ գիրք մըն է գրած, և անհատը իր ստեղծագործության հետ կըմբռնենք անջատ, ինքն իրմով լրացած երևույթ մը, և իր գրած գիրքն ալ կհասկընանք իբրև անոր մտածած, անոր կառուցած աշխատությունը ամբողջովին։ Մինչդեռ իրականորեն ամեն հեղինակի երկերուն մեջ որոշ մաս մըն է միայն իր սեփականը, իսկապես իր մտածածն ու հնարածը, իսկապես միայն իր ստեղծագործությունը։

Երբեմն իրավ որ զգալի նորություն մը ունի հեղինակը և մեծ ու աչքառու է իր բերած ինքնաստեղծ նոր մասը։ Ավելի երկրորդական հեղինակներու քով, բայց ընդհանրապես հեղինակներու ստվար մասին



մեջ շատ փոքր է իսկապես նոր տարրը։ Եղածը իր մեծագույն մասով կրկնություն մըն է նախորդ իրմե առաջ եղած գրություններու, անշուշտ քիչիկ մը տարբեր դասավորումով։ Եվ սա է պատճառը, որ շատերը բանահյուսական երկի մը հիմքը կհամարեն ձևը, ինչպե՞ս ըսված ըլլալը։ Բուն նյութը՝ միտքը, խորքը, կյանքն ու զգացումը, կըսեն նույն է ամեն գրվածքի մեջ։

Ճշմարտությունն այն է, որ ամեն հեղինակի յուրաքանչյուր հեղինակության մեջ աշխատած են ու կաշխատին բազմաթիվ ուրիշներ, ամբողջ համայնություններ, և շատ ավելի մեծ չափերով, քան ինքը հեղինակը։ Հեղինակը արտահայտիչ մըն է միայն համայնություններու մտածածին, ըսածին ու զգացածին. բազմատեսակ գիրքերու ու ճառերու մեջ հեղինակը կներկայանա միայն իբրև ուրիշներու կողմե արտահայտված իրողությունները մեկ կետի մը, մեկ դեպքի մը շուրջը փաթթողը, կեդրոնացնողը, փնչողն ու իր հոգիին բոցովը ջերմացնողը։

Այս ուղղությամբ առաջին ու ամենամեծ հանրային ազդակը հեղինակի մը տաղանդն է, հեղինակի բնածին խառնվածքը։ Ամեն հեղինակ, ինչպես իր մարմնին, այնպես ալ իր հոգիին մեջ կպտտեցնե դարավոր ու դարավոր ժառանգական կարողություններու որոշ համադրում մը։ Մարդս ինչ որ կզգա, ինչ որ կմտածե և ինչ որ կընե գլխավորապես դարավոր ժառանգական ունակություններու ու հակումներու բերած ու մշակած չափովն ու ձևովը կզգա, կընե ու կմտածե։ Ինչպես մեր մարմինը, այնպես ալ մեր հոգին, մեր էությունը, մեր գործն ու ստեղծագործությունը ամենեն առաջ կպարտինք մեր ծնողներուն ու մեր ծնողներու ծնողներուն, մեր տոհմին, մեր ցեղին, մեր ժողովրդին։ Ամեն մարդու և ամեն հեղինակի հոգիին մեջ տիրապետողը ամենեն առաջ իր ժողովուրդի կողմն է, իր ժողովուրդի շնորհներն ու հակումները, իր ցեղային հոգեբանությունը։

Երկրորդ մեծ ազդակը ամեն մարդու էության ու գործունեության, այդպես ալ ուրեմն ամեն հեղինակի ստեղծագործության, այն միջավայրն է, ուր կծնի, կբացվի, կծաղկի ու հասունության կհասնի անհատը։ Այսինքն՝ ընտանիքը, համայնքը, շրջապատող բնությունը, շուրջի քաղաքակրթական վիճակն ու հաստատությունները։ Այս բոլոր իրականությունները խոշոր չափերով մասնակից են հեղինակի աշխատանքին, այս կամ այն ձևով խոսքի կուգան ու կներկայանան ամեն հեղինակի երկերուն մեջ։

Երրորդ մեծ ազդակն ու աշխատակիցը հեղինակի գործածած լեզուն է, որ նորեն հանրային երևույթ մըն է դարերու ու երկար սերունդնե-

քու աշխատանքեն ծնած ու զարգացած։ Գրական երկը լեզվական կառուցում մըն է, և այդ լեզուն պատրաստ կստանա հեղինակը իր մոր շրթունքեն, իր դպրոցեն, իր շրջապատեն։ Շատ համեստ է ու համեմատաբար շատ չնչին անհատ հեղինակի մը բերած նպաստը, ինչ որ լեզվի հիմնականին ու էականին կվերաբերի։ Այդ լեզվեն օգտվելու կերպին ու այդ լեզվի գործածության իր ինքնահատուկ ձևերուն մեջն է ընդհանրապես յուրաքանչյուր հեղինակի անհատական բերքը։ Բայց նույնիսկ հեղինակի ոճին ու կառուցման անձնական ճարտարապետության վրա, երբ երևույթներուն կնայինք քիչ մը ավելի վերեն ու հեռվեն, չափազանց մեծ է մայրենի լեզվի դրած կնիքը։ Մարդուս ըսելու, արտահայտելու, դասավորելու, վերլուծելու եղանակները, նույնիսկ իր գործածած լեզվական զարդերը, խաղերը, հանգերը, պատկերները, համեմատությունները, կատակները խոր կապերով հյուսված են միշտ դարերու խորքեն եկող մայրենի հնավանդ լեզվին։

Ատոր հետևանքն է, որ ժողովուրդները իրարմե կզատվին ու իրարու կկապվին գլխավորապես լեզվով։ Այդպես ալ գրականությունները կզատվին մյուս գրականություններեն լեզվով։ Եվ յուրաքանչյուր հեղինակ մեծ չափերով ենթակա է նաև իր մայրենի լեզվով եղած այդ գրականության, իր մայրենի լեզվով դիզված բանահյուսական հարստության, որ ըսել է՝ ժողովուրդի մը հին ու նոր արդեն գոյություն ունեցող գրական ստեղծագործությունները կներկայացնեն չորրորդ մեծ աշխատակիցն ու ազդակը նոր հեղինակներու նոր երկերուն մեջ։ Երգերու, վեպերու, գիտական որոշ նյութերու, հետաքրքրություններու, ուսումնասիրելու որոշ եղանակներու, գործնական որոշ հարցերու, նախընտրելի որոշ նյութերու, գեղեցիկ օրինակներու և ազգային ընդգծված ձգտումներու դարավոր հավաքածու մըն է ամեն ժողովրդի բանահյուսությունը և՛ անգիր, և՛ մանավանդ գրավոր։ Ամեն նոր հեղինակ բանահյուսական այդ ազգային ստեղծագործություններուն վրա է կրթված և անոնց ոգիովն ու էությամբն է թաթխված բնական պայմաններու մեջ։ Եվ ինքն ալ շուտով կդառնա այս կամ այն չափով իր ժողովուրդի ինքնահատուկ էության և իր ազգային գրականության ուրույն գծերուն մեկ արտահայտիչը։

Այս ազգային մեծ ազդակներուն քովը պետք է դրվի նաև, իբրև անհատ հեղինակներու աշխատանքին գործակցող ուժ, այն ամենը, ինչ որ հեղինակը կա՛մ իր խառնուրդ կյանքով, կա՛մ երկրե երկիր իր թափառումներով, կա՛մ իր ուսած քանի մը լեզուներով կրցած է յուրացնել ուրիշ ժողովուրդներեն, օտար ընթերցումներեն, մարդկային ընդհանուր պատմութենեն ու պատմություններեն, օտար բանահյուսական երկերեն,



իբրև գիտություն, իբրև ոճ, իբրև ճաշակ, իբրև մտածման եղանակ, իբրև մշակույթ, իբրև ավելի լայն ու համամարդկային որոնում, ձգտում և փիլիսոփայություն։ Աս ալ կդառնա ահա՛ ամեն հեղինակի վրա ներգործող հինգերորդ ազդակն ու գործակիցը։

Ինչքան ատեն որ ժողովուրդները իրարմե անջատ կապրին՝ այս վերջին ազդակի ուժը տկար է համեմատաբար։ Բայց տիրապետության, հպատակության ու գաղթային պայմաններով որքան որ ժողովուրդները իրարու կսանրվին՝ այնքան կշեշտվի բնականաբար օտար մտքի, ճաշակի, նյութի ու մշակման ազդեցությունը ժողովուրդի մը գրական անհատին վրա, ուրեմն և ժողովուրդի ամբողջ գրականության վրա։ Եվ հիմա, որ մարդկությունը հետզհետե տնտեսապես ու քաղաքակրթորեն, շուտով նաև պետական կազմով իրար օղակվելու և միակ ամբողջություն մը դառնալու վրա է, այս համամարդկային փոխադարձ ազդեցություններու բաժինն ալ բնական կերպով արագ պիտի մեծնա։ Բոլոր գրականություններն ալ պետք է ավելի սերտորեն կապվին իրարու ընդհանուր համամարդկային լայն գրական-ստեղծագործական հոսանքի մը մեջ։ Այսինքն՝ ամեն հեղինակ իր ժողովուրդեն ու իր անմիջական միջավայրեն ստացած ազդեցություններուն վրա կրե պիտի նաև համամարդկային մտքի, զգացումներու և ձգտումներու ազդեցությունը, և ինքն ալ պիտի դառնա՝ ազգայինին կից և ազգայինով արտահայտված՝ նաև համամարդկային հոգեկան որոնումներու պատկերող մը։

Ամեն հեղինակ այս բոլոր աղբյուրներեն ծծած հյութերով ու նյութերով կշաղվե իր ստեղծագործությունը, որ հիմա իր կողմեն կերթա ազդելու իր ընթերցողներու հոգեկան զարգացմանը, ինչպես և իր ազգային գրականության բարձրացմանն ու հարստացմանը։

Ինչպես ամեն մարդ, այնպես ալ ամեն հեղինակ, անշուշտ իրավունք ունի իր կատարած գործը իրը համարելու, իր աշխատանքով հըպարտ ու բախտավոր ըլլալու և իր աշխատանքին պտուղը որոշ չափով մը ինքը վայելելու։ Ասիկա կտևե ինչքան ատեն որ հեղինակը կապրի։ Հեղինակի մահվան հետ բացահայտ կդառնա մյուս ավելի խորունկ ճըշմարտությունը. անհատները վայրկյաններ են, որոնք կուգան ու կանցնին ու կդառնան հետզհետե վերացական անուն մը։ Հեղինակները վայրկենական ու մասնական գործադրողներն են միայն շատ ավելի լայն ամբողջության մը կատարած դարավոր աշխատանքին, որ բանահյուսություն կանվանենք։ Տևականը, մեծարժեքը և խորհրդավորը այդ դարեդար կատարվող ճիգերուն ընդհանուր հոսումն է։ Ապրող, խորհող ու նըրբազգաց ժողովուրդի մը ստեղծագործական գալարումները, որով ան

ձև տալ ու մնայուն դարձնելու կջանա իր մարդկային հոգիին մեջ անցած-դարձածին, իր ապրումներուն, իր զգացումներուն ու իր մտածումներուն խորքը թափանցել կտենչա, և ապրելուն ու կյանք ըսվածին ներքին իմաստը կփնտրե։ Ստեղծագործական այս դարավոր հոսանքին մեկ ուղին է, մեկ երակը, մեկ սահանքը, մեկ ցայտքը, մեկ ալիքը, մեկ ծուփը ամեն մեկ հեղինակ։

## ԺԳ Բանահյուսական երկերու հանրային արժեքը

Մինչև հիմա աչքի առաջ ունեինք բառակերտ երկերուն արժեքը անհատական տեսակետեն, թե ի՞նչ օգուտ ու հաճույք կուտան անոնք անհատ անձերու՝ ընթերցողին ու հեղինակին։

Բայց անհատական տեսակետը վերլուծելու ատեն, ըսված է արդեն շատ՚բան, և ամենեն էականը, ինչ կվերաբերի նաև գրություններու հանրային արժեքին, քանի որ երևույթի մը հանրային կողմն ու դերը անոր անհատական դերին ու արժեքին ընդլայնումն ու ընդհանրացումն է էապես։ Ընդգծեցի վերը, որ ամեն հեղինակ իր ժողովուրդի գրականությունը հյուսող թել մըն է քիչ մը հաստ կամ բարակ, քիչ մը երկար կամ կարճ։ Ընդգծած եմ նույնպես, որ այդպես է նաև ամեն ընթերցող. ով կօգտվի ու մտերիմ է գրական մեծարժեք երկերու, ո՛չ միայն իր անձի բարձրացմանը կաշխատի, այլ իր անձի միջոցով կնպաստե իր ժողովուրդի բարձրացմանը։

Կմնա, ուրեմն, որ այս վերջին էջերուն մեջ շեշտենք ու ընդգծենք բանահյուսական երկերու անհատական արժեքներեն դեպի հանրայինը անցնող ընդհանրացումը, դիտենք անոնց հանրայի՛ն արժեքավորումը։

Ամեն բառակերտ ստեղծագործություն, ըլլա գործնական, փաստական թե գեղարվեստական, անմիջապես նվիրված է հարցի մը, երևույթի մը, մտածումի մը, հոգեկան վիճակի մը, ընկերական խնդրի մը, մարդկային հարաբերության մը անմիջական քննությանը կամ պատկերացմանը։ Ամեն գիրք հարց մը, կողմ մը, խորշ մը կլուսավորե, հարցի մը պատասխանը կփնտրե, ըմբռնումի մը, փորձառության մը քարոզիչն է. ամեն գիրք բան մը կլուսաբանե, թաքուն իր մը դեպի լույսը կքաշե։ Գիրքը լույս է, ուր որ երթա՝ հետը լույս կտանի։ Իրեն քովող միտքը կայծ կառնե, իրեն շփվող հոգիները բոց կառնեն։ Ընթերցումը ժողովուրդներու միտքը կբանա, ավելին փտնալու, ավելի խոր հասկնալու ծարավը կուտա, «ինչու»-ները փնտրելու ու ճամբու վրա կդնե։



Ամեն գիրք իր հատուկ նյութովն ու մշակած հարցերովը, իր ուսումնասիրած երևույթներովը ժողովրդի մը մտավոր զարգացման ու հոգեկան հասունության կձգտի այս կամ այն չափով, այս կամ այն խորությամբ ու թափով։

Բայց բացի այդ հատուկ ու հիմնական նյութեն ամեն գրության մեջ որքան-որքա՛ն կողմնակի դիտողություններ ու դատողություններ մեջ կուգան խոսքի ընթացքին, որոնք կյանքեն, իրականութենեն կամ գիտութենեն ու փորձերեն կհոսին և ո՛չ միայն գրչին ծայրեն, որով և ամեն գեղական երկ կդառնա նաև այդ պատահական գաղափարներու տարածողն ու ժողովրդականացնողը։ Ասոր համար է, որ ամեն երկ, բացի իր բուն նյութեն, բազմաթիվ ուրիշ գիտություններու ուսումնասիրության նյութ կրնա դառնալ։ Այսպես, օրինակ, երգ մը կամ վեպ մը, կրնա նյութ դառնալ լեզվական վերլուծության, գրապատմական դիտողության, գրականության պատմության, պատմական ուսումնասիրության, վարքուբարքի, ըմբռնումներու ու փիլիսոփայական տեսություններու և դեռ ուրիշ շատ կողմերու։ Այս բոլոր կողմերեն բոլոր շաղախված անցողակի նյութերը կենսատու ջրի կաթիլներ են, որ անձրևի պես ժողովուրդի մը մտքի մշակ ու անմշակ արտերուն վրա կթափին։

Ինչքան շատ են բառերով կերտված ստեղծագործությունները ժողովրդի մը գրականության մեջ, և որքան լայն շերտեր կօգտվին այդ գրական երկերեն, որքան շատ են հեղինակները ամեն տեսակի և որքան շատ են ընթերցողները ամեն տեսակի, այնքան բարձր է այդ ժողովուրդի մտավոր մակարդակը։ Գրականության մը բազմակողմանիությունը, խորությունն ու հարստությունը մեկ կողմեն, ժողովուրդի զարգացումը կկերտեն, մյուս կողմեն ալ, բնականաբար, այդ ժողովուրդի հոգեկան բարձրության աստիճանը կնշեն։ Ժողովուրդի մը գրականության մեջ այս հանրային ուսումնական մեծ կարևորության զույգ լերթա նաև այդ երկերուն հանրային դաստիարակիչ մեծ արժեքը։

Ամեն բանահյուսական ստեղծագործություն մարդու մը հոգին է, մարդու մը ապրումները, մարդու մը մտածումները, որոնումները, մարդու մը ճիգերն ու պայքարը։ Ասկե զատ գրական երկերու մեկ շատ խոշոր մասին մեջ իրական կամ երևակայական բազմաթիվ ուրիշ մարդոց վրա կխոսվի շարունակ։ Կգծեն այդ տիպարներու հոգին, անոնց գործերը, տենչերը, անոնց հաջողություններն ու ձախողանքը, անոնց ոգևորությունը, քաջությունն ու անձնվիրությունը։

Գրքերուն սև մուրին մեջեն կենդանի մարդիկ կխոսին մեզի, մեծ ու հետաքրքիր անձեր կկենան մեր դեմը իրենց գործով, իրենց կյանք

քով ու պայքարով։ Եվ այդ բոլոր մարդկային մեծ կամ ազնիվ դեմքերը իրենց համոզումներով, իրենց վարմունքի ջերմությամբ, իրենց ընկերական նվիրումով, իրենց խանդավառությամբ կքաշեն մեզի իրենց ետևեն. մեյ-մեկ օրինակ կդառնան մեզի մեր հոգիին ու մեր գործունեության համար։

Դաստիարակության ամենեն սուր զենքը կենդանի օրինակն է մանկավարժության մեջ, այսինքն՝ շրջապատող անձերու կյանքն ու վարքը։ Գրականությունը հսկա շրջապատ մըն է առանց պատերու. բոլոր հեղինակները իրենց բոլոր հերոսներուն հետ և բոլոր պատմական դեմքերը մեր կենակիցներն են, մեր ուսուցիչները, մեր օրինակները։ Ի՞նչ կա ավելի կրթիչ ու ազնվացնող, քան մեծ մարդոց կենսագրությունը, քան զանազան ասպարեզներու վրա գործող պատմական խոշոր դեմքերու վարքն ու գործը, քան ամենեն տաղանդավոր հորինողներու իրենց կյանքեն ու իրենց փորձառութենեն քաղած ու ձուլած վիպական դեմքերը։

Իրական թե երևակայական այս բոլոր մեծ մարդիկը, տաղանդի կնիքը կրող այդ անձերը, նվիրումի, բարձրության ու ազնվության այդ գրավիչ օրինակները, մեծ նպաստ մը ու մեծ խթան մըն է ամեն ժողովուրդի բարձրացման համար։ Ամեն ժողովուրդ նախ իր և վերջն ալ նաև ուրիշ ժողովուրդներու գրականության վրա կկրթե իր հոգին, գրականության ու պատմության հերոսներով կոգևորվի և անոնց տաք շունչին տակ կդաստիարակվի։ Ընթերցանությունը այդ պատճառով ալ շատ բացառիկ ու շատ կարևոր գործիք մըն է ժողովուրդներու դաստիարակության գործին մեջ, որուն ապագա հնարավորություններու մասին նախորդ էջերուն մեջ արդեն մատնանիշ ըրած եմ։

Կենդանի օրինակներու այս վարակիչ ազդեցութենեն զատ՝ գրական երկերը ուրիշ կողմ մըն ալ ունին, որուն արժեքը նորեն չափազանց մեծ է մարդկային հոգիի քաղաքակրթվելու, ընկերական հարաբերություններուն նրբացման ու ազնվացման տեսակետեն։

Գրքերը կպարտադրեն, որ ընթերցողը ուրիշներու հոգիին մեջը նայի, ուրիշներու ցավերը, հոգերը, ուրախություններն ու ներքին պայքարները դիտե, ուրիշներուն հուզումները, երկմտությունները, տենչերն ու ընդվզումները իր հոգիին մեջն ապրի։ Ժողովուրդ մը որքան մեծ գրականություն ունենա, այնքան ավելի կվարժվի իր եսի նեղ սահմաններեն դուրս գալու, այնքան կսորվի ուրիշներու կյանքին մասնակցիլ ու կենակցիլ։ Եսն ու ոչ-եսը հաճախ կփաթթվին իրարու։ Գրականությունն ու ընթերցանությունը ժողովուրդները դեպի այլասիրություն կմղեն։



Գրականությունը եսականությունները սանձահարող ամենեն կարևոր զենքերեն մեկն է, մարդկային ընկերական զգացումները սրող հեսան մը, անձնվիրության, բարության, խղճի ու բարոյական բարձրացման մշակիչ մը։ Արդեն բարոյականությունը ընկերականություն ըսել է, ամեն բանի մեջ իր ընկերն ալ մտածել. իսկ ընկերական հարաբերություններու բարձրացումն ալ հիմնված է մեր անզուսպ եսի աստիճանական սանձահարումին վրա։ Բանահյուսական երկերուն ստեղծումը և անոնց տարածուն ընթերցումը ժողովուրդները կփափկացնե, կտաշե, մարդասեր, այլասեր ու ժողովրդասեր կդարձնե։

Ուսումնական, դաստիարակչական ու բարոյական այս հանրային արժեքներուն կից՝ գրականությունը իր ամբողջությամբ ինքնին քաղաքակրթական մեծ երևույթ մըն է, մարդկային հոգեկան ստեղծագործություններեն գուցե ամենեն գլխավորը։

Ամեն գրական երկ ժողովուրդի մը գրականության մեկ էջն է, մեկ հատորը, մեկ կտորը, և այդ էջերուն ու կտորներուն ամբողջությունը ժողովուրդի մը ամենեն մեծ հարստությունը, ժողովուրդի մը հոգեկան գանձարանը, և ճիշտ ատոր համար ալ ժողովուրդի մը հպարտության առարկան, ժողովուրդի մը արժեքը բարձրացնող քաղաքակրթական մեծարժեք իրողություն մը։

Ժողովուրդի մը արժեքը բարձրացնող թե՛ ինքն իր աչքին և թե՛ ուրիշ ժողովուրդներու աչքին։ Ցայտուն չափերեն մեկն է ազգերու քաղաքակրթական բարձրության. տեսակ մը վավերագիրը արժեքավոր ազգերու շարքին մեջ իր տեղն ու դիրքը ունենալու։ Որքան մեծ է, հաչուստ ու խոր ժողովուրդի մը բանահյուսական ընդհանուր ստեղծագործությունը համամարդկային գրականություններու լայն հյուսքին մեջ, այնքան ալ մեծ է այդ ժողովուրդին դիրքն ու արժեքը ազգերու ու ցեղերու ընդհանուր հյուսքին մեջ։

Իր այս աստիճանի բարձր ու ազնիվ հատկություններուն համար ալ գրականությունը իր ամբողջությամբ, ինչպես և իր ցայտուն հեղինակներով ու բացառիկ կարևոր երկերով խորին զոդ մըն է, խորին կապ մը նույն ժողովուրդի բոլոր մասերուն ու բոլոր անդամներուն միջև։

Ինչպես որ նույն լեզուն խոսիլը ազգը ազգեն զատող և ազգի մը հատվածները իրարու զոդող ամենեն կարևոր կապն ու օղակն է ամեն տեղ, այնպես ալ այդ մայրենի լեզվով կատարված բոլոր արժեքավոր ստեղծագործությունները մեյ-մեկ զոդող օղակներ են և այդ ստեղծագործություններուն ամբողջությունը ներկայացնող գրականությունը ժողովուրդի մը բոլոր հոգիներն ու բոլոր սրտերը իրարու կապող ոսկի շղթան է։

Քաղաքակրթական բոլոր տեսակի ստեղծագործությունները՝ պետություն, կրոն, օրենք, արհեստ ու արվեստ և մյուս գեղարվեստները այս կամ այն չափով նույնպես ունին իրենց վրա հավաքականությունները ձուլող և ժողովուրդներուն հպարտություն ու բարձրացում ներշնչող կարողությունը. միայն թե միշտ տարբեր ուժով կշեշտվի զոդող հմայքը լեզվի, լեզվական գեղարվեստի և գիտություններու, այսինքն՝ բանահյուսական ստեղծագործության։

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Լևոն Շանթի երկերի ներկա ժողովածուի տեքստը պատրաստված է ըստ Բեյրութում լույս ընծայված բազմահատորյա «Ամբողջական հրատարակության», որի մի քանի հատորը տպագրվել են մեծ գրողի հսկողության տակ։ Ստեղծագործությունները դասավորել ենք ժանրային-ժամանակագրական սկզբունքով, աշխատելով ներկայացնել հեղինակին իր գրական բազմակողմանի գործունեությամբ. պոեզիա, արձակ, դրամատուրգիա, գրականագիտություն։

*Երգեր* (գրվել են Կ. Պոլիս և Լայպցիգ, 1891—94, Լևոն Շանթի երկերը, հ. 1, Բեյրութ, 1946)։

*Լեռան աղջիկը* (գրվել է 1892, հ. 1)։

*Երազ օրեր* (առաջին գրությունը՝ Կ. Պոլիս, Ռոդոստո, 1892, հ. 1)։

*Դուրսեցիները* (առաջին գրությունը՝ Լայպցիգ, 1894, հ. 1)։

*Դարձ* (գրվել է Մյունխենում, 1897, հ. 2, Բեյրութ, 1946)։

*Կինը* (գրվել է Կ. Պոլիս, 1912, հ. 3, Բեյրութ, 1947)։

*Հին աստվածներ* (գրվել է Երևանում, 1909, հ. 3)։

*Կայսր* (գրվել է Լոզանում, 1918, հ. 3)։

*Շղթայվածը* (գրվել է Լոզանում, 1918, հ. 3)։

*Ինկած բերդի իշխանուհին* (գրվել է Թեհրան-Թավրիզ, 1921, հ. 3)։

*Օշին Պայլ* (գրվել է Փարիզում, 1929, հ. 4, Բեյրութ, 1949)։

*Գրքեր ու մարդիկ* (վերցված է Թիֆլիսի «Արշալույս» օրաթերթից, 1905, № 54, էջ 3—4)։

*Գրական երկերուն դերը* (գրվել է Ալեքսանդրիա և Փարիզ, 1926—27, հ. 4)։

Լևոն Շանթի երկերը Սովետական Հայաստանում առաջին անգամ հրատարակվել են 1968 թվականին, Էդուարդ Թոփչյանի առաջաբանով։ Ներկա հրատարակությունը երկրորդն է, ընդլայնված, հարստացված։ Առաջաբանը տրվում է որոշ կրճատումներով, ըստ Էդուարդ Թոփչյանի երկերի երկու գրքով հրատարակված առաջին գրքի. «Վերածնության խորհուրդը», Երևան, 1977, էջ 157—205։ Առաջաբանում չափազանց սեղմ է տրված Լևոն Շանթի կենսագրությունը։ Լրացնենք այն որոշ փաստերով, որոնք շարադրում ենք ըստ Բեյրութում, 1969-ին հրատարակված «Լևոն Շանթ», գրողի ծննդյան հարյուրամյակի առթիվ լույս ընծայված գրքի։

Երբ առաջին անգամ այցելում է Թաղի ազգային վարժարանը, տնօրենի հարցին,

աշխատանքի փոխարեն տալիս է հոր անունը։ Տնօրենը նրան տալիս է Սեղբոսյան ազգանունը հոր՝ Սեղբոս Նահաշպետյանի ազգանունի փոխարեն։ Էջմիածնի Գևորգյան ճեմարան եկած 30 պոլսահայ աշակերտներից քննությամբ ընտրում են 8-ին, որոնց մեջ Լևոն Սեղբոսյանին և Կոմիտասին։ Ճեմարանում նա ուսանեց յոթ տարի։ Առաջնակարգ աշակերտներից էր։ 1892-ին, Գերմանիա մեկնելուց հետո, առաջին երեք տարին սովորում էր անատոմիա և ֆիզիոլոգիա, որպես հիմք հոգեբանության և մանկավարժության։ Նրա դասախոսներից էր աշխարհահռչակ Վիլհելմ Վունդտը։ Համալսարաններում նա մնում է մինչև 1899 թվականը, հետևելով մի շարք գիտությունների դասընթացների։ Մեզ մոտ եղած որոշ փաստաթղթերի պատճենների համաձայն, Մյունխենում նա բնակվել է Շելլինգշտրասե 91/2 տանը։ Ունկնդրել է հունական գրականություն, նոր նորվեգական գրականություն, դրամատուրգիայի, փիլիսոփայության ներածության, գերմանական դրամատուրգիայի դասընթացներ, Բայրոնին նվիրված հատուկ կուրս, հասարակական-քաղաքական գիտությունների հանրագիտարան, հուշարձանների լուսաբանում Kunstglyptothek-ում (քանդակների հավաքածու)։ Այս մի քանի տվյալներն իսկ ցույց են տալիս, թե ինչպիսի հիմնավոր, բազմակողմանի, գերմանական գիտության իր ժամանակի նորագույն նվաճումներին համապատասխան կրթություն է ստացել Լևոն Շանթը։ Հետագայում գրած նրա բազմաթիվ հոդվածներն ու ուսումնասիրությունները գրականության պատմության ու տեսության, մանկավարժության, հոգեբանության և այլ բնագավառների ու հարցերի շուրջ բնավ էլ պատահական հետաքրքրությունների կամ մակերեսային ծանոթությունների արդյունք չէին։ Գերմանիայից Փարիզ գնալուց հետո կարճ ժամանակում նա հաշվապահի վկայագիր է ստանում և դառնում դրամատան պաշտոնյա, բայց, հակառակ իրեն խոստացված ապահով ապագայի, վերադառնում է Կովկաս։ 1903-ին Շամախիում նա ամուսնանում է մանկական թերթերի աշխատակից, օր. Ջավո Ներսիսյանի հետ, որին ծանոթ էր դեռևս Ժնևում։ Թիֆլիսում նա Հովհաննես Թումանյանի և Ստեփան Լիսիցյանի հետ կազմում, հրատարակում է «Լուսաբերը»՝ հայ մանուկների դասագիրքը։ 1909-ին Երևանի թեմական դպրոցում դասախոսելու շրջանում, լուրջ հիվանդության պատճառով, մնում է տանը, քառասուն օր, հակառակ բժշկի ցուցումներին՝ անկողնային ռեժիմ, նստում և գրում է «Հին աստվածները»։ Բժիշկը, իմանալով իրողությունը, գործից ոգևորված ասում է. «Կլավանաս բոլորովին, երբ ավարտես գործը», և Շանթը, մի քանի օր էլ մնալով տանը, ավարտում է հայ գրականության այդ աննախադեպ հրաշալիքը։ Տասը տարի Կովկասում մնալուց հետո 1910-ին նա գնում է Եվրոպա և մի տարի մնում այնտեղ։ 1913-ին հրատարակվելուց հետո՝ խանդավառ ընդունելություն գտավ «Հին աստվածները»։ Նույն տարում Բաքվում բեմադրվեց՝ 5, Թիֆլիսում 6 անգամ։

Շուտով այն թարգմանվեց գերմաներեն, ռուսերեն, ապա իտալերեն, ֆրանսերեն։ 1917-ին Ռոստովում «Հին աստվածները» բեմադրեց Կ. Ստանիսլավսկին։

Լայնորեն արձագանքեց մամուլը. թե արևելահայ, թե արևմտահայ, բազմաթիվ հոդվածագիրներից նշենք միայն Նիկոլ Աղբալյանին, քանզի նրա ելույթները ժամանակի քննադատական մտքի բարձրակետն են։ Ահա դրանք. «Լ. Շանթի «Հին աստվածները» և «Երազ օրերը» («Հորիզոն», 1913, թիվ՝ 105), «Գաբրիել Տեր-Ռուբինյան, Լևոն Շանթ, նրա երկերն և «Հին աստվածներ» դրաման» («Հորիզոն», 1913, թիվ 129), «Երազ և Մեկուսացում»), «Նոր հոսանք», 1913, Ա տարի, թիվ 1, 2)։ Երրորդ հոդվածը ամենածավալունն է, Շանթի նշանավոր դրամայի հանգամանալի քննություն։ Իսկ երկրորդը՝ գրախոսությունը Գ. Տեր-Ռուբինյանի գրքույկի մասին, քննադատական խոսք է հետևյալ ուշագրավ ավարտով. «Այս գրքույկի անվիճելի առավելությունը իր շապկի վրա է. այնտեղ դուք կտեսնեք Շանթի և «Հին աստվածների» մասին լույս տեսած գրքույկների և հոդվածների մի ցանկ, ինչպես նաև տեղեկություններ Շանթի և իր դրամայի մասին եղած դասախոսությունների և գրական դատերի»։ Շատ հետաքրքիր կլինի վերականգնել «Հին աստվածների» և նրա հեղինակի շուրջ ժամանակի գրական, գեղարվեստական արձագանքների ողջ պատկերը, որի հնարավորությունը, ինչպես տեսնում ենք, կա, որոշակի չափով էլ արդեն կատարված է մեր նշած «Լևոն Շանթ» գրքում։ Ինչ վերաբերում է մեծ քննադատին, ապա նա եղել է գրողի ճշմարիտ բարեկամը. «Ես չգիտեմ,— գրում է Սիմոն Վրացյանը «Շանթի հետ» հուշերում,— մտերիմ, սրտակից ընկերներ չա՞տ ուներ Շանթը Հայաստանում։ Նրա հոգու խորքը, առհասարակ, դժվար էր թափանցել։ Մեկը կար, սակայն, որից անբաժան էր նա— Նիկոլ Աղբալյանը։ Զարմանալի էր այդ զույգի մտերմությունը։ Բնավորությամբ ու խառնվածքով բոլորովին հակոտնյա մարդիկ էին նրանք— երկու տարբեր բևեռներ. բայց ի՜նչ ջերմություն կար նրանց հարաբերությունների մեջ, ի՜նչ անկեղծ ընկերականություն։ Երկուսի հետ էլ ես մոտիկ էի, բայց չեմ հիշում մի դեպք անհամաձայնության կամ վեճի։ Ճիշտ է, տեղի տվողը միշտ Աղբալյանն էր լինում, բայց Շանթի բերանից էլ երբեք չեմ լսել մի դառն խոսք Նիկոլին ուղղված։ Անբացատրելի մի կապով բնությունը միացրել էր այդ երկու տարամերժ անհատականությունները, իբրև հոգեբանական տարօրինակ մի առեղծված» («Լևոն Շանթ», էջ 34)։ «Հին աստվածներից» առաջացած հոնորարով Շանթը Կ. Պոլսից 1913-ին մեկնում է Եվրոպա։ Այնտեղից նավով նա Բաթում հասավ ու վերադարձավ Կովկաս 1915-ին միայն։ 1917-ին Շանթը Մոսկվայում է և այս անգամ էլ գնում է Ժնև, իր ընտանիքի մոտ, Ա. Լունաչարսկու օգնությամբ, «...որ հիացող մըն էր «Հին աստվածներուն» («Լևոն Շանթ», էջ 14)։ Տեղն է հիշել մի այլ ուշագրավ փաստ. Ալեքսանդր Մյասնիկյանի նախաձեռնությամբ 1921 թվականի հոկտեմբերի 26-ին հրապարակվում է դեկրետ «Գրական-գեղարվեստական աշխատավորների ապահովման մասին», որի կետերից մեկի համաձայն կենսաթոշակ էր նշանակվում հայ մշակույթի մի շարք նշանավոր գործիչների, ի թիվս որոնց նաև Լևոն Շանթին։ 1926-ին Շանթը հրավիրվում է Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարան հայերեն և ընդհանուր պատմություն դասավանդելու, ուր տնօրենն էր Ն. Աղբալյանը։ Այնուհետև նրանք աշխատել են միասին։ 1929-ին նրանք գալիս են Բեյրութ և հիմնում Բեյրութի Հայ ճեմարանը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծանր ու դաժան ապրեց Շանթը, սկսած նյութական դժվարություններից։ 1944-ին ռմբակոծման ժամանակ Բեռլինում մոխրանում է նրա միջնակ զավակը, մի տարի հետո վախճանվում է կինը։ 1947-ին նա հրաժեշտ տվեց ամենամտերիմ ընկերոջը՝ Նիկոլ Աղբալյանին։ Շանթը շարունակում էր գրական բազմաճյուղ և մանկավարժական՝ տեսական և գործնական, անդուլ աշխատանքը։ 1951-ի մայիսին լյարդի հաջող վիրահատությունից հետո կարճատև ապաքինվեց Շանթը, բայց այնուամենայնիվ փրկություն չկար։ Մոտեցող մահը չընկճեց նրան, մինչև նոյեմբերի 19-ը իր նախկին մի աշակերտին թելադրելով ավարտեց իր «Մանկավարժության» երկրորդ հատորը։ Այդ օրը նա կորցրեց գիտակցությունը։ Տասն օր հետո Լևոն Շանթը հեռացավ կյանքից։ Դեկտեմբերի 2-ին, անձրևոտ եղանակին, Բեյրութում տասհազար հայ ուղեկցեցին նրա աճյունը ճեմարանից ս. Նշան եկեղեցի և ապա հայոց գերեզմանատուն։

Լևոն Շանթը հայ գրականության այն բացառիկ դեմքերից է, որն իր մեջ միացնում էր արևմտահայ ու արևելահայ լեզվական-գեղարվեստական մշակույթը և էությամբ, նույնիսկ արտաքինով ասես միաձուլում էր մեկը մյուսին։ Այդ է վկայում, իմիջիայլոց, Գասպար Իփեկյանն իր հուշերում. «Կես արևելահայ և կես արևմտահայ մտավորականի երևույթ ուներ։ Իր ճաշակավոր հագուստ կապուստը և վարվելակերպը արտասահմանյան

դրոշմ կկրեին։ Պահած էր արևմտահայ բարբառը, բայց հակառակ պոլսական շեշտին, կխոսեր կովկասյան գունավորումով մը։ Իր խոսակցական լեզուն հարազատ էր իր գրական ոճին» («Լևոն Շանթ», էջ 12)։ Ապրելով և աշխատելով թե արևմտահայ, թե արևելահայ միջավայրում, Շանթը սեփական կենսափորձով գիտեր հայ ժողովրդի երկու հատվածների ճակատագիրը և նրա ընդհանրացումները սոսկ պատմական փաստանյութի ուսումնասիրության արդյունք չէին. «Ըլլա ի՛ր հողերուն վրա,— գրում է նա «Ընդհանուր ակնարկ մը հայ բանահյուսության վրա» աշխատությունում,— թե օսմանյան մայրաքաղաքին մեջ մեկ անկյունը ծվարած, հայը ամեն տեղ դարձած է ստրուկ և ռայա. արհամարհված, իրավազուրկ ու ողորմելի տարր մը, որովհետև քրիստոնյա է ու բոլորովին անպաշտպան այդ մահմեդական ծովուն մեջ...

Քրիստոնյա զորեղ պետություն մը և եվրոպական օրենքի ու մշակույթի դեպի մեր հայրենի հողերը շարժվելովն է, որ կսկսի հայ ժողովրդի համար նոր դարաշրջան մը... ռուսները կհասնին Երևան ու Էջմիածին, և հայության հյուսիսային մեկ խոշոր հատվածը կփրցվի թուրանական տիրապետութենեն ու ազդեցութենեն և կկապվի եվրոպական-արիական ոգիին ու ձգտումներուն... Հայ ժողովրդի գոյությունն ու վիճակը բոլորովին նոր և ուրիշ պայմաններու մեջ է մտած և սերտորեն կապված է եվրոպական ժողովուրդներու գոյավիճակին և ռուս պետականության» (Լևոն Շանթի երկերը, հ. 9, Բեյրութ, 1946, էջ 15)։ Շատ կարևոր է Շանթի այս դիրքորոշումը ըմբռնելը նրա ստեղծագործության, նրա աշխարհայացքը գնահատելու տեսակետից։

**ՍՏԵՓԱՆ ՏՈՓՉՅԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Լևոն Շանթի աշխարհայացքը — Էդուարդ Թոփչյան . . . . . 3
Երգեր . . . . . 31
Լեռան աղջիկը . . . . . 54
Երազ օրեր . . . . . 83
Դուրսեցիները . . . . . 157
Դարձ . . . . . 251
Կինը . . . . . 317

Դրամաներ

Հին աստվածներ . . . . . 360
Կայսր . . . . . 436
Շղթայվածը . . . . . 513
Ինկած բերդի իշխանուհին . . . . . 559
Օշին Պայլ . . . . . 693
Գրքեր ու մարդիկ . . . . . 808
Գրական երերում դերը . . . . . 818
Կազմողի կողմից . . . . . 853

ISBN 5-550-00195-0

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Լևոն Շանթ

ԵՐԿԵՐ

Литературно-художественное издание

Левон Шант

СОЧИНЕНИЕ

Ереван, издательство «Советакан грох»

На армянском языке

*Խմբ. վարիչ՝* Ստ. Է. Թոփչյան
*Խմբագիր՝* Ռ. Գ. Սարգսյան
*Նկարիչ՝* Հ. Ս. Մալխասյան
*Գեղ. խմբագիր՝* Ջ. Ե. Գասպարյան
*Տեխ. խմբագիր՝* Վ. Գ. Ավագյան
*Նկարիչ՝* Հ. Ս. Մալխասյան
*Վերստուգող սրբագրիչներ՝* Վ. Դ. Ազատյան,
[illegible] Ազատյան

ИБ № 6382

*Հանձնված է շարվածքի 23. 11. 88 թ.։ Ստորագրված է տպագրության 17. 03. 89։ ՎՖ 00664։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ գրքի սովորական։ Տպագրություն՝ բարձր, 50,22 պայմ. տպ. մամ., 50,56 պայմ. ներկ. թերթ., 45,4 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։ (II թողարկում 20001—51000)։ Պատվեր՝ 3401։*

*Գինը՝ 4 ռ. 10 կոպ.։*

*«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։*

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

*Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան փ., № 65։*

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-10, ул. Алавердяна, 65.